



Ն. ԿՈՒՆ

ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ
ԼԵԳԵՆԴՆԵՐՆ ՈՒ
ԱՌԱՍԴԵԼՆԵՐԸ





Ն. ԿՐԻՆ


ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ
ԼԵԳԵՆԴՆԵՐՆ ՈՒ
ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

849



Թարգմանեց ԼԵՎՈՆ ՀԱԽԿԵՐԴՅԱՆԸ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ, ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ—1979



Հին հունական առասպելաբանության մեծաթիվ վերաշարա-
գրանքներից լավագույնը, թերևս, Ն. Կուլի լինել էին պատմում հին
հույները իրենց աստվածների և հերոսների մասին՝ գիրքն է
(Մոսկվա, 1940)։ Դրանից է կատարվել սույն թարգմանությունը և
առաջին անգամ լույս ընծայվել 1956-ին՝ «Հին Հունաստանի լե-
զենդներն ու առասպելները» վերնագրով, որ անված է Ն. Կուլի
գրքի երկրորդ հրատարակությունից (Մոսկվա, 1955)։

Հունական առասպելաբանության թարգմանության մեջ առան-
ձին բարդություն է ներկայացնում հատուկ անունների հայերեն
տառադարձության խնդիրը։ Թարգմանիչն այստեղ առաջնորդվել է
ընազդին առավելագույնս հարազատ մնալու սկզբունքով, եթե միայն
դա չի հակասել հայերենում վաղուց ի վեր արմատ զցած ավանդ-
ներին։ Այդ իսկ պատճառով, ի տարբերություն առաջին հրատարա-
կության, թարգմանիչն այստեղ նախապատվություն տվել է մի
քանի անվանման ավանդական ձևերին. Աքիլես, Հեղինե, Նարզիզ,
փոխանակ՝ Աքիլես, Հելենե, Նարկիսոս, թեև այս երկրորդ ձևերն են
ընազդին հարազատ։

70302 (578) 189-79 «Տ»
705 (01)-78

© Սովետական գրող, հրատարակչություն,
թարգմանված է հայերեն, 1970 թ.

ՆԵՐԱՄԱՌԹՅՈՒՆ

Այս գրքի ամեն մի ընթերցողի մեջ կարող է հարց ծագել. ի՞նչ
հարկ կա իմանալ հին հույների դիցաբանությունն իր բոլոր աստ-
վածներով ու հերոսներով։ Այդ հարցին պատասխանելը դժվար չէ՝

Մտաբերինք այսպիսի մի օրինակ. պարզկա աստղալից գիշերը
մենք նայում ենք երկնքին և, երկնակամարի բարտեզը ձեռքներիս
աշխատում ենք կողմնորոշվել համաստեղությունների մեջ։ Աստի-
ճանաբար սկսում ենք տարբերել դրանք և ասում. ահա Անդրոմե-
դայի, Պերսևսի, Պեզասի, Կասիոպեի, Հերակլեսի համաստեղու-
թյունները, այնտեղ իր վստ աստղերով Օրիոնի համաստեղությունն
է շողջողում, ահա՛ և Երկվորյակի համաստեղության երկու վառ
աստղերը՝ Կաստորը և Պոլիդեքսը։ Սրանք բոլորն էլ անշարժ
աստղեր են, երկնքում մշտապես շողջողում են նույն տեղում՝
Նրանց միջև շարժվում են մոլորակները։ Ահա համաչափ սպիտակ
բույսով փայլում է Յուպիտեր մոլորակը, շողում են բոսորավուն
Մարսը և զեղնավուն Սատուրնը։ Լուսադեմին, նախքան արևա-
նայ վառվառն, շողացող վեներա մոլորակով։ Բայց այս ի՞նչ
անվանումներ են. Անդրոմեդա, Պերսևս, Հերակլես, Յուպիտեր,
Մարս, վեներա և մյուսները։ Դրանք բոլորն էլ Հին Հունաստանի և
Հռոմի աստվածների ու աստվածուհիների, հերոսների ու հերոսու-
հիների անուններն են, և համաստեղություններն ու մոլորակներն
այդպես են կոչել դեռևս հին հույներն ու հռոմեացիները։

Մեր մեծ ուսուցիչներ Մարքսը, Էնգելսը, Լենինը իրենց
մտքերն ավելի ցայտուն արտահայտելու համար երբեմն օգտա-
գործել են հունական դիցաբանությունը, գործ են անել հունական
և հռոմեական աստվածների ու հերոսների անունները։

Բերենք այսպիսի օրինակներ. Կարլ Մարքսը իր «Քաղաքատն-
տնությունը և նախադասության շուրջը» աշխատության մեջ գրել է,
որ քննության և հասարակական հարաբերությունների հանդեպ այն

հայացքը, որ ընկած է հունական երևակայության, հետևաբար և հունական արվեստի հիմքում, անհնար է տեխնիկայի ժամանակակից զարգացման պայմաններում, և իր միտքն այսպես է պարզարանել. «Ո՞ր կմնա Վուլկանը¹ Roberts et Co-ի² հանդեպ, Յուպիտերը³ շանթարգելի հանդեպ և Հերմեսը⁴ Crédit Mobilier-ի⁴ հանդեպ»⁵ և մի փոքր ցած՝ «հնարավոր է Աբիլլեսը վառողի ու կապարի գարաշրջանում»:

Վ. Ի. Լենինը բազմիցս դիմել է հունական դիցաբանության կերպարներին: «Պարենային հարկի մասին» աշխատության մեջ նա մենշևիկ Մարտովին անվանում է «ինքնասիրահար քաղքենիական նարգիզի նմուշ»⁶: Իր մտքերը պարզաբանելու համար Վ. Ի. Լենինն օգտագործել է «պրոկրուստյան մահիճ»⁷ արտահայտությունը, հիշատակել Միներվա (Աթենաս) աստվածուհուն, որ ծընվել է Յուպիտերի (Ջևս) գլխից, «Տանտալոսի տառապանքները», Կասանդրային: Վ. Ի. Լենինը ցարական Ռուսաստանը համարել է «Ալգյան ախոռներ»⁸, որոնք մաքուր մաքրեցին բուլշևիկները գոմաղբից՝ ինքնակալություն, դասայնություն, հողատիրություն ու հողօգտագործում, կնոջ վիճակ, կրոն, ազգությունների ճնշում:

Այնուհետև, կարգալուծ մեր և արտասահմանյան մեծ գրողներին՝ Պուշկին, Գոգոլ, Լերմոնտով, Ծիլեր, Ծեքսպիր, Գյոթե և ուրիշներ, մենք նրանց երկերում շարունակ հանդիպում ենք հունական ու հռոմեական աստվածների, աստվածուհիների, հերոսների ու հերոսուհիների: Գրողները, մեղքերելով Ապոլոնի, Ջևսի (կամ հռոմեական Յուպիտերի), Ափրոդիտեի (հռոմեական Վեներայի), Հերակլեսի (հռոմեական Հերկուլեսի) և շատ ուրիշ անուններ հաճախ հիշատակում են նրանց առանց որևէ բացատրության: Եվ ինքնին հասկանալի է, որ եթե ուզում ես ճիշտ հասկանալ մեր մեծ ուսուցիչների, ինչպես նաև մեծ գրողների, մտքերը այն դեպքերում, երբ

նրանք գործ են ածում Հին Հունաստանի աստվածների և հերոսների անունները, ապա հարկ է իմանալ, թե իրենցից ի՞նչ են ներկայացրել այդ աստվածները, ուրեմն և պետք է իմանալ Հին Հունաստանի առասպելաբանությունը:

Հիմա դառնանք մեր առօրյա կյանքին: Չէ՞ որ մեր ամենօրյա խոսք ու զրույցի մեջ մենք շարունակ օգտագործում ենք այսպիսի արտահայտություններ. «գիզանտային աշխատանք», «տիտանական պայքար»: Որտեղից են առնված «գիզանտային», «տիտանական» բառերը և ի՞նչ են նշանակում: Առնված են հունական առասպելաբանությունից: «Գիզանտային» բառը ծագում է «գիզանտ»-ից, որ նշանակում է ոտքերի փոխարեն օձեր ունեցող հսկա. այդ գիզանտների դեմ, ինչպես պատմվում է հունական դիցաբանության մեջ, կռվել են աստվածները: «Տիտանական» բառը ծագում է «տիտան»-ից: Տիտանները վիթխարի հսկաներ են եղել, որոնց դեմ ևս կռվել են Հին Հունաստանի աստվածները: Երբ ուզում ենք ասած լինել՝ «դա շատ գովար, բայց ապարդյուն աշխատանք է», ասում ենք՝ «սիզիփյան աշխատանք», երբ ուզում ենք բացատրած լինել, թե Վեճն ինչից է ծագել, ասում ենք՝ «աս հավախնձորը», մտաբերելով հունական աստվածներին, որոնք գծավեցին ոսկե խնձորի պատճառով: Ֆիզիկապես շատ զորեղ մարդուն Հերկուլես ենք կոչում, հմտորեն ձիավարող կնոջն ասում ենք՝ «իսկական ամազոնուհի է, որ կա»: Բոլոր այդ Սիզիփոսները, Հերկուլեսները, ամազոնուհիները առնված են հունական առասպելաբանությունից: Որտե՞ղ ասես, որ շենք հանդիպում Հին Հունաստանի աստվածների ու հերոսների անուններին. և՛ երկրաբանության, և՛ բուսաբանության և՛ կենդանաբանության և շատ ուրիշ գիտությունների մեջ: Հիշատակենք թեկուզ Ապոլոն, Մաքսոն, Անտիոպե. անունները կրող թիթեոսներին, չէ՞ որ սրանք ևս Հին Հունաստանի աստվածների ու հերոսների անուններ են: Բացի այդ, հունական աստվածների արձանները մենք երբեմն կարող ենք տեսնել և մեր փողոցներում ու հրապարակներում: Բավական է գնալ, ասենք, Մոսկվայի Մվերլուդի անվան հրապարակը, որպեսզի Ակադեմիական մեծ թատրոնի վրա տեսնենք հունական Ապոլոն աստծուն՝ քնարը ձեռքին, շառավիղի երկանվի վրա կանգնած:

Ի վերջո, պետք է աչքի առաջ ունենալ, որ ոչ միայն Հին Հունաստանի, այլև հետագա շրջանների արվեստը, քանդակագործությունը և գեղանկարչությունն ուսումնասիրել առանց առասպելա-

¹ Վուլկան — Հեփեստոս
² Roberts et Co — խոշոր մեքենաշինական գործարան
³ Յուպիտեր — Ջևս
⁴ Crédit Mobilier — խոշոր բանկ
⁵ Կ ա Ր Ը Մ ա Ր Ք ս — Բաղաբատնասության քննադատության շուրջը, 1948, էջ 270—271:
⁶ Վ. Ի. Լենին, Երկեր, 1952 թ., հ. 32, էջ 461:
⁷ Վ. Ի. Լենին, Երկեր, 1951 թ., հ. 23, էջ 441:
⁸ Վ. Ի. Լենին, Երկեր, 1952 թ., հ. 33, էջ 39:

բանութիւնն իմանալու՝ գրեթէ անհնար է: Չէ՞ որ նկարիչները, ինչպես առաջներում, այնպես էլ այժմ, հաճախ օգտագործում են հունական առասպելների սյուժեները: Հունաստանի զիցաբանութիւնը հմայում է այն կերպարների գեղարվեստականութիւնը, որ մենք տեսնում ենք նրանց մեջ: Գրանով է բացատրվում, թե ինչու են բոլոր ժամանակների նկարիչները, բանաստեղծները, գրողները, գիտնականները օգտվել առասպելներից:

Հիմա արգեն հասկանալի է, թե ինչու պետք է իմանալ հունական զիցաբանութիւնը, զոնե նրա կարևորագույն առասպելները:

Յուրաքանչյուր սք, ով կուզենա կարգալ այս գրքում գետեղված առասպելները, պետք է իմանա, որ դրանք շարադրված են այնպես, ինչպես պատմել են Հին Հունաստանի բանաստեղծները: Իսկ հին աշխարհի բանաստեղծները ձգտել են իրենց աստվածներին ու հերոսներին պատկերել ըստ հնարավորին ավելի լավ ու իմաստուն, ուժեղ ու համարձակ և ամենից առաջ՝ ամենազոր: Եվ, այնուամենայնիվ, ծանոթանալով հունական միթոլոգիային¹, զարմանում ենք, թե որքան անողորմ են հին հույների աստվածները, հաճախ որքան անարդար են նրանք, որքան նենգորեն խաբում են միմյանց ու հերոսներին, որքան հաճախ կոբստյան են մատնում բոլորովին անմեղ մարդկանց ու հերոսների: Ապոլոնն ու Արտեմիսը ինչու են այդպիսի բար դաժանութիւններ նետահարում նիքոբի զավակներին իրենց ռակեձուլ նետերով: Երեխաներն ի՞նչ մեղք են գործել նրանց առաջ: Չէ՞ որ մեղավորը նրանց մայրն է. նա՞ է անարգանք հասցրել Ատոլին՝ Ապոլոնի և Արտեմիսի մորը: Աստվածներն ինչու են կործանում Հեկտորին ու բոլոր տրոյացիներին: Նրանք քնալ մեղք չեն գործել ու մեծարել են աստվածներին: Կործանվում է անմեղ Լաոկոոնը՝ իր երկու որդիների հետ: Մի՞թե հանցանք է հայրենիքը փրկելու ձգտումը: Կա՞մ, թող Լաոկոոնը դրանով խախտած լինի անողորմ աստվածների կամքը: Հապա նրա զավակներն ինչով են մեղավոր: Գաժան են աստվածները, նենգամիտ ու անարդար: Որքան շարիքներ է գործում Զևսը, որքան դաժան է Հերան, որքան մոլեգին՝ Արեսը, իսկ Հերմեսը՝ և՛ խաբեբա է, և՛ մինչև անգամ գող: Գաժան են և հերոսները, նրանք ևս ամոթալի արարքներ են գործում: Պելոպսն սպանում է Մյուրտ-

իլոսին՝ խոստացած պարգևը նրան չտալու համար: Բայց Պելոպսը կհաղթե՞ր արդյոք էնոմայոսին, եթե Մյուրտիլոսը նրան օգնած չլինելու Ո՛չ: Նա կընկներ՝ էնոմայոսի նիզակից խոցված: Որպիսի՞ նենգամիտ, անողորմ վրիժառու էր Ոդիսսը, որ վրեժխնդիր եղավ Պալամեդեսից, որովհետև նա ստիպել էր մանակից լինել Տրոյայի արշավանքին: Գաժան էին հերոսներից մեծագույնները՝ Պերսևս, Թեսևս, Աքիլլես: Ինչու՞ Աքիլլեսն սպանեց պատանի Տրոյլոսին՝ Պրիամոսի որդուն: Մե՞ծ սխրագործութիւն էր անըն պատանուն սպանելը: Հաճախ նենգամիտ են հերոսները և գրեթէ միշտ՝ դաժան: Բայց աստվածների ու հերոսների այդ ամբողջ դաժանութիւնը, բոլոր այդ ամոթալի արարքները բացատրվում են նրանով, որ հույները նրանց պատկերացնում էին այն իշխող արիստոկրատիայի օրինակով, որի տիրապետութեան դարաշրջանում իրենց ավարտված կերպարանքն ստացան աստվածների և հերոսների առասպելները:

Սակայն հերոսների մեջ ուրիշ կերպարներ էլ կան: Ահա, օրինակ, Հերակլեսը, որ շատ սխրանքներ է գործել հօգուտ ժողովրդական խավերի: Հանուն նրանց սպանում է նեմեյական առյուծին, որ հարձակումներ էր գործում նախիրների և պահապան հովիվների վրա, բռնում էր իմանթոսյան վարազին, որ ամայացնում էր դաշտերը և այլն: Ահա և Պրոմեթէոսը. չէ՞ որ նա կրակը փախցնում է մարդկանց համար, նրանց համար է, որ ըմբոստանում է Զևսի դեմ, նրանց համար է ահավոր տառապանքներ կրում: Եվ ոչինչ չի կարող ընկնել հշտ Պրոմեթէոսի կամքը: Նա աստվածների բանբեր Հերմեսին այսպես է ասում. «Լավ իմացիր, ես իմ տանջանքները չեմ փոխի սարկուսիան հետ. ես գերադասում եմ ժայռին դամված մնալ, քան լինել Զևսի հավատարիմ ծառան»:

Գրա համար էլ Կարլ Մարքսը իր դոկտորական դիսերտացիայում Պրոմեթէոսի մասին գրել է. «Պրոմեթէոսը փիլիսոփայական օրացույցի ամենազնիվ սուրբն է և նահատակը»:

Բայց Հին Հունաստանի առասպելները կերպարների գեղարվեստականութիւնը մեզ գրավում են նաև նրանով, որ բոլոր աստվածներն ու հերոսները նախ և առաջ մարդիկ են իրենց բոլոր արժանիքներով ու քերտութիւններով: Հունական միթոլոգիայի կերպարները ոչ թե ինչոր անօրոտի սովերներ են, այլ կենդանի մարդիկ: Մեղ համար

¹ Միքոս—հունարեն՝ առասպել, լոգոս—խոսք, բան. միթոլոգիա՝ առասպելաբանութիւն կամ զիցաբանութիւն (Մ. Ք.):

հասկանալի են նրանց բերկրանքն ու վիշտը, հասկանալի են նրանց տառապանքները: Այո, աստվածներն ու հերոսները տառապում են: Տառապում է միևնույն իսկ Ձևը՝ կորցնելով Սեմեյիկին, իր որդու՝ Գիոնիսոս աստծու մորը: Ի՞նչն է նրա կործանման պատճառը. իսկ Սեմեյիկին փրկել Ձևը չէր կարող, քանի որ անողորմ մոլորաները՝ ճակատագրի աստվածուհիները, կործանում էին կանխատեսել նրան: Տառապում է և Ապոլոնը. կործանվում է դափնի դարձած Դափնեն, կորսության են մատնվում Հիակինթոսն ու Կիպարիսը, իսկ նրանց այնպե՛ս սիրում էր Ապոլոնը: Տառապում է սիրո ու գեղեցկության աստվածուհի ոսկեշող Ափրոդիտեն. անսպիտի է նրա վիշտը՝ մեռնում է գեղեցիկ Ադոնիսը: Իսկ որքա՛ն մեծ են հերոսների կրած տառապանքները: Հզոր պատանի Աքիլլեսը տառապում է՝ ականատես իր սիրասուն ընկեր Պատրոկլեսի և մյուս ընկերների կործանմանը: Անհուն վիշտ է բաժին ընկնում Ձևի որդուն՝ Հերակլես հերոսին. չէ՞ որ խելացնոր մոլեգնություն մեջ (որով նրան Հերա աստվածուհին էր համակել) նա սպանում է սիրասուն դավակներին, կորսության մատնում ընկերոջը՝ Իփիտոսին: Նա, այդ վսեմագույն հերոսը, ստիպված է ծառայել երկշտ ու թուլակազմ էվրիսթեսին: Վիշտը համակում է նաև Ձևին, երբ տեսնում է, թե ի՞նչ աղետների է ենթարկվում իր Հերակլես որդին: Բայց դա՛ է նրա ճակատագիրը: Ծանր է բազում ուրիշ հերոսների ճակատագիրը: Բելերոփոնը խելակորույս թափառում է երկրով մեկ իր կյանքի շնորհի տարիներին. Աթենքի մեծազոր հերոսը՝ Թեսևսը, թափառում է որպես վտարանդի, մինչև որ Սկիրոս կղզու թագավորը նրան խաբեություն բերում է ժայռի գազաթը և այնտեղից ծովը նետում: Բայց հերոսներից ոչ ոք այնքան տառապանքներ չի կրում, որքան էգիպտ. որքան էլ նա ջանում էր խույս տալ այն տարաբախտություններից, որ կանխատեսել էր նրա համար ճակատագիրը, նա ինքն էր դրանց ընդառաջ գնում: Անսպիտի վշտի պոթիկման պահին նա կուրացնում է իրեն և, իբրև կույր, մուրացիկ ծերունի, թափառում՝ հավատարիմ դուստր Անտիգոնեի ուղեկցությամբ: Մեծ են հերոսների տառապանքները, խորունկ վիշտ կա նրանց կյանքում: Ուրեմն ի՞նչ. այդպես անխի՞նդ է կյանքը: Ո՛չ, կյանքը, այսուհանդերձ, սքանչելի է: Իրենց ամբողջ էությունը, հոգու ամբողջ զորությամբ հերոսները սիրում են կյանքը: Թող որ ամեն մեկին էլ շատ վիշտ բաժին ընկնի, բայց վիշտն անցնում է ի վերջո և առավել

թանկ դարձնում կյանքի բերկրությունը: Այո՛, կա նաև վիշտ, բայց և այնպես բերկրալի է ավյունով ու գործունեությամբ լի կյանքը վառվումն արևի շողերի մեջ: Հին Հունաստանի առասպելները հենց այդ կյանքի հիմնն են, հայրենի երկրի ու ընկերների համար մղվող պայքարի հիմնը: Աքիլլեսը գիտե, թե իրեն ի՞նչ ճակատագիր է վիճակված, եթե մնա Սկիրոս կղզում՝ երկար, բայց անփառունակ կյանք, իսկ եթե մարտնչելու գնա Տրոյայի պարիսպների տակ՝ կյանքը կարճատև, բայց փառքը մեծ կլինի: Եվ Աքիլլեսը մեկնում է Տրոյական արշավանքի: Թող կյանքը կարճատև լինի, բայց դրա փոխարեն թող լեցուն լինի պայքարով, սխրանքներով, փառքով: Ո՛չ, կյանքը գեղեցիկ է: Ատելի է մահը: Աքիլլեսը, որի հոգին Ողիսեսը դուրս էր կանչել Հադեսի թագավորությունից, ասում է, թե նա կուզենար ավելի շուտ վերջին ծառան լինել երկրում, քան արքա՝ մեռյալների ստվերների մեջ: Դեպի արևաշող կյանքն է մղվում Աքիլլեսը: Հին Հունաստանի առասպելաբանությունը անել հոռոտեսություն չի ճանաչում: Առասպելները մեզ կոչ են անում հավատալ մարդկային եռանդին, նրա ստեղծագործ ուժերին, սովորեցնում են սիրել կյանքը, բայց այն կյանքը, որ լի է ստեղծագործ աշխատանքի ավյունով:

Առասպելների ընթերցանությունը, ի վերջո, մեծապես օգնում է Հին Հունաստանի պատմությունն ուսումնասիրելիս:

Առասպելները պատմում են մեզ, թե ինչպե՛ս են ապրել ու մտածել հին հույները, ի՞նչն են բարիք համարել, ի՞նչը՝ չարիք, ի՞նչը՝ ազնիվ, ի՞նչը՝ անազնիվ: Այդ առասպելների միջոցով մենք իմանում ենք, թե հույները, այն ժողովուրդը, որի «բազմակողմանի ձիրքն ու գործունեությունը», ինչպես ասել է Ֆրիդրիխ Էնգելսը, «մարդկության պատմության մեջ նրա համար ապահովել են այնպիսի մի տեղ, որպիսին չէր կարող հավակնել և ոչ մի այլ ժողովուրդ»¹, ի՞նչպես են պատկերացրել շրջապատի ամբողջ աշխարհը:

Հիշենք Ֆ. Էնգելսի նաև այն խոսքը, որ «առանց Հունաստանի և Հռոմի դրած հիմքի՝ չէր լինի նաև ժամանակակից Եվրոպան»²: Ուրեմն անհրաժեշտ է ուսումնասիրել Հին Հունաստանի պատմությունն ու կուլտուրան իր բոլոր դրսևորումների մեջ: Եթե այդպես է, ապա պետք է ուսումնասիրել նաև Հին Հունաստանի դիցաբանու-

1 Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, Հայպետհրատ, 1950, էջ 37:

2 Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Հայպետհրատ, 1952, էջ 231:

թյունը, որ նրա կուլտուրայի մի մասն է, մեկը այն հիմնաքարերից, որոնց վրա բարձրացել է ժամանակակից Եվրոպան:

Բայց, իհարկե, նա, ով վճռում է ուսումնասիրել Հին Հունաստանի գիցարամոլությունը և այն հարցը, թե ինչպես են առաջ եկել ու զարգացել առասպելները, ինչպես են փոխվել նրանք Հունաստանի հասարակության կուլտուրական աճի համեմատ, պետք է հիշի, որ իր առաջ մի բարդ խնդիր է դնում: Չէ՞ որ առասպելների մեջ մենք տեսնում ենք մինչև իսկ այն ժամանակաշրջանի վերապրուկները, երբ Հունաստանը կանգնած էր դեռևս բարբարոսության աստիճանի վրա, երբ դեռ կենդանի էր տոհմատիրական կարգը, դեռ գոյություն ունեին տոհմերը, և այն էլ ոչ թե հայրիշխանական, այլ ավելի հին՝ մայրիշխանական տոհմերը: Հենց միայն դա ցույց է տալիս, թե ինչպիսի բարդություն է ներկայացնում Հին Հունաստանի առասպելաբանության ուսումնասիրությունը:

Եթե այս կարճատև ներածության մեջ շոշափվեք առասպելների առաջացման գեթ մի հարց, ապա ներածությունն անխուսափելիորեն կդառնար ուսումնասիրություն և մի ամբողջ հատոր կզբաղվեր: Այս ներածականի խնդիրն այն է միայն, որ ընթերցողներին բացատրվի, թե ինչու պետք է իմանալ Հին Հունաստանի գիցարամոլությունը, ինչպես նաև տալ առասպելների ընդհանուր և համատուր բնութագրությունը:



Սակայն այս սեղմ ներածականն իր նպատակին հասած չէր լինի, եթե մենք չխոսեինք հին հույների էպոսի մասին: Չէ՞ որ այս գրքի երկրորդ մասն ամբողջությամբ նվիրված է մեզ հասած «Իլիական» և «Ոդիսական» Տրոյական շարքի մեջ մտնող այդ էպիկական պոեմների, ինչպես նաև այն ամենի շարագրությանը, ինչ հատվածաբար մեր ժամանակներն է հասել ուրիշ պոեմներից, որոնք մտնում են ինչպես Տրոյական, այնպես էլ Թեբեական շարքերի մեջ:

Իհարկե, այս դեպքում անհնար է բոլոր մանրամասնություններով շոշափել հին հույների էպոսի ծագման և զարգացման բնթացքի խնդիրը կամ այն հարցը, թե գոյություն ունեցե՞լ է արդյոք բանաստեղծ Հոմերոսը, նա՞ է արդյոք «Իլիականի» և «Ոդիսակա-

նի» հեղինակը և այլն: Այս սեղմ ներածության մեջ մենք կսահմանափակվենք հին հույների էպիկական ստեղծագործության թուուցիկ բնութագրությամբ միայն:

Երկրագնդի վրա չկա մի ժողովուրդ, որ ավանդույթներ չունենա վաղուց ի վեր անցած ժամանակների եղելությունների մասին: Այդ ավանդույթունների մեջ հաճախ պատմվում է խոր հնության շրջանում ապրած մեծ հերոսների ու նրանց արտասովոր մեծագործությունների մասին: Նման ավանդույթունները՝ բաղկացած առանձին երգերից, հաճախ էլ չափաժողովուրդով, սովորաբար կատարել են հատուկ երգիչ-աստղները: Այդ ավանդույթունները սովորաբար հերոսական էպոս են կոչում: Մենք այդպիսի բաղմամբիվ հերոսական էպոսներ գիտենք, որոնք պատկանում են տարբեր ժողովուրդների. Ֆինիների «Պալեալան», հին գերմանացիների «Եղդան» և «Նիբելունգների երգը», Հյուսիսային Ամերիկայի հնդդիկների «Հայավաթի երգը», որի հետ, դժբախտաբար, կարելի է ծանոթանալ միայն այն ձևով, ինչպես մշակել է բանաստեղծ Լոնդֆելդը: Մենք գիտենք դուրսագոյություն, օրինակ՝ Մանասին ու նրա արշավանքներին նվիրված պոեմներ. մենք ծանոթ ենք հայկական, վրացական, մոնղոլական, ուզբեկական, յակուտական և ուրիշ ժողովուրդների պատկանող էպոսներին: Մենք գիտենք, վերջապես, առական բիլինաները Իլյա Մուրոմցու, Սադկոյի, Վասիլի Բուլաևի, Միկուլա Սելյանինովիչի և ուրիշների մասին:

Այդպիսի հերոսական էպոս ունեցել են նաև հին հույները: Հին հույների հերոսական էպոսի երգերը, ինչպես և բոլոր մյուս ժողովուրդներին, հյուսվել են, իհարկե, որևէ պատմական այնպիսի մի եղելության առթիվ, որ խոր հետք է թողել Հին Հունաստանի կյանքի մեջ, բայց այդ երգերը տարածող երգիչները նրանց մեջ մուծել են նաև բաղմամբիվ այնպիսի սյուժեներ, որոնք առել են ժողովրդական հեքիաթների միջից: Այդպիսին են, օրինակ, այն պատմությունները, թե Ոդիսևսն ինչպես է կուրացրել կիկլոպ Պոլիփեմոսին, ինչպես է իր ուղեկիցների հետ ընկել կախարդ Կիբելի մոտ, իսկ սա նրա ուղեկիցներին խող է դարձրել: Այդօրինակ հեքիաթային մոտիվների մենք հանդիպում ենք ինչպես «Ոդիսականում», այնպես էլ «Իլիականում»: Հույների մեջ հերոսական էպոսի առանձին հատվածները հավաքներում ու խնջույքներում երգում էին հատուկ

երգիչներ՝ անդոսները, այնպես, ինչպես հին գերմանացիների մեջ՝ երգիչ-բարդերը, իսկ ռուսների մեջ հին ժամանակներում՝ բայանները. բիլինաները մեզ մոտ, երկրի հյուսիսում մինչև օրս էլ երգում են բիլինաներ ասողները: Կովկասում էպիկական երգերն ասում են գուսանները և աշուղները, ուղբեկների մեջ՝ բակչիները և այլն: Սկզբում այդ երգերը ոչ ոքի կողմից գրի չէին առնվում, քանի որ դրանք հյուսում էր հենց ինքը երգիչը, և շարունակաբար այդ երգերը փոփոխվում էին: Բայց հետզհետե ստեղծվեցին այնպիսի երգեր, որոնք փառաբանում էին որևէ իրական դեպք կամ հանրահայտ մի հերոսի, իսկ այդպիսի երգերը ավարտված ձև էին ընդունում և այլևս չէին փոփոխվում: Երգիչները դրանք անդիր գիտեին: Բայց դրանք սկզբում չէին կարող գրի առնվել, քանի որ ստեղծվել էին այն ժամանակներում, երբ գիր չկար: Երգերն սկսվեցին գրի առնվել այն ժամանակ, երբ գիրն ստեղծվեց: Հույներն իրենց էպոսը գրի առան ն. թ. ա. VI դարում միայն, թեև այն սկսել էր գոյանալ դրանից մի քանի դար առաջ:

Հին հունական հերոսական էպոսից ամբողջական ձևով մեզ հասել են երկու պոեմներ՝ «Իլիականը» և «Ոդիսականը»: Հույներն ասում էին, որ դրանք հյուսել է կույր երգիչ Հոմերոսը, որ ապրել է հնագույն ժամանակներում: Բայց ամենայն հավանականությամբ Հոմերոսը երբեք գոյություն չի ունեցել. նա էլ առասպելական մի բանաստեղծ-երգիչ է, ինչպես այն Օրփեոսը, որի առասպելը տեղ է գտել այս գրքի առաջին մասում:

Երկու պոեմն է. «Իլիականը» և «Ոդիսականը», իհարկե, չէին կարող մեզ հասնել այն վիճակում, ինչպես հյուսվել են սկզբում: Դրանք մեզ հասել են այն ձևով, ինչպես հաղորդել են երգիչ-բանաստեղծներն ավելի ուշ շրջանում, այն ձևով, ինչպես առաջին անգամ գրի են առնվել ն. թ. ա. VI դարում, Աթենքում: Այդ գրառումը, ճիշտ է, շատ աննշան վերափոխել են Ալեքսանդրիայի գիտնականները ն. թ. ա. II դարում:

Բայց որքան էլ մշակված լինեն «Իլիականն» ու «Ոդիսականը», այնուամենայնիվ, ուշադիր ընթերցելիս մեզ համար պարզ է դառնում, որ դրանք բաղկացած են առանձին հերոսների, օրինակ՝ Մենելաոսի, Պատրոկլեսի, Դիոմեդեսի, Աքիլլեսի և մյուսների սխրագործությունների, ինչպես նաև Ոդիսեսի՝ էռլոս աստծու կղզում, կիկլոպների մոտ, փեակների արքա Ալքինոոսի հետ և այլուր պատահած արկածների մասին հյուսված մի ամբողջ շարք առանձին

երգերից: Բոլոր այդ առանձին երգերը «Իլիականի» մեջ խմբավորված են Աթիլլեսի և Ագամեմնոնի գժտության պատմության շուրջը, իսկ «Ոդիսականում»՝ այն պատմության շուրջը, թե ինչպես է Ոդիսեսը վերադարձել իր հայրենի Իթակե կղզին և վրեժխնդիր եղել իր կնոջը՝ Պենելոպեին գայթակղեցնող և իր տիրապետությունը քայքայող փեսացուներից:

Ամբողջությամբ առած բոլոր այդ երգերը, որոնցից բաղկացած են այդ երկու պոեմները, խմբավորված են հարուստ ու հզոր Տրոյա քաղաքի բնակիչների դեմ հույների մղած պայքարի ավանդությունների շուրջը: Այդ ավանդություններն ստեղծվել են շնորհիվ այն իրողության, որ հույները հիշում էին իրոք տեղի ունեցած դեպքերը. այն, որ նրանք, Բալկանյան թերակղզուց գաղթելով Փոքր Ասիայի ափերը և նոր քաղաքներ ու գաղութներ հիմնելով, պայքար են մղել այնտեղ բնակություն հաստատած ցեղերի դեմ: Ամենայն հավանականությամբ, Տրոյան ևս ինչ-որ ժամանակ գոյություն է ունեցել: Դա կարելի է հաստատել նրանով, որ XI-X դարում հուշակավոր հնագետ Հենրիխ Շլիմանը Փոքր Ասիայի Հիսարիկ բլրի վրա, Հելեսպոնտոսից (այժմյան Դարդանելի նեղուցը) ոչ հեռու պեղել է քաղաքը ճիշտ այն վայրում, ուր, ըստ հույների վկայության, ինչ-որ ժամանակ գոյություն է ունեցել Տրոյան. և «Իլիականում» Տրոյայի շրջակայքի նկարագրությունն էլ հարազատորեն համընկնում է Շլիմանի պեղած քաղաքի շրջակայքին:

Ե՞րբ են ստեղծվել «Իլիականն» ու «Ոդիսականը»: Երբ մենք ուսումնասիրում ենք այդ պոեմները, պարզ է դառնում, որ դրանք ստեղծվել են խոշոր վարելահողերի, արոտավայրերի, այգիների, բանջարանոցների, կովերի ու ցուլերի, այծերի ու ոչխարների, մեծաքանակ նախիրների տեր ռազմատնահային արիստոկրատիայի միջավայրում. նրանք ունեին նաև բազմաթիվ ստրուկներ ու ստրուկուհիներ: Հենց այդ ռազմատնահային արիստոկրատիայի շահերն են, որ արտահայտվել են «Իլիականի» ու «Ոդիսականի» մեջ: Պոեմների հերոսներն այդ դասակարգին են պատկանում, նրա՛ սխրանքներն են երգում «Իլիականն» ու «Ոդիսականը»: Պոեմներում հաստատվում է, որ բոլորը նրա՛ն պիտի ենթակա լինեն, նրա՛ համար աշխատեն, նրա՛ն ծառայեն: Տիրապետող այդ արիստոկրատիայի գլուխ կանգնած են եղել առաջնորդ-բասիլևսները: Հասարակ քաղաքացիների՝ շարքային ռազմիկների դերը պետու-

թյան կառավարման մեջ մեծ շի եղել: «Իլիականում» կենդանի զույներով պատկերված է, թե հերոս-բասիլևս Ողիսևսն ի՞նչ դաժան դատաստան է տեսնում շարքային ռազմիկների ներկայացուցիչ Քրեսիտեսի հետ, երբ սա հանդդուում է առարկել բասիլևսների: «Իլիականն» ու «Ողիսականը» ստեղծվել են այն դարաշրջանում, երբ տոհմային հասարակության ներսում արդեն սկսում են դասակարգեր առաջանալ, երբ սկսում է ձևավորվել դասակարգային պետությունը: Միկենե, Օրբոմենոս և ուրիշ քաղաքներում, ինչպես նաև Կրետե կղզում կատարված պեղումները մեր առաջ բաց արեցին անխորտակելի պարիսպներով ամրացված հնագույն քաղաքներ, պալատներ, ուր ապրելիս են եղել թագավոր-բասիլևսները՝ ռազմական արիստոկրատիայով շրջապատված, շքեղ դամբարաններ, որոնց մեջ հանգուցյալի հետ միասին դրվել են թանկագին իրեր, ոսկեզարդ բրոնզե զենքեր: Այդ պեղումները, որոնք մեր առաջ բաց արին այսպես կոչված Միկենյան կուլտուրան, մեզ մղում են ասելու, որ Միկենյան կուլտուրայի գոյության ժամանակաշրջանի կենսաձևը շափազանց մոտ է այն կենսաձևին, որ պատկերված է «Իլիականում» և «Ողիսականում»: Հետևաբար, մենք բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ «Իլիականն» ու «Ողիսականը» սկսել են ստեղծվել հենց Միկենյան դարաշրջանում, այսինքն՝ ն. թ. ա. XII դարում: Պոեմները, իհարկև, միանգամից չեն ստեղծվել, այլ աստիճանաբար՝ առանձին երգերի ձևով: Ստեղծվածները զարգանում էին, առանձին երգերը՝ միասնում: Առաջանում էին պոեմներ: Այդ պոեմների ստեղծման ընթացքը երկարատև է եղել: «Իլիականն» իր ավարտված ձևն ստացել է ն. թ. ա. IX դարում, «Ողիսականը»՝ ն. թ. ա. մոտ VIII դարում:

Բայց ավելի ուշ ժամանակներում հին հույներն ի՞նչ վերաբերմունք են ունեցել «Իլիականի» և «Ողիսականի» հանդեպ: Մենք գիտենք, որ նրանք բարձր են գնահատել այդ պոեմները՝ զեղարվեստական արժանիքների համար: Հույները հաճույքով են լսել այդ պոեմները: Իսկ «Իլիականի» և «Ողիսականի» երգերը արդեն ոչ թե անդոսներն էին երգում՝ հաճախ իմպրովիզացիայի ենթարկելով դրանք, այլ այսպես կոչված ռապսոդները՝ երկու պոեմներն էլ սովորած երգիչները: Ռապսոդներն ասպարեզ են եկել ն. թ. ա. VII դարում: Բովանդակ Հունաստանում շրջում էին ռապսոդները՝ ձեռնափայտով, դափնեպսակը զլխներին հանգես էին գալիս հույների հավաքներին, քնարի նվագակցությամբ երգելով «Իլիականն»

ու «Ողիսականը»: Աթենքում, Աթենաս-Պալլաս աստվածուհու տունայմբուլյուններին (որոնք Պանաթենականք էին կոչվում և շարունակվում մի քանի օր) ռապսոդները «Իլիականն» ու «Ողիսականը» երգում էին ամբողջությամբ: Նրանք մրցութային մեջ էին մտնում, թե ո՞վ ավելի լավ կերգի Հոմերոսի պոեմների երգերը, և հաղթանակողը, որպես պարգև, ոսկեպսակ էր ստանում: Թուկիդիդես պատմիչը, որ ապրելիս է եղել ն. թ. ա. V դարում, նաև Հոմերոսին է երգիչ-ռապսոդ համարել, թեև, եթե իրոք Հոմերոսը գոյություն է ունեցել, ապա նա ոչ թե ռապսոդ, այլ աեղոս պետք է եղած լինի, որ ինքն է հյուսում իր երգերը: Շարքային հույների մեջ շատերն են եղել, որ ռապսոդ չլինելով, անգիր իմացել են «Իլիականն» ու «Ողիսականը» կամ, առնվազն, նրանց մեծ մասը: Եվ դա զարմանալի չէ, քանի որ Հունաստանի բոլոր դպրոցներում ուսումնասիրվել են այդ պոեմները. նրանցով է դաստիարակվել Հին Հունաստանի ամբողջ երիտասարդությունը: Պլատոն փիլիսոփան, որ ապրելիս է եղել ն. թ. ա. IV դարում, Հոմերոսի մասին, որին նա համարել է «Իլիականի» և «Ողիսականի» հեղինակը, ասել է. «Այդ բանաստեղծն է դաստիարակել Հելլադան»:

Հին Հունաստանում ուրիշ էպիկական պոեմներ էլ եղել են: Չէ՞ որ ամեն մի տոհմ, ամեն մարդ ու քաղաք ունեցել է իր հերոսները և պատմել նրանց մեծ սխրանքների մասին. դորեանցիները պատմել են Հերակլեսի ու նրա հետնորդների՝ հերակլիդների մասին, աթենացիները՝ Թեսևսի, թեբեացիները՝ յոթ առաջնորդների արշավանքի մասին ընդդեմ Թեբեի և բազմաշարժար էդիպ արքայի և այլն: Ամեն մի մարդում, ամեն մի տոհմի մեջ պատմել են ոչ թե մեկ, այլ բազում հերոսների մասին և մի սխրագործություն չեն վերագրել այդ հերոսներից յուրաքանչյուրին, այլ՝ բազմաթիվ: Հետևաբար և բազմաթիվ էլ երգեր են հյուսվել: Այդ երգերը, ինչպես նաև «Իլիականի» մեջ մտած երգերը, հետագայում խմբավորվել են որևէ կարևոր անցքի շուրջը: Այսպիսով, հետզհետե ստեղծվել է այն, ինչ սովորաբար պատումների շարք են կոչում: Մենք ամենից ավելի լավ ծանոթ ենք Տրոյական շարքին՝ նրա մեջ են մտնում «Իլիականն» ու «Ողիսականը»: Մյուս շարքերի մասին մենք շատ քիչ բան գիտենք: Եվ մեկ էլ միայն Թեբեական շարքը մի քիչ ավելի լավ գիտենք, և դա՝ շնորհիվ այն հանգամանքի, որ այդ շարքի մեջ մտնող ավանդություններն օգտագործել են հունական

մեծ ողբերգակաները: Սոփոկլիսը, օրինակ, օգտագործել է բազմաշարժար էդիպ արքայի և նրա զավակների ավանդությունը:

Իբրև եղբակացություն, անհրաժեշտ է ասել հետևյալը. հին հույների այնպիսի ստեղծագործություններին, ինչպիսիք են «Իլիականն» ու «Ոդիսականը», բավական չէ ծանոթանալ միայն վերաշարադրություններով. դրանք պետք է իմանալ ամբողջապես: Բարեբախտաբար, պոեմները թարգմանված են բոլոր եվրոպական, և ոչ միայն եվրոպական, լեզուներով: Պետք է հիշել, որ ոչ մի ժողովրդի էպոս այնպիսի ազդեցություն չի ունեցել համաշխարհային գրականության վրա, ինչպես հին հույների էպոսը և առաջին հերթին, իհարկե, «Իլիականն» ու «Ոդիսականը»:

Մ Ե Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ա Ս Տ Վ Ա Ծ Ն Ե Ր Ե Վ Հ Ե Ր Ո Ս Ն Ե Ր

Ա Ս Տ Վ Ա Ծ Ն Ե Ր

ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Ասավածների, ինչպես նաև զիգանտների ու տիտանների դեմ նրանց մզած պայքարի առասպելները շարադրված են հիմնականում բառ Հեսիոդոսի «Թեոգոնիա» (Ասավածների ծագումը) պոեմի: Որոշ պատումներ առնված են նաև Համերոսի «Իլիական» ու «Ոդիսական» և հռոմեական բանաստեղծ Օվիդիոսի «Կերպարանափոխություններ» («Մետամորֆոզներ») պոեմից:

848

Ամենից առաջ գոյություն է ունեցել միայն հավիտենական, անսահման մթին Քաոսը: Նրա մեջ էր ամփոփված աշխարհի կյանքի աղբյուրը: Ամեն ինչ առաջացել է անսահման Քաոսից՝ ամբողջ աշխարհն ու անմահ աստվածները: Քաոսից է առաջացել նաև Երկրի աստվածուհին՝ Գեան: Լայնատարած է նա, ամենազոր, նա կյանք է տալիս այն ամենին, ինչ որ ապրում և աճում է նրա վրա: Երկրի ընդերքում շատ խոր և հեռու, այնքան հեռու, որքան հեռու է մեզնից անսահման լուսավոր երկինքը, անչափելի խորության մեջ ծնվեց մոռյլ Տարտարոսը՝ ահավոր անդունդը, լեցուն հավիտենական խավարով: Քաոսից՝ կենսատու աղբյուրից, ծնվեց նաև հզոր ուժը՝ ամեն ինչին կենդանություն տվող Սերը՝ էրոսը: Սկսվեց աշխարհի ստեղծումը: Անսահման Քաոսը ծնեց հավերժական Խավարը՝ էրեբոսը և մութ Գիշերը՝ Նիրսը: Իսկ Խավարից ու Գիշերից առաջ եկան հավերժական Լույսը՝ Եթերը, հրճվալից ու պայծառ օրը՝ Հեմերան: Լույսը հորդեց աշխարհով մեկ, և գիշերն ու ցերեկն սկսեցին հաջորդել իրար:

Հզոր ու բազմաշնորհ Երկիրը ծնունդ տվեց անծայրածիր կապուտակ Երկնքին՝ Ուրանոսին, և տարածվեց Երկինքը Երկրի վրա: Հպարտությունը դեպի Երկինք խոյացան Երկրի ծնած բարձրագա-

գաթ Լեոները և տարածվեց հարատև ազմկող Մովսիս Մայր Երկրից են ծնունդ առել Երկիրնքը, Լեոները և Մովսիսը. նրանք հայր շունեն:

Ուրանոս-Երկիրնքը տիրակալ դարձավ աշխարհին: Նա իրեն կնություն առավ բազմաշնորհ Երկիրին: Վեց որդի և վեց դուստր՝ հզոր ու ահեղ տիտաններ ունեին Ուրանոսն ու Գեան: Նրանց որդին՝ տիտան Օվկիանոսը, որ անեղը գետի պես ողողում էր ամբողջ Երկիրը, և աստվածուհի Քեոփսը լույս աշխարհ բերին բոլոր գետերը, որոնք ալիք տալով հոսում են դեպի ծով և դեպի ծովային աստվածուհիները՝ Օվկիանուհիները: Տիտան Հիպերիոնն ու Քեան աշխարհ բերեցին իրենց զավակներին՝ Արև-Հելիոսին, Լուսին-Սելենին և բոսորագույն Արշալույսին՝ էոսին (Միջրոր): Աստրեայից և էոսից ծնունդ առան գիշերվա խավար երկնքում վառվող բոլոր աստղերը և բոլոր քամիները: Հյուսիսային մոլեգրին քամին՝ Բորեասը, արևելյանը՝ էվրոսը, հարավային խոնավ քամին՝ Նոտոսը և արևմտյան փաղաքուշ քամին՝ Աեֆլուրոսը, որ անձրևաբեր ամպեր է կուտակում:

Տիտաններից բացի, ամենահզոր երկիրը առաջ բերեց երեք հսկաների՝ միակնանի կիկլոպներին և լեռան պես վիթխարի, հիսունալիսանի, հարյուրաձեռք երեք հսկաներին (հեկատոքեյրերին), որոնք այդպես են կոչվում յուրաքանչյուրը՝ հարյուր ձեռք ունենալու պատճառով: Նրանց ահեղ ուժին ոչինչ չի կարող դիմազարավել, նրանց տարերային ուժը սահման չի ճանաչում:

Ատեց Ուրանոսն իր հսկա-զավակներին. Երկրի աստվածուհու ընդերքում կալանեց նրանց խորին խավարում և թույլ շտվեց լույս աշխարհ դուրս գալ: Տառապում էր նրանց մայր Երկիրը: Նրան ճնշում էր իր ընդերքում ամփոփված ահավոր բեռը: Նա իր մոտ կանչեց տիտան զավակներին ու համոզեց ըմբոստանալ հոր՝ Ուրանոսի դեմ, բայց նրանք վախեցան ձեռք բարձրացնել իրենց հոր վրա: Նրանցից միայն կրտսերը՝ նենգամիտ Քրոնոսը¹, խորամանկությամբ տապալեց հորը և խլեց նրա իշխանությունը:

Գիշեր աստվածուհին, իբրև պատիժ Քրոնոսին, ծնեց մի ամբողջ կույտ սոսկալի աստվածություններ. Քանատոսին-մահ, էրիսին-պառակտություն, Ապատին-խաբուսություն, Կերերին-ոչնչացում, Հիպոսին-քուն՝ բազում ծանր ու մուսլլ երազներով, անողոր

նեմեսիսին-վրեժխնդրություն և շատ ուրիշների: Սոսկում, պառակտություն, խաբուսություն, կոխվ ու զժբախատություն բերին այդ աստվածները աշխարհ, որտեղ հոր գահի վրա տիրակալ դարձավ Քրոնոսը:

ՋեվՍ

ՋեվՍԻ ԾՆՈՆՆԵՐ

Քրոնոսը վստահ չէր, որ իշխանությունն ընդմիջա կմնա իր ձեռքում: Նա երկյուղ ունեցր, որ իր դեմ կապատամբեն զավակները և իրեն կզատապարտեն նույն ճակատագրին, որին ինքը արժանացրեց իր հորը՝ Ուրանոսին: Նա վախենում էր իր զավակներից: Եվ հրամայեց Քրոնոսն իր կնոջը՝ Հեանային, որ նա իր մոտ բերի ծնած երեխաներին, և անգթորեն կուլ տվեց նրանց: Սարսափեց Հեանն իր զավակներին վիճակված ճակատագրերը տեսնելով:

Հինգին Քրոնոսն արգեն կուլ տվեց. Հնաստիային², Գեմետրային³, Հերային, Հագեսին (Աիդ) և Պոսեյդոնին⁴:

¹ Ջեւ—հռոմեական Յուպիտերը: Օլիմպոսի աստվածների կյանքի պատկերը տրված է ըստ Հոմերոսի ստեղծագործության՝ «Փիլականի» և «Ոգիսականի»: Այդ երկերում փառաբանված են տոհմատիրական արիստոկրատիան և նրա զուլի կանգնած բառիկաները՝ իբրև բոլորից լավ, մնացած ժողովրդից շատ ավելի բարձր կանգնած անձինք: Օլիմպոսի աստվածները արիստոկրատներից և բասիլաներից տարբերվում են միայն անմահությամբ, ամենազորությամբ և հրաշքներ գործելու կարողությամբ: Ջեւն էլ մի բասիլան է, որ տիրում է ամբողջ երկրին ու երկնքին, հենվելով աստվածների արիստոկրատիայի վրա: Պոսեյդոնը ևս Ջեւի նման իդեալականացված բասիլան է: Նա իշխում է ծովի վրա՝ շրջապատված ծովային աստվածների արիստոկրատիայով: Ուրեմն, աստվածների մեջ ևս, ինչպես մարդկանց, մեք տեսնում ենք բասիլաներ, որոնցից յուրաքանչյուրը իշխում է իր ասպարեզում: Ջեւը տիրում է երկրին ու երկնքին, Պոսեյդոնը՝ ծովին, իսկ Հագեսը՝ ստորերկրյա թագավորությանը: Հունաստանի կրոնի մեջ ցայտուն կերպով արտահայտված է նրա դասակարգային բնույթը:

² Ջեւաբերության կրակի և ընտանեկան օջախի աստվածուհին, քաղաքների ու պետության հովանավորը: Հետագայում Հոմոսում Հեանայի հետ նույնացվեց վեստան՝ ընտանեկան օջախի աստվածուհին:

³ Հողի արգավանդության մեծ աստվածուհին, որ անցնում է այն ամենը, ինչ բուսում է երկրի վրա, որ բերք է տալիս արտերին, օրհնում երկրագործի աշխատանքը: Հոմոսացիները Գեմետրա աստվածուհուն կոչեցին արտերի արգավանդության իրենց հին աստվածուհու՝ Յերերայի անունով: Գեմետրայի առասպելները տե՛ս ստորև:

⁴ Հոմոսացիների մեջ սրանց համապատասխանում են Յոնոնան, Պլուտոնը և Նեպտունը:

¹ Քրոնոս — ժամանակ, այստեղից էլ խրոնոլոգիա՝ ժամանակագրություն:

Հոնան շուրջ իր վերջին մանկանն էլ կորցնել: Իր ծնողներին՝ Ուրանոս-Սրկնքի և Գեա-Սրկրի, խորհրդով նա հեռացավ, գնաց Կրետե կղզին, և խորունկ մի անձավում ծնվեց նրա կրտսեր որդին՝ Զևսը: Այդ անձավում նա թաքցրեց իր որդուն դաժան հսրից, և որդու փոխարեն բարուրի մեջ փաթաթված մի երկարուկ քար տվեց նրան, որ կուլ տա: Քրոնոսը չկասկածեց, որ խաբված է կնոջից:

Իսկ Զևսը մեծանում էր Կրետեում: Հավերժահարսներ Ադրաստեան և Իգեան զուգուրում էին փոքրիկ Զևսին, նրան սնում էին Ամաթեա աստվածային այծի կաթով: Մեղուները փոքրիկ Զևսի համար մեղր էին բերում Գիկտե բարձր լեռան լանջերից: Իսկ անձավի մուտքի մոտ հսկում էին պատանի կուրետները՝ և ամեն անգամ, երբ փոքրիկ Զևսը լաց էր լինում, նրանք սրերով խփում էին վահաններին, որպեսզի Քրոնոսը չլսի նրա լացի ձայնը, և Զևսին էլ չվիճակվի նրա եղբայրների ու քույրերի ճակատագիրը:

ԶԵՎՍԸ ՏԱՊԱՆԻՄ Է ՔՐՈՆՈՍԻՆ: ՕԼԻՄՊՈՍԻ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ՝
ՊԱՅՔԱՐԸ ՏԻՏԱՆՆԵՐԻ ԴԵՄ

Աճեց ու առնացավ հզոր ու սքանչելի աստված Զևսը: Նա ըմբոստացավ հոր դեմ և նրան ստիպեց նորից լույս աշխարհ բերել կլանած երեխաներին: Քրոնոսը բերնից իրար հետևից դուրս թափեց իր գեղեցիկ և լուսավոր աստված-զավակներին: Նրանք պայքարի մեջ մտան Քրոնոսի ու տիտանների դեմ՝ աշխարհի տիրապետությունը նվաճելու համար:

Համառ ու ահավոր էր այդ պայքարը: Քրոնոսի զավակները հաստատվեցին բարձրաբերձ Օլիմպոսի վրա: Նրանց կողմն անցան նաև տիտաններից մի քանիսը և ամենից առաջ՝ տիտան Օվկիանոսը և նրա դուստր Ստիքսը՝ իր զավակների՝ Զգոման, Հզորության ու Հաղթանակի հետ: Օլիմպոսցի աստվածների համար դա վտանգավոր պայքար էր: Հզոր ու ահեղ էին նրանց ոսոխները՝ տիտանները: Բայց կիկլոպները Զևսին օգնության հասան: Նրանք Զևսի համար որոտ և կայծակ էին կոփում, իսկ Զևսը դրանք նետում էր տիտանների վրա: Պայքարն արդեն տասը տարի էր ինչ շարունակվում էր, բայց հաղթանակը չէր թեքվում ոչ մեկ, ոչ էլ մյուս կողմը: Վերջա-

պես, Զևսը վճռեց երկրի ընդերքից աղատել հարյուրածեռ հսկաներին, և նրանց օգնության կանչեց: Սոսկալի և լեռան պես վիթխարի՝ նրանք ելան երկրի ընդերքից ու նետվեցին կովի մեջ: Նրանք լեռներից ահագին ապառաժներ էին պսկում ու շարտում տիտանների վրա: Բյուրավոր ժայռեր էին թռչում տիտաններին ընդառաջ, երբ նրանք մոտենում էին Օլիմպոսին: Տնքում էր Սրկիրը, թոհուբոհը հագեցրել էր օդը, շուրջը շուրջ ամեն ինչ ցնցվում էր: Նույնիսկ Տարտարոսն էր ցնցվում այդ պայքարից: Զևսը իրար հետևից նետում էր բոցեղեն կայծակներ և խլացուցիչ դղրդացող որոտներ: Բոցը բռնեց ամբողջ երկիրը, ծովերը եռացին, ծուխն ու դարշահատությունը թանձրություն մեծացրին ամենալի ինչ:

Վերջապես հզոր տիտանները ցնցվեցին: Նրանց ուժը կտրվել էր, նրանք պարտված էին: Օլիմպոսցիները կապկպեցին նրանց և նետեցին դժխեմ Տարտարոսը՝ հավերժական խավարի մեջ: Տարտարոսի պղնձակոփ անխորտակելի դարպասի մոտ պահապան կանգնեցին հարյուրածեռ հսկաները. և հսկում են նրանք, որ հզոր տիտանները Տարտարոսից դուրս չգան: Աշխարհի վրա տիտանների իշխանության վերջը եկավ:

ԶԵՎՍԻ ՊԱՅՔԱՐԸ ՏԻՓՈՆԻ ԴԵՄ

Բայց դրանով պայքարը չավարտվեց: Գեա-Սրկիրը շատ զայրացավ օլիմպոսցի Զևսի վրա, որ նա այդքան անողորմ ավրվեց պարտված տիտանների հետ, որոնք իր զավակներն էին: Նա ամուսնացավ դժնադեմ Տարտարոսի հետ և աշխարհ բերեց հարյուրգլխանի ահեղի հրեշ Տիփոնին: Վիթխարի, իր հրեշային հարյուր գլխով՝ ելավ Տիփոնը երկրի ընդերքից: Վայրենի ոռնոցով նա սասանեց օդը: Այդ ոռնոցի մեջ և՛ շների հաչոց էր լսվում, և՛ մարդկային ձայներ, և՛ կատաղի ցուլի բառաչ, և՛ աուլոժի մոնչլուն: Քուլա-քուլա բոց էր գալարվում Տիփոնի շուրջը, և հողը ճոճվում էր նրա ծանր քայլերի տակ: Աստվածները ստսկումից ցնցվեցին: Բայց շանթարձակ Զևսը խիզախությամբ նետվեց նրա վրա, և բռնկեց կոփվը: Նորից փայլատակեցին կայծակները Զևսի ձեռքում, ալիք տալով տարածվեցին որոտի ձայները: Երկինքն ու երկնակամարը ցնցվեցին հիմնիվեր: Վերստին երկիրը բռնկվեց վառվառն բոցերով, ինչպես տիտանների դեմ կովելու ժամանակ: Տիփոնի մերձենալուն պես արդեն ծովերը եռ էին գալիս: Շանթար-

1 Կիսաստվածներ, Զևսի պահապաններն ու պաշտպանները: Հետագայում Կրետեում կուրետներ էին կոչում Զևսի և Հեռայի բուրմերին:

ձակ Զևսի բոցեղեն կայծակները հարյուրներով ցած էին թափվում. թվում էր, թե նրանց կրակից օդն էլ է այրվում, և այրվում են մթամած ամպրոպային ամպերը: Զևսը մոխրացրեց Տիփոնի բուրբ հարյուր գլուխները: Փուլ եկավ Տիփոնը երկրի վրա, նրա մարմնից մի այնպիսի առթ էր բխում, որ շորսբուրն ամեն ինչ հալվում էր: Զևսը վերցրեց Տիփոնի դին և նետեց իսպար Տարտարոսը, որ ծնել էր նրան: Բայց Տարտարոսում էլ Տիփոնը դեռ սպանում է աստվածներին և ամենայն կենդանի արարածի: Փոթորիկներ ու հրաբուխներ է առաջ բերում: Նա, կես-կին կես-օձ է քիզնայի հետ միասին, ծնել է ահուկի երկզվաանի շուն Օրթոսին, դժոխային շուն Կերբերին, Լերնեյան հիդրային և Քիմերային: Տիփոնը հաճախ ցնցում է երկիրը:

Հաղթեցին օլիմպոսի աստվածներն իրենց ոսոխներին: Այլևս ոչ ոք չէր կարող ընդդիմանալ նրանց իշխանությանը: Այժմ արդեն նրանք կարող էին հանդիստ տիրել աշխարհին: Նրանցից հզորագույնը՝ շանթարձակ Զևսը, իրեն վերցրեց երկիրը, Պոսեյդոնը՝ ծովը, իսկ Հադեսը՝ մեռյալ հողիների ստորերկրյա թագավորությունը: Իսկ երկիրը մնաց իրրև ընդհանուրի տիրապետություն: Թեև Քրոնոսի որդիները բաժանեցին իրար մեջ աշխարհի իշխանությունը, բայց և այնպես նրանց բոլորի վրա իշխում է երկնքի տիրակալ Զևսը. նա՛ է իշխում մարդկանց ու աստվածների վրա, ամենայն ինչ աշխարհում նրա՛ն է ենթակա:

ՕԼԻՄՊՈՍ

Հուսավոր ու բարձրաբերձ Օլիմպոս լեռան վրա, շրջապատված բազում աստվածներով, իշխում է Զևսը: Այստեղ են և՛ նրա ամուսին Հերան, և՛ ոսկեզանգուր Ապոլոնը՝ իր քրոջ, Արտեմիսի՝ հետ, և՛ ոսկեշող Ափրոդիտեն, և՛ Զևսի հզոր դուստր Աթենասը՝ և շատ ուրիշ աստվածներ: Նրեք սքանչելի օրեադներ հսկում էին բարձրաբերձ Օլիմպոսի մուտքը և բարձրացնում դարսալսը փակող թանձր ամպը, երբ աստվածներն իջնում են երկիր կամ ելնում Զևսի լուսաշող պալատները:

¹ Հռոմեական առասպելաբանության մեջ նրանց համապատասխանում են Զուևոնան, Գիանան, Վեներան և Միներվան:

Օլիմպոսից բարձր լայնորեն տարածվում է կապտավուն, անհուն երկիրը և նրանից ոսկեղեն լույս է հորդում: Զևսի թագավորության մեջ ո՛չ անձրև է գալիս, ո՛չ ձյուն. այնտեղ հավերժ պայծառ ու բերկրալի ամառ է: Իսկ ցածում քուլա-քուլա սահում են ամպերը, երբեմն-երբեմն ծածկելով հեռավոր երկիրը: Այնտեղ, երկրի վրա, գարնանն ու ամռանը հաջորդում են աշունն ու ձմեռը: Հրճվանքին և ուրախությանը փոխարինելու են զալիս դժբախտությունն ու վիշտը: Ճիշտ է, աստվածներն էլ գիտեն, թե ինչ բան է վիշտը, բայց դա վաղանցուկ է. Օլիմպոսում կրկին տիրում է հրճվանքը:

Խրախճանք են անում աստվածներն իրենց ոսկեղեն պալատներում, որոնք Զևսի որդին՝ Հեփեստոսն՝ է կառուցել: Զևս արքան բազմած է իր բարձրադիր ոսկեհուռ գահին: Զևսի առնական, աստվածային հիասքանչ դեմքը շնչում է վսեմությանը և իր իշխանության ու հզորության վեհափառ գիտակցությանը: Նրա գահի մոտ են խաղաղության աստվածուհի Էյրենեն և Զևսի մշտական ուղեկից՝ հաղթանակի թևավոր աստվածուհի Նիկեն: Ահա ներս է մտնում գեղանի ու վսեմափայլ աստվածուհի Հերան՝ Զևսի կինը: Զևսը հարգալից վերաբերմունք ունի կնոջ հանդեպ: Հերային՝ ամուսնության հովանավորին, հարգանքով են շրջապատում Օլիմպոսի բոլոր աստվածները: Երբ, շողալով իր գեղեցկությանը, շքեղ զգեստների մեջ, մեծն Հերան մտնում է խրախճանքի դահլիճը, բոլոր աստվածները ոտքի են ելնում ու խոնարհվում ամպրոպային Զևսի կնոջ առաջ: Իսկ նա, հպարտ իր հզորությանը, քայլում է դեպի ոսկեհուռ գահը և բազմում աստվածների ու մարդկանց թագավորի՝ Զևսի կողքին: Հերայի գահի մոտ կանգնում է նրա սուրհանգակը, ծիածանի աստվածուհի՝ Թեթևաթև Իրիսը՝ մշտապես պատրաստ սրբեթաց սավառնելու ծիածանային թևերով և ի կատար ածելու Հերայի հրամանները երկրի ամենահեռավոր ծայրերում:

Խրախճանք են անում աստվածները: Զևսի դուստր՝ գեռատի Հեբեն, և Տրոյայի արքայի որդի Գանիմեդեսը, Զևսի սիրելին, որ նրանից անմահություն է ստացել՝ նրանց ամբոսիա ու նեկտար՝ աստվածային ուտեստ ու խմիչք է մատուցում: Գեղեցիկ բարիս-

¹ Հռոմեացիների Վուլկանը:

ները՝ ու մուսաները զվարճացնում են նրանց երգով ու պարով: Չեոք ձեռքի տված նրանք շուրջպար են բռնում, իսկ աստվածները սքանչանում են սրանց թեթևասահ շարժումներով և հավերժ գե-
աատի հրաշք գեղեցկությամբ: Գնալով ավելի ուրախ է դառնում օլիմպացիների խրախճանքը: Այդ խրախճանքներում են վճռում աստվածներն իրենց գործերը, որոշում աշխարհի ու մարդկանց բախտը:

Զևսն Օլիմպոսի մարդկանց առաքում է իր շնորհները և երկրի վրա կարգ և օրենքներ հաստատում: Զևսի ձեռքին է մարդկանց ճակատագիրը. երջանկությունն ու դժբախտությունը, բարին ու չա-
րը, կյանքն ու մահը, — ամեն ինչ նրա ձեռքին է: Երկու մեծ կարաս կա գրված Զևսի պալատի գարպասի մոտ: Մեկի մեջ բարին է, մյուսի մեջ՝ չարը: Զևսը նրանց միջից առնում է շարն ու բարին և ուղարկում մարդկանց: Վա՛յ նրան, ում շանթարձակը միայն շարի-
քի կարասից է բաժին հանում: Վա՛յ նրան, ով կխախտի Զևսի սահմանած կարգը երկրի վրա և չի հետևի նրա օրենքներին: Քրո-
նոսի որդին ահեղորեն կկիտի իր թավ հոնքերը, և այդ ժամանակ սև ամպերը կպատեն երկինքը: Կզայրանա մեծն Զևսը, և նրա գլխի մագերը ահեղորեն ցից-ցից կկանգնեն, աչքերը կշողան անզուսպ
փայլով, ցասմանլից կմեկնի իր ամենագոր աչքը և որոտը կզլորվի երկնքով մեկ, կփայլատակի բոցեղեն կայծակը, և կցնցվի բարձ-
րաբերձ Օլիմպոսը:

Միայն Զևսը չէ, որ պահպանում է օրենքները: Նրա դահի մոտ կանգնած է օրենքների պահապան աստվածուհի Քեմիսը: Նա, շանթարձակի հրամանով, աստվածների հավաք է հրավիրում լու-
սաշող Օլիմպոսում և ժողովրդական հավաքներ՝ երկրի վրա, ու հետևում, որ կարգն ու օրենքը չխախտվեն: Օլիմպոսում է և Զևսի դուստրը՝ աստվածուհի Դիկեն, որ հետևում է արդարադատու-
թյանը: Խիստ պատիժ է տալիս Զևսը անարդար դատավորներին, երբ Դիկեն նրան իմաց է տալիս, թե նրանք չեն հետևում Զևսի սահմանած օրենքներին: Աստվածուհի Դիկեն ճշմարտության պաշտպանն է և խաբեության թշնամին:

Զևսը աշխարհում կարգ ու արդարություն է պահպանում և մարդկանց վրա երջանկություն ու վիշտ սփռում: Թեև մարդկանց երջանկությունն ու դժբախտությունը Զևսն է ուղարկում, այնու-

1 Ըստ հոմեոսիների՝ գրացիաներ:

ամենայնիվ, մարդկանց բախտը տնօրինում են ճակատագրի անողոք աստվածները՝ մոյրաները¹, որոնք ապրում են լուսավոր Օլիմպոսում: Զևսի ճակատագիրն էլ է նրանց ձեռքին: Իշխում է ճակատագիրը և՛ մահկանացուների, և՛ աստվածների վրա: Եվ ոչ ոք չի կարող խուսափել անողոք ճակատագրից: Զկա այնպիսի ուժ, այնպիսի իշխանություն, որ կարողանա փոխել թեկուզ մի փոքր բան այն ամենի մեջ, ինչ նախատեսված է աստվածների ու մահ-
կանացուների համար: Ճակատագրի առաջ պիտի միայն խոնարհ-
վել հլու-հնազանդ ու ենթարկվել նրա կամքին: Միայն մոյրաներն են, որ դիտեն ճակատագրի կամքը: Մոյրա կլոթոն մանում է մար-
դու կյանքի թելը՝ որոշելով նրա տևողությունը: Թելը կտրվում է, և կյանքի վերջը գալիս է: Մոյրա կաքեսիսը, առանց նայելու, վիճակ է հանում մարդկանց կյանքի համար: Ոչ ոք չի կարող փոխել մոյ-
րաների որոշած ճակատագրերը, քանի որ երրորդ մոյրան՝ Ատ-
րոսպոսը, երկար փաթեթի մեջ գրի է առնում այն ամենը, ինչ մար-
դու համար կյանքում կանխատեսել են նրա բույրերը, իսկ այն, ինչ մտնում է այդ փաթեթի մեջ, անխուսափելի է: Անողոք են մեծ ու դաժան մոյրաները:

Օլիմպոսում է և ճակատագրի աստվածուհին՝ Տիքեն², երջան-
կության ու բարօրության աստվածուհին: Առատության եղջյուրից, աստվածային այն ալծի եղջյուրից, որի կաթով սնուցվել էր Զևսը, նա նվերներ է շուսլում մարդկանց. և երջանիկ է այն մարդը, որ իր կյանքի ճանապարհին կհանդիպի երջանկության աստվածուհի Տիքենին, բայց որքա՛ն հազվադեպ է պատահում այդ, և որքա՛ն դժբախտ է այն մարդը, որից, նվերները տալուն պես, աստվածու-
հի Տիքեն երես կդարձնի:

Եվ այսպես, լուսավոր աստվածների բաղմունքով շրջապատ-
ված, Օլիմպոսի վրա իշխում է մարդկանց ու աստվածների արքա Զևսը՝ կարգ ու արդարություն պահպանելով բովանդակ աշխարհում:

1 Ըստ հոմեոսիների՝ պարկաները:

2 Ըստ հոմեոսիների՝ Ֆորտունան:

ՊՈՍԵՅԳՈՆԸ ԵՎ ԾՈՎԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սովի հորձանուտի խորքում կանգնած է ամպրոպային Զևսի եղբոր, երկրասասան մեծ Պոսեյդոնի զարմանահրաշ պալատը: Տիրում է Պոսեյդոնը ծովերին, և ծովի ալիքները ենթարկվում են ահեղ եռաժանիով զինված նրա ձեռքի միջև իսկ ամենաթեթև շարժմանը: Այնտեղ, ծովի խորքում, ապրում է Պոսեյդոնը իր գեղանի ամուսին Ամփիտրիտեի՝ ծովային գուշակ ծիրանազարդ Ներևսի դստեր հետ, որին ծովային խորքերի մեծ տիրակալ Պոսեյդոնն առևանգել է հոր մոտից: Մի անգամ տեսել է, թե Ներևսի գուստրն ինչպես է իր քույրերի հետ շուրջպար բռնել Նաքսոս կղզու ափին: Գերվել է ծովի աստվածը սքանչելի Ամփիտրիտեով և կամեցել տանել նրան իր երկանվով: Բայց խուսափել է Ամփիտրիտեն իրեն հետապնդող աստծուց և ապաստան գտել տիտան Ատլասի մոտ, որն իր հզոր ուսերի վրա պահում է երկնակամարը: Երկար ժամանակ Պոսեյդոնը չէր կարողացել գտնել Ներևսի գեղանի դստերը: Ի վերջո, նրա ապաստարանի տեղը հայտնել է դելփինը. այդ ծառայության համար Պոսեյդոնը դելփինին դասել է երկնային համաստեղությունների մեջ: Պոսեյդոնը Ատլասի մոտից հափշտակել է Ներևսի գեղանի դստերը և ամուսնացել նրա հետ:

Այդ ժամանակից ի վեր Ամփիտրիտեն, իր ամուսին Պոսեյդոնի հետ, ապրում է ստորերկրյա պալատում: Պալատից վերև շառաչում են ծովային ալիքները: Սովի աստվածությունների բազմությունը շրջապատում է Պոսեյդոնին՝ հլու-հնազանդ նրա կամբին: Նրանց մեջ է նաև Պոսեյդոնի որդին՝ Տրիտոնը, որ իր խեցեղեն փողի որոտալից հնչյուններով ահեղ փոթորիկներ է առաջ բերում: Աստվածների մեջ են նաև Ամփիտրիտեի գեղանի քույրերը՝ ներհիդները: Պոսեյդոնը տիրում է ծովերին: Երբ հրաշք նծույզներ լծած երկանվով Պոսեյդոնը սուրում է ծովի վրայով՝ հավերժ ծփացող ալիքները ետ են քաշվում և ճամփա բացում տիրակալ Պոսեյդոնի առաջ: Իր գեղեցկությանը մինչև իսկ Զևսին չլիջող Պոսեյդոնը սրաթուխ սուրում է անծայրածիր ծովի վրայով, իսկ նրա շուրջը խաղում են դելփինները. ձկները դուրս են լողում ծովի խորքից և խոնվում նրա երկանվի շուրջը: Երբ Պոսեյդոնը նշան է անում իր ահեղ եռաժանիով՝ լեռների պես բարձրանում են փրփրաբաշ ալիքները և ծովի վրա մոլեգնում է կատաղի փոթորիկը: Եվ այդ ժամանակ ծովային ալիքները դղրդոցով բախվում են առ-

ափնյա ժայռերին և ցնցում երկիրը: Բայց առաջ է մեկնում Պոսեյդոնն իր եռաժանին ալիքների վրա, և նրանք հանդարտվում են: Փոթորիկը մեղմանում է, ծովի վրա կրկին անդորր է տիրում, ծովը դառնում է հայելու նման ողորկ, և հազիվ է լսվում կոհակների ծփանքը ափերի մոտ:

Շատ աստվածություններ են շրջապատում Զևսի եղբորը՝ Պոսեյդոնին. նրանց մեջ է ծովային գուշակ ծերունի Ներևսը, որ գիտակ է ապագայի բոլոր նվիրական գաղտնիքներին: Սուսն ու խաբուսությունը օտար են Ներևսին: Աստվածներին ու մահկանացուներին նա միայն ճշմարտություն է հայտնում: Խմաստուն են գուշակ ծերունու տված խորհուրդները: Հիսուն գեղանի դուստր ունի Ներևսը: Ուրախ-ուրախ խայտում են գեռատի ներքիղները ծովի ալիքների մեջ՝ շողալով իրենց աստվածային գեղեցկությանը: Զեոք-ձեոքի տված նրանք շարեշար դուրս են լողում ծովային հորձանուտի միջից և շուրջպար բռնում հանդարտված ծովի՝ մեղմորեն գեպի ափ գլորվող կոհակների շոյող ծփանքի տակ: Եվ առափնյա ժայռերի արձագանքը կրկնում է նրանց նրբահյուս ճշգի հնչյունները, որոնք նման են ծովի մեղմ շրջյունին: Ներևսի դուստրերը հովանավորում են ծովագնացին և նրան երջանիկ նսվարկություն պարգևում:

Սովի աստվածությունների մեջ է և ծերունի Պրոտևսը, որ ծովի նման փոխում է իր կերպարանքը, և, ըստ ցանկության, տարբեր կենդանիների ու հրեշների տեսք ընդունում: Նա ևս գուշակ աստված է, միայն թե նրան պիտի հանկարծակիի բերել, տիրել նրան և ստիպել, որ բաց անի ապագայի գաղտնիքը: Երկիրը ցրնցող Պոսեյդոնի ուղեկիցների մեջ է նաև Գլավբոս աստվածը՝ ծովայինների ու ձկնորսների հովանավորը, նա ևս օժտված է գուշակության ձիրքով: Հաճախ, ծովի խորքից դուրս լողալով, նա կանխատեսել է զախքը և իմաստուն խորհուրդներ տվել մահկանացուներին: Հզոր են ծովի աստվածները, մեծ է նրանց իշխանությունը, բայց նրանց բոլորի վրա էլ իշխում է Զևսի եղբայր մեծն Պոսեյդոնը:

Թուրք ծավերն ու բոլոր երկրները ողողում է ալեհեր Օվկիանոսը՝ տիտան աստվածը, որ իր պատվով ու փառքով հավասար է

1 ըստ հույների պատկերացման ամբողջ երկիրը բոլոր կողմերից ողողում է շրային հորձանքը:

մինչև իսկ Զևսին: Նա ապրում է հեռվում, աշխարհի սահմանագրված խին, և նրան չեն հուզում երկրի գործերը: Օվկիանոսը երեք հազար որդի ունի՝ գետային աստվածները, և երեք հազար դուստր՝ աստվածների ու աղբյուրների աստվածուհիները: Օվկիանոս մեծ աստծու որդիներն ու դուստրերը բարություն ու հրճվանք են բերում մահկանացուներին իրենց հավերժահոս կենսատու ջրերով, հագեցնում են ամբողջ երկիրը և ամենայն կենդանի արարածի:

ԳԺՆԳԱԿ ԸԱԳԵՍԻ (ՊԼՈՒՏՈՆԻ): ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկրի ընդերքում թագավորում է Զևսի դժնադեմ եղբայրը՝ Հադեսը: Նրա թագավորությունը լի է խավարով ու սարսափներով: Անհատակ անդունդները երկրի երեսից տանում են դեպի Հադեսի տխուր թագավորությունը: Մթամած գետեր են հոսում այնտեղ: Այնտեղ է հոսում նաև սառցի պես պաղ Ստիքս սրբազան գետը, որի ջրերով երզվում են աստվածները:

Այնտեղ լալիք են տալիս Կոկիտոսն ու Աքերոնը: Հանգուցյալների հոգիների հեծեծանքները՝ թախծալի ու վշտալի, հնչում են նրանց մոռյլ ասիերին: Ստորերկրյա թագավորության մեջ ցայտում են նաև ամենայն երկրային մոռացության մատնող Լեթե² աղբյուրի ջրերը: Հադեսի թագավորության մոռյլ, և ասփոզելի³ զժգույն ծաղիկներով պատած դաշտերով թափառում են մեռյալների անմարմին ու թեթևասահ ստվերները: Նրանք ողբում են իրենց անլույս, ցանկություններից զուրկ կյանքը: Հազիվ լսելի՝ կամացուկ են հնչում նրանց հեծեծանքները, որպես աշնանային քամուց բշտող թորշուժած տերևների շրշյուն: Գժոխային եռագլուխ շունը՝ Կերբերը, որի վզին գալարվում են սոսկումնալի սուլոցներ արձակող օձերը, հսկում է Հադեսի թագավորության մուտքը: Անողորմ, զառամյալ Քարոնը մեռածների հոգիներն է տեղափոխում. Աքե-

¹ Հադեսի թագավորությունը՝ մեռյալների հոգիների թագավորությունը, հին հույները ահավոր ու խավարշտին են պատկերացրել, իսկ «անգրչիբմյան կյանքը»՝ համարել զժբախտություն: Զուր չէ, որ ստորերկրյա աշխարհից՝ Ողիսելի կողմից կանչված Աքիլլեսի ստվերն ասում է, թե ավելի լավ է ստորագույն ծառա լինել երկրի վրա, քան արքա՝ Հադեսի թագավորության մեջ:

² Այստեղից էլ՝ լքվել է «Լեթեի մեջ», այսինքն՝ «ընդմիշտ մոռացվել է» արտահայտությունը:

³ Ասփոզել—վայրի կակալ:

րոնի մոռյլ ջրերով նա ոչ մի հոգի վերստին ետ չի տանի այնտեղ, ուր պայծառ շողում է կյանքի արևը: Մեռածների հոգիները Հադեսի խավար թագավորության մեջ դատապարտված են մշտնջենական անուրախ գոյություն:

Հենց այդ թագավորության մեջ, ուր չեն հասնում երկրային կյանքի ո՛չ լույսը, ո՛չ հրճվանքը, ո՛չ էլ թախիծը, թագավորում է Զևսի եղբայր Հադեսը: Նա իր կնոջ՝ Պերսեփոնեսի հետ միասին նստում է ոսկեղեն գահին: Նրան ծառայում են վրեժխնդրության անողորմ աստվածուհիներ էրինիները: Ահեղ են նրանք. խարազաններն ու օձերը ձեռքներին հետապնդում են մեղսագործին, ոչ մի պահ հանգիստ չեն տալիս նրան և հոգեմաշ են անում խղճի տառապանքներով: Ոչ մի տեղ չի կարելի ապաստանել նրանց հետապնդումներից, էրինիներն ամենուրեք գտնում են իրենց զոհին: Հադեսի գահի մոտ նստում են մեռյալների թագավորության դատավորներ Մինոսը և Հռադամանթիսը: Հենց այստեղ, գահի մոտ է նաև մահվան աստված Թանատոսը՝ սուրբ ձեռքին, սև թիկնոցով, լայնատարած սև թևերով: Անգրչիբմյան պաղուցյուն է փշում այդ թևերից, երբ Թանատոսը թռչում է մահամերձի մահճի մոտ, որպեսզի իր սրով մի փունջ մազ կտրի նրա գլխից ու հափշտակի հոգին: Թանատոսի կողքին են և մոռյլատես Կերկերը: Նրանք մոլեգնորեն սավառնում են ճակատամարտի դաշտերով, հրճվում են՝ տեսնելով, թե ինչպես են մեկը մյուսի հետևից ընկնում հերոսները, ապա իրենց շառագույն շուրթերով հավում են վերքերին, ազահաբար ըմպում ընկածների տաք արյունը և մարմինների միջից դուրս կորզում նրանց հոգիները:

Այստեղ, Հադեսի գահի մոտ է նաև գեղեցկատես Հիպոսը՝ քնի պատանի աստվածը: Նա անշշուկ թևածում է երկրի վրայով՝ կակաչի գլխիկները ձեռքին և եղջյուրի միջից քնաբեր հեղուկ է բողոում: Նա իր հրաշագործ ձողիկով քնքշաբար հավում է մարդկանց աչքերին, կամացուկ փակում կուպերը և մահկանացուներին ընկղմում քաղցր քնի մեջ: Հղոր է Հիպոսու աստվածը. նրան չեն կարող ընդդիմանալ ո՛չ մահկանացուները, ո՛չ աստվածները, ո՛չ էլ մինչև իսկ Զևսը. Հիպոսը նրա ահեղանացատ աչքերն էլ է փակում և ընկղմում խոր քնի մեջ:

Հադեսի խավարշտին թագավորության մեջ սավառնում են նաև երազների աստվածները: Նրանց մեջ կան իմաստուն և հրճվալից երազներ տվող աստվածներ, բայց կան նաև այնպիսիները, որոնք

մարդկանց ահալոր, ճնշող, երկյուղով համակող ու տանջալից երազներ են բերում: Կան և կեղծ ու պատիր երազների աստվածներ, որոնք մարդկանց մոլորութան մեջ են գցում, հաճախ էլ՝ կորստյան մատնում:

Անողորմ Հաղեսի թագավորութունը չի է խավարով ու սարսափներով: Այնտեղ, խավարի մեջ, թափառում է սոսկալի ուրվական էմպուսան՝ ավանակի ոտքերով: Նա, գիշերային խավարում մարդուն խորամանկութամբ հմայելով մի թաքուն տեղ, խմում է նրա ամբողջ արյունը և խժռում նրա դեռևս թարտացող մարմինը: Այնտեղ թափառում է և հրեշավոր կամիան. նա գիշերը մտնում է երջանիկ մայրերի ննջարանը և զողանում նրանց երկխաներին՝ սրանց արյունը խմելու համար: Բոլոր այդ ուրվականների և հրեշների վրա իշխում է Հեկատե մեծ աստվածուհին: Նա երեք մարմին ունի և երեք դուրս: Անլուսին գիշերներին, թանձր խավարի մեջ, թափառում է նա ճանապարհների վրա ու գերեզմանների մոտ իր ամբողջ սոսկալի շքախմբով, ստիքսյան շներով՝ շրջապատված, սարսափներ ու տանջալից երազներ է ուղարկում երկիր և կորցրած մատնում մարդկանց: Հեկատեին հաճախ օգնության են կանչում կախարդելիս, բայց հենց ինքն էլ միակ օգնականն է՝ կախարդանքի դեմ բոլոր նրանց համար, ովքեր հարգում են նրան և ճամփաբաժանին, ուր բաժանվում են երեք ճանապարհների, շներ զոհաբերում նրան:

Սոսկալի է Հաղեսի թագավորութունը և ատելի է մարդկանց²:

ՀԵՐԱՅ

Մեծ դիցուհի Հերան, վահանակիբ Ջևի կինը, հովասավորուս է ամուսնությունը և պահպանում ամուսնական կապերի սրբությունն ու անխախտությունը: Նա ամուսիններին բազմաբանակ

¹ Հաղեսի ստորերկրյա թագավորության հրեշավոր շները՝ Ստիքս ստորերկրյա գետի ափերից:

² Ստորերկրյա աստվածները գլխավորապես մարմնացրել են բնության ահեղ ուժերը. նրանք օլիմպոսի աստվածներից շատ ավելի հին են: Ժողովրդական հավատալիքների մեջ նրանք ավելի նշանակալից դեր են խաղացել:

³ Հեռա (բառ հոմանշանների՝ ծուռոնա) — երկնքի դիցուհին, ամուսնության հովանավորը, մայրերի պահպանը՝ ծննդաբերության ժամանակ: Առանձնապես պաշտվել է Սպարտայում, Կորնթոսում, Օլիմպիայում և Արգոսում, որտեղ գտնվել

ժառանգներ է ուղարկում և բարեմաղթում է մայրերին՝ երկունքի ժամանակ:

Մեծ աստվածուհի Հերային, հենց որ նրան, իր եղբայրների ու քույրերի հետ միասին, բերնից դուրս թափեց Ջևի կողմից պարտված Բրոնտը, մայրը՝ Հոեան, տարավ երկրի ծայրը՝ ալեհեր Օլիկիանոսի մոտ: Այնտեղ Հերային դաստիարակեց Թեմիսը. Երկար ապրեց Հերան Օլիմպոսից հեռու, անդորրության ու լուսության մեջ: Եանթարձակ մեծն Ջևը տեսավ նրան, սիրեց և փախցրեց Թեմիսի մոտից:

Երկար ժամանակ Ջևը թաքցնում էր իր ամուսնությունը Հերայի հետ: Ի վերջո, նա աստվածներին հայտնեց, թե ո՛վ է իր կինը: Աստվածները ճոխ հարսանիք արեցին: Իրիսը և քարեմները Հերային շքեղազարդ հագցրին, և նա Օլիմպոսի բազում աստվածների մեջ շողում էր իր վսեմաշուք դեռատի գեղեցկությամբ: Նա բազմել էր ոսկեհուռ զահի վրա, աստվածների ու մարդկանց մեծ արքա Ջևի կողքին: Բոլոր աստվածները նվերներ էին բերում Հերային, իսկ Երկիր Գեան, իբրև նվեր Հերային, իր ընդերքից աճեցրեց մի հրաշք խնձորենի՝ ոսկե պտուղներով: Ամենայն ինչ բնության մեջ փառաբանում էր թագուհի Հերային և թագավոր Ջևին:

Հերան իշխում է բարձրաբերձ Օլիմպոսում: Նա էլ, ինչպես իր ամուսինը, տիրում է շանթերին ու որոտներին, նրա խոսքերով անձրևաբեր մթին ամպերը պատում են երկինքը, ձեռքի շարժումով նա ահեղ փոթորիկներ է բարձրացնում:

Գեղեցիկ է մեծն Հերան, խոշոր աչքերով, շուշանի պես ճերմակ ձեռքերով: Նրա պսակի տակից ալիք-ալիք դուրս են թափվում գանգուրները, իշխանությամբ ու անդորր վսեմությամբ են փայլում աչքերը: Աստվածները հարգում են Հերային, նրան հարգում է և ամուսինը, ամպահալած Ջևը, և հաճախ խորհրդակցում է նրա հետ: Բայց քիչ չի պատահում նաև, որ Ջևան ու Հերան գժտվեն

է նրա հռչակավոր սաճարը: Հերայի առասպելի մեջ արտացոլվել է կնոջ վիճակը Հին Հունաստանում: Ինչպես հույն կինը տղամարդուն հավասար իրավունքներ չի ունեցել և նշանակալից չափով ենթակա է եղել ամուսնուն, այդպես էլ Հերան է ենթարկվել իր ամուսին Ջևին: Հերայի կուտի մեջ պահպանվել են տոտեմիզմի հետքերը. մեկը տեղեկություններ ունենք, որ նրան երբեմն պատկերել են, օրինակ ձիու գլխով: Սա արդեն ցույց է տալիս, որ Հերան Հունաստանի հնագույն աստվածուհիներից է:

միմյանց հետ: Հերան հաճախ առարկում է Ջևահին, վիճում հետը աստվածների խորհրդի ժամանակ: Եվ մոլեգնում է շանթարձակը ու կնոջն սպառնում պատիժներով: Այդ ժամանակ լուում է Հերան և զսպում գայրույթը: Նա հիշում է, թե ինչպես է Ջևան իրեն գանակոծման ենթարկել, ինչպես է կաշկանդել ոսկե շղթաներով ու կախել երկրի ու երկնքի միջև՝ ոտքերից երկու ծանր զնդան կախ տալով:

Ամենազոր է Հերան և չկա նրա իշխանությունն ունեցող մեկ սրբիչ աստվածուհի: Վսեմաշուք՝ իր երկար ու շքեղ զգեստի մեջ, որ Աթենասն է կարել նրա համար, նստած երկու անմահական ձիերով լծված երկանվի մեջ, նա իջնում է Օլիմպոսից: Ամբողջ երկանիվն արծաթից է շինված, անիվները՝ անխառն ոսկուց, անիվների ճաղերը պղնձափայլ են: Երկրի վրա բուրմունքով են լցվում բոլոր այն վայրերը, որտեղով անցնում է Հերան: Ամենայն կենդանի արարած խոնարհվում է նրա՝ Օլիմպոսի մեծ թագուհու առաջ:

ԻՈ

Շարադրված է բառ Օլիմպոսի «Կերպարանափոխություններ» պոեմի:

Հերան հաճախ է վիրավորանքներ կրում իր ամուսնուց՝ Ջևահից: Այնպես պատահեց, որ Ջևաք սիրեց գեղեցիկ Իոյին և, Հերայի աչքերից թաքցնելու համար, նրան կով դարձրեց: Բայց դրանով շանթարձակը չկարողացավ փրկել Իոյին: Հերան տեսավ ձյունաճերձակ Իո կովին և Ջևահից պահանջեց, որ իրեն նվիրի այդ կովը: Ջևաք՝ չկարողացավ մերժել Հերային: Իսկ Հերան, դառնալով Իոյի տերը, նրան հանձնեց հարյուրակնյա Արգոսի՝ հսկողությանը: Տառապում էր դժբախտ Իոն, ոչ ոքի հետ չէր կարող խոսել իր տառապանքների մասին. կով դառնալով՝ նա զրկվել էր խոսելու ձիթթից: Անքուն Արգոսը հսկում էր Իոյին և սա չէր կարող թարքվել որևէ տեղ: Ջևաք տեսնում էր նրա տառապանքները: Եվ նա իր մոտ կանչեց որդուն՝ Հերմեսին, ու հրամայեց, որ նա փախցնի Իոյին:

Հերմեսը մի ակնթարթում սուրաց դեպի այն լեռան գագաթը, ուր հարյուրակնյա Արգոսը հսկում էր Իոյին: Նա իր խոսքերով

¹ Հարյուրակնյա Արգոս—աստղալից երկնքի մարմնավորումը:

բուն բերեց Արգոսի աչքերին: Ու հենց որ նրա հարյուր աչքերը փակվեցին՝ Հերմեսը գուրս քաշեց իր կեռ սուրը և մի հարվածով կտրեց Արգոսի գլուխը: Իոն աղաաության մեջ էր: Բայց Ջևաք դրանով էլ չփրկեց Իոյին Հերայի ցասումից: Աստվածուհին հիմա էլ հրեշային մի բոռ ուղարկեց նրա հետևից: Իր սոսկալի խայթով բոռը երկրից երկիր էր քշում տառապանքներից խելացնոր թշվառ Իոյին: Ոչ մի տեղ նա հանգիստ չէր գտնում: Մոլեգին վազքով փախչում էր, իսկ բոռը, ընկած հետևից, շարունակ նրա մարմնի մեջ էր խրում իր խայթը: Թռռի խայթը այրում էր Իոյին շիկացած երկաթի պես: Ո՛ւր ասես, որ չփախալ Իոն, ի՛նչ երկրներում ասես, որ չեղավ նա: Ի վերջո, երկար թափառումներից հետո, նա հասավ սկյութների երկիրը՝ հեռավոր հյուսիս, հասավ այն լեռների, որոնց վրա զամված էր տիտան Պրոմեթևսը: Նա զուշակեց, որ դժբախտ Իոն միայն Եգիպտոսում կազատվի իր տառապանքներից: Բոռից հալածվող Իոն սլացավ ավելի հեռու: Նա շատ տառապանքներ կրեց, շատ վտանգներ տեսավ մինչև Եգիպտոս հասնելը: Այնտեղ, Նեղոսի բարեբեր ափերին, Ջևաք նրան տվեց նախկին կերպարանքը: Եվ նա մի որդի ունեցավ՝ էպափոս անունով: Նա դարձավ Եգիպտոսի առաջին թագավորը և նախահայրը 4հրոսների այն մեծ սերնդի, որին պատկանում էր նաև Հունաստանի հերոսներից մեծագույնը՝ Հերակլեսը:

ԱՊՈՂՈՆ՝

ԱՊՈՂՈՆԻ ԾՆՈՒՆԵՂ

Լույսի աստված ռակնզանգուր Ապոլոնը ծնվել է Դելոս կղզում: Նրա մայրը՝ Լետոն, հալածված Հերայի ցասումից, ոչ մի տեղ չէր կարող ապաստան գտնել: Հետապնդվելով Հերայի ուղարկած Պիթոն հրեշից՝ նա թափառեց աշխարհով մեկ և, վերջապես,

¹ Ապոլոն—Հունաստանի հնազույն աստվածներից է: Նրա կուլտի մեջ պարզորոշ պահպանվել են տոտեմիզմի հետքերը: Այսպես, օրինակ, Արկադիայում երկրպագում էին Ապոլոնին, որ պատկերվում էր ոչխարի կերպարանքով: Սկզբում Ապոլոնը հոտերի պահապան աստվածն էր: Հետո աստիճանաբար դառնում է լույսի աստվածը: Ավելի ուշ, նրան սկսեցին համարել գաղթողների հովանավորը, հիմնադրող հունական գաղութների հովանավորը, իսկ հետո՝ արվեստի, պոեզիայի ու երաժշտության հովանավորը: Ահա ինչու Մոսկվայի Ակադեմիական մեծ

Թաքնվեց Գեղտ կղզում, որ այն ժամանակ լողում էր մարմնազած
ժողի ալիքների վրա: Կետի՝ Գեղտ բարձրանալուն պես ժողի
հորձանքուտի միջից վեր խոյացան վիթխարի սյուները և կանգնեց-
րին այդ առաջի կղզին: Եվ կղզին անսասան քարացավ այն տե-
ղում, ուր կանգնած է մինչև որս: Գեղտի շուրջը շատաշատ
է ծաղիկ: Անձուկ տեսող բարձրացել էին Գեղտի ժայռերը՝ մեքի
ու տմայի, առանց նվազագույն բուսականության: Միայն ծաղիկն
ճայերն էին, որ ապաստան էին գտնում այդ ժայռերի վրա և իրենց
տխուր կանչերով լցնում կղզին: Բայց ահա ծնվեց լույսի աստված
Ապոլոնը, և ամենուրեք հորդաց պայծառ լույսի հեղեղը: Լույսը
որպես ոսկի, ողողեց Գեղտի ժայռերը: Ետըջըլորն ամեն ինչ
ծաղկեց ու շողշողաց. և՛ մոտակա ժայռերը, և՛ Կինթոս քարը, և՛
Հսվիտը, և՛ ծովը: Նորածին աստծուն բարձրացող փառաբանեցին
Գեղտ կղզում հավաքված աստվածները՝ նրան ամբրոսիա և
նեկտար մատուցելով: Ամբողջ բնությունը, աստվածուհիների հետ
մեկտեղ, ցնծություն մեջ էր:

ԱՊՈԼՈՆԻ ԿՈՒՎՔ ՊԻՅՈՆԻ ՀԵՏ ԵՎ ԴԵՎՈՒՅՑԱՆ ԳՈՒՇԱԿԱՎԱՅՐԻ
ՀՈՄԱՆՐՈՍԸ

Լուսաշող պատանի Ապոլոնը ճախրում է լազուր երկնքում կիս-
թառը՝ ձեռքին, արծաթաձուլ աղեղն ուր զցած: Ոսկեղեն նետերը
զրնգում են նրա կապարճի մեջ: Հպարտ ու ցնծագին՝ ճախրում է
Ապոլոնը երկրից բարձր ու վեր՝ սպառնալով ամենայն շարի, այն
ամենին, ինչ խավարի ծնունդ է: Նա ձգտում է այնտեղ, ուր ապ-
րում էր իր մորը՝ Կետին հետապնդող գոթեմ Պիթոնը: Ապոլոնն

Թատրոնի վրա կանգնեցված է Ապոլոնի արձանը՝ քարը ձեռքին, քառածի երկան-
վով սուրալիս: Քացի այդ Ապոլոնը գարձավ ապագան կանխատեսող աստված: Ըին
այնպես ճախրված էր նրա սրբավայրը Դելփիոնում, որտեղ բոլոր գուշակու-
թյուններ էր անում: Անշուշտ, այդ գուշակությունները սարքում էին Հուսաստանի
անցուղարձին լավատեղյակ գործերը և այնպես էին անում, որ հետագայում լինե-
ր գուշակությունը մեկնարանել և՛ մեկ, և՛ մյուս մեղով: Հետո հայտնի էր Դելփիոնում
կիդիայի արքային՝ Կրեսոսին, հայտնված գուշակությունը, երբ նա պատերազմում
էր Պարսկաստանի դեմ: Նրան ասել էին. «Եթե դու անցնես Հալիս գետը, ապա
կորստան կմտնես մի մեծ թագավորություն, բայց թե ո՞ր թագավորությունը՝
իրենը, թե պարսկականը՝ այդ չէր ասված:

1 Հին հունական երաժշտական գործիք, որ նման է ջնարի:

աղում է՝ վրեժխնդիր լինել Պիթոնից՝ մորը պատճառած բուրբ
շարիքների համար:

Ապոլոնը շատ հասավ մթամած կիրճի՝ Պիթոնի կայացումը
Քորսթոլորը վեր էին խայտնում ժայռերը՝ մարմնվելով բարձր եր-
կրների մեջ: Խաղաղ էր թաղավորում կիրճում: Կիրճի խորքով
սրբեթաց հոսում էր լեռնային հեղեղը՝ փրփուրից ձերմակած, խի
հեղեղի վրա քուլա-քուլա կուտակվել էին ամպերը: Գաթս սողաց
իր որջից սուկայի Պիթոնը: Նրա վիթխարի թնփուկապատ մաք-
մինը ժայռերի միջև զալարվում էր անհամար օդակներով: Ժաշ-
ուներն ու սարերը ցնցվում էին նրա մարմնի ծանրությունից ու
շարժվում էին իրենց տեղերից: Կատաղի Պիթոնը ամեն ինչ ամա-
լացնում էր, մահ էր սփռում շուրջը: Նրանից սարսափահար փախ-
չում էին հավերժահարսները և ամենայն կենդանի արարած: Ելավ
Պիթոնը՝ հզոր ու կատաղի, բաց արեց իր սուկայի երանդը և արդեն
ուղում էր կլանել ոսկեզանգուր Ապոլոնին: Այդ պահին լավեց
պրկվող աղեղնալարի զնգոցը, կայծակի պես փայլատակեց ան-
վրեպ ոսկեղեն նետը, որին հաջորդեցին երկրորդը, երրորդը...
Նետերն անձրևի պես թափվում էին Պիթոնի վրա, և նա անշնչա-
ցած գետին տապալվեց: Բարձրագույն հնչեց Պիթոնին հաղթող
ոսկեզանգուր Ապոլոնի ցնծագին հաղթական երգը (պեան) և աչք
երգը կրկնեցին աստծո կիթառի ոսկեղեն լարերը: Ապոլոնը թա-
ղեց Պիթոնի մարմինն այնտեղ, ուր սրբազան Դելփիոն էր և հենց
դեց Պիթոնի մարմինն այնտեղ, ուր սրբազան Դելփիոն էր և հենց
դեց Դելփիոնում էլ հիմնադրեց սրբավայր ու գուշակավայր, որպեսզի
այնտեղ կանխագուշակվի իր հոր՝ Զևսի կամքը մարդկանց համար:

Բարձրագույն ափից Ապոլոնը ծովի մեջ հեռու հեռվում նկատեց
Կրետեի ծովագնացների նավը: Դելփիոնի կերպարանքով նա իրեն
կապուտակ ծովը նետեց, հասավ նավին և լուսաշող աստղի պես
ծովի ալիքներից թռավ նավախելի վրա: Ապոլոնը նավը բերեց
հասցրեց Կրիսա՝ քաղաքի նավահանգիստը և Կրետեի ծովային-
ներին, արգավանդ հովտի միջով, ոսկե կիթառի վրա նվագելով,
տարավ Դելփիոն: Եվ նրանց դարձրեց իր սրբավայրի առաջին
բուրմները:

1 Թաղաք Կորնթոսյան ծոցի ափին: Դելփիոնի համար իբրև նավահանգիստ է
ծառայում:

Եւրազրված է ըստ Օվիդիոսի «Կերպարանափոխարկումներ» գրքմբ:

Լուսավոր աւ հրճվալից աստված Ապոլոնը տխրում է նաև: Եվ նա մի օր վիշաւ ունեցավ: Նա ճանաչեց վիշաւը Պիթոնին հաղթելուց ըիչ հետո: Երբ իր հաղթանակով հպարտ՝ Ապոլոնը կանգնել էր իր նեաերթով խոցված հրեշի վրա, նա իր կողքին կանգնած տեսավ սիրո պատանի աստված էրոսին, որ լարում էր իր ոսկեղեն աղեղը Ապոլոնը, ծիծաղելով, այսպես ասաց նրան:

— Ինչի՞դ է պետք, փոքրիկ, այդ ահեղ զենքը: Ավելի լավ է թող, որ ես բանեցնեմ խոցող ոսկեղեն նետերը, որոնցով հենց նոր ապանեցի Պիթոնին: Դո՛ւ ես, որ ուզում ես հասնել նետաձիգի իմ փառքին, թե՞ ուզում ես ավելի մեծ փառքի արժանանալ, քան ես:

Այդ խոսքից վիրավորված էրոսը հպարտ-հպարտ պատասխանեց Ապոլոնին:

— Քո նետերը, Ապոլո՛ն, անվրեպ են ու խոցում են բոլորին, բայց իմ նետը կխոցի քեզ:

Էրոսը թափահարեց իր ոսկե թևերը ու մի ակնթարթում թռավ քարձրաբերձ Պառնաս: Այնտեղ իր կապարճից երկու նետ հանեց. մեկը՝ սեր առաջ բերող, որով նա խոցեց Ապոլոնի սիրտը, մյուսը՝ սերը հանգցնող, որով խոցեց գետերի աստված Պենեևի դուստր՝ հավերժահարս Դափնեի սիրտը:

Այնպես պատահեց, որ Ապոլոնը հանդիպեց չքնաղ Դափնեին ու սիրեց նրան: Ապոլոնին գերեցին հավերժահարսի աստղերի պես վճիտ աչքերը, վարդագույն շուրթերը, մարմարի պես ճերմակ ձեռքերը և փարթամ գանգուրները: Բայց ոսկեգանգուր Ապոլոնին տեսնելուն պես Դափնեն քամու պես հեռու փախավ նրանից. չէ՞ որ էրոսի արձակած՝ սերը հանգցնող նետը խոցել էր նրա սիրտը: Արժաթաղեղ աստվածը շտապեց նրա հետևից:

— Կա՛նգ առ, չքնա՛ղ հավերժահարս, — կանչեց Ապոլոնը, — ինչո՞ւ ես ինձնից փախում՝ գալլից հետապնդվող գառնուկի պես: Արծվի ճանկերից ճողոպրող աղավնու նման սուրում ես դու: Չէ՞ որ ես թշնամի չեմ: Կա՛նգ առ, հավերժահարս, սե՛րն է ինձ ստիպում, որ հետևեմ քեզ: Մի տե՛ս, դու ոտքերդ արյունոտել ես տատակին ու սրածայր փշերին դիպցնելով: Օ՛, սպասի՛ր, կա՛նգ առ: Ե՛ս եմ, Ապոլոնը, շանթարձակ Զևսի որդին և ոչ թե մի հասարակ մահկանացու հովիվ:

Բայց չքնաղ Դափնեն փախում էր ավելի ու ավելի արագ: Ասես թևածելով, սուրում է Ապոլոնը նրա հետևից: Ավելի ու ավելի է մոտենում Դափնեին: Ահա, ուր որ է՝ կհասնի Դափնեն զգում է նրա շնչառությունը: Ուժերը լքում են Դափնեին: Եվ նա աղերսում է իր հորը՝ Պենեևին:

— Հայր իմ Պենեւ, օգնության հասիր ինձ: Բացվի՛ր, գետին, կլանի՛ր ինձ: Օ՛, խլեցեք ինձանից այս կերպարանքը, նա ինձ միայն տանջանքներ է պատճառում:

Այս խոսքն ասելուն պես նրա մարմնի անդամները թմրեցին: Կեղևապատվեց նրա քնքուշ մարմինը, վարսերը՝ տերևներ, իսկ ձեռքերը, որ կառկառված էին դեպի երկինք, ճյուղեր դարձան: Խորունկ վիշաւ սրտում, գրկեց Ապոլոնը դափնեծառ դարձած Դափնեին, և ծառի կեղևի տակից նա լսում էր Դափնեի դեռևս բարախող սրտի տրոփյունը:

Երկար ժամանակ Ապոլոնը տխուր-տրտում կանգնեց դափնու մոտ, և վերջապես ասաց.

— Թող այսուհետ միայն քո ճյուղերի պսակը զարդարի իս գլուխը, թող սրանից հետո քո կանաչը զարդարանք լինի իմ կիթառին և կապարճին: Թող երբեք չթորշոմի, օ՛, դափնի, քո կանաչը: Հավերժ դալար եղիր:

Եվ դափնին կամացուկ սոսափեց իր սաղարթախիտ ճյուղերը և, իբրև համաձայնության նշան, խոնարհեց իր կանաչ կատարը:

ԱՊՈՒՆԸ ԱՎԵՏՈՒՄ ՄՈՏ

Ապոլոնը պետք է մաքրագործվեր Պիթոնի արյունը թափելու մեղքից: Չէ՞ որ հենց ինքն էլ մաքրագործում է սպանություն կատարած մարդկանց: Զևսի վճռի համաձայն, նա հեռացավ զնաց թեսալիա՝ գեղանի ու աղնվարարո թագավոր Ադմետոսի մոտ: Այնտեղ, թագավորի մոտ հովվություն էր անում և այդ ծառայությամբ քավում իր մեղքը: Երբ Ապոլոնը արոտավայրում նվագում էր իր եղեգնյա շվիով կամ ոսկեղեն կիթառով, վայրի գազանները, նրա նվագով հմայված, դուրս էին գալիս անտառի թավուտից: Հովաղներն ու կատաղի առյուծները հաշտ ու խաղաղ ման էին գալիս հոտի մեջ: Եղջերուներն ու այծյամները գալիս հավաքվում էին շվիի ձայնի վրա: Խաղաղություն ու խնդություն էր տիրում շորս բոլորը:

Գարեբախտութիւնը բուն զրեց Ազմեստսի տանը: Ոչ ոք ավելի շատ բերք չէր ունենում, քան նա. նրա ձիերն ու հոտերը լավագույնն էին ամբողջ Թեաւիխալում: Այդ ամենը սակեզանգուր աստվածն էր շնորհել: Ապուլոնն օգնեց Ազմեստսին ասանալ Տուրքոսի արքա Պելևսի դստեր՝ Ալքեստի ձեռքը: Սրա հայրը խոստացել էր դստերը կնութիւն տալ նրան, ում ուժը կպատի իր երկանվին առյուծ և արջ լծել: Եվ Ապուլոնն իր սիրելի Ազմեստսին օժտեց անհաղթելի ուժով, ու նա ի կատար ածեց Պելևսի այդ խնդիրքը: Ապուլոնը Ազմեստսի մոտ ծառայեց ութ տարի և, սպառելով մեղքը քաղելու իր ծառայութիւնն ժամկետը, վերադարձավ Դելփիք:

Գարնանն ու ամռանը Ապուլոնն ապրում է Դելփիքում: Երբ աշունը վրա է հասնում, ծաղիկները թռչնում են, ծառերի տերևները՝ դեղնում, երբ մոտենում է ցրտաշունչ ձմեռը, որ ձյունով պատում է Պառնասի գագաթը, այդ ժամանակ Ապուլոնը, ձյունասպիտակ կարապներ լծած իր երկանվով հեռանում է դեպի հիպերբորեոսների երկիրը, ուր ձմեռ չի լինում, դեպի հավերժական գարնան երկիրը: Այնտեղ է անցկացնում ամբողջ ձմեռը:

Երբ ամեն ինչ նորից կանաչում է Դելփիքում, երբ գարնան կենարար շնչով ծաղկում են ծաղիկները ու երգներանց զորգով պատում Կրիսայի հովիտը, իր կարապներով վերադառնում է սակեզանգուրը Դելփիք՝ մարգկանց համար կանխազուգակելու շանթարձակ Ջևի կամքը: Եվ Դելփիքում տոնում են գուշակաստված Ապուլոնի վերադարձը հիպերբորեոսների երկրից: Ամբողջ գարնանն ու ամռանը ապրում է նա Դելփիքում, այցելում է իր հայրենի Դելոսը, որտեղ հոյակապ սրբավայր ունի:

ԱՊՈՒՐՆ ԵՒ ՄՈՒՍԵՆԵՐԸ

Գարնանն ու ամռանը անտառապատ Հելիկոնի լանջերին, այնտեղ, ուր խորհրդավոր կարկաչում են սրբազան աղբյուր Հիատոկրեննի ջրերը, բարձրաբերձ Պառնասում, Կաստալյան աղբյուրի վճիտ ջրերի մոտ, Ապուլոնը խմբապար է բռնում ինք մուսաների հետ: Գեոսափ, շքնազ մուսաները՝ Ջևի և Մենեոսիննի՝ զուտբերը, Ապուլոնի մշտական աղեկիցներն են: Ապուլոնը առաջ է տանում մուսաների խմբապարը և իր սակեղեն կիթառով նվագակցում

¹ Հիշողութիւն աստվածուհին:

նրանց երգին: Վսեմաշուք գնում է Ապուլոնի մուսաների առջևից՝ դափնեպսակը զլլխին. նրան հետևում են բոլոր ինց մուսաները. Կալիոպեն՝ էպիկտեան պոեզիայի մուսան, Էվտերպեն՝ լիրիկայի մուսան, Էրատոն՝ սիրային երգերի, Մելպոմենեն՝ ողբերգութիւն, Քալիքան՝ կատակերգութիւն, Տերպսիքորեն՝ պարերի մուսան, Կլիոն՝ պատմութիւն, Ուրանիան՝ աստղաբաշխութիւն և Պոլիհիմենիան՝ սրբազան հիմների մուսան:

Հանդիսավոր հնչում է նրանց խմբերգը, և ամբողջ քնութիւնը հմայված ունկնդրում է նրանց աստվածային երգեցողութիւնը:

Իսկ երբ Ապուլոնը մուսաների ուղեկցութեամբ երևում է լուսավոր Օլիմպոսում՝ բազում աստվածների մեջ, և հնչում են նրա կիթառի ձայնն ու մուսաների երգեցողութիւնը՝ ամեն ինչ պտպանձվում է Օլիմպոսում: Մոռանում է Արեւը արշունակեղ հակասամարտերի շոփնդը, շին փայլատակում կայծակները ամպահալած Ջևի ձեռքին, աստվածները մոռանում են երկպառակութեանները: Օլիմպոսի վրա լուսնի տոն ու խաղաղութեան է ափրում: Մինչև իսկ Ջևի արծիվը ծալում է իր հզոր թևերը, փակում իր սրատես աչքերը, չի լավում նրա ահեղ արծիվակունջը, և նա հանդարտ ննջում է Ջևի գավազանի վրա: Համատարած լուսնի մեջ հանդիսավոր հնչում է Ապուլոնի կիթառի լարերի ձայնը: Իսկ երբ Ապուլոնը հերձվանքով զարկում է իր կիթառի սակեղեն լարերին՝ լուսաշող խմբապարը սահում է աստվածների խնջույքի գահլիճով մեկ: Մուսաները, խարխները, հավերժ երիտասարդ Ափրոդիտեն, Արեսն ու Հերմեսը, բոլորը մասնակից են դառնում ուրախ շուրջպարին, իսկ բոլորի առջևից ընթանում է վսեմափայլ մի աղջիկ՝ Ապուլոնի քույր շքնաղ Արտեմիսը: Ոսկեղեն լուսնի հեղեղով ողողված՝ պարում են պատանի աստվածները Ապուլոնի կիթառի հնչյունների տակ:

ԱՌՆՎԻՄ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Ահավոր է հետահար Ապուլոնը մոլեղնեցիս, և աջդ պահին նրա սակեձուղ նետերը խնայել չգիտեն: Շատերին են խոցել այդ նետերը, որոնց դոճ գնացին նաև Արտեմի գավաղները՝ Օտոսն ու էփիալտեսը, որոնք հպարտ էին իրենց ուժով ու չէին կամենում ոչ ոքի ենթարկվել: Դեռ վաղ մանկութիւնից նրանք հռչակված էին իրենց անսովոր վիթխարի հասակով, իրենց ուժով և անսահման

աստծո, իբրն պատժող, հիվանդութիւններ սփռող և դարմանող
աստծո: Նրան մեծարում էին հույն պատանիները որպէս իրենց
հովանավորի: Ապոլոնը ծովագնացութեան հովանավորն է, նա
օգնում է նոր գաղութներ ու քաղաքներ հիմնելուն: Գիթառահար
Ապոլոնի, մուսաների խմբապարեմ առաջնորդողի, հատուկ հովա-
նավորութիւնն են վայելում նկարիչները, երգիչներն ու երաժիշտ-
ները: Իր հանդիպ ունեցած մեծարանքներով Ապոլոնը համասար
է մինչև իսկ շանթարձակ Զևսին:

ԱՐՏԵՄԻՄ՝

Հավերժ դեռատի, շքնաղ այս դիցուհին ծնվել է Դելոս կղզում,
իր եղբոր՝ սոկեդանգուր Ապոլոնի հետ միեւնույն ժամանակ: Նրանք
երկվորյակ են: Քրոջն ու եղբորը մտերմացնում են ամենաանկողծ
սերը, ամենասիրա բարեկամութիւնը: Նրանք խորապէս սիրում են
նաև իրենց մորը՝ Լետոյին:

Բոլորին կյանք է տալիս Արտեմիսը: Նա հող է տանում այն
ամենի համար, ինչ ապրում է երկրի վրա և այն ամենի, ինչ աճում
է անտառում ու դաշտում: Նա հող է տանում նաև վայրի գազան-
ների, ընտանի կենդանիների ու մարդկանց համար: Նա է աճեց-
նում խոտը, ծաղիկներն ու ծառերը, նա է բարեմաղթում ծնունդը,
հարսանիքն ու ամուսնութիւնը: Առատ զոհարերութիւններ են
անում հույն կանայք Զևսի պանծալի դուստր Արտեմիսին, որ բա-
րեմաղթում է ու երջանկութիւն տալիս ամուսնութեանը, հիվանդու-
թիւններ է սփռում ու դարմանում:

Հավերժ դեռատի, պայծառ օրվա պես շքնաղ Արտեմիս դիցու-
հին՝ աղեղն ու կապարճը ուր զցած, որսորդի նիպակը ձեռքին,

1 Արտեմիս (ըստ հռոմեացիների՝ Գիանա) — Հռոմաստանի հնագույն աստվա-
ծուհիներից է: Կարելի է ենթադրել, որ Արտեմիսը՝ որսորդ աստվածուհին, սկզբ-
բուն եղել է ինչպէս ընտանի, այնպէս էլ վայրի կենդանիների հովանավորը: Հնա-
գույն ժամանակներում Արտեմիսը երբեմն պատկերվել է կենդանու, օրինակ՝ էգ
արջի կերպարանքով: Այդպէս է պատկերվել Քրատրոնյան Արտեմիսը Ատտիկա-
յում՝ Աթենքի մոտ: Հետագայում Արտեմիսը դառնում է երեխա ունեցող մայրերի
պաշտպան դիցուհին, որ բարեհաջող ծննդաբերութեան է տալիս: Իբրև Ապոլոնի՝
լուսնի աստծո քույր, նա համարվում էր նաև լուսնի աստվածուհին և նույնացվում
էր Սելենի դիցուհու հետ: Արտեմիսի կուսուր պաննատաքաժված կուսերից մեկն
էր Հռոմաստանում: Հռչակ է վայելել նրա տաճարը Էփեսոս քաղաքում (Էփեսոսյան
Արտեմիս):

ցնծութիւնամբ որս է անում սաղարթախիտ անտառներում և արևով
սղոզված գաշաերում: Հավերժահարսների աղմկոտ բազմութիւնը
ուղեկցում է նրան, խաճ նա՝ վանձաշուք ու գեղեցիկ, որսորդ
աղլիկա կարճ՝ հազիվ մինչև ծնկները հասնող զգեստով, քեթիկա-
ֆայլ սլանսով է լեռների անտառապատ լանդշեփին: Եվ նրա անվրեպ
նետերից շեն ճողոպրի ո՛չ երկյուղած եղջերուն ու երկլոտ վիթը,
ո՛չ էլ եղեգնուտի մեջ թաքնվող գաղազած վարազը: Արտեմիսին
արագաքայլ հետևում են աղեկից հավերժահարսները: Ցնծագին
ձիծաղը, կանչերը, շների ոհմակի հաշտցները հետու են տարած-
վում լեռներում, և լեռնային արձագանքը բարձրագույն պատասխան
է տալիս:

Իսկ երբ հոգնում է դիցուհին որս անելիս՝ հավերժահարսների
հետ շտապում է Գելիփիքի սրբավայրը, սիրելի եղբոր՝ նետաձիգ
Ապոլոնի մոտ: Այնտեղ հանգիստ է անում Արտեմիսը: Ապոլոնի
ոսկեղեն կիթառի աստվածային հնչյունների նվագակցութեամբ
նա խմբապար է բռնում մուսաների ու հավերժահարսների հետ:
Խմբապարի առջևից ընթանում է Արտեմիսը՝ բարեկազմ ու գեղե-
ցիկ: Նա գեղեցիկ է բոլոր հավերժահարսներից ու մուսաներից և
բոլորից բարձր է մի գլխով: Արտեմիսը սիրում է հանգիստ առնել
նաև զովութեամբ հազեցած կտնաշապատ անձաղներում՝ հետու
մահկանացուների աշրերից: Վա՛յ նրան, ով կխախտարի նրա
անդորրը: Այդպէս զոհվեց և պատանի Ակտեոնը՝ Ավտոնոսի,
Թևրի թագավոր Կադմոսի դստեր որդին:

ԵՆՏԵՆ

Շառադրված է ըստ Ալիգուսի «Կերպրամեափոփոքրածներ» պոեմի:

Մի անգամ Ակտեոնը, ընկերների հետ միասին, որս էր անում
կիթերոնի անտառներում: Վրա հասավ շոգ կեսօրը: Հոգնատանջ
որսորդները, հանգիստ առնելու համար, տեղավորվեցին սաղար-
թախիտ անտառի ստվերում, իսկ պատանի Ակտեոնը, առանձնա-
նալով նրանցից, գնաց զովութեան փնտրելու կիթերոնի հովիտնե-
րում: Նա գուրս եկավ Գրաքափիայի՝ կանաչապատ, ծաղկուն հո-
վիտը, որ նվերված էր Արտեմիս աստվածուհուն: Հովիտում փար-

1 Հովիտ թեովիայում՝ համանուն աղբյուրով, որից մի գետակ է դուրս գա-
լիս և հոսում հովիտի ամբողջ երկարութեամբ:

Թամորեն աճել էին սոճիներ, մրտասրտեր ու ուղեմիներ, սաւառույր նետերի պես երկինք էին խոյանում աւազիկ կիպարիսները, իսկ կանաչ խոտը պատած էր երփներանգ ծաղիկներով:

Վճիտ մի առվակ էր խոխոզում հովտում: Ամենուրեք տիրում էր լուռություն, անդորր ու զովութուն: Լեռան թեք լանջերին Ակտեոնը մի սքանչելի անձավ նկատեց՝ ամբողջովին պարուրված կանաչով: Գնաց դեպի այդ անձավը՝ շիմանալով, որ դա հաճախ հանգստավայր է ծառայում Զևսի դստեր՝ Արտեմիսի համար:

Երբ Ակտեոնը մոտեցավ անձավին՝ Արտեմիսը հենց նոր էր այդտեղ մտել: Նա ձեռքի աղեղն ու նետերը տվել էր հավերժահարսներից մեկին և ուզում էր լսողանալ: Հավերժահարսները հանել էին դիցուհու սանդալները, վարսերը հանգուցել էին գլխին և հենց այն է, ուզում էին մոտենալ գետակին սառնորակ ջուր վերցնելու, երբ անձավի մուտքի վրա երևաց Ակտեոնը: Ներս մտնող Ակտեոնին տեսնելով, բարձրաձայն ճշացին հավերժահարսները: Նրանք բոլորեցին Արտեմիսին՝ ուզենալով թաքցնել դիցուհուն մահկանացուի հայացքից:

Եվ ինչպես ծագող արևի ճառագայթներն էին բոսորագույն կրակով վառում ամպերը, այդպես շառագունեց դիցուհու դեմքը զայրույթից, ցասումով փայլատակեցին նրա աչքերը և էլ ավելի սքանչելի դարձավ նա իր ցասման մեջ: Զայրույթից մոլեգնեց Արտեմիսը, որ Ակտեոնը խանդարել է իր հանգիստը: Եվ ցասումնալից Արտեմիսը տարաբախտ Ակտեոնին բարեկամ եղջերու դարձրեց:

Բազմաճյուղ եղջյուրներ աճեցին Ակտեոնի գլխին: Ոտքերն ու ձեռքերը դարձան եղջերուի ոտքեր: Զգվեց, երկարեց պարանոցը, սրվեցին ականջները, պուտավոր մորթը պատեց ամբողջ մարմինը: Երկշտ եղջերուն փութաց փախուստի դիմել: Տեսավ Ակտեոնն իր արտացոլումը գետակի մեջ: Կամեցավ գոչել «Վա՛յ ինձ», բայց այլևս զրկվել էր խոսելու ձիրքից: Արցունքները գլորվեցին նրա աչքերից, բայց՝ արդեն եղջերուական աչքերից: Միայն մարդկային գիտակցությունն էր պահպանվել: Ի՞նչ պիտի անի, ա՛ր պիտի փախչի:

Ակտեոնի շներն ընկան եղջերուի հետքի վրա. շճանաչեցին իրենց տիրոջը և կատաղի հալոցներով ընկան հետևից: Հովտի միջով ու Կիթերոնի կիրճերով, սարերի զառիթափներով, անտառներով ու դաշտերով հողմի պես սուրում էր գեղեցիկ եղջերուն՝ եղջյուրները ետ զցած, իսկ շները սլանում էին նրա հետևից:

Ահա շներն ավելի ու ավելի էին մոտենում, ուր որ է կհասնեն եղջերուին. և ահա նրանց սուր-սուր ժանիքները խրվեցին տարաբախտ Ակտեոն-եղջերուի մարմնի մեջ: Ակտեոնն ուզում է գոչել. «Օ՛, խնայեցեք ինձ, ե՛ս եմ, Ակտեոնը՝ ձեր տե՛րը», բայց միայն հեծկլտանք է դուրս թռչում եղջերուի կրծքից և այդ հեծկլտանքի մեջ՝ ինչ-որ մարդկային ձայն: Ընկավ ծնկաշոք Ակտեոն-եղջերուն: Վիշտ, սուսում ու աղաչանք էին արտահայտում նրա աչքերը: Բայց մահն անխուսափելի է. գաղաղած շները պատառ-պատառ արեցին նրա մարմինը:

Վրա հասան Ակտեոնի ընկերները և փոսոսացին, որ այդպիսի երջանիկ որսին նա մասնակից չի լինում: Հրաշագեղ եղջերուին հալածել էին շները: Զգիտեին Ակտեոնի ընկերները, թե դա ինչ եղջերու է:

Այդպես զոհվեց Ակտեոնը, որ խանդարել էր Արտեմիսի անդորրը, միակը մահկանացուներից, որ տեսել էր շանթարձակ Զևսի ու Լետոյի դստեր երկնային գեղեցկությունը:

Ա.Թ.ԵՆԱՍ-ՊԱՆԱՍ

Ա.Թ.ԵՆԱՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Աթենաս-Պալլասին Զևսն է աշխարհ բերել: Ծանթարձակ Զևսը գիտեր, որ բանականության աստվածը՝ Մետիսը, երկու երեխա է ունենալու. դուստրը՝ Աթենասը, և արտասովոր խելքի և զորություն տեր մի տղա:

Մոյրաները՝ ճակատագրի աստվածուհիները, Զևսին հայտնեցին գաղտնիքը, որ Մետիս աստվածուհու որդին նրան գահընկեց կանի և կխլի աշխարհի տիրապետությունը: Վախեցավ մեծն Զևսը՝ հուսափելու համար ահեղ ճակատագրից, որ կանխատեսում էին նրան մոյրաները, նա փաղաքուշ խոսքերով քնեցրեց Մետիս

¹ Աթենաս (բոս հոմեացիների՝ Միներվա) — Հունաստանի առավել մեծարված աստվածուհիներից է: Մեծ դեր է խաղացել հունական ժողովրդական էպոսի մեջ: Աթենասը քաղաքների պահպան է: Հոմերոսյան Տրոյայում գտնվել է Աթենասի արձանը, այսպես կոչված՝ պալլադիոնը, որ իբր երկնքից է ընկել: Համարվում էր Տրոյայի պահպանը: Հունական կուլտուրայի զարգացման հետ Աթենասը դարձավ նաև գիտության հովանավորը:

աստվածունեան ու կլանեց, նախքան նա կծնիր իր դստերը, Աթենաս աստվածունան:

Մի որոշ ժամանակ անց Ջևսը սուկայի գլխացալ ունեցաւ: Եվ նա կանչեց իր որդի Հեփեստոսին ու հրամայեց ճեղքել իր գլուխը, որպէսզի ազատվի անտանելի գլխացալից ու գլխի միջի աղմուկից: Հեփեստոսը տարաւ-բերեց կացինը և հզոր մի հարվածով ճեղքեց Ջևսի գլուխը՝ առանց նրան վնաս պատճառելու, և շանթարձակի գլխի միջից դուրս եկալ հզոր ռազմուհի Աթենաս-Պալլաս դիցունհին: Ուսից գլուխ դինավառ, շողշողուն սաղավարտով, նիզակն ու վահանը ձեռքին, կանգնեց նա օլիմպոսի աստվածների ապշահար հայացքի առաջ: Ահեղորեն ճոճեց իր շողշողուն նիզակը, և նրա ռազմի կանչը որոտաց հետո՝ երկինքն ի վեր և հիմն ի վեր ցնցեց լուսակերտ Օլիմպոսը:

Հրաշագեղ ու վեհագոյալ՝ կանգնել էր նա աստվածների առաջ: Աթենասի կապուտակ աչքերը փայլում էին աստվածային իմաստութեամբ. նա ոտքից գլուխ շողում էր հզոր, երկնային հրաշք գեղեցկութեամբ: Փառաբանում էին աստվածները Ջևսի գլխից ծնված նրա սիրելի դստերը՝ քաղաքների պաշտպանին, իմաստութեան ու գիտելիքների աստվածուն, անպարտելի ռազմիկ աստվածուն՝ Աթենաս-Պալլասին:

Աթենասը հովանավորում է Հունաստանի հերոսներին, նրանց իմաստուն խորհուրդներ է տալիս: Նա՝ անպարտելին, վտանգի ժամին օգնում է նրանց: Պահպանում է քաղաքները, բերդերն ու նրանց պարիսպները: Նա իմաստութեան ու գիտութեան է շնորհում, մարդկանց արվեստ ու արհեստ է սովորեցնում: Իսկ Հունաստանի աղջիկները մեծարում են Աթենասին, որովհետև իրենց ձեռագործ է սովորեցնում: Աստվածներից ու մահկանացուներից ոչ ոք չի կարող գերազանցել Աթենասին այդ արվեստի մեջ: Բոլորը գիտեն, թե որքան դժվար է մրցել նրա հետ այդ գործում, գիտեն նաև, թե ինչպե՞ս հատուցեց դրա համար Բոթոնոսի դուստրը՝ Արաքսեն, որ ուզում էր Աթենասից էլ բարձր լինել այդ արվեստով:

Նարազված է քա Օլիմպոսի շեքպարանափոխութեանը՝ պեմի:

Բովանդակ Վիդիայում՝ հռչակված էր Արաքսեն իր արվեստով: Հավերժահարսները հաճախ էին հավաքվում Տմուրսի լանջերից ու քսկերքեր Պակտոլոսի արհիբից՝ սքանչանալու նրա աշխատանքով: Արաքսենն մշուշի պես կիտված թելերից օգի պես թափանցիկ գործվածքներ էր անում: Հպարտանում էր նա, որ աշխարհում չկա մեկը, որ հավասար լինի իրեն գործելու արվեստի մեջ: Եվ մի անգամ էլ գոչեց.

— Թող ինքը՝ Աթենաս-Պալլասը դա ինձ հետ մրցելու նա ինձ չի կարող հաղթել, երկյուղ չունեմ ես նրանից:

Եվ ահա, ալեհեր, կորաքամակ պառավի կերպարանքով, մի ձեռնափայտի վրա հենվելով, Արաքսենի առջև հայտնվեց աստվածունհի Աթենասը և այսպես ասաց նրան.

— Մերութեան իր հետ լսկ շարսթյուն չէ, որ բերում է, Արաքսեն: Տարիներն իրենց հետ նաև փորձառութեան են բերում: Ահանջ դիր իմ խորհրդին. քո արվեստով ձգտիր գերազանցել միայն մահկանացուներին: Աստվածունեան մրցութեան հրավեր մի՛ անի: Լուհնազանդ աղերսիր, որ նա ների քեզ՝ ամբարտապան խոսքերիդ համար: Աղերսողին ներում է աստվածունհին:

Արաքսենն ձեռքից բաց թողեց նրբահյուս գործվածքը: Թասուժով փաշտատակեցին նրա աչքերը: Վստահ իր արվեստին՝ նա համարձակ պատասխան տվեց.

— Անխոհեմ ես դու, պառավ: Մերութեանդ զրկել է քեզ բանականութեանից: Այդպիսի խրատներ տուր հարսներիդ ու աղջիկներիդ, իսկ ինձ՝ հանգիստ թող: Ես ինքս կարող եմ ինձ խորհուրդներ տալ: Ինչ որ ասել եմ՝ թող այն էլ լինի: Ինչո՞ւ չի գալիս Աթենասը, ինչո՞ւ չի ուզում մրցման մեջ մտնել ինձ հետ:

— Ես այստեղ եմ, Արաքսեն, — գոչեց աստվածունհին՝ ընդունելով իր իսկական կերպարանքը:

Հավերժահարսներն ու լիդիացի կանայք գետնատարած խոնարհվեցին Ջևսի սիրելի դստեր առաջ և փառաբանեցին նրան: Միայն Արաքսեն էր, որ լուռ էր մնում: Ինչպես երկնակամարն է

1 Պետութեան Փոքր Ասիայում ջախջախված պարսիկների կողմից Ն. Բ. ա. VI դարում:

վաղ առավոտյան ալ ներկվում, երբ իր շողշողուն թևերով երկինք է թռչում բոսորամատն Արշալույս-էնսը, այսպես շառագունեց ցասումից Աթենասի դեմքը: Բայց անասան է իր որոշման մեջ Արաքնեն, առաջվա պես կրքոտ ցանկութուն ունի Աթենասի հետ մրցելու: Չի կանխազգում, որ իրեն կործանում է սպասում:

Մրցութունն սկսվեց: Մեծն դիցուհի Աթենասը իր ծածկոցի վրա, մեջտեղում, գործելով պատկերում էր ամենական վսեմաշուք Ակրոպոլիսը, իսկ նրա վրա՝ իր վեճը Պոսեյդոնի հետ՝ Ատտիկայի իշխանության համար: Օլիմպոսի տասներկու լուսավոր աստվածները և նրանց մեջ իր հայրը՝ շանթարձակ Զևսը, նստել են իբրև դատավորներ. բարձրացրեց իր եռաժանին երկրասասան Պոսեյդոնը, հարվածեց ժայռին և մի աղբյուր ժայթքեց չորացած ժայռի միջից: Իսկ Աթենասը՝ սաղավարտը զլխին, վահանը ձեռքին, թափով ճոճեց իր նիզակը և խորը մխրճեց երկրի մեջ: Գետնից դուրս եկավ սրբազան ձիթենին: Աստվածները հաղթանակը շնորհեցին Աթենասին՝ Ատտիկային տված նրա պարզևն առավել բարձրածեք ճանաչելով: Իսկ ծածկոցի անկյուններում աստվածուհին պատկերեց, թե ինչպես են պատժում աստվածները մարդկանց՝ անհնազանդ լինելու համար, ապա այդ ամենի շուրջը ձիթենու տերևների պսակ արեց:

Իսկ Արաքնեն իր ծածկոցի վրա աստվածների կյանքից պատկերեց շատ տեսարաններ, որոնց մեջ աստվածները երևում էին թույլ ու մարդկային կրքերով համակված: Իսկ շուրջը Արաքնեն բաղնջազալար ծաղիկների պսակ գործեց: Կատարելության գագաթ էր Արաքնեի աշխատանքը, իր գեղեցկությամբ չէր զիջում Աթենասի աշխատանքին, բայց նրա պատկերումների մեջ ակնհայտ էր անհարգալից վերաբերմունքն աստվածների հանդեպ, մինչև անգամ՝ ատելությունը:

Ահեղորեն դայրացավ Աթենասը, պատառոտեց Արաքնեի աշխատանքը և հարվածեց նրան մաքուրով: Տարաբախտ Արաքնեն շկարողացավ տանել այդ ամոթանքը: Նա մի պարան հյուսեց,

1 Աթենասի և Պոսեյդոնի վեճի տեսարանը պատկերված է եղել Աթենքի Պարթենոն տաճարի ճակատին՝ հույն հուշակավոր քանդակագործ Փիդիասի կողմից (ն. թ. ա. V դար): Մեծ վնասվածքներով այդ ճակատը պահպանվել է մինչև մեր օրերը:

օղակ արեց և կախվեց: Բայց Աթենասն ազատեց Արաքնեին և ասաց նրան.

— Ապրի՛ր, անհնազանդ: Բայց դու մշտապես կախված կմնաս ու մշտապես կգործես, և այս պատիժը կկրեն նաև քո հետնորդները:

Աթենասը ցողեց Արաքնեին կախարդական բույսի հյութով, և իսկույն նրա մարմինը կծկվեց, փարթամ մազերը թափվեցին գլխի վրայից, և նա սարդի կերպարանք առավ: Այդ ժամանակից ի վեր Արաքնե-սարդը կախ է ընկած ոստայնից և մշտապես գործում է այն, ինչպես գործում էր իր կենդանության օրոք:

ՀԵՐՄԵՍ¹

Արկադիայում, Կիլենե լեռան մոտ գտնվող անձավում ծնվեց Զևսի և Մայայի որդի Հերմեսը՝ աստվածների զեսպանը: Մտրի արագությունը նա Օլիմպոսից սուրում է աշխարհի ամենահեռավոր ծայրը՝ թևավոր սանդալներով և ձողիկը ձեռքին: Հերմեսը պահպանում է ճանապարհները, և նրան նվիրված հերմերը² Հունաստանում ամենուրեք կարելի էր տեսնել ճանապարհներին, խաչմերուկներում և տների մուտքերի առաջ: Նա հովանավորում է ճանապարհորդներին՝ նրանց կենդանության ժամանակ, նա մեռյալների

1 Հերմես (ըստ հռոմեական առասպելաբանության՝ Մերկուրիոս) — Հունաստանի հնագույն աստվածներից մեկը: Սկզբում եղել է նախրի ու հոտի պահպան աստվածը, նրան երբեմն պատկերել են ուլթաբը ձեռքին: Հոմերոսյան էպոսում Հերմեսը նախ և առաջ աստվածների բանքերն է և մեռածների հոգիների ուղեկիցը՝ զնայի Հադեսի ստորերկրյա թագավորությունը: Հերմեսը ճանապարհորդների հովանավորն է. առևտրի զարգացման հետ Հերմեսը դառնում է առևտրի, հետևապես նաև հնարագիտության, խաբեության ու մինչև անգամ գողության հովանավոր և մարմնամարզության աստվածը. նրա արձանները դրվում էին պալատներում է, մարմնամարզության աստվածը. նրա արձանները դրվում էին ըմբշուցում գիմնասիոններում՝ այն հաստատություններում, ուր սովորեցնում էին ըմբշուցումը, բռնցքամարտություն, սկավառակի նետում, վագր, թռիչք և այլն: Ալեքսանդր Մակեդոնացու կողմից ամբողջ պարսկական տիրապետությունը նվաճելուց հետո (ն. թ. ա. IV դարի վերջը) Հերմեսը նույնացվում է գիտության և կախարդության եգիպտական Տոտ աստծու հետ և դառնում է նաև կախարդության և աստղագիտության աստվածը. նրան սկսում են կոչել երիցս մեծագույն աստված Հերմես:

2 Քարե սյուներ, որոնց ծայրին քանդակվում էր Հերմեսի դոխուր:

Հոգիներին ուղեկցում է վերջին ճանապարհ՝ գեպի Հաղեսի տըր-
տում թագավորութունը: Իր կախարդական ձողիկով փակել է տա-
լիս թարդկանց աչքերը և նրանց ընկզմամ քնի մեջ Հերմեսը ճա-
նապարհների ու ճանապարհորդների հովանավոր աստվածն է:
և առևտրական հարաբերությունների ու առևտրի աստվածը: Նա
առևտրական շահ է բերում ու մարդկանց հարստություն տալիս:
Հերմեսն է հնարել և՛ շափ ու կշիռը, և՛ թվերը, և՛ այրուքներ,
և՛ է սովորեցրել այդ ամենը մարդկանց: Նա ճարասանություն
աստվածն է նաև ու դրա հետ միասին՝ հնարագիտության ու խա-
րեություն: Ոչ ոք չի կարող գերազանցել նրան ճարպկության,
մինչև իսկ գողության մեջ, քանի որ նա արտասովոր ճարպիկ գող
է: Նա է, որ մի անգամ կատակով գողացել է Զևսի զայիսոնը,
Պոսեյդոնից՝ հռածանին, Ապոլոնից՝ ոսկե նետերն ու աղեղը, իսկ
Արեսից՝ սուրը:

ՀԵՐՄԵՍԸ ՀԱՓՇՏԱՆՈՒՄ Է ԱՊՈԼՈՆԻ ԿՈՎԵՐԸ

Կիլենեի զովաշունչ անձավում ծնվեց Հերմեսը և ծնվելուն պես
մտադրվեց խաղալ իր առաջին խաղը: Նա որոշեց հափշտակել ար-
ծաթաղեղ Ապոլոնի կովերը, երբ նա Մակեդոնիայում՝ Պիերիայի
հովտում, արածեցնում էր աստվածների նախիրը:

Կամացուկ, որպեսզի մայրը չնկատի, Հերմեսը դուրս սողաց
բարուրի միջից, ցած թռավ օրորոցից և գաղտագողի մոտեցավ
անձավի ելքին: Հենց անձավի մոտ նա մի կրիա տեսավ, բռնեց և
նրա վահանից ու երեք հյուղերից պատրաստեց իր առաջին քնա-
բը՝ վրան ձգելով ախորժարուր լարեր: Հերմեսը թաքուն վերադար-
ձավ անձավ, քնարը թաքցրեց իր օրորոցի մեջ, իսկ ինքը վրկին
դուրս եկավ և սրաթոշիչ, որպես հողմ, սուրաց գեպի Պիերիայի Այո-
տեղ Ապոլոնի նախրի միջից տասնհինգ կով հափշտակեց, նրանց
տաքերին եղեգն ու ճյուղեր կապեց՝ հետքերը ջնջելու համար, և
կովերը արագությամբ բռեց Պելոպոնեսի ուղղությամբ: Երբ ուշ
գիշերին կովերը բռում էր Քեոտիայի միջով, նա պատահեց մի ծե-
րունու, որ աշխատում էր իր խաղողի այգում:

— Վերցրու այս կովերից մեկը, — ասաց նրան Հերմեսը, —
միայն թե ոչ ոքի չասես, թե ինձ տեսել ես կովերը բռնիս:

Մերունին, ուրախացած շոալլ նվերով, խոսք տվեց Հերմեսին
լուկ և ոչ ոքի ցույց չտալ, թե նա աս է քեզ կովերը Հերմեսը:

չարունակեց ճանապարհը: Գեո շատ չհեռացած, նա կամեցավ
փորձել ծերունուն՝ կպահի՞ արդյոք տված խոսքը: Կովերն անտա-
ռում թաքցնելով ու իր կերպարանքը փոխելով՝ ետ դարձավ ու
հարցրեց ծերունուն.

— Ասա մի տեսնեմ, այստեղով մի տղա կովեր լի՞ քշել: Եթե
տեսն՝ քեզ մի ցույ ու մի կով կտամ:

Եստ էլ չերկմտեց ծերունին՝ ասի, թե ոչ. շատ էր ուզում դեռ
մի ցույ ու մի կով էլ ստանալ: Եվ նա Հերմեսին ցույց տվեց, թե
տղան կովերը ո՞ր կողմն է քշել: Սոսկալի դայրացավ Հերմեսը ծե-
րունու վրա, որ նա շպահեց խոսքը և, ցատումով լցված, նրան
համբ ժայռ դարձրեց, որպեսզի հավիտյան լռի ու մշտապես հիշի,
որ պիտի պահել տված խոսքը:

Դրանից հետո Հերմեսը դարձավ կովերի մոտ և փութկոտ
նրանց տվելի հետո բռեց վերջապես հասցրեց Պիլոս կովերից
երկուսը զոհաբերեց աստվածներին, հետո ոչնչացրեց զոհաբերու-
թյան բոլոր հետքերը, իսկ մնացած կովերին թաքցրեց քարանձա-
վում: Կովերին անձավ մացրեց ետ-ետ մղելով, որպեսզի հետքերը
այնպես ցույց տային, թե կովերը ոչ թե մտել, այլ դուրս են եկել
այնտեղից:

Կատարելով այդ ամենը, Հերմեսը հանգիստ վերադարձավ
անձավ, իր մոր՝ Մայայի մոտ և, փաթաթվելով իր բարուրի մեջ,
կամացուկ պատկեց օրորոցում:

Բայց Մայան նկատել էր որդու ցացակայությունը և նախա-
տինքով ասաց նրան.

— Վատթար գործ ես արել: Ինչո՞ւ ես հափշտակել Ապոլոնի
կովերը: Նա շատ կդայրանա: Զե՞ որ գիտես, թե որքան ահավոր
է Ապոլոնը դայրությի պահին: Գու երկյուղ չունե՞ս նրա անվերպ
նետերից:

— Ես Ապոլոնից երկյուղ չունեմ, — պատասխանեց Հերմեսն
իր մորը: — Թող մոլեզուի իր համար: Եթե նա փորձի նեղացնել քեզ
կամ ինձ, ապա ես դրա տեղը կհաննեմ. կթալանեմ Գեբիբիի նրա
ամբողջ սրբավայրը, կգողանամ նրա բոլոր եռտասնիները, ոսկին,
արծաթը և զգեստները:

Իսկ Ապոլոնն արդեն նկատել էր, որ կովերը չկան և դուրս էր
եկել փնտրելու Փնտրեց, բայց ոչ մի տեղ չկարողացավ գտնել:
Վերջապես իմաստուն թռչունը նրան բերեց Պիլոս, բայց ոսկե-

գասգուր՝ Ապոլոնն այնտեղ էլ չկարողացավ գտնել իր կովերը: Իսկ այն անձավը, ուր թաքցված էին կովերը, նա չմտավ էլ. չէ՞ որ հետքերը ոչ թե դեպի հերս, այլ գուրս էին տանում:

Վերջապես, երկար ու ապարդյուն որոնումներից հետո նա եկավ Մայայի անձավը: Լսելով Ապոլոնի ոտնաձայները՝ Հերմեսն ավելի խորացավ օրորոցի մեջ, ավելի պինդ փաթաթվեց իր բարուրի մեջ: Զայրույթից մոլեգնած Ապոլոնը մտավ Մայայի անձավը և տեսավ, որ Հերմեսը անմեղ տեսքով պառկած է իր օրորոցում: Նա սկսեց կշտամբել Հերմեսին կովերի գողության համար և պահանջեց, որ նա ետ տա կովերը, բայց Հերմեսը ամեն ինչ ուրացավ: Նա հավատացնում էր Ապոլոնին, թե իր մտքովն էլ չի անցել Ապոլոնի կովերը գողանալ ու բնավ էլ տեղյակ չէ, թե որտեղ են նրանք:

— Լսի՛ր, տղա՛, — գուցե ցասումով լցված Ապոլոնը, — եթե ետ չտաս իմ կովերը՝ ես քեզ խավար ճարտարուք կհետեմ, և ո՛չ հայրդ կարող է փրկել քեզ, ո՛չ մայրդ:

— Օ՛, Լետոյի որդի, — պատասխանեց Հերմեսը, — ես չեմ տեսել քո կովերը, չգիտեմ նրանց տեղը և ուրիշներից էլ չեմ իմացել: Մի՞թե դա է իմ գործը, ես ուրիշ գործեր ունեմ, ուրիշ հոգսեր: Ես հիմա հոգում եմ քնի, մորս կաթի ու մեկ էլ իմ բարուրի մասին: Զէ՛, երզվում եմ, ես քո կովերի գողին էլ չեմ տեսել:

Ինչքան էլ զայրացավ Ապոլոնը՝ ոչինչ չկարողացավ իմանալ խորամանկ ու հնարագետ Հերմեսից: Վերջապես, ոսկեգանգուր աստվածը Հերմեսին դուրս բռեց օրորոցի միջից և ստիպեց հենց բարուրի մեջ գնալ իրենց հոր՝ Զևսի մոտ, որ նա լուծի իրենց վեճը: Երկու աստվածներն էլ եկան Օլիմպոս: Որքան էլ ուզեց խուլստալ Հերմեսը, որքան էլ խորամանկություն բանեցրեց, այնուամենայնիվ Զևսը հրամայեց, որ նա Ապոլոնին վերադարձնի հափըշտակած կովերը:

Օլիմպոսից Հերմեսն Ապոլոնին բերեց Պիլոս՝ ճանապարհին հետը վերցնելով կրիայի վահանից շինած քնարը: Պիլոսում ցույց տվեց կովերի թաքստոցը: Մինչ Ապոլոնն անձավից դուրս կբռնի կովերին՝ Հերմեսը նստեց մի քարի և նվազեց քնարի վրա: Զարմանահրաշ հնչյունները լցրին հովիտն ու ավազապատ ծովեզերքը: Զարմացած Ապոլոնը հիացմունքով էր ունկնդրում Հերմեսի նվազը: Նա այնքան գերվեց Հերմեսի քնարի հնչյուններով, որ նրա

քնարի փոխարեն տվեց հափըշտակած կովերը: Ինչ Հերմեսը, կովերն արածեցնելիս զվարճանալու համար, իրեն համար մի սրինգ՝ հնարեց, որ այնքան սիրում են նվազել շունաստանի հավիչները:

Հնարագետ, ճարտիկ, մտքի նման արագասլաց, Մայայի ու Զևսի գեղեցկատես զավակ Հերմեսը, որ դեռ վաղ մանկություն ժամանակ ապացուցեց իր խորամանկությունն ու ճարտկությունը, ծառայում էր նաև որպես պատանեկան ուժի մարմնացում: Ամենուրեք պալեստրաներում՝ նրա արձաններն էին գրվում: Նա երիտասարդ ատլետների աստվածն էր: Նրա՛ն էին կաշ անում մարզիկները ըմբշամարտի կամ վազքի մրցությունից առաջ:

Ո՛վ ասես, որ չէր մեծարում Հերմեսին շին շունաստանում. և՛ ճանապարհորդը, և՛ հռետորը, և՛ վաճառականը, և՛ ատլետը, և՛ մինչև իսկ գողը:

Արես³, ԱՓՐՈՊԻՏԵՎ⁴, ԷՐՈՍ⁴ ԵՎ ՀԻՄԵՆԵՈՍ⁴

ԱՐԵՍ

Պատերազմի աստված մոլեգին Արեսը շանթարձակ Զևսի ու Հերայի որդին է: Զի սիրում նրան Զևսը: Եվ հաճախ է ասում որդուն, որ նա Օլիմպոսի աստվածների մեջ ամենից ատելի է իր համար: Զևսը որդուն չի սիրում, որովհետև նա արյունուշտ է:

¹ Հին հույների սրինգը բաղկացած էր իրար կապված յոթ տարբեր երկաթության եղեգնյա փոքրիկ խողովակներից:

² Հին շունաստանում, զլավորապես դպրոցների կից, կային հասուկ հրապարակներ, մեծ մասամբ սյունաշարերով շրջապատված, որոնց մեջ վարժեցնում էին ֆիզիկական մարզանքների, ըմբշամարտի, բռնցքամարտի և այլն: Այսպիսի հրապարակները կոչվում էին պալեստրաներ:

³ Արես (ըստ հռոմեացիների՝ Մարս) — պատերազմի աստվածը, որ ավելի ու կործանում է բերում, քաջակորով ուզում էին հին հունական իդեալը: Մյուս աստվածների համեմատ սա նվազ մեծարանքի է արժանացել: Դրա արտահայտությունն է և այն, որ մինչև իսկ Զևս աստվածը, ըստ հույների, այնքան էլ չէր սիրում իր որդի Արեսին, որ շարունակ երկպառակություններ էր սերմանում, կորստյան մատնում մարդկանց և հրճվում, երբ ճակատամարտի մեջ մարդկային արյունը հասում էր զետի նման:

⁴ Հռոմեական դիցաբանության մեջ Ափրոդիտեն Վեներան է, էրոսը՝ Ամուրը կամ Կուպիդոնը: Հիմենեոսը ամուսնության աստվածն է:

Իր որդին չիներ՝ Ձևար վաղուց էր նրան խաղար Տարտարուք զլուրել, այնտեղ, ուր տառապում են տիտանները:

Մոլեզին Արեւի սրտին հրճվանք են բերում միայն դաժան մարտերը:

Ճակատամարտի զենքերի շունդունի, ճիշերի ու հեծեծանքների ժամին նա մոլեզնաբար սուրում է մարտնչողների միջև՝ ջուզացող զենքերով ու վիթխարի վահանով: Նրա հետևից սուրում են որդիները՝ Պենոսը և Փոբոսը, սարսափն ու վախը, իսկ սրանց հետ համընթաց՝ երկպառակության դիցուհի էրիսը և սպանություն սփռող էնիո դիցուհին: Ետում, շունդում է մարտը, ցնծում է արնաթաթախ Արեւը, երբ իր ահաժոր սրով խոցում է մարտիկներին և տաք արյունը հորդում է գետին: Առանց խափ գնելու խոցում է նա ձախ ու աջ, դիակները կիտվում են անողորմ ասածու շուրջը:

Կատաղի, մոլեզին, ահեղ է Արեւը, բայց հաղթանակը միշտ չէ, որ ուղեկցում է նրան: Հաճախ նա ստիպված է լինում մարտադաշտը զիջել Ձևսի ռազմաշունչ դասերը՝ Աթենաս-Պալլասին: Արեւին նա հաղթում է իմաստությամբ և իր ուժի անխուղ դիտակցութեամբ: Պատահում է, որ մահկանացու հերոսներն էլ հաղթում են Արեւին, մանավանդ, երբ պայծառակն Աթենաս-Պալլասն օգնում է նրանց: Տրոյացի պարիսպների տակ այդպես խոցեց Արեւին Գիոմեդեսն իր պղնձ նիզակով: Աթենասն էր ուղղություն տվել նիզակի հարվածին: Տրոյացիների ու հույների զորքերի վրայով հեռու տարածվեց վիրավորված ասածու ահաժոր ձիջը: Պղընձակովի զրահներով պատած Արեւն այնպես ճշաց ցավից, աօես տասը հազար զորական միանգամից ձիջ արձակեցին՝ մտնելով կատաղի մարտի մեջ: Ցնցվեցին սարսափահար հույներն ու տրոյացիները, իսկ մոլեզնած Արեւը, մթամած ամպերով դարտնալած, արնաթաթախ սուրաց իր հոր՝ Ձևսի մոտ՝ գանգատվելու Աթենասից: Բայց հայր Ձևսը ականջ չդրեց նրա գանգատներին: Նա չի սիրում իր այն որդուն, որին հաճելի են միայն պծտությունը, կռիվներն ու սպանությունները:

Եթե մինչև իսկ Արեւի կինը, զնդեցկազույնը աստվածուհիներից, Ափրոդիտեն է օգնության հասնում իր ամուսնուն՝ նրա և Աթենասի կովի թեժ պահին, էլի շանթարձակ Ձևսի սիրելի դուստրը ռազմաշունչ Աթենասն է լինում հաղթանակողը: Աթենասը մի

հարվածով գետին է տապալում սիրո զեղանի աստվածուհի Ափրոդիտեին: Արցունքն աչքերին Օլիմպոս է աստվածուն հավերժ դեռատի, հրաշք զնդեցկուհի Ափրոդիտեն, իսկ նրա հետևից հնչում է Աթենասի հաղթական ժիծաղն ու ծաղրը:

ԱՓՐՈԴԻՏԵ

Փափկակյաց ու թեթևամիտ Ափրոդիտե աստվածուհու ինչ բանն է արյունահեղ մարտերին խառնվելը: Նա աստվածների ու մահկանացուների սրտերում սեր է զարթեցնում: Այդ իշխանության շնորհիվ նա տիրում է ամբողջ աշխարհին:

Ոչ ոք չի կարող խուսափել նրա իշխանությունից՝ մինչև իսկ աստվածները: Միայն ռազմաշունչ Աթենասը, Հեստիան և Արտեմիսն են, որ շնն ենթարկվում նրա զորութեանը:

Բարձրահասակ, բարեկազմ, քնքուշ դիմագծերով, մեղմ ալիք տվող ոսկեփայլ վարսերով, որ պսակի պես ծածկում է նրա զեղանի գլուխը, Ափրոդիտեն աստվածային զնդեցկության և անանց երիտասարդության մարմնացումն է: Երբ նա քայլում է՝ իր զնդեցկութեամբ շողալով, բուրումնալիտ զգեստների մեջ, այդ ժամանակ արևն ավելի պայծառ է շողում, ծաղիկները՝ ավելի փարթանում մորեն ծաղկում: Անտառի վայրի գազանները թավուտից դուրս են գալիս ու վազում նրա մոտ, երամ-երամ դեպի Ափրոդիտեն են թռչում հավքերը, երբ նա քայլում է անտառի միջով: Առուծները, հովազներն ու արջերը հեզորեն զգվում են նրան: Անայլալ գնում է վայրենի գազանների միջով Ափրոդիտեն՝ հպարտ իր ճանաչափայլ զնդեցկութեամբ: Նրան ուղեկցող օրեաղներն ու քարիսները՝ զնդեցկության ու նազանքի աստվածուհիները, ծառայում են նրան. շքեղազարդ զգեստներ են հագցնում, սանրում ոսկեփրփուր վարսերը, պսակում գլուխը շողշողուն ապարոշով:

Կիթերա կղզու մոտ, ծովի ալիքների ձյունասպիտակ փրփուրից է ծնվել Ափրոդիտեն՝ Ուրանոսի դուստրը: Թեթևասահ, փաղա-

1 Ափրոդիտե (ըստ հռոմեական դիցաբանության՝ Վեներա) — սկզբում եղել է անձրևաբեր երկնքի աստվածուհին, ինչպես և, ըստ երևութի, ծովի աստվածուհին: Ափրոդիտեի և նրա կուտի վրա զգացվում է արևելյան՝ զլխավորապես փյուսեիկյան աստվածուհի Աստարտեի ազդեցությունը: Աստիճանաբար Ափրոդիտեն դառնում է սիրո աստվածուհին: Սիրո աստված էրոսը (Ամուր) սրա որդին է:

քուշ զեփյուռը նրան բերեց Կիպրոս: Այնտեղ դեռատի օրհաղնե-
րը շրջապատեցին ծովային ալիքներից ելած սիրո աստվածուհուն
Նրան զուգեցին ոսկեհյուս զգեստներով և բուրումնավետ ծաղիկ-
ների պսակ դրին զլիսին: Ուր էլ որ ոտքը դներ Ափրոդիտեն՝ այն-
տեղ փարթամորեն ծաղիկներ էին բացվում: Օղբ լիուլի հագնում
էր բուրմունքով: Էրոսն ու Հիմերոսը՝ հրաշագեղ աստվածուհուն
շարժրացրին Օլիմպոս: Բարձրագոյ ողջույն տվին նրան աստված-
ները: Այդ ժամանակից ի վեր մշտապես Օլիմպոսի աստվածների
մեջ է ապրում ոսկեշող Ափրոդիտեն՝ հավերժ դեռատի, գեղեցկա-
զույնը աստվածներից:

ՊԻՊՄԱԼԻՈՆ

Շարադրված է ըստ Օվիդիոսի «Կերպարանափոխություններ» պոեմի:

Ափրոդիտեն երջանկություն է շնորհում նրան, ով հավատար-
մությունը ծառայում է իրեն: Այդպես նա երջանկություն պարգևեց
նաև Պիզմալիոնին՝ Կիպրոսի մեծ արվեստագետին: Պիզմալիոնն
ատում էր կանանց և ապրում էր առանձնացած՝ խուսափելով
ամուսնությունից: Մի անգամ նա շողջողուն փղոսկրից արտասո-
վոր գեղեցկության տեր մի աղջկա արձան քանդակեց: Ասես կեն-
դանություն առած՝ կանգնած էր այդ արձանը նրա արվեստանո-
ցում: Թվում էր, թե նա շնչում է, թվում էր, թե ահա ուր որ է
կշարժվի, կբայլի, կխոսի: Ժամերով սքանչանում էր արվեստա-
գետն իր ստեղծագործությունը և, ի վերջո, սիրահարվեց իր իսկ
ստեղծած արձանի վրա: Նա արձանին ապարանջաններ, մանյակ-
ներ ու ականջողներ նվիրեց, զուգեց շքեղ զգեստներով, գլուխը
զարդարեց ծաղկեպսակներով և նրա համար սիդոնյան ծիրանուց
մահիճ սարքեց: Որքա՛ն հաճախ էր կրկնում Պիզմալիոնը.

— Օ՛, եթե դու կենդանի լինեիր, եթե կարողանայիր պատաս-
խանել իմ խոսքերին, օ՛, ես որքան երջանիկ կլինեի այդ ժամա-
նակ:

Բայց արձանը համր էր:

Նկան Ափրոդիտեի մեծարման տոնախմբությունների օրերը:
Պիզմալիոնը սիրո աստվածուհուն մի ոսկեղջյուր ճերմակ երինջ

1 Դրա համար էլ հաճախ նրան կիպրուհի են կոչում:

2 Հիմերոս — կրթոտ սիրո աստվածը:

զոհարերից. աստվածուհուն կարկառեց ձեռքերն ու շշուկով աղ-
թեց.

— Օ՛, հավերժական աստվածնե՛ր, և դո՛ւ, ոսկեշող Ափրոդի-
տե: Եթե զուք կարող եք ամեն ինչ շնորհել աղերսողին, ապա
ավելք ինձ մի կին այնքան գեղեցիկ, որքան գեղեցիկ է իմ ձեռ-
քով քանդակած այս աղջկա արձանը:

Պիզմալիոնը սիրտ չէր անում աստվածներին խնդրել, որ կեն-
դանություն պարգևեն իր արձանին, երկյուղ էր կրում, որ այդ-
պիսի խնդրանքով կզայրացնի օլիմպացի աստվածներին: Պայծառ
բողկտում էին զոհաբերության խարույկի բոցերը սիրո աստվա-
ծուհի Ափրոդիտեի պատկերի առջև. դրանով աստվածուհին ասե՞ս
հասկացնում էր Պիզմալիոնին, որ աստվածները լսել են նրա պա-
ղատանքը:

Արվեստագետը տուն վերադարձավ: Նա մոտեցավ արձանին
և, օ՛, երջանկություն, օ՛, ուրախություն: Արձանը կենդանություն
էր առել: Տրոփում է նրա սիրտը, աչքերի մեջ փայլատակում է
կյանքը: Փառաբանելով սիրո մեծ աստվածուհի Ափրոդիտեին և
լեցուն երախտագիտությունը այն երջանկության համար, որ նա
շնորհել է իրեն, Պիզմալիոնը հրճվանքով փարվեց գեղանի աղ-
ջրկան, որ պատվանդանի վրայից իջել և իր մոտ էր եկել: Նվ
այդպես, աստվածուհի Ափրոդիտեն Պիզմալիոնին գեղեցկուհի կին
պարգևեց:

ՆԱՐԳԻԶ (ՆԱՐԿԻՍՈՍ, ՆԱՐՑԻՍ)

Շարադրված է ըստ Օվիդիոսի «Կերպարանափոխություններ» պոեմի:

Բայց նա, ով չի մեծարում ոսկեշող Ափրոդիտեին, ով մեր-
ժում է նրա շնորհները, ընդդիմանում իշխանությանը՝ նրան անո-
ղորմարար պատժում է սիրո աստվածուհին:

Այդպես նա պատժեց գետերի աստված Կեփիսոսի և հավեր-
ժահարս Լավրիոնեի որդուն, գեղեցիկ, բայց սառը ու զոռոզ նար-
գիզին: Ոչ ոքի չէր սիրում նա, ոչ ոքի, բացի իրենից, միմիայն
իրեն էր համարում սիրո արժանի:

Մի անգամ, երբ որս անելիս նարգիզը մոլորվեց սաղար-
թախիտ անտառում, հավերժահարս էքոն՝ տեսավ նրան: Հավեր-

1 էփո — արձագանք, այստեղից էլ ոտուերեն ԶՊՕ — արձագանք (Մ. Թ.):

ժամարսը չէր կարող խոսել նրա հետ: Նրան ճնշում էր Հերա աստվածունու պատիժը, պարտավոր էր մշտապես լուռ մնալ էջո հավերժաճարսը, իսկ հարցերին պատասխանել կարող էր միայն նրանով, որ կրկնում էր հարցերի վերջին բառերը: Նարգիզի հայացքից անտառի թավուտում թաքնված էր տես հիացմունքով էր նայում բարեկազմ ու սիրունատես պատանուն: Նարգիզը զննեց շորսրուտը՝ շիմանալով ուր գնալ, և բարձր ձայնով գռչեց.

— Հե՛ր, ո՞վ կա այստեղ:

— Աստե՛ղ, — լավեց էջոյի բարձրաձայն պատասխանը:

— Այստեղ արի, — գռչեց Նարգիզը:

— Արի՛, — պատասխան տվեց էջոն:

Ձարմանքով շուրջն է նայում գեղեցիկ Նարգիզը: Ոչ ոք չկա եվ զարմացած դրանից, նա բարձրաձայն քղաժեց.

— Այստե՛ղ արի, ինձ մոտ:

Եվ հրճվանքով արձագանք տվեց էջոն.

— Ինձ մո՛տ:

Անտառի միջից դեպի Նարգիզը շտապեց բաղկատարած հավերժաճարսը, բայց զայրույթով ետ մղեց նրան գեղեցիկ պատանին ու ասաց գոռոզարար.

— Ե՛տ տար ձեռքերդ: Ավելի լավ է մեռնել, քան մշտապես քեզ հետ լինել:

Եվ նա շտապով հեռացավ հավերժաճարսից ու անհետացավ մտք անտառում: Տխուր-տրտում նրա հետևից հնչեց վշտով լեցուն խոսքը. «... քեզ հետ լինելու: Անտառի անանցանելի թավուտում թաքնվեց մերժված հավերժաճարսը: Նա տառապում է Նարգիզի հանդեպ տածած սիրուց, ոչ ոքի աչքին չի երևում, և տարաբախտ էրոն տխրությամբ արձագանք է տալիս ամեն մի կանչի: Իսկ Նարգիզն առաջիկա նման մնաց գոռոզ, ինքն իրեն սիրահարված: Նա մերժում էր բոլորի սերը: Ետո հավերժաճարսների ապերջանիկ դարձրեց նրա գոռոզությունը: Եվ մի անգամ էլ մերժված հավերժաճարսներից մեկը բացահանեց.

— Դո՛ւ էլ սիրահարվիր, Նարգիզ: Եվ թող քեզ փոխադարձաբար շպտապասխանի նա, ում որ դու սիրահարվես:

Ի կատար անվեց հավերժաճարսի իղձը:

Ձայրացավ սիրո աստվածունի Ափրոդիտեն, որ Նարգիզը մերժում է նրա շնորհները, և պատժեց նրան: Մի անգամ, գարնանը որս անելիս, Նարգիզը մոտեցավ վտակին և կամեցավ ծա-

րավը հագեցնել սառնորակ ջրով: Դեռ ոչ ոք իր շուրթերով չէր հպվել այդ վտակին, ո՛չ հովիվը, ո՛չ էլ լեռնային այծերը: Ոչ մի անգամ վտակի մեջ չէր ընկել որևէ կտարված ճյուղ, մինչև անգամ քամին վտակի մեջ չէր քշել փարթամ ծաղիկների թերթերը: Վտակի շուրթ վճիտ էր ու թափանցիկ: Ինչպես հայելու մեջ՝ շուրթը եզած ամեն ինչ արտացոլվում էր նրա մեջ. և՛ ամերիկյան աճած թփերը, և՛ սլացիկ կիպարիսները, և՛ կապուտակ երկինքը: Կոպցավ Նարգիզը վտակի վրա՝ ձեռքերը հենելով ջրից դուրս եկած քարին և արտացոլվեց վտակի մեջ իր ամբողջ գեղեցկությամբ: Հենց այստեղ էլ վրա հասավ Ափրոդիտեի պատիժը: Այլաճար նայում է Նարգիզն իր արտացոլմանը և համակվում բուռն սիրով իր սեփական արտացոլման հանդեպ: Միրառատ աչքերով նայում է նա ջրի մեջ արտացոլված իր պատկերին, հմայվում, կանչում, բազկատարած ձգտում դեպի իր պատկերը: Կանանում է Նարգիզը ջրեղեն հայելուն, որպեսզի համբույր գրոշմի իր արտացոլմանը, բայց համբուրում է վտակի վճիտ ու սառնորակ ջուրը միայն: Ամեն ինչ մոռացավ Նարգիզը. չի կարողանում հեռանալ վտակից, անվերջ սքանչանում է իր արտացոլմամբ: Չի՛ ուտում, չի՛ խմում, չի՛ քնում: Վերջապես, հուսահատությամբ լեցուն, ձեռքերը մեկնելով դեպի իր արտացոլումը, բացահանչում է Նարգիզը.

— Օ՛, ո՞վ է տառապել այսքան դաժտնաբար: Մեզ լեռները չեն բաժանում, ոչ էլ ծովերը, այլ միայն ջրի բարակ շերտը, և էլի մենք չենք կարող միասին լինել: Դո՛ւրս արի վտակի միջից: Ես տեսնում եմ՝ դու ձեռքերդ ինձ ես մեկնում, երբ ես բազկատարած մղվում եմ դեպի քեզ: Երբ ես կոանում եմ քեզ համբուրելու՝ դու էլ դեպի ի՛նձ ես գալիս, և բո շուրթերն էլ են համբուրի սպասում: Երբ ես ժպտում եմ՝ դու էլ ի՛նձ ես ժպտում: Իսկ երբ վշտահար արցունք եմ թափում՝ դո՛ւ էլ ես լալիս, արտասուքը դողում է նաև քո՛ սքանչելի աչքերում: Ես տեսնում եմ, թե դու ինչպե՛ս ես պատասխանում ինձ, տեսնում եմ, թե ինչպե՛ս են շարժվում քո վարդազույն շուրթերը, բայց ես չեմ լսում քո խոսքերը:

Մտքերի մեջ բնկավ Նարգիզը՝ նայելով իր արտացոլմանը ջրի մեջ: Հանկարծ մի ահավոր միտք ծագեց զլխում և, կոանալով ջրի վրա, կամացուկ շնչաց իր արտացոլմանը.

— Օ՛, վա՛յ ինձ: Ես սարսափով եմ մտածում, թե արդյոք ինքս ինձ չե՛մ սիրահարվել: Չէ՛ որ դու՛ հենց ես եմ: Ես հենց ինձ եմ սիրում: Օ՛, եթե կարողանային երկու Նարգիզ լինել: Օ՛, եթե

ես կարողանայի բաժանվել իմ մարմնից: Ճառապանքներս ինձ զրկում են ուժից: Ես զգում եմ, ինձ ապրելու քիչ ժամանակ է մնացել: Դեռ նոր միայն ծաղկած՝ ես կթորչում եմ և կփնամ ստվերների խավար թագավորությունը: Մահն ինձ չի ահաբեկում, մահը վե՛րջ կտա իմ սիրո տառապանքներին:

Նարգիզի ուժերը լքում են իրեն. նա գունատվում և արդեն զգում է վերահաս մահվան մոտենալը, բայց և այնպես անկարող է պոկվել իր արտացոլումից: Լալիս է Նարգիզը: Նրա արցունքները թափվում են վտակի վճիտ ջրի մեջ: Զրի հայելաճամբան մակերեսին օղակներ առաջացան, և մի պահ կորավ արտացոլումը: Նարգիզն ահաբեկված բացականչեց.

— Օ՛, որտե՞ղ ես դու Ե՛տ արի: Մի՛ գնա, մի՛ լքիր ինձ, չէ՞ որ դա անգթություն է: Օ՛, թույլ տուր գոնե նայեմ քեզ:

Բայց ահա ջուրը կրկին հանդարտվեց, կրկին երևաց արտացոլումը, կրկին, առանց հեռանալու, նրան է նայում Նարգիզը: Հավում է նա, ինչպես ծաղիկների ցողը վառ արևի ճառագայթների տակ: Տարաբախտ հավերժահարս էքոն էլ է տեսնում Նարգիզի տառապանքները: Նա առաջվա պես սիրում է Նարգիզին և նրա տառապանքները ցավով ճմլում են հավերժահարսի սիրտը:

— Վա՛յ ինձ,— բացականչում է Նարգիզը:

— Վա՛յ ինձ,— պատասխան է տալիս էքոն:

Վերջապես, տառապահար, նվաղուն ձայնով բացականչում է Նարգիզը՝ նայելով իր արտացոլմանը.

— Մնաս բարո՛վ:

է՛լ ավելի կամացուկ, հաղիվ լսելի հնչեց հավերժահարս էքոյի արձագանքը.

— Մնաս քարո՛վ:

Եվ հակվեց Նարգիզի գլուխը առափնյա կանաչ խոտերին, մահվան դալկությունը բռնեց նրա աչքերը: Մեռավ Նարգիզը: Լաց եղան անտառում դեռատի հավերժահարսները, լաց եղավ և էքոն: Դեռատի հավերժահարսները պատանի Նարգիզի համար շիրիմ պատրաստեցին, բայց երբ եկան նրա դին տանելու՝ չգտան: Այնտեղ, ուր խոտի վրա հակվել էր Նարգիզի գլուխը, աճել էր մի բուրավետ ծաղիկ՝ մահվան ծաղիկը: Նարգիզ են կոչում նրան:

Նարգիզը է քո Օլիգիոսի «Կերպարանավորություններ» պոեմի:

Բայց Նարգիզին այդպես զաժանորեն պատժող սիրո աստվածուհին էլ գիտե, թե ի՛նչ է սիրո տառապանքը: Նրան վիճակվեց ողբալ իր սիրելի Ադոնիսին:

Ափրողիտեն սիրում էր Կիպրոսի արքայի որդուն՝ Ադոնիսին: Մահկանացուներից ոչ ոք չէր կարող նրան հավասարվել զեղեցկություններ, նա մինչև իսկ օլիմպոսյի աստվածներից էլ զեղեցիկ էր: Հանուն նրա՝ Ափրողիտեն մոռացություն տվեց և՛ Պատմոսը, էր: Ժաղկուն Կիթերան: Ադոնիսը նրա սրտին ավելի մոտ էր, քան և՛ ծաղկուն Կիթերան: Ադոնիսը նրա ամբողջ ժամանակ Ադոնիսի նույնիսկ լուսավոր Օլիմպոսը: Նա ամբողջ ժամանակ Ադոնիսի հետ էր: Ադոնիսի հետ միասին Կիպրոսի լեռներում ու անտառներում որս էր անում նա՝ Արտեմիս դիցուհու նման: Մոռացություն մատնեց Ափրողիտեն և՛ ոսկեղեն զարդարանքները, և՛ իր զեղեցկությունը: Այրող արեի տակ, թե ամպամած եղանակին՝ նա նապաստակներ, երկչոտ եղջերուներ ու այծյամներ էր որսում՝ խուսափելով ահեղ առյուծների ու վարազների որսից: Նա Ադոնիսին սափելով ահեղ առյուծների ու վարազի որսից, որ էլ խնդրում էր խուսափել առյուծի, արջի ու վարազի որսից, որ էլ խնդրում էր խուսափել առյուծի, արջի ու վարազի որսից: Աստվածուհին հաղվազեպ էր մենակ թողնում արքայազնին, իսկ մենակ թողնելիս հաղվազեպ էր մենակ թողնում արքայազնին, իսկ մենակ թողնելիս էլ ամեն անգամ աղաչում էր, որ չմոռանա իր խնդրանքը:

Մի անգամ էլ, Ափրողիտեի բացակայության ժամանակ, Ադոնիսի շները որսի ժամանակ ընկան մի վիթխարի վարազի հետքերի վրա: Նրանք ջրեցին գազանին ու գազազած հաչոցներով հալածեցին նրան: Ադոնիսն ուրախացավ, որ այդքան հարուստ որս պիտի ունենա. չէր զգում, որ դա իր վերջին որսն է: Շների հաչոցը զնալով մոտենում էր, ահա երևաց ահագին վարազը թփերի արանքում: Ադոնիսը, հենց այն է, ուզում էր իր նիզակով խոցել կատաղած վարազին, երբ հանկարծ վարազը նետվեց նրա վրա և իր սուրսայր ժանիքներով մի ակնթարթի մեջ մահացու վիրավոր

1 Ադոնիսի և Ափրողիտեի առասպելը հույները փոխ էին առել փյունիկեցիներից: Ադոնիս անունը հունարեն չէ, այլ փյունիկերեն է և նշանակում է սպարոնոս փյունիկեցիներն էլ այս առասպելն իրենց հերթին առել են բարելացիներից, որոնք ունեցել են առասպել սիրո աստվածուհի Իշտարի և զեղեցիկ Քամմոզի մեծնող և ամեն զարնան հարություն առնող աստծու մասին:

րեց Ափրոզիտեի սիրեցյալին: Եվ մեռավ Ադոնիսը այդ ահավոր վերքից:

Երբ Ափրոզիտեն առավ Ադոնիսի մահվան լուրը, լքված անասելի վշտով, ի նքջ եկավ Կիպրոսի լեռները՝ գտնելու սիրած պատանու դին: Լեռնային կտրուկ զառիվայրներում, մթամած կիրճերի միջով, խորունկ՝ անդունդների եզրերով գնում էր Ափրոզիտեն: Սրագծայր քարերն ու տատակների փշերը արյունոտում էին աստվածուհուն քնքուշ ոտքերը: Արյան կաթիլները ցողվում էին գետնին՝ հետք թողնելով նրա անցած բոլոր վայրերում: Ի վերջո դառավ Ափրոզիտեն սիրեցյալի դին: Դառնագին լացեց նա այդքան վաղամեռ գեղեցիկ պատանու վրա:

Եվ որպեսզի մշտապես պահպանվի Ադոնիսի հիշատակը, աստվածուհին կամեցավ, որ նրա արյունից քնքուշ հողմածաղիկներ բուսնեն: Իսկ այն վայրերում, ուր արյուն է կաթել Ափրոզիտեի վերավորված ոտքերից, փարթամ վարդեր բուսնեցին՝ շառագույն, ինչպես աստվածուհու արյունը: Գլխաց ամպրոպային Զևսը սիրո աստվածուհուն: Հրաման արձակեց իր եղբայր Հադեսին ու նրա կնոջը՝ Պերսեփոնին, որ ամեն տարի Ադոնիսին քաջ թողնեն երկիր՝ մեռյալների սովերների թախծալի թագավորությունից: Այդ ժամանակից ի վեր Ադոնիսը կես տարի մնում է Հադեսի թագավորության մեջ, իսկ կես տարի՝ ապրում երկրի երեսին՝ Ափրոզիտե աստվածուհու հետ: Յնձում է բովանդակ բնությունը, երբ երկիր, դիպի արևի վառվոտն ճառագայթներն է վերագառնում ոսկեշող Ափրոզիտեի գեղեցիկ սիրեցյալը՝ պատանի Ադոնիսը:

ԷՐՈՍ

Գեղանի Ափրոզիտեն իշխում է աշխարհի վրա: Նա՝ ևս, շանթարձակ Զևսի նման, ունի իր սուրհանդակը: Նրա միջոցով է ի կատար ածում իր կամքը: Ափրոզիտեի սուրհանդակը նրա որդի էրոսն է՝ հրձվանքով լի, արագոտն, չարաճճի, խարդախ, իսկ երբեմն էլ՝ նաև անողորմ մի տղա: Էրոսը իր շողշողուն ոսկե թևերով արագորեն, զեփյուռի պես թեթև սուրում է երկրների ու ծովերի վրայով: Չեռքին փոքրիկ ոսկեղեն աղեղն է, իսկ նետերով լի կապարճը զցած է ուսին: Չկա մեկը, որ ապահով լինի այդ ոսկեղեն նետերից: Անվրնայ՝ նպատակին է խփում էրոսը. իբրև նետածիգ՝ նա չի զիջում մինչև իսկ ոսկեզանգուր Ապոլոնին: Նպատակին դիպ-

ցընելի՞մ՝ էրոսի աշքերը փայլատակում են հրձվանքով, նա հաղթահանորեն հա է գցում իր գանգրահեր զլուխը և բարձր բրբջում:

Էրոսի նետերը իրենց հետ բերկրակա ու երջանկություն, բայց հաճախ էլ առապանք, սիրո տանջանք և նույնիսկ կործանում են բերում: Մինչև իսկ ոսկեզանգուր Ապոլոնին, իրեն՝ ամպահալած Զևսին անդամ քիչ տառապանքներ չեն պատճառել այդ նետերը:

Զևսը պիտե՞ր, թե որքա՞ն վիշտ ու շարիք պիտի բերի աշխարհ ոսկեշող Ափրոզիտեի տղան: Եվ ուզում էր, որ նրան մահացնեն գեռ ծեփկալ: Ժամանակ: Բայց կարո՞ղ էր արդյոք մայրը թույլ տալ այդ: Նա էրոսին թաքցրեց անանցանելի անտառում, իսկ այնտեղ, անտառի խորքում, մանչուկին իրենց կաթով սնուցեցին երկու կատաղի առյուծներ: Հասակ առավ էրոսը, և ահա գեղեցկատես պատանյակը թևածած է աշխարհով մեկ և իր նետերով մեկ երջանկություն սփռում, մեկ՝ վիշտ, մեկ՝ բարիք, մեկ՝ շարիք:

ԾՄՆՆԵՎՍ

Ափրոզիտեն մի օգնական ուղեկից էլ ունի. ամուսնություն պատանի աստված Հիմենևսը: Նա իր ձյունասպիտակ թևերով թռչում է ամուսնական հանդեսի առջևից: Պայծառ վառվում են Հիմենևսի ամուսնական ջահի բոցերը: Աղջիկների երգչախմբերը հարսանիքի ժամանակ դիմում են Հիմենևսին, աղերսելով, որ նա բարեմաղթի երիտասարդներին և երջանկություն տա նրանց կյանքին:

ՀեՓԵՍՏՈՍ

Հեփեստոսը՝ Զևսի ու Հերաի որդին, կրակի աստվածը, դարբին-աստվածը, որին ոչ ոք չի կարող հավասարվել կռելու արվեստի մեջ, ծնվել է լուսավոր Օլիմպոսում: Նա ծնվեց իբրև թուլակազմ ու կաղիլի երեխա: Ցաստմով լցվեց մեծն Հերան, երբ աստվածու-

1 Հեփեստոս (հոմերական դիցաբանության մեջ՝ Վուլկան)— սկզբում եղել է կրակի աստվածը: Արհեստների ու հատկապես դարբնության արհեստի զարգացման հետ դառնում է այն ժամանակվա մետաղագործության հովանավոր աստվածը: Հեփեստոսին հատկապես շատ էին մեծարում Աթենքում, որտեղ Հին Հունաստանի արհեստներն առավել բարձր զարգացման էին հասել:

հուն ցույց տվին անբարետես ու տկարակազմ մանկանքը: Ես խնց
երկխալին և Օլիմպոսից նետեց դեպի հեռավոր երկիրը:

Գեռ երկար սուրաց օդի մեջ տարաբախտ մանուկը և, ի վերջո,
ընկավ անծայրածիր ծովի ալիքների մեջ: Գթացին նրան ծովալին
աստվածները՝ մեծն Օվկիանոսի դուստր էվրինոմեն և ծովալին
պատգամախոս ծերունի ներևսի դուստր Քետիսը: Նրանք վերց-
րին ծովն ընկած փոքրիկ Հեփեստոսին և իրենց հետ տարան ալե-
հեր Օվկիանոսի ջրերի խորքերը: Այնտեղ, լազուրե անձավում,
դաստիարակում էին նրանք Հեփեստոսին: Աճեց ու հասունացավ
Հեփեստոսը՝ անբարետես ու կաղ, բայց հզոր ձեռքերով, հզոր
կրծքով և մկանուտ պարանոցով: Ի՞նչ հրաշագործ արվեստագետ
էր նա իր դարբնության արհեստի մեջ: Ոսկուց ու արծաթից նա
բազում հույակապ զարդարանքներ կոեց իր դաստիարակչուհիների՝
էվրինոմենի ու Քետիսի համար:

Երկար ժամանակ Հեփեստոսն իր սրտում անթեղած էր պա-
հում իր մոր՝ Հերա աստվածուհու հանդեպ տածած ցասումը.
ի վժրջա, նա որոշեց վրեժխնդիր լինել մորից՝ իրեն Օլիմպոսից նե-
տելու համար: Նա արտասովոր գեղեցիկ մի ոսկեղեն բազկաթոռ
կոեց և ուղարկեց Օլիմպոս՝ իբրև նվեր իր մորը: Մթանչացավ շան-
թարձակ Ձևսի կինը այդ հրաշալի նվերը տեսնելով: Ծվ իրոք,
միայն աստվածների ու մարդկանց թագուհին կարող էր բազմել
այդպիսի արտասովոր գեղեցիկ բազկաթոռին: Բայց, օ՛ սարսափ,
Հենց որ Հերան նստեց բազկաթոռին, պատվեց անբակտելի կա-
պանքներով և զամված մնաց բազկաթոռին: Աստվածները վրա
հասան օգնության: Իզուր. նրանցից ոչ մեկը թագուհի Հերային
ազատ արձակելու կարողություն չունեցավ: Աստվածները կռահե-
ցին, որ միայն այդ բազկաթոռը կոող Հեփեստոսը կարող է ազատ
արձակել իր մորը:

Ծվ իսկույն նրանք Հերմես աստծուն, աստվածների համբա-
վարներին, ուղարկեցին դարբին-աստծու հետևից: Լողմի պես սու-
րաց Հերմեսը աշխարհի ծայրը, Օվկիանոսի ափերը: Մի ակնթար-
թում սուրաց Հերմեսը երկրի ու ծովերի վրայով և հայտնվեց այն
անձավում, ուր աշխատում էր Հեփեստոսը: Եստ խնդրեց Հեր-
մեսը, որ նա իր հետ գնա բարձրաբերձ Օլիմպոս՝ թագուհուն
ազատ արձակելու, բայց դարբին-աստվածը կտրուկ մերժումով
պատասխանեց. նա չէր մոռացել այն շարիքը, որ մայրը պատ-
ճոռել էր իրեն: Ո՛չ խնդրանքներն ազդեցին նրա վրա, ո՛չ պա-

ղատանքները: Օգնության հասավ Գիոնիսոսը՝ գինու ուրախ աստ-
վածը: Քահ-քահ ծիծաղելով, նա Հեփեստոսին մի գավաթ բաղց-
րաբույր գինի մատուցեց, դրան հաջորդեց մյուսը, հետո՝ էլի ու
էլի: Գիոնովցավ Հեփեստոսը, հիմա արդեն նրա հետ ամեն ինչ
լայրելի է անել, տանել՝ ո՛ր կամենան: Գիոնու աստված Գիոնի-
սոսը հաղթեց Հեփեստոսին: Հերմեսն ու Գիոնիսոսը Հեփեստոսին
նստեցրին ավանակի վրա ու տարան Օլիմպոս ճոճվում էր Հե-
փեստոսն ավանակի վրա: Հեփեստոսի շորաթուրը ուրախ պար
բունած սուրում էին բաղեղով պարուրված մենասները¹, ձեռքներին
թիրսոսներ²: Անճոռնի ցատկոտում էին գինովցած սատիրները:
Մյուսն էին ջահերը, բարձր թնդում էին տիմպանները³ և դափերը,
լշնդում էր ծիծաղը: Իսկ առջևից ընթանում էր մեծ աստված
Գիոնիսոսը՝ խաղողի պսակը գլխին, թիրսոսը՝ ձեռքին: Ցնծադին
առաջ էր գնում երթը: Վերջապես հասան Օլիմպոս: Հեփեստոսը մի
ակնթարթում ազատ արձակեց մորը. հիմա արդեն մոռացել էր իր
կրած վիրավորանքը, որի վերքը բուժել էր գինին:

Հեփեստոսը այնուհետև բնակություն հաստատեց Օլիմպոսում:
Աստվածների համար հույակապ պալատներ կանգնեցրեց, իր
համար էլ մի պալատ կառուցեց ոսկուց, արծաթից ու բրոնզից:
Այնտեղ է ապրում Հեփեստոսն իր կնոջ՝ գեղանի ու բարեհամ-
բույր Քարիսի հետ, որ գեղեցկության ու նազանքի աստվածու-
հին է:

Այդ նույն պալատում է գտնվում և Հեփեստոսի դարբնոցը:
Իր ժամանակի մեծ մասը Հեփեստոսն անց է կացնում հրաշալիք-
ներով լի այդ դարբնոցում: Մեջտեղում դրված է վիթխարի զըն-
դանը, անկյունում՝ բոցավառ հնոցն է իր փուքսերով: Զարմանա-
հրաշ փուքսեր են դրանք. գործի են ընկնում առանց ձեռքերի
օգնության. Հեփեստոսի խոսքին են ենթարկվում: Մի խոսք կասի
նա, և գործի կանցնեն փուքսերը՝ վառ բորբոքելով հնոցի կրակը:
Քրտինքի մեջ կորած, փոշուց ու մրից ամբողջովին սևացած՝ աշ-
խատում է դարբին-աստվածն իր դարբնոցում:

¹ Գիոնիսոսի ուղեկիցները: Մենաս նշանակում է մոլեգեհաճար. նույնն են,
ինչ որ բաբուսահները:

² Թիրսոս — բազեղով կամ վազով պատած ձող՝ ծայրին եղևու կոնիկ:

³ Տիմպան — հարվածային երաժշտական գործիք, բրոնզե երկու թասեր են,
որոնք խփում են միմյանց:

Մնչ հրաշալիքներ ասես, որ չի կոտւմ Հեփեստոսը. ամրակուռ ղենքեր, ոսկե և արծաթե զարդարանքներ, թասեր ու գավաթներ, եռոտանիներ, որոնք, սեսս կենդանութիւն առած, իրենք իրենց զլորվում են ոսկե անիվների վրա:

Գործն ավարտելով, բաղցրաբույր ավազանում մաքրվելով քրտինքից ու մրից, Հեփեստոսը, կաղալով ու իր թույլ ոտքերի վրա ճոճվելով, գնում է իր հոր՝ շանթարձակ Զևսի մոտ՝ աստվածների խրախճանքի: Բարեհամբույր ու բարեհոգի՝ նա հաճախ հաշտեցնում է վեճի պատրաստվող Զևսին ու Հերային: Աստվածներն անկարող են առանց ծիծաղի նայել Հեփեստոսին, երբ նա կաղալով շրջում է խնշույթի սեղանի շուրջը և անուշաբույր նեկտար լըցնում նրանց համար: Միծաղն աստվածներին ստիպում է մոռացութեան տալ վեճն ու գժտութիւնը:

Բայց Հեփեստոս աստվածը կարող է և ահեղ լինել: Շատերն են ճաշակել նրա կրակի ուժն ու վիթխարի մուրճի հզոր ու ահալոր հարվածները: Հեփեստոսն իր կրակով զսպել է մինչև անգամ Քսանթոս և Սիմոնի մուկնգնափրփուր գետերի ալիքները՝ Տրոյայի մոտ: Ահեղ Հեփեստոսն իր մուրճով ջարդուփշուր արեց նաև հզոր տիտաններին:

Մեծ է կրակի աստվածը՝ աստվածային հմտագույն դարբին Հեփեստոսը. նա ջերմութիւնն ու հրճվանք է տալիս, սիրալիր է ու բարեհամբույր, բայց և խստագույն պատիժներ տվող:

ԴԵՄԵՏՐԱ՝ ԵՎ ՊԵՐՍԵՓՈՆԵՍ

Մեծագոր է Դեմետրա աստվածուհին: Նա է հողն արգալվանդ դարձնում, և առանց նրա բարեբեր զորութեամբ չլինչ չի աճում ո՛չ սաղարթախիտ անտառներում, ո՛չ մարգագետիններում, ո՛չ էլ արգասաբեր վարելահողում:

1 Դեմետրա (հունական դիցաբանութեան մեջ՝ Յերբրա)— Հունաստանի առավել մեծարժան աստվածուհիներից մեկը, Բարեբերութեան ու երկրագործութեան դիցուհին է, որին առանձնապես պաշտել են հողագործները: Նրա պատվին Հունաստանում ամենուրեք տեղի էին ունենում բազմաթիվ տոնախմբութիւններ: Բնորոշ է, որ Հունարոսի պոեմներում Դեմետրան կարծես երկրորդ պլան է բաշտված: Դա վկայում է, որ հույները, իբրև մեծ աստվածուհու, նրան պաշտել են այն ժամանակ, երբ հողագործութիւնը դարձել է նրանց զխալոր զբաղմունքը. իսկ անասնապահութիւնը կորցրել է իր երբեմնի նշանակութիւնը:

Շաւարժած է ըստ համեմայն հիմնի:

Մեծն Դեմետրա դիցուհին Պերսեփոնես անունով մի գեղեցիկ դեռատի աղջիկ ունեւր: Պերսեփոնեսի հայրը Քրոնոսի որդին՝ շանթարձակ Զևսն էր: Մի անգամ գեղանի Պերսեփոնեսն իր ընկերուհիների՝ օվկիանոսիների հետ միասին խաչատում էր նիսեյան ծաղիկու հովտում: Թեթևաթև թիթեռի նման Դեմետրայի դուստրը ծաղիկից ծաղիկ էր վազում: Նա փաթթամ վարդեր, բուրավետ մանուշակներ, ձյունասպիտակ շուշաններ ու բոսորագույն հիացիտներ էր քաղում: Անհոգ խաչատում էր Պերսեփոնեսն՝ անտեղյակ այն ճակատադրին, որ տնօրինել էր նրա համար հայրը՝ Զևսը: Զէր անցնում Պերսեփոնեսի մտքով, որ հեռու է այն ժամանակը, երբ ինքը կրկին անգամ կտեսնի արևի լույսը, կսքանչանա ծաղիկներով ու կշնչի նրանց բաղցր բուրմունքը: Զևսը նրան կնուսթյան աւից իր դժնահայաց եղբորը՝ Հադեսին, որ մեռյալների ստվերների թագավորութեան տիրակալն է: Պերսեփոնեսն նրա հետ պետք է ապրեր ստորերկրյա թագավորութեան խավարում՝ զուրկ հարավային ջերմ արևի լույսից:

Հադեսը տեսնում էր, թե ինչպես է խաչատում Պերսեփոնեսն նիսեյան հովտում և իսկույն վճռեց առևանդել նրան: Երկրի աստվածուհի Գեային խնդրեց, որ արտաստվոր գեղեցկութեան ծաղիկ անձեցնի: Համաձայնեց Գեան, և մի զարմանահարշ ծաղիկ անցրեց նիսեյան հովտում. ծաղիկի արեցնող բույրը հեռու տարածվեց շրթաբուրբ: Պերսեփոնեսն տեսավ այդ ծաղիկը. ահա նա երկարեց մեռքը ու բռնեց ցողունից, ահա արդեն պոկված է ծաղիկը: Հանկարծ անդնդախոր բացվեց երկիրը և, սևաթույր ձիեր լծած ոսկեղեն երկանվի վրա, երկրի ընդերքից հայտնվեց հանգուցյալների ստվերների թագավորութեան տիրակալ դժնահեմ Հադեսը: Նա հափըշտակեց դեռատի Պերսեփոնեսին, դրեց իր երկանվի վրա, և իր արագոտն ձիերով մի ակնթարթում վերստին անհետացավ երկրի ընդերքում: Պերսեփոնեսն հազիվ հասցրեց մի ձիչ արձակել: Հեռու տարածվեց Դեմետրայի դուստր սոսկումի ճիշը. և՛ ծովային հորձանետները հասավ, և՛ բարձրաբերձ ու լուսակերտ Օլիմպոս: Ոչ որ շտեպավ, թե դժխեմ Հադեսն ինչպես առևանդեց Պերսեփոնեսին. տեսավ միայն Հելիոս-Արև աստվածը:

1 Մեկտրիսի մարզում, Սարսիկոսի ծովախորշի ափին:

Դեմետրա դիցուհին լսեց իր դստեր ճիշտը Եվ նա շտապեց նիւսեյան հովիտը, ամենուրեք փնտրեց աղջկան, հարցուփորձ արեց նրա ընկերուհիներին՝ օվկիանուհիներին, բայց ոչ մի տեղ չգտավ իր սիրասուն դստերը: Օվկիանուհիները չէին տեսել, թե ուր է կոբել Պերսեփոնեն:

Միակ սիրասուն դստեր կորստյան ծանր վիշտը համակեց Դեմետրայի սիրտը: Եվ խելակորույս, անկարող մտածելու որևէ բանի մասին, ինը օր թափառեց սևեր հագած Դեմետրան երկրի վրա՝ դառնազին արցունքներ թափելով: Նա ամենուրեք փնտրեց Պերսեփոնենին, բոլորին օգնության կանչեց, բայց ոչ ոք չկարողացավ սփոփել նրա վիշտը: Ի վերջո, արդեն տասներորդ օրը, նա գնաց Հելիոս-Արե աստծո մոտ և արցունքն աչքերին աղաչեց.

— Օ՛, ճաճանչափայլ Հելիոս: Դու, որ քո ոսկեհուռ երկանլի վրա բարձր երկնքով շրջում ես ամբողջ երկիրն ու բոլոր ծովերը, տեսնում ես ամենայն ինչ, ոչինչ չի կարող թաքնվել քեզնից. եթե գտնեմ մի փոքր գուլ ունես տարաբախտ մոր հանդեպ, ապա ասա ինձ, թե որտե՞ղ է իմ դուստր Պերսեփոնեն, ասա, որտե՞ղ փրկուրեմ նրան: Ես լսել եմ նրա ճիշտը, նրան խլել են ինձնից: Ասա, ո՞վ է առևանգել նրան: Ես ամենուրեք փնտրել, բայց չեմ կարողացել գտնել նրան:

Պատասխան տվեց Դեմետրային ճաճանչափայլ Հելիոսը.

— Մեծն աստվածուհի, դու գիտես, թե ես ինչպես եմ պատվում քեզ, տեսնում ես, թե ինչպես եմ տխրում քո վիշտը տեսնելով: Իմացիր, ուրեմն, որ մեծն ամպահալած Զևսը քո դստերը կնություն տվեց իր դժխեմ եղբորը՝ Հագես տիրակալին: Նա առևանգեց Պերսեփոնենին ու տարավ սոսկումներով լի իր թագավորությունը: Ամոքիր, ուրեմն, քո ծանր վիշտը, աստվածուհի. չե՞ որ մեծահամբավ է քո դստեր ամուսինը, դուստրդ մեծն Զևսի հզորագոր եղբոր կինն է դարձել:

Այս լուրն առնելով, ափելի ևս վշտացավ Դեմետրան: Ահեղորեն դայրացավ շանթարձակ Զևսի վրա, որ առանց իր համաձայնությունն առնելու Պերսեփոնենին կնություն է տվել Հագեսին: Եվ նա լքեց աստվածներին, լքեց լուսապայծառ Օլիմպոսը, հասարակ մահկանացուի կերպարանք առավ և, սևեր հագնելով, երկար թափառեց մահկանացուների մեջ՝ դառնազի արցունք հեղելով:

Երկրի վրա բոլոր բույսերի աճը դադար առավ: Տերևները ծառերի վրա թռչնեցին, և ծառերը տերևաթափ եղան: Անտառները

մերկացել էին: Խոտը թորշումեց. ծաղիկները կախ գցեցին իրենց երփներանգ պսակները և շորացան: Այգիներից պտուղ չէին տալիս. շորացան խաղողի կանաչ այգիները, այլևս նրանց մեջ հյութառատ ծանր ողկույզներ չէին հասունանում: Երբեմնի բերքառատ արտերը ամայացել էին, խոտ էլ չէր նշմարվում արտերում: Մեռավ կյանքը երկրի վրա: Սուվն էր թագավորում ամենուրեք. ամեն տեղից լաց ու հեծծանքներ էին լսվում: Կործանում էր սպառնում ամբողջ մարդկային ցեղին: Բայց ոչինչ չէր տեսնում ու չէր լսում վշտամորմոք Դեմետրան:

Վերջապես Դեմետրան հասավ էլիվսին քաղաքին: Այնտեղ, քաղաքի պարիսպների մոտ, նստեց ձիթենու շուքի տակ, «վշտի քարի» վրա՝ «աղջիկների ջրհորին» շատ մոտիկ: Անշարժ նստել էր Դեմետրան իբրև քարարձան: Ուղիղ ծալքերով մինչև գետին էր հասնում նրա սև զգեստը: Գլուխը հակվել էր, իսկ արցունքներն աչքերից շիթ առ շիթ թափվում էին կրծքին: Երկար նստեց այդ գիրքով Դեմետրան, միայնակ ու անսփոփ:

Նկատեցին նրան էլիվսինի արքա Կելեսոսի դուստրերը: Նրանք զարմացան աղբյուրի մոտ տեսնելով սևեր հագած արտասովոր կնոջը, մոտ եկան ու կարեկցանքով հարցրին, թե ո՞վ է նա: Բայց Դեմետրա աստվածուհին չմատնեց իրին: Ասաց, որ իրեն կոչում են Դեո՛, որ ինքը ծնունդով Կրեսոսից է, ավազակները կալանել էին իրեն: Բայց ինքը փախել է ու, երկար թափառումներից հետո, հասել էլիվոսին: Դեմետրան Կելեսոսի աղջիկներին խնդրեց, որ իրեն տանեն արքայի պալատը: Նա համաձայնեց դառնալ նրանց մոր ազափինը, դաստիարակել երեխաներին ու գործ անել Կելեսոսի տանը: Կելեսոսի աղջիկները Դեմետրային տարան իրենց մոր՝ Մետանեյրեի մոտ:

Կելեսոսի դուստրերը չէին կարծում, թե մեծ աստվածուհուն են տանում հայրական տուն: Բայց երբ Դեմետրան մտավ թագավորի տուն՝ դիցուհու գլուխը դիպավ դռան վերնամասին և ամբողջ պալատը շողաց զարմանահրաշ լույսով: Մետանեյրեն ոտքի ելավ ու ընդառաջ գնաց դիցուհուն. կռահել էր, որ աղջիկները հասարակ մահկանացու չէ, որ տուն են բերել: Մինչև գետին խոնարհվեց Կելեսոսի կինն անծանոթի առաջ և խնդրեց, որ նստի իր՝ թագու-

1 Դեո—որոնոջ (Մ. Թ.):

հու տեղում: Հրաժարվեց Գեմետրան. նա սելխոս նստեց աղախ-
նուն հատկացված տեղը՝ առաջվա պես անտարբեր այն ամենին,
ինչ կատարվում էր շուրջը: Իսկ Մետանեյրի սպասուհին՝ կենսու-
րախ Յամբան, տեսնելով անծանոթ կնոջ խորունկ վիշտը, աղախ-
տում էր ուրախացնել նրան: Նա ուրախ-ուրախ սպասարկում էր
անծանոթ կնոջը և իր տիկնոջը՝ Մետանեյրին. բարձր հնչում էր
նրա ծիծաղը, հորդում էին նրա կատակները: Ժպտաց Գեմետրան
առաջին անգամ այն օրից ի վեր, երբ առևանգեց դժնողն Նադեսը
Պերսեփոնին, և առաջին անգամ համաձայնեց ուտելիք ճաշա-
կել:

Գեմետրան մնաց Կելեոսի մոտ: Նա սկսեց դաստիարակել նրա
որդուն՝ Գեմոփոնին: Աստվածուհին վճռել էր նրան անմահություն
պարգևել: Նա մանկանը պահում էր իր աստվածային կրծքի մոտ,
իր ծնկներին, մանուկը շնչում էր զիցուհու անմահական շնչով:
Գեմետրան շփում էր նրան ամբողջալույ՝, իսկ գիշերը, երբ
Կելեոսի տանը բոլորը ընած էին լինում, աստվածուհին Գեմոփո-
նին փաթաթելով բարուրում, զնում էր բոցավառ վառարանի մեջ:
Բայց Գեմոփոնն անմահություն չստացավ: Տեսավ մի օր Մետա-
նեյրեն իր որդուն վառարանի մեջ դրված, սոսկալի վախեցավ ու
աղաչեց Գեմետրային՝ շանել այդ բանը: Զայրացավ Գեմետրան
Մետանեյրի վրա, հանեց Գեմոփոնին վառարանի միջից ու
սասց:

— Օ՛, անխոհեմ, ես ուզում էի անմահություն պարգևել տղա-
յիդ, անխոցելի դարձնել նրան: Իմացիր, ուրեմն, ես Գեմետրան
եմ, որ հրճվանք եմ տալիս մահկանացուներին ու անմահներին:

Գեմետրան ասաց Կելեոսին ու Մետանեյրին, թե ով է ինքը,
և կրկին առավ աստվածուհու սովորական իր կերպարանքը: Աստ-
վածային լույսը ողողեց Կելեոսի պալատի սենյակները: Կանդնել
էր Գեմետրա աստվածուհին՝ վսեմաշուք ու զեղանի, նրա ոսկեշող
վարսերը թափվել էին ուտերին, զգեստներից աստվածային բուր-
մունք էր հորդում: Մնկի ընկան նրա առաջ Մետանեյրեն ու նրա
ամուսինը:

Գեմետրա աստվածուհին հրաման արձակեց, որ տաճար
կանգնեցնեն էլեվսինում, Կալիբորա աղբյուրի մոտ, և ապրեց

աշնանդ: Այդ տաճարի մոտ Գեմետրա աստվածուհին ինքը սկիզբ
տվեց տոնախմբություններին:

Քնքշորեն սիրած իր դստեր վիշտը չէր մոռացել Գեմետրա
աստվածուհին, չէր մոռացել նաև իր զայրույթը Զևսի հանդեպ:
Առաջվա պես ամուլ էր մնում հողը: Սովը գնալով սաստկանում
էր, քանի որ երկրագործների դաշտերում մի հատիկ խոտ էլ չէր
աճում: Հողագործի եզներն իզուր էին քաշում ծանր գուլանը վա-
րելահողում՝ պտուղ չէր տալիս նրանց աղխատանքը: Ամբողջ ցե-
ղեր զո՛ էին զենում: Սովահարների աղաղակները հասնում էին եր-
կինք, բայց Գեմետրա աստվածուհին անտարբեր էր մնում դրանց
հանդեպ: Ի վերջո, երկրի վրա դադարեցին ծխալուց անմահ աստ-
վածների զոհարելությունները: Կործանում էր սպասնում ամե-
նայն կենդանի արարածի: Բայց մեծն ամպահալած Զևսը չէր
ուզում մահկանացուների կործանումը: Եվ նա Գեմետրա դիցուհու
մոտ առաքեց աստվածների սուրհանդակ Իրիսին: Սրաթուխ սու-
րաց նա իր ծիածանի թևերով, հասավ էլեվսին, Գեմետրա աստ-
վածուհու տաճարը, կանչեց նրան, աղերսեց ետ գալ լուսապայծառ
Օլիմպոս՝ աստվածների մոտ: Աստվածուհին շրտեց նրա աղերսանք-
ները: Ուրիշ աստվածների առաքեց մեծն Զևսը Գեմետրայի մոտ,
բայց դիցուհին չկամեցավ Օլիմպոս վերադառնալ, քանի զեռ
Զևսը ետ չի տվել իր դուստր Պերսեփոնին:

Եվ մեծն Զևսը դժնազեմ եղբոր՝ Հադեսի մոտ ուղարկեց
ժաքի պես արագասլաց Հերմեսին: Հերմեսն իջավ սոսկումներով
լեցուն օտորեղիցա թագավորությունը, հայտնվեց մեռածների
հողիների տիրակալի առաջ, որ բազմել էր իր սկեհուռ գահին, և
հայանեց նրան Զևսի կամքը:

Հադեսը համաձայնեց Պերսեփոնին ազատ արձակել, որ
գնա մոր մոտ, բայց նախապես նրան կուլ տալու տվեց նուան հա-
տիկներ՝ ամուսնության սիմվոլը: Պերսեփոնեն, Հերմեսի հետ
միասին, բարձրացավ ամուսնու ոսկեղեն երկանիվը. սլացան
Հադեսի անմահական ձիերը, ոչ մի խոչընդոտ չէր վախեցնում
նրանց, և մի ակնթարթում հասան էլեվսին:

Ուրախությունից ամեն ինչ մոռացած, Գեմետրա աստվածու-
հին ընդառաջ նետվեց դստերը և առավ նրան իր գրկի մեջ: Նո-
րից նրա հետ էր սիրասուն դուստրը: Պերսեփոնեի հետ միասին
դիցուհին վերադարձավ Օլիմպոս: Եվ այդ ժամանակ մեծն Զևսը
վճռեց, որ Պերսեփոնեն սուրվա երկու հորորդը մոր մոտ կապրի.

¹ Ամբողջա—աստվածային ուտեստ, որ անմահություն է տալիս:

իսկ մեկ երրորդը՝ իր ամուսին Հաղեսի հետ, ստորերկրյա թագա-
վորության մեջ:

Դեմետրա մեծ աստվածուհին կրկին արգավանդություն պար-
զեց երկրին, ու ամեն ինչ դարձյալ ծաղկեց ու կանաչեց: Ան-
տառները ծածկվեցին զարնանային բնքուշ տերևներով, մարգա-
զետինների դալար զմրուխտ կանաչի վրա երփներանգ վառվեցին
ծաղիկները: Շատ շանցած հասկավորվեցին հացառատ արտերը,
ծաղկեցին ու բուրմունքով լցվեցին այգիները, արևի տակ փայլեց
խաղողի այգիների կանաչը: Արթնացավ բուսանդակ բնությունը:
Ցնծում էր ամենայն կենդանի արարած և փառաբանում Դեմետրա
մեծ աստվածուհուն և նրա դստերը՝ Պերսեփոնեն:

Ամեն տարի լքում է Պերսեփոնեն մորը, և ամեն անգամ Դե-
մետրա դիցուհին համակվում է վշտով ու կրկին սևեր հագնում: Եվ
ամբողջ բնությունը վշտանում է Պերսեփոնեի համար: Դեղնում
են ծառերի տերևները, ծառերը մերկանում են աշնանային քամուց:
Ծաղիկները թափվում են, արտերն ամայանում, վրա է հասնում
ձմեռը: Քուն է մտնում բնությունը, որպեսզի հրճվանքի շողերով
արթնանա զարնանը, այն ժամանակ, երբ կրկին մոր մոտ կգա
Պերսեփոնեն՝ Հաղեսի տրտմաթախիծ թագավորությունից: Երբ
դուստրը վերադառնում է Դեմետրայի մոտ՝ բարեբերության մեծ
աստվածուհին շոյալ ձեռքով սփռում է իր պարզկները մարդկանց
ու լիառատ բերք բարեմաղթում հողագործի աշխատանքին:

Հույները մեծարում էին Դեմետրա մեծ աստվածուհուն: Բո-
վանդակ հին աշխարհում հռչակված էր նրա տաճարը, որ ինքն էր
հիմնել էլեվսինում, Աթենքի մոտ: Ժողովրդի բազմություններ էին
հավաքվում Աթենքում ու էլեվսինում՝ Դեմետրայի պատվին կա-
տարվող տոնախմբություններին ու պաշտամունքի խորհրդավոր
արարողություններին մասնակից լինելու համար:

ՏՐԻՊՏՈՆԻՄՈՍ

Հողին արգավանդություն տվող Դեմետրա մեծ աստվածուհին է
մարդկանց սովորեցրել հացաբեր արտեր մշակել: Էլեվսինի արքա-
յի պատանի որդուն՝ Տրիպտոլեմոսին, նա ցորենի սերմ է տվել
և նա առաջինն էր, որ զութանով կրեք անգամ վարեց էլեվսինի
մերձակա դաշտավայրն ու սերմեր զցեց սևացած հողի մեջ: Դաշ-
տը, որին բարեբերություն էր մաղթել ինքը՝ Դեմետրա աստվածու-

հին, առատ բերք տվեց: Աստվածուհու կամքով Տրիպտոլեմոսը
նստեց թևավոր օձեր լծած զարմանահրաշ երկանիվը, շրջեց բո-
լոր երկրները և ամենուրեք մարդկանց երկրագործություն սո-
վորեցրեց:

Տրիպտոլեմոսը եղավ նաև հեռավոր Սկյութիայում, Լինքոս
թագավորի մոտ: Նրան էլ երկրագործություն սովորեցրեց: Բայց
սկյութական զոռոզ թագավորը կամեցավ Տրիպտոլեմոսից խլել
երկրագործության ուսուցչի փառքը ու յուրացնել այդ փառքը:
Լինքոսը վճռեց քնած ժամանակ սպանել մեծն Տրիպտոլեմոսին:
Բայց Դեմետրա աստվածուհին թույլ չտվեց, որ շարագործությունը
ի կատար անվի, վճռեց պատժել Լինքոսին, քանի որ, խախտելով
հյուրընկալության կարգը, նա ձեռք էր բարձրացրել աստվածուհու
ընտրյալի վրա:

Երբ Լինքոսը զիշերը մտավ ննջարան, ուր անխռով քնած էր
Տրիպտոլեմոսը, Դեմետրան վայրենի լուսան դարձրեց նրան հենց
այն պահին, երբ նա դաշույնը բարձրացրել էր քուն մտած հյուրի
վրա:

Լուսան դարձած Լինքոսը թաքնվեց մթամած անտառներում,
իսկ Տրիպտոլեմոսը լքեց սկյութների երկիրը, որպեսզի իր զարմա-
նահրաշ երկանիվով երկր-երկիր շրջի և մարդկանց սովորեցնի Դե-
մետրա աստվածուհու մեծ շնորհը՝ երկրագործությունը:

ԷՐԻՍԻՓՈՆ

Միայն սկյութների թագավորին՝ Լինքոսին չէ, որ պատժեց Դե-
մետրա աստվածուհին. նա պատժեց նաև Թեսալիայի թագավոր
էրիսիֆոնին: Նենգամիտ էր ու պղծահոգի էրիսիֆոնը, աստված-
ներին երբեք չէր մեծարում զոհաբերություններով: Եվ նա համար-
ձակություն ունեցավ հանդուգն վիրավորանք հասցնելու մեծն
Դեմետրա աստվածուհուն: Նա վճռեց կտրել աստվածուհու սրբա-
զան անտառի դարավոր կաղնին, որ Դեմետրայի սիրելի դրիադի
կացարանն էր: Ոչինչ չէր կարող կասեցնել էրիսիֆոնին:

— Եթե մինչև իսկ սա Դեմետրայի սիրելին չլինի, այլ ինքը՝
աստվածուհին, — գոչեց այդ անպատկառը, — միևնույն է, ես պիտի
կտրեմ այս կաղնին:

Նրիսիֆոնը կացինը խլեց ծառայի ձեռքից և խորը մխրճեց
ծառի մեջ: Ծանր մի հեծկտանք հնչեց կաղնու ներսում, և հորդաց

արյունը նրա կեղևից: Ապշահար կանգնել էին թագավորի ծառաները կաղնու առաջ: Նրանցից մեկը հանդգնեց ետ պահել թագավորին, բայց մտեղանած էրիսիբթոնը սպանեց ծառային՝ գոչելով՝

— Ահա քեզ պարզև՝ աստվածներին հնազանդ լինելուդ համար:

Եվ էրիսիբթոնը կտրեց դարավոր կաղնին: Կալահառաչ մի աղմուկով կաղնին գետին տապալվեց, և մեռավ այնտեղ ապրող դրիադը:

Մեեր հագնելով, սրբազան անտառի գրիադները գնացին Դեմետրա աստվածուհու մոտ և աղերսեցին պատժել իրենց թանկագին ընկերուհուն: սպանող էրիսիբթոնին: Զայրացավ Դեմետրա աստվածուհին: Նա կանչել տվեց սովի աստվածուհուն: Թևալոր օձեր լծած դարձանահարչը երկանվով, որ Դեմետրա աստվածուհուն էր պատկանում, առաքված դրիադը սուրաց Սկյուֆիա, դեպի Կովկասյան լեռները: Այստեղ մի լերկ սարի վրա գտավ սովի աստվածուհուն, որ գիսախոլով էր ու դալկացած, աչքերը՝ դուրս պլրծած, շոր ոսկորները պատող մաշկը՝ կոշտացած: Առաքված դրիադը սովի աստվածուհուն հայտնեց Դեմետրա աստվածուհու կամքը, և սա հնազանդվեց:

Սովի աստվածուհին հայտնվեց էրիսիբթոնի տանը և նրան ներշնչեց այնպիսի մի անհագ քաղց, որ այրում էր նրա ողջ ներքինը: Որքան շատ էր ուտում էրիսիբթոնը, այնքան ավելի էին սաստկանում քաղցի տառապանքները: Իր ամբողջ կառողութունը վատնեց բազմապիսի ուտեստեղենի վրա, որոնք սակայն էրիսիբթոնի մեջ է՛լ ավելի էին բորբոքում անհագ ու տանջալի քաղցը: Վերջապես զրկվեց էրիսիբթոնն ամեն ինչից. մնաց միմիայն աղջիկը: Փող ունենալու և քաղցը հազեցնելու համար նա վաճառեց դստերն իբրև ստրուկ: Բայց դուստրը Պոսիդոն աստծուց իր կամեցած կերպարանքն առնելու շնորհ ստացավ և ամեն անգամ ազատվում էր գնորդների ձեռքից՝ մեկ թռչունի, մեկ ձիու կամ էլ կովի կերպարանք առած: Բազմիցս վաճառեց իր դստերն էրիսիբթոնը, բայց նրա համար քիչ էր վաճառքից ստացված դրամը: Սովը տանջում էր նրան ավելի ու ավելի սաստկությամբ, գնալով անտանելի էին դառնում տառապանքները: Վերջապես, էրիսիբթոնը սկսեց ատամներով պատառոտել իր մարմինը և մեռավ ահավոր տանջանքների մեջ:

Սևաթույր ձիերը լծած իր երկանվով Գիշեր-Նյուկտեն հանգարտ սահում է երկնքով: Նա իր սև ջողով պատել է ամբողջ երկնքը: Գիշեր աստվածուհու երկանվի շուրջը խոնվում են աստղերը և երկրի վրա սփռում իրենց վեհերոտ կայծակտող լույսը. դրանք Արշալույս-էոս դիցուհու և Աստրեոսի պատանի զավակներն են: Բազում աստղեր սփռված են գիշերային խավար երկնքով մեկ:

Ահա, ասես թեթև հրացուլք երևաց արևելքում: Հրացուլք գնալով ավելի ու ավելի է շիկանում: Լուսին-Սելենն դիցուհին է դուրս գալիս: Կես եղչեբավոր եղները հանդարտ տանում են նրա երկանիվը երկնքով: Դանդաղասահ, վսեմաշուր՝ ընթանում է երկնքով Լուսին աստվածուհին իր երկար ու ճերմակ զգեստը հագին, լուսնի մանուղը՝ գլխանոցի վրա: Նա խաղաղ լուսավորում է քնած երկիրը՝ ա՛նն ինչ ողորելով արծաթավուն փայլով: Կտրելով ամբողջ երկնակամարը՝ Լուսին դիցուհին իջնում է Կարիայի Լատմոս լեռան խորունկ անձավը: Այնտեղ, ընկղմված հավերժական նիրհի մեջ, պռկած է գեղեցիկ էնդիմիոնը¹: Սիրում է նրան Սելենեն. հակվում է ներհող էնդիմիոնի վրա, գուրգուրում ու սիրո խոսքեր ջնջում: Բայց ննջող էնդիմիոնը նրան չի լսում. դրանից է, որ այդքան տրտում է Սելենեն. թախծոտ է նրա լույսը, որով գիշերը նա ողորում է երկիրը:

Գնալով մոտենում է առավոտը: Լուսին աստվածուհին արդեն վաղուց է ինչ երկնակամարից: Հագիվ նկատելի լուսավորվեց արևելքը: Այդ արևելքում վառ պայծառ դարձավ արշալույսի նախախորապետը՝ լուսաստղ էոսիտրոսը: Թեթև քամի փչեց: Գնալով քուրսանում է արևելքը: Եվ ահա, վարդամատն Արշալույս-էոս վիցուհին բաց արեց դարչախները, որոնց միջից ուր որ է դուրս կրա մաճանչափայլ Արև-Նելիոս աստվածը: Կարմրավառ զգեստով, իր վարդագույն թևերով Արշալույս աստվածուհին ճախրում է դեպի լուսավորող երկինքը, որ ողորված է վարդագույն լույսով: Իր ոսկեղեն սափարից գետին է հեղում աստվածուհին ալգացողը, որի կաթիլները կտանչի ու ծաղիկների վրա փայլվում են ադամանդ-

¹ Նա երբևէ համարվել է Կարիայի արքա էփիլոսի, երբմն է՛լ Ջևաի որդի Առաքվոր է, որ էնդիմիոնը հին կարիական քնի աստվածը լինի: Կարիան անուն է Թուր Ասիայում, Միջերկրականի ափին:

ների պես: Երկրի վրա ամենայն ինչ ախորժելի հոտ է արձակում, բուրմունք է ծխում ամենուրեք: Արթնացող երկիրը բերկրանքով է սղջունում ծագող Արև-Հելիոս աստծուն:

Չորս թևավոր ձիեր լծած իր ոսկեհուռ երկանվով, որ Հեփեստոս աստվածն է կռել, Օվկիանոսի ափերից երկինք է բարձրանում ճաճանչափայլ աստվածը: Սարերի կատարները բոսոր են ներկում արևի ճաճանչները, և լեռները վեր են խոյանում ասես բոցով ողողված:

Արևի աստծուն տեսնելուն պես, աստղերը փախչում են երկնակամարներից, իրար հետևից թաքնվում խավար գիշերվա գրկում: Ավելի ու ավելի է բարձրանում Հելիոսի երկանիվը: Ծաճանչափայլ պսակը զլխին ու երկար շողշողուն զոգեստը հագին՝ գնում է երկնքով ու իր կենսաբեր ճառագայթներով ողողում երկիրը, նրան լույս, ջերմություն ու կյանք տալիս:

Կտրելով իր ցերեկային ճանապարհը, արևի աստվածը իջնում է դեպի Օվկիանոսի սրբազան ջրերը: Այնտեղ նրան սպասում է իր ոսկեղեն մակույկը, որով նա լողում է դեպի արևելք, դեպի արևի երկիրը, որտեղ նրա զարմանահրաշ պալատն է գտնվում: Արևի աստվածը գիշերը հանգիստ է առնում այնտեղ, որպեսզի առաջվա փայլով ծագի հաջորդ օրը:

ՓԱՆՏՈՆ

Նաբաղբաժ է քստ Օվիդիոսի «Կերպարանափոխություններ» պոեմի:

Միայն մի անգամ է իտալեովել աշխարհում սահմանված կարգը, և արևի աստվածը չի բարձրացել երկինք՝ մարդկանց լույս տալու համար: Դա այսպես պատահեց: Արև-Հելիոսն ու Կլիմենեն՝ ծովային աստվածուհի Բետիսի զուտորը, մի որդի ունենին Փանտոն անունով: Մի անգամ Փանտոնի տղազականը, շանթարձակ Զևսի որդի էլպսոսը, հեզնելով նրան՝ այսպես ասաց.

— Չե՛մ հավատում, թե դու ճաճանչափայլ Հելիոսի որդին ես: Մայրդ ճիշտ չի ասում: Դու հասարակ մահկանացուի զավակ ես:

Զայրացավ Փանտոնը, ամոթի կարմիրը խփեց երեսին. վազեց մոր մոտ, նետվեց նրա գիրկը և արցունք թափելով զանգատ-

վեց, որ իրեն այդպիսի վիրավորանք են հասցրել: Բայց մայրը, ձեռքերը կառկառելով դեպի ճաճանչափայլ արևը, բացականչեց.

— Օ՛, որդիս: Երզվում եմ Հելիոսով, որ մեզ տեսնում է ու լսում, որին դու էլ հիմի տեսնում ես, երզվում եմ, որ նա քո հայրն է: Թող նա զրկի ինձ իր լույսից, եթե ես ճիշտ չեմ ասում: Ի՛նչդ զնա նրա մոտ, պալատը հեռու չէ մեզանից: Նա կհաստատի իմ խոսքը:

Փանտոնն իսկույն զնաց իր հոր՝ Հելիոսի, մոտ: Շուտ հասավ Հելիոսի պալատը, որ շողում էր ոսկուց, արծաթից ու հազարագույն քարերից: Հեփեստոսն այնպիսի մի զարմանահրաշ ձևերով էր զարդարել պալատը, որ նա ասես հուրհրատում էր ծիածանի բոլոր երանգներով:

Փանտոնը մտավ պալատ և տեսավ ծիրանի հագած Հելիոսին զահի վրա բազմած: Բայց Փանտոնը շկարողացավ մոտենալ ճաճանչափայլ աստծուն. նրա աչքերը,— իբրև մահկանացուի աչքեր,— չէին կարող դիմանալ Հելիոսի պսակից հորդացող փայլին: Արևի աստվածը տեսավ Փանտոնին ու հարցրեց.

— Ի՞նչն է քեզ իմ պալատը բերել, տղա՛ս:

— Օ՛, համայն աշխարհի լույս, օ՛, հայր Հելիոս: Արդյոք կհանդգնե՞մ քեզ հայր կոչել,— գոչեց Փանտոնը, — ապացույց տուր, որ դո՛ւ ես իմ հայրը: Փարատիր, աղերսում եմ, իմ կասկածը:

Հելիոսը հանեց իր ճաճանչափայլ պսակը, մոտ կանչեց Փանտոնին, զրկեց նրան ու ասաց.

— Այո, դու իմ որդին ես: Մայրդ՝ Կլիմենեն, ճիշտ է ասել: Եվ որպեսզի կասկած չունենաս այլևս, խնդիր ինձնից ինչ որ կուզես, երզվում եմ Ստիքս գետի սրբազան ջրերով, որ ի կատար կածեմ քո խնդիրը:

Հաշիվ էր Հելիոսն ասել այս խոսքը, երբ Փանտոնը թույլտվություն խնդրեց ոսկեհուռ երկանվով ընթանալ երկնակամարով, նրա՝ Հելիոսի, փոխարեն: Զարհուրեց ճաճանչափայլ աստվածը:

— Խելակորույս պատանի, ի՛նչ ես խնդրում,— գոչեց Հելիոսը,— օ՛, եթե ես կարողանալի գրծել իմ երզումը: Դու անհնարին ես խնդրում, Փանտոն: Զէ՞ որ դա քո ուժերից վեր բան է: Զէ՞ որ դու մահկանացու ես, իսկ մի՞թե դա մահկանացուի գործ է: Մի՞չև իսկ անմահ աստվածներն անկարող են դիմանալ իմ երկանվի մեջ: Ինքը՝ շանթարձակ մեծն Զևսն անգամ չի կարող վա-

րել այն, իսկ ո՞վ է, որ ավելի մեծագոր է, քան նա: Հապա մի մտածիր. սկզբում ճանապարհն այնքան թեք է, որ մինչև անգամ իմ թևավոր ձիերը հազիվ են բարձրանում: Ճանապարհի միջնամասում երկանիվը երկրից այնքան բարձր է չեւում, որ նույնիսկ ինձ էլ է համարում վախր, երբ նայում եմ ցած՝ ներքևում փոված ծովերին ու երկրներին: Իսկ վերջում ճանապարհն այնպես շեշտակի է իջնում Օվկիանոսի սրբազան ափերի վրա, որ առանց իմ հմուտ կառավարման՝ երկանիվն ահազնաթափ ցած կնետվի ու շարժուիշուր կլինի: Փու կարծում ես, թե ճանապարհին գեղեցիկ շատ բան կհանդիպի: Այ, իմ ուղին անցնում է վտանգների, սոսկումների ու վայրի գաղանների միջով: Նեղ է ճանապարհը. եթե շեղվես, ապա քեզ կղիմավորեն ահեղ ցուլի եղջուրները, այնտեղ քեզ կահարեկեն կենսավրոսի աղեղը, կատաղի առյուծը, հրեշավոր կարիճն ու խեցգետինը¹: Բազում սարսափներ կան երկնակամարի ճանապարհին: Հավատա՛ ինձ, չե՛մ ուզում քո կործանման պատճառը դառնալ: Օ՛, եթե դու կարենայիր քո հայացքով թափանցել սիրտս և տեսնել, թե ես ինչպե՛ս եմ վախենում քո ճակատագրի համար: Մի նայի՛ր շորաբուրդ, նայիր աշխարհին ու տես, թե սքանչանալու ինչքա՛ն բան կա այնտեղ: Խնդիր այն ամենը, ինչ կկամենաս, և ես ոչինչ չեմ մերժի քեզ. միայն այդ մեկը մի՛ խնդիր: Չէ՞ որ խնդրածդ ոչ թե պարզ է, այլ ահավոր մի պատիժ:

Բայց Փաետոնը ոչինչ չէր ուզում լսել. փարված Հելիոսի պարանոցին՝ խնդրում էր ի կատար ածել իր խնդրանքը:

— Լա՛վ, ես ի կատար կածեմ խնդիրդ: Մի՛ անհանգստանա, չէ՞ որ երգվել եմ Սափրսի ջրերով: Կկատարվի քո խնդիրը, բայց ես կարծում էի, թե դու ավելի խելամիտ կլինես, — տխրությամբ պատասխան տվեց Հելիոսը:

Եվ նա Փաետոնին տարավ այնտեղ, ուր կանգնած էր իր երկանիվը: Սքանչացավ Փաետոնը դրանով. ոսկեղեն էր երկանիվը և շողշողում էր հազարերանգ թանկագին քարերով: Բերեցին Հելիոսի նծույզները, որոնք սնված էին ամբոսիայով ու նեկտարով: Լծեցին նծույզները, Բոսորամատն էսը բաց արեց արևի դարպասները: Հելիոսը Փաետոնի դեմքը շփեց սրբազան օծանելիքով, որպեսզի չկիզվի արևի ճառագայթների բոցերից և գլխին դրեց շողշողուն

¹ Զուլի, Կենսավրոսի, Կարիճի և խեցգետնի համաստեղությունները:

պտակը: Տրամագին հառաչանք արձակելով, Հելիոսը տվեց իր վերջին խրատները:

— Տղա՛ս, հիշիր իմ վերջին խրատները և իրագործիր, եթե կարող ես: Մի՛ քշիր ձիերը և որքան կարող ես ամուր պահիր երասանները: Իմ նծույզներն առանց քշելու էլ կսուրան: Դժվար է նրանց դսպել: Իսկ ճանապարհը պարզ կտեսնես անվահարքերով, որոնք ձգվում են ամբողջ երկնակամարով: Շատ շրաքծանաս, որպեսզի շարես երկինքը, բայց ցած էլ չիջնես, այլապես կհրկիզես ամբողջ երկիրը: Լավ հիշիր՝ շեղվես ճանապարհիցդ ո՛չ դեպի աջ, ո՛չ էլ դեպի ձախ. քո ուղին ընկած է ճիշտ և ճիշտ Օձի ու Զոհասեղանի՛ միջև: Մնացյալը ես ասավինում եմ ճակատագրին, միայն նրա՛ վրա է իմ հույսը: Բայց արդեն ժամն է ճանապարհվելու, գիշերն արդեն լքել է երկինքը, իսկ բոսորամատն էսը գուրս է կկել: Երասաններն ամո՛ր բռնիր: Բայց գուցե դեռ կփոխե՛ս քո վճիռը, չէ՞ որ դա քեզ կործանում է սպառնում: Օ՛, թույլ տուր, որ ե՛ս լուսավորեմ երկիրը: Կորստյան մի՛ մատնիք քեզ:

Բայց Փաետոնը մի ակնթարթում ցատկեց երկանվի մեջ ու սանձերը ձեռքն առավ: Նա հրճվում է, ցնծում, երախտագիտություն հայտնում Հելիոսին և շտապում ճամփա ընկնել: Նծույզները դոփում են սմբակներով, բոց են ժայթքում ունգներից, ապա թեթևությամբ փախցնում են երկանիվը ու մատախուղի միջով դեպի երկինք սուրում թեք ճանապարհով: Նծույզների համար անսովոր թեթև է երկանիվը: Նրանք արդեն սլանում են երկնքով, մի կողմ են թռչել Հելիոսի սովորական ճանապարհը և սուրում են ուղին հորքած: Իսկ Փաետոնը շփտե ճանապարհը, Փաետոնն անկարող է վաբել ձիերին: Երկնքի զագաթից նայեց երկրին, ու երկիրն այնքա՛ն հեռու երևաց, որ նա գունատվեց սոսկումից: Մնկները դողացին, աչքերը մթնեցին: Նա արդեն զղջում է, որ հորից խնդրել է նրա երկանիվը կառավարել: Ի՞նչ պիտի անի հիմա: Արդեն շատ ճամփա է կտրել, բայց առջևում դեռ երկար ճանապարհ կա: Փաետոնը չի կարողանում դսպել նծույզներին, շփտե նրանց անունները և այլևս սանձելու ուժ չունի: Չորս կողմը տեսնում է երկնային ահավոր գազաններին և է՛լ ավելի է վախենում:

Երկնքում մի տեղ կա, ուր փովել է հրեշավոր, ահեղ կարիճը. ձիերը հենց այնտեղ են քաշում Փաետոնին: Տեսավ տարաբախտ

¹ Երկու համաստեղություն, որոնց հույները կոչում էին Օձ և Զոհասեղան:

պատանին սև թույնով պատած կարիճին, որ սպառնում էր նրան մահացու խայթոցով, և վախից խնլակորույս, բաց թողեց սանձերը: Ազատութուն զգալով, նժույզներն առավել արագ սուրացին: Մերթ օձագալար վեր էին խոյանում մինչև աստղերը, մերթ էլ, իջնելով, սլանում գրեթե երկրի երեսով:

Հելիոսի քույրը՝ լուսնի աստվածուհի Սելենեն, զարմանքով տեսավ, թե ինչպես են սլանում երկնքով եղբոր նժույզները՝ ճանապարհը կորցրած ու անկառավար: Յած իջած երկանվի բոցերը լափում են երկիրը: Մեծ ու հարուստ քաղաքներ են հրո ճարակ դառնում, ամբողջ ցեղեր են կորստյան մատնվում: Հրկիզվում են անտառապատ լեռները, երկզխանի Պառնասը, սաղարթախիտ Կիթերոնը, կանաչապատ Հելիկոնը, Կովկասի լեռները, Տմոլոսը, Իդան, Պելիոնը, Օսսան¹: Ծուխը պատել է շորսրուրը, թանձր ծխի մեջ Փանտոնը չի իմանում, թե ուր է գնում: Գետերի ու գետակների ջուրը եռ է գալիս: Հավերժահարսները լալիս են ու սարսափահար թաքնվում խորունկ անձավներում: Ծռում են Եփրատն ու Օրոնտեսը, Ալփեոսն ու Էլբրոտասը² և մյուս գետերը: Ահավոր տապից ճարհըքում է երկիրը և արևի շողը թափանցում է Հադեսի խավարամած թագավորությունը: Ծովերը սկսեցին շորանալ: Տոթից տանջահար են լինում ծովալիս աստվածությունները: Եվ այդ ժամանակ ելավ մեծն Գեա-Երկիր աստվածուհին ու բարձրաձայն գոչեց.

— Օ՛, մեծագույնդ աստվածներից, ամպրոպային Ջև: Մի՞թե ես պիտի կործանվեմ, մի՞թե պիտի կործանվի քո եղբոր՝ Պոսեյդոնի թագավորությունը, մի՞թե ամենայն կենդանություն կորստյան պիտի մատնվի: Նայիր ու տես: Չէ՞ որ երկինքը և աստվածների սլալատները կարող են փուլ գալ: Եվ մի՞թե ամեն ինչ պիտի վերադառնա նախնական Քաոսի վիճակին: Օ՛, փրկիր հրո ճարակից այն, ինչ դեռ մնացել է:

Ջևը լսեց Գեա աստվածուհու աղերսանքը, ասեղորեն ճոճեց բազուկը, նետեց իր շողշողուն կայծակը և նրա կրակով մարեց հրգեհնը: Ջևը շանթով շարժեց երկանիվը: Հելիոսի ձիերը փախան

տարբեր կողմերի վրա: Երկնքով մեկ ցաքուցրիվ եղան երկանվի բեկորները և Հելիոսի ձիերի լծասարքը:

Իսկ Փանտոնը, հրկիզվող զանգուրներով, վայր ընկնող աստղի նման սուրաց օդի մեջ և ընկավ իր հայրենիքից հեռու՝ էրիդանոս գետի ալիքների մեջ: Այնտեղ Հեսպերիդյան հավերժահարսները վերցրին նրա դին ու հողին հանձնեցին:

Իսկ Փանտոնի հայր Հելիոսը, խորին վշտի մեջ ընկած, ծածկեց իր դեմքը և ամբողջ օրը շերեաց կապուտակ երկնքում: Միայն հրդեհի բոցն էր լուսավորում երկիրը:

Փանտոնի տարաբախտ մայրը՝ Կլիմենեն, երկար փնտրեց կորստյան մատնված որդու դին: Ի վերջո, էրիդանոսի ափերին դառավ որդու ոչ թե դիակը, այլ դամբարանը: Դառնորեն ողբաց անսփոփ մայրը որդու դամբարանի վրա, կործանված եղբորը ողբացին նաև Կլիմենեի դուստրերը՝ հելիադները: Նրանց վիշտը սահման չունեց: Լացող հելիադներին մեծ աստվածները բարդիներ դարձրին: Շարված են բարդի-հելիադները՝ հակված էրիդանոսի վրա, և նրանց արցունքախեժը կաթում է սառնորակ ջրերի մեջ, խեժը սառչում ու թափանցիկ հակինթ է դառնում:

Փանտոնի կործանումը վշտահար արեց նաև նրա ընկերոջը՝ Կիկլոսին: Նրա ողբի ձայնը հեռու տարածվեց էրիդանոսի ափերով: Տեսնելով Կիկլոսի անսփոփ տխրությունը՝ աստվածները նրան ձյունաճերմակ կարապ դարձրին: Այդ ժամանակից ի վեր Կիկլոս-կարապն ապրում է ջրերում, գետերում և լայնարձակ լուսավոր լճերում: Նա վախենում է կրակից, որ կործանեց իր ընկերոջը՝ Փանտոնին:

ԴԻՈՆԻՍՈՍ՝

ԴԻՈՆԻՍՈՍԻ ՄԵՌԵՆԵ ՈՒ ԴԱՍԵՆԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամպրոպային Ջևը սիրում է գեղանի Սեմելին՝ Թերեի արքա Կադմոսի դստերը: Մի անգամ Ջևը խոստացավ կատարել նրա ցանկությունը, ինչ էլ որ դա լինի, և երդվեց աստվածների ան-

¹ Կիբեռնը գտնվում է Ատտիկայի ու Բեոտիայի միջև, Հելիկոնը՝ Բեոտիայի հարավ-արևմուտքում, Տմոլոսը՝ Լիզիայում, Իդան՝ Փոյուգիայում, Փորր Աթալոս, Պելիոնն ու Օսսան՝ Թեսալիայում՝ Էգեյան ծովի ափին:

² Օրոնտեսը գտնվում է Միդիայում, Ալփեոսը՝ Պելոպոնեսի արևմուտքում, Էլբրոտասը՝ Լակոնիայում, այս գետի ափին է գտնվել Սպարտան:

¹ Դիոնիսոս (ըստ հունական առասպելաբանության՝ Բացոս)—խաղողագործության և զինու աստվածը, որ Հունաստան է բերվել Թրակիայից: Դիոնիսոսի տոնախմբությունները կարևոր են նրանով, որ Աթենքում զրանցից են սկիզբ առել թատերական ներկայացումները: Աթենքում Դիոնիսոսի տոնախմբությունների (մեծ

խախտ երդումով՝ ստորերկրյա Ստիքս գետի ջրերով: Բայց Սեմե-
լեին խորապես ատեց մեծն աստվածուհի Հերան և կամեցավ
կորստյան մատնել նրան: Եվ նա ասաց Սեմելեին.

— Խնդիր Զևսին, որ նա ներկայանա քեզ շանթարձակ աստը-
ծո, Օլիմպոսի արքայի իր ամբողջ վսեմությամբ: Եթե նա իրոք սի-
րում է քեզ, ապա չի մերժի քո խնդիրքը:

Համողեց Հերան Սեմելեին, և սա Զևսին խնդրեց կատարել
հենց ա՛յդ ցանկությունը: Զևսը չէր կարող մերժել Սեմելեին, չէ՞
որ Ստիքսի ջրերով էր երդվել: Եվ շանթարձակը ներկայացավ նրան
աստվածների ու մարդկանց արքայի իր ամբողջ վսեմությամբ, իր
փառքի ամբողջ փայլով: Վառվռուն կայծակը փայլատակում էր
նրա ձեռքին: Կայծակի հարվածները ցնցեցին Կողմոսի պալատը:
Ամեն ինչ բռնկվեց Զևսի շանթերից: Հուրը բռնեց պալատը, շոք
բուրն ամեն ինչ ցնցվում էր ու խորտակվում: Սարափահար
Սեմելեն վայր ընկավ գետին, կրակն այրում էր նրան: Նա տեսավ,
որ այլևս փրկություն չունի, որ իրեն կորստյան մատնեց Հերայի
ներշնչած խնդրանքը:

Եվ մահամերձ Սեմելեն մի տղա ունեցավ՝ Դիոնիսոսին, թու-
լակազմ և ապրելու անընդունակ մի մանուկ: Թվում էր, թե նա
էլ կրակին զոհ գնալու է դատապարտված: Բայց կարո՞ղ էր
արդյոք զոհ գնալ մեծն Զևսի զավակը: Բոլոր կողմերից, ասես
կախարդական գայիստնի նշանի համաձայն, գետնի տակից բուս-
նեցին դալար ու թանձրախիտ բաղնջները և իրենց կանաչով
կրակից զերծ պահեցին տարաբախտ մանկանը և փրկեցին մա-
հից:

Զևսը ձեռքն առավ փրկված երնխային, բայց քանի որ նա
աչիքան փոքր էր ու տկար, որ չէր կարող ապրել՝ Զևսը նրան

դիոնիսականք) ժամանակ ելույթ էին ունենում այժմնի հազած երդիչների խմբերը
և կատարում հատուկ հիմներ-դիփերամբոսներ. սկսում էր մենակատորը, իսկ
երզախումը պատասխանում էր նրան: Երգն ուղեկցվում էր պարով: Այդ դիփե-
րամբոսներից հետագայում առաջ եկավ սրազեղիան՝ ողբերգությունը Տրազե-
դիա բառը կարելի է բացատրել իբրև «այժմի երգ»՝ «տրադոս» (այժ) և «օզե»
(երգ) բառերից: Իսկ գլուղական տոնախմբություններում (գլուղական դիոնիսա-
կանք) Դիոնիսոսի պատվին կատարվում էին կատակի քնույթ կրող երգեր, որոնք
նույնպես մենակատարն էր սկսում: Դրանք նույնպես ուղեկցվում էին պարերով:
Մրանից առաջ է եկել կոմեդիան՝ կատակերգությունը: Կոմեդիա բառը կարելի է
բացատրել իբրև «գլուղական երգ»՝ «եոմե» (գլուղ) և «օզե» (երգ) բառերից:

կարեց իր ազդրի մեջ: Հոր՝ Զևսի մարմնի մեջ Դիոնիսոսը կազ-
դուրվեց ու ամրացավ, և կազդուրվելով, երկրորդ անգամ ծնվեց
շանթարձակ Զևսի ազդրից: Եվ այդ ժամանակ աստվածների ու
մարդկանց արքան իր մոտ կանչեց աստվածների բանբեր Հերմե-
սին և հրամայեց նրան մանկահասակ Դիոնիսոսին տանել
Սեմելեի քրոջ՝ Ինոյի և նրա ամուսին Օրբոմենոսի՝ արքա Աթա-
մասի մոտ. նրանք պիտի դաստիարակեն Դիոնիսոսին:

Հերա աստվածուհին խորին գայությունով լցվեց Ինոյի ու Աթա-
մասի հանդեպ, որ նրանք դաստիարակության են վերցրել իր հա-
մար այնքան ատեի Սեմելեի որդուն: Եվ Հերան վճռեց պատժել
նրանց: Աթամասին խելացնոր դարձրեց: Խելացնորության մուլուց-
քի մեջ Աթամասը սպանեց իր որդի Լեարքոսին:

Ինոն և նրա մյուս որդին՝ Մելիկերտեսը, հազվիճազ ճողոպրե-
ցին մահից: Ամուսինն ընկավ Ինոյի հետևից, ահա հասնում է կնո-
ջը: Առջևում ծովափի ժայռեղեն զառիթափն է, ներքևում՝ աղմկա-
հույզ ծովը, իսկ հետևից ահա ուր որ է կհասնի խելակորույս
ամուսինը, փրկություն չունի Ինոն: Հուսահատության մեջ, առ-
ափնյա ժայռերից նա իրեն ծովը նետեց որդու հետ միասին:
Ծովում Ինոյին ու Մելիկերտեսին ընդունեցին ներեիդները: Դիո-
նիսոսի դաստիարակչուհին ու նրա որդին ծովային աստվածու-
թյունների դարձան և այդ ժամանակից ի վեր ապրում են ծովային
հորձանուտում:

Իսկ Դիոնիսոսին խելացնոր Աթամասից փրկեց Հերմեսը: Մի
ակնթարթում նրան նիսեյան հովիտը հասցրեց և դաստիարակու-
թյան տվեց հավերժահարսներին: Դիոնիսոսն աճեց իբրև գինու գե-
ղեցիկ ու մեծազոր աստված, որ մարդկանց ուժ ու հրճվանք է տա-
լիս և արեասավորություն պարգևում: Իբրև շնորհ Զևսը Դիոնիսո-
սի դաստիարակ հավերժահարսներին երկինք տարավ. մութ ու
աստղալից գիշերները, մյուս համաստեղծությունների միջև շող-
ջողում են նրանք երկնքում՝ Հիադներ՝ անվան տակ:

1 Քաղաք Քեոտիայում, Կոպատիսյան լճի ափին:

2 Երկնակամարի ամենապայծառ համաստեղծություններից մեկի՝ Օրիոնի հա-
մաստեղծության մեջ աստղերի կուտակումները (աստղասփյուռներ) կոչվում են
Հիադներ:

Պսակազարդ մենադներին ու սատիրների ցնծացող բազմությամբ շրջապատված՝ ընթանում է ուրախ Դիոնիսոսն աշխարհով մեկ, երկրի-երկրի։ Նա առջևից է գնում՝ խաղողի ողկույլի պսակը գլխին, բաղեղազարդ թիրառու ձեռքին։ Նրա շուրջը, երգելով ու ճիչեր արձակելով, արագաթափ պար բռնած, պտույտ են գալիս երիտասարդ մենադները, ցատկոտում են պոչավոր ու այծոտն սատիրները՝ գինուց արբեցած։ Երթի հետևից ավանակի վրա բերում են ծերունի Սիլենոսին՝ Դիոնիսոսի իմաստուն ուսուցչին։ Նա թունդ հարբած է, հագիվ է իրեն պահում ավանակի վրա՝ հենվելով մոտը դրված գինու տկին։ Նրա ճաղատ գլխի բաղեղապսակը թեքվել է մի կողքի։ Գնում է նա ավանակի վրա ճոճվելով ու բարեհոգի ժպտալով։ Երիտասարդ սատիրները ընթանում են զգուշորեն քայլող ավանակի մոտով և խնամքով պահում ծերուկին, որ վայր չընկնի։ Եվիների, սրինգների ու տիմպանների նվագակցությամբ ցնծագին ընթանում է աղմկահույզ երթը սարերով, սաղարթախիտ անտառներով, կանաչապատ մարգագետիններով։ Հրձվանքով գնում է Դիոնիսոս-Բաքոսը, բոլորը հնազանդ են նրա իշխանությունը։ Նա մարդկանց սովորեցնում է խաղողագործություն և խաղողի հասուն ու ծանր ողկույղներից գինի պատրաստելու արվեստը։

ԼԿՈՒՐԳՈՍ

Բայց ամենուրեք չէ, որ ճանաչում են Դիոնիսոսի իշխանությունը։ Հաճախ նա ընդդիմության է հանդիպում, հաճախ ստիպված է լինում ուժով նվաճել երկրներն ու քաղաքները։ Բայց թե ո՞վ կարող է կովել մեծ աստծո, Զևսի որդու հետ։ Դաժան դատաստան է տեսնում նրանց հետ, ովքեր ընդդիմանում են իրեն, չեն ուզում ճանաչել ու մեծարել իրեն իբրև աստծո։

Առաջին անգամ նրան վիճակվեց հալածվել Թրակիայում, երբ նա զովաշունչ հովտում, իր ուղեկից մենադների հետ միասին, երգի ու երաժշտության տակ ցնծագին խնջույք էր անում ու պարում։ Այդ ժամին նրա վրա հարձակվեց էդոնների՝ դաժան թագա-

¹ Թրակիական ցեղ, որ ապրում էր Սարխմոն գետի ափերին։

վոր Լիկուրգոսը։ Սարսափահար դեսուդեն փախան մենադները՝ գետին զցելով Դիոնիսոսի սրբազան սափորները։ Մինչև իսկ Դիոնիսոսը փախուստի դիմեց։ Լիկուրգոսի հետապնդումից փրկվելու համար ծովը նետվեց. այնտեղ նրան թաքցրեց Փետիս աստվածուհին։ Դիոնիսոսի հայրը՝ ամպրոպային Զևսը, դաժանորեն պատժեց Լիկուրգոսին, որ հանդգնել էր վիրավորանք հասցնել պատանի աստծուն։ Զևսը կուրացրեց Լիկուրգոսին և նվազեցրեց նրա կյանքի տևողությունը։

ՄԻՆԵԱՍԻ ԳՈՒՍՏՐԵՐԸ

Շարագրված է բառ Օվիդիոսի «Կերպարանափոխություններ» պոեմի։

Օրբոմենոսում ևս, Բեոտիայում, չկամեցան միանգամից ճանաչած լինել Դիոնիսոս աստծուն։ Երբ Օրբոմենոս եկավ Դիոնիսոս-Բաքոսի բուրմը և բոլոր կանանց ու աղջիկներին կանչեց անտառներն ու սարերը ուրախ տոնախմբության՝ ի պատիվ գինու աստծո, Մինիասի երեք դուստրերը չգնացին տոնախմբությանը մասնակից լինելու. չէին կամենում Դիոնիսոսին ընդունել իբրև աստված։ Օրբոմենոսի բոլոր կանայք քաղաքից գնացին սաղարթախիտ անտառները և այնտեղ, երզով ու պարով, մեծարում էին մեծ աստծուն։ Բաղեղազարդ թիրսոսները ձեռքներին, բարձրաձայն գոչյուններով, մենադների նման նրանք սլանում էին սարերով ու փառաբանում Դիոնիսոսին։ Իսկ Օրբոմենոսի թագավորի դուստրերը նստել էին տանը՝ իրենց սենյակներում, և անվրդով մանում էին ու գործում. չէին էլ ուզում լսած լինել Դիոնիսոս աստծո մասին։ Արևը թեքվեց, իջավ երեկոն, իսկ թագավորի դուստրերը չէին լքում իրենց գործը, ուզում էին ինչ էլ որ լինի ավարտել այն։

Հանկարծ մի հրաշք տեղի ունեցավ նրանց աչքերի առաջ։ Պալատում հնչեցին շվիների ու տիմպանների ձայներ, գործվածքի թելերը խաղողի վազեր դարձան, և ծանր ողկույղներ կախ ընկան նրանցից։ Քարահաները պատվեցին կանաչով և թանձրորեն պարուրվեցին բաղեղներով։ Ամենուրեք հորդեց մրտենու՝ ու ծաղիկների բուրմունքը։ Ապշահար՝ այս հրաշքին էին նայում թագավորի դուստրերը։ Հանկարծ, երեկոյան աղջամուղջով պարուր-

¹ Մրանեի — հարավային մշտազալար թուփ՝ բուրմունքով և ճերմակ ծաղիկներով (Մ. Ք.)։

ված պալատում, փայլատակեց ջահերի շարագուշակ լույսը: Լավեցին վայրի գազանների մոնչլուններ: Պալատի բոլոր սենյակներում հայտնվեցին առյուծներ, հովազներ, լուսաններ ու արջեր: Ահեղադրողորդ ոռնոցով վազում էին պալատով մեկ, կատաղորեն փայլեցնելով իրենց աչքերը: Արքայի սարսափահար դուստրերը ջանում էին թաքնվել պալատի ամենահեռավոր ու ամենամութ սենյակներում, որպեսզի չտեսնեն ջահերի փայլը, չլսեն գազանների մոնչլունը: Բայց զուր էր ամեն ջանք, ոչ մի տեղ չէին կարող թաքնվել: Դիոնիսոս աստծո պատիժը դրանով չսպառնաց: Արքայադուստրերի մարմիններն սկսեցին կուչ գալ, ծածկվել մկան գորշավուն մորթով, ձեռքերի փոխարեն բարակ թաղանթավոր թևեր աճեցին. նրանք շղջիկներ դարձան: Այդ ժամանակից ի վեր նրանք ցերեկային լույսերից թաքնվում էին խավար ու խոնավ ավերակներում և անձավներում: Դիոնիսոսն այսպես պատժեց նրանց:

ՊԵՆԹԵԱՍ

Ետադրված է ըստ Եվրիպիդեսի «Քաֆոստեիներ»¹ ողբերգության:

Բայց Դիոնիսոսին առավել համառ դիմադրություն ցույց տվեց Քեբեի արքան՝ որդին Էթիոնոսի, որ մեկն էր այն ուզմիկներից, որոնց երկիրը ծնել էր օձի ատամներից: Դա Պենթևան էր՝ Կադմոսի թոռը, որ թագավորում էր զառամյալ պապի փոխարեն: Նա ժխտում էր, որ Դիոնիսոսն աստված էր և Զևսի զավակը: Պենթևան ասում էր, որ եթե Դիոնիսոսն աստված լիներ, ապա Զևսն իր ջանքով չէր մոխրացնի Սեմելին ու նրա պալատը, կորստյան չէր մատնի իր զավակի մորը: Պենթևան չէր ուզում խոնարհվել մահկանացու Սեմելիի մահկանացու որդու առաջ:

Մի անգամ, Պենթևաի բացակայության ժամանակ, Դիոնիսոսը սատիրների և մենադների հետ միասին հայտնվեց Քեբեում: Նա վճռել էր վրեժխնդիր լինել Պենթևաից և՛ իր, և՛ իր մոր համար: Քեբեի բոլոր կանանց Դիոնիսոսը տարավ իր հետևից: Բոլոր կանայք, գործները թողած, գնացին դեպի Կիթերոնի լեռները և այն-

քեղ մասնակցեցին բաքոսային պարերին՝ Պենթևաի մոր՝ Ագավեի, և նրա երկու քույրերի՝ Ինոչի և Ավտոնոեի գլխավորությամբ: Մինչև անգամ ծերունի Կադմոսը և ծեր գուշակ, պատգամախոս Քիրեոսիսը ճանաչեցին մեծ աստծուն: Նրանք էլ բաղեղապսակներ գրեցին գլխներին, զոհեր մատուցեցին ի պատիվ Դիոնիսոսի և փառաբանեցին նրան: Կադմոսն ու Քիրեոսիսան էլ արդեն պատրաստ էին գնալու Կիթերոնի անտառները՝ Բաքոսի տոնախմբությանը մասնակից լինելու համար:

Հենց այդ ժամին Պենթևան վերադարձավ: Ապշահար նայում էր նա ամայացած Քեբեին: Ահեղորեն զայրացավ նա՝ իմանալով, որ բոլոր կանայք գնացել են Դիոնիսոս-Բաքոսի տոնախմբությանը: Մոլեգնած Պենթևան հրամայեց բռնել բոլոր բաքոսուհիներին ու զնդանը նետել: Տեսնելով, որ իր պապը՝ Կադմոսը և պատգամախոս Քիրեոսիսան էլ են բաղեղապսակ գրել ու բաղեղազարդ թիրսոսներ առել ձեռքները, նա սկսեց ծաղրել նրանց ու ասաց, որ ծերությունը զրկել է նրանց բանականությունից:

Պենթևան շսեց Քիրեոսիսի խորհուրդները: Նա հրամայեց գտնել այն օտարերկրացուն, որ թեբեուհիներին լեռներն է տարել, հրամայեց կապտել նրան ու իր պալատը բերել: Պենթևան չէր կարծում, թե այդ օտարերկրացին հենց ինքը՝ մեծ Դիոնիսոսն է: Իսկ խորհրդավոր օտարերկրացին Պենթևաի ծառաներից թաքնվելու միտք էլ չուներ. ինքն է իր ձեռքերը մեկնում ծառաներին, որ կապտեն, չի գունատվում սոսկումից, հանգիստ է նրա լուսավոր հայացքը: Ապշել են ծառաները, տհաճությամբ են կատարում թագավորի հրամանը, բայց չեն հանդգնում խախտել այն, և կաշկանդված օտարերկրացուն բերում են Պենթևաի մոտ: Շողալով իր պատանեկան նրբին գեղեցկությամբ, փարթամ զանգուրներով, գինու պես հուրհրատին տվող սևորակ աչքերով, անխռով ժպիտը դեմքին, վսեմաշուք ու գեղեցիկ՝ կանգնել էր Դիոնիսոսը Պենթևաի առաջ: Նրան չէին ահաբեկում Պենթևաի սպառնալիքները, քանի որ մահկանացուի սպառնալիքը երկյուղալի չէ աստծու համար:

Իսկ Պենթևան արդեն բոլորովին կորցրել է իրեն, ցնորվել: Մառաները հայտնում են, որ Դիոնիսոսը հրաշագործությամբ զնդանից ազատ է արձակել բաքոսուհիներին, բայց այդ հրաշքը ոչ մի տպավորություն չի գործում Պենթևաի վրա: Նա կամենում է Դիոնիսոսին կապտել ու մթին գոմը նետել, սպառնում է բարկոծումով, բայց Դիոնիսոսը, առաջվա նման անվրդով ու հանգիստ,

¹ Սա հենց այն ողբերգությունն է, որ ըստ Պլուտարքոսի, ն. թ. ա. 53 թվին Արտավազդ II արքայի օրոք խաղացվել է հին Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքում (Մ. Ք.):

ժպտում է հեզնանքով: Պենթևան շտապում է իր ձեռքով շղթայա-
կապ անել Դիոնիսոսին: Գինու աստվածը մի ցուլ է ուղարկում:
Շուրթերը կրծոտելով և ամբողջ ուժերը այնպես լարելով, որ քրո-
տինքը հոսում էր մարմնով, Պենթևան ջանում էր կապտոել ցուլին՝
Դիոնիսոսի համակած խելացնորությունից այնպես կարծելով, թե
օտարերկրացուն է կապտում: Իսկ Դիոնիսոսը անխռով նստել է
կողքին ու ծիծաղում է նրա ճիգերի վրա:

Հանկարծ ամբողջ պալատը ցնցվեց, սյունաշարերը սասանվե-
ցին, պատերը ճոճվեցին: Սեմելի դամբարանի վրա մի վիթխարի
հրեղեն սյուն բարձրացավ ու լուսավորեց ողջ պալատը: Սարսափա-
հար Պենթևան կարծեց, թե կրակը բռնել է ամբողջ պալատը. օգ-
նության է կանչում ծառաներին, ջրի ուղարկում Աքելոս գետը, որ
մարեն հրդեհը: Սուրբ դուրս քաշելով նետվում է պալատը՝ երկյուղ
կրելով, որ հանկարծ գերին կփախչի: Պալատում հանդիպում է
Դիոնիսոսին, սուրը ձեռքին նետվում է նրա վրա. Պենթևան այն-
պես է թվում, թե խոցեց նրան, բայց դա այլ բան չէ, քան աստ-
վածների ուղարկած ուրվականը: Պենթևան հիմա էլ շտապում է
ճողոպրել պալատից: Չորսրլորն ամեն ինչ ճոճվում է և հանկարծ
պալատն անեղադրող փուլ է գալիս:

Սուսկումով բռնված Պենթևան ընկնում է գետին, բայց մնում է
անվնաս: Մեկ էլ սարսափահար Պենթևան տեսնում է Դիոնիսոսին
բաքսուհիների մեջ, պալատի ավերակների առաջ կանգնած:
Հարցնում է, թե նա ինչպե՞ս է ազատվել:

Օտարերկրացին անվրդով պատասխան է տալիս, որ իրեն ազա-
տել է նա՛, ում կամքով խաղողի վազերի վրա հյութառատ ողկույզ-
ներ են պտղավորվում: Պենթևան դարձյալ սպառնում է նրան:

Այդ պահին Կիթերոնի լեռներից մի հովիվ է գալիս հեկհե վա-
զելով, երկյուղածությամբ պատմում է, թե ինչի է ականատես
եղել լեռներում: Բաքոսի տոնախմբությանը մասնակցող բոլոր
կանայք, հովվի վկայությամբ, բաժանվել են երեք խմբի, որոնց
առաջնորդում են Պենթևա մայրը՝ Ազավեն ու սրա քույրերը: Երբ
հովիվը նախիրը քշելիս է լինում դեպի Կիթերոն, բաքսուհիները
հանգստանալիս են լինում, բայց Ազավեի նշանի համաձայն վեր են
թռչում տեղներից, ասես հոգնություն չղգալով: Մեջքները վայրենի
զազանների մորթիներով պատած, իրենց օձերով պարուրած,
գլխներին բաղեղապսակներ դրած՝ նրանք պար են բռնում ու եր-
գում ի պատիվ Դիոնիսոսի: Բազում հրաշքներ էր տեսել հովիվը:

Տեսել էր, թե ինչպես բաքսուհիներից մեկը թիրսոսով հարվածել
էր գնանին, և այնտեղից վճիռ աղբյուր է հորդել, մեկ ուրիշն է
հարվածել՝ այս անգամ էլ գինու աղբյուր է բխել: Բավական էր,
որ բաքսուհին մատով մի թևի քերծեր դետինը, որպեսզի գետ-
նից հորդառատ կաթ բխեր: Բաքսուհիների թիրսոսներից ախոր-
ժաբույր մեղր էր ծորում: Հովիվը լսել էր, թե ինչպես լեռները,
հովիտներն ու դաշտերը, մինչև անգամ վայրենի զազաններն էին
բարձրաձայն ցնծում բաքսուհիների հետ՝ արձագանքելով նրանց
հաղթական բացականչություններով:

Արքային հաճոյանալու համար հովիվն ուղեցել է իր ընկեր-
ների հետ գնալ ու բռնել Ազավեին և պալատ բերել: Բայց Ազա-
վեն օգնության է կանչել բաքսուհիներին, և նրանք փախուստի են
մատնել հովիվներին: Իսկ հետո վրա են թափվել նախրի վրա, մո-
լեզնաբար պատառոտել բոլոր կովերին ու ցուլերին: Աստված տաս-
նապատկել էր նրանց ուժը: Հետո ահազնաթափ հեղեղի նման՝ Կի-
թերոնի բարձունքներից նետվել են հովիտը, հարձակում դործել
Քիսիա և էրիտիա բաղաքների վրա ու ավերել: Նրանք տներից հա-
փրշտակում էին մանուկներին և տանում իրենց ուսերի վրա ու, թեև
ձեռքերով չէին պահում երեխաներին, նրանցից ոչ մեկը ցած չըն-
կավ: Զինավառ տղամարդիկ փորձում էին ընդդիմանալ նրանց,
բայց զենքը չէր վնասում բաքսուհիներին, իսկ սրանք իրենց թիր-
սոսով այնպես էին խոցում տղամարդկանց, ասես զրանք ոչ թե
թիրսոսներ, այլ սուրսայր սրեր ու նիզակներ լինեին: Վերջապես
հոգնատանը բաքսուհիները վերադարձել են այնտեղ, ուր գինու
աղբյուր էր բխում: Այնտեղ լվացվել, մաքրվել են արյունից և տե-
ղավորվել հանգիստ առնելու՝ հիմներ երգելով ի փառս Դիոնիսոսի:

Հովիվը հավատացնում էր Պենթևանին, թե այդպիսի բաներ մի-
այն ասածն օգնությամբ կարելի է անել, բայց նա ոչինչ չէր ուզում
լսած լինել: Սպառնում էր, թե իր զորաբանակը կտանի ընդդեմ
բաքսուհիների. արդեն զենքի է կոչում իր ռազմիկներին ու այն
բաղաքացիներին, ովքեր զենք բռնելու կարողություն ունեն: Մահ
էր կանխորոշել բոլոր բաքսուհիներին. թող նրանց արյունը հոսի
իբրև զոհաբերության Դիոնիսոսին: Իսկ Դիոնիսոսը միայն ժրպ-
տում էր ի պատասխան Պենթևաի սպառնալիքների. մահկանացու-
ների զորաբանակը չէր ահաբեկում նրան:

Դիոնիսոսը իսպառ պղտորեց Պենթևաի միտքը. համոզեց, որ
կանացի զգեստներ հագնի ու գնա Կիթերոնի անտառները, որպեսզի

ականատես լինի բաքոսուհիների մուլգարությանը և այն հրաշք-ներին, որ գործում էին նրանք: Պենթևար հնազանդվեց նրան: Գնում է Դիոնիսոսի հետևից ու նրան թվում է, թե Դիոնիսոսը կեռահողշուր մի ցուլ է դարձել: Պենթևար աչքին երկու արև է երևում, երկու Թեբե: Ավելի ու ավելի է ցնորվում: Չի էլ հասկանում, թե ինչ է արածը: Զգուշությամբ, որպեսզի չնկատվեն, Դիոնիսոսն ու Պենթևար եկան Կիթերոն: Բաքոսուհիները հանգիստ էին առնում: Դիոնիսոսը թաքցրեց նրանց Պենթևարի հայացքից: Եվ բաքոսուհիներին տեսնելու համար Պենթևար վճռեց բարձրանալ մի բարձր եղևնու վրա: Դալար ճուղի նման կոացրեց դարավոր եղևնին Դիոնիսոս աստվածը, որպեսզի Պենթևար կարողանա նստել նրա կատարին: Հետո զգուշորեն բաց թողեց եղևնին ու երբ ծառը շտկվեց, իսկ Պենթևար հայտնվեց բարձր ծառի կատարին՝ բոլոր կողմերից տեսանելի, Դիոնիսոսն աներևույթ դարձավ ու գոչեց բարձրաձայն.

— Օ՛, կանայք, բա՛հ՝ ձեզ մոտ եմ բերել նրան, ով ծաղրում էր ինձ ու իմ տոնախմբությունները: Պատժեցե՛ք նրան:

Եվ Դիոնիսոսը գետին նետեց իր հոր՝ Զևսի շանթը:

Տեղներից վեր թռան հանգստացող բաքոսուհիները, տեսան Պենթևարին և նետվեցին դեպի եղևնին: Նրանք ուզում էին քարկոծել Պենթևարին, թիրսոսներ նետել նրա վրա, բայց եղևնին շափազանց բարձր էր: Այդ ժամանակ, Ազավեի կոշով, բաքոսուհիները խռովեցին եղևնու շուրջը և ծառն արմատախիլ արեցին: Գետին տապալվեց Պենթևար, իսկ բաքոսուհիները նետվեցին նրա վրա ու պատառ-պատառ արեցին, թեև նա աղերսում էր խնայել իրեն: Պենթևարի մայրը հափշտակեց նրա արնաթաթավ գլուխը և տնկեց իր թիրսոսի վրա: Մուլգարության մեջ նա այնպես էր կարծում, թե դա կորյունի գլուխ է:

Բաքոսուհիները հաղթական երթով մոտեցան Թեբեին: Ցնծալով, Ազավեն ցույց էր տալիս բնակիչներին, թե ի՞նչ որս են խփել առանց աղեղի, ինչ որս են բռնել առանց Կադմոսի աղջկա գործած ցանցերի: Բաքոսուհիները հանդիպեցին Կադմոսին ու Թիրեսիասին, որոնք ժողովում էին Պենթևարի պատառ-պատառ արված մարմնի մասերը և, ողբալով, Թեբե տանում: Սոսկումնաճար եղավ Կադմոսը՝ թռուս գլուխը տնկված տեսնելով Ազավեի թիրսոսի վրա: Ահա թե իր իսկ ձեռքով Ազավեն ի՞նչ զո՛հ է մատուցել Դիոնիսոսին: Ազավեի խելքը գլուխը եկավ. ճանաչեց նա որդու գլուխը ու հասկացավ, թե ի՞նչ շարագործություն է արել:

Բարձր նրկնքում հայտնվեց մեծն Գիոնիսոս աստվածը և գոչեց ի լուր բոլորի.

— Եթե դուք ինձ ավելի վաղ ճանաչեիք իբրև աստված և ամպ-բոլալին Զևսի որդի, ապա երջանիկ կյանք կունենալիք իմ հովանու ներքո:

Թեբեում բոլորը կռահեցին, որ Դիոնիսոսը պատժել է բոլորին, քանի որ նրանք չէին կամեցել նրան իբրև աստված ճանաչել:

ՏԻՐԵՆՅԱՆ ԾՈՎԱՆՆԵՐԸ:

Ետագրված է ըստ հոմերոսյան եփեի և Օվիդիոսի «Կերպարանախոխություններ» պոեմի:

Դիոնիսոսը պատժեց նաև տիրենյան ծովահեններին, բայց ոչ այնքան այն պատճառով, որ իրեն իբրև աստված չէին ճանաչում, որքան ի հատուցումն այն շարիքի, որ նրանք ցանկանում էին հասցընել նրան որպես մի հասարակ մահկանացուի:

Մի անգամ պատանի Դիոնիսոսը կանգնած էր լազուր ծովի ափին: Մովսիսի զեփյուռը զուրգուրանքով խաղում էր նրա թուխ զանգուրների հետ և մեղմորեն տատանում ծիրանի թիկնոցի դարսերը, որ իջնում էր պատանի ասածո բարեկազմ ուսերից:

Մովի մեջ՝ հեռվում մի նավ երևաց, որ արագորեն մոտենում էր ափին. երբ նավի արդեն մոտեցել էր, նավորդները, — նրանք հենց տիրենյան ծովահեններն էին, — ամայի ծովափին տեսան հրաշք պատանուն: Նրանք շուտափույթ ափ ելան, հափշտակեցին Դիոնիսոսին ու տարան իրենց նավը: Ավազակների մտքով չէր էլ անցնում, թե ասածո են գերել: Ցնծում էին ծովահենները, որ այդպեսի որս են ձեռք գցել: Վստա՛ էին, որ շատ ոսկի կվաստակեն, այդքան գեղեցիկ պատանուն ստրկության վաճառելով:

Նավ նստելով, ծովահենները կամեցան ծանր շղթաներով կապտեղ Դիոնիսոսին, բայց շղթաները ցած էին թափվում պատանի ասածո ոտքերի ու ձեռքերի վրայից: Նա նստել ու անխուով ժպիտը գեմբին նայում էր ծովահեններին: Երբ նավավարը տեսավ, որ շղթ-

1 Տիրենյան կամ տիրենյան ծովահեններ, այսինքն՝ էտրուսկյան ծովահեններ: Էտրուսկներ — ժողովուրդ, որ հնում ապրում էր Իտալիայի արևմուտքում, այժմյան Տոսկանայում:

Քանիքը թափվում են պատանու ձևերի վրայից, ահաբեկված սասց ընկերներին.

— Տարաբախտեն՝ ր: Այս ի՞նչ ենք անում: Արդո՞ք աստծուն չէ՞, որ մենք ուզում ենք շղթայակապ անել: Մի տեսք, նախ էլ հազիվ է պահում նրան: Զև՞ան է արդո՞ք սա, արծաթադեղ Ապու՞նը, թե՞ երկրասասան Պոսելդոնը: Ոչ, սա նման չի մահկանացուի: Սա լուսապայծառ Օլիմպոսում ապրող աստվածներից է անշուշտ: Շուտափույթ բա՛ց թողեք նրան, ա՛փ իչեցրեք, ազա՛տ արձակեցեք, քանի ղեռ ուժգին հողմեր առաջ չի բերել, ահեղ փոթորիկ չի բարձրացել ծովում:

Բայց նավապետը շարախնդությամբ պատասխան տվեց իմաստուն նավավարին.

— Ողորմելի: Տեսնո՞ւմ ես, բարեբախտ քամի է փչում: Մեր նավը սուրում է անկըր ծովի ալիքների վրայով: Պատանու մասին մենք հետո հոգ կտանենք: Մենք կնավենք Եգիպտոս կամ Կիպրոս, կամ էլ հիպերբորեոսների հեռավոր երկիրը և այնտեղ կվաճառենք սրան: Թող այս պատանին այնտե՛ղ փնտրի իր ընկերներին ու եղբայրներին: Ո՛չ, աստվածներն են սրան մեզ ուղարկել:

Մովահենները հանգիստ բաց արեցին առագաստները, և նավը բաց ծով դուրս եկավ: Դուրս հրաշք տեղի ունեցավ. նավը ցողվեց անուշաբույր գինով և օդը հաղօցավ նրա քաղցր բուրմուռերով: Մովահենները քար կտրեցին զարմանքից: Բայց ահա առագաստների վրա կանաչին տվեցին խաղողի վազերը՝ ծանր ու լիքը ոգկուզներով. կայմը պարուրվեց կանաչ բաղեղով, ամենուրեք սքանչելի պտուղներ հայտնվեցին, նավեզրի թիակալները ծածկվեցին ծաղկե շղթաներով: Երո այս ամենը տեսան ծովահենները՝ սկսեցին աղերսել իմաստուն նավավարին, որ շուտափույթ ափ հասցնի իրենց: Բայց արդեն ո՛ւշ է: Պատանին առյուծ դարձավ և ահավոր մոնչուկոնով, աչքերը կատաղորեն փայլեցնելով ցատկեց տախտակամած: Նավի միջնամասում հայտնվեց մի թավամազ արջ, որ ահեղորեն բացուխուփ էր անում երախը: Մոսկոմնահար ծովահենները դեպի ղեկը նետվեցին ու խռնվեցին նավավարի շուրջը: Առյուծը մի վիթխարի ոստյունով նետվեց նավապետի վրա ու պատառոտեց նրան: Փրկության հույսը կորցրած՝ ծովահեններն իրար հետևից նետվեցին ծովի ալիքների մեջ, իսկ Դիոնիսոսը նրանց ղեկիները դարձրեց: Նավավարին խնայեց Դիոնիսոսը:

Ընդունեց իր աստվածային կերպարանքը և, սիրալիր ժպտալով, սասց նրան.

— Մի՛ վախեցիր: Ես սիրեցի քեզ: Ես Դիոնիսոսն եմ, ամպրոպային Զևսի և Կադմոսի դստեր՝ Սեմելիի որդին:

ԻԿԱՐԻՈՍ

Պարզեներ էր տալիս Դիոնիսոսն իրեն իբրև աստծո մեծարող մարդկանց: Այդպես նա պարզե տվեց Իկարիոսին Ատտիկայում, երբ սա հյուրընկալ ցնդունելություն ցույց տվեց իրեն: Դիոնիսոսը նրան խաղաղի վազ նվիրեց, և Իկարիոսն առաջինն էր, որ Ատտիկայում խաղող աճեցրեց: Բայց տխուր եղավ Իկարիոսի ճակատագիրը:

Մի անգամ նա գինի տվեց հովիվներին, և սրանք, չիմանալով, թե ինչ բան է հարբելը, կարծեցին, թե Իկարիոսը թունավորել է իրենց: Սպանեցին Իկարիոսին ու գին թաղեցին լեռներում: Իկարիոսի դուստրը՝ էրիզոնեն, երկար փնտրեց հորը: Ի վերջո իր շան՝ Մայրայի օգնությամբ գտավ հոր գերեզմանը: Հուսահատությունից տաբաբախտ էրիզոնեն կախվեց այն ծառից, որի ներքո հայրն էր թաղված: Իկարիոսին, էրիզոնեին ու նրա շանը՝ Մայրային Դիոնիսոսը բարձրացրեց երկինք: Այդ ժամանակից ի վեր վառվում են նրանք մութ երկնակամարի վրա, պարզկա գիշերներին, իբրև Երեքամի, Կույսի և Մեծ Շան համաստեղությունների:

ՄԻԴԱՍ

Շարաղաված է բոս Օվիդիոսի «Երգասանափոխություններ» պոեմի:

Մի անգամ ուրախ Դիոնիսոսը մենադների ու սատիրների աղմկալի բազմության հետ թնփառում էր Փոչուգիայում¹, Տմոլոսի անտառապատ ժայռերում: Միայն Միլենոսն էր, որ նրա հետ չէր: Նա ետ ընկավ և, ամեն քայլափոխին սայթաքելով, թունդ հարբած, շրջում էր փոշուղիական դաշտերում: Տեսան նրան գյուղացիք, բռնեցին ու կապտեցին ծաղկահյուս շղթաներով, և տարան Միդաս արքայի մոտ: Միդասն իսկույն ճանաչեց Դիոնիսոսի

¹ Երկիր Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում:

ուսուցչին, պատվով ընդունեց իր պալատում և ինը օր մեծարեց ճոխ խնջույքներով: Տասներորդ օրը Միլենոսին Միդասն ինքը տարավ Դիոնիսոս աստծո մոտ: Շատ ուրախացավ Դիոնիսոսը Միլենոսին տեսնելով և թույլ տվեց, որ Միդասը, իր ուսուցչին մատուցած պատվի համար, ընտրի իր կամեցած շնորհը: Եվ Միդասը գոչեց.

— Օ՛, մեծ աստված Դիոնիսոս, հրամայիր, որ մաքուր, շող-շողուն ոսկի դառնա այն ամենը, ինչին որ ես դիպչեմ:

Դիոնիսոսն ի կատար ածեց Միդասի իրազեկը. նա ափսոսաց միայն, որ Միդասն իր համար ավելի լավ շնորհ չընտրեց:

Հեռացավ Միդասը ցնծալով: Ուրախանալով իր ստացած շնորհի համար, նա մի կանաչ ճյուղ է պոկում կաղնուց. ոսկեղեն է դառնում ճյուղը նրա ձեռքին: Հասկեր է պոկում դաշտում՝ ոսկեղեն են դառնում հասկերը, ոսկի են դառնում նաև ցորենի հատիկները: Խնձոր է պոկում՝ օտի է դառնում խնձորը, Հեսպերիդների այգիների խնձորի պես: Այն ամենը, ինչին որ հպվում է Միդասը՝ իսկույն ոսկի է դառնում: Չեղբերը լվանալիս՝ շուրջ ձեռքերից թափվում էր իբրև ոսկեղեն կաթիլներ: Ցնծում է Միդասը: Ահա նա իր պալատը եկավ: Սպասավորները նրա համար խնջույքի շքեղ սեղան են դրել, ահա և երջանիկ Միդասը թեք ընկավ՝ բազմոցին: Այստեղ է, որ նա կռահեց, թե ինքն ի՞նչ ահալոր շնորհ է խնդրել Դիոնիսոսից. Միդասի հպումից ամեն ինչ իսկույն ոսկի է դառնում. քերանի մեջ ոսկի էր դառնում և՛ հացը, և՛ գինին, և՛ խորտիկները: Ու հասկացավ Միդասը, որ իրեն սովամահություն է վիճակված: Չեղբերը վեր կարկանոց ու գոչեց.

— Ի՞թա՛, գթա՛ ինձ, ո՞վ Դիոնիսոս: Ների՛ր: Ներումն եմ աղերսում: Ե՛տ առ այս շնորհը:

Դիոնիսոսը հայտնվեց ու այսպես առաց Միդասին.

— Գնա Պակտոլոսի՞ ափունքները, նրա ջրերում մարմնիդ վրայից լվա այդ շնորհը և քո մեղքը:

Դիոնիսոսի հրամանով Միդասը գնաց Պակտոլոսի ափունքները, ընկզմվեց նրա վճիռ ջրերի մեջ: Պակտոլոսի ոսկեղեթ դարձած ջրերը Միդասի մարմնի վրայից լվացին Դիոնիսոսի տված շնորհը: Այդ ժամանակից է, որ ոսկերեր է դարձել Պակտոլոսը:

1 Այդ գիրքով էին ուտում հին հույները (Մ. Ք.):

2 Գետ Լիդիայում. թափվում է Հերմոս (այժմյան Գեղիս) գետը:

Դիոնիսոսի շքախմբի մեջ հաճախ կարելի է տեսնել նաև Պանն աստծուն: Երբ ծնվեց մեծն Պանը, մայրը՝ Դրիոպե հավերժահարմը, որդուն տեսնելուն պես փախուստի դիմեց: Պանը ծնվել էր այժի ոտքերով ու եղջյուրներով և երկար մորթուքով: Բայց նրա հայրը՝ Հեբեսը, ուրախ էր որդու ծնունդով. բունեց որդու ձեռքից ու լուսապայծառ Օլիմպոս՝ աստվածների մոտ տարավ: Բոլոր աստվածները աղմկալի հրճվանքով ընդունեցին Պանի ծնունդը. ծիծաղում էին նրան նայելիս:

Պան աստվածը շննաց Օլիմպոսում՝ աստվածների հետ ապրելու: Նա գնաց սաղարթախիտ անտառներն ու լեռները: Այնտեղ հովվություն է անում, նվագում իր հնչեղ սրինգը: Պանի սրինգի հրաշալի ձայնը լսելիլն պես հավերժահարսները շտապում են նրա մոտ, շրջապատում նրան, և, շատ շանցած, ուրախ խմբապարք, Պանի սրինգի նվագակցությամբ, օտուտ է կանաչապատ հովիտով: Պանն էլ է սիրում մասնակից լինել հավերժահարսների խմբապարթին: Ու երբ ցնծում է Պանը, խնդուլթյան ժխորը բռնում է լեռնալանջերին ընկած անտառը: Ուրախ-ուրախ պարում են ու ցատկոտում հավերժահարսներն ու սատիրները՝ աղմկասեր այժուտ Պանի հետ միասին: Իսկ երբ վրա է հասնում կեսօրվա սառը, Պանը հեռանում է անտառի կուսական թավուտները կամ զոհալուծ աենավը՝ այնտեղ հանգիստ առնելու: Այդ ժամին վտանգավոր է նրա անդաբրը խախտելը: Պոռթկացող խանութվածքի տեր է Պանը. ցածան մեջ նա կարող է ծանր ու տանջալից երազ առաքել, կարող է և անուպասելի հայտնվելով՝ վախեցնել իրեն անհանգիստ անող ճամփորդին: Ի վերջո, կարող է պանական՝ վախ

1 Պան աստվածը, թեև Հունաստանի հնագույն աստվածներից է, փոքր նշանակություն է ունեցել հունական դարաշրջանում և ավելի ուշ ժամանակաշրջանում՝ ընդհուպ մինչև II դարը (ն. թ. ա.): Հենց այն, որ Պանը պատկերվել է իբրև կիտվ լափ այծ (որ տոռնիլիսի մնացուկ է), վկայում է այս աստծու ճանրուքը: Մկրտում Պանը անտառի աստված է եղել, հովիվների աստվածը, համարի ու նախիրների պահապանը: Մինչև անգամ Արիստոփանոսն ու Արգոսում (որ Պան աստվածն ավելի մեծ համարում ուներ) նրան օլիմպոսի աստվածների շարքը չէին դասում: Աստիճանաբար Պան աստվածը կորցնում է իր սիդրական բնույթը և դառնում անշողջ բնության հովանավոր աստվածը:

2 Այստեղից էլ՝ ռուսերեն панический страх, паника, паникер արտահայտությունները (Մ. Ք.):

առաջացնել, այնպիսի մի սոսկում, որ մարդ զլիսապատառ փախուստի դիմի ճանապարհը կորցրած, անտառներով ու լեռներով, անգունդների եղբերով՝ առանց կռահելու, որ փախուստի ամեն մի պահը կործանում է սպառնում:

Պատահել է, որ Պանը ամբողջ զորաբանակի է այգպիսի վախ ներշնչել և անզուսպ փախուստի մատնել: Զպիտի զրզռել Պանին, ահեղ է նա զայրույթի պոռթկման ժամին: Բայց եթե Պանը չի զայրանում, ապա սիրալիր է ու բարեհոգի: Նա շատ բարիքներ է անում հովիվներին: Հույների հոտերն ու նախիրները պահպանում և գուրգուրում է մեծն Պանը՝ մոլեգին մենագների պարերի ուրախ մասնակիցը, զինու աստված Դիոնիսոսի գրեթե մշտական ուղեկիցը:

ՊԱՆ ԵՎ ՍԻՐԻՆՊՍ

Մեծն Պանն էլ շխուսափեց ոսկեթև էրոսի նետերից: Սիրեց Պանը չքնաղ հավերժահարս Սիրինգսին: Բարձրամիտ էր հավերժահարսը և մերժում էր բոլորի սերը: Ինչպես կետոյի դատեր՝ մեծն Արտեմիսի, Սիրինգսի համար ևս որսը սիրելի զբաղմունք էր: Հաճախ Սիրինգսին մինչև իսկ շփոթում էին Արտեմիսի հետ. այդքան գեղեցիկ էր գեռատի հավերժահարսը՝ իր կարճ ղգեստով, ուսը զցած կապարճով, ձեռքին բռնած աղեղով: Ինչպես ջրի երկու կաթիլ, նա նման էր Արտեմիսին. միայն թե սրա աղեղը եղջյուրից էր և ոչ թե ոսկուց, ինչպես մեծ աստվածուհունը:

Պանը մի անգամ տեսավ Սիրինգսին և կամեցավ մոտ գնալ նրան: Նայեց հավերժահարսը Պանին ու ահաբեկված փախուստի դիմեց: Պանը, որ ուզում էր մոտենալ նրան, հազիվ էր հասնում հետևից: Բայց ահա վազող հավերժահարսի ճանապարհը կտրում է մի գետ: Ո՞ր պիտի փախչի նա: Զեռքերը դեպի գետն է մեկնել Սիրինգսը և փրկություն է աղերսում գետի աստծուց: Գետի աստվածը լսեց հավերժահարսի աղերսանքը և նրան եղեգն դարձրեց: Մոտ վազեց Պանը և արդեն ուզում էր գրկել Սիրինգսին, բայց լոկ ճկուն, մեղմորեն սոսափող եղեգնը գրկեց: Կանգնած մնաց Պանը՝ տրտմաթախիժ հառաչելով: Եղեգնի նրբին սոսափյունի մեջ նա չքնաղ հավերժահարսի հրաժեշտի ողջույնն էր լսում: Մի քանի եղեգն կտրեց Պանը և զրանցից մի քաղցրահնչուն սրինգ սարքեց և եղեգնի անհավասար հանգուցակապերն ամբացրեց մեղրամոմով:

Հավերժահարսի հիշատակին, Պանը սիրինգսի կոչեց իր հնարած գործիքը: Այդ ժամանակից ի վեր մեծն Պանը սիրում է անտառի մենության մեջ նվազել իր սրինգ-սիրինգսը՝ շրջակա լեռները լցնելով նրա քնքուչ հնչյուններով:

ՊԱՆԻ ԵՎ ԱՊՈՒՈՆԻ ՄՐՅՈՒԹՅՈՒՆԸ

Հպարտանում էր Պանը իր նվազով: Մի անգամ նա մրցման հրավերեց մինչև իսկ Ապոլոնին: Դա պատահեց Տմուրսի լեռնալանջերին: Դատավորն այդ լեռան աստվածն էր: Միրանի թիկնոցով, ոսկեղեն կիթառը ձեռքին, դափնեպսակով զարդարված՝ Ապոլոնը մրցության եկավ: Պանն առաջինը սկսեց նվագել: Հնչեց նրա հովիվական սրինգի պարզունակ ձայնը, քնքրորեն տարածվեց Տմուրսի լանջերով: Ավարտեց Պանը: Երբ մարեց նրա սրինգի արձագանքը, զարկեց Ապոլոնն իր կիթառի ոսկեղեն լարերին: Հորդացին աստվածային երաժշտության վսեմ հնչյունները: Շուրջը կանգնած ամենայն ոք հմայվածի պես ունկնդրում էր Ապոլոնին: Հաղթարար թեղում էին կիթառի ոսկեղեն լարերը, բովանդակ բնությունը քար էր կտրել և լուսիյան մեջ, իրրև լայնատարած ալիք, հորդում էր հրաշք գեղեցկության մր հագեցած մեղեդին: Ավարտեց Ապոլոնը: Մարեցին նրա կիթառի վերջին հնչյունները: Տմուրս լեռան աստվածը հաղթանակը Ապոլոնին շնորհեց: Բոլորը փառաբանում էին մեծն կիթառահար աստծուն: Միայն Միդասն էր, որ չէր պանջանում Ապոլոնի երաժշտությանը և Պանի պարզունակ նվագն էր զովաբանում: Մեծապես զայրացավ Ապոլոնը. բռնեց ու քաշեց երկարացրեց Միդասի ականջները: Այդ ժամանակից ի վեր Միդասն ավանակի ականջներ ունի, որոնք նա ջանասիրաբար թաքցնում է իր ահագին տյուրբանի² տակ: Իսկ վշտահար Պանը, պարտություն կրելով Ապոլոնից, ավելի խորացավ անտառների թավուտներում. այնտեղ հաճախ լսվում է նրա սրինգի տրտմալից ու քնքուչ հնչյունները, և նրան սիրով են ունկնդրում գեռատի հավերժահարսները:

¹ Հայերեն՝ սրինգ (Մ. Թ.):

² Տյուրբան — գլխի փաթաթան, շավմա:

Հ Ե Ր Ո Ս Ն Ե Ր

ՀԻՆԳ ԴԱՐ՝

Շարադրված է ըստ Հեսիդոսի «Աշխատանքներ և օրեր» պոեմի:

Լուսապայծառ Օլիմպոսում ապրող անմահ աստվածները մարդկային առաջին ցեղը երջանիկ ստեղծեցին. դա ոսկեդարն էր: Այն ժամանակ Քրոնոս աստվածն էր տիրում երկնքում: Մարդիկ այն ժամանակ ապրում էին իբրև երանելի աստվածների՝ չիմանալով, թե ի՛նչ է հողաբ, ի՛նչ է աշխատանքն ու վիշտը: Զգիտեին նաև, թե ի՛նչ բան է ուժահատ ծերութիւնը. մշտապես ուժեղ էին ու ամուր նրանց ձեռքերն ու ոտքերը: Նրանց անվիշտ ու երջանիկ կյանքը մի հավերժական խրախճանք էր: Նրանց երկարատև կյանքին հաջորդող մահը նման էր հանգիստ ու մեղմ երազի: Ամեն ինչ լիառատ էր նրանց կյանքում: Հողն ինքը նրանց հարուստ բերք էր տալիս, և նրանց չէր վիճակված աշխատանք թափել դաշտերի՝ ու այգիների մշակման համար: Թաղում հոտեր ու նախիրներ ունեին, որոնք անխռով արածում էին արգավանդ արոտավայրերում: Անդորր կյանք էին վարում ոսկեդարի մարդիկ: Աստվածներն

1 Բանաստեղծ Հեսիդոսը պատմում է, թե իր ժամանակակից հույներն ինչ հայացքներ ունեին մարդու ծագման ու դարերի հաջորդականության մասին: Հնում ամեն բան ավելի լավ էր, բայց ամեն ինչ երկրի վրա աստիճանաբար վատացավ, և կյանքն ամենից ավելի վատթար է դարձել Հեսիդոսի ժամանակ: Դա հասկանալի էր Հեսիդոսի՝ գյուղացիության, մանր հողատերերի ներկայացուցչի համար: Հեսիդոսի ժամանակ ավելի ու ավելի էին խորանում դասակարգային շերտավորումները և ուժեղանում լքավորության շահագործումը ունեւորների կողմից. զրա համար էլ ընչազուրկ գյուղացիությունն իրոք որ վատ էր ապրում հարուստ, խոշոր հողատերերի ճնշման տակ, հողատերեր, որոնց դաշտերը մշակվում էին ստրուկների և հարստահարվող գյուղացիների օգնությամբ: Իհարկե, Հեսիդոսից հետո էլ Հունաստանում ընչազուրկ գյուղացիության կյանքը լքարելավվեց, առաջվա պես ունեւորները հարստահարում էին նրան:

անգամ նրանց հետ խորհրդի էին նստում: Բայց ոսկեդարը հասավ իր վախճանին, և այդ սերնդի մարդկանցից ոչ ոք չմնաց: Մահվանից հետո սոկեդարի մարդիկ դարձան ոգիներ, զաւիթ նորանոր սերունդների հովանավորներ: Մշուշով պարուրված՝ նրանց ստրում են երկրով մեկ՝ սատար կանգնելով արդարութիւնը և պատժելով շարք: Նրանց, մահվանից հետո, այդ պարզեղ շնորհն էր Զևսը:

Մարդկային երկրորդ ցեղը և երկրորդ դարն արդեն այնքան երջանիկ չէին, որքան առաջինը: Դա արծաթի դարն էր: Արծաթի դարի մարդիկ հավասար չէին ոսկեդարի մարդկանց՝ ո՛չ ուժով, ո՛չ էլ բանականությամբ: Հարյուր տարի ապրում էին նրանք իրենց մայրից՝ ամեն իբրև անխելամիտներ և առնանալուն պես լքում էին մայրական տունը: Կարճ էր տևում նրանց կյանքը հասուն ստրկցում և, բանի որ անխելամիտ էին, ապա իրենց կյանքում բազում անխորտակելիներ ու վիշտ էին տեսնում: Անհնազանդ էին արծաթի դարի մարդիկ. չէին ենթարկվում անմահ աստվածներին և չէին ուզում նրանց զոհեր մատուցել զոհասեղանների վրա: Քրոնոսի մեծ որդին՝ Զևսը, բնաշինչ արեց նրանց ցեղը երկրի երեսից: Ահեղորեն զայրացել էր Զևսը, որ նրանք չէին ուզում Շաղանգվել լուսակերտ Օլիմպոսի պստվածներին: Զևսը նրանց բնակեցրեց ստորերկրյա խավարշտին թագավորության մեջ: Այնտեղ էլ ապրում են նրանք՝ անհաղորդ և՛ ուրախութիւնը, և՛ վշտին. մարդիկ նրանց էլ են պատիվներ մատուցում:

Շուրջ մեկ ստեղծեց երրորդ ցեղը և երրորդ՝ պղնձի դարը: Սա նման չէր արծաթի դարին: Նիզակի կոթունից Զևսն ստեղծեց ահալի ու զրոյն մարդիկ: Պղնձի դարի մարդիկ սիրեցին գոռոզուխուր, սիրեցին հեծեծանքներով լեցուն պատերազմները: Հողապարտության շփոթին ու չէին էլ ուտում երկրի պտուղները, որոնք աչքին ու հոգն էր տալիս: Զևսը նրանց վիթխարի հասակ ու անընկճելի ուժ տվեց: Անզուսպ էր ու առնական նրանց սիրտը, և անպարտելի էին նրանց բազուկները: Նրանց զենքը պղնձից էր կոթված. պղնձակոփ էին և նրանց տները, և աշխատանքի գործիքները: Այն ժամանակներում չգիտեին, թե ինչ բան է սև երկաթը: Սևփական ձեռքերով էին միմյանց ոչնչացնում պղնձի դարի մարդիկ: Նրանք շատ շուտով անցան սոսկումնալի Հագեսի մթին ֆուրկալորությունը: Ինչքան էլ որ ուժեղ լինեին նրանք, միևնույն է,

սե մաճը հափշտակեց նրանց. և հրաժեշտ տվին նրանք արևի պայծառ լույսին:

Այդ ցեղը ստվերների աշխարհն անցնելուց հետո է միայն, որ մեծն Զևսը, ամենքին սնուցող երկրի վրա, իսկույն ստեղծեց շորբորդ գաղթը և մարդկային նոր ցեղը՝ առավել ազնիվ ու արդարամիտ, աստվածներին հավասար կիսաստված հերոսների ցեղը: Եվ նրանք բոլորն էլ կորստյան մատնվեցին շարամիտ կոիվներում ու արյունահեղ ահավոր ճակատամարտերում: Ոմանք զոհ գնացին յոթնադուռն Փեբեի մոտ, Կադմոսի երկրում, էդիպի ժառանգութեան համար մարտնչելիս: Մյուսներն ընկան Տրոյայի տակ, ուր գնացել էին, լայնատարած ծովը կտրելով, գեղագանգուր Հեղինեի համար: Երբ մաճը նրանց բոլորին հափշտակեց, ամպրոպային Զևսը նրանց բնակեցրեց երկրի ծայրին՝ կենդանի մարդկանցից հեռու: Օվկիանոսի մրրկածուփ ջրերի մոտ, երանելի կղզիներում ապրում են կիսաստված հերոսները երջանիկ ու անտրտում կյանքով: Այնտեղ արգավանդ հողը տարեկան երեք անգամ նրանց պտուղ է տալիս, քաղցրահամ, ինչպես մեղրը:

Վերջին՝ հինգերորդ դարն ու մարդկային ցեղը երկաթի դարն է, որ հիմա էլ շարունակվում է երկրի վրա: Գիշեր-ցերեկ, անդադրում, մարդկանց կորստյան են մատնում վիշտն ու հյուծող աշխատանքը: Աստվածները մարդկանց ծանրածանր հոգսեր են տալիս: Իրավ է, նրանք չարիքին բարիք էլ են խառնում, բայց և այնպես չարիքն առավել է, նա՛ է իշխում ամենուրեք: Զավակները պատիվ չեն տալիս ծնողներին, ընկերը հավատարիմ չէ ընկերոջը, հյուրը հյուրընկալութուն չի գտնում, սեր չկա եղբայրների միջև: Մարդիկ դժուր են իրենց երգումը, չեն գնահատում ճշմարիտն ու բարին: Մարդիկ ավերում են միմյանց քաղաքները: Ամենուրեք բռնութուն է տիրում: Հենց միայն գոռոզութունն է գնահատվում ու մեկ էլ բռնի ուժը: Խիղճ ու Արդարագատութուն աստվածուհիները լքել են մարդկանց: Ծերմակազգեստ այդ աստվածուհիները ճախրեցին բարձրագահ Օլիմպոս՝ անմահ աստվածների մոտ, իսկ մարդկանց բաժին ընկան միայն հոգեմաշ դժբախտութունները, և նրանք պաշտպանութուն չունեն ընդդեմ չարիքի:

ԳԵՎԿԱՆԻՈՆ ԵՎ ՊԻՐՐԱ (ՋՐՀԵՂԵՂ):

Բազում շարագործութուններ կատարեցին պղնձի դարի մարդիկ: Նենգամիտ ու անազնիվ՝ նրանք չէին հնազանդվում օլիմպացի աստվածներին: Ամպրոպային Զևսը մեծապես զայրացավ նրանց վրա: Զևսին առավել զայրացրեց Արկադիայի² Լիբոսուրա քաղաքի Լիբաոն արքան: Որպեսզի բնակիչներն իմանան իր աստված լինելը, Զևսը նրանց կանխանշան տվեց, և բոլոր բնակիչները գետնատարած փովեցին նրա առաջ և փառաբանեցին իբրև աստծու: Միմիայն Լիբաոնն էր, որ չէր կամենում Զևսին աստվածային պատիվներ մատուցել և ծաղրում էր բոլոր նրանց, ովքեր մեծարում էին Զևսին: Լիբաոնը վճռել էր փորձել, թե արդյո՞ք աստված է Զևսը: Նա պաննց իր պալատում եղած պատանդին, մարմնի մի մասը նվնց, մյուսը տապակեց և իբրև ուտեստ մատուցեց մեծն շանթարձակին: Ահեղորեն զայրացավ Զևսը: Ծանթի մի հարվածով քարուքանդ արեց Լիբաոնի պալատը, իսկ արքային արյունոտ զայլ գարձեց:

Գնալով ավելի պիղծ էին դառնում մարդիկ, և մեծն ամպահալած ու էգիսակի³ Զևսը վճռեց բնաջինջ անել մարդկային ողջ ցեղը: Նա վճռեց այնպիսի ուժգին ու հորդաուտ անձրև տեղալ, որ հեղեղի մեծնայն ինչ երկրի վրա. Զևսն արգելեց փչել բոլոր քամիներին, և միայն հարավային խոնավ Նոտոսն էր երկնքով քշում անձրևաբեր մթին ամպերը: Տեղատարափ անձրևը հորդաց երկրի վրա: Մովելի ու զետեթի ջրերն ավելի ու ավելի էին բարձրանում՝ շրջապատելով ամեն ինչ: Զրի տակ ընկղմվեցին քաղաքներն իրենց պարիսպներով, տներով ու տաճարներով, չէին նշմարվում անգամ քաղաքային պարիսպների վրա խոյացած աշտարակները: Աստիճանաբար ջուրը ծածկեց ամեն ինչ. և՛ անտառապատ բլուրները, և՛ բարձրաբերձ լեռները: Բովանդակ Հունաստանը ընկղմվեց ծովի մրրկածուփ ալիքների տակ: Երկկատար Պառնասի

¹ Այդ աստվածն աստված է համաշխարհային ջրհեղեղի և այն մասին, թե Գեկալոն ինչպես է կոչ հետ փրկվել վիթխարի արկղի մեջ: Ջրհեղեղի աստվածը գոյութուն է ունեցել նաև հին Բաբելոնում, դա Ուտնապիշտամի առասպելն է, որ փոխ են առել նաև հին հրեաները: Վերջիններիս մոտ դա աստվածաձևի աստված է համաշխարհային ջրհեղեղի և Նոյի մասին:

² Մալը Գելոպոնեսի կենտրոնում:

³ Էգիս — Զևսի սոսկալի և անխորտակելի վահանը, որ կոչ է Հեփեստոսը: Աստվածների հովանավորության ու ցասման սիմվոլն է (Մ. Թ.):

գազաթն է, որ մեն-մենակ խոյացել է ալիքների միջից: Այնտեղ, ուր առաջ գլուղացին իր արտն էր մշակում և ուր կանաչին էին տալիս հասուն ողկուլզներով հարուստ այգիները, հիմա ձկներն էին լող տալիս, իսկ շրջապատ անտառներում զելփինների վտառն էր խայտում:

Եվ այսպես, կործանվեց պղնձի դարի մարդկային ցեղը: Միայն երկուսը փրկվեցին այդ համընդհանուր կործանումից՝ Դեկալիոնը՝ Պրոմեթևսի որդին և նրա կինը՝ Պիրրան: Հոր՝ Պրոմեթևսի խորհրդով, Դեկալիոնը մի վիթխարի արկղ պատրաստեց, ուտեստեղենի պաշար դրեց այնտեղ ու իր կնոջ հետ մեջը մտավ: Ինքն օր ու գիշեր Դեկալիոնի արկղը տարուբերվում էր բովանդակ ցամաքը պատած ծովի ալիքների վրա: Ի վերջո, ալիքները արկղը բռնեցին դեպի Պառնասի երկկատար գագաթը: Զևսի պատուհասը՝ հեղեղը, դադար առավ: Դեկալիոնն ու Պիրրան դուրս եկան արկղի միջից և երախտագիտության դոհ մատուցեցին Զևսին, որ պահպանել էր նրանց մորկածուի ալիքների մեջ: Զուրը ետ բաշվեց, և ալիքների տակից կրկին երևաց երկիրը՝ անապատի պես ամայի:

Եվ այդ ժամանակ վահանակիր Զևսը Դեկալիոնի մոտ առաքեց աստվածների բանբեր Հերմեսին: Սրաթոխչ սուրաց աստվածների բանբերը ամայացած երկրի վրայով, հայտնվեց Դեկալիոնի առաջ ու այսպես ասաց.

— Աստվածների ու մարդկանց տիրակալ Զևսը, գիտենալով թո բարեպաշտությունը, հրաման արձակեց, որ դու պարզե ընտրես թե՞ համար, ասա՝ ցանկությունդ, և ի կատար կածի Քրոնոսի որդին:

Դեկալիոնն այսպես պատասխան տվեց Հերմեսին.

— Օ՛, մեծն Հերմես, լոկ մի բան եմ աղերսում Զևսին. թող երկիրը կրկին բնակեցնի մարդկանցով:

Արագոտն Հերմեսը նորից սուրաց լուսակերտ Օլիմպոս և հաղորդեց Զևսին Դեկալիոնի աղերսանքը: Մեծն Զևսը հրաման արձակեց, որ Դեկալիոնն ու Պիրրան քարեր հավաքեն և, առանց շուռ գալու, գլխների վրայով դեպի ետ նետեն: Դեկալիոնը կատարեց հզորազոր շանթարձակի կամքը, և նրա նետած քարերից տղամարդիկ ստեղծվեցին, իսկ Պիրրայի նետած քարերից՝ կանաչը:

Եվ այդպես, ջրհեղեղից հետո երկիրը նոր բնակիչներ ունեցավ: Այնտեղ բնակություն հաստատեց մարդկանց նոր՝ քարից առաջ եկած ցեղը:

Քեֆ կամով ժայռն գամված Պրոմեթևսի առասպելը շարադրված է ըստ էսխիլեսի «Պրոմեթևսը շղթայված» ողբերգության:

Մի ամայի ու վայրի տեղ կա երկրի հեռավոր ծայրում, սկյութների երկրում: Դժնատեսիլ ժայռերը իրենց սուր գագաթներով միջնվում են ամպերի մեջ: Շուրջը՝ ոչ մի բուսականություն, մի հասիկ խոտ էլ չկա, ամեն ինչ լերկ է ու մթամած: Ամենուրեք կուտակ-կուտակ են եղել ժայռերից պոկված քարերի գորշ ու վիթխարի զանգվածները: Իր փոփոքաշ ալիքներով ժայռերի ստորոտներին բախվելով՝ ծագն ազնկում է, որոտում և վեր նետում իր դառնալի ջրայտը: Առափնյա ժայռաբեկորները ծովի փրփուրով են պտտանում: Ընտու հեռվում սպիտակին են տալիս թեթև մշուշով պարուրված հովիտայան լեռների ձյունապատ գագաթները: Ամպերը երկնքով ավելի ու ավելի վեր են բարձրանում ու ծածկում արևը: Շուրջուրջը զնալով ավելի մոայլ է դառնում: Անուրախ ու դաժան մի վայր է այդ: Դեռ երբեք մարդկային ոտքը հետք չի թողել այնտեղ:

Հենց այստեղ, երկրի այս հեռավոր ծայրամասը բերեցին Զևսի սպասավորները շղթայակալ տիտան Պրոմեթևսին, որպեսզի անխորտակելի շղթաներով գամեն ժայռի կատարին: Ամպրոպային Քեֆ սևադարձի սպասավորները՝ Ուժն ու Իշխանությունը, բերում են Պրոմեթևսին նրանց վիթխարի մարմինները ասես գրա-

¹ Երկնքը պտտում էր, թե ի՞նչպես գտնան բնակալի պես ամբողջ աշխարհն անուր Քեֆ գտնում է իր գեմ բժրասացող տիտան Պրոմեթևսին: Հզոր սպանը, հովիտով Քեֆ կամքի, Օլիմպոսից փախցրել էր կրակը և տվել մարդկանց: Ես մարդկանց գիտելիքներ էր տվել, հողագործություն, արհեստ, նավաշինություն, կարգը ու գրել էր սովորեցրել: Դրանով Պրոմեթևսը մարդկանց կյանքն ավելի երջանիկ դարձրեց ու սասանեց Զևսի ու նրա օդնականների՝ օլիմպացի աստվածների իշխանությունը: Բայց Պրոմեթևսի զլխավոր մեղսագործությունն այն է, որ ես չի կամենում Զևսին հայտնել, թե նա ումից պիտի ունենա այն գագաթը, որ Քեֆից առավել զորեղ պիտի լինի ու զահրեկեց անի նրան: Պրոմեթևսն ասում է. «Երբեք ասած, ասում եմ ես բոլոր աստվածներին», իսկ Հերմեսին պարզե է դատասխանում. «Բայց իմացիր, որ թո ըստ ճորտության հետ չեմ փոխ իմ տանջանքներն ու վիշտը: Լավ է ժայռն գամված մնալ, քան ժանտ Զևսի հովիտային սարուկը լինելը:— այս խոսքի համար Մարքը Պրոմեթևսի մասին ասում է. «Պրոմեթևսը փրկիստփառական օրացույցի ամենաազնիվ սուրբն է և նախաստեղծ»:

նիտից են կերտված: Նրանց սիրտը գթություն չգիտե, նրանց աչքերին երբեք կարեկցության նշույլ չի փայլել, նրանք գծնադեմ են, ինչպես շորս կողմը խոյացած ժայռերը: Տխրահեմ, գլուխը խոնարհած, գալիս է նրանց հետևից Հեփեստոս աստվածը իր ծանր մուրճը ձեռքին: Նրան վիճակված է սոսկալի մի գործ. իր ձեռքով պիտի ժայռին գամի ընկերոջը՝ Պրոմեթևսին: Ընկերոջ ճակատագրի հանդեպ ունեցած խորունկ վիշտը տանջում է Հեփեստոսին, բայց նա չի հանդգնում ըմբոստանալ իր հոր՝ ամպրոպային Զևսի դեմ: Նա գիտե, թե Զևսը որքան անողորմ է անհնազանդներին պատժելիս:

Ուժն ու Իշխանությունը Պրոմեթևսին բարձրացրին ժայռի գագաթը և հիմա շտապեցնում են Հեփեստոսին, որ գործի անցնի: Նրանց դաժան խոսքերը Հեփեստոսին ստիպում են ավելի դառնորեն տառապել ընկերոջ համար: Գովամությամբ է ձեռքն առնում իր վիթխարի մուրճը, միայն անհրաժեշտությունն է ստիպում նրան հնազանդ մնալ: Բայց Ուժը շտապեցնում է.

— Ետ, շոտ ձեռքդ առ կապանքները: Մուրճի հզոր հարվածներով ժայռին գամի՛ր Պրոմեթևսին: Զուր են վշտանում նրա համար, չէ՞ որ նա Զևսի թշնամին է:

Ուժը Հեփեստոսին սպառնում է Զևսի զայրույթով, եթե նա Պրոմեթևսին այնպես չգամի, որ ոչ ոք չկարողանա նրան ազատ արձակել: Հեփեստոսը անխորտակելի շղթաներով ժայռին է գամում Պրոմեթևսի ձեռքերն ու ոտքերը: Այդ պահին նա որքան էր ատում իր արվեստը, որի միջոցով ընկերոջը ժայռին էր գամում՝ երկարատև տառապանքների դատապարտելով: Զևսի անողորմ սպառնալորները շարունակ հետևում են նրա աշխատանքին.

— Առավել ուժգին հարվածիր մուրճով: Առավել ամո՛ւր պրկիր կապանքները: Չհանդգնե՛ս թուլացնել: Խորամանկ է Պրոմեթևսը, հնարագիտությամբ նա կարող է ելք գտնել և անելանելի գրությունից, — խոսում է Ուժը, — առավել ամո՛ւր գամիր նրան, թող իմանա, թե ի՛նչ ասել է խաբել Զևսին:

— Օ՛, որքան հարմար են գալիս քո անողորմ խոսքերը դաժան կերպարանքիդ, — գոչում է Հեփեստոսը գործի անցնելով:

Ժայռը ցնցվում է մուրճի ուժգին հարվածներից, և երկրով մեկ՝ մի ծայրից մյուսը, տարածվում է հզորազոր հարվածների թնդյունը: Վերջապես, Պրոմեթևսը շղթաված է: Բայց այդ դեռ

բոլորը չէ, դեռ պիտի նրան ժայռին դամել՝ կրծքին մխրճելով ամբակուռ պողպատասեպը: Գանդաղում է Հեփեստոսը:

— Օ՛, Պրոմեթևս, — գոչում է նա, — որքան եմ տանջվում քո տառապանքները տեսնելով:

— Դարձյա՛լ դանդաղում ես, — զայրույթով ասում է Ուժը Հեփեստոսին, — դեռ էլի՛ վշտանում ես Զևսի թշնամու համար: Տե՛ս, որ քեզ չվիճակվի վշտանալ հենց քեզ համար:

Վերջապես ամեն ինչ ավարտվեց: Ամեն բան արված է այնպես, ինչպես հրամայել էր Զևսը: Գամված է տիտանը, իսկ պողպատասեպը մխրճված է նրա կրծքին: Ծաղրելով Պրոմեթևսին, այսպես է ասում Ուժը.

— Գե՛, ա՛հ, այստեղ դու կարող ես ուղածիդ շափ նենդամիս ցինը: Առաջվա պես գոռո՛ղ եղիր: Հիմա՛ մահկանացուների տուր աստվածների շնորհները, որ հափշտակել ես: Տեսնենք, կարո՞ղ կլինեն արդյոք քեզ օգնել քո մահկանացուները: Ստիպված կլինես ինքդ մտահոգվել, թե ի՛նչպես պիտի ազատվես այդ կապանքներից:

Բայց Պրոմեթևսը հպարտ լուրջուն էր պահպանում: Ամբողջ ժամանակ, երբ Հեփեստոսը Պրոմեթևսին գամում էր ժայռին՝ նա ոչ մի բառ չարտասանեց, մինչև իսկ կամացուկ մի հառաչ չարձակեց. ոչնչով չմատնեց իր տառապանքները:

Հեռացան Զևսի սպասավորները՝ Ուժն ու Իշխանությունը: Իսկ նրանց հետևից քնաց նաև վշտահար Հեփեստոսը: Պրոմեթևսը մնաց մեռակ. հիմա նրան կարող էին ականջ դնել ծովը և մեկ էլ մթին ամպերը: Հիմա է միայն, որ դառնակակիծ մի հառաչանք է զուրս թռչում օրտանի խոցված կրծքից, հիմա է միայն, որ նա սկսում է գանգատվել իր շար ճակատագրից: Բարձրաձայն գոչեց Պրոմեթևսը. անասելի տառապանքով ու վշտով էին համակված նրա գանգատները.

— Օ՛, աստվածային եթեր, և դուք, արագասլաց քամիներ, օ՛, գետերի ակունքներ ու ծովային ալիքների անլուին թնդյուններ, օ՛, երկիր՝ ամենքի նախամայր, օ՛, ամենատես արև, որ պտույտ ես տալիս երկրի շուրջը. բուրբի՛դ, բուրբի՛դ ես վկայության եմ կանչում: Տեսե՛ք, թե ի՛նչ եմ կրում ես: Տեսնում եք, թե ի՛նչ անարգանք պիտի կրեմ անհամար տարիներ: Օ՛, վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Հեծե՛մ պիտի տառապանքներից և՛ այժմ, և՛ բազում, բազում պարտ: Թե՛լպե՛ս պիտի վերջ տամ իմ տառապանքներին: Բայց ի՛նչ

Մի աստուծ: Չէ՞ որ ես գիտեի այն ամենը, ինչ պետք է լիներ: Այս տառապանքներն անսպասելի չէ, որ վրա հասան ինձ: Գիտեի ես, որ անխուսափելի է ահնդ ճակատագրի կամքը: Ես պիտի կրե՞մ այս տառապանքները: Բայց հանուն ինչի՞: Հանուն այն մեղքի, որ ես մեծագույն շնորհներ տվեցի մահկանացուներին, հանուն դրան ես պիտի տառապեմ այսպես անտանելի, և անկարող եմ խույս տալ այս տառապանքներից: Ծ՛, վա՛յ ինձ, վա՛յ:

Բայց ահա կամացուկ մի աղմուկ լսվեց, որ ասեռ թևերի թափահարումից էր առաջ եկել: Կարծես թեթև մարմինների թռիչքը տատանեց օդը: Ճերմակահեր Օվկիանոսի հեռո՛ւ-հեռավոր ափերից, ղովաշունչ անձավից, գեփյուռի թեթև շնչով, իրենց երկանվով ժաշուի մոտ սուրացին օվկիանուհիները: Նրանց լսել էին Հեփեստոսի մուրճի հարվածները, նրանց էին հասել նաև Պրոմեթևսի հառաչանքները: Հզորազոր տիտանին ժաշուին զամված տնտնելում պես օվկիանուհիների գեղեցիկ աչքերը ողողվեցին արցունքով: Նա օվկիանուհիների հարագատ բարեկամն էր: Նրա հայրը՝ Յապետոսը, նրանց հոր՝ Օվկիանոսի, եղբայրն էր, իսկ Պրոմեթևսի կինը՝ Հեփեստոսն, օվկիանուհիների քույրն էր: Օվկիանուհիները շրջապատեցին ժաշուը: Խորունկ վիշտ են ապրում նրանց Պրոմեթևսի համար: Բայց Պրոմեթևսի խոսքերը, նրա նզովքները՝ Ջևսի ու օլիմպացի քույր աստվածների հանդեպ՝ երկյուղ են ներշնչում օվկիանուհիներին: Նրանք վախենում են, որ Ջևսն առաջիկ տանջալի կդարձնի տիտանի տառապանքները: Թե ինչու է տիտանին այդպիսի պատիժ վիճակվել՝ չգիտեն օվկիանուհիները: Կարեկցանքով լեցուն՝ նրանք աղերսում են Պրոմեթևսին հայտնել, թե Ջևսը նրան ինչո՞ւ է պատժել, թե տիտանն ինչո՞վ է շարժել նրա զայրույթը:

Պրոմեթևսը պատմում է, թե ինչպե՞ս է օգնել Ջևսին՝ տիտանների դեմ կովելիս, ինչպե՞ս է համողել մորը՝ Թեմիսին և երկրի մեծ աստվածուհի Գեային, որ նրանք Ջևսի կողմն անցնեն: Պրոմեթևսի խորհրդով է, որ Ջևսը պարտության է մատնել տիտաններին ու նրանց սոսկումնալի Տարտարոսի ընդերքը գլորել: Տիրեց Ջևսը աշխարհի իշխանությունը և բաժանեց այն օլիմպացի նոր աստվածների միջև, իսկ այն տիտաններին, ովքեր օգնել էին իրեն, շանթարձակն իշխանություն շտվեց աշխարհի վրա: Ատում է Ջևսը տիտաններին, երկյուղ է կրում նրանց ահեղ ուժից: Չվստահեց Ջևսը նաև Պրոմեթևսին ու ատեց նրան: Առավել ուժգին բորբոքվեց Ջևսի ասելությունը, երբ Պրոմեթևսն սկսեց պաշտպան

կանգնել տարաբախտ մահկանացուներին, որոնք ապրում էին գեռևս այն ժամանակ, երբ աշխարհին տիրում էր Բրոնոսը, և որոնց Ջևսն ուզում էր կորստյան մատնել:

Բայց Պրոմեթևսը զթաց դեռևս անխելամիտ մարդկանց: Նա չէր ուզում, որ նրանք այդպես տարաբախտ էլ իջնեն Հադեսի խավարամած թագավորությունը: Եվ մարդկանց ներշնչեց հույսը, որից մինչ այդ անտեղյակ էին, և նրանց համար փախցրեց աստվածային կրակը, թեև քաշ գիտեր, թե ի՞նչ պատիժ պիտի կրի դրա համար: Սոսկումնալի պատժի երկյուղը հպարտ ու հզոր տիտանին ետ շղահեց մարդկանց օգնելու ցանկությունից: Չկասեցրին նաև իր գուշակուհի մոր՝ մեծն Թեմիսի, կանխազուշացումները:

Սարտուով էին ունկնդրում օվկիանուհիները Պրոմեթևսի պատմությունը: Բայց ահա արագաթև երկանվով դեպի ժայռ սուրաց պատգամախոս ծերունի Օվկիանոսը: Օվկիանոսը ջանում է համոզել Պրոմեթևսին հնազանդ մնալ Ջևսի իշխանությունը: Չէ՞ որ նա պիտի իմանա, որ զուր է ահեղի տիտանին հաղթողի հետ պայքարելը: Օվկիանոսը կարեկցում է Պրոմեթևսին, տանջվում է, ակնհասեա լինելով նրա կրած տառապանքներին: Պատգամախոս ծերունին պատրաստ է լուսակերտ Օլիմպոս գնալ տիտանի համար ներումն աղերսելու, թեև այդ աղերսանքով իսկ կարող է շանթարձակի զայրույթն իր վրա հրավիրել: Նա հավատում է, որ պաշտպանության իմաստուն խոսքը հաճախ մեղմում է զայրույթը: Բայց զուր են Օվկիանոսի աղերսանքները: Հպարտ պատասխան է տալիս Պրոմեթևսը:

— Մ՛չ, ինքզ ջեզ փրկելու ջանա: Վախենում եմ, որ կարեկցանքդ ջեզ վնաս բերի: Ես մինչև մրուրը կսպանեմ իմ ճակատապի բուր շարիքները: Իսկ դու, Օվկիանոս, երկյուղ կրիր, որ լարժես Ջևսի զայրույթը իմ օգտին աղերսելու համար:

— Ծ՛, տեսնում եմ ես,— տրտմաթախիժ պատասխան է տալիս Օվկիանոսը,— որ քո այդ խոսքերով դու ինձ ստիպում ես ետ գտնալ՝ ոչինչի չհասած: Հավատա ինձ, օ՛, Պրոմեթևս, որ ինձ այսուհե բերողը քո ճակատագրի հոգսն է եղել և սերս քո հանդեպ:

— Ո՛չ, հեռացի՛ր, շուտ, շո՛ւտ հեռացի՛ր այստեղից: Թո՛ղ ինձ,— բացականչում է Պրոմեթևսը:

Խորունկ ցավը սրտում լքեց Օվկիանոսը Պրոմեթևսին: Նա պաշտով իր թևավոր երկանվով, իսկ Պրոմեթևսը շարունակեց օվկիանուհիներին պատմել, թե ինչե՞ր է արել մարդկանց համար,

ինչպե՛ս է, խախտելով Ձևի կամքը, բարեքնե՛ր մատուցել նրանց: Լեմնոսում՝ Մոսքոս լեռան խորքում, իր ընկերոջ՝ Հեփեսոսի հնոցից հափշտակեց Պրոմեթէոսը կրակը՝ մարդկանց տալու համար: Նա մարդկանց արվեստներ սովորեցրեց, գիտելիքներ տվեց, համբու՛րել սովորեցրեց, գրել ու կարդալ: Մանթասցրեց մետաղներին, սովորեցրեց, թե ինչպե՛ս պիտի երկրի ընդերքից հանել դրանք ու մշակել: Մահահանացուների համար զսպեց վայրենի ցուլը և լուծ դրեց վրան, որպեսզի մարդիկ կարողանան օգտագործել ցուլերի ուժը, մշակեն իրենց դաշտերը: Պրոմեթէոսը ձի լծեց երկանվին և մարդկանց հնազանդ դարձրեց: Իմաստուն տիտանը կառուցեց առաջին նավը, սարքավորեց, վրան բաթանե առաջաստ կապեց, որպեսզի նավը մարդուն սրբնթաց տանի անծայրածիր ծովի վրայով:

Առաջներում մարդիկ չգիտեին, թե ի՛նչ է դեղը, անկարող էին դարմանել հիվանդությունները, նրանց առաջ անպաշտպան էին մարդիկ, բայց Պրոմեթէոսը նրանց ցույց տվեց բուժանյութերի զորությունը և դրանցով նրանք հաղթեցին հիվանդությունները: Տիտանը մարդկանց սովորեցրեց այն ամենը, ինչ թեթևացնում է կյանքի դառնությունները, կյանքն առավել երջանիկ ու հրճվալից է դարձնում: Հենց դրանով էլ նա շարժեց Ձևի զայրույթը, դրա համար էլ շանթարձակը պատժեց տիտանին:

Բայց տիտանը հավերժ չպիտի տառապի: Նա գիտե, որ շարձակատագիրը վրա կհասնի նաև հզորագոր շանթարձակին: Եվ չի խուսափի նա իր ճակատագրից: Գիտե Պրոմեթէոսը, որ Ձևի իշխանությունը հավերժական չէ. կտապալվի նա բարձրագահ արքայական Օլիմպոսից: Պատգամախոս տիտանը գիտե նաև այն մեծ գաղտնիքը, թե Ձևն ինչպես կարող է խուսափել այդ շարձակատագրից, բայց գաղտնիքը չի հայտնում Ձևին: Ոչ մի ուժ, ոչ մի սպառնալիք, ոչ մի տառապանք չի կարող այդ գաղտնիքը կորզել հպարտ Պրոմեթէոսի շուրթերից:

Ավարտեց Պրոմեթէոսն իր պատմությունը, որ զարմանքով լսեցին օվկիանուհիները: Ապշել էին նրանք հզորագոր տիտանի իմաստությունն ու ոգու անխորտակելի կորովի վրա, որ հանդգնել էր ըմբոստանալ ամպրոպային Ձևի դեմ: Կրկին սոսկումը տիրեց նրանց, երբ լսեցին, թե ի՛նչ ճակատագրով է տիտանն սպառնում Ձևին: Գիտեին նրանք, որ եթե այդ սպառնալիքները հասնեն Օլիմպոս, ապա Ձևը ոչնչի առաջ կանգ չի առնի այդ ճակատա-

գրական գաղտնիքն իմանալու համար: Արտասովոր աչերով Պրոմեթէոսն էին նայում օվկիանուհիները՝ ցնցված անողորմ ճակատագրի սահմանաճի անխուսափելիության մտքից: Խորունկ լռություն տիրեց, որ ընդմիջում էր միայն ծովի անլուելի աղմուկը:

Հանկարծ հեռվում աղեկեզ վշտի հաղիվ լսելի, կամացուկ հեծելտանքներ հնչեցին: Ահա դարձյալ հեծեծանքը հասավ ժայռին: Գնալով ավելի մոտիկից ու ավելի բարձր է հնչում հեծեծանքը: Հերայի ուղարկած վիթխարի բոռից հալածվելով, արնաթաթավ ու փրփրաշաղախ, մուկզին ու խելացնոր վազքով սլանում է կոճ գարձած տարաբախտ Իոն՝ գետերի աստված Ինաքոսի, Արգոնթի առաջին արքայի դուստրը: Թափառումներից հոգնատանջ և ուժահաս, խոշտանգված բոռի խայթոցներից, կանգնեց Իոն շքեղազարդ Պրոմեթէոսի առաջ: Բարձրաձայն հեծելտալով, պատմեց, թե իրեն ինչ պատիժ է վիճակվել կրելու: Եվ նա աղերսեց պատգամախոս տիտանին.

— Մ՛, Պրոմեթէոս, այստեղ, իմ թափառումների այս սահմանի վրա, սա ինձ, աղերսում եմ, ե՛րբ պիտի իմ տառապանքներին վերջ լինի, ե՛րբ պիտի, ի վերջո, ես հանգիստ գտնեմ:

— Մ՛, հավատա ինձ, Իո,— պատասխան տվեց Պրոմեթէոսը,— լավ է անգետ մնաս դրան, քան իմանաս: Գեո բազում երկրներ կկարեն-կանցնես դու, բազում սոսկումներ կհանդիպեն քո ճանապարհին: Քո տառապալից ուղին անցնում է սկյութների երկրի միջով, բարձրաբերձ ձյունապատ կովկասով, ամազոնուհիների երկրով գեպի Բոսֆորի նեղուցը, որ այդ անունով կկոչվի քո սպառվին, նոր դու կկարես այն: Այնուհետև, դեռ երկար կթափառես Ասիայում: Գու կանցնես այն երկրի կողքով, ուր ապրում են մահարեք գորգանները: Նրանց զլխներին վարսերի փոխարեն շաշող օձեր են գալարվում: Զգուշացիր նրանցից: Զգուշացիր նաև գրիփներից՝ և միակնանի արիմասպներից¹. նրանց դու կհանդիպես քո ճանապարհին: Ի վերջո, դու կհասնես Բիբլիսյան լեռներին, որոնց վրայից գահավիժում են նեղոսի արգասաբեր ջրերը: Այնտեղ, նեղոս գետի ոռոգած այդ երկրում է, որ դու գետաբերանի մոտ, ի վերջո,

¹ Գրիփներ — արծվի թևերով ու պլիտով և առյուծի մարմնով հրեշներ, որոնք անաչ ծայրագույն հյուսիսում պահպանում էին ոսկերեք հողաշերտերը:

² Արիմասպներ — զիջարանական ժողովուրդ, որ ապրում էր գրիփների հարևանությամբ և նրանց հետ անընդմեջ կռիվ մղում:

Չանգիստ կառնես: Այնտեղ Ձևը քեզ կտա քո նախկին գեղանի կերպարանքը և դու մի գավակ կունենաս՝ էպափոս անունով: Նա կաիրի բովանդակ Նդիպտոսին և Հերոսների մի փառավոր սերնդի նախահայրը կդառնա: Այդ սերնդից կսերի և այն մահկանացուն, որ նաև ինձ կազատագրի կապանքներից: Ահա թե ինչ է, Իո, հաղորդել քո ճակատագրի մասին իմ մայրը՝ զուշակուհի Թեմիսը:

Բարձրաձայն ողբաց Իոն:

— Օ՛, վա՛յ ինձ, վա՛յ: Օ՛, դեռ որքա՛ն տառապանքներ է գոծում ինձ շար ճակատագիրը: Սոսկումից սիրտս տրոփում է կրծքիս տակ: Կրկին տիրում է ինձ ցնորքը, կրկին խոցոց հրակարմիր խայթը իմ խոշտանդված մարմինը, կրկին ես կորցնում եմ խոսելու ձիրքս: Օ՛, վա՛յ ինձ, վա՛յ:

Աչքերը մուգար ոլորելով, կատաղի վազքով Գնուցավ ժայռից Իոն: Ասես հողմահալած՝ նա հնուանքը սլացավ, խլացուցիչ բզզոցով նրա հետևից սուրաց բող և, ասնա կրակով, կիզում էր նրա խայթը տարաբախտ Իոյին: Անհետացավ Իոն փոշու ամպի մեջ Պրոմեթևսի ու օվկիանուհիների հայացքից: Գնալով ավելի ու ավելի ցածր էր հնչում Իոյի ողբահառաչ ձայնը և, ի վերջո, մարեց այն հեռու-հեռվում, վշտի կամացուկ հեծեծանքի նման:

Լուռ էին Պրոմեթևսն ու օվկիանուհիները՝ տրոմելով տարաբախտ Իոյի համար, բայց ահա ցասումնալից գոչեց Պրոմեթևսը.

— Որքան էլ տանջահար անես ինձ, ամպրոպային Ձև, իմացա՛ծ եղիր, որ կգա՛ այն օրը, երբ քեզ էլ առ ոչինչ կդարձնեն: Կզրկվես քո տիրապետությունից ու զահավեժ կլինես խավարի մեջ: Եվ այդժամ ի կատար կածվի քո հոր՝ Քրոնոսի նզովքը: Աստվածներից և ոչ մեկը չգիտե, թե ի՞նչպես կարող ես խուսափել այդ շար ճակատագրից: Ես եմ միայն, որ գիտեմ այդ: Ահա բաղմել ես դու, մեծազորդ, լուսակերտ Օլիմպոսում և շանթ ու որոտ ես արձակում, բայց դրանք էլ սատար չեն լինի քեզ, դրանք անուժ են անխուսափելի ճակատագրի հանդեպ: Օ՛, երբ փոշի կդառնաս, նոր միայն կիմանաս, թե ո՞րն է տիրակալության ու ստրկության տարբերությունը:

Սոսկումից մթնեցին օվկիանուհիների աչքերը, և դժգույն սարսափը սրբեց նրանց սիրունիկ այտերի բուսորը: Ի վերջո, դեպի Պրոմեթևսը կարկառելով ծովափրփուրի պես ճերմակ իրենց ձեռքերը, բացականչեցին նրանք.

— Օ՛, խելակորույս, ինչպե՞ս դու չես սարսափում և այդպես սպառնում ես աստվածների ու մարդկանց արքային: Օ՛, Պրոմեթևս, նա առավել ծանրագին տառապանքներ կտա քեզ: Մտածի՛ր քո ճակատագրի մասին, գթա՛ քեզ:

— Ամեն ինչի պատրաստ եմ ես:

— Բայց չէ՞ որ իմաստունը հնազանդ է լինում անզորվելի ճակատագրին:

— Օ՛, աղերսեցե՛ք, գթու՛թյուն աղերսեցեք դուր: Մնկաչոր սողացեք ահեղ տիրակալի առաջ: Իսկ ե՞ս, ինձ ի՞նչ ամպրոպային Ձևը: Ես նրանից վախենալու ի՞նչ ունեմ: Ինձ մահ էկա՛ս Բող Ձևն անի, ի՞նչ կամենում է: Երկար չի՛ տևի նրա իշխանուգ Բյունն աստվածների վրա: Պրոմեթևսը հաղիվ էր այս խոսքերն արտաբերել, երբ օդի միջով, վայր ընկնող աստղի նման արագ սուրաց աստվածների բանքեր շերմեսը և, ահեղատես, հայտնբ զեց Պրոմեթևսի առաջ: Նրան Ձևն է առաքել՝ պահանջելու, որ տխուհեք բաց անի այն գաղտնիքը, թե ո՞վ պիտի գահընկեց անի Ձևին և ինչպե՞ս կարելի է խուսափել այդ ճակատագրից: Զերմեսը սոսկումնալի պատժով սպառնաց Պրոմեթևսին անհնազանգության համար: Բայց անսասան է զորավոր տիտանը և հեզնախքով պատասխան է տալիս շերմեսին.

— Մտեուկ կլինեիր դու և մանկամիտ, եթե ինձնից թեկուզ և մի որևէ բան իմանալու հույս ունենայիր: Լա՛վ իմացիր, ես իմ տանջանքները չէի փոխի ստրկության հետ. ես գերադասում եմ ժայռին զանձած մեալ, քան լինել Ձևի հավատարիմ ծառան: Զի՞ք աղիարում այնպիսի պատիժ ու տառապանք, որոնցով Ձևը կարող լինեք ահաբեկել ինձ ու իմ շուրթերից կորզել թեկուզ և մի հատիկ բառ: Ո՛չ, նա չի՛ իմանա, թե ինչպես կարող է փրկություն գտնել իր ճակատագրից, երբևէ չի՛ իմանա բռնակալ Ձևը, թե ո՞վ պիտի իրենից խլի իշխանությունը:

— Ուրեմն, լսի՛ր, Պրոմեթև՛ս, թե ի՞նչ կպատահի քեզ, եթե դու հրաժարվես Ձևի կամքը կատարելուց, — տիտանին այսպես պատասխանեց շերմեսը: — Իր շանթի հարվածով նա այս ժայռը քեզ հետ միասին գահավեժ կանի խավարամած անդունդն անհատակ: Այնտեղ, քարակոփ զնդանում՝ զուրկ արևի լույսից, շատ ու շատ դարեր կխոշտանգվես անթափանց խավարում: Դարեր կանցնեն, և Ձևը կրկին քեզ դուրս կբերի անդունդից, բայց ոչ քեզ ազատելու համար: Ամեն օր քեզ մոտ կճախրի Ձևի առա-

քած արծիվը, և սուր-սուր ճանկերով ու կտուցով կծվատի քո
լյարդը: Կրկին ու կրկին կաճի այն, և զնալով առավել սոսկում-
նալի կլինեն քո տառապանքները: Այդպես դու կախված կմնաս
ժալոցից այնքան ժամանակ, քանի դեռ մեկ ուրիշը կամովին հանձն
չի առնի քո փոխարեն իջնել Հաղեսի մթին թագավորությունը:
Մտածիր, Պրոմեթևս, արդյոք ավելի լավ չէ՞ հնազանդվել Զևսին:
Զէ՞ որ դու գիտես, որ Զևսի սպառնալիքները երբեք դուր չեն
անցնում:

Անդրդվելի մնաց հպարտ տիտանը: Կարո՞ղ էր արդյոք
որևէ սպառնալիք երկյուղ պատճառել նրա սրտին: Հանկարծ եր-
կիրը ցնցվեց, ամեն ինչ դողաց շորսրոլորը, լավեցին որոտի
խլացուցիչ դղրդյուններ, և անտանելի մի փայլով շողաց կայծակը:
Կատաղի ու մոլեգին մի սև հողմ բարձրացավ: Մովի մեջ ասես
լեռնակուտակ եղան փրփրաբաշ ալիքները: Ցնցվեց ժալոք: Փո-
թորկի ոռնոցի, որոտի ու երկրաշարժի դղրդյունի միջից լավեց
Պրոմեթևսի ահռելի ազաղակը:

— Օ՛, ի՞նչ հարված է ուղղել իմ դեմ Զևսը, որպեսզի սոս-
կում պատճառի իմ սրտին: Օ՛, մայր իմ մեծարգո Թեմիս, օ՛,
եթեր, որ բուրբին լույս ես տալիս: Տեսե՞ք, թե ի՞նչ անարդար է
պատժում ինձ Զևսը:

Ահեղազդորդ փուլ եկավ ժալոք և, վրան գամված Պրոմե-
թևսի հետ, գահավիժեց անհատակ անդունդը, հավերժական խա-
վարի մեջ¹:

Դարեր անցան, և Զևսը Պրոմեթևսին խավարի միջից կրկին
լույս աշխարհ հանեց: Բայց դրանով Պրոմեթևսի տառապանքնե-
րը չհասան իրենց վախճանին, այլ առավել սոսկումնալի դարձան:
Կրկին նա թևատարած փուվել է ժալոքի վրա՝ կապանքներով կաշ-
կանդված ու ժալոքին գամված: Նրա մարմինն այրում են արևի
կիզիչ ճառագայթները, փոթորիկներ են սուրում վրայով, ուժա-
հատ մարմինը մտրակահարում են անձրևներն ու կարկուտը, իսկ
ձմեռը ձյան փաթիլներն են թափվում Պրոմեթևսի վրա, և սար-
սըռացնող ցուրտը կաշկանդում է նրա մարմնի անդամները:

Եվ այդ ամենը դեռ բավական չէ: Ամեն օր վիթխարի արծի-
վը, իր հզոր թևերով աղմուկով ճեղքելով օդը, սավառնում իջ-
նում է ժալոքի վրա: Կանգնում է Պրոմեթևսի կրծքին և ծվատում

պողպատի պես սուրսայր իր մագիլներով: Արծիվն իր կտուցով
պատառոտում է տիտանի լյարդը: Հեղեղի պես հորդում է արյունը
և բոսոր ներկում ապառաժը: Արյունը սևանում ու լյարդանում
է ժալոքի ստորոտին: Հետո քայքայվում է արևի տակ ու անտա-
նելի մի գարշահոտությամբ վարակում օդը: Ամեն առավոտ ճախ-
րում գալիս է արծիվը և սկսում իր արյունալի խրախճանքը: Գի-
րում գալիս է արծիվը և սկսում իր արյունալի խրախճանքը: Գի-
շերձա մեջ ապաքինվում են վերքերը, և կրկին լցվում է լյարդը՝
ցնրեկը գիշատչին նոր կեր դառնալու համար: Տարիներ, դարեր
են տևում այդ տառապանքները: Ուժասպառ է եղել մեծազոր տի-
տանը, բայց տանջանքները չեն բեկել նրա հպարտ ոգին:

Տխրանքները վաղուց են հաշտվել Զևսի հետ և հնազանդվել
նրա իշխանությանը: Նրանք ընդունում են Զևսի տիրակալու-
թյունը և ամբողջալի են ազատ է արձակել նրանց խավարչտին
Տարտարոսից: Իսկ հիմա՝ վիթխարի ու հզոր, եկել են երկրի
ժալոք, ժալոքի մոտ, որի վրա թևատարած պառկած է շղթայա-
կապ Պրոմեթևսը: Նրանք շրջապատել են ժալոք և Պրոմեթևսին
համոզում են հնազանդ լինել Զևսին: Եկավ նաև Պրոմեթևսի մայ-
րը՝ Թեմիսը, և որդուն աղերսեց նկել իր հպարտ ոգին և չհակա-
ռակվել Զևսին: Խնդրում է որդուն, որ գթա իրեն. չէ՞ որ ինքն
առկվել Զևսին: Խնդրում է որդուն, որ գթա իրեն. չէ՞ որ ինքն
անչոր տանջանքներ է կրում որդու տառապանքները տեսնելով:
Մինչև իսկ Զևսն է մոռացել իր երբեմնի ցասումը: Հիմա առավել
է նրա տիրակալությունը, ոչինչ չի կարող սասանել նրան, սար-
սափելի ոչինչ չկա նրա համար: Եվ հետո, հիմա նա իրև բռնա-
կալ չի տիրում. տերությունն է պաշտպանում, օրենքներ է պահ-
պանում: Նա հովանավորում է մարդկանց ու արդարություն պահ-
պանում նրանց մեջ: Միայն մի բան է անհանգստացնում ամպ-
բոլորային Զևսին, դա այն գաղտնիքն է, որ միմիայն Պրոմեթևսը
գիտե: Զևսը պատրաստ է ներում շնորհել մեծազոր տիտանին,
եթե նա բաց անի ճակատագրական այդ գաղտնիքը: Բայց արդեն
մոտ է Պրոմեթևսի տառապանքների ավարտման ժամը: Արդեն
ծնվել ու առնացել է այն մեծ հերոսը, որին ճակատագրի կողմից
վիճակված է կապանքներից ազատ արձակել տիտանին: Անդրդ-
վելի Պրոմեթևսը առաջվա նման պահում է գաղտնիքը՝ ուժահատ
լինելով տառապանքներից. բայց ուժերն արդեն սկսում են լքել
նրան:

Վերջապես, այն հերոսը, որին վիճակված է ազատագրել
Պրոմեթևսին, իր թափառումների ընթացքում հասնում է այստեղ՝

¹ Սրանով էսթիետի «Պրոմեթևսը շղթայված» ողբերգությունն ավարտվում է:

երկրի ծայրը: Այդ հերոսը Հերակլեսն է՝ ուժեղագույնը մարդկանցից, մեծազոր՝ որպես աստված: Նա սոսկումով է նայում Պրոմեթեոսի տառապանքներին, և կարեկցանքը համակում է նրան:

Պրոմեթեոսը պատմում է նրան իր ժանտ ճակատագրի մասին և գուշակում, թե նրան դեռ ի՞նչ մեծագործություններ են վիճակված անելու: Խորին ուշադրությամբ ունկնդրում է Հերակլեսը տիտանին: Բայց հերոսը Պրոմեթեոսի տառապանքների ամբողջ սարսափին ականատես չի եղել: Հեռվից լսվում է հզոր թևերի բախյունը. դա արծիվն է, որ գալիս է իր արյունալի խրախճանքըն անելու: Նա պտույտներ է գործում բարձր երկնքում, Պրոմեթեոսի զլխավերևը, և ուզում է իջնել նրա կրծքին: Հերակլեսը շթողեց, որ նա խոշտանգի Պրոմեթեոսին: Ձեռքն առավ իր աղեղը, կապարճից մահաբեր մի նետ հանեց, նետածիզ Ապոլոնին կոչեց, որ անվերպ սուրբ իր նետը, և արձակեց արծիվ կրծքին: Բարձրը դրնգաց պրկված աղեղը, երկինք սուրբց նետը, և նետախող-խող արծիվը ընկավ փոթորկուն ծովը՝ գրեթե ժայռի ստորոտի մոտ: Վրա հասավ ազատագրման պահը: Բարձրագահ Օլիմպոսից այդտեղ սուրբց արագտան Հերմեսը: Փաղաքուշ խոսքով դիմեց մեծազոր Պրոմեթեոսին, և անհապաղ ազատություն խոստացավ, եթե բաց անի այն գաղտնիքը, թե Ձևան ինչպես պիտի խուսափի շար ճակատագրից: Համաձայնեց, վերջապես, մեծազոր Պրոմեթեոսը գաղտնիքը բաց անել և այսպես խոսեց.

— Թող շանթարձակը կնության շանի ծովային աստվածուհի Քետիսին, քանի որ ճակատագրի աստվածուհիները՝ իմաստուն մոյրաները, այսպիսի վիճակ են հանել Քետիսի համար. ով էլ որ լինի նրա ամուսինը, միևնույն է, Քետիսը նրանից մի զավակ կունենա, որ հորից էլ զորեղ կլինի: Թող աստվածները Քետիսին կնության տան հերոս Պելևսին: Քետիսն ու Պելևսը մի որդի կունենան, որ Հունաստանի մահականացու հերոսներից վսեմագույնը կլինի:

Պրոմեթեոսը բաց արեց մեծ գաղտնիքը: Հերակլեսն իր ծանրագին գուրզով փշրեց տիտանի կապանքները և կրծքից գուրս հանեց այն անճկելի պողպատասեպը, որով նա գամված էր ժայռին: Ոտքի ելավ տիտանը, այժմ արդեն նա ազատ էր արձակված: Եկավ նրա տառապանքների վախճանը: Այդպես ի կատար ածվեց նրա գուշակությունը, որ մահականացուն պիտի ազատի

իրեն: Բարձրագուշ, ցնծագին աղաղակներով ողջունեցին տիտանները Պրոմեթեոսի ազատագրությունը:

Այդ ժամանակից ի վեր Պրոմեթեոսը ձեռքին երկաթե մատանի է կրում, որի մեջ մի քար է դրված այն ժայռից, որին գամված նա այնքան դարեր անասելի տառապանքներ էր կրել:

Իսկ Պրոմեթեոսի փոխարեն մեռյալների հոգիների ստորերկրային թագավորությունը իջնել համաձայնեց իմաստուն կենտավորոս Քիրոնը: Դրանով նա ազատվեց այն տառապանքից, որ նրան պատճառում էր Հերակլեսի ակամա հասցրած անբուժելի վերքը:

ՊԱՆԴՈՐԱ

Երբ Պրոմեթեոսը մահականացուների համար փախցրեց աստվածային կրակը, նրանց արվեստներ ու արհեստներ սովորեցրեց և դիտելիքներ տվեց, կյանքը երկրի վրա ավելի երջանիկ դարձավ: Ձևար, ահեղորեն զայրացած Պրոմեթեոսի արարքից, դաժանաբար պատժեց նրան, իսկ մարդկանց՝ շարիք առաքեց: Պանժանաբար պատժեց նրան, իսկ մարդկանց՝ շարիք առաքեց: Պանժալի դարբին աստծուն՝ Հեփեստոսին, հրամայեց հողն ու ջուրը խառնել իրար և այդ խառնուրդից մի այնպիսի գեղանի աղջիկ պատրաստել, որ օժտված լինի մարդկանց ուժով, քնքուշ ձայնով, իսկ հայացքը՝ անմահ աստվածուհիների հայացքի հմայքն ունենա:

Ձևարի դուստր Աթենաս-Պալլասը պետք է նրա համար շքեղազարդ հագուստ գործեր, սիրո աստվածուհի ոսկեշղջ Ափրոդիտեն՝ անդիմադրելի հմայքով օժտեր, Հերմեսը՝ խորունկ միտք ու հնարագիտություն շնորհեր:

Աստվածներն իսկույն ի կատար ածեցին Ձևարի կամքը: Հեփեստոսը հողից մի արտասովոր գեղեցիկ աղջիկ պատրաստեց: Աստվածները նրան կենդանություն տվին: Աթենաս-Պալլասն ու քարիտներն աղջկան արևի պես շողշողուն զգեստներ հագցրին և քարդարեցին ոսկեհուռ ապարանջաններով: Օրեադեները նրա փարթամ գանգուրներին գարնանային բուրբունավետ ծաղիկների պսակ գրին: Հերմեսը նրա շուրթերին կեղծ ու պատիւր և հաճույալից խոսքեր դրեց: Աստվածները նրան Պանդորա կոչեցին, քանի որ խոսքից էլ շնորհներ էր ստացել: Պանդորան պիտի դժբախտություն տաներ մարդկանց:

1 Պանդորա — օժտված բոլոր շնորհներով:

Երբ մարդկանց համար այդ շարիքը պատրաստ էր արգեն, Զևար Հերմեսին ուղարկեց, որ Պանդորային տանի երկիր, Պրոմեթեևսի եղբոր՝ էպիմեթեևսի մոտ: Իմաստուն Պրոմեթեևսը բազմիցս նախազգուշացրել էր իր կարճամիտ եղբորը և խորհուրդ տվել, որ նվերներ չընդունի ամպրոպային Զևարից: Նա երկյուղ էր կրում, որ այդ նվերները մարդկանց վիշտ կբերեն: Բայց էպիմեթեևսը չսեց իմաստուն եղբոր խորհուրդը: Գերեց նրան Պանդորան իր գեղեցկությամբ, և նա կնության առավ գեղանի աղջկան: Շատ շանցած էպիմեթեևսն իմացավ, թե որքան շարիքներ է բերել Պանդորան մարդկանց համար:

էպիմեթեևսի տանը մի խոշոր կարաս կար՝ ամուր փակված ծանր կափարիչով: Ոչ ոք չգիտեր, թե ինչ կա այնտեղ, և ոչ ոք չէր հանդգնում այն բաց անել, քանի որ բոլորը գիտեին, թե ի՞նչ աղետներ կարող են գալ դրանից: Հետաքրքրասեր Պանդորան գողունի վեր առավ կափարիչը, և աշխարհով մեկ ճախրեցին այն աղետները, որոնք ինչ-որ ժամանակ այնտեղ էին ամփոփված: Միմիայն Հուլյան էր, որ մնաց վիթխարի ամանի հատակին: Կափարիչը կրկին փակվեց, և Հուլյսը դուրս չլուսավ էպիմեթեևսի տանից: Այդ չէր կամենում ամպրոպային Զևար:

Առաջներում մարդիկ երջանիկ կյանք էին վարում՝ չիմանալով, թե ի՞նչ է շարիքը, տանջալից աշխատանքը և կործանարար հիվանդությունները: Հիմա արդեն բյուրավոր աղետները տարածվեցին մարդկանց մեջ: Հիմա արդեն շարիքներով լցվեցին և՛ երկիրը, և՛ ծովը: Ցերեկով թե՛ գիշերով մարդկանց մոտ են գալիս անկող շարիքներն ու հիվանդությունները, իրենց հետ տառապանքներ բերում մարդկանց: Համրաքայլ ու անխոս են մոտենում, քանի որ Զևար նրանց զրկել է խոսելու ձիրքից: Չարիքն ու հիվանդությունները շանթարձակը մարդկանց համար է ստեղծել:

Շարադրված է ըստ Օվիդիոսի «Կեղտաբանափոխություններ» գրքում:

Ամպրոպային Զևար առևանգելով գետերի աստված Ասոպոսի գեղանի դստերը՝ նրան տարավ Օլիսպիա կղզին, որ այդ ժամանակից ի վեր Ասոպոսի դստեր՝ էգինայի անունով է կոչվում: Այդ կղզում ծնվեց Զևար ու էգինայի որդին՝ էակոսոսը: Երբ էակոսոսը հասակ առավ, առնացավ ու էգինա կղզու արքան դարձավ՝ բովանդակ Հունաստանում ոչ ոք չէր կարող նրա հետ Գամեմաստվել ո՛չ ճշմարտության հանդեպ տածած սիրով, ո՛չ էլ արդարամտությամբ: Մինչև իսկ մեծ օլիմպոսցիներն էին հարգում էակոսին թյամբ: Մինչև իսկ մեծ օլիմպոսցիներն էին հարգում էակոսին ու հաճախ նրան դատավոր կարգում իրենց վեճերին: Իսկ մահից հետո էակոսը, ինչպես Միհոսն ու Ռադամանթոսը, աստվածների կամքով դատավոր դարձավ ստորերկրյա թագավորության մեջ:

Միմիայն մեծ աստվածուհի Հերան էր, որ ատում էր էակոսին, Հերան մեծ աղետ բերեց էակոսի թագավորությանը: Թանձրախիտ մշուշով պատեց էգինա կղզին, շորս ամիս պահեց այդ մշուշը: Ի վերջո, հարավային քամին ցրեց այն: Բայց քամին իր ջնշով ոչ թե ազատություն բերեց, այլ կործանում: Ապականող մշուշի պատճառով անհամար թունավոր օձեր լցվեցին էգինայի լճակները, աղբյուրներն ու առվակները, և թունավորում էին բոլորին: էգինայում մի ահավոր համաճարակ ծայր առավ: Ամեկը ինչ էլ էգինայում մի ահավոր համաճարակ ծայր առավ: Ամենայն կենդանություն մեռավ կղզում: Անվնաս մնացին էակոսն ու մեկ էլ նրա զավակները: Հուսահատության մեջ՝ էակոսը ձեռքերը երկինք կարկռեց ու բացականչեց.

— Օ՛, մեծդ վահանակիր Զևո. եթե իրավ է, որ դու էգինայի ամուսինն ես եղել, եթե իրավ է, որ դու իմ հայրն ես ու չես ամաշում թողածդ սերնդի համար, ապա ե՛տ սուր իմ ժողովուրդը կամ ի՛նձ էլ թաղիր գերեզմանի խավարում:

Զևարն էակոսին նախանշան տվեց, որ լսել է նրա աղերսանքը, շողաց կայծակը, և որոտի դղրդյունը զորովեց վճիտ երկրներով մեկ: Կռահեց էակոսը, որ իր աղոթքը տեղ է հասել: Այն

1 էակոսի առասպելը հատկապես հետաքրքիր է նրանով, որ այստեղ պարզորոշ արտահայտված են տոտեմիզմի հետքերը: Առասպելը պատմում է, թե ինչպես մրջյուններից առաջ է եկել միմիդոսների ցեղը: Այն հավատք, թե կենդանիներից մարդիկ կարող են առաջ գալ, հատուկ է նախնադարյան կրոնին:

տեղում, որ էակոսն աղերսել էր իր հորը՝ Զևսին, մի հզոր կաղնի էր կանգնած՝ շանթարձակին նվիրված, իսկ նրա արմատների մոտ մրջնաբույն կար։ Պատահամբ էակոսի հայացքն ընկավ հազարավոր ժրաշան մրջյուններով լեցուն այդ մրջնանոցի վրա։ էակոսը երկար նայեց, թե ինչպես էին ջանում մրջյունները կատուցելու իրենց մրջնային քաղաքը, և այնպես ասաց.

— Օ՛, գթառատ հայր Զևս, այնքան աշխատանք քաղաքացիներ տուր ինձ, որքան մրջյուններ կան այս մրջնանոցում։

էակոսը հաղիվ էր արտաբերել այս խոսքը, երբ կաղնին, թեև մեղմ գեփյուռ անգամ չէր փշում, խշխշացրեց իր հզոր ճյուղերը. Զևսը կ'ս մի կանխանշան տվեց էակոսին.

Վրա հասավ գիշերը։ Զարմանահրաշ մի երանց տեսավ էակոսը։ Նա տեսավ Զևսի սրբազան կաղնին, որի ճյուղերը պատած էին բյուրավոր մրջյուններով։ Տատանվում էին կաղնու ճյուղերը, և մրջյուններն անձրևի նման ցած էին թափվում։ Գետին ընկնելով, մրջյուններն ավելի ու ավելի խոշոր էին դառնում. ահա՛ նրանք ոտքի ելան, շտկվեցին, անհետացավ նրանց գորշ գույնը, մարմինները լցվեցին. աստիճանաբար մարդկային կերպարանք առան։ Արթնացավ էակոսը. չի հավատում իր երազի գուշակությունը, նա մինչև իսկ տրտնջում է աստվածների գուշակության դեմ, որ իրեն օգնություն չեն առաքում։ Մեկ էլ հանկարծ ուժգին աղմուկ բարձրացավ։ էակոսի ախանջին ոտնաձայներ են հասնում ու մարդկային խոսքեր, որ նա վաղուց է արդեն ինչ չի լսել. «Երազ չէ՞ արդյոք», մտածում է նա։ Հանկարծ նրա մոտ է վազում որդին՝ Տելամոնը, նետվում դեպի հայրն ու ցնծագին խոսում.

— Ծուռ դուրս արի, հայր։ Եվ դու ախանառն՝ կլինես մի մեծ հրաշքի, որին չէիր էլ սպասում։

Դուրս ելավ էակոսը պալատից և այն մարդկանց, որոնց երազումն էր տեսել, այժմ տեսավ կենդանություն առած։ Մըրջյուններից առաջ եկած մարդիկ էակոսին արքա հռչակեցին, իսկ սա նրանց միրմիրոններ¹ կոչեց։ Այսպես եղավ, որ էգինա կզգին կրկին մարդարևակ դարձավ։

Զմեկանամ քաղաքված է քառ էսփիլեսի Վաշտպանություն աղերսողների ողբերգության։

Զևսի և Իոյի որդին՝ էպափոսը, Բելոս անունով մի զավակ ուներ, իսկ սա երկու տղա ուներ՝ Եգիպտոսը և Դանայոսը։ Այն ամբողջ երկրում, որ արգասաբեր Նեղոսն է ստոգում, տիրում էր Եգիպտոսը, նրա անունով է, որ երկիրն ստացել է իր անունը։ Իսկ Դանայոսը իշխում էր Լիբիայում։ Աստվածները Եգիպտոսին հիսուն տարի ավելցին, իսկ Դանայոսին՝ հիսուն գեղանի դուստր։ Գերվեցին Եգիպտոսի տղաները Դանայոսինների հմայքով, կամեցան պսակվել գեղանի աղջիկների հետ, բայց Դանայոսն ու Դանայոսիներն ընդմեջին նրանց Մեծ գորարանակ հավաքեցին Եգիպտոսի զավակները և կռիվ գնացին Դանայոսի վրա։ Դանայոսը պարտու թյուն կրեց եղբոր որդիների կողմից, նրան վիճակվեց զրկվել իր թագավորությունից ու փախուստի դիմել Աթենաս-Պալլաս աստվածուհու օգնությամբ Դանայոսը կառուցեց առաջին հիսուն թիազանոց նավը և, իր դուստրերի հետ միասին, անծայրածիր ու հավերժածուխ ծով դուրս եկավ։

Երկար ժամանակ ծովի ալիքները վրայով լողում էր Դանայոսի նավը և, ի վերջո, հասավ Հոտոս կղզուն։ Այստեղ Դանայոսը հանգրվան գտավ. իր դուստրերի հետ ափ դուրս եկավ, մի սրբավայր հիմնեց իր հովանավոր Աթենաս աստվածուհու և նրան առատ զոհեր մատուցեց, Դանայոսը շինեց Հոտոսում. Եգիպտոսը կրելով Եգիպտոսի որդիների հետապնդումից, նա դուստրերի հետ նավեց ավելի հեռու՝ գեպի Հունաստանի ափերը, դեպի Արգոլիս¹, իր նախամոր՝ Իոյի մոտ։ Ինքը Զևսն էր պահպանում նավը անեղբ ծովում, վտանգներով լեցուն նավարկության ընթացքում։ Երկար ճանապարհ կտրելուց հետո նավը հասավ Արգոլիսի արգասաբեր ափերին։ Դանայոսն ու Դանայոսիները հասավ էին, որ այստեղ պաշտպանություն ու ապաստան կգտնեն Եգիպտոսի տղաների հետ անտանելի ամուսնությունից։

Իբրև պաշտպանություն աղերսողներ, ձիթենու ճյուղերը մեղքներին, Դանայոսիներն ափ ելան։ Ոչ ոք չէր երևում ծովա-

¹ Միքմես նշանակում է մրջյուն։

¹ Մարդ Գեղարոնեսի հյուսիս-արևելքում։

փին: Վերջապես հեռվում փոշու ամպ երևաց, որ արագորեն մոտենում էր: Ահա՛, փոշու ամպի մեջ արդեն փայլատակում են վահանները, սաղավարտներն ու նիզակները: Լսվում է մարտակառքերի անիվների աղմուկը: Դա Արզուխի արքա Պելասգոսի՝ Պալեքթոնի որդու զորաբանակն է, որ մոտենում է: Լուր աննելով, որ նալ է մոտենում կղզու ափին, Պելասգոսը ծովափ է գալիս իր զորքն առած: Բայց հանդիպեց ոչ թե ոսոխի, այլ ծերունի Դանայոսին իր հիսուն գեղանի դուստրերի հետ: Ձիթենու ճյուղերը ձեռքներին, ընդառաջ եկան նրանք՝ պաշտպանություն աղերսելով: Ձեռքներն արքային կարկառած, արտասովաթոր աչքերով, Դանայոսի գեղանի աղջիկները պաշտպանություն են աղերսում ընդդեմ Եգիպտոսի զոռուզ որդիների: Զևսի՝ աղերսողների հզորագոր պաշտպանի անունով, Դանայոսիները պաղատում են Պելասգոսին, որ ոսոխի ձեռքը չմատնի իրենց: Չէ՞ որ նրանք օտարներ չեն Արզուխում. սա նրանց նախամոր՝ Իոյի հայրենիքն է:

Պելասգոսը դեռ էլի տատանվում է, չէ՞ որ նրան սպառնում է պատերազմ Եգիպտոսի հզոր տիրակալների հետ: Ի՞նչ անի: Բայց նրան առավել մեծ երկյուղ է պատճառում Զևսի ցասումը, եթե նա, խախտելով շանթարձակի օրենքները, վանի Զևսի անունով պաշտպանություն աղերսողներին: Ի վերջո, Պելասգոսը խորհուրդ է տալիս Դանայոսին, որ գնա Արգոս և այնտեղ աստվածների զոհասեղանին ձիթենու ճյուղեր դնի՝ ի նշան պաշտպանության աղերսանքի: Իսկ ինքը վճռում է հավաքել ժողովրդին և խորհուրդ հարցնել նրանից: Պելասգոսը Դանայոսիներին խոստում է տալիս ամեն ջանք գործ դնել, որպեսզի Արգոսի քաղաքացիներին համոզի նրանց սատար կանգնելու համար:

Հեռանում է Պելասգոսը: Դանայոսիները սրտատրոփ սպասում են ժողովրդական հավաքի վճռին: Նրանք դիտեն, թե որքան անզուսպ են Եգիպտոսի որդիները, որքան ամենի են կովի մեջ: Գիտեն նաև, թե ի՞նչ է սպառնում իրենց, եթե եգիպտացիների նավերը հասնեն Արզուխի ափերին: Ի՞նչ պիտի անեն իրենք՝ անպաշտպան աղջիկները, եթե զրկվեն ապաստանից ու Արգոսի քահանիչների օգնությունից: Մոտ է արդեն տարաբախտ ժամը: Արդեն եկել է Եգիպտոսի որդիների բանբերը: Նա սպառնում է Դանայոսիներին ուժով տանել նավ: Ահա ըսնել է Դանայոսի դուստրերից մեկի ձեռքից ու իր ստրուկներին հրամայում է մյուսներին էլ բռնել: Բայց հենց այդ պահին կրկին հայտնվեց Պելասգո-

սը: Նա իր պաշտպանության տակ է անում Դանայոսիներին, նրան չի վախեցնում և այն, որ Եգիպտոսի որդիների բանբերը սպառնում է պատերազմով:

Պելասգոսին ու Արզուխի քահանիչներին կորսության մատնեց Դանայոսին ու նրա աղջիկներին պաշտպան կանգնելու վճիռը: Արյունահեղ կռվում պարտություն կրելով, Պելասգոսն ոտիպված եղավ փախել իր լայնատարած տերություն ծայրագույն հյուսիսը: Երավ է, Դանայոսին ընտրեցին Արգոսի թագավոր, բայց Եգիպտոսի աղաների հետ խաղաղություն կնքելու համար նա, այնուամենայնիվ, իր գեղանի աղջիկներին կնության պիտի տար նրանց:

Եգիպտոսի որդիները ճոխ հարսանիք արեցին: Նրանք վերահասու չէին, թե ի՞նչ է բերելու իրենց այդ ամուսնությունը: Ավարտվեց հարսանեկան աղմկալի խրախճանքը, դադար առան հարսանեկան հիմները, մարեցին հարսանեկան ջահերը. գիշերվա խավարը պարուրեց Արգոսը: Խորունկ լուռություն էր տիրում քնի մեջ ընկղմված քաղաքում: Հանկարծ լուռության մեջ մահամբժի մի ծանր տնքոց լսվեց, դրան հետևեց երկրորդը, հետո՝ էլի ու էլի: Ահասարսուռ շարագործություն էին կատարում Դանայոսիները գիշերվա քողի տակ: Իրենց հոր՝ Դանայոսի տված դաշույններով նրանք դաշունահար էին անում իրենց ամուսիններին՝ հենց որ քունը փակեց սրանց աչքերը:

Եվ այսպես, սոսկալի մահով կործանվեցին Եգիպտոսի որդիները: Նրանցից մեկը միայն փրկություն գտավ՝ գեղեցիկ կինքեռը: Դանայոսի գեռատի դուստրը՝ Հիպերմնեստրան, զթաց նրան: Նա իր մեջ ուժ չէր գտել ամուսնու կուրծքը դաշույն մխրճելու համար: Արթնացրել էր նրան ու գաղտնի դուրս բերել կինքեսուի եղբայրների արյամբ ողողված պալատից:

Մոլեգին ցասումով էր լցվել Դանայոսը, իմանալով, որ Հիպերմնեստրան խախտել է իր կամքը: Դանայոսը դատերը շղթայակալ արեց և զնդան նետեց: Հավաքվեց Արգոսի ծերունիների զատարանը, որպեսզի դատի Հիպերմնեստրային՝ հոր կամքը խախտելու համար: Դանայոսն ուղում էր մահվան մատնել դատերը: Բայց դատարան եկավ ինքը՝ սիրո աստվածուհի ոսկեշող Ափրոդիտեն: Նա պաշտպան կանգնեց Հիպերմնեստրային ու փրկեց նրան անողորմ պատժից: Դանայոսի գթառատ, սիրասուն դուստրը դարձավ կինքեսուի կինը: Աստվածները այդ ամուսնությունը բազմաթիվ մեծ հերոսների սերունդ մաղթեցին: Մինչև իսկ Հերակլեսը,

Հունաստանի այդ անմահ հերոսը, պատկանում է Լինքեսոսի առՊ-մին:

Զևսը չէր կամենում կորստյան մատնել նաև մյուս Գանայու-հիներին: Նրա կամքով Աթենասն ու Հերմեսը Գանայուհիներին մաքրագործեցին հեղած արյան պղծությունից: Գանայուս արքան օլիմպոսի աստվածների պատվին մեծ խաղեր կազմակերպեց, Այդ մրցախաղում հաղթողները իբրև շնորհ կնության էին առնում Գանայուսի դուստրերին:

Բայց և այնպես Գանայուհիները լիուսափեցին պատժից իրենց կատարած շարագործության համար: Կրում են այդ պատիժը իրենց մահից հետո՝ Հադեսի խավարամած թագավորության մեջ: Գանայուհիները պետք է ջրով լցնեն հատակ շունեցող մի վիթխարի կարաս: Հավերժորեն նրանք ջուր են կրում ստոր-երկրյա գետից և լցնում կարասի մեջ: Ահա, թվում է թե կարասն արդեն լիքն է, բայց ջուրը կրկին ու կրկին դուրս է հոսում և կարասը դարձյալ դատարկ է: Կրկին ու կրկին գործի են անցնում Գանայուհիները, վերստին ջուր են կրում ու լցնում անհատակ կարասը: Եվ այսպես, շարունակվում է անվախճան նրանց աշխատանքը:

ՊԵՐՍԵՎՍԻ

Շարադրված է քսա Օվիդիոսի «Կերպրեանփոխություններ» պոեմի:

ՊԵՐՍԵՎՍԻ ԵՆՈՒՆԳՐ

Արգոսի արքա Ակրիսիոսը՝ Լինքեսոսի թոռը, Գանայա անունով մի դուստր ուներ, որ հռչակված էր իր երկնային գեղեցկությամբ: Պատգամախոսը գուշակել էր, որ Ակրիսիոսը զոհ պիտի զնա Գանայայի որդու ձեռքով: Այդ ճակատագրից խուսափելու համար Ակ-

1 Պերսևս — Հունաստանի ամենաժողովրդական հերոսներից է: Նրա մասին շատ առասպելներ են պահպանվել: Բայց դրանք պատմվել են տարբեր ձևերով: Հետաքրքրական է, որ այդ առասպելների մի շարք գործող անձանց հին հույները երկինք են տեղափոխել: Հիմա էլ մենք զիտենք այնպիսի համաստեղություններ, որոնք կրում են Պերսևսի, Անդրոմեդայի, Կասիոպեի (Անդրոմեդայի մայրը) և Կեփևի (Անդրոմեդայի հայրը) անունները:

րիսիոսը խորը գետնի տակ բրոնզից ու բարից ընդարձակ սենյակներ կառուցեց և իր դուստր Գանայային փակեց այնտեղ, որպեսզի ոչ ոք չտեսնի նրան և ոչ մի հերոս չզայթակղվի նրա գեղեցկու-թյամբ ու շունեանքի նրան:

Բայց մեծն Զևսը սիրեց նրան և, ոսկե անձրևի տեսք առած, թափանցեց Գանայայի ստորերկրյա սենյակը: Եվ Ակրիսիոսի դուստրը գարձավ Զևսի կինը: Այդ ամուսնությունից Գանայան մի չքնաղ մանուկ ունեցավ: Մայրը նրան Պերսևս կոչեց:

Երկար շապրեց փոքրիկ Պերսևսը մոր հետ ստորերկրյա սենյակներում: Մի անգամ Ակրիսիոսի ականջին հասավ փոքրիկ Պերսևսի ձայնը ու խնդազին ծիծաղը: Նա իջավ դստեր մոտ իմանալու, թե նրա սենյակից այդ ի՞նչ մանկան ծիծաղ է լսվում: Ապշահար եղավ Ակրիսիոսը չքնաղ մանուկին տեսնելով: Եվ ի՞նչ ստեղծում պատեց նրան, երբ իմացավ, որ նա Գանայայի ու Զևսի դավակն է: Իսկույն մտաբերեց պատգամախոսի գուշակությունը: Դարձյալ պիտի միտք աներ, թե ինչպես խուսափի այդ ճակատագրից: Վերջապես Ակրիսիոսը հրամայեց փայտից մի մեծ արկղ շինել: Գանայային ու Պերսևսին ամփոփեց նրա մեջ, փակեց ու հրամայեց ծովը նետել:

Երկար ժամանակ տարուբերվում էր արկղը դառնաղի ծովի մրրկածուփ ալիքների վրա: Կործանում էր սպառնում Գանայային ու նրա դավակին: Ալիքները դեսուդեն էին նետում արկղը. մեկ հասցնում էին իրենց կատարը, մեկ էլ վայր բերում ծովի հորձանուտի մեջ: Վերջապես հավերժածուփ ալիքները արկղը քշեցին Սերիֆոս¹ կղզին: Այդ ժամին ծովափին ձուկ էր որսում ձկնորս Գիկտիսը: Նա հենց նոր էր ցանցը ծովը նետել: Արկղը խճճվեց ցանցի մեջ, և Գիկտիսը արկղը ցանցի հետ ափ քաշեց: Բաց արեց արկղը և զարմանքով տեսավ հրաշք գեղեցկության տեր կնոջն ու չքնաղ մանկանը: Գիկտիսը նրանց իր եղորո՞՛ Սերիփոսի արքա Պոլիդեկտեսի մոտ տաբավ:

Ջորացավ Պերսևսը Պոլիդեկտես արքայի պալատում և դարձավ ուժեղ ու բարեկազմ պատանի: Աստվի պես շողում էր նա Սերիփոս կղզու պատանիների մեջ իր աստվածային գեղեցկու-թյամբ. չկար նրան հավասարը ո՛չ գեղեցկությամբ, ո՛չ ուժով, ո՛չ ճարպկությամբ, ո՛չ քաջությամբ:

1 Էջեյան ծովի Գիկտայան կղզիներից մեկը:

Նայած թե ի՛նչ մեծության իր էր դրված նրա մեջ: Հազավ Պերսևսն այդ թևավոր սանդալները, զրեց Հադեսի սաղավարտը, ուսը գցեց զարմանահրաշ պայուսակը և երկնքով սուրաց դեպի Գորգոնների կղզին:

Բարձր երկնքով սավառնում էր Պերսևսը: Ներքևում տարածվում էր երկիրն իր կանաչապատ հովիտներով, որոնց միջով արծաթաշող ժայռավեճների պես ձգվում էին գետերը: Ներքևում երկվում էին քաղաքներ, որոնց մեջ պայծառությամբ շողում էին աստվածների տաճարները՝ ճերմակափայլ մարմարից կառուցված: Հեռվում խոյացել էին անտառի կանաչով պատած լեռները և արևի ճառագայթներով ողողված նրանց ձյունապատ կատարները հուրհրատում էին ազամանդների պես: Պերսևսը հողմի նման սուրում է առաջ ու առաջ: Նա այնքան բարձր է ճախրում երկնքով, որքան բարձր արծիվներն անդամ չէին սավառնում իրենց հզոր թևերով: Ահա և հեռվում հրահեղուկ ոսկու պես շողում է ծովը: Հիմա արդեն ծովի վրայով է ճախրում Պերսևսը, և ծովային ալիքների ծփանքը հաղիվ լսելի խշշոցով հասնում է նրա ականջին: Ահա արդեն երկիրը շի երևում: Չորսրուրբ, որքան ընդգրկում է Պերսևսի հայացքը, տարածվել է ջրի համատարած հարթությունը:

Վերջապես ծովի կապուտակ հեռվում երևաց կղզու սև շերտը, որ ավելի ու ավելի է մոտենում: Դա Գորգոնների կղզին է: Կղզու վրա, արևի ճառագայթներով ողողված, ինչ-որ բան է շողշողում անտանելի փայլով: Ավելի ցած է իջնում Պերսևսը: Արծվի պես սավառնում է կղզու վրա ու տեսնում, որ ժայռի վրա քուն են մտել երեք ահասարսուտ Գորգոններ: Քնել են ու տարածել իրենց պղըն՝ ձակոփ թևերը, արևի տակ կրակի պես վառվում են նրանց պողպատե թևիտկները և ոսկեղեն թևերը: Նրանց գլուխների վրայի օձերը թեթևակի զայրվում են քնի մեջ: Շուտափույթ երեսը շուտ է տալիս Պերսևսը: Վախենում է նայել նրանց ահավոր դեմքերին. չէ՞ որ մի հայացքն էլ բավական է, որ նա քար դառնա: Նայեց Պերսևսը Աթենաս-Պալլասի վահանին և, ինչպես հայելու մեջ, արտացոլվեցին Գորգոնները: Նրանցից ո՞րն է Մեդուզան: Գորգոնները ջրի կաթիլների պես նման են իրար: Երեքից միայն Մեդուզան է մահկանացու, միայն նրան կարելի է սպանել: Մտքերի մեջ ընկավ Պերսևսը: Այստեղ նրան օգնության հասավ սրաթուղ:

Հերմեսը: Նա Պերսևսին ցույց տվեց, թե որն է Մեդուզան և կամացուկ շշնջաց ականջին.

— Մի դանդաղիր, Պերսևս: Համարձակ ցած իջիր: Նայիր, ծովի կողմից առաջինը Մեդուզան է: Գլխատի՛ր նրան: Հիշիր՝ շպետք է նայես նրան: Մի հայացք, և դու կորած ես: Շտապի՛ր, քանի զեռ չեն արթնացել:

Ինչպես արծիվն է երկնքից սուրում իր որսի վրա, այդպես էլ Պերսևսն ահագնաթափ խոյացավ քնած Մեդուզայի վրա: Մեկ էլ նայեց իր շողացող վահանին, որ անվրեպ լինի հարվածը: Մեդուզայի գլխի օձերը զգացին թշնամու մոտենալը: Ահեղաշունչ շալչունով ելան նրանք: Քնի մեջ շարժվեց Մեդուզան: Նա արդեն բաց էր արել աչքերը: Հենց այդ պահին կայծակի պես փայլատակեց Պերսևսի կտրուկ սուրը: Հերոսը մի հարվածով գլխատեց Մեդուզային: Նրա սև արյունը հեղեղի պես հորդեց ժայռն ի վար, իսկ արյան հեղեղի հետ Մեդուզայի մարմնի միջից երկինք խոյացավ թևավոր մի նժույզ՝ Պեգասը և հսկա Քրիստորոսը:

Առանց հապաղելու Պերսևսը հափշտակեց Մեդուզայի գլուխը և թաքցրեց կախարդական պայուսակի մեջ: Մահվան ջրածգությունների մեջ գալարվելով՝ Մեդուզայի մարմինը ժայռի վրայից ծովը զահավիժեց: Նրա անկման աղմուկից արթնացան Մեդուզայի քույրերը՝ Ստեյնոն և Էվրիալեն: Իրենց հզոր թևերը թափահարելով՝ նրանք վեր ճախրեցին կղզու վրա և կատաղափայլ աչքերով դիտում էին շորսրուրբ: Գորգոնները շաշիլով սավառնում են երկնքով, բայց նրանց բրոջը՝ Մեդուզային սպանողն անհետացել է արդեն: Ոչ մի շունչ արարած չի երևում ո՛չ կղզում, ո՛չ էլ ծովի հեռուններում:

Իսկ Պերսևսը՝ Հադեսի սաղավարտի զորությամբ անտեսանելի դարձած, արագաթուղչ հեռու էր սավառնում ծփացող ծովի վրայով: Ահա նա արդեն ճախրում է Լիբիայի ավազուտների վրայով: Պայուսակի միջից Մեդուզայի գլխի արյունը ծանր կաթիլներով ընկնում է ավազների վրա: Այդ կաթիլներից ավազներն օձեր ծնեցին: Չորսրուրբն ամենուրեք վխտում են օձերը և ամենամյն կենդանի շունչ փախուստի է դիմում. այդ օձերն են, որ Լիբիան անապատ են դարձրել:

Պերսեան ավելի ու ավելի հեռու է սավառնում Գորգոնների կողուց: Հողմահայած ամպի պես ճախրում է երկնքով: Վերջապես հասնում է այն երկիրը, ուր թագավորում է տիտան Յապետոսի որդին՝ Պրոմեթեոսի եղբայր հսկա Ատլասը: Բազմահազար կովեր ու ցուլեր, նրբագեղմ ոչխարներ են արածում Ատլասի դաշտերում: Շքեղ այգիներ կան նրա տիրապետության սահմաններում, իսկ այգիների մեջ՝ ոսկեհյուղ ու ոսկետերև մի խնձորենի: Սրա պտուղները եռլայնպես ոսկեղեն են:

Ատլասն աչքի լույսի պես պահպանում էր այդ ծառը, որ նրա մեծագույն գանձն էր: Թեմիս աստվածուհին հայտնել էր նրան իր գուշակությունը, որ կգա մի օր, երբ նրա երկրում կհայտնվի Ջևի որդին և կփախցնի նրա ոսկեղեն խնձորները: Ատլասը երկյուղ էր կրում դրանից: Այն այգին, ուր ոսկեպտուղ խնձորենին էր աճում, նա պատեց բարձր պարսպով, իսկ մուտքի մոտ պահակության կարգեց երախից բոց ժայթքող մի վիշապ: Ատլասն օտարերկրացիներին իր տիրակալության սահմաններից ներս չէր թողնում. վախենում էր, որ նրանց մեջ լինի և Ջևի որդին:

Եվ ահա մի օր էլ, իր թևավոր սանդալներով նրա մոտ սավառնեց Պերսևսը ու դիմեց Ատլասին այսպիսի սիրալիր խոսքերով.

— Օ՛, Ատլաս, թո տուն ընդունիր ինձ իբրև հյուր: Ես Ջևի որդին եմ՝ Պերսևսը, Գորգոն Մեգուղային սպանողը: Թույլ տուր հանգիստ առնեմ քեզ մոտ այս մեծ սխրագործությունից հետո:

Հենց որ Ատլասը լսեց, որ Պերսևսը Ջևի որդին է, իսկույն մտաբերեց Թեմիս աստվածուհու գուշակությունը և կոպիտ պատասխան տվեց Պերսևսին.

— Հեռացի՛ր այստեղից: Քեզ չեն օգնի քո ստերը, թե դու մեծ սխրագործություն ես կատարել, թե դու Ջևի որդին ես:

Ատլասն արդեն ուզում է հերոսին դռներից դուրս անել: Պերսևսը, տեսնելով, որ չի կարող կովի բռնվել հսկայի հետ, ինքն է շտապում դուրս գալ նրա տանից: Ցասումը ետ է գալիս Պերսևսի սրտում. զայրացել էր հերոսը, որ Ատլասն իր հանդեպ հյուրընկալ չգտնվեց և դեռ ստախոս անվանեց:

Եվ ցասումնալից Պերսևսն այսպես ասաց հսկային.

— Դե լա՛վ, Ատլաս, դու ինձ դուրս ես անում: Գոնե մի նվեր ընդունիր ինձնից:

Այս խոսքի վրա Պերսևսը մի ակնթարթում դուրս բերեց Մեգուղայի գլուխը և, ինքը շուտ դալով, ցույց տվեց Ատլասին: Իսկույն լեռան պես աճեց ու ահագնացավ հսկան: Մորուքն ու վարսերը սաղարթախիտ անտառներ դարձան, ձեռքերը և ուսերը՝ բարձրաբերձ ժայռեր, գլուխը՝ երկինք մխրճված լեռան զագաթ: Այդ ժամանակից ի վեր Ատլաս լեռն իր վրա է պահում երկնակամարն իր բոլոր համաստեղություններով:

Իսկ Պերսևսը, Լուսաստղի հայտնվելուն պես, ճախրեց առաջ:

ՊԵՐՍԵՎՍԸ ՓՐԿՈՒՄ Է ԱՆԴՐՈՄԵՆՈՍԻՆ

Օրկար ճանապարհ կտրելուց հետո Պերսևսը հասավ Կեփևսի թագավորությանը, որ ընկած է Եթովպիայում¹, Օվկիանոսի ափերին: Այնտեղ, հենց ծովափին, նա ժայռի վրա գամված տեսավ գեղանի Անդրոմեդային՝ Կեփևա արքայի դստերը: Նա պետք է քավեր իր մոր՝ Կասիոպեի մեղքը:

Կասիոպեն շարժել էր ծովային հավերճահարսների զայրույթը: Հպարտանալով իր գեղեցկությամբ, նա ասել էր, որ բոլորից գեղեցիկն ինքն է՝ Կասիոպե թագուհին: Ահեղորեն զայրացել էին հավերճահարսները և ծովերի աստված Պոսեյդոնին աղերսել, որ պատժի Կեփևսին ու Կասիոպեին: Պոսեյդոնը հավերճահարսների խնդրանքով մի հրեշ էր ուղարկել, որ նման էր վիթխարի ձկան: Հրեշը դուրս էր լողացել ծովի խորքերից ու ամայացրել Կեփևսի տիրապետությունը: Լացող ու հեծեծանքով լցվել էր Կեփևսի թագավորությունը: Ի վերջո, արքան դիմել էր Ջևի Ամմոն գուշակին² ու հարցրել, թե ինչպե՞ս պիտի աշխատի այդ աղետից: Եվ այսպիսի պատասխան էր ստացել.

— Քո դստերը՝ Անդրոմեդային տուր հրեշին պատառոտելու, և վախճան կունենա Պոսեյդոնի տված պատիժը:

Ժողովուրդը, իմանալով այս պատասխանը, թագավորին ստիպել էր Անդրոմեդային գամել ծովափնյա ժայռին: Սոսկումից գու-

¹ Եթովպիա—երկիր, որ հույների պատկերացմամբ գտնվում է երկրի ծայրագույն հարավում: Հույները, հետագայում նաև հռոմեացիները, այդպես էին կոչում Աֆրիկայում եգիպտոսից հարավ ընկած ամբողջ երկիրը:

² Այս պատգամատուր գտնվել է Լ. Բական անսպասի օպիսում, եգիպտոսից արևմուտք:

նատված, կանգնել էր Անդրամեդան ժայռի ստորոտում, ծանր կապանքների մեջ: Անհրեակայելի սոսկումով Անդրամեդան նայում էր ծովին՝ սպասելով, որ ահա ուր որ է կերևա հրեշը և կզատառոտի իրեն: Արցունքները գլուր-գլուր հոսում էին աչքերից: Մոսկումնաահար էր անում նրան այն միտքը, որ պիտի կորստյան մասնվի ծաղիկ հասակում, ուժերի փթթման ժամանակ, առանց կյանքի բերկրանքը ճաշակած լինելու:

Եվ Պերսևսը տեսավ նրան: Պարոսյան՝ ձյունասպիտակ մարմարից կերտված զարմանահրաշ արձանի տեղ կղևեր Պերսևսն Անդրամեդային, եթե ծովային զեփյուռը շատաներ նրա վարսերը, և զեղեցիկ աչքերից արցունքի խոշոր կաթիլներ չհոսեին: Խանգավառությամբ նրան է նայում պատանի հերոսը, և Անդրամեդայի հանդեպ առժամ սերը բորբոքվում է նրա սրտում: Պերսևսն իսկույն իջավ նրա մոտ ու քնքշությամբ հարցրեց.

— Օ՛, ասա՛ ինձ, չքնաղ աղջիկ, ո՞ւմ է պատկանում այս երկիրը, ասա՛ ինձ քո անունը: Ասա՛, թե քեզ ինչո՞ւ են ժայռին գամել:

Եվ Անդրամեդան ասաց, թե ո՛ւմ մեղքի համար է իրեն տառապանք վիճակվել: Գեղանի աղջիկը չէր ուզում, որ հերոսը կարծի, թե իր սեփական մեղքն է քավում: Գեռ չէր ավարտել իր խոսքն Անդրամեդան, երբ աչկոծովեց ծովի հորձանուտը և լեռնակուտակ ալիքների մեջ երևաց հրեշը: Նա ալիքներից բարձր էր պահել իր գլուխը և բաց արել վիթխարի երախը: Անդրամեդան սոսկումից ճշաց ուժգին: Վշտից խելակորույս՝ ծովափ վազեցին Կեփևսն ու Կասիոպեն: Դառնագին լալիս են նրանք՝ զրկելով իրենց դստերը: Փրկություն չունի Անդրամեդան:

Եվ այդ ժամանակ խոսեց Ջևի որդին՝ Պերսևսը.

— Արցունք հեղելու զեռ շա՛տ ժամանակ կունենաք, ձեր դստերը փրկելու համար է, որ քիչ ժամանակ է մնում: Ես Ջևի որդին եմ, Պերսևսը, օձերով պարուրված Գորգոն Մեդուզային սպանողը: Ինձ կնություն տվեք ձեր զուտոր Անդրամեդային, և ես կփրկեմ նրան:

Բերկրանքով համաձայնություն տվին Կեփևսն ու Կասիոպեն: Նրանք ամեն ինչի պատրաստ էին՝ հանուն իրենց դստեր փրկու-

¹ Պարոս—կիկլադյան խոշոր կղզիներից մեկը, որ հռչակված էր իր առաջնակարգ ճերմակ մարմարով (Մ. Ք.):

թյան: Կեփևսը խոստացավ մինչև անգամ իր ամբողջ թագավորությունը ալ իբրև օժիտ, միայն թե նա փրկեր Անդրամեդային:

Հրեշն արգեն մտեցել է: Արագորեն լողում է դեպի ժայռը, յայն կրծքով ճեղքում է ծովի ալիքները՝ նման այն նավին, որ սլանում է ալիքների վրայով՝ գորեղ ու երիտասարդ թիավարների թափից թևեր առած: Նետի թուրքից ավելի հեռու չէր լինի հրեշը, երբ Պերսևսը երկինք սավառեց: Հերոսի սավերն ընկավ ծովի վրա, և հրեշը կատաղաբար հարձակվեց սավերի վրա: Պերսևսն ահազին բարձրությունից խիզախորեն նետվեց հրեշի վրա և իր կեռ սուրը խորը մխրձեց նրա թիկունքը: Մանր վերք ստանալով, ալիքների մեջ ծառս եղավ հրեշը. մուկանաբար շոտումու է գալիս, նման այն վարազին, որին կատաղի հաշոցներով օղակել է շների ոճմակը: Մերթ խորանում է հրեշը ծովի մեջ, մերթ կրկին ծառանում ալիքների միջից: Խնլահեղ կատաղությամբ ջրին է զարկում իր պոչը, և ջրի անհամար ցայտերը թռչում են մինչև առափնյա ժայռերի կատարները: Փրփուրով պատվեց ծովը: Երախը բաց արած, հրեշը նետվում է Պերսևսի վրա, բայց հերոսը ճախ արագությամբ սավառում է իր թևավոր սանդալներով: Նրա մի հարվածը հետևում է մյուսին: Արյունն ու ջուրը հորդում են մահացու վիրավոր հրեշի երախից: Պերսևսի սանդալները թրջվել են ու հազիվ են պահում հերոսին օդի մեջ: Արագորեն սուրաց Դանայայի մեծագոր որդին դեպի ծովի միջից խոյացող ժայռը, զրկեց այն ձախ ձևերով, իսկ աջով՝ երեք անգամ իր սուրը մխրձեց հրեշի վիթխարի կուրծքը:

Ահասարսուռ կռիվը հասավ իր վախճանին: Յնծալից ազազակներ են լսվում ծովափից: Բոլորը փառաբանում են մեծագոր հերոսին: Չքնաղ Անդրամեդայի վրայից արձակված են կապանքները և հաղթանակած Պերսևսն իր հարսնացուին հանդիսավորությամբ առաջնորդում է նրա հոր՝ Կեփևսի պալատը:

ՊԵՐՍԵՎՍԻ ԸՆԲՄԱՆԵՐԸ

Առատ զոհեր մատուցեց Պերսևսն իր հորը՝ Ջևին, Աթենաս-Պալլասին և Հերմեսին: Խնդումնալից հարսանեկան խրախճանք սկսվեց Կեփևսի պալատում: Հիմնենուսն ու էրոսը վառեցին իրենց բուրբուկետ ջահերը: Կեփևսի ամբողջ պալատը պարուրված է կանաչով ու ծաղիկներով: Ուժգնորեն հնչեցին կիթառների ու քնար-

ների ձայները, թնդացին հարսանեկան երգերը: Պալատի դռները լայն բաց են արված: Խրախճանքի դահլիճը հուրհրատում է ոսկուց: Կեփեան ու Կասիոպեն սեղան են նստել նորապսակների հետ. ամբողջ ժողովուրդն է սեղան նստել: Ամենուրեք խնդություն է տիրում ու բերկրանք: Խնջույթի սեղանի շուրջը Պերսևեր պատմում է իր մեծագործությունների մասին: Մեկ էլ հանկարծ զենքի ահեղ շառաչ է լսվում խրախճանքի դահլիճում: Պալատով մեկ հնչում է մարտակոչը՝ նման ծովի աղմուկին, երբ, ծառանալով, նա իր հողահալած ալիքներով զարկում է բարձրագիր ժայռեղեն ափին: Այդ Անդրոմեդայի առաջին փեսացուն՝ Փինևսն է, որ մի մեծ զորաբանակ առած պալատ է եկել:

Պալատ խուժելով ու նիզակը ճոճելով, ահեղորեն գոչում է Փինևսը:

— Վա՛յ քեզ, հարսներ առևանգողիդ: Քեզ չե՛ն փրկի ինձանից ո՛չ քո թևավոր սանդալները, ո՛չ էլ նույնիսկ ամպրոպային Ջևար:

Փինևսը հենց այն է, ուզում էր նիզակը Պերսևեսի վրա նետել, բայց Կեփեա արքան կասեցրեց նրան այս խոսքերով.

— Ի՛նչ ես անում, ի՛նչն է քեզ մոլեգնություն մղում: Այդպե՞ս ես ուզում պարզեատրել Պերսևեսին նրա սխրանքի համար: Դա՞ պետք է լինի քո հարսանեկան պարզեր: Պերսևեսն առևանգե՞լ է քո հարսնացուին, ի՛նչ է: Ո՛չ, նա առևանգված էր արդեն այն պահից ի վեր, երբ նրան ժայռին գամելու տարան, երբ նա կործանման էր գնում: Ինչո՞ւ դու այն ժամին չեկար օգնություն: Դու ուզում ես հիմա՞ խլել հաղթողի պարզեր: Ինչո՞ւ ինքդ չեկար Անդրոմեդայի հետևից այն ժամանակ, երբ նա գամված էր ժայռին, ինչո՞ւ ա՛յն ժամանակ չեկար հարսնացուիդ խլելու հրեշից:

Ոչինչ չպատասխանեց Փինևսն արքային. մոլեգին հայացքը մերթ Կեփեաին էր դարձնում, մերթ՝ Ջևեսի գեղեցիկ որդուն: Եվ հանկարծ, լարելով իր բոլոր ուժերը, նիզակը Պերսևեսի վրա ձգեց: Վրիպեց նիզակը, Պերսևեսի կողքով սուրաց ու մխրձվեց հերոսի օթոցի մեջ: Իր զորեղ բազկով դուրս բերեց այն պատանի հերոսը, ելավ իր տեղից և ահեղորեն ճոճեց նիզակը: Նա մահացու վերք կհասցնեք Փինևսին, բայց սա թաքնվել էր զոհասեղանի հետևը. նիզակը դիպավ հերոս Ղոնտոսի գլխին, և նա անշնչացած վայր ընկավ:

Երեսն ամսաարտուտ կռիվը: Եղբորն օգնելու համար Օլիմպոսից իսկույն սավառնեց եկավ ուղմաշունչ Աթենասը: Նա իր վահանով սատարեց եղբորը և նրան անպարտելի արիություն ներշնչեց: Կովի մեջ նետվեց Պերսևսը: Նրա ձեռքում շանթի պես փայլատակում է մահաբեր սուրը, որով նա սպանել էր Մեդուզային: Իրար հետևից մահաբեր հարվածներ է տեղում Փինևսի հետ եկած հերոսների վրա: Արնաթաթավ մարմինների լեռ է կուտակվում պատանի հերոսի առաջ: Զույգ ձեռքերով Պերսևսը սեղանի վրայից խլեց ահագին բրոնզե մեծ դավաթը, որի մեջ խրախճանքի գինին էին խառնում, և նետեց հերոս էվրիտոսի գլխին: Շանթա-հարվածի պես դեռին տապալվեց նաև այս հերոսը, և նրա հոգին ձախրեց դեպի ստվերների թագավորությունը: Իրար հետևից գետին են տապալվում թշնամի հերոսները, բայց շատ են նրանք: Իսկ Պերսևսը օտարերկրացի է Կեփեաի թագավորության մեջ, քիչ ընկերներ ունի այդ կովում, նրան վիճակված է գրեթե մեն-մենակ մարտնչել բազում ոսոխների դեմ:

Պերսևեսի զինակիցներից շատերն արդեն ընկել էին այդ մուլազար կովում: Նիզակահար եղավ ու զոհ գնաց նաև երգիչը, որ իր ախորժալուր երգով ու ոսկեկար կիթառի նվագով հաճույք էր պատճառում սեղանակիցներին: Ընկնելու պահին երգիչը ձեռքը դիպրեց կիթառի լարերին, և տրամաթախիժ, իբրև մահամերձ տերոց, հնչեցին լարերը, բայց սրերի շառաչը և սպանվողների հառաչանքները խլացրին լարերի հնչյունները: Հողմահալած կարկուտի նման սուրում են անհամար նետերը: Հենվելով սյունաշարին ու պաշտպանվելով Աթենասի շողշողուն վահանով, կռիվ է տալիս Պերսևսը ոսոխի հետ: Իսկ թշնամիները բոլոր կողմերից օղակել են հերոսին, նրա շուրջը կռիվն ավելի ու ավելի կատաղի է դառնում: Տեսնելով, որ իրեն անխուսափելի կործանում է սպառնում, Դանայայի մեծագոր դավակը ահեղաձայն բացականեց:

— Ես օգնություն կստանամ պարտության մատնված իմ թընամուց: Դո՛ւք ստիպեցիք, որ ես դիմեմ նրա պաշտպանությանը: Թող իսկույն շուտ գան բոլորը, ովքեր բարեկամ են ինձ:

Եվ Պերսևեսն իր զարմանահրաշ պայուսակից մի ակնթարթում գոթա բերեց Գորգոն Մեդուզայի գլուխը և պահեց իր գլխից վեր: Իրար հետևից քարակոփ արձաններ դարձան Պերսևեսի վրա հարձակվող հերոսները: Ոմանք քար կտրեցին հենց այն պահին, երբ

ճոճում էին սուրբ ոսոխի կուրծքը մխրճելու համար, մյուսները քար կտրեցին սրածայր նիզակները թափահարելիս, երոտրդները՝ վահաններով պատսպարովելիս: Մեղուզայի գլխի վրա նետած մի հայացքը նրանց մարմարակերտ արձան էր դարձրել: Խրախճանքի ամբողջ դահլիճը լցվեց մարմարակերտ արձաններով: Երբ տեսավ, որ իր բոլոր ընկերները քարացել են, սոսկումը պատեց Փինևսին: Մնկի իջավ և, ձեռքերն աղերսանքով դեպի Պերսևսը դարձնելով, գոչեց.

— Դու հաղթանակեցի՛ր, Պերսևս: Օ՛, շուտ թաքցրու Մեղուզայի ահասարսուտ գլուխը, աղերսո՛ւմ եմ, թաքցրո՛ւ Օ՛, Զևսի մեծ զավակ, ա՛ն ամենայն ինչ, եղի՛ր ամեն ինչի տիրակալը, միայն կյանքս խնայիր:

Հեզանքով պատասխան տվեց Պերսևսը.

— Մի՛ երկնչիր, ողորմելի վախկոտ: Քեզ իմ սուրը չի խոցի: Ես քեզ պարզև կտամ հավերժության: Դու հավիտյան պիտի կանդնես այստեղ, Կեփևսի պալատում, որպեսզի իմ կինը սգոփվի իր առաջին փեսացուի կերպարանքը տեսնելով:

Ասաց ու Փինևսին մեկնեց Մեղուզայի գլուխը, և որքան էլ Փինևսը ջանում էր շնայել սոսկումնայի Գորգոնի գլխին, նրա հայացքն ընկավ վրան և նա մի ակնթարթում մարմարակերտ արձան դարձավ: Քար է կտրել Փինևսը Պերսևսի առաջ ստրուկի պես խոնարհված: Արձանացած Փինևսի հայացքում հավերժ պահպանվեց երկյուղի ու ստրկամիտ աղերսանքի արտահայտությունը:

ՊԵՐՍԵՎՍԻ ՎԵՐԱԳԱՐՁԸ ՍԵՐԻՓՈՍ

Այդ արյունահեղ կռիվից հետո Պերսևսը երկար շմանց Կեփևսի թագավորության մեջ: Գեղանի Անդրոմեդային հետև առած, նա վերոդարձավ Սերիփոս՝ Պոլիդեկտես թագավորի մոտ: Իր մորը՝ Դանայային, Պերսևսը տեսավ մեծ վշտի մեջ: Փրկություն որոնելով Պոլիդեկտեսից, նա ստիպված էր եղել ապաստան գտնել Զևսի տաճարում: Եվ այդ ժամանակից ի վեր չի հանդգնել մի պահ տնգամ լքել տաճարը: Ահավոր զայրույթի մեջ Պերսևսը դնաց Պոլիդեկտեսի պալատը և գտավ նրան ընկերների հետ խրախճանքի ճոխ սեղանը բոլորած: Պոլիդեկտեսը չէր սպասում, որ Պերսևսը կվերադառնա. վստահ էր, որ հերոսը զոհված կլինի

Գորգոնների դեմ մղված կռվում: Զարմացավ Սերիփոսի արքան իր առջև տեսնելով Պերսևսին, իսկ սա հանդիստ ու անխոռով այսպես ասաց թագավորին.

— Հրամանդ կատարված է: Քեզ եմ բերել Մեղուզայի գլուխը:

Պոլիդեկտեսը չհավատաց, որ Պերսևսն այդպիսի մեծ սխրանք է գործել: Եվ նա սկսեց ծաղրել աստվածազոր հերոսին ու նրան ստախոս անվանեց: Պերսևսին ծաղր ու ծանակի ենթարկեցին նաև Պոլիդեկտեսի ընկերակիցները: Ցասումը ետում էր Պերսևսի կրծքի տակ, նա չէր կարող ներել այդ անարգանքը: Ահեղորեն շողացնելով աչքերը, Պերսևսը դուրս բերեց Մեղուզայի գլուխը և գոչեց.

— Չե՞ս հավատում, Պոլիդեկտես, ահա՛ քեզ ապացույցը:

Պոլիդեկտեսը նայեց Գորգոնի գլխին և մի ակնթարթում քար կտրեց: Այդ ճակատագրից շխուսափեցին նաև թագավորի ընկերակիցները, որ սեղան էին նստել նրա հետ:

ՊԵՐՍԵՎՍԻ ԱՐԳՈՍՈՍԻ

Պերսևսը Սերիփոսի իշխանությունը հանձնեց Պոլիդեկտեսի եղբորը՝ Դիկտիսին, որ մի ժամանակ փրկել էր իրեն և մորը, իսկ ինքը, Դանայայի ու Անդրոմեդայի հետ, ուղևորվեց դեպի Արգոս:

Պերսևսի պապը՝ Ակրիսիոսը, թոռան ժամանման լուրն առնելուն պես, մտաբերելով գուշակությունը, հեռու ճողպրեց դեպի հյուսիս, կարիսա քաղաքը: Իսկ Պերսևսը դարձավ հայրենի Արգոսի տիրակալը: Ետ ավեց Հագեսի սաղավարտը, թեկավոր սանգոսի տիրակալը: Ետ ավեց Հագեսի սաղավարտը, թեկավոր սանգոսի տիրակալը: Ետ ավեց Հագեսի սաղավարտը, թեկավոր սանգոսի տիրակալը: Ետ ավեց Հագեսի սաղավարտը, թեկավոր սանգոսի տիրակալը: Ետ ավեց Հագեսի սաղավարտը, թեկավոր սանգոսի տիրակալը: Ետ ավեց Հագեսի սաղավարտը, թեկավոր սանգոսի տիրակալը:

Ակրիսիոսը շխուսափեց այն վիճակից, որ կանխատեսել էր նրա համար անողորմ ճակատագիրը: Մի անգամ Պերսևսը ճոխ մրցախաղեր հրավիրեց: Բազում հերոսներ հավաքվեցին: Հանդիսատեսների մեջ էր նաև զառամյալ Ակրիսիոսը: Մանրագին սկավառակի նետման մրցության ժամանակ Պերսևսն իր հզոր բազկով նետեց բրոնզաձուլ սկավառակը: Բարձր, բարձր մինչև ամպերը հասավ ծանրագին սկավառակը և, գետին ընկնելով, ահավոր

ուժգնութեամբ դիպալ Ակրիսիոսի զլխին և սպանեց նրան: Այսպես ի կատար ածվեց գուշակի կանխատեսութիւնը: Վշտահար Պերսևսը թաղեց Ակրիսիոսին, թախծելով, որ ակամա դարձել է սպալին սպանողը: Չկամեցավ այլևս իշխել Արգոսում, իր կողմից սպանված Ակրիսիոսի թագավորութեան մեջ: Նա ուղևորվեց Տիրինթոս¹ և թագավորեց այնտեղ բազում տարիներ: Իսկ Արգոսի իշխանութիւնը հանձնեց իր ազգական Մեգապենթեսին:

ՍԻՉԻՓՈՍ

Եւրագրված է ըստ Հումբոսի «Իլիական» և Օվիդիոսի «Հերոսութիւն» պոեմների:

Սիզիփոսը, բոլոր քամիների տիրակալ աստված էոլոսի որդին, եղել է Կորնթոս քաղաքի հիմնադիրը, քաղաք, որ հնագույն ժամանակներում էփիրե անունն է կրում:

Բովանդակ Հունաստանում ոչ ոք չէր կարող շափվել Սիզիփոսի հետ խարդախութեամբ, խորամանկութեամբ ու հնարամտութեամբ: Նա իր խորամանկութեան շնորհիվ անբավ հարստութիւն էր կուտակել Կորնթոսում և հեռուներն էր տարածվել նրա հարստութեան համբավը: Երբ մահվան աստված դժնադեմ Թանատոսը եկավ նրա մոտ՝ նրան Հադեսի տրամալից թագավորութիւնն իջեցնելու համար, Սիզիփոսը, որ արդեն զգացել էր մահվան աստծո մոտենալը, նենգարար խաբեց Թանատոս աստծուն և կաշկանդեց նրան կապանքներով: Եվ դրանից հետո մարդիկ այլևս չէին մեռնում: Այլևս ոչ մի տեղ չքեղ թաղումներ տեղի չէին ունենում: Մարդիկ այլևս զոհեր չէին մատուցում ստորերկրյա թագավորութեան աստվածներին: Երկրի վրա խախտվեց Զևսի սահմանած կարգը: Եվ այդ ժամանակ ամպրոպային Զևսը Սիզիփոսի մոտ առաքեց պատերազմի մեծազոր աստված Արեսին: Նա մահվան աստծուն ազատ արձակեց կապանքներից, և Թանատոսը դուրս կորզեց Սիզիփոսի հոգին և տարավ հանգուցյալների ստվերների թագավորութիւնը:

Բայց այստեղ էլ խորամանկ Սիզիփոսը կարողացավ հնար գտնել իրեն օգնելու համար: Ասել էր կնոջը, որ նա չթաղի իր մար-

մինը և զոհեր շմատուցի ստորերկրյա աստվածներին: Սիզիփոսի կինը հնազանդ էր մնացել ամուսնու կամքին: Հադեսն ու Պերսևսփոնեն շատ սպասեցին թաղման զոհաբերութիւններին: Բայց զոհաբերութիւնները չկան ու չկան: Ի վերջո, Սիզիփոսը մոտեցավ Հադեսի գահին և հանգուցյալների թագավորութեան տիրակալին այսպես ասաց.

— Օ՛, մեռյալ հոգիների տիրակալ մեծն Հադես, որ հավասար ես հզորագոր Զևսին, արձակի՛ր ինձ դեպի լուսավոր երկիր: Կհրամայեմ կնոջս, որ քեզ առատ զոհեր մատուցի և կրկին ևս կգամ ստվերների թագավորութիւնը:

Այսպես խաբեց Սիզիփոսը Հադես տիրակալին, և սա նրան բաց թողեց երկիր: Սիզիփոսն, իհարկե, ետ չեկավ Հադեսի տիրակալութիւնը: Մնաց իր շքեղազարդ պալատում ու խնդագին խրախճանք էր անում՝ ցնծալով, որ բոլոր մահկանացուներից միայն ինքն է կարողացել վերադառանալ ստվերների խավարամած թագավորութիւնից:

Ահեղորեն դայրացավ Հադեսը, կրկին անգամ Թանատոսին ուղարկեց Սիզիփոսի հոգին առնելու: Հայտնվեց Թանատոսը մահկանացուներից ամենախորամանկի պալատում, և նրան գտավ ճոխ խրախճանք անելիս: Դուրս կորզեց Սիզիփոսի հոգին աստվածների ու մարդկանց ատելին՝ Թանատոսը: Հիմա արդեն Սիզիփոսի հոգին ամիշտ անցավ ստվերների թագավորութիւնը:

Եվ Սիզիփոսը ծանրագույն պատիժ է կրում հանդերձալ կյանքում՝ երկրի վրա կատարած իր բոլոր խարդախութիւնների ու խաբեութիւնների համար: Նա դատապարտված է վիթխարի մի քար զլորելու բարձրաբերձ լեռան թեք զառիվերով: Լարելով իր բոլոր ուժերը, Սիզիփոսը զլորում է ծանրագույն քարը սարնիվեր: Տառապագին աշխատանքից քրտինքը անձրևի պես թափվում է վրայից: Լեռնազագաթն ավելի ու ավելի է մոտենում. ևս մի ճիգ, և իր ավարտին կհասնի Սիզիփոսի աշխատանքը: Բայց քարը դուրս է պրծնում նրա ձեռքից և զորդունով ցած զլորվում՝ հետևից փոշու ամպ բարձրացնելով: Եվ կրկին ու կրկին գործի է անցնում Սիզիփոսը:

Այսպես հավերժաբար զլորում է այդ քարը Սիզիփոսը ու երբեք չի հասնում նպատակին՝ լեռան գագաթին:

¹ Տիրինթոս — Հունաստանի հնագույն քաղաքներից մեկը, գտնվել է Արգոլիստում:

Նախագրված է բառ Համերոսի «Երկազան» պոեմի և Պիեղարոսի բանաստեղծությունների:

Սիզիփոսը մի որդի ուներ՝ հերոս Գլավբոսը, որ իշխում էր Կորնթոսում հոր մահից հետո: Իսկ Գլավբոսը մի զավակ ուներ Բելերոփոն անունով, որ Հունաստանի մեծագոր հերոսներից մեկն էր: Աստծո պես գեղեցիկ էր Բելերոփոնը, և անմահ աստվածներին հավասար էր արիության: Բելերոփոնը, երբ դեռ պատանի էր, մի փորձանքի հանդիպեց. ակամայից սպանեց Կորնթոսի քաղաքացիներից մեկին և պետք է փախչեր հայրենի քաղաքից: Եվ նա փախավ Տիրինթոսի թագավոր Պրոյտոսի մոտ: Մեծ պատվով ընդունեց Տիրինթոսի արքան հերոսին և մաքրագործեց նրան հեղած արյան պղծությունից: Բայց Բելերոփոնին վիճակված չէր երկար մնալ Տիրինթոսում: Գերվեց հերոսի գեղեցկությանը Պրոյտոսի կինը՝ դիցակերպ Անթեյան: Բայց Բելերոփոնը մերժեց նրա սերը: Եվ հերոսի հանդեպ ատելությամբ լցվեց Անթեյա թագուհին ու վճռեց կործանել նրան: Գնաց իր ամուսնու մոտ և այսպես ասաց.

— Ծ՛, արքա: Ծանր անարգանք է հասցրել քեզ Բելերոփոնը: Գու պետք է սպանե՛ս նրան: Նա իր սիրով հետամուտ է եղել ինձ՝ քո կնոջը: Ահա՛ թե ինչպե՛ս է երախտահատույց լինում հյուրընկալությանդ համար:

Սաստիկ զայրացավ Պրոյտոսը. բայց չէր կարող ձեռք բարձրացնել իր հյուրի վրա, քանի որ երկյուղ էր կրում Զեւսի՝ հյուրընկալության հովանավորից: Երկար միտք արեց Պրոյտոսը, թե ինչպե՛ս կորստյան մատնի Բելերոփոնին և վճռեց մի նամակով նրան ուղարկել Անթեյայի հոր՝ Լիկիայի արքա Իորատեսի մոտ: Կրկնակի ծալած և կնքված, տախտակի վրա գրված այդ նամակով Պրոյտոսը Իորատեսին հայտնում էր, թե ինչ ծանր անարգանք է հասցրել իրեն Բելերոփոնը, և խնդրում էր վրեժխնդիր լինել նրանից այդ անարգանքի համար: Նամակն առնելով, Բելերոփոնն

1 Այս առասպելի մեջ շատ նշաններ կան, որոնք ցույց են տալիս, որ Բելերոփոնը արևի տեղական աստվածն է եղել. նա նախորդ է երկնքով իր թևավոր նետով, նետահար է անում Քիմերա հրեջին, որ մարմնացնում է փոթորիկը, երկրաշարժը և երկրի հրաբխային ուժերը: Բելերոփոնի նման հերոսների նվիրված առասպելներ կան նաև երկրագնդի շատ ուրիշ ժողովուրդների դիցաբանության մեջ:

ուղևորվեց Իորատեսի մոտ, բնավ չկասկածելով, թե ի՛նչ վտանգ է սպառնում իրեն:

Երկար ճանապարհորդությունից հետո Բելերոփոնը հասավ Լիկիա: Խանդավառությամբ ընդունեց Իորատեսը պատանի հերոսին և ինն օր պատվեց նրան խրախճանքներով: Ի վերջո, հարցրեց Իորատեսը նրա ժամանման նպատակը: Բելերոփոնեց Պրոյտոսի նամակը հանգստությամբ մեկնեց Լիկիայի արքային: Իորատեսը ձեռքն առավ կրկնակի կնիք ունեցող նամակը և բաց արեց այն: Սոսկումը պատեց նրան, երբ կարդաց, թե ի՛նչ է գրված նամակում: Նա պիտի սպաներ պատանի հերոսին, որ այդ ինն օրվա ընթացքում արդեն նվաճել էր իր սերը: Բայց Իորատեսը ևս, Պրոյտոսի նման, չէր հանդգնում խախտել հյուրընկալության սրբազան սովորույթը: Բելերոփոնին կորստյան մատնելու համար նա որոշեց հերոսին ուղարկել անխուսափելի մահվամբ սպառնացող մի սխրանքի: Իորատեսը հանձնարարեց Բելերոփոնին, որ սպանի ահասարսուռ հրեշ Քիմերային: Նրան ծնել են սոսկումնալի Տիփոնը և վիթխարահսկա էթիդնան: Առջևի կողմից առյուծ էր Քիմերան, միջնամասում՝ լեռնային վայրենի այծ, իսկ հետևից՝ վիշապ: Հուր էր ժայթքում իր երեք երախներից: Ոչ ոք փրկություն չունեի ահավոր Քիմերայից: Հենց միայն նրա մերձեցումը անխուսափելի մահ էր բերում:

Բելերոփոնին չէր կասեցնում այդ սխրանքի վտանգը. մեծագոր հերոսը խիզախորեն ձեռնամուխ եղավ այդ սխրագործությունն ի կատար ածելուն: Նա գիտեր, որ Քիմերային կհաղթի միայն նա, ով տիրում է թևավոր Պեգաս՝ նժույգին, որ Պերսևսի սպանած Գորգոն Մեդուզայի մարմնի միջից է կլել: Հերոսը գիտեր նաև, թե ինչպես պիտի գտնել այդ հրաշք ձիուն: Պեգասը հաճախ էր վայրէջք կատարում Ակրոկորնթոս՝ լեռան կատարին և այնտեղ ջուր խմում Պիրենիի աղբյուրից: Հենց այնտեղ էլ գնաց Բելերոփոնը:

Նա հասավ աղբյուրին հենց այն պահին, երբ ամպերի հետևից իջած Պեգասը հագեցնում էր ծարավը Պիրենիի աղբյուրի սառնորակ, բյուրեղի պես թափանցիկ ջրով: Բելերոփոնն ուղում էր

1 Պեգասի անունով համաստեղություն կա երկնակամարում: Ավելի ուշ շրջանում Պեգասը դարձավ նաև բանաստեղծների նժույգը. այդ ձևով էին բանաստեղծները նախորդում դեպի Պառնաս՝ Ապոլոն աստծու և մուսաների մոտ:

2 Այն լեռը, որի վրա գտնվում էր Կորնթոսի միջնաբերդը (Ակրոպոլիս):

խկույն ևեթ բռնել Պեգասին: Օրեր ու գիշերներ հետևեց նժույզին, բայց ապարդյուն. ոչ մի խորամանկություն չօգնեց հերոսին: Պեգասը Բելերոփոնի ձեռքը չէր ընկնում: Հենց որ պատանի հերոսը մոտենում էր թևավոր նժույզին, սա իր հզոր թևերով ճախրում, հողմի արագութեամբ սավառնում էր ամպերի հետևը և արժվի պես ճախրում ամպերի մեջ: Ի վերջո, պատգամախոս Պոլիդեասի խորհրդով, Բելերոփոնը պառկեց քնելու Պիրենեի աղբյուրի կողքին, Աթենաս-Պալլասի զոհարանի մոտ, այնտեղ, ուր առաջին անգամ տեսել էր Պեգասին: Հերոսն ուզում էր երազի մեջ ստանալ աստվածների հայտնությունը: Եվ իրոք, երազի մեջ հայտնվեց ամպրոպային Ջևսի սիրելի դուստրը՝ Աթենասը, և սովորեցրեց, թե ինչպես պիտի բռնել Պեգասին: Մի ոսկեղեն սանձ տվեց և հրամայեց զոհ մատուցել ծովի աստված Պոսեյդոնին: Արթնացավ Բելերոփոնը: Զարմանքով տեսավ, որ ոսկեղեն սանձը ընկած է կողքին: Զերմեռանդ աղոթքով իր երախտիքը հայտնեց մեծ աստվածուհուն: Գիտեր, որ այժմ արդեն պետք է տիրի Պեգասին:

Շատ շանցած, իր ձյունաճերմակ թևերով, աղբյուրի մոտ ճախրեց զարմանահրաշ նժույզը: Խիզախորեն նրա մեջքին ցատկեց Բելերոփոնը, և զուխը գցեց ոսկեղեն սանձը: Երկար ժամանակ, հողմից էլ արագ Պեգասը թռցնում էր հերոսին երկնքով, բայց ի վերջո դապվեց և այդ պահից ի վեր հավատարիմ ծառայեց Բելերոփոնին:

Պեգասի թևերով հերոսը արագորեն սուրաց դեպի Լիկիայի լեռները, այնտեղ, ուր ապրում էր հրեշավոր Քիմերան: Սա զգաց թշնամու մոտենալը և, հզոր ու ահեղ, դուրս սողաց իր խավարչտին անձավից: Մոխրացնող հուր էր ժայթքում նրա երեք երախտից, շորսբուրը քուլա-քուլա ծուխ էր բարձրանում: Բարձր-բարձր սավառնեց Պեգասը Բելերոփոնի հետ, և բարձունքից հերոսը միմյանց հետևից նետեր արձակեց Քիմերայի վրա: Մոլեգին կատաղությամբ հրեշը ուժգնորեն զարկվում ու շուռ էր տալիս ժայռերը: Մոլեգնահար՝ սուրում էր նա լեռներով: Ամեն ինչ հրո ճարակ էր դառնում նրա բոցերից: Ամենուրեք հետապնդում էր նրան Բելերոփոնն իր թևավոր նժույզով: Քիմերան ոչ մի տեղ ապաստան չէր գտնում հերոսի անվրեպ նետերից: Մահաբեր նետերը ամեն տեղ հասնում էին նրան: Սպանեց Բելերոփոնն ահեղ հրեշին և մեծագույն փառքով վերագարձավ Իոբատես արքայի մոտ:

Բայց Իոբատեսը մի ուրիշ հանձնարարություն տվեց նրան: Նա հերոսին ուղարկեց ընդդեմ ռազմաշունչ սուլիմների: Բազում հերոսներ էին իրենց զուխը դրել սուլիմների դեմ մղած կռիվներում, բայց Բելերոփոնը հաղթեց նրանց: Այդ հաղթանակն էլ սակայն քիչ թվաց Իոբատեսին. չէ՞ որ նա ձգտում էր կործանել հերոսին: Ուստի և այս անգամ էլ նրան ուղարկեց անպարտելի ամազոնուհիների դեմ: Այս պատերազմից ևս Բելերոփոնը հաղթանակով դուրս եկավ: Եվ այս անգամ Իոբատեսը հաղթանակի փառքով վերադարձող հերոսին ընդառաջ ուղարկեց Լիկիայի հզորագույն այրերին, որպեսզի սրանք անակնկալ հարձակումով սպանեին անպարտելի Բելերոփոնին:

Լիկիացիները նրան ծուղակը քաշեցին, բայց այստեղ էլ չզոհվեց հերոսը: Լիկիայի բոլոր ուժեղագույն այրերն ընկան հզորագույն Բելերոփոնի ձեռքից: Եվ հասկացավ Իոբատեսը, թե ի՞նչ մեծ հերոս է հյուրընկալել: Մեծագույն պատվով ընդունեց պանծալի հաղթանակողին: Իոբատեսը նրան կնություն տվեց իր դստերը և որպես օժիտ՝ թագավորության կեսը: Լիկիացիները, իբրև նվեր, Բելերոփոնի համար առանձնացրին իրենց ամենաարգավանդ հողերը և դրին նրա տիրակալության տակ:

Այդ ժամանակից ի վեր Բելերոփոնը բնակություն հաստատեց Լիկիայում և սուրեց այնտեղ՝ փառքի ու պատվի մեջ: Բայց տարաբախտ վախճան ունեցավ Բելերոփոնի կյանքը: Գոռոզացավ մեծ հերոսը: Այնքան էր կուրացել իր մեծ փառքից, որ կամեցել էր հավասար լինել օլիմպացի աստվածներին: Բելերոփոնը վճռեց իր թևավոր նժույզով՝ Պեգասով սավառնել լուսակերտ Օլիմպոս՝ անձամահ աստվածների մոտ: Այսօրինակ գոռոզամտության համար Ջևսը պատժեց Բելերոփոնին: Շանթարձակը թևավոր Պեգասին համակեց մոլեգին կատաղությամբ: Եվ Պեգասը ցած նետեց Բելերոփոնին հենց այն պահին, երբ նա ուզում էր հեծնել նժույզը՝ Օլիմպոս սավառնելու համար: Այդ անկումից մեծազոր հերոսը բնորվեց: Եվ նա երկար թափառեց այդպես խելացնոր՝ «Թափառումի հովտում», մինչև որ իր սև թևերով թռավ եկավ մահվան գծնադեմ աստված Թանատոսը և առավ նրա հոգին: Այդպես ըստվերների տխրամած թագավորություն իջավ մեծ հերոս Բելերոփոնը:

1 Ցեղ, որ ապրելիս է եղել Լիկիայի հյուսիսային սահմանում:

Եւրազգեւած է քստ Հովեոսի «Ողիսական» պոեմի:

Լիդիայում, Միպիլոս լեռան մօտ կար մի մեծահարուստ քաղաք, որ Միպիլոս էր կոչվում այդ լեռան անունով: Այդ քաղաքում իշխում էր աստվածների սիրելի Տանտալոսը՝ Զևսի որդին: Ամեն ինչ լիառատ պարգեւել էին նրան աստվածները: Հողագնդի վրա չկար մեկը, որ առավել հարուստ ու երջանիկ լիներ, քան Միպիլոսի արքա Տանտալոսը: Նրան անբավ հարստութիւն էր բերում Միպիլոս լեռան ոսկու մեծահարուստ հանքավայրը: Ոչ ոք այդքան արգասաբեր դաշտեր չուներ, ոչ քրի այգիներն ու վաղերը այդքան սքանչելի պտուղ չէին տալիս: Աստվածների սիրելի Տանտալոսի մարգագետիններում արածում էին նրբազեղմ ոչխարների անհամար հոտեր, կենդանի ցուլերի ու կովերի մեծաքանակ նախիրներ, քամու պես սուրացող նծուզների բազում երամակներ: Տանտալոսի թագավորության մեջ ամեն ինչ լիառատ էր: Նա կարող էր երջանկության ու լիութեան մեջ ապրել մինչև խորին ծերութիւն, բայց նրան կործանեցին անսահման հպարտութիւնն ու մեղսագործութիւնները:

Աստվածները իրենց սիրելի Տանտալոսին դիտում էին իբրև իրենց հավատարի: Օլիմպոսյանները հաճախ էին զալիս Տանտալոսի ոսկեշող սրահները և ուրախ խնջույքի նստում նրա հետ: Մինչև իսկ լուսապայծառ Օլիմպոս, ուր չի հասել ոչ մի մահականացու, աստվածների կանչով հաճախ է այցելել Տանտալոսը: Այնտեղ նա մասնակից է եղել աստվածների խորհրդին և իր հոր՝ ամպրոպային Զևսի պալատում, սեղան նստել աստվածների հետ միասին:

Այդպիսի մեծ երջանկութիւնից Տանտալոսը գոռոզամիտ դարձավ: Մինչև իսկ ամպահալած Զևսին հավասար էր համարում իրեն: Եվ հաճախ, Օլիմպոսից վերադառնալով, Տանտալոսը իր հետ աստվածային ուտեստեղեն՝ ամբրոսիա էր բերում ու տալիս

1 Տանտալոսի առապելը մեզ դարմացնում է իր դաժանութեամբ: Տանտալոսն սպանում է իր որդուն՝ օլիմպոսցի աստվածների ամենիմացութիւնը փորձած լինելու համար միայն: Տանտալոսի այդ արարքի մեջ պարզորոշ արտահայտվում է այն ժամանակների վերապրուկը, երբ հույների մեջ գեոևս գոյութիւն են ունեցել մարդկային զոհաբերութիւնները:

իր մահկանացու ընկերներին, նրանց հետ խնջույքի նստելով իր պալատում: Մինչև անգամ այն վճիռները, որ աշխարհի ճակատագրի մասին կայացնում էին աստվածները՝ խորհրդի նստելով լուսավոր Օլիմպոսում, Տանտալոսը հայտնում էր մարդկանց: Նա չէր պահում այն գաղտնիքները, որ նրան վստահում էր հայրը՝ ամպահալած Զևսը:

Մի անգամ, Օլիմպոսում, խրախճանքի ժամին, Քրոնոսի մեծագույն որդին դարձավ Տանտալոսին և ասաց.

— Որդե՛ս, ես կկատարեմ ինչ որ կամենաս, խնդրի՛ր, ինչ որ սիրտդ կուզենա: Քեզ այնպես եմ սիրում, որ ուզածդ խնդիրքն իսկույն կիրականացնեմ:

Բայց Տանտալոսը, մոռանալով, որ ինքը մի մահականացու է լուկ, գոռոզամտորեն այսպես պատասխանեց իր հորը՝ վահանակիբ Զևսին.

— Ես քո ողորմածութեան կարիքը չունե՛մ: Ինձ ոչինչ հարկավոր չէ: Այն վիճակը, որ բաժին է ընկել ինձ, առավել՝ զեղեցիկ է, քան անմահ աստվածներինը:

Շանթարձակը ոչինչ շպտասխանեց որդուն: Նա ահեղորեն կիտեց հոնքերը, բայց զսպեց իր ցասումը: Նա դեռ սիրում էր որդուն, շնայած նրա գոռոզամտութեանը: Բայց, շատ շանցած, Տանտալոսը երկու անգամ դաժանաբար անարգանք հասցրեց անմահ աստվածներին: Եվ միայն դրանից հետո Զևսը պատժեց իր գոռոզամիտ որդուն:

Կրետեում, շանթարձակի հայրենիքում, մի ոսկեղեն շուն կար, որ ժամանակին պահպանում էր նորածին Զևսին ու նրան սնուցանող հրաշք այծին՝ Ամալթեյային: Իսկ երբ Զևսն աճեց ու առնացավ և Քրոնոսից խլեց աշխարհի տիրակալութիւնը, այդ շանը թողեց Կրետեում՝ իր սրբավայրը պահպանելու Եփեսոսի թագավոր Պանդարեոսը, զայթակղված այդ շան զեղեցկութեամբ և ուժով, ծածուկ Կրետե կղզի վրա նավով նրան փախցրեց Կրետեից: Բայց որտե՞ղ թաքցնել այդ դարմանահրաշ կենդանուն: Երկար մտորեց Պանդարեոսը այդ նավարկութեան ընթացքում և, վերջապես, որոշեց շանը պահ տալ Տանտալոսին: Միպիլոսի թագավորը աստվածներից թաքցրեց հրաշք կենդանուն: Ահեղորեն զայրացավ Զևսը: Իր մոտ կանչեց որդուն՝ աստվածների բանբեր Հերմեսին, և առաքեց Տանտալոսի մոտ՝ ոսկեղեն շունը ետ առնելու: Սրա-

թոյլ Հերմեսը մի ակնթարթում Օլիմպոսից Միպիլոս սուրաց, հայտնվեց Տանտալոսի առաջ և ասաց.

— Եփեսոսի արքա Պանդարեոսը Կրետեից՝ Զևսի սրբավայրից, հափշտակել է ոսկեղեն շունը և պահ է տվել քեզ: Ամենիմաց են Օլիմպոսի աստվածները, մահկանացուներն անկարող են որևէ բան թաքցնել նրանցից: Շունը ե՛տ տուր Զևսին: Զգուշացի՛ր Զևսի ցասումից:

Տանտալոսն այսպես պատասխանեց աստվածներին բաներին.

— Զո՛ւր ես սպառնում Զևսի ցասմամբ: Ես չեմ էլ տեսել ոսկեղեն շանը: Աստվածները սխալվում են, ինձ մոտ չէ այդ շունը:

Ահասարսուռ երգումով հաստատեց Տանտալոսը, որ զուտ ճշմարտություն է ասածը: Այդ երգումով նա առավել ևս զայրացրեց Զևսին:

Գա եղավ այն առաջին վերավորանքը, որ Տանտալոսը հասցրեց աստվածներին: Բայց դրանից հետո էլ շանթարձակը չպատժեց նրան:

Աստվածների ցասումը Տանտալոսն իր վրա հրավիրեց նրանց հասցրած հաջորդ՝ երկրորդ անարգումով և ահավոր մի շարագործությունամբ: Երբ օլիմպացիները խնջույքի հավաքվեցին Տանտալոսի պալատում՝ Միպիլոսի արքան մտադրվեց փորձել նրանց ամենիմացությունը: Նա հավատ չէր ընծայում օլիմպացիների ամենիմացությանը: Տանտալոսը նրանց համար ահավոր խրախճանք էր սարքել: Նա սպանել էր իր Պելոպս որդուն և նրա միսը, իբրև սքանչելի մի ուտեստ, խնջույքի ժամին մատուցել աստվածներին: Աստվածներն իսկույն վերահասու եղան Տանտալոսի շարանենգ հղացմանը, նրանցից ոչ ոք ձեռք չտվեց ահասարսուռ ուտելիքին: Միմիայն Գեմետրա աստվածուհին էր, որ լցված իր դատեր՝ Պերսեփոնի, առևանգման վշտով, մտորելով միայն նրա մասին ու տրտմության մեջ շուրջը ոչինչ չնկատելով, կերավ պատանի Պելոպսի ուսը: Աստվածները վեր առան քստմանի խորտիկը, Պելոպսի բոլոր ոսկորներն ու միսը կաթսայի մեջ դրին, իսկ կաթսան՝ բոցկլտացող կրակի վրա: Իսկ Հերմեսն իր հմայումներով կրկին կենդանություն տվեց տղային: Եվ հայտնվեց պատանին աստվածների առաջ առավել գեղեցիկ, քան էր, միայն այն ուսն էր պակասում, որ Գեմետրան էր կերել: Զևսի կամքով մեծն Հեփեսոսը Պելոպսի համար ուս պատրաստեց փայլուն փղոսկրից: Այդ

ժամանակից ի վեր Պելոպսի բոլոր սերունդների աշակողմյան ուսին մի ճերմակափայլ բիծ է լինում:

Իսկ Տանտալոսի այդ շարագործությունը բերնեբերան լցրեց աստվածների ու մարդկանց մեծ արքա Զևսի համբերության գավաթը: Շանթարձակը Տանտալոսին գլորեց իր եղբոր՝ Հադեսի խավարշտին թագավորությունը: Եվ այնտեղ նա կրում է իր ահավոր պատիժը: Քաղցից ու ծարավից տանջահար՝ կանգնած է նա վճիտ ջրի մեջ: Զուրը գրեթե հասնում է նրա կղզիկին: Բավական է մի փոքր միայն կռանալ, և նա կարող է հագեցնել իր տանջալի ծարավը: Բայց Տանտալոսի կռանալուն պես ջուրը չբանում է, և ոտքերի տակ մնում է միայն պապակ, սևացած հողը:

Տանտալոսի զլխավերևը կախ են ընկել պտղատու ծառերի ճյուղերը: Հյուսիսի թուզ, կարմիր խնձոր, նուռ, տանձ և ձիթապտուղ՝ կռացել են նրա զլխի վրա, խաղողի ծանրաբեռ ու հասուն ողկույզները գրեթե հավում են մազերին: Սովահար Տանտալոսը ձեռքը մեկնում է սքանչելի պտուղներին, բայց հենց նույն պահին կատաղի մի հողմ է սուրում ու հեռու քշում պտղավորված ճյուղերը: Բայց միայն սովն ու ծարավը չեն, որ տանջահար են անում Տանտալոսին. հավերժական երկյուղը մշտապես ճմլում է նրա սիրտը: Գլխավերևը մի վիթխարի քարածայռ կա կախված, որ հաղիվ է մնում տեղում և ամեն պահ սպառնում է վայր ընկնել և իր ծանրության տակ ճզմել Տանտալոսին: Եվ այսպես, հավերժական երկյուղից, սովից ու ծարավից տառապում է Միպիլոսի արքա և Զևսի որդի Տանտալոսը՝ դժնադեմ Հադեսի թագավորության մեջ:

ՊԵՆՈՊՍ՝

Շարագրված է բառ Սիլիոսի «Կերպարանափոխություններ» պոեմի և Պինդարոսի բանաստեղծությունների:

Տանտալոսի մահից հետո Միպիլոս քաղաքում իշխել սկսեց նրա որդի Պելոպսը, որին այդպիսի հրաշքով փրկել էին աստվածները: Բայց նա երկար չիշխեց հայրենի Միպիլոսում: Տրոյայի արքա Իլոսը կովի եկավ Միպիլոսի վրա: Տարաբախտ վախճան ունե-

1 Պելոպսի առասպելների մեջ ամենախորին հնությունը շատ նշաններ կան Գրանց մեջ մեք հանդիպում ենք հարսնացուին հափշտակելու միջոցով ամուս-

ցավ այդ պատերազմը Պելուպի համար: Տրոյայի հողը արքան հաղթեց նրան: Եվ Պելուպան ստիպված եղավ լքել հայրենիքը: Նա իր բոլոր գանձերը բարձեց արագընթաց նավերի վրա և իր հավատարիմ ուղեկիցների հետ բաց ծով գուրս եկավ հեռավոր նավարկության, դեպի Հունաստանի ափերը: Մի թերակղզու հասավ Պելուպսը Հունաստանի ծայրագույն հարավում և քնակութուն հաստատեց այնտեղ: Այդ ժամանակից ի վեր, Պելուպոսի անունով, այդ թերակղզին Պելոպոնես անունն է կրում:

Մի անգամ իր նոր հայրենիքում Պելուպսը տեսավ գեղանի Հիպոդամիային՝ Պիսա քաղաքի թագավոր էնոմայոսի դստերը: Հերոսին էնոմայոսի դուստրը գերեց իր գեղեցկութամբ, և նա վճռեց կնության առնել նրան:

Դժվար էր Հիպոդամիայի ձեռքն ստանալ: Էնոմայոսին սատգամախոսը գուշակել էր, որ նա կզոհվի իր դստեր ամուսնու ձեռքով: Այդ ճակատագրից խուսափած լինելու համար էնոմայոսը վճռել էր աղջկան կնության շալու Բայց ի՞նչ անի էնոմայոսը, ինչպե՞ս մերժի Հիպոդամիայի ձեռքը խնդրող բոլոր փեսացուներին: Բազում հերոսներ էին գալիս էնոմայոսի ժոռ և հարսնախոսություն անում նրա դստեր համար: Եվ նա վիրավորած կլիներ բոլորին՝ աղջկա ձեռքը մերժելով առանց որևէ պատճառի: Ի վերջո, էնոմայոսը ելքը գտավ: Ի լուր բոլորի հայտարարեց, որ իր աղջկան կնության կտա հերոսներից միայն նրան, ով երկանվի մրցության մեջ կհաղթի իրեն, բայց եթե պարտվողը ոչ թե ինքը, այլ փեսացուն լինի, ապա նա պիտի կյանքով հատուցի էնոմայոսը վճռել էր այդ միջոցին դիմել, քանի որ բովանդակ Հունաստանում չկար նրան հավասարը երկանիվ վարելու արվեստի մեջ: Եվ նրա նծույզներն էլ սրաթուղ էին ավելի, քան Բորեսոսի հյուսիսային մուկեղի հողմը: Պիսայի արքան կարող էր վստահ լինել, որ ոչ մի հերոս չի հաղթի իրեն: Սակայն կյանքից զրկվելու, անողորմ էնոմայոսի ձեռքով զոհ գնալու սարսափը շկասեցրեց Հունաստանի հերոսներից շատերին: Այնքան շքնազ էր Հիպոդամիան,

որ նրանք իրար հետևեց եկան արքայի պալատը՝ պատրաստ նրա հետ մրցության դուրս գալու, միայն թե կնության առնեն նրա դստերը: Բայց բոլորին էլ շար բախտ վիճակվեց, բոլորին էլ սպանեց էնոմայոսը, իսկ գլուխները կախեց իր պալատի դռներից, որպեսզի նոր եկած հերոսներից ամեն մեկը տեսնի, թե որքան շատ պանծալի հերոսներ են ընկել էնոմայոսի ձեռքով և վաղորոք լիմանա, թե ինչ ճակատագիր է սպասում իրեն: Բայց դա էլ չկասեցրեց Պելուպս հերոսին: Նա վճռեց ինչ դնով էլ լինի կնության առնել Հիպոդամիային և ուղևորվեց քաղաքից էնոմայոս արքայի մոտ:

Խստությամբ ընդունեց էնոմայոսը Պելուպսին և ասաց նրան. — Դու ուզում ես կնությա՞ն առնել իմ դուստր Հիպոդամիային: Չտեսա՞ր, թե նրա համար ինչքան փառապանծ հերոսներ են իրենց գլուխները գրել մեծավտանգ մրցության մեջ: Լա՛վ մտածիր, դու էլ շեռ խուսափի նրանց ճակատագրից:

— Ինձ չի՞ ահաբեկում զոհված հերոսների ճակատագիրը, — պատասխան ավեց Պելուպսը թագավորին, — ես վստահ եմ, որ Օլիմպոսի աստվածներն օգնական կլինեն ինձ: Նրանց օգնությամբ ես կնության կառնեմ Հիպոդամիային:

Դաժան մի ժպիտ օձի պես խաղաց էնոմայոսի շուրթերին. նա այդպիսի խոսքեր շատ էր լսել:

— Լսի՛ր, ուրեմն, Պելո՛պս, — ասաց նա, — ահա՛ մրցման պայմանները, մրցման ճանապարհն սկիզբ է առնում Պիսա քաղաքից, անցնում է ամբողջ Պելոպոնեսի միջով և հասնում մինչև հեռավոր Իսթմոս՝, ավարտվում ծովերի տիրակալ Պոսեյդոնի զոհարանի մոտ: Այդ զոհարանը Կորնթոսից հեռու չէ: Եթե զո՛ւ հարանի մոտ: Այդ զոհարանը Կորնթոսից հեռու չէ: Եթե զո՛ւ առաջինը հասնես զոհարանին՝ քո՞նն է հաղթանակը, բայց վա՛յ բեզ, եթե ճանապարհին ես հասնեմ քո հետևից: Այդ ժամանակ իմ նիզակը կխոցի բեզ, ինչպես խոցել է բազում հերոսների: Եվ դու անփառունակ կիջնես Հադեսի խավարամած թագավորությունը: Ես քեզ միայն մի՞ զիջողություն կանեմ, որ արել եմ և բոլոր մյուսներին. դու ճանապարհ կընկնես ինձնից առաջ. ես նախ զոհ կմատուցեմ մեծն շանթարձակին և ապա կելնեմ իմ երկանիվը: Մինչ

նանալու, այսպես ասած, առեանգման վերադրուկների հետ: Պելուպոսի մրցությունը էնոմայոսի հետ ոչ այլ ինչ է, քան հարսնացուի առեանգություն: Հունական սփորների վրա Պելուպսը հաճախ պատկերվում է Հիպոդամիայի՝ էնոմայոսի դստեր հետ երկանվով սլանալու, ասես նրան փախցնելու ընթացքում: Պատմել են նաև, որ էնոմայոսը իր սպանած փեսացուների գլուխները կախում էր իր պալատի դռներից:

1 Պիսա — քաղաք Պելոպոնեսի արևմուտքում, Ալգիեսոս գետի հովտում: Իսթմոս — Իսթմոսյան սրբանոցը, որ Պելոպոնեսը միացնում է Միջին Հունաստանի հետ:

ես զբաղված կլինեմ զո՛հ մատուցելով՝ շտապիր որքան կարող ես յատ ճանապարհ կտրել:

Պելոպսը հեռացավ էնոմայոսից: Կուահեց, որ իրեն միայն խորամանկությամբ կհաջողվի հաղթանակ տանել անողորմ թագավորից: Պելոպսը կարողացավ իր համար օգնական գտնել: Նա Յածուկ գնաց էնոմայոսի կառապան Միրթիլոսի՝ Հերմեսի որդու մոտ և, մեծամեծ պարգևներ խոստանալով, խնդրեց նրան, որ երիթներ չդնի էնոմայոսի երկանվի առանցքի վրա, որպեսզի անխիմները դուրս թռչեն արքայի երկանվից և ճանապարհին ետ զցնեն նրան: Երկար տատանվեց Միրթիլոսը, բայց Պելոպսը, ի վերջո, գայթակղեց նրան մեծահարուստ նվերներով, և Միրթիլոսը խոստացավ կատարել նրա խնդրանքը:

Լույսը բացվեց: Դուրս եկավ վարդամատն էոսը և ոսկեշող ներկեց երկնակամարը: Ահա՛՛ երկնքում արդեն երևաց նաև լուսաշող Հելիոսն իր ոսկեհուռ երկանվով: Հիմա արդեն կսկսվի մրցությունը: Աղոթեց Պելոպսը երկրասասան մեծն Պոսեյդոնին, աղերսելով նրա զթուփյունը, և ցատկեց իր երկանվի մեջ: Էնոմայոս թագավորը մոտեցավ Զևսի զոհարանին և նշան արեց Պելոպսին, որ նա կարող է արդեն ճանապարհ ընկնել: Պելոպսը ամբողջ ուժով բշեց իր ձիերին: Դղրդում են նրա կառքի անխիմները քարերին դիպչելով: Թռչունների պես սուրում են նժուլզները: Փռչու ամպի մեջ անհետանում է Պելոպսը: Խելահեղ արագությամբ նրան առաջ է մղում Հիպոդամիայի հանդեպ տաժած սերը և երկյուղը՝ իր կյանքի համար: Բայց ահա, նրա հետևից հեռվում լսվում է էնոմայոսի երկանվի զղրդյունը, որ ավելի ու ավելի պարզորոշ է դառնում: Պիսայի արքան հասնում է Տանտալոսի որդու հետևից: Քամու պես սուրում են արքայի նժուլզները, հողմի պես գալարվում է փոշին նրա կառքի անխիմների տակից: Մտրակեց Պելոպսն իր նժուլզներին, և նրանք էլ՝ ավելի արագ սուրացին: Քամին սուլում է Պելոպսի ականջներում ձիերի այդ կատաղի վազքից, բայց նա կարո՞ղ է ճողպարել էնոմայոսի նժուլզներից. չէ՞ որ արքայի ձիերը հյուսիսային հողմից էլ արագասլաց են: Էնոմայոսն ավելի ու ավելի է մոտենում: Պելոպսն իր թիկունքին արդեն զգում է էնոմայոսի ձիերի տաք շունչը, մի փոքր ետ նայելով՝ տեսնում է արդեն, թե արքան, հաղթական քրքիչով, ինչպես է ճոճում նիզակը: Աղերսեց Պելոպսը Պոսեյդոնին, և անժայրածիր ծովերի տիրակալը լսեց նրան: Էնոմայոսի կառքի անխիմները դուրս թռան առանցքից, նրա

երանիվը շուռ եկավ, և գետին տապալվեց Պիսայի անողորմ արքան: Անկումից ջախջախվեց էնոմայոսը, մահվան խավարը պատեց նրա աչքերը:

Պիսա վերադարձավ հաղթանակած Պելոպսը, կնության առավ Հիպոդամիային և տիրեց էնոմայոսի ամբողջ թագավորությանը: Իսկ երբ Միրթիլոսը՝ էնոմայոսի կառապանը, եկավ Պելոպսի մոտ և իբրև պարգև պահանջեց թագավորության կեսը, ապա Պելոպսն ափսոսաց ու չկամեցավ բաժանվել թագավորության կեսից: Տանտալոսի նենգամիտ որդին Միրթիլոսին խորամանկությամբ ծովափ տարավ և բարձրաբերձ ժայռի վրայից ծովի փոթորկուն ալիքների մեջ նետեց: Ժայռից ընկնելիս Միրթիլոսը նզովեց Պելոպսին ու նրա բոլոր հետնորդներին: Որքան էլ Պելոպսը ջանաց մեղմել Միրթիլոսի ցասումնալից հոգին, որքան էլ ցանկացավ մեղմել նաև նրա հոր՝ Հերմեսի, ցասումը, — ամեն ինչ ապարդյուն անցավ:

Ի կատար ածվեց Մերթիլոսի նզովքը: Այդ ժամանակից ի վեր անհամար աղետներ եկան Պելոպսի հետնորդների գլխներին. սրանք, իրենց զործած շարագործություններով, իրենց վրա հրավիրեցին աստվածների ցասումը:

ԵՎՐՈՊԱ՝

Շարագրված է ըստ Մոսոսի «Հովվերգություններ» պոեմի:

Փյունիկյան մեծահարուստ Սիդոն քաղաքի արքա Ագենորը երեք տղա ուներ և անմահ աստվածուհու պես գեղեցիկ մի աղջիկ: Դեռատի գեղեցկուհուն Եվրոպա էին կոչում: Ագենորի դուստրը մի անգամ երազ տեսավ: Նա տեսավ երազում, որ Ասիան և այն աշխարհամասը, որ Ասիայից անջատված է ծովով, երկու կնոջ կերպարանքով կոխվ են մղում իր համար: Կանանցից յուրաքանչյուրն ուզում էր տիրել Եվրոպային: Պարտություն կրողը Ասիան էր. և նա, ով դաստիարակել ու սնուցել էր Եվրոպային, ստիպված եղավ գեղանի աղջկան զիջել հակառակորդին: Եվրոպան՝ ահաբեկված, արթնացավ քնից. չկարողացավ կուահել այդ երազի իմաստը: Եվ

¹ Եվրոպայի հափշտակման առասպելը՝ հարսնացուին առևանգելու ճանապարհով ամուսնանալու սովորութի վերապրուկ է, իսկ Զևսի ցուլ գառնալը՝ տոտեմիզմի մնացուկ:

Ազենորի գեղանի դուստրն սկսեց խոնարհությամբ աղերսել, որ աստվածները տարաբախտությունը իրենից հեռացնեն, եթե երազի սպառնալիքը իրական է: Հետո, հագնելով իր ոսկեհյուս ծիրանի դգեստները, ընկերուհիների հետ գնաց ծովափնյա կանաչապատ ու ծաղկասփյուռ մարդագետինը: Այնտեղ, խայտալով, սիգոնյան աղջիկները ծաղիկներ էին քաղում ու լցնում իրենց ոսկեհոտ զամբյուղները: Քաղում էին բուրումնավետ, ձյունաճերմակ նարգիզներ, երփներանգ կրոկուսներ, մանուշակներ ու շուշաններ: Իսկ Ազենորի դուստրը, ընկերուհիների մեջ իր գեղեցկությամբ շողալով, քարիսներով շրջապատված Ափրոդիտեի նման, իր ոսկեհոտ զամբյուղիկի մեջ միայն ալ վարդեր էր հավաքում: Ծաղիկներ քաղելով, ծիծաղը շուրթերին աղջիկները մի ուրախ շուրջպար քոնեցին: Նրանց զնգուն ձայները հեռու էին տարածվում ծաղկուն մարգագետնով ու կապուտակ ծովով՝ խլացնելով նրա կամացուկ ու փաղաքուշ ծփանքը:

Բայց չքնաղ Եվրոպային չվիճակվեց երկար վայելել անհոգ կյանքը: Տեսավ նրան Քրոնոսի որդին՝ մեծազոր ամսահալած Զևսը, սիրեց ու վճռեց առևանգել: Իր հայտնվելով դեռատի Եվրոպային չվախեցնելու համար, նա գարմանահրաշ ցուլի կերպարանք առավ: Յլակերպ Զևսի մորթը շողում էր ոսկու պես, միայն ճակատին, որպես լուսին, հուրհրատին էր տալիս ճերմակ արծաթափայլ մի բիծ, իսկ ոսկեծույլ եղջյուրները կեռ էին ինչպես նորալուսինը, որ առաջին անգամ երևում է ծիրանափայլ վերջալուսի շողերի մեջ:

Հրաշք ցույց հայտնվեց մարգագետնում և թեթևասահ քայլերով, հագիվ միայն խոտերին դիպելով, մտեցավ աղջիկներին: Սիդոնյան աղջիկները չվախեցան նրանից, շրջապատեցին հրաշք կենդանուն և քնքշորեն շոյեցին նրան: Ցույր մտեցավ Եվրոպային, լիզեց աղջկա ձեռքերը և զգվեց նրան: Ցուլի շնչառությունից ամբրոսիայի հոտ էր բուրում և օդը հաղեցել էր այդ բուրմունքով: Եվրոպան իր քնքուշ ձեռքերով շոյում էր ցուլի ոսկեշող մորթը, գրկում գլուխն ու համբուրում: Ցույր մեկնվեց չքնաղ աղջկա ոտքերի մոտ, ասես աղերսում էր աղջկան, որ նստի իր մեջքին: Տեսնելով այդ, Եվրոպան սկսեց բարձրաձայն կանչել ընկերուհիներին.

— Շո՛ւտ, շո՛ւտ այստեղ վազեցեք: Եկեք նստենք այս հրաշք ցուլի մեջքին: Մի տեսե՛ք, թե ի՞նչ քնքշանքով է նայում մեզ: Օ՛, նա մարդկային խելք ունի: Ափսոս միայն, որ զուրկ է խոսելու

ծիրքից: Եկեք նստենք նրա մեջքին, գրոսնենք: Մի տեսեք, թե որքան խոնարհ է ու հնազանդ:

Եվրոպան, ծիծաղելով, նստեց ցուլի լայն մեջքին: Մյուս աղջիկներն էլ ուզում էին նստել նրա կողքին: Բայց հանկարծ ցույլ վեր թռավ ու արագորեն դեպի ծովը սուրաց: Առևանգեց նրան, ում որ ուզում էր: Սիդոնյան աղջիկները վախից ճչացին: Իսկ Եվրոպան ձեռքերը դեպի ընկերուհիներն էր կարկանդակ ու օգնության էր կանչում նրանց: Բայց աղջիկներն անզոր էին օգնության հասնել: Հողմի պես սուրում էր ոսկեղջյուր ցույլը: Նա ծովը նետվեց և արագ, դելփինի պես, լող տվեց ծովի կապուտակ ջրերով: Ալիքները տեղի էին տալիս նրա առաջ, իսկ ջրի ցայտքերը մարդարիտների պես գլորվում էին նրա մորթի վրայով՝ առանց մորթը թրջելու:

Ծովի խորքից գուրս լողացին գեղանի ներեուհիները. սրանք խոնկում են ցուլի շուրջը և լողում նրա հետևից: Մինչև իսկ ծովերի աստված Պոսեյդոնն է այնտեղ, շրջապատված ծովային աստվածներով՝ լողում է իր երկանվով բուրբի առաջից, իր եռաժանիով սանձում է ալիքները՝ ծովի վրա ճանապարհ հարթելով իր մեծ եղբայր Զևսի համար: Սարսափից դողալով, Եվրոպան նստած է ցուլի մեջքին: Մի ձեռքով կառչել է նրա ոսկեծույլ եղջյուրից, իսկ մյուսով հավաքում է իր ծիրանի զգեստի ծայրերը, որ շթրջվեն ծովի ալիքներից: Բայց զուր է Եվրոպայի երկյուղը. ծովը ծփում է քնքշորեն և նրա աղի ցայտքերը շեն հասնում աղջկան: Ծովային դելփյուրը խաղում է Եվրոպայի գանգուրների հետ և ծածանում նրա նրբահյուս ծածկոցը: Գնալով հեռանում է ավեր. ահա և բուրբովին անհետացավ կապուտակ հեռուներում: Չորսրոլորը ծովն է և կապույտ երկինքը: Եվ վախից դողացող ձայնով հարցնում է Եվրոպան.

— Օ՛, աստվածային ցուլ, ո՞ր ես տանում ինձ: Ո՞վ ես դու Աստված չե՞ս արդյոք: Այլապես կարո՞ղ էիր արդյոք այսպես թեթևորեն ճեղքել ծովային ալիքները քո ոտքերով: Չէ որ դելփինները երբեք ցամաք դուրս չեն գալիս, իսկ ցուլերը վախենում են աղի ջրերից: Առանց մորթդ թրջելու սուրում ես գու՞ ծովի միջով: Գուցե ե հիմա երկի՞նք կճախրես թեթևաթև ճայի՛ նման: Օ՛, ինչե՞ս, ես՝ տարաբախտ, այսօր լքեցի հորս տունը, ինչո՞ւ վստահեցի քեզ: Օ՛, գթա՛ ինձ, մեծն երկրասասան Պոսեյդոն: Չէ ո՞ր գու՞ ես, ծովային հորձանուտների տիրակալդ, որ սուրում ես այս երթի առչեց: Դու ես առաջնորդում նրան ծովի միջով:

Եվ ոսկեղջյուր ցուլն այսպես պատասխանեց Եվրոպային՝

— Հանդարտվիր, հրաշալի աղջիկ: Մի՛ վախեցիր ինձնից: **Յժ** ամպրոպային Ձևն եմ: Ես միայն այս տեսքով է, որ ցուլ եմ, չէ՞ որ ես կարող եմ ուզածդ կերպարանքն առնել: Քո սերն է, որ ինձ ստիպում է ցուլի տեսք առած լողալ կապուտակ ծովի միջով: Դու կապրես արգասաբեր Կրետե կղզում, որ իմ օրբանն է եղել: Կրետեում դու երեք տղա կունենաս: Մեծազոր արքաներ կլինեն նրանք: Կտիրեն Կրետեին և բազում ժողովուրդներին:

Այսպես խոսեց Ձևը: Եվ ի կատար ածվեց նրա խոսքը: Շատ շանցած հեռու հեռվում հրեացիին Կրետեի ափերը: Փութով զեպի ծովափ լողաց ցլակերպ Ձևն իր թանկագին բեռով և ափ գուրս եկավ: Եվրոպան դարձավ Ձևի կինը, և այդ ժամանակից ի վեր ապրեց Կրետեում: Եվրոպան և Ձևը երեք որդի ունեցան՝ Մինոսը, Ռադամանթոսը և Սարպեդոնը: Եվ աշխարհով մեկ թնդում էր ամպ-ըռպային Ձևի այս մեծազոր և իմաստուն որդիների փառքը:

ԿԱԳՄՈՍ՝

Շարագրված է ըստ Սվիդիոսի «Կեոպուրանեփոխությունեհ» պոեմի:

Երբ Ձևը, ցուլի կերպարանք առած, առևանգեց Եվրոպային, մեծապես վշտացավ հայրը՝ Միդոնի արքա Ագենորը: Ոչինչ չէր կարող սփոփել նրան: Արքան իր մոտ կանչեց երեք որդիներին՝ Փինիկսին, Կրիկսին ու Կադմոսին, և նրանց ուղարկեց Եվրոպային որոնելու: Մահվան սպառնալիքով որդիներին արգելեց ձեռնունայն տուն վերադառնալ: Փինիկսն ու Կրիկսը շուտով լքեցին Կադմոսին, նրանք երկու թագավորություն հիմնադրեցին. Փինիկսը՝ Փյունիկիան², իսկ Կրիկսը՝ Կրիկիան և յուրաքանչյուրը հաստատվեց իր թագավորության մեջ:

Կադմոսը մեն-մենակ շարունակեց իր ուղին: Երկար թափա-

¹ Կադմոսի առասպելի մեջ մենք դարձյալ հանդիպում ենք տոտեմիզմի մնացուկներին. դրանք արտահայտվում են վիշապից, ալիլի շուտ նրա ժանիքներից ուղեմիկների առաջանալու մեջ: Հենց Կադմոսն ու նրա կինն էլ վերջում օձ են դառնում:

² Փյունիկիան գտնվում է Միջերկրական ծովի արևելյան ափին: Նրա խոշորագույն բազմերես են Տյուրոսը և Սիդոնը: Կրիկիան գտնվում է Փոքր Ասիայի հարավում:

նեց նա աշխարհով մեկ, ամենուրեք որոնելով Եվրոպային: Բայց նա կարող էր գտնել քրոջը, երբ ինքը՝ Ձևն էր նրան բուրբոց թաքցնողը: Ի վերջո, կորցնելով քրոջը գտնելու հույսը և տուն վերադառնալուց երկյուղ կրելով, Կադմոսը վճռեց ընդմիջտ մնալ օտարության մեջ: Եվ նա զնաց սրբազան Դելփիք ու նետածիգ Ապոլոնի պատգամախոսին հարցմունք արեց, թե ո՞ր երկրում բնակություն հաստատի և քաղաք հիմնադրի: Այսպես պատասխան տվեց Կադմոսին Ապոլոնի պատգամախոսը:

— Առանձին ընկած մի բացատում դու մի կով կտեսնես, որ երբեք լուծ չի կրել: Հետևիր նրան, և այնտեղ, ուր կովը մեկնվի խոտերի վրա՝ բարձրացրու քաղաքի պարիսպները և բեռվտիա կոչիր երկիրը:

Այս պատասխանն առնելով, Կադմոսը լքեց սրբազան Դելփիքը: Հենց նոր էր դուրս ելել դարպասներից, երբ մի ձյունասպիտակ կով տեսավ, որ բացատում արածում էր առանց հսկողության: Կադմոսը, սիդոնյան իր հավատարիմ ծառաների հետ, հետևեց կովին՝ փառաբանելով մեծն Ապոլոնին: Արդեն կտրում-անցնում էր Կեփիսոս՝ գետի հովիտը, երբ մեկ էլ հանկարծ կովը կանգ առավ, գլուխը բարձրացրեց զեպի երկինք, բառաչեց, նայեց իրեն հետևող ուղեմիկներին և հանգիստ մեկնվեց կանաչի վրա: Ապոլոնի հանդեպ երախտագիտություն մեք առեցուն՝ Կադմոսը ծնկի իջավ, համբուրեց իր նոր հայրենիքի հողը և աստվածների բարեմաղթությունն աղերսեց անծանոթ լեռների ու հովիտների համար: Կադմոսը քարերից իսկույն մի զոհարան սարքեց, որպեսզի զոհ մատուցի վահանակիր Ձևին, բայց քանի որ ջուր չկար զոհաբերության համար, նա իր հավատարիմ սիդոնցիներին ջրի ուղարկեց:

Դարավոր անտառը հեռու չէր, փայտահատի կացինը դեռ երբեք չէր դիպել այդ անտառի ծառերին: Անտառի մեջ թփուտներով պատած մի խորունկ անձավ կար, որի շուրջը անկանոն վիթխարի քարեր էին կիտված: Այդ անձավից, քարերի միջով մի խոխոզուն աղբյուր էր հոսում, որի ջրերը թափանցիկ էին բյուրեղի պես: Անձավում մի հսկայական օձ էր ապրում, որ նվիրված էր պատերազմի աստված Արեսին: Օձի աչքերը կրակի պես հուրհրատում էին, և եռաշար թունոտ ատամներ ունեցող երախից եռաճյուղ խայթ էր դուրս դալիս. ոսկե կատարն ահեղորեն տատանվում էր օձի

³ Բեռվտիալում գտնվող գետ, որ թափվում է Կոպայիսյան լիճը:

գլխին: Երբ Կաղմոսի ծառաները մոտեցան աղբյուրին և ջրամաններն արդեն սուզել էին սառնորակ ջրի մեջ՝ ահավոր Ֆշշոցով օձը դուրս սողաց անձալից՝ իր վիթխարի մարմինը զալարելով քարերի միջով: Սարսափից գունատվեցին Կաղմոսի ծառաները, նրանց ձեռքերից ընկան ջրամանները, սառցաշունչ սոսկումը կաշկանդեց նրանց մարմնի անդամները: Օձը բարձրացավ պռչի վրա. անտառի դարավոր ծառերից էլ բարձր էին նրա գլուխն ու բաց երախը: Սիդոնցիներին ոչ մեկը դեռ չէր էլ հասցրել միտք անել փախչելու կամ պաշտպանության մասին, երբ ահասարսուռ օձը նետվեց նրանց վրա, ոմանց պատառոտեց իր սուրսայր ատամներով, մյուսներին սեղմեց իր վիթխարի մարմնի զալարներով, երբորդներին խեղդամահ արեց իր թունոտ շնչով: Զօհ գնացին Կաղմոսի ծառաները:

Կաղմոսը շատ սպասեց իր ծառաների վերադարձին: Արևն արդեն թեքվում էր դեպի արևմուտք, սուվերներն սկսեցին երկարել, իսկ ծառաները չկան ու չկան: Շատ է զարմանում Ազենորի որդին, թե ո՛ր կորան իր սիդոնցիները, ինչո՞ւ են այդքան դանդաղում: Վերջապես, նա իր ծառաների հետքերով անտառ մտավ՝ առյուծի մորթին իբրև զբահ վրան ձգած, իր կտրուկ սրով գոտեերված ու նիզակը ձեռքն առած. իսկ հերոսի ամենահուսալի պատվարը նրա քաջությունն էր ու կորովը: Կաղմոսը մտավ անտառ և իր հավատարիմ ծառաների մարմինները պատառոտված տեսավ. վիթխարի օձը մեկնվել էր նրանց վրա: Վշտով ու ցասումով լեցուն՝ գոչեց Կաղմոսը.

— Օ՛, իմ հավատարիմ ծառանե՛ր, ե՛ս պիտի լինեմ ձեր վրիժառուն: Կամ կլուծեմ ձեր վրեժը, կամ էլ, ձեզ հետ միասին, կիջե՛նեմ սուվերների խավարչտին թագավորությունը:

Կաղմոսը ժայռի մեծություն մի մեծ քար առավ ձեռքը և, թափ առնելով, նետեց օձի վրա: Այդ հարվածից ամբողջ աշտարակը կարող էր տապալվել, բայց օձը մնաց անվնաս: Օձին սատարում էին նրա ամբողջ մարմինը պատող պողպատի պես ամրապինդ թեփուկները: Եվ այդ ժամանակ ճոճեց իր նիզակը Ազենորի որդին և, ի մի հավաքելով բոլոր ուժերը, մխրճեց հրեշի թիկունքը: Օձի պողպատե թեփուկները շպաշտպանեցին նրան Կաղմոսի նիզակից, ոչ խորը, մինչև կոթը, մխրճվեց հրեշի մարմինը: Գալար-գալար լինելով, օձն ատամների մեջ առավ նիզակը և ուզեց դուրս բերել իր արնաթաթավ վերքի միջից: Բայց զուր էին նրա ճիգերը. նիզակի

ծայրը մխրճված մնաց վերքի մեջ, Արեսի օձը միայն փայտե կոթը կարողացավ փշրել: Սև թուլնից ու կատաղությունից փքվել էր օձի պարանոցը, արնախառն փրփուրը հորձանք տալով հորդում էր երախից, մոլեգին ֆշշոցը հեռու արձագանք էր տալիս երկրով մեկ, օդը հագեցել էր նրա գարշահու շնչով: Մերթ վիթխարի օղակներ տալով զալարվում էր գետնին, մերթ կատաղի պտույտներ գործելով վեր էր խոյանում: Դարավոր ծառերը արմատախիլ անելով գետին էր տապալում նա և պոչով վիթխարի քարեր նետում շորս կողմը: Զանում էր թունոտ երախն առնել Կաղմոսին, բայց հերոսը առյուծի մորթը վահան դարձրած, իր սրով շարունակ ետ էր վանում օձին: Հրեշն իր ատամներով կրծում էր հատու սուրը, բայց դրանով միայն ատամներն էր բթացնում:

Վերջապես մի հզոր հարվածով Ազենորի որդին սրախողխող արեց օձի վիզը և այնքան ուժգին էր մեծազոր հերոսի հարվածը, որ հրեշին դամեց կաղնուն:

Դարավոր կաղնին կոացավ հրեշի մարմնի ծանրությունից: Ապշահար նայում է Կաղմոսը իր տապալած օձին՝ զարմանք կտրած նրա մեծությունից: Մեկ էլ հանկարծ մի անհայտ ձայն հնչեց անտառում.

— Խ՛նչ ես կանգնել, Ազենորի որդի, և ապշահար նայում քո սպանած օձին: Շատ չանցած, երբ դու օձ դարձած կլինես, մարդիկ քե՛զ վրա կզարմանան:

Նայում է Կաղմոսը շորս դին ու չզիտե, թե ո՛րտեղից է գալիս այդ խորհրդավոր ձայնը: Սոսկումից ցնցվեց հերոսը՝ այդ կանխազուշակությունը լսելով. մարմինը փշաքաղվել էր: Կանգնած իր սպանած օձի առաջ՝ քիչ է մնում ուշաթափ լինի Կաղմոսը: Եվ այդ պահին Կաղմոսի առաջ հայտնվեց Զևսի սիրելի դուստր Աթենաս-Պալլասը: Նա հրամայեց հերոսին հանել օձի ատամները և իբրև սերմ ցանել վարած դաշտում:

Կաղմոսը կատարեց ուղղմատենը բվակն դիցուհու հրամայածը: Հենց նոր էր ցանել օձի ատամները, երբ, օ՛ հրաշք, գետնից ծլեցին նախ նիզակների ծայրերը, ապա վարելահողի երեսին երևացին սաղավարտների կատարները, հետո՝ ուղմիկների գլուխները, ուսերը, զրահավորված լանջերը, ձեռքերը՝ վահան բռնած. վերջապես վիշապի ատամներից դուրս եկավ զինավառ ուղմիկների մի ամբողջ ջոկատ: Այս նոր ու անծանոթ սոսխների

տեսնելով, Կաղմոսը ձեռքը դնելի սուրը տարավ, բայց հողից ծնված ռազմիկներից մեկը գոչեց.

— Ձեռքդ սրիդ մի՛ տար: Զգուշացիր երկպառակիչ կովին միջամուխ լինելուց:

Այսպես գոչեց ռազմիկը և իր սուրը մխրճեց հարևանի կուրծքն ու գետին տապալեց նրան. բայց նույն պահին էլ ինքն ընկավ դիտապատ՝ խոցված սուրսայր նիզակից: Մի անավոր ու արյունահեղ մարտ սկսվեց ռազմիկների միջև: Նրանք խոցում էին միմյանց սրերով ու նիզակներով և իրար հետևից, մահամերձի հառաչանք արձակելով, ընկնում այն հողի վրա, որ հենց նոր էր ծնել նրանց: Արդեն ռազմիկներից միայն հինգն են մնացել: Եվ այդ ժամանակ, Աթենաս-Պալլասի հրամանով, նրանցից մեկը ցած նետեց իր զենքերը՝ ի նշան խաղաղության: Ռազմիկները եղբայրության սերտ դաշն կնքեցին: Հողի մեջ ցանված վիշապի ատամներից ծնված հենց այդ ռազմիկներն էլ դարձան Կաղմոսի օգնականները՝ յոթնադուռն Թեբեի բերդը՝ Կաղմեան կառուցելիս:

Կաղմոսը հիմնադրեց Թեբե մեծ քաղաքը, օրենքներ տվեց քաղաքացիներին և կազմեց ողջ տերությունը: Օլիմպոսի աստվածները Կաղմոսին կնուսթյան տվեցին Արեսի և Ափրոդիտի շքնադ գոտերը՝ Հարմոնիային: Հոյակապ էր Թեբեի մեծ հիմնադրի հարսանեկան խրախճանքը: Բոլոր օլիմպացիները ներկա էին այդ հարսանիքին և մեծահարուստ շնորհներ շալլեցին նորապսակներին:

Այդ ժամանակից ի վեր Կաղմոսը դարձավ Հունաստանի առավել հզոր թագավորներից մեկը: Անբավ հարստություն ուներ նա: Մեծաթիվ էր ու անպարտելի նրա զորաբանակը, որի գլուխ կանդնած էին օձի ատամներից ծնված ռազմիկները: Այնպես էր թվում, թե երջանկությունն ու հրճվանքը հավերժ պիտի թագավորեն Ագենորի որդու տանը, բայց միայն երջանկություն չէր, որ օլիմպացիները տվել էին նրան: Կաղմոսին վիճակվեց բազում վշտեր ճաշակել: Գուստրերը՝ Սեմելեն և Ինոն, զոհվեցին հոր աչքերի առաջ: Իրավ է, մահից հետո նրանք ընդունվեցին օլիմպացի աստվածների կաճառի մեջ, բայց, այնուամենայնիվ, Կաղմոսը կորցրեց իր սիրասուն աղջիկներին: Ակտեոնը՝ Կաղմոսի թոռը, նրա զուստր Ավտոնոյեի տղան, դարձավ Արտեմիսի ցասման զոհը: Կաղմոսին վիճակվեց նաև թոռների կորուստը ողբալ:

Զառամության տարիներին, ծանրագին վշտերից խենթացած

Կաղմոսը լքեց յոթնադուռն Թեբեն: Իր կնոջ՝ Հարմոնիայի հետ նա երկար թափառեց օտարության մեջ և, ի վերջո, հեռավոր Իլիրիա՝ հասավ: Կաղմոսը սրտի կակիծով մտաբերեց բոլոր այն տարաբանությունները, որ եկան իր տան գլխին, մտաբերեց իր կոնիվն օձի հետ և այն խոսքը, որ խորհրդավոր ու անհայտ ձայնն էր ասել:

— Այն օձը, որին ես սրախողխող արեցի, արդյոք աստվածներին չէ՞ր նվիրաբերված, — ասաց Կաղմոսը. — եթե աստվածները, այնպես ծանրագին, այդ օձի համար են պատժում ինձ, ապա ավելի լավ է ինքս օձ դառնամ:

Այս խոսքն արտաբերելուն պես Կաղմոսի մարմինը ձգվեց ու պատվեց թեփուկներով, ոտքերն ի մի ձուլվեցին ու դարձան օձի երկար ու գալարուն պոչ: Սոսկումնահար, արցունքն աչքերին, դեռևս պահպանվող ձեռքերը Հարմոնիային կարկառելով՝ նա կանչում է կնոջը.

— Օ՛, ինձ մոտ արի, Հարմոնիա: Հավիր ինձ, հավիր իմ ձեռքերին քանի դեռ ես ամբողջովին օձ չեմ դարձել:

Նա կանչում է Հարմոնիային, դեռ էլի շատ բան է ուզում ասել նրան, բայց լեզուն երկփեղկվում է, և բերանում արդեն պտտվում է օձի խայթը, իսկ բերնից միայն օձային ֆշշոց է լսվում: Հարմոնիան նրա մոտ է վազում:

— Օ՛, Կաղմոս, — ձայն է տալիս նա, — շուտ ազատվիր այդ կերպարանքից: Օ՛, աստվածներ, ինչո՞ւ ինձ էլ օձ չեք դարձնում:

Վիթխարի օձ դարձած Կաղմոսը պարուրվել է իր հավատարիմ կնոջ շուրջը, լիզում է երեսը իր երկճուղանի խայթով: Հարմոնիան տրտմությամբ շոյում է թեփուկներով պատած օձի մեջքը: Աստվածները Հարմոնիային էլ օձ դարձրին, և եղավ երկու օձ՝ Հարմոնիան ու Կաղմոսը:

Կաղմոսն ու նրա կինը իրենց կյանքն ավարտեցին օձային կերպարանքով:

¹ Երկիր, որ ընկած է Ագրիատիկ ծովի արևելյան ափերին:

Թերեք քաղաքում ապրում էր գետալին աստված Աստպոսի՝ դուատր Անտիոպեն։ Հմայված նրա գեղեցկությամբ՝ ամպրոպային՝ Զևսը սիրեց նրան։ Անտիոպեն երկու զավակ ունեցավ, որոնք երկվորյակ էին։ Նրանց Զեթոս և Ամփիոն կոչեց։ Երկյուղ կրելով հոր ցասումից, որ ծածուկ ամուսնացել է Զևսի հետ, Անտիոպեն իր փոքրիկ մանուկներին՝ զամբյուղի մեջ դրեց և լեռները տարավ։ Համոզված էր Անտիոպեն, որ Զևսը իր զավակներին կորստյան չի մատնի։ Եվ իսկպես, Զևսը հույ տարավ իր որդիների համար։ Նա մի հովիվ ուղարկեց այնտեղ, ուր գտնվում էին Զեթոսն ու Ամփիոնը։ Հովիվը գտավ Զևսի ու Անտիոպեի զավակներին, իր տուն տարավ ու դաստիարակեց։ Եվ այդպես, եղբայրները մեծանում էին հովվի տանը։ Դեռ մանկուց Զեթոսն ու Ամփիոնը բնավորությամբ զանազանվում էին միմյանցից։ Զեթոսն ուժեղ տղա էր, և վաղ հասակից սկսեց օգնել հորը՝ հոտը պահելիս, իսկ Ամփիոնը հեղ ու բարեհամրույր խառնվածք ուներ. ոչինչ նրան այնպես չէր գրավում, ինչպես երաժշտությունը։ Երբ երկու եղբայրն էլ աճեցին ու հասունացան, Զեթոսը մեծագոր ուղղմիկ ու անվեհեր որսորդ դարձավ։ Ուժով ու ճարպկությամբ նրան գերազանցող չկար. նրան հրճվանք էր պատճառում միայն զենքի շառաչը մարտի ժամին և վայրի գազանների որսը։ Իսկ Ամփիոնին, որ Ապոլոն աստծո սիրելին էր, միայն մի բան էր ուրախացնում՝ նվագելը ոսկեղար կիթառի վրա, որ նրան ինքը կետույի արծաթադեղ որդին՝ Ապոլոնն էր սյարգեել։ Ամփիոնը կիթառի վրա նվագում էր այնքան հրաշալի, որ իր նվագով շարժման մեջ էր դնում մինչև անգամ ծառերն ու ժայռերը։

Եվ այսպես, առաջվա նման ապրում էին պատանիները հովվի մոտ՝ անտեղյակ, թե ովքեր են իրենց հայրն ու մայրը։ Իսկ նրանց մայրը՝ Անտիոպեն, այդ նույն ժամանակ տառապում էր Թերեքի անգութ արքա Լիկոսի և նրա կնոջ՝ Դիրկեի բռնություններից։ Ծանրագին շղթաներով կաշկանդված՝ Անտիոպեն նետված էր զընդան, ուր չէր թափանցում արևի շողը, բայց Զևսը ազատ արձակեց նրան։ Շղթաներն իրենք թափվեցին նրա վրայից, զնդանի զոները բացվեցին նրա առաջ. Անտիոպեն փախավ լեռները և

ապաստան գտավ նույն այն հովվի խրճիթում, որ դաստիարակել էր նրա զավակներին։

Հենց նոր էր հովիվը նրան առել իր պաշտպանության տակ, երբ անողորմ Դիրկեն հայտնվեց հովվի առաջ. Ուրիշ թերեուհինների հետ միասին նա լեռներում անց էր կացնում Դիոնիսոսի ուրախ տոնախմբությունը։ Բաղեղապատակը զլխին, թիրսոսը ձեռքին լեռներում թափառելիս, նա պատահմամբ մոտեցավ հովվի խրճիթին։ Դիրկեն տեսավ Անտիոպեին և անգութ թագուհու սքափից պսոթկաց անզուպելի ատելություն։ Նա վճռեց կորստյան մատնել տարաբախտ Անտիոպեին։ Դիրկեն կանչեց Զեթոսին ու Ամփիոնին, ամբաստանեց Անտիոպեին ու պատանիներին համոզեց Աստպոսի անմեղ գտեքը կապել վայրի ցուլի եղջյուրներից, որ ցուլը խոշտանգի նրան։ Զեթոսն ու Ամփիոնը հենց այն է, ուզում էին ի կատար ածել Դիրկեի ասածը, արդեն բռնել էին ցուլին ու մոտ բերել Անտիոպեին, բայց այդ պահին, Անտիոպեի բախտից, հովիվը վրա հասավ։ Նա դիտեր երկվորյակների ծննդյան գաղտնիքը և իսկույն ճանաչել էր Անտիոպեին, երբ սա եկել ու ապաստան էր խնդրել իրենց։ Տեսնելով, որ Անտիոպեի հարազատ զավակներն ուզում են իրենց մորը կապել կատաղի ցուլի եղջյուրներից, հովիվը բացականեց։

— Տարաբախտներ, այդ ի՞նչ ահավոր հանցանք եք ուզում գործել։ Դուք ուզում եք, ինքներդ էլ շիմանալով ձեր արածը, սոսկալի մահվան մատնել ձեր հարազատ մորը։ Զէ՞ որ նա ձեր հարազատ մայրն է։

Սոսկումով լցվեցին Զեթոսն ու Ամփիոնը՝ կուահելով, թե ինչ ահավոր շարագործություն կարող էին կատարած լինել անողորմ Դիրկեի մեղքով։ Եվ, ցասումով համակված, բռնեցին Դիրկեին, որ ամբաստանել էր իրենց մորը, և կապեցին վայրի ցուլի եղջյուրներից՝ ասելով.

— Ի՛նքդ մատնվիր այն մահվանը, որին ուզում էիր դատապարտած լինել մեր մորը։ Թող այդ մահը լինի քո արժանի պատիժը՝ և՛ դաժան, և՛ զրպարտող լինելուդ համար։

Տառապագին մահվան մատնվեց Դիրկեն։ Իրենց մոր վրեժը Զեթոսն ու Ամփիոնը լուծեցին նաև Լիկոսից. սպանեցին նրան ու նվաճեցին Թերեքի տիրապետությունը։

Դառնալով Թերեքի արքաները, եղբայրները վճռեցին ամբացնել իրենց բաղաբը։ Միայն Թերեքի բարձրագիբ կաղմեան՝ կաղմոսի

¹ Գետ Բեոփոխյում։

կառուցած այդ միջնաբերդն էր պաշտպանված պարիսպներով, իսկ մնացած քաղաքն անպաշտպան է: Եղբայրներն իրենց ձեռքերով պարիսպ քաշեցին Թեբեի շուրջը շուրջը: Եվ որքան տարբեր էր նրանց աշխատանքը: Տիտանի պես մեծազոր Ջեթուսը, բոլոր ուժերը լարելով, վիթխարի քարաժայռեր էր կրում ու կիտում իրար վրա: Ամփիոնը քարաժայռեր կրելու հետ գործ չունեւ: Հլու-հնազանդ նրա ոսկելար կիթառի հնչյուններին՝ քարերն իրենք իրենց շարժվում էին ու շարվում որպես բարձրադիր ու անխորտակելի պարիսպ: Հեռու-հեռու տարածվեց Ջեթուս և Ամփիոն մեծ հերոսների հռչակը, նրանց ճանաչում էին մինչև իսկ Հունաստանի սահմաններից շատ հեռու: Անգամ Տանտալոսը՝ աստվածների սիրելին, Ամփիոնին կնության տվեց իր Նիոբե դստերը: Իսկ Ջեթուսն ամուսնացավ Աեդոնեի՝ Եփեսոսի արքա Պանդարեոսի դստեր հետ: Նիոբեն ու Աեդոնեն պատուհաս բերեցին Անտիոպի որդիներին տան գլխին:

ՆՆՈՒՅԷ

Շարադրված է ըստ Օվիդիոսի «Կերպարանափոխություններ» պոեմի:

Թեբեի արքա Ամփիոնի կինը՝ Նիոբեն, յոթ տղա և յոթ աղջիկ ունեւ: Հպարտանում էր Տանտալոսի դուստրն իր զավակներով: Պատանի աստվածների պես գեղեցիկ էին նրա երեխաները: Երջանկությունը, հարստությունը և սքանչելի այդ զավակները աստվածներն էին պարզեւ Նիոբեին, բայց նրանց հանդեպ Տանտալոսի դուստրը երախտապարտ չգտնվեց:

Մի անգամ, կույր պատգամախոս Թիրեսիասի դուստր Մանտոն, անցնելով յոթնադուռն Թեբեի փողոցներով, բոլոր թեբեուհիներին կոչ արեց զոհ մատուցել Լետոյին ու նրա երկվորյակ զավակներին՝ ոսկեգանգուր, հեռահար Ապոլոնին և ղեռատի Արտեմիսին: Հնազանդ Մանտոյի կոչին՝ թեբեուհիները, գլուխները զարդարած դափնեպսակներով, գնացին դեպի աստվածների զոհասեղանները: Միմիայն Նիոբեն էր, որ հպարտ իր զորությամբ և աստվածների շնորհած երջանկությամբ, չկամեցավ Լետոյին զոհ մատուցելու գնալ: Ոսկեհնչույս ծիրանի զգեստը հագին, ոսկեծուլ խույրը գլխին, վսեմաշուք որպես աստվածուհի, դուրս եկավ թեբեուհիների մեջ ու բարձր ձայնով այսպես խոսեց.

— Ի՞նչ անմտություն է Լետոյին զոհ մատուցելը: Եթե դուք նրան մեծարում եք զոհաբերություններով, ապա ինչո՞ւ ի՞նձ ևս չեք մեծարում: Ես Ջևսի որդու՝ Տանտալոսի դուստրն եմ, իսկ Տանտալոսը մահկանացուներից միակն է եղել, որ խրախճանքի է նստել լուսավոր Օլիմպոսում՝ երկնաբնակների հետ միասին: Իմ մայրը պլեյադ Տայգետեն է՝ դուստրը տիտան Ատլասի, որ իր հզորագորուսերին երկնակամարն է պահում: Իմ ամուսինը՝ Թեբեի արքա Ամփիոնը, նույնպես Ջևսի զավակն է: Մեծ է իմ հզորությունը, ի՞նձ են հնազանդվում կիդիայի և մեծն Թեբեի ժողովուրդները: Ես հավասար եմ աստվածներին իմ ծագմամբ ու հզորությամբ: Յոթ դուստր և յոթ դուստր ունեմ: Իսկ Լետոն լոկ երկու զավակ ունի: Այլևս ինչո՞ւ եք մեծարում տիտանի այդ դստերը: Չէ՞ որ կար ժամանակ, երբ նրան չէր ուզում ապաստան տալ աշխարհի և ոչ մի երկիր, միմիայն ամայի Գելսոն ընդունեց նրան, և այն էլ լոկ կարեկցանքից մղված: Եվ մի՞թե ես արժան չեմ երանության: Իմ հարստությունն ու հզորությունն այնքան մեծ են, որ ես ճակատագրից վախենալու բան չունեմ, նա իշխանություն չունի ինձ վրա: Ի՞նչ էլ որ խլելու լինի ինձնից ճակատագրը, միևնույն է, էլի շատ բան կմնա ինձ. նա անզոր է բոլորը խլել: Եվ ինչո՞ւ եք, վերջապես, խոնարհվում ամուլ Լետոյի առաջ: Չէ՞ որ երկու զավակ ունենալը քիչ բանով է առավել ամուլութունից: Ո՛չ, ես երբե՞ք զոհ չեմ մատուցի Լետոյին, նա արժանի չէ՞ դրան:

Շփոթեցրին թեբեուհիներին Նիոբեի գոռոզամիտ խոսքերը Եվ, այնուամենայնիվ, նրանք զոհաբերություններ կատարեցին: Թեբեի կանայք հլու-հնազանդ աղբսում էին Լետո մեծ աստվածուհուն, որ չզայրանա:

Լետո դիցուհին լսեց Նիոբեի նենգամիտ խոսքերը: Նա իր մոտ կանչեց զավակներին՝ Ապոլոնին ու Արտեմիսին, և զժգոհելով Նիոբեից, այսպես ասաց.

— Ծանր անարգանք է հասցրել ինձ՝ ձեր մորը, Տանտալոսի գոռոզամիտ դուստրը: Նա չի՞ հավատում, որ ես աստվածուհի եմ: Ինձ չի՞ ուզում ճանաչած լինել Նիոբեն, թեև փառքով ու հզորությամբ ես միայն Հեբային՝ Ջևսի կնոջն եմ զիջում: Մի՞թե դուք այս անարգանքի համար վրեժխնդիր չեք լինի: Չէ՞ որ եթե դուք Նիոբեից վրեժ չլուծեք, ապա մարդիկ այլևս չեն մեծարի ինձ իբրև աստվածուհու և կկործանեն իմ զոհարանները: Չէ՞ որ Տանտալոսի դուստրը ձե՛զ էլ է վիրավորանք հասցրել: Ձեզ՝ անմահ աստ-

վածներին, նա հավասարեցրել է իր մահկանացու զավակներին՝ Անարգում է ինձ Նիոբեն՝ ամուս կոչելով։ Նա նենգամիտ է նույն-
ցան, որքան և իր հայրը՝ Տանտալոսը։

Նետաձիգ Ապոլոնն ընդհատեց մորը.

— Օ՛, շատ ավարտիք խոսքդ։ Այլևս մի՛ խոսիր։ Զէ՛ որ քո
զանգասուներով դու հեռացնում ես ժամը պատժի։

— Բա՛վ է։ Այլևս մի՛ խոսիր.— գոչեց նաև ցասումնալից
Արտեմիսը։

Պարուրված ամպերով՝ զայրագնած բույրն ու եղբայրը կին-
թոսի գազաթից սրաթուխ ճախրեցին դեպի Քիրե քաղաքը։ Ոսկե-
ձուլլ նետերը շարագուշակ զրնգոց էին արձակում նրանց կապարճ-
ներում։ Սավառնելով հասան յոթնադուռն Քեբեին։ Ապոլոնը, ան-
տեսանելի դարձած, կանգնեց քաղաքամերձ տափարակ դաշտում,
ուր Քեբեի պատանիները մարտախաղերի վարժույթուններ էին
կատարում։ Սրբ հեռահար Ապոլոնը, պարուրված ամպերով, կանգ-
նել էր Քեբեի պարիսպների մոտ, Նիոբեի երկու տղաները՝ Իս-
մենոսը և Սիպիլոսը, ծիրանի թիկնոցներ հագած, սլանում էին
կատաղի նժույգներով։ Հանկարծ Իսմենոսը մի ճիչ արձակեց. Ապո-
լոնի սոկեձուլլ նետը մխրճվել էր նրա կուրծքը։ Ձեռքից բաց թո-
ղեց ոսկեղեն սանձը ու անշնչացած գետին տապալվեց։ Լսեց Սի-
պիլոսը Ապոլոնի աղեղնալարի սոսկալի զնգոցը։ Նա ուզում է իր
արագավազ ձիով փրկվել ահեղ վտանգից։ Ամբողջ թափով սլանում
է Սիպիլոսը դաշտով, նման այն նավավարին, որ բացելով նավի
բուր անագասուները՝ սուրում է ալիքները ճեղքելով՝ ահեղ վտան-
գից ճողոպրելու համար։ Մահաբեր նետը հասավ Նիոբեի որդու
հետևից, մխրճվեց թիկունքը հենց պարանոցի մոտ. նետը դուրս
եկավ կոկորդի միջով։ Նա գետին տապալվեց ու հողը բոսոր ներ-
կեց իր արյամբ։ Նիոբեի տղաներից երկուսը՝ Փալզիմոսն ու Տան-
տալոսը, ձեռքերով պինդ գրկած մեկմեկու, ըմբշամարտում էին։
Փայլատակեց նետն օդի մեջ ու երկուսին էլ խոցեց։ Մահամերձի
հառաչանքով երկուսն էլ տապալվեցին։ Մահը միաժամանակ մա-
րեց նրանց աչքերի կյանքի հուրը, նրանք միասին փշեցին իրենց
վերջին շունչը։ Փութով նրանց մոտ է վազում եղբայրը՝ Ալպենորը,
ուզում է բարձրացնել նրանց, գրկում է եղբայրների սառչող մար-
մինները, բայց Ապոլոնի նետը խոր մխրճվում է սիրտը և նա ան-
շնչացած ընկնում է իր եղբայրների դիերի վրա։ Ապոլոնի նետը
եղբայրներից նախավերջինի՝ Դամասիթթոնի ազդրը խոցեց հենց

ծնկան մոտ. Նիոբեի որդին ջանում էր վերքից դուրս քաշել ոսկե-
ձուլլ նետը, մեկ էլ հանկարծ մի ուրիշ նետ սուլոցով խրվեց նրա
կակորդը։ Արյունը հորգաց մահացու վիրավորված Դամասիթթոնի
վերքից։ Դեպի երկինք կարկառու ձեռքերը Նիոբեի տղաներից վեր-
ջինը՝ պատանի Իլիոնեսը, և աղերսեց աստվածներին.

— Օ՛, օլիմպական աստվածներ, զթացե՛ք, զթացե՛ք։

Նրա աղերսանքը շարժեց Ապոլոնի գուլբը։ Բայց ուշ է արդեն։
Աղեղնալարից արդեն թռել է նետը, անհնար է ետ բերել այն։ Այս
մեկն էլ մխրճվեց Նիոբեի տղաներից վերջինի սիրտը։ Իսկույն
թռավ մեծ դժբախտության բոթը ու հասավ Նիոբեին։ Արտասովա-
խառն աչքերով ծառաները նաև Ամփիոնին են հայտնում որդիների
կործանման բոթը։

Ամփիոնը շղիմացավ զավակների կորստյան վշտին և սուր-
սայր սուրբ իր իսկ ձեռքով կուրծքը մխրճեց։

Հակված իր որդիներին և ամուսնու դիակներին վրա, հեծկատում
է Նիոբեն։ Համբուրում է նրանց պաղ շուրթերը։ Վշտից կտրատվում
է Նիոբեի սիրտը։ Հուսահատ՝ ձեռքերը երկինք է կարկառում տա-
բաբախտուր։ Բայց նա գթություն չէ, որ աղերսում է։ Անլուր վիշտը
չի մեղմել նրա սիրտը։ Եվ ցասումնալից գոչում է նա.

— Յնձա՛, անողո՛ւրմ (ետո։ Հրճվի՛ր, քանի դեռ քո սիրտը չի
հագեցել իմ վշտով։ Դո՛ւ հաղթեցիր, մրցակցուհի։ Օ՛, ոչ, ի՛նչ եմ
ասում, դու չե՛ս հաղթել ինձ։ Ես, ապերջանիկս, այնուամենայնիվ,
ավելի շատ զավակներ ունեմ, քան դո՛ւ, երջանիկդ։ Ու թեև իմ
շուրջը կիտված են իմ անշնչացած զավակների դիերը, այնուամե-
նայնիվ ես հաղթե՛լ եմ քեզ, էլի ես ավելի շա՛տ երեխաներ ունեմ,
քան դու։

Հազիվ էր իր խոսքն ավարտել Նիոբեն, երբ լսվեց աղեղնա-
լարի ահավոր զնգոցը։ Սոսկումը պատեց բոլորին։ Միայն Նիոբեն
էր, որ անվրդով էր մնացել. աղետը նրան առավել հանդուգն էր
դարձրել։ Բայց զուր չէր զնգում Արտեմիսի աղեղնալարը։ Նիոբեի
դուստրերից մեկը, որ անսփոփ վշտով համակված, կանգնել էր
եղբայրների դիակների մոտ, նետահար վայր ընկավ։ Ահա՛ կրկին
զնգաց աղեղնալարը և Նիոբեի մյուս դուստրն էլ ընկավ։ Միմյանց
զնգաց աղեղնալարը և Նիոբեի մյուս սուրաց Արտեմիսի աղեղնալարի վրա-
հետևից վեց ոսկեձուլլ նետ սուրաց Արտեմիսի աղեղնալարի վրա-
յից, և անշնչացած վայր թափվեցին Նիոբեի վեց գեղեցիկ ու դե-
ռաստի աղջիկները։ Մնաց միայն կրտսեր դուստրը։ Նա նետվեց

գեպի մայրն ու շանաց թարնվել նրա ծնկների, զգեստի դարսերի մեջ:

Անլուր վիշտն ընկճեց Նիոբեի գոռոզ սիրտը:

— Գոնե կրտսե՛ր աղջկանս խնայիր, մեծն կետո,— աղբրսում է վշտով լեցուն Նիոբեն,— գոնե մե՛կը թող ինձ:

Բայց չգթաց դիցուհին, և Արտեմիսի նետը խոցեց նաև կրտսեր աղջկան:

Նվ կանգնած է Նիոբեն՝ շրջապատված դուստրերի, ուստրերի և ամուսնու դիակներով: Ասես վշտից քար է կտրել Նիոբեն: Քա՜մին չի տատանում նրա վարսերը: Դեմքը գունատվել է քաթանի պես, կյանքի փայլը մարել է աչքերում, սիրտը չի տրոփում կրծքի տակ, միայն արցունքներ են հորդում աչքերից: Լեռ քար են դարձել նրա անդամները: Մի ուժգին հողմ բարձրացավ և քարացած Նիոբեին տարավ նրա հայրենիքը՝ Լիդիա: Այնտեղ, երկնաբերձ Միպլիփոս լեռան վրա, կանգնել է քարացած Նիոբեն և հավերժորեն վշտի արցունքներ է հեղում:

Ա.ԵՒՈՆ

Զեթոսի կինը Աեդոնն էր՝ Եփեսոսի արքա Պանդարոսի դուստրը: Ինչպես Նիոբեին՝ Տանտալոսի դստերը, գոռոզամտությունը կործանեց, այդպես էլ Պանդարոսի տարաբախտ դստերը կործանեց նախանձն ու վրիժառուության ծարավը: Աեդոնը չէր կարողանում անվրդով նայել Նիոբեի երջանկությանը: Անհատակ նախանձ էր առաջ բերում նրա մեջ այն, որ Նիոբեն յոթ գեղեցիկ տղա ունի և յոթ գեղեցկուհի աղջիկ, իսկ ինքը միայն մի որդի՝ Իտիսը: Իսկ Նիոբեն իր մշտական հեգնանքներով ավելի էր բորբոքում նրա նախանձը, և այդ զգացումը Աեդոնի կրծքի տակ դառնում էր մոլեգին ատելության և վրեժխնդրության անհագուրդ ծարավ:

Նիոբեն հաճախ էր ասում Աեդոնին.

— Ես խղճում եմ քեզ, տարաբախտիդ: Դու ամուլ ես: Զե՞ որ միմիայն մի տղա ունենալը նույնն է, ինչ որ ամլությունը:

Նվ երբ հավաքվում էին թերեուհիները, Նիոբեն ծիծաղելով այսպես էր ասում.

— Մի տեսե՛ք այս տարաբախտին: Լսի՛ր, Աեդոն, դու տաճար շտապիր, աղբրսիր աստվածներին, բարձրաձայն աղբրսիր աստ-

վածներին, որպեսզի նրանք լսեն քեզ: Երկուան ունենալն արդեն կատարյալ անզավակությունն է:

Աեդոնը ոչինչ չէր պատասխանում Նիոբեին, անխոս հեռանում էր: Իսկ նախանձն ու վրեժի ծարավի անմար կրակը բոցկըլտում էր նրա կրծքի տակ:

Մի անգամ, ուշ գիշերին, Աեդոնն իր ննջարանում նստել էր մահճին և վրեժ էր նյութում: Ինչպե՞ս վրեժխնդիր լինել, ինչպե՞ս լուծել վրեժը, որպեսզի այն մխրճվի նենգամիտ Նիոբեի սիրտը, որպեսզի հեծկլտա նա ու անսփոփ վշտից պոկոտի իր վարսերը: Ավելի ու ավելի է խտանում խավարը: Գիշերը վրա է հասնում: Հանկարծ մահճակալից ելավ Աեդոնը, հազիվ լսելի ծիծաղեց ու շշնջաց. «Գտա, գտա»: Վճռել էր գիշերը գնալ այն օթարանը, ուր քնում են երկու ընկերները՝ իր տղան՝ Իտիսը և Նիոբեի ավագ որդին՝ Իսմենոսը, մոր ամենասիրելի զավակը: Ո՛չ, Աեդոնը չի սխալվում և գիշերվա խավարում էլ գիտե, որ աջ կողմում Խամենոսի մահճակալն է գրված, իսկ ձախում՝ Իտիսինը. չէ՞ որ հենց ինքն է այսօր որդու մահճակալը ծածկել ծիրանի մի ծածկոցով, որի նախշերն իր ձեռքով է գործել: Կարո՞ղ է արդյոք սխալվել:

Մոտ է կեսգիշերը: Ամբողջ պալատը ընկղմվել է խոր քնի մեջ: Ահա և կեսգիշեր է: Ելավ Աեդոնն իր մահճակալից, նվիրական զարդատուփից դուրս բերեց թանկագին դաստակով դանակը, որ նրան հայրն է նվիրել, դուրս եկավ օթարանից և գիշերվա թանձր խավարում կամացուկ ու գողունի անցավ պալատի օթարանների միջով: Աջ ձեռքին, կրծքին սեղմած, պահում է դանակը, իսկ ձախը մեկնել է առաջ, ասես տնտղում է խավարը: Երկյուղ է կրում, որ կգիպչի ինչ-որ բանի և աղմուկ կհանի: Վախենում է ամենաաննշան խշռոցից անգամ, մինչև իսկ իր սրտի զարկերից է վախենում:

Բայց ահա այն սենյակը, ուր քնած են պատանիները: Աեդոնն ակնաջ է դնում. ամեն ինչ հանգիստ է, լավում է միայն քնած պատանիների համաշափ շնչառությունը: Զգուշաբար, շունչը պահած, անմարմին ստվերի պես Աեդոնը սահեց աջ, դեպի Իսմենոսի մահճակալը, ապա, թեթևակի հավելով մատներով, շոշափեց պատանու կուրծքը, վրա բերեց դանակը և մխրճեց քնած պատանու ուղիղ սիրտը:

Վերադառնալով իր օթարանը, Աեդոնը պառկեց մահճակալին՝ հաղթական շշնջալով. «Վրեժս լուծեցի, վրեժս լուծեցի»:

Հերակլեսի առաջիննեց ջարագրված են Սոփոկլեսի «Ծրակինոսինե», Սվեթայիզեսի «Հերակլես» ողբերգութեաննեքի, ինչպես նաև Պապսանիայի «Միտոլոգիայի Ակառագրութեանը» երկի մեջ հիշված առեքի հիման վրա:

Միկենեում² տիրում էր էլիքտրիոն արքան: Պտերիլասոս արքայի որդիների գլխավորութեամբ անկախացանք³ հափշտակել էին նրա նախիրները:

Երբ էլիքտրիոնի որդիները փորձել էին ճա մղել հափշտակողներին՝ զոհ էին գնացել նրանց ձեռքով: Եվ այդ ժամանակ էլիքտրիոն արքան հայտարարեց, որ իր գեղեցկուհի դստեր Ալկմենեի ձեռքը նրան կտա, ով ետ կբերի նախիրները և կլուծի իր որդիների մահվան վրեժը: Ամփիտրիոն հերոսին հաջողվեց առանց կովի նախիրները ետ տալ էլիքտրիոնին, քանի որ անկախացանքի արքա Պտերիլասոսը հափշտակված նախիրները պահ էր տվել էլիսի⁴ արքա Պոլիքսենոսին, իսկ սա էլ՝ Ամփիտրիոնին:

¹ Հերակլես (ըստ հոմեոսիցիների՝ Հերկուլես) — Հուստասանի հերոսներից մեծագույնն է: Սկզբում նա համարվել է արևի աստվածը, որ իր անվերջ նեոներով կործանում է բերում ամենայն շարժման ու խալաքի, մի աստված, որ և սփռել, և ապաքինել է հիվանդություններ: Նա ընդհանուր շատ բան է ունեցել Ապոլոն աստծու հետ: Բայց Հերակլեսը մի աստված է ու հերոս, որ միայն հունական միջոցով էլ, որ պատահում է: Մենք այդպիսի շատ հերոս-աստվածներ գիտենք: Նրանցից առանձնապես հետաքրքրական են քարեկան Դիդամոնը և փյունիկյան Մելիարաը, որոնց առասպելներն ազդեցություն են գործել Հերակլեսի առասպելի վրա: Այդ հերոսները ևս հասել են աշխարհի ծայրը, մեծագույն սխրանքներ են գործել ու տառապել, ինչպես Հերակլեսը: Բոլոր ժամանակների բանաստեղծները մշտապես օգտվել են Հերակլեսի առասպելներից, նրանց դրավել են հերոսի մեծագործությունները և նրան վիճակված տառապանքները: Աստղային գիշերները մենք կարող ենք Հերակլեսին տեսնել երկնակամարում՝ հոմեոսիկան Հերկուլեսի անվան տակ. նրա անվամբ է կոչվում համաստեղություններից մեկը, իսկ դրա կողքին տեսնում ենք Հիդրայի համաստեղությունը, այն հրեշաձոր բազմազույս Հիդրայի, որին սպանել էր Հերակլեսը:

² Հունաստանի հնագույն քաղաքներից մեկը, որ գտնվում է Արգոլիսում՝ Պելոպոնեսի վրա:

³ Ցեղ, որ ապրելիս է եղել Միջին Հունաստանի արևմուտքում, Ալաբանիայում:

⁴ Մարգ Պելոպոնեսի հյուսիս-արևմուտքում:

Լույսը բացվում է: Մոտ է առավոտը: Առանձին հեռավոր կատարներն արդեն ներկվեցին արշալույսի բոսոր ճառագայթներով: Լուսարաց է: Ի՞նչ վիշտ բերեց լուսարացը տարաբախտ Աեդոնին: Նա տազնապալից ձայն է լսում պալատում, լսում է, ինչ-որ մեկը ճչաց «Խոխը, Խոխը»: Նստեց Աեդոնն իր մահճակալին ու տազնապած սրտով ականջ դրեց: Ինչ-որ մեկը մոտ վազեց դռանը, ձեռնեց դուռն ու ձայն տվեց: Աեդոնի դուռն են ծեծում: Աղախինն է, նա է ձայն տվողը:

— Տիրուհի, տիրուհի, Խոխը, Խոխը:

Դուրը բացեց Աեդոնը, նայեց աղախնուն, բռնեց ուսերից ու հարցրեց.

— Ի՞նչ Խոխ:

— Խոխը սպանված պառկած է իր ննջարանում:

Մարտափահար եղավ Աեդոնը: Խելակորույս նա գնաց օթարան, այն օթարանը, ուր թափանցել էր գիշերը: Խելագորի պես առաջ է գնում Աեդոնը: Աջ ձեռքը սեղմել է կրծքին, ձախը՝ մեկնել առաջ. չէ՞ որ այդպես էր գնում գիշերը: Աեդոնը մտավ օթարան, շուտ եկավ, ինչպես գիշերը, դեպի աջ, և ի՞նչ տեսնի, Իսմենոսի մահճակալին պառկած է նրա մի միակ որդին՝ Խոխը, և կրծքին մխրճված է մոր դանակը: Անլուր շարագործություն է կատարել մայրը, սպանել է իր սիրասուն զավակին: Անսահման, անպատմելի է Աեդոնի վիշտը: Նա ընկավ որդու գիակի վրա, բայց չի լալիս. — այդպիսի վշտի համար արտասուք չի լինում, — միայն մարմինն է թեթևակի ցնցվում:

Կարեկից եղան աստվածները մոր վշտին: Ննջարանում գրտնըվող բոլոր մարդիկ տեսան, որ հանկարծ Աեդոնը չբացավ, իսկ Խոխի կրծքից մի գորշավուն թռչնակ թևածեց ու թռավ լուսամուտից: Աստվածներն Աեդոնին սոխակ էին դարձրել:

Այդ ժամանակից ի վեր, գարնանը, արևածագից մինչև մայրամուտ, գարնանային երեկոների աղբամուղջում, պարզկա աստղային գիշերները և վաղորդյան արշալույսի գարնանային ցողաթուրմ ու բուրումնավետ ծաղիկների թփոտներում նրբագեղ ու սրտամոլիկ երգում է սոխակ Աեդոնը: Սոխակը երգում է որդեկորույս մոր վիշտը, և այդ երգի մեջ լսելի է որդու անունը՝ Խոխ, Խոխ:

Ամփիտրիոնը ետ տվեց էլեքտրիոնին նրա նախիրները և ստացավ Ալկմենեի ձեռքը: Բայց Ամփիտրիոնը հրկար շմնաց Միկենեում: Լարսանեկան խրատնաքի ժամանակ, նախիրների մասին վիճելիս, Ամփիտրիոնը սպանեց էլեքտրիոնին, և ստիպված եղավ կնոջ հետ միասին ճողոպրել Միկենեից: Ալկմենեն երիտասարդ ամուսնու հետ դնաց դեպի օտարութուն միայն պայմանով, որ նա վրեժխնդիր լինի Պտերեւաոս արքայից իր եղբայրների սպանութեան համար: Ուստի և ժամանելով Թերե՝ Կրեոն արքայի մոտ, որ ապաստան էր տվել նրանց, Ամփիտրիոնն իսկույն մի զորաբանակ առած գուրս եկավ տելեբոյների դեմ: Նրա բացակայութեան ժամանակ Ջևը, գերված Ալկմենեի գեղեցկութեամբ, հայտնվեց նրան՝ Ամփիտրիոնի կերպարանքով: Շատ շանցած, վերադարձավ նաև Ամփիտրիոնը: Եվ ահա Ջևից ու Ամփիտրիոնից Ալկմենեն երկվորյակ զավակներ պիտի ունենար:

Այն օրը, երբ պիտի աշխարհ գար Ջևի ու Ալկմենեի մեծազոր որդին, աստվածները հավաքվեցին բարձրաբերձ Օլիմպոսում: Ուրախ, որ շուտով զավակ պիտի ունենա, վահանակիր Ջևսն այսպես ասաց աստվածներին.

— Լսեցե՛ք, աստվածներ և աստվածուհիներ, թե ինչ կասեմ ես ձեզ: Իմ սիրտն ուզում է, որ ձեզ ասած լինեմ այդ: Այսօր մի մեծ հերոս պիտի ծնվի: Նա պիտի իշխի իր բոլոր ազգականների վրա, որոնց տոհմը սերում է իմ որդուց՝ մեծն Պերսևասից:

Բայց Ջևի կինը՝ Հերան, զայրացած, որ Ջևը կնութեան է առել մահկանացու Ալկմենեին, վճռեց Ալկմենեի որդուն խորամանկութեամբ զրկել Պերսևասի հետնորդների՝ պերսեիդների վրա ունենալիք իշխանութունից: Նա, գեռ մանկան ծնունդից առաջ, ատելութուն էր տածում Ջևի որդու հանդեպ: Ուստի և, սրտի խորքում իր մտքինը թաքցրած, Հերան այսպես ասաց Ջևին.

— Դու ճիշտ չե՛ս ասում, մեծն շանթարձակ: Դու երբեք ի կատար չես ածի թո խոսքը: Մեծ ու անխախտ աստվածային երզում տուր ինձ, որ նա՛, ով այսօր առաջինը ծնվի պերսեիդների սերունդից, պիտի իշխի իր ազգականների վրա:

Ջևի բանականութեանը տիրել էր խաբեութեան աստվածուհի Ատեն և, չկռահելով Հերայի խորամանկութունը, շանթարձակն անխախտ երզում տվեց: Հերան անհապաղ լքեց լուսակերտ Օլիմպոսը և իր ոսկեհուռ երկանվով Արգոս սուրաց: Այնտեղ արագացրեց պերսեիդ Սթենելոսի աստվածազոր կնոջ որդու ծնունդը, և

այդ օրը, Պերսևասի տոհմում, լույս աշխարհ եկավ Սթենելոսի թուլակազմ, հիվանդ երեխան՝ էվրիսթևուր: Հերան փութով լուսավոր Օլիմպոս վերադարձավ և մեծն ամպահալած Ջևսին ասաց.

— Օ՛, շանթարձակ հայր Ջև, ի՛նձ լսիր: Հիմա պանծալի Արգոսում, պերսեիդ Սթենելոսը որդի ունեցավ՝ էվրիսթևսին: Այսօր առաջինը նա՛ է ծնվել, և նա՛ էլ պիտի իշխի Պերսևասի բոլոր սերունդների վրա:

Տրտմեց մեծն Ջևը, նոր միայն կռահեց Հերայի խաբեութեանը: Ահեղաբար զայրացավ խաբեութեան աստվածուհի Ատենի վրա, որ տիրել էր նրա բանականութեանը ծառայելով լցված Ջևը բռնեց Ատենի վարսերից ու նրան գլորեց լուսապայծառ Օլիմպոսից: Աստվածների և մարդկանց տիրակալն արգելեց նրան այլևս Օլիմպոսում երևալ: Այդ ժամանակից ի վեր խաբեութեան աստվածուհի Ատեն մարդկանց մեջ է ապրում:

Ջևը թեթևացրեց իր որդու ճակատագիրը: Նա մի անխախտ տելի պայման կապեց Հերայի հետ, որ իր որդին ամբողջ կյանքում չէ, որ պիտի մնա էվրիսթևասի իշխանութեան տակ: Էվրիսթևասի հանձնարարութեամբ նա տասներկու մեծամեծ սխրագործութուններ կկատարի, իսկ զրանից հետո ոչ միայն կազատվի նրա իջխանութունից, այլև անմահության կհասնի: Եանթարձակը գիտե՞ր, որ իր որդուն կվիճակվի բազում մեծ վտանգներ հաղթահարելու տատի և իր սիրելի դստերը՝ Աթենաս-Պալլասին հրամայեց՝ որ օգնական լինի Ալկմենեի զավակին: Հետագայում Ջևսին հասնախ էր վիճակվում տրտմել, երբ ականատես էր լինում, թե իր որդին ի՛նչ մեծ դժվարութուններ է քաշում թուլակազմ ու երկշոտ էվրիսթևասին ծառայելու ընթացքում, բայց անկարող էր դրժել Հերային տված երզումը:

Սթենելոսի որդու ծննդյան օրը Ալկմենեն էլ երկվորյակ զավակներ ունեցավ. ավագը՝ Ջևի որդին էր, որին ծնվելիս Ալկիդաս անունը տվեցին և կրտսերը՝ Ամփիտրիոնի որդին, որին Իփիկլես կոչեցին: Հենց այդ Ալկիդասն էլ դարձավ մեծագույնը շունաստանի հերոսներից: Հետագայում գուշակուհի պիթիան նրան Հերակլես կոչեց: Այդ անվամբ էլ հերոսը հռչակվեց, անմահութուն ըստացավ և ընդունվեց Օլիմպոսի լուսավոր աստվածների կաճառի մեջ:

Հերան սկսեց հետապնդել Հերակլեսին նրա կյանքի առաջին խի օրերից: Իմանալով, որ Հերակլեսն արգեն ծնվել է և, բարուրի

Մեզ փաթաթված, պառկած է եղբոր՝ Իփիկլեսի կողքին, նորածին հերոսին կորսւոյն մատնելու համար նա երկու օձ ուղարկեց: Գիշեր էր արդեն, երբ աշերը փայլեցնելով օձերը սողացին Ալիմենի օթարանը: Անշշուկ՝ նրանք սողացին դեպի երկվորյակի օրորոցը և հենց այն է, ուզում էին պարուրել նորածին Հերակլեսի մարմնի շուրջը և խեղդամահ անել նրան, երբ Ձևոյ զաւակն արթնացավ: Նա իր պստիկ թաթիկները մեկնեց դեպի օձերը, բռնեց նրանց վզերից և այնպիսի ուժով սեղմեց, որ իսկույն երկուսն էլ խեղդամահ արեց: Սոսկումնահար Ալիմենեն վեր թռավ իր մահճից. օրորոցում օձեր տեսնելով սուր ճիչ արձակեցին օթարանում զրտնըվող կանայր: Բոլորը նետվեցին դեպի Ալիկլեսի օրորոցը: Կանանց ճիչերի վրա մերկացրած սուրբ ձեռքին ներս ընկավ Ամփիտրիոնը: Երջապատեցին օրորոցը և ախանառես եղան մի արտասովոր հրաշքի. պստիկ, նորածին Հերակլեսը երկու խեղդված օձից հր բռնել, որոնք դեռևս ուժահատ գալարվում էին նրա պստիկ թաթիկների մեջ: Ապշահար՝ իր հոգեզավակի զորութան վրա, Ամփիտրիոնը կանչեց պատգամախոս Թիրեսիասին և հարցում արեց նորածնի ճակատագրի մասին: Եվ գուշակ ծերունին հաղորդեց, թե ինչպիսի մեծ սխրագործություններ պիտի կատարի Հերակլեսը ու կանխատեսություն արեց, որ կյանքի վերջում նա անմահության կհասնի:

Իմանալով, թե ինչ մեծագույն փառք է սպասում Ալիմենեի ավագ որդուն՝ Ամփիտրիոնը նրան հերոսի վայել դաստիարակություն տվեց: Հունաստանի մեծահռչակ հերոսներն էին վարժեցնում Հերակլեսին: Անպարտելի նետաձիգ էվրիստոս արքան Հերակլեսին նետաձուլության էր վարժեցնում, ըմբշամարտություն՝ հնարամիտ Ոգիսևսի պապը և Հերմեսի որդին՝ Ավտոլիկոսն էր սովորեցնում, Գիսկուրոս Կաստորը զենք բանեցնել էր վարժեցնում, իսկ երկանիվ վարել՝ Ամփիտրիոնը, որ այդ արվեստի մեջ մրցորդ շուներ բովանդակ Հունաստանում: Բայց Ամփիտրիոնը հոգ էր տանում Հերակլեսի ոչ միայն ուժի զարգացմանը. նա մտահոգված էր հերոսի կրթությամբ ևս: Նրան կարգալ, գրեւ, երգել ու կիթառ նվագել սովորեցրին: Բայց զիտության ու երաժշտության մեջ Հերակլեսն այն հաջողությունները շուներ, ինչ որ նետաձուլության ու զենք բանեցնելու մեջ: Երաժշտության ուսուցչին՝ Օրփեոսի եղբայր Լինոսին, հաճախ էր վիճակվում բարկանալ իր աշակերտի վրա և մինչև իսկ պատժել նրան: Մի անգամ, դասի ժամին, դայրացած,

որ աշակերտը զլանում է ուսանել, Լինոսը խփեց Հերակլեսին: Զայրացած Հերակլեսը ձեռքն առավ կիթառը և գրանով հարվածեց Լինոսի գլխին: Պատանի Հերակլեսը նկատի չէր առել իր հարվածի ուժգնությունը: Կիթառի հարվածն այնքան ուժգին էր, որ Լինոսն անշնչացած վայր ընկավ: Գատարան կանչեցին Հերակլեսին այդ սպանության համար: Արդարանալով, այսպես ասաց Ալիմենեի զաւակը.

— Զէ՞ որ դատավորներից արդարագույնը՝ Ռադամանթոսն ասում է՝ ամեն ոք, որին խփում են, կարող է հարվածով պատասխանել հարվածին:

Գատավորներն արդարացրին Հերակլեսին, բայց նրա հոգեհայր Ամփիտրիոնը, երկուզ կրելով, որ կարող է էլի նման բան պատահել, Հերակլեսին ուղարկեց անտառապատ Կիթերոն՝ հովվություն անելու:

ՀԵՐԱԿԼԵՍԸ ԹԵՐՍՈՒՄԷ

Աճեց ու հասունացավ Հերակլեսը Կիթերոնի անտառներում և մեծագոր պատանի դարձավ: Հասակով նա մի ամբողջ գլխով բարձր էր բոլորից, իսկ ուժը շատ էր գերազանցում մարդկային ուժին: Առաջին իսկ հայացքից նրա մեջ կարելի էր ճանաչել Ձևոյ որդուն, հատկապես աշերից, որոնք շողում էին ինչ-որ արտասովոր աստվածային փայլով: Ոչ ոք չէր հասնում Հերակլեսի ճարակությունը զինավարժության մեջ, իսկ աղեղն ու նիզակը բանեցնում էր այնպիսի հմտությամբ, որ երբեք չէր վրիպում: Գեռես պատանի՝ Հերակլեսն սպանեց կիթերոնյան ահեղ առյուծին, որ ապրում էր լեռների կատարին: Պատանի Հերակլեսը հարձակվեց առյուծի վրա, սպանեց և մորթագերծ արեց նրան: Առյուծի մորթին թիկնոցի պես գցեց իր հզոր ուսերին. թաթերը կապ գցեց կրծքի վրա, իսկ առյուծի գլխի մորթին նրա համար իրեն սաղավարտ էր ծառայում: Նեմեյան անտառում Հերակլեսը մի վիթխարի, երկաթի պես ամրապինդ հացենի արմատախիլ արեց և իր համար գուրզ շինեց:

Հերակլեսին սուր նվիրեց Հերմեսը, աղեղ ու նետեր՝ Ապոլոնը, նրա համար ոսկեգրահ կռեց Հեփեստոսը, իսկ զգեստներ Աթենասը կարեց:

Առնացավ Հերակլեսը և պարտության մատնեց Օրբոմենի՝

էրզինոս արքային, որին թեքեն ամեն տարի մեծ հարկ էր վճարում: Ճակատամարտի ժամանակ սպանեց էրզինոսին, իսկ Միսիասյան Օրբոմենեի վրա այնպիսի հարկ դրեց, որ կրկնակի շահով ավելին էր, քան թեքեինն էր եղել: Այդ սխրանքի համար թեքեի արքա Կրեոնը Հերակլեսին կնութիան տվեց իր դուստր Մեդարային, իսկ աստվածները երեք շքնաղ որդի ընծայեցին:

Երջանիկ էր անցնում Հերակլեսի կյանքը յոթնագուռն թեքեում: Բայց մեծ աստվածուհի Հերան առաջվա պես ատելութամբ էր լցված Ջևսի որդու հանդեպ: Նա Հերակլեսին մի սուկալի հիվանդութիւն տվեց: Յնորվեց մեծ հերոսը, խելագարութիւնը տիրեց նրան: Մոլեգնութիան պոռթկման պահին Հերակլեսն սպանեց իր բոլոր երեք զավակներին, իր եղբոր՝ Իփիկլեսի զավակներին և նրանց դիերը կրակը նետեց: Իսկ երբ անցավ մոլեգնութիան պոռթկումը՝ անսփոփ վիշտը տիրեց Հերակլեսին:

Մաքրագործվելով ակամա գործած սպանութիան պղծութիւնից, Հերակլեսը հեռացավ Թեքեից և ուղևորվեց սրբազան Դելփիք՝ Ապոլոն աստծուն հարցնելու, թե ի՞նչ պիտի անի այսուհետև Ապոլոնը Հերակլեսին հրամայեց մեկնել իր նախնիների հայրենիքը՝ Տիրինթոս և տասներկու տարի ծառայել էվրիսթևսին: Պիթիայի բերանով կետոյի որդին պատգամախոսեց, որ նա անմահութիան կհասնի, եթե էվրիսթևսի հրամանով տասներկու սխրագործութիւն կատարի:

ՀԵՐԱԿԼԵՍԸ ԾԱՌԱՅՈՒՄ Է ԷՎՐԻՍԹԵՎՍԻՆ

Հերակլեսը բնակութիւն հաստատեց Տիրինթոսում և թուրակազմ ու երկշտ էվրիսթևսի ծառան դարձավ: էվրիսթևսը վախենում էր մեծագոր հերոսից և թույլ չէր տալիս, որ նա Միկենն մտնի: Իր բոլոր հրամանները Ջևսի որդուն՝ Տիրինթոս էր առաքում իր բանբեր Կոպրեոսի միջոցով:

Ն Ե Մ Ե Յ Ա Ն Ա Ո Յ Ո Ւ Ը

(Առաջին սխրագործութիւն)

Հերակլեսը երկար շապասեց էվրիսթևս արքայի առաջին հանձնարարութիանը: Արքան հերոսին հանձնարարեց սպանել նեմեյան առյուծին: Տիփոնի և էքիդնայի ծնած այդ առյուծը հրե-

շային մեծութիւն ուներ: Նա ապրում էր Նեմեա՝ քաղաքի մոտ և ամայացնում էր ամբողջ շրջակայքը: Հերակլեսը խիզախութամբ գնաց վտանգավոր սխրագործութիան: Նեմեա հասնելով, նա խուլոյն բռնեց լեռների ճանապարհը՝ առյուծի որջը գտնելու: Արդեն կեսօր էր, երբ հերոսը հասավ լեռնալանջերին: Ոչ մի տեղ մի հատիկ շնչավոր անգամ չէր երևում. ո՛չ հովիվ, ո՛չ երկրագործ: Սոսկումնալի առյուծի ուհից ամենայն կենդանի շունչ փախուստ էր տվել այդ վայրերից: Լեռների անտառապատ լանջերին ու կիրճերի մեջ Հերակլեսը երկար փնտրեց առյուծի որջը և, վերջապես, հորարեն արգեն թեքում էր արևմուտք, գտավ առյուծի որջը մի խավար կիրճում: Որջը գտնվում էր մի վիթխարի քարանձավում, որ երկու ելք ուներ: Ելքերից մեկը Հերակլեսը փակեց վիթխարի քարերով և, թաքնվելով քարերի հետևում, սպասեց առյուծին:

Իրիկնամուտին, երբ աղջամուղջն արգեն իջնում էր երկրի վրա, փարթամաբաջ առյուծը հայտնվեց: Պրկեց Հերակլեսն իր աղեղնալարը և իրար հետևից երեք նետ արձակեց առյուծի վրա, բայց նետերը ետ թռան նրա մորթի վրայից, որ ամառ էր պողպատի պես: Ահողորին մանչաց առյուծը, և նրա մոնչուկը որոտի պես գլորվեց լեռների վրայով: Հայացքը հածելով շորսրորը, առյուծը կանգնել էր կիրճի մեջ և ցասումնափայլ աչքերով փնտրում էր նրան, որ հանդգնել էր նետահարել իրեն: Բայց ահա՛ նա տեսավ Հերակլեսին և վիթխարի ոստյունով նետվեց հերոսի վրա: Ծանթի պես փայլատակեց Հերակլեսի գուրզը և ամպրոպային թափով իջավ առյուծի գլխին: Այդ ահավոր հարվածից շջմած՝ առյուծը գետին տապալվեց. Հերակլեսը նետվեց առյուծի վրա, առավ նրան իր զորեղ բազուկների մեջ ու խեղդամահ արեց: Սպանած առյուծն իր հզոր ուսերին գցած՝ Հերակլեսը վերադարձավ Նեմեա, զոհ մատուցեց Ջևսին և ի հավերժացումն իր առաջին մեծագործութիան՝ հիմնադրեց Նեմեական խաղերը: Երբ Հերակլեսն իր սպանած առյուծը Միկենն բերեց՝ էվրիսթևսը, նայելով վիթ-

1 Քաղաք Արգոլիսում, Պելոպոնեսի հյուսիս-արևելքում:

2 Նեմեական խաղեր — համահունական տոնախմբութիւն, որ յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, ի պատիվ Ջևսի, տեղի էր ունենում Արգոլիսի Նեմեյան հովտում, ամառվա կեսին: Մի քանի օր տևող խաղերի ընթացքում մրցում էին վազբի, ըմբշամարտի, բռնցքամարտի, սկավառակի ու նիզակի նետման, ինչպես նաև երկանվի վազբի մեջ: Խաղերի ընթացքում համընդհանուր խաղաղութիւն էր հայտարարվում բովանդակ Հունաստանում:

խարի առյուծին, օտարապից գունատվեց: Միկեննի թագավորը կռահեց, թե ի՞նչ գերմարդկային ուժի տեր է Հերակլեսը: Եվ նա հերոսին արգիլեց մինչև անգամ մոտ գալ Միկեննի դարպասներին: Ամեն անգամ, երբ Հերակլեսը բերում էր իր մեծագործությունների ապացույցները՝ էվրիսթեսը ստակումով էր նայում նրանց միկենյան բարձրագիտ պարիսպների վրայից:

Լ Ե Ր Ա Ն Ե Ե Կ Ա Ն Ա Ն Ի Դ Ր Ա Ն Ա

(Երկրորդ սիրազործություն)

Առաջին սիրազործությունից հետո էվրիսթեսը Հերակլեսին ուղարկեց լեռնայան հիդրային սպանելու: Սա օձակերպ մարմին և վիշապի ինը գլուխ ունեցող մի հրեշ էր: Ինչպես նեմեսյան առյուծը, սա ևս Տիֆոնի և էբրիդնայի ծնունդն էր: Ապրում էր Լերնե՝ քաղաքի մոտ գտնվող ճահճում և, սողալով իր քնից, նախիրներ ու հոտեր էր բնաշխնջ անում և ամայացնում ամբողջ շրջակայքը:

Ինը գլխանի հիդրայի դեմ կռվելը վտանգավոր էր, որովհետև նրա գլուխներից մեկը մահ չունեց: Հերակլեսը բռնեց Լերնեի ճամփան՝ Իփիկլեսի որդու՝ Իուլայոսի հետ միասին: Հասնելով ճահճին, Հերակլեսն Իուլայոսին երկանվի հետ թողեց մոտակա անտառում, իսկ ինքը հիդրային փնտրելու գնաց: Հիդրային գտավ ճահճուտով շրջապատված մի անձավում: Իր նետերը շիկացնելով այնքան, որ կարմրեն, Հերակլեսը դրանք իրար հետևից արձակեց հիդրայի վրա: Հերակլեսի նետերը զաղաղեցրին հիդրային: Փայլվում թեփուկներով պատած մարմինը գալարելով, նա դուրս սողաց անձավի խավարի միջից, ահեղորեն ցցվեց իր վիթխարի պոչի վրա և հենց այն է, պիտի նետվեր զեպի հերոսը, երբ Զևսի որդին ոտքը դրեց նրա մարմնին ու սեղմեց գետնին: Հիդրան իր պոչով պարուրեց Հերակլեսի ոտքը ու շանում էր գետնովը տալ հերոսին:

Անուստան ժայռի պես կանգնել էր Հերակլեսը և իր ծանրագին գուրզի հարվածներով մեկը մյուսի հետևից թոցնում էր հիդրայի գլուխները: Հողմի պես սուլում էր օդի մեջ ճոճվող գուրզը. թռչում էին հիդրայի գլուխները, բայց նա, այնուամենայնիվ, կենդանի էր մնում: Նոր միայն Հերակլեսը նկատեց, որ Հիդրայի ամեն մի թոցրած գլխի տեղում երկու նոր գլուխ է բուսնում: Հիդրային

օգնության էլ հասան: Ծահճից մի հրեշավոր խեցեղատին սողաց և իր ճանկերը մխրճեց Հերակլեսի ոտքի մեջ: Եվ այդ ժամանակ հերոսն օգնության կանչեց ընկերոջը՝ Իուլայոսին:

Իուլայոսը սպանեց հրեշավոր խեցեղատին, կրակի մատնեց մոտակա անտառի մի մասը և ծառերի այրվող բներով խարանեց հիդրայի այն բոլոր պարանոցները, որոնց վրայից Հերակլեսն իր գուրզով թոցնում էր նրա գլուխները: Այլևս նորանոր գլուխներ չէին բուսնում հիդրայի վրա: Նրա դիմադրությունը գնալով ալիքի ու ալիքի էր թուլանում: Ի վերջո, հիդրայի անմահ գլուխն էլ թռավ: Հրեշավոր հիդրան պարտվեց ու անշնչացած փուլ եկավ գետնին: Հաղթանակած Հերակլեսը խոր թաղեց նրա անմահ գլուխը գետնի տակ և վրան մի վիթխարի քարածայռ դրեց, որպեսզի այլևս չկարողանա լույս աշխարհ գուրս գալ: Այնուհետև մեծ հերոսը պատեց հիդրայի մարմինը և իր նետերը նրա թունոտ լեղու մեջ սուզեց: Այդ ժամանակից ի վեր Հերակլեսի նետերի հասցրած վերքերն անբուժելի դարձան: Մեծ հաղթանակով Հերակլեսը Տիֆինթոս վերադարձավ: Այնտեղ նրան արդեն սպասում էր էվրիսթեսի նոր հանձնարարությունը:

Ս Մ Ի Մ Փ Վ Ի Ո Ս Ե Կ Ա Ն Ե Կ Ա Ն Ա Ն Ի Դ Ր Ա Ն Ա

(Երրորդ սիրազործություն)

Էվրիսթեսը Հերակլեսին հանձնարարեց կոտորել ստիմփալոսյան թռչուններին: Այդ թռչունները գրեթե ամայացրել էին Արկադիայի Ստիմփալոս՝ քաղաքի ամբողջ շրջակայքը: Նրանք հարձակում էին զործում և՛ մարդկանց, և՛ կենդանիների վրա և ծվատում իրենց պղնձե ճանկերով ու կտուցներով: Բայց ամենից ահավորն այն էր, որ այդ թռչունների փետուրներն ամրապինդ բրոնզից էին և ճախրելիս նրանք կարող էին փետուրները նետերի պես թափել: Նրա զլխին, ով հանդգներ հարձակվել իրենց վրա:

Դժվար էր Հերակլեսի համար էվրիսթեսի այդ հանձնարարությունը կատարել: Եվ նրան օգնության հասավ ռազմատենչ Աթենաս-Պալլաս դիցուհին: Նա Հերակլեսին երկու պղնձե տիմպան տվեց, որոնք Հեփեստոս աստվածն էր կռել, և հերոսին հրամայեց

1 Քաղաք Արգոլիսում, Արգոլիսյան ծոցի ափին:

1 Քաղաք, որ գտնվել է Արկադիայի հյուսիս-արևելքում՝ համանուն լճի մոտ (Մ. Ք.):

կանգնել բարձր մի բլրի վրա՝ այն անտառի մոտ, ուր բույն էին դրել ստիմփալոսյան թռչունները, և հարվածել տիմպաններին, իսկ հենց որ թռչունները վեր սավառեն՝ նետահարել նրանց: Հերակլեսն այդպես էլ արեց: Բարձրանալով բլրի գագաթը, նա հարվածեց տիմպաններին. այնպիսի խլացուցիչ աղմուկ բարձրացավ, որ թռչունների վիթխարի երամը խոչացավ անտառի վրա և, սարսափահար, սկսեց պտույտներ գործել նրա վերևը: Նրանք անձրևի պես ցած էին թափում նետի նման սրածայր իրենց փետուրները, բայց դրանք չէին դիպչում բլրի վրա կանգնած Հերակլեսին: Հերոսը ձեռքն առավ իր աղեղը և սկսեց խոցել թռչուններին իր մահաբեր նետերով: Ահաբեկված թռչունները սուրացին ամպերի հետևը և կորան Հերակլեսի աչքից: Ստիմփալոսյան թռչունները Հունաստանի սահմաններից հեռացան դեպի էվքսինյան Պոնոս¹ և այլևս երբեք չվերադարձան Ստիմփալոսի կողմերը: Այսպես ի կատար ածեց Հերակլեսը էվրիսթևի այդ հանձնարարությունը և վերադարձավ Տիրինթոս, բայց իսկույն ևեթ ստիպված եղավ բռնել դեպի առավել դժվարին սխրագործության տանող ճամփան:

Կ Ե Ր Ի Ն Ե Յ Ա Ն Ե Ղ Ջ Ե Բ Ո Ւ Ն

(Չորրորդ սխրագործություն)

Էվրիսթևսը գիտեր, որ Արկադիայում ապրում է մի զարմանահարաշեղջերու, որին Արտեմիս աստվածուհին էր ուղարկել մարդկանց պատժելու համար. այդ եղջերուն ամալացնում էր գաշտերը: Էվրիսթևսը հենց այդ եղջերուին բռնելու համար էր ուղարկել Հերակլեսին, որ նրան կենդանի հասցնի Միկենն:

Եղջերուն արտասովոր գեղեցկություն ուներ, եղջուրները սուկուց էին, իսկ ոտքերը՝ պղնձից: Հողմի պես սուրում էր նա Արկադիայի լեռներով՝ առանց հոգնություն զգալու: Ամբողջ տարին Հերակլեսը հետապնդեց կերինեյան եղջերուին: Նա սլանում էր լեռներով ու հարթավայրերով, ոստնում անդունդների վրայով, լողալով կտրում գետերը: Եղջերուն փախչում էր ավելի ու ավելի հեռու դեպի հյուսիս: Նրանից ետ չէր մնում հերոսը, հետապնդում էր առանց աչքից փախցնելու: Վերջապես Հերակլեսը հասավ եղջերուին ծայրագույն հյուսիսում՝ հիպերբորեյների երկրում, Իստրո-

¹ Հին հույներն այդպես էին կոչում Սև ծովը:

սի՝ ակունքների մոտ: Այստեղ եղջերուն կանգ առավ: Հերոսը ուղեց բռնել նրան, բայց նա խույս տվեց և հիմի էլ նա, գնալի հարավ սուրաց նետի պես: Նորից սկսվեց հետապնդումը: Հերակլեսին միայն Արկադիայում հաջողվեց հասնել եղջերուի հետևից: Այնքան երկար հետապնդումից հետո էլ նա դեռ ուժասպառ չէր եղել: Հույսը կտրելով, թե կրնի եղջերուին, Հերակլեսը դիմեց իր անվրեպ նետերի օգնությանը: Նա վիրավորեց եղջերուի ոտքը, և միայն դրանից հետո հաջողվեց բռնել նրան: Հերակլեսը զարմանահարաշեղջերուն ուսը պցեց և արդեն ուզում էր Միկենն գնալ, երբ նրա առջևում հայտնվեց ցասումնալից Արտեմիսը ու այսպես ասաց.

— Զգիտե՛իր, Հերակլես, որ ի՛մն է այդ եղջերուն: Ինչո՞ւ անարգեցիր ինձ՝ իմ սիրելի եղջերուին վիրավորելով: Մի՞թե չգիտես, որ ես չեմ ներում ինձ անարգանք հասցնողին: Թե՞ քեզ օլիմպական աստվածներից առավել հզոր ես կարծում:

Ակնածանքով խոնարհվեց Հերակլեսը դիցուհու առաջ և պատասխան տվեց.

— Օ՛հ, կետույի մեծ դուստր, դու ինձ մեղավոր մի՛ ճանաչիր: Երբեք չեմ անարգել լուսակերտ Օլիմպոսում ապրող անմահ աստվածներին: Մշտապես մեծարանք եմ մատուցել երկնաբնակներին առատ զոհաբերություններով և բնավ ինձ նրանց հավասարը չեմ համարել, թեև ես ամպրոպային Զևսի զավակն եմ: Իմ կամքով չէ, որ հետամուտ եմ եղել քո եղջերուին, այլ Էվրիսթևսի իրենք՝ աստվածներն են հրամայել, որ ես ծառայեմ նրանց, և ես չեմ հանդգնում անհնազանդ լինել Էվրիսթևսին:

Արտեմիսը ներեց Հերակլեսին: Ամպրոպային Զևսի որդին կերինեյան եղջերուն կենդանի հասցրեց Միկենն և հանձնեց Էվրիսթևսին:

¹ Այժմյան Դանուբը. հույները, վատ ճանաչելով եվրոպայի հյուսիսը, կարծում էին, թե Դանուբն սկիզբ է առնում երկրի ծայրագույն հյուսիսից:

Էրիմանթոսյան վարազը և ճակատամարտը

Կենեավրոսների դեմ

(Հինգերորդ սերագործություն)

Պղնձոտն եղջերուի որսից հետո էլ, որ մի ամբողջ տարի տեղեց, Հերակլեսը երկարատև հանգիստ շունեցա՛վ է՛վրիսթևը նրան դարձյալ հանձնարարություն տվեց: Հերակլեսը պետք է սպաներ էրիմանթոսյան վարազին: Հրեշտիկն ուժի տեր այդ վարազն ապրում էր էրիմանթոս¹ լեռան վրա և ամայացնում էր Պսոփիս քաղաքի շրջակայքը: Նա մարդկանց էլ չէր խնայում և պատառոտում էր նրանց իր ահագին ժանիքներով:

Հերակլեսը բռնեց էրիմանթոս լեռը տանող ճամփան: Ճանապարհին այցելեց իմաստուն կենտավրոս Փոլոսին: Փոլոսը պատվով ընդունեց Ձևի որդուն և նրա համար խրախճանքի սեղան բացեց, հնչույթի ժամանակ կենտավրոսը զինու մի մեծ կարաս բացեց, որ լավ հյուրասիրի հերոսին: Հետո տարածվեց սքանչելի զինու բուրմունքը: Այդ բուրմունքն զգացին նաև մյուս կենտավրոսները: Ահեղորեն զայրացան նրանք Փոլոսի վրա՝ այդ կարասը բաց անելու համար: Գինին միայն Փոլոսին չէր պատկանում, այլ բոլոր կենտավրոսներին: Կենտավրոսները նետվեցին դեպի Փոլոսի կացարանը և անսպասելի հարձակում գործեցին նրա ու Հերակլեսի վրա, երբ սրանք երկուսով ուրախ խնջույք էին անում՝ գլուխները բաղնդապսակներով զարդարած: Հերակլեսը չվախեցա՛վ կենտավրոսներից: Նա առանց հապաղելու տեղից վեր թռավ և սկսեց հարձակվողների վրա նետել ծխացող վիթխարի խանձողները: Կենտավրոսները փախուստի դիմեցին, իսկ Հերակլեսը խոցում էր նրանց իր թունավոր նետերով: Հերոսը հետապնդեց նրանց մինչև հեռավոր Մալեա: Այնտեղ կենտավրոսները թաքնվեցին Հերակլեսի ընկերոջ՝ Քիրոնի մոտ, որ իմաստազույնն էր կենտավրոսներից: Հալածվողներին հետևեց Քիրոնի անձավը խուժեց Հերակլեսը: Ցասումով լցված՝ սրկեց աղեղնալարը. օդի մեջ փայլատակեց նետը և մխրճվեց կենտավրոսներից մեկի ծունկը: Բայց Հերակլեսը ոսոխին չէր որ խոցեց, այլ իր ընկերոջը՝ Քիրոնին: Ահհուն վիշտը համակեց հերոսին, երբ տեսավ, թե ո՛ւմ է վիրավորել: Հերակլ-

լեսն աճապարեց լվանալ ու կապել ընկերոջ վերքը, բայց ոչինչ չէր կարող օգնել նրան: Գիտեր Հերակլեսը, որ հիդրայի լեղիով թունավորված նետի վերջն անբուժելի է: Քիրոնն էլ գիտեր, որ իրեն տանջալից մահ է սպառնում: Եվ որպեսզի չտառապի իր վերքից, նա հետագայում կամուրջն իջավ Հադեսի խավարշտին թագավորությունը:

Խորունկ վիշտը սրտում, Հերակլեսը լքեց Քիրոնին և, շատ շանցած, հասավ էրիմանթոս լեռանը: Այնտեղ, կուսական անտառում, նա գտավ ահեղ վարազին և գոչուններով դուրս բռեց սաղարթախիտ անտառի միջից: Երկար հետապնդեց Հերակլեսը վարազին և, ի վերջո, բռեց դեպի լեռան գագաթի խորախոր ձյունը: Վարազը լուվեց ձյան մեջ, իսկ Հերակլեսը նետվեց վրան, կապեց ու կենդանի հասցրեց Միկենն: Էվրիսթևը վարազին տեսնելուն պես սարսափից թաքնվեց բրոնզե մեծ կարասի մեջ:

Ավգիաս արքայի ախոռները

(Վեցերորդ սերագործություն)

Շուտով էվրիսթևը մի նոր հանձնարարություն տվեց Հերակլեսին: Նա պիտի մաքրեր էլիսի¹ արքայի՝ ճաճանչափայլ Հելիոսի որդի Ավգիասի ախոռների գոմաղբը: Արևի աստվածը որդուն անբավ հարստություն էր տվել: Հատկապես բազմաթիվ էին Ավգիասի նախիրները: Նրա նախիրների մեջ կային երեք հարյուր ձյունաճերմակ ոտքերով ցուլեր, երկու հարյուր ցուլ՝ բոսորավուն ինչպես սիդոնյան ծիրանին: Հելիոսին նվիրարներված տասներկու ցուլերը ճերմակ էին կարապների պես, իսկ ցուլերից մեկը, որ աչքի էր ընկնում արտասովոր գեղեցկությամբ, շողում էր աստղի նման:

Հերակլեսն Ավգիասին առաջարկեց մեկ օրվա մեջ մաքրել նրա ախոռները, եթե իրեն տա նախիրների տասներորդ մասը: Ավգիասը համաձայնեց: Նրան անհնար էր թվում այդպիսի աշխատանքը մեկ օրվա ընթացքում գլուխ բերելը: Իսկ Հերակլեսը երկու հակադիր կողմերից բանդեց ախոռները բոլորող պատերը և երկու գետերի՝ Ալփեսոսի ու Պենոսի ջրերը շուտ տվեց նրա մեջ: Այդ գետերի ջրերը մի օրում սրբեցին ախոռների գոմաղբը, և Հերակլեսը կրկին կանգնեցրեց պատերը: Երբ հերոսը եկավ Ավգիասի մոտ

¹ Լեռ և համանուն քաղաք Արկադիայում, Հելադոսեն թերակղզու վրա. այնտեղ է գտնվում նաև Գաոփիս քաղաքը:

¹ Մարգ Պելոպոնեսի հյուսիս-արևմուտքում:

նրանց: Գիտմեղես արքան այդ ձեռքին մարդկային մտով էր կերակրում: Նրանց իբրև կեր էին շարտում բոլոր այն օտարերկրացիներին, որոնք, հողմից հալածվելով, դեմ էին առնում նրանց քաղաքին: Հենց այս թրակիրական արքայի մտտ եկավ Հերակլեսին իր ուղեկիցներին հետ: Նա տիրացավ Գիտմեղեսի նժույզներին և իր նավը տարավ: Մովսիսին Հերակլեսի հետևից հասավ Գիտմեղեսն իր ուղեկիցներին բխտոնների հետ միասին, նժույզների պահպանությունը հանձնարարելով իր սիրելի Աբդերոսին՝ Հերմեսի սրղուն, Հերակլեսը կովի բռնվեց Գիտմեղեսի հետ: Շատ ուղեկիցներ շունեք Հերակլեսը, բայց և այնպես նրա այստան Գիտմեղեսը պարտություն կրեց և ընկավ կովի մեջ: Հերակլեսը դարձավ իր նավը: Եվ որքան մեծ եղավ նրա հուսահատությունը, երբ տեսավ, որ վայրի նժույզները պատառոտում են իր սիրելի Աբդերոսին: Հերակլեսը շքեղորեն թաղեց իր սիրելի զինակցին, նրա շիրմի վրա մի բարձուրուր կանգնեցրեց, իսկ շիրմի մոտ մի քաղաք հիմնադրեց և այն, ի պատիվ իր սիրելի Աբդերոսի, Աբդերա կոչեց: Գիտմեղեսի նժույզները Հերակլեսը էվրիսթեսին բերեց, բայց սա հրամայեց ազատ արձակել նրանց: Վայրի նժույզները փախան Լիկեոնի՝ լեռները, որոնք պատած էին սաղարթախիտ անտառներով, և այնտեղ վայրի գազանների բաժին դարձան:

ՀԵՐԱԿԼԵՍԻ ԱԳՄԵՏԱՍԻ ՄՈՏ

Հիմնականում շարագրված է ըստ Եվրիպիդեսի «Ալկեստիս» ողբերգության:

Երբ Հերակլեսը նավում էր դեպի Թրակիայի ափերը՝ Գիտմեղեսի նժույզների հետևից, վճռեց այցելել իր բարեկամին՝ Ադմետոս արքային, քանի որ իր ճանապարհն անցնում էր Փեթե՝ քաղաքի մոտով, որտեղ Ադմետոսն էր իշխում:

Ադմետոսի համար ծանր ժամանակ էր ընտրել Հերակլեսը: Անհուն վիշտն էր թագավորում Փեթեի արքայի տանը: Նրա կինը՝ Ալկեստիսը, պետք է մահվան մատնվեր, ինչ-որ ժամանակ ճակատագրի աստվածները՝ մեծ մոլորաները, Ապոլոնի խնդրանքով, այսպես էին կանխորոշել: Ադմետոսը կարող է ազատվել մահից,

¹ Լեռներ Պելոպոնեսում:

² Թեսալիայի հնագույն քաղաքը:

ինչև նրա կյանքի վերջին ժամին որևէ մեկը համաձայնի կամովին իջնել Հադեսի խավարամած թագավորությունը:

Երբ մահվան ժամը վրա հասավ, Ադմետոսը խնդրեց իր գառավայր ծնողներին, որ նրանցից մեկը համաձայնի մեռնել իր փոխարեն, բայց ծնողները հրաժարվեցին: Փեթեի քնակիչներից և ոչ մեկը չկամեցավ կամովին մեռնել Ադմետոս արքայի փոխարեն: Եվ այդ ժամանակ երիտասարդ ու գեղանի Ալկեստիսը վճռեց զոհաբերել իր կյանքը հանուն սիրելի ամուսնու: Այն օրը, երբ Ադմետոսը պետք է մեռներ, մահվան էր պատրաստվում նրա կինը: Նա լվացել էր մարմինը և հագել թաղման զգեստներ ու զարդարանքներ: Մտանալով իր տան օջախին, Ալկեստիսը ջերմեռանդ աղոթքով դիմեց ընտանիքին երջանկություն տվող Հեստիա զիցուհուն:

— Օ՛, մեծ գիցուհի՛ս, Վերջին անգամն եմ այստեղ ծնկի դալիս քո առջև: Աղերսում եմ, պահապան եղի՛ր իմ որբ երեխաներին, չէ՞ որ ես այսօր պետք է Հադեսի խավարամած թագավորությունը իջնեմ: Օ՛, մի՛ թողնիր, որ նրանք մեռնեն, ինչպես ե՛ս եմ մեռնում այսքան վաղաժամ: Թո՛ղ որ երջանիկ ու հարուստ լինի նրանց կյանքը այստեղ, հայրենի երկրում:

Այնուհետև Ալկեստիսը եղավ աստվածների բոլոր զոհարաններում և զարգարեց դրանք մրտենո՛ւ ճյուղերով:

Ի վերջո նա դեաց իր օթարանը և արտասվաթոր աչքերով ընկավ մահճակալի վրա: Նրա մոտ եկան զավակները՝ ուսորը և դուստրը: Դառնաղի հեկեկում էին նրանք մոր կրծքի վրա: Լալիս էին նաև Ալկեստիսի աղախիչները: Ադմետոսը հուսահատություն մեջ զիրկն առավ իջ երիտասարդ կնոջը և աղերսեց, որ չլքի իրեն: Բայց Ալկեստիսն արդեն պատրաստ էր մահվան. անշշուկ քայլերով արդեն արքայի պալատին է մոտենում աստվածների ու մարդկանց ատելին՝ մահվան աստված Թանատոսը, զալիս է իր սրով Ալկեստիսի զլխից մի փունջ մազ կտրելու: Ինքը՝ ոսկեզանգուր Ապոլոնն է խնդրել, որ հետաձգվի իր սիրելի Ադմետոսի կնոջ մահվան ժամը, բայց անողորմ է Թանատոսը, Ալկեստիսն արդեն զզում է մահվան մերձեցումը: Սոսկումնահար ճչում է նա:

— Օ՛, արդեն ինձ է մոտենում Քարոնի երկթի մակույկը, և մեռյալներին հողիները տեղափոխողը, մակույկը վարելով, ահեղո-

¹ Մրտենի—հարավային մշտադալար թուփ՝ սպիտակ բուրմամպեա ծաղիկներով (Մ. Թ. 3):

րեն ձայն է տալիս ինձ. Ե՞նչ ես հապաղում: Ե՞նչ արա, շո՛ւտ: Ժամանակը չի հանդուրժում: Մեզ մի՛ ուշացրու: Ամեն ինչ պատրաստ է: Դե՛, շո՛ւտ արա: Օ՛, թողեք ինձ, ոտքերս թուլանում են: Մահս մոտ է: Մթամած գիշերը պատում է աչքերս: Օ՛ զավակներս, զավակներս: Չեր մայրն արդեն կենդանի չէ: Երջանիկ ապրեցեք: Ադմետոս, քո կյանքն ինձ համար ավելի՞ թանկ է, քան իմ սեփականը: Ավելի լավ է քե՛զ լույս տա արևը, քան ինձ: Ադմետոս, դու մեր երեխաներին ինձնից պակաս չես սիրում, Օ՛, դու խորթ մայր չեթեր՛ս տուն, որ նա շնեղացնի երեխաներին:

Տառապում է տարաբախտ Ադմետոսը:

— Կյանքի ամբողջ բերկրանքը դու քեղ հետ ես տանում, Ալկեստիս,— գոչեց նա,— այսուհետև ամբողջ կյանքումս պիտի ազամ քեզ համար: Օ՛, աստվածներ, աստվածներ, ինչպիսի՞ կնոջից եք զրկում ինձ:

Հազիվ լսելի խոսում է Ալկեստիսը.

— Մնաս բարո՛վ, Արդեն առհավետ փակվեցին իմ աչքերը: Մնաք բարո՛վ, զավակներս: Ես այժմ ոչինչ եմ: Մնաս բարո՛վ, Ադմետոս:

— Օ՛, զոնե մի անգամ էլ նայիր ինձ: Մի՛ լքիր երեխաներին: Օ՛, թող որ ե՛ս էլ մեռնեմ,— արտասովոր աչքերով գոչում է Ադմետոսը:

Փակվեցին Ալկեստիսի աչքերը, մարմինը պաղում է. մեռավ Ալկեստիսը: Անսփոփ հեկեկում է Ադմետոսը մեռած կնոջ վրա և դառնազգին շղթում իր ճակատագիրը: Նա հրամայում է կնոջ համար ճոխ թաղում նախապատրաստել: Բոլորին հրամայում է ութ ամիս ազալ քաղաքում Ալկեստիսի՝ կանանցից լավագույնի մահը: Ամբողջ քաղաքը համակված է վշտով, քանի որ բոլորը սիրում էին բարի թագուհուն:

Արդեն պատրաստվում էին Ալկեստիսի դին դամբարան տանել, երբ Փերե քաղաքը մտավ Հերակլեսը: Նա գնաց Ադմետոսի պալատը և ընկերոջը հանդիպեց պալատի դարպասների մեջ: Պատվով ընդունեց Ադմետոսը վահանակիր Զևսի մեծ զավակին: Զկամենալով տրտմություն պատճառել հյուրին, Ադմետոսը ջանում է նրանից թաքցնել իր վիշտը: Բայց Հերակլեսն իսկույն նկատեց, որ ընկերը խորունկ վիշտ է ապրում, և հարցրեց նրա վշտի պատճառը: Ադմետոսն անորոշ պատասխան տվեց Հերակլեսին, և հեռուր կարծեց, թե վախճանվողը Ադմետոսի հեռավոր ազգականն է:

հին է, որին արքան սպաստան է տվել իր պալատում նրա հոր մահվանից հետո: Ադմետոսն իր ծառաներին հրամայեց Հերակլեսին առաջնորդել հյուրերի սենյակը և նրա համար խրախճանքի ճոխ սեղան բացել, իսկ կանանց բաժնի դռները փակել, որպեսզի Հերակլեսի ականջին չհասնեն սգի հեծեծանքները:

Անգեռ, թե ինչ դժբախտության մեջ է իր բարեկամը, Հերակլեսն ուրախ խնջույք է անում Ադմետոսի պալատում: Գավաթ գավաթի հետևից է դատարկում: Ծառաների համար ծանր է ուրախ հյուրին սպասավորելը. չէ՞ որ նրանք գիտեն, որ այլևս կենդանի չէ իրենց սիրելի տիրուհին: Եվ որքան էլ ջանում են, Ադմետոսի հրամանի համաձայն, թաքցնել իրենց վիշտը, այնուամենայնիվ, Հերակլեսը նկատում է նրանց աչքերի արցունքները և դեմքի տրտմությունը: Նա ծառաներից մեկին կանչում է խնջույքի նստել իր հետ, ասում, թե գինին մոռացնել կտա վիշտը և կհարթի տրտմության կնճիռները, բայց ծառան հրաժարվում է: Եվ կռահում է Հերակլեսը, որ ծանրագին վիշտ է համակել Ադմետոսի տունը: Նա սկսեց հարցուփորձ անել ծառային, թե ինչ է պատահել իր բարեկամին և, ի վերջո, ծառան ասաց նրան.

— Օ՛, օտարերկրացի, Ադմետոսի կինն այսօր իջել է Հագեսի թագավորությունը:

Տրտմեց Հերակլեսը, Ցավեց նրա սիրտը, որ բաղեղապսակը զլխին խրախճանք է արել ու երգել իր բարեկամի մոտ, որին այդպես ծանր վիշտ է բաժին ընկել: Հերակլեսը վճռեց երախտահատույց լինել ազնվասիրտ Ադմետոսին, որ նա, շնայելով իր վշտին, այդքան հյուրընկալ է գտնվել իր հանդես: Իսկույն մեծ հերոսի մեջ մի վճիռ հասունացավ՝ մահվան գծիսն թանատոսից խլել նրա ավարը՝ Ալկեստիսին:

Տեղեկանալով ծառայից, թե որտեղ է գտնվում Ալկեստիսի դամբարանը, հերոսն անհապաղ այնտեղ է շտապում: Թաքնվելով դամբարանի հետևը, Հերակլեսն սպասում է, թե ե՛րբ պիտի գա թանատոսը զոհի արյամբ հագնալու: Ահա լսվում է թանատոսի սև թևերի բախյունը, գերեզմանային սառնություն է փչում: Դամբարանի մոտ ճախրեց մահվան խավարադեմ աստվածը և շուրթերով ազահորեն հավեց զոհին: Հերակլեսը դուրս թռավ իր թաքստոցից և նետվեց թանատոսի վրա: Մահվան աստծուն առավ իր զորավոր բազուկների մեջ, և նրանց միջև մի ահեղ լի կռիվ սկսվեց: Լարելով իր բոլոր ուժերը, կռիվ է տալիս Հերակլեսը մահվան

ստծո գեմ: Քանատուր իր ոսկրոս ձեռքերով ճգմեց ձերակլեսի
լուրծքը. նա իր սառցարուչը շնչառութեամբ պարուրում է հերո-
սին, նրա թևերից մահաշունչ սառնություն է փչում Ջևաի որդու
վրա: Եվ, այնուամենայնիվ, շանթարձակ Ջևաի մեծազոք զավակը
հաղթեց Քանատուսին: Նա կապկպեց Քանատուսին և, իբրև ազա-
տութեան փրկագին, մահվան ստծուց պահանջեց կյանքը ետ տալ
Ալկեստիսին: Քանատուր Հերակլեսին պարզեց Ալկեստիսի
կյանքը, և մեծ հերոսը նրան ետ տարավ ամուսնու ապարանքը:

Իսկ Աղմետուր, կնոջ թաղումից հետո պալատ վերադառնալով,
դառնազին ուղքում էր իր անփոխարինելի կորուստը: Ծանր էր նրա
համար ամառացած պալատում կենալը: Ա՛ր կարող էր գնալ: Նա
նախանձում էր հանգուցյալներին: Նրա համար արգահատելի
էր կյանքը: Նա կանչում էր մահվանը: Նրա ամբողջ երջանկությունը
հափշտակեց Քանատուսը և տարավ Հաղեսի թագավորությունը:
Ի՞նչը կարող է նրա համար առավել ծանր լինել, քան սիրելի կնոջ
կորուստը: Ափսոսում է Աղմետուսը, որ Ալկեստիսը չթողեց, որ-
պեսդի ինքն էլ մեռնի նրա հետ: Այդ ժամանակ նրանց մահ՛հր
կմիացնելու: Երկու միմյանց հավատարիմ հողի կստանար Հաղեսը՝
մեկի փոխարեն: Այդ հողիները միասին էլ կկտրելին Աբրոն
գետը:

Մեկ էլ հանկարծ վշտահար Աղմետուսի մոտ հայտնվեց Հե-
րակլեսը: Նա առաջնորդում էր մի կնոջ, որ վրան ծածկոց ուներ
ոցած: Հերակլեսը խնդրեց Աղմետուսին, որ դժվարին պայքարի
դնով իրեն հասած այդ կնոջը պահպանի պալատում, մինչև որ
ինքը ետ կգա թրակիայից: Հրաժարվեց Աղմետուսը, խնդրեց, որ
Հերակլեսը մեկ ուրիշի մոտ տանի կնոջը: Աղմետուսի համար ծանր
էր իր պալատում տեսնել մեկ ուրիշ կնոջ, երբ նա կորցրել էր
նրան, ում այնքան սիրում էր: Հերակլեսն իրենն էր պնդում և մին-
չև իսկ ցանկություն հայտնում, որ Աղմետուսն ինքը պալատ առաջ-
նորդի այդ կնոջը. թույլ չէր տալիս ծառաներին, որ դիպչեն նրան:
Ի վերջո, Աղմետուսը, ընկերոջ խնդիրը մերժելու անկարող, առավ
կնոջ ձեռքը, որ նրան պալատ առաջնորդի, Եվ Հերակլեսն այսպես
ասաց նրան.

— Գու վերցրի՛ր այդ կնոջը, Աղմետուս, ուրեմն և պահպա-
նի՛ր նրան: Հիմա դու կարող ես ասել, որ Ջևաի զավակը հավա-
տարիմ ընկեր է: Հապա մի նայիր այդ կնոջը: Նման չէ՞ արդյոք քո

կնոջը՝ Ալկեստիսին: Վե՛րջ տար տրամութեանդ: Կրկին բավա-
կան եղիր կյանքից:

— Օ՛, մեծ աստվածներ,— գոչեց Աղմետուսը կնոջ ծածկոցը
վեր առնելով,— իմ կի՛նն է, Ալկեստիսը: Օ՛, ա՛լ, սա կնոջս
ստվերն է միայն: Նա կանգնել է անխոս, մի բառ անգամ չի աք-
տարերում:

— Ո՛չ, ստվերը չէ՛,— պատասխան տվեց Հերակլեսը,— Ալ-
կեստիսն է: Ես նվաճեցի նրան Գողիների տիրակալ Քանատուսի
դեմ մղած ծանրազին պայքարում: Լուս կմնա Ալկեստիսը, քանի
դեռ ստորերկրյա աստվածների իշխանությունից չի ազատվել՝
փրկանքի զոհաբերություններ մատուցելով: Լուս կմնա, քանի դեռ
գիշերը երեք անգամ փոխարինելու չի եկել ցերեկվան: Միայն
դրանից հետո կխոսի նա: Իսկ հիմա մնաս բարո՛վ, Աղմետու՛ս:
Երջանիկ եղիր և մշտապես պահպանիր հյուրընկալության մեծ
սովորությունը, որ իմ հայրը՝ Ջևան է սրբազործել:

— Օ՛, դու Ջևաի մեծն որդի, կրկի՛ն ինձ տվիր կյանքի բեր-
կանքը,— գոչեց Աղմետուսը,— ինչպե՛ս երախտահատույց լինեմ
քեզ, Հյուս մնա ինձ մոտ: Ես հրաման կարձակեմ, որ իմ ամբողջ
տերությունում տոնվի քո հաղթանակը, կհրամայեմ, որ աստված-
ների մեծամեծ զոհաբերություններ անեն: Մնա՛, մնա՛ ինձ մոտ:

Չմնաց Հերակլեսը Աղմետուսի մոտ: Նրան մեծագործություն էր
սպասում, նա պետք է իրագործեր էվրիսթևաի մյուս հանձնարարու-
թյունը:

Հ ի պ ա լ ի ա ե ի գ ա տ ի ն

(Իններորդ սխրագործություն)

Հերակլեսի իններորդ սխրագործությունը եղավ նրա արշավու-
քը դեպի ամազոնուհիների երկիրը՝ Հիպոլիտեի թագուհու դստի՞ն
ձեռք բերելու: Հիպոլիտեին այդ գոտին պատերազմի աստված
Արեսն էր ընծայել, և նա կրում էր այն՝ ի նշան բուրբ ամազոնուհի-
ների վրա ունեցած իշխանություն: Էվրիսթևաի դուստր Աղմետեն,
Հերա աստվածուհու քրմուհին, կամենում էր անպայման ա՛յդ
գոտին ունենալ: Նրա ցանկությունն ի կատար ածելու համար էվ-
րիսթևաի գոտին բերելու ուղարկեց Հերակլեսին: Հերոսների փոքրա-
թիվ մի շոկատ հավաքելով՝ Ջևաի մեծազոր որդին միմիայն մի նա-
վակով սկսեց իր հեռավոր ճանապարհորդությունը: Քեև մեծ չէր

Հերակլիսի շոկատը, բայց փառապանծ հերոսներ շատ կային նրա մեջ. նրանցից էր և Ատտիկայի մեծ հերոս Քեսևը:

Մեծ ճանապարհ պիտի կտրենին հերոսները: Նրանք պիտի հասնեին էվքսինյան Պոնտոսի ամենահեռավոր ափերը, քանի որ այնտեղ էր գտնվում ամազոնուհիների երկիրը՝ Քեմիսկիրա մայրաքաղաքով: Ծանապարհին Հերակլեսն իր ուղեկիցների հետ միասին դեմ առավ Պարոս¹ կղզուն, ուր իշխում էին Մինոսի որդիները: Այդ կղզում Մինոսի որդիներն սպանեցին Հերակլեսի ուղեկիցներից երկուսին, Զայրույթով լցված՝ Հերակլեսը անհապաղ պատերազմ սկսեց ընդդեմ Մինոսի որդիների: Պարոսի բնակիչներից շատերին կոտորեց, իսկ մնացածներին, բաղաբը բռնելով, պաշարեց այնքան ժամանակ, մինչև որ պաշարվածները դեսպաններ ուղարկեցին Հերակլեսի մոտ և խնդրեցին, որ նրանցից երկուսին վերցրնի՝ երկու սպանվածների փոխարեն: Եվ այդ ժամանակ Հերակլեսը վերացրեց պաշարումը և սպանվածների փոխարեն իր հետ առավ Մինոսի թոռներին՝ Ալքեսոսին և Սթենիլոսին:

Պարոսից Հերակլեսը Միսիա² ժամանեց Լիկոս արքայի մոտ, որ հերոսին հյուրընկալեց մեծագույն սիրով: Անսպասելիորեն Լիկոսի վրա հարձակում գործեց բերրիկների արքան: Հերակլեսն իր ջոկատով պարտության մատենց բերրիկների արքային, ավերեց նրա մայրաքաղաքը, իսկ բերրիկների բոլոր հողերը տվեց Լիկոսին: Եվ Լիկոսը, Հերակլեսի պատվին, այդ երկիրը Հերակլիա կոչեց: Այդ սխրագործությունից հետո Հերակլեսը շարունակեց իր ճամփան և, ի վերջո, հասավ ամազոնուհիների քաղաք Քեմիսկիրա:

Զևսի որդու մեծագործությունների համբավը վաղուց արդեն հասել էր ամազոնուհիների երկիրը: Ուստի և, երբ Հերակլեսի նավը հասավ Քեմիսկիրային, ամազոնուհիներն իրենց թագուհու հետ հերոսին ընդառաջ եկան: Նրանք զարմանքով էին նայում Զևսի որդուն, որ տարբերվում էր իր ուղեկից հերոսներից ինչպես մի անմահ աստված: Հիպոլիտե թագուհին հարցրեց մեծ հերոս Հերակլեսից.

¹ Էգեյան ծովում Կիկլադյան կղզիներից մեկը, որ հնում հռչակված էր իր մարմարով:

² Երկիր Փոքր Ասիայի արևմտյան ափին, գլխավոր քաղաքը՝ Պերգամոն:

— Ասա ինձ, Զևսի պանծալի որդի, ինչո՞ւ ես եկել մեր քաղաքը: Խաղաղություն ես բերում մեզ, թե՞ պատերազմ:

Այսպես պատասխանեց Հերակլեսը թագուհուն.

— Թագուհի՛, իմ կամքով չէ, որ ես զորքն առած քեզ մոտ եմ եկել՝ փոթորկալից ծովով երկար ճանապարհ կտրելով: Ինձ Միկենի տիրակալ էվքիսթեսն է ուղարկել: Նրա դուստր Ադամետն ուղում է ունեցած լինել ջո գոտին՝ Արես աստծու ընծան, էվքիսթեսը ինձ հանձնարարել է ձեռք բերել ջո գոտին:

Հիպոլիտեն անկարող էր մերժումով պատասխանել Հերակլեսին: Նա արդեն ուզում էր կամովին նրան տալ գոտին, բայց մեծն Հերան, լեցուն իր համար ատելի Հերակլեսին կործանելու ցանկությամբ, ամազոնուհու կերպարանք առած խառնվեց ամբոխին և սկսեց համոզել ռազմատենչ ամազոնուհիներին, որ հարձակում գործեն Հերակլեսի զորքի վրա:

— Հերակլեսը ճիշտ լի՛ ասում,— ասաց Հերան ամազոնուհիներին,— նա մեզ մոտ է եկել խարդախ մտադրությամբ: Հերոսն ուզում է առևանդել ձեր Հիպոլիտե թագուհուն և իր տունը տանել որպես ստրուկ:

Ամազոնուհիները հավատ ընծայեցին Հերայի խոսքին: Զենքի դիմեցին և հարձակվեցին Հերակլեսի զորքի վրա: Ամազոնուհիների զորաբանակի առջևից բամու պես սուրում էր Աելլեն: Առաջինը նա՛ էր, որ կատաղի հողմի պես հարձակվեց Հերակլեսի վրա: Մեծ հերոսը ետ մղեց գրոհը և փախուստի մատենց նրան: Աելլեն մտադիր էր հերոսի հետապնդումից ճողոպրել արագ վազքով: Բայց արագավազությունը շօզնեց նրան. Հերակլեսը հասավ նրան ու խոցեց իր շողշողուն սրով: Ծակատամարտում ընկավ նաև Պրոտոյան: Հերակլեսի ուղեկիցներից յոթին նա խոցեց իր իսկ ձեռքով, բայց շխուսափեց Զևսի որդու նետից: Եվ այդ ժամանակ Հերակլեսի վրա հարձակում գործեցին միանգամից յոթ ամազոնուհիներ. սրանք Արտեմիս աստվածուհու ուղեկիցներն էին և շունեին իրենց հավասարը տեղ բանեցնելու արվեստի մեջ: Վահաններով պաշտպանված՝ նրանք տեղեր նետեցին Հերակլեսի վրա, բայց այս անգամ նիզակները վրիպեցին, նրանց բոլորին գետին տապալեց հերոսն իր գուրզով. իրար հետևից գետին տապալվեցին նրանք՝ փայլեցնելով իրենց զենքը ու զրահը: Իսկ ամազոնուհի Մելանիպին, նրան, որ կռվի էր տանում զորաբանակը, գերի առավ Հերակլեսը: Նրա հետ գերեց նաև Անտիոպին: Պարտություն կրեցին

անհղ ուղղութիւնները և փախուստի մատնվեցին: Նրանցից շատերն ընկան հետապնդող հերոսների ձեռքով: Ամազոնուհիները խաղաղություն կնքեցին Հերակլեսի հետ: Հիպոլիտոն հզոր Մելանիպի ազատութունը ետ զնեց իր գոտիով, իսկ Անտիոպիին հերոսները տարան իրենց հետ: Հերակլեսը նրան իբրև պարզև տվեց Քենսախն՝ ցուցաբերած մեծագույն քաջության համար: Այդպես Հերակլեսը ձեռք բերեց Հիպոլիտի գոտին:

ՀԵՐԱԿԼԵՍԸ ՓՐԿՈՒՄ Է ՀԵՍՒՈՆՆԻՆ՝ ԱՆՈՄԵՐՈՆԻ ԴՍԵՆՐԸ

Ամազոնուհիների երկրից Տիրինթոս վերադառնալու ճանապարհին Հերակլեսն իր զորքով մտնեցավ Տրոյային: Զարհուրելի մի պատկեր բացվեց հերոսների աչքերի առջև, երբ նրանք մտնեցան ծովափին՝ Տրոյայի մոտ: Նրանք տեսան Տրոյայի արքա Լաոմեդոնի գեղեցիկ գտերը՝ Հեսիոնեին, առափնյա ժայռին գամված: Նա ևս, Անդրոմեդայի նման, գատապարտված էր ծովային հրեշի պատառոտմանը: Այդ հրեշին, ի պատիժ Լաոմեդոնի, Պոսեյդոնն էր ուղարկել, քանի որ արքան հրաժարվել էր իրեն և Ապոլոնին վճարել Տրոյայի պարթևաների կառուցման վարձը: Գոռոզ թագավորը, որին Ջեսի կամքով պիտի ծառայեին այդ երկու աստվածները, սպառնում էր մինչև իսկ կտրել նրանց ականջները, եթև նրանք վարձատրության պահանջ չեն, Զայրագնած Ապոլոնը սոսկալի համաճարակ բերեց Լաոմեդոնի տիրապետութունների վրա, իսկ Պոսեյդոնը մի հրեշ ուղարկեց, որ անխնա ամայացնում էր Տրոյայի շրջակայքը: Միայն դատեր կյանքը զոհաբերելու գնով է, որ Լաոմեդոնը կարող էր իր երկիրը փրկել ահավոր աղետից: Հակառակ իր կամքին՝ թագավորն օտիպված եղավ առափնյա ժայռին գամել իր Հեսիոնե գտերը:

Տարաբախտ աղջկան տեսնելով, Հերակլեսը կամեցավ փրկել նրան, իսկ Հեսիոնեի փրկության դիմաց Լաոմեդոնից որպես պարգև պահանջեց այն նժույզները, որ Տրոյայի արքային ամպրոպային Ջեսն էր տվել իբրև փրկանք նրա որդու՝ Գանիմեդեսի համար: Ժամանակին նրան հափշտակել էր Ջեսի արծիվը և տարել Օլիմպոս: Լաոմեդոնը տվեց իր համաձայնությունը: Մեծազոր հերոսը արոյացիներին հրամայեց ծովափին հողապատնեջ լցնել, և ինքը թաքնվեց նրա հետևը: Գեո նոր էր Հերակլեսը թաքնվել պատնեշի հետևում, երբ ծովի խորքից երևաց հրեշը և ահռելի երա-

խը բաց արած նետվեց Հեսիոնեի վրա: Բարձրագույն աղաղակով Հերակլեսը գուրս վաղցեց հողապատնեշի հետևից, նետվեց հրեշի վրա և իր երկսայր սուրը խորը մխրճեց նրա կուրծքը: Հերակլեսը փրկեց Հեսիոնեին:

Իսկ երբ Ջեսի որդին Լաոմեդոնից պահանջեց խոստացած պարգևը, ապա թագավորն ափսոսաց իր զարմանահրաշ նժույզները և շտվեց Հերակլեսին, մինչև իսկ սպառնալով դուրս արեց Տրոյայից: Հերակլեսը լքեց Լաոմեդոնի պետութունը՝ սրտի մեջ խորը թաքցնելով իր ցասումը: Նա շէր կարող անհապաղ վրեժ լուծել խաբեքա թագավորից, քանի որ չափազանց փոքրաթիվ էր նրա զորքը, և հերոսը շէր կարող հուսալ, թե շուտ կտիրի անմատչելի Տրոյային: Իսկ երկար մնալ Տրոյայի պարիսպների տակ՝ Ջեսի մեծազոր որդին շէր կարող. նա պետք է փութար Հիպոլիտի գոտին Միկենն հասցնել:

Գ Ե Բ Ի Ո Ն Ի Կ Ո Վ Ե Բ Ը

(Տաներորդ սիրազորություն)

Դեսի ամազոնուհիների երկիրը կատարած արշավանքից շատ չանցած՝ Հերակլեսը ճանապարհվեց նոր սիրազորություն կատարելու: Էվրիսթեսը նրան հանձնարարել էր Միկենն քշել բերել հսկա Գեբիոնի՝ Քրիստորի և օվկիանուհի Կալիրոնի որդու կովերը: Հետո էր Գեբիոնի մոտ տանող ճանապարհը: Հերակլեսը պետք է հասներ երկրի ամենահեռավոր արևմտյան ծայրամասը, այն վայրերը, ուր արևի ճաճանչափայլ աստված Հելիոսը երկնքից մայր է մտնում վերջալույսին: Հերակլեսը մեն-մենակ բռնեց իր հեռավոր ճամփան: Նա անցավ Աֆրիկայով, Լիբիական լերի անապատով, վայրենի քարբարոսների երկրի միջով և, ի վերջո, հասավ երկրի ծայրագույն սահմանին: Այստեղ, ծովային նեղուցի երկու կողմերում, նա վիթխարի քարակոփ սյուններ կանգնեցրեց իբրև իր սիրազորություն հավերժական հուշարձանի:

Դրանից հետո զեռ շատ թափառեց Հերակլեսը, մինչև որ հասավ պեհեր օվկիանոսի ափերին: Մտքերի մեջ ընկած՝ նստել էր հերոսը Օվկիանոսի հավերժածուփ ջրերի ափին. ինչպե՞ս անցնել

1 Հերակլեսի սյունե կամ Հերկուլեսյան սյունե—հույները գտնում էին, թե Ջիբրալթարի նեղուցի առափնյա ժայռերը Հերակլեսն է կանգնեցրել:

էրիթիա կղզին, ուր Գերիոնը պահում էր իր նախիրները: Շուտով կիջնի երեկոն: Ահա և երևաց Հելիոսի երկանիվը՝ դեպի Օվկիանոսի ջրերը թեքվելիս: Հելիոսի վառ ճաճանչները կուրացրին Հերակլեսին և անտանելի, կիղիչ տապը նեղեց հերոսին: Ցասումնալից՝ վեր թռավ Հերակլեսը և ձեռքն առավ իր ահա՛վոր աղեղը, բայց չզայրացավ պայծառափայլ Հելիոսը, այլ սիրալիր ժպտաց հերոսին. նրան դուր եկավ Զևսի մեծազոր որդու արտասովոր խիզախութունը: Ինքը՝ Հելիոսն առաջարկեց Հերակլեսին ծովը կտրել իր ոսկեղեն մակուշկով, որով արևի աստվածն իր նօւլգններով ու երկանվով ամեն երեկո երկրի արևմտյան ծայրից արևելյան ծայրն է անցնում՝ դեպի իր ոսկեհուռ պալատը: Հերոսը, ուրախացած, համարձակորեն ցատկեց ոսկեղեն մակուշկը և արագորեն հասավ էրիթիա կղզու ափերը:

Հագիվ էր հասել կղզուն, երբ երկվիսանի ահեղ Օրթրոս շունը հաչելով նետվեց հերոսի վրա: Իր ծանրագին գուրգի մի հարվածով Հերակլեսը սպանեց շանը: Միայն Օրթրոսը չէր Գերիոնի նախիրների պահապանը: Հերակլեսը ստիպված եղավ կովի մեջ մտնել նաև Գերիոնի նախրապանի՝ հսկա էվրիտիոնի հետ: Զևսի որդին արագորեն ավարտեց նրա հետ ունեցած կոնվը և Գերիոնի կովերը քշեց դեպի ծովափ, ուր սպասում էր Հելիոսի ոսկեղեն մակուշկը: Գերիոնի ականջին հասավ կովերի բառաչունը, և նա շտապեց իր նախրի մոտ: Տեսնելով, որ իր Օրթրոս շունն ու հսկա էվրիտիոնն սպանված են՝ նա ընկավ նախիրը հափշտակողի հետևից և ծովափին հասավ նրան: Գերիոնը մի հրեշավոր հսկա էր. երեք մարմին ուներ ու երեք գլուխ, վեց ձեռք ու վեց էլ ոտք: Երեք վահանով էր պաշտպանվում կովի ժամանակ ու միանգամից երեք վիթխարի տեղ նետում խոռանի վրա: Ահա այսպիսի հսկայի հետ էր, որ պիտի մարտնչեր Հերակլեսը, և նրան օգնության հասավ ուղմատենչ մեծ դիցուհի Աթենաս-Պալլասը: Հերակլեսը, հսկային տեսնելուն պես, արձակեց իր մահարեր նետը: Նետը մխրճվեց Գերիոնի գլուխներից մեկի աչքը: Առաջին նետի հետևից երկորդը սուրաց, երկրորդին երրորդը հաջորդեց: Ահեղորեն ճգնեց Հերակլեսն իր ամենակործան գուրգը և շանթի պես հարվածեց Գերիոնին: Եվ եռամարմին հսկան անշունչ դիակի նման գետին տապալվեց: Հերակլեսը Հելիոսի ոսկեղեն մակուշկով Գերիոնի կովերը տեղափոխեց փոթորկալից Օվկիանոսի միջով և մա-

կույկը վերադարձրեց արևի աստծուն: Մեծագործության առաջին կեսն ավարտված էր:

Ինչ շատ դժվարություններ կային առջևում: Նախիրը դեռ պետք է Միկենն քշեր: Իսպանիայի միջով, Պիրենյան լեռների վրայով, Գալիայով ու Ալպերով, ապա Իտալիայի միջով քշում էր նախիրը Հերակլեսը: Իտալիայի հարավում, Ռեգիում քաղաքի մոտ, կովերից մեկը անշատվեց նախրից և նեղուցով լող տվեց Միկիլիա: Այնտեղ այդ կովին տեսավ էրիթս արքան՝ Պոսեյդոնի որդին, և խառնեց իր նախրին: Հերակլեսը երկար փնտրեց կովին: Ի վերջո Հեփեստոս աստծուն խնդրեց հսկել իր նախիրը, իսկ ինքը նեղուցը կտրեց, հասավ Միկիլիա և էրիթիս արքայի նախրի մեջ դտավ կովը: Արքան չկամեցավ այն ետ տալ Հերակլեսին. վստահ իր ուժին՝ նա Հերակլեսին մենամարտի կանչեց: Հաղթանակ նվաճողի պարգևն այդ կովն էր: Էրիթսի ուժերից վեր էր Հերակլեսի նման ախոյանին հաղթել: Զևսի որդին արքային սեղմեց իր՝ զորավոր բազուկներով ու խեղդամահ արեց: Հերակլեսը կովի հետ միացավ իր նախրին և շարունակեց ճանապարհը: Իոնյան ծովի ափերին Հերա աստվածուհին կատաղեցրեց ամբողջ նախիրը: Կատաղի կովերը ցրիվ եկան չորս կողմի վրա: Միայն մեծամեծ ջանքերի գնով կարողացավ Հերակլեսը հավաքել իր կովերի մեծ մասը թրակիայում և, վերջապես, քշեց Միկենն՝ էվրիսթևսի մոտ: Իսկ էվրիսթևսը կովերին դո՛հ բերեց Հերա մեծ աստվածուհուն:

Կ Ե Ր Բ Ե Ր 1

(Տասնմեկերորդ սխրագործություն)

Հագիվ էր Հերակլեսը Տիրինթոս հասել, երբ էվրիսթևսը նրան կրկին անգամ սխրագործության ուղարկեց: Դա արդեն տասնմեկերորդ մեծագործությունն էր, որ պիտի իրագործեր Հերակլեսը էվրիսթևսին ծառայելու ընթացքում: Անհավատալի դժվարություններ վիճակվեցին հաղթահարելու Հերակլեսին այդ սխրագործությունը կատարելիս: Նա պիտի իջներ Հադեսի խավարշտին ու սուկումներով լեցուն ստորերկրյա թագավորությունը և էվրիսթևսին բերեր ստորերկրյա թագավորության պահապանին՝ դոթիքի ահավոր շանը՝ Կերբերին: Ծնագլուխ շուն էր Կերբերը, վզի շուրջը

1 Կամ՝ Ցերբեր (ըստ հռոմեական գրությունների):

օձեր էին գալարվում, պոչը վերջանում էր ահռելի երախ ունեցող վիշապի գլխով:

Հերակլեսն ուղևորվեց Լակոնիա և Տենարոսի¹ մթին անդունդով իջավ ստորերկրյա խավարչտին թագավորությունը: Հաղեսի թագավորության հենց դարպասների մոտ Հերակլեսը տեսավ ժայռին ձուլված Թեսևս և Թեսալիայի արքա Պերիփոս հերոսներին: Աստվածներն էին այդպիսի պատիժ տվել նրանց, որովհետև նրանք կամեցել էին առևանգել Հաղեսի կնոջը՝ Պերսեփոնենին: Թեսևսն աղերսեց Հերակլեսին:

— Օ՛, մեծն որդիդ Ջևսի, ազատի՛ր ինձ: Դու արկանատես ես իմ տառապանքներին: Դո՛ւ ես միայն, որ ինձ այս տանջանքներից փրկելու զորություն ունես:

Հերակլեսը ձեռք մեկնեց Թեսևսին և ազատեց նրան: Իսկ երբ նա ուզեց արձակել նաև Պերիփոսին՝ սասանեց գետինը, և կուհեց Հերակլեսը, որ աստվածները չեն կամենում նրա ազատությունը: Հերակլեսը հնազանդ եղավ աստվածների կամքին և շարունակեց իր ճամփան դեպի հավիտենական գիշերվա խավարը: Հերակլեսին ստորերկրյա թագավորություն առաջնորդում էր աստվածների բանքեր Հերմեսը՝ հանգուցյալների հոգիներին ուղեկցողը, իսկ մեծ հերոսին ուղեկցողը Ջևսի սիրելի դուստրն էր, ինքը՝ Աթենաս-Պալլասը: Երբ Հերակլեսը մուտք գործեց Հաղեսի թագավորությունը՝ մեռյալների հոգիներն ահաբեկված ցրիվ եկան: Հերակլեսին տեսնելով փախուստի շղթան միայն Մելեագրոս հերոսի ստվերը, Եվ աղերսանքով դիմեց նաև Ջևսի մեծագոր որդուն:

— Օ՛, մեծդ Հերակլես, միայն մի բան եմ խնդրում քեզ հանուն մեր բարեկամության. գթա՛ իմ որբացած քրոջը՝ դեղանի Դեանիրային: Անպաշտպան է մնացել իմ մահից հետո: Կնուժյան առ նրան, մեծագոր հերո՛ս, պաշտպան կանգնիր նրան:

Հերակլեսը խոստացավ կատարել ընկերոջ խնդիրքը և շարունակեց իր ճամփան՝ հետևելով Հերմեսին: Հերոսին ընդառաջ ծառացավ սոսկումնալի Գորգոն Մեդուզայի ստվերը, նա ահեղորեն առաջ մեկնեց իր պղնձե ձեռքերը և թափահարեց ոսկեղեն թևերը, իսկ գլխի վրա գալարվեցին օձերը: Ձեռքը սրին տարավ անվեհեր հերոսը, բայց Հերմեսը կասեցրեց նրան՝ ասելով,

— Սրիդ մի՛ դիմիր, Հերակլես: Չէ՞ որ սա լոկ անմարմին ստվեր է: Նա քեզ մահվամբ չի՛ սպառնում:

Բազում սարսափներ տեսավ Հերակլեսն իր ճանապարհին, վերջապես, հայտնվեց Հաղեսի գահի առջև: Մեռյալների թագավորության տիրակալն ու նրա կինը՝ Պերսեփոնեն, հիացմունքով էին նայում ամպրոպային Ջևսի մեծագոր որդուն, որ աներկյուղ իջել էր խավարի ու տրոմություն թագավորությունը: Վսեմաշուք ու անխուժ՝ կանգնել էր նա Հաղեսի գահի առաջ՝ հենված իր վիթխարի զուգին, առյուծի մորթին ուսերին, աղեղը մեջքին դցած: Հաղեսը սիրալիր ողջունեց իր եղբոր՝ մեծն Ջևսի որդուն և հարցրեց, թե նրան ի՞նչն է ստիպել լքել արևի լույսը և իջնել խավարի թագավորությունը: Խոնարհվելով Հաղեսի առաջ, այսպես պատասխանեց Հերակլեսը.

— Օ՛, մեռյալների հոգիների տիրակալ, մեծդ Հաղես, մի՛ զայրացիր իմ խնդիրքի վրա, ամենակարող: Գիտես դու, որ իմ կամքով չէ, որ եկել եմ քո թագավորությունը, իմ կամքով չէ, որ քեզ պիտի դիմեմ խնդիրքով: Թույլ տուր ինձ, տիրակալ Հաղես, Միկենն տանել քո եռագլուխ Կերբեր շանը: Այդ ինձ հրամայել է անել էվրիսթևսը, որին ես ծառայում եմ օլիմպական լուսավոր աստվածների կամքով:

Հաղեսը պատասխան տվեց հերոսին:

— Ես կկատարեմ քո խնդիրքը, Ջևսի որդի: Բայց պիտի անդեն հնազանդեցնես Կերբերին: Եթե զսպես իմ շանը, ապա թույլ կտամ, որ տանես էվրիսթևսի մոտ:

Երկար փնտրեց Հերակլեսը Կերբերին ստորերկրյա թագավորության մեջ, Վերջապես գտավ Աքերոնի ափերին: Պողպատի պես ամրակուռ բազուկներով նա բռնեց Կերբերի վզից: Ահեղորեն ոռնաց Հաղեսի շունը, ամբողջ ստորերկրյա թագավորությունը թրնդաց նրա ոռնոցից: Ծնունդ էր դուրս պրծնել Հերակլեսի գրկից, բայց հերոսի զորավոր ձեռքերն ավելի ամուր էին սեղմում Կերբերի վիզը: Կերբերն իր պոչը գալարեց հերոսի ոտքի շուրջը, պոչի ծայրի վիշապի գլուխն ատամները մխրճեց նրա մարմնի մեջ, բայց ամեն ինչ ապարդյուն անցավ: Հզորագոր Հերակլեսը ավելի ու ավելի ուժեղ էր սեղմում շան վիզը: Վերջապես Հաղեսի կիսախեղդ շունը ընկավ հերոսի ոտքերի մոտ: Հերակլեսը զսպեց նրան և խավարի թագավորությունից Միկենն տարավ: Ցերեկվա լույսից վախենում էր Կերբերը. սառը քրտինքը պատեց ամբողջ մարմինը:

¹ Հրվանդան, Պելոպոնեսի հարավային ծայրամասը:

թունավոր փրփուրը նրա երեք երախներին կաթում էր գետնին, այնտեղ, ուր կաթում էր թեկուզ և մի կաթիլ փրփուր՝ թունավոր բույսեր էին աճում:

Հերակլեսը Կերբերին բերեց Միկեննի պարիսպների մոտ: Սոսկաց երկշոտ էվրիսթեսը հենց միայն ահավոր շան տեսքից, Գրեթե ծնկաշոք պաղատում էր Հերակլեսին, որ Կերբերին կրկին հետ տանի Հադեսի թագավորությունը: Հերակլեսը կատարեց նրա խնդիրը և Հադեսին վերադարձրեց նրա ահասարսուռ պահապան Կերբերին:

Հ Ե Ս Ա Ե Ի Դ Ե Ե Ի Խ Ն Ծ Ո Ր Ե Ե Ը

(Տասներկուերորդ սխրագործություն)

Էվրիսթեսին ծառայելու ընթացքում Հերակլեսի կատարած սխրագործություններից զժվարագույնը վերջինն էր՝ տասներկուերորդը: Նա պետք է ուղևորվեր մեծ տիտան Ատլասի մոտ, որ երկնակամարը պահում էր իր ուսերին ու երեք ոսկե խնձոր բերեր նրա այգուց, որին հսկում էին Ատլասի դուստրերը՝ Հեսպերիդները: Այդ խնձորները կախված էին մի ոսկե ծառից, իսկ այդ ծառը երկրի աստված Գեան էր աճեցրել իբրև ընծա մեծն Հերային՝ Զևսի հետ ամուսնանալու հարսանիքի օրը: Այդ մեծագործությունն ի կատար ածելու համար ամենից առաջ պետք էր իմանալ Հեսպերիդների այգիների ճանապարհը, որը հսկում էր մի վիշապ, երբեք աչք չգոցելով քնելու համար:

Ոչ ոք չգիտեր Հեսպերիդների ու Ատլասի մոտ տանող ճանապարհը: Երկար թափառեց Հերակլեսն Ասիայում ու Եվրոպայում, կտրեց անցավ այն բոլոր երկրները, որոնցով անցել էր և առաջ՝ Գերիոնի կովերի հետևից գնալու ճանապարհին. ամենուրեք հարցնում էր Ատլասի մոտ տանող ուղին, բայց ոչ ոք չգիտեր այն: Իր որոնումների ժամանակ նա հասավ ծայրագույն հյուսիս, հավերժածուփ, անպարփակ ու փոթորկուն Հերիդանոս¹ գետին:

Հերիդանոսի ափերին Զևսի մեծահամբավ որդուն պատվով ընդունեցին գեղանի հավերժահարսները և խորհուրդ տվին, թե ինչպես պիտի գտնել Հեսպերիդների այգիները տանող ճանապարհը: Հերակլեսը պիտի անսպասելի հարձակում գործեր ծովա-

յին պատգամախոս ծերունի Ներևսի վրա այն պահին, երբ նա դուրս դար ծովի հորձանուտից, և նրանից իմանար Հեսպերիդների մոտ տանող ճանապարհը: Ներևսից բացի այդ ճանապարհը ոչ ոք չգիտեր: Երկար փնտրեց Հերակլեսը Ներևսին: Վերջապես նրան հաջողվեց Ներևսին հանդիպել ծովափին: Եվ Հերակլեսը հարձակում գործեց ծովային աստծու վրա: Դա մի դժվարին պայքար էր. Հերակլեսի երկաթե բաղուկներից ազատվելու համար Ներևսը ամենատարբեր կերպարանքներ էր ընդունում, բայց հերոսը նրան բաց չիթողեց: Վերջապես Հերակլեսը կապկպեց ուժահատ Ներևսին, և ազատ արձակվելու համար ծովային աստվածն ստիպված եղավ Հերակլեսին հայտնել Հեսպերիդների այգիները տանող ճանապարհի գաղտնիքը: Գաղտնիքը իմանալով, Զևսի որդին բաց թողեց ծովային պատգամախոսին և բռնեց իր հեռավոր ճանապարհը:

Նրան դարձյալ վիճակվեց անցնել Լիբիայի անապատով: Այստեղ նա հանդիպեց հսկա Անթեոսին՝ որդուն ծովերի աստված Պոսեյդոնի և երկրի դիցուհի Գեայի, որ ծնել էր նրան, սնել ու դաստիարակել: Անթեոսը բոլոր ճամփորդներին ստիպում էր կովի բռնվել իր հետ և բուրդին, ում որ պարտություն էր մատնում, սպանում էր անգթաբար: Հսկան պահանջեց, որ Հերակլեսն էլ կովի իր դեմ: Ոչ ոք չէր կարող հաղթել նրան մենամարտի մեջ՝ առանց իմանալու այն գաղտնիքը, թե հսկան կովի ընթացքում որտեղից է նորանոր ուժեր կուտակում: Իսկ գաղտնիքն այս էր. երբ Անթեոսն զգում էր, որ ուժը հատնում է՝ հպվում էր գետնին՝ իր մորը, և վերականգնում ուժերը: Նա ուժ էր առնում իր մորից՝ երկրի մեծ աստվածուհուց: Բայց բավական էր Անթեոսին կտրել երկրից և օդ հանել, որպեսզի չբանար նրա զորությունը: Երկար տևեց Հերակլեսի մենամարտն Անթեոսի հետ, հերոսը մի քանի անգամ գետնեց իր ոտխին, բայց հսկան դրանից միայն ավելի էր զորանում: Մեկ էլ հանկարծ, կովի ժամանակ հզորազոր Հերակլեսը գետնից պոկեց ու վեր բարձրացրեց Անթեոսին, սպառվեցին Գեայի որդու ուժերը, և հերոսը խեղդամահ արեց նրան:

Շարունակեց Հերակլեսն իր ճանապարհը և հասավ Եգիպտոս: Այնտեղ, երկար ճանապարհից հոգնատանջ, բուն մտավ հերոսը մի փոքրիկ անտառի ստվերում՝ Նեղոսի ափին: Եգիպտոսի արքան՝ Պոսեյդոնի և Էպափոսի դուստր Լիսիանասի որդի Բուսիրիսը, հրամայեց կապանքների մեջ առնել քնած հերոսին: Նա կամենում

¹ Հերիդանոս — առասպելական գետ

էր Հերակլեսին զոհաբերել նրա հորը՝ Զևսին: Ինք տարի էր, ինչ անբերրիութիւն էր տիրում Եգիպտոսում. կանխագուշակել էր Կիպրոսից եկած պատգամախոս Թրասիոսը, որ անբերրիութիւնը վախճան կունենա միայն այն դեպքում, երբ Քուսիքիսը ամեն տարի Զևսին մի օտարերկրացի զոհաբերի: Քուսիքիսը հրամայել էր, որ բռնեն պատգամախոս Թրասիոսին և առաջինը հենց նրան զոհաբերեն: Այդ ժամանակից ի վեր անողորմ թագավորը շանթարձակին զոհ էր բերում Եգիպտոս եկած բոլոր օտարերկրացիներին: Զոհարան բերին նաև Հերակլեսին, բայց մեծազոր հերոսը կտրատեց այն պարանները, որոնցով կաշկանդել էին իրեն, և հենց զոհարանի մոտ սպանեց Քուսիքիսին ու նրա որդուն՝ Ամփիզամասին: Այսպես պատժվեց Եգիպտոսի քարասիրտ արքան:

Իեւ բազում վտանգներ տեսավ Հերակլեսն իր ճանապարհին, մինչև որ հասավ երկրի ծայրը, ուր մեծ տիտան Ատլասն էր կանգնած: Զարմանք կտրած նայում էր հերոսը հզորազոր տիտանին, որ իր հաղթ ուսերին պահում էր ողջ երկնակամարը:

— Օ՛, մեծդ տիտան Ատլաս, — դարձավ նրան Հերակլեսը, — ես Զևսի որդին եմ, Հերակլեսը: Ինձ էվրիսթեսն է քեզ մոտ առաքել՝ ոսկեառատ Միկենեի թագավորը: Հրամայել է, որ երեք ոսկեղեն խնձոր տանեմ Հեսպերիդների այգիների ոսկի ծառից:

— Կտամ քեզ երեք խնձոր, Զևսի որդի, — պատասխան տվեց Ատլասը, — բայց մինչև բերելս զո՛ւ պիտի կանգնես իմ տեղը և քո ուսերին պահես երկնակամարը:

Համաձայնեց Հերակլեսը: Կանգնեց Ատլասի տեղում: Աներկվակայելի մի ծանրութիւն իջավ Զևսի որդու ուսերին, նա լարեց իր բոլոր ուժերը, պահեց երկնակամարը: Ծանրութիւնն ահռելի ուժով ճնշում էր Հերակլեսի հզոր ուսերը: Նա կուցավ երկնքի ծանրութիւնն անբոց, մկաններն ուռճացան լեռան պես, լարումից քրտինքը պատեց ողջ մարմինը, բայց գեթմարդկային ուժը և Աթենաս զիցուհու օգնութիւնը նրան հնար տվին երկնակամարը պահել այնքան ժամանակ, մինչև որ Ատլասը ետ գա երեք խնձորներն առած: Վերադառնալով, այսպես ասաց Ատլասը հերոսին.

— Ահա՛ երեք խնձորները, Հերակլես, եթե ուզում ես՝ ինքս կտանեմ Միկենե, իսկ դու պահիր երկնակամարը մինչև իմ վերադարձը. հետո ես կրկին կկանգնեմ քո տեղը:

Կոհակեց Հերակլեսն Ատլասի խորամանկութիւնը, հասկացավ,

որ տիտանն ուզում է իսպառ ազատվել իր ծանրազին աշխատանքից և խորամանկութեամբ պատասխանեց.

— Է՛մ՛վ, Ատլաս, համաձայն եմ, — ասաց Հերակլեսը, — միայն թե թույլ տուր, որ մի բարձ շինեմ ինձ համար, դնեմ ուսերիս, որ այնքան սոսկալի շճնշի երկնակամարը:

Ատլասը կրկին կանգնեց իր տեղը և ուսերին առավ երկնքի ծանրութիւնը: Իսկ Հերակլեսը վերցրեց իր աղեղն ու նետերով կապարձը, զուրգն ու երեք խնձորները, և այսպես ասաց.

— Մնաս բարո՛վ, Ատլաս: Ես պահեցի երկնակամարը, քանի դեռ դու Հեսպերիդների այգիներն էիր գնացել խնձորները բերելու, իսկ առհավետ ուսերիս պահել երկնքի ողջ ծանրութիւնը՝ ես շե՛մ կամենում:

Այս ասելով Հերակլեսը հեռացավ տիտանից, և Ատլասին վիճակվեց դարձյալ, առաջվա պես, իր հզոր ուսերին պահել երկնակամարը: Իսկ Հերակլեսը վերադարձավ էվրիսթեսի մոտ ու նրան տվեց ոսկեղեն խնձորները: Էվրիսթեսը դրանք նվիրեց Հերակլեսին, իսկ հերոսն ընծայեց Զևսի սիրելի դուստր Աթենաս-Պալլասին: Աթենասն այդ խնձորները ետ տվեց Հեսպերիդներին, որպեսզի հավերժ մնան նրանց այգիներում:

Իր տասներկուերորդ սխրագործութիւնից հետո Հերակլեսն ազատվեց էվրիսթեսի մոտ ծանուցելուց: Այժմ արդեն նա կարող էր վերադառնալ յոթնադուռն Թեբե: Բայց Զևսի որդին այնտեղ երկար շմեաց: Նրան նորանոր մեծագործութիւններ էին սպասում: Նա իր կնոջը՝ Մեգարային, կնութիւնն ավեց ընկերոջը՝ Իոլոսին, իսկ ինքը դարձյալ Տիբրինոս գնաց:

Բայց Հերակլեսին միայն հաղթութիւններ չէ որ սպասում էին. հերոսին սպասում էին և տառապալից աղետներ, քանի որ Հերա մեծ աստվածուհին առաջվա նման հետապնդում էր նրան:

ՀԵՐԱԿԼԵՍ ԵՎ ԷՎՐԻՏՏԱՍ

Իշխում էր էվրիտոս արքան էվրեա կղզու էկալիա քաղաքում: Բովանդակ Հունաստանում տարածվել էր էվրիտոսի փառքը որպես ամենահմուտ նետ արձակողի: Նետաձիգ Ապոլոնն էր եղել նրա ուսուցիչը, մինչև անգամ նետեր ու աղեղ էր ընծայել նրան, Մի ժամանակ, պատանեկութիւն տարիներին, էվրիտոսից նետաձգութիւն էր սովորել նաև Հերակլեսը:

Ահա այս արքան էր, որ բովանդակ Հունաստանում ի լուր ամենքի հայտարարեց՝ իր գեղանի զուստը Իոլեին կնության կտա այն հերոսին, որ իրեն պարտության կմատնի նետաձգության մեջ: Էվրիսթևսի մոտ իր ծառայությունն ավարտելուն պես Հերակլեսն ուղևորվեց դեպի էկալիա, ուր Հունաստանի շատ հերոսներ էին հավաքվել, և դարձավ մրցության մասնակիցը: Հերակլեսը դուրսվամբ պարտության մատնեց Էվրիտոսին և պահանջեց, որ իրեն կնության տա Իոլե դստերը: Իսկ Էվրիտոսը դրժեց իր խոստումը: Մոռացության տալով հյուրընկալության սրբազան սովորությունը, նա ծաղրանքի առարկա դարձրեց մեծ հերոսին. ասաց, որ դստերը կնության չի տա Էվրիսթևսի մոտ ստրուկ եղած մարդուն: Եվ, վերջապես, Էվրիտոսն ու նրա նենգամիտ որդիները պալատից և մինչև իսկ էկալիայից դուրս արեցին խրախճանքի ժամանակ գինովցած Հերակլեսին: Հեռացավ Հերակլեսը էկալիայից: Նա լքեց Էվրեսան անսփոփ վշտով համակված, քանի որ արդեն սիրում էր մեծ հերոսը գեղանի Իոլեին: Անթեղելով սրտում իրեն անարգած Էվրիտոսի հանդեպ ունեցած ցասումը, հերոսը Տիրինթոս վերադարձավ:

Մի որոշ ժամանակ անց, հույներից ամենախորամանկը՝ Ավտոլիկոսը, Հերմեսի որդին, փախցրեց Էվրիտոսի նախիրը: Իսկ Էվրիտոսը զոդության մեջ Հերակլեսին մեղադրեց: Էկալիայի արքան կարծում էր, թե հերոսը հափշտակել է նրա նախիրը՝ իրեն հասած վիրավորանքի վրեժը լուծելու համար: Միայն Իփիտոսն էր՝ Էվրիտոսի ավագ որդին, որ չէր հավատում, թե մեծ Հերակլեսն է փախցրել հոր նախիրը: Իփիտոսը մինչև անգամ որոնեց նախիրը, միայն թե ապացուցած լինի անմեղությունը Հերակլեսի, որի հետ կապված էր ամենասերտ բարեկամությամբ: Որոշումների մեջ՝ Իփիտոսը հասավ Տիրինթոս: Հերակլեսը ցնծությամբ ընդունեց ընկերոջը: Մի անգամ, երբ երկուսով կանգնած էին բարձրաբերձ ժայռի գլխին կառուցված Տիրինթոս բերդի բարձր պարիսպներին, հանկարծ մի մուկգին ցասում համակեց Հերակլեսին՝ մեծ աստվածուհի Հերայի կամքով: Զայրագնած հերոսը մտաբերեց այն վիրավորանքը, որ հասցրել էին իրեն Էվրիտոսն ու նրա զավակները: Այլևս անկարող տիրապետելու իրեն՝ հերոսը բռնեց Իփիտոսին և նետեց նրան բերդի պարիսպների վրայից: Զախցախվեց ու մեռավ տարաբախտ Իփիտոսը: Ակամա զործած այդ սպանությունը Հե-

րակլեսը շարժեց Զևսի դայրույթը, քանի որ խախտել էր հյուրընկալության սրբազան սովորությունը և բարեկամական կապերի սրբությունը: Իբրև պատիժ, մեծ շանթարձակը տանջալից հիվանդություն տվեց որդուն:

Երկար տառապեց Հերակլեսը և, վերջապես, հիվանդությունից ուժասպառ, բռնեց Դելփիքի ճամփան՝ հարցնելու Ապոլոնից, թե ինչպես կարող է ազատվել աստվածների այդ պատժից: Բայց պատգամախոս պիթիան նրան պատասխան չտվեց: Հերոսին մինչև անգամ դուրս արեց տաճարից իբրև սպանությունը պղծված մարդու: Խստագույնս զայրացավ Հերակլեսը և տաճարից հափշտակեց այն եռոտանին, որի վրայից պատգամախոսում էր պիթիան: Իսկ այդ արարքով նա զայրացրեց Ապոլոնին: Հայտնվեց ոսկեզանգուր աստվածը Հերակլեսին և պահանջեց ետ տալ եռոտանին, բայց Հերակլեսը մերժեց նրան: Մի դաժան մենամարտ բռնկեց Զևսի որդիների՝ անմահ աստված Ապոլոնի և հերոսներից վսեմագույնի՝ մահկանացու Հերակլեսի միջև: Զևսը չէր կամենում, որ Հերակլեսը կործանվի: Նա Օլիմպոսից շարտեց իր շողշողուն շանթը զավակների միջև և, բաժանելով նրանց, վերջ տվեց պայքարին: Եղբայրները հաշտվեցին: Եվ Պիթիասն այսպիսի պատասխան տվեց Հերակլեսին.

— Դու ապաքինված կլինես այն ժամանակ միայն, երբ երեք տարով ստրկության վաճառվես: Իսկ քեզ համար վճարված դրամը սուր Էվրիտոսին իբրև փրկանք նրա Իփիտոս որդու համար, որին դու ես սպանել:

Եվ Հերակլեսը դարձյալ ստիպված եղավ զրկվել աղատությունից: Նրան իբրև ստրուկ վաճառեցին Լիգիայի թագուհուն՝ Իարգանոսի զուստը Օմփալին: Ինքը՝ Հերմեսը տարավ Հերակլեսի համար վճարված դրամը, բայց լընդունեց այն էկալիայի գողոգամիտ արքան: Նա առաջիկա պես մնաց Հերակլեսի թշնամին:

ՀԵՐԱԿԼԵՍ ԵՎ ԴԵՑԱՆԻՐԱ

Երբ Էվրիտոսը Հերակլեսին դուրս արեց էկալիայից՝ մեծ հերոսը գնաց Էտոլիայի Կալդիոն քաղաքը: Այնտեղ Օյնեոս արքան էր իշխում: Հերակլեսը ներկայացավ Օյնեոսին նրա զուստը Դեյանիրայի ձեռքը խնդրելու, քանի որ սովորների թագավորության մեջ Մելիագրոսին խոստացել էր ամուսնանալ նրա հետ: Կալդո-

նում Հերակլեսն ահարկու արնոյանի հանդիպեց, Շատ հերոսներ էին պայքարում Դեյանիրայի համար, և նրանց մեջ նաև գետերի աստված Աքելոսը: Վերջապես, Օյնեսը վճռեց, որ Դեյանիրայի ձեռքը կտանա մարտի մեջ հաղթանակ տանողը: Բոլոր փեսացուները հրաժարվեցին հզոր Աքելոսի հետ մարտի բռնվելուց: Միայն Հերակլեսը մնաց: Նրան վիճակվեց մենամարտել Աքելոսի հետ: Տեսնելով իր հետ ուժերը չափելու Հերակլեսի վճռականությունը, Աքելոսն ասաց նրան.

— Դու ասում ես, թե Ձևսի ու Ալկմենեի ծնունդն ես: Ստում ես, Ձևսը քո հայրը չէ:

Եվ Աքելոսն սկսեց ծանակել Ձևսի մեծագոր որդուն և ամբաստանել նրա մորը՝ Ալկմենեին: Հոնքերը կիտելով, խստաշունչ հայացք նետեց Հերակլեսն Աքելոսի վրա: Ցասման հուրն էր փայլատակում նրա աչքերում: Եվ նա այսպես ասաց.

— Աքելոս, բազուկներս ինձ ավելի լա՛վ են ծառայում, քան լեզուս: Խոսքի մեջ դո՛ւ եղիր հաղթանակողը, իսկ ե՛ս՝ հաղթանակ կտանեմ կովի մեջ:

Հերակլեսը հաստատաբայլ մտեցա՛վ Աքելոսին և առավ իր զորավոր բազուկների մեջ: Անասան կանգնել էր վիթխարի Աքելոսը: Հերակլեսն անկարող եղավ գետնին զարկել նրան: Զուր էին նրա ջանքերը: Այգպես կանգնել էր Աքելոսը՝ նման մի անասան ժայռի, որին անզոր են շարժել նրա ստորոտին բախվող ծովային որոտաձայն արիքները: Կուրծք-կրծքի կռիվ են տալիս Հերակլեսն ու Աքելոսը՝ կեռ եղջյուրներով միմյանց զամված ցուլերի պես: Երեք անգամ հարձակում գործեց Հերակլեսն Աքելոսի վրա, չորրորդ անգամ, դուրս պրծնելով Աքելոսի ձեռքերի միջից, հերոսը բռնեց իր արնոյանին հետևի կողմից: Ասես ծանրածանր մի լեռ, նա գետային աստուճն գետնին սեղմեց: Բոլոր ուժերն ի մի հավաքելով, Աքելոսը հազիվ կարողացավ իր քրտնաշաղախ ձեռքերն ազատել, բայց որքան էլ լարում էր ուժերը, Հերակլեսը նրան ավելի ու ավելի ուժգին էր սեղմում գետնին: Հառաչանք արձակելով կռացավ Աքելոսը, ծնկները ծալվեցին, իսկ գլուխը գրեթե գետնին էր դիպչում: Պարտության շմատնվելու համար Աքելոսը խորամանկություն դիմեց՝ օձ դարձավ: Հենց որ օձի կերպարանք առավ Աքելոսը և դուրս սողաց Հերակլեսի ձեռքերի միջից, հերոսը ծիծաղելով բացականչեց.

— Դեռ օրորոցում եմ օձերի հետ կովել սովորել: Ծիշտ է, դու գերազանցում ես մյուս օձերին, Աքելոս, բայց անկարող ես շափվել լեռնեյան հիդրայի հետ: Թեև նրա մի կտրած գլխի փոխարեն երկուսն էին աճում, էլի ես պարտության մատնեցի նրան:

Եվ բռնեց Հերակլեսը օձի վզից ու սեղմեց նրան ասես կրկաթե ունելիով: Աքելոսը ճիգ էր թափում դուրս պրծնել հերոսի ձեռքերից, բայց ապարդյուն ճիգեր էին դրանք: Եվ, ճարահատ, ցուլ դարձավ ու կրկին հարձակվեց Հերակլեսի վրա: Հերակլեսը բռնեց ցուլ-Աքելոսի եղջյուրներից և գետնովը տվեց: Այնպիսի ահռելի ուժով գետնեց, որ կտրեց եղջյուրներից մեկը: Պարտված է Աքելոսը, և Օյնեսը Դեյանիրային կնություն տվեց Ձևսի մեծագուր զավակին:

Հարսանիքից հետո Հերակլեսը մնաց Օյնեսի սլախտում, բայց երկար չապրեց այնտեղ: Մի անգամ, խրախճանքի ժամին, Հերակլեսը զարկեց Արքիտելոսի որդուն՝ Էվնոսոսին, որովհետև տղան նրա ձեռքերին էր լցրել ոտքեր վանալու համար պատրաստված ջուրը: Հարվածն այնքան ուժգին էր, որ տղան անշնչացած վայր ընկավ: Խորապես վշտացավ Հերակլեսը, ու թեև Արքիտոլոսը ներեց որդուն ակամայից սպանելու համար, այնուամենայնիվ հերոսը լքեց Կալիդոնը և Դեյանիրայի հետ միասին մեկնեց Տիրինթոս:

Ճանապարհին Հերակլեսը կնոջ հետ հասավ Էվնոսոս՝ դեպին: Այդ կատաղի գետով, իր լայն մեջքին նստեցրած ճամփորդներին անց էր կացնում կենտավրոս նեսոսը: Սա առաջարկեց Դեյանիրային մյուս ափը հասցնել, և Հերակլեսը կնոջը նստեցրեց կենտավրոսի մեջքին, իսկ ինքը գուրզն ու աղեղը մյուս ափը նետեց և լողալով կտրեց կատաղի գետը: Մյուս ափը դուրս գալուն պես հանկարծ Հերակլեսի ականջին հասավ Դեյանիրայի աղեկտուր ճիչը: Նա օգնության էր կանչում ամուսնուն: Գննտավրոսը, համարված Դեյանիրայի գեղեցիկությամբ, ուզում էր առևանգել նրան: Ձևսի որդին ահեղորեն զոչեց նեսոսի հետևից.

— Ո՛ւր ես փախչում: Արդյոք չե՞ս կարծում, թե քեզ կփրկեն քո ոտքերը: Ո՛չ, դու փրկություն չունես: Որքան էլ արագ սուրաս, միևնույն է, իմ նետը կհասնի՛ քո հետևից:

Պրկեց Հերակլեսն իր աղեղը, և նետը սլացավ սրկված աղեղ-

նալարի վրայից: Մահաբեր նետը հասավ նեսսոսին, մխրճվեց թիկունքը, իսկ ծայրը դուրս եկավ կրծքից: Մահացու վիրավոր նեսսոսի ծնկները ծալվեցին: Առվի պես հոսում էր արյունը **վերքից**¹ խառնված լերնեյան հիդրայի թույնի հետ: Չկամեցավ առանց վրեժխնդիր լինելու մեռնել նեսսոսը. հավաքեց ամբողջ արյունը, Դեյանիրային տվեց ու ասաց.

— Օ՛ր, դուստրդ Օյնետի, դու վերջինը եղար, որին ես անցկացրի էվենոսի կատաղի ջրերի միջով: Ա՛ր իմ արյունը և պահպանիր: Եթե Հերակլեսը քեզ չսիրի այլևս՝ այս արյունը ետ կբերի նրա սերը, և ոչ մի կին քեզնից ավելի թանկ չի լինի նրա համար, միայն թե այս արյունը քսիր Հերակլեսի հագուստին:

Առավ Դեյանիրան նեսսոսի արյունն ու թաքցրեց: Մեռավ նեսսոսը: Հերակլեսն ու Դեյանիրան ժամանեցին Տիրինթոս և ապրեցին այնտեղ այնքան ժամանակ, մինչև որ ստիպված եղան լքել այդ պանծալի քաղաքը, որովհետև Հերակլեսն ակամայից սպանեց իր ընկերոջը՝ Իփիտոսին:

ՀԵՐԱԿԼԵՍԸ ՕՄՓԱԼԵՒՄՈՍ

Իփիտոսին սպանելու պատճառով Հերակլեսն իբրև ստրուկ վաճառվեց լիդիայի թագուհի Օմփալեսին: Դեռ երբեք Հերակլեսն այնքան ձախորդություն չէր տեսել, որքան լիդիայի գոռոզ թագուհուն ծառայելիս: Հերոսներից վսեմագույնը մշտապես ստորացվում էր թագուհու կողմից: Թվում էր, թե Օմփալեն հաճույք էր գտնում Զևսի որդուն ծաղր ու ծանակի ենթարկելու մեջ: Հերակլեսին կանացի զգեստներ հագցնելով՝ ստիպում էր մանել ու գործել իր աղախինների հետ միասին: Այն հերոսը, որ իր ծանրագին գուրզով մահվան էր մատնել լերնեյան հիդրային, Հագեսի թագավորությունից բերել էր ահասարսուռ կերբերին, բազուկներով խեղդամահ էր արել նեմեյան առյուծին և իր ուսերին պահել երկնակամարի ծանրությունը, այն հերոսը, որի հենց միայն անունը սարսուղեցնում էր նրա ոտխներին, պիտի նստեր, կռանար ջուհակի դազգահի վրա և բուրդ մաներ այն ձեռքերով, որ սովոր էին կտրուկ սուր բանեցնել, ձգել պիրկ աղեղնալարը և ախոյաններին ջարդել ծանրագին գուրզով:

Իսկ Օմփալեն, վրան առնելով Հերակլեսի առյուծներին, որ ծածկում էր նրան ոտից գլուխ և հետևից քարշ գալիս գետնին, հե-

րոսի ոսկեհուռ զրահը հագնելով և սուրը գոտուց կախելով նրա գուրզը մեծ ճիգով ուսին դնելով՝ կանգնում էր Զևսի որդու առաջ և ծանակում նրան՝ իր ստրուկին: Օմփալեն կարծես նպատակ էր դրել Հերակլեսի մեջ մարել նրա անպարտելի ուժը: Հերակլեսը պարտավոր էր ամեն ինչ տանել. չէ՞ որ նա Օմփալեսի ստրուկն էր և դա դեռ պիտի երեք երկար ու ձիգ տարի տևեր:

Հերոսին Օմփալեն հազվադեպ էր բաց թողնում իր պալատից: Մի անգամ, լքելով Օմփալեսի պալատը, Հերակլեսը քուն էր մտել անտառի ստվերում, էփեսոս՝ քաղաքի շրջակայքում, Քնած ժամանակ գաճաճ կերկոպները գաղտագողի մոտեցել էին նրան և զենքը հափշտակելու փորձ արել, բայց Հերակլեսն արթնացել էր հենց այն պահին, երբ կերկոպները վերցրել էին նրա նետերն ու աղեղը: Բռնուտեց նրանց հերոսը և կապկպեց նրանց ձեռքերն ու ոտքերը: Հերակլեսը մի երկար ձող անցկացրեց նրանց կապված ոտքերի միջով և տարավ դեպի էփեսոս: Բայց կերկոպներն այնպես ծիծաղեցրին հերոսին իրենց ծամածռություններով, որ Զևսի որդին բաց թողեց նրանց:

Օմփալեսի մոտ ստրուկ եղած ժամանակ Հերակլեսը զնաց Ավլիս² Սիլեոս արքայի մոտ, որը իր մոտ եկած բոլոր օտարերկրացիներին ստիպում էր ստրուկի պես աշխատել խաղողի այգիներում: Հերակլեսին էլ ստիպեց աշխատել: Զայրագնած հերոսը արմատահան արեց բոլոր վազերը և սպանեց Սիլեոս թագավորին, որ չէր հարգել հուրընկալության սրբազան սովորույթը: Օմփալեսի մոտ ստրուկ եղած ժամանակ Հերակլեսը մասնակից եղավ արգոնավորդների արշավանքին: Եվ, ի վերջո, սպառվեց պատժի ժամկետը, և Զևսի մեծագոր որդին կրկին ազատ էր:

ՀԵՐԱԿԼԵՍԸ ԵՎ ԱՃՈՒՄ Է ՏՐՈՑԱՆ

Օմփալեսի մոտ ստրկական ծառայությունից ազատվելուն պես Հերակլեսը հերոսների մեծ զորաբանակ հավաքեց և տասնութ նավով ուղևորվեց Տրոյա՝ վրեժխնդիր լինելու կամեղոն արքայից, որ խաբել էր իրեն: Հասնելով Տրոյա, հերոսը նավերի պահպանությունը հանձնեց Օիկլեսին՝ մի փոքր ջոկատ տալով նրան, իսկ ինքը ամբողջ զորքն առած մոտեցավ Տրոյայի պարիսպներին: Հազիվ էր

¹ Քաղաք Փոքր Ասիայի արևմտյան ափին:

² Քաղաք Բեոլիայում:

Հերակլեսն իր զորքով հեռացել նավերի մոտից, երբ կառնեղոնը հարձակում գործեց Օթիլէսի վրա, սպանեց նրան և ջարդեց գրեթէ ամբողջ շոկաար: Նավերի մոտից ճակատամարտի շոինդը լսելով, Հերակլեսը ետ դարձավ, փախուստի մատնեց կառնեղոնին և Տրոյա քչեց: Տրոյայի պաշարումը երկար շտեկեց: Ելնելով բարձրադիր պարիսպների վրա, հերոսները քաղաք խուժեցին, Առաջինը քաղաք մտավ հերոս Տելամոնը: Հերակլեսը, մեծագույնը հերոսներից, շեր կարող հանգուրժել որևէ մեկի գերազանցությունն իր հանդիպ: Սուրը ձեռքն առած նեաժեց իր առաջը կտրած Տելամոնի հետևից: Տեսնելով, որ անխուսափելի մահ է սպառնում իրեն, իսկույն կոսացավ Տելամոնը և սկսեց քարեր հավաքել: Զարմացավ Հերակլեսը և հարցրեց.

— Այդ ի՞նչ ես անում, Տելամոն:

— Օ՛հ, Զևսի վսեմագույն որդիդ, ես զոհարան եմ կանգնեցնում հաղթանակած Հերակլեսին, — պատասխան տվեց հնարամիտ Տելամոնը և իր պատասխանով զսպեց Զևսի որդու ցասումը:

Քաղաքը նվաճելիս Հերակլեսը նետահարեց կառնեղոնին և նրա բոլոր զավակներին: Միայն կրտսերին՝ Պողարկեսին ինչայեց հերոսը: Իսկ կառնեղոնի գեղանի դստերը՝ Հեսիոնեին Հերակլեսը կնություն տվեց քաջությունը աչքի ընկած Տելամոնին, և աղջկան թույլ տվեց ընտրել գերվածներից մեկին և ազատ արձակել: Հեսիոնեն ընտրեց իր նղբորը՝ Պողարկեսին:

— Նա բոլոր գերիներից առաջ պիտի ստրուկ դառնա, — գուշեց Հերակլեսը, — նա ազատ կարձակվի միայն փրկանքով:

Հեսիոնեն գլխի վրայից առավ ծածկոցը և տվեց իբրև փրկանք եղբոր համար: Այդ ժամանակից ի վեր Պողարկեսին սկսեցին Պրիամոս (այսինքն՝ զնված) կոչել: Հերակլեսը նրան տվեց Տրոյայի իշխանությունը, իսկ ինքն իր զորաբանակով նորանոր սխարանքների զնաց:

Երբ Հերակլեսը Տրոյայից վերադառնալիս նավում էր ծովի միջով, Հերա աստվածուհին կամենալով կորստյան մատնել իրեն ատելի Հերակլեսին, մի ահեղաշունչ փոթորիկ ուղարկեց: Եվ որպեսզի Զևսը շտեկնի, թե ինչ վտանգ է սպառնում որդուն, քնի աստված Հիպոսոսին խնդրեց, որ քուն բերի վահանակիր Զևսի աչքերին: Փոթորիկը Հերակլեսին քչեց դեպի Կոս՝ կղզին:

Իսկ Կոսի բնակիչները, Հերակլեսի նավը ճախահենների նավի տեղ դնելով, քարեր էին նետում վրան և թույլ չէին տալիս ավին մոտենալ: Հերակլեսը գիշերը իջավ կղզին, պարտություն մատնեց Կոսի բնակիչներին, սպանեց նրանց թագավորին՝ Պոսեյզոնի որդի էվրիպիլոսին և ամայացրեց ամբողջ կղզին:

Զևսն ահեղորեն դալրացավ, երբ զարթնեց ու տեսավ, թե ինչ վտանգի է ենթարկվել զավակը: Ցասումով լցված՝ նա Հերային կաշկանդեց ոսկեղեն անխորտակելի կապանքներով և կախ տվեց երկրի ու երկնքի միջև՝ ոտքերից երկու ծանրածանր զնգաններ կապելով: Եվ այն օլիմպոսիցներից յուրաքանչյուրին, սվ ուզում էր օգնության հասնել Հերային՝ իր ցասման մեջ ահարկու Զևսը դահավեժ ցած էր գլորում բարձրաբերձ Օլիմպոսից: Նա երկար որոնեց նաև Հիպոսոսին, և նրան էլ ցած կգլորեր աստվածների ու մահկանացուների տիրակալը, եթե Գիշեր աստվածուհին թաքցրած չլիներ քնի աստծուն:

ՀԵՐԱԿԼԵՍԸ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԶԵՏ ԵՄԲՏԵՂՈՒՄ Է ԸՆԴԴԵՄ ԳԻԳԱՆՏՆԵՐԻ

Զևսն իր սիրելի դուստր Աթենաս-Պալլասին ուղարկեց Կոս կղզին՝ Հերակլեսի մոտ, որպեսզի մեծագոր հերոսին օգնության կանչի գիգանտների դեմ մղվող պայքարին: Գիգանտներին Գեա դիցուհին էր ծնել Քրոնոսի կողմից տապալված Ուրանոսի արյան կաթիլներից: Գրանք հրեշավոր հսկաներ էին՝ ոտքերի փոխարեն օձեր, զլուխ ու երես պատած երկար, թավ մազերով:

Գիգանտները ահարկու ուժ ունեին. նրանք հպարտանում էին իրենց զորությունը և ուզում էին օլիմպական լուսապայծառ աստվածներից խել աշխարհի տիրակալությունը: Նրանք աստվածների հետ կովի բռնվեցին Փլեգոնյան հարթավայրում, որ ընկած է Քալկիսյան Պալենե թերակղզում: Օլիմպոսի աստվածները սարսափելի չէին նրանց համար: Գիգանտների մայրը՝ Գեան, մի ապաքինող միջոց էր տվել, որ նրանց անխոցելի էր դարձնում աստվածների զենքից: Նրանց կարող էին սպանել միայն մահկանացուները, որոնց զենքից փրկելու միջոց Գեան չէր տվել նրանց: Աշխարհով մեկ Գեան փնտրում էր այն ապաքինող խոտը, որ գիգանտներին պիտի պաշտպաներ նաև մահկանացուների զենքից, բայց Զևսն արգելեց լուսավորություն տալ և՛ արշալույսի աստված Հոսին, և՛

1 Սպորազյան կղզիներից մեկը: Փոքր Ասիայի արևելքի մաս:

լուսնին՝ Սելենեին, և՛ արևի ճաճանշարիսլ աստված Հելիոսին, իսկ ինքը կտրեց ապաքինող խոտաբույսը:

Գիտենալով, որ մահ չունեն աստվածների ձեռքից՝ զիզանտնե-րը կովի նետովեցին: Երկար տևեց մարտը: Գիզանտները աստված-ների վրա էին նետում վիթխարի քարաժայռեր և դարավոր ծառե-րի այրվող բներ: Աշխարհով մեկ թնդում էր մարտի որոտը:

Վերջապես, հասավ Հերակլեսը Աթենաս—Պալլասի հետ: Զրըն-գաց Զևսի որդու ահավոր աղեղնալարը, փայլատակեց լերնեյան հիզրայի թույնով հագեցած նետը և մխրձվեց զիզանտներից հզո-րագույնի՝ Ալքիոնեսի կուրծքը: Գետին տապալվեց զիզանտը: Բայց չէր կարող մահվան մատնվել Պալենեում, այստեղ նա մահ չունե-ր: Գետին ընկնելուց մի փոքր անց նա ելնում էր տեղից առաջվանից ավելի զորացած: Հերակլեսն առանց հապաղելու նրան ուտը զցեց և հեռու տարավ Պալենեից, որի սահմաններից դուրս մեռավ զի-զանտը: Ալքիոնեսի զոհվելուց հետո Հերակլեսի ու Հերայի վրա հարձակվեց զիզանտ Պորփիրիոնը, Հերայի վրայից խլեց ծածկոցը և փորձեց գիրկն առնել նրան, բայց Զևսը նրան գետին տապալեց իր շանթով, իսկ Հերակլեսը՝ կյանքին վերջ տվեց նետահարելով: Ապուլոնն իր սակեղեն նետով խոցեց զիզանտ էփիալտոսի ձախ աշ-քը, իսկ Հերակլեսն սպանեց նրան՝ նետը մխրձելով աջ աչքը: Գիզանտ էփիտոսին իր թիրսոսով սպանեց Գիոնիսոսը, զիզանտ Կլիտիոսին՝ Հեփեսոսը, վրան նետելով շիկացած երկաթի մի վիթխարի կտոր: Աթենաս-Պալլասը ճողոպրող էնկելադոս զիզան-տի վրա շուտ տվեց ամբողջ Սիցիլիա կղզին:

Իսկ զիզանտ Պուլիբոտոսը, ջանալով ծովով փրկություն գտնել անհղ երկրասասան Պոսեյդոնի հետապնդումից, ճողոպրում էր Կոս կղզին: Պոսեյդոնն իր եռաժանիով պոկեց Կոս կղզու մի մասը և շրջեց Պուլիբոտոսի վրա, Այսպես գոյացավ Նիսիրոս կղզին: Հեր-մեսը կործանեց զիզանտ Հիպոլիտեսին, Արտեմիսը՝ Գրատիոնին, մեծն մոյրաները՝ Ագրիոսին ու Փոոնին, որոնք մարտնչում էին պղնձակոփ գուրգերով: Մնացած զիզանտներին տապալեց ամպ-րոպային Զևսն իր շողշողուն կայծակով, բայց նրանց բոլորին մա-րբերեց Հերակլեսն իր անվրեպ նետերով:

Շարադրված է ըստ Սոֆոկլեսի «Տրափեուսիներ» ողբերգության:

Երբ Հերակլեսը Իփիտոսի սպանության համար ստրկության էր վաճառվել Օմփալեին, Դեյանիրան ստիպված եղավ երեսաների հետ միասին լքել Տիրինթոսը: Հերակլեսի կնոջն ապաստան տվեց Թեսալիայի Տրաքինե քաղաքի արքա Կեփևոսը: Երեք տարի ու երեք ամիս էր անցել այն օրից, ինչ Հերակլեսը հեռացել էր Դեյանի-րայից: Հերակլեսի կինն՝ անհանգստացած էր ամուսնու կացու-թյամբ: Հերակլեսից լուր չկար: Դեյանիրան շփտեմ անգամ, կեն-դանի՞ է արդյոք ամուսինը, թե՞ ոչ: Ծանր նախազգացումներ տան-ջում էին Դեյանիրային: Եվ նա իր մոտ կանչեց Հիլլոս որդուն և ասաց.

— Օ՛ր, իմ սիրասուն զավակ: Ամոթալի է, որ դու չես որոնում հորդ: Տասնհինգ ամիս է ահա, որ նա լուր չի տալիս իր մասին:

— Եթե միայն հավատ ընծայենք լուրերին,— պատասխան տվեց Հիլլոսն իր մորը,— ապա ասում են, որ Օմփալեի մոտ երեք տարի ստրկություն անելուց հետո, երբ ստրկության ժամկետը հա-սել է իր վախճանին, հայրս, մի զորաբանակ առած, ճանապարհ-վել է էվբեայի էքալիա քաղաքը՝ էվրիտոս արքայից վրեժ լուծելու ի հատուցումն իր կրած անարգանքի:

— Որդի՛ս,— ընդհատեց մայրը Հիլլոսի խոսքը,— քո հայրը առաջներում մեծ սխրագործությունների գնալիս ինձնից չի հեռա-ցել այնպես տագնապած, ինչպես վերջին անգամ: Հրածեշտի ժա-մին ինձ մոտ մի տախտակ է թողել՝ վրան հին կանխագուշակու-թյուն գրված, որ նրան Դողոնայում՝ են հայտնել: Ասված է այն-տեղ, որ եթե Հերակլեսը երեք տարի և երեք ամիս մնա օտարու-թյան մեջ, ապա ուրեմն կամ արդեն մահվան է մատնվել, կամ էլ տուն կվերադառնա և բերկրալի ու անդորր կյանք կվարի: Լքելով ինձ, Հերակլեսը հայտնեց և իր կամքը, որ իր հայրական հողերն իր մահվանից հետո ժառանգություն պիտի հասնեն զավակներին: Ամուսնուս ճակատագիրը տագնապով է լցնում իմ սիրտը: Զէ՞ որ նա էկալիայի պաշարման մասին ինձ ասել է, թե զո՛հ կգնա քա-

¹ Ընդար Էպիրոսում, Հյուսիսային Հունաստանի արևմուտքում: Հնում հըո-լակված է եղել Զևսի գուշակամարով:

գաբի պարիսպների տակ կամ էլ, քաղաքն առնելով, երջանիք կյանք կուեննա: Ո՛չ, դավակս, դու պիտի գնաս, աղերսո՛ւմ եմ, դու պիտի որոնե՛ս հորդ:

Հիլոսը, հնազանդ մոր կամքին, բռնեց էվբեսիի էկալիա քաղաքի հեռավոր ճամփան՝ հորը փնտրելու:

Եվ Հիլոսը լքեց Տրաքիեն քաղաքը: Դրանից մի որոշ ժամանակ անց մի քանքեր փութաց Դեյանիրայի մոտ: Հաղորդեց, որ հիմա Հերակլեսի մոտից կիբաս մունետիկն է գալու: Բերկրալի լուր է բերում կիբասը: Հերակլեսը ողջ-առողջ է: Նա հաղթել է էվրիտոսին, հվաճել ու ավերել է էկալիա քաղաքը և շոտով Տրաքիեն կգա հաղթանակի փառքով պսակված: Բանքերի հետևից Դեյանիրայի մոտ եկավ նաև կիբասը: Նա բերեց գերիներին, որոնց մեջ նաև Իոլեին, էվրիտոսի դստերը: Դեյանիրան ցնծությամբ դիմավորեց կիբասին: Դեսպանը պատմեց Հերակլեսի մասին, ասաց, որ հերոսը առաջ-վա պես հզոր է, ողջ ու առողջ: Նա ուզում էր տոնել իր հաղթանակը և էվբեսի լքելուց առաջ առատ զոհաբերություններ անել աստվածներին, Դեյանիրան նայում է գերվածներին. նրանց մեջ մի գեղեցկուհու նկատելով, հարցնում է կիբասին.

— Ասա՛ ինձ, կիբաս, ո՞վ է այդ կինը: Ովքե՞ր են նրա հայրն ու մայրը: Ամենից առավել այդ կինն է տրտում: Արդևոք սա էվրիտոսի դուստրը չէ՞:

Բայց կիբասն այսպիսի պատասխան տվեց Հերակլեսի կնոջը.

— Ես անտեղյակ եմ, թագուհի, չգիտեմ, թե ով է նա: Հավանաբար, էվբեսական մեծանուն տոհմի է պատկանում այս կինը: Ծանապարհին մի խոսք անգամ չի ասել: Հայրենի քաղաքը լքելուց ի վեր շարունակ վշտի արցունք է հեղում:

— Տարաբախտ,— բացականչեց Դեյանիրան,— քո այդ վրշտին ես նոր տառապանքներ չե՛մ ավելացնի: Դե՛, պալատ տար, կիբաս, գերիներին, ես իսկույն կգամ:

Կիբասը, գերիներին առած, պալատ մտավ: Նրա գնալուն պես, մի ծառա մոտեցավ Դեյանիրային և ասաց.

— Կա՛ց թագուհի, ակա՛նջ դիր ինձ: Կիբասը քեզ ողջ ճշմարտությունը չի ասել: Նա գիտե արդ կե՛ող ով լինելը: Այդ կինն էվրիտոսի աղջիկն է, Իոլեն: Նրա սիրուց մղված՝ Հերակլեսը ժամանակին նետաձգության մրցության մեջ է մտել էվրիտոսի հետ: Գոռոզ թագավորը իր դստերը նրան՝ հաղթողին, կնություն չի տվել, ինչպես խոստացել էր. նա մեծ հերոսին անարգելով գուրս է արել

քաղաքից: Հանուն Իոլեյի՝ Հերակլեսը հիմա նվաճել է էբալիան և սպանել էվրիտոս արքային: Եվ Զևսի որդին Իոլեին իբրև ստրկուհի չի՛ ուղարկել այստեղ. հերոսը մտադիր է կնություն առնել նրան:

Տրոմեց Դեյանիրան: Կշտամբեց կիբասին, որ իրենից թաքցրել է ճշմարտությունը: Խոստովանեց կիբասը, որ իրոք, գերված Իոլեի գեղեցկությամբ, Հերակլեսն ուզում է ամուսնանալ նրա հետ: Դառնորեն վշտացավ Դեյանիրան: Երկարատև անջատման ժամանակ Հերակլեսը մոռացության է տվել նրան: Այժմ ուրիշին է սիրում: Հիմա ի՞նչ պիտի անի տարաբախտը: Նա սիրում է Զևսի վսեմագույն որդուն և անկարող է նրան մեկ ուրիշին զիջել: Եվ վշտահար Դեյանիրան մտաբերեց այն արյունը, որ մի ժամանակ նեսոսս կենտավրոսն էր տվել իրեն, հիշեց նաև, թե ինչ էր ասել մահվանից առաջ: Դեյանիրան վճռեց դիմել կենտավրոսի արյան գորությունը: Չէ՞ որ կենտավրոսն այսպես էր ասել. քսի՛ր իմ արյունը Հերակլեսի հագուստին և նա հավերժորեն կսիրի քեզ, ոչ մի կին նրա համար ավելի սիրելի չի լինի, քան դու: Դեյանիրան վախենում էր դիմել կախարհական արյան գորությունը, բայց Հերակլեսի հանդեպ տածած սերը և նրան կորցնելու երկույզը, ի վերջո, հաղթում են այդ վախը: Եվ նա գուրս է բերում նեսոսսի արյունը, որ այդքան երկար պահում էր անթի մեջ, որպեսզի արևի ճառագայթ չընկնի վրան, շտաքանա տան կրակից: Դեյանիրան արյունը քսեց այն շքեղ թիկնոցին, որ ինքն էր գործել իբրև նվեր Հերակլեսին, ապա թիկնոցը տեղավորեց ամուր փակվող արկղի մեջ, իր մոտ կանչեց կիբասին և ասաց.

— Դեպի էվբես փութա, կիբաս, և Հերակլեսին տուր այս արկղը: Այնտեղ թիկնոց է դրված: Թող հագնի Հերակլեսն այդ թիկնոցը Զևսին զոհ մատուցելիս: Ասա՛ նրան, որ իրենից բացի ոչ մի մահկանացու չի հագել այդ թիկնոցը, և իր հագնելուց առաջ մինչև իսկ լուսապայծառ Հելիոսի շողը չի դիպել նրան: Դե՛, փութա, կիբաս:

Եվ մեկնեց կիբասը՝ թիկնոցն առած: Նրա հեռանալուց հետո տազնապր տիրեց Դեյանիրային: Պալատ մտավ և սոսկումնահար եղավ, տեսնելով, որ այն բուրդը, որով նեսոսսի արյունը քսել էր թիկնոցին, փտել է: Դեյանիրան բուրդը նետեց հատակին: Արևի շողն ընկավ վրան և տաքացրեց լեռնեյան հիգրայի թույնով վարակված կենտավրոսի արյունը: Արյան հետ միասին տաքացավ

նաև հիդրայի թույնը և մոխրացրեց բուրդը, իսկ հատակի վրա թունավոր փրփուր երևաց: Սարսափը պատեց Դեյանիրային: Նա սոսկում է, որ թունոտ թիկնոցը հագնելով, կզոհվի Հերակլեսը: Անկանխելի դժբախտության նախազգացումն ավելի ու ավելի է տանջում Հերակլեսի կնոջը:

Շատ ժամանակ չէր անցել, ինչ կիբասը, թունոտ թիկնոցն առած, ուղևորվեց էվբեա, երբ պալատ մտավ Տրաքինե վերադարձած Հիլիոսը: Դժգույն է, աչքերը լի են արցունքներով: Հայացքը նետելով մոր վրա, Հիլիոսը գոչեց.

— Օ՛, ինչպե՞ս կուզենայի երեքից մեկը գոնե տեսնել. կամ դու կենդանի շլինեիր, կամ ուրիշը քեզ մայր կոչեր և ոչ թե ես, կամ ավելի խելամիտ լինեիր, քան ես: Իմացի՛ր ուրեմն, դու եղար ամուսնուդ, իմ հոր, կործանման պատճառը:

— Օ՛, վա՛յ ինձ,— սոսկումնահար գոչեց Դեյանիրան:— Այդ ի՛նչ ես ասում, զավակս: Ո՞վ է, որ քեզ ասել է այդ: Դու ինչպե՞ս կարող ես ինձ մեղադրել այդպիսի շարագործության մեջ:

— Ե՛ս եմ եղել հորս տառապանքների ականատեսը, ուրիշներից չէ, որ լսել եմ:

Եվ Հիլիոսը պատմեց մորը, թե ինչ էր պատահել Կանեյոն լեռան վրա, որ հեռու չէ էկալիայից. Հերակլեսը, զոհարաններ կանգնեցնելով, հենց այն է պիտի զոհեր մատուցեր աստվածներին և ամենից առաջ իր հորը՝ Զևսին, երբ ժամանել է կիբասը՝ բերելով թիկնոցը: Զևսի որդին հագել էր թիկնոցը՝ ամուսնու ընծան, և ձեռնամուխ եղել զոհաբերությանը: Նախ տաաներկու ընտիր ցուլ էր զոհաբերել Զևսին. իսկ ընդամենը՝ հերոսը հարյուր զոհ էր մատուցել օլիմպական աստվածներին: Բոցեղեն լեզուները փայլատակել էին զոհարանների վրա: Հերակլեսը կանգնել էր՝ ձեռքերն ակնածանքով երկինք կարկառած և կոչել աստվածներին: Զոհարանների վրա բոցկլտացող կրակը ջերմացրեց Հերակլեսի մարմինը և քրտնացրեց: Մեկ էլ հանկարծ թունավոր թիկնոցը կպավ հերոսի մարմնին: Դող անցավ Հերակլեսի մարմնով: Նա ահավոր ցավ զգաց, Սոսկալի տառապանքների մեջ, կանչեց հերոսը կիբասին ու հարցրեց, թե ինչո՞ւ է բերել այդ թիկնոցը: Ի՞նչ պատասխան պիտի տար անմեղ կիբասը: Կարող էր ասել միայն, որ Դեյանիրան է ուղարկել: Իսկ Հերակլեսը, ահավոր ցավից խելակորույս, բռնեց կիբասի ոտքից և զարկեց նրան մոտակա ապառաժին, որի շուրջը շառաշում էին ծովային ալիքները: Զախչախվեց կիբասը և

անշնչացավ: Իսկ Հերակլեսը գետին տապալվեց. գալարվում էր աներևակայելի տանջանքների մեջ: Նրա ճիշը հեռու էր տարածվում էվբեայով: Հերակլեսը նզովում էր իր ամուսնությունը Դեյանիրայի հետ: Մեծ հերոսը կանչեց իր որդուն և լալահառաչ ասաց նրան.

— Օ՛, զավակս, մի՛ լքիր ինձ տարաբախտության մեջ. եթե նույնիսկ մա՛հ սպառնա քեզ, մի՛ լքիր ինձ: Բարձրացրո՛ւ ինձ. տա՛ր այստեղից: Տար այնտեղ, ուր ինձ ոչ մի մահկանացու չի տեսնի: Օ՛, եթե կարեկից ես ինձ, թույլ մի՛ տուր, որ այստեղ մեռնեմ:

Բարձրացրին Հերակլեսին, դրին պատգարակի վրա: Դեպի նավը տարան, որպեսզի Տրաքինե տեղափոխեն:

Ահա թե ինչ պատմեց Հիլիոսն իր մորը և իր պատմությունն ավարտեց այսպիսի խոսքով.

— Հիմա դուք բոլորդ կտեսնեք Զևսի վսեմագույն զավակին՝ գուցե դեռևս կենդանի, գուցե և արդեն մեռած: Օ՛, թող պատժեն քեզ, մա՛յր, անողորմ էրինիները և վրեժխնդրուհի Դիկեն՝: Դու կործանեցիր մարդկանցից լավագույնին, որին երբևէ կրել է հողը: Այսպիսի հերոս դու էլ երբե՛ք չես տեսնի:

Անխոս՝ պալատ գնաց Դեյանիրան, առանց մի բառ իսկ արտաբերելու: Այնտեղ, պալատում, նա ձեռքն առավ երկսայր սուրը: Դեյանիրային տեսավ պառավ դայակը: Փութաց կանչել Հիլիոսին: Հիլիոսն շտապեց մոր մոտ, բայց նա սուրն արդեն կուրծքն էր մխրճել: Տարաբախտ որդին ողբաձայն նետվեց դեպի մայրը, զբրկեց ու համբուրներով պատեց նրա սառչող մարմինը:

Այդ պահին պալատ էին բերում մերձիմահ Հերակլեսին: Ծանապարհին նա քուն էր մտել, բայց երբ պալատի դռան մոտ պատգարակը ցած դրին՝ արթնացավ: Ահավոր ցավից մեծագույն հերոսը ոչինչ չէր գիտակցում:

— Օ՛, մեծդ Զևս,— բացականչեց նա,— ո՞ր երկրում եմ ես: Օ՛, որտե՞ղ եք դուք, Հունաստանի այրեր: Օգնություն հասե՛ք ինձ: Զե՛զ համար է, որ ես մաքրել եմ ծովն ու երկիրը հրեշներից և շարիքից, իսկ հիմա ձեզնից ոչ ոք չի՛ կամենում ծանր տառապանքներից ազատել ինձ հրով կամ կտրուկ սրով: Օ՛, դու եղբայրդ Զևսի,

մեծդ Հաղես, քնեցրո՛ւ, քնեցրու ինձ՝ տարաբախտիս, քնեցրու սրաթոռիչ մահվամբ:

— Հա՛յր, լսի՛ր ինձ, աղերսում եմ,— խնդրում է Հիլլոսն արցունքն աչքերին,— մայրս ակամա է կատարել այդ շարագործութունը: Վրեժ մի՛ տենչար: Իմացավ, որ ինքն է քո կործանման պատճառը, և սուրը մխրճեց իր սիրտը:

— Օ՛, աստվածնե՛ր, նա մեռել է, և ես շեմ կարողացել վրեժս լուծել: Իմ ձեռքով չէ՛, որ զոհվել է խարդախ Գեյանիբան:

— Հայր, նա մեղավոր չէ,— ասաց Հիլլոսը,— իր տանը տեսնելով Իոլեին՝ էվրիտոսի դստերը, իմ մայրը կամեցել է կախարդանքի ուժով վերադարձնել քո սերը: Նա թիկնոցին է քսել քո նետով խոցված կենտավրոս Նեստոսի արյունը՝ առանց իմանալու, որ դա թունավորված է լերնեյան հիդրայի թույնով:

— Օ՛, վա՛յ ինձ, վա՛յ,— բացականչեց Հերակլեսը:— Ահա թե ինչպես է ի կատար ածվում իմ հոր՝ Ջեսի, կանխագուշակութունը: Նա ասել է ինձ, որ ես կենդանի մարդու ձեռքով չպիտի զոհվեմ, որ ինձ վիճակված է զոհ գնալ Հաղեսի խավարչտին թագավորութուն իջածի նյութած դավերին: Ահա թե ինչպե՛ս կործանեց ինձ իմ նետի զոհը դարձած Նեստոսը: Ահա թե ի՛նչ անզոր էր գուշակում ինձ Գոդոնայի գուշակը՝ մահվան անզորը: Այո՛, ճշմարիտ է, մեռածների համար անհանգստություն չկա: Կատարի՛ր, ուրեմն, իմ վերջին խնդիրքը, Հիլլո՛ս: Իմ հավատարիմ ընկերներին հետ ինձ տար բարձրաբերձ Իտեի՛ գագաթը, այնտեղ, լեռան կատարին, ինձ համար թաղման խարույկի փայտ գարսիք, ինձ վրան գիր ու այրիք: Օ՛, շտապի՛ր, Հիլլոս, վե՛րջ տուր իմ տառապանքներին:

— Օ՛, գթա ինձ, հա՛յր, մի՞թե դու պիտի ստիպես, որ ես դառնամ քեզ սպանողը,— աղերսեց Հիլլոսն իր հորը:

— Ո՛չ, դու շե՛ս սպանի ինձ, այլ իմ տանջանքներն ապաքինողը կդառնաս: Ես էլի մի ցանկություն ունեմ, այդ էլ կատարի՛ր,— խնդրեց Հերակլեսը որդուն:— Կնության առ Իոլեին՝ էվրիտոսի դստերը:

Բայց Հիլլոսը հրամարվեց կատարել հոր այդ խնդիրքը և ասաց.

— Ո՛չ, հայր, անկարող եմ կնության առնել մորս մահվան պատճառը գարձած Իոլեին:

— Օ՛, հնազանդ եղիր կամքիս, Հիլլո՛ս: Կրկին մի բորբոքիք մարող տառապանքներս: Թույլ տուր, որ հանգիստ հանգչեմ,— համառորեն աղերսում էր Հերակլեսը որդուն:

Հնազանդվեց Հիլլոսը և խոնարհ պատասխան տվեց հորը.

— Կա՛վ, հայր: Ես հնազանդ կլինեմ քո վերջին կամքին:

Հերակլեսը շտապեցնում էր որդուն, շտապեցնում էր, որբան հնարավոր է շուտ կատարել իր վերջին խնդրանքը:

— Գե՛, շտապի՛ր, որդիս: Ծո՛ւտ արա, ինձ խարույկի վրա դիր, քանի ղեռ իմ անտանելի տառապանքները շեն սկսվել նորից: Տարե՛ք ինձ: Մնաս բարո՛վ, Հիլլոս:

Հերակլեսի զինակիցները և Հիլլոսը վեր առան պատգարակը և հերոսին բարձրաբերձ Իտեի գագաթը տարան: Այնտեղ մի վիթխարի խարույկ սարքեցին և վրան դրին հերոսներից վսեմագույնին, Հերակլեսի տառապանքներն ավելի ու ավելի էին սաստկանում, ավելի խորն էր թափանցում լերնեյան հիդրայի թույնը նրա մարմնի մեջ: Հերակլեսը ջանում էր վրայից պոկել թունավոր թիկնոցը, որ ամուր հպվել էր մարմնին, բայց թիկնոցի հետ միասին պոկում է նաև մաշկը, և առավել անտանելի էին դառնում ահավոր ցավերը: Գերմարդկային այդ տանջանքներից փրկվելու մի ելք կա միայն՝ մա՛հը: Ավելի դյուրին է զոհ գնալ խարույկի բոցերին, քան տանել այդ տառապանքները, բայց հերոսի ընկերներից ոչ ոք սիրտ չի անում խարույկը վառել:

Վերջապես, Իտեի գագաթն է ելնում Փիլոկտեսեսը, որին Հերակլեսը հորդորում է վառել խարույկը և, որպես պարգև, նրան ընծայում հիդրայի թույնով վարակված իր նետերն ու աղեղը: Վառեց խարույկը Փիլոկտեսեսը, պայծառորեն բոցկլտաց խարույկը, բայց առավել պայծառ Ջեսի շանթերը շողացին: Որոտ որոտի հետևից գլորվեց երկնքով: Ոսկեհուռ երկանվով դեպի խարույկը սուրաց Աթենաս-Պալլասը՝, Հերմեսի հետ միասին, և նրանք լուսապայծառ Օլիմպոս տարան հերոսներից վսեմագույնին: Այնտեղ մեծ աստվածները դիմավորեցին Հերակլեսին: Եվ Հերակլեսն ան-

1 Առասպելի որոշ տարբերակների համաձայն, երկանվի վրա ոչ թե Աթենասը, այլ հաղթության դիցուհի Նիկեն է եղել:

Մահ աստված դարձավ: Մինչև իսկ Հերան, մոռացութեան տալով իր ատելութունը, Հերակլեսին կնութեան տվեց իր հավերժ դեռատի դատերը՝ Հերեին: Եվ այդ ժամանակից ի վեր ապրում է Հերակլեսը լուսապայծառ Օլիմպոսի վրա, վսեմ ու անմահ աստվածների կաճառի մեջ: Այդ նրա բոլոր մեծագույն սխրանքների, կրած անլուր տառապանքների պարզևն էր:

ՀԵՐԱԿԼԻՒՆԵՐ

Շարագրված է ըստ Եվրիպիդեսի «Հերակլիդներ» ողբերգության:

Հերակլեսի մահից հետո նրա զավակները և մայրը՝ Ալկմենեն, ապրում էին Տիրինթոսում, Հերակլեսի ավագ որդու՝ Հիլլոսի մոտ: Բայց նրանք երկար չմնացին Տիրինթոսում: Հերակլեսի հանդեպ ատելությունից մղված, էվրիսթեսը հերոսներից վսեմագույնի զավակներին վտարեց իրենց հոր տիրապետությունից և հալածում էր նրանց ամենուրեք, ուր փորձում էին ապաստան գտնել: Հերակլեսի զավակները երկար թափառեցին բովանդակ Հունաստանում: Ի վերջո, նրանց ապաստան տվեց զառամյալ Իոլայոսը՝ Հերակլեսի ազգականն ու ընկերը: Բայց այստեղ ևս տարաբախտները շխուսափեցին էվրիսթեսի ատելությունից և ստիպված եղան, Իոլայոսի հետ միասին, ճողպարել Աթենք, ուր այն ժամանակ իշխում էր Թեսևսի որդին՝ Դեմոփոնտեսը:

Իմացավ էվրիսթեսը, որ Հերակլեսի զավակները ապաստան են գտել Աթենքում և իր հավատարիմ բանբեր Կոպրեսսին առաքեց այնտեղ, որպեսզի Դեմոփոնտեսից պահանջի ետ տալ հերակլիդներին: Դեմոփոնտեսը մերժումով պատասխանեց Կոպրեսսին. նրան շարսափեցրեց և այն սպառնալիքը, թե էվրիսթեսը մեծ զորաբանակով կհարձակվի Աթենքի վրա և կավերի քաղաքը: Դեմոփոնտեսը չկամեցավ խախտել հյուրընկալության սովորությունը:

Շատ շանցած էվրիսթեսը մեծ զորաբանակ առած խուժեց Ատտիկա: Աթենացիներին մեծ ճակատամարտ էր սպասում մեծաքանակ ոսոխի հետ: Նրանք աստվածներից հարցրին ճակատամարտի ելքի մասին, և աստվածները պատասխան տվին, որ աթենացիք հաղթանակ կտանեն միայն այն դեպքում, եթե աստվածներին մի աղջիկ զոհաբերեն: Մակարիան՝ Հերակլեսի ու Դեյանիրայի ավագ դուստրը, ինքնակամ զոհաբերության դատապար-

տեց իրեն. հանուն եղբայրների ու բույրի իր փրկության՝ նա վրձոնեց զոհել իր կյանքը:

Երկու զորաբանակները գեմ-հանդիման ելան ճակատամարտի դաշտում, եկավ նաև Հիլլոսը՝ ռազմիկների մի ջոկատ առած: Ծակատամարտից առաջ զոհաբերվեց Մակարիան: Ծակատամարտը դաժան էր և արյունահեղ: Հաղթանակ տարան աթենացիք: էվրիսթեսը փախուստի դիմեց, և Հիլլոսը իր երկանվով նետվեց հետապընդելու իր հոր թշնամուն:

Իոլայոսը տեսավ այդ: Նա աղերսեց Հիլլոսին, որ երկանիվն իրեն զիջի. Հերակլեսի զառամյալ զինակիցն ի՞նքն էր ուզում վրեժխնդիր լինել այն բոլոր շարիքների համար, որ էվրիսթեսը պատճառել էր իր ընկերոջը: Իոլայոսի երկանիվը քամու պես սուրում էր ոսոխի հետևից: Ահա, գրեթե հասել է էվրիսթեսին: Եվ Իոլայոսը օլիմպացի աստվածներին դիմեց աղբյուսանքով. աստվածներին պաղատում էր գեթ մի օրով ետ տալ իր երիտասարդությունն ու երեմանի զորությունը: Աստվածները լսեցին Իոլայոսի պաղատանքը: Երկու շողշողուն աստղ գլորվեց երկնքով, մի մթին ամպ իջավ Իոլայոսի երկանվի վրա: Երբ ամպը ցրվեց՝ Իոլայոսը արգեն կանգնած էր երկանվի վրա իր երիտասարդական փայլով, հզոր ու գեղեցիկ: Իոլայոսը հասավ էվրիսթեսին ու գերի առավ նրան:

Իոլայոսը հաղթականորեն Աթենք բերեց կապկպած էվրիսթեսին: Մուկգին ցասամար համակվեց Հերակլեսի մայրը՝ Ալկմենեն, երբ տեսավ իր մեծազոր որդու ախոյանին: Ու թեև Հիլլոսն ու Դեմոփոնտեսն ուզում էին նրանից պաշտպանել էվրիսթեսին, Ալկմենեն իր ձեռքերով բնահան արեց էվրիսթեսի աչքերը և սպանեց նրան: Այսպես զոհվեց էվրիսթեսը: Աթենացիք պարտության մատնված թշնամուն անթաղ չթողեցին, նա թաղվեց Ատտիկայում, պալենյան Աթենքի սրբավայրի մոտ:

Մեծ Աթենքի և նրա Ակրոպոլսի հիմնադիրը երկրածին Կեկրոպան է: Երկիրը նրան ծնել է իբրև կես մարդ ու կես օձ: Նրա մարմինն ավարտվում է օձային վիթխարի պոչով: Կեկրոպսը Աթենքը հիմնադրեց Ատտիկայում այն ժամանակ, երբ ամբողջ երկրի իշխանությունն համար վեճի մեջ էին ծովի աստված երկրասասան Պոսեյդոնը և ռազմաշունչ աստվածուհի Աթենասը՝ Զևսի սիրելի դուստրը: Այդ վեճը լուծելու համար բոլոր աստվածները, իրեն՝ մեծն շանթարձակ Զևսի զլխավորությունը, հավաքվեցին աթենական Ակրոպոլսում: Աստվածների և մարդկանց տիրակալը դատի կանչեց նաև Կեկրոպսին, որպեսզի նա վճռի, թե ո՛ւմ է պատկանելու Ատտիկայի իշխանությունը: Օձոտն Կեկրոպսը ներկայացավ դատի: Աստվածները վճռեցին Ատտիկայի իշխանությունը տալ նրա՛ն, ով երկրին առավել բարձրարժեք պարգև կտա: Հարվածեց ապառաժին երկրասասան Պոսեյդոնն իր եռաժանիով և ապառաժից ծովային աղի ջրի աղբյուր հորդեց, իսկ Աթենասը երկրի մեջ մխրճեց իր շողշողուն նիզակը և հողից արգասաբեր ձիթենի բուսեց: Եվ այդ ժամանակ խոսեց Կեկրոպսը.

— Օլիմպոսի լուսաւայածառ աստվածնե՛ր, ամենուրեք ծփում են անծայրածիր ծովի աղի ջրերը, բայց ոչ մի տեղ առատ պտուղներ տվող ձիթենի չկա: Աթենասին է պատկանում ձիթենին, որ հարստություն կտա բովանդակ երկրին և բնակիչներին կմղի դեպի երկրագործի աշխատանքը, արդասաբեր հողի մշակումը: Մեծագույն բարիք է տալիս Աթենասն Ատտիկային, ուրեմն՝ թող նրան պատկանի ողջ երկրի իշխանությունը:

Օլիմպացի աստվածները Աթենաս-Պալլասին վերապահեցին Կեկրոպսի հիմնադրած քաղաքի և բովանդակ Ատտիկայի իշխա-

նությունը: Եվ այդ ժամանակից ի վեր Կեկրոպսի հիմնած քաղաքը, Զևսի սիրելի դուստր պատվին, սկսեց Աթենք կոչվել: Կեկրոպսը Աթենքում կանգնեցրեց առաջին սրբավայրը՝ նվիրված քաղաքի պաշտպան Աթենասին և նրա հորը՝ Զևսին, Կեկրոպսի դուստրերը եղան Աթենքի առաջին քրմուհիները: Կեկրոպսն աթենացիներին օրենքներ տվեց և հիմնեց ամբողջ պետությունը: Նա՝ եղավ Ատտիկայի առաջին արքան:

Կեկրոպսի փոխանորդը էրիքթոնիոսը եղավ՝ կրակի աստված Հեփեստոսի որդին: Նա էլ, ինչպես Կեկրոպսը, երկրի ծնունդ էր: Գաղտնիքներով լի է նրա ծնունդը: Երբ ծնվեց, Աթենաս աստվածուհին նրան առավ իր հովանավորության ներքո, և նա աճեց ու հասունացավ աստվածուհու սրբավայրում: Նորածին էրիքթոնիոսին Աթենասը դրեց հյուսած զամբյուղի մեջ, որ ամուր փակվող կափարիչ ուներ: Երկու օձ պիտի պահպանեին էրիքթոնիոսին: Պահպանում էին նաև Կեկրոպսի դուստրերը: Աթենասը խիստ արգելել էր նրանց վեր առնել զամբյուղի կափարիչը. նրանք չպիտի տեսնեին երկրից խորհրդավոր կերպով ծնունդ առած նորածին մանկանը: Հետաքրքրությունը տանջում էր Կեկրոպսի աղջիկներին, նրանք ուզում էին գեթ մեկ անգամ նայել էրիքթոնիոսին:

Մի անգամ Աթենասը հեռացել էր Ակրոպոլսի իր սրբավայրից, որպեսզի Պալենից բերի այն լեռը, որ նա վճռել էր Ակրոպոլսի մոտ դնել նրա պաշտպանության համար: Երբ աստվածուհին լեռը բերում էր դեպի Աթենք՝ նրան ընդառաջ ճախրեց մի ագռավ և հայտնեց, որ Կեկրոպսի դուստրերը բաց են արել էրիքթոնիոսի զամբյուղը և նայել խորհրդավոր նորածնին: Ահեղորեն զայրացավ Աթենասը. դեն նետեց լեռը և մի ակնթարթում հայտնելից Ակրոպոլսի իր սրբավայրում: Աթենասը զաժանորեն պատժեց Կեկրոպսի դուստրերին. սրանք ցնորվեցին և, փախչելով սրբավայրից, ցած նետվեցին Ակրոպոլսի ուղղադիր ժայռերից և ջարդ ու փշուր եղան: Այդ ժամանակից ի վեր Աթենասն ինքն էր հսկում էրիքթոնիոսին, իսկ այն լեռը, որ Աթենասը դեն էր նետել, այդպես էլ մնաց նույն այդ տեղում, ուր ագռավն աստվածուհուն իմաց էր արել Կեկրոպսի դուստրերի վատթար արարքի մասին. հետագայում այդ լեռը լիկաբետոս անունը ստացավ: Առնացավ էրիքթոնիոսը, դարձավ Աթենքի արքան և իշխեց այնտեղ բազում

1 Կեկրոպս—Աթենական Ակրոպոլսի հիմնադիրը, կես մարդ, կես օձ, մարմինը օձային է: Էրիքթոնիոս — երկրածին է, նույնպես օձակերպ: Աթենացիք իրենց կեկրոպիդներ են կոչել, այսինքն՝ Կեկրոպսի հետնորդներ: Այստեղից էլ պարզ է, որ մի ժամանակ աթենացիք հավատացել են, թե իրենք սերում են օձից կամ օձի նախահորից: Դա առասպելի հնություն վկայությունն է:

2 Էրեֆրոս—սկզբում եղել է էրիքթոնիոսի հոմանիշը: Միայն նոր էրայից առաջ հինգերորդ դարի վերջում է, որ էրեթթևը Եվրիպիդեսի ստեղծագործություններում հիշատակվում է իբրև ինքնուրույն առասպելական հերոս:

տարիներ, նա հիմնեց հնագույն տոնախմբությունը Աթենասի պատվին՝ Պանաթենականքը¹։

Էրիբթոնիոսն առաջինն էր, որ նժույգներ լծեց երկանվին և երկանվի մրցախաղի օրինակ տվեց Աթենքում։

Էրիբթոնիոսի հետնորդը եղավ Աթենքի արքա Էրեբթևուր։

Նրան վիճակվեց ծանր պատերազմ մղել ընդդեմ էլևսիս քաղաքի, որին օգնության էր հասել Թրակիական էվմոլպոս արքայի որդին՝ Իմմարադոսը։

Այդ պատերազմը տարաբախտ վախճան ունեցավ Էրեբթևուր համար։ Իմմարադոսը և Թրակիացիները նրան ավելի ու ավելի էին նեղում։ Ի վերջո Էրեբթևուր վճռեց դիմել Դելփիքում գտնվող Ապոլոնի գուշակին՝ իմանալու, թե ի՛նչ գնով կարող է հաղթանակի հասնել։ Ահավոր պատասխան տվեց պիթիան։ Ասաց Էրեբթևուրին, որ Իմմարադոսի դեմ հաղթանակ կտանի այն դեպքում միայն, երբ աստվածներին զոհաբերի իր զուտրերից որևէ մեկին։ Էրեբթևուր Դելփիքից վերադարձավ այդ սոսկալի պատասխանով։ Արքայի դեռատի զուտրը՝ Քթոնիան, տոգորված հայրենիքի սիրով, իմանալով պիթիայի պատասխանը, հայտարարեց, որ պատրաստ է զոհաբերել իր կյանքը հանուն հարազատ Աթենքի։ Խորապես վշտացած զստեր ճակատագրով, Էրեբթևուր նրան զոհաբերեց աստվածներին։ Միայն Աթենքը փրկելու տենչանքն էր, որ նրան ստիպեց դիմել այդպիսի զոհաբերության։

Քթոնիային զոհաբերելուց շատ շանցած՝ տեղի ունեցավ ճա-

¹ Պանաթենականք — Աթենքի գլխավոր տոնախմբությունը, որ տեղի էր ունենում մի քանի օր շարունակ Հեկատոմբայոնի՝ տարվա առաջին ամսվա մեջ, ըստ մեր հաշվի՝ հուլիսի վերջին և օգոստոսի սկզբին։ Չորս տարին մեկ անգամ էր տեղի ունենում մեծաշուք Պանաթենականքը, որ աչքի էր ընկնում մի տասնմեկ հասարակությունների։ Տոնախմբությունն սկսվում էր գեշերով՝ զահակիքների հանդիսավորությամբ։ Տոնախմբությունն սկսվում էր գեշերով՝ զահակիքների հանդիսավոր վազքով։ Լուսադեմին տեղի էր ունենում շքեղ երթ դեպի Ակրոպոլիս, որի ժամանակ ճոխ զարդարված նոր պեպլոս (վերնազգեստ) էր տարվում դիցուհուն։ Պեսյոսը հազգվում էր Աթենասի արձանին, որ կանգնած էր Պարթենոնի տաճարում։ Բացի այդ, Պանաթենականքի ընթացքում տեղի էին ունենում վազքի, ըմբշամարտի, սկավառակի նետման և մարմնամարզության ուրիշ ձևերի, ինչպես և երկանվի վազքի, բանաստեղծների, երգիչների ու երաժիշտների արվեստի մրցություններ։ Մարմնամարզական մրցություններին և հատուկ հանդիսավոր պարին մասնակից էին լինում զինավառ տղաներ, պատանիներ և չափահաս քաղաքացիներ։ Իհարկե, տոնախմբությանն անմիջականորեն կարող էին մասնակցել միայն ունևոր քաղաքացիները, քանի որ դա մեծ ծախսեր էր պահանջում։

էատամարտը։ Մարտի թե՛ պահին դեմ առ դեմ ելան էրեբթևուր ու Իմմարադոսը և մենամարտի բռնվեցին։ Երկար մարտնչեցին հերոսները, նրանք չէին զիջում միմյանց ո՛չ զորություն, ո՛չ զենք բանեցնելով, ո՛չ էլ խիզախությամբ։ Վերջապես հաղթանակ տարավ Էրեբթևուր և իր նիզակով մահացու վերք հասցրեց Իմմարադոսին։ Տրտմեց Իմմարադոսի հայրը՝ էվմոլպոսը, և Պոսեյդոնն աստծուն աղերսեց վրեժխնդիր լինել Էրեթթևուրից՝ որդու սպանության համար։ Մովի փոթորկածուկ ալիքների վրայով Պոսեյդոնն իր երկանվով սուրաց Ատտիկա։ Ծոճեց իր եռաժանին և սպանեց Էրեբթևուրին։ Այդպես, իր հայրենիքը պաշտպանելիս զոհվեց Էրեթթևուրը։ Զոհ գնացին նաև Էրեթթևուր բոլոր զավակները։ Նրա զուտրերից միայն մեկը՝ Կրեոսան, կենդանի մնաց, միայն նրան խնայեց անագորույն ճակատագիրը։

ԿԵՓԱՂՈՍ ԵՎ ՊՐՈԿՐԻՍ

Նառադրված է ըստ Օլիպիոսի «Կերպարանափոխություններ» պոեմի։

Կեփալոսը Հերմես աստծու և Կեկրոպսի դստեր՝ Հերսեի որդին էր։ Բովանդակ Հունաստանում հեռու էր տարածվել Կեփալոսի հրաշք գեղեցկություն համբավը։ Նա նաև անխոնջ որսորդի փառք էր վայելում։ Վաղ առավոտյան, դեռ արևը չժազած, նա լքում էր իր պալատն ու դեռատի կնոջը՝ Պրոկրիսին, և որսի գնում Հիմետոսի լեռները։

Մի անգամ սիրունատես Կեփալոսին նկատեց արշալույսի բոսորամատն էոսը, հափշտակեց նրան ու Աթենքից հեռու տարավ, դեպի երկրի ամենահեռավոր ծայրամասը։ Իսկ Կեփալոսը միայն Պրոկրիսին էր սիրում, միայն նրա մասին էր մտածում։ Պրոկրիսի անունը չէր իջնում նրա շուրթերից։ Անհունորեն կարոտում էր կնոջը և էոս դիցուհուն աղերսում թողնել իրեն, որ կրկին Աթենք գնա։ Զայրացավ էոսը և այսպես ասաց Կեփալոսին.

— Լա՛վ, ե՛տ գնա Պրոկրիսի մոտ, այլևս մի՛ տրտնջա ճակատագրիցդ, կգա ժամանակ և դու կզղչաս, որ Պրոկրիսը քո կինն է, կզղչաս մինչև իսկ նրան ճանաչած լինելուդ համար։ Օ՛, ես կանխատեսում եմ, որ այդպես էլ կլինի։

էոսն ազատ արձակեց Կեփալոսին։ Հրաժեշտ տալով՝ նա համոզեց նրան փորձել կնոջ հավատարմությունը։ Աստվածուհին փո-

խեց Կեփալոսի արտաքինը և նա, առանց ճանաչվելու, վերադարձավ Աթենք: Ետրամանկութեամբ իր տուն թափանցեց Կեփալոսը և կնոջը դտավ խորունկ վշտով համակված: Անգամ վշտի մեջ գեղեցիկ էր Պրոկրիսը: Կեփալոսը խոսեց կնոջ հետ և երկար թախանձեց մոռացութեան տալ ամուսնուն, լքել նրան և իր կինը դառնալ Չճանաչեց Պրոկրիսն իր ամուսնուն: Երկար ժամանակ լսել անգամ չէր ուզում անժանոթին և կրկնում էր շարունակ:

— Ես միայն Կեփալոսին եմ սիրում և հավատարիմ կմնամ նրան: Ո՛ր էլ որ լինի, կենդանի թե մեռած, ես հավիտյա՛ն հավատարիմ կմնամ նրան:

Ի վերջո, մեծամեծ պարգևներով Կեփալոսը վարանմունքի մեջ գցեց նրան: Պրոկրիսն արդեն պատրաստ էր ենթարկվել նրա աղերսանքներին: Եվ այդ ժամանակ, իր իսկական կերպարանքն ընդունելով, գոչեց Կեփալոսը:

— Անհավատարիմ կի՛ն: Ես քո ամուսինն եմ, Կեփալոսը: Ի՛նքս եմ քո անհավատարմության վկան:

Պրոկրիսը ոչինչ չպատասխանեց ամուսնուն: Ամոթանքից գլուխը մինչև գետին խոնարհած, նա լքեց Կեփալոսի տունը և գնաց անտառապատ լեռները: Այնտեղ Արտեմիս աստվածուհու ուղեկցորդը դարձավ: Դիցուհուց նա նվեր ստացավ մի զարմանահրաշ նիզակ, որ մշտապես նսլատակին էր դիպչում ու կրկին ետ թռուչում նետողի մոտ, և կայլապոս անունով մի շուն, որից ոչ մի վայրի գազան փրկություն չուներ:

Կեփալոսն ուժ չունեցավ երկար դիմանալու Պրոկրիսից անջատ ապրելուն: Անտառների մեջ փնտրեց կնոջը, գտավ ու հորդորեց ետ գալ: Վերադարձավ Պրոկրիսն ամուսնու մոտ, և նրանք երկար ժամանակ երջանիկ կյանք վարեցին: Իր զարմանահրաշ նիզակը և կայլապոս շունը Պրոկրիսը նվիրեց ամուսնուն, որն առաջվա պես, դեռ արեւը չծագած, որսի էր գնում: Մեն-մենակ, առանց ուղեկցորդների, որս էր անում Կեփալոսը: Օգնականների պետք չուներ, քանի որ իր հետ էին զարմանահրաշ նիզակն ու կայլապոս շունը: Մի անգամ վաղ առավոտից որսի էր ելել Կեփալոսը: Կեսօրին, երբ վրա հասավ կիզիչ տապը, նա սկսեց ապաստան որոնել այդ անտառների տապից: Դանդաղաքայլ գնում էր Կեփալոսը ու երգում:

— Օ՛, բաղբը հովիկ, շուտ ինձ մոտ արի, զովացրո՛ւ իմ բաց կուրծքը: Փութա ինձ մոտ, երանելի՛ զով, և ցրի՛ր կիզիչ տապը:

Օ՛, երկնային, դո՛ւ ես իմ խնդությունը, դո՛ւ ես կենդանություն տալիս ինձ և ամբացնում: Օ՛, թույլ տուր ըմպել քո ախորժեկի շունչը:

Աթենացիներից մեկը, լսելով Կեփալոսի երգը և չկռահելով դրա իմաստը, Պրոկրիսին հաղորդեց լսածը, թե ինչպես է նրա ամուսինն անտառում կանչում ինչ-որ Հովիկ հավերժահարսի: Տրամեց Պրոկրիսը, կարծեց, թե Կեփալոսն այլևս իրեն չի սիրում, մեկ ուրիշի սիրուն մոռացութեան է տվել իրեն: Մի անգամ, երբ Կեփալոսը որսի էր գնացել, Պրոկրիսը գաղտագողի գնաց անտառ և, փարթամորեն աճած թփուտներում թաքնված, սպասեց, թե ե՛րբ կերևա ամուսինը: Ահա և Կեփալոսը հայտնվեց ծառերի միջև: Նա էլի երգում էր բարձրաձայն:

— Օ՛, քնքշալի հովիկ, արի՛ և ի չիք դարձրու իմ հոգնությունը:

Հանկարծ սառավ տեղում Կեփալոսը, նրա ահանջին հասավ մի ծանրագին հառաչանք: Ականջ դրեց Կեփալոսը, բայց ոչ մի շշուկ չէր լսվում անտառում, կեսօրվա տապին ոչ մի տերև չէր տատանվում: Եվ կրկին երգեց Կեփալոսը:

— Փութա՛ ինձ մոտ, բաղձալի՛ հովիկ:

Հենց որ կրկին հնչեց այս խոսքը, ինչ-որ խշխշոց եկավ թփուտների միջից: Կեփալոսը, կարծելով, թե որևէ վայրի գազան է թաքնվել այնտեղ, դեպի թփուտները նետեց իր անվրեպ նիզակը: Թարձր ճշաց կրծքից խոցված Պրոկրիսը: Կեփալոսը ճանաչեց նրա ձայնը: Նետվեց թփուտների մեջ և այնտեղ գտավ իր կնոջը: Կուրծքը ողողվել էր արյամբ, մահացու էր սոսկալի վերքը: Կեփալոսը փութաց կապել վերքը, բայց ամեն ինչ իզուր էր: Վախճանվում էր Պրոկրիսը: Մահվանից առաջ նա ասաց ամուսնուն:

— Օ՛, Կեփալոս, հանուն մեր ամուսնական կապերի սրբության, հանուն Օլիմպոսի և ստորերկրյա աստվածների, որոնց մոտ ես հիմա իջնում եմ, հանուն իմ սիրո, թույլ մի՛ տուր, որ մեր տունը մտնի նա, որին դու հիմա կանչում էիր:

Մահամերձ Պրոկրիսի խոսքից կռահեց Կեփալոսը, թե ի՛նչն է մոլորության մեջ գցել կնոջը: Նա շտապում է Պրոկրիսին հասկացնել ճակատագրական սխալը: Ուժերը լքում են Պրոկրիսին, մահը մթազնում է աչքերը: քնքշագին ժպտալով Կեփալոսին՝ նա վախճանվում է ամուսնու ձեռքերի վրա: Վերջին համբույրի պա-

հին նրա հոգին թռավ դեպի Հաղեսի խավարչտին թագավորութիւնը:

Երկար ժամանակ անսփոփ մնաց Կեփալոսը: Իբրև սպանութիւն գործած՝ լքեց հայրենի Աթենքը և ապաստանեց յոթնագուն Քեբեուս: Այնտեղ նա օգնեց Ամփիտրիոնին որսալ տալտեսյան աղվեսին, որ անորսալի էր համարվում: Իբրև պատիժ, այդ աղվեսին Պոսելոնն էր ուղարկել թեքեցիներին: Յուրաքանչյուր ամիս այդ աղվեսին մի պատանյակ էին զոհարեում, որպեսզի մի կերպ մեղմեն նրա կատաղութիւնը: Կեփալոսն աղվեսի վրա բաց թողեց իր Լայլապոս շանը: Սա հավերժորեն հետապնդելիս կլինէր աղվեսին, եթէ ամպրոպային Զևսը քար չդարձներ և՛ աղվեսին, և՛ Լայլապոսին: Տալտեսյան աղվեսի որսից հետո Կեփալոսը մասնակցեց տելեբոյների դեմ Ամփիտրիոնի մղած պատերազմին, և իր խիղատութիւնը շնորհիվ նվաճեց Կեփալեսիայի իշխանութիւնը, մի կղզի, որ այդպես կոչվեց նրա անունով, և այնտեղ էլ ապրեց մինչև իր կյանքի վերջը:

ՊՐՈՎՆՆ ԵՎ ՓԻԼՈՄԵԼՆ

Շարադրված է ըստ Օվիդիոսի «Կերպարանափոխություններ» պոեմի:

Աթենական արքա Պանդիոնը, էրիքտոնիոսի հետնորդը, պատերազմ էր մղում իր քաղաքը պաշարած բարբարոսների դեմ: Նրա համար դժվար կլինէր Աթենքը պաշտպանել բարբարոսների մեծաքանակ զորաբանակից, եթէ նրան օգնութիւն չհասներ Քրակիայի Թարսիլոս Քերեսը: Եվ նա հաղթանակ տարավ բարբարոսների դեմ ու քշեց Ատտիկայի սահմաններից: Դրա համար Պանդիոնը Քերես արքային, որպես պարգև, կնութիւն տվեց իր զուտերը՝ Պրոկնէին: Իր երիտասարդ կնոջ հետ Քերեսը վերադարձավ Քրակիա: Շատ շանցած Քերեսն ու Պրոկնէն մի որդի ունեցան Քվում էր, թէ մոյրաները երջանկութիւն էին կանխատեսել Քերեսին ու նրա կնոջը:

Քերեսի ամուսնութիւնից անցավ հինգ տարի: Մի անգամ Պրոկնէն աղերսանքով դիմեց ամուսնուն.

— Եթէ դու դեռ սիրում ես ինձ, ապա թույլ տուր, որ տեսնվեմ քոջս հետ, կամ նրան մեզ մոտ բեր: Աթենք մեկնիր՝ քոջս հետևից, խնդրիր իմ հորը, որ բաց թողնի նրան և խոստացիր, որ նա

չուտ կվերադառնա: Քրոջս տեսնելն ինձ համար մեծագույն երջանկութիւն կլինի:

Քերեսը պատրաստեց նավերը հեռավոր նավարկութիւն համար, և շատ շանցած, հեռացավ Քրակիայից: Բարեհաջող հասավ Ատտիկայի ափերը: Փեսային հրճվանքով դիմավորեց Պանդիոնը և իր պալատը տարավ: Քերեսը դեռ չէր էլ հասցրել Աթենք գալու նպատակի մասին խոսել, երբ պալատ մտավ Փիլոմելին՝ Պրոկնէի քույրը, որ գեղեցկութիւնը չէր զիջում չքնաղ հավերժահարսներին: Փիլոմելի գեղեցկութիւնը շքեցրեց Քերեսին, համակեց կրքոտ սիրով դեպի չքնաղ աղջիկը: Եվ նա սկսեց աղերսել Պանդիոնին, որ զատերը բաց թողնի քոջը՝ Պրոկնէի մոտ հյուրընկալելու Փիլոմելի հանդեպ տածած սերն առավել համոզիչ էր դարձնում Քերեսի խոսքը: Իսկ Փիլոմելին, չկռահելով, թէ ի՛նչ վտանգ է սպանում իրես, նույնպես խնդրեց հորը, որ թույլ տա Պրոկնէի մոտ մեկնել: Վերջապես Պանդիոնը տվեց իր համաձայնութիւնը: Աղջկան ճանապարհելով դեպի հեռավոր Քրակիա, նա այսպես ասաց Քերեսին.

— Քեզ եմ վստահում, Քերես, զատերս: Անմահ աստվածների անունով երզվեցնում եմ քեզ, սատար եղիր նրան հոր նման: Շո՛ւտ ետ ուղարկիր Փիլոմելին, չէ՞ որ նա է զառամյալիս միակ սփոփանքը:

Պանդիոնը դիմեց նաև Փիլոմելին.

— Դո՛ւստր իմ, եթէ սիրում ես քո զառամյալ հորը, շուտ ետ արթի, ինձ միայնակ մի՛ թողնիր:

Արցունքն աչքերին հրաժեշտ տվեց Պանդիոնն իր զատերը. թեև ծանր նախազգացումները տանջում էին նրան, այնուամենայնիվ, նա անկարող եղավ մերժել Քերեսին ու Փիլոմելին:

Պանդիոնի գեղանի դուստրն արդեն նավի վրա էր: Համերաշխ թափով թիավարները ծովը սուզեցին թիակները և նավն արագորեն բաց ծով դուրս եկավ: Ատտիկայի ափերն ավելի ու ավելի հեռու մնացին: Յնժում է Քերեսը: Յնժագին գոչում էր նա.

— Ես հաղթանակ տարա: Այստե՛ղ, ինձ հետ նավի վրա է իմ սրտի ընտրյալը, գեղանի Փիլոմելին:

Քերեսն աչքը չէր կտրում Փիլոմելից և նրանից չէր հեռանում նավարկութիւն ամբողջ ընթացքում: Ահա և երևացին Քրակիայի ափերը, տեղ հասան: Քրակիայի արքան Փիլոմելին շտաբով իր պալատը: Նա աղջկան բռնութիւնով մթին անտառը տարավ,

հովիի հյուղակը, և պահեց այնտեղ զհրուժյան մեջ: Փիլոմելիի արցունքն ու աղերսանքը շարժեցին նրա գուլթը: Տառապում էր Փիլոմելին գերության մեջ, բազում անգամ կոչում իր քրոջն ու հորը, բազում անգամ դիմում մեծ օլիմպացի աստվածներին, բայց ապարդյուն անցան նրա աղերսանքներն ու զանգատները: Փիլոմելին հուսահատության մեջ փետում էր վարսեքը, կտորատում ձեռքերը և ողբում իր ճակատագիրը.

— Օ՛ր, անողորմ բարբարոս, — գուցե նա, — քո գուլթը շարժեցին ո՛չ հորս խնդրանքներն ու արտասուքը, ո՛չ էլ քրոջս հոգատարությունն իմ հանդեպ: Դու չպահեցիր քո ընտանեկան օջախի սրբությունը: Առ ուրեմն, թերևս, իմ կյանքը, բայց իմացած եղիր՝ քո հանցագործ արարքին ականատես եղան մեծ աստվածները և, եթե նրանք զեռ զորություն ունեն, ապա դու արժանի հատուցում կստանաս: Ինքս կհայտնեմ այն ամենի մասին, ինչ գործեցիր: Ի՛նքս կգնամ ժողովրդի մեջ: Իսկ եթե ինձ այդ թույլ շտան այտոեղ անել ինձ ջրջապատող անտանները՝ ես հենց անտանները կլցնեմ իմ զանգատներով. թող իմ բողոքին ունկնդիր լինի երկնային հավերժական եթերը, թող աստվածները լինեն ունկնդիր:

Ահեղ զայրութով լցվեց թերևս այդ սպառնալիքները լսելով: Դուրս քաշեց իր սուրը, ձեռքն առավ Փիլոմելիի վարսեքը, կապեց նրան ու կտրեց լեզուն, որպեսզի Պանդիոնի տարաբախտ գուտարը ոչ որի չկարողանա տեղյակ պահել իր մեղագործության մասին: Իսկ ինքը՝ թերևս, վերադարձավ Պրոկնենի մոտ: Սա հարցրեց ամուսնուն, թե որտեղ է քույրը, իսկ թերևս ասաց, թե քույրը վախճանվել է: Երկար ողբաց Պրոկնեն իբր թե մեռած Փիլոմելին:

Անցավ մի ամբողջ տարի: Տանջվում էր Փիլոմելին գերության մեջ՝ անկարող իմաց տալու հորը կամ քրոջը, թե ո՛րտեղ է կալանել իրեն թերևս: Վերջապես նա գտավ Պրոկնենին իմաց տալու հնարը: Ատոեց ջուհճակի հաստոցի առաջ, հյուսեց ծածկոցի վրա իր ամբողջ ահասարսուռ պատմությունը և այդ ծածկոցը զաղտնաբար Պրոկնենին ուղարկեց: Պրոկնեն բաց արեց այն և վրան հյուսված տեսավ քրոջ ահավոր պատմությունը: Սուսկումը պատեց նրան: Բայց արցունք չի գալիս Պրոկնենի աչքերից, ասես ինքնամոռացման մեջ ընկած, որպես խելակորույս, թափառում է նա պալատում և մտորում միայն այն, թե ինչպես պիտի վրեժխնդիր լինի թերևս:

Հենց այն օրերն էին, երբ Քրակիայի կանայք անց էին կացնում Դիոնիսոսի տոնախմբությունը: Նրանց հետ միասին Պրոկնեն էլ անտառ մտավ: Լեռների լանջերին, սաղարթախիտ անտառում որոնեց ու գտավ այն հյուղակը, ուր ամուսինը Փիլոմելին պահում էր գերության մեջ: Պրոկնեն ազատեց քրոջը և զաղտնաբար պալատ բերեց:

— Հիմտ արցունքի ժամանակը չէ, Փիլոմելի՛, — ասաց Պրոկնեն, — արցունքը մեղ օգնական չի՛ լինի: Մենք ոչ թե արցունքով, այլ սրով պետք է գործենք: Ես պատրաստ եմ ամենասոսկալի շարագործության, միայն թե վրեժխնդիր լինենք թերևս: Ե՛րբ քեզ պատճառած շարիքների համար: Ես պատրաստ եմ ամենաահավոր մահվան մատենել նրան:

Հենց այն պահին, երբ Պրոկնեն ասում էր այս խոսքը, ներս մտավ նրա որդին:

— Օ՛ր, որբա՛ն նման ես հորդ, — բացականչեց Պրոկնեն որդուն նայելով:

Հանկարծ նա լուց՝ հոնքերը դաժանորեն կիտելով: Մի սոսկալի շարագործություն հղացավ Պրոկնեն: Կրծքի տակ եռացող ցասումն էր նրան շարագործության մղում: Իսկ որդին վստահորեն մտոեցավ նրան, թաթիկներով զրկեց և ձգվեց դեպի մայրը՝ համբուրելու համար: Մի ակնթարթ գուլթը զարթնեց Պրոկնենի սրտում, աչքերում արցունքներ ցուլացին. նա փութաց ետ քաշվել որդուց, բայց քրոջ նայելուն պես կրծքի տակ կրկին պոռթկաց մոլեղին ցասումը: Եվ Պրոկնեն բռնեց որդու ձեռքից և տարավ պալատի հեռավոր սենյակը: Այնտեղ ձեռքն առավ սուրսայր սուրը, և երեքը դարձնելով, մխրճեց որդու կուրծքը: Պրոկնեն և Փիլոմելին կտոր-կտոր արին տարաբախտ տղայի մարմինը, մի մասը եփեցին կաթնայի մեջ, մյուսը խորովեցին ջջերի վրա շարած, և թերևս համար մի սոսկումնալի սեղան զցեցին: Ինքը՝ Պրոկնեն էր սպասարկում թերևս, իսկ սա, ոչինչ չկասկածելով, կերավ սիրասուն դավակի մարմնից պատրաստված ուտելիքը: Հացկերույթի ժամին թերևս մտաբերեց որդուն և հրամայեց իր մոտ կանչել նրան: Իսկ Պրոկնեն, հրձվելով իր վրեժխնդրությամբ, պատասխանավեց.

— Նա, ում կանչում ես, քո՛ մեջ է:

Չհասկացավ նրա խոսքը թերևս, շարունակեց պնդել, որ իբր մոտ կանչեն որդուն: Եվ այդ պահին վարագույրի հետևից հան-

կարծ դուրս եկավ Փիլոմելին և Քերևսի Երեսին շարտեց որդու արնաթաթավ գլուխը: Սոսկումից ցնցվեց Քերևսը, կռահեց, թե ի՞նչ ահավոր է եղել իր հացկերույթը, եւ նզովեց կնոջն ու Փիլոմելին: Սեղանը ետ մղելով իրենից, վեր թռավ տեղից և, սուրը մերկացնելով, ընկավ Պրոկնէի ու Փիլոմելիի հետևից, որպեսզի սեփական ձեռքերով լուծի որդու սպանութեան վրեժը: Բայց Քերևսը չկարողացավ հասնել նրանց հետևից: Քերևսը աճեցին թուրքերի վրա, նրանք թռչուններ դարձան: Փիլոմելին՝ ծիծեռնակ, իսկ Պրոկնէն՝ սոխակ: Միծեռնակ-Փիլոմելի կրծքին մնացել է և այն արյան բիծը, որ Քերևսի որդու արյունն է թողել: Իսկ Քերևսը հոպոպ դարձավ, գլխին մի մեծ կատար: Ինչպես ռազմաշունչ Քերևսի սաղավարտի վրա, հոպոպի գլխին ճոճվող կատարը՝ ևս փետուրից է:

ԲՈՐԵԱՍ ԵՎ ՕՐԻԹԻԱ

Ահավոր է Բորեասը, հյուսիսային անզսպելի քամու աստվածը: Մոլեգնաբար սուրում է երկրների ու ծովերի վրայով, իր ընթացքի մեջ առաջ բերելով ամենակործան փոթորիկներ: Մի անգամ, Աստիկայի վրայով սուրալիս, Բորեասը տեսավ էրեքթևի դուստր Օրիթիային և սիրեց նրան: Բորեասն աղերսեց Օրիթիային իր կինը դառնալ և թույլ տալ, որ տանի իր թագավորութունը՝ հեռավոր հյուսիս: Համաձայն չեղավ Օրիթիան. վախենում էր ահեղ ու անողորմ աստծուց: Բորեասին մերժեց և Օրիթիայի հայրը՝ էրեքթևսը: Բորեասի բուր խնդրանքները, բուր աղերսանքները ապարդյուն անցան: Զայրացավ ահեղ աստվածը և գռչեց.

— Ես արժանիք եմ այդպիսի ստորացման: Ես մոռացութեան էի տվել իմ ահեղ, մոլեգնի ուժը: Վայն է ինձ հլու-հնազանդ աղերսել որևէ մեկին: Ես միայն ուժով է, որ պիտի գործեմ: Ե՛ս եմ հալածում երկնքով մեկ ամպրոպաբեր ամպերը, ե՛ս եմ լեռնակուտակ ալիքներ բարձրացնում ծովի վրա, ե՛ս եմ արմատախիլ անում դարավոր կաղնիները, ինչպես շորացած ցողուններ, ես եմ կարկտահար անում երկիրը, քարի պես կարծր սառույցը ջուր դարձնում, և ե՛ս պիտի աղերսեմ անուժ մահկանացուի պես Երբ ես մոլեգնի սլացքով թռչում եմ երկրի վրայով՝ ցնցվում է ամբողջ երկիրը, ցնցվում է մինչև անգամ Հադեսի ստորերկրյա թագավորութունը: Եվ ես աղերսում եմ էրեքթևին, ասես նրա ծառան

լինեմ: Ես չպիտի՝ աղերսեմ, որ ինձ կնության տա Օրիթիային, նաև ուժով պիտի խլեմ:

Եվ թափահարեց Բորեասն իր հզոր թևերը: Կատաղի փոթորիկ բարձրացավ բովանդակ երկրում: Եղեգնի պես կոացան դարավոր անտառները, ծովի վրայով թավալվեցին փոփոքաբաշ ալիքները, մթին ամպերը պատեցին ողջ երկինքը: Լեռներից էլ վեր փռվեց Բորեասի սևաթուր թիկնոցը և դրանից հյուսիսային սարսոցնող ցուրտ փչեց: Ամենայն ինչ կործանելով իր ճանապարհին, Բորեասը Աթենք սուրաց, վեր առավ Օրիթիային, զալարվելով խոյացավ դեպի վեր և նրա հետ միասին ճախրեց հյուսիս՝ դեպի իր թագավորութունը:

Այնտեղ Օրիթիան դարձավ Բորեասի կինը: Եվ նրա համար երկվորյակ զավակներ ունեցավ՝ Զեթեսին ու Կալախին, երկուսն էլ թևավոր՝ հոր նման: Մեծ հերոսներ դարձան Բորեասի զավակները, երկուսն էլ մասնակից եղան արգոնավորդների արշավանքին դեպի Կողքիս՝ ոսկեգեղմը բերելու, և բազում մեծամեծ սխրանքներ գործեցին:

ԻՈՆ

Շարադրված է ըստ Եվրիպիդեսի «Իոն» ողբերգության:

Մի անգամ հեռահար նետաձիգ Ապոլոն աստվածը Աթենքի պարիսպների մոտ տեսավ էրեքթևի գեղանի դստերը՝ Կրեուսային: Աղբիկը՝ անհող, զարնանային բուրումնավետ ծաղիկներ էր բազում: Լեռույի սրգին սիրեց գեղեցկուհի Կրեուսային, սա էլ ոսկեզանգուր աստծուն սիրեց: Հորից ծածուկ՝ Կրեուսան Ապոլոնի կինը դարձավ և մի որդի ունեցավ: Երկյուղ կրելով հոր ցասումից, Կրեուսան թաքցրեց իր զավակին: Նորածնին փաթաթեց բարուրի մեջ, վիզն անցկացրեց զույգ օձի կերպարանքով ոսկե մի զարդ, մանկանը դրեց զամբյուղի մեջ և անձավ տարավ:

Ապոլոնը չլեց իր զավակին: Գնաց իր եղբայր Հերմեսի մոտ և խնդրեց նրան.

— Օ՛ր, եղբայր իմ, գնա Աթենքի հողածին ժողովրդի մոտ, գու հո գիտես ռազմուհի Աթենաս-Պալլասի պանծալի բազաբը,

¹ Եղբիս — այժմյան Կոլսիդան (Արխադիա) (Մ. Ք.):

այնտեղ, անձավում, զամբյուղի մեջ նորածին մի մանչուկ է պառկած: Վերցրու մանկանը զամբյուղով, բեր Դելփիք և իմ տաճարի դարպասի մոտ դիր: Մնացածը ինքս կհոգամ: Իմացի՛ր, եղբայր իմ, այդ մանուկն իմ որդին է:

Հերմեսը շուտափույթ Աթենք սուրաց, վերցրեց զամբյուղը՝ մանուկը միջին, բերեց Դելփիք, դրեց տաճարի մոտ և կափարիչը բաց արեց, որպեսզի տաճար մտնողներն իսկուչն տեսնեն մանկանը: Վաղ առավոտյան, երբ ճաճանչափայլ Հելիոսը ելնում էր երկինք, որ շառագունել էր արդեն էոս աստվածուհու բոսորագույն լուսից, գուշակուհի պիթիան մտավ Ապոլոնի տաճարը: Մեծ եղավ նրա զարմանքը, երբ տաճարի շեմին զամբյուղի մեջ գրված մի փոքրիկ տղա տեսավ: Պիթիան հենց այն է, ուզում էր հրամայել, որ տանեն նրան, որովհետև կարծում էր, թե մանուկը լքված կլինի զելփիքյան կանանցից որևէ մեկի կողմից, բայց հանկարծ կարեկցանք զգաց փոքրիկ տղայի հանգեպ և վճռեց իր մոտ պահել նրան: Ապոլոնը հոգում էր որդու մասին, և թույլ չտվեց, որ նա արտաքսվի հոր տանից: Պիթիան չէր կարծում, թե դառօրհարակուսյան է առել Ապոլոն աստծու զավակին:

Եվ այդպես դաստիարակվում էր տղան Դելփիքի տաճարում: Ոչ ոք չգիտեր, թե նա ում երեխան է: Իհարկե, ինքը մաճուկն էլ չգիտեր, թե ովքեր են իր ծնողները: Անհոգ խաղում էր նա հոր զոհասեղանի մոտ՝ մանկուսթյան տարիներին: Եսկ երբ առնացավ տղան, սրբազան Դելփիքի բնակիչները նրան տաճարի գրեճարանի պահապան ընտրեցին:

Ապոլոնի որդին մնաց ապրելու հոր տանը, և ապրում էր մաքուր, անեղծ կյանքով:

Մինչ այդ, Կրեոսան գարձավ կինը բամիսների աստված էփուսի որդու՝ Կուսթոս հերոսի, որ Կրեոսայի հորը՝ էրեքթևսին օգնել էր էլլեբային տիրող քաղկոզոսների դեմ մղած կռվում: Այդ օգնության համար էրեքթևսն իր զստերը կնուսթյան տվեց Կուսթոսին: Իսկ երբ էրեքթևսը զոհ գնաց Պոսեյդոն աստծո ձեռքով, Աթենքում սկսեց Կուսթոսն իշխել: Երջանիկ կյանք էին վարում Կուսթոսն ու Կրեոսան. նրանց վշտացնում էր լոկ այն, որ զավակ չունենու ի վերջո, նրանք վճռեցին բռնել Դելփիքի ճամփան և Ապոլոնի պատգամախոսին հարցում անել, թե աստվածներն արդյոք իրենց զավակներ չե՞ն ընծայի: Այդ միտքը նրանց Ապոլոնն էր

ներշնչել, քանի որ վճռել էր որդուն ետ տալ Կրեոսային և իր որդու՝ էրեքթևսի թոռան ձեռքը տալ Աթենքի իշխանությունը:

Կուսթոսը և նրա կինը մեկնեցին Դելփիք: Վաղ առավոտյան Կրեոսան իր աղախինների հետ մտավ սրբազան քաղաքը: Իսկ նրա ամուսինը Դելփիքի ճանապարհին այցելեց Տրոփոնիոսի՝ գուշակավայրը և մի փոքր ավելի ուշ պետք է զար Ապոլոնի գուշակավայրը: Երբ Կրեոսան մտեսնում էր Ապոլոնի տաճարին, նրա որդին կարգի էր բերում տաճարը: Գափնեճյուզերով սրբում էր տաճարի հատակը, դարպասները զարդարում ճյուղերով ու ծաղկաշղթաներով և տաճարի տանիքներից ու զոհասեղաններից բշում էր թռչուններին: Տաճարի մոտ հանդիպելով պատանուն, Կրեոսայի աղախիններից մեկը հարցրեց, թե կարո՞ղ են արդյոք տաճար մտնել: Պատանին թույլ չտվեց, քանի որ օրը դեռ նոր էր բացվում և քուրմերից ոչ մեկը տաճարում չէր: Աղախինների հետ խոսելիս պատանին ուշադրություն գարձրեց նրանց միջև կանգնած Կրեոսային: Առաջին իսկ հայացքից պատանին կռահեց, որ նա մի անվանի կին է: Նրան զարմացրին կնոջ աչքերում երևացող վշտի արցունքները և նա հարցրեց.

— Ասա՛ ինձ, ինչո՞ւ ես արցունք հեղում, երբ զալիս ես Ապոլոնի սրբավայրը: Այդ ի՞նչ վիշտ է տանջահար անում քեզ: Չէ՞ որ քովորաբար բոլորն էլ սորախանում են այստեղ գալով, իսկ զուլալիս ես, և արցունքի կաթիլներն իրար հետեից զլորվում են քո աչքերից:

Կրեոսան պատասխան տվեց նրան.

— Օ՛, օտարական: Ես հասկանում եմ, որ քեզ զարմացնում են իմ արցունքները, բայց ասեմ պիտի, որ Ապոլոնի տաճարը տեսնելուն պես մտաբերեցի անցած գնացած մի եղելություն: Իմ մտքերը զարձալ իմ հայրենիքումն են, թեև կանգնած եմ այստեղ: Օ՛, տաբարախտ կին եմ ես, Օ՛, ինքնակամ աստվածներ՝ ո՞նչ պիտի անենք մենք: էլ ո՞ւմ զանգատվենք, եթե մեզ կործանման են տանում հենց իրենք՝ զոռոզամիտ աստվածները:

Պատանին շահակացավ Կրեոսայի միտքը, կնոջ խոսքի իմաստը պարզ չեղավ նրա համար: Կրեոսան էլ չկամեցավ բացատրել

1 Տրոփոնիոս—բառ ասոսպելի, Դելփիքում Ապոլոնի առաջին տաճարի կառուցողը: Նրա գուշակավայրը գտնվում էր Թեոփոլոսում, Աբադես քաղաքի մոտ գտնվող անձավում:

իր խոսքը: Պատանու այն հարցին, թե ո՞վ է ինքը, Կրեուսան պատասխանեց, որ ինքը Աթենքի զոհված արքայի՝ Էրեբթևուսի զուտըն է և իր ամուսնու՝ Կսուլթոսի հետ, որ այժմ իշխում է Աթենքում, եկել է հարցնելու Ապոլոնի պատգամախոսին, թե արդյոք զավակներ կունենա՞ն իրենք:

— Օ՛, թշվառ,— զուեց պատանին,— մի՞թե դու երբեք զավակներ չես ունեցել, զուցեև մեռե՞լ են քո երեխաները: Տարաբա՛խտ: Իսկ ես, տեսնելով քո հարստությունը, կարծում էի, թե հրջանիկ ես:

— Ասա՛ ինձ, ո՞վ ես դու,— հարցրեց Կրեուսան:

— Ես ոչ հայր եմ տեսել, ոչ մայր,— տրտմազին պատասխան տվեց պատանին,— ինձ այտեղ տաճարում պիթիան է դաստիարակություն տվել:

Կրեուսան կարեկցանքով լցվեց անծնող ու անտոհմ պատանու հանդեպ: Հարցուփորձ արեց նրան, թե ի՞նչ կյանք է վարում տաճարում, բայց պատանին ընդհատեց նրան և հարցրեց, թե ի՞նչ է ուզում Ապոլոնից: Կրեուսան չկամեցավ իր գաղտնիքը հայտնել տաճարի սպասավորին և իբրև պատասխան ասաց.

— Ես մի ընկերուհի ունեի: Նրան ինքը՝ Ապոլոն աստվածն էր սիրում: Եվ ընկերուհիս աստծուց երեխա ունեցավ: Երկյուղ կրելով հոր ցասումից, քանի որ առանց նրա համաձայնության էր դարձել Ապոլոնի կինը, ընկերուհիս մի ամալի տեղ թաքցրեց որդուն: Իսկ նրա որդին խորհրդավոր կերպով անհայտացավ, և ոչ ոք չգիտե, թե ո՞րտեղ է նա: Եվ ահա ես Դելփիք եմ եկել Ապոլոն աստծուն հարցում անելու ընկերուհուս որդու ճակատագրի մասին և իմանալու, թե արդյոք ո՞ղջ է նա: Զէ՛՛ որ նա հիմա քո հասակակիցը կլինեք:

— Բայց ինչպե՞ս կարող է աստվածը հայտնել քեզ այն, որ ինքն է թաքցրել բոլորից,— պատասխան տվեց պատանին Կրեուսային:— Տես, որ շարժես Ապոլոնի զայրույթը քո այդ հարցումով: Քեզ ոչ ոք պատասխան չի տա Ապոլոնի կամքին հակառակ:

Կսուլթոսի գալստյամբ այտեղ ընդհատվեց Կրեուսայի և պատանու խոսակցությունը: Նա հրճվալից լուր էր բերել Տրոփոնիոսի պատգամախոսից, որ ասել էր նրան, թե իրենք առանց զավակի ետ չեն դառնա Դելփիքից: Կսուլթոսն ուրախ-ուրախ գնաց Ապոլոնի տաճարը, իսկ Կրեուսան մնաց աղոթելու աստվածների զոհասեղանների մոտ, տաճարի մոտակայքում:

Կսուլթոսը երկար շմնաց Ապոլոնի տաճարում: Նա պատասխան էր ստացել, թե նա՛, ով առաջինը կհանդիպի նրան տաճարից ելնելիս՝ իր որդին է: Երբ Կսուլթոսը զուրս ելավ տաճարից, առաջինը նրան հանդիպեց տաճարի պատանի սպասավորը: Կսուլթոսը ցնծազին ողջունեց նրան՝ իբրև զավակի, բայց պատանին զարմանքով էր նայում արքային. չէր կամենում նրան հայր կոչել: Միայն այն ժամանակ, երբ Կսուլթոսը պատմեց պատանուն, որ ինքը՝ Ապոլոն աստվածն է մատնացույց արել նրան իբրև իր որդու, պատանին հնազանդվեց աստծո կամքին: Իսկ ո՞վ է նրա մայրը: Պատանին հարցրեց Կսուլթոսին, թե ո՞վ է իր մայրը, բայց Կսուլթոսը ինքն էլ չգիտեր:

Հիմա ինչպե՞ս պիտի հայտնի Կրեուսային, որ որդի են գտել Դա կվշտացնի նրան. նրա համար դժվար կլինի իր տան մեջ առնել մեկ ուրիշ կնոջ զավակի: Ուստի և Կսուլթոսը վճռեց պատանուն, որին Իոն անունն էր տվել, Աթենք տանել իբրև հյուրի, իսկ հետո աստիճանաբար նախապատրաստել Կրեուսային և հայտնել ճշմարտությունը միայն այն ժամանակ, երբ նա ընտելացած, զուցեև սիրելիս կլինի Իոնին: Իսկ այժմ Կսուլթոսն ուզում էր տոնականորեն նշել այն ուրախալի օրը, երբ աստվածը ետ տվեց իր որդուն: Նա խնդրեց Իոնին խնջույքի կանչել Դելփիքի բոլոր բնակիչներին, իսկ ինքը գնաց օլիմպական բոլոր աստվածներին՝ իսկ ամենից առաջ Ապոլոնին, երախտագիտության զոհեր մատուցելու բարձրագահ Պաոնասի վրա:

Փառաբանելով աստծուն, Կսուլթոսն ու Իոնը հեռացան՝ սպասուհիներին արգելելով Կրեուսային պատմել իրենց լսածը:

Կսուլթոսի և Իոնի գնալուն պես Կրեուսան տաճար վերադարձավ: Նրան ուղեկցում էր ծեր սպասավորը: Պատրաստվելով տաճար մտնել, Կրեուսան դիմեց սպասավորներին՝ հարցնելով, թե չգիտե՞ն արդյոք, թե պիթիան ինչ պատասխան է տվել ամուսնուն: Սպասուհիները ոչինչ չէին խոսում, սիրտ չէին անում Կրեուսային պատասխանել. չէ՞ որ Կսուլթոսը մահվան սպառնալիքով արգելել էր գաղտնիքը բաց անել: Վերջապես, սպասուհիներից մեկը հանդգնեց խոսել:

— Օ՛, տիրուհի: Պատրաստ եմ երկու անգամ մեռնելու,— ասաց նա,— բայց ի՞նչ էլ լինի՝ կասեմ քեզ ճշմարտությունը: Դու երբեք ձեռքերիդ երեխա չես մեծացնի, երբեք երեխա չի լինի քո գրկին: Ինքը արծաթաղեղ աստվածն է զավակ պարգևել քո ամուս-

նուն: Հիմա նա հրջանիկ է: Աստված քո ամուսնուն որդի է պարգևել, նրա՛ն՝ ում արքան առաջինն է հանդիպել տաճարից ելնելիս: Ամուսնուդ առաջին պատահողը այն պատանին եղավ, որին դու ինքդ տեսար այստեղ, տաճարի մոտ: Այդ պատանին է նրա որդին: Կտուժոսը նրան իոն անվանեց: Ո՞վ է նրա մայրը՝ չգիտեմ: Խորապես վշտացավ Կրեուսան: Հիմա նրա տանը ուրիշի զավակը պիտի ապրի, նա՛ է ժառանգելու իր նախնիների իշխանությունը, նրա՛ն կտա Կտուժոսն իր ամբողջ սերը, իսկ ինքը, բոլորից մոռացված, կապրի իր պալատում: Կրեուսայի վիշտն ավելի է խորացնում ծեր սպասավորը, որ սպասավորելիս է եղել և նրա հորը: Նա Կրեուսային ասաց, թե Կտուժոսը խաբել է նրան, թե իոն հավանորեն ստրկուհու զավակ է, որ դաստիարակվել է տաճարում Կտուժոսի հանձնարարությամբ: Սպասավորը համոզեց Կրեուսային, թե Կտուժոսը դիտումնավոր կերպով կնոջը Դելփիք է բերել, որպեսզի այստեղ խաբեություն բանեցնի և իր տուն տանի ստրկուհու զավակին: Տանջվում էր Կրեուսան, կարծում էր, թե ծանր բախտ է բաժին ընկնելու իրեն: Մի՛թե իրեն վիճակված է կորցնել Աթենքի ամբողջ իշխանությունը, որը իրավամբ իրեն՝ էրեքթևսի դստերն է պատկանում: Ծեր սպասավորն էլ շէր ուզում, որ էրեքթևսի իշխանությունն օտարերկրացու ձեռքն ընկնի, համոզում էր Կրեուսային, որ խնջույքի ժամին թունավորի իոնին: Կրեուսան երկար շվարանեց. համաձայնեց թունավորել իոնին, և ծերունուն զորգոնի թունավոր արյան կաթիլ տվեց, որ հորից էր ստացել և մշտապես հետն էր ման ածում: Ծերունին, թույնն առած, մտավ վրանը, որ իոնն էր խփել խնջույքի համար:

Թանկագին կտորներով շքեղորեն զարդարված վրանում արդեն հավաքվել էին Դելփիքի բնակիչները: Վաղուց էր արդեն, ինչ վրանը լցվել էր հյուրերով, որոնք բոլորվել էին ոսկե ու արծաթե ամանեղենով պատած ճոխ սեղանների շուրջը: Երբ հյուրերը հագեցան պես-պես խորտիկներով՝ վրան մտավ ծեր սպասավորը: Նա սկսեց հյուրերին անուշաբույր ջուր մատուցել՝ ձեռքները լվալու համար, ախորժիկ բուրմունք ծխեցրեց և հյուրերի գավաթները գինի լցրեց: Ավելի ու ավելի ցնծալից էր դառնում խրախճանքը: Իսկ երբ հնչեցին սրինգներն ու քնարները, ծերունին ասաց սպասավորներին.

— Հավաքեցեք բոլոր փոքր գավաթները և մեծերը բերեք հյուրերի սիրտը թող ավելի շուտ լցվի հրճվանքով:

Սպասավորները բերեցին ոսկեհուռ և արծաթահուռ խոշոր գավաթներ: Ծերունին ընտրեց զրանցից ամենաշքեղը, բերնեբերան լցրեց կաշվապացու գինով և, բոլորից անկատ, զորգոնի թունավոր արյան կաթիլը խառնեց գինուն: Այդ գավաթը նա իոնին մատուցեց: Հենց այն է, Իոնը պիտի հեղում կատարեր ի պատիվ աստվածների և մինչև մրուրը գատարկեր գավաթը, երբ սպասավորներից մեկը բերնից մի անզգույշ խոսք թոցրեց: Իոնը, որ աճել ու աճանցել էր տաճարում, դաստիարակվել պիթայի կողմից, իսկույն կռահեց, որ դա վատ նշան է: Իսկույն գինին թափեց գետնին, հյուրերին էլ խորհուրդ տվեց իր օրինակին հետևել, իսկ ծառաներին հրամայեց վերստին գինի լցնել: Մինչ ծառաները գինի կլցնեին, ձեռնասուն աղավնիները, որ ճախրում էին վրանում, ցած իջան և սկսեցին խմել թափած գինին: Հանկարծ իոնի թափած գինուց խմող աղավնին սկսեց պատեպատ ընկնել, թռչել տանջալից ձայներ արծաթեղուով, ճախրեց վրանով մեկ և անշնչացած վայր ընկավ: Հյուրերը զարմանք կտրած նայում էին աղավնուն: Իոնը սուսկումով վեր թռավ տեղից, վրայից պոկեց թիկնոցը և, ձեռքերը հյուրերի կողմը կարկառելով, գուշեց.

— Ո՞վ էր ուզում ինձ սպանած լինել, ասա՛, ծերունի: Դու ինձ այնպիսի՛ հոգացություն էիր սպասարկում, չէ՞ որ քո ձեռքերից առա մահաբեր գավաթը:

Կրեուսայի ծեր սպասավորը երկար ժամանակ ուրանում էր իր հանցանքը, բայց վերջապես խոստովանեց: Ասաց, որ թույնն իր տիրուհին էր տվել՝ Կրեուսան, և հրամայել է թունավորել իոնին: Այսպես տխուր վախճան ունեցավ ուրախ խնջույքը:

Իոնն իսկույն ևեթ հյուրերին առած գնաց Դելփիքի ավազների մոտ և նրանց առջև մեղադրեց Կրեուսային, որ իրեն թունավորելու մտադրություն է ունեցել: Ավազները Կրեուսային սոսկալի պատժի դատապարտեցին, նրան պետք է ցած նետեին ժայռի վրայից:

Այդ ամենի լուրը արագորեն Կրեուսային հասավ: Իմանալով, թե ինչպիսի մահվան են դատապարտել իրեն՝ նա գնաց պաշտպանություն գտնելու Ապոլոնի զոհասեղանի վրա: Հենց նոր էր նստել զոհասեղանի վրա, երբ իոնը վրա հասավ: Նա ամենուրեք որոնել էր Կրեուսային և հիմա ուզում էր բռնել նրան, թեև նա գտնվում էր աստծու պաշտպանության ներքո, և տանել պատիժ տալու: Այդ պահին եկավ պիթիան: Նա ձեռքին բերում էր նույն այն գամբաղը, որով մի ժամանակ Հերմեսը Դելփիք էր բերել Իոնին: Երկար

ժամանակ պիթիան պահել էր զամբյուղը, իսկ հիմա Իոնին էր տալիս, որպեսզի նա, լքելով Դելփիքը, զամբյուղի օգնությամբ կարողանա գտնել իր ծնողներին: Ինքը՝ Ապոլոնն էր պիթիային հրամայել, որ այդպես վարվի: Ջամբյուղն Իոնի ձեռքին տեսնելուն պես, Կրեոսան ցած իջավ զոհասեղանի վրայից և Իոնի մոտ վազեց: Իսկ Իոնը, կարծելով, թե Կրեոսան ուզում է փախուստով խույս տալ մահից, հրամայեց բռնել նրան: Բայց Կրեոսան ասում էր, որ դա հենց այն զամբյուղն է, որով մի ժամանակ իր նորածին մանկանն անձավ է տարել և թողել այնտեղ, բայց հետո որդին խորհրդավոր կերպով անհայտացել է: Ջամբյուղը կտրեց Իոնը: Մի՞թե իր մայրն է կանգնած առաջին: Կասկածելով, նա վճռեց փորձել Կրեոսային և հարցրեց, թե կարո՞ղ է արդյոք ասել, թե ի՞նչ իրեր կան փակ զամբյուղի մեջ: Առանց միտք անելու Կրեոսան տվեց զամբյուղում գտնվող բոլոր իրերի անունները: Այնտեղ մի ծածկոց կա, որի վրա գորգոնի զուլխ կա գործած, — դա Կրեոսան է գործել աղջիկ ժամանակ, — այնտեղ կա և մի ոսկե զարդ՝ երկու օձի կերպարանքով, դրանով էին զարդարում էրեքթևի բոլոր նորածին ժառանգներին: Ջամբյուղի հատակին մի պսակ կա՝ շյուսված Աթենաս զիցուհու սրբազան ձիթենու ճյուղերից. պսակը պիտի դալար լինի, քանի որ նրա սրբազան ճյուղերն անթառամ են: Ամեն ինչ ասաց Կրեոսան, և համոզվեց Իոնը, որ առջևում կանգնածն իր մայրն է, որին այնքան տենչում էր գտնել: Հրճվանքով գրկում է Իոնին մայրը. նրա համար զավակն ավելի պայծառ է շողում, քան արևը, մոր համար որդին ավելի թանկ է, քան կյանքը: Նա սոսկում է այն մտքից, որ քիչ առաջ ուզում էր մահվան մատնել իր որդուն: Ցնծում էր և Իոնը, ուզում էր կանչել Կսութոսին, բայց Կրեոսան հայտնեց որդուն, որ նրա հայրը Կսութոսը չէ, այլ ինքը՝ արծաթագեղ Ապոլոնն աստվածը և, իրրև վկա, Կրեոսան կոչեց ամպրոպային Ջևի սիրելի դստերը՝ Աթենաս աստվածուհուն:

Հայտնվեց մեծն աստվածուհի Աթենասն Իոնի և նրա մոր առաջ, հրամայեց Կրեոսային՝ որդուն առած Աթենք փութվալ և խոստացավ նրան ամբողջ Ատտիկայի իշխանությունը, որ նրա նախնիներին է պատկանել: Մեծ փառք գուշակեց Աթենասն Իոնի համար: Չորս որդի կունենա Իոնը, նրանցից պիտի սկիզբ առնեն Ատտիկայի մեծ տոհմերը (հելեոններ, հոսլետներ, արգոններ և այսի-

քորներ)¹: Հզոր կլինեն Իոնի հետնորդները, նրանց Իոնի անունով Իոնյանք կկոչեն, բազում երկրներ ու կղզիներ կբնակեցնեն նրանք:

— Բայց առայժմ թող Կսութոս արքան չիմանա, թե ի՞նչ է տեղի ունեցել, — ասաց Աթենասը, — որպեսզի չդառնացնի Կրեոսայի ուրախությունը՝ իմանալով, որ Իոնը ոչ թե իր, այլ Ապոլոնն աստծու զավակն է:

Մեծն Ապոլոն աստվածը շահնդուրժեց, որ իր որդին ապրի անհայտության մեջ, ամբողջ կյանքում մնալով լտկ իրրև գելփիքյան տաճարի սպասավոր: Աստվածը նախնիների իշխանությունը վերադարձրեց նրան: Ի կատար ածվեց նաև մեծ աստվածուհու կանխագուշակությունը. Իոնը դարձավ իոնյանների պանծալի տոհմի նախահայրը:

ԳԵԳԱՂՈՍ ԵՎ ԻԿԱՐՈՍ²

Շարադրված է ըստ Օլիմպոսի «Կեդաբանափոխություններ» պոեմի:

Աթենքի մեծագույն նկարիչը, քանդակագործն ու ճարտարապետը Դեդալոսն էր, էրեքթևի հետնորդը: Պատմում էին, որ ճյուղահերմակ մարմարից նա այնպիսի զարմանահրաշ արձաններ էր կերտում, որ թվում է, թե կենդանություն են առել, տեսնում են ու ջարժվում: Շատ գործիքներ էր հնարել Դեդալոսն իր աշխատանքի համար, նա էր հնարել նաև կացինն ու ջաղափը: Հեռուներն էր տարածվել Դեդալոսի փառքը:

Այդ մեծ արվեստագետը մի աղջկան ուներ Տալոս անունով, որ նրա քրոջ՝ Պերդիկեի որդին էր: Տալոսն իր հորեղբոր աշակերտն

¹ Աթենական արիստոկրատիան բաժանվում է տոհմերի, որոնց ձեռքին (մինչև ն. թ. ա. 5-րդ դարում կառավարման դեմոկրատական ձև ընդունելը) զբոսնելում էր ամբողջ իշխանությունը: Հնագույն տոհմերը համարվում էին հելեոնները, հոպլետները, արգոնները և այսիքորները:

² Դեդալոսի և Իկարոսի առասպելը ցույց է տալիս, որ հնագույն անցյալում իսկ մարդիկ միտք են արել ոչ միայն երկրի վրայով ու ջրի միջով, այլև օդով շարժվելու հնարը գտնելու մասին: Հատկանշական է, որ առասպելական արվեստագետ Դեդալոսի մեծագույն նվաճումները համարվում էին ոչ նրա կերտած արձանները և կանգնեցրած շինությունները, այլ նրա պատրաստած թևերը: Գեդալոսի առասպելն ստեղծվել է Աթենքում՝ Հին Հունաստանի առևտրի, արդյունաբերության, արվեստի և գիտության կարևորագույն կենտրոնում:

էր: Դեռ վաղ պատանեկությունից նա ապշեցնում էր բոլորին իր տաղանդով ու հնարագիտությամբ: Կարեւր էր կանխատեսել, որ նա մեծապես կզերազանցի իր ուսուցչին: Դեղալուսը նախանձում էր քրոջ որդուն և վճռեց սպանել նրան: Մի անգամ, Դեղալուսը նրա հետ կանգնել էր բարձրաբերձ անհնազանդ Ակրոպոլսում, ապառաժի ծայրագույն եզրին: Շուրջը ոչ ոք չկար: Տեսնելով, որ իրենց մենակ են, Դեղալուսը քրոջ որդուն ցած նետեց ժայռի վրայից: Վստահ էր Դեղալուսը, որ իր շարագործությունն անպատիժ կմնա: Ժայռի կատարից ընկնելով, Տալուսը ջախջախվեց: Դեղալուսը փութաց իջնել Ակրոպոլսից, վեր առավ Տալուսի մարմինը և հենց այն է, ուղղում էր ծածկաբար թաղել նրան, երբ աննացիները վրա հասան ու բռնեցին նրան՝ շիրիմից փորելիս: Դեղալուսի շարագործությունը հայտնի դարձավ բոլորին: Արեւապաղոսը նրան մահվան դատապարտեց:

Խուլս տալով մահից, Դեղալուսը փախավ Կրետե, Մինոս հզորազոր արքայի՝ Չևսի ու Եվրոպայի որդու մոտ: Մինոսը հաճությամբ իր պաշտպանության տակ առավ Հուանաստանի մեծ արվեստագետին: Արվեստի բազում հրաշք-ստեղծագործություններ կերտեց Դեղալուսը Կրետեի արքայի համար: Վառուցեց նաև աշխարհահռչակ Լաբիրինթոս պալատը՝ այնպիսի խճողված ուղիներով, որ մի անգամ այնտեղ մտնողն այլևս անկարող էր ելք գտնել: Այդ պալատում Մինոս արքան կալանեց իր կնոջ՝ Պասիփայի որդուն՝ ահռելի Մինոտավրոսին, որ մարդկային մարմին ուներ և ցուլի գլուխ:

Բազում տարիներ Դեղալուսն ապրեց Մինոսի մոտ: Արքան չէր կամենում նրան բաց թողնել Կրետեից: Միայն ինքն էր ուզում օգտագործել մեծ արվեստագետի ձիրքը: Մինոսը գերու պես էր պահում Դեղալուսին Կրետե կղզում: Երկար միտք արեց Դեղալուսը փախչելու մասին և, վերջապես, գտավ գերությունից ազատվելու հնարը:

— Եթե ես չկարենամ,— գռչեց Դեղալուսը,— ազատվել Մինոսի իշխանությունից ո՛չ ցամաքային, ո՛չ ծովային ճանապարհով, ապա չէ՞ որ փախուստի համար բաց է երկինքը: Ահա իմ փախուստի ուղին: Ամեն ինչի վրա իշխում է Մինոսը, օ՛գն է լոկ, որ աղատ է նրա բռնությունից:

Եվ Դեղալուսը գործի անցավ: Փետուրներ ժողվեց, միմյանց կցեց վուշի թելերով ու մեղրամոմով և սկսեց շորս խոշոր թևեր

պատրաստել: Մինչ Դեղալուսն աշխատում էր, նրա որդին՝ Իկարոսը, խաղ էր անում հոր մոտ. մեկ բամուց քշված փետուրներն էր բռնում, մեկ էլ ձեռքի մեջ տրոբում մեղրամոմը: Պատանյակն անհող խայտում էր, հոր աշխատանքը նրան միայն զվարճութուն էր պատճառում:

Վերջապես Դեղալուսն ավարտեց իր աշխատանքը: Թևերը պատրաստ էին. Դեղալուսը թևերը կապեց մեջքին, ձեռքերն անցկացրեց նրանց վրա շինված օղակների միջով: Թափահարեց թևերը և թևթևասահ օդ բարձրացավ: Ապշահար նայում էր Իկարոսը վիթխարի թռչունի պես օդում ճախրող իր հորը: Դեղալուսն իջավ դեպի և ասաց իր որդուն:

— Լսի՛ր ինձ, Իկարոս, հիմա մենք պիտի թռչնեք Կրետե կղզուց: Զգո՛ւյշ կլինես թռիչքի ժամանակ, Մովի վրա շատ ցած չիջնես, որպեսզի ավիցների աղի ցալաքերը չթրջեն թևերդ: Շատ էլ չբարձրանաս դեպի արևը. տաքը կարող է հալեցնել մեղրամոմը, և փետուրները ցրիվ կգան: Ծախրի՛ր իմ հետևից, ինձնից ետ չըմնա՛ս:

Հայր ու որդի հագան թևերը և ճախրեցին թևթևորեն: Բարձր երկնքում նրանց թռիչքը տեսնողները այնպես էին կարծում, թե երկու աստվածներ են, որ սավառնում են կապուտակ երկնքով: Դեղալուսն ստեպ-ստեպ շուռ էր գալիս դեպի ետ, որպեսզի տեսնի, թե ինչպես է թռչում որդին: Նրանք արդեն հետևում թողեցին Դելոս ու Պարոս կղզիները և ավելի ու ավելի հեռու էին սավառնում:

Մըրնթաց թռիչքը զվարճացնում էր Իկարոսին, գնալով ավելի համարձակ էր թևածում պատանին: Նա մոտացություն տվեց հոր պատվերները, այլևս նրան չէր հետևում: Ուժղնորեն թևածելով, նա խոլացավ դեպի վեր, հասավ երկնակամարը, ճաճանչափայլ արևի մոտ: Արևի կիզիչ ճառագայթները հալեցրին թևերի փետուրները պահող մեղրամոմը: Փետուրները դուրս թափվեցին և, հողմահալած, ցրիվ եկան օդի մեջ: Կրկին ճոճեց Իկարոսն իր ձեռքերը, բայց այլևս թևեր չունեի նա: Եվ ահավոր բարձրությունից ահագնաթափ ծովն ընկավ Իկարոսը ու զոհ գնաց նրա ալիքներին:

Դեղալուսը շուռ եկավ, նայեց շորսբոլորը: Զկա՛ր Իկարոսը: Բարձրաձայն կանչում էր որդուն.

— Իկարո՞ս, Իկարո՞ս, որտե՞ղ ես դու: Ձա՛յն տուր, Իկարո՞ս:

Պատասխան չկա: Դեղալուսը ծովի ալիքների վրա տեսավ որդու թևերից ընկած փետուրները և կռահեց, թե ինչ է կատարվել: Ինչպիսի՞ ատելությամբ լցվեց Դեղալուսն իր արվեստի հանդեպ, ինչպե՞ս էր նդովում այն օրը, երբ Կրետեից օդի միջով փախչելու միտք հղացավ:

Իսկ Իկարոսի մարմինը տարուբերվեց ալիքների վրա այն ծովի, որ այդ ժամանակից ի վեր նրա ալիքներին զոհ գնացածի անունով Իկարյան է կոչվում: Ի վերջո, նրա դիակը ալիքները դեպի կղզու ափը քշեցին: Այնտեղ նրա դին գտավ Հերակլեսը և հողին հանձնեց:

Իսկ Դեղալուսը շարունակեց սավառնել և, վերջապես, Սիցիլիա հասավ: Այնտեղ նա ապաստան գտավ Կոկալոս արքայի մոտ: Մինոսն իմացավ, թե ո՞րտեղ է թաքնվել Դեղալուսը, մի մեծ գորարանակ առած ուղևորվեց Սիցիլիա և պահանջեց, որ Կոկալոսը իր ձեռքը մատնի նրան:

Կոկալոսի դուստրերը շէին ուզում զրկվել Դեղալուսի նման արվեստագետից և նրանք խորամանկության դիմեցին: Համոզեցին իրենց հորը համաձայնել Մինոսի պահանջին և, իբրև հյուր, ընդունել նրան պալատում: Երբ Մինոսը լուզանք էր ընդունում, Կոկալոսի դուստրերը նրա գլխին եռացող ջուր լցրեցին, և Մինոսը մեռավ ահավոր տառապանքների մեջ: Դեղալուսը երկար ժամանակ ապրեց Սիցիլիայում: Իսկ կյանքի վերջին տարիներն անցկացրեց հայրենի Աթենքում. այնտեղ նա դարձավ Դեղալիդների, աթենական պանծալի արվեստագետների նախահայրը:

1 էգեյան ծովի մի մասը, որ ընկած է Սամոս ու Պարոս կղզիների և Փոքր Ասիայի միջև:

Հարագրված է ըստ Պլուտարխոսի «Թեսևս» կենսագրության:

ԹԵՍԵՎՍԻ ԵՆՈՒՆԵՆ ՈՒ ԴԱՍԻՄԱԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պանդիոնի որդին՝ էգևսն էր իշխում Աթենքում՝ իր եղբայրների հետ միասին Մետիոնի որդիներին Ատտիկայից քշելուց հետո: Սրանք Պանդիոնի ազգականներն էին, որոնք հանիրավի զավթել էին իշխանությունը: Բազում տարիներ էգևսը իշխեց երջանկորեն: Նրա արտոմության միակ պատճառը զավակ չունենալն էր: Ի վերջո էգևսն ուղևորվեց Դելփիք, Ապոլոնի գուշակավայրը, և այնտեղ հարցրեց լուսաճաճանչ աստծուն, թե ինչու աստվածներն իրեն զավակներ չեն տալիս: Պատգամախոսն անորոշ պատասխան տվեց էգևսին: Երկար միտք արեց նա՝ շանալով գտնել այդ պատասխանի նվիրական իմաստը, բայց անկարող եղավ կռահել վերջ ի վերջո, էգևսը վճռեց մեկնել Տրոյզեն² քաղաքը, Արգոլիսի իմաստուն արքա Պիտթևսի մոտ, որպեսզի նա՝ բաց անի Ապոլոնի պատասխանի գաղտնիքը: Պիտթևսն իսկույն մեկնեց պատասխանի իմաստը: Նա կռահեց, որ էգևսը պետք է մի որդի ունենա, որ պիտի դառնա Աթենքի հերոսներից մեծագույնը: Պիտթևսը կամենում էր, որ մեծ հերոսի հայրենիքը լինելու պատիվը Տրոյզեն քաղաքին պատկանի: Ուստի և իր էթրե դստերը կնություն տվեց էգևսին: Եվ ահա, էգևսի կինը դառնալով, էթրեն մի

1 Թեսևս — Աթենքի մեծագույն հերոսը, որ ընդհանուր շատ բան ունի Հերակլեսի հետ: Թեսևսը ռազմա-տոհմային արիստոկրատիայի հերոսն է, իսկ այնուհետև՝ հերոսը իշխող աթենական ստրկատիրական-հողատիրական արիստոկրատիայի, որը Թեսևսին է վերագրել Աթենքի պետական հին կառուցվածքը, նրան է վերագրվում, ամենից առաջ, բնակչության բաժանումը երեք դասի. «էվպատրիդներ» կամ ազնվազարմներ, «գեոմորներ» կամ հողատերեր և «դեմիտրիդներ» կամ արհեստավորներ, ըստ որում պաշտոններ զբաղելու բացառիկ իրավունքը վերապահվել է միայն ազնվազարմներին: Հատկանշական է և հետևյալ փաստը. պատմում էին, որ Մարթոնյան ճակատամարտում (490 թ. ն. թ. ա.), որի ժամանակ հույները հաղթանակ տարան պարսիկների դեմ, շատ աթենացիներ իբր թե տեսել են նրան սաղավարտը գլխին, նիզակ ու վահան առած, աթենացիների մարտաշարքի առջևում մարտնչելու: Այդ առասպելական պատմություններն օգտագործեցին արիստոկրատները. նրանց ներկայացուցիչ կիմոնը Սկիրոս կղզուց Աթենք բերել տվեց Թեսևսի մատուցները, որոնք, իհարկե, գոյություն չեն ունեցել, քանի որ Թեսևսն էլ իրականում գոյություն չի ունեցել:

2 Քաղաք Պելոպոնեսյան Արգոլիսում:

տղա ունեցաւ, բայց զա ոչ թե էգեսի, այլ Պոսելդոն աստծու զա-
վակն էր: Նորածնին Թեսևս անունը տվեցին: Թեսևսի ծնունդից
շատ շանցած էգես արքան պետք է լքեր Տրոյզները և Աթենք վե-
րադառնար: Հեռանալիս, էգեսն առավ իր սուրն ու սանդալները,
Տրոյզենի մերձակա լեռներում մի ժայռի տակ զրեց և այսպես
ասաց էթրեին:

— Երբ իմ որդին՝ Թեսևսը, այս ժայռը տեղից շարժելու և իմ
սուրն ու սանդալները հանելու զորութիւն ունենա, այն ժամանակ
նրան ինձ մոտ՝ Աթենք ուղարկիր: Իմ սրով ու սանդալներով ես
կճանաչեմ նրան:

Մինչև տասնվեց տարին լրանալը Թեսևսը դաստիարակութիւն
ստացավ իր պապի՝ Պիտիկոսի տանը: Իր իմաստուն խելքով հրո-
շակված Պիտիկոսը հոգում էր թոռան դաստիարակութիւն գործը և
հրճվում տեսնելով, որ նա ամեն ինչում գերազանցում է հասակա-
կիցներին: Բայց ահա լրացավ Թեսևսի տասնվեց տարին: Այդ
տարիքում արդեն ոչ ոք չէր կարող նրա հետ համեմատվել ո՛չ ու-
ժով, ո՛չ ճարտարութեամբ, ո՛չ էլ զենք բանեցնելով:

Գեղեցիկ էր Թեսևսը, հաղթահասակ էր ու բարեկազմ, սքան-
չելի աչքերի ջիւն հայացք ուներ և թուխ գանգուրներ, որոնք օղակ-
օղակ փարթամորեն թափվում էին ուսերին, իսկ առջևի՝ ճակատի
կողմից, գանգուրները կտրված էին, քանի որ պատանի հերոսը
զրանք նվիրաբերել էր Ապոլոնին: Հերոսի պատանեկան մկանուս
մարմինը նրա հզոր ուժի պերճախոս վկայութիւնն էր:

ԹԵՍԵՎՍԻ ՍԵՐՍՉՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԹԵՍԵՐ ՃԱՆԱԳԱՐԸ

Երբ տեսավ էթրեն, որ իր որդին ուժով գերազանցում է բո-
լոր հասակակիցներին, նրան բերեց այն ժայռի մօտ, որի տակ
թաղված էին էգեսի սուրն ու սանդալները, և ասաց.

— Որդի՛ս, այստե՛ղ, այս ժայռի տակն են քո հոր՝ Աթենքի
տիրակալ էգեսի սուրն ու սանդալները: Տեղից շարժիր ժայռը,
վերցրու սուրն ու սանդալները: Եվ զրանք այն նշանները կդառ-
նան, որոնց շնորհիվ հայրդ կճանաչի քեզ:

Թեսևսը հրեց ժայռը և դյուրութեամբ տեղահան արեց: Չեռ-
քըն առավ սուրն ու սանդալները, հրաձեշտ տվեց մորն ու պա-
պին և բռնեց Աթենքի հեռավոր ճամփան: Թեսևսը շուք մորը և

պապին, որոնք աղերսում էին ավելի անվտանգ՝ ծովային ճանա-
պարհն ընտրելու նա վճռեց Աթենք գնալ ցամաքով, Իսթմոսով:

Դժվար ճանապարհ էր զա, Թեսևսին վիճակվեց բազում
վտանգներ հաղթահարել իր ճանապարհին, բազում սխրանքներ
գործել: Տրոիսենի և էպիդալրոսի՝ սահմանազրկին արդեն հերոսը
հանդիպեց հսկա Պերիփետեսին՝ Հեփեստոս աստծո որդուն: Հսկա
Պերիփետեսը կաղ էր, ինչպես և նրա հայրը՝ Հեփեստոս աստվա-
ծը, բայց հուժկու բազուկներ ուներ և վիթխարի մարմին: Ահեղ էր
Պերիփետեսը: Դեռ ոչ մի ճամփորդ չէր անցել այն լեռներով, ուր
բնակութիւն էր հաստատել Պերիփետեսը: Հսկան սպանում էր բո-
լորին իր երկաթե գուրզով: Բայց Թեսևսը դյուրութեամբ պարտու-
թիւն մատնեց Պերիփետեսին: Դա հերոսի առաջին մեծագործու-
թիւնն էր և նա, ի նշանավորումն այդ հաղթանակի, վերցրեց
սպանված Պերիփետեսի երկաթե գուրզը:

Իր ճանապարհը, մինչև Իսթմոս, Թեսևսը շարունակեց առանց
վտանգների ենթարկվելու: Իսթմոսում, Պոսելդոն աստծուն նվի-
րաբերված եղևնու անտառում Թեսևսը հանգիպեց եղևնիներ կոաց-
նող Սինիսին: Սա մի կատաղի ավազակ էր: Ահավոր մահվան էր
մատնում բոլոր ճամփորդներին: Եղևնիները կոացնելով այնպես,
որ նրանց կատարները հասնեն միմյանց, Սինիսը տարաբախտ
ճամփորդին կապում էր այդ ծառերին ու բաց թողնում: Ահռելի
ուժով շտկվում էին եղևնիները և պատահաբար թշվառականի
մարմինը: Թեսևսը վրեժխնդիր եղավ բոլոր այն ճամփորդների
փոխարեն, որոնք Սինիսը կորստյան էր մատնել: Նա կապոտեց
ավազակին, իր զորեղ բազուկներով երկու վիթխարի եղևնի կոաց-
րեց, Սինիսին կապեց զրանց վրա ու եղևնիները բաց թողեց:
Մուլեզին ավազակը մատնվեց նույնպիսի մահվան, որին մատնել
էր բազում անմեղ ճամփորդների: Հիմա արդեն Իսթմոսի ճանա-
պարհն ազատ էր: Իսկ ավելի ուշ, ի հիշատակ իր այդ հաղթու-
թիւն, Թեսևսը իսթեմական խաղեր՝ հիմնեց հենց այն վայրում,
ուր պարտութեան էր մատնել Սինիսին:

1 Քաղաք Արգոլիսի հյուսիս-արևմտյան ծովափին:

2 Իսթեմական խաղեր — համահունկան տոնախմբութիւն, որ ամեն երկու
տարին մեկ անգամ անց էր կացվում կորնթական պարանոցում՝ Իսթմոսում: Մի
քանի օր տեղ այդ խաղերի ընթացքում տեղի էին ունենում ըմբշամարտի, վազ-
քի, բռնցքամարտի, սկավառակի ու երգակի նետան, ինչպես նաև երկանվի վազ-
քի մրցութիւններ:

Թեևսևսի հետագա ուղին անցնում էր Կրոմիոնի¹ միջով: Չորս բուրն ամբողջ շրջակայքն ամայացրել էր մի վիթխարի վայրի վարազ, որ Տիփոնի և էքիդնայի ծնունդն էր: Կրոմիոնի բնակիչներն աղերսեցին պատանի հերոսին, որ իրենց փրկի այդ հրեշից: Թեևսևսը հասավ վարազի հետևից և խողխողեց նրան իր սրով:

Թեևսևսը շարունակեց ճամփան: Իսթմոսի ամենավտանգավոր տեղում, Մեգարայի² սահմանների մոտ, այնտեղ, ուր պատի պես երկինք էին խոյացել երկնամբարձ ժայռերը, որոնց ստորոտում ասհեղորեն շառաչում էին ծովային փրփրաբաշ ալիքները, Թեևսևսը մի նոր վտանգի հանդիպեց: Ժայռի ամենածայրին բնակվում էր ավազակ Սկիրոնը: Մոտակայքով անցնող բոլոր մարդկանց ստիպում էր լվալ իր ոտքերը: Բայց հենց որ ճամփորդը կտանում էր Սկիրոնի ոտքերը լվանալու, դժնահոգի ավազակը ոտքի թփզին հարվածով տարաբախտին ժայռի վրայից նետում էր ծովի մրրկածուխի ալիքների մեջ, որտեղ նա ջախջախվում էր ջրի միջից ցցված սրածայր քարերին դարնվելով, իսկ նրա մարմինը խժուռում էր հրեշավոր կրիան: Երբ Սկիրոնն ուղում էր Թեևսևսին էլ ցած գցել ժայռից, հերոսը բռնեց ավազակի ոտքից ու նետեց ծովի կատաղի ալիքների մեջ:

Էլևսինից ոչ այնքան հեռու Թեևսևսին վիճակվեց կովի բռնվել Կերկիոնի հետ, այնպես, ինչպես որ Հերակլեսին էր վիճակվել պայքարի մեջ մտնել Անթեոսի հետ: Մեծազոր Կերկիոնը շատերին էր կորստյան մատնել, բայց Թեևսևսը, ոսոխին առնելով գրկի մեջ, սեղմեց նրան երկաթակուռ մամլակի պես, և սպանեց: Այսպիսով Թեևսևսն ազատություն պարգևեց նաև Կերկիոնի դստերը՝ Ալոպեին, իսկ Կերկիոնի երկրի իշխանությունը հերոսը հանձնեց Ալոպեի և Պոսեյդոնի որդուն՝ Հիպոթոոնին:

Անցնելով Էլևսինը և մոտենալով Կեփիսոս գետի հովտին, որ արդեն Ատտիկայում էր գտնվում, Թեևսևսը եկավ ավազակ Դամաստեսի մոտ, որին սովորաբար Պրոկրուստես (ձգող-երկարացնող) էին կոչում: Այս ավազակն էլ խոշտանգման մի շատ տանջալից հնար էր գտել իր մոտ եկող մարդկանց համար: Պրոկրուս-

¹ Քաղաք Իսթմոսում, Կորնթոսից ոչ հեռու

² Իսթմոսի հյուսիսում գտնվող մարզ, որ արևելքում սահմանակից է Ատտիկային:

տեսց մի մահիճ ուներ, որի վրա ստիպում էր մեկնվել բոլոր նրանց, ովքեր ձեռքն էին ընկնում: Եթե մահիճը շատ երկար էր գտառ գալիս, Պրոկրուստեսը տարաբախտին ձգում-երկարացնում էր այնքան, մինչև որ զոհի ոտքերը հասնեն մահճի ծայրը: Իսկ եթե մահիճը կարճ էր գալիս, ապա Պրոկրուստեսը կտրում էր զրթբախտի ոտքերը:

Թեևսևսը հենց իրեն՝ Պրոկրուստեսին, զլորեց մահճի վրա, բայց մահիճը, իհարկե, չափազանց կարճ եկավ հսկա Պրոկրուստեսին, և Թեևսևսը նրան սպանեց այնպես, ինչպես շարագործն էր սպանում ճամփորդներին:

Այդ եղավ Թեևսևսի վերջին սխրագործությունն Աթենքի ճանապարհին: Թեևսևսը չկամեցավ Աթենք գնալ Սինիսի, Սկիրոնի, Պրոկրուստեսի և մյուսների արյամբ պղծված¹: Եվ նա խնդրեց փիտալիդներին² կրոնական հատուկ ծեսերով մաքրագործել իրեն Ջև Մելիթոսի³ զոհասեղանի մոտ: Փիտալիդները հրճվանքով հյուրընկալեցին պատանի հերոսին: Նրանք ի կատար ածեցին Թեևսևսի խնդիրը և մաքրագործեցին նրան հեղած արյան պղծությունից: Այժմ արդեն Թեևսևսը կարող էր գնալ Աթենք, իր հոր՝ էգևսի մոտ:

ԹԵՍԵՎՍԸ ԱԹԵՆՔՈՒՄ

Իոնական երկարափեջ զգեստը հագին, շողալով իր գեղեցկությունը Թեևսևսն ընթանում էր Աթենքի փողոցներով: Փարթամ գանգուրները փռվել էին ուսերին: Պատանի հերոսն իր երկար զգեստով ավելի աղջկա էր հիշեցնում, քան այդքան մեծ սխրանքների գործած հերոսի: Թեևսևսին վիճակվեց անցնել Ապոլոնի կառուցվող տաճարի մոտով, որի վրա շինարարներն արդեն տանիք էին գցում: Տեսան շինարարները պատանի հերոսին, նրան աղջկա տեղ դրին և սկսեցին ծանակել նրան: Միծաղելով, ձայն էին տալիս շինարարները:

— Մի տեսե՛ք, մեն-մենակ, առանց ուղևկիցների, ինչ-որ

¹ Հույները գտնում էին, որ թափած արյունը պղծում է մարդուն, ուստի և ամեն մի մարդասպան պետք է մաքրագործման հատուկ ծեսեր կատարեր օրև աստծո զոհարանի մոտ:

² Հնետորգները Փիտալոս հերոսի, որն Էլևսինում հիմնել է միստերիաները՝ կրոնական հատուկ պաշտամունք ի պատիվ Դեմետրա աստվածուհու:

³ Մելիթոս եղանակում է ողորմած:

աղբիկ է թրև գալիս քաղաքում: Տեսե՞ք, թե բոլորին ցույց տալու համար վարսերը ո՞նց է շաղ տվել, իսկ երկար զգեստի փեշերով ո՞նց է սրբում փողոցի փողին:

Չայրագնած շինարարների ծաղր ու ծանակից, Քեսեւը մոտ վազեց եզներ լծած սայլին, արձակեց եզները, վեր առավ սայլը և նետեց այնքան բարձր, որ թռավ տաճարի տանիքին կանգնած շինարարների գլխի վրայով: Տեսնելով, որ նա աղբիկ չէ, այլ հուժկու զորության տեր պատանի հերոս՝ սոսկումով լցվեցին Քեսեւին ծանակող շինարարները: Կարծում էին, թե ուր որ է հերոսը դաժանորեն վրեժ կլուծի իրենցից ծաղր ու ծանակի համար, բայց Քեսեւն անվրդով շարունակեց իր ճամփան:

Վերջապես, Քեսեւը եկավ էզեսի պալատը: Իր դառամած հորը միանգամից շհայտնեց, թե ով է ինքը, այլ ասաց, թե պաշտպանություն որոնող մի օտարերկրացի է: Էզեսը շճանաչեց որդուն, բայց դրա փոխարեն կախարդ Մեդեան ճանաչեց: Կորնթոսից Աթենք փախչելով նա դարձել էր էզեսի կինը: Խորամանկ Մեդեան էզեսին խոստացել էր կախարդանքով ետ տալ նրա երիտասարդությունը և տեր ու տնօրինություն էր անում Աթենքի արքայի տանը, իսկ էզեսն ամեն բանում հնազանդվում էր նրան: Իսկույն կռահեց իշխանություն սիրող Մեդեան, թե ի՞նչ վտանգ է սպառնում իրեն, թե ո՞վ է իր պալատում հյուրընկալած սիրունատես օտարերկրացին: Իշխանությունից շղկվելու համար նա վճռեց կործանել հերոսին: Համոզեց էզեսին, որ Քեսեւին թունավորեն, զառամյալ թագավորին հավատացնելով, թե այդ պատանին թշնամու կողմից ուղարկված լրտես է: Հալից ընկած, ուժահատ էզեսը, երկյուղ կրելով իր իշխանությունը կորցնելուց, համաձայն եղավ շարագործությանը:

Հացկերությունից ժամանակ Մեդեան Քեսեւի առաջ դրեց թուխնավորված գինով լեցուն գավաթը: Հենց այդ պահին ինչ-որ պատճառով Քեսեւը դուրս քաշեց իր սուրբ: Էզեսն իսկույն ճանաչեց այն սուրբ, որ ինքն էր տասնվեց տարի առաջ գրել ժայռի տակ Տրոյլեն քաղաքի մոտ: Հայացքը գցեց Քեսեւի ոտքերին և տեսավ իր սանգալները: Այժմ արդեն հասկացավ, թե ո՞վ է օտարերկրացին: Թունավորված գինով լի բաժակը շուտ տալով, էզեսը գրկեց Քեսեւին՝ իր զավակին: Մեդեան վտարվեց Աթենքից: Նա իր որդու՝ Մեդոնոսի հետ միասին Մեդիա փախավ:

Ի լուր անենական ժողովրդի, էզեսը հանդիսավորությամբ

հայտարարեց որդու գալուստը և պատմեց այն մեծ սխրանքների գլխին, որ նա գործել էր Տրոյլենից Աթենք ընկած ճանապարհին: Ծնծում էին անթեանացիները՝ էզեսի հետ միասին, և բարձրագույն աղադակներով ողջունում իրենց ապագա արքային:

Այն լուրը, որ էզեսի որդին ժամանել է Աթենք, հասավ նաև էզեսի եղբոր՝ Պալանտոսի որդիներին: Թեսեսի գալուստամբ մարեց էզեսի մահից հետո Աթենքում իշխելու նրանց հույսը. չէ՞ որ նա հիմա արդեն օրինակյան ժառանգ ունեւր Դեմահոգի պալանյանները չէին կամենում զրկվել Աթենքի իշխանությունից: Եվ նրանք վճռեցին բռնություն տիրել Աթենքին:

Իրենց հոր գլխավորությամբ բոլոր տասնհինգ պալանյաններն արշավեցին Աթենքի վրա: Գիտե՞նալով Քեսեւի վիթխարի ուժը, նրանք հետեւյալ խորամանկությունը դիմեցին. պալանյանների մի մասն ակնհայտորեն շարժվեց դեպի Աթենքի պարիսպները, իսկ մյուս մասը զարան մտավ, որպեսզի անսպասելի հարձակում գործի էզեսի վրա: Բայց պալանյանների բանքեր կեսը նրանց ծրագիրը մատնեց Քեսեւին: Պատանի հերոսն իսկույնեթ վճռեց, թե ինչպես պիտի գործել: Նախ հարձակվեց զարանամտ պալանյանների վրա և բոլորին կոտորեց. նրանց շփրկեց ո՛չ ուժը, ո՛չ էլ քաջությունը: Երբ Աթենքի պարիսպների տակ կանգնած պալանյաններն առան իրենց հղբայրների կործանման լուրը, մի այնպիսի սարսափ պատեց նրանց, որ նրանք ամոթալի փախուստի դիմեցին: Այժմ արդեն, որդու պաշտպանության ներքո, էզեսը կարող էր հանդիստ իշխել Աթենքում:

Քեսեւը ըմնաց Աթենքում պորտաբույծ կյանք վարելու: Նա վճռեց Ատտիկան փրկել վայրի ցուլից, որ ամայացնում էր Մարաթոնի շրջակայքը: Էվրիսթեսի հրամանով այդ ցուլը Հերակլեսն էր կրեւեից Միկենն բերել ու ազատ արձակել այնտեղ: Յուլի այնտեղից Ատտիկա էր փախել և այդ ժամանակից ի վեր շարիք դարձել բոլոր երկրագործների համար: Քեսեւն աներկյուղ գնաց այդ նոր մեծագործությունն ի կատար ածելու: Մարաթոնի ճանապարհին նա հանդիպեց մի պառավ կնոջ՝ Հեկալեին: Սա ընդունեց հերոսին իբրև հյուրի և խորհուրդ տվեց սխրագործությունը կատարելու: առաջ զոհ մատուցել Ջեո-Փրկարարին, որպեսզի նա պահապան լինի հերոսին հրեշավոր ցուլի հետ վտանգավոր կռիվ մղելիս: Քեսեւը լսեց Հեկալեի խորհուրդը: Շատ շանցած՝ Քեսեւը գտավ ցուլին: Նիտվեց ցուլը հերոսի վրա, բայց նա բռնեց ցուլի

եղջյուրներէց: Թափ տվեց իրեն ցուլը, բայց անկարող եղավ դուրս
պրծնել հերոսի հզոր ձեռքերէց: Թեսևսը ցուլի գլուխը կռացրեց
դետնին, կապեց նրան, հնազանդեցրեց և տարավ Աթենք: Վերա-
դարձի ճանապարհին նրան չվիճակվեց կենդանի տեսնել Հեկա-
լին: Նա վախճանվել էր արդեն: Թեսևսը մեծամեծ պատիվներ
մատուցեց հանգուցյալին այն խորհրդի ու հյուրընկալութեան հա-
մար, որ այնքան մոտիկ անցյալում նա ցուլց էր տվել իրեն: Ծուլն
Աթենք բերելով, Թեսևսը նրան իբրև զոհ մատուցեց Ապոլոնին:

ԹԵՍՍՎՍԻ ՃԱՆԱԳԱՐԸ ՈՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊՒ ԿՐԵՏՏ

Երբ Թեսևսն Աթենք եկավ՝ ամբողջ Ատտիկան համակված էր
խորունկ վշտով: Երբորդ անգամն էր արդեն, որ Կրետից՝ հզորա-
զոր թագավոր Մինոսի կողմից, դեսպաններ էին գալիս հարկ պա-
հանջելու: Մանրագին ու ամոթալի էր այդ հարկը: Յուրաքանչյուր
ինը տարին մեկ աթենացիները պետք է Կրետե ուղարկեին յոթ
պատանի և յոթ աղջիկ: Այնտեղ նրանց կալանում էին Լաբիրին-
թոսի հսկայական պալատում, և ապա նրանց խժռում էր ահասար-
սուռ հրեշ Մինոտավրոսը, որ մարդկային մարմին ուներ և ցուլի
գլուխ: Մինոսն այդ հարկն աթենացիների վրա էր դրել, որովհետև
նրանք էին սպանել իր Անդրոգեոս որդուն: Արդեն երրորդ անգամն
էր, որ աթենացիները ստիպված էին լինում Կրետե ուղարկել այդ
սոսկալի հարկը: Նրանք արդեն սև առագաստներ էին կախել նավի
վրա իբրև Մինոտավրոսի մատաղահաս զոհերի սգո նշան:

Ականատես լինելով այդ համընդհանուր վշտին, պատանի
հերոս Թեսևսը վճռեց աթենացի պատանիների ու աղջիկների հետ
ուղևորվել Կրետե, ազատ արձակել նրանց և վերջ տալ այդ սոս-
կալի հարկատվութեանը: Իսկ հարկատվութեան վերջը տալու հա-
մար մի ելք կար միայն՝ սպանել Մինոտավրոսին: Ուստի և Թեսևսը
վճռեց մարտնչել Մինոտավրոսի դեմ. սպանել նրան կամ կորուստ-
յան մատնվել: Մայր զառամութեան հասած էգևսը լսել անգամ չէր
ուզում իր միակ որդու ուղևորութեան մասին, բայց Թեսևսը հաս-
տատ կանգնած էր իր վճռի վրա: Նա զոհ մատուցեց Դելփիքյան
Ապոլոնին՝ ծովագնացութեան հովանավորին, իսկ Դելփիքից մեկ-
նելուց քիչ առաջ, նրան գուշակութուն արվեց, որ այդ մեծագոր-
ծութեան մեջ նա իր համար հովանավոր ընտրի սիրո դիցուհի Ափ-

րոդիտին: Օգնութեան կոչ անելով Ափրոդիտին և զոհ մատուցե-
լով նրան, Թեսևսը ճանապարհ ընկավ:
Նավը բարեհաջող Կրետե կղզին հասավ: Աթենացի պատանի-
ներին ու աղջիկներին տարան Մինոսի մոտ: Մինոսատես պատանի
հերոսը գրավեց Կրետեի հզորագոր թագավորի ուշադրութունը:
Հերոսին նկատեց նաև Արիադնե արքայադուստրը, իսկ Թեսևսի
հովանավոր Ափրոդիտեն Արիադնեի սրտում ուժգին սեր զարթնեց-
րեց էգևսի պատանի որդու հանդեպ: Մինոսի դուստրը վճռեց օգ-
նել Թեսևսին. նրա մտքովն իսկ չէր կարող անցնել, որ պատանի
հերոսը կարող է Լաբիրինթոսում զոհ գնալ Մինոտավրոսին:
Մինոտավրոսի դեմ կովի գնալուց առաջ Թեսևսին վիճակվեց
ևս մի սխրագործութուն: Մինոսն անարգանք հասցրեց աթենացի
աղջիկներից մեկին: Թեսևսը պաշտպան կանգնեց աղջկան, բայց
իր ծագմամբ հզոր Կրետեի արքան սկսեց ծանակել Թեսևսին:
Ձայրացել էր, որ մի ինչ-որ աթենացի հանդգնում է հակառակվել
իրեն՝ Ձևսի որդուն: Թեսևսը հպարտ պատասխան տվեց արքային.
— Դու հպարտանում ես, որ Ձևսից ես սերում, բայց ես էլ
հասարակ մահկանացուի զավակ չեմ: Իմ հայրը մեծն երկրասա-
սան Պոսեյդոնն է, ծովի աստվածը:
— Եթե դու իրոք Պոսեյդոն աստծու որդին ես, ապա ուրեմն
ապացույց տուր և այս մատանին դուրս բեր ծովի հորձանու-
տից, — պատասխանեց Մինոսը Թեսևսին և ծովը նետեց ոսկե
մատանին:
Կոչ անելով իր հորը՝ Պոսեյդոնին, Թեսևսն աներկյուղ ծովի
ալիքների մեջ նետվեց բարձրագիթ ծովափից: Ուժգնորեն դեպի
վեր ցատեցին ծովի աղի ջրերը, և Թեսևսն անհետացավ ծովի
ալիքների մեջ: Սոսկումնահար նայում էին բոլորը հերոսին կա-
նող ծովին, և համոզված էին, որ նա էլ ետ չի գառնա: Հուսահա-
տութեամբ լեցուն կանգնել էր Արիադնեն. նա էլ էր համոզված, որ
Թեսևսը զոհ է գնացել հորձանուտին:
Իսկ Թեսևսին, հենց որ ալիքները միացան իրար նրա գըլ-
խավերը, բռնեց Տրիտոն աստվածը և մի ակնթարթում հասցրեց
Պոսեյդոնի ստորջրյա պալատը: Իր կախարդական ստորջրյա պա-
լատում Պոսեյդոնը հրճվանքով ողջունեց որդուն և նրան տվեց
Մինոսի մատանին, իսկ Պոսեյդոնի կինը՝ Ամփիտրիտեն, սքան-
չացած հերոսի գեղեցկութեամբ ու կորովով, Թեսևսի փարթամ
գանգուրներին ոսկեհուռ պսակ դրեց:

Տրիտոնը կրկին առավ Քեսևսին և ծովափ բերեց հենց այն-
տեղ, որտեղից հերոսը ծովն էր նետվել: Քեսևսն ապացուցեց Մի-
նոսին, որ ինքը Պոսեյդոնի՝ ծովի տիրակալի զավակն է: Յըն-
ծում էր Մինոսի դուստրը՝ Արիադենն, որ Քեսևսը ողջ առողջ ետ
է եկել ծովի հորձանուտից:

Բայց առավել վտանգավոր սխրագործությունը դեռ առջևում
էր. պետք էր սպանել Մինոտավրոսին: Այստեղ Քեսևսին օգնու-
թյան հասավ Արիադենն: Հորից ծածուկ Քեսևսին տվեց մի կտրուկ
սուր և թելի մի կծիկ: Երբ Քեսևսին և մյուս բոլոր դատապարտ-
յալներին տարան կաբիրինթոս, ուր նրանց պիտի պատառոտեր Մի-
նոտավրոսը, Քեսևսը պալատի մուտքի մոտ կապեց կծիկի ծայրը
և առաջ գնաց կաբիրինթոսի խճճված, անվերջանալի անցուղիներ
ով, որոնց միջից անհնար էր ելք գտնել: Աստիճանաբար արձա-
կում էր կծիկը, որպեսզի թելի օգնությամբ դանի վերադարձի ճամ-
փան: Ավելի ու ավելի հեռուն էր գնում Քեսևսը և, վերջապես,
հասավ այնտեղ, ուր Մինոտավրոսն էր գտնվում: Ահեղ մոնչյունով,
վիթխարի սուրսայր եղջյուրներով զարգարուն գլուխը կոացրած՝
Մինոտավրոսը նետվեց պատանի հերոսի վրա և մի ահավոր կռիվ
բռնկվեց: Մոլեգնահար Մինոտավրոսը մի քանի անգամ նետվեց
Քեսևսի վրա, բայց սա ետ մղեց նրան իր սրով: Վերջապես Քե-
սևսը բռնեց Մինոտավրոսի եղջյուրներից և իր կտրուկ սուրը
կուրծքը մխրճեց: Մինոտավրոսին սպանելով, Քեսևսը կծիկի
թելի օգնությամբ դուրս եկավ կաբիրինթոսից՝ իր հետ բերելով նաև
աթենացի բոլոր պատանիներին ու աղջիկներին: Մուտքի մոտ
նրանց ընդառաջ եկավ Արիադենն: Նա հրճվաքով ողջունեց Քե-
սևսին: Յնձում էին Քեսևսի փրկած պատանիներն ու աղջիկնե-
րը: Վարդե պսակներով զարդարված, հերոսին ու նրա հովանա-
վոր Ափրոդիտեին փառաբանելով, նրանք ինդագին շուրջապար
բունեցին:

Այժմ պետք էր հոգալ Մինոսի ցասումից փրկվելու մասին:
Քեսևսը շուտափույթ կարգի բերեց իր նավը և, կրետնցիների ափ
դուրս բերած բոլոր նավերի հատակը ճեղքելուց հետո շտապեց
բռնել իր վերադարձի ճամփան դեպի Աթենք: Արիադենն հետևեց
Քեսևսին, որին ջերմագին սիրում էր:

Վերադարձի ճանապարհին Քեսևսը նաքսոսի ափը դուրս
եկավ: Երբ Քեսևսն ու նրա ուղեկիցները հանգիստ էին առնում,
Քեսևսին երևում հայտնվեց գինու աստված Դիոնիսոսը և հա-

ղորդեց հերոսին, որ նա պիտի լքի Արիադենին Նաքսոսի ամալի
ափին, քանի որ աստվածները նրան կնություն են կանխատեսել
իրեն՝ Դիոնիսոս աստծու համար: Արթնացավ Քեսևսը և, վշտով
համակված, փութաց ճանապարհ ընկնել. շահողգնեց հակառակ
գնալ աստվածների կամքին: Դիցուհի դարձավ Արիադենն՝ Դիոնի-
սոսի կինը լինելով: Բարձրագուշ աղաղակներով ողջունեցին Արի-
ադենին Դիոնիսոսի ուղեկիցները և երգեցողությամբ փառաբա-
նեցին մեծ աստծո կնոջը:

Իսկ Քեսևսի նավը սև առագաստներով սուրաց լազուր ծովի
վրայով: Ահա արդեն հեռու-հեռվում երևաց Ատտիկայի ափը:
Արիադենի կորստյան վշտով տարված՝ Քեսևսը մոռացավ էղևսին
տված խոստումը՝ սև առագաստները սպիտակով փոխարինել, եթե
նա, հաղթանակ տանելով Մինոտավրոսի դեմ, բարեհաջող Աթենք
վերադառնա: Էղևսն սպասում էր որդուն: Այդքեր հառած ծովի հե-
ռուներին՝ նա կանգնել էր առափնյա բարձրադիր ժայռի գագա-
թին: Ահա հեռվում մի սև կետ երևաց, որ ափին մոտենալով
աճում էր շարունակ: Այդ նրա որդու նավն էր, որ ավելի ու ավելի
էր մոտենում ափին: Էղևսը նայում էր ակնդետ, տեսողությունը
լարելով.— ի՞նչ գույնի են առագաստները: Ո՛չ, արևի տակ չեն
փայլում ճերմակ առագաստները, սև են առագաստները: Ուրեմն,
կործանվել է Քեսևսը: Հուսակորույս էգևսը ժայռից ծովը նետեց
իրեն և զոհ գնաց ծովի ալիքներին. նրա անշունչ մարմինն էր լող,
որ ալիքները նետեցին ափ: Այդ ժամանակից ի վեր էգևսյան է
կոչվում այն ծովը, որին զոհ գնաց էգևսը:

Իսկ Քեսևսը հասավ Ատտիկայի ափերը և արդեն երախտիքի
դոհաբերություններ պիտի մատուցեր աստվածներին, երբ հան-
կարծ սոսկումով իմացավ, որ ի՛նքն է եղել հոր մահվան ակամա
պատճառը: Եվ վշտահար Քեսևսը մեծազույն պատիվներով հողին
հանձնեց հոր դին, իսկ թաղումից հետո ընդունեց Աթենքի իշխա-
նությունը:

ԹԵՍԵՎՈՒ ԵՎ ԱՄՍՁՈՆՈՒՆԻՆԵՐԸ

Քեսևսն իմաստուն կերպով իշխում էր Աթենքում: Բայց նա
հանգիստ կյանք չէր վարում, հաճախ էր լքում քաղաքը Հունաս-
տանի հերոսների մեծազործությունների մասնակիցը դառնալու
համար: Այսպես, Քեսևսը մասնակցեց կալիդոնյան որսին, արգո-

նաժողովների արշավանքին զեպի Կողբիս և Հերակլեսի արշավանքին՝ ընդդեմ ամազոնուհիների: Երբ նվաճեց ամազոնուհիների Քեմիսկիրա քաղաքը, Քեսևսը, որպես քաջության պարգև, իր հետ առավ ամազոնուհիների թագուհի Անտիոպին: Աթենքում Անտիոպեն Քեսևսի կինը դարձավ: Հերոսը ճոխ տոնախմբությամբ նշանավորեց իր հարսանիքը ամազոնուհիների թագուհու հետ:

Իսկ ամազոնուհիները մտադրվեցին վրեժխնդիր լինել հույներից իրենց քաղաքն ավերելու համար և փրկել Անտիոպին, ինչպես իրենք էին կարծում՝ ծանրազին զերությունից: Ամազոնուհիների մեծ զորաբանակը հրոսեց Ատտիկա: Աթենացիք ստիպված եղան ռազմաշունչ ամազոնուհիների ճնշման տակ ապաստան գտնել քաղաքի պարիսպների հետևում: Ամազոնուհիները մինչև իսկ քաղաք խուժեցին և բնակիչներին ստիպեցին թաքնվել անձատելի Ակրոպոլսում: Ամազոնուհիները ճամբար խփեցին անրոպագոսի բլրի վրա և պաշարեցին աթենացիներին: Նրանք մի քանի անգամ փորձեցին քաղաքի միջից դուրս գալ գրոհի և հալածել ահարկու ռազմուհիներին: Վերջապես տեղի ունեցավ վճռական ճակատամարտը:

Անտիոպեն ևս Քեսևսի կողքին մարտնչում էր նույն այն ամազոնուհիների դեմ, որոնց թագուհին էր առաջ: Անտիոպին չէր ուզում լքել իր հերոս ամուսնուն, որին ջերմորեն սիրում էր: Այդ ահեղ ճակատամարտում Անտիոպին կործանում էր վիճակված: Օղի մեջ փայլատակեց ամազոնուհիներից մեկի նետած նիզակը, որի մահաբեր ծայրը մխրձվեց Անտիոպի կուրծքը, և նա անշնչացած ընկավ իր ամուսնու ոտքերի մոտ: Երկու զորաբանակներն էլ սոսկումով էին նայում մեռած Անտիոպին: Վշտահար Քեսևսը խոնարհվեց կնոջ դիակի վրա: Արյունահեղ ճակատամարտն ընդհատվեց: Խորին վշտով համակված՝ ամազոնուհիներն ու աթենացիները հողին հանձնեցին երիտասարդ թագուհուն: Ամազոնուհիները թողին Ատտիկան և ետ դարձան իրենց հեռավոր հայրենիքը: Աթենքում դեռ երկար ժամանակ ողբում էին անժամանակ դոհված զեղանի Անտիոպի կորուստը:

Քեսալիսում ապրում էր ռազմաշունչ լապիթների՝ ցեղը, որին իշխում էր մեծագոր հերոս Պերիթոսը: Նրան հասել էր անպարտելի Քեսևսի մեծ ուժի ու խիզախության հուշակը, և նա կամենում էր շափվել նրա հետ: Քեսևսին մարտի կանչելու համար Պերիթոսը ուղևորվեց Մարաթոն և այնտեղի փարթամ արոտավայրերից հափշտակեց Քեսևսին պատկանող ցուլերի նախիրը: Այդ լուրն առնելուն պես Քեսևսը փութաց հետապնդել հափշտակողին և շատ շանցած, հասավ հետևից:

Երկու հերոսները ելան դեմ-հանդիման: Շողշողուն սպառազինությամբ, ասես ահեղ ու անմահ աստվածներ, նրանք կանգնել էին իրար դիմաց: Երկուսն էլ ապշել էին միմյանց վսեմությամբ, երկուսն էլ՝ հավասարապես կորովի, երկուսն էլ՝ հզոր ու զեղեցիկ: Նրանք նետեցին զենքերը և, իրար ձեռք մեկնելով, միմյանց հետ սերտ ու անխախտ դաշն կնքեցին և, ի նշան դրա, զենքերը փոխանակեցին: Այսպես ընկերներ դարձան երկու մեծ հերոսները՝ Քեսևսը և Պերիթոսը:

Այդ հանդիպումից շատ շանցած Քեսևսը ուղևորվեց Քեսալիս իր ընկերոջ՝ Պերիթոսի և Հիպոդամիայի հարսանիքին մասնակից լինելու: Եթեղ էր հարսանիքը: Շատ պանծալի հերոսներ էին հավաքվել Հունաստանի բոլոր ծայրերից: Հարսանիքին հրավիրված էին նաև վայրի կենտավրոսները՝ կես մարդու և կես ձիու կերպարանքով: Ծոխ էր հարսանեկան խրախճանքը: Արքայական պալատը լի էր հյուրերով, որոնք թեք էին ընկել խնջույքի սեղանների շուրջը, իսկ հյուրերի մի մասը, — քանի որ հարսանիքի եկած բոլոր հյուրերի համար պալատում բավականաչափ տեղ չկար, — խրախճանք էր անում մի մեծ ու զովաշունչ անձավում: Անուշահատությամբ էր ծխում, հնչում էին հարսանեկան հիմներն ու երաժշտությամբ, խրախճանք անողների ցնծագին կանչերը: Բոլորը փառաբանում էին փեսային ու հարսնացուին, որը երկնային աստղի պես շողում էր բոլորի մեջ իր զեղեցկությամբ: Ուրախ խրախճանք էին անում հյուրերը: Գետի պես հոսում էր ռիսին: Ավելի ու ավելի ուժգին էին հնչում խրախճանքի կանչերը: Մեկ էլ հանկարծ, գինով արբեցած, տեղից վեր թռավ կենտավրոսներից ամենազորեղն ու վայրեն՝ էվրիտոսը, և նետվեց հարսնացուի վրա: Խլեց նրան

¹ Լապիթներ — առասպելական ժողովուրդ:

իր հուժկու բազուկներով և ուղեց հափշտակելու Այդ տեսնելով, մյուս կենսավորոսներն էլ նեավեցին հարսուներթի եկած մյուս կանանց վրա: Ամեն մեկն ուզում էր իր ավարն ունենալ: Խրախճանքի սեղաններից ելան Քեսևը, Պերիթոսը և հունական մյուս հերոսները, կովի նեավեցին ի պաշտպանութուն կանանց:

Խնջուլքն ընդհատվեց, սկիզբ առավ մոլեղին կոխվը: Զինքով չէ, որ հերոսները կոխվ էին տալիս կենսավորոսների հետ: Նրանց անզեն էին եկել խրախճանքի: Ամեն ինչ զենքի տեղ էր ծառայում այդ մարտի ընթացքում. ծանրագին գավաթներ, զինու մեծ սափորներ, ջարդված սեղանների ոտքեր, ետտանիներ, որոնց վրա բիշ առաջ ախորժալի բուրմունք էր ծխում,— ամեն, ամեն ինչ գործի դրվեց: Քայլ առ քայլ հերոսները խրախճանքի սրահներից դուրս էին մղում կենսավորոսներին, բայց մարտը շարունակվում էր նաև դուրսը: Հունական հերոսները հիմա արզեն մարտնչում էին զենքը և վահանը ձեռքներին: Իսկ կենսավորոսները ծառեր էին արմատախիլ անում, ահագին ժայռեր պոկում ու նեւում հերոսների վրա: Հերոսների առջևից մարտնչում էին Քեսևը, Պերիթոսը, Պելևսը, Նեստորը՝ Պելևսի որդին: Կենսավորոսների դիակները արնաթաթավ ըլտրն ավելի ու ավելի էր կուտակվում: Իրար հետևից գետին էին տապալվում կենսավորոսները: Վերջապես շղիմացան նրանք և փախուստի դիմեցին,— թաքնվեցին բարձրաբեր Պելիոնի անտառներում:

Հունաստանի հերոսները պարտության մատնեցին վայրի կենսավորոսներին. ահավոր այդ մարտում նրանցից բըրը փրկություն գտան:

ՀԵՂԻՆԻ ԱՌԵՎԱՆԳՈՒՄԸ: ԹԵՍԵՎՍԸ ԵՎ ՊԵՐԻՓՈՍԸ
ՎՃՈՌԻՄ ԵՆ ԱՌԵՎԱՆԳԵԼ ՊԵՐՍԵՓՈՆԵՆ: ԹԵՍԵՎՍԻ ՄԱՇԸ:

Երկար կյանք շունեցավ Պերիթոսի գեղանի կինը՝ Հիսյոզա՝ միան, վախճանվեց իր գեղեցկության ծաղկման ժամանակ: Զրկվելով ամուսնուց, Պերիթոսը ողբաց կնոջ կորուստը և, մի որոշ ժամանակ անց, վճռեց կրկին ամուսնանալ: Ուղևորվեց Աթենք, իր ընկերոջ՝ Քեսևսի մոտ: Նրանք վճռեցին առևանգել գեղանի Հեղինեին: Սա տակավին գեռատի աղջիկ էր, բայց գեղեցկության փառքը թնդում էր բովանդակ Հունաստանում: Ընկերները ծածուկ կակոնիա հասան և առևանգեցին Հեղինեին, երբ նա իր ընկերուհիների հետ միասին ուրախ-ուրախ պարում էր Արտեմիսի տոնախմբու-

թյանը: Թեսևսը և Պերիթոսը հափշտակեցին Հեղինեին և շուտափույթ Արկադիայի լեռները տարան, իսկ այնտեղից, Կորնթոսի ու Իսթմոսի միջով բերին Ատտիկա, Աթենքի միջնաբերդը: Սպարտացիները նեավեցին հետապնդելու, բայց անկարող եղան հասնել առևանգողներին: Հեղինեին թաքցնելով Աթենքում, ընկերները վիճակ գցեցին, թե ում պիտի պատկանի հրաշք գեղեցկուհին: Վիճակն ընկավ Քեսևսին: Բայց դեռ առաջուց ընկերները միմյանց 'երդում էին ավել, որ նա, սա կհասնի գեղազանգուր Հեղինեն, պետք է օգնի մյուսին կին գտնել:

Երբ Հեղինեն վիճակվեց Քեսևսին, Պերիթոսը պահանջեց ընկերոջից, որ նա օգնի իրեն կնության անելու Պերսեփոնեին՝ ահեղ Հադես աստծու, հանգուցյալների սավերների թագավորության տիրակալի կնոջը: Սոսկումը պատեց Քեսևսին, բայց ի՞նչ կարող էր անել: Երդում էր ավել, անկարող էր խախտել տված երդումը: Ստիպված եղավ ուղեկցել Պերիթոսին գեպի հանգուցյալների թագավորությունը: Աթենքից ոչ հեռու, Կոլունոս գյուղի մոտ գտնվող մթին կիրճի միջով ընկերներն իջան ստորերկրյա թագավորությունը: Այնտեղ, սոսկումների թագավորության մեջ, երկու ընկերները կանգնեցին Հադեսի հանդիման և պահանջեցին իրենց տալ Պերսեփոնեին: Ահեղորեն զայրացավ հանգուցյալների թագավորության զմնադեմ տիրակալը, բայց թաքցրեց ցասումը և հերոսներին առաջարկեց նստել զահին, որ փորված էր մեռյալների թագավորության ճիշտ մուտքի մոտ գտնվող ժայռի մեջ: Գահին նստելուն պես հերոսները կպան նրանից և այլևս չկարողացան տեղներից շարժվել: Հադեսն այդպես պատժեց հերոսներին՝ նրանց անարգ պահանջի համար:

Մինչ Քեսևսը մնում էր Հադեսի թագավորության մեջ, գեղեցիկ Հեղինեի եղբայրները՝ Կաստորը և Պոլիդեկեսը, ամենուրեք փնտրում էին իրենց քրոջը: Ի վերջո, նրանք իմացան, թե ո՞րտեղ է թաքցրել Քեսևսը Հեղինեին: Իսկույն ևեթ պաշարեցին Աթենքը: Անառիկ բերդը շղիմացավ պաշարմանը: Կաստորն ու Պոլիդեկեսը առան բերդը, ազատեցին իրենց քրոջը և իրենց հետ գերի տարան Քեսևսի մոտը՝ էթրեին: Իսկ Աթենքի և բովանդակ Ատտիկայի իշխանությունը Կաստորն ու Պոլիդեկեսը հանձնեցին Մենեսթևսին՝ Քեսևսի հին թշնամուն: Քեսևսը երկար մնաց Հադեսի թագավորության մեջ: Մանրագին տառապանքներ կրեց այնտեղ, մինչև որ, վերջապես, ազատեց նրան Հերակլեսը՝ հերոսներից վսեմագույնը:

Թեևս կրկին լույս աշխարհ դուրս եկավ, բայց դա նրան ճշմարտ չբերեց: Անառիկ Աթենքն ավերված էր, Հեղինեն՝ ազատված, մայրը Սպարտայում տանջալից գերության մեջ էր, զավակները՝ Դեմոփոնը և Ակամանթոսն ստիպված էին եղել փախչել Աթենքից, իսկ ամբողջ իշխանությունը գտնվում էր ատելի Մենեսթևսի ձեռքին: Եվ Թեևս կրկին Ատտիկան ու հեռացավ էվրեա կղզին, ուր նա հողեր ուներ: Հիմա արդեն դժբախտությունն էր դարձել Թեսևսի ուղեկիցը: Սկիրոսի թագավոր Լիկոմեդեսը չկամեցավ Թեսևսին տալ նրա ունեցվածքը. նա մեծ հերոսին խաբուսյամբ տարավ բարձրաբերձ ապառաժի վրա և այնտեղից հրեց ու ծովը նետեց: Այսպես, դավաճան ձեռքով զոհ գնաց Ատտիկայի մեծագույն հերոսը: Միայն շատ տարիներ անց, երբ Մենեսթևսն արդեն վախճանվել էր, Թեսևսի որդիները վերադարձան Աթենք՝ դեպի Տրոյա կատարած արշավանքից հետո: Այնտեղ, Տրոյայում Թեսևսի որդիները գտան նրա մորը՝ էթրեին: Նրան, իբրև ստրուկի, այնտեղ էր տարել Պրիամոսի որդի Պարիսը՝ առևանգած Հեղինեի հետ միասին:

ՄԵԼԵԱԳՐՈՍ:

Կալիդոնի¹ արքա Օյնեսը՝ Մելեագրոս հերոսի հայրը, շարժել էր մեծ դիցուհի Արտեմիսի զայրույթը: Մի անգամ, իր այգիներում տոնելով բերքահավաքը՝ մեծամեծ զոհեր է մատուցել օլիմպական աստվածներին և միայն Արտեմիսին է, որ զոհաբերությունն չէր

արել: Դրա համար Արտեմիսը պատժեց Օյնեսին: Նրա երկիրն ուղարկեց մի ահեղ վարազ: Վիթխարի վարազը կատաղորեն ամալացնում էր Կալիդոնի ամբողջ շրջակայքը: Հրեշավոր ժանիքներով արմատախիլ էր անում ծառերը, ոչնչացնում խաղողի այգիները և քնքուշ ծաղիկներով պատած խնձորենիները: Վարազը մարդկանց էլ չէր խնայում, եթե նրանք պատահում էին նրա ճանապարհին: Սուգ էր տիրում Կալիդոնի շրջաօրով: Եվ այդ ժամանակ Օյնեսի որդին՝ Մելեագրոսը, ականատես լինելով բուրբին համակած վշտին, վճռեց շուրջկալի մեջ առնել վարազին ու սպանել: Այդ վտանգավոր որսին նա ձեռնամուխ եղավ, հավաքելով Հունաստանի շատ հերոսներին: Որսին մասնակից եղան Սպարտայից՝ Կաստորն ու Պոլիդեկեսը, Աթենքից՝ Թեսևսը, Փերեից՝ Ադամետոս արքան, Յուլոսից՝² Յասոնը, Թերեից՝ Իոլայոսը, Թեսալիայից՝ Պերիթոոսը, Փոնտոսից՝ Պելեոսը³, Սալամիս³ կղզուց՝ Տելամոնը և բազում ուրիշ հերոսներ: Որսին ներկայացավ նաև Արկադիայից եկած Ատլանտեն՝ արագավազ, ինչպես ամենաարագոտն եղնիկը: Նա լեռներումն էր առել իր դաստիարակությունը: Նրա ծնվելուց հետո հայրն իսկույն հրամայել էր լեռները տանել մանկանը, քանի որ չէր կամենում աղջիկ զավակ ունենալ: Այնտեղ, կիրճի մեջ, նրան արջն էր սնուցել, նա որսորդների մեջ էր մեծացել: Իբրև որսորդ, Ատլանտեն հավասար էր մինչև իսկ Արտեմիսին:

Ինն օր հավաքված հերոսները խրախճանք արին հյուրասեր Օյնեսի տանը: Վերջապես գնացին վարազին որսալու: Շրջակա լեռները թնդացին շների մեծաթիվ ոճմակների հաշոցներից: Ենթադրվում էր, որ վարազին և հետապնդեցին զազանին: Ահա երեկաց շներից հալածվող վարազը քամու պես սուրալիս: Որսորդներն ընկան հետևից: Նրանցից յուրաքանչյուրն շտապում էր խոցել վարազին իր նիզակով, բայց դժվար էր կովել հրեշավոր վարազի դեմ, որսորդներից շատերն էին տեսել նրա ահավոր ժանիքների ուժը: Վարազն իր ժանիքներով մահացու վերք հասցրեց աներկյուղ որսորդ՝ Արկադիայից եկած Անքեոսին, երբ նա, ճոճելով

¹ Մելեագրոսի առասպելում հետաքրքրական է հետևյալը. հերոսի մայրը՝ Ալփեան, իմանալով, որ նա մարտի ժամանակ սպանել է իր՝ Ալփեայի եղբորը, աստվածներին աղերսում է պատժել որդուն, և Ապոլոնն սպանում է Մելեագրոսին: Մի՞թե Մելեագրոսի հանցանքն այնքան մեծ է, որ հարազատ մայրը նշովում և մահվան է դատապարտում իր միակ զավակին: Դա կարելի է բացատրել այն բանով, որ առասպելը մայրական իրավունքի ժամանակաշրջանի վերապրուկ է, երբ մորեղբայրը մոր ամենամոտ բարեկամն էր, իսկ ամենամոտ բարեկամի սպանության համար պետք էր վրեժ լուծել: Մելեագրոսի առասպելը, իբրև ապացույց, որ հնագույն ժամանակներում հույների մեջ զույրություն է ունեցել մայրական իրավունքը, օգտագործել է Ֆ. Էնգելը «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատության մեջ:

² Քաղաք էվենոս գետի ափին էտոլիա մարզում (Միջին Հունաստանի արևմուտքում):

¹ Տես 2-րդ մասը՝ «Արգոնավորդներ»:

² Տես 2-րդ մասը՝ Տրոյական շարք, «Պելեոս և Փերեոս»:

³ Կղզի Ատտիկայի ափերին, Սարոնիկյան նեղուցում: Հայտնի է հույն-պարսկական ծովային ճակատամարտով (ն. թ. ա. 480 թ.):

իր երկսայր տասարը, ուղում էր սպանել վարազին: Այդ ժամանակ Ատլանտեն լարեց իր պիրի աղեղը և իր սուրսայր նետն արձակեց վարազի վրա: Այդ պահին վրա հասավ նաև Մելեագրոսը: Նիղակի հուժկու հարվածով նա սպանեց վիթխարի վարազին: Ավարտվեց որսը: Քոլորն ուրախ էին այդ հաջողութեամբ:

Բայց ո՞ւմ պիտի հասնի պարգևը: Բազում հերոսներ էին մասնակցել որսին: Նրանցից շատերն էին վարազին վիրավորել սուրսայր նիզակներով: Վեճ սկսվեց պարգևի համար, իսկ Արտեմիս աստվածուհին, զայրացած Մելեագրոսի վրա՝ իր վարազին սպանելու համար, ավելի բորբոքեց երկպառակութունը:

Պառակտութունը, ի վերջո, պատերազմ առաջ բերեց էտոլացիների՝ Կալիդոնի բնակիչների և կուրետների, հարևան՝ Պլերոն, քաղաքի բնակիչների միջև: Քանի զեռ Մելեագրոսը մարտնչում էր էտոլացիների կողմում՝ հաղթանակը նրանցն էր:

Ինչպես պատահեց, մարտի թռհուրոհի մեջ, Մելեագրոսն սպանեց իր մոր՝ Ալփեայի եղբորը: Վշտացավ Ալփեան սիրասուն եղբոր մահվան լուրն առնելով: Մոլեգին ցասում համակեց նրան, և որ իմացավ, որ եղբայրը զոհ է գնացել որդու՝ Մելեագրոսի ձեռքով: Ցասումով լցված որդու հանդեպ՝ Ալփեան աղերսեց խավարադեմ Հագես աստծուն ու նրա կնոջը՝ Պերսեփոնեին, որ պատժեն Մելեագրոսին: Զայրույթից խելակորույս՝ նա վրիժառու էրինիններին կոչ էր անում լսել իր աղերսանքները: Մելեագրոսը զայրացավ, իմանալով, որ հարազատ մայրը իր որդու՝ Մելեագրոսի կործանմանն է ձգտում և հետո քաշվեց ճակատամարտից: Տրտմաթախիժ գլուխը ձեռքին հակած՝ նստել էր նա իր կնոջ՝ գեղանի Կլեոպատրայի օթարանում: Հենց որ Մելեագրոսը դադարեց էտոլացիների շարքերում մարտնչելուց՝ հաղթանակն այլևս ուղեկից չեղավ նրանց: Հիմա էլ կուրետներն էին հաղթողը: Նրանք արդեն պաշարել էին մեծահարուստ Կալիդոնը: Կործանում էր սպառնում Կալիդոնին: Զուր էին Կալիդոնի ծերերն աղերսում Մելեագրոսին, որ ռազմի գաշտ վերադառնա: Հերոսին մեծ պարգև խոստացան, բայց նա չլսեց նրանց խոսքը: Մինչև իսկ Մելեագրոսի զառամյալ հայրը՝ Օյնևսը, եկավ Մելեագրոսի կնոջ՝ Կլեոպատրայի օթարանը. ծեծեց օթարանի փակ դուռը և որդուն պաղատեց մոռացություն տալ զայրույթը. չէ՞ որ նրա հարազատ Կալիդոնն էր կործանվում: Հորն էլ չլսեց Մելեագրոսը: Նրա օգնությունն աղերսեցին

և՛ բուլբը, և՛ մայրը, և՛ սիրելի ընկերները, բայց Մելեագրոսն անզրգվելի էր:

Մինչ այդ, կուրետներն արդեն տիրել էին Կալիդոնի պարիսպներին: Արդեն հրի էին մատնում քաղաքի աները, ձգտելով ամենայն ինչ հրո ճարակ դարձնել: Վերջապես հարվածներից ցնցվեցին նաև այն օթարանի պատերը, որ Մելեագրոսն էր գտնվում: Եվ նրա զենուսի կիևը, սոսկումնաճար, ծնկաչոք նետվեց ամուսնու տուաչ և պաղատեց, որ քաղաքը փրկի կործանումից: Աղերսեց միտք անել այն շար ճակատագրի մասին, որ կվիճակվի և՛ քաղաքին, և՛ պարտվածներին, հիշել, որ հաղթողները կանանց ու երեխաներին տանելի ստրկություն կտանեն: Մի՞թե նա ուղում է, որ նույն ճակատագիրը վիճակվի և իրեն: Հզորագոր Մելեագրոսը անսաց կնոջ պաղատանքին: Փութաջան վրան առավ շողշողուն զենք ու զրահը, գոտեռովեց սրով, ձեռքն առավ իր վիթխարի վահանն ու նիզակը: Եվ մխրճվեց Մելեագրոսը ճակատամարտի մեջ, ետ մղեց կուրետներին, փրկեց հայրենի Կալիդոնը: Բայց կործանում էր սպառնում նաև իրեն՝ Մելեագրոսին: Հանգուցյալների ստվերների թագավորությունն աստվածները լսեցին Ալփեայի նզովքները: Ընկավ Մելեագրոսը՝ մահացու վերք ստացած Ապոլոն աստծու ոսկեձուլլ նետից, և Մելեագրոսի հոգին սավառնեց զեպի ստվերների վշտալի թագավորությունը¹:

ԿԵՆԿՈՍ ԵՎ ԱԼՔԻՈՆՆ

Կենկոսը՝ լուսաստղի աստված Յուսթրի որդին, Տրաքիենի² արքան էր: Նրա կինը զեղանի Ալքիոնենն էր, բամու աստված էր լուսի գուտարը: Մի անգամ, վախեցած ահեղ կանխանշաններից, Կենկոսը վճռեց ուղևորվել Դելփիքյան սրբավայրը՝ Ապոլոն աստ-

¹ Մելեագրոսի մահվան մասին եղել է նաև հետևյալ պատմությունը: Մելեագրոսի ծնվելուն պես, մոր՝ Ալփեայի մոտ են գալիս ճակատագրի աստվածների մոյրաները և նրանցից մեկն ասում է. «Քո որդին մահ կզտի այն ժամանակ, երբ ահա այս խանձողն այրվի խարույկի մեջ»: Լսելով այդ, Ալփեան խսկույն հանգցնում է խանձողը, պահում զորոցի մեջ և խեղճով թաքցնում: Եվ ահա, երբ Մելեագրոսը ճակատամարտի ընթացքում սպանում է մերկորը, նա մտաբերում է մոյրաների կանխագուշակությունը: Զայրացած որդու վրա՝ դուրս է բերում խանձողը զորոցից և այրում: Հենց որ այրվում, մոխրանում է խանձողը՝ Մելեագրոսի մահը վրա է հասնում:

² Քաղաք Թեսալիայի հարավում, Մալեյան ծոցի ափին:

ծուց հարցում անելու ապագայի մասին: Կեիկոսը չէր կարող ցածաբային ճամփով զնալ, քանի որ այդ ճանապարհը բռնել էին փլեզրիացիները¹, և վճռեց ծովով զնալ: Երբ Կեիկոսն իր վճիռը հայտնեց կնոջը՝ Ալքիոնեին, ապա սոսկումը տիրեց նրան: Զուր էր Ալքիոնեն աղերսում ամուսնուն, որ տանը մնա, իր բախտը չապավինի ծովին ու ծովային քամիներին: Էդուսի դուստրը գիտեր, թե որքան ահեղ են անծայրածիր ծովում մոլեգնող քամիները: Զուր էր աղերսում, որ իրեն էլ տանի, եթե Կեիկոսն իրոք վճռել է հեռավոր նավարկություն սկսել: Նա ուզում էր ամուսնու բախտակիցը լինել, ամուսնու հետ կրել այն ամենը, ինչ որ ճակատագիրը ծովագնացության ընթացքում կվիճակի նրան: Բայց Կեիկոսը չփոխեց իր վճիռը: միայն խոստում տվեց կնոջը՝ վերագանալ ավելի վաղ, քան լուսինը երկու անգամ նորած կլինի:

Նավը ծովն իջեցրին: Կեիկոսն արդեն ուզում էր ճանապարհը ընկնել, բայց Ալքիոնեն չէր կարողանում բաժանվել ամուսնուց, նա մեծ տարաբախտություն էր կանխագգում: Լալիս էր Ալքիոնեն Կեիկոսին գիրկն առած: Վերջապես քնքշությանը աղատվեց կնոջ գրկից ու վերջին անգամ ասաց նրան.

— Մնաս բարո՛վ:

— Մնաս բարո՛վ,— հազիվ լսելի շշնջաց վշտով լեցուն Ալքիոնեն:

Կեիկոսը նավ ելավ: Համերաշխ թափով թիակները շարժեցին երիտասարդ թիավարները. արագորեն սուրաց նավը ծովի ալիքների վրայով: Արցունքով լի աչքերով հետևում էր նրան Ալքիոնեն և տեսնում, թե Կեիկոսն ինչպես է նավի վրայից իր վերջին ողջույնը հղում: Հեծկլտալով, Ալքիոնեն պալատ մտավ:

Ավելի ու ավելի հեռու էր ընթանում նավը: Համընթաց քամին փրում էր առագաստները: Մովը թեթևակի հուզվում էր: Կարծես թե ամեն ինչ երջանիկ նավարկություն էր գուշակում: Վրա հասավ գիշերը, ճանապարհի կեսը կտրել էին արդեն: Հանկարծ ծովի վրա փչեց հարավային մոլեգին քամին: Սևակնեց ծովը, և գլորվեցին փրփրաբաշ ալիքները: Նավավարը դուր էր առագաստներն ամրացնելու հրաման տալիս. չէին լսվում նրա հրամանները, փոթորկի շառաչը խլացնում էր նրա ձայնը: Ավելի ու ավելի ուժգին էին դառնում քամու պոռթկումները: Բուր կողմերից վրա էին

հասնում քամիները և մոլեգնաբար սուրում ծովի վրայով: Եռում, տնում էր կատաղի հողմը: Ավելի ու ավելի վեր էին խոյանում ալիքները, ասես ուզում էին երկինք հասնել: Իսկ երկինքը պատած էր սև ամպերով: Խավարը գնալով թանձրանում էր. խավարը ճեղքում էին կայծակի փայլատակումները՝ մի պահ լուսավորելով ահեղ ալիքները: Անձրևի հեղեղը հորդաց սև ամպերից: Նավն անկարող էր դիմադրավել ահավոր փոթորկին, ջուրը լցվում էր նրա մեջ: Կործանումն այլևս անխուսափելի էր: Կեիկոսն ականատես էր դրան, բայց միայն Ալքիոնեի մասին էր մտածում նա, միայն նրա անունն էին շշնջում նրա շուրթերը: Ահեղորեն խոյացավ մի վիթխարի ալիք, փուլ եկավ նավի վրա և փշուր-փշուր արեց այն: Կեիկոսը հազիվ հասցրեց կպչել նավի բեկորից, բայց դա էլ չփրկեց նրան, ծովային ալիքները կլանեցին նրան:

Երկար սպասեց Ալքիոնեն Կեիկոսի վերադարձին, օլիմպական աստվածներին աղերսեց երջանիկ նավարկություն շնորհել ամուսնուն, Հերային էլ պաղատեց, որ ամուսնունն ետ դարձնի երջանիկ ու քաջաողջ: Իսկ Հերան չէր ուզում, որ Ալքիոնեն իրեն աղերսանք աներ զոհված մարդու համար: Ամպրոպային Զևսի մեծանուն ամուսինն իր մոտ կանչեց Իրիսին և հրամայեց թռչել քնի աստված Հիպնոսի մոտ և ասել, որ Ալքիոնեին երազի մեջ հայտնի դարձնի Կեիկոսի կործանման եղելությունը:

Իր ծիածանային թևերով սուրաց Իրիսը ծայրագույն արևմուտք, Հիպնոսի կացարանը: Իսկույն հասավ խորունկ անձավին, ուր երբեք չէր թափանցում արևի ճառագայթը: Լուսություն էր տիրում և՛ անձավում, և՛ նրա շուրջը: Անձավի մուտքի մոտ մի առվակ էր կամացուկ խոխոջում և այդ խոխոջունը քնով էր համակում ունկնդիրներին: Անձավի մոտ փարթամորեն աճել էին կակաչն ու քնաբեր բույսերը: Ամենուրեք քուլա-քուլա սևամած մառախուղ էր, շորսրուրն ամեն ինչ ընկղմված էր թանձր աղջամուղջի մեջ: Իրիսը մտավ մթին անձավը և շողաց իր ծիածանային փայլով: Անձավում բուն էր մտել Հիպնոսը, իսկ նրա շուրջը երազներ էին լցված, և այնքան շատ, ինչպես անտառի տերևները, ինչպես բերրի արտի հասկերը: Իր սև մահճի վրայից մի թեթև բարձրացավ Հիպնոսը, դժվարությամբ բաց արեց իր փակ աչքերը և հարցրեց Իրիսին, թե ինչու է եկել: Հաղորդեց Իրիսը մեծն Հերայի արձակած հրամանը: Քնի աստվածն իր մոտ կանչեց իր Մորփեոս որդուն և հրամայեց, որ նա ի կատար ածի Հերայի կամքը:

¹ Առասպելական ժողովուրդ

Շարադրված է ըստ Օվիդիոսի «Կերպարանավորություններ» պոեմի:

Կենս կղզու՛ Կարթեյան հովտում հավերժահարսներին նվիրա-
բերված մի եղջերու կար: Գեղեցիկ էր այդ եղջերուն: Բազմա-
ճյուղ եղջյուրները ոսկեղօծ էին, մարդարտաշար մանյակը զար-
դարում էր նրա պարանոցը, իսկ ականջներից կախ էին ընկած
թանկագին զարդեր: Եղջերուն իսպառ մոռացության էր տվել եր-
կյուղը մարդկանց հանդեպ: Մտնում էր մարդկանց տները, հաճու-
թյամբ պարանոցը երկարում նրա առաջ, ով կուզենար փաղաքշել
նրան:

Բալտր բնակիչները սիրում էին եղջերուին, իսկ ամենքից առա-
վել՝ Կենսի Թագավորի պատանի որդին՝ Կիպարիսը, նետածից
Ապոլոնի սիրելի ընկերը: Կիպարիսը երջերուին հյութալի խոտով
պատած արոտավայրերն էր տանում ու խոխոջացող գետակները,
նրա հղոր եղջյուրները զարդարում բուրբուխավետ ծաղկեպսակնե-
րով: Հաճախ էլ, խաղալով եղջերուի հետ, պատանի Կիպարիսը
քրքշալով ոստնում էր նրա մեջքին և սուրում Կարթեյան ծաղկա-
վետ հովտով:

Ամառային շոգ կեսօր էր, արևը կիզում էր, սաստիկ տոթ էր:
Կեսօրվա տոթից խոտափելով, եղջերուն մեկնվեց Թփուտների մեջ:
Պատահաբար, Կիպարիսը որս էր անում հենց այնտեղ, ուր պառ-
կած էր եղջերուն: Պատանի որսորդը շճանաչեց իր սիրելի եղ-
ջերուին, բանի որ ծածկված էր տերևներով, նետեց իր սուր նի-
զակը և մահացու վերջ տվեց եղջերուին: Սոսկաց Կիպարիսը տես-
նելով, որ իր սիրելի եղջերուին է սպանել: Վշտահար պատանին
ուզում էր մեռնել նրա հետ: Ապոլոնը զուր էր սփոփում նրան:
Անսփոփ էր Կիպարիսի վիշտը, և նա խնդրեց արծաթաղեղ աստը-
ծուն, որ իրեն հավերժ անմար վիշտ տա: Ապոլոնը կատարեց
նրա տենչանքը: Պատանին ծառ դարձավ: Գանգուրները մուգ
կանաչավուն փշատերև դարձան, մարմինը կեղևապատվեց: Իբրև
բարձրուղեչ կիպարիս ծառ, կանգնել էր նա Ապոլոնի առաջ,
կատարը նետի պես երկինք մխրճած: Վշտակեղ հառաչանք արձա-
կեց Ապոլոնը և մրմնջաց:

— Հավե՛րժ թախծեմ պիտի քեզ համար, գեղեցիկ պատանի,

1 Էդեյան ծովի Կիկլասյան կղզիներից մեկը:

Գիշերվա խավարում շուտափույթ դեպի Տրաքինե սուրաց Մոր-
փետոսն իր անշշուկ թևերով: Առավ Կեիկոսի կերպարանքը ու թեք-
վեց Ալթիոնեի մահճի վրա: Երազի մեջ դժգունացած կանգնել էր
Կեիկոսի ուրվականը Ալթիոնեի առջևում, մորուքից ու վարսերից
կաթում էր ծովային դառնաղի ջուրը: Նա հաղորդեց կնոջը, որ
ինքը զոհվել է ծովային հորձանուտում: Քնի մեջ դեպի ամուսի-
նը կարկանոց Ալթիոնեն իր ձեռքերը և շշնջաց հեռացող ուրվա-
կանին:

— Մի՛ գնա, դեպի ո՛ւր ևս ձգտում դու: Միասին գնանք:

Արթնացավ Ալթիոնեն: Փնտրում էր Կեիկոսին, բայց շուրջը
ոչ ոք չկա: Կուհեց, որ ամուսինը զոհվել է: Վիշտը ճմլեց Ալ-
թիոնեի սիրտը, նա շէր ուզում ապրել առանց ջերմորեն սիրած
ամուսնու:

Հաղիվ էր լուսը բացվել, երբ Ալթիոնեն դուրս եկավ պալա-
տից և, հուսահատությամբ համակված, գնաց դեպի ծովափնյա
ժայռը: Ակնդետ նայում էր ծովի ալիքներին, որոնք նրանից խլել
էին ամուսնուն: Այգն ավելի ու ավելի էր բացվում, արդեն առա-
վոտ էր, և պարզ երևում էր ծովային հեռատանը: Եվ ահա Ալթիո-
նեն շեսավ, որ ալիքները կամացուկ դեպի ծովափ են մղում ջրա-
հեղձի գին: Հայացքով գնում էր Ալթիոնեն խեղդվածին և հան-
կարծ հանաչեց Կեիկոսին: Ձեռքերը դեպի ամուսնու գին կար-
կառած՝ Ալթիոնեն բարձրադիր ծովափից նետվեց ծովի ալիքնե-
րի մեջ:

Թևերով ալիքների կատարներին դիպչելով, ճախրում է ծովի
վրայով թռչուն դարձած Ալթիոնեն: Հեռու էր տարածվում նրա
տրտմաթախտե կանչը: Կեիկոսի անշունչ մարմնին է հպվել
ձկնկուլ-Ալթիոնեն, ասես իր թևերով գրկել է նրան ու համբուրում
է կտուցով: Զգաց Կեիկոսը կնոջ համբուրները: Եվ աստվածները
նրան էլ ձկնկուլ դարձրին: Ծովի ալիքների վրայից երկու ձկնկուլ-
ներ պոկվեցին և, թևերը փայլեցնելով, դեպի ծովափ սափառնե-
ցին: Վերստին անբաժան են Կեիկոսն ու Ալթիոնեն, դարձյալ ուժեղ
է նրանց սերը՝ միմյանց հանդեպ:

Երբ ձկնկուլ-Ալթիոնեն ջրերի վրա կախված իր բնում նըս-
տած է լինում ձկերի վրա՝ հանդարտվում են ծովային ալիքները:
էլուսը՝ Ալթիոնեի հայրը, զսպում է քամիներին, թույլ չի տալիս,
որ մոլեգնեն. հայրը հանգստություն է տալիս զստերը:

դո՞ւ ևս պիտի թախծես արիշի վշտով: Ուրեմն, հավերժ վշտացալս ների հետ եղիր:

Այդ ժամանակից ի վեր այն տների դռներին, ուր հանգուցալս է լինում, հուլները կիսարիսի ճյուղ են կախում, նրա փշատերևով զարդարում թաղման խարույկները, որոնց վրա այրում էին մեռածներին, և կիսարիս տնկում ջիրիմների մոտ:

ՕՐՓԵՈՍ ԵՎ ԵՎՐԻԴԻԿ

Ետադրված է ըստ Օվիդիոսի «Կեպարեանափոխություններ» սյունի:

ՕՐՓԵՈՍՆ ԱՏՈՐԵՐԿՐԵԱ ՔԱԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեծ երգիչ Օրփեոսը՝ գետային աստված Հագրոսի ու մուսու Կալիոպեի որդին, ապրում էր հեռավոր Թրակիայում: Օրփեոսի կինը գեղանի հավերժահարս Եվրիդիկեն էր: Երգիչ Օրփեոսը ջերմորեն ախրում էր նրան: Բայց Օրփեոսը իր կնոջ հետ երջանիկ կյանքը երկար չվայելեց: Մի անգամ, հարսանիքից շատ շանցած, գեղանի Եվրիդիկեն դեռատի, աշխույժ ընկերուհի հավերժահարսների հետ գարնանային ծաղիկներ էր փնջում հովտում: Փարթամ խոտերի մեջ Եվրիդիկեն շնկատեց օձին և ոտքը դրեց վրան: Օձը խայթեց Օրփեոսի դեռատի կնոջ ոտքը: Բարձր ճիչ արձակեց Եվրիդիկեն և ընկավ մոտ եկած ընկերուհիների ձեռքերին: Գունատվեց Եվրիդիկեն, փակվեցին աչքերը: Օձի թույնը կտրեց նրա կյանքի թելը: Սոսկումը պատեց Եվրիդիկեի ընկերուհիներին և հեռու տարածվեց նրանց ողբաձայն լացը, հասավ Օրփեոսի ականջին: Երգիչը փութաց հովիտ և տեսավ կաթոգին սիրած կնոջ սառը դիակը: Հուսահատությունը տիրեց Օրփեոսին: Անկարող էր հաշտվել այդ կորստի հետ: Երկար ողբաց իր Եվրիդիկեին և, նրա վրշտայի երգին ունկնդիր, ողբաց նաև բովանդակ բնությունը:

Վերջապես Օրփեոսը վճռեց իջնել մեռյալների ստվերների խավարշտին թագավորությունը, որպեսզի Հադես տիրակալին և նրա կնոջը՝ Պերսեփոնեին, խնդրի ետ տալ իր կնոջը: Տենարոսի՝ մթին քարայրով Օրփեոսն իջավ Ստիքս սրբազան գետի ափերը:

Կանգնել է Օրփեոսը Ստիքսի ափին: Ինչպե՞ս անցնի մյուս

ափը, այնտեղ, ուր գտնվում է Հադես տիրակալի մոռյլ թագավորությունը: Օրփեոսի շրսբուրդը խոնվում են հանգուցյալների սրտերները: Հագիվ են լսվում նրանց հառաչանքները՝ նման ուշ աշնանը անտառում թափվող տերևների շրջունին: Ահա՛, հեռվից թիակների ճողփյունի ձայն է լսվում: Հանգուցյալների հոգին տեղափոխող Քարոնի նավակն է, որ մոտենում է: Քարոնն ափ հասավ: Օրփեոսը խնդրեց, որ ստվերների հետ միասին իրեն էլ մյուս ափը տանի, բայց անողորմ Քարոնը մերժեց նրան: Որքան էլ աղնրսեց Օրփեոսը, միայն մի պատասխան ստացավ՝ «ո՛չ»:

Եվ այդ ժամանակ Օրփեոսը զարկեց իր ոսկեղեն կիթառի լարերին, և, այնքա տալով մոռյլ Ստիքսի ափերով, լայնորեն տարածվեցին նրա լարերի հնչյունները: Իր երաժշտությամբ Օրփեոսը հմայեց Քարոնին: Հենված թիակին՝ Քարոնն ունկնդրում էր Օրփեոսի նվագը: Երաժշտության հնչյունների ուղեկցությամբ Օրփեոսը նստեց նավակը, Քարոնն իր թիակով ափից ետ վանեց այն, և նավակը լողաց Ստիքսի մոռյլ ջրերի միջով: Քարոնը մյուս ափը հասցրեց Օրփեոսին: Նա դուրս ելավ նավակից և ոսկեղեն կիթառի վրա նվագելով, կիթառի հնչյունների վրա եկած ու իրեն շրջապատած հոգիների ուղեկցությամբ, հանգուցյալների հոգիների թագավորության միջով քայլեց դեպի Հադես աստծո զահր:

Նվագելով կիթառի վրա, Օրփեոսը մոտեցավ Հադեսի զահին և խոնարհվեց նրա առաջ: Ավելի ուժգին զարկեց լարերին ու երգեց. երգեց Եվրիդիկեի հանգեպ տածած իր սերը և այն, թե ինչ երջանիկ է եղել իր կյանքը կնոջ հետ՝ գարնան լուսավոր, ջինջ օրերին: Բայց վազանցուկ եղան երջանկության օրերը: Զոհ գնաց Եվրիդիկեն: Իր խորունկ վիշտը, փշրված սերը, հանգուցյալի հանգեպ իր կարոտը հրգեց Օրփեոսը: Հադեսի ամբողջ թագավորությունն ունկնդիր էր Օրփեոսի երգին, բոլորին հմայեց նրա երգը: Գլուխը կրծքին խոնարհած՝ Հադես աստվածն ականջ էր դնում Օրփեոսին: Գլուխն ամուսնու ուսին հակած՝ Պերսեփոնեն ևս ունկնդիր էր երգին: Վշտի արցունքները թրթռում էին նրա թարթիչների վրա: Հմայված երգի հնչյուններով՝ Տանտալոսը մոռացություն էր մատնել իրեն տանջահար անող քաղցը և ծարավը: Միզիփոսն ընդհատեց իր ծանրագին, ապարդյուն աշխատանքը, նստեց այն քարին, որ գլորում էր սարն ի վեր, և խորասուզվեց մտքերի մեջ: Հմայված երգեցողությամբ՝ կանգ էին առել նաև դանաչուհիները. մոռացություն էին տվել իրենց անհատակ կարասը:

¹ Տենարոսը (ներկայումս՝ Մատապան հրվանդան) գտնվում է Պելոպոնեսի հարավային կողմում:

Մինչև իսկ եռադեմ ահեղ աստվածուհի Հեկայանն ձեռքերով ձածկել էր իր երեսը, որպեսզի աննկատ մնան աշքերի արցունքները: Արցունքներ էին շողում նաև անողորմ էրինինների աշքերին, մինչև անգամ նրանց էլ հուզել էր Օրփեոսն իր երգով: Բայց ահա գնալով ավելի մեղմ են հնչում ոսկեզեն կիթառի ձայները, ավելի կամայուկ է հնչում Օրփեոսի երգը, և ապա մարեց այն՝ նման թախծի հազիվ լսելի հատաշին:

Խորունկ լուսնյուն տիրեց շորսքուորքը: Լուսնյունը խախտեց Հադես աստվածը և հարցրեց Օրփեոսին, թե ինչու է եկել իր թագավորությունը, ի՞նչ խնդիրք ունի իրենից: Երգվեց Հադեսը աստվածների անխախտ երգումով՝ Ստիքսի ջրերով, որ ի կատար կածի հրաշք երգչի խնդիրը: Օրփեոսն այսպես պատասխանեց Հադեսին.

— Օ՛, հզոր տիրակալդ Հադես, մեղ բուրբիս՝ մահկանացուներիս, ընդունում ես քո թագավորությունը, երբ սպառվում են մեր կյանքի օրերը: Չե՛մ եկել այստեղ քո թագավորությունը լցնել սոսկումները տեսնելու, չե՛մ եկել, Հերակլեսի նման, տանելու քո թագավորության պահապան եռազլուխ Կերքերոսին: Եկել եմ աղերսելու՛ք թեզ, որ իմ Եվրիդիկինն ազատ արձակես դեպի երկիր: Վերստին կյանքի՛ կոչիր նրան, տեսնում ես, թե ինչպե՛ս եմ տառապում նրա համար: Մտածիր, տիրակալ, եթե թեզնից խլելին քո Պերսեփոնեին, դո՛ւ էլ կտառապեիր: Չե՛ որ ընդմիշտ չէ, որ ետ պիտի տաս Եվրիդիկինին: Նա կրկին ետ կգա քո թագավորությունը: Կարճատև է մեր կյանքը, Հադես տիրակալ: Օ՛, Եվրիդիկինն թույլ տուր վայելել կյանքի հրճվանքը, նա քո թագավորությունն է իշել այնքա՛ն դեռատի:

Մտքերի մեջ ընկավ Հադես աստվածը և, վերջապես, պատասխան ավեց Օրփեոսին.

— Կա՛մ, Օրփեոս: Կվերագարձեմ քո Եվրիդիկինին: Ե՛տ տար նրան դեպի կյանք, դեպի արևի լույսը: Բայց դու պիտի մի պայման կատարես. դու առաջ կգնաս Հերմես աստծո հետքերով, նա կառաջնորդի թեզ, իսկ քո հետևից կգա Եվրիդիկինն: Բայց ստորերկրյա թագավորության միջով գնալիս դու ետ չպիտի նայես: Իմացի՛ր, ետ նայես թե չէ՝ Եվրիդիկինն կլքի թեզ, և ընդմիշտ կմնա իմ թագավորության մեջ:

Ամեն ինչի համաձայն էր Օրփեոսը: Շտապում էր որքան կարելի է շուտ բռնել վերագարձի ճամփան: Մտքի պես սրաթուղ Հեր-

մեսը Եվրիդիկինի ստվերը բերեց Օրփեոսի մոտ: Սքանչացած՝ Օրփեոսը նայում էր կնոջը, ուզում էր գիրկն առնել նրա ստվերը, բայց Հերմեսը կասեցրեց նրան, ասելով.

— Օրփեոս, դա լուկ ստվերն է, որ ուզում ես գրկել: Փութանք առաջ, դժվա՛ր է մեր ուղին:

Ճանապարհ ընկան: Առջևից Հերմեսն էր ընթանում, նրա հետևից՝ Օրփեոսը, որին հետևում էր Եվրիդիկինն: Նրանք արագորեն անցնում էին Հադեսի թագավորության միջով: Քարոնն իր նավահով նրանց անցկացրեց Ստիքս գետի մյուս ափը: Ահա և այն արահետը, որ տանում էր երկրի մակերեսը: Դժվար էր նրանց ուղին: Արահետը որ լեցուն էր քարերով, կտրուկ վեր էր բարձրանում: Չորսուորքը թաղված էր թանձր աղջամուղչի մեջ: Առջևից ընթացող Հերմեսի կերպարանքը հազիվ էր նշմարվում: Բայց ահա հետո՛ւ հեռվում մի լույս երևաց: Փա ելքն էր: Ահա և շուրջը կարծես ավելի էր լուսավորվում: Եթե Օրփեոսը շուտ գար՝ Եվրիդիկինն կարող էր տեսնել: Իսկ նա արդյո՞ք հետևում էր իրենց: Չմնա՞ց արդյոք հանգուցյալների հոգիների խավարշտին թագավորության մեջ: Գուցե՞ն ետ էր ընկել, չե՛ որ այնքան դժվարին է ճանապարհը: Ետ է ընկել և դատապարտված կլինի հավետ թափառել խավարի մեջ: Օրփեոսը գանգազեցրեց քայլերը, ականջ դրեց: Ուշինչ չէր լսվում: Բայց կարո՞ղ էին արդյոք լսելի լինել անմարմին ստվերի քայլերը: Տաճապում էր Օրփեոսը Եվրիդիկինի համար և տազնապն ավելի ու ավելի էր համակում նրան. Ավելի հաճախ էր կանգ առնում Օրփեոսը, իսկ շուրջը գնալով լուսավորվում էր: Հիմա արդեն Օրփեոսը պարզորոշ կտեսներ կեռ ստվերը: Վերջապես մոռացություն մատնելով ամեն ինչ, նա կանգնեց ու շուտ եկավ: Գրեթե կողքին տեսավ Եվրիդիկինի ստվերը: Չեղբը երկարեց նրան, բայց ստվերը ետ սահեց ավելի ու ավելի հեռու և սուզվեց խավարի մեջ: Ահա քար կտրած՝ կանգնել էր հուսահատ Օրփեոսը: Եվ նրան վիճակվեց կրկին անգամ ապրել Եվրիդիկինի մահվան վիշտը, իսկ այդ երկրորդ մահվան մեղավորը հենց ինքն էր:

Այդպես երկար կանգնած մնաց Օրփեոսը: Թվում էր, թե կյանքը լքել էր նրան, թվում էր, թե կանգնած մարմարե մի արձան է նա: Վերջապես կամացուկ շարժվեց Օրփեոսը, մի քայլ արեց, ապա՝ երկրորդը, ետ գնաց դեպի մոայլ Ստիքսի ափերը: Նա վճռել էր կրկին վերադառնալ Հադեսի դահի մոտ, կրկին աղերսել,

որ ետ տա Եվրիդիկին: Բայց ծեր Քարոնն իր խարխուլ նավա-
կով այլևս Սաիբսի մյուս ամբը շտարավ նրան: Օրփեոսը զուր էր
աղերսում նրան: Երգչի աղերսները չշարժեցին անողորմ Քարոնի
գուլթը: Յոթ օր ու գիշեր նստեց տրտմաթախիծ Օրփեոսը Սաիբսի
ափին՝ վշտի արցունք հեղելով: մոռացած և՛ կերակուր, և՛ ամե-
նայն ինչ, զանգատվելով հանգուցյալների հոգիների խավարչտին
թագավորության աստվածներից: Միայն ութերորդ օրը նա վճռեց
լքել Սաիբսի ափերը և Թրակիա վերադառնալ:

ՕՐՓԵՈՍԻ ՄԱՆԸ

Չորս տարի էր անցել Եվրիդիկեի մահվանից, բայց Օրփեոսն
ստաշվա պես հավատարիմ էր նրան: Չէր ուզում Թրակիայի և ոչ
մի կնոջ հետ ամուսնացած լինել: Մի անգամ, վաղ գարնանը,
երբ ծառերի վրա երևաց առաջին կանաչը, մեծ երգիչը նստել էր
մի ցածրադիր բլրի վրա: Ոսկեղեն կիթառը դրված էր ոտքերի
մոտ: Կիթառը վեր առավ երգիչը, մեղմորեն զարկեց լարերին ու
երգեց: Բովանդակ բնությունն ունկնդրում էր նրա երգին: Այն-
պիսի մեծ ուժ էր հնչում Օրփեոսի երգի մեջ, այնպես էր հնազան-
դեցնում բոլորին ու ձգում դեպի երգիչը, ոչ նրա շուրջը հմայված-
ների պես խոնվել էին վայրի գազանները՝ լքած շրջակայքի լեռ-
ներն ու անտառները: Թռչունները հավաքվեցին երգչին շուրջ:
Մինչև անգամ ծառերը տեղահան եղան և շրջապատեցին Օրփեո-
սին. կաղնին ու բարդին, բարձրուղեղ կիպարիսներն ու լայնատե-
րև սոսիները, եղևնիներն ու սոճիները խոնվել էին չորսբլորը և
լսում էին երգչին. մի ձյուղ, մի տերև անգամ չէր տատանվում
նրանց վրա: Ողջ բնությունը հմայված էր զարմանահարաշ երգեցո-
ղությամբ և Օրփեոսի կիթառի հնչյուններով: Մեկ էլ հանկարծ
հեռվից լսվեցին բացակալուցյուններ, տիմպանների ձայներ ու
քրքիչ: Այդ կիկոնյան կանայք էին, որ տոնում էին աղմկասեր
Բաբոսի տոնը: Ավելի ու ավելի մոտ էին գալիս բաբոսուհիները:
Ահա նկատեցին Օրփեոսին և նրանցից մեկը բարձր ճիչ արձակեց.

— Ահա նա՛, որ ատում է կանանց:

Բաբոսուհին տարավ-բերեց թիրսոսը և նստեց Օրփեոսի վրա:
Բայց թիրսոսը պարուրող բաղեղը փրկեց երգչին: Մյուս բաբոսու-
հին բար նստեց Օրփեոսի վրա, բայց բարը, կախարդական եր-

գից ազդված, ընկավ Օրփեոսի ոտքերի մոտ՝ ասես ներումն աղեր-
սելով: Գնալով ավելի ուժգին էին հնչում բաբոսուհիների ճիչերը
և երգչի շուրջը, ավելի զի էին հնչում շվիններն ու թնդում տիմպան-
ները: Բաբոսի տոնախմբության աղմուկը խլացրեց Օրփեոսի եր-
գը: Բաբոսուհիները շրջապատեցին երգչին և գիշատիչ թռչունների
պես նետվեցին նրա վրա: Կարկտի պես երգչի վրա էին թափվում
թիրսոսներն ու քարերը: Չուր էր աղերսում Օրփեոսը, որ խնայեն
իրեն. նրա՛ն, որի ձայնին հնազանդ էին մինչև իսկ ծառերն ու
ծայռերը, չէին լսում մոլեգնահար բաբոսուհիները: Արյան բոսո-
րով ներկված, գետին տապալվեց Օրփեոսը, հեռու սավառնեց նրա
հոգին, իսկ բաբոսուհիներն իրենց արնաթաթավ ձեռքերով պա-
տառտեցին մարմինը: Օրփեոսի գլուխն ու կիթառը Եբրոս՝ գետի
արագահոս ջրերը նետեցին: Եվ, ո՛վ հրաշք, գետի ալիքներով բըշ-
վող կիթառի լարերը հնչում էին մեղմորեն, ասես ողորում երգչի
կորուստը, և նրանց տխուր-տրտում արձագանք էին տալիս՝ գետի
ափերը: Բովանդակ բնությունը ողբում էր Օրփեոսի մահը, լալիս
էին ծառերն ու ծաղիկները, լալիս էին գազաններն ու թռչունները,
մինչև իսկ համար ապառաժներն էին լալիս. և գետերն ավելի հոր-
դառատ դարձան նրանց հեղած արցունքներից: Հավերժահարսներն
ու գրիադները, ի նշան սգի, արձակեցին իրենց վարսերը և սևեր
հագան: Եբրոսի ալիքներն ավելի ու ավելի առաջ էին մղում երգ-
չի գլուխն ու կիթառը՝ դեպի լայնարձակ ծովը, իսկ ծովի ալիքնե-
րը կիթառը քշեցին դեպի Լեսբոսի՝ ափերը: Այդ ժամանակից ի
վեր Լեսբոսում զարմանահարաշ երգեր են հնչում: Իսկ Օրփեոսի
ոսկեղեն կիթառին աստվածները հետագայում տեղ տվին երկրնե-
րում, համաստեղությունների կողքին³:

Օրփեոսի հոգին իջավ ստվերների թագավորությունը և կրկին
տեսավ այն վայրերը, ուր մի ժամանակ փնտրում էր իր Եվրիդի-
կին: Մեծ երգիչը կրկին հանդիպեց Եվրիդիկեի ստվերին և կա-
թագին սիրով իր գիրկն առավ նրան: Այլևս արդեն նրանք կարող
էին անբաժան լինել: Եվ Օրփեոսի ու Եվրիդիկեի ստվերները թա-

¹ Եբրոս—գետ Թրակիայում (ներկայումս՝ Մարիցա):

² Կղզի էգեյան ծովում, Փոքր Ասիայի ափերի մոտ (այժմյան Միթիլենան):
Նետագայում այս կղզուց են սերել Հին Հունաստանի հռչակավոր բանաստեղծ Ալ-
քիոսը և բանաստեղծուհի Սաֆոն (Սապփո):

³ Քնարի համաստեղությունը, որի մեջ է մտնում առաջին կարգի մեծու-
թյան Վեգա աստղը:

փառում են ասփոզելներով պատած մշուշային դաշտերով: Հիմա արդեն Օրփեոսն աներկյուղ կարող է շուտ գալ տեսնելու, թե արդյոք հետևում է իրեն եվրիդիկեն:

ՀԻԱԿԻՆՅՈՍ (ՀԻԱՅԻՆՏ)

Եստորգլած է ըստ Օլիդիոսի «Կեդարանափութայաններ» գրքում:

Միբունատես, իր գեղեցկությունը մինչև իսկ օլիմպական աստվածներին հավասար Հիակինթոսը՝ Սպարտայի թագավորի պատանի որդին, նետածիզ աստված Ապոլոնի ընկերն էր: Ապոլոնը հաճախ էր հայտնվում Սպարտայում՝ եվրոտաս գետի ափերին, գալիս իր ընկերոջ մոտ և հետը ժամանակ անցկացնում լեռնալանջերի սաղարթախիտ անտառներում որս անելով կամ տարվելով մարմնամարզությանը, որի մեջ սպարտացիներն այնքան հմուտ էին:

Մի անգամ, երբ արդեն մոտ էր շոգ կեսօրը, Ապոլոնն ու Հիակինթոսը մրցում էին ծանրագին սկավառակը նետելու՝ մեջ: Բրոնզե սկավառակը ավելի ու ավելի բարձր էր թռչում դեպի երկինք: Ահա, ուժերը չափելով, սկավառակը նետեց մեծագոր աստված Ապոլոնը: Բարձր, մինչև ամպերը հասավ սկավառակը և, աստղի պես շոգալով, ջած էր ընկնում: Հիակինթոսը վազեց այնտեղ, ուր պետք է ընկներ սկավառակը: Շտապում էր շուտափույթ վեր առնել ու նետել այն, որպեսզի ցույց տա Ապոլոնին, որ ինքը՝ պատանի ատլետը, աստծո՛ւն անգամ չի դիջի սկավառակը նետելու արվեստի մեջ: Գետին ընկավ սկավառակը, ետ թռավ անկման հարվածից և ահավոր ուժով դիպավ մոտ վտղոզ Հիակինթոսի գլխին: Հիակինթոսը հառաչելով վայր ընկավ: Բոսոր արյունը հորդեց վերքից ու ներկեց գեղեցիկ պատանու թուխ գանգուրները:

Մոտ վազեց վախեցած Ապոլոնը: Կռացավ ընկերոջ վրա, ինքնակի բարձրացրեց նրան, արնաթաթավ գլուխը դրեց ծնկներին և շանաց վերքից հորդացող արյան առաջն առնել: Բայց ամեն ինչ զուր էր անցնում: Գունատվում էր Հիակինթոսը: Մարում էին Հիակինթոսի աչքերը, որ մշտապես այնքան պայծառ էին, գլուխը հակվում էր անուժ՝ կեսօրվա կիզիչ արևի տակ թորշոմող ծաղկեպսակի նման: Հուսակալուր՝ գուշեց Ապոլոնը:

— Դու մեռնում ես, իմ սիրասուն ընկեր: Օ՛, վա՛յ ինձ,

վա՛յ ինձ, դա իմ ձեռքով կործանվեցիր: Ինչո՞ւ նետեցի սկավառակը: Օ՛, կթե ես կարենայի քավել իմ մեղքը և քեզ հետ միասին իջնել հանգուցյալների հոգիների անխնդում թագավորությունը: Ինչո՞ւ եմ ես անմահ, ինչո՞ւ եմ անկարող մեռնել քեզ նման:

Ապոլոնն ամուր գրկել էր մերձիմահ ընկերոջը և արցունքները թափվում էին Հիակինթոսի արնաներկ գանգուրներին: Մեռավ Հիակինթոսը, հոգին ճախրեց դեպի Հադեսի թագավորությունը: Կանգնել էր Ապոլոնը վախճանված ընկերոջ դիակի մոտ և շշջում էր կամացուկ:

— Դու առհավե՛տ կապրես իմ սրտում, գեղեցիկ Հիակինթոս: Ուրեմն, թող քո հիշատակը հավե՛րժ ապրի նաև մարդկանց մեջ:

Եվ ահա, Ապոլոնի խոսքերի հետ, Հիակինթոսի արյունից անեց բոսոր, բուրումնավետ մի ծաղիկ՝ հիակինթեթ, իսկ ծաղկաթերթերին սառավ Ապոլոն աստծո վշտի հառաչանքը: Հիակինթոսի հիշատակն ապրում է նաև մարդկանց մեջ, նրանք մեծարում են գեղեցիկ պատանու հիշատակը տոնախմբություններով՝ հիակինթյան օրերին:

ՊՈԼԻՓԵՄՈՍ, ԱԿԻՍ ԵՎ ԳԱԼԱՏՆԱ

Գեղանի ներքից Գալատեան սիրում էր Սիմեփիսի որդուն՝ պատանի Ակիսին: Ակիսն էլ ներեռհուն էր սիրում: Բայց Ակիսը չէր միայն, որ հմայված էր Գալատեայով: Վիթխարի կիկլոպ Պոլիփեմոսը մի անգամ տեսավ գեղանի Գալատեային, երբ սա լողալով զուրս էր գալիս կապուտակ ծովից՝ իր գեղեցկությունը շողալով, և նրա հանդեպ լցվեց մտքերն սիրով: Օ՛, որքան մեծ զորություն ունես դու, ոսկեշող Ափրոդիտես: Մինչև իսկ այն դժնի կիկլոպը, որին ոչ ոք չէր կարող անպատիժ մերձենալ, որ ատում էր օլիմպացի աստվածներին, մինչև իսկ նրա՛ն սեր ես ներշնչում: Միրո բոցերն այրում էին Պոլիփեմոսին: Նա մոռացություն էր տվել իր

1. Ընկերը գտնում էին, որ վայրի հիակինթի թերթերին կարելի է կարգալ տալ — այս արտահայտությունը, որ նշանակում է «վա՛յ—վա՛յ»: Տոնախմբությունները, այսպես կոչված հիակինթականքը, ի պատիվ Հիակինթոսի, որ առաջ եղել է հովիվների աստվածությունը, անց էին կացնում հուլիս ամսին, դիսամբրոպես զոհաբանքները Պետրոսնեսում, Փոքր Ասիայում, Բասիլայի հարավում, Սիբիլիայում, Սիրակուզայում:

որչիսարներն ու անձավները: Վայրենի կիկլոպը մինչև անգամ իր գեղեցկությամբ մտահոգվել սկսեց: Նա բրդոտ վարսերը սանրում էր թլոնգով, իսկ հրեսի խոիվ մազերը խուզում մանգաղով: Հիմա նույնիսկ այնքան էլ վայրենի չէր ու արյունոտուտ:

Հենց այդ ժամանակ Սիցիլիայի ափերին մոտեցավ կանխագուշակ Տիլեմոսը: Եվ նա պատգամախոսեց.

— Քո ճակատին եղած միակ աչքը ընահան կանի Ողիսևուր:

Պատգամախոսին ի պատասխան բիրտ բրբջաց Պոլիփեմոսը և գռչեց.

— Գուշակներից հիմարագո՛ւյնն ես դու: Ստո՛ւմ ես: Ուրի՛շն է արդեն տիրացել իմ աչքին:

Հետո, ծովի մեջ դուրս էր ցցվել մի ժայռապատ բլուր, որ կտրուկ զառիթափ իջնում էր հավերժածուփ ալիքների վրա: Պոլիփեմոսը, իր հոտն առած, հաճախ էր լինում այդ բլրի վրա: Նրստում էր այնտեղ, նավի կայմի մեծության զավազանը դնելով ոտքերի մոտ, հանում իր շինած հարյուրեղեզն սրինգը և փչում ամբողջ զորությամբ: Պոլիփեմոսի սրինգի վայրենի հնչյունները հեռու էին տարածվում ծովով, լեռներով ու հովիտներով. հասնում էին նաև Ակիսին ու Գալատեային, որոնք հաճախ նստած էին լինում առափնյա մի զովաշունչ անձավում, որ հեռու չէր այդ բլրից: Նվազում էր Պոլիփեմոսն ու երգում: Մեկ էլ հանկարծ, կատաղած ցուլի պես տեղից վեր թռավ: Առափնյա անձավում նկատել էր Ակիսին ու Գալատեային: Եվ ըղավեց Պոլիփեմոսն այնպիսի ամպրոպային ձայնով, որ էտնա լեռը արձագանք տվեց.

— Ես տեսնո՛ւմ եմ ձեզ: Լա՛վ, սա ձեր վերջի՛ն տեսակցությունը կլինի:

Սոսկաց Գալատեան և իսկույն ծովը նետվեց: Պոլիփեմոսից նրան պաշտպանում էին հարազատ ծովի ալիքները: Սոսկումնահար Ակիսն ուզում էր փրկություն գտնել փախուստով: Ձեռքերը կարկառում էր դեպի ծովը և ձայն տալիս:

— Օ՛, օդնի՛ր ինձ, Գալատեա: Մնողներ իմ, փրկեցե՛ք ինձ, թաքցրե՛ք:

Կիկլոպը հասավ Ակիսի հետևից: Լեռան վրայից մի ահագին ապառաժ պոկեց ու նետեց վրան: Ու թեև Պոլիփեմոսի նետած ապառաժի հազիվ միայն ծայրը դիպավ տարաբախտ պատանուն՝ հենց դրա տակն ընկավ ապերջանիկն ու ճգմվեց: Ապառաժի տակից գետի պես հոսում էր Ակիսի բոսոր արյունը: Հետզհետե կարմիր

գույնը կորչում էր, ավելի ու ավելի բաց գույն էր ընդունում արյան հեղեղը: Ահա նա արդեն նմանվում էր տեղատարափ անձրևից պղտորված գետի, որ գնալով ավելի վճիտ ու թափանցիկ է դառնում: Հանկարծ ճեղքվեց Ակիսի վրա ընկած ապառաժը: Մի դալար, սոսափող եղեգն բուսնեց ճեղքվածքի մեջ, եղեգնից արագահոս ու վճիտ գետ ցայտեց, իսկ միջից, մինչև գոտկատեղը, երևաց երկնագույն դեմքով մի պատանի՝ եղեգնապսակը զլխին դրած: Այդ պատանին Ակիսն էր, որ գետային աստված էր դարձել:

ԴԻՈՍԿՈՒՐՆԵՐ, ԿԱՍՏՈՐ ԵՎ ՊՈԼԻԴԵՎՔԵՍ

Ապարտայի թագավոր Տինդարևսի կինը գեղանի Լեդան էր՝ էտոլիայի արքա Թեստիոսի դուստրը: Բովանդակ Հունաստանում հռչակված էր Լեդան իր հրաշք գեղեցկությամբ: Զևսի կինը զարձավ Լեդան և նրանից երկու զավակ ունեցավ՝ գեղեցիկ, որպես աստվածուհի, Հելենեն և մեծ հերոս Պոլիդեքեսը: Տինդարևսից ևս Լեդան երկու զավակ ուներ, դուստրը՝ Կլիթեմենեստրան և որդին՝ Կաստորը:

Պոլիդեքեսը հորից անմահություն ստացավ, իսկ նրա եղբայրը՝ Կաստորը, մահկանացու էր: Երկու եղբայրներն էլ Հունաստանի մեծանուն հերոսներն էին: Ոչ ոք չէր կարողանում Կաստորին գերազանցել երկանիվ վարելու արվեստում, նա զսպում էր ամենաանասնձ նեոլգներին անգամ: Իսկ Պոլիդեքեսը հավասարը չունեցող հմուտ բռնցքամարտիկ էր: Հունաստանի հերոսների բազում մեծազորությունների էին մասնակից եղել եղբայրները: Մշտապես միասին էին լինում, ամենաանկեղծ սիրով էին կապված նրանք:

Դիոսկուրները երկու հորեղբորորդի ունեին՝ Լինքեոսը և Իդասը, Մեսենիայի թագավոր Ափարևսի որդիները: Մեծազոր ռազմիկ էր Իդասը, իսկ նրա եղբայր Լինքեոսն այնպիսի սուր տեսողություն ուներ, որ թափանցում էր մինչև իսկ երկրի ընդերքը: Ոչինչ չէր կարող վրիպել Լինքեոսի հայացքից: Բազում սխրանքներ գործեցին Դիոսկուրներն իրենց հորեղբորորդիների հետ:

Մի անգամ, հանդուզն մի ասպատակության ժամանակ, նրանք Արկադիայից թշեցին ցուլերի մի նախիր և վճռեցին ավարը բաժանել միմյանց միջև: Նախիրը բաժանողը պետք է Իդասը լիներ: Նա ուզեց եղբոր հետ տիրանալ ամբողջ ավարին և վճռեց խորամանկության գիմել: Իդասը չորս հավասար մասի բաժանեց

ցուլը՝ իր, եղբոր և Գիտակուրների միջև և առաջարկեց նախրի մի կեսը տալ նրան, ով իր մասը առաջինը կուտի, իսկ երկրորդ կեսը՝ նրան, ով հաջորդը կուտի իր բաժինը: Իդասն իսկույն կերավ իր բաժինը և եղբորը՝ Լինքեոսին օգնեց, որ նրա բաժինն էլ ավարտեն:

Տեսնելով, որ Իդասը խաբեց իրենց՝ Կաստորն ու Պոլիդեքեսը ահեղորեն դաշրացան և վճռեցին վրեժխնդիր լինել հորեղբոր որդիներից, որոնց հետ մինչև այդ կապված էին անբակտելի բարեկամությունը: Կաստորն ու Պոլիդեքեսը խոժեցին Մեսինա և փախցրին ոչ միայն Արկադիայից բշված նախիրը, այլև Իդասի և Լինքեոսի նախրի մի մասը: Բայց զրանով էլ չզոհացան Գիտակուրները. նրանց հարսնացուներին էլ հափշտակեցին:

Գիտին Գիտակուրները, որ այդ ամենն իրենց շեն ների Իդասն ու Լինքեոսը, և վճռեցին թաքնվել մի մեծ ծառի փշակում և ըստպասել, թե ե՞րբ կսկսեն հետամուտ լինել իրենց: Գիտակուրներն ուզում էին անսպասելի հարձակում գործել նրանց վրա, որովհետև երկյուղ էին կրում կովի բռնվելուց հզոր Իդասի հետ, որը հանդգնել էր մարտնչել մինչև իսկ Ապոլոնի դեմ, երբ արծաթազեղ աստվածը վեճի մեջ էր մտել նրա հետ: զեղանի Մարպեսայի՝ համար: Բայց Գիտակուրներն անկարող եղան թաքնվել Լինքեոսի սրտես աչքերից: Բարձրաբերձ Տայիդեատոսի վրայից Լինքեոսը տեսավ եղբայրներին ծառի փշակում: Իդասն ու Լինքեոսը հարձակում գործեցին Գիտակուրների վրա: Դեռ զարանից զուրս չէին եկել, երբ Իդասն իր նիզակով հարվածեց ծառին և խոցեց Կաստորի կուրծքը: Պոլիդեքեսը նետվեց ախոյանների վրա: Ափարևաի զավակները շղիմացան նրա ճնշմանը և փախուստի դիմեցին:

Իդասի և Լինքեոսի հոր գերեզմանի մոտ Պոլիդեքեսը հասավ նրանց: Սպանեց Լինքեոսին, մահու և կենաց կոխվ սկսեց Իդասի հետ: Բայց Ջևսը վերջ տվեց այդ մենամարտին. նետեց իր շողշողուն շանթը, զրանով մոխրացրեց և՛ Իդասին, և՛ Լինքեոսի դին:

Պոլիդեքեսը վերադարձավ այնտեղ, ուր տապալվել էր մահացու վիրավոր Կաստորը: Դառնագին լալիս էր նա, տեսնելով, որ

1 Իդասը Մարպեսային առանգել էր Պոսեյդոնի տված թևավոր երկանով: Ապոլոնն ուզում էր Մարպեսային խել Իդասից և նրա հետ կովի բռնվեց. Ջևսը զազարեցրեց այդ կռիվը և հրամայեց, որ Մարպեսան ինքի ամուսին ընտրի: Մարպեսան Իդասին ընտրեց. նա գիտեր, որ Ապոլոնը մինչև իր մահը չի սիրի իրեն. անմահ աստվածը մոռացություն կտա իրեն, երբ ինքը ծերանա:

մահը եղբորն անջատում է իրենից: Եվ աղերսեց Պոլիդեքեսն իր հորը՝ Ջևսին, խնդրեց, որ իրեն էլ մեռցնի եղբոր հետ միասին: Շանթարձակը հայտնվեց իր որդուն և ընտրության հնար տվեց նրան. կա՛մ իբրև հավերժ պատանի ապրել Օլիմպոսում լուսավոր աստվածների կաճառի մեջ, կամ էլ եղբոր հետ միասին մեկ օր ապրել Հադեսի խավարշտին թագավորության մեջ, մյուս օրը՝ լուսակերտ Օլիմպոսում: Պոլիդեքեսը շկամեցավ բաժանվել եղբորից և նրա հետ ընդհանուր ճակատագիր ընտրեց: Այդ ժամանակից ի վեր եղբայրները մեկ օր թափառում էին մեռածների ստվերների թագավորության մթամած դաշտերում, իսկ հաջորդ օրը՝ աստվածների հետ ապրում են վահանակիր Ջևսի ապարանքում: Հույները մեծաբուս են Գիտակուրներին՝ իբրև աստվածների: Նրանք պաշտպան են լինում բոլոր վտանգների ժամանակ, սատարում մարդկանց ճանապարհի վրա՝ և՛ օտարության մեջ, և՛ հայրենի երկրում:

ԱՏԻՆՎՍ ԵՎ ԹԻԵՍՏԵՍ

Մեծանուն հերոս Պելոպսի որդիներն է՛ն Ատրևսը և Թիեստեոսը: Մի ժամանակ էնոմայոս արքայի կառապան Միրթիլոսը¹, որին նենգաբար սպանել էր Պելոպսը, նզովել էր և մեծամեծ շարագործությունների ու կործանման դատապարտել Պելոպսի ամբողջ սերունդը: Միրթիլոսի նզովքը պատուհասեց նաև Ատրևսին և Թիեստեսին: Բազում շարիքներ գործեցին նրանք: Կործանեցին նաև Քրիսիպոսին՝ Աքսինե հավերժահարսի և Պելոպսի որդուն: Ատրևսի և Թիեստեսի մայրը Հիպոդամիան էր, որ համոզեց նրանց սպանել Քրիսիպոսին: Զարագործությունն ի կատար ածելուց հետո երկյուղ էրելով իրենց հոր՝ Պելոպսի ցասումից, փախան նրա տիրապետության օտհամաններից և ապաստան գտան Միկենեի թագավոր Սթենեկոսի մոտ, որը Պելոպսի որդին էր՝ ամուսնացած իրենց քրոջ՝ Նիկեայեի հետ: Երբ Սթենեկոսը վախճանվեց, իսկ նրա որդի էվրիսթեսը, որ գերի էր առնված Իուլայոսի կողմից, զոհ գնաց Հերակլեսի մոր՝ Ալքմենեի ձեռքով, Միկենեում իշխել սկսեց Ատրևսը, քանի որ էվրիսթեսն իրենից հետո ժառանգ չէր թողել: Նախանձեց եղբորը Թիեստեսը և վճռեց ինչ գնով էլ լինի նրա ձեռքից խել իշխանությունը: Ատրևսի կինը՝ Աեթոպեի օգնությամբ

1 Տե՛ս Պելոպսի առասպելը:

նրանից հափշտակեց այն ոսկեզեղմ ուշաբուր, որ Հերմես աստվածն էր նվիրել նրան: Հափշտակեց, քանի որ այսպես էին ասել աստվածները. «Միկեննին կտիրի նա՛, ում պատկանի ոսկեզեղմ ուշաբուր»: Ուշաբուր հափշտակելով, Թիեստեսը նաև Միկեննի իշխանութունը պահանջեց. չէ՞ որ ուշաբուն իր ձեռքին էր արդեն:

Թիեստեսի վրա ահեղորեն դայրացավ շանթարձակ Զևսը և երկնային կանխանշաններով Միկեննի բնակիչներին իմացրեց, որ Թիեստեսն ապօրեն ճանապարհով շանում է զավթել իշխանութունը: Միկենացիք հրաժարվեցին Թիեստեսի իշխանութունը ճանաչելուց և նա, եղբոր ցասումից երկյուղ կրելով, ստիպված եղավ փախչել Միկեննից: Վրեժխնդիր լինելով եղբորից, նա գաղտնաբար Միկեննից տարավ նրա որդուն՝ Պոլիսթենեսին:

Օտարության մեջ Թիեստեսը դաստիարակեց Պոլիսթենեսին իբրև հարազատ որդու, և նրան այրող ատելություն ներշնչեց Ատրևսի հանգեպ: Նենգամիտ Թիեստեսն ուզում էր Պոլիսթենեսին օգտագործել իբրև վրեժխնդրության գործիք եղբոր դեմ: Երբ Պոլիսթենեսն առնացավ, Թիեստեսը նրան Միկենն ուղարկեց՝ Ատրևսին սպանելու հանձնարարությամբ: Բայց պատանին զոհ գնաց հոր ձեռքով: Սարսափը տիրեց Ատրևսին, երբ իմացավ, թե ով է իր սպանած պատանին: Երգվեց վրեժխնդիր լինել եղբորից և մի նենգ ու գազանային դավ նյութեց: Մրադիրն ի կատար ածելու համար ձևացավ, թե պատրաստ է հաշտվել Թիեստեսի հետ: Մարդ առաքեց եղբոր մոտ ու նրան Միկենն կանչեց: Երբ Թիեստեսը Միկենն վերադարձավ, նա կրկին սկսեց Ատրևսի կնոջ՝ Աերոպեի հետ դավեր նյութել ընդդեմ Ատրևսի, մտածելով միայն եղբորը սպանելու մասին: Ատրևսը գիտեր այդ, և դա ավելի ամրացրեց նենգամիտ եղբորից վրեժ լուծելու վճռականությունը: Հրամայեց գաղտնաբար հափշտակել Թիեստեսի առկապին պատանի զավակներին՝ Պոլիսթենեսին ու Տանտալոսին, և սպանել: Ապա նրանց մարմիններից մի սոսկումնալի ճաշկերույթ պատրաստեց եղբոր համար:

Թիեստեսին խրախճանքի հրավիրեց և առաջը դրեց նրա զավակների մտից պատրաստած ուտեստեղենը: Զևսի որոտներն ահեղազորող գլորվեցին երկնքով: Զայրացել էր շանթարձակը Ատրևսի վրա՝ նրա գործած շարիքի համար: Սոսկումից ցնցվեց նաև արևի ճաճանչափայլ աստված Հելիոսը, շուռ տվեց

իր երկանիվը և իր թևավոր նժույգներին ետ, դեպի արևելք բռնեց, որպեսզի շտեսնի, թե հայրն ինչպես է հագնում իր զավակների մտով: Իսկ Թիեստեսը, ոչինչ չկասկածելով, ափան էր նստել և հանգիստ ուտում էր: Հագեցավ Թիեստեսը: Հանկարծ անլուր դժբախտության պղտոր կանխազգացումը տիրեց նրան, և հարցրեց Ատրևսին, թե որտեղ են իր զավակները: Ատրևսը կանչեց ծառաներին և հրամայեց Թիեստեսին ցույց տալ նրա զավակների զուլփներն ու ոտքերը: Դառնորեն հեկեկաց Թիեստեսը՝ զավակների վախճանը տեսնելով: Աղերսում էր Ատրևսին, որ իրեն տա զավակների դիակները, որպեսզի հողին հանձնի: Բայց Ատրևսը եղբորը պատասխանեց, որ նա զավակներին թաղել է արդեն, բայց ոչ թե հողի, այլ հենց իր մեջ: Թիեստեսը սոսկումով կռահեց, թե ի՞նչ ուտելիք էր քիչ առաջ կերածը: Շուռ տվեց սեղանը և, ահավոր ողբ բարձրացնելով, թավալվեց հատակին: Ապա վշտից խելակորույս վեր թռավ, վերջապես, և նզովելով Ատրևսին ու նրա ամբողջ ցեղը, զուրս թռավ պալատից: Ոչինչ չմտաբերելով, ոչինչ չտեսնելով՝ փախավ Թիեստեսը Միկեննից և թաքնվեց անապատում: Երկար ժամանակ թաքնված մնաց այնտեղ, մինչև որ, վերջապես, զնաց էպիրոսի՝ արքա Թեսպրոտեսի մոտ, որը և ապաստան տվեց նրան:

Զայրույթով էին լցված աստվածները Ատրևսի հանգեպ՝ գործած շարագործության պատճառով: Եվ Ատրևսին պատժելու համար անբերրի դարձրին բովանդակ Արգոլիսը: Ոչինչ չէր աճում արգավանդ գաշտերում: Սովն էր թագավորում Ատրևսի տիրապետության սահմաններում: Հազարներով բնակիչներ էին կոտորվում: Պատգամախոսին դիմեց Ատրևսը՝ աղետի պատճառն իմանալու: Պատասխան տվեց պատգամախոսը, թե աղետը վերջ կունենա այն ժամանակ, երբ Թիեստեսը Միկենն վերադառնա: Երկար որոնեց Ատրևսը իր եղբորը բովանդակ Հունաստանում, բայց չկարողացավ ի հայտ բերել նրա ապաստանը: Վերջապես գտավ նրա փոքրահասակ որդուն՝ էգիսթոսին: Ատրևսը իր պալատը բերեց էգիսթոսին և դաստիարակեց իբրև հարազատ որդու:

Շատ տարիներ անցան: Ատրևսի որդիները՝ Մենելաոսը և Ագամեմնոնը պատահաբար իմացան, թե որտեղ է Թիեստեսի թաքստոցը: Նրանց հաջողվեց բռնել Թիեստեսին և Միկենն բերել:

1 էպիրոս—Հյուսիսային Հունաստանի արևմտյան մարզը (Մ. Ք.):

Բայց Ատրևը չհաշտվեց եղբոր հետ: Չնդանը նետեց թիեատեսին և վճռեց սպանել տալ նրան: Կանչեց էգիսթոսին, կտրուկ սուրը տվեց ձեռքը, հրամայեց զնդան մտնել և սպանել կալանավորին: Զգիտք էգիսթոսը, թե ինչ ահավոր գործի է ուղարկում իրեն Ատրևը, որին իր հայրն էր համարում: Լենց որ էգիսթոսը զնդան մտաւ՝ թիեատեսը ճանաչեց որդուն: Ասաց. թե ո՛վ է ինքը, և հայր ու որդի զնդանում նյութեցին Ատրևին կործանելու ժրագիրը: Էգիսթոսը պալատ վերադարձավ և Ատրևին ասաց. թե կատարել է նրա հրամանը, սպանել է կալանավորին: Ուրախացավ Ատրևը, որ վերջապես հաջողվել է կործանել եղբորը, և ծովափ փութաց՝ օլիմպացի աստվածներին զոհեր մատուցելու: Լենց այստեղ, զոհաբերության ժամին, էգիսթոսը նրա թիկունքին մահացու հարված հասցրեց նույն այն սրով, որ Ատրևն էր տվել իր հորն սպանելու համար: Էգիսթոսն ազատեց հորը զնդանից: Թիեատեսն ու նրա որդին տիրեցին Միկենեի իշխանությանը: Ատրևսի որդիները՝ Մենելաոսը և Ագամեմնոնը, ստիպված եղան փախուստի դիմել՝ փրկվելու համար: Նրանք պաշտպանություն գտան Սպարտայի արքա Տինդարևսի մոտ: Այնտեղ նրանք կնության առան Տինդարևսի զուտարեբին: Մենելաոսը՝ Ափրոդիտե աստվածուհու պես գեղեցիկ Լեդիսենին, իսկ Ագամեմնոնը՝ Կլիթեմնեստրային: Մի որոշ ժամանակ անց Ագամեմնոնը Միկենե վերադարձավ, սպանեց թիեատեսին և սկսեց իշխել այնտեղ, ուր մի ժամանակ նրա հայրն էր իշխում: Իսկ Մենելաոսը Տինդարևսի մահից հետո գարձավ Սպարտայի արքան:

ԷՍԱՔՈՍ ԵՎ ԼԵՍՊԵՐԻԱ

Շարադրված է ըստ Օվիդիոսի «Կերպարանափոխություններ» պոեմի:

Էսաքոսը Տրոյայի արքա Պրիամոսի որդին էր, մեծ հերոս Լեկտորի եղբայրը: Մնվել էր Իդա լեռան անտառապատ լանջերին. նրա մայրը գեղանի հավերժահարս Ալեքսիբոնն էր, գետային աստված Գրանիկոսի զուտորը: Լասակ առնելով լեռների գրկում, Էսաքոսը չէր սիրում քաղաքները, խուսափում էր իր հոր՝ Պրիամոսի շքեղ ապարանքում ապրելուց: Սիրում էր լեռների ու սաղարթախիտ անտառների մենությունը, ազատ ու արձակ դաշտերը:

Լազվադեպ էր երևում Էսաքոսը Տրոյայում և տրոյացիների խորհրդում: Չնայած մենակյաց կյանքին, Էսաքոսի խառնվածքը վայրենի ու կոպիտ չէր. սիրալիր էր նա, իսկ սրտին մատչելի էր սիրո զգացմունքը: Պրիամոսի պատանի դավակը անտառներում ու դաշտերում հաճախ էր հանդիպում գեղանի հավերժահարս Լեսպերիային: Բոցավառ սեր էր տածում հավերժահարսի հանգեպ: Էսաքոսին տեսնելուն պես թաքնվում էր Լեսպերիան:

Մի անգամ, Կեբրեն գետի ափին, Էսաքոսը տեսավ գեղեցկուհի Լեսպերիային՝ արևի տակ փարթամ վարսերը շորացնելիս: Լավերժահարսը նկատեց պատանուն և փախուստի դիմեց: Էսաքոսն ընկավ նրա հետևից:

Լանկարծ խոտերի մեջ թաքնված օձը խայթեց հավերժահարսի ոտքը, և օձի առամենքի թույնը մնաց վերքի մեջ: Կյանքի հետ միասին եկավ նաև փախուստի վախճանը: Լեսպերիան ընկավ արդեն իրեն հասած Էսաքոսի ձեռքերին: Գիրկն առնելով մեռնող Լեսպերիային, վշտից խելակորույս, զոչեց Էսաքոսը.

— Օ՛, վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Որքա՛ն ատելի է հիմա ինձ այս հետապնդումը: Մտադիր չէի հաղթել այսքան թանկ գնով: Մենք երկուսով սպանեցինք քեզ, Լեսպերիա: Օձը քեզ մահացու վերք հասցրեց, և ե՛ս եմ զրա մեղավորը: Առավել ննկզ կլինեմ ես, եթե իմ մահվամբ չհատուցեմ թո մահը:

Եվ Էսաքոսը բարձրարձեղ ժայռից նետվեց ծովի փրփրաբաշ ալիքների մեջ, որոնք շառաչյունով բախվում էին ժայռի ստորոտին: Թետիսը գթաց տաքաբախտ պատանուն, քնքշանքով ընդունեց ալիքների մեջ և պատեց նրան փետուրներով՝ երբ պատանին ընկզմվում էր ծովի հորձանուտի մեջ: Եվ Պրիամոսի որդին մահ չգտավ, որ տեսչում էր այնքան անձկությամբ: Արդեն թուշուն դարձած՝ Էսաքոսը ծովի երես զուրս եկավ: Վրդովվեց, որ պիտի ապրի իր կամքին հակառակ: Լենց նոր աճած թևերով նա խոյանում է վեր և ահազնաթափ ծովը նետվում, բայց փետուրները պահպանում են նրան: Կրկին ու կրկին ծովն է նետվում Էսաքոսը, ուզում է մահ գտնել ծովի հորձանուտում: Բայց մահ չունի նա, միայն սուզվում է ծովի ալիքներում և մնում անվնաս: Նիհարեց Էսաքոսի մարմինը, ոտքերը բարակեցին, վրդը երկարեց և սուզարագ դարձավ Էսաքոսը:

Հ Ի Ն Հ ՈՒ Ն Ա Կ Ա Ն Է Պ Ո Ս Ը

Ա Ր Գ Ո Ն Ա Վ Ո Ր Դ Ն Ե Ր

Արգանավորդների առշավանքի առասպելները ծիմնակաճում շարադրված են քստ Ապոլոն Հոգոսցու «Արգանավորիկա» պոեմի:

ՓՐԻՔՍՈՍ ԵՎ ՀԵԼԼԱ

Հինավուրց Մինիական Օրբոմենոսում, որ գտնվում էր Բեոպտիայում¹, իշխում էր հողմերի աստված Էոլոսի որդին՝ Աթամասը: Ամպերի աստվածուհի Նեփելեից երկու զավակ ուներ նա. տղան՝ Փրիքսոսը, և դուստրը՝ Հելլան: Դավաճանեց Նեփելեին Աթամասը և ամուսնացավ Կադմոսի դստեր՝ Ինոյի հետ: Ատեց Ինոն իր ամուսնու առաջին կնոջ երեխաներին և մտադրվեց կործանել նրանց: Նա համոզում էր օրբոմենուհիներին շորացնել ցանքսի սերմացուն: Ցանեցին օրբոմենցիները շորացած սերմերը իրենց դաշտերում, բայց ոչինչ չըուսնեց նրանց բարեբեր արտերում: Քաղցը սպառնում էր օրբոմենցիներին: Այդ ժամանակ Աթամասը վճռեց զեսպանություն ուղարկել սրբազան Դելփիք, նետաձիգ Ապոլոնի պատգամախոսից արտերի անբերրիության պատճառն իմանալու: Կաշառեց նենգամիտ Ինոն զեսպաններին և նրանք, վերադառնալով Դելփիքից, բերին պատգամախոսի կեղծ ու պաշտիր պատասխանը:

— Ահա թե ինչ պատասխան տվեց պիթիա գուշակուհին, — ասացին կաշառված զեսպանները Աթամասին, — աստվածներին զոհիր քո որդի Փրիքսոսին, և նրանք կրկին արտերը բերրի կդարձնեն:

¹ Մարզ Միլին Հունաստանում, որի զլխավոր քաղաքն է Քերին:

Օրբոմենոսին սպառնացող սոսկալի աղետից խուսափելու համար Աթամասը վճռեց զոհաբերել իր սիրասուն որդուն՝ Ցնծում էր Ինոն. նրան հաշողվել էր Փրիքսոսին կործանելու ծրագիրը:

Արդեն ամեն ինչ պատրաստ էր զոհաբերության համար: Փուրմի ռանակի հարվածից պիտի ընկներ Փրիքսոսը, բայց հանկարծ հայտնվեց ոսկեզիզ ոչխարը, Հերմես աստծո շնորհը: Ոչխարն ուղարկել էր Փրիքսոսի մայրը՝ Նեփելեի աստվածուհին, որպեսզի փրկի իր զավակներին: Փրիքսոսն իր քրոջ՝ Հելլայի հետ նստեց ոսկեզիզ ոչխարի վրա, և նա երեխաներին թոցրեց զեպի հյուսիս:

Արագ սլանում էր ոչխարը: Հեռվում, ներքևում, փռվում էին գաշտերն ու անտառները, իսկ նրանց մեջ գալարվում էին արծաթափայլ գետերը: Լեռներից էլ բարձր էր սլանում ոչխարը: Ահա և ծովը: Մովի վրայով է սլանում ոչխարը: Վախեցավ Հելլան, սարսափից շկարողացավ իրեն պահել ոչխարի վրա: Մովն ընկավ Հելլան և ծովի շառաշուն ալիքները կլանեցին նրան: Զկարողացավ փրկել քրոջը Փրիքսոսը: Զոհվեց Հելլան: Այդ ժամանակից ի վեր լույս, որին զոհ էր գնացել Հելլան, կոչվեց Հելիսպոնտոս (Հելլալի ծով, այժմյան Դարդանելի նեղուցը):

Ավելի ու ավելի հեռուն էր սլանում ոչխարը Փրիքսոսի հետ և մորջապես իջավ հեռավոր Կոլքիսի Փասիս¹ գետի ափերին. ուր իշխում էր Հելիոս աստծո որդին՝ կախարդ էլիտոսը: Դաստիարակեց էլիտոսը Փրիքսոսին, իսկ երբ նա հասակ առավ, ամուսնացրեց իր դստեր՝ Քալկիոպեի հետ: Իսկ Փրիքսոսին փրկող ոսկեզիզ ոչխարը զոհաբերեցին ամպահալած մեծն Զևսին: Ոչխարի ոսկեզիզը² էլիտոսը կախեց պատերազմի աստված Արեսի սրբազան անտառում: Գեղմը հսկեր պիտի սոսկալի, հուր ժայթքող վիշապը, որի աչքերը երբեք չէին փակվում քնից:

Ոսկեզիզի համբավը տարածվեց բովանդակ Հունաստանում: Փրիքսոսի հոր՝ Աթամասի սերունդները գիտեին, որ իրենց ցեղի փրկությունն ու բարգավաճումը կախված է գեղմին տիրելուց և ուղում էին ինչ գնով էլ լինի ձեռք բերել այն:

¹ Փասիս — այժմյան Թիոնը՝ Կովկասում, Հուլիերը Կոլքիս էին անվանում Անդրկովկասի սեծովյան ափերը:

² Գեղմ — բուրգ

Կապուտակ ծովախորշի ափին, Թեսալիայում¹ Աթամաս աղբայի եղբայրը՝ Կրեթևը, կառուցեց Յուլթոս քաղաքը: Բարգավաճեց Յուլթոսը, նրա բերրի դաշտերը, առևտուրն ու ծովագնացությունը հարստացրին քաղաքը: Երբ Կրեթևը մեռավ, Յուլթոսում իշխել սկսեց նրա եղբայր էսոնը, բայց նրա մոր կողմից հարազատ եղբայրը, Պոսելոսի որդին՝ Պելիասը, հափշտակեց նրա իշխանությունը և էսոնն ստիպված եղավ ապրել քաղաքում, իբրև հասարակ բաղաբացի:

Շուտով էսոնը արու զավակ ունեցավ, սքանչելի մի տղա: Վախեցավ էսոնը, որ ամբարտավան ու դաժան Պելիասը կսպանի իր զավակին, որ իրավունք ուներ Յուլթոս քաղաքի վրա իշխելու, և վճռեց թաքցնել նրան: Նա հայտարարեց, թե մանուկը մեռել է ծնվելուն պես և նույնիսկ առատ հոգեհաց տվեց, իսկ ինքը որդուն տարավ Պելիոն լեռան լանջերը, կենտավրոսներից ամենախիճատունի՝ Քիրոնի մոտ: Այնտեղ, անտառում, քարանձավի մեջ, մեծացավ տղան, և դաստիարակեցին նրան Քիրոնը, սրա մայրը՝ Փիլիրեն և կինը՝ Քարիկլոն: Իմասուն Քիրոնը տղայի անունը դրեց Յասոն: Ամեն ինչ սովորեցրեց Քիրոնը Յասոնին. սուր ու նիզակ բանեցնել, նեո արձակել պիրկ ձգված աղեղից, երաժշտություն սովորեցրեց և այն ամենը, ինչ ինքը գիտեր: Ոչ որ չէր կարող հավասարվել Յասոնին ճարակությունը, ուժով ու քաջությունը, իսկ գեղեցկությունը նա հավասարվում էր երկնի բնակիչներին:

Քսան տարի ապրեց Յասոնը Քիրոնի մոտ: Վերջապես նա վճռեց թողնել Պելիոնի մեկուսացած լանջերը, գնալ Յուլթոս և Պելիասից պահանջել, որ իրեն տա Յուլթոսի իշխանությունը:

ՅԱՍՈՆԸ ՏՈՂՔՈՍՈՒՄ

Շարադրված է քա Պրեզուոսի ստանալուների (Պրեզյան ձև):

Երբ Յասոնը եկավ Յուլթոս, նա անմիջապես քայլեց դեպի հրապարակը, բոլոր բնակիչների հավաքատեղին: Չարմանքով էին նայում Յուլթոսի բնակիչները պերճ պատանուն: Նա այնքան գեղեցիկ էր, որ բոլորը կարծում էին, թե նա կամ Ապոլոնն է, կամ էլ

¹ Մարզ Հյուսիսային Հունաստանի արևելքում:

Հերմեսը: Յասոնը հագնված էր ոչ այնպես, ինչպես Յուլթոսի բոլոր բնակիչները: Նրա ուսերին գցված էր հովազի խայտաբղետ մորթին և միայն աջ ոտքին էր հագել սանդալը¹: Յասոնի փարթամ զանգուրները թափված էին ուսերին, նա փայլում էր երիտասարդ ասածո գեղեցկությամբ և ուժով: Երկու նիզակի վրա հենված, նա հանգիստ կանգնել էր իրենով հիացող քաղաքացիների ամբոխի մեջ:

Այդ ժամանակ իր շքեղ երկանվով հրապարակ եկավ նաև Պելիասը: Նայեց նա պատանուն և ցնցվեց՝ նկատելով, որ պատանու միայն մի ոտքին սանդալ կա: Վախեցավ Պելիասը. չէ՞ որ պատգամախոսը մի ժամանակ գուշակել էր, որ նրան մահ է պատնում մի մարդուց, որ Յուլթոս կգա լեռներից և սանդալ կունենա միայն մի ոտքին. այդ մարդը, էսոնի որդին, պիտի ուժով կամ խորամանկությամբ կործանի Պելիասին, և այդ կործանումն անխուսափելի է:

Թաքցրեց Պելիասն իր երկյուղը և գոռոզաբար հարցրեց անծանոթ պատանուն.

— Ո՞րտեղացի ես, պատանի, և ո՞ր ցեղին ես պատկանում: Միայն թե ճիշտ պատասխան տուր, քեզ մի՛ պղծիր ստով, ես արգահատելի խաթեություն թշնամին եմ:

Հանգիստ պատասխան տվեց Յասոնը Պելիասին.

— Իմաստուն Քիրոնը միայն ճշմարտություն և ազնվություն է սովորեցրել ինձ, և ես միշտ հավատարիմ եմ նրա խրատներին: Ամբողջ քսան տարի ապրել եմ Քիրոնի քարանձավում և ոչ մի անգամ չեմ խախտել ճշմարտությունը, և ոչ մի անգամ չեմ մեղանչել նրա դեմ: Ես այստեղ տուն՝ իմ հայրենի Յուլթոսն եմ վերադարձել, իմ հոր՝ էսոնի մոտ: Ես պահանջում եմ, որ ինձ տրվի Յուլթոսում իշխելու իմ իրավունքը: Այդ իշխանությունը ինչպես լսել եմ, իմ հորից խլել է նեկզ Պելիասը: Քաղաքացիներ՝, տարեք ինձ իմ մեծ նախնիների տունը: Օտար չեմ ես ձեզ: Ես ծնվել եմ այստեղ, Յուլթոսում: Ես Յասոնն եմ, էսոնի որդին:

Յուլթոսի բնակիչները ցույց տվին Յասոնին նրա հոր տունը: Երբ Յասոնը տուն մտավ, հայրն իսկույն ճանաչեց որդուն: Ուրախության արցունքներ երևացին ծեր էսոնի աչքերին. նա ցնծում էր, տեսնելով, որ իր որդին դարձել է զորեղ ու չքնաղ պատանի:

¹ Թե ինչու Յասոնի միայն աջ ոտքին սանդալ կար՝ տե՛ս էջ 285.

Արագ հասա՞վ Յասոնի գալստյան լուրը Էսոնի եղբայրների՝ Փերեի թագավոր Փերեսի և Մեսենիացի Ամփաոնեսի մոտ: Եուտով նրանք էլ իրենց որդիների՝ Ադմետոսի և Մելամպոդոմեսի հետ հասան Էսոնի մոտ: Հինգ օր ու գիշեր Էսոնը և որդին նրա՝ Յասոնը, մեծարեցին նրանց խնջույքներով: Զրույցի ժամանակ Յասոնը հայտնեց նրանց իր ցանկությունը՝ վերադարձնել Յուլբոսի իր իշխանությունը: Հավանություն տվին նրանք Յասոնի այդ ցանկությունը և նրա հետ միասին գնացին Պելիասի մոտ: Յասոնը պահանջեց, որ Պելիասը վերադարձնի իշխանությունը և խոստացավ նրան թողնել այն ամբողջ հարստությունը, որ նա խլել էր Էսոնից: Պելիասը վախեցավ մերժել Յասոնին:

— Լա՛վ, ես համաձայն եմ, — պատասխան տվեց Պելիասը, — միայն մի պայման կգնեմ քո առաջ. դու պարտավոր ես նախ ստորերկրյա աստվածների գույթը շարժել: Հեռավոր Կողքիսում մեռած Փրիքսոսի ուրվականը աղերսում է, որ գնանք Կողքիս և տիրենք ոսկեգեղմին: Այդ գաղտնիքը բացեց ինձ Փրիքսոսի ուրվականը՝ երազիս մեջ: Ինքը նետաձիգ Ապոլոնը, Դելփիքում, պատվիրեց ճանապարհ ընկնել դեպի Կողքիս: Ծս ծեր եմ և անկարող նման մեծ սխրագործության. դու երիտասարդ ես, լի ուժերով, արա՛ այդ սխրագործությունը, և քեզ կտամ Յուլբոսի քո իշխանությունը:

Այդպես պատասխանեց Պելիասը Յասոնին՝ սրտի խորքում թաքցնելով սխր: Նա համոզված էր, որ կկործանվի Յասոնը, եթե վճռի Կողքիս գնալ՝ ոսկեգեղմը բերելու:

ՅԱՍՈՆԸ ՈՒՂԵԿԻՑՆԵՐ Է ՀԱՎԱՔՈՒՄ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԿՈՂՔԻՍ ԱՐՇԱՎԵԼ

Պելիասի հետ ունեցած խոսակցությունից անմիջապես հետո Յասոնն սկսեց Կողքիս արշավելու պատրաստություն տեսնել: Նա շրջեց ողջ Հունաստանը և ամենուրեք կոչ արեց իրենց սխրագործություններով հայտնի դարձած հերոսներին՝ Կողքիս արշավել՝ ոսկեգեղմը բերելու Բոլոր մեծահամբավ հերոսները արձագանքեցին նրա կոչին: Արշավանքին մասնակցելու համաձայնություն տվեց հերոսներից մեծագույնը՝ Հերակլեսը, Զևսի որդին: Բոլոր հերոսները հավաքվեցին Յուլբոս քաղաքում: Ո՞վ ասես, որ շփար հրաժանեց մեջ. այստեղ էին և՛ Աթենքի հպարտությունը՝ Թեսեոսը, և

Զևսի ու Լեդայի որդիները՝ Կաստորն ու Պոլիդեքսը իրենց բնակերներին՝ Իզասի և Լինքեոսի հետ, և՛ Բորեսաի ու Օրփեոսի որդիները՝ թևավոր Կալախոս ու Զեթեսը, և՛ Մելեագրոսը՝ Կալիդոնից, և՛ հզոր Անքեոսն ու Ադմետոսը, և՛ Տելամոնը և շատ ուրիշները: Հերոսների մեջ էր նաև երգիչ Օրփեոսը: Դեռ չէր տեսել Հունաստանը հերոսների այդպիսի մի հավաք: Հզոր ու չքնաղ՝ աստվածների նման, նրանք իրենց վրա էին հրավիրել Յուլբոս քաղաքի ողջ բնակչության հիացմունքով լի հայացքները: Ի՞նչ խոշորագույն կկանգնեցնեք նրանց: Ո՞վ կարող էր դիմագրավել նրանց: Ի՞նչը կըսարսափեցնեք նրանց:

Պատրաստ էր նաև հերոսների նավը: Այդ նավը շինել էր Արեստորասի որդին՝ Արգոսը, ինքը աստվածուհի Աթենասն էր օգնում նրան: Նա նավախելի մեջ էր ամրացրել Զևսի՝ Դոդոնեի պատգամախոսի անտառից սրբազան կաղնու մի կտոր: Մթանելի էր «Արգո» անունով այդ նավը: Նա թեթև էր ու ճեպընթաց. ճայի նման սլանում էր ծովի ալիքների վրայով: «Արգո» նավի անունով կոչեցին նաև արշավանքին մասնակցող հերոսներին՝ արգոնավորդներ («Արգոյի» նավաստիներ): Միայն Աթենասը չէ, որ հովանավորում էր արգոնավորդներին. նրանց իր պաշտպանության տակ էր առել նաև Հերան: Նա այրող ատելություններ էր լցված Պելիասի դեմ, որ իրեն զոհ չէր մատուցել: Յասոնը, սակայն, վայելում էր Հերայի հատուկ շնորհը: Մի անգամ, պատանի հերոսին փորձելու համար, նա զոռամյալ պառավի կերպարանքով հայտնվեց Յասոնին լեռնային գետակի ափին և արցունքն աչքերին խնդրեց մյուս ափն անցկացնել իրեն: Զգուշությամբ բարձրացրեց հերոսը նրան իր ուսերին և անցկացրեց կատաղի գետի միջով: Միայն ձախ ոտքի սանդալը կորցրեց Յասոնը, գետն անցնելիս: Այդ օրվանից սիրեց նրան Հերան և ամեն ինչով սկսեց օգնել նրան: Նետաձիգ Ապոլոնը ևս հովանավորում էր արգոնավորդներին. չէ՞ որ նա ինքն էր զրգել հերոսներին նախաձեռնել այդ արշավանքը և հենց ինքն էլ կանխագուշակել նրանց երջանկություն և հաջողություն:

Յուլբոսում հավաքված հերոսներն ուզում էին իրենց առաջնորդ ընտրել Հերակլեսին, բայց նա հրաժարվեց և առաջարկեց ընտրել Յասոնին: «Արգոյի» ղեկավար ընտրվեց Տիփիսը, իսկ նավաբեթին կանգնեց Լինքեոսը, որի աչքից ոչինչ չէր վրիպում ոչ միայն երկրի երեսին, այլ նույնիսկ գետնի տակ:

Ամեն ինչ պատրաստ էր ծով դուրս գալուս **Զուրն** իջեցրած **Արգոն** հանգարտ օրորվում էր ալիքների վրա, արգոն բարձված էին սննդամթերքի և ջրի պաշարները, մատուցվել էին Ապոլոնի և մյուս աստվածների զոհերը: Զոհարեութունը երջանիկ կանխադատակութուն էր ցույց տվել: Երեկոյան ուրախ խնջույք էին արել: Արգոն ժամանակն էր հեռավոր, վտանգներով լի նավարկության:

Հենց որ երկրի ծայրը բունկվեց արշալույսի ծիրանի լույսով, դեկապետ Տիփիզը արթնացրեց արգոնավորդներին: Արգոնավորդները մտան նավը և նստեցին թիակների մոտ՝ ամեն նստարանին երկուական մարդ: Համերաշխ թափով սեղմեցին թիակները հզոր թիավարները: Հպարտորեն լողաց **Արգոն**՝ նավահանգստից դեպի բաց ծով: Լողորդները պարզեցին ձյունածևեղմակ առագաստը և թեթև նավը արագ սլացավ ախորժալուր աղմկող ալիքների վրայով: Ահա՛ ձյունածևեղմակ ձիերը լծած երկանվով երկինք բարձրացավ արևի ճաճանշափայլ աստված Հելիոսը: Վարդապուհեց **Արգոյի**՝ առագաստը, և ծովի ալիքները փայլեցին արևի վազորդյան ճառագայթներից:

Զարկեց Օրփեոսը ոսկե կիթառի լարերին, և նրա սքանչելի երգը տարածվեց լայնածավալ ծովում: Հափշտակվեցին երգով հերոսները: Իսկ ծովի խորքից դուրս լողացին ձկներն ու արագաշարժ զելիփները: Օրփեոսի երգով գերված, լողում էին նրանք ալիքների վրայով արագ սլացող **Արգոյի**՝ հեռեկեց, նման այն հոտին, որ սքինգի ախորժալուր հնչյուններին ունկնդիր՝ հեռուում է հովվին:

ԱՐԳՈՆԱՎՈՐԴՆԵՐԸ ԼԵՄՆՈՍՈՒՄ

Կարճատև երջանիկ նավարկությունից հետո արգոնավորդները հասան ծաղկող Լեմնոս կղզին: Այնտեղ իշխում էր երիտասարդ թագուհի Հիպսիպիլեն: Ոչ մի տղամարդ չկար Լեմնոսում: Բոլոր ամառներին սպանել էին լեմնուհիները՝ նրանց դավաճանության համար: Միայն Հիպսիպիլեի հայրը՝ Փոանտես արքան էր փրկվել մահից: Նրան փրկել էր իր դուստրը:

Երբ արգոնավորդները մոտեցան Լեմնոսի ափին և լրաբեր ուղարկեցին քաղաք, լեմնուհիները խորհրդի հավաքվեցին քաղաքային հրապարակում և զեռատի Հիպսիպիլեն խորհուրդ տվեց քա-

ղաք շթողնել արգոնավորդներին: Նա վախենում էր, որ հերոսները կեղծանան այն շարադրածության մասին, որ գործել էին լեմնուհիները: Բայց պառավ Պոլուքսոն առարկեց թագուհուն: Նա պնդում էր, որ հարկավոր է քաղաք թողնել արգոնավորդներին:

— Ո՛վ պիտի պաշտպանի ձեզ, — ասում էր Պոլուքսոն, — եթե Լեմնոսի վրա հարձակվեն թշնամիները: Ո՛վ պիտի ձեռ մասին հող տանի, երբ դուք ձերանաք, երբ մնաք մեն-մենակ: Ո՛չ, քաղաք թողեք այդ օտարերկրացիներին, թող նրանք մնան այստեղ:

Լեռցին լեմնուհիները պառավ Պոլուքսոյին: Անմիջապես ուղարկեցին լեմնուհիներից մեկին **Արգոյից**՝ եկած լրաբերի հետ, հերոսներին խնջրելու, որ քաղաք մտնեն:

Հազով Յասոնն իր հոր ծիրանի զգեստը, որ ինքը՝ Աթենաս-Պալլասն էր գործել նրա համար, և զնաց քաղաք: Պատվով ընդունեց նրան Հիպսիպիլեն և առաջարկեց ապաստանել իր պալատում: Քաղաք եկան մյուս արգոնավորդները ևս: Միայն մի բանի մարդ, Հերակլեսի հետ միասին, մնացին **Արգոյի** վրա:

Չվարճութուն ու բերկրանք էր տիրում կղզում: Ամենուրեք, խարուկների վրա, զոհեր էին մատուցվում աստվածներին, տոնախմբություններին հաջորդում էին սոնախմբությունները, խրնջույթներին՝ խնջույթները: Կարծես թե հերոսները մոռացել էին այն մեծ սիրազործության մասին, որ սպասում էր նրանց: Անհոգ կերտվում էին անում նրանք հարուստ Լեմնոսում: Վերջապես Հերակլեսը արգոնավորդներին թաքուն ափ կանչեց, ուր կանգնած էր **Արգոն**: Հայրացած կշտամբեց նրանց հերոսներից վսեմագույնը, որ հանուն հանույթների, ուրախ ու անհոգ կյանքի՝ մոռացել են մեծագործությունների մասին: Կանգնել էին ամոթահար հերոսները՝ լսելով տեղին արված այդ նախատիքները: Նրանք վճռեցին իսկույն ևեթ թողնել Լեմնոսը: Անմիջապես **Արգոն**՝ պատրաստվեց ճանապարհ ընկնելու: Արգոն պատրաստվում էին հերոսները նավը մտնելու և թիակներն առնելու, երբ խմբով եկան լեմնուհիները: Նրանք աղաչում էին հերոսներին չըթել, մնալ էրենց հետ: Բայց հերոսներն անդրդվելի էին: Արցունքն աչքերին հրամեղա տվին նրանց լեմնուհիները: Մտան հերոսները **Արգոն**, համերաշխ թափով մղեցին թիակները, փրփրեցին ալիքները հզոր թիավարների հարվածներից, և թռչնի նման զեպի անծայրածիր ծովը սուրաց **Արգոն**:

Երբ արգոնավորդները նավում էին դեպի Պրոպանտիս¹ ծովը՝ ճանապարհին դեմ առան Կիզիկոս թերակղզուն։ Այստեղ դուրսնեին էին ապրում՝ Պոսեյդոնի հետնորդները։ Նրանց վրա Կիզիկոս թագավորն էր իշխում։ Կիզիկոս թերակղզուց ոչ հեռու գտնվում էր Արջասարը, որտեղ վեցբազկանի հսկաներ էին ապրում։ Պոսեյդոնի պաշտպանության շնորհիվ էր, որ դուրսնները կարողանում էին կողք-կողքի ապրել այգպիսի հարևանների հետ։ Կիզիկոս թագավորը պատվով ընդունեց արգոնավորդներին, և ամբողջ օրը նրանց հետ անցկացրեց խնջույքի սեղանի շուրջը։ Դեռ լույսը չէր բացվել, որ արգոնավորդները ճանապարհը շարունակելու պատրաստություն տեսան։ Նոր էին բարձրացել «Արգոյի» վրա, երբ հանկարծ նեղուցի հանդիպակաց ափին երևացին վեցբազկանի հսկաները։ Նրանք ծովն էին նետում վիթխարի քարաբեկորներ, ահադին ժայռեր էին պոկում ու դարսում իրար վրա, որպեսզի արգոնավորդներին խանգարեն ծովախորշից բաց ծով դուրս գալ։ Չեղբն առավ Հերակլեսն իր պիրկ աղեղը և իրար հետևից մահաբեր նետեր արձակեց հսկաների վրա։ Վահաններով պատսպարվելու, նիզակները ձեռքներին՝ արգոնավորդները նետվեցին դեպի հսկաները։ Երկար շտեպ մարտը։ Հսկաները մեկը մյուսի հետևից դեպին ընկան կամ ծովը թափվեցին, բոլորը ջախջախվեցին։ Նրանցից և ոչ մեկը չփրկվեց։

Ճամփա ընկան արգոնավորդները։ Համընթաց քամին ուռեցնում էր առաքաստը, և ամբողջ օրը «Արգոն» հանգիստ լողում էր ալիքների վրա։ Իջավ երեկոն, արևի աստված Հելիոսն իջավ երկրնից, գիշերը խավարով պատեց երկիրն ու երկիրը։ Քամին փոխեց ուղղությունը և արդեն «Արգոյին» ետ էր ըջում դեպի այն ափերը, որ դեռ նոր էին լքել։ Գիշերային խավարի մեջ արգոնավորդները դեմ առան Կիզիկոսին։ Չճանաչեցին նրանց Կիզիկոսի բնակիչները, ծովահենների տեղ ընդունեցին և, իրենց պատանի թագավորի գլխավորությամբ, հարձակվեցին նրանց վրա։ Սկսվեց գիշերային մի ահավոր ճակատամարտ։ Լիակատար խավարում հերոսները կռիվ էին մղում իրենց երեկվա բարեկամների դեմ։ Իր սրածայր նիզակով խոցեց հզոր Յասոնը պատանի արքա Կիզի-

կոսի կուրծքը և սա, հառաչանք արձակելով, գետին տապալվեց։ Բայց արշալույսի աստվածուհի էոսի ճառագայթները բոսորագույն ներկեցին արևելքը։ Լույսը բացվում էր։ Մարտիկները ճանաչեցին միմյանց և սարսափահար եղան։ Բարեկամները կովելիս են եղել բարեկամների դեմ։ Երեք օր արգոնավորդները և Կիզիկոսի բնակիչները սպանվածների պատվին մահվան խնջույք¹ արեցին, երեք օր ողբացին պատանի արքայի մահը։ Իսկ նրա կինը՝ գեղանի Կլեյտոն, Մերոպեի դուստրը, չդիմացավ ամուսնու մահվան վըշտին և սուրսայր սրով խոցեց իր կուրծքը։

ԱՐԳՈՆԱՎՈՐԳՆԵՐԸ ՄԻՍԻԱՅՈՒՄ

Կարճատև նավարկումից հետո արգոնավորդները հասան Միսիայի² ափերը։ Կանգ առան ափի մոտ ջրի և ուտելիքի պաշար վերցնելու։ Հզոր Հերակլեսը գնաց առափնյա անտառը, որպեսզի իր չարոգած թիակի փոխարեն նորը պատրաստի։ Նա մի բարձր եղևնի գտավ, իր հզոր բազուկներով բռնեց ու արմատախիլ արեց։ Հզոր հերոսը եղևնին ուսին էր դրել ու գալիս էր դեպի ծովափ։ Հանկարծ, նրան ընդառաջ վազեց նրա ընկեր Պոլիփեմոսը և պատմեց, թե հենց նոր լսել է պատանի Հիլասի ծայնը, որ կանչում էր իրենց։ Հերակլեսը փութաց փնտրել Հիլասին, բայց ոչ մի տեղ չբռավ նրան։ Տխրեց Հերակլեսը։ Պոլիփեմոսի հետ միասին ամենուրեք փնտրեց Հիլասին, բայց ապարդյուն։

Հենց որ եղևնցում երևաց այգաբացը նախագուշակող ճաճանչափայլ լուսաստղը, ճանապարհ ընկան արգոնավորդները, լուսազմեք մթնշաղի մեջ ընկատելով, որ իրենց հետ չեն ո՛չ Հերակլեսը, ո՛չ Պոլիփեմոսը։ Տրտմեցին հերոսները, երբ առավոտյան տեսան, որ չկան իրենց երկու պանծալի ընկերները։ Գլխահակ նստել էր վշտահար Յասոնը։ Նա կարծես չէր լսում իր ուղեկիցների տրտունջը, կարծես չէր նկատում Հերակլեսի և Պոլիփեմոսի բացակայությունը։ Հերակլեսի հավատարիմ ընկերը՝ Տելամոնը, մտեցավ Յասոնին և, հանդիմանություններ թափելով նրա գլխին, առաց։

¹ Հոգեհաց և մարտական մրցություն՝ մեռածի պատվին։

² Մալք Փոքր Ասիայի արևմուտքում, Պերգամոն գլխավոր քաղաքով։

— Միայն դ՛ու ես նստել աշղպես հանգիստ Այժմ կարող ես արախանալ: Այլևս մեզ հետ չի Հերակլեսը, և չկա մեկը, որ ստվերի քո փառքը: Ո՛չ, չեմ գա ես ձեզ հետ, եթե չվերադառնաք ու չփնտրեք Հերակլեսին ու Պոլիփեմոսին:

Նետվեց Տելամոնը դեպի նավավար Տիփիսը, կամենալով ստիպել, որ նա ետ գարձնի «Արգոն»: Զուր էին փորձում հանգրստացնել նրան Բորեասի սրդիները, ոչ քթի չէր ուզում լսեց մուկանած Տելամոնը, բոլորին մեղադրում էր նա, որ նրանք Հերակլեսին ու Պոլիփեմոսին գիտամա՞ր են թողել Միսիայում:

Հանկարծ, ծովի ալիքների միջից երևաց ծովային գուշակ աստված Գլավրոսի ջրիմուռներով պատած գլուխը: Բռնեց նա «Արգոյի» ողնուցը, կանգնեցրեց նավը և ասաց.

— Ամպրոպային մեծն Զևսի կամքով են Հերակլեսն ու Պոլիփեմոսը մնացել Միսիայում, Հունաստան պիտի վերադառնա Հերակլեսը և էվրիսթեսին ծառայելիս տասներկու մեծ սխրագործություն պիտի անի: Իսկ Պոլիփեմոսը քալիբդների երկրում պիտի հիմնադրի Քիոս փառավոր քաղաքը: Իսկ հերոսները Միսիայում են մնացել, քանի որ փնտրում են շքեազ Հիլասին, որին հափշտակել էին հավերժահարսները:

Ասաց ու նորից ծովը սուզվեց Գլավրոսը և անհետացավ արգոնավորդների աչքից:

Հանգստացան հերոսները: Տելամոնը հաշտվեց Ցասոնի հետ Թիակներն առան հերոսները, և «Արգոն» զորեղ թիավարների համերաշխ մղումով սուրաց ծովի հարթութան վրա:

ԱՐԳՈՆԱՎՈՐԴՆԵՐԸ ԲԻԹԻՆԱՅՈՒՄԻ (ԱՄԻԿՈՍ)

Հաջորդ օրը առավոտյան արգոնավորդները մոտեցան Բիթինիայի ափին: Նրանց այնպես սիրալիր շքնդուռեցին, ինչպես Կիզիկոսում: Բիթինիայում, ծովի ափին, ապրում էին բերրիները, որոնց վրա իշխում էր Ամիկոս արքան: Նա հպարտանում էր իր ահռելի ուժով և անպարտելի բունցքամարտիկի փառքով: Անողորմ արքան բոլոր օտարերկրացիներին ստիպում էր կռվել իր հետ և դաժանորեն սպանում էր նրանց բուռնցքի զորեղ հարվածով: Մաղր ու ծանակով դիմավորեց Ամիկոսը արգոնավորդներին, թա-

փառաշրջիկներ անվանեց նա մեծ հերոսներին և մարտի հրավերեց նրանցից ամենաուժեղին, եթե միայն նրանցից որևէ մեկը սիրտ կանի ուժով չափվել իր հետ: Զայրացան հերոսները նրանցից առաջ եկավ Զևսի ու Լիդայի որդին՝ պատանի Պոլիդեքսը: Նա անվրդով ընդունեց բերրիկների արքայի մարտահրավերը: Ահավոր Տիփոնի նման Պոլիդեքսի առաջ կանգնել էր Ամիկոսը իր սև թիկնոցով և հսկայական մահակը ուսին, մուսլի հայացքով նայում էր նա Պոլիդեքսին. իսկ նա կանգնել էր Ամիկոսի առաջ, աստղի նման շողալով իր գեղեցկությամբ: Մարտի պատրաստվեցին ուղամիկները, Հառափին նետեց Ամիկոսը բուռնցքների փոկերը¹: Առանց ընտրության վերցրեց Պոլիդեքսը ամենամոտիկ ընկած փոկերը և փաթաթեց ձեռքը: Սկսվեց մարտը: Կատաղած ցուլի նման հարձակվեց բերրիկների արքան Պոլիդեքսի վրա: Ծարպերեն վերադարձնում էր նրա հարվածները Պոլիդեքսը, ոչ մի բառ չմահանչելով Ամիկոսի նշման տակ: Ընդհատվեց մարտը մի ավիթարթ, որպեսզի շունչ առնեն ուղամիկները: Ահա նորից են մենամարտում նրանք և մեկը մյուսի հետևից տեղում են հարվածները: Վրա բերեց Ամիկոսը բուռնցքը և արդեն ուզում էր մի սուսկայի հարված հասցնել Պոլիդեքսի գլխին, բայց մի կողմ թեքվեց պատանի հերոսը և այնպիսի մի հարված հասցրեց Ամիկոսի ալիակին, որ փշրեց զանգուկը: Հոգեվարքի ցնցումներով գետին տապալկեց Ամիկոսը: Բարձրաձայն կանչելով ողջունեցին արգոնավորդները հաջողին:

Նոր բերրիկները տեսան, որ սպանված է իրենց արքան՝ հարձակվեցին Պոլիդեքսի վրա: Առաջին երկուսին ինքը՝ Պոլիդեքսը զնայեց անպարկեց բուռնցքի հարվածով: Զենքերն առան արգոնավորդները և կռվի ենթվեցին բերրիկների դեմ: Հողմի նման սուրում էր Ամիկոսի սակրը, մեկը մյուսի հետևից հարվածում էր նրանց Կատարը՝ իր փայլուն սուսերով: Առյուծների նման կռվում են հերոսները: Փայտուտի դիմեցին բերրիկները: Հերոսները երկար հետապնդում էին նրանց: Հարուստ ավարով նրանք ծովափ վերադարձան: Ամբողջ դիշերը կերուխում էին անում հաղթողները ծովափին, և բարձր հնչում էր Օրփեոսի հաղթական երգը: Իր ոսկե

¹ Բունցքամարտի ծամանակ հույները ձեռքերը մինչև արմունկը փաթաթում էին փակով, որոնց վրա հաճախ ամրացնում էին պղնձե ուռուցիկ թիթեղիկներ: Ելքայնով, հարվածը կարող էր մահացու լինել:

¹ Մարզ Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում:

կիթառի հնչյուններով փառաբանում էր նա բերրիկների արքա Ամիկոսին հաղթողին՝ ամպրոպային Ձևի չքնաղ որդուն՝ Պոլիդես քեօին:

ԱՐԳՈՆԱՎՈՐԴՆԵՐԸ ՓԻՆԵՎՍԻՒ ՄՈՏ

Հաշարգ օրվա առավոտյան արգոնավորդները շարունակեցին իրենց նախապարհը: Ետևով հասան Քրակիայի¹ ափերը: Հերոսները ափ գարս եկան պաշարները լրացնելու: Մովափին նրանք մի տուն տեսան և գնացին դեպի այդ տունը: Տնից արգոնավորդներին ընդառաջ եկավ մի կույր ծերուհի: Նա հաղիվ էր կանգնում առջերի վրա և ուժահատությունից ցնցվում էր ամբողջ մարմնով: Հասնելով իր տան շնմին, ծերունին ուժասպառ վայր ընկավ: Վերառան արգոնավորդները նրան և կարեկցանքը համակեց նրանց: Մերունու խոսքերից նրանք իմացան, որ նա Փինևսն է՝ Ագենորի որդին, Քրակիայի նախկին թագավորը, բայց Ապոլոնը պատժել էր Փինևսին, որովհետև նա շարաշահել էր Ապոլոնից շնորհած զուշակելու ձիրքը և մարդկանց առաջ բաց արել Ձևի գաղտնիքները: Ապոլոնը կուրացնում է Փինևսին, իսկ աստվածները Փինևսի մոտ են ուղարկում հարպիաներին՝ կեսդեղ-կեսթուններին, որոնք թռչում զալիս էին նրա տուն, խժռում ամբողջ ուտելիքը և դարշահոտությունը լցնում ամբողջ տունը: Աստվածները իմաց էին տվել Փինևսին, որ այդ պատժից նա կազատվի այն ժամանակ միայն, երբ նրա մոտ զան արգոնավորդները, որոնց մեջ կլինեն Բորեասի երկու թևավոր որդիները՝ Ջեթեսը և Կալադիեսը: Փինևսն սկսեց աղաչել հերոսներին, որ աղատեն իրեն այդ աղետից, Բորեասի

¹ Փինևսի առասպելը մի ուրիշ վերսիայով, որ բերում է պատմարան Դոնորոսը, էնգլանդ գտադրած է իբրև մայրիշխանության վերադրուկի օրինակ իր «Հետանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» գրքում: Էնգլիսը գրում է. «... արգոնավորդները Հերակլեսի առաջնորդությամբ ափ են իջնում Քրակիայում և այնտեղ տեսնում են, որ Փինևսը, իր նոր կնոջ զրգմամբ, աաստիկ տանջում է իր երկու որդիներին, որոնց նա ունեցել էր իր մերժված կնոջից՝ Բորեասի զուտար Կլեոպատրայից: Բայց արգոնավորդների մեջ կային նաև Բորեասի որդիները, Կլեոպատրայի եղբայրները, ուրեմն՝ կեղբովուղների քեռիները: Սրանք իսկույն ձեք պաշտպան են կանգնում իրենց քեռորդիներին: Սպանում են պահակներին և աղատում նրանց»: (Կ. Մարթս և Ֆ. Էնգլիս, «Հնարի երկեր», Հայպետհրատ, 1950, էջ 367):

² Երկիր Բալկանյան թերակղզու հյուսիս-արևելքում:

որդիներին աղերսում էր արտաքսել հարպիաներին. չէ՞ որ ցուար չէր նա Բորեասի որդիներին՝ նա ամուսնացել էր նրանց քրոջ՝ Կլեոպատրայի հետ:

Համաձայնեցին հերոսները օգնել Փինևսին: Նրանք ճոխ սեղան բաց արին, բայց հենց որ Փինևսը թիկնեց՝ սեղանի մոտ, որ ջաղջը հագեցնի, իսկույն թռան-եկան հարպիաները և, ուշադրություն չդարձնելով արգոնավորդների ճիչերին, խժռեցին ողջ ուտելիքը, սոսկալի գարշահոտություն տարածելով տանը, և հետո թռան-հեռացան Փինևսի տանից: Իրենց հզոր թևերով նրանց հետեից նախքեցին Բորեասի որդիները: Երկար հետապնդեցին նրանք հարպիաներին և վերջապես հասան նրանց Պլոտիյան կղզիներում: Բորեասի որդիները մերկացրին իրենց սրերը, և արգեն ուղում էին հարվածել հարպիաներին, երբ հանկարծ բարձր Օլիմպոսից իր վարդազույն թևերով սլացավ աստվածների պատգամաբեր Իրիսը: Նա կանգնեցրեց Բորեասի որդիներին և ասաց, որ աստվածները պատվիրել են հարպիաներին այլևս չվերադառնալ Փինևսի մոտ: Նորից գնալ Քրակիա թռան Բորեասի որդիները:

Այդ օրվանից Պլոտիյան ժայռերը կոչվեցին Ստրոփագոս² կղզիներ, այսինքն վերադարձի կղզիներ:

Հենց որ Բորեասի որդիներից հետապնդվող հարպիաները թռան, արգոնավորդները Փինևսի համար նորից ճոխ սեղան բաց արին և ծերունին վերջապես կարողացավ հագեցնել իր սոսկալի ջաղջը: Կերպումի ժամանակ Փինևսը արգոնավորդներին հայտնեց. թե ինչ վտանգներ են սպասում նրանց Կողքիս տանող ճանապարհին և խորհուրդներ տվեց. թե ինչպես պիտի հաղթահարել զրանք Փինևսը: Կերպումի խորհուրդ տվեց նաև, որ Կողքիս հասնելուն պես օգնության կանչեն սկիզբող Ափրոդիտին, բանի որ նա միայն կարող է օգնել ծաստնին՝ ձեռք բերելու սկիզբեղմը: Եղբայր ափանջ որին արգոնավորդները իմաստուն ծերունուն, ջանալով լավ հիշել ծերունու խոսքերը:

Ետևով վերադարձան նաև Բորեասները և պատմեցին, թե ինչպես էին հետապնդել հարպիաներին: Ուրախացավ զառամած Փինևսը, որ վերջնականապես աղատվել է հարպիաներից:

¹ Հայերը սովորաբար ոչ թե նստում էին սեղանի առաջ, այլ թիկն էին ուղի՝ մի մտքով հենված բարձին:

² Ստրոփագոս — երեք փոքր կղզիներ, որոնք ընկած էին Հունաստանի Հարավում, Մեծնիայի արևմտյան ծովափի հանդիման:

Երկար չմնացին արգոնավորողները Փինևսի մոտ։ Երանք շտապում էին շարունակել ճամփան։ Արագ սլանում էր «Արգոն» ծովի ալիքների վրայով։ Հանկարծ, հեռավոր մի աղմուկ լսվեց առջևում։ Ավելի ու ավելի հստակ և ուժգին էր ելնում աղմուկը, որ նման էր մոտեցող փոթորկի մոնչլունին, որ երբեմն-երբեմն խլանում էր որոտի գղրղյունից։ Ահա և երևացին Սիմպլեզադյան ժայռերը։ Հերոսները տեսան, թե ինչպես հեռանում և նորից, մի սոսկալի գղրղյունով իրար են բախվում ժայռերը։ Ծովն այնպե՞ս էր նրանց շուրջը, չքի շիթերը բարձր թռչում էին նրանց յուրաքանչյուր բախյունից։ Իսկ երբ հեռանում էին ժայռերը, ալիքները նրանց միջև պատվում էին խելահեղ շրջապտույտի մեջ։

Մտաբերեցին հերոսները Փինևսի խորհուրդը՝ նախ մի աղավների բաց թողնել ժայռերի միջով։ Եթե թռչի անցնի աղավնին, ապա «Արգոն» ևս անվնաս կանցնի Սիմպլեզադների մոտով։ Մի նոր ուժով դորձի դրին թիակները արգոնավորողները։ Արդեն ժայռերի մոտ են նրանք։ Գղրղոցով իրար բախվեցին ժայռերը և նորից հեռացան իրարից։ Այդ ժամանակ էվֆեմնոսը բաց թողեց աղավնին։ Նետի նման սլանում է աղավնին երկու ժայռերի միջով։ Ահա նորից բախվեցին ժայռերը, անսլիսի գղրղոցով, որ կարծես երկիրները ցնցվեց։ Այդ չքի ցայտերը թրջեցին արգոնավորողներին, իսկ «Արգոն» հողմի բերանն ընկածի նման պտտվեց ալիքների մեջ։ Անվնաս թռավ-անցավ աղավնին ժայռերի արանքից, միայն պոչի ծայրը պոկեցին իրար բախվող ժայռերը։ Ուրախացած աղաղակեցին արգոնավորողները և բոլորը միասին ծովին տվին թիակները։ Հեռացան ժայռերը։ Հսկայական, փրփրաբաշ մի ալիք հասփրշտակեց «Արգոն» և նետեց նրան դեպի նեղուցը։ Դեմ-հանդիման է վազում մի ուրիշ ալիք, որ ետ է շարժում «Արգոն»։ Ալիքները ետում են, փրփրում շուրջը։ Կորանում են թիակները, «Արգոն» ճռճոտ է, կարծես սուղվում է ալիքների ճնշումից։ Ահա բարձրացավ ևս մի լեռնաշափ ալիք, նա փուլ եկավ «Արգոնի» վրա և նավը խարխուլ մակույկի նման պտտվեց տեղում։ Արդեն մոտենում

1 Սիմպլեզադներ կամ Սիմպլեզադյան ժայռեր, հայերեն թարգմանվում է «իրար բախող ժայռեր», հույների պատկերացմամբ գտնվում էին Սև ծովի մոտերի մոտ։

են ժայռերը, որ որ է կրախվեն նրանք։ Կործանումն անխուսափելի է։ Այդ ժամանակ արգոնավորողներին օգնության հասավ Զևսի սիրելի դուստրը, ինքը Աթենաս-Պալլասը։ Հզոր ձեռքով նա պահեց ժայռերից մեկը, իսկ մյուսով այնպես տժգին հրեց «Արգոն», որ նավը Նետիպես դուրս եկավ և նեղուցից։ Միայն դեկի ծայրը փշրեցին բախվող ժայռերը։ Նորից հեռացան ժայռերը և կանգ առան, ընդմիջում անշարժացած նեղուցի երկու կողմերում։ Կատարվեց ճակատագրի կամքը, որ Սիմպլեզադները կանշարժան միայն այն ժամանակ, երբ նրանց միջով մի նավ կանցնի։ Ուրախացան արգոնավորողները։ Նրանք խույս էին տվել ամենատևալի վտանգից։ Այժմ արդեն կարող էին վստահ լինել, որ նրանք վախճան կունենա իրենց արշավանքը։

ԱՐԵՏՄԱՆ ԿՂՉՈՒ ԵՎ ԿՈՂՓՈՍ ԺԱՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երկար նավում էին արգոնավորողները էվֆեմնյան Պանոսի՞ն ափերով։ Վերապես հնչում նրանց մի կղզու «Արգոն» արագորեն մոտենում էր կղզուն, արդեն հեռու չէր ափը։ Հանկարծ, թևերը արե՛ր շողերի մեջ փայլեցնելով, կղզուց վեր ճախրեց մի մեծ թռչուն, նա թռավ «Արգոն» նավի գլխավերևը և իր փետուրներից մեկը ցրեց հերոսներից մեկի՝ Օթիևսի վրա։ Փետուրը նետի նման իրանց Օթիևսի ուտի մեջ, արյունը ժայթքեց վերջից, և թիակն ընկավ փրավոր հերոսի նեղուցից։ Օթիևսի ընկերները դուրս քաշեցին նետը վերջից։ Զարմանքով նայում ու տեսնում են արգոնավորողները, որ փետուրը մեռալից է և նետի նման սուր։ Ահա կղզուց վեր ճախրեց մի ուրիշ թռչուն և թռավ դեպի «Արգոն», բայց նրան արդեն աղեղը ձեռքին սպասում էր հերոս Կլիթիոսը։ Հենց որ թռչունը մոտեցավ Արգոնին, Կլիթիոսը աղեղը ձգեց, նետն արձակեց և սպանված թռչունն ընկավ ծովը։ Մետաղյա փետուրներով այդ թռչուններին տեսնելուն պես արգոնավորողները հասկացան, որ դրանք Ստիմփալոսյան թռչուններն են, իսկ այն կղզին, ուր ապրում են նրանք, Արետիաս կղզին է։ Ամփիղամանատը խորհուրդ տվեց հերոսներին հագնել զրահները և ծած-

1 էվֆեմնյան Պանոս—այսինքն՝ հյուրընկալ ծով, այդպես անվանեցին հույները Սև ծովը, ծանոթանալով նրա բարեբեր, հյուրընկալ ափերի հետ, իսկ առաջին անգամ էին Աթենյան՝ ալսինքն անհյուրընկալ, որովհետև նրանց վախեցնում էին այդ ծովի փոթորիկները։

կըվել վահաններով: Մինչև ասի հասնելը, արգոնավորողները սկսեցին աղաղակել, նիզակներով ա սրերով խփել վահաններին: Թռչունների մի հսկայական երամ սավառնեց կզզուց, թռավ «Արգոյից» շատ բարձր, և փնտուր-նետերի անձրև տեղաց հերոսների վրա: Այդ նետերից հերոսները պաշտպանվեցին վահաններով: Իսկ թռչունները, մի շրջան անելով «Արգոյի» վերևում, ջուտով անհետացան հեռու հորիզոնի հետևը:

Արգոնավորողները Արեւտիասի ափը դուրս եկան և արդեն ուզում էին հանդիստ առնել, երբ նրանց զեմ էլան շորս պատասխի Պատանինները սոսկալի հյուժված էին, ցնցոտիները հազիվ էին ծածկում նրանց մարմինը: Գրանք Փրիքսոսի որդիներն էին: Նրանք նկնլ էին Կողքիսից, որ վերադառնան Օրբոմենոս, բայց գիշերը փոթորիկը խորտակել էր նրանց նավը, միայն հրջանիկ պատահականությամբ ալիքները նրանց նետել էին Արեւտիաս կղզին, որտեղ և գտան նրանց արգոնավորողները: Հերոսներին ուրախություն պատճառեց այդ հանդիպումը. հատկապես ուրախ էր Յասոնը. լե՞ որ պատանիները նրա հարազատներն էին: Կերակրեցին արգոնավորողները պատանիներին, նոր հագուստներ տվին նրանց և պատմեցին, որ գնում են էյեթոսի թագավորությունը ոսկեզեղմը բերելու Պատանիներից: ավազը՝ Արգոսը, խոստացավ օգնել արգոնավորողներին, բայց նախազգուշացրեց նրանց, որ էյեթոս արքան՝ Հելիոսի որդին, հզոր ա դաժան է, և ոչ քի չի խնայում: Բայց ոչինչ չէր կարող ետ պահել արգոնավորողներին մեկ անգամ արդեն ընդունված՝ ոսկեզեղմը ձեռք բերելու վճռից:

Հաջորդ առավոտյան արգոնավորողները շարունակեցին ճանապարհը: Երկար նավում էին նրանք: Վերջապես հեռվում, հորիզոնում հավաքված ամպերի նման, կապտին տվին Կովկասի բարձունքները: Այժմ արդեն հեռու չէր Կողքիսը:

«Արգոն» արագ սլանում էր համաշափ թիավարումից: Արդեն ծածկվում էր արևը՝ իչնելով դեպի ծովը: Մթնշաղի սավերները սահեցին ալիքների վրայով: «Արգոյից» շատ բարձր, թևերի զորավոր բախյունի ձայն լսվեց: Մի հսկայական արծիվ էր ճախրում դեպի այն ծայրը, որին գամված էր տիտան Պրոմեթևսը: Քամի բարձրացավ ծովի վրա՝ արծիվ հսկայական թևերի բախյունից: Արծիվն անհետացավ հեռվում և արգոնավորողներին հասան Պրոմեթևսի ծանր հառաչանքները, որ երբեմն խլանում էին թիակները՝ ճողփյունի ձայնից:

Արդեն հեռու չէր ափը: Ահա և Փասիսի գետաբերանը: Արգոնավորողները թիավարելով բարձրացան հոսանքն ի վեր և խարխիս մղեցին եզեզնապատ գետախորշում: Յասոնը երախտազիտության մաղթանք արեց աստվածներին և դիմեց Կողքիսի աստվածներին և մեռած հերոսների որդիներին, որ օգնեն իրեն այդ վտանգավոր ջրծով: Խաղաղ ընով ցնեցին հերոսները «Արգոյի» վրա: Նրանք հասել էին իրենց նպատակին, արդեն Կողքիսում էին, էյեթոս արքայի մայրաքաղաքի մոտ, բայց զեռ շատ վտանգներ էին սպասում նրանց:

ԼԵՐԱՆ ԵՎ ԱԹԵՆԱՍԸ ԱՓՐՈՂԻՏՆԻ ՄՈՏ

Այդ արգոնավորողները հասան Կողքիս, մեծ աստվածուհի Հեռան և աստվածուհի Աթենասը խորհուրդ էին անում բարձրաբերձ ճիշդումք վրա, թե ինչպես օգնեն Յասոնին՝ ձեռք բերելու ոսկեզեղմը: Վերջապես զիցուհիները վճռեցին զնալ սիրո աստվածուհու՝ Ափրոդիտեի մոտ և խնդրել, որ նա հրամայի իր որդուն՝ էրոսին, ոսկե նետով խոցել էյեթոսի գտեղը՝ Մեղեայի սիրտը և սեր ներշնչել նրան զեպի Յասոնը: Գիտեին զիցուհիները, որ կախարդ Մեղեան միայն կարող է օգնել Յասոնին՝ վտանգներով լեցուն սիրտով ժամկետ:

Այդ նիստ աստվածուհիները նկան Ափրոդիտեի մոտ, նա տանը մնում էր. նստած էր իր փառահեղ ոսկե զահին և ոսկե անոթով անոթում էր իր փայթած զանգուրները: Ափրոդիտեն տեսավ նրա մտեղ զիցուհիներին, նրանց ընդառաջ զնաց և սիրալիկ ուղտյն տվեց: Աստվածուհիներին նստեցնելով Հեփեսոսի շինած ոսկե նստարանին, սիրո աստվածուհին հարցրեց նրանց այլընտրանք պատճառը: Գիցուհիները պատմեցին, թե ինչպես են ուղում օգնել Յասոնին և խնդրեցին Ափրոդիտեին, որ պատվիրի էրոսին խոցել Մեղեայի սիրտը: Համաձայնեց Ափրոդիտեն: Հրամայեց ավին աստվածուհիները Ափրոդիտեին, և նա զնաց փնտրելու իր շարանի որդուն: Էրոսն այդ ժամանակ վեզ էր խաղում Գանիմեդի հետ: Տարել էր խաղի մեջ էրոսը պարզամիտ Գանիմեդեպին և քարկուռայն ծիծաղում էր նրա վրա: Այդ պահին նրանց մտեցավ Ափրոդիտեն: Նա զրկեց իր որդուն և ասաց.

— Այնպե՛ղ զիր, շարանձի՛: Քեզ մի զործ եմ ուղում հանձնաբերելու: Ետա վերցրո՛ւ, բո աղեղն ու նետերը և թոխր երկիր: Այն-

տեղ, Կողբիսում, խոցիր էյնթոսի գատեր՝ Մեղեալի սիրար, թող նա սիրի հերոս Յասոնին: Եթե ի կատար ածես գա, ես քեզ կնվիրեմ այն խաղալիքը, որ Ագրաստեան շինել էր փոքրիկ Զևսի համար: Միայն թե խելոյն թուիր, դա հարկավոր է շո՛ւտ անել:

Էրոսը մորը խնդրեց խաղալիքը տալ հենց հիմա, բայց մայրը ճանաչում էր խորամանկ որդուն, շհամաձայնեց տալ խաղալիքը, մինչև չկատարի հանձնարարությունը: Համոզվելով, որ ոչինչ չի ստանա մորից, մինչև որ չկատարի նրա հանձնարարությունը, էրոսը վերցրեց աղեղն ու նետերը և արևի շոգերի տակ փայլեցնելով իր ոսկեղեն թևերը, բարձրաբերձ Օլիմպոսից սլացավ դեպի Կողբիս:

ՅԱՍՈՆԸ ԷՅԵԹՈՍԻ ՄԱՏ

Ասավոտ վաղ արթնացան արգոնավորդները: Խորհուրդ արին նրանք ու վճռեցին, որ Յասոնը Փրիքսոսի որդիների հետ պիտի գնա էյնթոսի մոտ և խնդրի, որ արգոնավորդներին տա ոսկեզեղամյր, իսկ եթե մերժի դրոշուց արքան, այն ժամանակ միայն պիտի դիմել ուժի:

Խաղաղության ցուպը ձեռքին Յասոնը ճանապարհվեց դեպի էյնթոսի պալատը: Անթափանց ամպերով ծածկեց Յասոնին և նրա ուղեկիցներին Հերա դիցուհին, որ շվիրավորին հերոսներին Կողբիսի բնակիչները: Երբ հերոսները մոտեցան պալատին, ամպերը ցրվեցին և նրանք տեսան էյնթոսի պալատը: Փառահեղ մի ապարանք էր դա: Բարձր պատեր և բազմաթիվ երկնաալաց աշտարակներ ուներ նա: Մարմարաղարդ լայն դարպասները տանում էին պալատ: Ընթանակ այնուաշտերը փայլկոտում էին արևի տակ՝ ոչունաղարդ մի նախաօրահ կազմելով:

Այն ամենը, ինչ կար էյնթոսի պալատում, նրա ասպարանքի շքեղ կահույքը շինել էր Հեփեստոսը իբրև երախտագիտութուն էյնթոսի հորը՝ արևի աստված Հելիոսին, որը իր ոսկեղեն կառքով Փլեգրեյան դաշտից փախցրել էր դիզանտների հետ ունեցած կրուվում ուժասպառ եղած Հեփեստոսին: Արքունիքը շրջապատված էր բազմաթիվ ասպարանքներով: Ամենափառահեղ ասպարանքում սպարում էր էյնթոսն իր կնոջ հետ, մյուսում՝ նրա որդին՝ Արսիրոսը: Կողբիսիցիները Արսիրոսին գեղեցկության պատճառով կոչում էին Փակթոն (շողշողուն): Մյուս ասպարանքում սպարում էին էյնթոսի

արեհները՝ Քալկիոսին, հանդուցյալ Փրիքսոսի կինը և էյնթոսի կրտսեր դուստրը՝ Հեկատե աստվածուհուն սպասարկող ամենազոր կախարհ Մեղեան:

Երբ Յասոնն իր ուղեկիցների հետ էյնթոսի պալատի քակց մտավ, իր ասպարանքից դուրս եկավ Մեղեան: Նա գնում էր Քալկիոսին այցելության: Զարմանքից ճլաց Մեղեան, տեսնելով ստարերկրացիներին, նրա ձայնի վրա դուրս եկավ Քալկիոսին և տեսավ իր որդիներին: Նրանց վերադարձով ուրախացած՝ Քալկիոսն ժառ վազեց աղաներին: Նա գրկում, համբուրում էր իր դաժակներին, որոնց տեսնելու հույս չուներ այլևս: Աղմուկի վրա զարս եկավ էյնթոսը: Նա պալատ հրավիրեց օտարերկրացիներին, և սպասուկոններին կարգադրեց ճոխ խնջույքի պատրաստություն անելու: Երբ Յասոնը սղջույններ էր փոխանակում էյնթոսի հետ, քարկարերը Օլիմպոսից իր սակն թևերով ցած սուրաց էրոսը: Մյան ճեռնը թարեված, պրկեց իր աղեղի լարը և հանեց ոսկեձուլլ նետը: Հետք ուղարին անտեսանելի, կանգնեց Յասոնի հետևում և քաջ թռչեց նետը ուղիղ դեպի Մեղեայի սիրտը: Խոցեց նրա սիրտը նետը, և նա անմիջապես սիրեց Յասոնին:

Յասոնն իր ուղեկիցների հետ մտավ էյնթոսի պալատը: Այնուանց Կողբիսի արքան հրավիրեց նրանց թեք ընկնել խնջույքի սեզանի մաս կնջույքի մամածակ Արգոսը էյնթոսին պատմեց, թե ինչպես են նախարկություն մատնվել ինքն ու եղբայրները: Խնջույն են կտառայի ալիքները Մերոփա կղզին դեղ նրանց և թե ինչպես են արգոնավորդները գտել իրենց՝ սովամահ եղողներին: Արքան ասաց նաև, թե ինչու են Յասոնը և մյուս հերոսները անել Կողբիս: Ընկնեց որ էյնթոսն իմացավ, որ Յասոնն ուղում է մեկ քնքել սակեղեղը, զայրույթից փայլատակեցին նրա աչքերը: Եւ նա անձեռքով կիտեց հոները: Չէր հավատում էյնթոսը, թե սակեղեղի համար են նավել ու այդտեղ հասել հերոսները:— Արդոյ որդ Կողբիսի իշխանությանը տիրելու չե՞ն եկել Փրիքսոսի որդիները, և դրա համար չե՞ն բերել հույն հերոսներին,— մտածում էր նա: էյնթոսը հանդիմանություններ է թափում Յասոնի վրա, նա ուղում է վեճել նրան արքունիքից, սպանում մահապատժով: Արդեն պատրաստվում էր ցատումնալից խոսքերով պատասխանել Տիլամոնը արքայի սպանալիքներին, բայց Յասոնը կանգնեց նրան: Նա ջանում էր հանգստացնել էյնթոսին, համոզում էր նրան, որ միայն ոսկեզեղմի համար են եկել Կողբիս, և

խոստանում էր արքային ամեն տեսակի ծառայություն, ի կատար անել կամեցած հանձնարարությունը, միայն թե իբրև պարզև արքան իրեն տա ոսկեզեղմը: Միտք արեց էյնթոսը Վերջապես, վճռելով կործանել Յասոնին, ասաց.

— Լա՛վ, դու կատանաս զեղմը, միայն թե նախ կատարիր հետևյալ հանձնարարությունը. վարիր Արեսին նվիրաբերած գաշտը իմ երկաթե գուլանով, իսկ գուլանին լծիր պղնձոտն, հրաշունչ ցույնիին. այդ դաշտում վիշապի ժանիքներ ցանիր, և երբ այդ վիշապի ժանիքներից զուրս կգան զրահակուռ ուղմիկներ, կովիր և շարդիր նրանց: Եթե կատարես այդ՝ քո՛նը կլինի զեղմը:

Յասոնը հապաղեց պատասխան տալ էյնթոսին. վերջապես այսպես խոսեց.

— Համաձա՛յն եմ, էյնթոս, բայց դո՛ւ էլ կատարիր տվածդ խոստումը: Գիտես, որ ես չեմ կարող հրաժարվել տվածդ զործը կատարելուց, քանի որ կամոքն ճակատագրի եկել եմ այստեղ, Կողքիս:

Ասաց ու հեռացավ Յասոնը՝ իր ուղեկիցների հետ:

ԱՐԳՈՆԱՎՈՐԴՆԵՐԸ ԴԻՄՈՒՄ ԵՆ ՄԵԳԵԱՅԻ ՕԳՆՈՒԹՅԱՆԸ

Երբ Յասոնը վերադարձավ «Արգո» նավը, պատմեց ընկերներին էյնթոսի պալատում տեղի ունեցածի մասին և ասաց, թե ի՛նչ հանձնարարություն է տվել արքան: Մտքի մեջ ընկան արգոնավորդները: Ի՛նչ անել, ինչպե՛ս իրագործել էյնթոսի հանձնարարությունը: Վերջապես Արգոսն ասաց.

— Բարեկամներ, էյնթոսի պալատում է պարում նրա դուստրը՝ Մեդեան: Նա հզոր կախարհ է, և միայն նա կարող է օգնել մեզ: Ես կգնամ մորս խնդրելու, որ համողի Մեդեային օգնել ձեզ: Եթե օգնի Մեդեան, ապա ոչ մի վտանգ սարսափելի չէ մեզ համար:

Խոսեց Արգոսը թե չէ՝ «Արգոյի» վերևում սլացավ մի աղավնի, որին հետապնդում էր ուրուրը: Աղավնին թռավ Յասոնի մոտ և թաքնվեց նրա թիկնոցի ծալքերում, իսկ ուրուրն ընկավ «Արգոյի» վրա:

— Սա կրջանիկ վախճանի կանխանշանն է աստվածների, — բացականչեց իմաստուն Մոփսոսը, — իրենք աստվածներն են հրամայում դիմել Մեդեայի օգնությանը: Տեսե՛ք, Ափրոդիտին

նվիրաբերած թռչունը փրկություն գտավ Յասոնի կրծքի վրա: Մտաբերեցե՛ք, թե ի՛նչ էր ասում Գինևաը: Մի՛թե մեզ խորհուրդ չէր տալիս, որ դիմենք Ափրոդիտեի օգնությանը: Դե, աղերսեցե՛ք զիցուհուն, նա կօգնի մեզ: Թող Արգոսը փութա մոր մոտ, և նա կհամոզի Մեդեային, որ մեզ օգնություն ցույց տա:

Լսեցին իմաստուն Մոփսոսին արգոնավորդները: Զո՛հ մատուցեցին Ափրոդիտեին, և Արգոսն շտապեց դեպի էյնթոսի պալատը՝ մոր մոտ:

Այդ միջոցին էյնթոսը հրապարակում հավաքել էր բոլոր կողքեպլներին: Նա ասաց ժողովրդին օտարերկրացիների պալատյան մասին և կարգադրեց հսկել «Արգոյին», որ արգոնավորդներից ոչ ոք չպատմի փախուստով: էյնթոսը վճռել էր այրել «Արգոն» հետևելով հանրին, երբ Յասոնն արդեն զոհված կլիներ Արեսին նվիրաբերած գաշտում. իսկ Փրիքոսի որդիներին վճռել էր տանջելու պատժ ներարկել:

Վա հասավ զիջերը: Ետ քան մտավ էյնթոսի մայրաքաղաքը՝ Ամինոսիք անգորն էր թագավորում: Միայն Մեդեան է անհանգիստ: Նրա զխավերում իբար հետևից սահում են կրակները, մեկը մյուսից տաղնապալի: Մերթ տեսնում է Մեդեան, թե Յասոնը մարտնչում է ցույների հետ, իսկ հերոսի հաղթանակի պարզել ինքն է՝ Մեդեան: Մերթ էլ տեսնում է, թե ինքն է կռվի թանձի հրաշունչ ցույների հետ և հեշտությամբ հաղթում է նրան: Մերթ էլ տեսնում է, թե ինչպես ծնողները հրաժարվում են իրեն վեռվան ապ Յասոնին՝ չէ՛ որ Յասոնը շի հաղթել ցույնիին: Վե՛ է թանկում Յասոնի և էյնթոսի միջև, և Մեդեան պիտի լռե՛ր այդ վճռը: Իսկ երբ նա այդ վե՛նը լուծում է հօգուտ Յասոնի, ապա զայրանում է հայրը և անհղորեն սաստում իրեն: Արցունքն աչքերին արթնացավ Մեդեան. ուզում էր վազել Փալկիոսի մոտ, բայց ամաչում էր: Երեք անգամ բռնեց դուռն անակր, բայց ամեն անգամ էլ ետ դարձավ: Ընկավ Մեդեան իր մահճի վրա և հեկեկաց: Մեդեայի ստրուկներից մեկը լսեց այդ հեկեկանքը և հայրենեց Փալկիոսիին: Փալկիոսն շտապեց բրոջ մոտ և տեսավ, որ իր մահճում պտկած հեծկտում է նա:

— Օ՛, բույր իմ, — ասաց Փալկիոսին, — այդ ինչո՛ւ ես լալիս եմ զավակների բախտի համար չե՛ս արցունք թափում արդար: Զե՛ս լսել, արդյոք, որ նրանց ուզում է կործանել մեր հայրը:

Լոնց Մեղեան: Յասոնից բաժանվելու միտքը թախիժով էր մշուշել նրա աչքերը: Գլուխը հակած՝ կանգնել էր Մեղեան վշտահար, և, վերջապես, ասաց նա.

— Կմեկնես ըո հայրենիքը, Յասո՛ն, բայց ինձ չմոռանա՛ս, գեթ երբե՛մն մտաբերիր Մեղեային. շէ՞ որ ե՛ս եմ փրկում քեզ: Հարցրեց Մեղեան, թե որտեղից է սերում Յասոնը: Յասոնը պատմեց Յուլբոսի և այն ծաղկուն հովտի մասին, ուր գտնվում է քաղաքը: Նա խնդրում է Մեղեային իր հետ Հունաստան գնալ: Մեծամեծ հարգ ու պատիվ է խոստանում, ասում է, որ Յուլբոսում աստվածուհու նման կմեծարեն նրան:

— Օ՛, եթե էյեթոսը համաձայնի բարեկամության դաշն կապել ինձ հետ,— բացականչեց Յասոնը,— Օ՛, թե թողներ ինձ հետ իմ հայրենիքը տանել քեզ:

— Ո՛չ, չի լինի դա,— վշտալից հառաչանքով ասաց Մեղեան,— դաժան ու անողոր է իմ հայրը: Մենակ վերադարձիր հայրենիք, միայն թե մի մոռանա ինձ: Օ՛, որքան ուրախ կլինեի ես, եթե մոլեգին քամին իր թևերի վրա Յուլբոս տաներ ինձ, որ ես կարողանայի հիշեցնել քեզ իմ մասին, երբ դու մոռացուլթյան մատնես ինձ, մոռանաս, որ ե՛ս եմ եղել ըո փրկարարը:

Մեղեայի աչքերը լցվեցին արցունքով: Նայում է նրան Յասոնը և սիրով համակվում դեպի Մեղեան: Նա աղերսում է Մեղեային դադարեցնել լքել հոր տունը և իր հետ Յուլբոս փախչել: Մեղեան պատրաստ է լքել Կողքիսը: Յասոնից անշատվելը վախեցնում է նրան, երկյուղ է կրում, որ չզիմանա այդ անշատմանը: Լալիս է Մեղեան Յասոնից բաժանվելու մտքից: Հերան Յասոնին ամենուրեք հետևելու ցանկություն ներշնչեց նրան: Աստվածուհին կամենում է, որ Մեղեան գնա Յուլբոս. այնտեղ, նրա օգնությամբ Հերան ուղում է կործանել իրեն ատելի Պելիասին:

Հրածեշտ տվեց Մեղեան Յասոնին. և խոստացավ նորից գալ Հեկատեի տաճարը, որ նորից հանդիպի նրան ու վճռեն, թե ի՛նչ պիտի անեն:

Ուրախ սրտով տուն էր վերադառնում Մեղեան իր երկանվով. դիտեր, որ Յասոնը սիրում է իրեն:

Վրա հասավ գիշերը: Սև զգեստներ հագնելով, Յասոնը գնաց Փասիս գետի ափը և գիշերվա կեսին լողացավ նրա արագահոս ալիքներում: Հետո մի խոր փոս փորեց և, ինչպես Մեղեան էր պատվիրել, նրա վրա զոհ մատուցեց Հեկատեին: Հենց որ զոհը մատուցեց, գետինը ցնցվեց և հայտնվեց մեծն Հեկատեն՝ մխացող ջահերը ձեռքին: Սոսկալի հրեշները և բերանից հուր ժայթքող վիշապները շրջապատել էին Հեկատեին, հաշում ու կաղկանձում էին նրա շուրջը գեղեթի սոսկալի շները: Շրջապատում եղած ոգիները բարկանալով միմյանց հետ փախան՝ տեսնելով Հեկատեին: Սարսափը տիրեց Յասոնին, բայց մտաբերելով Մեղեայի խոսքերը, նա ասանց շուտ գալու գնաց դեպի «Արգոն», ուր նրան սպասում էին ընկերները:

Հենց որ լույսը բացվեց՝ արգոնավորդները Տելամոնին և Մելեագրոսին ուղարկեցին էյեթոսի մոտ՝ վիշապի ժանիքները բերելու: էյեթոսը նրանց տվեց Կազմոսի սպանած վիշապի ժանիքները և պատրաստվեց Արեսի դաշտը մեկնելու, որ տեսնի, թե Յասոնը թեչպես կկատարի իր հանձնարարությունը: էյեթոսը հագավ իր պատվերը. պուխը ծածկեց արևի պես շողացող սաղավարտով, մեղքն առավ նիզակն ու վահանը, որոնք ծանրությամբ միայն Հերակլեսին կհարմարեին, և նստեց երկանիվը, որ վարում էր որպե՛ս Արգոնտառ: Արգոնավորդները ևս պատրաստվեցին Արեսի դաշտը մեկնելու:

Յասոնը կախարական յուզով օժեց նիզակը, սուսերն ու վահանը. ապա նույն յուզով օժվեց և ինքը: Այդ պահին ահավոր մի ում զրաց իր մարմնում: Մկանուները կարծես պողպատից լինեին, մարմինը՝ երկաթափոփ: Ծրր արգոնավորդները իրենց ճեպընթաց շարժումը նախով եկան դեպի Արեսի դաշտը, էյեթոսն արդեն սպասում էր նրանց, իսկ դաշտի շուրջը, լեռնալանջերին, հավաքվել էին կողջիսցիները: Յասոնն ափ իջավ՝ իր զրահները ճաճանչափայլ աստղի նման փայլեցնելով: Դաշտ դուրս գալով՝ այնտեղ առավ երկաթե զուսանը և պղնձե լուծը. վահանով պատսպարված՝ գնաց փնտրելու կրակ ժայթքող ցուպերին: Հանկարծ կիրճից զուրս վազեցին երկու ցուլ և կատաղի մռնչոցով հարձակվեցին Տելոսի վրա: Կրակ էր ժայթքում նրանց երախներից: Վահանով ստատրված՝ հերոսն սպասում էր նրանց: Ահա վրա վազեցին

ցուլերը և ստակալի թափով հրջյուրներով հարվածեցին հերոսի վահանին: Ոչ ոք չէր դիմանա այդ հարվածին, բայց անասան ժայռի նման կանգնած մնաց Յասոնը: Արից ու նորից են կատաղի մոնիտոցով հարձակվում ցուլերը՝ փառաւ ամպեր բարձրացնելով: Մեկին, ապա և մյուսին իր հզոր ձեռքերով բռնեց Յասոնը և մտեցրեց գութանին: Ցուլերն աշխատում են դուրս պրծնել, կիզում են Յասոնին հրով, բայց նա անվնաս է մնում: Ընկն կարող գուրս պրծնել նրա ձեռքից կատաղի ցուլերը: Կաստորի և Պոլիփերեսի օգնությամբ Յասոնը գութանին լծեց նրանց: Նիզակով թշուրով նրանց, Յասոնը վարեց Արեսի սղջ ուղղմադաշտը և ցանեց վիշապի ժանիքները: Վարուցանքը վերջացնելուց հետո լծից հանեց ցուլերին, սպանալից զոռաց նրանց վրա և խփեց իր նիզակով: Խելացներ սուրացին ցուլերը և անհետացան խոր կիրճում: Աշխատանքի առաջին կեսն արված էր, այժմ հարկավոր էր սուրսել, թե ուղղմիկները երբ գուրս կզան ուղղմադաշտ: Փասիսի ափը գնաց Յասոնը, սաղավարտով ջուր առավ գետից և հագեցրեց ծարավը:

Բայց երկար շունեց Յասոնի հանգիստը: Ահա դաշտում երևաց նիզակի սուր ծայրը, ապա հաջորդը, էջի և էյի. ամբողջ դաշտն ասես պատել էր պղնձե թեփուկներով: Կարծես շարժվեց հողը և նրա տակից երևացին ազգեթիկների օղակավարտներն ու զլուխները: Ահա ամբողջ դաշտը լցվեց փայլուն զրահավոր ուղղմիկներով: Մտաբերելով Մեդեայի խոսքերը, Յասոնը մի հսկայական քար առավ ձեռքը, չորս ամենաուժեղ հերոսներ միասին շարժել չէին կարող այդ քարը, բայց Յասոնը մի ձեռքով բարձրացրեց և նետեց հեռու, գետի վիշապի ժանիքներից ծնված ուղղմիկների խումբը: Հափշտակեցին զենքերը ուղղմիկները և արշունհանդ մի ճակատամարտ սկսվեց նրանց մեջ: Սուրը ձեռքին նրանց վրա հարձակվեց Յասոնը: Մեկը մյուսի հետևից խողթողեց նրանց, և շուտով սղջ դաշտը ծածկվեց սպանված ուղղմիկներով: Ոչ մեկը կենդանի չմնաց, բոլորն ընկան Յասոնի հողը բազկից:

Ամբողջ դաշտը պատվեց նրանց մարմիններով, ինչպես սուր մանգաղից կտրված հասկերն են պատում բարեբեր հողը: Մխրագործությունն ավարտված էր: Ապշած նրան էր նայում էյիթոսը, դարմանք կտրած նրա անմարդկային ուժից: Սպառնազին կիտեց հոնքերն արքան, ցասմամբ փայլեցին նրա աչքերը: Առանց մի քառ իսկ ասելու, նա իր երկանվով քաղաք սլացավ, մտածելով

ժխալե մի բանի մասին՝ ինչպես կործանել զարմանալի օտարերկրացուն: Իսկ Յասոնը, վերադառնալով «Արգո» նավը, հանգիստ էր առնում իր սխրագործությունը փառաբանող ընկերների շրջանում:

ՄԵԴԵԱՆ ՕԳՆՈՒՄ Է ՅԱՍՈՆԻՆ շՄՓՇՏԱԿԵԼՈՒ ՈՍԿԵԳԵՂԱԸ

Գալառ վերագառնալուն պես էյիթոսը խորհրդի կանչեց Կողքի Նյախավոր բնակիչներին: Մինչև կեսդիշեր խորհրդակցում էր արքան նրանց հետ, թե ինչպես կործանեն արգոնավորդներին: Էյիթոսը կռուում էր, որ միայն Մեդեայի օգնությամբ կարող էր Յասոնը կատարել այդ սխրագործությունը: Զգում էր Մեդեան, որ մեծ վտանգ է սպասում և՛ իրեն, և՛ Յասոնին: Նա հանգիստ չէր գտնում իր շքեղ սպարաբնում: Քուրը հեռու էր փախչում նրա աշտերը: Չէշուր վեր կացավ իր մահճից և անաղմուկ լքեց էյիթոսի դարպարը: Միայն իրեն հայտնի արահետներով գնում է դեպի Փասիսի ափը, այնտեղ, ուր բռնկատում էր արգոնավորդների վառած գոլթառ խարույկը: Մտա զեղով խարույկին՝ կանչեց Յասոնին և Փրոնտիսի հրատեր որդուն՝ Փրոնտիսին: Մեդեան ասաց Յասոնին, թե ինչ շարագուշակ մտքեր են տանջում իրեն, և համոզեց նրան ընտել զեղմը բերելու Յասոնը հազավ զրահները և գնաց Արեսի սրբաբն անտառը: Ետրե ամեն ինչ կորել էր խավարի մեջ, սրբաբնն ծաղից կախված գեղմն էր միայն, որ անտառում շողշողում էր ուլի: պես Շոք Մեդեան ու Յասոնը մտան անտառ, վեր կացավ անտեղ: Երբ ժայռոց ստակալի վիշապը Մեդեան կանչեց ընկ հարս առնում՝ Էյիթոսին: Մարտափնի նողմքներ էր շքնում նա և ընտել սխում կախարդական բույսեր: Գետին տապալվեց միջառը: Էյիթոսը բարձրացրեց իր թուլացած զլուխը, բայց Մեդեան նրա վրա շճարձը խոտեր ցանեց. փակվեց վիշապի երախը, փակվեցին հրափայլ աչքերը և, ընով տրբած, փովեց նա այն ծառի տակ, որից կախված էր գեղմը: Յասոնը հանեց գեղմը և փութաց վերագառնելու «Արգո» նավը:

Զարմացած հաղթարվել էին հերոսները Յասոնի ու Մեդեայի շտաբը և նայում էին ոսկեզեղմին: Բայց զանդաղելու ժամանակ չէր հարկավոր էր լքել Կողքիսը, բանի դեռ էյիթոսը չէր իմացել ընտել հափշտակելու մասին: Կարտեց Յասոնը «Արգոն» ափին կապող բուր սլարանները, թիակներն առան հերոսները, և նետի

նման սլացալ «Արզոն» Փասիս գետի հոսանքն ի վար՝ դեպի ծովը: Ահա և ծովը: Ամբողջ ուժով հերոսները ծովին են տալիս թիակները, և թռչնի նման սուրում է «Արզոն» ավելի ու ավելի հեռու է մնում Կողքիսը:

Առավոտը վաղ էլ ինքնուրուն առավ գեղմը հափշտակելու լուրը և իմացալ, որ Մեղեան փախել է արզոնավորդների հետ միասին: Մուլեգնեց էլ ինքնուրուն նա կողքիսցիներին ծովափ հավաքեց: Բայց արդեն հեռու էր «Արզոն», էլ չէր երևում ծովի ալիքների վրա: Էլ ինքնուրուն կողքիսցիներին հրամայեց հետապնդել նրանց: Մահվան պառնալիք էր տալիս, եթե նրանք չհասնեին արզոնավորդներին: Կողքիսցիները ծով իջեցրին իրենց նավերը և էլ ինքնուրուն «Արսիրտոսի» զլխավորությամբ, սկսեցին հետապնդել արզոնավորդներին:

ԱՐԳՈՆԱՎՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԳՆՈՒՄԸ

Երբ «Արզոն» բաց ծով դուրս եկավ, համընթաց քամի բարձրացավ: Հերոսները պարզեցին առագաստները և «Արզոն» սուրաց էլ վախճան Պոնտոսի ալիքների վրայով: Երեք օր նավեցին հերոսները: Վերջապես հեռվում երևացին Սկյուֆիայի ափերը: Արզոնավորդները վճռեցին նավել Բատրոս գետի հոսանքն ի վեր, որպեսզի հետո, նրա գետաբազուկներից մեկով, իջնեն Ադրիատիկ ծովը: Երբ արզոնավորդները նավեցին գետի Բատրոսի գետաբերանը, տեսան, որ ամբողջ գետաբերանը և կղզիները լեփ-լեցուն են կողքիսցիների զորքերով, որոնք իրենց նավերով եկել էին ամենակարճ ճանապարհով: Տեսնելով կողքիսցիների մեծաքանակ զորքերը, հերոսները համոզվեցին, որ անկարող են հաղթել նրանց. իրենք շատ փոքրաթիվ էին, որպեսզի հանդգնեին մարտի բռնվել հազարավոր զինավառ, ռազմատենչ կողքիսցիների հետ: Արզոնավորդները վճռեցին խորամանկության գիմել: Նրանք բանակցություններ սկսեցին թշնամու բանակի առաջնորդ Արսիրտոսի հետ և խոստացան Մեղեային բանտարկել տաճարում և նրանց ձեռքը տալ, եթե հարևան քաղաքի արքան վճռի, որ Մեղեան պետք է վերադառնա Կողքիս, իսկ ոսկեգեղմը պիտի մնա

արզոնավորդների մոտ, քանի որ ծասունը իրոք սխրագործություն է արել, որի համար էլ ինքնուրուն նրան խոստացել էր գեղմը: Բայց բոլոր այդ բանակցությունները վարում էին միայն ժամանակ շահելու համար: Իսկ Մեղեան ծասունին խոստացավ Արսիրտոսի հրապարակել և բերել կղզիներից մեկի տաճարը:

Ծասունը Արսիրտոսին ուղարկեց, իբր Մեղեայի կողմից, հարուստ ընծաներ, և պատվիրեց խնդրել նրան, որ գա մեկուսի մի տաճար՝ Մեղեայի հետ տեսակցելու Արսիրտոսը եկավ տաճար, բայց հենց որ նրանց ղոնեցում, ծասունը մերկացրած սրով հարձակվեց վրան, և Արսիրտոսը անշնչացած գետին տապալվեց: Մեղեայի ոմի գործեցին ծասուն ու Մեղեան. նրանք տաճարում սպանեցին անգնեցի Արսիրտոսին: Արսիրտոսի մարմինը կտոր-կտոր արեց ծասունը և նետեց Բատրոսի ալիքների մեջ: Սոսկումը պատեց կողքիսցիներին. նրանք շտապեցին ի մի հավաքել իրենց առաջնորդի մարմնի մասերը. իսկ արզոնավորդները արագ նավեցին Բատրոսի հասնել ի վեր:

Նրանք նավում էին արզոնավորդները: Վերջապես, Բատրոսի գետաբազուկներից մեկով, իջան Ադրիատիկ ծովը, Իլիրիայի ափերի մոտ Ալեանդ ստեփանի փոթորիկ բարձրացավ: Առնանում են ծածկաբաշտ ալիքները: Քամիները շղթայագերծ սուրում են ծովի վրայով ու գտնում «Արզոն» առագաստները: Տեսնում է «Արզոն» ալիքների ծածկում են նավակողերը, կտորվում են թիակները: Մեղեայի փոթորիկների մեղքին Տալեդի նման ճոճվում է «Արզոն» ալիքների մոտ Արզոնավորդներին կործանում էր սպանում: Այդ ժամանակ մի նախ Մեղեայի նավախելից: Չայնը, որ հնչում էր «Արզոն» նավախելին ամբողջով Գողեսայում աճած սրբազան կայան կողքից. հրամայում էր արզոնավորդներին գնալ կախարդ Պոլոսի մոտ, որպեսզի նա ծասունին ու Մեղեային մաքրագործի Արսիրտոսի սպանության պղծությունից: Հենց որ արզոնավորդները «Արզոն» գետի հյուսիս ուղղեցին, փոթորիկը դադարեց և բոլորը հասնեցան, որ գա աստվածների կամքն էր: Էրիզանոս և ապա Լուպանոս՝ գետերով արզոնավորդներից իջան Տիրենյան ծովը, և նրանք նավում էին, մինչև որ հասան էլ ինքնուրուն ջրոջ՝ Կիրկևի կա-

1 Նրանք նավում էին արզոնավորդները: Վերջապես, Բատրոսի գետաբազուկներից մեկով, իջան Ադրիատիկ ծովը, Իլիրիայի ափերի մոտ Ալեանդ ստեփանի փոթորիկ բարձրացավ: Առնանում են ծածկաբաշտ ալիքները: Քամիները շղթայագերծ սուրում են ծովի վրայով ու գտնում «Արզոն» առագաստները: Տեսնում է «Արզոն» ալիքների ծածկում են նավակողերը, կտորվում են թիակները: Մեղեայի փոթորիկների մեղքին Տալեդի նման ճոճվում է «Արզոն» ալիքների մոտ Արզոնավորդներին կործանում էր սպանում: Այդ ժամանակ մի նախ Մեղեայի նավախելից: Չայնը, որ հնչում էր «Արզոն» նավախելին ամբողջով Գողեսայում աճած սրբազան կայան կողքից. հրամայում էր արզոնավորդներին գնալ կախարդ Պոլոսի մոտ, որպեսզի նա ծասունին ու Մեղեային մաքրագործի Արսիրտոսի սպանության պղծությունից: Հենց որ արզոնավորդները «Արզոն» գետի հյուսիս ուղղեցին, փոթորիկը դադարեց և բոլորը հասնեցան, որ գա աստվածների կամքն էր: Էրիզանոս և ապա Լուպանոս՝ գետերով արզոնավորդներից իջան Տիրենյան ծովը, և նրանք նավում էին, մինչև որ հասան էլ ինքնուրուն ջրոջ՝ Կիրկևի կա-

1 Չայնը, որ հնչում էր «Արզոն» նավախելին ամբողջով Գողեսայում աճած սրբազան կայան կողքից. հրամայում էր արզոնավորդներին գնալ կախարդ Պոլոսի մոտ, որպեսզի նա ծասունին ու Մեղեային մաքրագործի Արսիրտոսի սպանության պղծությունից: Հենց որ արզոնավորդները «Արզոն» գետի հյուսիս ուղղեցին, փոթորիկը դադարեց և բոլորը հասնեցան, որ գա աստվածների կամքն էր: Էրիզանոս և ապա Լուպանոս՝ գետերով արզոնավորդներից իջան Տիրենյան ծովը, և նրանք նավում էին, մինչև որ հասան էլ ինքնուրուն ջրոջ՝ Կիրկևի կա-

խորհական կղզուն: Կիրիկեն մարազործեց նրանց սպանութիւնն պղծութիւնից: Նա զտճ մատուցեց Ջևաին, որ մարազործում էր սպանութիւնն ապականութիւնից, Յասոնի ձեռքերը թրջեց զտճ արյամբ և զոհասեղանի մոտ հմայեց էրիւնիներին, որ իրենց զայրուլիով շնտապնդեն մարդասպաններին: Կիրիկեն շրաժարվեց Մեղեային սոսկալի շարագործութիւնից մարազործել, քանի որ նրա աչքերի փայլից կուսեց կախարդուհին, որ Մեղեան, ինչպես և ինքը, ծագում է արևի աստծուց՝ Հելիոսից:

Արգոնավորդները շարունակեցին իրենց ճանապարհը: Նրանք ստիպված էին գնալ շատ դժվարութիւններ հաղթահարել: Նրանք նավեցին Սկիլլայի ու Փարիթրիսի միջով, ուր նրանք անխուսափելի մահ էր սպանում, եթէ չլինէր մեծն Հերան: Նավեցին նաև Սիրենների կղզու ափով և լսեցին նրանց հրապուրիչ երգը, որ անդամադրելի ուժով ձգում էր նրանց սիրենների մոտ: Բայց երգիչ Օրփեոսը խփեց իր ոսկե կիթառի լարերին, և նրա երգը հաղթեց սիրենների երգի թովչանքը: Վերջապես արգոնավորդները հասան Պլանկտե նեղուցին, որի վրա կամարած և բարձրանում էին հսկայական ժայռեր: Սովը մոլորեցնում էր ժայռերի մեջ, սոսկալի հորձանուտի մեջ պտույտ էին գալիս ալիքները, որ երբեմն հասնում էին մինչև կամարի գագաթը: Նույնիսկ Ջևաին ամբրոսիա՝ տանող աղավնիները անվնաս չէին անցնում այդ կամարից և ամեն օր նրանցից մեկը ոչնչանում էր: Բայց այս անգամ էլ Հերան օգնեց արգոնավորդներին. նա խնդրեց Ամփիտրիտին զսպել Պլանկտեի ալիքները, և արգոնավորդները անվնաս խույս տվին նրանցից:

Երկաթ ճանապարհ կտրելուց հետո արգոնավորդները հասան Փեակցիների կղզին: Այնտեղ նրանց սրտաբաց ընդունեց Ալքինոոս արքան: Ծանապարհի վտանգներից կարող էին հանգստանալ արգոնավորդները, բայց երկու օր էլ չէին մնացել փեակցիների մոտ, երբ կղզու մոտ հայտնվեց կողքիացիների նավատորմը. նրանք պահանջեցին իրենց հանձնել Մեղեային: Արյունահեղ մարտ կսկսվեր, եթէ Ալքինոոսը չբաժաներ թշնամիներին իրարից: Ալքինոոսը վճռեց, որ Մեղեային պիտի վերագարձնել կողքիացիներին, եթէ նա Յասոնի կինը չէ: Գիշերը Ալքինոոսի կինը՝ Արիտեն, քանրկր ուղափեց Յասոնի մոտ, որպեսզի հայտնի նրան Ալքինոոսի

վճիարը: Հենց նույն գիշերը Յասոնն ու Մեղեան պսակագրութեան արարողութիւն կատարեցին, և հաջորդ օրը Յասոնը հավաքված փեակցիների և կողքիացիների առաջ հանդիսավոր երգում տվեց, որ Մեղեան իր կինն է: Այդ ժամանակ Ալքինոոսը վճռեց, որ Մեղեան պիտի մնա ամուսնու հետ, և կողքիացիներն ստիպված եղան էջեթոսի մոտ վերադառնալ առանց Մեղեայի:

Հյուրասեր փեակցիների մոտ հանգստանալուց հետո արգոնավորդները նորից ճանապարհ ընկան: Երկար նավեցին անվթար Ահո ծովի կապույտ հեռաստանում երևում են արդեն Պելոպոնեսի ափերը: Հանկարծ սոսկալի մրրիկ բարձրացավ և ջրեց տարավ Վերգոն: Երկաթ ջրում էր մրրիկը «Արգոն» անձայրածիր ծովի միջով: Եվ վերջապես, նավը նետեց մի ամալի ափ «Արգոն» խոր նստեց ծովածոցի ափում, որ ամբողջովին ծածկված էր քրմառանձրով: Հասնատութիւնը տիրեց արգոնավորդներին: Նկատելով վնասը, Հանաստան վերադառնալու հույսը կորցրած, զուրկ լսող հայր, նստել էր նավախելին: Արգոնավորդները պիտո-տրտում թափառում էին ափին, կարծես կորցրել էին բոլոր ուժերն ու արիւթիւնը: Բայտն առերես տեսնում էին իրենց խորանումը: Յասոնին օգնութեան հասան հավերժահարսները: Նրանք հայտնեցին Յասոնին, որ մրրիկը «Արգոն» հասցրել է վրջին՝ և որ արգոնավորդները իրենց ուսերին առած «Արգոն» պիտի սնդուկներն վրջիական անապատով՝ նավը տիղմից հանելով այն ծովանակ միայն, երբ Ամփիտրիտեն արձակի կառքի ձիերը: Բայց մեր կարծանքը Ամփիտրիտեն իր կառքի ձիերը՝ չգիտեին արգոնավորդները: Հանկարծ տեսան նրանք, որ ծովից դուրս վազելու մի կրծնանկյմով մի և արագ սլացավ անապատով: Հասկացան արգոնավորդները, որ դա Ամփիտրիտեի ձին է: Ուսերին առան Վերգոն և առաներկու օր տարան անապատով, տառապելով տառաջ ու ծարավից: Վերջապես նրանք հասան Հեսպերիդներ ի կիկերը: Այնտեղ Հեսպերիդները ցույց տվին այն աղբյուրը, որ Հերակլեսը բխեցրել էր ժայռից: Հերոսները հագեցրին իրենց ծարավը, շրի պաշարը վերցրին և ճանապարհ ընկան գնալ հայրենիք: Բայց արգոնավորդները ոչ մի կերպ չէին կարողանում էլ դառնել դեպի ծով: Նրանք գտնվում էին ոչ թե ծովում, այլ Երբտան լճում: Օրփեոսի խորհրդով նրանք ետտանի նվիրա-

1 Ուտեստ, որ հավերժական երիտասարդութիւն և անմահութիւն էր տալիս աստվածներին.

2 Վերջապէս կոչում էին Աֆրիկայի ափը՝ Երկրորդից արևմուտք:

քերեցին լճի աստծուն: Արգոնավորդների առաջ հայտնվեց մի սքանչելի պատանի: Նա հերոս էվփեմոսին հողի մի գունդ տվեց, իբրև հյուրընկալութան նշան, և արգոնավորդներին ցույց տվեց ելքը դեպի ծով: Արգոնավորդները մի ոչխար զոհարեցին: «Արգոյի» առաջ հայտնվեց ինքը՝ Տրիտոն աստվածը և «Արգոն» Ապիտակ ժայռերի մոտով ու ջրապտույտի միջով անցկացրեց և բաց ծով դուրս բերեց: Տրիտոն կղզուց արգոնավորդները նավելով հասան Կրետե կղզին և ուզում էին ջրի պաշար վերցնել հետագա նավարկության համար: Բայց նրանց Կրետեի ավեր շթողեց պղնձե հսկա Տալոսը, որին ինքը՝ ամպրոպային Զևսն էր նվիրել Մինոսին: Տալոսը շրջում էր ողջ կղզին և պահպանում Մինոսի տիրապետությունը: Բայց Մեդեան իր կախարհանքով քնեցրեց Տալոսին: Տալոսը գետին տապալվեց, և վայր ընկավ պղնձե մեխը, որ պահում էր Տալոսի միակ արյունատար երակը: Հաված կապարի նման հոսեց Տալոսի արյունը, և մեռավ հսկան: Այժմ արգոն արգոնավորդները անարգել կարող էին ավ դուրս գալ և ջրի պաշար տեսնել:

Կրետեից Հունաստան նավելու ճանապարհին հերոս էվփեմոսը վայր գցեց Տրիտոնի տված հողի գունդը և այդ հողակույտից գոյացավ մի կղզի, որին արգոնավորդները Կալիստե անունը տվին: Հետագայում այդ կղզում բնակություն հաստատեցին էվփեմոսի հետնորդները և կղզին սկսեց Թերա՝ կոչվել:

Գրանից հետո վրա հասավ փոթորիկը: Գիշերվա խավարում մոլեղնում էր փոթորիկը: Արգոնավորդները ամեն պահ վախենում էին ջրասույզ քարերի կամ առափնյա ժայռերի դիպչել-փշրվելուց: Հանկարծ ծովի վրա վառ լույսով փայլատակեց մի ոսկե նետ և լուսավորեց ողջ շրջակայքը, ապա՝ երկրորդը, երրորդը: Այդ Ապոլոն աստվածն էր իր նետերով լուսավորում արգոնավորդների ճանապարհը: Նրանք Անափե՝ կղզին ելան և սպասեցին, որ փոթորիկը հանդարտվի: Վերջապես հանդարտվեց փոթորիկը, խաղաղվեցին ծովի ալիքները, և համընթաց քամի փչեց: «Արգոն» հանդիստ սահեց կապուտակ ծովի վրայով: Այլևս վտանգների չհանդիպեցին արգոնավորդներն իրենց ճանապարհին և, վերջապես, հասան իրենց բաղձալի նավահանգիստը՝ Ցուլոս:

Նրբ արգոնավորդները Ցուլոս հասան, նրանք առատ զոհ մատցեցին աստվածներին, որոնք օգնել էին վտանգավոր նավարկության ժամանակ: Ցնծում էին բոլորը Ցուլոսում և տունում էին արգոնավորդների վերադարձը: Բոլորը փառաբանում էին մեծ հերոսներին և նրանց առաջնորդ Ցասոնին, որ ձեռք էր բերել ոսկե գեղմը:

ՑԱՍԱՆԸ ԵՎ ՄԵԳԵԱՆ ԶՈՒԲՈՍՈՒՄ: ՊԵՆԱՍԻ ՄՐՂԸ

Շարաքված է լուս Եվփեմոսի «Կերպարեմափոխություններ» գրքում:

Նախքան Պենասը լուսահե իր խոսքը և Ցասոնին լվերազարձակեց նա նախնիների իշխանությունը: Քաջքրեց վիրավորանքը Ցասոնը և վրեց զամենորեն վրեժ լուծել Պենասից: Այստեղ էլ նա անօրհայե հասով Մեդեան: Շուտով վրեժ առնելու ուղիքն էլ ներկայացավ: Ցասոնի զառամած հայրը՝ էսանը, իմանալով, որ Մեդեան ամենալոյս կախարհ է, կամեցավ, որ նա վերազարձակ իր Կրետասարկությունը: Ցասոնն էր խնդրել Մեդեային իր հորը երիտասարդացնել: Եվ Մեդեան խոստացավ կատարել այդ խնդրանքը: Այն միայն իրեն օգնել Հեկատեն:

Նրբ վաղուփեց ելավ, կենդիշերին, Մեդեան դուրս եկավ ամենք՝ ու զբնակեցրավ, առարթրիկ, հերարձակ: Շուրջը ամեն ինչ ընկնելով էր իտք ընկ մեջ, ամենուրեք քար լուսություն էր արտան: Ցասոնի լուսով ուղղված, լուս ու մունջ քայլում է Մեդեան: Նա կանց առավ պնտեղ, ուր երեք ճանապարհները բաժանվում են իրարից: Անոջ վեր կարվառեց և երեք անգամ բարձրանալի քրեց: Նա Մեդե կհավ և սկսեց հմայման խոսքեր շշնջալու: Նա հմայում էր գիշերը, երկնային լուսատուներին, լուսնին, հողին, քամիները, լեռներն ու գետերը: Նա խնդրում էր, որ հայտնվեն անտառների և գիշերվա աստվածները: Նա աղերսում էր մեծն Հեկատենին լսել և օգնել իրեն: Լսեց նրան Հեկատեն և Մեդեային հայտնվեց իր երկանվով, որին լծված էին թևավոր վիշապներ: Մեկ ու զիշեր Մեդեան այդ կառքով կախարհական խոսքեր ու պնտեց հավաքեց սարերում, անտառներում և գետերի ու ծովերի ամրոյն: Նրբ նա էսոնի տունն էր վերադառնում, երկու զոհանկան կանգնեցրեց, մեկը՝ Հեկատեի, մյուսը երիտասարդության աստվածուհու համար: Զոհասեղանների առաջ երկու փոս փորեց

¹ Այժմյան Սանտորին կղզին:

² Այժմյան Անափի կղզին:

և նրանց վրա խավարի ու կախարդանքի մտալլ աստվածուն՝
Հնկատինն, զոճարերնց սևաթուշր խոյեր՝ մեզը ու կաթ հեղելով
նրանց վրա: Դիմեց Մեղեան ստորերկրյա աստվածներին՝ Հադե-
սին և Պերսեփոնեին, և աղերսեց չխել ծեր էսոնի կյանքը: Հետո
պատվիրեց բերել էսոնին: Կախարդանքով քնեցրեց էսոնին
և դրնց կախարդական խոտերի վրա: Պղնձե կաթսայում
եփեց կախարդական բուժախոտը: Ետայ խոտը և ծածկվեց
սպիտակ փրփուրով: Դարավոր ծառի շրջանում ճյուղով խանուժ
էր բուժախոտը Մեղեան: Եվ ճյուղը կանաչեց, տերևակալեց
և կանաչ պտուղներ տվեց: Ամենուրեք, ուր որ կաթում էր
բուժախոտի փրփուրը՝ ծաղիկներ ու խոտեր էին բու-
նում: Երբ տեսավ, որ բուժախոտն արդեն պատրաստ է, Մե-
ղեան սրով կտրեց ծերունի էսոնի կոկորդը և բաց թողեց նրա ծե-
րունական արյունը: Բացված լայն վերքից նա էսոնի երակների
մեջ լցրեց կախարդական բուժախոտը: Եվ, ո՞վ զարմանք, ծերու-
նու մազերը, որ առաջ ճերմակ էին ձյունի պես՝ սևացան, վերա-
ցան կնճիռներն ու ծերունական վտիտովթյունը, նորից հայտնվեց
այտերի կարմիրը: Արթնացավ էսոնը և նորից տեսավ իրեն երի-
տասարդ, ուժեղ ու կայտառ:

Երբ Մեղեանին հաջողվեց վերադարձնել էսոնի երիտասար-
դովթյունը, նա մի նենգ պլան կազմեց, որոշելով վրեժ լուծել ծեր
Պելիասից, քանի որ նա խաբել էր Յասոնին և չէր վերադարձրել
Յուլթոսի իշխանովթյունը:

Մեղեան համոզեց Պելիասի դուստրերին՝ վերադարձնել նրանց
հոր երիտասարդովթյունը, և որպեսզի ավելի հաստատ հավատան
իր կախարդանքին, նա բերեց մի ոչխար, մորթեց և զցեց բուժա-
խոտով լցված կաթսան: Հենց որ մորթված ոչխարը սուղվեց
կաթսայի մեջ, անմիջապես կաթսայից դուրս թռավ մի կայտառ
դառնուկ: Զարմացան Պելիասի դուստրերը այդ հրաշքի վրա և
համաձայնեցին հոր երիտասարդովթյունը վերադարձնելու փորձ
անել:

Մեղեան պատրաստեց բուժախոտը, բայց ոչ այնպիսին, որ
պատրաստել էր Յասոնի հոր համար: Կախարդական ուժ չկար
այդ բուժախոտի մեջ: Քնեցրեց Մեղեան իր կախարդանքով Պելի-
ասին, բերեց դուստրերի ննջարանը և պատվիրեց կտրել հոր
կոկորդը: Բայց աղջիկները չէին համարձակվում:

— Փոքրոգիներ,— գուցե Մեղեան,— շո՛ւտ մերկացրեք սրե-

քը. բաց թողեք ձեր հոր երակներից ծերունական արյունը, իսկ
նա երիտասարդ արյուն կլցնեմ դրա փոխարեն:

Չեն համարձակվում Պելիասի աղջիկները մահացու հարված
հասցնել քնած հորը: Վերջապես, շուտ եկան նրանք և մեկը մյու-
սի հետևից սկսեցին սրի հարվածներ հասցնել հորը: Արթնացավ
Պելիասը մահացու վիրավոր, գլուխը բարձրացրեց մահճից և
բուլացող ձեռքերը աղջիկներին պարզելով հառաչանքով բացա-
կանչեց.

— Օ՛, դուստրեր իմ, այս ի՞նչ եք անում: Ի՞նչը ստիպեց ձեռք
բարձրացնել ձեր հոր վրա:

Ետո՞ւմից Բուլացած կախվեցին Պելիասի աղջիկների ձեռ-
քերը: Գոճարեղծ կանգնել են նրանք, գիտակցությունը լքել է
նրանք: Իսկ Մեղեան վազում է դեպի Պելիասի մահճը, նրա կո-
կորդը է միջում իր գանձը. կտոր-կտոր անում մարմինը և
զքում նուցող կաթսայի մեջ: Պելիասի ննջարանում հայտնվեց
թևալոր վիշապներ լծած մի երկանիճ, որին բազմած անհետա-
նում է Մեղեան Պելիասի խնդհորույս աղջիկներին աչքից:

Պելիասի որդին՝ Ագրաստոսը, ճոխ թաղում կազմակերպեց,
իսկ Բուլացմից հետո խաղեր՝ ի պատիվ զոհվածի: Այդ խաղերին
մասնակցում էին Հունաստանի ամենաանվանի հերոսները: Խա-
ղերի գառավորն էր ինքը Հերմեսը: Կաստորը, Պոլիդեմոսը և
Էփիմեոսը մրցում էին կառարչավի մեջ, Ագմեսոսն ու Մոփսոսը՝
բանջրամարտում, Աուանտոսն ու Պելիսը՝ բմբշամարտում: Վազ-
եր մեջ բուլորին հաղթեց Իփիկլոսը:

Բայց չհաջողվեց Յասոնին ստանալ Յուլթոսի իշխանովթյունը:
Ագրաստոսը թույլ շտվեց նրան մնալ Յուլթոսում, նա Յասոնին ար-
տաշանց Յուլթոսից՝ քանի որ կինը՝ Մեղեան, սպանել էր Պելիասին:
Էրեց հայրենիքը Յասոնը և Մեղեանի հետ զնաց Կորնթոս:

ՅԱՍՈՆԸ ԵՎ ՄԵՂԵԱՆ ԿՈՐՆԹՈՍՈՒՄ:

ՅԱՍՈՆԻ ՄԱՀԸ

Շարադրված է բոտ Եվրոպիկոսի «Մեղեան» ողբերգության:

Պելիասի սպանությունից հետո, Յուլթոսից արաաքսված Յա-
սոնն ու Մեղեան քնակովթյուն հասաատեցին Կորնթոսում՝ Կրեոն
արքայի մոտ: Երկու արու զավակ ունեցավ Մեղեան: Թվում էր, թե

Նույնիսկ օտարութեան մեջ երջանիկ պիտի լինեն Յասոնն ու Մեդեան։ Բայց ճակատագիրը երջանկութիւն չէր կանխատեսել ո՛չ Յասոնին, ո՛չ Մեդեային։ Յասոնը, գերվելով Կրեոնի դատեր՝ Գլավքի գեղեցկութեամբ, դրժեց այն երգումները, որ ավել էր Մեդեային Կողքիսում այն ժամանակ, երբ նրանից ստանում էր կախարդական յուղը. դավաճանեց նրան, ում շնորհիվ մեծ սըխրանք էր գործել։ Նա վճռեց ամուսնանալ Գլավքի հետ և Կրեոնը համաձայնեց դատերը կնութեան տալ հուշակալոր հերոսին։

Երբ Մեդեան իմացավ Յասոնի դավաճանութեան մասին, հուսահատութիւնը տիրեց նրան։ Մեդեան առաջվա նման սիրում էր Յասոնին։ Ասես անշունչ քար կտրած՝ նստել էր Մեդեան, խորասուզված իր վշտի մեջ։ Չէր ուտում, չէր խմում, չէր լսում իրեն ասվող սփոփանքի խոսքերը։ Հետզհետե մոլեգին ցասումը տիրեց Մեդեային։ Չի կարող հանդարտվել Մեդեայի սանձարձակ հոգին։ Մի՞թէ նա՝ ճաճանշափայլ Հելիոսի որդու՝ Կողքիսի արքայադուստրը, կարող է հանդուրժել, որ թշնամիները հաղթող հանդիսանան, որ ծանակեն իրեն։ Ո՛չ. սարսափելի է Մեդեան իր զայրույթի մեջ, նրա վրժժը սոսկալի պիտի լիներ իր դաժանութեամբ։ Օ՛, Մեդեան վրժժ կլուծի և՛ Յասոնից, և՛ Գլավքից, և՛ Կրեոնից։

Իր մոլեգին ցասման մեջ Մեդեան նզովում է ամեն ինչ։ Նա անիծում է իր զավակներին, անիծում է Յասոնին։ Տառապում է Մեդեան և աղաչում աստվածներին, որ նրանք միանգամից կայծակի հարվածով խլեն իր կյանքը։ Բացի վրժժից ի՞նչ էր մնացել նրան կյանքում։ Մա՛հ էր ուզում Մեդեան, միայն մա՛հը վերջ կըտար նրա տառապանքներին, մա՛հը կազատեր նրան վշտից։ Ինչո՞ւ այդպես դաժանորեն վարվեց Յասոնն իր հետ, որ փրկել էր նրան՝ քնեցնելով վիշապին, օգնել էր ձեռք բերել ոսկեղեղմը, Յասոնի փրկութեան համար ծուղակն էր գցել իր եղբորը և սպանել Պելիասին։ Զևսին և արդարադատութեան աստվածուհուն՝ Թեմիսին է դիմում Մեդեան, որ վկա լինեն, թե ինչպես անարդար վարվեց իր հետ Յասոնը։ Գնալով ավելի ու ավելի է ամբանում Յասոնից վրժժխնդիր լինելու վճիռը։

Բայց ահա գալիս է Կրեոնը։ Նա հայտնում է, որ Մեդեան անհապաղ պիտի լքի Կորնթոսը։ Վախենում է Կրեոնը Մեդեայից, գիտե, թե ի՞նչ սարսափելի է Մեդեան իր զայրույթի մեջ,

գիտե, որ ամենազոր են նրա կախարդանքները. չէ՞ որ նա կարող է կործանել և՛ իր դատերը, և՛ իրեն։

Իսկ Մեդեան, որպեսզի ժամանակ շահի վրժժը լուծելու, ձևանում է, թե հնազանդվում է Կրեոնին, թե ընդունում է իրեն արտաքսելու նրա իրավունքը, միայն մի բան է խնդրում նրանից՝ թույլ տալ, որ մի օր էլ մնա Կորնթոսում։ Համաձայնում է Կրեոնը, չկասկածելով, որ զրանով արդեն մահվան է դատապարտում իրեն. բայց նա սպանում է Մեդեային, որ մահվան պատիժ կտա և՛ նրան, և՛ որդիներին, եթե ծագող արևի ճառագայթներից Կորնթոսում գտնեն նրանց։ Մեդեան գիտե, որ մահապատժից զրկենալու արժեք չունի ինքը։ Իրենից ավելի շուտ Կրեոնը կկործանվի. ինչպե՞ս չէր երգվել նա զաւկադեմ աստվածուհի Սելենեով և իրեն հովանաձայն Հեկատեով՝ կործանել իր թշնամիներին։ Ո՛չ. ո՛ր թե ինչ, այլ նրա՛նք են, որ խույս չպիտի տան մահից։ Մի՞թէ ինչ՞ շնչոս ասածու թող, ծաղր ու ծանակի առարկա պիտի զանա Միզիֆոսի հետերգների և Յասոնի հարսնացուի համար։

Յասոնը զուր է համոզում Մեդեային, որ նրա և երեխաների քարորութեան համար է ամուսնանում Գլավքի հետ, որ իրենց որդիները հենարան կգտնեն իրենց ապագա եղբայրների մեջ, և Դե աստվածները երեխաներ տան նոր ամուսնութիւնից։ Մեդեան չի կարող հավատալ Յասոնի անկեղծութեանը։ Նախատում է Յասոնին զավաճանութեան համար և աստվածների ցասմամբ սպանում նրան. նա չի ուզում լսել Յասոնին։ Այժմ արդեն ինքն ասում է Յասոնին, որին մի ժամանակ այնպես սիրում էր և որի համար մոռացավ հորը, մորը, եղբորն ու հայրենիքը։ Մոլեգնած հեռանում է Յասոնը, իսկ նրա հետևից լավում են Մեդեայի ծաղր ու ծանակը և սպանալիքները։

Այդ ժամանակ, Դելփիքից Տրոիսեն՝ գնալիս, Կորնթոս է գալիս Աթենքի արքա Էգևը։ Սիրալիր ողջույն է տալիս նա Մեդեային և հարցնում տխրութեան պատճառը։ Պատմում է Մեդեան իր վիշտը և խնդրում Աթենքի արքայից՝ ամուսնուց մոռացված, ժողովանդի Մեդեային ապաստան տալ Աթենքում։ Նա Էգևսին խոստանում է օգնել իր կախարդանքներով, խոստանում է, որ նա քաղձամարդ սերունդ կունենա, չի մնա անզավակ, ինչպես մինչև այժմ, միայն թե ապաստան տա իրեն։ Երգվում է Էգևը ապաս-

Չ ծաղր Արգոյիսում, Պելոպոնես թերակղզու վրա։

տան տալ Մեղեային: Երզվում է հողի աստվածուհի Գեայով, Մեղեայի պապ Հելիոսով, Օլիմպոսի բոլոր աստվածներով, որ թշնամու ձեռքը չի տա Մեղեային: Միայն մի պայման է առաջարկում Մեղեային. նա ինքը, առանց էգեսի օգնության, պիտի գա Աթենք, որովհետև ինքը չի ուզում ընդհարվել Կորնթոսի արքայի հետ:

Ապաստան ապահովելով իր համար, Մեղեան անցնում է հզացած վրիժառուության կատարմանը: Նա որոշում է կործանել ոչ միայն Կրեոնին ու գատերը՝ Գլավրեին, այլև սպանել իր որդիներին՝ Յասոնի երեխաներին: Նա իր ազախնին ուղարկում է Յասոնին կանչելու Գալիս է Յասոնը: Հնազանդ է ձևանում Մեղեան. շույց է անախ, որ հաշտվել է իր ճակատագրի և Յասոնի հետ, միայն մի բան է խնդրում Յասոնից, որ նա Կրեոնին համոզի Կորնթոսում թողնել իր զավակներին: Գալիս են և երեխաները: Նրանց տեսնելուն պես լալիս է Մեղեան, զրկում, համբուրում է իր որդիներին, նա սիրում է իր երեխաներին, բայց վրեժխնդրության ծարավն առավել ուժեղ է սիրուց:

Բայց ինչպե՞ս կործանել Գլավրեին ու Կրեոնին: Եվ ահա, պատրվակ բռնելով, թե ձգտում է տրամադրել Գլավրեին, որ իր զավակներին թողնի Յասոնի նոր տանը, Մեղեան Գլավրեին ընծա է ուղարկում մի թանկագին զգեստ և ոսկե թագ: Հենց այդ ընծան էլ կործանում էր տանում իր հետ: Հենց որ Գլավրեն հաղնում է Մեղեայի ուղարկած զգեստն ու պսակը, թույնը, որով հագեցած էին դրանք՝ թափանցում է մարմնի մեջ. պղնձե օղակի նման զլուխը սեղմում է թագը: Զգեստը կրակի պես այրում է մարմինը: Սոսկալի տառապանքների մեջ մեռնում է Գլավրեն: Նրան օգնության է շտապում հայրը, նա զրկում է դժբախտ աղջկան, բայց զգեստը կաշու է նաև նրանից: Նա շտապում է պոկել այդ զգեստը իր մարմնից, բայց դրա հետ միասին ծվատում է նաև իր մարմինը: Կրեոնը ևս մեռնում է Մեղեայի ընծայից:

Իր պալատի մոտ կանգնած, Մեղեան ցնծություն մը է լսում Կրեոնի և Գլավրեի մահվան լուրը, բայց նրանց կործանումը չի հագեցրել Մեղեայի վրեժի ծարավը. նա վճռել է սպանել իր զավակներին, որպեսզի ստիպի Յասոնին ավելի շատ տառապել: Այժմ Մեղեային այդ սպանությունն էր զրդում նաև այն, որ նա զիտեր, թե ի՞նչ վիճակ է սպանում իր զավակներին, երբ Կրեոնի բարեկամները սկսեն վրեժ լուծել նրանցից՝ իրենց մոր ոճրագործու-

յան համար: Փութով պալատ է մտնում Մեղեան և խոսույն այն-րեղից լսվում են նրա որդիների ճիչերն ու հառաչանքները: Հառաչատ մայրը սպանում է նրանց: Իսկ Յասոնն իր կնոջ՝ Մեղեայի անքով զոհված Կրեոնի և Գլավրեի մահից հետո, վախենալով, որ Կրեոնի բարեկամները հանուն վրեժխնդրության կսպանեն իր որդիներին՝ շտապում է դեպի պալատը: Վաղում է Յասոնը դեպի պալատ և լսում այնտեղից իր զավակների հեծեծանքները: Պալատի դուռը փակ է. Յասոնն ուզում է կտորել դուռը: Հանկարծ օդի մեջ հայտնվում է Մեղեան՝ վիշապներ լծած երկանվով, որ ուղարկել էր Հելիոս աստվածը: Նրա ոտքերի մոտ դրված են սպանված որդիները: Մտնում է Յասոնը: Նա աղերսում է Մեղեային զմի որդիների գնակները թողնել, որ ինքը կարողանա թաղել նրանք: Բայց այդ պահանջն էլ չի տալիս Մեղեան և արագ սպանում է հրաշք երկանվով:

Տրտում անցավ Յասոնի հետագա կյանքը: Ոչ մի տեղ երկարատև սփյան չէր գտնում նա: Մի անգամ նա անցնում էր Իսթմոսով, այնտեղով, ուր կանգնած էր ափ հանված «Արգոն», որ արգնաժողովները նվիրարքերի էին ծովերի աստված Պոսեյդոնին: Հոգևորկ Յասոնը պտուկեց «Արգոյի» ստվերում, նախախելի տակ, որ հանգստանա, և ըուն մտավ: Երբ Յասոնը հանդիստ ընած էր, փլվեց մաշված, հնացած «Արգոյի» նավախելը և իր ընկերների սակ թաղեց ընած Յասոնին:

Տ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ք

ԶԵՎՍԻ ԵՎ ԼԵՒԱՅԻ ԴՈՒՍՏՐ ԼՆԴՈՆԵՆ

Տրայական շաբթի առաջօրեաները շաբադրված են Համերոսի «Իլիական» և «Ոդիսական» պոեմների, Սոֆոկլեսի «Ալաես Խառազանակիր», «Փիլոկետես», Եվրիպիդեսի «Իփիգենիան Աուլիսում», «Անդրոմախե», «Լեպտե», Վերգիլիոսի «Էնեական», Օվիդիոսի «Լեոստոմիներ» պոեմների և մի շաբթ այլ ստեղծագործությունների հիման վրա:

Մի ժամանակ Հիպոկոտոնը իր թագավորությունից արտաքսել էր հռչակավոր հերոս Տինդարևսին: Երկար թափառումներից հետո նա ապաստան գտավ Հտոլիայի¹ արքա՝ Թեստիասի մոտ. սիրեց Թեստիաս արքան հերոսին և նրան կնություն տվեց իր դիցանման չքնաղ դստերը՝ Լեդային: Երբ Զևսի մեծազոր որդին՝ Հերակլեսը, հաղթեց Հիպոկոտոնին և սպանեց նրան ու նրա բոլոր որդիներին, Տինդարևսն իր չքնաղ կնոջ հետ Սպարտա² վերադարձավ և սկսեց իշխել այնտեղ:

Չորս զավակ ունեցավ Լեդան: Չքնաղագեղ Հեղինեն և Պոլիդեքեսը Լեդայի և ամպրոպային Զևսի զավակներն էին, իսկ Կլիթիմենեստրան և Կաստորը՝ Լեդայի և Տինդարևսի զավակները:

Գեղեցիկ էր Հեղինեն: Մահկանացու կանանցից ոչ ոք չէր կարող հավասարվել նրան գեղեցկությամբ: Նույնիսկ դիցուհիներն էին նախանձում նրան: Բովանդակ Լուսնաստանում թնդում էր Հեղինեի փառքը: Լսելով նրա աստվածային գեղեցկության մասին, նրան Տինդարևսի մոտից փախցրեց Ատտիկայի մեծագույն հերոս Թեսևսը, բայց Հեղինեի եղբայրները՝ Պոլիդեքես ու Կաստորը, ազատեցին և կրկին հոր տուն բերին նրան: Մեկը մյուսի հետևից Տինդարևսի պալատն էին գալիս փեսացուները հարսնախոսելու չքնաղ Հեղինեին, յուրաքանչյուրի ցանկությունն էր նրան՝ կանանցից ամենաչքնաղին՝ իր կինը կոչելու: Չէր հանդգնում Տինդարևսը իր մոտ եկող հերոսներից որևէ մեկին կնության տալ

Հեղինեին. երկուդ էր կրում, որ հերոսները, երջանիկ ընտրյալի հանդեպ ունեցած նախանձից, կոխվ կսկսեն և սոսկալի գծտուքյուն կծագի նրանց մեջ: Վերջապես, խորագետ հերոս Ոդիսևսն այսպիսի խորհուրդ տվեց Տինդարևսին.

— Թող գեղազանգուր Հեղինեն ի՛նքը վճռի, թե ո՛ւմ կինն է ուզում դառնալ: Իսկ բոլոր փեսացուները թող երգվեն, որ երբե՛ք զենք չեն բարձրացնի նրա դեմ, ում ամուսին կընտրի Հեղինեն, այլ ամբողջ ուժով կօգնեն նրան, եթե դժբախտության դեպքում օգնության կանչի նրանց:

Լսեց Տինդարևսը Ոդիսևսի խորհուրդը: Բոլոր փեսացուները երբեք ամբի, իսկ Հեղինեն ընտրեց նրանցից մեկին, և այդ ընտրյալը Ատրենայի գեղեցիկ որդին՝ Մենելասն էր:

Ամուսնացավ Մենելասը չքնաղագեղ Հեղինեի հետ: Տինդարևսի մահից հետո նա՝ դարձավ Սպարտայի արքան: Խաղաղ ապրում էր նա Տինդարևսի պալատում, չկասկածելով, թե ի՛նչ ազնունք է բերելու իր ամուսնությունը չքնաղ Հեղինեի հետ:

ՊԵՆԵՎՍ ԵՎ ԹԵՏԻՍ

Ընդամենը հերոս Պելևսը որդին էր իմաստուն Հաբոսի, որը մեծ և ցանկի առաված Ասոպոսի դստեր՝ Էգինեի զավակն էր: Պելևսի եղբայրն էր հերոս Տելամոնը, հերոսներից վաճառույնի՝ Արալիոսի ընկերը: Պելևսն ու Տելամոնը ստիպված էին փախչել Հայքից, որովհետև նախանձից սպանել էին իրենց խորթ եղբորը՝ Պելևոս Առաջավ գեղի մեծահարուստ Փոխոտիս՝ քաղաքը:

Այնուհեղ նրան ընտանեց հերոս էվրիթիոնը, պարզեց իր տիրապետության մեկ երրորդը և կնության տվեց իր դստերը՝ Անտիպոնին: Բայց Պելևսը երկար չմնաց Փոխոտիսում. Կալիդոնյան որդի ժամանակ նա ակամա սպանեց էվրիթիոնին: Այդ փորձանքից վշտացած, լքեց Պելևսը Փոխոտիսը և գնաց Յուլբուս Այստեղ ևս դժբախտություն էր սպասում Պելևսին: Յուլբուսում նրանով հրապուրվեց Ակաստոս արքայի կինը և համոզեց՝ մոռանալ Ակաստոսի բարեկամությունը: Մերժեց Պելևսը իր ընկերոջ կնոջը, իսկ նա, իբրև վրեժխնդրություն, ամբաստանեց նրան ամուսնու առաջը: Լավատաց Ակոստոսը կնոջը և վճռեց կործանել Պելևսին:

¹ Բալոս Թեսալիայում, Էգիան ծովի Պեղասեյան ծովախորշի ափին:

¹ Մարզ Միջին Լուսնաստանի արևմուտքում:

² Պելոպոնեսի Լակոնիա մարզի գլխավոր քաղաքը:

Մի անգամ, որսի ժամանակ, Պելիոնի անտառապատ լանջերին, երբ որսից հոգնաբեկ Պելևսը բուն էր մտել, Ակաստոսը թաքցրեց նրա հրաշալի սուրբ, որ աստվածներն էին բնծայել նրան: Ոչ ոք չէր կարող գիմազրել նրան, երբ նա կո՛ւլում էր այդ սրով: Ակաստոսը համոզված էր, որ զրկվելով իր հրաշալի սրից, կկործանվի Պելևսը վայրի կենտավրոսներից հոշոտված: Բայց Պելևսին օգնության հասավ իմաստուն կենտավրոս Քիրոնը: Նա օգնեց հերոսին, որ գտնի իր զարմանահրաշ սուրբ: Պելևսի վրա հարձակվեցին վայրի կենտավրոսները, ուզում էին հոշոտել նրան, բայց նա հեշտությամբ ետ մղեց նրանց իր հրաշագործ սրով: Փրկվեց Պելևսը անխուսափելի մահից: Նա վրեժ լուծեց նաև դավաճան Ակաստոսից. Դիոսկուրների՝ Կաստորի և Պոլիդեմսի օգնությամբ զրավեց մեծահարուստ Յուլթոսը և սպանեց Ակաստոսին ու նրա կնոջը:

Երբ տիտան Պրոմեթևսը բացեց այն մեծ գաղտնիքը, թե Զևսի և աստվածուհի Քեոփսի ամուսնությունից կծնվի մի արու գավակ, որ ավելի հզոր կլինի, քան հայրը, և գահընկեց կանի Զևսին՝ նա խորհուրդ տվեց աստվածներին, որ Քեոփսին կնության տան Պելևսին, որովհետև այդ ամուսնությունից կծնվի մեծագործ մի հերոս: Այդպես էլ վճռեցին վարվել աստվածները. միայն մի պայման դրին. Պելևսը պիտի մենամարտի մեջ հաղթեր զիցուհուն:

Երբ Հեփեստոսը Պելևսին հայտնեց աստվածների կամքը, Պելևսը գնաց այն քարանձավը, ուր հաճախ հանդիստ էր վայելում Քեոփսը՝ ծովից դուրս գալուց հետո: Թաքնվեց Պելևսը քարանձավում և օպասեց այնտեղ: Ահա ծովից դուրս եկավ Քեոփսը և մտավ քարանձավը: Հարձակվեց Պելևսը նրա վրա և օղակեց իր հզոր բազուկներով: Քեոփսը ջանում էր զուրս պրծնել: Նա մեկ առյուծի, մեկ օձի կերպարանք էր ընդունում, մեկ էլ շուր էր դառնում, բայց բաց չէր թողնում նրան Պելևսը: Պարտված էր Քեոփսը, այժմ արդեն պիտի դառնար Պելևսի կինը:

Կենտավրոս Քիրոնի ընդարձակ քարայրում աստվածները Պելևսի և Քեոփսի հարսանյաց հանդեսն էին տոնում: Ծոխ էր ու շքեղ հարսանեկան խրախճանքը: Թլիմպոսի բոլոր աստվածներն այնտեղ էին: Բարձրաձայն հնչում էր Ապոլոնի ոսկե կիթառը, որի նվագակցությամբ մուսաները երգում էին Պելևսի և աստվածուհի Քեոփսի որդուն վիճակված փառքը: Խրախճանք էին ա-

նում աստվածները: Օրնադները և քարիսները, մուսաների երգի և Ապոլոնի նվագի տակ պարում էին, իսկ նրանց մեջ իրենց վսեմաշուք գեղեցկությամբ աչքի էին ընկնում ռազմաշունչ աստվածուհի Աթենասը և դեռատի աստվածուհի Արտեմիսը, բայց իր գեղեցկությամբ բոլոր զիցուհիներին գերազանցում էր հավերժ երիտասարդ Ափրոդիտեն: Խմբապարհն մասնակցում էր նաև մտքի պես սրաթուխ, աստվածների բանբեր Հերմեսը և, արյունահեղ մարտերը մոռացության տված, պատերազմի մոլեգին աստված Արեսը: Շույլ նվերներ տվին աստվածները նորապսակներին: Քիրոնը Պելևսին նվիրեց իր նիզակը, որի կոթը շինված էր նրկաթի պես ամուր հացնուց, որ անել էր Պելիոն լեռան վրա. «Նվիրի ոչորակալ Պոսեյդոնը նույզներ նվիրեց նրան, իսկ մյուս աստվածները՝ սրանցից զրահներ»:

Նվարմանում էին աստվածները: Երկպառակության աստվածուհի Էրիսն էր միայն, որ չէր մասնակցում հարսանյաց խրախճանքին: Միայնակ թափառում էր նա Քիրոնի քարայրի մոտ, խորը թաքցնելով վիրավորանքը, որ իրեն չէին հրավիրել խնջույքի: Վերապես կռահեց էրիս աստվածուհին, թե ինչպես պիտի վրեժխնդիր լինի աստվածներից, ինչպես երկպառակություն գցի նրանց մեջ: Հնարախրեցների հեռավոր այգիներից վերցրեց մի ուկն խնձոր. միայն մի բառ էր գրված այդ խնձորի վրա՝ «ամենազեղեցկին»: Կամացուկ մտա գնաց էրիսը խրախճանքի սեղանին և բուրբից անկառ՝ սեղանին գցեց ոսկե խնձորը: Տեսան աստվածներն այդ խնձորը. վերցրին և կարդացին նրա վրա գրվածը: Բայց ո՞վ է աստվածուհիներից ամենազեղեցիկը: Անմիջապես վճռեցին զիցուհիներից երեքի՝ Զևսի կնոջ՝ Հերայի, աստվածուհի Աթենասի և սիրո աստվածուհի՝ ոսկեշող Ափրոդիտի միջև: Մուրաբանչյուրն ուզում էր ստանալ այդ խնձորը, ոչ ոք չէր ուզում զիջել մյուսին: Աստվածների և մարդկանց արքա Զևսն զիմեցին աստվածուհիները, և պահանջեցին լուծել նրանց վեճը:

Հրամարվեց Զևսը դատավոր լինելուց: Նա վերցրեց խնձորը, տվեց Հերմեսին և պատվիրեց զիցուհիներին տանել Տրոյայի շքուղակալը՝ բարձրաբերձ Իդա լեռան լանջերը: Այնտեղ, Տրոյայի արքա Պրիամոսի գեղեցկագույն որդին՝ Պարիսը պիտի վճռեր, թե ո՞վ է աստվածուհի խնձորը, ո՞վ է ամենազեղեցիկը»:

եվ այդպես՝ աստվածուհիների երկպառակությամբ վերջացավ Պելևսի հարսանեկան խնջույթը: Շատ աղետներ պիտի բերեր մարդկանց երեք աստվածուհիների վեճը:

ՊԱՐԻՍԻ ԴԱՏԸ

Արագ սլանում էին Հերմեսն ու երեք դիցուհիները զեպի Իդայի լեռնալանջերը, Պարիսի մոտ: Պարիսը՝ Պրիամոսի որդին, այդ ժամանակ նախիր էր արածացնում: Պարիսի ծնվելուց առաջ մի սոսկալի երազ տեսավ նրա մայրը՝ Հեկաբեն. տեսավ, թե ինչպես հրդեհը սպառնում է ոչնչացնել ողջ Տրոյան: Վախեցավ Հեկաբեն և իր երազը պատմեց ամուսնուն: Պրիամոսը դիմեց պատգամախոսին, իսկ նա ասաց, որ Հեկաբեն մի զավակ կունենա, որ կդառնա Տրոյայի կործանման պատճառ: Դրա համար էլ, երբ Հեկաբեն զավակ ունեցավ, Պրիամոսը իր սպասավոր Ագելաոսին պատվիրեց տանել մանկանը բարձրաբերձ Իդա լեռը և նետել անտառի թավուտը: Բայց կորստյան շմառնվեց Պրիամոսի որդին. նրան կերակրեց արջը: Մի տարի անց Ագելաոսը գտավ և հարազատ որդու նման դաստիարակեց նրան՝ անունը դնելով Պարիս: Հովիվների մեջ մեծացավ Պարիսը և դարձավ արտասովոր զեղեցիկ մի պատանի: Հասակակիցների մեջ աչքի էր ընկնում նա իր ուժով: Հաճախ նա փրկում էր ոչ միայն նախիրը, այլև իր ընկերներին՝ վայրի գազանների և ավազակների հարձակումներից. և այնպես էր հռչակվել նրանց մեջ իր ուժով ու քաջությամբ, որ Ալեքսանդրոս (այսինքն՝ այր մարդկանց վանող, պարտության մատնող) անվանեցին նրան: Խաղաղ ու հանդիստ ապրում էր Պարիսը Իդայի անտառներում: Նա լիովին գոհ էր իր բախտից:

Հենց այդ Պարիսին ներկայացան դիցուհիները, Հերմեսի հետ միասին: Վախեցավ Պարիսը՝ աստվածուհիներին ու Հերմեսին տեսնելով: Կամեցավ փախուստի դիմել, բայց փախուստով կխուսափե՞ր արդյոք մտքի պես սրաթուիչ Հերմեսից: Կանգնեցրեց նրան Հերմեսը և, մեկնելով խնձորը, սիրալիբ խոսեց նրա հետ.

— Վերցրու այս խնձորը, Պարիս,— ասաց Հերմեսը,— տեսնում ես, քո առաջ կանգնած են երեք աստվածուհի: Տո՛ւր այս խնձորը նրանցից ամենագեղեցիկին: Զևսն է պատվիրել քեզ՝ վեճի մեջ մտած դիցուհիների դատավորը լինել:

Վարանեց Պարիսը: Նայում է աստվածուհիներին և չի կարողանում որոշել, թե ո՞րն է նրանցից ավելի զեղեցիկ, Այդ ժամանակ դիցուհիներից ամեն մեկն սկսել էր համոզել պատանուն, որ իրե՛ն տա խնձորը: Նրանք մեծ պարզեներ խոստացան Պարիսին: Հերան խոստացավ ողջ Ասիայի իշխանությունը, Աթենասը՝ ազամի փառք և հաղթանակներ, իսկ Ափրոդիտեն՝ մահկանացու կանանցից ամենաշքեղին՝ շանթարձակ Զևսի և Լեդայի գտները՝ Հեղինեին նրան կնության տալ: Լսելով Ափրոդիտեին խոստումը, էլ երկար չմտածեց Պարիսը. խնձորը տվեց Ափրոդիտեին: Այսպիսով, աստվածուհիների մեջ Պարիսի կողմից ամենագեղեցիկը ճանաչվեց Ափրոդիտեն: Այդ ժամանակից ի վեր Պարիսը գարձավ Ափրոդիտեի սիրելին, ի՛նչ էլ որ նախաձեռներ Պարիսը, ամեն բանում օգնում էր նրան Ափրոդիտեն: Իսկ Հերան և Աթենասը ատեցին Պարիսին, ատեցին նաև Տրոյան ու բոլոր տրոյացիներին և վճռեցին կործանել քաղաքն ու ողջ ժողովուրդը:

ՊԱՐԻՍԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՏՐՈՅԱ

Աստվածների հետ ունեցած հանդիպումից հետո Պարիսը երկար չմեաց Իդայի անտառներում: Տեսնելով, որ կնոջ՝ Հեկաբեի, մտքը չի անքվում և նա մորմոքվում է կորցրած որդու համար, Գրիամոսը նոր խաղից կազմակերպեց ի պատիվ կարծեցյալ զոհ՝ Հաճ որդու: Հաջողը պարզե և ստանալու Պրիամոս արքայի նախի ամենալավ քույր Այդ քույր հենց այն նախրի մեջ էր, որ արժանարժեք էր Պարիսը: Պարիսն ափսոսում էր բաժանվել այդ քույրը, որին ըստ էր սիրում, և ի՛նչքա տարավ նրան քաղաքը: Հաջիանակ տանելու տենչանքը բռնկվեց նրա մեջ. մրցության մեջ մտավ նա և հաղթեց բոլորին, մինչև իսկ հզոր Հեկտորին:

Չարտյթով լցվեցին Պրիամոսի որդիները, որ իրենց հաղթել էր ինչ-որ մի նախրապան: Պրիամոսի որդի՝ Դեիփորոսը, ձեռքը առավ սուրը և ուզեց սպանել Պարիսին: Սարսափահար Պարիսը նետվեց զեպի-Զևսի զոհասեղանը՝ փրկություն գտնելու: Զոհասեղանի մոտ նրան տեսավ Պրիամոսի զուտորը՝ գուշակուհի Թալուսը: Իսկույն ճանաչեց նա, թե ով է այդ նախրապանը: Թալուսը Գրիամոսն ու Հեկաբեն, որ գտել են կորուսյալ որդուն և մեծ հանդեսով պալատ տարան նրան: Զուր էր Կասանդրան նախազգուշացնում Պրիամոսին, զուր էր հիշեցնում, թե

Ճակատագիրը կանխորոշել է. որ Տրոյայի կործանման պատճառը Պարիսը պիտի դառնա: Ոչ որ ուշագրութունն չէր դարձնում գուշակուհի Կասանդրային: Աստուծոն աստվածը տխոր ճակատագրի էր դատապարտել Կասանդրային. ոչ որ չէր հավատում նրա գուշակութուններին, չնայած քուր գուշակութունները ի կատար էին ածվում:

ՊԵՐԻՍԸ ԱՌԵՎԱՆԿՈՒՄ Է ՀԵՂԻՆԵՆ

Ետո ժամանակ անցավ այն օրից, երբ Պարիսը վերագարձել էր իր հոր՝ Պրիամոսի տունը: Թվում էր, թե նրա կյանքում կատարված փոփոխությունը կօտիպեր մոռանալ այն պարզեր, որ խոստացել էր Ափրոդիտեն ոսկեղեն խնձորի փոխարեն: Այժմ արդեն նա արքայազն էր, և ոչ հասարակ ու անհայտ ինչ-որ մի նախարպան: Բայց Ափրոդիտեն ինքը հիշեցրեց նրան շքնաղ Հեղինեի մասին և օգնեց իր սիրելիին կառուցել մի հոյակապ նավ. նա պատրաստվեց նավել դեպի Սպարտա, ուր ապրում էր Հեղինեն: Զուր էին Պրիամոսի գուշակ որդու՝ Հելենոսի նախազգուշացումները: Նա կործանում էր կանխագուշակում Պարիսին: Բայց ոչինչ չէր ուզում չսել Պարիսը: Նա ելավ նավ և հեռավոր նավարկություն սկսեց անել ու անձայրածիր ծովով: Հուսահատությունը տիրեց Կասանդրային, երբ տեսավ, թե ինչպես է հեռանում Պարիսի արագընթաց նավը հայրենի ափերից: Չեղբերը երկինք կարկառած՝ գոչեց գուշակուհի Կասանդրան.

— Ծ, վա՛յ, վա՛յ մեծ Տրոյային և մեզ բոլորիս: Տեսնում եմ ես նվիրական Իլիոնը բոցերի մեջ, արնաշաղախ, գետնահար ընկած են փոշեթաթավ զավակները նրա: Տեսնում եմ՝ օտարերկրացիները ստրկություն են տանում Տրոյայի ողբացող կանանց ու աղջիկներին:

Այդպես վայում էր Կասանդրան, բայց ոչ որ ուշագրութունն չէր դարձնում նրա մարգարեություններին: Ոչ որ չէր կասեցնում Պարիսին:

Իսկ Պարիսը նավում էր հեռու-հեռու: Սուկայի փոթորիկ բարձրացավ ծովի վրա: Դա էլ ետ շպահեց Պարիսին: Մի կողմ թողեց նա հարուստ Փոիոտիսը, Սալամինն ու Միկենեն, ուր ապրում էին նրա ապագա թշնամիները, և, վերջապես, հասավ կախուխայի ափերին, Հասավ Պարիսը էվրոտասի գետաբերանը և ըն-

կերո՞՛ էնեսախ հետ ափ դուրս եկավ: Նրա հետ միասին գնաց արքայի մոտ իբրև շար գիտավորութուն շունեցող մի հյուր:

Գրկարաց ընդունեց Մենելասը Պարիսին և էնեսախին: Ի պատիվ հյուրերի ձուխ հացկերույթ տվեց: Հացկերույթի ժամանակ Պարիսը առաջին անգամ տեսավ շքնաղ Հեղինեին: Զմայված նայում էր նրան Պարիսը, սքանչանալով նրա երկնային գեղեցկությունը:

Հեղինեն էլ Պարիսի գեղեցկությամբ գերվեց, սքանչելի էր նա իր արևելյան զգեստների մեջ: Անցավ մի քանի օր: Մենելասը կարեօր զործով կրետե պիտի գնար: Մեկնելիս նա խնդրեց Հեղինեին, որ հոգ տանի հյուրերի մասին, որ ոչ մի քանի պակաս չզգան նրանք: Չէր կասկածում Մենելասը, թե ինչ անարգանք պիտի հասցնեն նրան հյուրերը:

Մենելասի մեկնելուն պես Պարիսը վճռեց օգտվել առիթից: Ափրոդիտեի օգնությամբ քնքշանուշ խոսքերով համոզեց շքնաղ Հեղինեին լքել ամուսնու տունը և իր հետ Տրոյա փախել: Տեղի տվեց Հեղինեն Պարիսի թախանձանքներին: Գաղտագողի իր նավը տարավ Պարիսը շքնաղ Հեղինեին. առևանգեց նա Մենելասի կնոջը, իսկ նրա հետ միասին՝ նաև գանձերը: Հանուն Պարիսի սիրո Հեղինեն մոռացավ ամեն ինչ՝ ամուսնուն, հայրենի Սպարտան և իր ուսուցիչ Հեռմիոնին:

Շուտով Պարիսի նավը էվրոտասի գետաբերանից՝ մեծա-հարուստ ափով տանելով: Արագ սլանում է նավը ծովի ալիքների վրայով՝ դեպի Տրոյական ափերը: Յնժում էր Պարիսը, նրա հետ էր մեղանալու կանանցից գեղեցկագույնը՝ Հեղինեն: Հանկարծ, կար նախ զարկն Օտազն էր ափերից և բաց ծով դուրս եկել, կրակ կանգնեցրեց ծովի հզոր աստված Ներեոսը: Նա դուրս լողաց ծովի հարևանությամբ և կործանում գուշակեց Պարիսին և ողջ Տրոյացին: Հարանցին Պարիսն ու Հեղինեն, բայց Ափրոդիտեն հանգրտացրեց նրանց և մոռացնել տվեց այդ ահավոր գուշակությունը: Երեք օր լողաց նավը Ափրոդիտեի հովանավորությամբ՝ անխուժ ծովում: Արագ ըշում էր նրան համբնթաց բամին: Նավը անվերջ հազավ Տրոյայի ափերը:

Հենց որ գեղանի Հեղինեն նենգամիտ Պարիսի հետ լքեց Մենելաոսի պալատը, աստվածներն իսկույն իրենց բանբերուհի Իրիսին ուղարկեցին Կրետե՝ Մենելաոսի մոտ: Իր վարդապույն թևերով սուրաց Իրիսը Օլիմպոսից, մի ականթարթում կանգնեց Մենելաոսի առաջ և հայտնեց նրան վրա հասած դժբախտության մասին: Անմիջապես վերադարձի ճամփան բռնեց Մենելաոսը: Շատ շուտով հասավ Սպարտա: Ահավոր զայրույթով լցվեց՝ տեսնելով, որ Հեղինեն իրեն խաբել է, և իր զանձերը հափշտակված են: Մենելաոսը հապճեպ մեկնեց եղբոր՝ Ագամեմնոնի մոտ, խորհուրդ անելու, թե ինչպես վրեժ լուծեն Պարիսից նրա նենգամիտ արարքի համար: Կարեկցանքով վերաբերվեց Ագամեմնոնն իր եղբորը և խորհուրդ տվեց անմիջապես հավաքել բոլոր այն հերոսներին, ովքեր մի ժամանակ երզում էին տվել բոլոր ուժերով զորավիգ լինել նրան դժբախտության ղեկավար: Ագամեմնոնը խորհուրդ տվեց նաև, այդ հերոսների և նրանց զորքերի հետ պատերազմի ելնել ընդդեմ Տրոյայի: Լսեց Մենելաոսը Ագամեմնոնի խորհուրդը և նրա հետ միասին ամենից առաջ մեկնեց Պիլոսի արքա, զառամյալ Նեստորի մոտ, որ ամենախմաստուն հերոսներից մեկն էր:

Սրտաբաց ընդունեց Նեստորը Մենելաոսին և Ագամեմնոնին: Սոսկալի զայրույթով լցվեց ծերունի Նեստորը Պարիսի դեմ: Նա վճռեց անձամբ մասնակցել արշավանքին ընդդեմ Տրոյայի և հետք վերցնել իր որդիներին՝ Թրասիմեդեսին և Անտիլոքոսին: Նեստորը համաձայնեց Ատրիդների՝ հետ միասին այցելել Հունաստանի հերոսներին՝ բոլորին զրգելու մասնակցել այդ արշավանքին:

Շատ հերոսներ վճռեցին մասնակցել այդ արշավանքին. ոմանք մասնակցում էին, որովհետև պարտավորված էին երդմամբ, իսկ մյուսները ծարավի էին ռազմի սխրանքների: Որոշեցին Տրոյայի դեմ գնալ՝ մեծն Տիդևսի որդին՝ զորովյալ արքա աստծուն շղիջող, Արգոսի արքա Դիոմեդեսը, Էվրեայի արքայի իմաստուն որդին՝ Պալամեդեսը, Մինոսի հզոր թուղ, Կրեսանի արքա Իդոմենեոսը, Հերակլեսի ընկեր՝ Փիլոկետեսը, որին իր

մահից առաջ իր նետերն էր տվել Հերակլեսը: Առանց այդ նետերի, ինչպես պատգամախոսն էր զուշակել, չէր կարելի զրավել Տրոյան: Արշավանքին մասնակցում էին նաև երկու Այաքսները. Հերակլեսի ընկերը՝ Տելամոնի հզոր որդին, Սալամինի արքա Այաքսը, որին զորովյալ հերոսներից և ոչ մեկը չէր կարող հավասարվել, և Օյլևսի որդի Լոկրիսցի՝ Այաքսը: Շատ ուրիշ հերոսներ էլ էին մասնակցում արշավանքին¹: Պետք էր ստիպել, որ ռազմարշավի զուրս գա նաև Իթակեի արքա բազմաճնարագետ Ոդիսևսը՝ Լաերտի որդին: Բայց Ոդիսևսը չէր ուզում հեռանալ Իթակեից: Զե՞ որ նա վաղուց չէ, ինչ ամուսնացել էր գեղանի Պենելոպեի հետ և նոր էր ծնվել անդրանիկ որդին՝ Տելեմաքոսը: Եվ մի՞թե ստիպված պետք է լինի լքել խաղաղ կյանքը, սիրասուն կնոջն ու որդուն, և նետվել ղեպի հեռավոր Տրոյայի պարիսպները, դուցեև այլևս երբեք հայրենիք չվերադառնալու պայմանով: Դրա համար էլ, երբ Ոդիսևսն իմացավ, որ Մենելաոսը Ագամեմնոնի, Նեստորի և Պալամեդեսի հետ Իթակե են եկել, նա վճռեց խաբել նրանց: Ցնորված ձևանալով, եզր և էջը զուլանին լծած, նա սկսեց վարել իր դաշտերը և աշ ցանել: Ոդիսևսի խորամանկ արարքը առաջինը Պալամեդեսը հասկացավ և վճռեց ստիպել Ոդիսևսին խոստովանել այդ: Նա ձեռքն առավ Տելեմաքոսին և բարրուրով զրեց այն ակոսի մեջ, որով գնում էր Ոդիսևսը: Կանգ առավ Ոդիսևսը: Որքան էլ մեծ էր Իթակեում մնալու նրա ցանկությունը, բայց ի սեր զրա չէր կարող զոհել իր միակ որդուն: Այդպես Պալամեդեսը ի հայտ բերեց Ոդիսևսի կեղծիքը, և Ոդիսևսն ստիպված էր լքել հայրենի Իթակեն, կնոջն ու որդուն և գնալ տարիներ շարունակ Տրոյայի պարիսպների տակ մնալու: Ատեց Ոդիսևսը Պալամեդեսին և վճռեց վրեժխնդր լինել նրանից, որ ստիպեց իրեն մասնակցել լինել արշավանքին:

¹ Կեղին — մարդ Միլին Հունաստանում՝ Թեոփոյի և Էտոլիայի միջև:

² Ըստ պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության», Տրոյական պատերազմին մասնակից է կղև նաև հայ դյուցազն Զարմայր Նահապետը՝ «Եվ մի Զարմայրը. — գրում է պատմիչը, — որ ասորեստանցիների հպատակ էր, թե՛ մարտով նվաճական զորքի հետ օգնական է եղել Պրիամոսին և այնտեղ Հայաստանից բաբելոնցի վերավերվելով մեռնում է, բայց կիլամենայի թև Աքիլևսից և ոչ թե մի որիչ բաշից» («Հայոց պատմություն», էջ 56, 1940, Երևան) (Մ. Ք):

¹ Ատրևան Ագամեմնոնի և Մենելաոսի հայրն էր (Մ. Ք):

Հերոսներից մեկին ևս պիտի մասնակից դարձնենին ռազմարդ շափին: Դա պատանի Աքիլլեսն էր՝ Պելևս արքայի և Թետիս աստվածուհու որդին: Կալքաս զուշակը Ատրիդեսերին գուշակել էր, որ միայն այն զեպտոմ կվերցնեն նրանք մեծ Տրոյան, երբ Աքիլլեսը մասնակցի արշավանքին: Անմահ փառք էր խոստացել ճակատագիրն Աքիլլեսին: Նա պետք է լիներ Տրոյայի տակ մարտնչող հերոսներից վեհագույնը: Մեծ են լինելու Աքիլլեսի սխրագործությունները, բայց չի վերադառնա նա Տրոյայի պատերի տակից, և կզոհվի ծաղիկ հասակում՝ նետով խոցված: Գիտեր աստվածուհի Թետիսը, թե ճակատագիրն ի՞նչ է կանխատեսել իր որդուն: Ամբողջ զորովյալմբ ջանում էր կանխել նրա անհղ ճակատագիրը: Երբ Աքիլլեսը դես մանուկ էր, Թետիսը նրա մարմինը օծում էր ամբողջ սխրով և պահում կրակի վրա, որպեսզի որդուն անխոցելի դարձնի և անմահություն տա: Բայց մի անգամ, գիշերը, երբ Թետիսը մանկանը դրել էր կրակի մեջ, Պելևսն արթնացավ քնից: Սարսափը տիրեց նրան, երբ տեսավ որդուն կրակի մեջ: Խելելով սուրը, նա նետվեց Թետիսի կողմը: Վախեցավ գիցուհին, սարսափահար փախավ Պելևսի պալատից և թաքնվեց ծովի հորձանուտում, իր հոր՝ Ներեոսի ապարանքում: Իսկ Պելևսը Աքիլլեսին տվեց իր ընկեր կենտավրոս Քիրոնին՝ դաստիարակելու: Մեծցող Քիրոնն Աքիլլեսին արջի սղեղով և առյուծի լյարդով: Մեծագոր մի հերոս դարձավ Աքիլլեսը: Նա ընդամենը վեց տարեկան էր, որ սպանում էր զազազած առյուծներին ու վարազներին և առանց շների հասնում եղնիկների հետևից, այդքան արագ ու թեթև էր Աքիլլեսի վազը: Չենք բանեցնելու մեջ Աքիլլեսը չունի իրեն հավասարը: Սովորեցրել էր Քիրոնը նաև նվագել ախորժալուր կիթառի վրա և երգել: Չէր մոռանում իր որդուն նաև Թետիսը, հաճախ նա դուրս էր լողում ծովի հորձանուտից որդուն տեսնելու համար: Միշտ և ամենուրեք հոգ էր տանում նա որդու մասին:

Երբ Աքիլլեսը մեծացավ և չքնաղ մի պատանի դարձավ, ողջ Հունաստանում լուր տարածվեց, թե Մենելասը հավաքում է հերոսներին Տրոյայի դեմ արշավելու: Իմանալով, թե ի՞նչ օրհաս է սպանում Աքիլլեսին, Թետիսը թաքցրեց նրան Սկյուրոս՝ կղզում,

լիկոմեդես արքայի պալատում: Այնտեղ, կանացի զոհասներ հագած, արքայազուստրերի հետ ապրում էր Աքիլլեսը: Այդ ոք չգիտեր, թե որտեղ է թաքնված Աքիլլեսը: Բայց Կալքաս զուշակը հայտնեց Մենելասին նրա թաքստարանը: Անմիջապես ճանապարհ ընկան Ոգիսեսն ու Գիոմեդեսը: Իսկ Ոգիսեսը խորամանկ մի հնար դրավ: Իրրև վաճառականներ Սկյուրոս ժամանեցին Գիոմեդեսն ու Ոգիսեսը և գնացին լիկոմեդեսի պալատը: Նրանք արքայազուստրերի առջ փոսեցին իրենց ապրանքները՝ շքեղ գործվածքներ, ոսկե մանյակներ, ապարանջաններ, ականջօղեր, ոսկեհուռ ծածկոցներ, իսկ գրանց մեջ դրել էին սուսեր, սաղավարտ, վահան, զրահներ: Արքայազուստրերը զմայլված զննում էին ոսկե զարդերն ու ընտիր գործվածքները, իսկ նրանց մեջ կանգնած Աքիլլեսը նայում էր միայն զենքերին: Հանկարծ պալատի մոտ լավեցին ռազմականչեր, հնչեցին փողերն ու շունդացին զենքերը: Այդ Գիոմեդեսի և Ոգիսեսի ուղեկիցներն էին սրերով զարկում վահաններին և ռազմականչերով աղմուկ-աղաղակ բարձրացնում: Փախան սարսափահար արքայազուստրերը, իսկ Աքիլլեսը հափշտակեց սուսերն ու վահանը և վազեց թշնամուն ընդառաջ: Նա կարծում էր, թե հարձակվել են լիկոմեդեսի պալատի վրա: Այդպես նախաչեցին Աքիլլեսին Ոգիսեսն ու Գիոմեդեսը: Մեծ հրճվանքով համառայեց Աքիլլեսը մասնակցել Տրոյական արշավանքին: Նրա հետ նախապես ընկան նաև նրա հավատարիմ ընկեր Պատրոկլեսն ու իմաստուն ծերունի Փենիքսը: Իսկ Պելևսը որդուն տվեց այն պարանշտը, որ մի ժամանակ ընծայել էին աստվածները Թետիսի աստվածուհու և իր հարսանյաց հանդեսին, տվեց նաև Քիրոնի ընծայած սղեղը և Պենիքսից ստացած նժույզները:

ՏՐՈՅԱ

Մեծ էր ու հզոր Տրոյան, որի դեմ պատրաստվում էին էլնել Հեկտորանի հերոսները: Տրոյան հիմնադրել է Իլյուսը, Չևսի և պրոպոնոսի՝ էլեկտրայի որդու՝ Գարգանոսի ծոռը: Գարգանոսը Արկադիայից եկել էր Տեկրոս արքայի մոտ: Տեկրոսը Գարգանոսին քննության էր տվել իր դստերը և իբրև օժիտ՝ իր հողերի մի մասը,

Պենիքսներ — աստվածուհիներ, որոնց անունով է կոչվում Պելևսի համառվագրությունը:

1 Կղզի էգեյան ծովում, էվբեա կղզուց հյուսիս-արևելք:

որտեղ հիմնադրվում է Դարդանիա քաղաքը: Դարդանոսի թոռն էր Տրոսը, իսկ սրա որդին էլ՝ Իլոսը: Մի անգամ նա Փոյուզիայում մասնակցում է հերոսների մրցությանը և մեկը մյուսի հետևից հաղթում նրանց: Այդ հաղթանակի համար իբրև պարգև ստանում է հիսուն աղջիկ և հիսուն պատանի: Փոյուզիայի արքան նրան տալիս է նաև մի խայտաբղետ կով և ասում, որ նա քալի կովի հետևից և այնտեղ, ուր կովը կանգ կառնի, թող մի քաղաք հիմնադրի: Փոյուզիայի արքայի ասելով՝ մեծ փառք էր գուշակում այդ քաղաքին պատգամախոսը:

Իլոսը վարվեց այնպես, ինչպես ասել էր Փոյուզիայի արքան: Գնաց կովի հետևից, իսկ կովը կանգնեց Ատե աստվածուհու բլրի վրա: Հենց այդ բլրի վրա էլ Իլոսն սկսեց քաղաքի շինարարությունը: Նա ձեռքերը երկինք կարկառեց և աղերսեց Զևսին, որ կանխանշան ուղարկի ի հավանություն, թե շանթարձակն օրհնում է այդ գործը: Առավոտյան, երբ Իլոսը դուրս եկավ վրանից, իր առջև տեսավ Աթենաս-Պալլասի փայտե կերպարը. դա գրավական էր, որ նա՝ պիտի պահպաներ նոր քաղաքը: Իլոսի թագավորության ժամանակ Տրոյայի միայն այն մասն էր պատսպարված պատով, որ գտնվում էր բլրի վրա, իսկ քաղաքի մյուս մասը, որ գտնվում էր բլրի ստորոտում՝ պատսպարված չէր: Քաղաքի այդ մասը շրջափակող պարիսպը կառուցել էին Պոսեյդոնն ու Ապոլոնը, որոնք աստվածների հրամանով պիտի ծառայեին Իլոսի որդուն՝ Տրոյայի արքա Լամեդոնին: Անխորտակելի պարիսպ էին կանգնեցրել Պոսեյդոնն ու Ապոլոնը՝ Տրոյայի շուրջը: Միայն մի տեղում կարելի էր քանդել պարիսպը, այնտեղ, ուր աշխատել էր էաբոս հերոսը, որ օգնում էր աստվածներին աշխատանքի ժամանակ:

Այն ժամանակ, երբ Հունաստանի հերոսները պատրաստվում էին արշավել Տրոյայի վրա, Տրոյայում իշխում էր Իլոսի թոռը՝ Պրիամոսը: Նա էր միայն կենդանի մնացել Լամեդոնի զավակներից, այն ժամանակից ի վեր, երբ Զևսի որդին՝ Հերակլեսը, գրավել էր Տրոյան: Հարուստ էր Պրիամոսը: Պերձ էր ու վեհաշուք նրա պալատը, ուր ապրում էր նա իր կնոջ՝ Հեկաբեի հետ: Պրիամոսի հետ էին ապրում նաև նրա հիսուն տղաներն ու աղջիկները, Պրիամոսի տղաների մեջ իր քաջությամը և ուժով ամենից առավել հռչակվել էր աղնիվ Հեկտորը:

Հզոր էր Տրոյան: Մեծ զժվարություններ էին սպասում հունա-

կան հերոսներին ուղմատենչ տրոյացիների դեմ կովելու համար, բայց և մեծ փառք ու մեծահարուստ ավար՝ նրանց, ովքեր կհաղթեին տրոյացիներին և կտիրեին Տրոյային:

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ ՄԻՍԻԱՅՈՒՄ

Բոլոր հերոսները իրենց զորքերով հավաքվեցին Աուլիս նավահանգստում, որ այնտեղից նավեն դեպի Տրոյայի ափերը: Հսկայաթիվ զորք էր հավաքվել ծովափին: Հարյուր հազար զինավառ ուղմիկ՝ կար այդ զորաբանակում: 1186 նավով նրանք պիտի նավեին դեպի Տրոյա:

Ճանապարհ՝ ընկնելուց առաջ զորքերի բոլոր պարագլուխները՝ մեծ հերոսները, հավաքվեցին հարյուրամյա սոսնու տակ, զոհասեղանների մոտ, որպեսզի զոհ մատուցեն աստվածներին և երջանիկ նավարկություն աղերսեն: Հանկարծ զոհասեղաններից մեկի տակից դուրս սողաց արյան պես կարմիր, սոսկալի մի օձ: Հսկայական մարմինը օղակ-օղակ գալարելով, օձը արագ սողաց սոսնու վրա և հասավ գրեթե զագաթին: Այնտեղ թռչնի մի բույն կար, որի մեջ ծվարել էին մայր թռչունը և նրա ութ ճուտիկները: Բոսորագույն օձը լափեց և՛ մորը, և՛ ճուտիկներին, իսկ ինքը քար կտրեց:

Ապշահար կանգնել էին հերոսները սոսնու տակ: Անկարող էին կռահել, թե ի՞նչ է նշանակում աստվածների հղած այդ կանխանշանը: Բայց իմաստուն զուշակ Կալքասը հայտնի դարձրեց կանխանշանի իմաստը: Նա ասաց հերոսներին, որ նրանք ինը տարի ստիպված կլինեն պաշարել Տրոյան, քանի որ ինը թռչուն էր կուլ աճել օձը, միայն տասներորդ տարում, սոսկալի ջանքերից հետո, կվերցնեն մեծ Տրոյան: Ուրախացրին հույներին Կալքասի այդ խոսքերը: Չեռնարկած արշավանքի բարեհաջող վախճանի հույներով լի արձակեցին նրանք իրենց նավերը: Մեկը մյուսի հետևից հեռացան նավերը Աուլիս նավահանգստից: Թիավարները համբերաշխ թափով հրեցին թիակները և հսկայական նավատորմը լողաց դեպի Ասիայի ափերը:

1 Իհարկե, այստեղ խոսվում է այնպիսի մեծաքանակ զորքի մասին, որ չէր կարող հավաքվել այն ժամանակներում, երբ հյուսիսում էր տրոյական պատերազմի առաջվելը: Դա սովորական էպիկական գունազարդում է, որ վիթխարիության բնույթ է տալիս հույների և տրոյացիների պատերազմին:

Կարճատև նավարկութիւնից հետո հուլիսնոր մտտեցան Միսիայի ասիերին: Այստեղ իշխում էր Հերակլեսի որդին՝ Տելեփոսը: Մի ժամանակ նրա մայրը՝ Ալգին, վախենալով հոր ցասումից, ձգել էր նրան անտառում: Փոքրիկ Տելեփոսին իր կաթով սնեց մի եղջերու: Հովիվները Տելեփոսին գտան անտառում և վերցրին զատարակելու: Երբ Տելեփոսը մեծացավ և դարձավ ուժեղ մի պատանի, մեկնեց սուրբ Գելփիք՝ Ապոլոնի գուշակի մոտ, որ ստածուն հարցնի, թե ովքե՞ր են իր ծնողները: Պիթիան պատվիրեց Տելեփոսին մեկնել Միսիա՝ Տեթրաս արքայի մոտ. նրա մոտ, ըստ գուշակի, Տելեփոսը պիտի գտներ իր մորը, որ Տեգեայից փախչելուց հետո ապաստանել էր Միսիայի արքայի մոտ: Գեպի Միսիա ճանապարհ ընկավ Տելեփոսը, գտավ իր մորը և մնաց Տեթրասի մոտ ապրելու: Տեթրաս արքան որդեգրեց նրան և իր ժառանգորդը դարձրեց:

Տեթրաս արքայի մահից հետո Միսիայի արքան դարձավ Տելեփոսը: Հենց նրա տիրապետութանն էին հասել հուլիսները: Համոզված, որ արդեն հասել են Տրոյայի ասիերին, նրանք սկսեցին ավերել Տելեփոսի երկիրը: Զորք հավաքեց Տելեփոսը և նրանց գլուխ անցած առաջ շարժվեց իր տիրապետութիւնը պաշտպանելու: Արյունահեղ մարտ սկսվեց: Հերակլեսի հզոր որդին՝ Տելեփոսը, իր ծանր նիզակով մահացու վերք հասցրեց Պոլիսիկոսի որդուն՝ Փերասնդրեսին, և շուտով հուլիսնորին ետ մղեց դեպի իրենց նավերը: Այդ ժամանակ մարտի նետովեց Աքիլլեսը, իր հավատարիմ ընկերոջ՝ Պատրոկլեսի հետ: Վիրավորվեց Պատրոկլեսը, բայց իր վերքը ուշադրութան շաննելով, արիաբար կռվում էր Աքիլլեսի հետ կողք-կողքի:

Վերջապես, շատ մեծ դժվարութամբ, Աքիլլեսը փախուստի մատնեց Տելեփոսին: Այդ փախուստի ժամանակ Տելեփոսը խճճվեց իսողողի վազերի մեջ: Աքիլլեսը, հասնելով Տելեփոսի հետևից, անպայման կսպաներ նրան, եթե հավատարիմ միսիացիները չփրկեին իրենց արքային: Աքիլլեսին հաջողվեց իր նիզակով վիրավորել Տելեփոսին:

Վրա հասնող դիշերը հնարավորութիւն տվեց Տելեփոսին ճողորմել իր քաղաքը և փախկնլ այնտեղ: Առավոտը վաղ հուլիսներն սկսեցին հավաքել ընկած ռազմիկների մարմինները և այգտեղ հանկարծ իմացան, որ տրոյացիների հետ չեն մարտնչել, այլ միսիացիների և նրանց արքա Տելեփոսի, Հերակլեսի որդու հետ:

Տրամեցին հուլիսները, նրանք կռվել էին ոչ թե թշնամու, այլ իրենց զաշնակիցների հետ: Ետադրութան դաշն կնքեցին հուլիսները Տելեփոսի հետ և նա խոստացավ օգնել հուլիսնորին: Բայց Տելեփոսը հրաժարվեց արշավել Տրոյայի վրա. նա ամուսնացած էր Պրիամոսի դստեր հետ և չէր ուզում կռվել իր կնոջ հոր դեմ:

Կռվում ընկածներին թաղելուց հետո հուլիսները լքեցին Միսիան և նավեցին դեպի Տրոյայի ասիերը: Բայց ծովում մի սոսկալի փոթորիկ վրա հասավ: Լեռնանում էին ծովի վրա ահեղագուռալիքները: Թեթև տաշնդներին նման այս ու այն կողմն էր շարտում փոթորիկը հուլիսների նավերը: Ծանապարհը կորցրին նրանք: Երկար թափառեցին հուլիսները ծովի վրա և, վերջապես, նորից վերադարձան Աուլիս: Հուլիսների նավերը մեկը մյուսի հետևից ետ էին դառնում այն նավահանգիստը, որ վաղուց չէր, ինչ թողել էին՝ դեպի մեծ Տրոյա նավելու համար: Անհաջող վախճան ունեցավ արշավանքի առաջին փորձը:

ՀՈՒՅՆԵՐԸ ԱՌԿԵՍՈՒՄ՝

Շարադրված է ըստ Ելիպիդեսի «Եփեզեթիան Աուլիսում» ողբերգության:

Երբ հուլիսների բոլոր նավերը կրկին հավաքվեցին Աուլիսում, նրանք ափ հանեցին իրենց նավերը: Ափին մի հսկայական ռազմական ճամբար գոյացավ: Հերոսներից շատերը շնացին ճամբարում, նրանք վերադարձան տուն: Աուլիսից հեռացավ նաև ողջ բանակի պարագլուխ Ազամեմենոն արքան: Ոչ ոք չգիտեր, թե երբ կարելի կլինի նորից արշավել Տրոյայի դեմ: Ի՞նչ պիտի անեին հուլիսները: Հարկավոր էր մի ուղեցույց, որ նրանց ցույց տար Տրոյայի ասիերը տանող ճամփան: Այդ ճանապարհը կարող էր ցույց տալ միայն Տելեփոսը, որի հետ վաղուց չէր, ինչ մարտնչում էին հուլիսները: Մարտի ժամանակ Տելեփոսը վերք էր ստացել Աքիլլեսից: Ինչպես էլ բուժում էր Տելեփոսը իր վերքը՝ ոչինչ չէր օգնում: Վերքը գնալով ավելի մեծ ցավեր էր պատճառում. կսկիծն անտանելի էր դառնում: Վերջապես տանջահար Տելեփոսը մեկնեց Գելփիք և այնտեղ հարցում արեց Ապոլոնին, թե ինչպես բուժի վերքը: Պիթիան պատասխան տվեց, թե Տելեփոսին այլաբանել կարող է միայն նա, ով վերք է տվել նրան: Ցնցոտիներ հագած, հենակ-

1 Աուլիս—բազա էվրեան Միջին Հունաստանից բաժանող ծովածոցի ափին:

ներք թևի տակ, մուրացիկի կերպարանքով, Տելեփոսը գնաց Միկենե, Ազամեմնոնի պալատը. նա վճռել էր խնդրել Միկենեի արքային, որ համողի Աքիլեսին՝ բուժել իր վերքը: **Տելեփոսին** առաջին տեսնույր Կլիթեմնեստրան էր՝ Ազամեմնոնի կինը: Նա տիկնոջը հայտնեց իր ով լինելը, իսկ Կլիթեմնեստրան խորհուրդ տվեց Տելեփոսին, որ հենց Ազամեմնոնը տուն մտնի, օրորոցից հանի Ազամեմնոնի որդուն՝ մանուկ Օրեսթեսին, վազի զոհասեղանի մոտ և սպաննա, որ զոհասեղանին խփելով կշախշախի Օրեսթեսի գլուխը, եթե Ազամեմնոնը չօգնի իր վերքը բուժելուն: Տելեփոսը վարձեց այնպես, ինչպես Կլիթեմնեստրան էր պատվիրել: Վախեցավ Ազամեմնոնը, որ Տելեփոսը կսպանի իր որդուն: Համաձայնեց օգնել նրան և դա արեց սիրահոժար, գիտենալով, որ միայն Տելեփոսը կարող է հույներին ցույց տալ Տրոյա տանող ուղին: Ազամեմնոնը գնասպաններ ուղարկեց Աքիլեսի մոտ: Զարմացավ Աքիլեսը. չէր կարողանում կոահել, թե ինքը, որ ծանոթ չէր բժշկական արվեստին, ինչպես կարող է բուժել Տելեփոսի վերքը: Բայց հերոսներից ամենահարամիտ հերոս Ոդիսևսը ասաց Աքիլեսին, թե դրա համար պետք չէ բժիշկ լինել, որ Տելեփոսին վերք հասցրած տեղի ծայրի երկաթով Աքիլեսը կբուժի վերքը: Անմիջապես քերեցին Աքիլեսի տեղի ծայրը, փոշին ցանեցին Տելեփոսի վերքի վրա, և վերքն ապաքինվեց: Բերկրանքով լցվեց Տելեփոսը: Նա համաձայնեց, վերքն ապաքինելու համար, իբրև պարգև, հույների նավատորմը տանել դեպի Տրոյայի ափերը, մի բան, որից առաջ համառորեն հրաժարվում էր:

Այժմ արգեն ուղեցույցը գտնված էր, բայց հույները դեռ չէին կարողանում դուրս գալ Աուլիսից. ծովի վրա միշտ հակառակ բամի էր փչում: Այդ քամին ուղարկել էր Արտեմիս աստվածուհին, դայրացած Ազամեմնոնի վրա, որ նա սպանել էր իր սրբազան եղբորուն: Զուր էին հերոսներն սպասում, թե քամին կփոխվի, որ առանց մեղմանալու մշտապես փչում էր նախկին ուղղությամբ: Անզործությունից տխրում էին հավաքված հերոսները: Հիվանդություններ սկսվեցին բանակի մեջ, ռազմիկներն սկսեցին աըրաբնջալ: Նույնիսկ երկյուղ էին կրում նրանց ապստամբությունից: Վերջապես, Կալքաս գուշակը հույների առաջնորդներին հայտարարեց.

— Այն ժամանակ միայն կգթա հույներին Արտեմիս աստվա-

ծուհին, երբ նրան զոհաբերեք Ազամեմնոնի գեղանի զստերը՝ Իփիգենիային:

Խորապես վշտացավ Ազամեմնոնը, երբ Աուլիս վերադառնալով, իմացավ այդ լուրը: Նա պատրաստ էր նույնիսկ բոլորովին հրաժարվել արշավանքից, միայն թե պահպաներ դստեր կյանքը: Երկար համոզում էր նրան Մենելաոսը ի կատար ածել Արտեմիսի կամքը. վերջապես զիջեց Ազամեմնոնը եղբոր աղերսանքին և Կլիթեմնեստրայի մոտ՝ Միկենե, սուրհանդակ ուղարկեց, որ թաքցնելով իսկական պատճառը, պիտի հաղորդեր Կլիթեմնեստրային Ազամեմնոնի պատվերը՝ Իփիգենիային Աուլիս տանելու մասին. իբրև թե Աքիլեսն ուզում է նախքան արշավանքի դուրս գալը նշանվել Իփիգենիայի հետ: Սուրհանդակ ուղարկեց Ազամեմնոնը Միկենե և դստեր հանդեպ ունեցած կարեկցանքը նոր ուժով համակեց նրան: Բոլորից թաքուն, նա մի ուրիշ սուրհանդակ ուղարկեց Կլիթեմնեստրայի մոտ, որին պատվիրեց հաղորդել կնոջը, որ նա Աուլիս շքերի Իփիգենիային: Բայց այդ երկրորդ սուրհանդակին բռնեց Մենելաոսը: Զայրացած կշտամբեց Ազամեմնոնին, որ նա վարվում է այնպես, ինչպես կվարվի ընդհանուր գործի դավաճանը: Երկար նախատում էր Մենելաոսը Ազամեմնոնին: Տաք վիճաբանություն բորբոքվեց եղբայրների մեջ: Այդ վեճն ընդհատեց վերադարձած սուրհանդակը, որ հայտարարեց, թե հենց նոր հույների բանակատեղին են ժամանել Կլիթեմնեստրան և Իփիգենիան, փոքրիկ Օրեսթեսի հետ, և տեղավորվել են աղբյուրի կողքին, հենց ճամբարի մոտ:

Հուսահատությունը տիրեց Ազամեմնոնին: Մի՞թե ճակատագիրը վիճակել է կորցնել սիրասուն զստերը՝ Իփիգենիային, մի՞թե ինքը նրան պետք է առաջնորդի դեպի մահ, Արտեմիսի զոհասեղանի մոտ: Տեսնելով եղբոր վիշտը, նույնիսկ Մենելաոսը կամեցավ հրաժարվել եղբոր այդ զոհաբերությունից: Բայց Ազամեմնոնը գիտեր, որ Կալքասը ողջ գործին կհայտնի Արտեմիս զիցուհու կամքը, և այդ ժամանակ կստիպեն իրեն զոհաբերել Իփիգենիային: Եթե Կալքասը նույնիսկ չհայտնի էլ զիցուհու կամքը՝ կհայտնի Ոդիսևսը, չէ որ նա ևս գիտե զիցուհու կամքը:

Խոր վշտով համակված՝ Ազամեմնոնն ընդառաջ գնաց կնոջն ու դստերը: Նա ջանում էր հանգիստ և ուրախ երևալ, բայց չէր հաշտվում նրան: Իփիգենիան իսկույն նկատեց, որ հայրը խորունկ մի վիշտ ունի: Սկսեց հարցուփորձ անել հորը, բայց նա ոչինչ չա-

սաց աղջկան: Աշինչ շատաց նույնիսկ կնոջը, միայն համոզեց մեկ-
նեկ Միկենե. չէր ուզում Ազամեմնոնը, որ Կլիթեմնեստրան ահա-
նատես լինի դատեր զոհաբերութեանը: Վերջապես Ազամեմնոնը
թողեց կնոջն ու դատերը և գնաց Կալքասի մոտ. նա ուզում էր
հարցնել, թե հնարավոր չէ՞ մի կերպ փրկել դատերը:

Նոր էր Ազամեմնոնը հեռացել վրանից, որ եկա՞վ Աքիլլեսը:
Նա ուզում էր տեսնել Միկենեի արքային, որ պահանջի անմիջա-
պես հարձակվել Տրոյայի վրա: Աքիլլեսը ձանձրացել էր Աուլիսում
նստելուց. բացի այդ, նրա միբանջոնցիներն էլ անհանգստանում
և պահանջում էին, որ կա՞մ իրենց արշավանքի տանեն, կա՞մ
թողնեն տուն վերադառնալու: Երբ Կլիթեմնեստրան իմացա՞վ Ազա-
մեմնոնին հարցնող երիտասարդի ո՞վ լինելը, դիմեց Աքիլլեսին
և շնորհավորեց իրրև իր դատեր փեսացուի: Զարմացա՞վ Աքիլլեսը:
Նա ոչ մի անգամ Ազամեմնոնին չէր ասել, որ ուզում էր կնութեան
առնել նրա դատերը: Շփոթվեց Կլիթեմնեստրան, լսելով, որ Աքիլ-
լեսը երբեք մտադիր չի եղել Իփիգենիայի հետ ամուսնանալու և
չիմացա՞վ, թե ի՞նչ ասի Աքիլլեսին: Բայց հենց այդ պահին եկա՞վ
այն ստրուկը, որի հետ Ազամեմնոնը երկրորդ լուրն էր ուղարկել
Միկենե, նա ասաց Կլիթեմնեստրային, թե Ազամեմնոնը նրան և
Իփիգենիային ինչու է Աուլիս կանչել: Սոսկումը տիրեց Կլիթեմ-
նեստրային: Նրան մի՞հասկնա՞վ էր կորցնել դատերը: Ո՞ւմ մոտ
պաշտպանութուն փնտրելու: Նա հեղեղալով ծնկի իջա՞վ Աքիլլեսի
առաջ, գրկեց նրա ծնկները և աղաչեց պաշտպանել իրենց՝ երգ-
վեցնելով մոր՝ Ներեոսի դատեր, մեծն Ռեոսի անունով: Տեսնե-
լով Կլիթեմնեստրայի հուսահատ վիճակը, Աքիլլեսը երգվեց իմաս-
տուն ծերունի ներեոս աստծո՞վ՝ օգնել նրան:

Նա երգվեց, որ թույլ չի տա ոչ որի անգամ դիպչել Իփիգե-
նիային: Արագ հեռացա՞վ Աքիլլեսը Ազամեմնոնի վրանից, որ
հագնի զրահները: Երբ Ազամեմնոնը վրան վերադարձա՞վ, Կլիթեմ-
նեստրան ցատումնալից խոսքերով սկսեց նախատել նրան, որ նա
վճռել էր զոհել հարազատ դատերը:

Ի՞նչ կարող էր պատասխանել տարաբախտ Ազամեմնոնը: Զե՞
որ իր կամքով չէր վճռել Արտեմիս դիցուհուն զոհել իր հարազատ
աղջկան: Նա անկարող էր այլ կերպ վարվել: Կարող էր ասել մի-
այն. որ եթե նույնիսկ զիջեր կնոջ և դատեր թախանձանքներին,
ապա զայրացած հույները կսպանեն և՛ իրեն, և՛ բոլոր մտերիմ-

Ներին, քանի որ ողջ Հունաստանի բարորութեան համար պիտի
զոհվեր Իփիգենիան:

Երբ ծամբարում արդեն հուզումներ էին սկսվել: Քիչ էր մնացել
միբանջոնցիները բարկոծ անեին Աքիլլեսին, երբ նա հայտարա-
րեց, թե թույլ չի տա զոհաբերել նրան, ում խոստացել էին կնու-
թեան տալ իրեն: Բոլոր ռազմիկները Արտեմիսի գլխավորութեամբ
վիճված նետվեցին դեպի Ազամեմնոնի վրանը: Աքիլլեսը սուրբ
ձեռքին, վահանով ծածկվելով, կանգնեց վրանի մուտքի մոտ,
պատրաստ մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել Իփիգե-
նիային:

Բայց այդ ժամանակ բոլոր նրանց, ովքեր պատրաստ էին
արյունահեղ մարտ սկսել, կանգնեցրեց Իփիգենիան: Նա բարձ-
րաձայն հայտարարեց, թե պատրաստ է կամավոր զոհվել հանուն
ընդհանուր գործի: Նա չի ուզում հակառակել Զևսի դատեր՝ մեծն
Արտեմիսի կամքին: Թող զոհե՛ն իրեն. Տրոյայի ավերակները
հավիտենական հուշարձան կլինեն իրեն, երբ հույները գրավեն
Տրոյան: Համոզեց նա Աքիլլես հերոսին չպաշտպանել իրեն,
պառակտիչ ներքին պատերազմ չսկսել: Իփիգենիայի կամքին
հնազանդեց Աքիլլեսը, շնայած խղճում էր շքնաղ աղջկան, որին
սիրեց նա՝ ընդհանուրի բարորութեան օգտին զոհաբերվելու մեծ
վճռակա՞նութեան համար:

Երբ արտով գնաց Իփիգենիան դեպի զոհասեղանը, որ
կանգնեցրել էին ի պատիվ Արտեմիսի դիցուհուն: Զքնաղագեղ ու
վսեմաշուք Իփիգենիան անցա՞վ ռազմիկների անթիվ անհամար
շարքերի միջով և կանգնեց զոհասեղանի մոտ:

Արցունք թափեց Ազամեմնոնը՝ նայելով դուռտի դատերը, և
նրա մահը լռեսնելու համար գլուխը ծածկեց իր լայն թիկնոցով:
Անվրդով կանգնել էր Իփիգենիան զոհասեղանի մոտ: Տալթիրիս
մուսնատիկի հրամանով բոլորը խորին լռությու՞ն պահեցին: Իմաս-
տուն Կալքասը պատյանից հանեց զոհազանակը և դրեց ոսկեհուռ
զամբյուղի մեջ: Իբրև զոհարան տարվող զոհի՞ աղջկա գլխին պսակ
դրեց: Ռազմիկների շարքից դուրս եկա՞վ Աքիլլեսը: Նա վերցրեց
սրբազան շրու՞վ լցված սափորը և զոհաբերութեան ալյուրն ու աղը.
չուրը սրակեց Իփիգենիայի և սեղանի վրա, ալյուրը ցանեց աղջկա
գլխին և բարձրաձայն դիմեց Արտեմիսի դիցուհուն, աղաչելով բա-
րեհաջող նախարկութուն ուղարկել բանակին դեպի տրոյական ա-
փերը և հաղթանակ թշնամու դեմ: Կալքասը ձեռքն օտա՞վ զոհա-

զանակը: Բոլորը ստոնցին տեղում: Ահա բարձրացրեց նա դանակը, որ հարվածի Իփիգենիային: Ահա արդեն դանակը դիպչում է աղջկան: Բայց շքնկամ Իփիգենիան զոհասեղանի մոտ՝ հոգեվարքի հառաչանքով: Կատարվեց մեծագույն մի հրաշք: Արտեմիս աստվածուհին փախցրեց Իփիգենիային և նրա փոխարեն, զոհասեղանն իր արյամբ բոսոր ներկելով, հոգեվարքի ցնցումների մեջ թպրտում էր Կալքասի դանակից վիրավոր մի եղջերու: Այս հրաշքից ապշած, մի մարդու նման ճշացին բոլոր ռազմիկները: Բարձր և հրճվալից ձայնով գոչեց նաև իմաստուն Կալքասը.

— Ահա՛ այն զոհը, որ պահանջում էր ամպրոպային Զևսի ղուտորը՝ մեծն Արտեմիսը: Ցնծացե՛ք, հույնե՛ր, դիցուհին մեզ խոստանում է նրջանիկ նավարկութուն և հաղթանակ Տրոյայի դեմ:

Եվ իրոք, դեռ չէր այրվել Արտեմիսի եղջերուն զոհասեղանի վրա, երբ քամին փոխվեց, դարձավ համընթաց: Հույներն սկսեցին շուտափույթ պատրաստութուն տեսնել հեռավոր արշավանքի: Իսկ Ագամեմնոնը փութաց ղեպի իր վրանը, որ Կլիթեմնեստրային պատմի զոհասեղանի մոտ կատարվածը և շտապեցնի նրան Միկենե վերադառնալ:

Արտեմիս աստվածուհին զոհասեղանից փախցրեց Իփիգենիային և տարավ էվբսիյան Պոնտոսի ափը՝ Տավրիս՝: Այնտեղ Ագամեմնոնի շքնադագեղ ղուտորը դարձավ աստվածուհու բրմուհին:

ՀՈՒՅՆԵՐԸ ԵՎ ՎՈՒՄ ԵՆ ԴԵՊԻ ՏՐՈՅԱՅԻ ԱՓԵՐԸ: ՓԻԼՈՍՏԵՏՆ

Շարադրված է ըստ Սոֆոկլեսի «Փիլոկտեսես» ողբերգության:

Խաղաղ ու հանդիստ էր հույների նավարկութունը ղեպի Տրոյայի ափերը: Ամբողջ ժամանակ համընթաց քամի էր փչում: Նավերը արագ ճեղքում էին ծովի ալիքները: Արդեն երևում էին Լեմնոս կղզու ափերը: Այստեղ, Լեմնոսից՝ ոչ հեռու, գտնվում էր ամայի Քրիսե կղզին: Այնտեղ զոհարան կար զրված ի պատիվ կղզու

հովանավոր հավերժահարսի՝ Քրիսեի: Հույները պիտի գտնեին այդ զոհարանը և այնտեղ զոհ մատուցեին հավերժահարսին, որովհետև կանխագուշակված էր, որ Տրոյան կզրավեն այն ղեպում միայն, երբ ճանապարհին Քրիսե կղզու ափը ելնեն և այնտեղ զոհ մատուցեն: Զոհարանն այստեղ կանգնեցրել էր մեծագորհերոս Յասոնը, երբ իր ուղեկից արգոնավորդների հետ նավում էր ղեպի հեռավոր Կողքիս՝ ոսկեզեղմը բերելու: Այդտեղ զոհ էր մատուցել նաև Զևսի որդին՝ մեծն Հերակլեսը, երբ նախաձեռնում էր Տրոյայի դեմ արշավանքը, որ վրեժ լուծի Լաոմեդոն արքայից՝ իրեն հասցրած վիրավորանքի համար: Հերակլեսի ընկերը՝ Փիլոկտեսեսը, գիտեր, թե որտեղ է գտնվում զոհարանը: Նա հանձն առավ հերոսներին ցույց տալ դրա տեղը: Փիլոկտեսեսի հետևից գնացին հույների առաջնորդները: Ամայի մի կղզի էր դա, ամբողջովին ծածկված ցածրիկ թփուտներով: Ահա արդեն երևում է կիսով շափ քանդված զոհարանը: Մոտ գնացին հերոսները: Հանկարծ թփերի միջից դուրս սողաց զոհարանը հսկող մի մեծ օձ և խայթեց հերոս Փիլոկտեսեսի ոտը: Ծշաց Փիլոկտեսեսը և տապավեց գետին: Մոտ վազեցին հերոսները, բայց արդեն ուշ էր: Օձի թույնը թափանցել էր վերքի մեջ: Սոսկայի ցավել սկսեց վերքը: Թարախը հոսում էր վերքից՝ սուսկալի գարշահոտութուն տարածելով շուրջը: Անտանելի էին Փիլոկտեսեսի տառապանքները: Գիշեր ու ցերեկ անդադար հեծեծում էր նա: Տարաբախտ Փիլոկտեսեսի հառաչանքները հանգիստ չէին տալիս հույներին: Ռազմիկներն սկսեցին ջրթմնջալ: Նրանք չէին դիմանում Փիլոկտեսեսի վերքից տարածվող գարշահոտութանը: Վերջապես հույների առաջնորդները, Ոդիսևսի խորհրդով, վճռեցին լքել Հերակլեսի տարաբախտ ընկերոջը և թողնել որևէ մի ափում: Լեմնոս կղզու մոտից անցնելիս առաջնորդները հրամայեցին ամայի ափը տանել քուն մտած Փիլոկտեսեսին: Այնտեղ ժայռերի մեջ գրին նրան՝ մոտը թողնելով նետն ու աղեղը, հագուստ և ուտելիք: Այդպես լքեցին հույները այն հերոսին, առանց որի նետերի նրանց չէր վիճակվելու գրավել Տրոյան: Ինը տարի տառապեց Փիլոկտեսեսը ամայի ափին: Բայց եկավ ժամանակը, երբ հույներն ստիպված էին իրենք գնալ Փիլոկտեսեսի հետևից, և նրա օգնութունը հայցելու Դա պատահեց Տրոյան պաշարելու ցասանբորդ տարում:

¹ Այժմյան Ղրիմը:

² Էգեյան ծովից հյուսիս:

Փիլոկտեստեսին լքելուց հետո հուլները շարունակեցին ճանապարհը և, վերջապես, հասան տրոյական ափերին, ուր նրանց սպասում էին այնքա՛ն դժվարություններ, վտանգներ և մեծ սրբազործություններ:

ՏՐՈՅԱՅԻ ՊՕՇԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՐՆԸ ՏԱՐԻՆ

Շարագրված է ըստ անտիկ գրազների արքեպեպոսկոպոստոսների:

Պալազմեսի կործանման քրվագը շարագրված է ըստ Սվիդիուսի
«Կերպարանախոսություններ» պոեմի:

Ուրախ էին հույները, որ վերջացավ երկարատև նավարկությունը: Բայց երբ մոտեցան ափին, տեսան, որ իրենց արդեն սպասում է տրոյացիների ուժեղ զորաբանակը՝ Տրոյայի գառամյալ արքա Պրիամոսի հզոր որդու՝ Հեկտորի զլխավորությամբ: Ինչպե՞ս մոտենալ ափին: Ինչպե՞ս ցամաք դուրս գալ: Տեսնում էին բոլոր հերոսները, որ տրոյական ափը ոտք դեռող առաջին մարդը պետք է կործանվի: Երկար տատանվում էին հույները: Նրանց մեջ էր նաև Պրոտեսիլատոս հերոսը, որ տենչում էր սրբազործությունների և պատրաստ էր առաջինը ափ թռչել և մարտի բռնվել տրոյացիների հետ: Բայց չէր հանդգնում, քանի ոչ՝ զիտեր այս կանխազուշակությունը. կկործանվի հույներից նա, ում ոտքն առաջինը կդիպչի տրոյական հողին:

Այդ կանխազուշակությունը զիտեր նաև Ողիսեսը. նվ ահա, հերոսներին իր հետևից տանելու համար, Ողիսեսն ափ նետեց իր վահանը և ճարպկորեն նրա վրա ցատկեց նավի վրայից: Պրոտեսիլատոսը տեսավ, որ Ողիսեսը ափ թռավ, բայց չնկատեց, որ Ողիսեսը ցատկեց ոչ թե տրոյական հողի, այլ իր վահանի վրա: Պրոտեսիլատոսը կարծեց, որ հույներից մեկն արգեն առաջինը ոտք է դրել տրոյական հողը: Սիրանքի ծարավը համակեց Պրոտեսիլատոսին: Մոռացության մատնեց ամեն ինչ. մոռացավ և՛ հայրենիքը, և՛ շքանդ կնոջը՝ մանկամարդ Լաոդամիային: Ափ ցատկեց նավից Պրոտեսիլատոսը և մերկացրած սրով հարձակվեց թշնամու վրա: Թափահարեց իր ծանր նիզակը մեծն Հեկտորը և մահացու հարված տվեց պատանի Պրոտեսիլատոսին: Գիտազգաստ ընկավ նա ծովափին: Առաջինը նա՛ էր, որ իր արյամբ բռաբ ներկեց տրոյական հողը:

Պրոտեսիլատոսի ընկնելուն պես հույները միանգամից նավերից

նետվեցին թշնամու վրա: Բորբոքվեց արյունահեղ մի մարտ: Հեծեծանքով վայր էին ընկնում փոշու մեջ մահացու վիրավոր ուղամիկները: Կուրծք-կրծքի տված կովում են հերոսները: Տրոյացիների կողմից մարտնչում էր Կիկնոսը, ծովերի տիրակալ Պոսեյդոնի որդին: Նրա մարմինը ճերմակ էր կարապի փետուրների պես և պողպատի նման ամրակուռ, ոչ մի զենքով չէր կարելի վերք հասցնել Կիկնոսին: Վերջապես Կիկնոսի դեմ դուրս եկավ հույն հերոսներից մեծագույնը՝ Աքիլլեսը: Ճոճեց նա իր նիզակը և հարձակվեց Կիկնոսի վրա: Հզոր բազուկը թափահարելով Աքիլլեսը նետեց նիզակը ուղիղ Կիկնոսի կրծքին և գոչեց.

— Զգիտե՛մ թե ո՛վ ես դու, տրոյացի, բայց կարող ես հպարտանալ, որ քեզ իր նիզակով տապալել է Թեսիս դիցուհու որդին՝ Աքիլլեսը:

Բայց Աքիլլեսի նիզակը ետ թռավ Կիկնոսի կրծքից՝ ինչպես ետ կթռչեր պողպատից, և Կիկնոսն այսպես պատասխան տվեց Պելևսի որդուն.

— Զարմանում ես դու, Աքիլլես, որ նիզակդ ետ է թռչում իմ կրծքից: Գիտցիր, որ ինձ պետք չէ զրահ, դու ինձ վերք չես տա, եթե նույնիսկ քո առաջ կանգնեմ առանց զրահների: Ես քեզ նման ինչ-որ մի ներեիդի տղա չեմ. այլ բոլոր ծովերի և ծովային աստվածների տիրակալ Պոսեյդոնի որդին:

Ճոճեց Կիկնոսը նիզակը և նետեց զեպի Աքիլլեսի վահանը: Ծակեց նիզակը ինը ցուլի կաշին և խրվեց տասներորդի մեջ: Նորից նետեց նիզակը Աքիլլեսը Կիկնոսի վրա և նորից ետ թռավ այն: Երրորդ անգամ նետեց նա Կիկնոսի վրա, բայց նրա զեմ անվնաս կանգնել էր Պոսեյդոնի որդին:

— Զի՞ թուլացել արդյոք իմ բազուկը, — գուչեց Աքիլլեսը դայբացած, — թե՞ Քիրոնի նիզակն է բթացել:

Փորձեց նիզակի սայրը Պելևսի որդին և անհավատալի մի ուժով շարտեց լիկիական հերոս Մենոյտոսի վրա: Լալահառաչ վայր ընկավ Մենոյտոսը և հոգին նրա թռավ մոայլ Հադեսի թագավորությունը: Դուրս քաշեց Աքիլլեսն իր նիզակը լիկիացու արնաթաթավ վերքից և խփեց նրանով Կիկնոսին, բայց անսասան ժալոխ նման կանգնել էր նրա դեմ Կիկնոսը: Վրա բերեց ծանր վահան Աքիլլեսը և սարսափելի ուժով խփեց Կիկնոսի դեմքին, իսկ սրի զաստալանով հարվածեց բունքին: Երերաց Կիկնոսը և փախուտի զիճեց: Հասավ նրա հետևից արագոտն Աքիլլեսը: Ուժա-

հատ Կիկնոսը տապալվեց: Կրծքին կանգնելով ճզմեց նրան Աբիլլեան իր վահանով, և նրա իսկ վահանի փոկերով խեղդեց նրան՝ փաթաթելով դրանք Կիկնոսի ձյունաճերմակ պարանոցի շուրջը: Կիկնոսի մահը տեսնելով, երեբացին տրոյացիները՝ և, փախուստի մատնվելով, թաք կացան Տրոյայի անմատչելի պարսպի հետևում: Հաջորդ օրը հույների և տրոյացիների մեջ զինադադար կնքվեց, որպեսզի հավաքեն ընկած մարտիկների դիակները և հողին հանձնեն:

Բոլոր սպանվածներին հողին հանձնելուց հետո հույներն անցան ամրաշեն ճամբարի կառուցմանը: Ափ հանեցին իրենց նավերը և ծովեզրի երկայնքով ընդարձակ բանակավայր կազմեցին Միգելոն լեռներից մինչև Հոոյթեոն լեռները: Տրոյայի կողմից իրենց ճամբարը պաշտպանեցին բարձրակառույց մի պատվարով և խոր փոսով: Ծամբարի երկու հակառակ ծայրում իրենց վրանները խփեցին Աբիլլեան ու Այաքս Տելամոնիդը, որ հսկեն տրոյացիներին և թույլ չտան անսպասելի հարձակվել հույների վրա:

Ծամբարի կենտրոնում վեր էր խոյանում հույների ողջ զորաբանակի պարագլուխ Ագամեմնոն արքայի շքեղաշուք վրանը: Այստեղ, Ագամեմնոնի վրանի մոտ, կար մի հրապարակ՝ ժողովրդրդական հավաքների համար: Հնարամիտ Ոդիսեան իր վրանը խփել էր այդ հրապարակի մոտ, որպեսզի միշտ ի վիճակի լինի հավաքվածների մոտ զնալ և իմանալ, թե ի՞նչ է տեղի ունենում ճամբարում: Չնայած, որ առաջ բնավ չէր ուզում մտանկեցել արշավանքին, այժմ արդեն տրոյացիների կատաղի թշնամին էր նա և պահանջում էր, որ հույները, ի՞նչ էլ ուզում է լինի, գրավեն և ավերակ դարձնեն Տրոյան:

Երբ հույների ճամբարն արդեն շինված ու ամրացված էր, նրանք Տրոյա ուղարկեցին Մենելաոս արքային և Գնարամիտ Ոդիսեանին՝ տրոյացիներին հետ բանակցություններ վարելու: Հույն դեսպաններին իր տանն ընդունեց իմաստուն Անտենորը և ճոխ հացկերույթ տվեց նրանց: Ողջ հոգով կամենում էր Անտենորը, որ խաղաղության դաշինք կնքվի և բավարարվի Մենելաոսի օրինական պահանջը: Դեսպանների գալուստյան լուրն առնելով, Պրիամոսը ժողովրդական հավաք հրավիրեց, որ բավարարի Մենելաոսի պահանջները:

Տրոյացիների ժողովին ներկայացան նաև Մենելաոսն ու

Ոդիսեա: Մենելաոսը կարճատուտ և աղղու խոսքով պահանջեց, որ տրոյացիներն իրեն վերադարձնեն Պարիսի կողմից հափշտակված ռյանձը և կնոջը՝ Հեղինեին: Մենելաոսից հետո խոսեց Ոդիսեա: Կլանված ականջ դրին տրոյացիք Իթակիի իմաստուն արքայի զարմանահարշ խոսքին: Նա համոզում էր տրոյացիներին բավարարել Մենելաոսի պահանջները: Տրոյական ժողովուրդն արդեն պատրաստ էր կատարել Մենելաոսի բոլոր պահանջները: Զէ՞ որ ինքն էլ, շքնաղ Հեղինեն, արդեն զղջում էր իր անխոհեմ արարքի համար և ափսոսում, որ հանուն Պարիսի լքել էր իր հերոս ամուսնու տունը: Իսկ Անտենորը հորդորում էր ժողովրդին կատարել Մենելաոսի պահանջները: Նա գիտեր, թե որքան աղետներ կբերի տրոյացիների և հույների պատերազմը: Բայց հաշտություն չէին ուզում հույների հետ Պրիամոսի որդիք և, ամենից առաջ, իհարկե, Պարիսը: Մի՞թե կտախպեն նրան ետ տալ Հեղինեին: Մի՞թե կխլեն նրանից ողջ ավարը: Նա չէր ուզում ենթարկվել ժողովրդի վճռին, իսկ նրան պաշտպանում էին եղբայրները: Պարիսից կաշառված Անտիմաքոսը պահանջում էր նույնիսկ, որ տրոյացիները սպանեն Մենելաոսին: Բայց այդ թույլ շտվին Պրիամոսն ու Հեկտորը, նրանք շթողին վիրավորել շանթարձակ Չևսի պաշտպանության տակ գտնվող դեսպաններին: Տատանման մեջ էր հավաքված ժողովուրդը, չգիտեր վերջնական ի՞նչ վճիռ տա:

Այդ ժամանակ վեր կացավ տրոյական գուշակ Հելենոսը՝ Պրիամոսի որդին, և ասաց, որ տրոյացիները չվախենան հույների դեմ պատերազմելուց. աստվածները խոստանում են օգնել Տրոյային: Հավատացին տրոյացիները Հելենոսին: Նրանք հրաժարվեցին բավարարել Մենելաոսի պահանջները: Հույն դեսպաններն օտարաբանված էին ձեռնունայն վերադառնալ Տրոյայից: Այժմ արդեն տրոյացիների և հույների միջև պետք է սկսվեր արյունահեղ մի պատերազմ:

Փակվեցին տրոյացիները անառիկ Տրոյայում. նույնիսկ Հեկտորը չէր համարձակվում լքել Տրոյան: Իսկ հույները պաշարեցին քաղաքը: Երեք անգամ փորձ արին նրանք գրոհով վերցնել Տրոյան, բայց չհաջողվեց: Այդ ժամանակ հույներն սկսեցին ավերել Տրոյայի շրջակայքը և նվաճել այն բոլոր քաղաքները, որոնք դաշինք ունեին Տրոյայի հետ: Հույները նրանց դեմ արշավանքներ էին կազմակերպում ծովով և ցամաքով: Բոլոր այդ արշավանքներում այժի էր ընկնում հատկապես մեծն Աբիլլեա: Հույները

գրավեցին Թենեզու, Լեսբոս կղիզները և Պեղասոս, Լերնեսոս և այլ քաղաքներ:

Շատ քաղաքներ ավերեցին նրանք: Գրավեցին նաև Թերե¹ քաղաքը, որ իշխում էր Հեկտորի կնոջ՝ Անդրոմաքեի հայրը՝ հստիոնը: Աքիլլեսը մի օրվա մեջ սպանեց Անդրոմաքեի յոթ եղբայրներին: Զոհ գնաց նաև հայրը: Բայց Աքիլլեսը չթողեց, որ անարգեն էստիոնի մարմինը, աստվածների զայրույթից վախենալով, հողին հանձնեց նրան²: Իսկ Անդրոմաքեի մայրը գեթ տարվեց հույների բանակատեղին: Հարուստ ավար առավ Աքիլլեսը Թերեոսում: Նա գերեվարեց նաև Ապոլոնի քուրմ Քրիսոսի դստերը՝ Քրիսիսիսին և ջրնազագեղ Քրիսիսիսին: Քրիսիսիսին հույները տվին Ագամեմնոնին:

Հույներն ամեն ինչ ամալացրին Տրոյայի շուրջը: Տրոյացիները չէին համարձակվում երևալ պարիսպներից այն կողմը, որովհետև դա մահ էր սպառնում կամ էլ դաժան գերեվարություն և վաճառք՝ որպես ստրուկ: Այսպես, երբ մի անգամ Իզայի անտառապատ լեռնաբանչերին Պրիամոսի որդիները՝ Իսոսն ու Անտիփոսը ոչխար էին արածացնում, Աքիլլեսը հասավ նրանց, երկուսին էլ բռնեց և ուռնու զալար ճուղեքով կապելով տարավ բանակատեղին: Միայն հարուստ փրկագին ստանալուց հետո վերադարձրեց նրանց հորը:

Աքիլլեսը գերի վերցրեց նաև Պրիամոսի մյուս որդուն՝ Լիկանոնին, գիշերը բռնելով նրան խաղողի այգում: Աքիլլեսը նրան իրեն ստրուկ վաճառեց Իմրոս³ կղզում: Այնտեղ նրան գնեց Լեսբոսի արքան և տարավ սրբազան Արիսթա⁴: Մածուկ փախավ Լիկանոնը Լեսբոսից, վերադարձավ հայրենի Տրոյա, շիմանալով, որ ճակատագիրը մահ է բերելու նրան Աքիլլեսի ձեռքով: Աքիլլեսի զարկից ընկավ նաև Պրիամոսի կրտսեր որդին՝ Տրոիլոսը: Նա, անհոգ ու անփույթ, իր երկանվով գուրս էր եկել Տրոյայի դարպասներից: Տրոիլոսը կամենում էր Տրոյայի սուաջ տարածված հարթ

¹ Առասպելական քաղաք, որ նույն անունն է կրել, ինչ որ համական Բեոլիոս մարզի գլխավոր քաղաք Թերեոս:

² Հաս հույների հավատքի, անթաղ մեռելների հողիները դատապարտված էին մշտնջենական թափառումների և ոչ մի տեղ հանգիստ չէին գտնում: Պրա համար էլ անթաղ թողնելը համարվում էր ամենամեծ անարգանքը մեռածի հանդեպ:

³ Գղզի էգեյան ծովի հյուսիսում:

⁴ Արիսթա—քաղաք Լեսբոս կղզու վրա:

շաշտում փորձել իր ձիերի վազքի արագությունը: Թափով բշեց նա ձիերը և մի քանի անգամ սուրաց գաշտով: Վերջապես Տրոիլոսը մոտեցավ խիտ թփուտներով և բարձրասլաց սոսիներով պատած ջրհորին: Յած իջավ երկանվից Պրիամոսի որդին և սկսեց ջրել իր մոլեգնած ձիերին, երբ թփուտներից իր ծանր նիզակը ճոճելով նրա վրա հարձակվեց Աքիլլեսը: Երկանվի վրա թռավ Տրոիլոսը և ամբողջ ուժով բշեց նրանց դեպի Ապոլոնի զոհարանը: Նա գարծում էր, թև այնտեղ, զոհարանի մոտ պաշտպանություն կրոնի: Աքիլլեսը հենց Ապոլոնի զոհարանի մոտ հասավ Տրոիլոսին: Նա հանկեց պատանու պերճ գանգոյնները, ցած տապալեց երկանվից և սուրսայր սուրը կուրծքը մխրճեց:

Անշնչացած տապալվեց Տրոիլոսը Ապոլոնի զոհարանի մոտ: Զհասցրին օգնության հասնել նրա եղբայրները՝ Հեկտորը, Պոլիթեսն ու Գեիփոսը, բայց Աքիլլեսին չթողին Տրոիլոսի դին: Նրանք հարձակվեցին Թեոխի անընկճելի որդու վրա և հափրշտակեցին դիակը: Քարձրացրեց Հեկտորը Տրոիլոսին և տարավ Տրոյա: Գառնակսկիժ արցունք թափեց ծերունի Պրիամոսը, Տրոյայի բարձր պարիսպներից տեսնելով վաղաժամ զոհ գնացած որդու դին:

Շատ վիշտ ու դառնություն վիճակվեց Տրոյայի բնակիչներին քաղաքի ինճամյա պաշարման ընթացքում: Մարտերում ընկած շատ հերոսների ողբացին նրանք: Բայց ամենածանր, տանկերոգ տարին դեռ առջևում էր: Դեռ առջևում էր նաև ամենածանր կրսկիծը՝ Տրոյայի անկումը:

Քիչ տառապանքներ չկրեցին նաև հույները պատերազմի ինը տարում: Նրանք ևս բազում զոհեր տվին: Զոհվեց նաև իմաստուն հերոս Պալամեդեսը, բայց ո՛չ թշնամու ձեռքով: Ատելությունից ու նախանձից կործանեց նրան խորամանկ Ողեսեսը: Շատ խելամիտ խորհուրդներ էր տալիս հույներին Պալամեդեսը, բազում անգնահատելի ծառայություններ մատուցում նրանց: Բուժախոտներով նա ապաքինում էր վերքերն ու հիվանդությունները, նա փարոս շիճեց հույների համար, որ բանակատեղից ծով գուրս եկած նավերն իժաման, թե ո՛ր պիտի վերադառնան խավարասույզ գիշերով: Մեծարում էին հույները Պալամեդես հերոսին և սիրով ականջ դնում նրա խորհուրդներին:

Այդ պատճառով էլ ատեց նրան Ողեսեսը: Նա տեսնում էր, որ Պալամեդեսին ավելի հաճույքով են լսում հույները, քան իրեն:

Ոգիսևսը մտաբերեց նաև այն, թե Պալամեղեսն ինչպես բացեց նրա խորամանկութունը, երբ ինքը ցնորված էր ձևացել, որ չգնա Տրոյա, այդ հիշողությունը ավելի բորբոքեց Պալամեղեսի հանգեպ նրա ունեցած ատելությունը: Երկար միտք էր անում Ոգիսևսը, թե ինչպես կործանի Պալամեղեսին: Վերջապես առիթը ներկայացավ, երբ Պալամեղեսն սկսեց խորհուրդ տալ հույներին վերջացնել պատերազմը և վերադառնալ հայրենիք: Ոգիսևսը մի խարդախ դավ նյութեց: Գիշերը Պալամեղեսի վրանում մի պարկ ոսկի թաքցրեց, և սկսեց բուրբին համոզել, թե իզուր չէ Պալամեղեսը խորհուրդ տալիս դադարեցնել Տրոյայի պաշարումը, որ այդ խորհուրդները նա հույներին տալիս է լուկ նրա համար, որ կաշառված է Պրիամոսից: Քիչ դժգոհներ չկային Պալամեղեսից նաև հույներին մեջ: Զէ՞ որ եթե նրանք լսեին Պալամեղեսի խորհուրդները, ապա կզրկվեին այն հարուստ ավարից, որին պիտի տիրանային Տրոյան նվաճելուց հետո:

Բոլոր անբավականները հաճությամբ հավատացին Ոգիսևսի զրպարտությունը: Երբ տեսավ, որ հույներից շատերն են հավատում Պալամեղեսի դավաճանությունը, համոզելու համար, որ իրոք Պրիամոսը կաշառել է Պալամեղեսին, Ոգիսևսը Ագամեմնոսին հայտնեց, թե Պալամեղեսը Պրիամոսի հետ կապ է պահպանում փոյուզիացի գերու միջոցով, և որ գերուն բռնել և սպանել են Ոգիսևսի ծառաները հենց այն պահին, երբ նա փորձում էր հույների ճամբարից Տրոյա անցնել: Բացի այդ, Ոգիսևսը մի նամակ էլ գրեց Պալամեղեսին՝ Պրիամոսի անունից: Այդ նամակում ասված էր այն ոսկու մասին, որ Պրիամոսն ուղարկել էր Պալամեղեսին որպես հատուցում, եթե նա համոզի հույներին վերացնել պաշարումը և վերադառնալ հայրենիք: Ոգիսևսն այդ նամակը տվեց գերի փոյուզիացուն և հրամայեց տանել Պրիամոսին: Հենց որ փոյուզիացին զուրս եկավ ճամբարից, Ոգիսևսի ծառաները հարձակվեցին նրա վրա, սպանեցին, իսկ նամակը բերին իրենց արքային: Այդ նամակը ձեռքին, Ոգիսևսը շտապեց գեպի Ագամեմնոսի վրանը: Այդ լուրն առնելուն պես, Ագամեմնոսն իր վրանը կանչեց հույների բոլոր առաջնորդներին: Կանչեց նաև Պալամեղեսին, որ երբեք չէր կասկածում, թե ինչ վտանգ էր սպանում իրեն: Այսուհի Ոգիսևսը Պալամեղեսին մեղադրեց դավաճանության մեջ: Իզուր էր Պալամեղեսը համոզում առաջնորդներին, թե ինքը չի էլ մտածել դավաճանության մասին: Իսկ Ոգիսևսը, Պալամեղեսին մեր-

կացնելու համար, խորհուրդ տվեց խուզարկել նրա վրանը: Մտքո ուղարկեցին նրա վրանը և իրոք գտան ոսկով լի պարկը:

Այժմ արդեն բուրբին համար պարզ էր, որ Պալամեղեսը դավաճան է: Դատեցին Պալամեղեսին և մահվան դատապարտեցին: Վճռեցին բարկոծելով սպանել նրան: Մանրագին շվթաներով կապոտեցին անմեղ Պալամեղեսին և տարան ծովափ: Զուր էր աղերսում Պալամեղեսը հույներին, որ շսպանեն իրեն, այդպիսի դժան պատժի չենթարկեն անմեղ մարդուն: Ոչ ոք չէր ուզում լսել թվացյալ դավաճանին: Սկսվեց մահապատիժը: Ոչ մի հառաչանք, ոչ մի բողոք զուրս չեկավ Պալամեղեսի կրծքից: Մահից առաջ միայն նա շնջաց:

— Օ՛, ճշմարտություն, ես խղճում եմ քեզ, որ ինձնից առաջ ես մեռել:

Այդ խոսքը շուրթերին մեռավ հույն հերոսներից ազնվագույնն ու իմաստնագույնը. չփրկեցին նրան այն ծառայությունները, որ նա մատուցել էր հույներին: Հետագայում դժանորեն տուժեցին հույները Պալամեղեսին սպանած լինելու համար: Նրանցից վրեժխնդիր եղավ Պալամեղեսի հայրը՝ Նավպլիոսը՝ էվբեայի արքան:

Ոչ միայն մահվան մատնեց Պալամեղեսին Ագամեմնոսը, այլև նրա հոգին դատապարտեց հավերժական թափառումների: Ագամեմնոսը թույլ չուվեց հողին հանձնել Պալամեղեսի դին: Թողին մարմինը ծովափին, որ վայրի գազաններն ու գիշատիչ թռչունները հողոտեն այն, բայց մեծագոր Ալաքս Տելամոնիդը թույլ չտվեց այդ: Նա թաղման արարողություններ կատարեց և պատվով հողին հանձնեց Պալամեղեսին: Այաբսը չէր հավատում, թե Պալամեղեսը դավաճանել է հույներին:

ԱՔԻԼԵՍԸ ԳԺՏՎՈՒՄ Է ԱԳԱՄԵՄՆՈՆԻ ՀԵՏ

Շտապով ձեռք առնելու համար «Երկաթե» պեմբի:

Արդեն ինչ տարի էր անցել, ինչ հույները պաշարել էին Տրոյան: Հասավ ահեղ պատերազմի տասներորդ տարին: Այդ տարվա սկզբին հույների ճամբարը եկավ նետաձիգ Ապոլոնի քրոջը՝ Քրիսոսը: Նա աղաչում էր բոլոր հույներին և ամենից առաջ նրանց առաջնորդներին, հարուստ փրկագին տալ իր զբստանը՝ Քրիսոսի համար: Բոլորը համաձայնեցին հարուստ փր-

կազին վերցնել Քրիստիսի փոխարեն և նրան հորը վերադարձնելու
Բայց սաստիկ զայրացավ հզոր արքա Ագամեմնոնը և ասաց
Քրիստիսին.

— Հեռացի՛ր, ծերուկ, և այլևս չհամարձակվես երևալ մեր
նավերի մոտ, այլապես քեզ չի փրկի և այն, որ զու Ապոլոնն աստ-
ծո բուրմն ես: Չեմ վերադարձնի ես Քրիստիսին: Ո՛չ, իր ողջ կյան-
քում նա կտառապի գերութիան մեջ: Զգուշացի՛ր զայրացնել ինձ,
եթե ուզում ես անվնաս տուն վերադառնալ:

Զարհուրած բուրմը հեռացավ ճամբարից և վշտահար զնաց
ծովափ: Այնտեղ, ձեռքերը երկինք կարկառած, աղերսեց Լետոյի
որդուն՝ մեծն Ապոլոնին.

— Օ՛, արծաթաղեղ աստված. անսա՛ ինձ՝ հավատարիմ
սպասավորիդ: Քո նետերով վրե՛ժ լուծի՛ր հույներից, իմ վշտի
ու վիրավորանքի համար:

Լսեց Ապոլոնն իր բրմի գանգատը: Շուտափույթ սուրաց նա
լուսավոր Օլիմպոսից, աղեղն ու կապարճը ուսը զցած: Ահեղորեն
զնդում էին ոսկեծուլ նետերը կապարճի մեջ: Սուրաց զայրա-
գնած Ապոլոնը զեպի հույների ճամբարը, զիշերվա խավարից էլ
մտայլ էր նրա դեմքը: Հասավ նա արայացիների բանակատեղին,
հանեց կապարճից մի նետ և արձակեց զեպի ճամբար: Որոտա-
ձայն թնդաց Ապոլոնի աղեղի լարը: Նետ-նետի հետևից էր ար-
ձակում Ապոլոնը, կարկտի պես թափվում էին նետերը հույների
ճամբարի վրա, մահ սփռե՛լով շուրջը: Զարտու՛նչ ժանտախտը
հնձում էր հույներին: Հույներից շատերը կոտորվեցին: Ամենուրեք
թաղման խարույկներ էին բոցավառվում: Թվում էր, թե հասել է
հույների օրհասի ժամը:

Ինն օր էր, ինչ մուկեղնում էր համաճարակը: Տասներորդ օրը,
Հերայի խորհրդով, մեծ հերոս Աքիլլեսը ժողովրդական հավաքի
հրավիրեց բոլոր հույներին, որպեսզի վճռեն, թե ի՛նչ պիտի
անեն, ինչպես շարժեն աստվածների գութը: Երբ բոլոր ուղմիկ-
ները հավաքվեցին, առաջինը Աքիլլեսը դիմեց Ագամեմնոնին.

— Ստիպված ենք զեպի հայրենիք նավել, որդիդ Ատրևսի,—
ասաց Աքիլլեսը,— գու տեսնում ես, որ ուղմիկները զոհվում են
ոչ թե մարտերում, այլ համաճարակից: Բայց զուցե նախ կհար-
ցընենք գուշակներին. նրանք կասեն, թե ինչ՞ով ենք զայրացրել
արծաթաղեղ Ապոլոնին, ի՛նչ պատճառով է այս կործանարար
ժանտախտն ուղարկել մեր զորաբանակը:

Հենց որ Աքիլլեսն ասաց այդ, տեղից ելավ պատգամախոս
Կալքասը, որ հույներին բազմիցս հայտնի էր դարձրել աստված-
ների կամքը: Նա ասաց, որ պատրաստ է հայտնել, թե ինչու է
զայրացել հեռահար աստվածը, բայց կհայտնի այն դեպքում
միայն, եթե Աքիլլեսը պաշտպանի իրեն Ագամեմնոնի ցասումից:
Աքիլլեսը խոստացավ պաշտպանել Կալքասին, և դրա համար
երգվեց Ապոլոնով: Այդ ժամանակ միայն Կալքասն ասաց.

— Զայրացել է Լետոյի որդին՝ մեծն Ապոլոնը, այն պատճա-
ռով, որ Ագամեմնոն արքան անարդել է նրա բրմին՝ Քրիստիսին,
վտարել է նրան ճամբարից, չընդունելով դատեր համար առաջար-
կած փրկագինը: Աստծո գութը կարող ենք շարժել միայն նրանով,
որ հորը վերադարձնենք թխալյա Քրիստիսին և հարյուր հորթ զո-
հենք աստծուն:

Լսելով Կալքասի ասածը, սոսկալի զայրույթով բռնկվեց
Ագամեմնոնը նրա և Աքիլլեսի դեմ, բայց տեսնելով, որ ստիպված
պիտի լինի հորը վերադարձնել Քրիստիսին, վերջ ի վերջո համա-
ձայնեց: Միայն պահանջում էր, որ աղջկան վերադարձնելու հա-
մար պարգև տան իրեն: Կշտամբեց Աքիլլեսն Ագամեմնոնին ազա-
հութիան համար: Դա ավելի զայրացրեց Ագամեմնոնին: Նա
սպառնաց, որ Քրիստիսի փոխարեն բռնութիամբ պարգև կվերցնի
Աքիլլեսին, Այաքսին կամ Ոդիսևսին հասած ավարի բաժնից:

— Անպատկա՛ռ, նենգամի՛տ շահամու,— գոչեց Աքիլլեսը,—
գու սպանում ես, թե կիլես մեր պարզակները, թեև մնալից ոչ ոք
երբեք քեզ հաժաար բաժին չի ունեցել պարզակների մեջ: Իսկ
մենք չենք եկել մեզ համար կռվելու. մենք այստեղ ենք եկել
Մենելաոսին ու քեզ օգնելու: Դու ուզում ես ինձնից խլել այն ավա-
րի մի մասը, որ ես ստացել եմ իմ զործած մեծ սխրանքների հա-
մար: Որ այդպես է, ավելի լավ է ես փոխոտիս վերադառնամ, ես
չե՛մ ուզում քո ավարն ու գանձն ավելացնել:

— Խ՛նչ կա որ, փախի՛ր Փոթոսիս,— գոչեց Ագամեմնոնը,—
արքաների մեջ ամենից շատ քե՛զ եմ առում: Դու միայն երկպա-
ռակութուններ ես սերմանում: Ինձ չի վախեցնում քո զայրույթը:
Ահա թե ի՛նչ կասեմ ես քեզ: Քրիստիսին ես կվերադարձնեմ հորը,
բայց դրա փոխարեն քեզնից կխլեմ գերի Բրիստիսին: Եվ գու կի-
մանաս, թե որչա՛փ մեծ է իմ իշխանութունը: Խող ամեն ոք
զգուշանա իր իշխանութիամբ ինձ հետ շափվելուց:

Ահա՛վոր զայրույթ համակեց Աքիլլեսին, երբ նա լսեց Ագամեմնոնի այդ սպառնալիքը: Զեռքը դեպի սուրը տարավ Քեոտիսի որդին. նա արդեն կեսով շափ հանել էր սուրը պատյանից, երբ զգաց, որ մեկը ընթրությամբ իր գանգուրներն է շոյում: Շուտ եկավ նա և սարսափած ետ ընկրկեց: Նրա առաջ, ուրիշներից անտեսանելի, կանգնել էր շանթարձակի դուստրը՝ մեծն Աթենաս-Պալլասը: Հերան էր ուղարկել Աթենասին: Զևսի կինը շէր կամենում հերոսներից ո՛չ մեկի, ո՛չ մյուսի կործանումը, նրանք երկուսն էլ, և՛ Աքիլլեսը, և՛ Ագամեմնոնը, հավասարապես թանկ էին նրա համար: Սրտի թրթիռով հարցրեց Աքիլլեսն Աթենաս դիցուհուն:

— Օ՛, դուստրդ շանթարձակ Զևսի, ինչո՞ւ ես իջել բարձրագահ Օլիմպոսից: Մի՞թե եկել ես տեսնելու, թե ինչպես է գազադում Ագամեմնոնը: Օ՛, շուտով նա իրեն կկործանի իր գոռոզությամբ:

— Ոչ, մեծագորդ Աքիլլես,— պատասխանեց պայծառակն Աթենասը,— դրա համար չէ, որ եկել եմ ես: Եկել եմ սանձելու քո զայրույթը, եթե միայն դու կհնազանդես օլիմպական աստվածների կամքին: Մի՛ մերկացնի սուրդ, բավարարվիր միայն խոսքերով. նրանցով մտրակիր Ագամեմնոնին: Հավատա՛ ինձ, շուտով այստեղ, հենց այս նույն տեղում, քեզ վիրավորելու պատճառով, կվճարեն այնպիսի պարգևներ, որ մի քանի անգամ ավելի հարուստ կլինեն: Զսպիր քեզ և հնազանդ եղիր անմահ աստվածների կամքին:

Հնազանդեց աստվածների կամքին Աքիլլեսը. նա պատյանի մեջ դրեց սուրը, և Աթենասը նորից սավառնեց դեպի լուսապայծառ Օլիմպոս՝ աստվածների օրրանը:

Շատ զայրալից խոսքեր ասաց դեռ Աքիլլեսը Ագամեմնոնին՝ ժողովրդին հռչակող, հարբեցող, երկչուտ և շուն անվանելով նրան: Շարտեց Աքիլլեսն իր գավազանը և նրզվեց, որ կդա ժամանակի, երբ հարկավոր կլինի իր օգնությունը՝ ընդդեմ տրոյացիների, բայց իզուր կաղաչի Ագամեմնոնը, քանի որ այդպիսի ծանր անարգանք է հասցրել իրեն: Իզուր էր Պիլոսի իմաստուն արքան՝ Նեստորը, ջանում հաշտեցնել ախոյաններին: Ականջ չդրեց Ագամեմնոնը, չհանդարտվեց Աքիլլեսը: Զայրագնած հեռացավ Աքիլլեսն իր ընկերոջ՝ Պատրոկլեսի և քաջարի միրմիդոնցիների հետ դեպի իրենց վրանները: Ագամեմնոնի դեմ ունեցած ոխը մոլեգանած փոթորկում էր նրա կրծքի տակ:

Մինչ այդ, Ագամեմնոնը հրաման տվեց, որ ճեպընթաց մի նավ իջեցնեն ծովը և Ապոլոնն աստծուն տանեն զոհեր, ինչպես և Քրիսոս քրմի շքնաղ դատերը: Այդ նավը պիտի մեկնէր, հնարամիտ Ողիսևսի հրամանատարությամբ, դեպի էստիոնի թերե քաղաքը, իսկ հույները ճամբարում, Ագամեմնոնի հրամանով, պիտի առատ զոհ մատուցեն Ապոլոնին, որպեսզի նրա գուլթը շարժեն:

Արագ սլանում էր Ագամեմնոնի ուղարկած նավը անծայրածիր ծովի լալիքների վրայով: Վերջապես նավը մտավ թերե նավահանգիստը: Իջեցրին առագաստները հույները և մոտեցան նավամատույցին: Ռազմիկների ջոկատի գլուխ անցած՝ ափ իջավ Ողիսևսը, շքնաղ Քրիսեսիսին հորը հանձնեց և ողջույնի այսպիսի խոսքով դիմեց նրան.

— Օ՛, սպասավորդ Ապոլոնի, Ագամեմնոնի կամքով այստեղ եմ եկել ես, որ քեզ վերադարձնեմ դատերդ: Բերել ենք հետներս նաև հարչուր ցուլ, որ այդ զոհերով գուլթը շարժենք մեծն Ապոլոնի, որ այնքան մեծ աղետներ բերեց հույներին:

Ուրախացավ ծերունի Քրիսոսը դատեր վերադարձով և թրնջշորեն գրկեց նրան: Անմիջապես սկսվեց զոհաբերության արարողությունը: Աղերսեց Քրիսոսը նետածիզ աստծուն.

— Օ՛, արծաթաղեղ աստված: Անսա՛ ինձ: Առաջ էլ դու լսել ես իմ աղաչանքը: Այժմ էլ անսա ինձ: Ե՛տ վերցրու հույներից սոսկալի պատուհասը, դադարեցրո՛ւ կործանարար ժանտախտը: Լսեց Քրիսոսի աղերսը Ապոլոնն աստվածը և դադարեցրեց ժանտախտը հույների ճամբարում. Իսկ նրա Քրիսոսը զոհ մատուցեց Ապոլոնին, չոխ հացկերույթ կազմակերպվեց: Ուրախ-զվարթ կերուխում էին անում հույները թերեում: Պատանիները գինի էին մատուցվում, պոնկե-պոունկ լցնելով սեղանակիցների գավաթները: Բարձրագույն հնչում էր վեհաշուք հիմնը ի պատիվ Ապոլոնի, որ երգում էին պատանի հույները: Մինչև մայրամուտ շարունակվեց խրախճանքը, իսկ առավոտյան ընով թարմացած Ողիսևսն ու նրա ջոկատը բռնեցին դեպի ընդարձակ ճամբարը տանող վերադարձի ճամփան: Ապոլոնը նրանց համընթաց քրմի ուղարկեց, նավը արագորեն հասավ բանակավայրը: Նավորդները ափ հանեցին նավը և ցրվեցին իրենց վրանները:

Մինչ Ողիսևսը կնավեր դեպի թերե, Ագամեմնոնը ի կատար ածեց այն, ինչով սպառնում էր Աքիլլեսին: Իր մոտ կանչեց նա Տալթիթիոս և էվրիբատոս մուսետիկներին և ուղարկեց Բրի-

սեխին բերելու Ազամեմնոնի արարկած մարդիկ զժկամութիւնս
զնացին զնպի Աքիլլեսի վրանց: Նրանք Աքիլլեսին գտան վրանք
առաջ մտասույզ նստած: Մտեցան սուրհանդակները մեծազոր
հերոսին, բայց հուզմունքից մի բառ իսկ չկարողացան արտա-
բերել:

Այդ ժամանակ Պելեսի որդին ասաց.

— Օղջ՝ այն ձեզ, մունետիկներ: Ծա գիտեմ, որ դուք բնավ
հանցանք չունեք, հանցավորը միայն Ազամեմնոնն է: Դուք եկել
եք Քրիսեիսին տանելու Պատրոկլէ՛ս, բարեկամս, սրանց հանձ-
նիր Քրիսեիսին: Բայց թող սրանք վկա լինեն, որ կգա՝ ժամը, երբ
պետք կգամ ես հուլներին՝ կործանումից փրկելու համար: Եվ խե-
լակորոյս Ազամեմնոնն այն ժամանակ չի կարողանա փրկել հուլ-
ներին:

Դառնաղի արցունք թափեց Աքիլլեսը և, լքելով իր ընկերնե-
րին, զնաց ծովի ամալի ափը և բազկատարած կանչեց իր մորը՝
Քետիս աստվածուհուն:

— Մա՛յր իմ, եթե ծնել ես ինձ կարճատև կյանքի դատա-
պարտած, ապա էլ ինչո՞ւ է ինձ փառքից զրկում ամպրոպային
Ձևը: Ո՛չ, նա ինձ փառք չտվեց: Ազամեմնոն արքան անարգեց
ինձ, խլելով սխրանքներին համար ստացածս պարգևը: Մա՛յր
իմ, լսի՛ր ինձ:

Լսեց Քետիս աստվածուհին Աքիլլեսի կանչը: Թողեց նա ծովի
հորձանուտը և Ներեոս աստծո ապարանքը: Թեթի ամպի նման,
արագորեն գուրս լողաց նա ծովի փրփրադեզ ալիքների միջից:
Քետիսն ափ դուրս եկավ և նստելով սիրասուն զավակի կողքին,
զրկեց նրան:

— Ինչո՞ւ ես այդպես դառնաղին հեկեկում, որդի՛ս, — հարց-
րեց նա, — պատմի՛ր ինձ վիշտդ:

Պատմեց Աքիլլեսը մորը, թե ինչ ծանր անարգանք է հասցրել
իրեն Ազամեմնոնը: Խնդրեց մորը, որ նա թռչի զնպի լուսապայ-
ծառ Օլիմպոս և աղերսի Ձևին պատժել Ազամեմնոնին: Թող
Ձևն օգնի տրոյացիներին, թող նրանք հուլներին բշեն մինչև
նավերը: Թող հասկանա՛ Ազամեմնոնը, թե ի՛նչ անխոհեմ է վար-
վել ինքը, անարգելով հուլներից խիզախագույնին: Աքիլլեսը հա-
վատացնում էր մորը, որ նրա խնդիրը չի մերժի Ձևը: Զէ՛ որ
բավական է նա հիշեցնի, թե մի անգամ ինչպես էր ինքն օգնել
Ձևին, երբ Օլիմպոսի աստվածները վճռեցին շղթայակապ անել և

տապալել շանթարձակին: Այդ ժամանակ Քետիսը Ձևին օգնելու
կանչեց Հարյուրածոն հսկա Քրիտթոսին. նրան տեսնելուն պես
բոլոր աստվածները շփոթվեցին և չհանդգնեցին ձեռք բարձրաց-
նել Ձևի վրա: Թող դա հիշեցնի Քետիսը շանթարձակ մեծն
Ձևին, և նա չի մերժի Քետիսի խնդիրքը: Այդպես աղերսում էր
Աքիլլեսն իր մորը՝ Քետիսին:

— Օ՛, իմ սիրասուն զավակ, — գառն արցունք թափելով գո-
չեց Քետիսը, — ինչո՞ւ ծնեցի քեզ այսքան ցավերի համար: Այս՛,
երկարատև չի լինի կյանքդ, որդյակ իմ, որդեհ մատ է օբհասու:
Ծվ այժմ ահա դու կ՛ երկար կյանք չունես, կ՛ քուլրից տարտախա
ես: Օ՛, ոչ, մի՛ տրամիր այդպես դառնորեն: Ծա կսավառեմ լու-
սակերտ Օլիմպոս և կաղերսեմ ամպրոպային Ձևին, որ օգնի
ինձ: Իսկ դու մնա քո վրանում և այլևս մարտերին մի՛ մասնակե-
ցիր: Այժմ Ձևը բոլոր անմահների հետ լքել է Օլիմպոսը և գնա-
ցել է էթովպացիների՝ մոտ խնդույթի: Բայց երբ տասներկու օր
հետո Ձևը վերադառնա՝ ես նրա ստերը կընկնեմ և, հուսով եմ,
կշարժեմ նրա գուլը:

Թողեց Քետիսն իր վշտահար որդուն, և նա զնաց զնպի իր
բազմարտիկ միրմիրոնցիների վրանները: Այդ օրվանից Աքիլ-
լեսը չէր մասնակցում ո՛չ առաջնորդների ժողովներին, ո՛չ էլ
մարտերին: Տխուր-տրտում նստել էր նա իր վրանում, թեև ամ-
բողջ հողով ծաբավի էր մարտական փառքի:

Այնպիսի աստվածի օր Տասներկուերորդ օրվա վաղ առավոտ-
ուն, Արմավաճեց ամպի հետ մեկտեղ, Քետիսը ծովի հորձանու-
տից դուրս լուսավոր նիմպոս սավառեց: Այնտեղ նա Ձևի ոտ-
քերն չկնով, զրկեց նրա ծնկները, և ձեռքերը աղերսագին կար-
կանով դնալով նրա մորուքին:

— Մ. մեր հայր, — աղերսեց Քետիսը, — աղաչում եմ քեզ,
օգնի՛ր ինձ վեժմեղդի լինել որդուս համար: Կատարիր խնդիրքս,
եթե կրքն քեզ մի ծառայություն եմ մատուցել: Զորութիւն՝ սուր
տրոյացիներին այնքան ժամանակ, մինչև որ հուլներն սկսեն
խնդել որդուս օգնությունը, մինչև որ մեծ հարգ ու պատիվ մա-
տուցեն նրան:

Նիմպոս, ժամանակ լուռ մնաց ամպահալած Ձևը: Բայց Քե-

¹ Առաջնորդան մի ժողովուրդ, որ հուլների պատկերացմամբ ապրում էր
կղզի ամենահարավային ծայրում:

սեխին բերելու Ազամեմնոնի արարկած մարդիկ զժկամութիամբ
զնացին զնպի Աքիլլեսի վրանը: Նրանք Աքիլլեսին գտան վրանք
առաջ մտասույզ նստած: Մտեցան սուրհանդակները մեծազոր
հերոսին, բայց հուզմունքից մի բառ չսկ չկարողացան արտա-
բերել:

Այդ ժամանակ Պելեսի որդին ասաց.

— Օղջ՝ այն ձեզ, մունետիկներ: Ես գիտեմ, որ դուք բնավ
հանցանք չունեք, հանցավորը միայն Ազամեմնոնն է: Դուք եկե՛լ
եք Քրիսեիսին տանելու Պատրոկլե՛ս, բարեկամս, սրանց հանձ-
նիր Քրիսեիսին: Բայց թող սրանք վկա լինեն, որ կգա՝ ժամը, երբ
պետք կգամ ես հույներին՝ կործանումից փրկելու համար: Եվ խե-
լակորոյս Ազամեմնոնն այն ժամանակ չի կարողանա փրկել հույ-
ներին:

Դառնաղի արցունք թափեց Աքիլլեսը և, լքելով իր ընկերնե-
րին, զնաց ծովի ամալի ափը և բազկատարած կանչեց իր մորը՝
Քետիս աստվածուհուն:

— Մա՛յր իմ, եթե ծնել ես ինձ կարճատև կյանքի դատա-
պարտած, ապա էլ ինչո՞ւ է ինձ փառքից զրկում ամպրոպային
Ձևը: Ո՛չ, ես ինձ փառք չտվեց: Ազամեմնոն արքան անարգեց
ինձ, խլելով սխարանքներին համար ստացածս պարգևը: Մա՛յր
իմ, լսի՛ր ինձ:

Լսեց Քետիս աստվածուհին Աքիլլեսի կանչը: Թողեց նա ծովի
հորձանուտը և Ներեոս աստծո ապարանքը: Թեթև ամպի նման,
արագորեն դուրս լողաց նա ծովի փրփրաղեզ ալիքների միջից:
Քետիսն ափ դուրս եկավ և նստելով սիրասուն զավակի կողքին,
զրկեց նրան:

— Ինչո՞ւ ես այդպես դառնաղին հեկեկում, որդի՛ս, — հարց-
րեց նա, — պատմի՛ր ինձ վիշտդ:

Պատմեց Աքիլլեսը մորը, թե ինչ ծանր անարգանք է հասցրել
իրեն Ազամեմնոնը: Խնդրեց մորը, որ նա թռչի զնպի լուսապայ-
ծառ Օլիմպոս և աղերսի Ձևին պատժել Ազամեմնոնին: Թող
Ձևն օգնի տրոյացիներին, թող նրանք հույներին ըշեն մինչև
նավերը: Թող հասկանա՛ Ազամեմնոնը, թե ի՛նչ անխոհեմ է վար-
վել ինքը, անարգելով հույներից խիզախագույնին: Աքիլլեսը հա-
վատացնում էր մորը, որ նրա խնդիրը չի մերժի Ձևը: Զե՛ որ
բավական է նա հիշեցնի, թե մի անգամ ինչպես էր ինքն օգնել
Ձևին, երբ Օլիմպոսի աստվածները վճռեցին շղթայակապ անել և

տապալել շանթարձակին Այգ ժամանակ Քետիսը Ձևին օգնելու
կանչեց հարյուրածոն հսկա Քրիտոթեսին: Նրան տեսնելուն պես
բոլոր աստվածների շփոթվեցին և շփանդանքի ձեռք բարձրաց-
նել Ձևի վրա: Թող դա հիշեցնի Քետիսը շանթարձակ մեծն
Ձևին, և նա չի մերժի Քետիսի խնդիրքը: Այդպես աղերսում էր
Աքիլլեսն իր մորը՝ Քետիսին:

— Օ՛, իմ սիրասուն զավակ, — դառն արցունք թափելով գո-
չեց Քետիսը, — ինչո՞ւ ծնեցի քեզ այսքան ցավերի համար: Այն՛
երկարատև չի լինի կյանքդ, որդյակ իմ, արդեն մտ է օրհասդ:
Եվ այժմ ահա դու կ՛ երկար կյանք չունես, կ՛ ըստրից տարտախտ
ես: Օ՛, ոչ, մի՛ տրամիր այդպես դառնորեն: Ես կսավառեմ լու-
սակերտ Օլիմպոս և կաղերսեմ ամպրոպային Ձևին, որ օգնի
ինձ: Իսկ դու մնա քո վրանում և այլևս մարտերին մի՛ մասնակե-
ցիր: Այժմ Ձևը բոլոր անմահների հետ լքել է Օլիմպոսը և գնա-
ցել է էթովպացիներին՝ մոտ խնշույթի: Բայց երբ տասներկու օր
հետո Ձևը վերադառնա՛ ես նրա ստերը կընկնեմ և, հուսով եմ,
կշարժեմ նրա գուլթը:

Թողեց Քետիսն իր վշտահար որդուն, և նա զնաց զնպի իր
բաղամարտիկ միրմիդոնցիների վրանները: Այդ օրվանից Աքիլ-
լեսը չէր մասնակցում ո՛չ առաջնորդների ժողովներին, ո՛չ էլ
մարտերին: Տխուր-տրտում նստել էր նա իր վրանում, թեև ամ-
բողջ հողով ծաբավի էր մարտական փառքի:

Այնպիսի աստվածի օրհասը հասնեց Քետիսին: Քետիսը ծովի հորձանու-
տից դուրս լուսավոր նիմփոս սավառեց: Այնտեղ նա Ձևի ոտ-
քնին ընկավ, զմեց նրա ծնկները, և ձեռքերը աղերսագին կար-
կանդով դիպրեց նրա մորուքին:

— Մ. մեր հայր, — աղերսեց Քետիսը, — աղաչում եմ քեզ,
օգնի՛ր ինձ վրեժխնդիր լինել որդուս համար: Կատարիր խնդիրքս,
եթե կրքն է քեզ մի ծառայություն եմ մատուցել: Զորութիւն՝ սուր
տրոյացիներին այնքան ժամանակ, մինչև որ հույներն սկսեն
խնդրել որդուս օգնությունը, մինչև որ մեծ հարգ ու պատիվ մա-
տուցեն նրան:

Նրկալ, ժամանակ լուռ մնաց ամպահալած Ձևը: Բայց Քե-

¹ Առաջնորդան մի ժողովուրդ, որ հույների պատկերացմամբ ապրում էր
Կրկն ամենահարավային ծայրում:

տիար թախանձագին խնդրում էր նրան: Վերջապես, խորունկ մի հառաչանք արձակելով, այսպիսի պատասխան տվեց Ջևուրը.

— Գիտցի՛ր, Քեռի՛ք, թո խնդրանքով դու շարժելու ես Հերանի զայրույթը, նա իմ գեմ է զայրանալու: Առանց այն էլ նա միշտ հանդիմանում է ինձ, որ մարտերի ժամանակ ես տրոյացիներին եմ օգնում: Եվ հիմա դու այնպես հեռացիր բարձրաբերձ Յիմպոսից, որ Հերանն քեզ չնկատի: Եոստանում եմ կատարել խնդիրքդ: Ահա կանխանշանա:

Այդ ասելուց պես Ջևուրը հոնքերը կիտեց Կենդորեն, զլսի մազերը կանգնեցին և ողջ Օլիմպոսը ցնցվեց հիմնիվեր: Միամտվեց Քեռիսը, արագորեն վայր սլացավ բարձրագահ Օլիմպոսից և սուզվեց ծովի հորձանուտի մեջ:

Իսկ Ջևուրը գնաց աստվածների խնջույքին: Բոլորը ոտքի ելան Ջևուրին ընդառաջ. ոչ ոք չհանդգնեց նստած ողջունել նրան: Երբ աստվածների ու մահկանացուների արքան նստեց իր ոսկեհուռ գահին, Հերան, որ տեսել էր Քեռիսին, այսպես դիմեց Ջևուրին.

— Ասա՛ ինձ, նենգամիտ,— ասաց Հերան Ջևուրին,— անմահներից այն ո՞ւմ հետ էիր ծածուկ խորհուրդ անում: Դու միշտ ինձնից թաքցնում ես թո դիտավորություններն ու մտքերը:

— Հերա՛, — պատասխան տվեց Ջևուրը, — մի՛ հուսա, թե երբևէ կիմանաս այն բոլորը, ինչ ես մտորում եմ: Ինչ որ կարելի է իմանալ, ապա կիմանաս բոլոր աստվածներից ավելի շուտ, բայց մի՛ փորձիր իմանալ գաղտնիքներս, մի՛ հարցնիր դրանց մասին:

— Օ՛, ամպահալած,— պատասխանեց Հերան,— դու գիտես, որ ես երբեք չեմ ջանացել իմանալ թո գաղտնիքները: Դու միշտ առանց ինձ ես վճռում ամեն ինչ: Բայց վախենում եմ, որ այսօր Քեռիսը քեզ համոզած լինի որդու՝ Աքիլլեսի վրձը լուծել և շատ հույներ կործանեց: Ծա գիտեմ, որ դու խոստացել ես կատարել նրա խնդիրքը:

Ահեղ մի հայացքով նայեց Ջևուրը Հերային, զայրացավ, որ կինը մշտապես հետևում է իր ամեն մի արագքին: Զայրացած՝ հրամայեց Հերային՝ նստել անտրոտունջ և հնազանդել իրեն, եթե չի ուզում պատժվել: Ջևուրի ցասումը վախեցրեց Հերային: Կուռ նստել էր նա իր ոսկեղեն գահին: Աստվածներն էլ էին վախեցել Ջևուրի ու Հերայի այդ ընդհարումից: Այդ ժամանակ տեղից ելավ կաղ Հեփեստոս աստվածը. նա հանդիմանեց աստվածներին, որ մահկանացուների պատճառով վեճի են բռնվում իրար հետ:

— Եթե մենք ընդհարվենք մահկանացուների պատճառով, ապա կզրկվենք աստվածների խնջույքների զվարճանքից,— այսպես խոսեց Հեփեստոս աստվածը և խնդրեց մորը՝ Հերային, հնազանդել Ջևուրի ուժին, որովհետև ահավաք է նա իր զայրույթի մեջ և բոլոր աստվածներին կարող է գահընկեց անել:

Հեփեստոսը հիշեցրեց Հերային, թե ինչպես իրեն երկիր դուրեց Ջևուրը, երբ ինքը փութացել էր մորը օգնության՝ այն պահին, երբ շանթարձակը զայրացել էր Հերայի վրա: Գավաթը ձեռքն առավ Հեփեստոսը, լցրեց նեկտարով և մատուցեց Հերային: Ժպտաց Հերան: Իսկ Հեփեստոսը, կաղալով, սափորից նեկտար լցրեց գավաթները և մատուցեց աստվածներին: Միծաղեցին բոլոր աստվածները, թե ինչպե՞ս է Հեփեստոսը կաղալով պտտվում խնջույքի շքասրահում: Կրկին խնդույթունեց տիրեց աստվածների խնջույքի սեղանին, և մինչև մայրամուտ անվրդով խրախճանք արին նրանք Ապոլոնի ոսկե կիթառի հնչյունների տակ: Երբ խնջույթը վերջացավ, իրենց ննջարանները քաշվեցին աստվածները, և ողջ Օլիմպոսը խոր քուն մտավ:

ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՔ: ԹԵՐՍԻՏՏՈ

Շարադրված է բառ Համերոսի Վիլիսկանե՝ պոեմի:

Անխուժ քուն էին մտել անմահ աստվածները պայծառ Օլիմպոսում: Ետ քնի մեջ էին ընկղմվել հույների ճամբարն ու մեծ Տրոյան նա: Միայն ամպրոպային Ջևուրը չէր փակում աչքերը. նա խորհում էր, թե ինչպե՞ս լուծի Աքիլլեսին հասցրած անարգանքի վրձը: Վերջապես ամպահալած Ջևուրը վճռեց մի կեղծ երազ ուզարկել Ագամեմնոնին: Նա կանչեց երազների աստծուն, ուղարկեց հույների ճամբարը՝ Ագամեմնոնի մոտ, և այսպես ասաց նրան.

— Սլացի՛ր թո արագաթուխ թևերով, կեղծ ու պատիխ երազ, և կանգնիր Ագամեմնոնի առաջ: Հայտնիք, որ մարտի տանի նա հույներին: Ասա, որ այսօր նա կտիրի Տրոյային, քանի որ Հերան խնդրել է բոլոր աստվածներին շօզնել տրոյացիներին: Այժմ կործանում է սպառնում Տրոյային:

Մտաք զկալի երկիր սուրաց երազի աստվածը և կերպարանքն առած ծերունի Նևստորի, որին այնքան մեծարում էր Ագամեմնոնը. երեսց նրան երազում, և ասաց այն ամենը, ինչ պատվի-

րել էր մեծն ամսորոպայինը: Արթնացալ Ազամեմնոնը, բայց թվում էր նրան, թե երազում դեռ հնչում են լսած խոսքերը: Վեր կացալ Միկեհեմի արքան, հազալ շքեղ զգեստները, ձեռքն առալ օսկեղեն գավազանը և գնաց դեպի այն կողմը, ուր կանգնած էին հույների ափ հանված նավերը: Այդ ժամանակ արդեն բոցավառվեց արշալույսը, որ արևի աստված մեծն Հելիոսի ծագումն էր ավիտում: Կանչեց Ազամեմնոնն իր մունետիկներին և հրաման տվեց ժողովի կանչել բոլոր ռազմիկներին: Իսկ առաջնորդներին Միկեհեմի մեծազոր արքան հավաքեց ծերունի Նեստորի նավի մոտ և պատմեց, թե ինչ երազ էր ուղարկել իրեն շանթարձակ Զևսը:

Վճռեցին առաջնորդները մարտի պատրաստվել: Բայց մինչև զորքաբանակը Տրոյայի պարիսպների տակ տանելը, Ազամեմնոնը կամեցալ փորձել նրանց. նա վճռեց ժողովրդական հավաքում հայրենիք վերագառնելու առաջարկ անել: Մինչ առաջնորդները խորհուրդ էին անում, ռազմիկները հավաքվում էին ժողովի: Լեռնային անձափներից դուրս թափված մեղուների պարսի նման հավաքվում էր ռազմիկների անթիվ-անհամար ամբոխը: Ժողովուրդը հուզվում էր: Մունետիկները զժվարությանբ լուռություն հաստատեցին, որպեսզի արքաները՝ Զևսի սաները, խոսեն ժողովրդի հետ: Վերջապես ժողովուրդը տեղավորվեց և լուռություն տիրեց: Տեղից ելնելով, գայիսոնը ձեռքին, առաջինը ժողովրդին դիմեց Ազամեմնոնը: Նա խոսեց պատերազմում կրած տառապանքների և այն մասին, որ հույներն իզուր են պայքարել Տրոյայի պարիսպների տակ: Ինչպես երևում է՝ անկարող են վերցնել անառիկ Տրոյան և ստիպված դատարկաձենոն պիտի ետ դառնան հույները: Երևում է, որ իրենք աստվածներն էլ կամենում են, որ հույները հայրենիք վերագառնան: Այսպես խոսեց Ազամեմնոնը: Ահանջ գրին Ազամեմնոնի խոսքին հույները: Հորձանք տվեց ողջ ժողովուրդը ինչպես ծովը, երբ Նոտոս և Էվրոս՝ բամիները վրա են հասնում և լինաբաշ ալիքներ դիզում ծովի վրա: Բոլորը բարձրաձայն, աղմուկ-աղաղակով նետվեցին դեպի նավերը: Երկիրը ցնցվեց նավերի կողմը վազող ամբոխի զոփյունից: Փոշու ամպեր բարձրացան: Գոռում-գոռում էր ողջ ճամբարը: Բոլորն շտապում էին ժամ առաջ շուրն իջեցնել նավերը, բոլորը տենչում էին հայրենիք վերագառնելու: Ռազմիկների կանչերի ձայնը մինչև

1 Նոտոս—հարավային քամի, Էվրոս՝ արևելյան:

բարձրարժեք Օլիմպոս հասալու Հերան, վախեցած, որ հանկարծ հույները կթողնեն Տրոյայի պաշարումը, նրանց ճամբարն ուղարկեց Աթենաս-Պալլասին, որ կասեցնի նրանց: Մարիկի նման Օլիմպոսից դեպի հույների բանակատեղին սլացալ Աթենասը Հայանվեց Ողիսևսին և այսպես ասաց նրան:

— Ազնվազարմ որդիդ Լաերտի, մի՞թե բոլորդ վճռել եք հայրենիք փախչել: Մի՞թե ի հրճվածա Պրիամոսի և բոլոր տրոյացիների, այստեղ եք թողնելու լքնաղագեղ Հեղինեին: Մտապի՞թե դեռ համոզիր բոլորին՝ լքողնել Տրոյան:

Գիցուհու ահեղ ձայնը լսելուն պես թիկնոցը վրան Ադոն և նավերի կողմը վազեց Ողիսևսը: Իրեն հանդիպած Ազամեմնոնից վերցնելով գայիսոնը, որ նշան էր դերագույն իշխանության, նա յկեց համոզել բոլորին, ինչպես առաջնորդներին, այնպես էլ շարքային ռազմիկներին, որ լուրը լիջեցնեն նավերը և բոլորին ետ կանչեց՝ ժողովրդական հավաքի: Գայիսոնով հարվածում էր Ողիսևսն այն ռազմիկներին, ովքեր առավել շատ էին աղմկում և շտապում էին լքել Տրոյայի ափերը: Նորից բոլորը նետվեցին այն կողմը, ուր սովորաբար հավաքվում էր ժողովուրդը: Ահնջագոս ծովի անլուին ալիքների նման, որոնց որոտաձայն աղմուկով զարնվում են ժայռոտ ափերին, աղմուկ-աղաղակով, խուճախ-խուճախ հոտում էր ռազմույթուրը: Վերջապես բոլորը նորից գրավեցին իրենց տեղերը և լռեցին: Նրանց մեջ միայն Թերսիտեսն էր, որ շտապում էր աղմկելու Հույների մեջ ամենաալլանդակին էր նա: Ելեքը շի, ոտքերը կաղ, այնքան կորաթամակ, որ քիչ էր մնում կրճի վրա իրօր միանային դուրս ցցված ուտերը, մեջքին սապատ կար: Ելլանդակ ուտերի միջից դուրս էր ցցվել սրազազաթ զուխը, որ ծածկված էր աղվամազի նման ցանցառ մազերով:

Թերսիտեսը մշտապես հանդգնում էր առանց քաշվելու դուրս գալ արքաների դեմ: Հատկապես առում էր նա Ողիսևսին և Թե-

1 Թերսիտեսի ողջ միջադեպը շարադրված է ի հանույս արիստոկրատիայի, որի հայացքների արտահայտիչն է պոետը: Իրականում Թերսիտեսն արտահայտում է շարքային ռազմիկների հայացքները, որոնք քիչ էին շահագրգռված Տրոյական պատերազմով: Նրանց հոգը միայն և միայն հայրենիք վերագառնելն էր: Գատերազմը մղվում էր բացառապես արիստոկրատ առաջնորդների շտապի համար: Գոետը միտումով է Թերսիտեսին՝ շարքային զինվորների ներկայացուցիչ ալլանդակ պատկերում, իսկ նրա ամբողջ ելույթին կոմիկական ընդհանրություն:

տիսի մեծագոր սրդուն՝ Աքիլլեսին Այժմ արդեն անտեղ թակող ձայնով հչում էր Քերսիտեսը և անարգանքի խոսքեր ասում Ազամեմնոնին։ Նա գոռում էր, թե Ազամեմնոնը բավական ավարու ստրկուհիներ և բավական հարուստ փրկադին է ստացել մեծագլխով տրոյացիների համար, որոնց գերի են վերցնում շարքային վիճվորները։ Քերսիտեսը բոլորին շուտափույթ հայրենիք վերադառնալու կոչ էր անում և առաջարկում էր մենակ թողնել Ազամեմնոնին Տրոյայի պատերի տակ։ Քող Ատրեսի սրդին իմանա, թե մարտերում ոգնո՞ւմ էին արդյոք ուղմիկներն իրեն, հավատարիմ ձառան՞ք էին նրանք թե ոչ։ Անարգես Քերսիտեսն Ազամեմնոնին, որքան կարող էր նա Ազամեմնոնին նախատեց նաև Աքիլլեսին վերավերելու համար, բայց և Աքիլլեսին փոքրոզի կոչեց Քերսիտեսը։ Լսեց Քերսիտեսի այս ազմուռ-աղաղակը հնարամիտ Ողիսեսը ևս։ Մտախիզ դնաց Քերսիտեսին և ահնդաձայն գոռաց։

— Չհամարձակվե՞ս անարգել արքաներին, տխմա՛ր, չհամարձակվե՞ս խոսել հայրենիք վերադառնալու մասին։ Ո՞վ զիտե, թե ինչո՞վ կվերջանա մեր սկսած գործը։ Լսի՛ր և միտդ պահի՛ր, որ ես կկատարեմ այն, ինչ ասում եմ։ Եթե մեկ անգամ էլ լսեմ, խելագա՛ր, որ դու անարգում ես Ազամեմնոնին, ապա ավելի լավ է թող իմ հզոր ուսերից պոկեն գլուխս, թող ինձ Տելեմաքոսի հայրը շղոջեն, եթե չբռնեմ քեզ, զգեստներդ շծվատեմ վրայիցդ և զանակովուց հետո շարտաքսեմ քեզ ժողովրդական հավաքից և դեպի նավերը շքեմ՝ արցունքն աչքերիդ։

Այդպես սպառնազին գոչում էր Ողիսեսը։ Տարավ բերեց նա գայիսոնը և վրա բերեց Քերսիտեսի մեջքին։ Ցավից արցունքներն անձրևի նման թափվեցին Քերսիտեսի աչքերից։ Հարվածից շառագույն մի շերտ գոյացավ նրա մեջքին։ Իսկ ինքը, սարսափից զողահար, դեմքը կնճռելով սրբում էր վար թափվող արցունքները։ Բոլորը նրան էին նայում, բարձրաձայն ծիծաղում և ասում¹։

¹ Իհարկե, բարձրաձայն ծիծաղում և Ողիսեսին գովաբանում էին ոչ բոլոր հույները ծիծաղում էին արխտոկրատ առաջնորդները։ Իսկ շարքային ուղմիկները, որոնց կարծիքն էր հայտնում Քերսիտեսը, խորապես կարեկցում էին նրան և գիտեին, որ իրենք էլ նույն վիճակին կարծանանային, ինչ որ Քերսիտեսը, էլ թե համարձակվեին իրենց մտքերն արտահայտելու։

— Շատ փառահեղ գործեր է արել Ողիսեսը և՛ խորհրդածողովում, և՛ մարտերում, բայց սա նրա ամենափառահեղ սխրանքն է։ Ինչպե՞ս սանձեց նա ճղճղանին։ Այժմ արդեն նա չի՞ հանդգնի անարգել Ջեսի սիրասուն արքաներին։

Իսկ Ողիսեսը խոսքը ուղղեց ժողովրդին. նրա կողքին բանբերի կերպարանքով կանգնել էր Աթենաս-Պալլասը։ Ողիսեսը համոզում էր հույներին լիթողնել Տրոյայի պաշարումը, նա ասում էր, որ եթե Տրոյան չգրաված հայրենիք վերադառնան, ապա անարգած կլինեն և՛ Ազամեմնոնին, և՛ իրենց։ Մի՞թե նրանք անուժ մանուկների կամ այլի կանանց նման փոքրոզի կդառնան ու կվերադառնան հայրենիք, մի՞թե մոռացել են կալքասի գուշակությունը, որ հարկավոր է սպասել Միթե բոլորը մոռացել են նաև այն կանխանշանը, որ Աուլիսում Ջեսը ավել էր իրենց։ Չէ՞ որ միայն պաշարման տասներորդ տարելիցին էր հույներին վիճակվելու դրավել Տրոյան։ Իր խոսքով Ողիսեսը բոլորի մեջ վերստին վառեց սիրանքները գործելու տենչը։ Բարձրագույն ոգչունեցին հույները Ողիսեսի խոսքը և շրջափայլը բարձրագույն արձագանք տվեց նրանց կանչերին։ Բայց ահա տեղից վեր կացավ աստվածային ծերունի Նեստորը, և նորից լուսվում տիրեց։ Նեստորը ևս խորհուրդ տվեց մնալ և մարտնչել տրոյացիների դեմ։ Նա խորհուրդ տվեց նաև մարտի ժամանակ զորաբանակը շարել ըստ ցեղերի և տոհմերի, որպեսզի ցեղը ցեղին ոգնի, իսկ տոհմը՝ տոհմին։ Այդ գեպքում պարզ կլինի, թե ցեղի ո՞ր առաջնորդը կամ անգամ է նրկչու և որը՝ բաշարի։ Այդ ժամանակ պարզ կլինի, թե ինչու միջև հիմա չի գրավված Տրոյան՝ արդյոք անմահ աստվածները կամքո՞վ, թե՞ առաջնորդների՝ ուղմական գործի անգիտությունից։ Համաձայնություն տվեց դրան Ազամեմնոնը։ Նա հրամայեց զինվորներին ճաշի գնալ, իսկ հետո պատրաստվել արշունահեղ ճակատամարտի, ուր ոչ մեկը մի ակնթարթ անգամ զազար չպիտի առնել, և վա՛յ նրան, ով կմնար նավերի մոտ և խույս կտար ճակատամարտից. նա շների ու գիշակեր թռչունների առաջ կնետվեր իբրև կեր։

Բարձր ձայնով աղաղակեցին բոլոր ուղմիկները, այնպես բարձր, ինչպես փոթորկի պահին ծովն է մոռնում, երբ բամբին ըլում է լեռնակուտակ ալիքները։ Իսկույն ցրվեց հասարակական ժողովը։ Բոլորը դեպի վրաններն շտապեցին։ Խարուկներն սկսեցին ծխալ ողջ ճամբարում։ Ռազմաճակատից առաջ հույները

Գաղտնաբերում էին կերակուրներով: Ամեն մեկը զոհ էր մատուցում աստծուն և աղերսում փրկել իրեն արյունահեղ մարտի ժամանակ: Ազամեմնոնը Զևսին զոհ մատուցեց: Այն զոհասեղանի մոտ, որի ջուրը կանգնել էին հույների նշանավորագույն հերոսները, նա մի պարարտ ցուլ մորթեց և աղերսեց Զևսին հաղթանակ տալ իրեն, աղերսեց, որ նա օգնի իրեն դեռ զիշերը չիջած նվաճել անմատչելի Տրոյան և Պրիամոսի պալատը: աղերսեց, որ ուժ տա իրեն հիդակահար անել, կործանել Հեկտորին: Բայց շանսաց նրան ամպրոպային մեծն Զևսը. նա բազում ձախորդություններ էր կանխատեսել այդ օրը Միկեննի արքայի համար: Երբ զոհերը մատուցված և զոհաբանական խնջույքն ավարտված էր, ծերունի նեստորն սկսեց շտապեցնել առաջնորդներին, որ զորաբանակը դեպի ձակատամարտի դաշտն առաջնորդեն:

Իրենց ջոկատներին մոտ փուխացին առաջնորդները: Բանբերներն սկսեցին բարձրաձայն կանչել ռազմիկներին: Մարտական կարգով դասավորեցին առաջնորդներն իրենց ջոկատները և տարան դեպի Տրոյայի պարիսպները: Հողը տնքում էր ռազմիկների և ձիերի ոտքերի գոփյունից: Զորաբանակը գրավեց Սկամանդրոս¹ գետի հովիտը: Զորագնդերն այրվում էին տրոյացիների հետ մարտնչելու տենչով: Զորականների մեջ մոլեգնաբար այս ու այն կողմ էր սուրում Աթենաս-Պալլասը: Նա մարտի էր հրավիրում զինվորներին՝ անսասան քաջություն ներշնչելով նրանց: Զորաբանակի առջևից, երկանիվներով գնում էին առաջնորդները: Ամպրոպային Զևսի նման, իր ահեղ տեսքով նրանց բոլորին գերազանցում էր Ազամեմնոն արքան: Կուռ շարքերով գնում էին ռազմիկները դեպի Տրոյայի պարիսպները:

ՄԵՆԵԼԱՍՍԻ ԵՎ ՊԱՐԻՍԻ ՄԵՆԵՄԱՐՏԸ

Եւրազրված է քառ Համեոսի շիրիական ցանկի:

Սրբնթաց իշավ Օլիմպոսից աստվածների բանբեր Իրիսը և Պարիսի որդու՝ Պոլիթեսի կերպարանքն առնելով, հայտնեց տրոյացիներին, որ հույների ճամբարից դեպի Տրոյա է շարժվում անթիվ-անհամար մի զորաբանակ: Երբ Իրիսը դեպի Տրոյա էր սլա-

¹ Տրոյայի մտով հասող գետ:

նում, բոլոր տրոյացիներն այդ ժամանակ ժողովրդական հավաքի էին եկել: Հեկտորն անմիջապես ցրեց ժողովը:

Տրոյայի բոլոր քաղաքացիները և նրանց գաշնակիցները շտապեցին զինավառվել և մարտական զիբք բռնել: Բաց արին Տրոյայի գարպասները, և մեկը մյուսի հետևից սկսեցին դուրս գալ տրոյացիների և նրանց գաշնակիցների ջոկատները: Բարձրաձայն աղմուկ-աղաղակով առաջ էին շարժվում տրոյացիները, ինչպես շվոդ կուռնկների երամ: Իսկ հույները մտանում էին ահավոր լուռություն պահած: Փոշու ամպը պատել էր ողջ ռազմադաշտը:

Գեմ-դիմաց ելան զորաբանակները, բայց դեռ շակսեցին ճակատել: Այդ ժամանակ տրոյացիների շարքից առաջ եկավ պերճազեղ Պարիսը: Նա ուսին ընձենի էր պցել, թիկունքին՝ աղեղն ու նետերով լի կապարճ, կողքից կախել էր սուրսայր սուրը, իսկ ձեռքին բռնել երկու նիզակ: Մենամարտի կանչեց Պարիսը հույներից մեկին: Պարիսին տեսնելուն պես Մենելաոսն իսկույն ցած թռավ երկանվից, և զենքերը շողացնելով, առաջ եկավ: Պարարտ որս տեսած առյուծի նման, հրճվանքով էր գնում Մենելաոսը Պարիսի դեմ: ցնծում էր Մենելաոսը, որ կարող է վրեժ լուծել շքնաղ Հեղինեին առևանգողից:

Մենելաոսին տեսնելուն պես դողաց Պարիսի սիրտը, և նա մահից սարսափած ետ-ետ գնաց ու թաքնվեց ընկերների մեջ: Հեկտորն այդ տեսավ և սկսեց պարսավել Պարիսին երկշոտության համար:

— Գու տեսքով ես միայն քաջ, — ասաց Հեկտորը Պարիսին, — երանի թե ծնված չլինեիր, քան մեզ բոլորիս ծաղր ու ծանակի առարկա դարձնեիր: Մի՞թե շես լսում, թե ինչպես են վրադ ծծածում հույները: Գու միայն քաջություն ես ունեցել Մենելաոսի կնոջը՝ Հեղինեին առևանգելու՝ ի խոր ցավ ողջ Տրոյայի: Վախեցա՞ր Մենելաոսից: Իմանալի՞ր դեթ, թե ի՞նչ քաջամարտիկ ամուսին ունի առևանգածդ Հեղինեն: Օ՛, եթե տրոյացիները քաջություն ունենային՝ վաղուց քեզ քարկոծ արած կլինեին բոլոր այն թշվառությունների համար, որ դու բերիր նրանց զլխին:

— Պարսավանքդ արդարացի է, Հեկտոր, — այսպես պատասխանեց Պարիսը, — բայց հանգի՛ստ եղիր: Ես կմենամարտեմ Մենելաոսի հետ: Հրաման տուր միայն, որ կանգ առնեն տրոյացիները: Բանակների առաջ կմարտնչենք մենք՝ զեղանի Հեղինեի

համար: Ով մեզինց հաղթող դուրս գա, թող նա՛ էլ իր տուն տանի շեղիններն:

Այսպիսի պատասխան անելով, Հեկտորը մտավ տրոյացիների շարքերի մեջ և կանգնեցրեց նրանց: Հույները պատրաստ էին նետահար անել Հեկտորին: Մի քանիսը նույնիսկ քար նետեցին նրա կողմը, բայց Ագամեմնոնը կանգնեցրեց նրանց և գաշեց:

— Կա՛նգ առեք, հույներ՛, սպասեցե՛ք, այրե՛րդ Աքայայի, սաղավարտափայլ Հեկտորն ուղտմ է մեզ դիմել խոսքով:

Երբ բոլորը լռեցին, Հեկտորը հայտնեց, որ Պարիսն առաջարկում է մենամարտով լուծել Հեղինեի վեճը: Նրան պատասխան տվեց Մենեևոսը:

— Ինձ ականջ դիր: Վաղուց ժամանակն է վերջ տալ այս արյունահեղ կռվին: Թող մենամարտենք ես ու Պարիսը և թող մեզանից կործանվի նա՛, ում որ ճակատագիրը մահ է վիճակել: Իսկ դուք խաղաղություն կնքեցեք դրանից հետո: Զոհ մատուցենք աստվածներին: Այստեղ կանչեցեք ծերունի Պրիամոսին. նրա բոլոր որդիներն էլ նենգամիտ են, թող մենամարտից առաջ երգվի՛ նա, որ ի կատար կածի այս պայմանը:

Այս առաջարկն ուրախացրեց բոլորին: Հեկտորն անմիջապես քանրեք ուղարկեց Պրիամոսին կանչելու:

Մինչ այդ Իրիս աստվածուհին Պրիամոսի դստեր՝ գեղանի Լաոդիկեի կերպարանքով ներկայացավ Հեղինեին և կանչեց ու առաջով նրան Սկեյան դարպասների այն աշտարակը, որտեղից, Պրիամոսի գլխավորությամբ, տրոյացի ծերունիները հավաքվել էին Պարիսի ու Մենեևոսի մենամարտը դիտելու: Շքեղազարդ զգեստներով պանվեց գեղազանգուր Հեղինեն և երկու նաժիշտների ուղեկցությամբ շտապեց Իրիսի հետևից: Մտաբերեց առաջին ամուսնուն, հայրենիքն ու թանկագին Սպարտան և Հեղինեի աչքերը ողողվեցին արտասուքով: Տեսան Տրոյայի ծերերը մոտեցող Հեղինեին: Այնքան շքնաղ էր նա, որ ծերունիները սքանչացած նրան էին նայում և ասում իրար.

— Ո՛չ հույներն են մեղավոր, ո՛չ էլ տրոյացիները, որ արյունահեղ պատերազմ են մղում այսպիսի մի շքնաղ կնոջ համար: Իրավ որ անմահ աստվածուհիների նման գեղեցիկ է նա: Բայց ինչքան էլ որ շքնաղ է նա, ավելի լավ է թող Հունաստան վերադառնա, և այլևս ո՛չ մեզ, ո՛չ էլ մեր զավակներին կործանում չսպանա:

Իսկ Պրիամոսն իր մոտ կանչեց Հեղինեին և հարցում արեց այն հերոսների մասին, որոնց տեսնում էր պարսպի վրայից: Հեղինեն ցույց տվեց մեծազոր Ագամեմնոնին, հնարազետ Ոդիսևսին, Այաքս Տելամոնիդին, Կրեստի արքա Իդոմենևոսին: Այդ հերոսներին նայելիս հիանում էր Պրիամոսը և՛ նրանց գեղեցկությունով, և՛ հզոր, ուսումնասիրող տեսքով: Այդ պահին եկան Հեկտորի ուղարկած բանբերները: Հապճեպ տեղից վեր ելավ Պրիամոսը, հրաման տվեց լծել երկանիվը և Անտեևորի հետ միասին Սկեյան դարպասներից դուրս եկավ գեպի զորարանակը:

Ոտքի ելան ի պատիվ ծերունի Պրիամոսի Ագամեմնոնն ու Ոդիսևսը: Զոհեր մատուցվեցին օլիմպական աստվածներին: Երդում տվին լխախտել պայմանը: Այդ ժամանակ տրոյացիների և հույների բանակներին դիմեց Պրիամոսն այս խոսքերով.

— Օ՛, այրե՛ր քաջակորով, տրոյացիներ և հույներ՛: Ես հիմա մեծ Տրոյա պիտի վերագառնամ: Ես ուժ չունեմ աչքովս տեսնելու իմ որդի Պարիսի և մեծազոր Մենեևոս արքայի մենամարտը: Միայն Զևսը դիտե, թե ո՛ւմ է վիճակված կործանվել այս մենամարտում:

Մեկնեց Պրիամոսը ուսումնասիրելու: Հեկտորն ու Ոդիսևսը կռվի տեղը չափեցին, իսկ հետո սաղավարտի մեջ վիճակ ձգեցին, և թափ տվին սաղավարտը, որպեսզի ում վիճակն առաջինը դուրս գա, նա՛ առաջինը նետի նիզակը: Վիճակն ընկավ Պարիսին:

Զինավառվեցին Պարիսն ու Մենեևոսը և, ծանրածանր նիզակները ճռճելով, մենամարտի դաշտը դուրս եկան: Ցասումնալից փայտակում էին նրանց աչքերը, ուր բոցկլտում էր նրանց ատելությունը: Ըճճեց Պարիսը նիզակը և նետեց Մենեևոսի վրա: Նիզակը դիպավ Մենեևոսի հսկա վահանին, բայց չծակեց: Մովեց նիզակի սայլը, դիպելով վահանը պատող պղնձին: Բարձրաձայն գոչմամբ աղերս կարողաց Մենեևոսը Զևսին, որ օգնի իրեն վրեժխնդիր լինել Պարիսից. որպեսզի գալիք սերունդները ևս ապերախտությամբ չհատուցանեն հյուրընկալության փոխարեն: Ցասումնալից ճռճեց Մենեևոսն իր նիզակը և հարվածեց Պարիսի վահանին: Նիզակը սուր ծայրով թափ անցավ վահանից, ծակեց անցավ նաև զրահը և պատուեց քիտոնը՝: Մի-

1 Պրիամոս— հին հունական զգեստ (Մ. Թ.):

այն փութաբազան մի կողմ թեքվելը փրկեց Պարիսին: Մենելաոսը ճանկեց սուրը և նրանով հարվածեց Պարիսի սաղավարտին, բայց ուժային հարվածից սուրը ջախջախվեց՝ շորս կտոր լինելով: Զրկվելով սրից, Մենելաոսը հարձակվեց Պարիսի վրա և, բռնելով սաղավարտից, գետնաթափալ քարը տվեց գնպի հույներին շարքերը: Սաղավարտի փոկը խնդրում էր Պարիսի կեկորը: Մենելաոսը նրան քարը կտար մինչև հույն զինվորների շարքերը, բայց այդ միջոցին իր սիրելիին օգնության հասավ սիրտ աստվածուհի Ափրոդիտեն: Նա կտրեց փոկը, և Մենելաոսի ձեռքում մնաց միայն սաղավարտը: Ուզում էր նիզակով խոզխոզել նա գետնաթափալ Պարիսին, բայց Ափրոդիտե դիցուհին մութ ամպերով պատեց Պարիսին և արագորեն Տրոյա տարալու Իզուր էր Մենելաոսը փնտրում Պարիսին. նա ամենի գազանի նման այս ու այն կողմ էր նետվում տրոյական զորաբանակի մեջ, բայց ոչ ոք չէր կարող Պրիամոսի որդու տեղն ասել, թեև բոլոր տրոյացիներն ատում էին նրան: Բարձրաձայն զոչեց Ագամեմնոն արքան.

— Կեցե՛ք, տրոյացիներ և հույներ: Դուք բոլորդ տեսաք Մենելաոսի հաղթանակը, թող մե՛զ վերադարձնեն Հեղինեին և Մենելաոսից հափշտակված գանձը, նմանապես և թող հարկ վճարեն:

Բայց անպատասխան մնաց Ագամեմնոնը. այդ ճակատամարտին վախճան չէր վիճակված:

ՊԱՆԳԱՐՈՍԻ ԵՐԴՄԱՋԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ: ՃԱԿԱՏԱԿԱՐՏ

Շտապով և բոս Հոմերոսի «Իլիական» պոեմի:

Երբ Մենելաոսն ու Պարիսը վճռեցին մենամարտի դուրս գալ, անմահ աստվածներն այդ ժամանակ խնջույք էին անում Զևսի ապարանքում: Դեռատի Հերե դիցուհին նեկտար էր լցնում գավաթները: Խրախճանք էին անում աստվածները և բարձրագահ Օլիմպոսից նայում Տրոյային: Զևսը Հերային ծաղրելով ասում էր, թե ինքը վերջ կտա արյունահեղ գժտությանը, բանի որ հաղթել է Մենելաոսը: Բայց աստվածուհի Հերան խնդրեց Զևսին տրոյացիների զորաբանակն ուղարկել ռազմատենչ Աթենասին, որ նա որևէ մեկին զրդի խախտել տված երդումը: Ակամա համաձայնեց ամպրոպային Զևսը:

Հապճեպով, լուսապայծառ աստղի կերպարանքով, Օլիմպոսից սլացավ Աթենաս դիցուհին և ընկավ տրոյական գործերի մեջ: Զարմանքը տիրեց տրոյացիներին. չգիտեին նրանք, թե որն է այդ կանխանշանի իմաստը. դարձյալ արյունահեղ կոտորած քրիտի սկսվի, թե՞ Զևսի այդ կանխանշանը հաշտության է խոստանում: Իսկ Աթենասը, Անտենորի որդու՝ Լաոդոկոսի կերպարանքով մոտ գնաց հույնականոր նետածից Պանդարոսին և համոզեց նրան մահարեր նետ արձակել Մենելաոսի վրա: Համաձայնեց Պանդարոսը: Զեռքն առավ նա ազեղը, հանեց մի սուրսայր նետ, Ապոլոնին օգնության կանչեց, և բաց թողեց նետը: Պերկ ազեղնալարը զրնգաց, նետը թռավ ու անկասկած զոհ կզնար Մենելաոսը, եթե Աթենասը չթեքեր նետը, որ զնաց և դիպավ մարմնի այն մասին, որ պաշտպանված էր կրկնակի զրահով: Զրահից թափ անցավ նետը և խրվեց Մենելաոսի մարմնի մեջ: Վերքը խոր չէր բայց արյունն առատորեն հոսում էր այնտեղից: Սոսկումը տիրեց Ագամեմնոնին, երբ տեսավ, որ եղբայրը վիրավորված է: Բայց Մենելաոսը նրան հանգստացրեց: Ագամեմնոնը հրամայեց կանչել բժշկին՝ հերոս Մաքսոնին: Զննեց վերքը Մաքսոնը և սպեղանի զրեց վրան: Մինչ Ագամեմնոնն ու մյուս հերոսները հող էին տանում վիրավոր Մենելաոսին, տրոյացիներն արդեն հարձակվում էին հույների վրա: Զորազնդերի մոտ շտապեց Ագամեմնոնը և սկսեց զատվորել նրանց շարքերը և ի մարտ ոգեշնչել ռազմիկներին:

Ընկեց որ առաջնորդների ձայները հնչեցին հունական զորազնդերի մեջ, առջնիկներն անխոս առաջ շարժվեցին: Իսկ տրոյացիները հարձակվում էին բարձրաձայն աղաղակներով: Հունական զորքերին առաջնորդում էր Աթենաս-Պալլասը, իսկ տրոյացիներին՝ պատերազմի ամենի աստված Արեսը: Արյունահեղ ձեռնամարտ բռնկեց: Հաղթական ճիչերը խառնվում էին մեռնողների հեծեծներին:

Հույների ճնշման տակ նահանջել սկսեցին տրոյացիները, իսկ հույներն ափելի համերաշխ հարձակման անցան: Այս բանը տեսնելով, տրոյացիների պաշտպան Ապոլոնը ահեղորեն զայրացավ և քարքառայն զոչեց.

— Համարձակ առա՛ջ զնացեք, տրոյացի՛ք: Մի՛ կարծեք, թե շարժեց է հույների կուրծքը, և երկաթից՝ նրանց մարմինը: Տեսե՛ք,

այսօր նրանց մէջ չի մարտնչում մեծազոր Աքիլիսը: մոլեզնած նստել է նա իր վրանում:

Նետաձիգ աստծո այդ խոսքը ողբշնչեց տրոյացիներին: Ավելի արյունահեղ դարձավ մարտը: Շատ հերոսներ ընկան: Հուլներին ողնորում էր Աթենաս-Պալլասը: Այս մարտում նա անընկճելի ուժ էր տվել Դիոմեդես արքային՝ Տիդեսի որդուն: Մարտի նետվող Դիոմեդեսին տեսնելուն պես երկանվով նրան ընդառաջ սլացան Հեփեստոսի տրոյական զուրմ Գարեսի որդիները՝ Փեղեսոսը և Իդևոսը: Փեղեսոսը Դիոմեդեսի վրա նետեց նիզակը, բայց կողքից անցավ: Իսկ Դիոմեդեսը Փեղեսոսի կրծքին հարվածեց նիզակով և նա դիտապաստ վայր ընկավ երկանվից: Վախեցավ Իդևոսը, ցած թռավ երկանվից և փախուստի դիմեց: Նրան էլ կսպանեի Դիոմեդեսը, բայց Իդևոսին փրկեց Հեփեստոսը՝ խավարով պատելով նրան: Դիոմեդեսը տիրացավ եղբայրներին և՛ նիզակներին, և՛ երկանվին:

Այդ ժամանակ Աթենաս դիցուհին Արես աստծո ձեռքը բռնելով ասաց.

— Օ՛, ժողովուրդներին բնաջինջ անող մոլեզին Արես, հեռա-նանք ճակատամարտից: Քող մենակ կուլեն հույներն ու տրոյացիները, թող Զևսը վճռի ո՛ւմ տա հաղթանակը: Իսկ մենք հեռա-նանք մարտից, որ չզայրանա Զևսը:

Դուրս բերեց մարտից Աթենաս դիցուհին Արեսին և նստեցրեց Սկամանդրոսի բարձրադիր ափին:

Շուտով նահանջել սկսեցին տրոյացիները. նրանց հերոսներից շատերին սպանեցին ասեղազոր Ադամեմնոնը, Մենելաոսը, Իդոմենեսը, Մերիոնեսը և ուրիշները: Բայց բոլորից մոլեզին մարտը նշում էր Դիոմեդես արքան: Տրոյացիներն անկարող էին դիմազրավել նրան: Շատ շանցած, տրոյացիների մարտաշարքերը երբացին:

Դիոմեդեսին տեսնելուն պես մեծահուշակ նետաձիգ Պանդարոսը պրկեց աղեղն ու բաց թողեց նետը: Մխրճվեց նետը Դիոմեդեսի ուսի մեջ, և բոսոր արյունը ներկեց նրա զրահը: Ցնծաց Պանդարոսը, կարծելով, թե մահացու վերք է տվել Դիոմեդեսին: Բարձրաձայն գոչմամբ սկսեց խրախույս կարգալ տրոյացիներին, թե մահացու վերք է հասցրել Դիոմեդեսին: Իսկ Դիոմեդեսը մոտ կանչեց հերոս Սթենելոսին և խնդրեց դուրս քաշել վերքից նետը: Հանեց նետը Սթենելոսը: Բարձրաձայն պաղատանքով Աթենաս-

Պալլասին դիմեց Դիոմեդեսը և աղերսեց, որ զորութուն տա դիտապաստ անել իրեն նետահարողին: Աթենաս-Պալլասը կանգնեց նրա առաջ: Նա մեծազոր ուժով և անխորտակելի արիությամբ օժտեց նրան: Պատվիրեց Դիոմեդեսին համարձակ մարտի մեջ մտնել և շահարձակել միայն անմահ աստվածներին վրա: Ափրոդիտե աստվածուհուն միայն կարող էր վերջ տալ նա իր նիզակով: Խոցված աշուձի նման, որի թեթև վերքը միայն տասնապատկում է նրա ուժը և առավել բորբոքում կատաղութունը, Դիոմեդեսը մարտի նետվեց:

Տեսնելով, թե ի՞նչ մոլեզնությամբ է մարտնչում Դիոմեդեսը, հերոս էնեսսը վաղըով անցավ տրոյական ռազմիկների ջարջերի միջով՝ Պանդարոսին փնտրելու: Էնեսսը համառեց Պանդարոսին, որ հարձակվի Դիոմեդեսի վրա: Էնեսսի նրկանվիին բարձրացավ քաշարի Պանդարոսը և միասին սուրացին Դիոմեդեսի գեմ:

Երկանվի վրա երկու մեծանուն հերոսներին տեսնելով, Դիոմեդեսի ընկեր Սթենելոսը խորհուրդ տվեց խույս տալ այդ հերոսների հետ մարտնչելուց: Բայց զայրացած մերժեց այդ խորհուրդը հզորազոր հերոսը: Սրաբշավ Դիոմեդեսին էր մոտենում Էնեսսի երկանվիվը: Ճոճեց նիզակը Պանդարոսը և նետեց դեպի Դիոմեդեսի վահանը: Նիզակը ծակեց, թափ անցավ և դիպավ զրահին, բայց զրահը պաշտպանեց Դիոմեդեսին, իսկ Պանդարոսն արդեն ցնծում էր, կարծելով թե մահացու վերք է տվել Տիդեսի որդուն: Ինչեց Դիոմեդեսն իր նիզակը: Դիպավ նիզակը Պանդարոսի թթաբամախն և զնտապատ թափալուր եղավ երկանվից Պանդարոսը: Հաղմեղ վայր ցածկեց Էնեսսը: Վահանն առչեց բռնած, հաստարևու նիզակը ձեռքին, նա պատրաստ կանգնեց ընկերոջ դին պաշտպանելու: Իսկ Դիոմեդեսը համբուսակեց մի հսկայական բար, այնքան մեծ, որ երկու մարդ միասին չէին կարող բարձրացնել, և ամենի ուժով նետեց Էնեսսի վրա: Փարը դիպավ Էնեսսի աղբրին: Ծեկալոց ընկավ Էնեսսը և անշուշտ կիրթմանվեր նա, եթե օգնու-թյան շահաներ մայրը՝ Ափրոդիտե դիցուհին: Նա իր զգեստով ծածկեց Էնեսսին և ուզում էր նրան դուրս տանել ռազմաճակատից: Դիցուհու կողմը նետվեց Դիոմեդեսը և իր ծանր նիզակով, վրաժուրեց նրա բնքուշ ձեռքը: Ցայտեց Ափրոդիտեի անմահ աղբուրը: Բարձր ճիչ արձակեց աստվածուհին և զրկից բաց թողեց Էնեսսին: Բայց Ապոլոն աստվածը սև ամպով պատեց նրան: Իսկ Դիոմեդեսը սպառնազին գոռաց Ափրոդիտե դիցուհու վրա:

— Հեռացի՛ր, զուստրդ Ջևախ: Բո՛ղ այս արյունահեղ մարտը
Հերիք չէ՞ և այն, որ գայթակղում ես թուլական կանանց:

Լքեց ուղղի գաշաը սիրո զիցուհին, իսկ Գիոմեղեցը կրկին
հարձակվեց էնեսախ վրա: Երեք անգամ հարձակում գործեց Տի-
դևախ որդին, երեք անգամն էլ ետ վանեց նրան Ապոլոնը: Երբ շո-
րորդ անգամ Գիոմեղեցը վրա հասավ էնեսասին, գոչեց զայրացած
Ապոլոնը.

— Խելքի ե՛կ, որդիդ Տիդևախ: Հեռացի՛ր, և մի՛ հանդգնիր
հարձակու՞մ գործել անմահների վրա: Երբեք մահկանացուները
ուժով չե՞ն հավասարվի աստվածներին:

Ջարհուրեց Գիոմեղեցը, երբ լսեց ահեղ Ապոլոն աստծո ձայ-
նը, և եահանջեց: Իսկ Ապոլոնն էնեսասին տարավ Տրոյայի տաճա-
րը. Այնտեղ էնեսասին բուժեցին Լետո դիցուհին և Ապոլոնի թույ-
րը՝ դիցուհի Արտեմիսը, իսկ ուղմադաշտում Ապոլոնը ստեղծեց
էնեսասի ուրվականը, և այդ ուրվականի շուրջը եռաց համառ պայ-
քար:

Գիոմեղեցից վերք ստացած Ափրոդիտե զիցուհին ուղմա-
դաշտից գնաց այնտեղ, ուր նստած էր պատերազմի մուկզին
աստված Արեսը: Բարձրաձայն հեծեծալով ցավից, նա Արեսին
աղերսեց իրեն տալ երկանիվը, որով արագորեն լուսապայծառ
Օլիմպոս սավառնեց: Այնտեղ, արցունքն աչքերին, մոր՝ Դիոնեի
ծնկներին փարվեց նա և զանգատվեց, որ իրեն վերք է տվել Գիո-
մեղեցը: Մաքրեց վերքը Դիոնեն և ապաքինեց բազուկը: Իսկ Աթե-
նասն ու Հերան, Ափրոդիտեին ծաղրելով, ասում էին ամպրոպա-
յին մեծն Ջևախ.

— Արդյոք մի ուրիշ աքեուհու չի՞ համուզել արդեն Ափրոդիտե
զիցուհին, որ իր սիրելի տրոյացիներից մեկի հետ բռնի փախուս-
տի ճամփան: Գուցե այդ աքեուհուն շոյելի՞ս է քերծել ու արնասնել
իր ձեռքը:

Ժպտաց Ջևաք, իր մոտ կանչեց Ափրոդիտեին և ասաց.

— Սիրելի դատրիկս, թո տեղը չեն ուղմաշառաչ մարտերը:
Գու կառավարիր ամուսնության ու սիրո գործը, իսկ պատերազմը
թող ամենհի աստված Արեսին և ուղմատենը Աթենասին:

Իսկ ուղմադաշտում եռում էր ճակատամարտը Ապոլոնի
ստեղծած էնեսասի ուրվականի շուրջը: Ապոլոն աստվածը սուրաց
Արեսի մոտ և խնդրեց սանձել Դիոմե՛ն սխին: Հնազանդեց Ապոլո-
նին ուղմի արնաթաթավ աստվածը: Թրակիացի Ակամասոսու հե-

բաթի կերպարանքն առնելով նա տրոյացիների մոտ սուրաց՝
արհուլթյամբ տոգորելու նրանց: Ավելի կատաղի պիտի դառնար
մարտը: Ռազմադաշտ վերադարձավ ապաքինված էնեսասը: Ուրա-
խացան տրոյացիները՝ ողջ-առողջ տեսնելով նրան, Նորից կարգի
եկան ցիր ու ցան՝ եղած շարքերը և շարժվեցին հույների վրա:
Հեռանեց ծածկող ահավոր ամպերի նման, որոնց անկարող է հա-
լածել կատաղի սաստկաշունչ հողմը, սպասում էին հույները մո-
տեցող տրոյացիներին: Հույներին մարտի էին զրգում երկու հե-
րոս Այաքսները, Ռիսևան ու Դիոմեղեցը: Ջրահները շողացնելով,
շարքերի մեջ շրջում էր նաև Ազամեմնոն արքան: Նորից մարտը
եռաց: Ընկնում էին մեկը մյուսի հետևից հերոսները, և գիշերվա
խավարը պատում էր նրանց աչքերը: Տրոյացիների առջևում մար-
տընչում էր Հեկտորը: Նրան սատար էր ինքը՝ պատերազմի աստ-
ված Արեսը և ճակատամարտի աստվածուհի էնիոն: Հերոս Դիոմե-
ղեցը Արեսին տեսնելուն պես ընկրկեց և հույներին դառնալով
գոչեց.

— Բարեկամնե՛ր, ինչո՞ւ եք զարմանում, որ Հեկտորն այսպես
անվեհեր մարտնչում է: Չէ՞ որ նրա հետ, կողք-կողքի, մարտնչում
և օգնում է նրան ինքը՝ ուղմի աստված Արեսը: Նահանջեցե՛ք,
բարեկամներ, մի՛ հանդգնեք մարտի բռնվել աստվածների հետ:

Ավելի ու ավելի էին նեղում հույներին տրոյացիները. Մար-
տում ընկավ նաև Հերակլեսի որդին՝ պատանի Տլիպոլեմոսը: Ջևախ
որդու՝ Մարպեղոնի նիզակով խոցված: Բայց Մարպեղոնի ազգրն
էլ Տլիպոլեմոսն էր խոցել: Չհասցրին էլ նիզակը հանել վերջից և
գժվարությամբ ուղմադաշտից դուրս բերին Մարպեղոնին նրա
բնկերները: Կողքից անցնող Հեկտորին նկատելով, Մարպեղոնն
ազնուսեց նրան բնաջինջ անել հույներին: Կրկին մարտի նետվեց
Հեկտորը և շատ հերոսների մահ տվեց իր նիզակով: Ավելի սաս-
աթիկ սկսեցին նեղել հույներին տրոյացիները:

Այդ բանը տեսնելուն պես, Հերա աստվածուհին կանչեց Աթե-
նաս դիցուհուն և նրա հետ միասին սկսեցին ուղմի պատրաստու-
թյուն տեսնել, որպեսզի սանձեն Արեսին: Հերեի օգնությամբ զի-
ցուհիները լծեցին նաև զարմանահարչ երկանիվը: Հազավ զրահ-
ներն Աթենասը, զլխին զրեց իր ծանր սաղավարտը, ձեռքն առավ
Գորգոն Մեդուզայի գլուխն ունեցող վահանը, նիզակը ձեռքին
նստեց Հերա դիցուհու երկանիվը, իսկ Հերան բռնեց արշավասույր
նժույզները: Երբ աստվածները բարձրագահ Օլիմպոսից ցած էին

պաշտում, տեսան Ջևախ, որ մեն-մենակ նստել էր մի բարձր բլրի վրա. Հերան սանձեց ձիերը և ասաց շահթարձակ Ջևախն.

— Մի՞թե չես զայրանում, Ջևա, կատաղի Արեսի վրա, որ այսօր քան հերոսներ է կոտորում. Ծա տեսնում եմ, թե դա ինչպես է աւրախացնում Ապոլոնին ու Ափրոդիտեին. Արդյոք կզայրանա՞ս ինձ վրա, եթե զնամ ու սանձեմ Արեսին:

Պատասխան տվեց վահանակիր Ջևաը.

— Գնա՛, Բող Արեսի դեմ դուրս դա ուղղի դիցուհի Աթենաս. Պալլասը Անմահներին ոչ ոք չի կարող այնպես ծանր վիշտ պատճառել Արեսին, որքան նա:

Սրարշավ շարունակեց ճանապարհը Հերա աստվածուհին: Հասան դիցուհիներն այնտեղ, ուր իրար են խառնվում Սիմոն և Սկամանդրոս գետերը, իջան երկանվից, արձակեցին նժույզները և սև ամպով պատեցին նրանց: Հերան, որոտաձայն Ստենտորի կերպարանքն առնելով, կոչ արեց հույներին քաջաբար մարտ մղել որոյացիների դեմ: Աթենաս-Պալլասը մոտ զնաց Դիոմեդեսին, որը սրբում էր Պանդարոսի հասցրած վերքը: Սկսեց նախատել Աթենասը նրան, որ խույս է տվել ռազմաճակատից, և որ վախենում է տրոյացիների հետ կռվել: Այդպես չէր վարվի նրա հայրը՝ փառապանձ ռազմիկ Տիդեոսը: Բայց Դիոմեդեսն այսպես պատասխան տվեց դիցուհուն.

— Ո՛չ, լուսակն դուստրդ ամպրոպային Ջևախ, երկյուղ չեմ կրում ես Տրոյայի հերոսների հետ մարտնչելուց: Հիշում եմ միայն, որ պատվիրել էիր մարտ չմղել անմահ աստվածների դեմ:

Եվ ասաց Աթենասը Դիոմեդեսին.

— Օ՛, որդիդ Տիդեախ, սիրելիդ Աթենասի, այժմ արդեն մի՛ երկնչիր Արեսից, ոչ էլ որևէ մի աստծուց: Մ՛ս կլինեմ քեզ օգնական: Փութա՛, նախ Արեսի հետ մարտնչիր, Վաղուց չէ, ինչ խոստացել էր հույներին օգնել, իսկ այժմ, երդմնուրացը տրոյացիներին է օգնություն ցույց տալիս:

Աթենասի փոխարեն Դիոմեդեսի երկանվին բարձրացավ Աթենաս-Պալլասը. ճոնչաց երկանվի կաղնի սունին աստվածուհու ծանրության տակ: Արեսից անտես մնալով, քեց նժույզներն Աթենասը ուղիղ նրա վրա, հենց այն պահին, երբ նա հանում էր սպանված հերոս Պերիփասի զրահները: Տեսավ Արեսը Աթենասի կողքին կանգնած Դիոմեդեսին, թողեց Պերիփասի դին և նիզակն արձակեց Տիդեախ որդու վրա: Մի կողմ վանեց նիզակն Աթենասը: Տասնա-

պատկեց Աթենասը Դիոմեդեսի ուժը. նա խոցեց Արեսին նիզակով և նիզակը գուրս քաշեց վերքից: Այնպես ահեղաձայն գոռաց Արեսը, որ տասը հազար զորականի ձայն հանեց: Սարսուղին տեսալից և հույն ռազմիկները այդ սոսկալի ձայնից: Սև ամպով պարտրված, մուլեզին Արեսն իսկույն լուսակերտ Օլիմպոս սավառեց: Այնտեղ նստեց նա Ջևախ կողքին և զանգատվեց Աթենաս-Պալլասից, որ օգնել էր Դիոմեդեսին իրեն վերք հասցնելու: Ահեղ հայացքով որդուն նայեց Ջևաը: Ատելի էր Արեսը նրան դեպի արյունահեղ մարտերն ունեցած սիրո համար. և ասաց որդուն, որ եթե իր զավակը չլիներ նա, ապա վաղուց արդեն խավարամած Ճարտարոս զորած կլիներ նրան: Վերջ տվեց քրթմնջողին մուլեզին Արեսը: Ջևաը կանչեց աստվածային բժիշկ Փաոնին, և նա իսկույն ազաբինեց Արեսի վերքը: Իսկ ձեռն լողանք տվեց Արեսին և շքեղ զգեստներ հագցրեց նրան: Լուսապայծառ Օլիմպոս վերադարձան նաև Հերա և Աթենաս դիցուհիները:

Տրոյայի պարիսպների տակ առաջվա պես ետում էր մարտը: Նորից սկսեցին տրոյացիներին նեղել հույները: Բազում պանծալի հերոսների մահ տվին Այաքսը, Դիոմեդեսը, Մենելաոսը, Ագամեմեոնը և ուրիշ հերոսներ և հանեցին սպանվածների շքեղ զենք ու զրահը: Տեսնելով, որ մոտ է արդեն տրոյացիների լիակատար պարտությունը, Պրիամոսի որդին, պատգամախոս Հելենոսը, սկսեց ազնվակա խաղաղարտափախլ Հեկտորին և Ափրոդիտեի որդուն՝ էնեասին, որ համարեն տրոյացիներին հապճեպ Տրոյա վերադառնալ և մնալուցուս ընտանեքով շարժել Աթենաս դիցուհու զուխը: Հնազանդեց Հելետորը եղբորը: Նա կրկին անգամ ոգեշնչեց տրոյացիներին, և նրանք նա մղեցին հույների դրոհը:

ՆԵԿՏՈՐԸ ՏՐՈՅԱՅՈՒՄ:

ՆԵԿՏՈՐԻ ՀՐԱԺԵՇՏԸ ԱՆԿՐՈՄԱՔԵՆԻ

Նախադրված է ըստ Համեսի «Իլիական» պոեմի:

Իսկ այդ միջոցին Հեկտորը Սկելան դարպասից Տրոյա մտավ: Բախվեց նրա շուրջը հավաքվեցին կանայք ու երեխաները և սկսեցին Նախադրած անել իրենց ամուսինների և հայրերի մասին: Բայց ոչինչ լուսաց նրանց Հեկտորը: Պատվիրեց միայն ազոթել օլիմպական աստվածներին: Հեկտորը փութաց դեպի Պրիամոսի պալատը:

Այնտեղ նրան դիմավորեց մայրը՝ Հեկարեն, նա կամեցավ գիտի տալ Հեկտորին, որ նա ամբաստանեալ իր ուժերը, բայց Հեկտորը մերժեց: Նա մորը խնդրեց հավաքել տրոյացիներին, որ նրանց շատափութի մի ջգնով ծածկոց ընծա տանեն Աթենաս-Պալլասին, առատ զոհ մատուցեն գիցուհուն և աղերսեն, որ զսպի կատաղի Գիամեդեսին: Անհապաղ ի կատար ածեց որդու խնդրանքը Հեկարեն: Իսկ Հեկտորն շտապեց դեպի Պարիսի ապարանքը:

Հեկտորը Պարիսին գտավ այն միջոցին, երբ նա անվրդով իր զենքերն էր դնում: Այստեղ էր նաև առևանգված Հեղինեն, որ աշխատանք էր բաշխում սպասուհիների միջև: Հեկտորն սկսեց նախատել Պարիսին, որ նա անգործ նստել է այն ժամանակ, երբ կործանում է սպառնում բոլոր տրոյացիներին: Պարիսը պատասխանեց, թե ինքը մարտի է պատրաստվում, որ ռազմադաշտ դուրս գալ է ստիպում նրան նաև սքանչատես Հեղինեն: Սիրալիր խոսքով Հեկտորին դիմեց Հեղինեն և խնդրեց նրան նստել ու հանգիստ առնել ռազմի սխրանքներից հետո, իսկ նրա ամուսնուն՝ Պարիսին, նախատեց, որ անհոգ է նա և ամոթ չունի: Տրանչաց Հեղինեն նաև այն բանից, որ այնքան աղետներ բաժին են ընկնում Տրոյային իր պատճառով, բայց ո՛չ իր հանցանքով, այլ՝ Պարիսի: Հեկտորը շկամեցավ հանգստանալ Պարիսի տանը: Նա ռազմադաշտ վերադառնալուց առաջ շտապում էր տեսնել կնոջն ու որդուն: Զգիտեր Հեկտորը, թե կրկին կհաջողվի՞ տեսնել կնոջն ու զավակին, արդյոք կենդանի ետ կգա՞ ռազմի դաշտից, թե՞ աստվածները մահ են վիճակել նրան հույների ձեռքով:

Իր ապարանքը գնաց Հեկտորը, բայց այնտեղ չգտավ Անդրոմաքին ու որդուն: Սպասուհիներն ասացին Հեկտորին, թե կինը, լսելով, որ հույները ճնշում են տրոյացիներին, որդուն գիրկն առած, քաղաքը շրջափակող պարիսպն է բարձրացել և արցունք հեղելով կանգնած է այնտեղ:

Հապճեպ դուրս եկավ իր պալատից Հեկտորը և շտապեց դեպի Սկիյան դարպասները: Հենց դռների մոտ նա հանդիպեց Անդրոմաքին, նրա հետևից աղախինը տանում էր Հեկտորի փոքրիկ որդուն՝ Աստիանաքսին: Այգաբացի առաջին աստղի պես գեղեցիկ էր մանկիկը: Բռնեց Հեկտորի ձեռքը Անդրոմաքեն և արցունք թափելով ասաց.

— Օ՛, ամուսինդ իմ. քաջությունդ կկործանի քեզ. Դու չես խղճում ո՛չ ինձ, ո՛չ որդուդ: Շուտով ես կայրիանամ, կապանեն

քեզ հույները, Ավելի լավ է շապրեմ առանց քեզ, Հեկտոր ուս ոչ որ շտեմմ քեզանից բացի: Զէ որ դու ինձ համար և՛ հայր ես, և՛ ամուսին, Օ՛, գթա՛ ինձ և մանկանդ: Ե՛տ կաց մարտից, հրամանս տուր տրոյական զինվորներին թղնու մոտ կանգնել, չէ՞ որ այնտեղ է միայն, որ հույները կարող են քանդել Տրոյայի պարիսպը:

Բայց սաղավարտափայլ Հեկտորն այսպես պատասխանեց կնոջը.

— Ինձ ևս անհանգստացնում է այդ բոլորը: Բայց մեծ ամոթ կլիներ ինձ համար մնալ Տրոյայի պատերի ներսում ու ետ կենալ նախատամարտից: Ո՛չ, պետք է մարտնչեմ ես բոլորի առջևում՝ ի փառս իմ հոր: Գիտեմ ես, որ կգա մի օր, երբ կկործանվի սրբազան Տրոյան: Բայց դա չէ ինձ վշտացնողը, ինձ վշտացնում է քո ճակատագիրը, այն, որ մի հույն գերի կտանի քեզ, և այնտեղ, օտարության մեջ, իբրև մի ստրուկ ուստայն կմանես օտարերկրուհու համար և շուր կկրես: Կտեսնեն քեզ լալով ու կասեն. «Ա՛յ, սա է կինը Հեկտորի, որն իր ուժով ու քաջությամբ գերազանցում էր տրոյական բոլոր հերոսներին», և այն ժամանակ ավելի սրտակեղեք կդառնա քո վիշտը: Ո՛չ, ավելի լավ է նախ ինձ սպանեն, քան տեսնեմ գերեվարությունդ, քան լսեմ հեծծանքդ:

Այսպես ասաց Հեկտորը և մոտեցավ որդուն զրկելու, բայց փոքրիկ Աստիանաքը ճշաց ու դայակի կրծքին փարվեց: Նա վախեցավ հոր սաղավարտի վրա ծածանվող ձիու քաշից սարքված շարժամանակից: Ժպտացին քնքազին հայրն ու մայրը մանկիկին. Հեկտորը հանեց սաղավարտը, վայր դրեց և Աստիանաքսին գիրկըն առավ ու համբուրեց: Գնդի երկինք բարձրացրեց որդուն Հեկտորը և այսպիսի ազդեցով դիմեց նա շանթարձակ Զևսին և բոլոր անմահ աստվածներին.

— Օ՛, Զևս. և դո՛ւք, աստվածներ անմահ, աղերսում եմ ձեզ, ավելք զորություն, որ որդիս էլ մեծ հույակ վայելի քաղաքացիների մեջ, ինչպես ես: Եվ թող հզոր լինի նա ու թագավորի Տրոյայում: Թող մի ժամանակ, երբ նա մարտից վերադառնալիս լինի, ասեն, թե նա քաջությամբ գերազանցում է հորը: Թող ջախջախի նա ինձանուն և հշմվանքով լցնի մոր սիրտը:

Այսպես աղոթք արեց աստվածներին Հեկտորը: Հետո Աստիանաքսին կնոջը տվեց: Կրծքին սեղմեց Անդրոմաքեն որդուն և արցունքների միջից ժպտաց նրան:

Նանդադատանքով լծվեց սիրտը Հեկտորին, քնքշագին զրկեց Անդրամաքեին և ասաց.

— Մի՛ տրամիր այդպես, Անդրամաքե: Ճակատագրի կամքին հակառակ հերոսներից ոչ մեկը չի շաղարկի ինձ մոռյալդեմ Հաղեսի թագավորութունը: Ոչ որ լի՛ խուսափի իր ճակատագրից՝ ո՛չ բաջը, ո՛չ էլ երկշտոր: Տո՛ւն գնն, սիրելիք իմ, գործի՛ր, Գլուսի՛ր, հետևի՛ր սպասուհիներին: Իսկ մենք, տղամարդիկս, կհոգանք սաղմական գործերի մասին, իսկ ամենից առավել՝ Կս պիտի հոգամ այդ գործերը:

Հագավ սաղավարտը Հեկտորը և փութաց դեպի Սկեյան դարպասները: Անդրամաքեն էլ դեպի տուն գնաց, բայց ստեպ-ստեպ շուտ էր գալիս և արցունքների միջից նայում հեռացող Հեկտորի հետևից: Երբ լալով տուն վերադարձավ Անդրամաքեն, նրա հետ միասին լացուկոծ արին բոլոր սպասուհիները. հույս չունեին նրանք, թե ողջ-առողջ տուն կվերադառնա Հեկտորը ճակատամարտից:

Սկեյան դարպասների մոտ Պարիսը հասավ Հեկտորի հետևից: Նա մարտի էր աճապարում՝ փայլեցնելով պղնձակուռ զրահները:

— Եղբա՛յր իմ, — ասաց նրան Հեկտորը, — ես դիտեմ, որ ոչ մի արդարամիտ մարդ չի կարող չզնաճատել քո սխրագործութունները, բայց երբեմն դու անկամա ես գնում կովի: Սիրտս կտրատվում է, երբ հաճախ լսում եմ, թե ինչպես են քեզ նախատում տրոյացիները: Բայց լավ է փութանք զորաբանակի մոտ:

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է: ՀԵԿՏՈՐԻ ԵՎ ԱՅՍՔՍԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

Շարադրված է քսա նամբոսի «Ելիական» գրեմի:

Սկեյան դարպասներից դուրս եկան միասին Հեկտորն ու Պարիսը: Ուրախացան տրոյացիները երկու հերոսներին տեսնելով: Նորից բաջալերվեցին նրանք, և կրկին սկսվեց կատաղի մարտը: Շատ հերոսներ տապալեցին Հեկտորը, Պարիսն ու Գլավրոսը: Հույներն սկսեցին նահանջել: Տեսավ այդ Զևսի լուսակն դուստրը և կատաղորեն դեպի սրբազան Տրոյա սլացավ: Օլիմպոսից սուրացող աստվածուհուն, դաշտի ծայրին, հարյուրամյա կաղնու մոտ, հանդիպեց Ապոլոն աստվածը: Նա Աթենաս դիցուհուն հարցրեց,

թե հույների սգնելու լի՛ շտապում արդյոք և համոզեց, որ օգնի իրեն գողար առլ պատերազմին: Համաձայնեց Աթենասը: Աստվածները կովին վերջ տալու համար վճռեցին Հեկտորին միտք ներշնչել, որ մենամարտի կանչի հույն հերոսներից ամենահույակալորին, նոր էին աստվածներն այդ վճիռը կայացրել, որ Պրիամոսի դուստակ որդի Հելենոսն անմիջապես կուհեց նրանց վճիռքս Մեա գնաց նա իր եղբորը՝ Հեկտորին, և խորհուրդ տվեց մենամարտի կանչել հույն հերոսներից մեկն ու մեկին: Հելենոսը հայտնեց Հեկտորին, որ ինքը լսել է երկնարևակների ձայնը, որը պատվիրում է այդպես վարվել, և որ ճակատագիրը չի վիճակել Հեկտորին զոհվել այդ մենամարտում:

Հեկտորն անմիջապես դադարեցրեց ճակատամարտը, կանգնեցրեց տրոյացիներին. նույնն արեց և Ադամեմնոնը: Հանդարտվեց ռազմի դաշտը և մարտից հոգնաբեկ ռազմիկները նստեցին գնահին: Աթենաս-Պալլասն ու Ապոլոնը զիշատիչ բազենների պես թռան նստեցին հարյուրամյա կաղնու վրա և սկսեցին հիացմունքով նայել տրոյացիների և հույների զորաբանակներին: Երբ բոլորը հանդարտվեցին, Հեկտորը բարձրաձայն մենամարտի հրավեր կարգաց հույն հերոսներից մեկին: Նա խոստացավ չպղծել սպանվածի մարմինը և չհանել վրայից զրահները. պահանջեց նաև, որ նույն խոստումը տա և հույն հերոսը, եթե հաղթի իրեն: Մինչև վերջ լսեցին հույները Հեկտորի մարտահրավերը, բայց բոլորը լուռ մնացին: Ոչ ոք չէր համարձակվում Հեկտորի դեմ դուրս գալ: Մովսի քամամբ լցվեց Մենելասը. նա ինքն էր ուղում մենամարտը Հեկտորի հետ, բայց Ադամեմնոնը ետ պահեց նրան: Ադամեմնոնը վախենում էր, թե եղբորը կսպանի Հեկտորը, որի հետ Ալլիլոն անգամ երկյուղ էր կրում մարտի բռնվել: Նախատինք կարգաց հույների ծերունի Նեստորը ևս Հենց որ Նեստորն աշտոնեց իր զայրալից խոսքը, իսկույն առաջ եկան ինը հերոս. Ադամեմնոն արբան, Դիոմեդեսը, երկու Այաքսները, Իդոմենեոսը, Մեգեոնեսը, Էվրիպիլոսը, Փոանտեսը և Ուլիսեսը, Նեստորի խորհրդով հերոսները վիճակ զցեցին: Երբ վիճակները զցեցին սաղավարտի մեջ, Նեստորը թափահարեց այն, որ մեկն ու մեկի վիճակը դուրս բնկնի սաղավարտից:

Հերոսներն աստվածներին խնդրում էին, որ վիճակն ընկնի Տեղաճեղ Այաքսին, Դիոմեդեսին կամ էլ Ադամեմնոնին: Վիճակն ընկավ Այաքսին: Ուրախացավ մեծագոր Տելամոնիզը: Հագավ իր

դրահները և առաջ ընթացավ դեպի մենամարտի վայրը: Նա քայլում էր պատերազմի աստված Արեսի նման՝ հսկայամարմին, հզոր ու ահավոր: Իր առջև նա բռնել էր պղնձակուռ, աշտարակի պես հսկայական վահանը, և ճոճում իր ծանրագին նիզակը: Տրոյացիք սոսկացին Այաքսին տեսնելով, երկչուղը պատեց նաև Հեկտորին: Ահեղ հայացքով իրար նայեցին մարտիկները: Առաջինը Հեկտորն արձակեց իր նիզակը: Զծակեց նա Այաքսի վահանը: Հետո Այաքսը նիզակը նետեց և ծակեց, թափ անցավ Հեկտորի վահանը: Թափ անցավ վահանը, Հեկտորի զրահը և պատեց քիտոնը: Մի կողմ ցատկելով միայն՝ ազատվեց Հեկտորը մահից: Ճանկեցին նիզակները հերոսները և կրկին հարձակվեցին իրար վրա: Հեկտորը նորից նիզակով հարվածեց Տելամոնիդի վահանին, բայց նիզակի ծայրը ծոցե միայն, Իսկ Այաքսը նորից ծակեց Հեկտորի վահանը ու թեթև վերք տվեց պարանոցին: Չընդհատեց մարտը Հեկտորը, նա ձեռքն առավ մի հսկայական քար և նետեց դեպի Այաքսի վահանը: զրնգաց վահանը պատող պղինձը, Իսկ Այաքսը ավելի ծանր քար հափշտակեց և այնպիսի ուժով նետեց Հեկտորի վահանի վրա, որ փշռեց վահանը և վիրավորեց Հեկտորի ոտքը: Գնտեսատարած վայր ընկավ Հեկտորը, բայց Ապոլոն աստվածն իսկույն ոտքի հանեց նրան:

Հափշտակեցին հերոսներն իրենց սրերը և սրախողխող կանիկներ իրար, եթե վրա չհասնեին մուկետիկները և նրանց միջև չպահանջեին գավազանները:

— Վերջացրե՛ք մարտը, հերոսներ,— գոչեցին մուկետիկները,— մենք տեսնում ենք, որ դուք հուժկու զորականներ եք, երկուսիդ էլ հավասարաչափ սիրում է Զևսը: Արդեն վրա է հասնում գիշերը, հարկավոր է հանգիստ առնել:

— Մուկետի՛կ,— դիմեց Այաքսը տրոյացիների մուկետիկին,— այն, ինչ դու ասացիր, Հեկտորը պիտի ասեր, չէ՞ որ նա՛ է մենամարտի հրավիրելը: Նա պատրաստ եմ վերջ տալ մենամարտին, եթե նա կամենա:

Իսկույն Հեկտորը պատասխանեց Այաքսին:—

— Օ՛հ, Տելամոնիդ, աստվածները քեզ շնորհել են և՛ հաղթ հասնի, և՛ ուժ, և՛ խելք, դու ամենափառապանծն ես հույն հերոսներից: Ավարտենք այսօր մենամարտը: Հետո կրկին կհանդիպենք մենք ուզմի դաշտում: Բայց բաժանվելիս պատիվ տանք իրար բնձաներով ի հուշ մեր մենամարտի: Թող հիշեն Տրոյայի և Հունաս-

տանի ուղմիկները, որ կավեցին հերոսները թշնամությամբ վառված իրար դեմ, բայց բաժանվեցին իրարից՝ սիրով ու հաշտությամբ՝ իրրև բարեկամներ:

Այս ասելով Հեկտորը հանեց իր արծաթազարդ սուրը և տվեց Այաքսին, Իսկ Այաքսը Հեկտորին ընծայեց իր թանկագին ծիրանի գոտին: Այսպես ավարտվեց հերոսների մենամարտը: Ուրախ էին տրոյացիները, որ անվնաս դուրս եկավ Հեկտորը մեծագոր Այաքսի հետ ունեցած մենամարտից և հանդիսավոր կերպով Տրոյա ուղեկցեցին նրան: Ծնծում էին նաև հույները, տեսնելով, թե ինչ հուժկու հերոս է Այաքս Տելամոնիդը: Իսկ Ազամմնոն արքան հացկիբույթ տվեց ի պատիվ Այաքսի և հրավիրեց բոլոր առաջնորդներին: Խրախճանք էին անում առաջնորդները մինչև երեկու:

Երբ խնշույլը վերջացավ, ծերունի Նեստորը հույն առաջնորդների ժողովում խորհուրդ տվեց մի օրով դադար տալ պատերազմին, որպեսզի թաղեն ընկած հերոսներին, և բանակատեղի ու նավերի շուրջը բարձր աշտարակներով պատ կանգնեցնեն, որի հետև պիտի պաշտպանվեն հույները, Իսկ պատի առաջ խոր փոս փորեն: Հավանություն տվին առաջնորդները Նեստորի առաջարկին և ցրվեցին իրենց վրանները:

Այդ ժամանակ խորհրդի էին նստել տրոյացիների առաջնորդները և: Այդտեղ Անտենորը խորհուրդ տվեց հույներին վերադարձնել չքնազագեղ Հեղինեին և հափշտակած գանձը: Բայց Պարիսը ոչ մի կերպ չհամաձայնեց վերադարձնել Հեղինեին, նա հավանություն տվեց միայն վերադարձնել Մենելասի գանձը, իր կողմից էլ ընծանք ավելացնելով: Պրիամոս արքան խորհուրդ տվեց հույներին մոտ բանքեր ուղարկել, որ պիտի հաղորդեր նրանց Պարիսի առաջարկը, Իսկ եթե հույները չհամաձայնեին այդ առաջարկին, ապա պատերազմը շարունակել այնքան, մինչև որ աստվածները վերջնական հաղթանակ շնորհեն կովոզներից մեկ կամ մյուս կողմին: Հավանություն տվին տրոյացիները Պրիամոսի առաջարկին: Մյուս առավոտ տրոյացիները բանքեր ուղարկեցին հույների մոտ, բայց նրանք մերժեցին Պարիսի առաջարկը, համաձայնեցին միայն մեկ օրով դադար տալ մարտին, որպեսզի ընկած ուղմիկներին աճյունները հողին հանձնեն:

Գնա արևելքը չէր շառագունել, որ տրոյացիներն ու հույներն սկսեցին ընկած ուղմիկների թաղման արարողությունը: Նրանք խաբույկների մոտ տարան դիակները և հրկիզեցին: Հետո հույները

մեկ որվա մեջ ճամբարի շուրջը բարձրադիր պարիսպ կանգնեց-
րին՝ աշտարակներով, և նրա երկայնքով խոր փոս փորեցին, նույ-
նիսկ Օլիմպական աստվածները զարմացան հույների այդ աշխա-
տանքի վրա: Միայն Պոսեյդոն աստվածը զայրացավ հույների դեմ,
որ պարիսպ բարձրացնելիս զոհեր չէին մատուցել աստվածներին:
Բայց շանթարձակ Ջևաջ հանգստացրեց Պոսեյդոնին: Նա խորհուրդ
տվեց հետագայում քանդել հույների կանգնեցրած պարիսպը և ծո-
վափը նորից ծածկել ավազով:

Իսկ հույները, աշխատանքն ավարտելուց հետո, սկսեցին
ընթրիքի պատրաստություն տեսնել: Այդ ժամանակ **Լեմնուսից** տեղ
հասան զինով բեռնավորված նավերը: Զվարթացան հույները, իս-
կույն գնեցին ողջ զինին և կերուխում սկսեցին ճամբարում: Ան-
վերջով շանցավ հույների խրախճանքը: Ամպրոպային Ջևաջ շանթ
ու որոտով մեծ շարիքներ էր գուշակում նրանց: Ստեպ-ստեպ սար-
սափը տիրում էր խրախճացողներին, և զինին թափվում էր նրանց
զավաթներից: Հույներից ոչ ոք չէր հանդգնում խմել առանց զինի
հեղելու ահեղադոր Ջևաջ պատվին: Վերջապես խրախճանքը վեր-
ջացավ և խոր քնի մեջ ընկզմվեց հունական ողջ ճամբարը:

ՏՐՈՑԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Շարադրված է ըստ Համեռոսի «Ելիական» պոեմի:

Վաղ առավոտյան, երբ երկինք ճախրեց արշալույսի աստվա-
ծուհի Հուսը, և շատագույն լույսը ցոլաց արևելքում, ամպրոպային
Ջևաջ լուսապայծառ Օլիմպոսի վրա հավաքեց աստվածներին և
ասաց.

— Ի՛նչ լեցեցեք, աստվածներից անմահ: Թող այսօր ձեզնից ոչ
մեկը չհանդգնի իջնել բարձրագահ Օլիմպոսից հույներին կամ
տրոյացիներին օգնելու: Անհնազանդին և Տարտարոսի խորունկ
անդունդը կգահավիժեմ, որպեսզի իմանա նա, թե որքան հզոր եմ
ես բոլոր անմահ աստվածներից: Եթե ուղում եք իմ ս՛ւժը փորձել,
ապա վերցրեք ոսկե մի շղթա, կախեցեք մինչև երկիր, կանգնեցեք
գետնին և փորձ արեք ներքև քաշել ինձ Օլիմպոսից: Իսկ ես մի
ձեռքով կբռնեմ այդ շղթան և նրանով վեր կհանեմ ձեզ բոլորիդ և
ողջ երկիրը՝ ծովերի հետ մեկտեղ:

Սարսափեցրեց աստվածներին Ջևաջ խոսքն ահավոր: Աթենաս
շքեղանի աչքան պատասխանեց Ջևաջին.

— Մ՛յ ձեծազորդ ամպրոպային, մենք բոլորս գիտենք, որ
անուհճան է ս՛ւժը քո՛, բայց մեզ բոլորիս վշտացնում է հույների
վճակը: Մի՛թե կործանման են դատապարտված նրանք:

— Գուտար իմ, — պատասխանեց Ջևաջ, — մտադիր չեմ ես
կործանել բոլոր հույներին:

Այս ասելով, Ջևաջ իր երկանվին լծեց ոսկեբաշ նծույզները,
ձեռքն առավ ապկեհյուս մտրակը, հագավ ոսկեղին զգեստները և
նստեց երկանվին: Արագաթափ քշեց նա նծույզները, և սուրացին
նրանք երկրի և երկնի միջով զեպի բարձրաբերձ Իգա՛ լեռը: Այն-
տեղ նստեց նա ամենաբարձր զագաթին և սկսեց զիտել, թե ինչ-
պես են մարտի պատրաստվում հույները և Տրոյայի քաղաքացիք:

Գալս զորս եկան զորաբանակները և հասցնեց իրար բախ-
վելի: Երկից սկիզբ առավ սոսկալի մարտը: Վրա հասավ կեսօրը:
Ջևաջ ձեռքն առավ սպիտակ կշեռքը և նրա նժարների մեջ մի-մի
վճակ դրեց տրոյացիների և հույների համար: Մինչև երկինք
բարձրացավ տրոյացիների նժարը՝ հաշողության խոստում անե-
լով, իսկ հույների նժարը իջավ մինչև երկիր, կործանում սպառ-
նալով նրանցից շատ շատերին: Թնդաց որոտը մեծազոր Ջևաջ Իդա
բնուն զագաթից, և նա բոցեղեն շանթեր թափեց հունական զորա-
բանակի վրա: Մտվումը գտտեց զորականներին: Բոլորը փախուս-
տի մտածեցին, շտապելով ծածկվել ճամբարը շրջափակող պա-
րսպի ներսում, Թագմադաշտում մնաց միայն Նեստորը: Նրա
կրթվածներից մեկը վերջ էր առացել Գարիսի նետից և ծառս-ծառս
էր լինում: Եւր շանթ էր Նեստորը կարել ձիու լծասարքը՝ չէր
հարկում այդ նրան: Արդեն նրան էր մոտենում Հեկտորն իր եր-
կանով: Վերջանվոր ծերունի Նեստորը, եթե նրան օգնության
չտապեր Գիոմեդեսը: Նա Ողիսեսին էլ օգնության կանչեց, բայց
Ողիսեսը չլսեց նրա կանչը: Իր երկանվի վրա առավ Գիոմեդեսը
Նեստորին և սլացավ Հեկտորին ընդառաջ: Գիոմեդեսը նստեց նի-
զակը զեպի Հեկտորը, բայց վրիպեց. նիզակը դիպավ Հեկտորի
կառավարին և մահացու վերք տվեց նրան: Մի կողմ նետվեցին Հեկ-
տորի նծույզները: Կառավարի փոխարեն երկանվի վրա թռավ հե-
րոս Արքեպատվեմտը: Գուցեև կանգ առնեին խուճապահար հույ-

¹ Ան Փոքր Ասիայում, Տրոյայից արևելք, հարավ-արևմտյան Փոլուզիայում:

Ներք՝ տեսնելով Դիոմեդեսի սխրագործությունը: Բայց Ջևաբ բոցափայլ շանթեր նետեց Դիոմեդեսի նժույզների առջև: Բռնկեց սասկալի բոցով շանթը և նժույզները դեպի հետ նետվեցին: Նետտորն սկսեց համոզել Դիոմեդեսին՝ թողնել ուղամի դաշտը, քանի որ նրան չէ, որ հաղթանակ է գուշակում Ջևաբ: Որքան էլ Դիոմեդեսն ուզում էր շարունակել մարտը, բայց հնազանդեց նետաորին և երկանիվն ուղղեց դեպի հույների փախստական ամբոխը: Իսկ տրոյացիները սոսկալի ազմուկ-աղաղակ բարձրացրին և նետերի տարափ թափեցին հույների վրա: Մաղրեց ու ծանակեց Հեկտորը փախուստի մատնված Դիոմեդեսին: Երեք անգամ ուղեց վերադառնալ Դիոմեդեսը, և երեք անգամ էլ դղրդաց Ջևաբ ահավոր որոտը:

Հասկացավ Հեկտորը, որ Ջևան իր ահեղագոռ որոտով հաղթանակ է գուշակում տրոյացիներին: Նա հույներին հետապնդելու խրախույս կարդաց և սպառնաց ճամբար խուժելուն պես այրել նավերը: Նստազույսն զայրացավ Հերան լսելով Հեկտորի սպառնալիքները: Նա խնդրեց երկրասասան Պոսեյդոնն աստծուն օգնել հույներին, բայց հրաժարվեց ծովերի մեծագոր տիրակալը:

Իսկ մարտը ետում էր հույների ճամբարը շրջափակող պարբուսպի մոտ: Հերան հույներին խրախուսելու միտք ներշնչեց Ազամեմնոնին: Կանգնելով Ողիսեսի նավի վրա, Ազամեմնոնը արիարար պաշտպանվելու կոչ արեց ուղամիկներին: Ջևաբն էլ աչերս կարդաց Ազամեմնոնը, որ օգնություն ուզարկի և թույլ չտա, որ հույները կործանվեն տրոյացիների ձեռքով: Եարժվեց գուժը Ջևաբ և կանխանշան ուզարկեց հույներին: Ջևաբ զոհասեղանի վերևում ճախրեց մի արծիվ և զոհասեղանին դրեց մի եղջնուր, որին բռնել էր ճիրաններով: Այդ կանխանշանը տեսնելուն պես, ոգի առան հույները և ետ մղեցին տրոյացիներին: Բուրդից խիղախաբար կովում էր Դիոմեդես արքան: Տրոյացի շատ հերոսների տապալեց նա: Քաջարար մարտնշում էին մյուս հույն հերոսները ևս, Բայց աչքի էր ընկնում հատկապես Տելամոնիդ Այաբսի եղբայր Տեկրոսը: Իր նետերով նա մեկը մյուսի հետևից տապալում էր տրոյացի բազում հերոսների: Նետահարեց նա Պրիամոսի որդուն ևս՝ ցեղազն Պորգիփոնին: Եվ ինչպես կակաչն է իր կարմիր գլխիկը խոնարհում թերթիկներին իջած ցողի ծանրության տակ, այդպես էլ Պորգիփոնը հակեց իր սաղավարտով պսակած գլուխը և դեպի տապալվեց: Սպանեց Տեկրոսը Հեկտորի կառավարին ևս՝ Արքեպտուլեմոսին: Եռաց զայրույթից Հեկտորը և հարձակվեց Տեկրոսի վրա:

Վեցը ավեց Հեկտորը նրա ուսին՝ պարանոցի մոտ: Հեծծած Տեկրոսը: Կապաներ Հեկտորը նրան, եթե Այաբսը չծածկեր եղբորը վաճառով և չհրամայեր ժառանգորին նավերի մոտ տանել վերավորին:

Կրկին տրոյացիների քաջությունը գրգռեց Ջևաբ: Մինչև նաժերը ետ մղեցին հույներին տրոյացիները: Ահեղորեն այս ու այն կողմն էր նետվում շարքերի մեջ Հեկտորը: Գթաց Հերան հույներին, Աթենասին խնդրեց օգնության հասնել նրանց: Համաձայնեց Աթենասը: Հազավ իր զրահները և Հերայի հետ մեկտեղ երկանվով սլացան լուսապայծառ Օլիմպոսից: Բարձրարժեք Իդայից նշմարեց Ջևաբ սուրացող գիցուհիներին: Սաստիկ զայրացած՝ նա աստվածների բանբերուհի Իրիսին ուղարկեց կասեցնելու նրանց՝ սպառնալով իր ցամաքը: Վախեցան Ջևաբ զայրույթից Հերա և Աթենաս: Գիցուհիները և վշտացած Օլիմպոս վերադարձան, Ետտով Օլիմպոս վերադարձավ նաև ամբողջային Ջևաբ: Ջևաբ այն հարցին, թե ի՞նչն է այդպես տրոմեցրել աստվածուհիներին, և Ջևաբ սպառնալիքներին, Հերան պատասխան ավեց, թե իրենք վշտանում են հույների համար: Ջևան ասաց Հերային, թե տրոյացիները պիտի հաղթեն այնքան ժամանակ, մինչև որ Ազամեմնոնը չհաշտվի Աթիլեսի հետ և հարուստ ընծաներ շուղարկի նրան ի հատուցումն այն վերավորանքի, որ հասցրել էր նրան:

Թեքվեց արևը: Գիշերն իր քողը սփռեց երկրի վրա: Դադարեց արդունակ մարտը: Հեկտորը խորհուրդ ավեց գիշերը չվերադառնալ սրբազան Տրոյա: Նրանք գիշերելու մնացին ուղամի դաշտում, իսկ քաղաքը պահպանել պատվիրեցին պատանիներին ու ծերերին: Հեկտորը հույս ուներ, որ հաջորդ օրը կհաջողվի իրեն վերջնականապես հաղթել հույներին և քշել Տրոյայից: Բազմաթիվ խարույկներ վառեցին տրոյացիները դաշտում: Աստղերի նման փայլափողում էին այդ խարույկները գիշերվա խավարի մեջ:

ԱԿԱՄԵՄՆՈՆԸ ՓՈՐՁՈՒՄ Է ՀԱՇՏՎԵԼ ԱՔԻՎԵՍԻ ՀՆՏ

Ետագրված է ըստ Հոմերոսի «Իլիական» պոեմի:

Ազամեմնոնը, տրոյացիների հաղթանակից վշտահար, մունկալիկեց ուղարկեց առաջնորդներին խորհրդի կանչելու Հավարիլեքին առաջնորդները, և Ազամեմնոնը վշտացած սկսեց պատմել, որ այժմ արդեն ստիպված են Տրոյայից Հունաստան փախչել:

որովհետև, ըստ երևույթին, այդպես է հաճելի Ձևին: Բայց Գիտմեղեքը ցատամանակից խոսքով առարկեց Ազամեմնոնին և ասաց, որ եթե նա ուզում է, կարող է մենակ Գեոանալ Տրոյայից, իսկ մնացած առաջնորդները կմնան և կմարտնչեն այնքան, մինչև որ նվաճեն Տրոյան: Նեստորը ևս խորհուրդ չտվեց փախչել: Մերունին Ազամեմնոնին խորհուրդ տվեց խնջույք սարքել և այնտեղ քննության առնել իրենց անելիքը, իսկ ճամբարը հսկելու համար պահակներ նշանակել:

Կատարեց Ազամեմնոնը Նեստորի խորհուրդը: Յոթ հարյուր պատանի, յոթ առաջնորդի զխավորությամբ, գնացին հույների ճամբարը պահպանելու: Մյուս առաջնորդները մնացին Ազամեմնոնի վրանում: Կերուխումի ժամանակ Նեստորը Ազամեմնոնին խորհուրդ տվեց հաշտվել Աքիլլեսի հետ: Ականջ դրեց Ազամեմնոնը Նեստորին: Նա առաջնորդներին հայտարարեց, թե մեծահարուստ ընծաներ կտա Աքիլլեսին, կվերադարձնի Բրիսեիսին, իսկ երբ հաղթանակով հայրենիք վերադառնան՝ Աքիլլեսին կնուսթյան կտա իր դստերից մեկին և իբրև օժիտ՝ բազում հարուստ քաղաքներ: Հաժանություն տվին առաջնորդները Ազամեմնոնի վճռին և որոշեցին բանակցությունների համար Աքիլլեսի վրանն ուղարկել Այաքս Տելամոնիդին, Ոդիսևսին և Փենիքսին և նրանց հետ էլ՝ րիբատես և Գոդիս մունեստիկներին: Այս հերոսներն առանձնապես սիրելի էին Աքիլլեսին: Շատ հանձնարարություններ տվեց Նեստորն այդ դեսպաններին:

Երբ Ազամեմնոնի դեսպանները եկան Աքիլլեսի մոտ, այդ միջոցին նա քնար էր նվագում և հերոսների փառքը զովերգում: Աքիլլեսի մոտ նստած էր նրա ընկերը՝ Պատրոկլեսը: Սիրալիր քնդուներություն ցույց տվեց հերոսներին Աքիլլեսը և ճոխ հացկերույթ տվեց նրանց: Երբ բոլորը կշտացան, Ոդիսևսը դիմեց Պիլեսի որդուն և սկսեց համոզել նրան, որ հաշտվի Ազամեմնոնի հետ: Պատմեց Ոդիսևսը, թե ինչպես են ճնշում հույներին տրոյացիները՝ Հեկտորի զխավորությամբ, թվեց Ոդիսևսը և այն ընծաները, որ խոստացել էր Ազամեմնոնն՝ ի նշան հաշտության: Ոդիսևսը հիշեցրեց Աքիլլեսին, թե արշավանքի ճամփելիս, ինչպես էր խրատում որդուն Պիլեսը, ինչպես խորհուրդ էր տալիս խուսափել զրժատություններից, Բայց Աքիլլեսը հրաժարվեց հաշտություն կնքել Միկենեի արքայի հետ: Նա շէր կարող մոռանալ Ազամեմնոնի հասցրած վիրավորանքը: Աքիլլեսն ասաց, որ կհրաժարվեր հաշտ-

վել Ազամեմնոնի հետ նույնիսկ այն դեպքում, երբ նա խոստանար եգիպտական Թերբի հարստության հավասար ընծաներ տալ իրեն: Անդրդվելի էր Աքիլլեսը. նա նույնիսկ սպառնում էր դեպի Փոնոսիս նավել: Բայց Փենիքսը, որը ծանր վիշտ էր ապրում հույների ճակատագրի համար, շարունակեց համոզել, որ հաշտվի Աքիլլեսը: Նա աղաչեց չվարվել այնպես, ինչպես վարվել էր մի ժամանակ Մելեագրոսը, երբ կուրեաները և էտոլիացիները մարտնչում էին իրար դեմ: Բայց պատասխան չտվեց Փենիքսին Աքիլլեսը: Այդ ժամանակ Այաքս Տելամոնիդը դիմեց Ոդիսևսին՝ առաջարկ անելով իսկույն թողնել Աքիլլեսի վրանը և զնալ հայտնել առաջնորդներին Աքիլլեսի պատասխանը: Աքիլլեսին համոզելու մի վերջին փորձ արեց Այաքսը. կրկին անդրդվելի մնաց Աքիլլեսը և ասաց միայն, թե Հեկտորի գեմ կմարտնչի այն ժամանակ միայն, երբ հույների նավերը հրո ճարակ անելուց հետո: Նա կհասնի իր նավերին ու վրանին ևս:

Անխոս հեռացան հերոսները, իսկ Փենիքսը մնաց Աքիլլեսի մոտ: Ազամեմնոնի մոտ վերադարձան Այաքսն ու Ոդիսևսը և հայտնեցին առաջնորդներին, թե ի՞նչ պատասխան տվեց Աքիլլեսը: Երբ լուսնի լույսը մեջ մինչև վերջը լսեցին առաջնորդները: Վերջապես հերոս Գիոմեղեքը խորհուրդ տվեց հանգիստ թողնել Աքիլլեսին, որովհետև իր խոստացած ընծաներով Ազամեմնոնն ավելի է զբոսել նրա հպարտությունը: Գիոմեղեքն առաջարկեց զինիներով և ռաեմիքներով կշտապինջ հազնեալ և պառկել քնելու, որ վաղվա օրը նորից սկսեն արյունահեղ մարտը:

**ՌԴԻՍԵՎՍՆ ՈՒ ԳԻՈՄԵԴԵՍԸ ԳՆՈՒՄ ԵՆ ԼՐՏԵՍԵԼՈՒ
ՏՐՈՅԱՅԻՆԵՐԻ ՃԱՄԲԱՐԸ: ՀՌԵՍՈՍԻ ՆՃՈՒՅԳՆԵՐԸ**

Շտաղգված է ըստ Հովհաննիս Եփեսացու պոեմի:

Ետը քնի մեջ ընկղմվեց հունական ողջ ճամբարը: Ազամեմնոնը միայն շէր քնած: Մանր հառաչում էր նա իր մահճում. բազում մտալլ մտքեր տանջում էին արքային: Երբ նայում էր տրոյացիների ճամբարի շուրջը վառվող խարույկների կողմը՝ զարմանում էր, որ այնտեղից լսվում էին սրնգի նվազ ու զվարթ ձայներ: Իսկ երբ նայում էր հունական ճամբարին՝ վշտաբեկ իր մազերն էր փետում, և ցավով ճմլվում էր նրա սիրտը:

Վերջապես վեր կացավ մահճից Ատրևսի որդին, հագնվեց,

վրան զցեց առլուծի մորթին, ձեռքն առավ նիզաղը, և զնաց Նևս տորին փնարելու։ Առլուծ էր խորհուրդ անել Պիլոսի արքայի հետ, թե ինչպես հույների կործանման առաջն առնեն։ Մենելատսին հանդիպեց Ագամեմնոնը։ Քունը հետև էր փախել Մենելատսի աշքերից ևս, նրան էլ մեծապես հուզում էր շարազեա ճակատագիրը այն մարդկանց, սվքեր հանուն իրեն՝ Մենելատսի, եկել էին Տրոյայի պարիսպների տակ կռվելու։ Եղբայրները վճռեցին խորհրդի հավաքել առաջնորդներին։ Մենելատսը զնաց հերոսներին կանչելու, իսկ Ագամեմնոնը՝ Նեստորի մաս։ Նեստորի ականջին հասավ մոտեցող Ագամեմնոնի քայլերի ձայնը, և զիշերվա խավարի մեջ շնանաչելով նրան, Նեստորը ձայնեց, որ զգուշանա և ծածուկ մոտ չգա իրեն։ Իր անունը տվեց Ագամեմնոնը, մոտեցավ Նեստորին, պատմեց իրեն տանջող մաքերի մասին և խնդրեց միասին խորհրդի գնալ։ Իսկույն վեր ելավ տեղից Նեստորը և Ագամեմնոնի հետ միասին զնացին հերոսներին հավաքելու։ Կանչեցին Ողիսևսին, ապա և Դիոմեդեսին, որ քնել էր վահանը գլխի տակ դրած, և նիզակը կողքին՝ գետնի մեջ դամած։ Հերոսներին հավաքեցին նրանք և զնացին պահակների մաս, որոնք աշաւուրը հակում էին։ Պահակախումբը նստել էր հալացքը գիշերվա խավարին հասած, ականջները ձայնի՝ թե չե՞ն հարձակվում արոյացիներն արդյոք։ Առաջնորդներն անցան խոր փոսի այն կողմը և նստեցին ճամբարի շուրջը ձգվող պարսպի առջև փռված դաշտում։ Այդ ժամանակ Նեստորն առաջարկեց լրտեսներ ուղարկել արոյական ճամբարը՝ իմանալու, թե ի՞նչ են վճռել տրոյացիները՝ վերստի՞ն հարձակվել հույների վրա, թե՞ վերադառնալ քաղաք։ Անմիջապես հանձն առավ այդ վտանգավոր գործը Դիոմեդեսը և առաջարկեց հերոսներից մեկին ու մեկին գնալ իր հետ։ Շատ հերոսներ համաձայնեցին գնալ Դիոմեդեսի հետ։ Ագամեմնոնն առաջարկեց, որ Դիոմեդեսն ընկեր ընտրի իր համար՝ ո՞ւմ կամենում է։ Դիոմեդեսն ընտրեց Ողիսևսին, Աթենաս-Պալլասի սիրելիին։ Համաձայն էր նա, որ բոցավառ կրակի միջից նույնիսկ անվնաս կվերադառնան նրանք, այնքան խորամանկն ու հնարամիտն էր Ողիսևսը։ Զինավառվեցին Դիոմեդեսն ու Ողիսևսը։ Զենքեր տվին նրանց հավաքված առաջնորդները, որովհետև նրանք անգնն էին եկել խորհրդի։

Նույն գիշերը, երբ հույները լրտեսներ էին ուղարկում արոյացիների ճամբարը, տրոյացիները ևս լրտես ուղարկեցին իմանալու, թե լա՞վ է պահպանված արդյոք հունական ճամբարը։ Հանձն առավ

լրտեսելու գնալ Դուրոնը, էվմեդասի որդին, որ հռչակված էր իր արագավազությամբ։ Նա վճռեց գաղտագողի մոտենալ հունական նավերին և ականջ դնել, թե ի՞նչ են խոսում առաջնորդները խորհրդում։ Զինքերն առավ Դուրոնը, վրան զցեց գայլենին և զնաց զեպի հույների բանակատեղին։ Շուտով նկատեցին Դուրոնին Դիոմեդեսն ու Ողիսևսը։ Նրանք պառկեցին գետնին և թույլ տվին, որ անցնի իրենց կողքով, իսկ հետո՝ ընկան հետեից, ինչպես նապաստակին կամ այծյամին հալածող շներ։

— Կա՛ց, — գոչեց Դիոմեդեսը, — թե չէ նիզակովս կշամփրեմ քեզ և չե՞ս ազատվի մահից։

Դուրոնի վրա նետեց նիզակը Դիոմեդեսը, բայց այնպես, որ թույլ-անցնի ուրի վրայով։ Վախեցավ Դուրոնը և սարսափից գույնը պսամ՝ մեխվեց սեղում։ Քռեցքին նրան Դիոմեդեսն ու Ողիսևսը։ Սկսեց պազատագին խնդրել Դուրոնը, որ խնայեն իրեն։ Հարցուփորձ արին Դուրոնին հերոսները, թե ի՞նչու էր գնում զեպի հույների ճամբարը, ո՞վ է ուղարկել նրան, և ինչպե՞ս են դատավորված ճամբարում արոյացիներն ու նրանց դաշնակիցները։ Հուսալով, թե կխնայեն իրեն՝ ամեն ինչ պատմեց Դուրոնը։ Նա ցույց տվեց նաև, թե որտեղ է կանգնած վերջերս ժամանած թրակիացիներն իրենց այցու Հեկտորի հետ, որ զարմանահարաշ ձիեր ու սպիտակ գրահներ ունեւր։ Բայց լրտեսեցին Դուրոնին Դիոմեդեսն ու Ողիսևսը, դանակի մի հարվածով Դիոմեդեսը կտրեց նրա գլուխը։ Հանեցին հերոսները Դուրոնի սաղավարտը և գայլենին, վերցրին զենքերը ևս։ Ողիսևսն այնպես զրեց Դուրոնի զենքերը, որ ետ գնալիս վերցնեն Հեկտորը, և նրկու հերոսները ճանապարհ ընկան զեպի թրակիացիներին ճամբարը։

Հերոսները գողունք մոտ գնացին այն տեղին, ուր իր մարտիկների մեջ, նծույզների կողքին, պառկած էր Հեկտոս արքան։ Մեկաշտապան սլոտարների ու այծերի հոտի վրա հարձակվող կատաղի առլուծի նման քնած թրակիացիների վրա նետվեց Դիոմեդեսը։ Տասներկու թրակիացի ուղամիկ կոտորեց նա։ Իսկ Ողիսևսը մի կողմ էր բարձր սպանվածների դիակները, որ ճանապարհ բացի միևրի համար։ Տասներեքերորդը Հեկտոս արքան էր, որին սպանեց Դիոմեդեսը։ Ողիսևսն արձակեց Հեկտոսի նծույզները և գորս հանց ճամբարից։ Դիոմեդեսն ուղում էր դուրս հանել երկամիջև ու սպիտակ գրահները ևս, բայց Աթենաս-Պալլաս գիցուհին, որ հայտնվել էր Դիոմեդեսին, ասաց.

— Խորհիր հույների ճամբարը վերադառնալու մասին, որդիդ Տիդեաի ժամն է ետ դառնալու: Այլապես փախուստի պիտի դիմես, եթե քեզ թշնամի երկնաբնականներից մեկը արթնացնի քնած տրոյացիներին:

Կեսց դիցուհու խորհուրդը Դիոմեդեսը և թուփ Ղոնեսոսի նժույզներից մեկի մեջքին: Ողիսևսն էլ թուփ մյուսի վրա, և սրընթաց արշավեցին դեպի հունական ճամբարը:

Ապուլոն աստվածը տեսավ, թե ինչպես օգնեց Աթենաս-Պալլասը Դիոմեդեսին և Ողիսևսին: Սուրաց նա դեպի տրոյացիների ճամբարը և արթնացրեց հերոս Հիպոկոոնին՝ Ղոնեսոսի եղբորորդուն: Ոտքի թուփ Հիպոկոոնը անկողնուց և տեսավ, որ շկան նժույզները: Նա ձայն ավեց Ղոնեսոսին, բայց ոչ ոք պատասխան չտվեց: Տազնապ ընկավ տրոյացիների ճամբարը: Հավաքվածները սարսափահար նայում էին Դիոմեդեսի և Ողիսևսի արածին: Իսկ նրանք, ճանապարհին հափշտակելով Դոլոնի զենքերը, վերադարձան այնտեղ, ուր նրանց սպասում էին հույն առաջնորդները: Ողիսևսը պատմեց, թե ինչպես են բռնել Դոլոնին, ինչպես է Դիոմեդեսն սպանել Ղոնեսոս արքային և տասներկու թրակիական հուշակավոր հերոսներին և թե ինչպես են հափշտակել նժույզները: Փառաբանեցին Դիոմեդես և Ողիսևս հերոսներին: Ցնծացին բոլոր հույները, երբ իմացան նրանց սխրագործության մասին: Ղոնեսոսի նժույզները կապեցին Դիոմեդեսի վրանի մոտ, իսկ Դոլոնի զենքերը Ողիսևսը տարավ իր նավը:

ՀԱՎԱՏԱՄԱՐՏ ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԻ ՄԱՏ

Շարադրված է ըստ Համեսոսի «Ելիական» պոեմի:

Դեռ նոր էր արևելքը շառագունել ծագող այգաբացի լույսով, երբ Ջևար թշնամության աստվածուհուն հույների ճամբարն ուղարկեց: Կանգնեց աստվածուհին Ողիսևսի հսկայական նավի վրա, և բարձրաձայն ու սոսկալի գոչմամբ բոլոր զորականներին մարտեցնելու անզուսպ ցանկությունով տոգորեց: Բարձրաձայն մարտի հրահրեց հերոսներին Ազամեմնոն արքան ևս, որ հագել էր իր չքեղաչուք գրահները և ճոճում էր հսկայական նիզակը: Հետոտն մարտի նետվեցին հույն հերոսները: Քաջաբար դիմազրավում էին տրոյացիները, բայց իր սխրագործություններով նրանց բոլորին

զերազանցում էր Հեկտորը: Կատաղած գայլերի նման այս ու այն կողմն էին սուրում զորականները ուղմի դաշտում: Թշնամության աստվածուհին զվարճանում էր նայելով արյունահեղ մարտին: Իսկ աստվածները հեռացել էին մարտից և հավաքվել պայծառ Օլիմպոսի իրենց ապարանքներում և տրտնջում էին, որ Ջևան օգնում է տրոյացիներին: Ջևար, սակայն, հրճվանքով էր նայում ճակատամարտին: Այդ մարտում առավել մոլեղնած կովում էր Ազամեմնոնը: Շատ հերոսների դիտապաստ տապալեց նա իր ծանրազին նիզակով: Սպանեց նաև Պրիամոսի երկու որդիներին՝ Իսոսին և Անտիֆոսին: Միասին, մի երկանվի վրա կանգնած, մարտնչում էին նրանք թշնամու դեմ: Վազուց չէ, ինչ Ազամեմնոնը տեսել էր նրանց հունական ճամբարում, ուր բերել էր նրանց Աքիլլևսը՝ բռնելով Իդա լեռան լանջերին: Օգնության չհասան տրոյացիները Պրիամոսի որդիներին, և զոհվեցին նրանք: Անտիմարոսի երկու զավակներին էլ սպանեց Ազամեմնոնը: Ջուր էին աղաչում նրանք Միկենեի արքային՝ խնայել իրենց: Ազամեմնոնը վրեժխնդիր եղավ նրանց հորից, քանի որ, Պարիսից կաշառված, նա խորհուրդ էր տվել սպանել Մենելաոսին, որն իբրև դեսպան Տրոյա էր գնացել: Նրանց սպանելուց հետո Ազամեմնոնը մխրճվեց ճակատամարտի ամենանոտն տեղը: Նման այն կրակին, որ լափում է անտառը և ծառերը խորտակում բոցեղեն հողմով, այնպես էլ Ատրևսի որդին էր մեկը մյուսի հետևից խորտակում տրոյական հերոսներին: Թաղմի դաշտում որստանայն դրոզոցով սլանում էին երկանիվները, որտեղից Ազամեմնոնը ցած էր գլորում նրանց վրա կանգնած հերոսներին, և անշնչացած ընկնում էին նրանք՝ փոշեթափավ: Երեսուցին տրոյացիների շարքերը ու խուճապահար փախուստի մատնեղենքն նրանք, բայց Սկեյան դարպասների մոտ կանգ առան կրկին:

Տեսավ տրոյացիների փախուստը ամպրոպային Ջևար և Իրիս աստվածուհուն պատվիրեց Հեկտորի մոտ սլանալ և հայտնել, որ նա մարտի ելնի այն ժամանակ, երբ կտեսնի, որ Ազամեմնոնը վիրավոր է արդեն, և որ Ջևար մեծագույն ուժ կտա նրան, և նա մինչև նավերը կբռնի հույներին: Անհապաղ կատարեց Իրիսը Ջևար հրամանը: Յած թուփ երկանվից Հեկտորը և խրախուսեց տրոյացիներին: Մինչ այդ Ազամեմնոնը, առաջվա նման, մեկը մյուսի հետևից կտորում էր տրոյական հերոսներին: Նա սպանեց Անտեսոսի որդուն՝ Իփիդամանտոսին: Անտեսոսի ավագ որդին՝ Կոոնը,

կամեցավ վրեժխնդիր լինել Եզրոր Համար: Նա նիզակով վերք հասցրեց Ազամեմնոնի բազկին՝ արժանկի մտա, իսկ Միկենեի արքան սրի հարվածով կտրեց նրա գլուխը, և Անտենարի ավազ որդին էլ անշնչացած ընկավ եզրոր զիակի վրաս Բայց այլևս անկարող էր մարտնչել Ազամեմնոնը, սոսկալի ցավում էր վերքը և նա թողեց ռազմի դաշտը:

Երբ տեսավ, որ Ազամեմնոնը հեռանում էր իր երկանվով, Հեկտորը բարձրաձայն սկսեց խրախուսել ռազմիկներին և ի՛նքը նետովեց մարտի մեջ: Ծառ հերոսների սպանեց նա: Կործանում էր սպանում հույներին: Բայց Ոգիսևան օգնության կանչեց Դիոմեդեսին և երկու հերոսները զորեղ հարվածով նա մղեցին տրոյացիների բուռն գրոհը: Տեսնելով մտտեցող Հեկտորին, Դիոմեդեսը նետեց նիզակը, որ գիպավ Հեկտորի սաղավարտին, Ապոլոն աստվածը թույլ շովեց, որ նիզակը ջախջախի սաղավարտը, ֆրկեց Հեկտորին անխուսափելի մահից, բայց ուժգին հարվածից ուշակարույս վայր ընկավ Հեկտորը: Մինչ Դիոմեդեսը զորաշարքերի միջով գնում էր նիզակը վերցնելու, ուշքի եկավ Հեկտորը և երկանվի վրա թռչելով՝ խույս տվեց մահից: Սոսկալի զայրույթը համակեց Դիոմեդեսին, նրան էլի շահաղվեց սպանել Հեկտորին: Ծուճեց նիզակը Դիոմեդեսը և մահացու հարված տվեց տրոյական հերոսներից մեկին: Կասցավ Դիոմեդեսը, որ հանի սպանված հերոսի զրահները. տեսավ այդ Պարիսը, և նետով վիրք հասցրեց Դիոմեդեսին: Յնծում էր Պարիսը, Ոգիսևար պատասպարեց Դիոմեդեսին վահանով և գուրս քաշեց նետը վերքից, բայց կովել այլևս չէր կարող նա, և լքեց ռազմի դաշտը:

Այդ պահին Ոգիսևան շրջապատեցին տրոյացիները, ինչպես շներն են շրջապատում անտառից դուրս եկած առյուծին: Կանգնել է առյուծը և ահեղարար ատամներն է կափկափում: Այդպես էլ Ոգիսևան էր կանգնել և նիզակով պաշտպանվում էր վրան խոյացող տրոյացիներին: Տրոյացի շատ հերոսներ այստեղ մահ գտան Ոգիսևաի նիզակից: Խոցեց նա Բաբուպին՝ Սթրոս արքայի եղբորը: Եզրոր վրեժը լուծելու համար նիզակով հարվածեց նա Ոգիսևաի վահանին, թափ անցավ նիզակը վահանից և վերք տվեց Ոգիսևաի կողմին: Բայց վիրավոր էլ, Ոգիսևար փախուստի մատնեց Սթրոսին և հենց փախչելիս էլ նիզակով հարվածեց թիկունքին ու սպանեց նրան: Ապա Ոգիսևան իր վերքից գուրս քաշեց նիզակը, հորդեց վերքից սաք արյունը: Տրոյացիները տեսան, որ Ոգիսևար վիրա-

վոր է, հարձակվեցին նրա վրա: Բարձրաձայն օգնության կանչեց Իթակեի արքան, նրան օգնության շտապեց Այաքս Տելամոնիդը և իր աշտարականման հսկա վահանով պատասպարեց Ոգիսևան, դուրս հանեց ճակատամարտի ամենաեռուն տեղից և տարավ դեպի երկանվոր: Ոգիսևան էլ լքեց մարտը: Այժմ մարտի նետովեց Այաքսը և իր նիզակով սկսեց շամփրել տրոյացիներին: Այդ ժամանակ Պարիսը նետով վերք հասցրեց Մաքսոն հերոսի աչ ուսին: Իդեմենոսի խնդրանոց, նեստորը վիրավորին հույների ճամբարը տարավ: Հեկտորի կառավար Կերքիոնը տեսավ, թե ինչպես է Այաքսը նեղում տրոյական զորքին և հայտնեց Հեկտորին: Հեկտորը այնտեղ սուրաց օգնության: Իսկ Ջևսը երկյուղ ներշնչեց Այաքսին: Իր հեկայական վահանն ուսին առած, քայլ առ քայլ նահանջում էր Այաքսը: Նա ետ էր քաշվում առյուծի նման, որին հետապնդում են շներն ու անվեհեր հովիվները:

Դանդաղաքայլ նահանջում էր նա և, ստեպ-ստեպ կանգ առնելով ու վահանով պատասպարվելով, կասեցնում էր իրեն նեղող տրոյացիներին: Տեսավ նահանջող Այաքսին հերոս էվրիպիլոսը և փութաց օգնության: Բայց նրան էլ Պարիսը վիրավորեց նետով և էվրիպիլոսն էլ ստիպված եղավ լքել ռազմի դաշտը: Իսկ Այաքսին օգնության շտապեցին հույները և նրանց օգնությամբ անվաս նահանջեց Տելամոնի որդին:

Ճամբարում, նազախելն կանգնած, Աքիլեսը հետևում էր հակառակադրին: Երբ տեսավ, որ նեստորը մի վիրավոր հերոս է բերում, Աքիլեսը կանչեց իր ընկերոջը՝ Պատրոկլեսին, խնդրեց, որ գնա նեստորի մոտ և իմանա, թե Մաքսոնը չէ՞ արդյոք վիրավորը: Ինչի նեստորի վրանք փութաց Աքիլեսի ընկերը: Իրոք որ Պատրոկլեսն աչտեղ տեսավ վիրավոր Մաքսոնին, որի համար ըմպելիք էին պատրաստում: Երբ Պատրոկլեսին տեսավ Պիլոսի արքան, խնդրեց նստել իր հետ, բայց նա մերժեց, որովհետև շտապում էր ետ գնալ ընկերոջ մոտ: Նեստորը Պատրոկլեսին պատմեց, թե տրոյացիներն ինչպես են նեղում հույներին, թե հերոսներից ով է վիրավոր և խնդրեց, որ օգնի հույներին: Նա խորհուրդ տվեց Պատրոկլեսին Աքիլեսին խնդրել, որ թույլ տա իրեն զինավառվել Աքիլեսի զրահներով և մարտի տանել միրմիրոնցիներին՝ գուցեև տրոյացիները Պատրոկլեսին Աքիլեսի տեղ ընդունեն, դադարեցնեն հակառակադարը և այն ժամանակ հույները հանգիստ կառնեն զրժվարին մարտերից: Համաձայնեց Պատրոկլեսը և վերադարձավ

Աքիլլեսի մոտ, հաստատապես վճուճած, որ խնդրի ընկերոջը՝ թույլ տալ մարտի գուրս գալ: Ծանապարհին Պատրոկլեսը հանդիպեց նետը կողի մեջ խրված վիրավոր էվրիպիլոսին: Տառապում էր ցավից հերոսը, և վերքից արյուն էր հոսում: Խղճաց հերոսին Պատրոկլեսը: Նա օգնեց էվրիպիլոսին իր նավը հասնել: Հանեց նետը վերքից և բուժախոտ դրեց վրան: Էվրիպիլոսն էլ պատմեց Պատրոկլեսին, թե ի՞նչպես են ճնշում տրոյացիները հույներին:

Առաջվա պես շարունակվում էր ահեղագոռ մարտը: Հույներին այլևս պաշտպանել չէր կարող պատվարն ու խոր փոսը: Բայց տրոյացիները չէին կարողանում անցնել փոսի վրայով և գրավել պատը, որի հետև ապաստանել էին հույները: Հեկտորն ուզում էր երկանվով անցնել փոսի վրայով, բայց ձիերը չգնացին, նետվեցին մի կողմ: Այդ ժամանակ, հերոս Պոլիդամանթոսի խորհրդով, տրոյացիները բաժանվեցին հինգ մեծ ջոկատի և իրենց առաջնորդների գլխավորությամբ հրոսեցին հունական ճամբարի վրա: Երկանիվները թողած փոսի մոտ, հետիոտն մարտնշում էին տրոյացիների առաջնորդները: Միայն հերոս Ասիոսը շթողեց երկանիվը: Նա կամենում էր փախչող հույներին հետապնդել իր ջոկատով և նրանց հետևից ճամբար ներխուժել և գրոհել ուղղակի հունական նավերի վրա: Բայց պարսպի մոտ Ասիոսի գրոհը ետ էին մղում երկու հերոսներ՝ լապիթներ Պոլիպետեսն և Լեոնթևսը: Երկու հզոր կաղնիների նման կանգնել էին նրանք պարսպի մոտ՝ դարպասների առաջ: Խիզախաբար կռվում էին լապիթները, ետ մղում գրոհողներին, իսկ պարսպի վրայից հսկայական բարերի կարկուտ և նետերի տարափ էր տեղում թշնամու վրա: Լապիթները ետ մղեցին Ասիոսին և տրոյացի շատ հերոսներ սպանեցին: Բայց արգեն մի նոր ջոկատ էր մոտենում դարպասներին՝ Հեկտորի և Պոլիդամանթոսի գլխավորությամբ, և այդ ժամանակ Զևսն ուղարկեց մեծ կանխանշանը: Հանկարծ տրոյացիների գլխավերևում հայտնվեց մի արծիվ: Նա իր ճիրանների մեջ բռնել էր մի օձ: Օձը գալարվեց և խայթեց արծվի կուրծքը: Մղրտաց արծիվը բարձրաձայն և բաց թողեց ճանկերից օձը, որ ընկավ տրոյական շարքերի մեջ: Այդ կանխանշանը տեսնելուն պես Պոլիդամանթոսը խորհուրդ տվեց Հեկտորին՝ զաղարեցնել մարտը, հունական ճամբարը գրավելու ջանք չանել: Բայց Հեկտորը չլսեց Պոլիդամանթոսին և իր ջոկատով գեպի պարիսպը շարժվեց:

Ահեղադորդ փոթորիկ բարձրացրեց ամպրոպային Զևսը: Հողմը սուրում էր հունական նավերի միջև: Ուշադրութուն չդարձնելով փոթորիկին, հույները քաջաբար պաշտպանում էին պարիսպը: Տրոյացիները պոկում էին պարսպի ատամները և թուլացնում գեբանները, որպեսզի տապալեն այդ գերանների վրա հենվող առաքակները: Քարերով, նետերով ու նիզակներով դիմավորեցին հույները՝ գրոհողներին: Երկու Այաքսները հաստատակամ պաշտպանվելու կոչ էին անում հույներին: Վահանով պատսպարված, երկու նիզակ ձեռքներին, մոտ գնաց դարպասին հուժկու Սարպեդոնը և իրեն օգնելու կանչեց լիկիական հերոս Գլավթոսին: Գարպասը պաշտպանում էր Մենեսթևսը: Նա մարդ ուղարկեց Այաքսներին օգնության կանչելու: Մենեսթևսին օգնության շտապեցին Այաքս Տելամոնիդը, Էլբայրը՝ Տեկրոսը և Պանդիոնը: Հսկայական քարի զորավոր հարվածով Այաքսը տապալեց պարիսպը մագլցող էպիկլոսին: Տեկրոսը նետահարեց Գլավթոսին: Բայց Սարպեդոնը չէր նահանջում: Նրան հաջողվեց նույնիսկ պարսպի մի մասը քանդել, բայց Այաքսը և Տեկրոսը ետ մղեցին նրան, նորից հրոսելու խրախույս կարգաց Սարպեդոնը իր լիկիացիներին: Կրկին դեպի պարիսպը նետվեցին նրանք, բայց հույները թույլ չտվին նվաճել այն: Լիկիացիները չկարողացան նվաճել պարիսպը, հույները ևս չկարողացան ետ մղել նրանց: Ո՛չ լիկիացիները, ո՛չ էլ հույները չկարողացան առաջնություն նվաճել մարտում: Առաջինը հունական ճամբար խուժեց մեծազոր Հեկտորը: Նա գետնից պոկեց մի քար, որ երկու տղամարդ դժվարությամբ վեր կհաննին լծակներով, և տաքավ-բերեց ու խփեց դարպասին: Հարվածի ուժին շղիմացան ո՛չ դարպասները, ո՛չ էլ հսկայական սողնակը: Ճռնացին դարպասները և փշուր-փշուր եղան: Հեկտորը ճամբար ներխուժեց: Չայրույթի հրով բոցկլտում էին նրա աչքերը: Նրա հետևից խուժեցին տրոյացիները ևս: Գրոհով նվաճված էր պարիսպը: Խուճապահար փախուստի մատնվեցին հույները և վազեցին դեպի նավերը: Իրականցում ու շփոթ սկսվեց ճամբարում:

Շարադրված է ըստ Համեռոսի «Երկապեռ» պոեմի:

Ճակատամարտ սկսվեց հենց նավերի մոտ: Զևսն այլևս չէր հետևում մարտին, որովհետև համոզված էր, որ աստվածներից ոչ ոք չի հանդգնի օգնել հույներին: Այդ նկատելուն պես Պոսեյդոնը շուտապես ցած իջավ Քրակիայի լեռներից, որտեղից դիտում էր ճակատամարտը, և գնաց դեպի իր ապարանքը. դայրագնած աստծո ոտքերի տակ ասանեցին լեռները, իր ապարանքը եկավ Պոսեյդոնը, ծովային նծույզները լծեց երկանվին, և ալիքների վրայով սլացավ դեպի Տրոյա: Կատաղորեն թռչում էին նծույզները ծովի ալիքներից էլ վեր, և շուտով Տրոյայի մոտ հասցրին աստծուն: Առափնյա ընդարձակ քարայրում թողեց Պոսեյդոնը երկանիվն ու նծույզները և ոսկե շղթայով կապեց ձիերի երեք ոտքերը: Կալքասի կերպարանքն առած, կանգնեց նա Այաքսների առաջ և մարտնչելու խրախույս կարդաց նրանց: Գավազանը հպելով նրանց, աստվածը հսկայական ուժով լցրեց նրանց մարմնի անդամները: Հասկացան Այաքսները, որ Կալքասի կերպարանքի տակ աստված է խոսում իրենց հետ և ավելի խիզախաբար նետվեցին մարտի: Անցավ Պոսեյդոնը հունական շարքերի միջով և քաջարար կովելու դրոշեց նրանց: Այաքսների շուրջը խմբվեցին ռազմիկների շարքերը և վահան՝ վահանի, սաղավարտ՝ սաղավարտի, նիզակներն առաջ մեկնած, սպասում էին հարձակում գործող տրոյացիներին: Տրոյայի քաղաքացիների հետ միասին հարձակվում էր նաև Հեկտորը:

Ինչպես ժայռից պոկված մի քար, որ զահալիժում է լեռան գագաթից, շարժափշուր անելով ամեն ինչ իր ճանապարհին, քանի դեռ չի կանգնել ու անշարժացել հովտում, այդպես էլ Հեկտորն էր սլանում դեպի հունական շարասյունները՝ նիզակն ու վահանը ձեռքին: Կանգ առավ նա հունական շարքերի պատնեշի առաջ և տրոյացիներին խրախուսեց ճեղքել հունական զորաշարքերը: Համառ ճակատամարտ սկսվեց: Շատ հույներ դիտապաստ ընկան: Ընկավ Պոսեյդոնի թոռը և՛ Ամփիրաքոսը, Զայրուլթով լցվեց Պոսեյդոնը: Նա Իդոմենևս արքային իր թոռան վրեժը լուծելու միտք ներշնչեց: Հագավ իր փայլուն զրահները Իդոմենևսը և, Զևսի շանթի նման փայլատակելով, մարտի նետվեց: Իդոմենևսը հանդիպեց Մերիոնին, որի նիզակը հենց նոր էր կոտրվել Պիրամոսի որդու՝

Պեթրոսի վահանին հարվածելիս, և գնում էր մի նոր նիզակ բեռնելու: Իդոմենևսը նիզակ ավեց Մերիոնին և երկու հերոսները գնացին դեպի հույների ձախ թևը:

Տրոյացիները տեսան մտեցող Իդոմենևսին և հարձակվեցին վրան: Իդոմենևսը նետվեց դեպի տրոյացիները և փախուստի մատնեց նրանց: Տեսնելով, թե ինչպես է նա ճնշում տրոյացիներին, Պիրամոսի որդին՝ Գեթիորոսը, օգնության կանչեց էնեասին: Նրանք միասին հարձակվեցին Իդոմենևսի վրա, օգնության կանչելով Պարիսին և Ագենորին և: Ասակալի շարժ սկսվեց Իդոմենևսի շուրջը, շատ հերոսներ շտապեցին օգնության հասնել նրան: Հուժկու հարվածներից զնդում էին հերոսների կրծքերը պատող սղըն-նակառ զրահները: Բարձրագույն հեծածանքով գետնաթավալ վայր էին ընկնում սպանվածները, իրենց արյամբ բոսոր ներկելով հողը:

Իսկ Հեկտորը մարտնչում էր այնտեղ, ուր երկու Այաքսները զաշտպանում էին նավերը: Համառ կռիվ էին մղում նրանք՝ կողք-կողքի, նման նույն լուծք քաշող այն եղևներին, որոնք ձգում են զուֆանը դաշտով և համերաշխ քայլելով ակոսով, խորախոր վայրում են հողը. Շատ հերոսներ էին մարտնչում Այաքսների շուրջը: Իսկ նրանց թիկունքում, աղեղներով և պարսատիկներով դինված, լուրջաչքները նետերի տարափ էին թափում հարձակվողների վրա: Բիշ էր մնում երեքային տրոյացիների շարքերը, բայց Պոլիդամանոսը հերոսը Հեկտորին խորհուրդ ավեց օգնության կանչել քաջալուր հերոսներին և զենք՝ հարձակում գործել՝ հունական նավերի վրա. Թե՛ ետ նահանջել: Գնաց, որ կանչի հերոսներին Հեկտորը, բայց շատ շտուկներ լզումով ոմանց դժգույն գիակներն ընկած էին հունական նավերի մոտ, ոմանց էլ տառապելով վերքերի ցավից, հեռացել էին մարտադաշտից: Միայն Պարիսն էր ետ մղում հույների գրոհները: Հանդիմանեց Հեկտորը Պարիսին, բայց արդարացի չէր այդ հանդիմանությունը. քաջարար կովում էր Պարիսը՝ հանցանքը նրանը չէր, որ շատ հերոսներ վիրավորվել էին, իսկ ավելի լատ՝ սպանվել: Պարիսը Հեկտորին կուչեց նորից մարտի տանել տրոյացիներին: Հողմի նման մարտի նետվեցին տրոյացիները, բայց այդ գրոհը չզիջեց հույներին: Տեսավ Հեկտորին Այաքս Տևլամենիսը, և կուչեց է՛լ ավելի մոտենալ հունական զորականների շարքերին: Յայբաթի գլխավերևում ճախրեց մի արծիվ, և հրճվալից նշանին հույները՝ տեսնելով այդ կանխանշանը, Բայց տրոյացիները Հեկտորի գլխավորությամբ ահեղագույն աղաղակներով հրո-

սեցին հույների վրա: Նույնպիսի աղաղակով պատասխանեցին հույները տրոյացիներին և երկու բանակների զոյլունը մինչև երկինք հասավ:

Չորաբանակների այդ աղաղակը լսեց նեստորը, որ Մաքսոնի հետ նստել էր իր վրանում: Ելեց նա իր վաճանն ու նիզակը և զուրս եկավ վրանից, Միրունին գնաց Ագամեմնոն արքայի մոտ: Նա հանդիպեց Միկենեի արքային, Դիոմեդեսին և Ողիսևսին, որոնք վերավորված էին և քայլում էին իրենց նիզակներին հենվելով: Նրանք ուզում էին դիտել ճակատամարտը: Ցավով ճմլվեցին նրանց սրտերը, երբ տեսան, որ կռիվ է գնում արդեն նավերի մոտ: Վիշտը պատեց նրանց, երբ խորտակված տեսան այն պարիսպը, որ հույներին պիտի պաշտպաներ տրոյացիների հարձակումներից: Չգիտեին նրանք, թե ինչպե՞ս օգնեն զորականներին, ի՞նչ անեն կործանումից փրկվելու համար: Ագամեմնոնը պատրաստ էր նավերը ջուրն իջեցնելու հրաման տալ: Բայց Ողիսևսը ետ պահեց զրանից, որովհետև երկյուղ էր կրում, որ նավերը ջուրն իջեցնելու դեպքում հույներն ավելի շատ փախուստի՝ քան կռվելու մասին կ'մտածեն: Իսկ Դիոմեդեսը խորհուրդ տվեց զինավառվել, այդպես երևալ զորաբանակին և զրանով ոգեշնչել նրանց, բայց մաշտին մասնակից չլինել, կրկին անգամ վերք չստանալու համար:

Այդ ժամանակ Հերա աստվածուհին, տեսնելով հույների անհաջողությունները, վճռեց խորամանկությամբ օգնել նրանց: Նա որոշեց քնի մեջ ընկղմել Ջևսին և մինչ քնած կլինեք Ջևսը՝ հաղթանակը տալ հույներին:

Օլիմպոսից սքվառնեց Հերա աստվածուհին դեպի Լեմնոս կղզին և այնտեղ գտավ քնի աստված Հիպնոսին: Երկար համոզում էր նրան Հերան՝ քնեցնել ամպրոպային Ջևսին, բայց մերժում էր Հիպնոսը, որովհետև երկյուղ էր կրում ցասումնալից Ջևսից: Վերջապես Հերան առավ Հիպնոսի համաձայնությունը: Քնի աստծո հետ միասին Հերան սավառնեց դեպի Իդա լեռան գագաթը: Ջևսից ծածուկ, քաղցրադայլալ թռչնի կերպարանք առած, Հիպնոսը թաքնվեց մի հսկայական եղևնու հետևում և խոր քնի մեջ ընկղմեց նրան: Այնուհետև բարձրաբերձ Իդա լեռան գագաթից Հիպնոսը սուրաց երկրասասան Պոսեյդոնի մոտ և ասաց նրան, որ քնած է Ջևսը:

Ուրախացավ Պոսեյդոնը և նոր ուժով ի մարտ ոգեշնչեց հույ-

ներին, Ագամեմնոնը, Դիոմեդեսն ու Ողիսևսը, մոռացության տալով իրենց վերքերը, անձամբ մարտական կարգով շարում էին հունական ռազմաբանակը: Առաջ շարժվեց զորաբանակը Պոսեյդոնի պիսվոբուսի մոտ՝ տրոյացիներին հանդիման: Են էր գալիս ծովը, ալիքները շտաշլունով թավալվում էին մինչև հունական նավերն ու վրանները, և ծովի ալիքների նման տրոյացիների վրա էին գրոհում հույները: Նորից սկիզբ առավ զարհուրելի մարտը: Հեկտորը նիզակն արձակեց Այաքսի վրա, բայց վերք չհասցրեց այդ հարվածը: Իսկ Այաքսը հսկայական քարով խփեց Հեկտորի կրծքին: Ինչպես Ջևսի շանթով շարժված կաղնին է տապալվում, այդպես էլ Հեկտորը գետնաթավալ տապալվեց: Վայր ընկավ ձեռքից նիզակը, հսկայական վահանը գետնին ճգմեց նրան: Հեկտորի կողմը նետվեցին հույները, բայց տրոյացիները պաշտպանեցին Պրիամոսի որդուն և զուրս բերին մարտազաշտից: Ուշակորույս Հեկտորին քսած զքին Քանթոս գետի ափին և ջուր սրսկեցին դեմքին: Հառաչեց Հեկտորը, բաց արեց աչքերը, մի քիչ վեր բարձրացավ և որդունը ժայթքեց նրա բերանից: Կրկին մեջքի վրա տապալվեց Հեկտորը և նորից ուշքը կորցրեց: Երբ տեսան, որ Հեկտորն ընկել է Այաքսի հարվածից, միահամուռ գրոհ տվին հույները տրոյացիներին: Ավելի կատաղությամբ բորբոքվեց մարտը: Թե՛ հույների և թե՛ տրոյացիների կողմից շատ հերոսներ մահ գտան այս մարտում: Խոնարհաբար փախուստի մատնվեցին տրոյացիները և կանգ առան այն ժամանակ միայն, երբ հայտնվեցին հունական նավերը շրջապատող պատենշի այն կողմում:

Եվ այդ ժամանակ, Իդայի լեռնագագաթին, քնից արթնացավ Ջևսը: Տեսավ փախչող տրոյացիներին, և Պոսեյդոնի զլխավորությամբ նրանց հետապնդող հույներին, և սոսկալի ցասամբ լլվլեց Ջևսը: Նա սկսեց նախատել Հերային և սպառնաց, որ կկապտի նրան ոսկեղեն շղթայով, և կախ կտա երկնի և երկրի միջև որպես պատիժ, որ նա Պոսեյդոնին համոզել է օգնել հույներին: Բայց Հերան սոսկալի երդմամբ համոզեց Ջևսին, որ իր խորհրդով չէ, որ Պոսեյդոնն օգնել է հույներին:

Արագաթնի վրա մտքի նման դեպի Օլիմպոս սավառնեց Հերա աստվածուհին: Այնտեղ, խնջույքում, Հերան համոզեց աստվածներին՝ չընդդիմանալ Ջևսի կամքին: Այնուհետև, պատերազմի աստված Արեսին հայտնեց Հերան, որ Դեիփորոսի հարվածից դիտապատ ընկել է նրա որդին՝ Ասկալափոսը: Հեծկտաց Արեսը, Ջայ-

բազմած ոտքի ելալ նա, և զինավառվելով պատարաստ էր զեպի
ռազմի դաշտն անապարհի որդու վրեժը լուծելու: Բայց ետ պահեց
նրան Աթենասը, հիշեցնելով Ջևսի կամքը: Կանչեց Հերան Ապոլոն
աստծուն և աստվածների բանբեր Իրիսին և ասաց, որ Ջևսը
նրանց հրամայել է իր մոտ՝ Իդայի լեռան գագաթը գնալ:

Երբ Իդա լեռան վրա հայտնվեցին Ապոլոն աստվածն ու Իրի-
սը, Ջևսը Իրիսին հրամայեց թռչել Պոսեյդոնի մոտ և հազորել Ջևսի
կամքը՝ լքել ճակատամարտը: Մի ակնթարթում Պոսեյդոնի առաջ
հայտնվեց Իրիսը և հազորդեց Ջևսի կամքը: Չէր ուզում եղբոր կամ-
քին հնազանդել Պոսեյդոնը. նա ասաց, թե ի՛նքն էլ հավասարա-
զոր իշխանություն ունի Ջևսի հետ, թե Ջևսը հրամայել կարող է իր
որդիներին ու զուտրերին միայն, բայց ո՛չ երբեք իրեն: Բայց,
ի վերջո, հնազանդեց Պոսեյդոնը և հեռացավ ուղեմաղաշախից,
սպառնալով Ջևսին, որ եթե նա շարունակի խնայել Տրոյային,
ապա հավերժական թշնամություն սկիզբ կառնի իր և մեծն Ջևսի
միջև:

Իսկ Ապոլոնին Ջևսը պատվիրեց վերցնել իր վահանը և գրանով
սարսափեցնել հույներին. պատվիրեց նաև վերականգնել Հեկտորի
ուժերը: Երբ Ապոլոնը բազեի նման ներքև սլացավ, Հեկտորն ար-
գեն սկսում էր ուշքի գալ:

— Ելի՛ր, Հեկտոր, — ասաց Էբան Ապոլոնը: — Ես Ապոլոնն
աստվածն եմ, որին Ջևսը ուղարկել է քեզ օգնելու: Գնա՛ զորա-
բանակդ և հրաման տուր հարձակվել հույների վրա, իսկ ես կբալ-
լնմ տրոյացիների առջևից:

Մեծազոր ուժով լցրեց Ապոլոնը Հեկտորի կուրծքը: Նա վեր
կացավ և գնաց զեպի տրոյացիները: Յնծացին նրանք, երբ տեսան,
որ անվնաս է Հեկտորը: Զարմացան հույները, Հեկտորին տեսնելով
թշնամիների շարքերում: Թողին փախուստը տրոյացիները, կարգի
եկան և նորից սկսեցին նեղել հույներին: Ավելի ու ավելի արյու-
նահեղ էր դառնում մարտը: Քաշարար ետ էին մղում հույները
տրոյացիների ճնշումը, բայց մինչ այն պահը, քանի զեռ չէր ցնցել
Ապոլոնը Ջևսի վահանը: Երեբացին այդ ժամանակ հույները, սար-
սափը տիրեց նրանց, մոռացան քաջության մասին և փախուստի
մատնվեցին: Տրոյացիները հետապնդում էին նրանց, իսկ Ապո-
լոնը հարթում էր նրանց ուղին՝ նետված նիզակի տարածության
չափով լցնելով պարսպամերձ փոսը: Նավերի մոտ միայն կանգ

առան հույները: Սկսեցին փրկություն աղերսել աստվածներից:
Ջևսին աղերս էր կարգում ծերունի Նեստորը ևս:

— Հիշի՛ր, Ջևս, այն զոհերը, որ հույները մատուցում էին քեզ,
աղերսելով երջանիկ վերագարձ զեպի հայրենիք: Հեռացրո՛ւ կոր-
ծանումը հույներից, ո՛ր, օլիմպացի: Վերջնական հաղթանակ մի՛
առ տրոյացիներին:

Կսեց Ջևսը Նեստորի աղերսը, և զղրղաց որոտը երկնի կատա-
րեց, իսկ տրոյացիները այդ որոտն ընդունեցին իրեն բարեպատե՛հ
կանխանչան և, նավակողից էլ վեր խոյացող ահեղագոռ ալիքի
նման, գրոհ տվին հույների վրա: Մարտը բորբոքվեց հենց նավերի
մոտ: Համառորեն մարտնչում էր Այաքսը, պաշտպանելով նավերը:
Այաքսի կողքին կանգնել էր նրա եղբայր Տեկրոսը և նեսահա-
բամ էր տրոյական հերոսներին: Երբ Տեկրոսը կամեցավ նետով
իջել Հեկտորին ևս, Ջևսը պաշտպանեց Պրիամոսի որդուն: Վայր
բնկավ աղեղը Տեկրոսի ձեռքից, կտրվեց աղեղնայարը, և ցրվ
նկան նետերը: Մոսկաց Տեկրոսը, նա կռահեց աստվածների կամքը:
Այաքսը եղբորը խորհուրդ տվեց թողնել աղեղը և կովել նիզակով:

Գնալով ավելի ու ավելի կատաղի էր դառնում մարտը: Արյու-
նը առվի պես հոսում էր նավերի շուրջը: Իրենց վահանները պղնձե
պատենեղ արած՝ հույները պաշտպանում էին նավերը: Շատ սըխ-
բանքներ գործեցին հույն հերոսները, բայց առավել ուժգին էին
հարձակվում տրոյացիները: Թվում էր, թե մարտնչում է ոչ թե
հռոմատանը մի զորք, այլ թարմ, հենց նոր կռիվն սկսած մի զորա-
բանակ: Հսկայական մահալը ձեռքին, Այաքսը նավից նավ էր
թռչում ու ետ մղում տրոյացիներին: Բարձրաձայն կանչով նա
ի մարտ էր հրահրում հերոսներին: Իսկ Հեկտորը, շվոզ թռչուննե-
րին զարիող արժիք նման, հարվածում էր հույներին: Արդեն Հեկ-
տորը կառչել էր Պրոտեսիլասոսի նավի նավախելից, բարձրաձայն
կանչում էր տրոյացիներին և հրամայում իրեն տալ ջահը, որ հըր-
կիցի նավը: Չկարողացավ այդ ուժգին գրոհին զիմազրել ինքը՝
մեծազոր Այաքս Տեկամոսիզը. մեծ նիզով էր ետ մղում տրոյա-
ցիներին նա իր նիզակով: Տրոյացիները նետերի տարափ էին տե-
ղում նրա վրա: Վահանի ծանրությունից թմբել էր Այաքսի ձախ
նկարը: Շուտ էր Այաքսը, քրտինքը առվի նման հոսում էր նրա
մարմնից: Միջեց նահանջել նա: Առաջ նետվեց Հեկտորը և սրի
հարվածով բարձեց Այաքսի նիզակի սայրը: Տեսնում էր Տեկամոսիզը,
որ Ջևսի կամքով պիտի հրո ձարակ դառնան հունական նավերը:

եւ իրոք, տրոյացիները կրակ տվին Պրոտեսիլանոսի նա՛յր և բոցա՛վառվեց հրով բռնված նա՛յր: Թ՛վում էր, թե վրա է հասել բոլոր հույների կործանումը, բայց հենց այդ պահին օգնութուն հասավ նրանց այնտեղից, որտեղից բնավ էլ հույս չունեին ստանալու:

ՊԱՏՐՈՒԿԵՍԻ ՍԵՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԱՀԸ

Եւրոպայում էլ բառ Համեռսի «Կիսկան» պոեմի:

Երբ տրոյացիները հունական ճամբար խուժեցին, Պատրոկլեսը, որ այդ ժամանակ նստած էր վիրավոր էվրիպիլոսի մոտ, սարսափահար վեր թռավ տեղից, բարձրաձայն աղաղակեց և փութաց դեպի Աքիլլեսի վրանը: Գառնաղի արտասուք թափելով, Աքիլլեսի մոտ եկավ Պատրոկլեսը: Աքիլլեսը հարցրեց նրան.

— Ինչո՞ւ ես լալիս, Պատրոկլես, պստիկ աղջկա նման, որ վազում էր մոր հետևից և խնդրում, որ գրկի իրեն: Արդո՞ք վատ լուր չե՞ս առել Փոիոտիսից: Թե՞ լալիս ես իրենց նավերի մոտ ջարդվող հույների՞ համար: Ասա՛ ինձ, ինչո՞ւ ես վշտացած, մի՞թաքցնի ոչինչ:

— Օ՛, որդիդ Պիլևսի, — ւշտասխանեց Պատրոկլեսը, — մեծ վիրտ է պատել հույներին: Նրանցից ամենաբաշխը վիրավորված են: Միթե դու չե՞ս օգնի հույներին: Եթե չես ուզում օգնել, ապա թույլ տուր ե՛ս գնամ քո միրմիդոնցիները հետ միասին: Տո՛ւր ինձ զբահներդ: Գուցե ինձ Աքիլլեսի տեղ ընդունեն տրոյացիները և վերջ տան պատերազմին: Թարմ ուժերով մենք տրոյացիներին ետ կե՛ղենք նավերից:

Այսպես պաղատագին խնդրում էր Պատրոկլեսն Աքիլլեսին, չիմանալով, որ մահ է աղերսում իր համար:

Տեսնում էր Աքիլլեսը, թե ինչ դժվար կացության մեջ են հույները: Լսում էր, որ միայն Հեկտորի ձայնն է հնչում: Ուրեմն Հունաստանի մեծազոր հերոսներից ոչ մեկը չէր մասնակցում մարտին: Աքիլլեսը հույների կործանումը չէր ուզում: Նա համաձայնեց տալ իր զենք ու զրահը Պատրոկլեսին և թող տալ, որ մարտի դուրս գա տրոյացիների դեմ այն պայմանով միայն, եթե տալու նապը հնչի ի՛ր նավերի մոտ ևս. այդ դեպքում Պատրոկլեսը թող ետ մղի նրանց, թույլ չտա, որ այրեն նավերը: Բայց Աքիլլեսն արգելեց Պատրոկլեսին միրմիդոնցիներին տանել դեպի Տրոյայի պա-

րիսպները, վախենում էր նա, թե կարող էր զոհվել իր սիրելի ընկերը:

Այսպես զրուցում էին ընկերները: Հանկարծ Աքիլլեսը տեսավ, թե ինչպես բոցավառվեց իր նավերից մեկը, որ կրակ էր տվել Հեկտորը: Ցամամբ լցված, աղաղակեց նա.

— Ետապի՛ր, Պատրոկլես: Տեսնում եմ, որ արդեն կրակը մոլեգնում է նավերի մեջ: Զինավառվիր շուտով: Ես ինքս կխմբեմ միրմիդոնցիներին ի մարտ:

Արագությամբ զինավառվեց Աքիլլեսի զենք ու զրահով Պատրոկլեսը. շվիցրեց նիզակը միայն: Այդ նիզակով կովել կարող էր Աքիլլեսը միայն: Նժուլգները երկանվին լծեց նրա կառավար Ալատոմեդոնը, Իսկ Աքիլլեսը շարեց իր միրմիդոնցիներին, Եղջերվի վրա հարձակվող դիշատիչ զայլի նման նրանք ագահաբար մարտի էին ձգտում: Ոգեշնչեց Աքիլլեսն իր ռազմիկներին, մարտական սխրանքների կոչելով նրանց, և պատվիրեց քաջաբար կովել, որպեսզի հասկանա Ազամեմոնոն արքան, թե ինչ անխոհեմ բայլ է արել ինքը՝ վիրավորանք հասցնելով հունական հերոսներից ամենափառապանծին: Բարձրագույն աղաղակով մարտի նետվեցին միրմիդոնցիները և այդ ահավոր աղաղակը տարածվեց բովանդակ ճամբարում: Տրոյացիները տեսան Աքիլլեսի զբահներով զբահավորված Պատրոկլեսին և կարծեցին, թե դա ի՛նքը Աքիլլեսն է, որ մոռանալով Ազամեմոնոնի հետ իր թշնամությունը, շտապում է հույներին օգնության: Տրոյացիներից ամեն մեկն արդեն մտածում էր փախուստի մասին: Իսկ Պատրոկլեսը նետվեց մարտի ամենաեռուն տեղը և սկսեց նիզակով շամփրել Պրոտեսիլանոսի նավի մոտ կրողող տրոյացիներին: Նահանջեցին սարսափահար տրոյացիները:

Բայց տրոյացիներն անմիջապես լիողիւ ճամբարը, նրանք սկզբում միայն նավերից հեռացան: Հույները հետապնդեցին տրոյացիներին, և շատ տրոյական հերոսներ դիտապաստ ընկան: Բայց չզիմացան ճամբարում տրոյացիները: Գաղազած գայլերի նման նրանց դեմ հրոսեցին հույն հերոսները: Փոսի վրայով դեպի դաշտ նետվեցին տրոյացիները, և շատ շատերը զոհ զնացին: Հերոս Այաքս Տելամոնիդն այրվում էր Հեկտորին սպանելու ցանկությամբ: Հեկտորը տեսնում էր, որ հաղթանակը փախչում է տրոյացիների ձեռքից, բայց դեռ չէր նահանջում. նա ամբողջ ուժով ուղում էր պահել տրոյացիներին հետապնդող հույներին, վերջա-

պես Հնկտորը ևս նահանջեց. ձիերը արագությամբ փոսի վրայով գեպի դաշտ տարան նրան:

Փախչող տրոյացիներին հետապնդելու կոչ անելով հույներին, Պատրոկլեսը նժուլդներին արագությամբ դեպի փոսը բռնեց: Քուան փոսի վրայով Պելևսի անմահ ձիերը, երկանվի հետ միասին, և սլացան դաշտով: Պատրոկլեսը փնտրում էր Հեկատորին, բայց նա իր երկանվով ազատել էր գլուխը: Փոշին կանգնել էր դաշտի վրա՝ տրոյական փախչող ռազմիկների ամբոխի վազբից: Տրոյացիներն շտապում էին թաքնվել Տրոյայի պարիսպների ներսում: Բայց նահանջողներից շատերի ճանապարհը կարեց Պատրոկլեսը: Նա նրանց ևս էր բռնում դեպի նավերը և շատերին խոցում էր հաստաբեատ նիզակով: Տեսավ Սարպեդոնը, թե Պատրոկլեսի ձեռքից հերոսների ինչ բազմություն է կտորվում, և կանգ անելու կոչ արեց իր լիկիացիներին: Սարպեդոնն ուզում էր մարտնչել Պատրոկլեսի հետ: Ցած թռավ նա իր երկանվից և սպասեց Պատրոկլեսին: Աքիլլեսի ընկերը ևս ցած իջավ երկանվից: Քարձրադիր բարափի վրա որսի համար կոնչոցով կովող երկու ուրուրի նման խոտը վրա նետվեցին հերոսները: Ձևը տեսավ այդ մենամարտը: Եղճաց նա Սարպեդոնին, կամեցավ փրկել իր որդուն: Հերան լսեց Ձևի ուղբը, նա խորհուրդ չտվեց փրկել որդուն: Հիշեցրեց Ձևին, որ աստվածներից շատերի որդիները կոտում են Տրոյայի պարիսպների տակ և նրանցից շատերն արդեն զոհվել են: Եթե Ձևը փրկի Սարպեդոնին, ապա մյուս աստվածներն էլ կկամենան իրենց որդիներին փրկել: Ձևը պիտի թույլ առ, որ Սարպեդոնը կործանվի Պատրոկլեսի ձեռքով, եթե այդ է վիճակել նրան ճակատագիրը: Լսեց Ձևը Հերայի խորհուրդը: Նա արյունաշաղախ ցաղ ուզարկեց տրոյական դաշտերը, զրանով պատիվ տալով որդուն, որ սխալ ընկներ Պատրոկլեսի ձեռքով:

Առաջինը Պատրոկլեսը նետեց իր նիզակը և սպանեց Սարպեդոնի հավատարիմ սպասավորին: Սարպեդոնն էլ իր նիզակը նետեց, բայց չգիպավ Պատրոկլեսին. կողքից անցավ նիզակը և սպանեց Աքիլլեսի ընկերոջ երկանվին լծած նժուլդներից մեկին: Երկրորդ անգամ բախվեցին հերոսները: Կրկին վրիպեց Սարպեդոնը: Իսկ Պատրոկլեսը խոցեց Սարպեդոնի կուրծքը: Արմատից կտրված կաղնու նման գետին տապալվեց լիկիական արքան: Քարձր ձայնով գոչեց Սարպեդոնն իր ընկերոջը՝ Գլավթոսին.

— Բարեկամս, Գլավթոս, բոբբոբիր լիկիացիներին, որ բա-

ջաբար կովեն իրենց արքա Սարպեդոնի համար, դու ինքդ էլ մարտնչիր ինձ համար: Հավերժական անարգանք կլինի քեզ համար, եթե հույները հանեն իմ զենքն ու զրահը:

Մահվան մի վերջին հառաչ դուրս թռավ Սարպեդոնի կրծքից և մահվան աստված Բանատոսը փակեց նրա աչքերը: Վիշառ պատեց Գլավթոսին, երբ լսեց ընկերոջ ձայնը: Մորմոքվում էր նա, որ չի կարող օգնել նրան, որովհետև ինքն էլ տառապում էր վերքից: Դիմեց աստծուն և աղերսեց ապաքինել իր վերքը: Լսեց Գլավթոսի աղերսը Ապոլոնը և ապաքինեց նրա վերքը: Հավաքեց Գլավթոսը լիկիացիներին և Տրոյայի հերոսներին՝ էնեասին, Ագենորին, Պոլիդամանթեսին և իրեն՝ սաղավարտափայլ Հեկտորին, որպեսզի մարտնչեն Սարպեդոնի մարմնի համար: Հավաքվեցին հերոսները և շտապեցին Գլավթոսին օգնության: Լուսակա հերոսներին էլ կոչ արեց Պատրոկլեսը. առաջինը Այաքսները եկան: Բորբոքվեց մարտը Սարպեդոնի մարմնի շուրջը: Իսկ Ձևը խավարով պատեց որդու մարմինը, որ ալիլի գարձուրելի լինի մարտը:

Ձևերքի այնպիսի շտառ բարձրացավ, որ կարծես փայտահատների ամբոխը կտրում է լեռնային անտառների ծառերը: Իսկ Սարպեդոնի դիակն ընկած էր փոշեթաթավ ու արյունահեղ և բազում նետերով խոցված: Ձևը աչքը չէր կարում ռազմագաշտից. նա միտք էր անում, թե Պատրոկլեսին որդու դիակի մո՞տ կործանի, թե՞ թույլ առ, որ նա մեծ սխրանքներ գործի, տրոյացիներին մինչև պարիսպները բռնի: Ձևը վճռեց երկարացնել Պատրոկլեսի կյանքը: Նա երկյուղով լցրեց Հեկտորի սիրտը, Առաջինը նա փախուստի դիմեց, իսկ նրան հետևեցին մյուս ռազմիկները ևս: Հույները պոկեցին Սարպեդոնի զրահները, իսկ Պատրոկլեսը հրամայեց նավերի մոտ աննել զրանք: Այդ ժամանակ իր մոտ կանչեց Ապոլոնին շանթարձակ Ձևը, պատվիրեց վերցնել Սարպեդոնի դին, մարբել փոշուց և արյունից, օծել անուշաբույր յուղերով և շքեղ զգեստներ հագցնել: Այնուհետև Քուն և Մահ եղբայր-աստվածները պիտի Սարպեդոնի մարմինը լիկիա տանեին, որպեսզի եղբայրներն ու ընկերները պատվով ու մեծարանքով հողին հանձնեին Սարպեդոնի մարմինը: Ի կատար անց Ձևի պատվերը Ապոլոնը:

Այդ ժամանակ Պատրոկլեսը դեպի քաղաքի պարիսպներն էր բռնում տրոյացիներին: Նա դեպի իր կործանումն էր սլանում: Շատ հերոսներ սպանեց նա: Տրոյան էլ կզրավեր նա, եթե Ապոլոնը, կատարելով Ձևի հրամանը, չկանգներ Տրոյայի բարձրաբերձ աշտա-

րակի վրա: Երեք անգամ պարսպի վրա ելավ Պատրոկլեսը, երեք անգամն էլ Ապոլոնը ետ մղեց նրան: Երբ շորրորդ անգամ պարսպի վրա նետվեց Պատրոկլեսը, ահեղագոր ձայնով գոչեց Ապոլոնը.

— Ետ քաշվիր պարսպից, քաջդ Պատրոկլես: Ոչ թե քեզ, այլ Աքիլլեսին է վիճակված կործանել մեծ Տրոյան:

Ետ քաշվեց Պատրոկլեսը, շահնդանեց նա զայրացնել իր ոսկե-
ձույլ ու հեռահար նետերով խոցող Ապոլոնն աստծուն:

Սկեյան դարպասների մոտ միայն Հեկտորը կանգնեցրեց իր նժույզները: Երկընտրանքի մեջ էր նա. չգիտեր հարձակվե՞լ Պատրոկլեսի վրա, թե՞ հրաման տալ բոլորին ապաստանել Տրոյայի պարիսպների ներսում: Այդ ժամանակ Հեկաբեի եղբոր կերպարանքով նրան մոտեցավ Ապոլոնը և խորհուրդ տվեց Պատրոկլեսի վրա հարձակվել բաց դաշտում, ևսեց այդ խորհուրդը Հեկտորը և իր կառավար Կերրիոնին հրամայեց շուտ տալ ձիերի գլուխները: Երբ Պատրոկլեսը տեսավ Հեկտորին երկանվի վրա, ինքը ցած թռավ, աչ ձեռքով մի հսկայական քար հափշտակեց, իսկ ձախ ձեռքում նիզակը ճոճելով սպասեց նրա մոտենալուն: Երբ արդեն մոտիկ էր Հեկտորը, նետեց Պատրոկլեսը քարը և հարվածեց կառավար Կերրիոնի գլխին: Մովը նետվող ջրասույզի նման տապալվեց երկանվից Կերրիոնը: Պատրոկլեսը, ծաղրելով նրան, բացականչեց.

— Որքան շուտ սուզվեց Կերրիոնը: Մովում որ լիներ, նա կսուզվեր նավից և շատ ոստրեններ կհավաքեր: Ես տեսնում եմ, որ տրոյացիների մեջ էլ ջրասույզներ կան:

Այսպես գոչեց Պատրոկլեսն ու նետվեց դեպի Կերրիոնի մարմինը: Ծած թռավ Հեկտորը երկանվից և մենամարտի բռնվեց Պատրոկլեսի հետ, իր կառավարի մարմնի համար: Նորից արյունահեղ ջարդ սկսվեց Կերրիոնի մարմնի շուրջը: Հույներն ու տրոյացիներն այնպես էին բախվում իրար, ինչպես արևելյան և հարավային քամիները՝ էվրոսն ու Նոտոսն են բախվում անտառապատ հովտում. ձկնում են ծառերն այդ պահին, ճյուղերն իրար տալով, շորսբոլորը հնչում են ջարդվող կաղնիների, սոճիների և եղևնիների ճրթճրթոցը: Երկար կռվում էին տրոյացիներն ու հույները: Արևն արդեն դեպի արևմուտք էր թեքվում: Երեք անգամ տրոյացիների վրա հարձակվեց Պատրոկլեսը, երեք անգամն էլ իննական հերոս խոցեց նա իր նիզակով, իսկ երբ շորրորդ անգամ խոցեցավ տրոյացիների վրա, նրա դեմ ելավ խավարով պատած Ապոլոնը: Նա կանգնեց Պատրոկլեսի հետևի կողմից և հարվածեց նրա թի-

կունքին և ուսերին, Մթնեցին Պատրոկլեսի աչքերը: Պոկեց սաղա-
վարտը Պատրոկլեսի գլխից Ապոլոնը, որ մի ժամանակ մեծագոր
Պելեոսի գլխին էր շողում, և գլորվեց սաղավարտը դետնի վրա:
Ջարգվեց նիզակը Պատրոկլեսի ձեռքում և գետին ընկավ նրա ծանր
վահանը: Արձակեց Ապոլոնը Պատրոկլեսի զրահները, և նա անուժ
ու անզեն կանգնեց տրոյացիների առաջ: Բայց անզեն Պատրոկլեսի
վրա էլ չէր հանդգնում դիմացից հարձակվել էվփորբոսը, նա թի-
կունքից խոցեց նրան նիզակով և թաքնվեց տրոյացիների ամրոխի
մեջ: Կործանումից խույս տալու համար Պատրոկլեսը նահանջեց
դեպի Հույների շարքերը: Նման այն առյուծին, որ ջուր խմելու հա-
մար խնդրում է վայրի վարազին՝ սակավաջուր առվի ափին, այդ-
պես սպանեց Հեկտորը Պատրոկլեսին: Ցնծաց Պրիամոսի որդին,
ևս սպանել էր ընկերոջն Աքիլլեսի, որ սպանում էր կործանել
Տրոյան: Գետին տապալվեց Պատրոկլեսը և մեռնելիս ասաց.

— Հիմա դու կարող ես պարծենալ ըստ հաղթանակով, Հեկտոր,
Չեպի և Ապոլոնի օգնությամբ հաղթանակ տարար դու: Աստված-
ուն՝ը հաղթեցին ինձ, նրանք ինձ զրկեցին զենք ու զրահից: Աստ-
վածների համար հեշտ բան է դա: Բայց եթե քսան քեզ նմանն էլ
հարձակվեք ինձ վրա, ես ձեզ բոլորիդ կսպանեի իմ նիզակով: Ինձ
կործանեցին Ապոլոնն աստվածն ու էվփորբոսը, իսկ դու ինձ խո-
ցողներից երբորդն ես: Հիշիր մշտապես, թե ինչ կասեմ քեզ. դու
կրկար չես ապրի և մոտիկ, շատ մոտիկ է կանգնած մահը քեզա-
նից: Անտոջ հակատազիքը քեզ մահ է կանխատեսել՝ Աքիլլեսի
ձեռքով:

Այսպես ասաց և մեռավ Պատրոկլեսը: Նրա հոգին հանդար-
տորեն թռավ գետի Հադեսի թագավորությունը, ողբալով, որ լքել է
մի երիտասարդ, հուժկու մարմին:

Արզեն մեռած Պատրոկլեսին այսպես գոչեց Հեկտորը.

— Ինչո՞ւ ես ինձ մահ գուշակում, Պատրոկլես, Ո՞վ գիտե,
գուցե թե իմ նիզակով խոցված՝ Աքիլլեսն ավելի շուտ հրաժեշտ
ուս կյանքին:

Գուրս քաշեց Հեկտորն իր նիզակը Պատրոկլեսի մարմնից
և հարձակվեց Ավտոմեդոնի վրա, կամենալով տիրել Աքիլլեսի
նժույզներին:

Շարադրված է ըստ Հռոմեոսի «Իլիական» պոեմի

Տեսա՞վ Մենելաոս արքան Պատրոկլեսի փոշեթաթա՞վ դին և նեա՞վեց դեպի նա. չէր ուզում Մենելաոսը հանդուրժել, որ տրոյացիները պզծեն դիակն այն հերոսի, որ մարտնչել էր իր համար: Ահեղամուռնչ առյուծի նման նա ետ ու առաջ էր անում Պատրոկլեսի գիակի մոտ, վահանով պատսպարելով իրեն և ճոճելով իր հաստաբեստ նիզակը:

Տրոյացի է՞վփորոքոք, որ հարվածել էր Պատրոկլեսի թիկունքին, կամենում էր տիրանալ Պատրոկլեսի դիակին: Նա մոտ գնաց Մենելաոսին, այրվելով դին խլելու և Սպարտայի արքայից վրեժ լուծելու ցանկությամբ, քանի որ նա էր սպանել իր եղբորը:

Նիզակով հարվածեց նա Մենելաոսի վահանին, բայց չկարողացավ ջարդել վահանը: Իսկ Մենելաոսը ուժգին մի հարվածով նիզակը մխրճեց է՞վփորոքոսի կոկորդը, և գետին տապալվեց երիտասարդ հերոսը: Մենելաոսն սկսեց հանել նրա թանկարժեք զենք ու զրահը, բայց նետածի՞գ Ապոլոնը Հեկտորին գրգեց հարձակվել Մենելաոսի վրա: Նետվեց նա Մենելաոսի վրա: Մենելաոսը չէր ուզում նահանջել Պատրոկլեսի դիակից, գիտենալով, որ կմեղադրեն հույներն իրեն զքա համար, բայց և վախենում էր շրջապատվել տրոյացիներից: Նա վճռեց օգնության կանչել Այաքսին, Տրոյացիների ճնշման տակ նա դանդաղ ետ նահանջեց և կանչեց Այաքսին: Հեկտորն արդեն հասցրել էր հափշտակել Պատրոկլեսի դին և հանել վրայից Աքիլլեսի զրահները, երբ վրա հասավ Այաքսը: Հեկտորն ստիպված էր թողնել դին: Երբ այդ բանը տեսավ Գլադիոսը, սկսեց հանդիմանել Պրիամոսի որդուն փոքրզուռիցան համար, որ նա վախենում է հունական հերոսներից: Իր այդ խոսքով Գլադիոսն ստիպեց Հեկտորին նորից մարտի նետվել: Նա ետ կանչեց իր սպասավորներին, որոնց պատվիրել էր Տրոյա տանել Պատրոկլեսի զրահները, և ինքը զրահավորվեց զրանցով: Ամարոպային Ձևը տեսավ, թե ինչպես է զրահավորվում Հեկտորը Աքիլլեսի զենքերով, և մտածեց. «Տարաբախտ, դու շես զգում, թե որքա՞ն մտո է օրհասդ: Դու հաղնում ես զրահներն այն հերոսի, որից վախենում են բոլորը: Այժմ ես քեզ հաղթանակ կտամ, որպես պարզն այն բանի համար, որ Աքիլլեսի զրահները քո ձեռքից երբեք չի ընդունելու: քո կինը՝ Անդրոմաքեն», Այաքս էր մտածում: Ձևը, և

ի նշան այն բանի, որ դա այդպես էլ կլինի, ահեղորեն կիտեց հոնքերը:

Հեկտորը լցվեց անուանձելի ուժով ու քաշությամբ: Արագաքաջ զնաց դեպի իր զորաբանակը և սկսեց ի մարտ խորխուսել հերոսներին: Մենելաոսն այդ ժամանակ բարձրաձայն կոչում էր հերոսներին Պատրոկլեսի մարմինը պաշտպանելու: Առաջինը եկավ Այաքսը՝ Օլլևաի որդին, հետո Իդոմենևսը, Մերիոնեսը և ուրիշները: Հերոսներն իրենց վահաններով պատնեշեցին Պատրոկլեսի մարմինը, բայց տրոյացիները ետ մղեցին նրանց: Երբից տիրեցին նրանք Պատրոկլեսի մարմինին: Բայց մեծազոր Այաքս Տելամոնիզը ցրի՞վ տվեց տրոյացիների շարքերը և խլեց դիակը, հարվածելով դիակը քարշ տվող հերոսին: Կրկին ջարդ սկսվեց դիակի համար և երերացին տրոյացիների շարքերը: Բայց Ապոլոնը մարտնչելու ուզեց ինչ էնեասին, նա զորքը ետ պահեց փախուստից, Ավիլի արյունահեղ դարձավ մարտը: Հողը ողողվել էր արյամբ, դիակները կիտվել էին իրար վրա: Ամենակուլ կրակի նման բորբոքվում էր մարտը: Իսկ Ձևը խավարով էր պատել Պատրոկլեսի դին: Այնպիսի խավարով էր պատած Պատրոկլեսի դին, որ կարծես էլ ո՛չ արև կար երկնքում, ո՛չ էլ լուսին: Բայց միայն Պատրոկլեսի շուրջն էր պատած խավարով, իսկ ոռոգմադաշտի մնացած մասը ողողված էր արևի լույսով, և երկնքում մի ամպի կտոր էլ չկար: Խավարի մեջ մարտնչում էին հերոսները՝ Պատրոկլեսի մարմնի համար:

Ճակատամարտից դուրս կանգնած էին Աքիլլեսի անմահ նժույզները և դառն արտասուք էին թափում իրենց տիրոջ մտերիմի մահվան համար: Զուր էր կառավար Ավտոմեդոնը փորձում ստիպել, որ շարժվեն տեղից. նժույզները կանգնել էին անշարժ, պիտահակ: Նրանց բաշերը մինչև գետին էին կախվել: Տեսավ Ձևը նժույզները և միտք արեց. «Թ՛, դժբախտ նժույզներ: Ինչո՞ւ ձեզ, անմահներիդ, նվիրեցիք մենք Պելևսին: Մի՞թե նրա համար, որ մասնակից լինեիք մարդկանց վշտին, որովհետև չկա ավելի տարաբախտ էս: և ողջ տիեզերքում, քան մարդը: Բայց մի՛ տրտմեք, ձեզ երբեք չի՛ տիրի Հեկտորը: Ես ձեզ ուժ կտամ. դուրս հանեցեք Ավտոմեդոնին ուղամի դաշտից: Ես դեռ հաղթանակ կտամ տրոյացիներին, բայց միայն այսօր, քանի դեռ արևը մայր չի մտել:»

Հակայական ուժ ներշնչեց նժույզներին Ձևը, և նրանք Ավտոմեդոնի հետ միասին սլացան ուղամադաշտով: Աքիլլեսի կառավար-

ըր ձեռքն առավ ծանրագին նիզակը և հարվածեց հերոս Արեւտասին: Հանեց վրայից նրա զրահները, ուրախանալով, որ զեթ զրանով վրեժխնդիր եղավ Պատրոկլեսի մահվան համար:

Պատրոկլեսի մարմնի շուրջը առաջվա պես եռում էր մարտը: Աթենաս դիցուհին, բոսորագույն ամպերով պարուրված, իջավ մարտնչող հույն հերոսների մոտ և, Փենիքսի կերպարանքն առած, սկսեց քաջալերել նրանց: Մենելաոսը, պատասխանելով Փենիքսին, (չճանաչեց նա Աթենասին) բոլոր աստվածներից առաջ Աթենասին օգնութեան կանչեց: Հրճվանքով լցվեց Աթենասը և անպարտելի ուժ ներշնչեց Մենելաոսին: Իսկ Ապոլոնը ոգեշնչում էր տրոյացիներին: Ավելի ու ավելի արյունահեղ էր դառնում մարտը: Յնցեց Ջևան իր վահանը և թնդաց որոտը: Սարսափը տիրեց Հելլադայի հերոսներին: Տրոմեց Այաքս Տելամոնիդը, երբ տեսավ հույների փախուստը, Ադիբսեց նա Ջևան ցրել խավարը, աղաչեց, որ չկործանի հույներին, իսկ եթե ա՛յգ է նրա կամքը, ապա թող կործանի նրանց, միայն թե օրը ցերեկով:

Լսեց Ջևան Այաքսի աղերսը: Խավարը ցրվեց և կրկին փայլեց արևը: Այաքսը Մենելաոսին խնդրեց գտնել Նեստորի որդուն՝ Անտիլոքոսին և նրա միջոցով լուր ուղարկել Աթիլեսին, որ Պատրոկլեսն սպանված է և որ տրոյացիները կարող են տիրել նրա մարմնին: Կատարեց Այաքսի խնդիրը Մենելաոսը, գտավ Անտիլոքոսին և պատմեց Պատրոկլեսի կործանման մասին: Սոսկումը պատեց Անտիլոքոսին: Նա դեռ չգիտեր, որ Պատրոկլեսն սպանված է: Դառն արտասուք թափելով, Նեստորի երիտասարդ որդին շտապեց Աթիլեսի մոտ: Իսկ Պատրոկլեսի դիակի մոտ է՛լ ավելի սոսկալի դարձավ կոտորածը: Այաքսը Մենելաոսին ու Մերիոնին խորհուրդ տվեց բարձրացնել մարմինը և ճամբար տանել: Իսկ ինքը, իր մարմնով ծածկելով նրանց, սկսեց ետ մղել տրոյացիներին: Տեսան տրոյացիները, որ հերոսները բարձրացնում են Պատրոկլեսի մարմինը և գազազած շների պես հարձակվեցին նրանց վրա: Բայց բավական էր, որ նրանց կողմը դառնար Այաքսը, որպեսզի սարսափից զուլնատված տրոյացիք կանգ առնեին: Ավելի ուժգին բորբոքվեց մարտը, նման այն հրդեհին, որ ոչնչացնում է քաղաքը, լափելով ամեն ինչ շրջակայքում: Դանդաղաբայլ գնում էր Մենելաոսը՝ Պատրոկլեսի դիակը ձեռքին: Մեծ դժվարութեամբ էր ետ մղում Այաքսը տրոյացիների զրոհը, որոնց առաջին շարքում կրավում էին էնեասն ու Հեկտորը:

Այդ ժամանակ Աթիլեսը նստել էր իր վրանի մոտ, և մտածում էր, թե ինչո՞ւ չի վերադառնում Պատրոկլեսը, նրան անհանգստացնում էր հույների կրկին փախուստի մատնվելը: Արդեն սկսում էր կասկածել, որ Պատրոկլեսը զոհվել է: Հանկարծ լալով նրան մոտեցավ Նեստորի որդին: Նա բերել էր Պատրոկլեսի մահվան գույժը: Անպատմելի մի վիշտ համակեց Աթիլեսին: Երկու ձեռքով նա վերցրեց օջախի մոխիրը և ցանեց գլխին: Մոխիրը թափվեց նրա զգեստների վրա: Գեռնաթավալ՝ սկսեց վշտից գլխի մազերը փռել: Լալիս էր երիտասարդ Անտիլոքոսը ևս: Բռնել էր Աթիլեսի ձեռքը, որ նա վշտից վերջ շտար իր կյանքին: Բարձրաձայն հեկեկում էր Աթիլեսը: Լսեց նրա լացի ձայնը Թետիսը և բարձրաձայն հեծկրտաց: Նրա մոտ շտապեցին քույրերը՝ ներեուհիները և նրանք էս ողբաձայն լաց ու կոծ բարձրացրին:

— Օ՛, քույր իմ,— հեծեծաց Թետիս աստվածուհին,— վա՛յ ինձ, վա՛յ: Ա՛խ, ինչո՞ւ ծնեցի ես Աթիլեսին: Ինչո՞ւ դաստիարակեցի նրան, ինչո՞ւ թույլ տվի զնալ Տրոյայի պարիսպների տակ: Այլևս երբեք չեմ տեսնի նրան՝ Պելեսի լուսապայծառ ապարանքը վերադարձած: Նա իր ողջ կարճատև կյանքում պիտի տառապի Անկարող եմ ես օգնել նրան: Այժմ ես կգնամ և կիմանամ, թե ինչու է վշտացել նա:

Անմիջապես ողբացող Աթիլեսի առաջ կանգնեց նրա մայրը՝ Թետիսը, իր քույրերի հետ միասին: Լալով զրկեց սիրասուն որդու զլուխը և հարցրեց նրան.

— Ինչո՞ւ ես այդպես բարձրաձայն հեկեկում: Մի՛ թաքցնի, ամեն ինչ ասա՛ ինձ: Չէ՞ որ Ջևան կատարեց բո խնդիրքը, և հուճական զորաբանակը մինչև նավերը քշեց: Նրանք մի բան են միայն ուզում՝ որ դու օգնես իրենց:

— Ես այդ գիտեմ, սիրելի մայր,— պատասխանեց Աթիլեսը,— բայց ի՞նչ կա այդտեղ ուրախալի: Ես կորցրել եմ Պատրոկլեսին: Ամենից շատ նրան էի սիրում և զնահատում նրա կյանքը, ինչպես իմ սեփականը: Սպանել է նրան Հեկտորը և հափշտակել այն զրահները, որ աստվածներն էին ընծայել Պելեսին: Չեմ ուզում այլևս ապրել մարդկանց մեջ, եթե չկարողանամ նիզակովս դիտապատ անել Հեկտորին, եթե նա կյանքով չվճարի Պատրոկլեսի մահվան համար:

— Բայց չէ՞ որ Հեկտորի մահվանը բո՛ մահը պիտի հաջորդի,— բացականչեց Թետիսը:

— Օ՛ր, թող հենց հիմա էլ մեռնեմ ես, եթե չկարողացա փրկել ընկերոջս, Երևի նա ինձ կանչում էր մահից առաջ: Օ՛ր, թող կործանվի թշնամությունը, նա իմաստուններին անգամ կատաղեցնում է: Կմտաճամ Ագամեմնոնի դեմ ունեցած զայրույթս և կրկին մարտի դուրս կգամ, որ սպանեմ Հեկտորին: Մահն ինձ չի վախեցնում: Ոչ ոք չի խուսափի մահից, շտապփեց նաև մեծամուն Հերակլեսը, չնայած սիրում էր նրան ամպրոպային Չեսը՝ նրա հայրը: Ես սլառատ եմ մեռնել այնտեղ, ուր ճակատագիրն է կանխորոշել, բայց նախ մեծ փառք պիտի վաստակեմ ես: Ո՛չ, ետ մի՛ պահիր ինձ, մա՛յր իմ: Ոչ մի բանով չեմ կարող ինձ կասեցնել:

Այդպես պատասխան ավեց Աքիլեսը մորը: Միայն մի բան խնդրեց որդուն Թետիս դիցուհին. մարտի շրջանվել, քանի դեռ ինքը Հեկեասոս աստծուց նոր զենք ու զրահ չի բերել:

Սովը սուզվեցին չքնաղագեղ ներհուհիները: Թետիսը խնդրեց նրանց հաղորդել հորը՝ Ներեոսին, թե ինչ է տեղի ունեցել Տրոյայի պարիսպների տակ: Իսկ ինքը բարձրագահ Օլիմպոս սավառնեց՝ Հեկեասոս աստծու մոտ:

Մինչ այդ զժպտությամբ էին դիմանում հույները տրոյացիների զրոհին: Ամենակեղ բոցի նման հույներին հալածող Հեկտորն արդեն երեք անգամ ճիգ էր արել կորզել դիակը Մենելասի ձեռքից: Երեք անգամն էլ Այաքսները ետ էին մղել նրան: Եվ կտիրեր Հեկտորը Պատրոկլեսի դիակին, եթե Աքիլեսին չներկայանար Հերայի կողմից առաքված աստվածների բանբեր Իրիսը: Նա դրդեց Աքիլեսին զնալ և պաշտպանել ընկերոջ դին: Բայց չէր կարող ճակատամարտի դուրս գալ Աքիլեսը, նա զենք ու զրահ չուներ: Այդ ժամանակ Իրիսը պատվիրեց Աքիլեսին անզեն կտնդնել հունական ճամբարը շրջափակող պատնեշի վրա և իր տեսքով սարսափեցնել զրոհող տրոյացիներին:

Դեպի պատնեշը գնաց Աքիլեսը: Աթենաս-Պալլասը նրա թախն դրեց վահանը, զլուխը պսակեց ոսկեղեն ամպով և զարմանահրաշ մի փայլով, որ մինչև երկինք էր ճառագում: Կանգնեց Աքիլեսը պատնեշի վրա և զոռաց ահեղաթուղի ձայնով, նրա հետ միասին ահեղաթուղի գոչեց նաև Աթենաս-Պալլասը: Սուսկումը տիրեց տրոյացիներին: Նրանց նժույզները վախեցան այդ ամենի գոռոցից և ետ սլացան: Սարսափեցին կառավարները, երբ տեսան Աքիլեսին գլխի հրեղեն սլակը: Երեք անգամ գոռաց Աքիլեսը ահեղաբար, երեք անգամն էլ սոսկալի իրարանցում սկսվեց տրոյական

բանակում: Այդ իրարանցման մեջ զոհ զնաց տրոյական տասներկու հերոս: Նրանց մի մասն ընկավ նիզակների վրա ու խոցվեց, մյուս մասը տրոյեցին ձիերը: Իսկ հույները դուրս հանեցին Պատրոկլեսի մարմինը, զրին պատգարակի վրա և աղեկուորաց ու կոծով տարան Աքիլեսի վրանը: Նրանց հետևեց նաև Պելևսի որդին: Բարձրաձայն հեկեկում էր նա, նայելով ընկերոջը, որին ինքն էր ուղարկել արյունահեղ մարտի:

Հերան արևի աստված Հելիոսին պատվիրեց ժամանակեց շուտ սուզվել օվկիանոսի ջրերը: Վրա հասավ գիշերը: Մարտը վերջացավ, և քնի մեջ ընկզմվեց հույների ճամբարը: Իսկ տրոյացիները խորհրդի հավաքվեցին դաշտում: Խորհուրդ էին անում սոթի վրա կանգնած: Նրանցից ոչ ոք չէր հանդգնում նստել՝ վախենում էին Աքիլեսի հարձակումից: Պոլիդամանթոսը խորհուրդ տվեց վերադառնալ Տրոյա, այստեղ շսպասել լուսարացին, որ Աքիլեսը հարձակում գործեր իրենց վրա: Շատ հերոսների կխողխողեր նա, եթե բաց դաշտում հարձակվեր տրոյացիների վրա: Եթե իրենք բուրբ պաշտպանվեն պարսպի վրա կանգնած, ապա զո՛ւր պտույտ կգա Աքիլեսն իր արագաւլաց նժույզներով Տրոյայի շուրջը՝ քաղաքը գրավել նա չի կարող: Բայց Հեկտորը մերժեց Պոլիդամանթոսի խորհուրդը. նա տրոյացիներին հրամայեց մնալ գաշտում, և ճամբարի առաջ պահակախումբ կանգնեցնել: Հեկտորը դեռևս հույս ուներ հարձակում գործել հունական նավերի վրա և բշել նրանց Տրոյայից: Հեկտորը հայտարարեց, որ եթե Աքիլեսը վճռի նորից մասնակցել ճակատամարտին, ապա ինքն այլևս խույս չի տա նրա հետ մենամարտելուց: Այդ զեպքում իրենցից մեկն ու մեկը՝ ինքը կամ Աքիլեսը, հաղթական փառքով տուն կվերադառնան: Մթազենց տրոյացիների միաբը Աթենաս-Պալլասը, և նրանց ճամբարը անզավարկեց դաշտում գիշերելու:

Իսկ հունական ճամբարում Աքիլեսը ողբում էր Պատրոկլեսի մահը՝ ձեռքերն սպանվածի լանջին դրած: Բարձրաձայն ու ծանր հեծեծում էր նա, նման այն առյուծին, որի կորյուններին գողացել էր որսորդը: Վերադարձել է որսից առյուծը, որըում չի գտել կորյուններին, ահեղաձայն մոնչոցով ման է գալիս անտառում և փնտրում իր կորյուններին հափշտակողի հետքերը:

— Օ՛ր, աստվածներ,— բացականչեց Աքիլեսը,— ինչո՞ւ խոստացա Պատրոկլեսի հորը, թե հայրենիք կվերադառնամ Պատրոկլեսի հետ միասին, Ո՛չ, մեր երկուսիս վիճակված է մեր այրամբ

բոսոր ներկել տրոյական հողը: Չեն դիմավորի արշավից վերա-
դարձող իրենց որդուն ոչ հայրս՝ Պելեսը, ոչ էլ սիրասուն մայրս:
Թող մենե՛մ էս, թանկագին Պատրոկլես, բայց ոչ ավելի վաղ,
քան վրեժ կլուծեմ Հեկտորից և փառահեղ թաղում կկազմակերպեմ
քեզ համար:

Աքիլլեսը ընկերներին պատվիրեց լվանալ Պատրոկլեսի արնա-
թաթավ մարմինը և անուշահոտ յուղերով օծել: Կատարեցին այդ
պատվերը Աքիլլեսի ընկերները: Պատրոկլեսի դիակը դրին շքեղո-
րեն զարդարված մահճի վրա և ծածկեցին նրբին քաթանով, վրա-
յից էլ շքեղ ծածկոց գցեցին: Ողջ դիշեր միրմիգոնցիները ողբացին
Պատրոկլեսի մահը, և նրանց հետ միասին լաց ու կոծ արին Աքիլ-
լեսի և Պատրոկլեսի գերեզմարած տրոյուհիներն ու դարդանուհի-
ները:

ՔԵՏԻՍԸ ՀԵՓԵՍՏՈՍԻ ԱՊԱՐԱՆՔՈՒՄ: ԱՔԻԼԼԵՍԻ ԶԵՆՔԵՐԸ

Շարադրված է բոտ Հոմերոսի «Իլիական» պոեմի:

Թեոխս դիցուհին անհապաղ լուսապայծառ Օլիմպոս սավառ-
ենց՝ դեպի Հեփեստոսի պղնձակերտ ապարանքը: Երբ Թեոխսն
ապարանք մտավ՝ Հեփեստոսը դարբնոցումն էր: Քրտնաթաթախ
Հեփեստոսը միանգամից քսան եոտանի էր շինում: Ոսկեծուլլ
անիվների վրա դրված, ինքնաշարժ այդ եոտանիները զլորվում
էին աստվածների մոտ ու վերադառնում: Հեփեստոս աստծուն
մնում էր շինել զարդերով պատած բռնակները միայն: Աստվածը
բռնակների մեխերն էր կոտւմ, հրբ լուելյայն ապարանք մտավ Թե-
ոխս դիցուհին: Նրան տեսավ Հեփեստոս աստծո չքնաղագեղ կի-
նը՝ Քարիսը: Քնքշորեն բռնեց նա Թեոխսի ձեռքը և ասաց նրան.

— Մտի՛ր մեր շքասրահը, Թեոխ՛ս, դու հազվագեղ ես այ-
ցելում մեզ, Արդյոք ո՞ր կարիքն է մեզ մոտ բերել քեզ:

Կանչեց Քարիսը Հեփեստոսին, որ փութա Թեոխս աստվածու-
հու մոտ: Լսելով, որ իր մոտ է եկել Թեոխսը, նա, որ մի ժամանակ
փրկել էր իր կյանքը, երբ Հերան գահավեժ վայր էր գլորել նրան
Օլիմպոսից, Հեփեստոսն շտապեց կնոջ կանչին: Նա վեր կացավ
զնգանի մոտից, հավաքեց գործիքները, որոնցով աշխատում էր, և
լցրեց արծաթապատ արկղի մեջ: Հեփեստոս աստվածը շփեց ձեռ-

քերը, կուրծքը, պարանոցն ու դեմքը խոնավ սպունգով՝ մաքրելով
քրտինքն ու մուրը, հազնվեց և, իր հաստաբեստ գավազանի վրա
հենվելով, եկավ Թեոխս աստվածուհու մոտ: Հեփեստոս աստծուն
թեանցուկ բերում էին իր իսկ ձեռքով ոսկուց կուած սպասուհիները,
որոնք կարծես կենդանի լինեին: Բռնեց Թեոխսի ձեռքը Հեփեստոսն
ու հարցրեց.

— Ասա ինձ, դիցուհի, ի՞նչ ես ուզում: Եվ եթե կարենամ,
ամեն ինչ պատրաստ եմ անել քեզ համար:

Արցունք հեղելով, Թեոխսը պատմեց, թե ինչպես որդին զըրկ-
վել է այն զենք ու զրահից, որ աստվածներն իբրև ընծա տվել էին
նրա հորը՝ Պելեսին, թե ինչպես է ողբում ընկերոջը Աքիլլեսը և
տենչում վրեժ լուծել ընկերոջն սպանողից, բայց զենք չունի: Դի-
ցուհին Հեփեստոսին խնդրեց զենքեր կոել որդու համար: Թեոխ-
սին լսելուն պես համաձայնեց Հեփեստոսը այնպիսի զենքեր կոել
նրա համար, որ բոլորը զարմանան նրանց արտակարգ զեղեցկու-
թյան վրա:

Կրկին իր դարբնոցը դարձավ Հեփեստոսը: Վերցրեց իր փուք-
սերը, դրեց հնոցի մոտ և հրամայեց բորբոքել կրակը: Հեփեստոսի
կամքին հլու, փուքսերը մերթ հանդարտ, մերթ էլ բուռն թափով
փչում էին կրակը, հնոցում հսկայական բոց բարձրացնելով, իսկ
Հեփեստոսը հնոցի մեջ էր գցում պղինձ, անագ, արծաթ և թան-
կարժեք ոսկի: Ապա առչեք դրեց զնդանը և ձեռքն առավ իր հրս-
կայական մուրճն ու աքցանը: Ամենից առաջ Աքիլլեսի վահանը
կոեց, Չարմանահրաշ պատկերներով զարդարեց Հեփեստոսը վա-
հանը: Նրա վրա պատկերեց երկիրը, ծովն ու երկինքը, իսկ երկրն-
քում՝ արև, լուսին ու աստղեր: Աստղերի մեջ նա պատկերեց Պլեադ-
ներին, Հիադներին և Օրիոն ու Արջ համաստեղությունները: Վա-
հանի վրա Հեփեստոսը երկու քաղաք ևս պատկերեց: Մի քաղաքում
հարսանյաց հանդես է փողոցով ընթանում են հարսանեկան երթը
և պատանիներից կազմված երգչախմբերը, իսկ կանայք իրենց
տների շնմբին կանգնած նրանց են նայում: Իսկ հրապարակում
ժողովրդական հավաք է. այնտեղ պատկերված են երկու քաղաքա-
ցի՝ սպանության համար վճարվելիք վիրայի՝ մասին վիճելիս: Եր-
կու կուսակցության բաժանված քաղաքացիները պաշտպանում են

1 Վրա—վաթ, որ պարտավոր է սպանվողի բարեկամներին վճարել սպա-
նալը:

վիճողներին: Բանբերները հանգստացնում են բաղաբացիներին: Զորագործը նստած են բաղաբի ծերերը և նրանցից յուրաքանչյուրը, ձևոքն աննելով արքայացույրը, արձակում է իր վճիռը՝ վիճելի հարցի շուրջը: Իսկ շրջանադժի մեջ դրված է երկու ասղանդ՝ ոսկի, որպես պարգև նրան, ով ավելի արդարամտորեն կդատի վիճողներին:

Մյուս բաղաբը պաշտել է թշնամին: Պաշարվածները, բաղաբի պաշտպանությունը թողնելով կանտնց, երեխաներին ու ծերերին՝ դարանակալել են թշնամուն: Նրանց պարապուխներն են ասեղատես ու վսեմաշուք Մրես աստվածը և Աթինաս-Պալլաս դիցուհին: Երկու լրտեսներ նշանակված են թշնամուն հետևելու: Բայց ահա երևաց նախիրը, որ հափշտակել էր թշնամին: Գարանակալած բաղաբացիները նստ են խլում կովերն ու ոչխարները: Թշնամին ճամբարում լսում է աղմուկ-աղաղակը և շտապում օգնություն: Արյունահեղ մարտ է սկսվում, իսկ ռազմիկների մեջ մտնում են ոխի ու խոսովության աստվածուհիները և մահվան ասեղ աստվածը:

Վահանի վրա Հեփեստոսը պատկերել էր նաև վար ու ցանքը: Հողագործները բայլում են գութանների հետևից: Երբ նրանք հասնում են դաշտի սահմանին, սպասավորները նրանց զավաթներով գինի են մատուցում: Աստվածը պատկերել էր նաև ցորենի հունձը: Հնձվորների մի մասը հնձում է, մյուսները խուրձ են կապում, իսկ երեխաները հասկ են հավաքում: Գաշտի տերը հրձվանքով նայում է, թե ինչպես են հավաքում առատ բերքը: Մյուս կողմում կանայք ճաշ են պատրաստում հնձվորների համար: Հեց կողքին պատկերված էր խաղողի բերքահավաքը: Պատանիներն ու աղջիկները բերում են զամբյուղներով լի խաղողը: Մի պերճ պատանի նվագում է քնարի վրա, իսկ շուրջը բոլորում է ուրախ խմբապարը: Պատկերել էր Հեփեստոսը եզների նախիրը ևս: Նախրի վրա են հարձակվել երկու առյուծ: Նախրապանները ջանք են թափում հալածել առյուծներին, իսկ շները վախենում են հարձակվել նրանց վրա և միայն հաշում են: Հենց կողքին պատկերված էին հովտում արածող արծաթագլուձ ոչխարները, փարախները և հովիվների հյուղերը: Վերջապես, Հեփեստոսը պատկերել էր ձեռք-ձեռքի

տված կաքավող պատանիների ու աղջիկների խմբապարը և պարով հիացող համագյուղացիներին: Իսկ վահանի շուրջը Հեփեստոսը պատկերել էր Օվկիանոսը, որ ողողում է երկրի շուրջը: Վահանը պատրաստելուց հետո Հեփեստոսը կոնց Աթլլեսի՝ հուրհրատող բոցի նման հթավազ դրահը, ծանր սաղավարտը՝ ոսկեփունջ գարգամանկով և ճկուն անազից՝ սրնքակալները:

Աշխատանքն ավարտելուց հետո Հեփեստոսը վերցրեց ողջ սպասարկությունը և մատուցեց Թետիս աստվածուհուն: Սրաթոշ բազկի նման Օլիմպոսից զեպի հեռավոր երկիր սուրաց Թետիսը, որ շատափուլի որդուն հասցնի զենք ու դրահը:

ԱՅՈՒՆԵՍԸ ՔԵՇՎՈՒՄ Է ԱԳԱՄԵՄԵՆՆԻ ԶԵՏ

Ետաբովում է ըստ Համեսոսի «Եղիակուն» պոեմի:

Առավոտը վաղ, արշալույսը դեռ նոր էր շառագունել, Թետիսը տարավ արգու զենք ու դրահը և գտավ նրան Պատրոկլեսի դեակի վրա հեկիկալիս: Արգուն սփոփելու համար Թետիսը ցույց տվեց բերած զենք ու դրահը: Միրմիդոնցիներից ոչ մեկը չէր կարողանում նայել զենք ու դրահին՝ այնպես էին շողշողում դրանք: Կրակի նման շողացին Աթլլեսի աչքերը: Վերցրեց այդ զենք ու դրահը և սկսեց սքանչացած զենել դրանք: Թետիսի որդին վճեց անհապաղ մարտի նետվել տրոյացիների դեմ: Միայն մի բան էր անհանգստացնում Աթլլեսին. նա վախենում էր, որ Պատրոկլեսի ճարմինը կարող է նեխել: Բայց Թետիս դիցուհին հանգստացրեց որդուն, նա խոստացավ նեկտար և ամբրոսիա ներարկել և պահպանել մարմինը. դա ավելի պիտի գեղեցկացնեի մեռած Պատրոկլեսին: Իսկ որդուն խորհուրդ տվեց գնալ հունական առաջնորդների խորհրդին:

Գնաց ծովափով Աթլլեսը և ժողովրդական հավաքի կանչեց բալբին: Աղջ զորաբանակը հավաքվեց Ագամեմնոնի վրանի շուրջը: Աչք չմնաց վրանների և նավերի մոտ: Կաղալով եկան նաև Աթլլեսն ու Դիոմեդեսը և վերքից տառապող Ագամեմնոնը: Երբ բոլորը հավաքվեցին և լուսնուն տիրեց, Աթլլեսն Ագամեմնոնին առաջարկեց հաշտվել: Նա շտապեցրեց բոլորին անհապաղ ճակատամարտ սկսել տրոյացիների դեմ: Հրձվանքով լցվեցին բոլոր հուլները, երբ լսեցին, որ վերացել է Աթլլեսի և Ագամեմնոնի

1 Կաղալու Ոսկին գնահատվում էր ըստ կշռի, բանի որ դրամ գոյություն չունեի:

Թշնամութիւնը: Վեր կացավ իր տեղից Ազամեմնոնը, խոստովանեց, որ ինքը հանցավոր է և ասաց, որ երկպառակութիւն աստվածուհին էր կուրացրել իրեն: Նա թեթևասահ քայլերով շրջում է մարդկանց գլխավորների մեջ և իր ցանցը զցում նրանց: Հենց իրեն՝ Զևսին էլ մի անգամ կուրացրել էր նա: Ազամեմնոնը խոստացավ անհապաղ Աքիլլեսին տալ այն բոլոր պարգևները, որ խոստացել էր նրան՝ հաշտվելու համար: Բայց այդ պարգևներն այլևս պետք չէին Աքիլլեսին. նա մտածում էր միայն մարտի, Հեկտորից վրեժ լուծելու մասին, նա շուտափույթ մարտի էր կոչում բոլորին: Խորամիտ Ողիսևը, սակայն, Աքիլլեսին խորհուրդ տվեց շտապելու նա ասաց, որ ուղիղները նախ պիտի կշտանան, որ ուտելիքով ու զինով կազդուրված սկսեն մարտը: Իսկ այդ միջոցին Աքիլլեսը պիտի ընդուներ պարգևները և նրան վերադարձվող Բրիսեիսին: Ազամեմնոնը համաձայնեց Ողիսևի խորհրդին: Նա խնդրեց, որ Ողիսևն ինքը, պատանիների հետ միասին, գնա պարգևները և Բրիսեիսին բերելու, իսկ բանբեր Տալփիբիսոսին ուղարկեց մի վայրի վարազ բերելու, որ զոհ մատուցեն աստվածներին՝ իրենց հաշտութիւն համար: Իզուր Աքիլլեսը խնդրում էր հող շտանել պարգևները՝ համար, այլ հողալ մարտի մասին: Նա ուզում էր, որ հույներն իսկույն մարտի նետվեն և սպանվածների վրեժը լուծելուց հետո միայն՝ Թրեկոյան խնջույքի նստեն: Աքիլլեսը հրաժարվում էր խրախճանքից, նրա մտքով կեր ու խում չէր անցնում, երբ նրա վրանում պառկած էր հավատարիմ ընկերը, որի վրեժը դեռ չէր առել: Բայց Ողիսևը Աքիլլեսին համոզեց համբերատար լինել և շսկսել մարտը: Ողիսևն Ազամեմնոնի վրանից բերեց պարգևները, իսկ հերոսները բերին գերուհիներին և Բրիսեիսին:

Բոլորն իրենց վրանները ցրվեցին, իսկ միբմիդոնցիները, Ազամեմնոնի պարգևներն առնելով, գնացին դեպի իրենց նավերը: Նրանց հետ գնաց նաև Աքիլլեսը: Շուտով Աքիլլեսի մոտ եկան հույների առաջնորդները և խնդրեցին, որ Աքիլլեսն ամբապնդվի ուտելիքով, բայց նա հրաժարվեց: Աքիլլեսի մոտ մնացին Ազամեմնոնը, Մենելաոսը, Ողիսևը, Նեստորը, Իդոմենևսը և Փենիքսը: Նրանք աշխատում էին սփոփել մեծազոր հերոսին, բայց նա միայն Պատրոկլեսի մասին էր մտածում և հառաչելով ասում էր.

— Մի ժամանակ, Պատրոկլես, դ՛ու էիր մարտի դուրս գալուց առաջ ինձ ուտելիք առաջարկում, իսկ այժմ, նիզակով խոցված, պառկել ես դու իմ վիշտն ավելի մեծ չէր լինի, եթե ես առնեի հո-

րըս մահվան լուրը կամ էլ լսեի սիրասուն զավակիս՝ Նեոպտոլեմոսի մահը, որին թողել եմ Սկիրոսում: Հույս ունեի, թե մենակ կմեռնեմ օտարութիւն մեջ, կարծում էի, թե դու կվերադառնաս Փտիոտիս, և այնտեղ կբերես որդուս:

Դառնադի արցունք էր թափում Աքիլլեսը: Հառաչում էին շուրջը հավաքված բոլոր հերոսները, ամեն մեկը հիշում էր հայրենիքում թողած հարազատներին: Օլիմպոսից Զևսը տեսավ Աքիլլեսի վիշտը և Աթենաս-Պալլասին պատվիրեց գնալ հերոսի վրանը և նրա կուրծքը ցողել նեկտարով և ամբրոսիայով: Արծվի նման Օլիմպոսից սուրաց Աթենասը և Աքիլլեսի կուրծքը ցողեց նեկտարով ու ամբրոսիայով, որպեսզի նա ուժեղը չվատնի:

ԱՔԻԼԼԵՍԸ ՄԱՐՏԻ Է ԲՈՆՎՈՒՄ ՏՐՈՅԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Շարադրված է ըստ Համերոսի «Եվակաե» պոեմի:

Զինվեցին հույները: Մեկը մյուսի հետևից դուրս էին գալիս ջրկատները ճամբարից: Հողմահալած ձյան փաթիլների նման մարտի էին սլանում հույները, Թվով շատ էին նրանք: Արևի տակ շողշողում էին նրանց սաղավարտները, նիզակներն ու վահանները: Ցնցվեց առափնյա հողը՝ ուղիղների ոտքերի տակ: Զինավառվեց Պելևսի որդին ևս: Հագավ Հեփեստոսի կռած զրահները, ուսից կախ արեց սուրը, ձեռքն առավ լուսնի նման շողացող վահանը և արկղից հանեց իր հսկայական նիզակը, որով ինքը միայն կարող էր կռվել: Հագավ նաև աստղի պես ճաճանչափայլ սաղավարտը և դուրս եկավ վրանից: Ցասումով էին փայլում նրա աչքերը, իսկ սիրտը առաջվա պես կտրատվում էր անտանելի վշտից: Երկանվին լծեցին Աքիլլեսի նժույզները: Նրա կառավար Ավտոմեդոնը երկանիվ բարձրացավ և ձեռքն առավ մտրակն ու երասանները: Աքիլլեսն էլ կառք բարձրացավ: Մարտի գնալիս զիմեց նա իր նժույզներին.

— Օ՛, Քսանթոս և Բալիոս, աստվածային Պողոթնի զավակներ, կենդանի դուրս բերեք ինձ մարտի դաշտից, ոչ այնպես, ինչպես Պատրոկլեսին. չլքեք ինձ մեռած՝ ուղիղ դաշտում:

Հանկարծ, գլուխը հակելով, մարդկային ձայնով Աքիլլեսին զիմեց Քսանթոսը, որին Հերան գուշակելու կարողութիւնը էր օժտել:

— Այսօր, մեծդ Աքիլլես, մենք մարտից կենդանի դուրս կհանենք քեզ, բայց մոտ է օրհասդ: Մեր հանցանքը չէ, որ զոհվեց Պատրոկլեսը: Նրան խոցեց նետածիգ Ապոլոնը, նա՛ Հեկտորին շնորհեց հաղթանակը: Եթե Զեփիրոսի՛ նման նույնիսկ սուրանք, միևնույն է, քեզ մահ է վիճակված Ապոլոն աստծու և մահկանացու տղամարդու ձեռքով:

Զայրագնած գոչեց Աքիլլեսը.

— Ի՛նչ ես մահ գուշակում ինձ, Քսանթոս: Ե՛ս էլ գիտեմ, քրիմ ճակատագիրն է զոհվել այստե՛ղ, հորից ու մորից հեռու: Բայց ես չե՛մ հեռանա մարտից, մինչև որ Պատրոկլեսի վրեժը լուծելու համար տրոյացիների արյամբ չհագեցնեմ հողը:

Այսպես խոսեց Աքիլլեսը և ի մարտ վարեց նժույզներին: Իսկ հույներն արդեն շարվել էին դաշտում և գրոհում էին տրոյացիների վրա, որոնք գրավել էին Տրոյայի դիմացի բարձունքը:

Այդ ժամանակ ամպրոպային Զևսը Թեմիս աստվածուհուն պատվիրեց խորհրդի հրավիրել բոլոր աստվածներին: Զևսի ապարանքը հավաքվեցին աստվածները բոլոր, եկան նույնիսկ գետերի ու հեղեղների աստվածները, հավաքվեցին հավերժահարսներն ու աղբյուրների աստվածուհիները: Ծանթարձակ աստվածն ասաց հավաքված աստվածներին, թե ինքը չի խառնվելու մարտին, այլ ճակատամարտը պիտի դիտի Օլիմպոսի բարձունքից: Բայց աստվածները կարող են մասնակցել ճակատամարտին՝ որ կողմումն էլ ուզենան: Զևսը երկյուղ էր կրում, որ տրոյացիներն անկարող կլինեն դիմանալ Աքիլլեսի գրոհին, և նա կարող է, հակառակ կանխորոշված ճակատագրի, տիրել Տրոյային: Առանց հապաղելու գեպի երկիր սուրացին աստվածները: Հերա և Աթենաս-Պալլաս աստվածուհիները, Պոսեյդոն, Հերմես և Հեփեստոս աստվածները բռնեցին հույների կողմը, իսկ Ափրոդիտե, Արտեմիս և Լետո աստվածուհիները, ապա Արես և Ապոլոն աստվածները, ինչպես և գետերի Քսանթոս² աստվածը՝ կանգնեցին տրոյացիների կողմը:

Հենց որ օլիմպական աստվածները մոտեցան ուղիմարանակներին, էրիս աստվածուհին իսկույն հրահրեց մարտը: Ահեղագոռ ձայնով գոչեց Աթենաս-Պալլասը՝ սուրալով հունական ուղիմարանակներին:

¹ Արեմոյան քամի, այստեղից էլ՝ զեփյուս:

² Սկամանգրոս գետի աստվածը:

բանակի շարքերի մեջ: Ահեղամոռնը մրրկիկ նման հնչեց պատերազմի աստված Արեսի պատասխանը: Իրար բախվեցին զորարանակները: Դղրդաց ու ճայթեց Զևսի որոտը: Սասանեց ողջ երկիրը Պոսեյդոնը: Ցնցվեցին հիմնիվեր լեռները, զողողացին և մեծ Տրոյան և հունական նավերը: Զարհուրեց մեռյալների հողիների թագավորության տիրակալ Հագեսը: Նա վեր թուով իր գահից, սարսափելով, որ շուտ կգա երկիրը, և կբացվի իր սարսափների թագավորությունը, որ սարսուռ էր աղղում անմահ աստվածների վրա նույնիսկ: Սկսվեց սոսկալի մարտը: Աքիլլեսը միայն Հեկտորի հետ հանդիպել էր տենչում:

Նետածիգ Ապոլոնը, Պրիամոսի որդու՝ Լիկանոնի կերպարանքով, հայտնվեց էնեասին և ասաց, որ նա՛ Ափրոդիտեի որդին, ոչինչ չունի վախենալու ստորագրաս աստվածուհի Թեմիսի որդու՝ Աքիլլեսի հետ մենամարտելուց: Այդ խոսքով նա ի մարտ խրախուսեց էնեասին, և Անքիլլեսի որդին քաջաբար առաջ շարժվեց: Այդ տեսով Հերա աստվածուհին և վախեցավ, որ Ապոլոնը կովի ժամանակ կօգնի էնեասին: Իսկ Պոսեյդոնն աստվածներին խորհուրդ տվեց դեռ չմիջամտել մարտին, այլ նստել այն թմբի վրա, որ մի ժամանակ, ծովափին, ավազից շինել էր Հերակլեսը, և այն ժամանակ միայն մասնակցել պատերազմին, երբ միջամտեն մարտին Արես և Ապոլոն աստվածները: Լսեցին Պոսեյդոնի խորհուրդը հույներին օգնող աստվածները և նստեցին մի կողմ՝ մարտից հեռու: Իսկ տրոյացիներին օգնող աստվածները նստեցին կալիկոլոնյան բլուրների քարերին:

Դեմ-դիմաց ելան էնեասն ու Աքիլլեսը: Ծաղրելով հանդիպեց Աքիլլեսը Անքիլլեսի որդուն. նրան հիշեցրեց, թե ինչպես մի անգամ արդեն ճողոպրել է իրենից էնեասը և խորհուրդ տվեց թաքնվել ուղիմարանների շարքերում: Բայց էնեասը պատասխանեց Աքիլլեսին, թե նա իզուր է վախեցնում իրեն՝ ինչպես մանկանն են վախեցնում: Էնեասը հիշեցրեց Թեմիսի որդուն, թե ի՛նչ հոշակավոր հերոսների ցեղից է սերում ինքը: Էնեասն ուղում էր շուտով սկսել մարտը: Հզոր բազկով դեպի Աքիլլեսի վահանը նետեց նա նիզակը, բայց թափ չանցավ վահանից: Իզուր էր թեքում Աքիլլեսն իր վահանը, նա շփուտ, որ մարդկային ձեռքն անկարող է ծակել այն վահանը, որ կռել է աստված: Աքիլլեսը նիզակով հարվածեց էնեասի վահանին: Նիզակը ծակեց, թափ անցավ վահանից, բայց էնեասը կուցավ և

Նիզակն անցավ նրա գլխի վրայով: Մարսափից մթնեցին էնեա- սի աչքերը՝ այնքան մոտ էր նրա օրհասը: Աքիլեսը մերկացրեց սուրը, իսկ էնեասը հափշտակեց մի հսկայական քար: Կկործան- վեք էնեասը, բայց Պոսեյդոն աստվածը նրա մահը չէր ուզում: Իսկույն օգնութեան հասավ նրան: Բարձրացրեց նա Աքիլեսի նի- զակը և դրեց ոտքերի առաջ: Թանձր խավարով պատեց Աքիլեսի աչքերը երկնադղորդ աստվածը, իսկ էնեասին իր հզոր բազկով ահեղագոռ մարտի սահմանից այն կողմ նետեց: Այնտեղ Պոսեյ- դոնը հայտնվեց էնեասին և արգելեց նրան կռիւլ առաջավոր շար- քերում, քանի զեռ կենդանի է Աքիլեսը: Տրիվ տվեց Պոսեյդոնը Աքիլեսի աչքերին պատած մլարը: Զարմանքը տիրեց Աքիլեսին, երբ տեսավ, որ ոտքերի մոտ ընկած է նիզակը, իսկ էնեասն իր առջևում չէ: Հասկացավ Աքիլեսը, որ աստվածները հովանավո- րում են էնեասին ևս, այժմ արդեն նա համոզված էր, որ էնեասն այլևս չի հանդգնի մարտնչել իր հետ:

Աքիլեսը մոլեգնած մարտի նետվեց. բազում հերոսների սպա- նեց նա Հեկտորին փնտրելիս: Իսկ Ապոլոն աստվածը Հեկտորին թույլ չէր տալիս հարձակվել Աքիլեսի վրա և պատվիրել էր ռազ- միկների վերջին շարքերում մնալ: Բայց ահա Աքիլեսն իր նիզա- կով խոցեց Պրիամոսի որդուն՝ Պոլիդորոսին: Տրոյացի արքայի մնացած որդիներից կրտսերն էր նա, որին քնքուշ սիրով սիրում էր հայրը: Տեսավ Հեկտորը եղբոր մահը և, մոռանալով Ապոլոնի պատվերը, նետվեց այնտեղ, ուր մարտնչում էր Աքիլեսը: Տեսավ Աքիլեսը Հեկտորին և հրճվանքով փայլեցին նրա ահավոր աչ- քերը:

— Ահա՛ այն մարդը, ով խորունկ վշտով խոցել է սիրտս,— գոչեց Աքիլեսը:— Բա՛վ է այլևս իրարից փախուստ չենք տա ռազմի դաշտում: Մոտ եկ, որ շուտով Հադեսի թագավորութունն ուղարկեմ քեզ:

Բայց Հեկտորն այսպես պատասխան տվեց Աքիլեսին.

— Դեռ հայտնի չէ, թե մեզնից ո՛վ կսպանվի: Քեզ նման զո- րեղ չեմ ես, Աքիլես, բայց աստվածները միայն գիտեն, թե մեզ- նից ո՛ւմ է վիճակված զոհվել, գիտցիր, որ իմ նիզակն էլ սուր- սայր է:

Նետեց նիզակը Հեկտորը: Բայց Աթենաս-Պալլասն իր շնչով շեղեց նիզակը, որն ընկավ Աքիլեսի ոտքերի մոտ: Հեկտորի վրա խոյացավ Աքիլեսը, բայց օգնութեան հասավ Ապոլոն աստվածը

և խավարով պատեց Հեկտորին: Երեք անգամ Հեկտորի վրա նետ- վեց Աքիլեսը, բայց երեք անգամն էլ լոկ խավարը խոցեց իր նի- զակով: Չորրորդ անգամ վրա թռչելիս, ահեղագոռ ձայնով գո- չեց նա:

— Նորից խույս տվիր մահից, շո՛ւմ: Դարձյալ քեզ Ապոլոնը փրկեց: Բայց շուտով կհասնեմ ես քեզ, եթե միայն ես էլ հովա- նավոր ունեմ աստվածների մեջ:

Մոլեգնած Աքիլեսը հարձակվեց տրոյական այլ հերոսների վրա և շատերն ընկան նրա կորստաբեր նիզակից: Կատաղի հրդե- հի նման մոլեգնում էր նա տրոյացիների շարքերում: Ինչպես եզ- ների ոտքերի տակ ծեծվում են հասկերը, երբ երկրազործն իր կա- լում կալում է գարին, այդպես էլ Աքիլեսի նժույգների ոտքերի տակ ջարդոփշուր էին լինում մարմինները, վահաններն ու սա- ղավարտները: Մոլեգնած Աքիլեսն այրվում էր ռազմական փառքի ծարավով: Արյունով էին թաթախված նրա ձեռքերը: Փախուստի դիմեցին տրոյացիները: Բայց Սկամանդրոսի ափին նրանց հետե- վից հասավ Աքիլեսը: Մխրճվելով նրանց շարքերի մեջ, Աքիլեսը փախստականներին երկու մասի բաժանեց: Նրանց մի մասը դեպի Տրոյա նետվեց, Բայց Հերան Թանձր խավարով պատեց ճանապար- հը: Մյուս մասը վազեց դեպի գետը: Տրոյացիներից շատերը փեր- կություն էին փնտրում Սկամանդրոսում: Ռազմիկները գետն էին նետվում, ալեկոծելով ջրերը: Մի մասն ուղում էր լողալով փրկվել, իսկ մյուս մասը ջանում էր թաքնվել զառիթափ ափին: Աքիլեսը սուրը ձեռքին նետվեց Սկամանդրոսի ջրերի մեջ և սկսեց կտտորել ճողոպրոզ տրոյացիներին: Նա բռնեց տրոյացի տասներկու պա- տանիների, փոկերով կապտեց ձեռքերը և իր միրմիրոնցիներին հրամայեց ճամբար տանել նրանց, իսկ ինքը նորից հարձակվեց տրոյացիներին կտտորելու:

Սկամանդրոսի ափին նա հասավ նաև Պրիամոսի պատանի որդուն՝ Լիբաոնին, որին մի ժամանակ գերի էր բռնել խաղաղի այգում և իբրև ստրուկ վաճառել Լեմնոսում: Աքիլեսի ոտքերն ընկավ դժբախտ Լիբաոնը և աղերսեց խնայել իրեն՝ փոխարենը հարուստ փրկագին խոստանալով: Բայց Պատրոկլեսի վրեժն առ- նելու ցանկությունից այրվելով, չխնայեց նա Լիբաոնին: Չէ՞ որ մեռել էր ավելի անվանի ռազմիկ Պատրոկլեսը, թշնամուց խոցված կմեռնի Աքիլեսը ևս, ինչո՞ւ պիտի նա խնայեր Լիբաոնին: Սուր- սայր սուրը Լիբաոնի սլարանոցը մխրճեց Պելևսի որդին, և ընկավ

լիքսոնը անշնչացած: Թեոսի որդին բռնեց դիակի սուքից և նե-
տեց Սկամանդրոս գետը, որ ձկները կշտանան նրանով:

Ավելի կատաղորեն մոլեգնեց Աքիլլեսը: Նա սպառնաց տրո-
յացիներին, որ իր բարկութունից չի փրկի նրանց Սկամանդրոս
գետը, ինչ զոհեր էր մատուցելու որ լինեն: Նա բալորին կսպանի,
Պատրոկլեսի և բալոր զոհված հույների վրեժը լուծելով: Զայրա-
ցավ Աքիլլեսի գոռոզամիտ խոսքից Սկամանդրոս գետի աստված
Քսանթոսը: Մինչ այդ, Աքիլլեսի դեմ խիզախեց զուրս զալ գե-
տի աստված Աքրիսոսի որդին՝ Աստերոպեոսը: Նա միանգամից
երկու նիզակ նետեց Աքիլլեսի վրա: Նիզակներից մեկը թևի-
վակի ջերծեց աչ ձեռքը՝ արմունկի մոտ, Աքիլլեսն էլ իր հաս-
տարեստ նիզակը նետեց զնախ Աստերոպեոսը: Կողքից անցավ
նիզակը և խորը մխրճվեց գետափին: Աստերոպեոսը փորձ արեց
զուրս քաշել նիզակը, բայց շկարոզացավ: Աքիլլեսի նիզակը
բարձրացնելու զորութուն չունեք նա: Մերկացրած սրով նրա վրա
խոյացավ Պելեոսի որդին և մահացու հարված հասցրեց սոսիին:
Աքիլլեսը Աստերոպեոսի դիակն էլ նետեց Սկամանդրոսի ջրերը:
Շատ-շատ հերոսներ սպանեց Աքիլլեսը: Դեռի հորձանուտից բարձ-
րաձայն զոչեց Սկամանդրոս գետի աստված Քսանթոսը:

— Աքիլլես, զո՞ւրս քշիք իմ ջրերից տրոյացիներին, բաց
զաշտում սպանիք նրանց, ոչ թե իմ ջրերում: Տրոյացիների դիակ-
ները փակել են գետի ծով տանող ճամփա: Զապի՛ր քեզ, և տրո-
յացիներին իմ ջրերում մի՛ սպանիր:

— Քսանթո՛ս, — պատասխան տվեց Աքիլլեսն աստծուն, —
չե՛մ դադարի տրոյացիներին սպանել, մինչև Տրոյա չըշեմ նրանց
և շմենամարտեմ Հեկտորի հետ:

Եվ բարձր ձայնով Ապոլոն աստծուն դիմեց Քսանթոսը.

— Օ՛, հեռահար աստված: Դու չես կատարում այն, ինչ պատ-
վիրել է քեզ ամպրոտային Զևսը: Զպատվիրե՛ց նա պաշտպանել
տրոյացիներին, քանի՛ գրչերը խափարով չի պատել զաշտերն ու
բլուրները:

Ալեկոծվեցին Սկամանդրոս գետի ջրերը և ահեղագոչ մանո-
ցով սկսեցին ափ հանել սպանվածների դիակները, իսկ կենդանի
մնացածներին գետի աստվածը թաքցրեց քարանձավում: Սփացին
ալիքները գետը նետված Աքիլլեսի շուրջը: Այլևս ոտքի վրա չէր
կարողանում կանգնել նա: Աքիլլեսը ձեռքը գցեց ափին կանգնած
բարձր սոսի ժառին, բայց Սկամանդրոսը արմատահան արեց ծառը,

որ պտուկեց գետի լայնքով՝ կամրջի նման: Դուրս թափվ գետի ալիք-
ների միջից Աքիլլեսը և վազեց դաշտով: Նրա հետևից թավալվեց
Սկամանդրոս գետի ահեղագոռ ալիքը, սղառնալով ջրասույզ անել
նրան: Մի քանի անգամ Աքիլլեսը փորձ արեց կռվել այդ ալիքի
դեմ, բայց մի՛թե մահկանացուն ունակ է մարտնչել գետի անմահ
ասածո դեմ: Հեղեղեցին ալիքները նրան, կատաղորեն ծեծում էին
նրանք Աքիլլեսի ուտերը, հողը փախցնելով նրա ոտքերի տակից:
Վերջապես, հայացքը երկինք հռած, այսպես գոչեց Աքիլլեսը.

— Զևս-ամպրոտային, մի՛թե ե՛ս, որին ճակատագիրը վի-
ճակել է զոհվել Տրոյայի տակ, Ապոլոնի նետով, պիտի մեռնեմ
այսպես անփառունակ մահով, նման այն պատանի խոզարածին, որ
խեղդվում է լեռնային կատաղի գետակում, ծանծաղուտով գետն
անցնելու փորձ անելիս: Օ՛, ավելի լավ է սպաներ ինձ Հեկտորը,
մեծ Տրոյայի ամենապանծալի զավակը:

Այսպես խոսեց Պելեոսի որդին, և նրա առաջ հայտնվեցին Պա-
սեղոսն ու Աթինաս-Պալլասը: Խրախոսեցին աստվածները Աքիլ-
լեսին և պատվիրեցին քաշար կռվել մինչև այն պահը, երբ տրո-
յացիներին քաղաք կքշի և Հեկտորին կսպանի նա: Այն ժամանակ,
հողթնակից հետո, փառքով ճամբար կվերադառնա Աքիլլեսը:
Աթինաս-Պալլասն անպարտելի ուժով լցրեց Աքիլլեսի կուրծքը:
Զկարողացավ կռվել նրա հետ Սկամանդրոսը և օգնություն կանչեց
իր եղբորը՝ ժտակի աստված Միմոսին: Ավելի վեր խոյացավ ջրա-
բույսերով ծածկված ջրի ալիքը, որ Աքիլլեսի դեմ էր հանել Սկա-
մանդրոսը: Պատնեղի նման շրջապատեց նա Աքիլլեսին: Վախն-
ցավ Հերան, թի կկործանվի Պելեոսի որդին: Միմոսի դեմ կռվե-
լու համար Աքիլլեսին օգնելու ուղարկեց նա իր որդուն՝ Հեփեստոս
աստծուն: Բռնկեց զաշտում Հեփեստոս աստծո կատաղի կրակը:
Այրվեցին Աքիլլեսի ձեռքով սղառնված տրոյացիների դիակները:
Իսկույն չորացավ զաշտը, որ հեղեղված էր Միմոսի ալիքներով,
կրակ տվեց Հեփեստոսը գետը և: Բոցավառվեցին ափերի սոսի-
ները, հաճարի ծառերը, տանիները, բռնկեց խոնավ կանաչ եղեգ-
նը և լուսուր: Ձկները ջրում այս ու այն կողմ էին նետվում և ջա-
նում թաքնվել գետի խորքում՝ ամենակող հրից հալածված: Բոլը-
կեց Միմոսը և բարձրաձայն այսպես կոչեց նա Հեփեստոս աստ-
ծուն.

— Օ՛, Հեփեստոս, աստվածներից ոչ որ չի՛ կարող պայթա-
րել քո դեմ: Ես երբեք չեմ հանդգնի մարտի բռնվել քեզ հետ:

Հանգրո՞ւ կրակը, այլևս երբեք սատար չեմ լինի տրոյացիներին՝ Քող կործանի նրանց Պելևսի որդին:

Ալեյի ու ավելի էր շիկանում ջուրը կրակից, ահավոր տապից եռ էր գալիս: Գետը կանգ առավ, տապը ուժասպառ արեց Սկամանդրոսին: Քսանթոս աստվածն սկսեց աղերսել Հերա աստվածուհուն, որ սանձի յուր որդուն: Աստվածների մեծ երգմամբ երգվեց Քսանթոսը, երբեք այլևս չօգնել տրոյացիներին, նույնիսկ այն ժամանակ, երբ հույների ձեռքով կայրվի Տրոյան: Կասեցրեց Հերան Հեփեստոս աստծուն, և նա մարեց կրակը: Պառակտում ըսկըսվեց աստվածների մեջ ևս: Նրանք կռվի նետվեցին, և տնջաց հողը նրանց ոտքերի տակ: Միծաղեց Զևսը, երբ տեսավ, թե ինչպես են մարտնչում աստվածներն իրար դեմ: Պատերազմի աստված Արեսը հարձակվեց Աթենաս-Պալլաս դիցուհու վրա, կամենալով վրեժ լուծել, քանի որ նա օգնել էր Դիոմեդեսին՝ վերջ հասցնելու իրեն: Իր նիզակով Արեսը հարվածեց դիցուհու վահանին, բայց ապարդյուն: Հսկայական մի քար առավ Աթենասը, դրանով հարվածեց Արեսի պարանոցին և գետին տապալեց նրան: Զրնգացին Արեսի զրահները և փոշով պատեցին նրա մազերը, Արեսին օգնության շտապեց սիրո աստվածուհի Ափրոդիտեն և ջանաց դուրս հանել նրան ռազմի դաշտից: Բայց Աթենասն իր նիզակով հարվածեց նրա կրծքին և գետին ընկավ Ափրոդիտեն: Ապոլոնին մենամարտի կանչեց ծովերի աստված Պոսեյդոնը: Բայց մարտի շրջվեց նրա հետ հեռահար աստվածը: Ապոլոնը վախենում էր զենք բարձրացնել Զևսի մեծագոր եղբոր՝ երկրասասան Պոսեյդոնի վրա: Արտեմիս դիցուհին կշտամբեց եղբորը՝ Ապոլոնին, որ նա խույս է տալիս Պոսեյդոնի հետ մարտնչելուց: Լսեց այդ խոսքը Հերան և զայրացավ: Բռնեց նա Արտեմիսի ձեռքերը, խլեց աղեղը և հարվածեց դրանով դեռատի դիցուհուն: Ցրվ՛ էկան Արտեմիսի նետերը և, բազմից փրկվող աղավնու նման, արցունքաշաղախ, փախուստի դիմեց նա: Հավաքեց դստեր նետերը, բարձրացրեց աղեղը և հետ աստվածուհին և գնաց նրա հետևից: Իսկ Արտեմիսը Օլիմպոս սավաննեց և դառնագին գանգատ արեց Զևսին, թե ինչպես է Հերան վիրավորել իրեն: Օլիմպոս վերադարձան մյուս աստվածները ևս՝ ոմանք հպարտ իրենց հաղթությամբ, մյուսները՝ զայրությամբ լցված: Իսկ Ապոլոնն արագությամբ Տրոյա սլացավ. երկյուղ էր կրում նա, որ հանկարծ հակառակ ճակատագրի՝ հույները կբանդեն Տրոյայի պարիսպները:

Բարձր աշտարակից տեսավ Պրիամոսը, թե ինչպես է դաշտում տրոյացիներին հալածում Աքիլլեսը: Հրամայեց բանալ քաղաքի դարպասները, որ նրա հետև կարողանան ապաստանել տրոյացիները: Ապոլոնն արիությանբ օժանց հերոս Ագենորին և զբրդեց, որ դուրս գա Աքիլլեսի դեմ, իսկ ինքը խիտ ամպով պատած, կանգնեց կողքին, որ փրկի նրան Աքիլլեսի նիզակից: Նիզակը ճոճելով մոտեցող Աքիլլեսին էր սպասում Ագենորը: Հզոր բազկով նա Աքիլլեսի վրա նետեց նիզակը, որ զիպավ Աքիլլեսի զրահին, բայց իսկույն ետ թռավ: Ագենորի վրա խոյացավ Աքիլլեսը: Իսկ Ապոլոն աստվածը խավարով պատեց Ագենորին և օգնեց խույս տալ վերահաս մահից: Ապոլոնն Ագենորի կերպարանքն առավ և վազեց դաշտով: Սկսեց հետապնդել նրան Աքիլլեսը, շկոհանալով, որ հետապնդում է աստծուն: Դրանով փրկեց տրոյացիներին Ապոլոնը և ժամանակ տվեց, որ թաքնվեն սրբազան Տրոյայում:

Պատասպարվեցին քաղաքում տրոյացիները, Մարտից ու վազքից հոգնաբեկ, պարիսպների վրա կանգնած, նրանք հազեցնում էին իրենց ծարավը և սրբում քրտինքը: Դաշտում մնացել էր Հեկտորը միայն: Ասես անխուսափելի ճակատագրով դամված՝ կանգնել էր նա Սկևյան դարպասների մոտ:

ԱՔԻԼԼԵՍԻ ԵՎ ՀԵԿՏՈՐԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

Շարադրված է ըստ Համեսթի «Իլիական» պոեմի:

Երկար հետապնդեց Ապոլոն աստծուն Աքիլլեսը: Վերջապես կանգ առավ նետածիզ աստվածը և բացեց գաղտինքը՝ թե ում էր հետապնդում Աքիլլեսը: Ցասումը համակեց Աքիլլեսին: Ինչպիսի՞ հրճվանքով նա վրեժխնդիր կլիներ Ապոլոնից, եթե կարողանար թողեց հետապնդումը Պելևսի որդին և նորից սլացավ զևպի Տրոյայի պարիսպները: Դեպի Տրոյայի պարիսպներն էր սուրում Աքիլլեսը, նման այն շողշողուն աստղին, որ պայծառորեն հուրհրում է աշնանային երկնքում: Սիրիուս են կոչում այդ աստղը մարդիկ, որ զժբախտություն է բերում մահկանացուներին: Մերունի Պրիամոսը տեսավ Տրոյայի պարիսպներին մոտեցող Աքիլլեսին և սարսափահար աղերսեց Հեկտորին:

— Օ՛, սիրասուն որդիդ իմ: Շո՛ւտ, քաղաք մտիր: Մի՛ մարտնչիր Պելևսի որդու հետ, նա քեզնից զորեղ է: Ներս մտիր Տրո-

յաւ: Չէ՞ որ դու ես բոլոր տրոյացիների ու տրոյուհիների փրկութեան հուշար: Հիշի՞ր, թէ իմ որդիներէնք քանիսին է սպանել Աքիլլեոսը: Գեթ ի՞նչ, տարաբախտ ծերուկիս գթաւ: Կյանքիս մայրամուտին Ձեան ինձ սոսկալի աղետներն է մտանել: Ես պետք է տեսնեմ որդիներիս կործանումը, տեսնեմ պիտի, թէ ինչպէս գերութեան նն տանում դուտրերիս, թէ ինչպէս պիտի սպանեն անմեղ մանկիկներին: Ես պիտի սպանվեմ իմ տան շեմին, իսկ այն շինորը, որոնց կիրակրել եմ ես, պիտի լիղեն իմ արյունը: Գթա՛ ինձ, Հեկտոր:

Հեկտորին աղաչում էր Տրոյայում թաքնվել նրա մայրը և՛ զառամած Հեկաբեն: Նա հիշեցնում էր որդուն, թէ ինչպէս է կերակրել ու փայփայել նրան մանուկ հասակում: Մի՞թէ իր աչքերի առաջ պիտի սպանվի Հեկտորը և չեն սզալու նրան ո՛չ ինքը, ո՛չ Անդրոմաքեն, իսկ նրա դիակը միամիղոնցիների նավերի մոտ պիտի շները հոշոտեն:

Բայց Հեկտորը հաստատապէս վճռել էր սպանել Աքիլլեսին. վահանով աշտարակի ելուստին հենված, սպասում էր նա իր թշնամուն: Անկարող էր Հեկտորը խուչս տալ Աքիլլեսի հետ մենամարտելուց: Երկյուղ էր կրում Պրիամոսի որդին, որ տրոյացիները կմեղադրեն իրեն՝ թէ իր ուժերին վստահ Հեկտորը կործանեց Տրոյան: Չէ՞ որ Պոլիդամանթոսը խորհուրդ տվեց նրան զորաբանակի հետ միասին թաքնվել Տրոյայում, քանի զեռ Աքիլլեսը մարտի չէր բռնվել նրա հետ: Այժմ մի բան էր մնում միայն Հեկտորին՝ մենամարտել Աքիլլեսի հետ՝ հաղթել կամ կործանվել: Այսպիսի մի միտք էլ անցավ Հեկտորի գլխով. անդհն ընդառաջ գնալ Աքիլլեսին և շքնաղազեղ Հեղինեին ու Մենելաոսից հափշտակած գանձը վերադարձնելու խոստում տալ, իսկ դրա հետ մեկտեղ տալ մեծ Տրոյայի ողջ հարստութեան կետք ևս: Բայց և իսկույն հետու վանեց այդ միտքը Հեկտորը: Նա գիտեր, որ դաշն չի կնքի իր հետ Աքիլլեսը, որ կոպանի նա իրեն՝ անզեն Հեկտորին, ինչպէս թույլ մի կնոջ:

Ավելի ու ավելի էր մոտենում Աքիլլեսը: Մոտեցնում տիրեց Հեկտորին և սկսեց փախչել նա Պելևսի ահեղազոր որդուց՝ պտույտ գործելով Տրոյայի շուրջը՝ նրա հետևից, անզոր աղափնուն հետա-

ալընդող բազել նման, սլանում էր կատաղի Աքիլլեսը: Երեք անգամ Տրոյայի շուրջը պտույտ եկան հերոսները:

Կատաղի վազքով սուրում էին հերոսները Տրոյայի շուրջը: Մի քանի անգամ Հեկտորն ուղեց ապաստանել պարիսպների մոտ, որ տրոյացիներին հնարավորութեան տա նետերով եւ մղել Պելևսի որդուն, բայց Աքիլլեսը նրան մոտ չէր թողնում պարսպին: Վազուց արդեն մեծազոր Աքիլլեսը հասած կլիներ Պրիամոսի որդուն, եթէ Ապոլոնն աստվածն ուժ չներշնչեր Հեկտորին: Երբ շորորոգ անգամ էին վազում հերոսները Սկամանդրոսի աղբյուրների մոտով, ամպրոպային աստվածը մահվան երկու վիճակ զցեց սակեղեն կշեռքի մեջ, մեկը՝ Աքիլլեսին, մյուսը՝ Հեկտորին: Հեկտորի վիճակն իջավ մոռայատես Հադեսի թագավորութունը: Լքեց Հեկտորին Ապոլոնն աստվածը, իսկ Աքիլլեսին մոտեցավ Աթենաս-Պալլաս զիցուհին: Կանգ առնել հրամայեց հերոսին և խոստացավ, որ նա կհաղթի Հեկտորին: Իսկ ինքը, զիցուհին, Հեկտորի եղբւր՝ Դեիփորոսի կերպարանքն առած, հայտնվեց Հեկտորին: Նա համոզեց Հեկտորին մարտնչել Պելևսի որդու հետ և խոստացավ օգնել նրան, Կանգ առավ Հեկտորը: Մոտ եկան հերոսները: Նախ Հեկտորը զոչեց.

— Այլևս փրկութուն չեմ փնտրի փախուստի մեջ, որդիդ Պելևսի: Եկ կռվենք ու տեսնենք՝ ո՞ւր կսպանես ինձ, թե՛ ես կհաղթեմ քեզ: Բայց մարտից առաջ վկա կոչենք աստվածներին: Ես խոստանում եմ շանարգել քո մարմինը, եթէ ամպրոպայինը ինձ հաղթանակ տա: Գու ևս ի կատար ածիր այդ պայմանը:

Բայց Աքիլլեսն ահեղաբար պատասխան տվեց.

— Ո՛չ, իմ առաջ պայմաններ մի՛ զնի, ատելի թշնամի: Ինչպէս անհնար է զաշինքն առյուծի և մարդկանց կամ էլ զայլերի ու ոչխարների միջե, այդպէս էլ մեր մեջ է անհնար: Ո՛չ, հավաքի՛ր ողջ ուժդ, մտաբերի՛ր ռազմի գործում զիտցածդ ողջ արվեստը: Քեզ փրկութուն չկա՛: Գու կհատուցե՛ս ընկերոջս՝ Պատրոկլեսի, և մյուս ընկերներիս արյան համար:

Հղոր բազկով նա իր նիզակը Հեկտորի վրա նետեց: Կույ եկավ զետնին Հեկտորը և դրանով փրկվեց մահացու հարվածից: Աթենաս-Պալլասն շտապով բարձրացրեց նիզակը և կրկին հերոսին տվեց: Հարվածեց Հեկտորը Աքիլլեսի վահանի կենտրոնին, բայց նիզակը ևս թույլ Հեփեստոսի կրած վահանից, որպէս թեթև եղեղնափայտ: Հեկտորն այլ նիզակ չունի: Գլխիկոր, բարձր ձայնով օգնութեան կանչեց նա Դեիփորոսին: Բայց Դեիփորոսը չկար: Հասկա-

¹ Ահնայտ է, որ, իբրև հույների փառքի երգիչ, Հոմերոսը հանդես է բերում Աքիլլեսին պանծացնելու և տրոյացի Հեկտորին նսնմացնելու միտում:

ցավ Հեկտորը, որ Աթենաս-Պալլասը խաբել է իրեն, հասկացավ, որ մահ է վիճակված իրեն: Գուրս քաշեց սուրը Հեկտորը և հարձակվեց Աքիլլեսի վրա: Հեկտորի վրա խոյացավ Աքիլլեսը ևս. հզոր բազկով Հեկտորի պարանոցը մխրճեց նիզակը: Գետին տապալվեց մահացու վիրավոր Հեկտորը: Նա մի քանի խոսք միայն կարողացավ ասել ցնծացող Աքիլլեսին.

— Աղաչո՛ւմ եմ քեզ, Աքիլլես, կյանքովդ ու ծնողներիդ անունով, մարմինս շոտա միրմիրոնյան շներին հոշոտելու, վերադարձրու դիակս հորս ու մորս, անհաշիվ փրկագին կտան նրանք քեզ:

— Ո՛չ, դուր ես աղաչում ինձ, անա՛րգ շուն,— պատասխանեց Աքիլլեսը:— Քն որ բորբոքված ցասմանս հնազանդեմ, ես ինքս կհոշոտեմ քո մարմինը: Ոչ ոք մարմնիցդ հեռու չի՛ վռնդի շներին, եթե դրա համար ամենաշքեղ ու հարուստ պարզկներ առաջարկեն ինձ, եթե նույնիսկ քո կշռով մեկ ոսկի՛ տան ինձ: Գիակիդ վրա կրքեր լաց ու կոծ շե՛ն անի Պրիամոսն ու Հեկարեն:

Մեննելիս, Աքիլլեսին վերջին խոսքն ասաց Հեկտորը.

— Օ՛, ես գիտեի, որ պաղատանքս չի շարժի քո գուլթը: Կրճիդ տակ երկաթե սիրտ ես կրում: Բայց վախեցիր աստվածների դայրույթից: Դա քեզ էլ կհասնի: Ապուրն աստծու օգնությամբ քեզ կհետահարի Պարիսը՝ Ալեկան դարպասների մոտ:

Այս խոսքերով մեռավ Հեկտորը: Իր տխուր բախտը ողբալով, նրա հոգին թռավ Հագեսի խավարչտին թագավորությունը:

Ցնծալով իր հաղթանակը, Աքիլլեսը կանչեց բոլոր հույներին: Ջարմանում էին հույները գետնատարած Հեկտորի հասակի և գեղեցկության վրա: Մոտեցողներից ամեն մեկը նիզակով խոցում էր Հեկտորի դին: Այժմ արդեն հեշտ էր նրան խոցելը: այդպես չէր այն ժամանակ, երբ Հեկտորը հրի էր մատնում հունական նավերը:

Ջարհուրելի միտք հղացավ ցնծացող Աքիլլեսը: Ծակելով Հեկտորի ոտքերի ջլերը, նա ամուր փոկ անցկացրեց այդ ջլերի միջով և դիակը ոտքերից կապեց երկանվին: Թուով նա երկանվի վրա և, Հեկտորի վրայից հանած դրահները բարձր պահած, քշեց նժույգներին դաշտով մեկ: Հեկտորի հողաթավալ մարմինը քարշ էր գալիս երկանվի հետևից: Փոշու ամպեր բարձրացան դաշտում: Գետին դարկվող Հեկտորի գեղաշուք դուխը սևացավ փոշուց:

Տեսավ Հեկարեն Տրոյայի պարիսպներից, թև ինչպես է Աքիլլեսն անարգում որդու դին: Փետում է նա ճերմակ մազերը և ծածկոցը պոկելով՝ ծեծում կուրծքը: Դառնաղի վայում էր Պրիամոսը:

Նա աղերսում է թողնել, որ դաշտ դուրս գա ինքը և հաղթող Աքիլլեսին աղերսի գթալ իրեն՝ այևորին, հիշեցնի հորը՝ Պելևսին, որ նույնպիսի ծերունի է ինչպես և ինքը: Տրոյացիների աղեկեղ հեծածանքները լսեց և Անդրոմաքեն: Ցած ընկավ մաքոքը նրա ձեռքից, վազեց Անդրոմաքեն դեպի պարիսպները, և այնտեղից տեծավ Աքիլլեսի երկանվի հետևից փոշեթավալ քարշ եկող ամուսնու մարմինը: Ուշակորույս, տրոյուհիների բազուկներին ընկավ Հեկտորի տարաբախտ կինը: Վայր ընկավ Ափրոդիտեի շնորհած թանկագին քողը զլսից, մազերը ցրիվ եկան: Ուշքի եկավ նա և աղեկտուր հեկեկաց: Այլևս ոչ ոք չունեի նա աշխարհում: Որբացավ նրա չքնաղ որդին և՛ Աստիանաքսը: Դժբախտ որբի պես կմեծանա նա, ոչ ոք պաշտպան չի կանգնի նրան: Անպատմելի վիշտը ծվատում էր Անդրոմաքեի սիրտը: Ողբաձայն լաց ու կոծ էին անում նրա շուրջը բոլոր տրոյուհիները: Զոհվեց Տրոյայի մեծազոր պաշտպանը:

ՊԱՏՐՈՎԼԵՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Շտաղդված է բոտ Հոմերոսի «Իլիական» պոեմի:

Իրենց նավերի մոտ վերադարձան հույները: Աքիլլեսը միրմիրոնցիներին պատվիրեց վրանները չցրվել: Հրամայեց նրանց երկանիվներով երեք անգամ պտույտ գալ Պատրոկլեսի դիակի շուրջը: Բարձրաձայն լաց ու կոծով պտույտ գործեցին քաջարի միրմիրոնցիները: Բարձր ձայնով ողբում էր և Աքիլլեսը: Ձեռքերը սպանված ընկերոջ լանջին դնելով, նա բացականչեց.

— Ցնծա՛, քաջակորովդ Պատրոկլես: Ես արեցի այն, ինչ ուխտել էի: Քո մահվան մահճի մոտ եմ բերել Հեկտորի դին, և շների առաջը կնետեմ նրան, որ բզկտեն, Մահվանդ վրեժն առնելու համար տասներկու տրոյացի պատանի կսպանեմ քո դիակիղման խարույկի մոտ:

Պատրոկլեսի մահճի մոտ նետեց Աքիլլեսը Հեկտորի դին, առանց ծածկոց գցելու նրա վրա: Ծոխ հացկերույթ տվեց իր միրմիրոնցիներին Աքիլլեսը: Հույն առաջնորդները հորդորեցին նրան Ազամեմնոնի մոտ գնալ: Այնտեղ երկար խնդրում էին նրան լուգանք ընդունել և մասնակցել խնջույթին: Հրաժարվեց Աքիլլեսը: Նա Ազամեմնոնին խնդրեց միայն հրամո՛ս տալ հույներին դիակիղման խարույկ պատրաստելու համար:

Խնչույքի նստեցին հույն հերոսները, իսկ դրանից հետո ցրվեցին վրանները և պառկեցին քնելու, միայն Աքիլեսը մնաց արթուն: Մանր հառաչելով պառկել էր նա ահեղագոչ ծովի ափին: Վերջապես նա էլ խոր քուն մտավ: Երազում նրան երևաց Պատրոկլեսի ուրվականը և աղերսեց շուտ կատարել հուղարկավորության ծիսակատարությունները, որպեսզի հանգիստ առնի իր հոգին Հագեոի թագավորության մեջ: Պատրոկլեսը պատվիրեց նաև իր սուկորները թաղել այն գերեզմանում, ուր պիտի թաղվի և Աքիլեսը: Թեստիսի շնորհած սափորի մեջ պիտի դրվեն Աքիլեսի և Պատրոկլեսի աճյունները: Քնած՝ դեպի ուրուն երկարեց բազուկներն Աքիլեսը, բայց տրտում հառաչանքով անհետացավ ուրուն: Արթնացավ քնից Աքիլեսը և նորից սկսեց բարձրաձայն ողբալ ընկերոջը: Նրա հետ մեկտեղ լաց ու կոծ էին անում և բոլոր միրմիրոսցիները: Լաց ու կոծ անելիս գտավ նրանց էոս—Արշալույս գիցուհին՝ Հելիոս—Արև աստծո նախակարապետը:

Առավոտը վաղ, Ագամեմնոնը բարձրաբերձ Իդա լեռան լանջերն ուղարկեց հույներին՝ խարույկի փայտ բերելու: Կատարեցին արքայի հրամանը հույները և ծովափին բարձր խարույկ դարսեցին: Հանդիսավոր երթով միրմիրոսցիները դուրս բերին Պատրոկլեսի դին, պատելով այն իրենց գլուխներից կտրած մազափնջերով և դրին խարույկի վրա: Աքիլեսը ևս կտրեց իր մազերը, որոնք նվիրաբերված էին գետի աստված Սպերբեոսին,¹ եթե հերոսին վիճակվեր հայրենիք վերադառնալ, իսկ այժմ այդ մազափունջը դրեց Պատրոկլեսի ափի մեջ: Այնուհետև, Աքիլեսի խընդրանքը, Ագամեմնոնը նավերի մոտ ուղարկեց բոլոր զորականներին, խարույկի մոտ մնացին հույների առաջնորդները միայն, Բազում ուխտարներ ու ցուլեր զսհեցին ի պատիվ Պատրոկլեսի, իսկ նրանց յուզով օծեցին ողջ դին: Մարմնի շուրջը շարեցին մեղրով և յուղով լի ամաններ: Սպանեցին շորս ձի և երկու շուն: Խարույկին դրին տրոյացի տասներկու պատանիների դիակները ևս, որոնց իր ձեռքով էր սպանել Աքիլեսը: Իսկ Հեկտորի դիակը զրված էր խարույկի մոտ: Նրան պահպանում էր Ափրոդիտե աստվածուհին, անուշահոտ յուղով օծելով նրա մարմինը, իսկ Աստղոն աստվածը ամպով պատեց նրան, որ արևի կիզիչ ճառագայթները չշորացնեն Հեկտորի դիակը:

Երբ թաղման համար ամեն ինչ պատրաստ էր, Աքիլեսը կրակ տվեց խարույկը: Բայց խարույկը շրոնկեց: Աղերս կարգաց Աքիլեսը բամինների աստվածներ Բորեասին և Զեփիրոսին. նա աղերսում էր բորբոքել կրակը: Աստվածների բանբեր Իրիսը իսկույն Զեփիրոսի ապարանքը սլացավ, ուր խախտմանը էին անում քամիների բոլոր աստվածները, և Պելեոսի որդուն օգնելու կանչեց նրանց: Ամպի քուլաներ թողնելով, ահեղագոչ աղմուկով ծովի վրայով սլացան Բորեասն ու Զեփիրոսը: Նրանց շնչից ծովում փոթորկվում էին լեռնակուտակ ալիքները: Արագությամբ Տրոյա հասան նրանց և բորբոքեցին կրակը: Ողջ դիշերը վեր էր խոյանում խարույկի բոցը: Իսկ Աքիլեսը առնում էր գավաթով գինին, հեղում խարույկի վրա՝ կոչելով Պատրոկլեսի ոգուն:

Լուսադեմին հսկայական խարույկն այրվեց վերջացավ և սկսեց մարել: Հոգնաբեկ Աքիլեսն ընկավ մարող խարույկի մոտ և անդիմադրելի բուռը տիրեց նրան: Նա արթնացավ հույն առաջնորդների ձայներից: Աքիլեսի խնդրանք առաջնորդները գինով հանզցրին մարմրող ածուխները, հավաքեցին Պատրոկլեսի սուկորները և դրին սակե սափորի մեջ: Այնուհետև գերանները դարսեցին իրար վրա, նրա մեջ դրին սափորը, իսկ այդ փայտակերտվածքի վրա բարձր շիրմարուր կանգնեցրին:

Հուղարկավորությունից հետո Աքիլեսը մեռածի պատվին ճոխ խաղեր կազմակերպեց: Խաղերն սկսվեցին երկանիվների մըրցավազքով, որին մասնակցում էին Ագամեոսի որդի հերոս Էվմեևոսը, հերոս Դիոմեդեսը, Մենելաոս արքան, Նեստորի որդին՝ Անտիլոքոսը և հերոս Մերիոնեսը: Առաջինը դեպի նպատակակետն արշավեց Դիոմեդեսը. նրան օգնում էր Աթենաս դիցուհին՝ Նրանից մի քիչ հա էր մնում Նեստորի որդին՝ Անտիլոքոսը: Նրանից հետո Մենելաոսն էր արշավում. երկրորդ պարզևր խորամանկությամբ կորեց Նեստորի որդին: Վերջինը Մերիոնեսն էր: Իսկ հերոս Էվմեևոսին՝ ամենահմուտ կառավարին, զժբախտություն պատահեց: Աթենաս աստվածուհին, նրան հաղթանակ չկամենալով, կոտրեց երկանիվ առեղը: Էվմեևոսը գետին տապալվեց և ջարդվածքներ տաացավ: Կառարշավի բոլոր մասնակիցներին Աքիլեսը ճոխ պարգևներ տվեց: Պարգև տվեց Նեստոր ծերունուն ևս. հերոսների մըրցությանը նա մասնակից լինել չէր կարող այլևս, ծերությունը թուլացրել էր նրան, բայց ժամանակին, խաղերի մեջ նա էլ էր հաղթում բազում հզոր հերոսների: Այնուհետև բռնցքամարտի մըր-

¹ Սպերբեոս գետը գտնվում է Թեսալիայի հարավում:

ցութիան դուրս եկան էպետս և էվրիալոս հերոսները, Թուլնցքի մի հարվածով էվրիալոսին գետին տապալեց էպետսը և հաղթող հանգիստացավ, Այաքս Տելամոնիզը և Ողիսևս արքան ըմբշամարտի մրցութիան դուրս եկան, Երկար պայքարում էին նրանք, Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը հաղթել չէր կարենում: Նույնարժեք պարգևներ ստացան նրանք: Արագավազութիան մեջ մրցում էին Օլլևսի որդի Այաքսը, Ողիսևսը և Նեստորի որդի Անտիլոքոսը: Թե՛քն քամու պես առջևից վազում էր Այաքսը, նրա հետևից՝ Ողիսևսը, Աղեբոսից Աթենասին Ողիսևսը, որ հաղթանակն իրեն տաւ: Լսեց հերոսին Աթենասը: Այաքսի ոտքը սահեց և նա վայր ընկավ: Առաջինը Ողիսևսը հասավ նպատակակետին և առաջին մրցանակ ստացավ: Զինավառ մրցութիան դուրս եկան Դիոմեդեսը և Այաքս Տելամոնիզը: Բախվեցին հերոսները, բայց հույները երկուդ էին կրում, թե մահացու հարված կտան միմյանց: Դադարեցին մարտնչել հերոսները և երկուսն էլ նույնարժեք մրցանակ ստացան: Ծանր սկավառակը նետելու մեջ բուրբին հաղթեց հերոս Պոլիպեոսը: Նետաձգութիան մրցութիան համար բարձր ձողից մի աղավնի կապեցին. նետաձիգը պիտի նետահար աներ նրան: Ասպարեղ եկավ Տեկրոս հերոսը: Պըրկեց աղեղը և արձակեց նետը Տեկրոսը, բայց նա կտրեց այն թելը միայն, որով կապված էր աղավնին: Երկինք ճախրեց աղավնին, բայց հերոս Մերիոնեսը նետահարեց նրան: Նա մրցանակ ստացավ նետաձգութիան համար: Նիզակաձգութիան համար մրցանակ ստացավ Ագամեմնոնը. ոչ ոք նիզակաձգութիան մեջ չկարողացավ դերազանցել նրան:

Խաղերը վերջացան: Յրվեցին հերոսները և շուտով ողջ ճամբարը խոր քուն մտավ: Միայն Աքիլլեսը չէր քնել: Անսպասելի ողբում էր իր ընկերուջը: Վեր կացավ մահճից և երկար թափառեց ծովափին: Վերջապես, երբ արշալույսը շառագունեց, նծույզները լծեց երկանվին և, Հեկտորի դիակը հետևից կապած, երեք անգամ պտույտ գործեց գերեզմանաթմբի շուրջը՝ գետնաթավալ քարը տալով Պրիամոսի տարաբախտ որդուն: Հետո մի կողմ նետեց դիակը և մտավ իր վրանը:

Շարադրված է քստ Համեոսի «Իլիադան» գրքի:

Տեսնում էին աստվածները լուսապայծառ Օլիմպոսից, թե ինչպես է Աքիլլեսը անարգում Հեկտորի մարմինը: Զայրացավ նրա վրա Ապոլոն աստվածը: Աստվածներն ուզում էին, որ Հերմեսը փախցնի Հեկտորի դին, բայց դրան ընդդիմանում էին Հերա աստվածուհին և Աթենաս-Պալլասը, ինչպես նաև Պոսեյդոն աստվածը: Արդեն տասնմեկ օր ընկած էր Հեկտորի դին Աքիլլեսի վրանի մոտ՝ առանց որևէ ծածկոցի: Ապոլոնը նախատում էր աստվածներին, որ նրանք թույլ են տալիս, կարեկցանք ու խիղճ մոռացած, անարգել Հեկտորի մարմինը: Վե՛հ բռնկեց Ապոլոնի և Հերայի միջև: Ամպրուպային Զևսը վերջ տվեց այդ վեճին: Նա աստվածների բանքեր Իրիսին ուղարկեց Թետիս դիցուհուն կանչելու Քրոնոսի որդին որոշեց Թետիս դիցուհուն ուղարկել Աքիլլեսի մոտ, որ նա հաղորդի Զևսի կամքը՝ հարուստ փրկագնով Պրիամոսին վերադարձնել Հեկտորի մարմինը: Տրոյացիների մեջ Զևսը ամենից շատ մեծազոր Հեկտորին էր սիրում:

Մտքի պես արագաթռիչ Իրիսը սլացավ Թետիսի մոտ և մի ակնթարթում կանգնեց նրա առաջ: Թետիսը, ծովային դիցուհիներով շրջապատված, արտասուք էր թափում որդու համար: Իրիսից լսելով Զևսի կամքը, Թետիսը հագավ սգո սև զգեստները և բարձրագահ Օլիմպոս սավառնեց: Մեծ հարգանքով դիմավորեցին նրան աստվածները: Աթենասը նրա համար տեղ պատրաստեց Զևսի կողքին, իսկ Հերան իր ձեռքով ոսկե զավաթով անուշաբույր նեկտար մատուցեց նրան: Զևսը նրան հայտնեց իր կամքը: Թետիս աստվածուհին անմիջապես երկիր իջավ և գնաց որդու վրանը, Նստեց վըշտահար Աքիլլեսի կողքին և ընթրորեն փաղաքջելով նրան ասաց, որ Զևսը, և բոլոր աստվածները, զայրանում են նրա վրա և հրամայում են Պրիամոսին տալ որդու դիակը: Հնազանդեց աստվածներին կամքին հզոր Աքիլլեսը:

Մինչ այդ շանթարձակ Զևսը Պրիամոսի մոտ ուղարկեց աստվածների բանքեր Իրիսին: Երբ Իրիսը, իր վարդագույն թևերով սուրբալով, հասավ Պրիամոսի պալատը, թշվառ ձեռունին գիտնաթավալ ընկած արցունք էր հեղում զոհված որդու համար: Մերու-

նու շուրջը նստել էին նրա որդիները և աղեկատու լաց ու կոծ էին անում: Ծերունուն մոտեցավ Իրիսը և Զևսի անունից հրամայեց նրան՝ հարուստ փրկագին առած դնալ հույների ճամբարը, Աքիլլեսի մոտ: Իրիսը խոստացավ, որ հույների ճամբարը կառաջնորդի նրան Հերմես աստվածը:

Աստվածուհու խոսքերը լսելուն պես Պրիամոսը վեր կացավ տեղից և գնաց պալատ՝ որդիներին պատվիրելով պարզվելի համար սալլ ու երկանիվ պատրաստել: Պալատ մտավ Պրիամոսը, կանչեց իր զառամած կնոջը՝ Հեկաբին, և ասաց, որ ուզում է հույների ճամբարը գնալ: Վախեցավ Հեկաբին, աղերսեց ամուսնուն շփալ ստույգ մահվանն ընդառաջ, բայց Պրիամոսը հանգրտացրեց նրան, ասելով, թե ինքը Աքիլլեսի մոտ է գնում օլիմպացի աստվածների կամքով, Հարուստ պարզվելու ընտրեց Պրիամոսը և սկսեց ճանապարհի պատրաստություն տեսնել: Նա հանդիմանեց որդիներին, որ դանդաղում են, Պրիամոսի որդիները վախեցան հոր ցասումից և արագություն չորիները սալլին լծեցին, մի մեծ արկղ դրին սալլի վրա՝ պարզվելի համար, և ձիերը լծեցին երկանվին: Երկանվին կանգնեց Պրիամոսը և քշեց ձիերը: Երկանվից առաջ չորիները քաշում էին պարզվելով լի սալլը, իսկ չորիններին վարում էր բանքեր Իգեսոսը: Պրիամոսին ճանապարհ գնողները գառնակակիծ լալիս էին, կարծես ստույգ մահվան էր գնում նա:

Երբ Պրիամոսը գաշտ գորս եկավ, ամպրոպային Զևսը նրան ընդառաջ ուղարկեց իր որդուն՝ Հերմեսին: Կայեց Հերմեսը իր թևավթ սանդալները, ձեռքն առավ իր ձողիկը, որով գոցում էր մահկանացուների աչքերը և սլացավ գեպի Տրոյա: Նա մի գեղատես պատանու կերպարանքով հայտնվեց Պրիամոսին, երբ նա ձիերն ու չորինները ջրում էր գետում: Վախեցավ Պրիամոսը, կարծեց, թե պատանին կսպանի իրեն և կհափշտակի պարզվելու: Բայց Հերմեսը, որ իրեն Աքիլլեսի սպասավորն էր հայտարարել, առաջարկեց ճամբար առաջնորդել նրան: Ուրախացավ ծերունին, պատանուն իրը պարզեց մի թանկագին գավաթ առաջարկեց, բայց Հերմեսը հրաժարվեց պարզելու: Բարձրացավ նա Պրիամոսի երկանվի վրա և արագ քշեց ձիերը: Հունական ճամբարի դարպասների մոտ պահակախումբ էր կանգնած, բայց Հերմեսը խոր քնի մեջ ընկղմեց նրանց: Ետ քաշեց աստվածը դարպասների մղակները և Պրիամոսին ծածուկ անցկացրեց ճամբարի միջով: Հերմեսը բացեց միմիդոնցիների ճամբարի դարպասները և: Երբ Պրիամոսը մոտեցավ

Աքիլլեսի վրանին, Հերմեսը հայտնեց իր ով էինելը և պատվիրեց համարձակ վրան մտնել: Պրիամոսն Իգեսոսին պարզվեցրեց պահպանելու թողեց, իսկ ինքը գնաց գեպի վրանը: Աքիլլեսը հենց նոր էր վերջացրել իր հացկերույթը: Պրիամոսն աննկատ ներս մտավ և, Աքիլլեսի առաջ ծունկի իջնելով, սկսեց իր աղերսանքն այս խոսքերով:

— Օ՛, մեծդ Աքիլլես, մտաբերիր հորդ, որ ինձ նման ծերունի է: Գուցե նրա քաղաքն էլ պաշարել են հարևանները և ոչ ոք չկա, որ փրկի նրան այդ աղետից: Իսկ ես, տարաբախտս, կորցրել եմ գրեթե բոլոր որդիներին: Դ՛ու սպանեցիր որդիներիցս մեծագուրին՝ Հեկտորին: Նրա՛ համար եմ եկել քո նավերի մոտ: Գթա՛ ինձ: Հարուստ փրկագին վերցրու, Տեսնում ես, թե ի՛նչ դժվարություն մեջ եմ ես: Իմ կրած տառապանքը դեռ ոչ մի մահկանացու չի կրել: Ես ստիպված եմ համբուրել իմ որդիներին սպանողի ձեռքերը:

Պրիամոսի խոսքերը հիշողություն արթնացրին Աքիլլեսի մեջ՝ հոր մասին: Դառն արտասուք թափեց Աքիլլեսը՝ հիշելով հորը: Իսկ Պրիամոսը գետնատարած ողբում էր որդուն: Վերջապես վեր կացավ Աքիլլեսը. նա բարձրացրեց Պրիամոսին և ասաց.

— Օ՛, թշվառ. շա՛տ վիշտ ես տեսել դու քո կյանքում, Բայց ինչպե՛ս համարձակվեցիր միայնակ գալ այստեղ, այն մարդու մոտ, որ քո որդիներից շատերին է սպանել: Օ՛, քո կրճի տակ երկաթի պես ամուր սիրտ կա: Բայց հանդարտվիր, մի՛ լար, և նստիր այստեղ: Աստվածները դատապարտել են մարդկանց ամեն տեսակ կակիծ կրելու կյանքում, միայն իրենք՝ անմահներն են, որ վիշտ չունեն: Այլևս արտասուք մի՛ թափիր, լացով հարություն չի առնի Հեկտորը: Վե՛ր կաց, նստի՛ր այստեղ:

— Ո՛չ, չեմ նստի ես, Աքիլլես,— պատասխանեց Պրիամոսը,— բանի դեռ չես վերադարձրել Հեկտորին: Ընդունի՛ր պարզվելու և թույլ տուր նայեմ որդու:

Զայրագնած Աքիլլեսը նայեց ծերունուն և ասաց.

— Վախեցի՛ր իմ գայրույթից, ծերունի: Ե՛ս էլ գիտեմ, որ պարտավոր եմ վերադարձնել Հեկտորի մարմինը: Դա Զևսի կամքն է, որ ինձ հայտնել է մայրս՝ Թետիս զիցուհին: Գիտեմ, որ աստվածներից մեկն է բերել քեզ այստեղ, այլապես դու չէիր հանդգնի հույների ճամբարը մտնել: Լռի՛ր: Վախենում եմ, թե զայրույթի պահին խախտեմ Զևսի պատվիրանը՝ գթալ աղերսողին:

Այսպես ասաց Աքիլլեսը և դուրս եկավ: Նա կանչեց իր ըն-

կերներին, պատվիրեց արձակել Պրիամոսի ձիերն ու ջորիները և վրան տանել Իգոսսին: Այնուհետև Աքիլլեսի ստրկուհիները լվացին Հեկտորի դին և շքեղ զգեստներ հագցրին: Ինքը Աքիլլեսը բարձրացրեց Հեկտորի մարմինը և դրեց շքեղորեն զարդարված մահճի վրա, իսկ նրա ընկերները մահիճը սայլի վրա դրին: Պելևսի մեծագոր սրդին աղերսեց Պատրոկլեսի ոգուն՝ շղայրանալ, որ ինքը Հեկտորի մարմինը հորն է վերադարձնում: Նա խոստացավ Պրիամոսի բերած պարգևների մեծ մասը Պատրոկլեսին նվիրաբերել: Այդ բոլորից հետո Աքիլլեսը վրան վերադարձավ և ասաց ծերունուն, որ արդեն նրան են տվել Հեկտորի մարմինը: Աքիլլեսը ճոխ ընթրիք պատվիրեց և Պրիամոսին հրավիրեց կազդուրվել ուտելիքով և խմիչքներով: Ընթրիքի ժամանակ Պրիամոսը զարմացած նայում էր աստծո պես գեղատես ու վսեմաշուք Աքիլլեսին, իսկ Աքիլլեսը հիանում էր անհեր ծերունու պատկանելի տեսքով և լսում նրա իմաստուն խոսքը:

Երբ ընթրիքը վերջացավ, Պրիամոսը Աքիլլեսին խնդրեց թույլ տալ, որ ինքը կազդուրվի քնով, որովհետև Հեկտորի սպանվելուց հետո չէր քնել նա: Աքիլլեսը պատվիրեց վրանի առաջ Պրիամոսի և Իգոսսի համար երկու շքեղ մահճիճ պատրաստել: Երբ Պրիամոսը պատրաստվում էր քնելու, Աքիլլեսը հարցում արեց, թե քանի՞ օր է պետք նրան որդու թաղման համար և խոստացավ այդ օրերը ճակատամարտ չսկսել: Տասն օր խնդրեց Պրիամոսը թաղման համար: Աքիլլեսը խոստացավ, որ ինքն էլ այդ օրերին մարտի դուրս չի գա ու ետ կպահի հույներին կռվից: Սիրալիր սեղմեց Աքիլլեսը Պրիամոսի ձեռքը, դրանով սփոփել ուղեկով ծերունուն, և ապա բաժանվեց նրանից:

Խոր քուն մտան զորականները բոլոր, քնեցին և աստվածները լուսավոր Օլիմպոսի վրա. քնած չէր Հերմես աստվածը միայն: Նա հայտնվեց Պրիամոսի սնարի մոտ և, արթնացնելով նրան, պատվիրեց շուտափույտ լքել հույների ճամբարը, որովհետև երկյուղ էր կրում, թե որևէ մեկը կտեսնի Պրիամոսին և կհրապուրվի նրա համար հարուստ փրկանք ստանալու հնարավորություններ: Վախեցավ Պրիամոսը, վեր կացավ մահճից և արթնացրեց Իգոսսին: Հերմեսը լծեց ձիերն ու ջորիները և գաղտնի դուրս հանեց նրանց ճամբարից: Սկամանդրոսի ափին միայն աստվածը լքեց Պրիամոսին:

Լուսադեմին Պրիամոսը մոտեցավ Տրոյային: Առաջինը կասանդրան տեսավ նրան և, Հեկտորին ողբալով, կանչեց տրոյացիներին

և տրոյուհիներին Բազմամարդ ամբոխ հավաքվեց Տրոյայի դարպասների մոտ: Առջևում կանգնել էին Հեկտորն և Անդրոմաքեն, բարձրաձայն ողբում էին նրանց և մազերը փետում: Հեկեկում էին բոլոր տրոյացիները և ջանում մոտենալ սայլին, որի մեջ պառկած էր սպանված Հեկտորը: Բայց, Պրիամոսի խոսքը լսելուն պես, ճեղքվեց ամբոխը և ճանապարհ տվեց Տրոյա մտնելու:

Աղեկաուր լալիս էր Անդրոմաքեն. ողբում էր ամուսնուն՝ իր միակ պաշտպանին, Այժմ արդեն գիտեր նա, որ կկործանվի Տրոյան և բոլոր տրոյուհիներին տանջալից գերաթյան կբշեն հույները: Կսպանեն նաև որդուն՝ Աստիանաքսին, բազում հերոսների մահվան համար վրեժխնդր լինելով Հեկտորից: Ողբում էր Անդրոմաքեն, որ Հեկտորը մեռել էր իրենից հեռու և չէր ասել անձկալի մի խոսք, որ մինչև կյանքի վերջը հիշեր ինքը: Սիրասուն որդուն ողբում էր Հեկաբեն՝ արցունքի հեղեղ թափելով:

Հեկտորի համար լալիս էր Հեղինեն: Երբեք հանդիմանական մի խոսք կամ պարսավանք չէր լսել նա Հեկտորից: Մշտապես նրան պաշտպան էր կանգնում հեղաբարո Հեկտորը և շնորհիվ այդ պաշտպանության, նրան չէին վիրավորում ուրիշները ևս: Այժմ արդեն չկա նրա միակ բարեկամն ու սփոփողը Տրոյայում, ուր բոլորը ատում էին նրան:

Պրիամոսը հրամայեց դիակիզման խարույկ պատրաստել: Ինն օր շարունակ տրոյացիները փայտ էին կրում Իդալից՝ խարույկի համար: Տասներորդ օրը Հեկտորի մարմինը դրին խարույկի վրա և կրակ տվին խարույկը: Հերոսի աճյունը հավաքեցին ոսկե սափորի մեջ, դրին գերեզմանի մեջ, ծածկեցին գերեզմանը սալաքարերով, իսկ վրայից բարձր շիրմաբլուր կանգնեցրին: Մինչ տրոյացիները լցնում էին շիրմաբլուրը, պահակախումբը հսկում էր, որ հույներն անսպասելի հարձակում չգործեն: Թաղման արարողությունից հետո Պրիամոսը ճոխ մեռելահաց տվեց:

Այդպես թաղեցին տրոյացիները մեծ Հեկտորին:

Նառազրված է Թվիլիսի «ԷՆՏՈՍՏԻՆԵՐ» և Վերգիլիոսի «ԷՆԵԱԿԱՆ» պոեմների հիման վրա:

Հեկտորի մահից հետո ծանր ժամանակներ սկսվեցին Տրոյայի համար: Հզոր պաշտպան չունեի նա այլևս: Տրոյացիները չէին հանդգնում պարիսպներից դուրս, բաց դաշտում կռվել հույների հետ: Տրոյայում չկար այնպիսի մի հերոս, որ մենամարտի մեջ լավիվեր Աքիլլեսի հետ: Թվում էր, թե մեծ քաղաքի վերջին օրերն են արդեն: Եվ այդ ժամանակ անսպասելի օգնություն եկավ տրոյացիներին: Հեռավոր Պոնտոսից¹, սրաթուխ նծույզները հեծած, Տրոյային օգնության եկան քաջամարտիկ ռազմատենչ ամազոնուհիները, իրենց թագուհու՝ Պենթեսիլիայի հետ: Հույների դեմ պատերազմում Պենթեսիլիան ուզում էր բավել իր մեղքը, որովհետև որսի ժամանակ նա պատահարար սպանել էր իր քրոջը², Արեսի մեծազոր դուստրը պարծենում էր, թե կսպանի Հունաստանի մեծահույզ հերոսներին, կըջի Տրոյայի պարիսպների տակից հույներին և հրո ճարակ կդարձնի նրանց նավերը: Մեծ ցնծությամբ դիմավորեցին տրոյացիները ամազոնուհիներին: Պրիամոսը հարազատ դստեր նման ընդունեց Պենթեսիլիային և ի պատիվ՝ նոր խնջույք տվեց:

Հաջորդ օրը ամազոնուհիները շողշողուն սպառազինությամբ, տրոյական զորաբանակի զլխավորությամբ, դուրս եկան ընդդեմ հույների: Ձեռքերը երկինք կարկառած, Պրիամոսն աստվածներին աղերսում էր հաղթանակ պարգևել նրանց: Բայց աստվածները չլսեցին նրան: Սկսվեց արյունահեղ մարտը: Կատաղի հողմի պես Պենթեսիլիան, իր ամազոնուհիների հետ միասին, սլանում էր հունական շարքերի մեջ: Մեկը մյուսի հետևից խողխողում էր նա հերոսներին: Երեբացին հույն ռազմիկների շարքերը և սկսեցին նահանջել: Մինչև նավերը քչեց նրանց Պենթեսիլիան: Մոտ էր արդեն ամազոնուհիների վերջնական հաղթանակը: Հանկարծ հույներին

¹ Սև ծով:
² Պենթեսիլիան օգնում էր տրոյացիներին, որոնց օգնականն էր նաև Արտեմիսը, հուսալով շարժել Գուլն այդ դիցուհու, որին զայրացրել էր այդ սպանությամբ:

օգնության հասան Աքիլլեսը և Այաքս Տելամոնիդը: Նրանք չէին մասնակցում մարտին: Գետնատարած, պառկել էին նրանք Պատրոկլեսի շիրմաթմբի մոտ, ուղրում էին ընկերոջ կորուստը: Ծաղկատամարտի շահնդը լսելուն պես իսկույն ղինավառվեցին հերոսաները և, երկու ահավոր առյուծների նման, ի մարտ նետվեցին: Դիմազարվել չկարողացան նրանց ամազոնուհիներն ու տրոյացիները: Պենթեսիլիան տեսավ հուժկու Աքիլլեսին և քաջաբար նրա դեմ ելավ: Նետեց նա նիզակը դեպի Աքիլլեսը, բայց կտոր-կտոր եղավ նիզակը՝ դիպչելով Պելեսի որդու վահանին: Ուրիշ նիզակ նետեց ամազոնուհիների թագուհին՝ դեպի Աքիլլեսը, բայց էլի վերք չտվեց Աքիլլեսին: Սոսկալի ցասամբ բռնկած՝ հարձակվեց Աքիլլեսը և խոցեց նրա կուրծքը: Զգաց Պենթեսիլիան, որ մահացու էր վերքը: Հավաքեց վերջին ուժերը, ուզեց մերկացնել սուրը, բայց մեծազոր Աքիլլեսը նիզակով շամփրեց նրան՝ նծույզի հետ միասին: Գետնովը դիպավ նծույզը, իսկ նրա կողքին գետնատարած ընկավ Պենթեսիլիան: Հանեց նրա սաղավարտը Աքիլլեսը և կանգ առավ պատերազմի աստված Արեսի դստեր շտեմնված զեղեցկությամբ ապշահար: Արտեմիս դիցուհու նման չքնաղ էր մեռած Պենթեսիլիան: Կանգնել էր Աքիլլեսն իր ձեռքով սպանած չքնաղ Պենթեսիլիայի մարմնի մոտ, և զգում էր, թե ինչպես է սիրով համակվում դեպի սպանվածը: Երբ տրտմաթախիժ կանգնել էր Աքիլլեսը, նրան մոտեցավ Թերսիտեսը և սկսեց առաջվա նման նախատել նրան: Մաղրելով Աքիլլեսի վիշտը, Թերսիտեսը չքնաղ Պենթեսիլիայի աչքը մխրճեց իր նիզակը: Սոսկալի ցասամբ բռնկվեց Աքիլլեսը: Ձեռքը տարավ-բերեց և այնպիսի ուժով հարվածեց նրա դեմքին, որ տեղնուտեղը սպանեց նրան:

Զայրույթով լցվեց Դիոմեդեսը Աքիլլեսի դեմ, որ սպանել էր իր ազգականին: Հույներին հազիվ հաջողվեց հաշտեցնել երկու հերոսներին:

Զուշույթյամբ բարձրացրեց Աքիլլեսն իր սպանած Պենթեսիլիային, և դուրս բերեց ճակատամարտից: Այնուհետև, հույները տրոյացիներին հանձնեցին Պենթեսիլիայի և տասներկու ամազոնուհիների դիակներն իրենց զենք ու զրահ՝ հետ միասին, և տրոյացիները ճոխ թաղում կազմակերպեցին՝ խարույկի վրա կիզելով նրանց դիակները:

Իսկ Աքիլլեսը կեսրոս կղզին ճանապարհվեց: Այնտեղ նա առատ զոհ մատուցեց Ապոլոն աստծուն և Արտեմիս դիցուհուն:

ինչպես և նրանց մորը՝ Լետոյին, աղերսելով, որ մաքրագործեն իրեն Քերսիտեսի արյան արատից: Ապոլոնի պատվերով Աքիլլեսին մաքրագործեց հնարամիտ Ոգիսեսը:

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ԼԹՈՎՊԱՑԻՆԵՐԻ ԳԵՄ: ՄԵՄՆՈՆ

Շարադրված է Համերոսի «Ողիսական», Հեսիոդոսի «Թևոգոնիա» և Վերգիլիոսի «Էնեադան» պոեմների հիման վրա:

Պենթեսիլիայի մահից հետո տրոյացիների համար ավելի դժվարացավ հույների կատաղի գրոհները ետ մղելը: Բայց անսպասելիորեն նորից օգնություն հասան նրանց: Երկրի շուրջը իր ջրերը զալարող ահեղ օվկիանոսի ափերից էթովլացիները՝ սովորամբոխ զորարանակի հետ միասին Տրոյա ժամանեց Մեմնոնը: Արշալույսի շքնաղ աստվածուհի էոսի և Տրիտոնի որդին էր նա, Պրիամոսի ազգականը, Մահկանացուներից ոչ ոք չէր կարող գեղեցկությամբ համեմատվել նրա հետ: Հեփեստոս աստծո ձեռքով կռած ոսկեհուռ զրահների մեջ՝ լուսաստղի նման շողշողում էր նա տրոյական բանակի մեջ:

Աքիլլեսի արժանավոր հակառակորդն էր Մեմնոնը, աստվածուհու հզոր որդին: Նորից բռնկեց կատաղի մարտը Տրոյայի պարիսպների տակ: Տրոյացիների առջևում մարտնչում էր Մեմնոնը, հույների առջևում՝ Աքիլլեսը: Բայց նա խուսափում էր Մեմնոնին հանդիպել, Գիտեր Թետիսի որդին, որ եթե սպանի Մեմնոնին, ապա շուտով ինքն էլ կկործանվի Ապոլոնի նետով խոցված: Մեմնոնը հարձակվեց ծերունի Նեստորի վրա: Կարո՞ղ էր զառամած հերոսը մարտնչել երիտասարդ Մեմնոնի հետ:

Շուտ ավեց Նեստորն իր երիվարների գլուխները և ուզում էր փախուստով փրկվել: Բայց լարեց իր աղեղը Պարիսը և նետահարեց Նեստորի ձիերից մեկին: Տեսավ Նեստորը, որ անխուսափելի կործանում էր սպառնում իրեն և օգնության կանչեց որդուն՝ Անտիլոքոսին: Հորն օգնության փութաց հավատարիմ զավակը: Նա վրձնեց մեռնել, բայց թույլ չտալ Մեմնոնին, որ սպանի հորը: Մի հսկայական քար վերցրեց Անտիլոքոսը և Մեմնոնի վրա նետեց: Բայց Հեփեստոսի կռած սաղավարտը պաշտպանեց էոս աստվա-

¹ Առասպելական ժողովուրդ, որ հույների կարծիքով բնակվում էր Երկրի ծայրագույն հարավում:

ծուհու որդուն այդ հարվածից: Մեմնոնը նիզակով հարվածեց Անտիլոքոսի կրծքին և խոցված սրտով, անշնչացած, դիտապաստ ընկավ Նեստորի որդին, իր կյանքը տալով հոր կյանքի փոխարեն: Հեկեկաց ակտր Նեստորը, երբ տեսավ որդու մահը: Իսկ Մեմնոնը, շնայած նրա վրա էր հարձակվել Նեստորի մյուս որդին՝ Փրասիմեդեսը իր ընկերոջ՝ Փերեսի հետ միասին, ուզում էր հանել սպանված Անտիլոքոսի զրահները: Ինքը Նեստորը նետվեց պաշտպանելու որդու դին: Բայց Մեմնոնը կովի շունվեց ծերունու հետ, ձեռք շարձրացրեց վրան: Մոլեզնած կոխվ էին մզում հույներն ու էթովլացիները Անտիլոքոսի մարմնի շուրջը: Նեստորը օգնության կանչեց հսկայազոր Աքիլլեսին ևս: Մարտեց Աքիլլեսը, երբ իմացավ, որ Անտիլոքոսն սպանված է: Չէ՞ որ հույների մեջ ամենից շատ նրան էր սիրում: Պատրոկլեսից հետո նա՞ էր Աքիլլեսի ամենալավ ընկերը: Մոռացած ամենայն ինչ, մոռացած, որ Մեմնոնից հետո ինքն էլ պիտի կործանվի, Աքիլլեսը մարտի նետվեց: Մոտեցող Աքիլլեսին տեսնելուն պես Մեմնոնը մի հսկայական քար նետեց դեպի նա, բայց քարը ետ թռավ՝ դիպչելով վահանին: Իսկ Աքիլլեսը նիզակով վերք տվեց Մեմնոնի ուսին: Մեմնոնն ուշադրություն չգարձրեց վերքին, ինքն էլ Պելևսի որդու ձեռքը վիրավորեց: Մերկացրին սրերը հերոսները և իրար վրա խոյացան: Երկուսն էլ հավասարազոր էին իրար, երկուսն էլ դուրացան էին՝ աստվածուհիների զավակներ, երկուսի վրա էլ Հեփեստոսի կռած զրահներն էին շողշողում: Վահաններով պատսպարված՝ կովում էին հերոսները: Բարձրագահ Օլիմպոսից այդ մենամարտին էին նայում աստվածները: Հերոսների մայրերը՝ Թետիս և էոս դիցուհիները, Զևսին խնդրում էին՝ ամեն մեկն իր որդու համար: Զեռքն առավ Զևսը ոսկեղեն կշեռքը, նժարների մեջ զրեց հերոսների վիճակները և կշռեց: Մեմնոնի նժարը իջավ՝ ճակատագիրը նրան վիճակել էր մահ գտնել Աքիլլեսի ձեռքով: Հեծեծաց էոս աստվածուհին: Նա պիտի զրկվեր սիրասուն որդուց: Վերջապես ճոճեց իր ծանրածանր նիզակն Աքիլլեսը և մխրճեց Մեմնոնի կուրծքը: Ի նշան վշտահարության մուրթ ամպով պարուրվեց էոս աստվածուհին: Նա ուղմի գաշտն ուղարկեց իր որդիներին՝ քամու աստվածներին, և նրանք Մեմնոնի մարմինը բերեցին հեռավոր էսեպոս՝ գետի ափերը: Այն-

¹ Գեո Փոքր Ասիայում (այժմյան Զալտալդերեն):

տեղ դեռատի հավերժահարսները ողբացիկ նրա մահը և շիրիմ կանգնեցրին նրան:

Իսկ էթովպացիները թուռն աստվածներ դարձան: Այդ ժամանակից ի վեր ամեն տարի թուռն գալիս են նրանք էսեպիսի¹ ասիերը՝ Մեմնոնի գերեզմանին, և այնտեղ ողբում իրենց արքային:

Հույները մեծարանքներով թազեցին երիտասարդ Անտիլոքոսին: Նրա աճյունը դրին սափորի մեջ, իսկ հետագայում աճյունասափորը դրին նույն շիրմաթմբի մեջ՝ Աքիլլեսի և Պատրոկլեսի² աճյունների հետ միասին:

ԱՔԻԼԵՍԻ ՄԱՆԸ

Չարաշունչ բարկությունը լցվեց Աքիլլեսը տրոյացիներին դեմ, նա վճռեց դաժանորեն վրեժխնդիր լինել նրանցից իր ընկերների՝ Պատրոկլեսի և Անտիլոքոսի մահվան համար: Գազազած առյուծի նման էր կռվում Աքիլլեսը՝ իրար հետևից տապալելով Տրոյայի հերոսներին: Խուճապահար փախուստի դիմեցին տրոյացիները, շտապելով ապաստան գտնել Տրոյայի պարիսպների ներսում: Մուկդնած Աքիլլեսը հետապնդում էր նրանց: Անողորմ ճակատագիրը ղեպի անխուսափելի կործանումն էր մղում նրան: Մինչև Սկեյան դարպասները հետապնդեց նրանց Աքիլլեսը:

Նա սրբազան Տրոյա էլ կիսուժեր և կկործանեք քաղաքը, եթե չհայտնվեք Ապոլոնը: Ահեղագոռ ձայնով գոչեց նա ու կանգնեցրեց Աքիլլեսին: Բայց չհնազանդեց նրան Աքիլլեսը, նա դայրացած էր Ապոլոնի դեմ, որ նետածիզ աստվածը քաղմիցս փրկել էր Հեկտորին և տրոյացիներին: Աքիլլեսը սպառնաց նույնիսկ, թե նիզակով կխոցի նրան: Անողորմ ճակատագիրը մթազնել էր Աքիլլեսի միտքը: Նա պատրաստ էր նույնիսկ աստծո՝ վրա հարձակվելու: Զայրացավ Ապոլոնը, մոռացավ վազնմի խոստումը, որ տվել էր Պելևսի և Փետիսի հարսանյաց օրը՝ պահպանել Աքիլլեսին: Մուկամպով պատած, բոլորից անտեսանելի, նա ղեպի Աքիլլեսն ուղղեց Պարիսի նետը, որը խոցեց նրա գարշապարը, որ մեծ հերոսի միակ խոցելի տեղն էր: Մահացու էր այդ վերքը Աքիլլեսի հա-

մար: Զգաց Աքիլլեսը, որ մոտ է մահը: Դուրս բաշեց վերքից նետը և գետին տապալվեց: Դառնորեն կշտամբեց նա Ապոլոնն աստծուն, որ կործանեց իրեն: Գիտեր Աքիլլեսը, որ առանց աստծո օգնության մահկանացուներից չէր որ չէր կարող սպանել իրեն: Կրկին անգամ հավաքեց ուժերը Աքիլլեսը: Մեռնող առյուծի ահեղությունը ելավ գետնից և շատ տրոյացիների խողովոց: Բայց սկսեցին սառել նրա մարմնի անդամները. մահը գնալով ավելի էր մոտենում: Երբեք Աքիլլեսը և հենվեց նիզակին: Որոտաթունդ ձայնով գոչեց նա տրոյացիներին.

— Վա՛յ ձեզ, դուք կկործանվե՛ք: Մահիցս հետո՛ էլ վրեժխնդիր կլինեմ ես:

Այդ գոչյունը փախուստի մատնեց տրոյացիներին: Բայց Աքիլլեսն ավելի ու ավելի էր թուլանում: Վերջին ուժերն էլ լքեցին նրան և գետնաթափալ տապալվեց նա: Զրնդացին նրա ոսկեկուռ զրահները, և երկիրը սասանեց: Մեռավ Աքիլլեսը, բայց մեռած վիճակումն էլ չէին հանդգնում մոտ գալ տրոյացիները: Նրանք մեռած մարմնից էլ սարսափում էին, այնպիսի սոսկում էր ներշնչել նրանց Աքիլլեսը կենդանության օրոք: Գամաց-կամաց վանեցին նրանք այդ սարսափը, և անողորմ կոտորած սկսվեց հերոսներից ամենահակազորի մարմնի շուրջը: Հույն և տրոյացի հերոսներից ամենահզորները մասնակցում էին այդ մարտին: Դիակները լեռան նման կուտակվել էին Աքիլլեսի մարմնի շուրջը, իսկ նա պառկել էր անշարժ ու վիթխարի և աչլես չէր լսում կովի շոփնգը: Փռչին հողմի պես պտույտ էր գալիս մարտնչողների ոտքերի տակ: Արյունը հոսում էր գետի պես: Թվում էր, թե էլ երբեք վերջ չի ունենա մարտը, չանկարձ Զևսի ամպրոպը ճաթեց և կանգնեցրեց տրոյացիներին: Չէր կամենում Զևսը, որ տրոյացիները տիրանան Աքիլլեսի դիակին: Բարձրացրեց մեծազոր Այարս: Տեղամոնիղը Աքիլլեսի դին և տարավ ղեպի նավերը, իսկ Ողիսեսը պաշտպանում էր նրան՝ ետ մղելով տրոյացիներին գրոհը: Նետի ու նիզակների տարափ էր տեղում Ողիսեսի վրա տրոյացիների շարքերից, բայց նա ավելի ու ավելի քաջաբար էր դիմադրում նրանց գրոհին՝ քալ առ քալ նահանջելով:

Այաքսը նավերի մոտ բերեց Աքիլլեսի դին: Հույները լվացին դիակը, անուշահոտ յուղերով օծեցին և դրին շքեղորեն զարդարված մահճի վրա: Մահիճը շրջապատած՝ հույները ողբում էին քրեկն մեծազոր հերոսին և մազերն էին փետում: Թետիս աստվա-

¹ Փետիսը մանուկ Աքիլլեսին՝ կրունկից բռնած, թաթախել էր Հադեսի թագավորության ստորերկրյա Մաիքս գետի մեջ, որից նրա մարմինը դարձել էր երկաթի պես անբախու, իսկ կրունկին Մաիքսի ջրերը չէին զրկել:

ծուհուն հասավ նրանց ձայնը: Իր ներեուհի քույրերի հետ մեկտեղ զուրս եկավ նա ծովի հորձանուտից: Իմանալով, որ սպանվել էր իր սիրասուն որդին, Թեոփան այնպիսի լաց ու կոծ արեց, որ սարսուռացին հույները: Սարսափից դեպի նավերը կփախչեին, եթե նրանց շփանգնեցներ ծերունի Նեստորը: Տասնյոթ օր ողբացին Աքիլլեսին Թեոփանը, ներեուհիներն ու հույները: Մուսաներն էլ ցած իջան բարձրաբերձ Օլիմպոսից: Ի պատիվ մեռածի, մահվան հիմն էին երգում նրանք: Օլիմպոսի վրա հերոսին ողբում էին անմահ աստվածները ևս: Տասնութերորդ օրը հրկիզման խարույկ կանգնեցրին: Նրա վրա այրեցին Աքիլլեսի դին, Շատ զոհեր մատուցեցին ի պատիվ հույն հերոսներից մեծագույնի: Փառահեղ զենք ու զրահով բոլոր հույները մասնակցեցին թաղման արարողությանը: Երբ մինչև վերջն այրվեց խարույկը, հավաքեցին Աքիլլեսի ոսկորները և դրին ոսկե աճյունասափորի մեջ, որ Գիոնիսոս աստվածն էր ընծայել Թեոփանին: Այդ սափորի մեջ էին Պատրոկլեսի ոսկորները ևս: Մի շիրմի մեջ թաղվեցին Աքիլլեսը, Պատրոկլեսն ու Անտիլոքոսը՝ Նեստորի որդին: Բարձր շիրմաբլուր կանգնեցրին հույները գերեզմանի վրա: Ծովի հեռավոր ծայրից էլ երևում էր այդ բլուրը, որ նրա տակ հանդող հերոսների մեծ փառքի վկայությունն էր:

Թաղումից հետո մեռածի պատվին խաղեր կազմակերպեցին: Թանկագին պարզեններ հանեց Թեոփան աստվածուհին ծովի խորքից: Դրանք պիտի որպես պարգև տրվեին խաղերի մեջ հաղթողներին: Այնքան շքեղ էին այդ պարզենները, որ Աքիլլեսին էլ կաքանջաչցնեին, եթե կենդանի լիներ մեծ հերոսը:

ԱՅԱՔՍ ՏԵԼԱՄՈՆԻԴԻ ՄԱՀԸ

Նաբաղբված է ըստ Սեֆոկլեսի «Այաֆ-խաբազանակիր» ողբերգության:

Աքիլլեսի մահից հետո մնացին Հեփեստոս աստծո ձեռքով կռած նրա ոսկեղեն զենք ու դրահը: Թեոփանը պատվիրեց դրանք տալ այն մարդուն, ով ամենից ավելի է աչքի ցնկել Աքիլլեսի մարմինը պաշտպանելիս:

Ուրեմն, զենք ու զրահը պետք է ստանար Այաքսը կամ Ողիսեսը: Հենց նրանց մեջ էլ վեճ բռնկեց դրանց համար: Բայց ինչպես սպիտի լուծվեր այդ վեճը: Երկու հերոսներն էլ արժանի էին

այդ պարգևին: Վերջապես վճռեցին, որ այդ վեճի դատավորները պետք է լինեն գերված տրոյացիները: Այստեղ ևս իր սիրելի Ողիսեսին պաշտպան կանգնեց Աթենաս-Պալլասը: Նրա օգնությամբ Ազամեմնոնն ու Մենելաոսը փոխեցին Այաքսի համար զցված վեճակը, սխալ հաշվեցին տրոյացիների ձայները և դրահներին տիրացավ Ողիսեսը: Տրտմեց մեծագոր Այաքսը: Գնաց իր վրանը և մտադրվեց վրեժխնդիր լինել Ատրևսի որդիներից ու Ողիսեսից:

Գիշերը, երբ հույների ողջ ճամբարը խոր քուն էր մտել, սուրը ձեռքին զուրս եկավ նա վրանից Ազամեմնոնին և Մենելաոսին սպանելու միտումով: Բայց Աթենաս-Պալլաս աստվածուհին խնթացրեց Այաքսին: Վաղուց էր դիցուհին ղայրացած նրա վրա, որ իր ուժերին վստահ Այաքսը մերժում էր աստվածների օգնությունը: Յնորված Այաքսը հարձակվեց ցուլերի նախրի վրա: Խավարի մեջ սկսեց կռուրել նրանց, կարծելով, թե հույներին է սպանում: Իսկ մնացած ցուլերին բռնեց իր վրանը, երևակայելով, թե քրտմ է դերիներին: Սոսկալի խոշտանգեց Այաքսը նրանց իր վրանում: Նա հրճվում էր տեսնելով ցուլերի տանջանքներն ու մահը: Խեղացնոր Այաքսի համար դրանք ցուլեր չէին, այլ Ատրևսի որդիները: Վերջապես կամաց-կամաց հստակվեց Այաքսի միտքը: Մեծ էր նրա սոսկումը, երբ տեսավ, որ ողջ վրանը լի է սպանված կենդանիներով: Սարսափահար Այաքսը խնդրեց բացատրել, թե ի՞նչ է տեղի ունեցել: Երբ ամեն ինչ պատմեցին, սոսկալի վշտով համակվեց մեծ հերոսի սիրտը: Նա վճռեց իր մահվամբ սրբել խայտառակությունը: Եղբոր՝ Տեկրոսի, և Սալամինից իր հետ եկած ռազմիկների պաշտպանությունը հանձնելով որդուն՝ էվրիսակեսին, իր հետ առնելով Հեկտորի ընծայած սուրը, Այաքսը գնաց ծովափ, ասելով, թե զնում է աստվածներից զութ հայցելու, իսկ սուրն ուզում է նվիրաբերել Հադեսին և Գիշեր աստվածուհուն:

Իսկ հունական ճամբարում լուր տարածվեց Այաքսի արարքի մասին: Գտան նրա սպանած ցուլերը, ոչխարները և հովիվների դիակները: Ողիսեսը արյան հեռքերով պարզեց, որ դրանք Այաքսի արարքներն են: Սոսկալի գայրացան Ազամեմնոնն ու Մենելաոսը և վճռեցին վրեժխնդիր լինել Այաքսից:

Մինչ այդ, Տեկրոսից բանրեր եկավ: Նա Այաքսի ընկերներին հայտնեց, որ պահպանեն մեծ հերոսին, որովհետև նրան կործանում էր սպանում, բայց կործանումը սպանում է ա՛յդ օրը միայն, եթե այդ օրը բարեհաջող անցնի, այլևս ոչինչ չի սպառնա Այաք-

սին: Շուտով ճամբար եկավ Տեկրոսը ևս, Իմանալով, որ եղբայրը ծովափ է գնացել, Տեկրոսը վազեց եղբորը փնտրելու: Նա երկյուղ էր կրում, որ Այաքսի հետ զժբախտություն է պատահել: Եվ իրոք այլևս կենդանի չգտավ եղբորը, Շովի ափին Տեկրոսը գտավ Այաքսի զիակը միայն, ընկել էր իր սրի վրա: Այգաբն զոհվեց Աքիլլեսից հետո հույների մյուս ամենահզոր հերոսը:

Մենեկաոսն ու Ագամեմնոնը չէին ուզում թույլ տալ Տեկրոսին, որ հողին հանձնի եղբոր մարմինը: Բացահայտ թշնամություն կծագեր Տեկրոսի և Ատրևսի որդիների միջև, հունական ճամբարում երկպառակություն կընկներ, եթե չմիջամտեր Ողիսեսը: Նա համոզեց Ագամեմնոնին թույլ տալ, որ Տեկրոսը թաղի մեծազոր Այաքսին, մի հերոսի, որ մեծամեծ ծառայություններ էր մատուցել հույներին: Մի նոր շիրմաթումբ բարձրացավ Աքիլլեսի շիրմաթմբի կողքին. դրա տակ հանգչում էր Տելամոնի հզորազոր որդու՝ Այաքսի աճյունը:

ՓԻԼՈԿՏԵՏԵՍ: ՏՐՈՅԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Շատադժամ է ըստ Մոֆոլեսի «Փիլոկտես» պոեմագրքում:

Աքիլլեսի և Այաքսի մահից հետո հույները համառորեն շարունակում էին Տրոյայի պաշարումը, բայց չէին կարողանում ուժով տիրել քաղաքին: Մի անգամ դարան մտած Ողիսեսը լսեց Պրիամոսի որդու՝ գուշակ Հելենոսի խոսքը և խորամանկությամբ գերի վերցրեց նրան: Այգալիսով Ողիսեսը տեղեկացավ, որ Տրոյան կնվաճվի այն դեպքում միայն, երբ Հերակլեսի թունավոր նետերն առած, հունական զորաբանակը գան Փիլոկտեսը և Աքիլլեսի պատանի որդին՝ Նեոպտոլեմոսը: Ողիսեսն իսկույն վճռեց հեռավոր ճամփորդության դիմել՝ երկու հերոսներին բերելու:

Երբ Ողիսեսը ժամանեց Սկիրոս կղզին և գնաց կիկոնացի արքայի մոտ, նրա համար դժվար շեղավ Աքիլլեսի պատանի որդուն համոզել, որ մասնակցի Տրոյայի պաշարմանը: Ինչպես իր հայրը, գեղատես Նեոպտոլեմոսը այրվում էր մեծ սխրանքներ գործելու ցանկությամբ: Անհապաղ ճանապարհ ընկավ նա Ողիսեսի հետ միասին, չնայած մայրը՝ Գիգամիան, արցունքն աչքերին, համոզում էր նրան, որ մնա:

Շատ ավելի դժվար էր Փիլոկտեսի համաձայնությունն առնելը: Բուրբից լքված, նա ապրում էր Լեմնոսի մոտ գտնվող Քրիսե կղզում, մի քարայրի մեջ, որ երկու ելք ուներ՝ դեպի արևելք և արևմուտք: Այդ ելքերից թափանցող արևը ձմեռը տաքացնում էր քարայրը, իսկ ամառը քամին մեղմում էր տապը: Քաղցը հաճախ էր տանջում Փիլոկտեսին: Դժվարությամբ էր կերակուր ձեռք բերում նա, իր նետերով սպանելով վայրի աղափնիներին: Ոտքի վերքը սոսկալի ցավում էր, հաղիվ էր կարողանում շարժվել տարաբախտը, որ ջուր բերի իր համար: Քարը քարին քսելով, մեծ դժվարությամբ, հաջողվեց նրան կրակ վառել: Ամբողջ տասը տարի սոսկալի զրկանքներ ու տառապանքներ էր կրում Փիլոկտեսը Քրիսեում: Երբեմն-երբեմն Քրիսեի ափն էին ելնում նավաստիները, բայց նրանցից ոչ ոք չէր համաձայնում Հունաստան տանել Փիլոկտեսին: Այդ ամենի հանցավորները Ատրևսի որդիներն էին ու Ողիսեսը, Ահավոր ատելությամբ էր լցված նրանց դեմ Փիլոկտեսեսը: Հաճույքով կնետահարեր նրանց:

Գիտեր Ողիսեսը, որ անխուսափելի կործանում է սպանում իրեն, եթե ինքը երևա Փիլոկտեսի աչքին, ուստի և վճռեց խորամանկությամբ նվաճել նրան: Պատանի Նեոպտոլեմոսին համոզեց գնալ Փիլոկտեսի մոտ և պատմել նրան, թե ինքը թողել է Տրոյայի պաշարումը և եկել Տրոյայի պարիսպների տակից, որովհետև հույն առաջնորդները անարգանք են հասցրել իրեն: Եթե Փիլոկտեսը խնդրի Հունաստան տանել իրեն, ապա պիտի համաձայնություն տալ և այդ միջոցով տիրել Փիլոկտեսին ու նրա նետաղեղին և տանել նավը: Այդ ժամանակ հեշտ կլինեն Փիլոկտեսին Տրոյա տանել: Նեոպտոլեմոսը չէր ուզում խաբեության դիմել, բայց Ողիսեսը համոզեց նրան, թե միայն այդ միջոցով կարելի կլինի դեպի նավը հրապուրել Փիլոկտեսին, Նեոպտոլեմոսը համաձայնեց:

Երբ նավը Քրիսե հասավ, Նեոպտոլեմոսը մի քանի զորականների հետ ափ իջավ և գնաց դեպի քարայրը: Փիլոկտեսն այնտեղ չէր: Շուտով նա էլ երևաց: Աղեկուտը հեծեծանքերով նա մոտենում էր քարայրին. սոսկալի տանջում էր նրան վերքը: Ուրախացավ Փիլոկտեսը, երբ տեսավ այցելուներին: Ավելի մեծ եղավ նրա հրճվանքը, երբ իմացավ, որ իր առջև կանգնածը Նեոպտոլեմոսն է՝ Աքիլլեսի որդին: Նեոպտոլեմոսը նահատակին պատմեց այն ողջ մտացածին պատմությունը, որ հնարել էր Ողիսեսը,

պատմեց նաև Աքիլլեսի, Պատրոկլեսի և Այաքսի մահվան մասին: Տրոմեց Փիլոկտետեսն առնելով այն մարդկանց մահվան լուրը, որոնց բոլոր հույներին ամենից շատ էր սիրում, Համաձայնեց Փիլոկտետեսը Հունաստան նավել նեոպտոլեմոսի հետ. նույնիսկ նետերն ու աղեղը տվեց Աքիլլեսի պատանի որդուն և աղերսեց պաշտպանել իրեն խարդախ Ողիսևից: Փիլոկտետեսն ինքն էր շտապեցնում նեոպտոլեմոսին Հունաստան նավելու:

Հանկարծ, եկավ մի զորական և հայտնեց, թե իբր հերոս Փենիքսը և Քեսևսի որդիները գալիս են, որ Փիլոկտետեսին բռնությամբ Տրոյա տանեն: Չնայած սոսկալի տառապանքներին, որից նա ուշաթափ գետին էր տապալվում, Փիլոկտետեսն շտապեց զեպի ափ: Տեսավ այդ տառապանքները նեոպտոլեմոսը: Այլևս ի վիճակի չէր կեղծիքը շարունակել, և ողջ ճշմարտությունը հայտնեց Փիլոկտետեսին: Նեոպտոլեմոսն արդեն ուզում էր վերադարձնել նետերն ու աղեղը Փիլոկտետեսին, բայց թաքստոցից դուրս վաղեց Ողիսևը և թույլ չտվեց նրան անել այդ բանը: Փիլոկտետեսն ուզում էր փախչել և ժայռից գահավեժ ծովը նետվել, միայն թե ղենք չդառնա ատելի Ողիսևի և Ատրևսի որդիների ձեռքին: Ողիսևը սպասավորներին կարգադրեց բռնել Փիլոկտետեսին և բռնությամբ նավը տանել: Հուսահատությունը տիրեց Փիլոկտետեսին: Նեոպտոլեմոսը անկարող եղավ այդ պատկերը տեսնել ու դիմանալ. նա նետերն ու աղեղը հոտ տվեց թշվառ նահատակին: Ողիսևի ողջ ծրագրերը փոշի եկավ: Նա նույնիսկ փութաց փախուստի դիմել ու փրկվել, որովհետև զիտեր, թե ինչ սոսկալի է Հերակլեսի նետից մեռնելը:

Կրկին անգամ փորձ արեց նեոպտոլեմոսը Փիլոկտետեսին համոզելու, որ իրենց հետ Տրոյադա գնա և օգնի հույներին Տրոյան զրավել: Բայց կտրականապես հրաժարվեց Փիլոկտետեսը. չէր կարող մոռանալ այն տառապանքները, որին մատնել էին նրան Ազամեմնոնը, Մենելաոսն ու Ողիսևը: Թվում էր, թե նպատակին չհասած, ստիպված պիտի լինեն թողնել Քրիսե կղզին, կամ էլ նեոպտոլեմոսը նորից պիտի կեղծիքի դիմեր:

Հանկարծ Փիլոկտետեսի առաջ, անմահ աստծո փայլով, հայտնվեց Հերակլեսը: Նա Փիլոկտետեսին պատվիրեց գնալ Տրոյայի պարիսպների մոտ, հերոսներից վսեմագույնը Փիլոկտետեսին խոստացավ, որ այնտեղ կբուժվի նրա վերքը և Տրոյան նվաճելիս մեծ փառք կվաստակի նա, Հնազանդեց ընկերոջ կամքին Փիլոկ-

տետեսը: Իր իսկ կամքով մտավ նավը և գնաց դեպի Տրոյադա, ուր նրան մեծ սխրագործություններ էին սպասում:

Տրոյայի պարիսպների տակ շատ սխրանքներ գործեց նեոպտոլեմոսը: Ուժով և քաջությամբ ոչ ոք չէր կարող շափվել Աքիլլեսի որդու հետ: Տրոյական շատ հերոսներ ընկան նեոպտոլեմոսի ձեռքով, Դաժան մենամարտում սպանեց նա հսկայազոր Հերակլեսի հետնորդներից մեկին, էվրիպիլոսին՝ Տելեփոսի որդուն: Պրիամոսին օգնելու էր ուղարկել նրան մայրը՝ կաշառված թանկարժեք ընծայով՝ խաղողի ոսկեղեն վազով, որ աճեցրել էր Զևսը չքնադատես Գանիմեդեսի համար: Մեմնոնից հետո Տրոյայի ամենահզոր պաշտպանը աստծո պես գեղեցիկ էվրիպիլոսն էր: Մոր շահամոլությունը կործանեց նրան:

Տրոյայի պարիսպների մոտ գալուց հետո շատ չանցած Փիլոկտետեսն իր նետով վերք հասցրեց Պարիսին՝ պատերազմի նախապատճառին: Հերակլեսի թունավոր նետով Փիլոկտետեսը նրան անբուժելի վերք տվեց, որից և ահավոր տանջանքների մեջ պիտի մեռնե Պարիսը: Նետի թույնը ավելի ու ավելի խորն էր թափանցում նրա մարմնի մեջ: Պարիսը Տրոյայից հեռացավ, գնաց անտառ և մեռավ սոսկալի տառապանքների մեջ: Նա մեռավ այնտեղ, ուր մի ժամանակ ապրում էր անհոգ, իբրև հասարակ հովիվ: Պարիսի մարմինը գտան Գովիվները: Դառնորեն սգացին իրենց երբեմնի ընկերոջը: Բարձր խարույկ դարսեցին, այնտեղ դրին Պարիսի մարմինը և այրեցին: Հավաքեցին աճյունը հովիվները, լցրին սափորի մեջ և դրին գերեզմանում:

Օր-օրի ավելի ու ավելի փին դժվարանում տրոյացիները պաշտպանել քաղաքը: Բայց Գույներն էլի չէին կարողանում բացահայտ գրոհով նվաճել Տրոյան: Եվ ահա, Ողիսևը մի վտանգավոր սխրանքի վճիռ կայացրեց: Նա իր ղեմքը մտրակի հարվածներով ալլանդակեց և ցնցոտիներ Գագած, մուրացիկի կերպարանքով Տրոյա մտավ, որպեսզի իմանա տրոյացիների մտադրությունը: Տեսան բոլոր տրոյացիները բազմամարդ փողոցներում ողորմություն հավաքող թշվառ մուրացիկին: Միայն Հեղինեն ճանաչեց Ողիսևին: Իր տուն կանչելով, լողացրեց նրան Հեղինեն և երզվեց չհայտնել տրոյացիներին նրա ով լինելը: Ամեն ինչ տեղեկացավ Ողիսևը և պահակներից շատերին սպանելուց հետո հունական ճամբարը վերադարձավ բարեհաջող: Մի ավելի վտանգավոր սխրագործության դիմեցին Ողիսևն ու Դիոմեդեսը. նրանք գաղտ-

ևաբար Տրոյա թափանցեցին և թաքնվեցին Աթենաս-Պալլասի սրբավայրում, ուր գրված էր աստվածուհու փայտեղեն անդրին (պալլադիոն), որ մի ժամանակ երկնքից էր վայր ընկել: Հույները պիտի անպայման ձեռք բերեին այդ անդրին, որովհետև քանի դա Տրոյայում էր, հնարավոր չէր այդ քաղաքը նվաճել: Մեծ վտանգների գնով, զողացան անդրին խիզախ հերոսները: Ծանապարհին բազում տրոյացիների սպանեցին և վերադարձան ճամբար:

ՏՐՈՅԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

Հիմնականում ջարագված է ըստ Վերգիլիոսի «էնեական» պոեմի:

Հույները, սակայն, չէին կարողանում տիրել քաղաքին: Եվ Ոգիսևսը հույներին համոզեց խորամանկությամբ գիմել: Նա խորհուրդ տվեց մի այնպիսի հակայական փայտե ձի շինել, որ նրա մեջ թաքնվել կարենան հույների ամենազորավոր հերոսները: Մնացած զորականները պիտի հեռու նստեն Տրոյադայի ամրիցից և դարան մտնեն թենեգոս¹ կղզու մյուս կողմում: Երբ տրոյացիները քաղաք կտանեն ձին, գիշերը հերոսները դուրս կգան և գաղտագողի վերադարձած հույների առաջ բաց կանեն դարպասները: Ոգիսևսը հավատացնում էր, որ այդ ճանապարհով միայն կարելի կլինի նվաճել Տրոյան:

Գուշակ Կալքասը ևս, որին կանխանջան էր սուղարկել Զևսը, համոզում էր հույներին խորամանկության գիմել: Վերջապես հույները համաձայնեցին Ոգիսևսի առաջարկին: Հուշակավոր նկարիչ էպիսոսը, իր աշակերտի հետ միասին, Աթենաս-Պալլաս դիցուհու օգնությամբ, մի հակայական փայտե ձի շինեց: Նրա մեջ մտան նեոպտոլեմոսը, Փիլոկտեսեսը, Իդոմենևսը, Գիոմեդոսը, կրտսեր Այաքսը, Մերիոնեսը, Ոգիսևսը և մի քանի ուրիշ հերոսներ: Զին լցվեց պինավառված ուղղմիկներով: Էպիսոսն այնպես ամուր փակեց այն անցքը, որով մտել էին հերոսները, որ մտքով իսկ չէր կարելի անցկացնել, թե ներսում ուղղմիկներ կան: Այնուհետև, հույներն այրեցին իրենց ճամբարում եղած բոլոր շինությունները, նավերը մտան և բաց ծով դուրս եկան:

Պաշարվածները Տրոյայի բարձրադիր պարիսպներից տեսան հունական ճամբարի արտակարգ եռուզեզու: Երկար ժամանակ չէին

կռահում նրանք, թե ի՞նչ է կատարվում այնտեղ: Հանկարծ, ի մեծ ուրախությամբ իրենց, նկատեցին, որ հունական ճամբարից ծխի թանձր քուլաներ են բարձրանում: Գլխի ընկան, որ հույները լքում են Տրոյադան, Ցնծալով, դուրս եկան բոլոր տրոյացիները քաղաքից և դեպի ճամբարը գնացին: Իրոք որ հույները լքել էին ճամբարը, տեղ-տեղ միայն դեռ այրվում էին շինությունները: Մեծ հետաքրքրությամբ տրոյացիները թափառում էին այնտեղ, ուր վաղուց չէ, ինչ կանգնած էին Գիոմեդոսի, Աքիլլեսի, Ագամեմնոնի, Մենելաոսի և մյուս հերոսների վրանները: Նրանք համոզված էին, որ այլևս վերացել է պաշարումը, հետևում են մնացել աղետները բոլոր, այժմ արդեն կարելի է նվերվել խաղաղ աշխատանքի:

Հանկարծ ապշահար կանգ առան տրոյացիները. նրանք տեսան փայտե ձին: Գուհուհուներից գլխավորույս, նայում էին նրանք ձիուն ու մտածում, թե ի՞նչ շինվածք է դա: Որտեղ առաջարկում էին ծովը նետել ձին, մյուսները՝ քաղաք տանել և դնել միջնաբերդում: Վեճ սկսվեց: Այդ ժամանակ վիճողների առաջ հատնվեց Ապոլոն աստծո քուրմ Լաոկոոնը: Նա իր համաքաղաքացիներին տաքացած համոզում էր ոչնչացնել ձին: Լաոկոոնը համոզված էր, որ ձիու մեջ թաքնված են հույն հերոսները, որ դա մի ուղղակի խորամանկություն է, նյութված Ոգիսևսի կողմից: Չէր հավատում Լաոկոոնը, թե հույները անվերադարձ հեռացել են Տրոյադայից: Լաոկոոնը աղաչում էր տրոյացիներին հավատ չընծայել ձիուն: Ի՞նչ էլ որ լիներ, Լաոկոոնը երկյուղ էր կրում հույներից, եթե նույնիսկ ընծաներ բերեին նրանք Տրոյային: Լաոկոոնը մի հսկայական նիզակ խից և դեպի ձին նետեց: Ցնցվեց ձին հարվածից և խուլ գնդացին զենքերը նրա ներսում: Բայց աստվածները մթազնել էին տրոյացիների միտքը. այնուամենայնիվ, որոշեցին քաղաք տանել ձին: Պետք է իրագործվեր ճակատագրի վճիռը:

Երբ տրոյացիները, ձին շրջապատած, դեռ դարմանքով շարունակում էին դիտել նրան, հանկարծ բարձրաձայն ձիչ լավից: Հովիվները կապկպած մի գերի էին բերում: Նա կամավոր գերի էր հանձնվել: Այդ գերին հույն Մինոն էր: Շրջապատեցին նրան տրոյացիները և սկսեցին ծանակել: Լուռ կանգնել էր Մինոնը և նրկյուղած նայում էր իրեն շրջապատող տրոյացիներին: Վերջապես խոսեց նա: Արցունք թափելով, դառնագին ողբում էր իր դաժան թախտը: Մինոնի արցունքները շարժեցին Պրիամոսի և բոլոր տրոյացիների գութը: Սկսեցին հարցուփորձ անել, թե ով է և ին-

¹ Կղզի էգեյան ծովում, Տրոյադայի ամրիցին մոտ:

չու է ետ մնացել: Եվ այդ ժամանակ Սինոնը պատմեց հնարովի մի պատմութիւն, որ հորինել էր Ողիսևսը՝ տրոյացիներին խաբելու համար: Սինոնը պատմեց, թե ինչպես Ողիսևսը ցանկացել էր կործանել իրեն, որովհետև ինքը ազգականն էր այն Պալամեդեսի, որին այնպես ատում էր Իթակիի արքան: Ուստի և, երբ հույները վճռել էին վերջ տալ պաշարմանը, Ողիսևսը համոզել էր Կալքասին հաղորդել, թե իբր աստվածները մարդկային զոհ են պահանջում՝ դեպի հայրենիք բարեբախտ վերադարձի համար: Երկար ժամանակ կեղծավորաբար տատանվում էր Կալքասը, թե իբր զոհ ո՞ւմ մատնացույց անի և, վերջապես, մատնացույց արեց Սինոնին: Կապտեցին հույները Սինոնին և դեպի զոհասեղանը տարան: Բայց Սինոնը կտրատեց կապանքները և անխուսափելի մահից ազատվեց փախուստով: Երկար ժամանակ թաքնվել էր Սինոնը եղեգնուտի խիտ թփերում, սպասելով հայրենիք վերադարձող հույների ծով դուրս գալուն, իսկ երբ ափից հեռացել են նրանք, Սինոնը դուրս է եկել իր թաքստոցից և կամավոր հանձնվել հովիվներին:

Հավատացին տրոյացիները խորամանկ հույնին: Պրիամոսը հրամայեց ազատ արձակել նրան և հարցրեց, թե ի՞նչ է նշանակում այդ փայտե ձին, որ հույները թողել են ճամբարում: Հենց այդ հարցին էր սպասում Սինոնը: Իր ասածների իսկությանը վկայակոչելով աստվածներին, Սինոնն ասաց, թե հույները ձին թողել են, որպեսզի ողորմածութիւնը շարժեն ահեղազոր Աթենաս-Պալլասի, որը զայրացել էր պալլադիոնը Տրոյայից զողանալու համար: Ըստ Սինոնի խոսքի, այդ ձին հզոր պաշտպանութիւն կլինի Տրոյայի համար, եթե քաղաք տանեն այն: Դրան ևս հավատացին տրոյացիները: Ծարպկորեն խաղաց նա այն դերը, որ հանձնարարել էր Ողիսևսը:

Տրոյացիները ավելի հաստատ համոզվեցին, որ Սինոնը ճշմարիտ է ասում, երբ ծովի վրա երևաց Աթենաս-Պալլասի շտեմերված հրաշքը: Ծովի վրա երկու հրեշավոր օձ հայտնվեցին: Արագորեն դեպի ափ էին լողում նրանք ծովի ալիքների մեջ զալարելով իրենց մարմնի անհամար օղակները: Նրանց գլխներին բարձրանում էին արյան նման կարմիր կատարները: Աչքերը վառվում էին կրակների պես: Ափ դուրս եկան օձերը և սողացին այնտեղ, ուր կռկոտնը զոհ էր մատուցում ծովերի աստված Պոսեյդոնին: Զարհուրած փախան բոլոր տրոյացիները: Իսկ օձերը նետվեցին կռկոտնի երկու որդիների վրա և զալարվեցին նրանց մարմնի

շուրջը: Զավակներին օգնութեան շտապեց կռկոտնը, բայց նրան էլ փաթաթվեցին օձերը: Իրենց սուր ատամներով նրանք ծվատում էին կռկոտնի և նրա երկու որդիների մարմինները: Զանում էր օձերին իր մարմնից պոկել տարաբախտը և աղատել զավակներին, բայց իզուր: Թույնն ավելի ու ավելի խոր էր թափանցում նրանց մարմինները: Մարմնի անդամները շղաճզվում էին ցնցումներից: Սոսկալի էին կռկոտնի և նրա որդիների տառապանքները: Աղեկը տուր ճշաց կռկոտնը, զգալով մոտալուտ մահը: Այդպես կործանվեց կռկոտնը, տեսնելով իր անմեղ զավակների սոսկալի մահը, կործանվեց, որովհետև հակառակ աստվածների կամքի, ուզում էր փրկել հայրենիքը: Իսկ օձերն իրենց ահասարսուռ գործը տեսնելուց հետո սողացին ու անհետացան Աթենաս-Պալլասի արձանի վահանի տակ:

Կռկոտնի կործանումը էլ ավելի համոզեց տրոյացիներին, որ փայտե ձին քաղաք պիտի տանել: Նրանք քանդեցին քաղաքային պարսպի մի մասը, որովհետև հսկայական ձին անհնար էր դարպասներով ներս տանել և ցնծութեամբ, երգով ու երաժշտութեամբ ձին ճոպաններով քաղաք բարձր տվին: Փլվածքով բարձր տալիս, շորս անգամ կանգ առավ ձին, դիպչելով պատին, և ցընցումներից ահեղաձայն զրնգացին հույների զենքերը, բայց տրոյացիները այդ չէին լսում: Վերջապես միջնաբերդ բարձր տվին ձին: Իմաստուն Կասանդրան՝ սոսկաց՝ ձին միջնաբերդում տեսնելով: Նա կործանում գուշակեց Տրոյային, բայց ծիծաղով պատասխանեցին նրան տրոյացիները. չէ՞ որ նրանք երբեք չէին հավատում Կասանդրայի գուշակութիւններին:

Խորին լուսթյան մեջ նստել էին հերոսները ձիու ներսում, լարված ականջ դնելով դրսից եկող ամեն մի ձայնի: Լսում էին նրանք, թե ինչպես, իրենց կանանց ձայնին նմանեցնելով, հականե-հանվանե կանչում էր նրանց դեղագանգուր Հեղինեն: Հերոսներից մեկին հազիվ զսպեց Ողիսևսը, փակելով նրա բերանը, որ նա պատասխան չտա: Լսում էին հերոսները տրոյացիների ցնծութեան ձայները և աղմուկը ուրախ խնջույքների, որ տեղի էր ունենում ողջ Տրոյայում՝ պաշարումը վերացնելու առթիվ: Վերջապես վրա հասավ դիշերը: Ամեն ինչ լռեց: Տրոյան խոր ջուն մտավ: Փայտե ձիու մուտ հնչեց Սինոնի ձայնը, նա հերոսներին իմաց էր անում, որ այժմ արդեն կարող են դուրս գալ:

Սինոնը հասցրել էր նաև մեծ խարույկ վառել Տրոյայի դար-

պատաների մոտ: Այդ նշանով Թենեդոսից այն կողմ թաքնված հույս
ներին իմաց էր անում, որ դեպի Տրոյա շտապեն: Զգուշաբար,
ջանալով ոտքերով աղմուկ չհանել, ձիուց դուրս եկան հերոսները.
առաջինը Ոգիսեսը դուրս եկավ էպեոսի հետ միասին: Քնի մեջ
խորասուզված Տրոյայի փողոցներում ցրվեցին հերոսները: Սկզբ-
վեց սարսափելի սպանդ, Հրկիզվեցին տները, շտապույն հրացու-
քով լուսավորելով կործանվող Տրոյան: Հերոսներին օդնության
հասան մյուս հույները ևս: Փլվածքից նրանք Տրոյա ներխուժեցին:
Սկզբեց դարձուրելի մարտը: Տրոյացիները պաշտպանվում էին ուժ
ինչով կարող էր: Նրանք հույների վրա էին նետում այրվող գե-
րաններ, կահ-կարասիներ, կռվում էին շշերով, որոնցով քիչ առաջ
միս էին խորովում խնջույքի համար: Ոչ ոքի չխնայեցին հույները:
Լաց ու կոծով վազում էին Տրոյայի փողոցներով կանայք ու մա-
նուկները: Վերջապես հույները հարձակվեցին Պրիամոսի պալատի
վրա, որ պաշտպանվում էր աշտարակավոր պարսպով: Լուսակտուր
արիությունը պաշտպանվում էին տրոյացիները: Նրանք մի ամբողջ
աշտարակ շուռ տվին հույների վրա: Ավելի անողորմ զորհի անցան
հույները: Կացնի հարվածով խորտակեց պալատի զարպասները
Աքիլլեսի որդին՝ Նեոպտոլեմոսը և առաջինը խուժեց պալատ: Նրա
հետևից պալատ խուժեցին մնացած հերոսներն ու զորականները
ևս: Պրիամոսի պալատը լցվեց կանանց ու մանուկների լաց ու կո-
ծով: Աստվածների զոհասեղանների մոտ հավաքվեցին Պրիամոսի
աղջիկներն ու հարսները: Նրանք պաշտպանություն էին փնտրում
այնտեղ: Զինավառ Պրիամոսն ուզում էր պաշտպանել նրանց կամ
ընկնել մարտում, բայց Հեկարեն զառամած արքային ազերսում էր
պաշտպանություն փնտրել զոհասեղանի մոտ: Մի՞թե թույլ ծերու-
նին կարող էր մարտնչել մեծազոր հերոսների հետ:

Հանկարծ ներս ընկավ Նեոպտոլեմոսը. նա հետապնդում էր
Պրիամոսի մահացու վիրավոր որդուն՝ Պոլիտեսին: Նիզակի հար-
վածով Նեոպտոլեմոսը գետին տապալեց Պոլիտեսին՝ հոր ոտքերի
մոտ: Գեպի Նեոպտոլեմոսը նետեց նիզակը Պրիամոսը, բայց թույլ
եղեգնափայտի նման ետ թռավ նիզակը Աքիլլեսի որդու զրահից:
Հափշտակեց Պրիամոսի ճերմակ մազերը զայրազնած Նեոպտոլե-
մոսը և սուրսայր սուրը նրա կուրծքը մխրճեց: Սպանվեց Պրիա-
մոսն այն պալատում, ուր ապրել էր այնքան տարիներ և իշխել էր
մեծ Տրոյային: Պրիամոսի որդիներից ոչ մեկը չիբրկվեց, Նույնիսկ
թուր՝ Հեկտորի որդին՝ Աստիանաքոսը, սպանվեց, նրան հափշտակե-

ցին տարաբախտ Անդրոմաքեի ձեռքից և ցած նետեցին Տրոյայի
բարձրաբերձ պարսպից: Մենելաոսը պալատում սպանեց քնած
Գեիփոթոսին, որի կինն էր դարձել Հեղինեն Պարիսի մահից հետո:
Զայրույթով լցված, Մենելաոսը կսպաներ նաև չքնաղ Հեղինենին,
եթե նրան չզսպեր Ագամեմնոնը, իսկ Ափրոդիտե աստվածուհին
Մենելաոսի սիրտը նորից սիրով լցրեց դեպի Հեղինեն: Հանդիսա-
վորությունը դեպի իր նավը տարավ նա Հեղինենին:

Պրիամոսի գոստրը՝ գուշակ Կասանդրան, փրկություն էր
փնտրում Աթենա-Պալլասի սրբավայրում: Այնտեղ գտավ նրան
Օլլևսի որդին՝ Այաքսը: Կասանդրան փարեց Աթենասի անդրիին,
զրկելով աստվածուհու արձանը: Կոպտաբար բռնեց նրան Այաքսը
և այնպիսի ուժով ետ քաշեց, որ տաճարի հատակին ընկավ սրբ-
բաշան արձանն ու փշուր-փշուր եղավ: Զայրացան Այաքսի վրա
հույները, զայրացավ մեծազոր աստվածուհին ևս: Հետագայում
դաժանորեն վրեժխնդիր եղավ Այաքսից դրա համար:

Տրոյայի բոլոր հերոսներից փրկվեց միայն էնեասը, որը
իր ձեռքերի վրա Տրոյայից դուրս բերեց ծերունի հորը՝ Անքիզեսին
և փոքր որդուն՝ Ասկանիոսին: Խնայեցին հույները տրոյական հե-
րոս Անտեոռին ևս: Խնայեցին, քանի որ նա տրոյացիներին միշտ
խորհուրդ էր տալիս հույներին վերադարձնել զեղազանգուր Հեղի-
նենին և Մենելաոսի զանձերը, որ հափշտակել էր Պարիսը:

Գեո երկար այրվում էր Տրոյան: Միս քուլաները երկինք էին
բարձրանում: Ողբում էին աստվածները մեծ քաղաքի կործանումը:
Հեղից երևում էր Տրոյայի հրդեհը: Միս սյուներից ու հսկայա-
կան հրացուքից հարևան ժողովուրդները գիշերն իմացան, որ կոր-
ծանվել է Տրոյան, որ երկար ժամանակ Ասիայի հզորագույն քա-
ղաքն էր:

ՀՈՒՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՐՁԸ ՀԱՅՐԵՆԻՔ

Ետադրված է հիմնականում ըստ Եվրիպիդեսի «Անդրոմախե» և «Հեկարե»
ոդրեգոթյունների:

Հարուստ ավար ձեռք բերին հույները Տրոյայում. վարձատր-
վեցին բոլոր տառապանքները, որ կրել էին նրանք տասնամյա
պաշարման ընթացքում, Առատ ոսկի և արծաթ, շատ կարասիներ
ու անթիվ, անհամար չքնաղ գերուհիներ էին տանում հույներն
իրենց նավերով:

Երբ հունական նավերը Հելեսպոնտոսի հանդիպակաց ափը հասան, հայտնվեց Աքիլլեսի ուրվականը: Հերոսը պահանջեց իրեն զոհաբերել Պրիամոսի չքնադագեղ դստերը՝ Պոլիկսենեին, որին մի ժամանակ կանխատեսել էին կնության տալ իրեն: Ագամեմնոնը չէր ուզում տալ Պոլիկսենեին: Կասանդրան ևս աղերսեց խնայել քրոջը: Բայց Ողիսևսը պահանջեց այդ զոհաբերությունը, հիշեցնելով, թե ի՞նչ մեծ ծառայություններ է մատուցել Աքիլլեսը հույներին Տրոյայի պաշարման ժամանակ: Ինքը Պոլիկսենեն ևս պատրաստ էր դեպի զոհասեղանը գնալ: Գիտեր նա, որ դա փրկություն կլիներ ծանր ստրկությունից՝ օտարություն մեջ: Խաղաղ սրտով գնաց Պոլիկսենեն դեպի զոհասեղանը, ուր զոհադանակը ձեռքին սպասում էր նեոպտոլեմոսը: Նա թույլ չտվեց իրեն դեպի մահ տանող պատանուն գիպչել իրեն: Չէր ուզում Պոլիկսենեն իրեն ստրուկ իջնել Հագեսի թագավորությունը: Ինքը մոտեցավ զոհասեղանին, ինքը մերկացրեց կուրծքը, Վշտի հառաչանքով Պոլիկսենեի կուրծքը մխրձեց սուրը նեոպտոլեմոսը, և տաք արյունը բոսոր ներկեց Աքիլլեսի պատվին կանգնեցրած զոհասեղանը:

Պոլիկսենեին զոհաբերելուց հետո հույները բռնեցին հեռավոր հայրենիքի ճանապարհը: Բազում փորձանքներ վիճակվեցին հույներին այդ ճանապարհին: Շատ հերոսներ զոհ գնացին՝ հայրենիքը չտեսած:

Դեռևս Տրոյայի կործանման ժամանակ զայրացած Աթենաս-Պալլասը երկպառակություն գցեց հույների ու Ատրևսի զավակների միջև: Մենելաոսը կամենում էր անհապաղ Հունաստան ճանապարհվել, իսկ Ագամեմնոնը պահանջում էր, որ հույները Տրոյա դադալում մնան այնքան ժամանակ, քանի ղեռ զոհերով չեն հայցել Աթենասի ողորմածությունը: Չգիտեր Ագամեմնոնը, որ ոչ մի բանով չի մեղմի աստվածուհու ցասումը: Ամբողջ օրը շարունակվեց եղբայրների վեճը: Հաջորդ առավոտ հունական նավերի մի մասը, հարուստ ավարի իրենց բաժինն առնելով, լքեց Տրոյադան:

Մեկնեցին Նեստորը, Դիոմեդեսը, Նեոպտոլեմոսը, Իդոմենևսը և Փիլոկտետեսը: Մի քիչ ուշ մեկնեց Մենելաոսը ևս. նա Լեսբոսում հասավ Նեստորին և Դիոմեդեսին: Ողիսևսը ևս կլքեր Տրոյադան, բայց Թենեդոսում զժողովեց ուղեկիցների հետ և վերադարձավ Տրոյադա՝ Ագամեմնոնի մոտ: Լեսբոսում հավաքված հերոսները նավեցին դեպի Էվբեա կղզին: Էվբեայում, Հեփեստոս աստծուն նվիրաբերված հրվանդանի մոտ, նրանք զոհ մատուցեցին

Պոսեյդոնին և շարունակեցին ճանապարհը: Չորս օր հետո Դիոմեդեսը Արգոս հասավ, իսկ Նեստորը՝ Պիլոս: Բարեհաջող հայրենիք հասան Իդոմենևսը, Փիլոկտետեսը և Նեոպտոլեմոսը ևս:

Իսկ Մենելաոսին շատ աղետներ վիճակվեց կրել: Սունիում հրվանդանի մոտ, Ատտիկայի արևելյան ծայրամասում, Ապոլոն աստվածը նետահարեց Մենելաոսի ղեկավար Փրոնտիսին: Մենելաոսն ափ դուրս եկավ, թաղման ձոխ արարողություն կատարեց ի պատիվ Փրոնտիսի և ապա միայն շարունակեց ճանապարհը: Երբ նրա նավերը շրջանցեցին Լակոնիայի հարավ-արևմտյան ծայրամասում գտնվող վտանգավոր Մալեյան հրվանդանը, Զևսը սուսկալի փոթորիկ առաջացրեց: Լեոնանում էին ծովի հսկայական ալիքները: Մենելաոսի նավերի մի մասը փոթորիկը դեպի Կրետե քշեց, ուր ժայռերին զարկվելով փշրվեցին նրանք. մեծ ղժվարություն մտնողներին միայն նրանց վրա եղող հույները: Իսկ մնացած նավերը, որոնց վրա էր նաև Մենելաոսը, նրկար ժամանակ տարուբերվում էին ծովի վրա և, վերջապես, Եգիպտոս հասան: Ցոթ երկար տարիներ թափառեց Մենելաոսը օտարերկրյա ժողովուրդների մեջ: Եղավ նա սիդոնցիների, էթովպացիների և ուրիշ շատ ժողովուրդների մեջ: Ապա և Կիպրոսում, Փյունիկիայում և հեռավոր կրթիայում, որի ժողովուրդները հռչակված էին իրենց անթիվ-անհամար նախիրներով: Բազում մեծահարուստ ընծաներ ստացավ Մենելաոսը, հսկայական հարստություն հավաքեց նա: Եգիպտոսում Փոոնի կինը՝ Պոլիդամենն, չքնաղ Հեղինեին նվիրեց մի հրաշալի սպեղանի, որ պատրաստված էր կախարդական բույսի հյութից: Նա, ով գինու հետ խմում էր այդ սպեղանին, մոռանում էր ամենաժանր վիշտը: Վերջապես, Եգիպտոսից վերադառնալիս, Մենելաոսը հասավ Փարոս կղզին: Այնտեղ Մենելաոսը քսան օր համբարեց քամու սպասեց: Կղզին ամայի էր, պաշարներն սպառվում էին: Բոլորին սովամահություն էր սպանում: Մենելաոսին և նրա ուղեկիցներին փրկեց ծովային աստված Պրոտեյսի զուստ Իդոմենևսը: Նա հայտնվեց Մենելաոսին և սովորեցրեց նրան բռնել Պրոտեյսին և ստիպել, որ հայտնի աստվածների կամքը:

Առավոտը վաղ, հենց որ արշալույսի աստվածուհի էոսը երկինք ճախրեց, Մենելաոսը երեք զորեղ ու քաջակորով ուղեկիցների հետ գնաց ծովափ: Այնտեղ նրանց սպասում էր Իդոմենևս, փոկերի չորս մորթի ձեռքին: Այդ մորթիները Իդոմենևսն հագցրեց Մենելաոսին և նրա ուղեկիցներին, իսկ որպեսզի այդ մորթիները

գարշահատութիւնից շտանջվեն, քթերին ամբրոսիա քսեց: Անշարժ պառկել էին Մենելատոսն ու նրա ուղեկիցները ծովափին: Վերջապես, փոկերի հոտի հետ միասին, դուրս լողաց Պրոտեյսը: Հաշվեց փոկերը, հանգիստ պառկեց ավազին ու քնեց: Ազադակելով, Պրոտեյսի վրա հարձակվեց Մենելատոսն՝ ուղեկիցների հետ միասին: Համառ պայքար սկսվեց: Պրոտեյսը կերպարանափոխվեց. դարձավ առյուծ, օձ, հովազ, վարազ, ջուր ու ծառ, բայց Մենելատոսը և նրա ուղեկիցները ամուր բռնել էին նրան: Վերջապես հանդարտվեց ծերունին, իր կերպարանքն առավ և հարցրեց Մենելատոսին, թե ի՞նչ է ուզում իմանալ: Մենելատոսը հարցրեց ծովային ծերունուն, թե աստվածներից ո՞վ է զայրացել իր վրա, որ համընթաց քամի չի ուղարկում իրեն: Պրոտեյսը պատվիրեց Մենելատոսին վերադառնալ Եգիպտոս և այնտեղ հեկատոմբ (հարյուր ցուլ) զոհ մատուցել աստվածներին, այդ դեպքում միայն կզփան աստվածները և բարեբախտ հայրենիք կվերադառնան նրանք: Պրոտեյսը գուշակեց Մենելատոսի և նրա կնոջ՝ Հեղինեի բախտը, ապա հայտնեց Մենելատոսին, թե ի՞նչ է սպասում հերոսներից յուրաքանչյուրին՝ Տրոյայից վերադառնալու ճանապարհին, Մենելատոսը կատարեց Պրոտեյսի պատվերը: Վերադարձավ Եգիպտոս և աստվածներին զոհ մատուցեց. աստվածները համընթաց քամի ուղարկեցին նրան և բարեհաջող վերադարձավ նա հայրենի Սպարտա, որտեղ և երկար ժամանակ երջանիկ կյանք վարեց: Իսկ մահից հետո Մենելատոսն ու կինը՝ շքնաղ Հեղինեն, փոխադրվեցին երանելիների կրգին, ուր և հավերժ ապրում են անարտամ:

Հայրենիք վերադառնալու ճանապարհին շատ վտանգների հանդիպեց Ազամեմնոնը: Նրան և ուղեկիցներին հաջողվեց բարեհաջող վերադառնալ էվբեայի ափերը: Այստեղ, Գերեյան հըրվանդանի մոտ, սոսկալի փոթորիկ բարձրացավ. դա ուղարկել էր Աթենաս գիշուհին, որ զայրացած էր հույների վրա: Առանձնապես զայրացած էր Օլլևսի որդու՝ Այաքսի վրա: Շատ նավեր փշուրփշուր նդան դիպչելով ժայռերին: Զարդուփշուր եղավ Այաքսի նավը ևս: Կկորձանվեր նա ծովի հորձանուտում, եթե չզփար նրան ծովերի աստված, երկրասասան մեծն Պոսեյդոնը: Նա հրաման ավեց ալիքներին Գերեյան ժայռի վրա նետել Այաքսին: Փրկվեց Այաքսը: Բայց այդտեղ նա ինքն իրեն կործանեց՝ իր ամբարտավանութամբ: Խենթ գոռոզությամբ բացականչեց նա, որ փրկվել է առանց աստվածների օգնության, մինչև իսկ հակառակ նրանց

կամքի: Լսեց Պոսեյդոնն աստվածը հանդուգն խոսքը այն մարդու, որին ինքն էր փրկել: Սոսկալի գայրույթով ճոճեց նա իր հոսժանին և խելեց այն ժայռին, որի վրա կանգնած էր Այաքսը: Երկու կես եղավ ժայռը: Մի կեսը սոսկալի դղրդղունով ծովն ընկավ և իր հետ տարավ Այաքսին: Այդպես զոհվեց նա այն հորձանուտում, որից հենց նոր էր ազատել Պոսեյդոնը: Իսկ Ազամեմնոնի նավերը մեծ դժվարությամբ խույս տվեցին փոթորկից և հասան, վերջապես, հայրենի ափերը: Բայց խնդություն չբերեց Ազամեմնոնին այդ վերադարձը՝ ոսկով հարուստ էր Միկենեն: Այնտեղ նրան մահ էր սպասում իր անհավատարիմ կնոջ՝ Կլիթեմեմեստրայի ձեռքով:

ՈԴԻՍԵՎՍԸ ԿԱԼԻՊՍՈ ՀԱՎԵՐԺԱՀԱՐՍԻ ՄՈՏ

Ետագրված է ըստ Հովերոսի «Ողիսական» պոեմի:

Բազում տանջալից աղետներ, բազում ահալոր վտանգներ տարավ Ողիսուհը՝ Տրոյայից Իթակե վերադառնալու ճանապարհին: Բոլոր ուղեկիցներին կորցրեց նա, բոլորը զոհ զնացին, ոչ մեկին չխնայեց անողորմ ճակատագիրը: Երկար թափառումներից հետո Ողիսուհը ընկավ Օգիգիա¹ կղզին, Կալիպսո հավերժահարսի մոտ: Յոթ երկար տարիներ Ողիսուհը յառապեց զսրավոր կախարհուհի Կալիպսոյի մոտ: Ութերորդ տարին էր զնում: Թախծում էր Ողիսուհը հայրենի Իթակեի² և իր ընտանիքի համար, ազերսում էր Կալիպսոյին թույլ տալ, որ հայրենիք վերադառնա, բայց նա չէր թողնում: Վերջապես գթացին Ողիսուհին շխմպական աստվածները: Աստվածների հավաքույթում Զևսը վճռեց իր գտեր՝ Աթենաս-Պալլաս զիցուհու խնդրանոք, Ողիսուհին հայրենիք վերադարձնել, չնայած ծովերի աստված Պոսեյդոնը ծովում ամենուր հետամուտ էր Ողիսուհին, զայրացած, որ նա կուրացրել էր Պոսեյդոնի որդուն՝ կիկլոպ Պոլիփեմոսին:

Երբ աստվածները վճռեցին հայրենիք վերադարձնել Ողիսուհին, ազմատենը Աթենաս աստվածուհին բարձրագահ Օլիմպոսից իսկույն Իթակե իջավ և, տափիացիների արքա Մենթեսի կերպարանքով, զնաց դեպի Ողիսուհի տունը: Այնտեղ գտավ նա Պենելոպեի հետ նշանվելու եկած անզուսպ փեսացուներին: Փեսացուները խրախճանքի զահլիճում նստած զառ էին խաղում՝ սպասելով խընջույթի, որ պատրաստում էին սարուկներն ու ծառաները: Առաջինը Ողիսուհի որդի Տելեմաքոսը նկատեց Աթենասին: Սիրալիր ընդունելութուն ցույց տվեց Տելեմաքոսը կարծեցյալ Մենթեսին: Տուն տարավ նրան և նստեցրեց առանձին սեղանի, հեռու այն սեղանից, որի շուրջը բոլորել էին փեսացուները: Սկսվեց խրախճանքը: Երբ փեսացուները կշտացան, կանչեցին երգիչ Փեմիոսին, որ իր երգերով զվարճացնի նրանց: Փեմիոսի երգի ժամանակ Տելեմաքոսը թեքվեց Մենթեսի կողմը և սկսեց զանգատվել, բայց այնպես, որ չսեն փեսացուները, թե ինչ տառապանքներ է կրում ինքը փեսացուների ձեռքին: Վշտանում էր Տելեմաքոսը, որ այդքան ժամանակ չէր վերադառնում հայրը՝ Ողիսուհը: Եթե հայրը վերադառնար, ապա վերջ կլիներ բոլոր աղետներին, համոզված էր Տելեմաքոսը: Տելեմաքոսը հարցրեց նաև, թե ո՞վ է հյուրը և ի՞նչ է նրա անունը: Աթենաս-Պալլասը իրեն Մենթես կոչեց և ասաց, որ ճանաչում էր Ողիսուհին, որին այնքան նման է Տելեմաքոսը և, իբր շիմանալով, թե ի՞նչ է կատարվում Ողիսուհի տանը, հարցրեց Տելեմաքոսին, թե հարսանյաց հանդես կամ որևէ տոնախմբություն չի՞ տոնում Տելեմաքոսը, Ինչո՞ւ են այդպես մոլեգնում նրա հյուրերը: Եվ Տելեմաքոսը պատմեց հյուրին իր վիշտը: Պատմեց, թե ինչպես անզուսպ փեսացուները հարկադրում են իր մորը՝ Պենելոպեին, ամուսին ընտրել իրենցից մեկին, ինչպիսի անկարգություններ են անում նրանք և վատնում իր ունեցվածքը:

Մինչև վերջ լսեց Աթենասը Տելեմաքոսին և խորհուրդ տվեց պաշտպանություն փնտրել Իթակեի ժողովրդի մոտ, ժողովրդական հալաքի կանչել նրանց և իր անբավականությունը հայտնել փեսացուներից: Աթենասը Տելեմաքոսին խորհուրդ տվեց նաև մեկնել Պիլոս՝ ծերունի Նեստորի մոտ, ապա և Սպարտա՝ Մենելաոս

¹ Հույները կարծում էին, թե Օգիգիան գտնվում է ինչ-որ տեղ՝ արևմուտքում, ծովի հիշտ կենտրոնում:
² Հունաստանից արևմուտք ընկած կղզիներից մեկը՝ Իոնական ծովում:

արքայի մոտ, և նրանցից իմանալ Ողիսևի ճակատագիրը: Այսպիսի խորհուրդ տվեց Աթենասը և հեռացավ: Նա թռչուն դարձավ և հեռացավ Տելեմարտի աչքից: Նոր միայն հասկացավ Տելեմարտը, որ քիչ առաջ սատժո հետ էր գրոցում:

Այդ ժամանակ իր սենյակից խրատաճանքի դահլիճ եկավ Պենելոպեն: Նա լսեց Փեմիտոսի երգը, որ պատմում էր Տրոյայի պարիսպների մոտից հերոսների վերադառնալու մասին: Պենելոպեն խնդրեց ընդհատել այդ տխուր երգը և մեկ ուրիշը երգել: Բայց նրա խոսքն ընդհատեց Տելեմարտը: Ասաց, որ երգի ընտրության մեջ երգիչը չի մեղավոր, այլ Ձեռ ասավածը, որ այդ երգն է ներշնչել նրան: Տելեմարտը մտքը խնդրեց իր սենյակը վերադառնալ և կնոջն ու տանտիրուհուն հարմար գործով զբաղվել՝ մանկ, զործել, սարկուհիների աշխատանքին և տան կարգ ու կանոնին հսկել: Նա խնդրեց մտքը չխառնվել իրեն չարատշածող գործիքին, և ասաց, որ իր հոր՝ Ողիսևի ստեղծած անոթներն է ինքն է միայն: Լսեց Պենելոպեն սրգուն: Հլու-հնազանդ գնաց իր օթևանը և փակվելով այնտեղ, մտաբերեց Ողիսևին և գտնադի արտասուք թափեց: Վերջապես Աթենաս գիցուհին քաղցր քուն բերեց նրա աչքերին:

Պենելոպեի գնալուց հետո փեսացուներն սկսեցին վիճել, թե ո՞վ պիտի դառնա նրա ամուսինը: Նրանց ընդհատեց Տելեմարտը: Նա ասաց, որ պիտի դիմի ժողովրդական հավաքի օգնությանը, որպեսզի այդ ժողովը փեսացուներին արգելի քայքայել իր տունը: Տելեմարտը նրանց սպառնաց աստվածների դայրույթով: Բայց այդ սպառնալիքները փոքր ազդեցություն թողին փեսացուների վրա, նրանք շարունակեցին աղմկել, երգել ու պարել և մոլեգնել ամբողջ գիշեր:

Տելեմարտն էլ գնաց իր ննջատեղիակը, Ողիսևի հավատարիմ աղաթին՝ գոտամյալ էվթիլլեայի ուղեկցությամբ, որ մանկույթ դաջակություն էր արել նրան: Այնտեղ Տելեմարտը պառկեց իր մահճում: Ողջ գիշերը նա աչք չփակեց. անվերջ մտորում էր Աթենաս-Պալլասի տված խորհրդի մասին:

Հաջորդ օրը, վաղ առավոտյան, Տելեմարտը մունեախիներին ուղարկեց ժողովրդին հավաքելու: Իսկույն հավաքվեց ժողովուրդը: Տելեմարտն էլ գնաց ժողովի. նրա ձեռքին նիզակ կար, իսկ հետևից վազում էին երկու շուն: Այնքան զեղեցիկ էր նա, որ հավաքվածները զարմանք կտրեցին նրան նայելիս: Ծանապարհ տվին

նրան իթակեի ձերուհիները, և նա նստեց իր հոր տեղը: Տելեմարտը խնդրեց ժողովրդին պաշտպանել իրեն անբարո փեսացուներից, որոնք կաղապտում են իր տունը: Նա Ձևի և արդարադատության աստվածուհի Թեմիսի անուններով աղերսում էր ժողովրդին՝ օգնել իրեն:

Ցաստմնայից խոսքն ավարտելուց հետո Տելեմարտը նստեց իր տեղը, գլուխը կախեց և արտասուքը թափվեց նրա աչքերից: Լսեց ողջ ժողովը, միայն փեսացուներից մեկը՝ Անտինոոսը, հանգուցն պատասխան տվեց Տելեմարտին: Նա Պենելոպեն հանդիմանում էր այն խորամանկության համար, որին դիմել էր նա, որպեսզի խուսափի փեսացուներից որևէ մեկի հետ ամուսնանալուց: Պենելոպեն ասել էր նրանց, որ ամուսին կընտրի այն ժամանակ միայն, երբ կավարտի շքեղ ծածկոցը հյուսելու գործը: Եվ իբր, ցերեկը գործում էր Պենելոպեն այդ ծածկոցը, բայց գիշերը քանդում ցերեկվա գործածը: Անտինոոսը սպառնաց, որ փեսացուները շեն հեռանա Ողիսևի տնից, մինչև նրանցից մեկին ամուսին չընտրի Պենելոպեն: Անտինոոսը պահանջեց նույնիսկ, որ Տելեմարտը հոր տուն ուղարկի Պենելոպեն: Դրանով ուզում էր ստիպել, որ ամուսին ընտրի Պենելոպեն: Տելեմարտը հրաժարվեց մորը վտարելուց, նա վկայակոչեց Ձևին այն վերաբերմունքի ու շարիքի համար, որ ինքը կրում է փեսացուներից: Լսեց նրան ամպրոպային Ձևը և կանխանշան տվեց: Ժողովրդական հավաքի վրա երեկվացին բարձր ճախրող երկու արծիվ. թռան արծիվները մինչև ժողովի կենտրոնը և հարձակվեցին իրար վրա. արնաշաղախ ծվատեցին միմյանց կուրծք ու պարանոց և իսկույն անհետացան զարմանք կտրած ժողովրդի աչքից: Թռչնագուշակ Հալիփերսեսը հայտարարեց բոլոր հավաքվածներին, որ դա կանխագուշակում է Ողիսևի մոտալուս վերադարձը, և այն ժամանակ վա՛յ փեսացուներին: Բալորից անճանաչելի կվերադառնա Ողիսևը և դաժանորեն կպատժի իր տունը կաղապտողներին: Ահա թե ի՞նչ հայտնեց Հալիփերսեսը ժողովականներին, Բարձրաձայն ծանակել սկսեց թռչնագուշակին փեսացուներից մեկը՝ էվրիմաքոսը: Սպառնաց, թե Ողիսևին էլ կսպանեն իրենք: Գոռոզաբար հայտարարեց էվրիմաքոսը, թե փեսացուները շեն վախենում ոչնչից, ո՛չ Տելեմարտից, ո՛չ էլ զուշակող թռչուններից, որոնցով վախեցնում է թռչնագուշակը: Այլևս դադարեց Տելեմարտը համոզել փեսացուներին, որ վերջ տան անկարգություններին: Նա ձեպընթաց նավ

խնդրեց ժողովրդից, որ կարողանա դեպի Պիլոս՝ Նեստորի մոտ նավել, ուր հույս ունեւր որեւէ բան իմանալ հոր մասին: Տելեմաքոսին պաշտպան կանգնեց միայն խելամիտ Մենտորը՝ Ողիսևսի ընկերը. նա հանդիմանեց ժողովրդին, որ փեսացուներին թույլ են տալիս այդպես անարգել Տելեմաքոսին: Լուս նստել էին քաղաքացիները: Փեսացուներից վեր կացավ Լեոկրիտեսը: Տելեմաքոսին ծաղրելով, սպառնաց, որ կկործանեն Ողիսևսին, եթե վերադառնալուց հետո փորձի տնից վտարել փեսացուներին: Լեոկրիտեսն այնքան հանդուգն գտնվեց, որ ինքնագլուխ ցրեց ժողովրդական հավաքը:

Խորապես վշտացած, ծովափ գնաց Տելեմաքոսը և աղերսանքով Աթենաս-Պալլասին դիմեց: Մենտորի կերպարանքով հայտնվեց աստվածուհին: Նա Տելեմաքոսին խորհուրդ տվեց հանդիստ թողնել փեսացուներին, որովհետև կուրորեն հենց իրենք են պատրաստում իրենց կործանումը, որ գնալով ավելի ու ավելի է մոտենում: Խոստացավ դիցուհին նավ գտնել Տելեմաքոսի համար և դեպի Պիլոս ուղեկցել նրան: Աստվածուհին պատվիրեց տուն վերադառնալ և հեռավոր ճամփորդության անհրաժեշտ պատրաստություն տեսնել:

Հնազանդեց նրան Տելեմաքոսը: Տանը փեսացուներին գտավ խնջույքի պատրաստվելիս: Անտինոսը ծաղր ու ծանակով դիմավորեց Տելեմաքոսին և, բռնելով նրա ձեռքը, խնջույքի հրավիրեց: Բայց Տելեմաքոսը բարկություն մտնելով խլեց ձեռքը և հեռացավ՝ աստվածների զայրույթով սպառնալով նրանց: Կանչեց Տելեմաքոսը հավատարիմ սպասուհի էվրիկլեային և գնաց Ողիսևսի ընդարձակ մառանը՝ ճանապարհի համար անհրաժեշտ պարեն վերցնելու համար: Էվրիկլեային միայն հայտնեց Տելեմաքոսը Պիլոս գնալու իր որոշումը և խնդրեց իր բացակայության ժամանակ հոգ տանել մոր մասին: Հավատարիմ սպասուհին աղերսեց շհեռանալ իթակեից, նա վախենում էր, թե զո՞հ կգնա Ողիսևսի որդին: Բայց Տելեմաքոսն անդրդվելի էր:

Մինչ այդ, Աթենաս-Պալլասը, Տելեմաքոսի կերպարանքով, շրջեց ողջ քաղաքը, հավաքեց քսան երիտասարդ թիավար և մտավ Նոսմոնի մոտ նավ խնդրելու: Նոսմոնը սիրով տվեց իր հրաշալի նավը: Մեկնելու համար ամեն ինչ պատրաստ էր: Աթենասը, բոլորից անտեսանելի, գնաց այն դահլիճը, ուր կերուխում էին անում փեսացուները և բուրդին խոր քնի մեջ ընկզմեց: Ապա, կրկին Մեն-

տորի կերպարանք առած, պալատից դուրս հանեց Տելեմաքոսին և տարավ ծովափ՝ նավի մոտ: Տելեմաքոսի ուղեկիցները առանց հապաղելու նավ տարան էվրիկլեայի պատրաստած պաշարեղենը և տեղավորեցին նավում: Կարծեցյալ Մենտորի հետ նավ բարձրացավ Տելեմաքոսը: Աթենասը համընթաց քամի գոյացրեց և բաց ծով սուրաց նավը:

ՏԵԼԵՄԱՔՈՍԸ ԱՅՅԵԼՈՒՄ Է ՆԵՍՏՈՐԻՆ ՈՒ ՄԵՆԵԼԱՍՈՍԻՆ

Շարադրված է ըստ Համեոսի «Ողիսևսեան» պոեմի:

Մքանչելի նավարկություն պարգևեց Աթենաս դիցուհին Տելեմաքոսին: Արդեն հաջորդ առավոտյան, հենց որ արևի աստված Հելիոսը երկինք բարձրացավ իր ձյունաճերմակ նժույզներով, Տելեմաքոսի նավը Պիլոս՝ հասավ: Տելեմաքոսը Նեստորի ժողովրդին գտավ ծովերի աստված Պոսեյդոնին զոհ մատուցելիս: Բազմաթիվ ցուլեր մորթեցին պիլոսցիները զոհասեղանի մոտ, իսկ հետո ճոխ խնջույք արին: Ինը սեղան էր դրված, որոնցից յուրաքանչյուրի շուրջը նստել էին հինգ հարյուր պիլոսցի: Ուտելիքներն արդեն բերում էին սպասավորները, երբ Նեստորը տեսավ մոտեցող օտարականներին, որոնց առջևում քայլում էր Աթենաս-Պալլաս դիցուհին՝ Մենտորի կերպարանքով: Սիրալիր ընդունելություն ցույց տվեց Պիլոսի զառամյալ արքան օտարերկրացիներին: Նքա որդին՝ Պիսիստրատեսը խնջույքի հրավիրեց նրանց: Նա Աթենասին մեկնեց գինով լի գավաթը և խնդրեց ի պատիվ Պոսեյդոն աստծո հեղել այդ գինին, քանի որ ի պատիվ նրա՝ էր տրվում այդ խնջույքը: Աթենասին դուր եկավ, որ երիտասարդ Պիսիստրատեսը իրեն պատվեց առաջին գավաթով:

Երբ խնջույքը վերջացավ, Նեստորը օտարերկրացիներին հարցրեց, թե որտեղից են եկել: Տելեմաքոսը պատասխանեց, թե ինքը Ողիսևսի որդին է և Պիլոս է եկել իմանալու, թե ի՞նչ ճակատագիր է վիճակվել իր հորը: Ուրախացավ Նեստորը, երբ իմացավ, որ իր առաջ կանգնած է որդին Ողիսևսի, որին ամենից շատ էր հար-

¹ Քաղաք Պելոպոնեսի հարավում՝ Մեսենիայում:

գում հերոսների մեջ՝ խելամառութեան համար: Զարմացավ նա, թե որքան նման է Տելեմաքոսն իր հորը ոչ միայն տեսքով, այլև իմաստուն խելքով: Պատմեց նեստորը Տելեմաքոսին, թե ինչ աղետներ էին կրել հերոսները վերադարձի ճանապարհին: Բայց Ողիսևսի մասին ոչինչ չգիտեր: Կարեկցեց նեստորը Տելեմաքոսին, որ այդքան վիրավորանքներ է կրում վայրագ փեսացուներից, որոնք քայքայում են նրա տնտեսությունը: Խորամխտ ծերունին նրան խորհուրդ տվեց շուտափույթ տուն վերադառնալ, բայց նախ այցելել Մենելաոսին, քանի որ ամենից ուշ նա՝ է հայրենիք վերադարձել և գուցե նա՝ որևէ բան իմանա Ողիսևսի մասին: Նեստորը համոզված էր, որ աստվածները և հասկապես Աթենաս-Պալլասը կօգնեն Ողիսևսի որդուն՝ իմանալու հոր տեղը:

Վրա հասավ գիշերը: Տելեմաքոսը պատրաստվեց գիշերը իր նավը վերադառնալ, բայց նեստորը շթողեց: Նա ուզում էր, որ Ողիսևսի որդին գիշերն իր պալատում անցկացնի: Մենտորը ևս խորհուրդ տվեց Տելեմաքոսին գիշերել նեստորի մոտ: Իսկ ինքը պատրաստվեց նավ վերադառնալ, որովհետև, ըստ նրա խոսքի, ինքը պիտի նավեր կապկոնների աշխարհը՝ հին պարտքերը նրանցից հավաքելու: Այդ ասելով, կարծեցյալ Մենտորը հանկարծ ծովային արծիվ զարձակ և անհետացավ ապշահար պիլոսցիների աչքից: Հասկացան նեստորը և բոլոր ներկա եղողները, որ Տելեմաքոսին ինքը Աթենաս դիցուհին է օղնում:

Հաջորդ առավոտյան, նեստորը Աթենաս դիցուհուն զոհարեցից ոսկեզօծ եղջյուրներով մի հորթ: Զոհարելությունից ու խրախճանքից հետո նեստորի որդիք երկանվին լծեցին նժույգները: Երկանվին բարձրացան Տելեմաքոսն ու նեստորի կրտսեր որդին՝ Պիսիստրատեսը և ճանապարհ ընկան Մենելաոսի մոտ:

Ծեպլնթաց վարգով գնում էին ձիերը: Երեկոյան ճամփորդները հասան Փերե՝ քաղաքը, ուր ապրում էր Դիոկլիս հերոսը: Նա գիշերը ապաստան տվեց Պիսիստրատեսին և Տելեմաքոսին, իսկ առավոտյան, երբ նոր էր երկինքը շառագունել, շարունակեցին ճանապարհը և երեկոյան Սպարտա հասան:

Երբ Տելեմաքոսն ու Պիսիստրատեսը Սպարտա հասան, Մենելաոսի պալատում մեծ խրախճանք էր. Մենելաոսն իր զստերն

ուղարկել էր նեոպաուլեմոսին՝ Աքիլլեսի սրզուն, որին դեռ Տրոյայի պարիսպների տակ խոտաացել էր կնուձյան տալ աղջկան: Բացի դրանից Մենելաոսը տոնում էր որդու՝ Մեգապենթեսի հարսանյաց հանդեսը: Ուրախ կերուխում էին անում Մենելաոսի հյուրերը: Երգիչները քնարի նվաղակցությամբ զվարճացնում էին նրանց, իսկ քնարի հնչյունների տակ պարում էին երկու պատանի: Խրախճանքի ամենաթեժ պահին պալատին մոտեցան Տելեմաքոսն ու Պիսիստրատեսը: Նրանց դիմավորեց Մենելաոսի սպասավորը: Օտարերկրացիներին տեսնելուն պես նա վազեց Մենելաոսի մոտ և հարցրեց, թե օտարականներ կընդունի՞ արդյոք իր պալատում: Մենելաոսը հրամայեց ձիերն արձակել խսույն և խնջույթի հրավիրել օտարականներին: Բազում աղետներ կրելով ճանապարհին, երբ շատ հաճախ ինքն էլ օգտվում էր հյուրընկալություններից, Մենելաոսը ոչ մեկին հյուրընկալություն չէր մերժում: Սպասավորը փութաց արքայի հրամանը կատարելու: Արձակեցին ձիերը սպասավորները և օտարականներին պալատ տարան: Սքանչելի ավազաններում լողանք ընդունելուց և մաքուր զգեստներ հագնելուց հետո Տելեմաքոսն ու Պիսիստրատեսը գնացին խրախճանքի սրահը: Նրանց ապշեցրեց այն հարստությունն ու շքեղությունը, որ ամեն քայլափոխի հանդիպում էին Մենելաոսի պալատում: Սրտաբաց ընդունելություն ցույց տվեց Մենելաոսը օտարականներին և հրավիրեց նստել իր կողքին:

Ծոխ էր Մենելաոսի խրախճանքը: Պալատի ու խնջույթի շքեղությունը ապշած, Տելեմաքոսը թեքվեց Պիսիստրատեսի ականջին և ասաց, թե ոչ մի տեղ չի տեսել այսպիսի ճոխություն, և կարծում է, թե միայն Զևսի ապարանքը կարող է ավելի շքեղ լինել: Լսեց Տելեմաքոսի խոսքը Մենելաոսը և ժպտալով ասաց, թե մահկանացուները չեն կարող չափվել անմահ աստվածների հետ և եթե մեծ է նրա պալատի հարստությունը, ապա մեծ են ջանքերը և ահավոր այն վտանգները, որ ապրել է նա այդ հարստությունը ձեռք բերելիս: Բայց եթե մեծ էին իր ապրած վտանգները, համենայն դեպս նրանք ոչինչ են այն վտանգների համեմատությամբ, որ բաժին էր ընկել Ողիսևսին: Այսպես ասաց Մենելաոսը: Կաց եղավ Տելեմաքոսը՝ լսելով հոր մասին: Այդ միջոցին ներս մտավ Մենելաոսի կինը՝ գեղազանգուր Հեղինեն: Նրա հետևից ստրկուհիները բերում էին ոսկեղեն ճախարակը և ոսկերիկ արծաթե զամբյուղը, որի մեջ զրված էր մանվածքը: Օտարերկրացիներին նայե-

1 Բաղաբ Մենելաոս, Մեսենյան ծոցի ափին:

լուն պես Հեղինեն դարձացավ նրանցից մեկի և Ողիսևսի նամանու-
թյունից: Այդ մասին նա ասաց Մենելաոսին: Լսեց այդ խոսքը Պի-
սիստրատեսը և ասաց, որ նրա առաջ իրոք Տելեմաքոսն է, Ողիսև-
սի որդին: Ուրախացավ Մենելաոսը. չէ՞ որ նրա կողքին նստած էր
որդին իր սիրելի ընկերոջ, որ այնքան փորձանքներ էր կրել հանուն
իրեն: Սկսեց վերհիշել Ողիսևսի սխրանքները, և այն աղետները, որ
կրել էին հույները Տրոյայի պարիսպների տակ: Ողիսևսին մտաբե-
րեց նաև Հեղինեն: Հորը վերաբերող այդ հիշողությունները վերըս-
տին արցունքներ քամեցին Տելեմաքոսի աչքերից: Լաց եղավ
Պիսիստրատեսը և՛ հիշելով Տրոյայի պարիսպների տակ ընկած եղ-
բորը՝ Անտիլոքոսին: Զոհված ընկերների վիշտը համակեց Մենե-
լաոսին ևս: Այդ ժամանակ Հեղինեն, խրախճացողներին ուրախաց-
նելու և տխուր խոհերը հեռու վանելու համար, գավաթը լցրեց
մի հրաշալի բույսի հյութով: Այդ հյութը, որ մոռացության էր
տալիս վիշտը, նվիրել էր Եգիպտոսի Պալիդամնե թագուհին: Բայց
ժամանակն էր ավարտել խնջույքը: Շուտով Մենելաոս արքան և
հյուրերը քաշվեցին իրենց սենյակները: Տելեմաքոսի հետ ունենա-
լիք գրույցը Սպարտայի արքան հաջորդ օրվան հետաձգեց:

Առավոտը վաղ Մենելաոս արքան դուրս եկավ իր ննջարանից,
զնաց այն սենյակը, ուր գիշերել էր Տելեմաքոսը և հարցրեց
Սպարտա այցելելու պատճառը: Տելեմաքոսը պատասխանեց, թե
Սպարտա է եկել հոր ճակատագիրն իմանալու: Պատմեց Մենելաո-
սը Ողիսևսի որդուն իր արկածների և այն մասին, թե ինչպես ծո-
վի աստված Պրոտոսոսը գուշակել էր Տրոյայից վերադարձող հերոս-
ների ճակատագիրը: Ողիսևսը, ինչպես Պրոտոսոսն էր ասել այն
ժամանակ, տանջվում է գերության մեջ Կալիպսո հավերժահարսի
կղզում: Ահա այն ամենը, ինչ կարող էր Տելեմաքոսի հոր մասին
հաղորդել Մենելաոսը: Սկսեց համոզել Սպարտայի արքան Տելե-
մաքոսին, հյուրընկալել իր մոտ տասներկու օր: Բայց Տելեմաքոսը
խնդրեց արքային չպահել իրեն: Երկար տևեց Տելեմաքոսի ու Մե-
նելաոսի գրույցը:

Մինչ նրանք զրուցում էին, կրկին հավաքվեցին հյուրերը ար-
քայի պալատում: Շուտով դարձյալ ուրախ խնջույք սլիտի սկսվեց:

ՓԵՆԱՑՈՒՆԵՐԸ ՄՏԱԴՐՎՈՒՄ ԵՆ ԿՈՐՄԱՆԵՆ ՏԵԼԵՄԱՔՈՍԻՆ,
ԵՐԲ ԵՎ ԻԹԱԿԵ ՎԵՐԱԳԱՌՆԱ

Շարագրված է բառ Հռմբոսի «Ողիսևսի» պոեմի:

Մինչ Տելեմաքոսը Պիսոսում և Սպարտայում էր, փեսացու-
ներն իրենց մոտ եկած նոստոնից պատահմամբ իմացան, որ Տելե-
մաքոսը հեռացել է Իթակեից: Վախեցան նրանք, որովհետև կար-
ծում էին, թե Տելեմաքոսը օգնություն հայցելու է գնացել Պիլոս և
Սպարտա: Անտինոսը փեսացուներին խորհուրդ տվեց նավով ծով
դուրս գալ և սպասել Տելեմաքոսին, ապա անսպասելի հարձակում
գործել և սպանել նրան: Իսկույն համաձայնեցին բոլոր փեսացու-
ները մասնակից լինել այդ շարամիտ գործին: Հավաքելով թիա-
վարներին, ծովափ գնացին նրանք, կարգի գցեցին նավը և նավե-
ցին Ատտերիդես կղզու ուղղությամբ՝ այնտեղ դարանամուտ լինելու

իմացավ Պենելոպեն նրանց խարդախ մտադրությունը: Հու-
սահատությունը տիրեց նրան: Չէ՞ որ նա ևս չգիտեր Տելեմաքոսի
Իթակեից հեռանալու մասին: Նա արդեն պատրաստվում էր սպա-
սավորիլ ուղարկել Ողիսևսի հոր՝ ծերունի Լաերտի մոտ, որ հայտ-
նի նրա թոռանը չպառնացող վտանգի մասին: Բայց էվրիկլեա
սպասուհին ետ պահեց նրան այդ բանից: Պենելոպեին խորհուրդ
տվեց օգնություն աղերսել Աթենաս դիցուհուց: Լսեց թագուհին
էվրիկլեային, զոհ մատուցեց աստվածուհուն և աղերս կարդաց
նրան: Այնուհետև պառկեց իր շքեղ մահճին ու քնեց: Լսեց նրա
ուղադատանքը Աթենաս աստվածուհին: Քնած Պենելոպեի մոտ
ուշարկեց նրա քրոջ՝ Իփտիմեի ուրվականը: Սա հայտնեց Պենելո-
պեին, որ չի զոհվի Տելեմաքոսը: Իսկ երբ ամուսնու ճակատագրի
մասին հարցրեց Պենելոպեն, ոչինչ չպատասխանեց նա և անհե-
տացավ թեթև ամպի պես: Արթնացավ քնից Պենելոպեն, կռահեց,
որ աստվածներն էին ուղարկել այդ տեսիլը:

ՈՒՒՍԵՎՍԸ ՀԵՌԱՆՈՒՄ Է ԿԱԼԻՊՍՈ ՀԱՎԵՐԺԱՀԱՐՍԻ ԿՂԶՈՒՑ

Անմահ աստվածները խորհուրդ արեցին և վճռեցին, որ Աթե-
նասը պետք է օգնի Տելեմաքոսին անվնաս վերադառնալ հայրենիք
և թույլ շտալ, որ փեսացուները հարձակվեն նրա վրա: Իսկ Հերմե-
սը պիտի սավառներ զեպի Օգիգիա կղզին և Կալիպսո հավերժա-

Հարսին հրամայեի ազատ արձակել Ոգիսևսին: Շանթարձակը Հերմեսին անհապաղ առաքեց Կալիպսոյի մոտ:

Հագնելով իր թևավոր սանդալները և ձեռքն առնելով ձողիկը, մտքի պես արագաթռիչ Հերմեսը սուրաց Օլիմպոսից: Մովսին արժվի նման սլացավ ծովի վրայով և մի ակնթարթում Յգիգիա հասավ: Չքնաղ մի կղզի էր դա: Փարթամորեն աճել էին այնտեղ սոսիները, բարդիները, եղևնիներն ու նոճիները: Մարգագետինները պատած էին հյուսիսի խոտով, իսկ խոտի մեջ անուշահոտ բույսեր էին արձակում փարթամ մանուշակներն ու շուշանները: Չորս աղբյուր ոռոգում էին կղզին և սկիզբ առնելով նրանցից՝ առվակները քամահաճորեն գալարվում էին ծառերի միջև: Կղզում կար մի զովաշունչ քարայր. հենց այնտեղ էլ ապրում էր Կալիպսո հավերժահարսը: Ողջ քարայրը պարուրված էր խաղողի վազերով, որոնցից կախված էին հասուն սղկույզներ: Երբ Հերմեսը մտավ քարայրը, Կալիպսոն ոսկե մաքորով գործում էր սքանչելի զարդանկարով մի ծածկոց: Ոգիսևսը քարայրում չէր: Միայնակ նստել էր ծովափի ժայռին, հայացքը ծովի հեռուներին հառած: Արցունք էր հեղում Ոգիսևսը, մտաբերելով հայրենի Իթակեն: Այդպես տրտում ու միայնակ, օրեր էր անցկացնում հերոսը:

Ներս մտնող Հերմեսին տեսնելով՝ տեղից ելավ Կալիպսոն: Նստելու հրավիրեց Հերմեսին և նեկտար ու ամբրոսիա առաջարկեց: Աստվածների ուտեստով կազդուրվելուց հետո Հերմեսը հավերժահարսին հաղորդեց աստվածների ու մարդկանց արքա Զևսի կամքը: Տրտմեց Կալիպսոն, երբ իմացավ, որ պիտի բաժանվի Ոգիսևսից: Նա կամենում էր ընդմիշտ պահել նրան իր կղզում և անմահություն շնորհել նրան: Բայց անկարող էր հակառակ զնալ Զևսի կամքին:

Երբ Հերմեսը մենակ թողեց Կալիպսոյին, նա գնաց ծովափ, ուր նստել էր տրտմաթախիծ Ոգիսևսը և ասաց նրան.

— Ոգիսևս, սրբի՛ր արտասուքդ, մի՛ մորմոքվիր այլևս: Ես քեզ հայրենիք եմ արձակում: Գնա՛, վերցրո՛ւ կացիներ, ծառեր կտրատիր և ամրակուտ լաստ շինիր: Դրանով ճանապարհ կընկնես դու, իսկ ես՝ համընթաց քամի կուղարկեմ: Եթե այդ հաճո է աստվածներին, ապա դու կվերադառնաս հայրենիք:

— Դիցուհի՛, — պատասխանեց Ոգիսևսը Կալիպսոյին, — հայրենիք վերադառնալ չես պատրաստում դու ինձ համար, այլ ինչ-որ ուրիշ բան: Կարո՞ղ եմ ես խաբխուլ լաստով կտրել-անցնել

մրրկածուսի ծովը: Միշտ չէ, որ լարեհաջող են անցնում ճեպընթաց նավերը: Ո՛չ, դիցուհի, այն ժամանակ միայն նավ կմտնեմ ես, երբ աստվածների անխախտ երդում տաս ինձ, որ իմ կործանումը չես որոճում դու:

— Ըշմարիտ են ասում, Ոգիսևս, թե դու մահկանացուներից ամենախորամախն ու հեռատեսն ես, — գուցե Կալիպսոն, — երգվում եմ Ստիքսի՛ ջրերով, որ քո կործանումը չեմ ուզում ես:

Ոգիսևսի հետ միասին քարայր վերադարձավ Կալիպսոն: Հացկերույթի ժամանակ նա Ոգիսևսին համոզում էր մնալ: Անմահություն էր կանխատեսում Ոգիսևսին: Ասում էր, որ Ոգիսևսը եթե իմանա միայն, թե ինչ վտանգներ պիտի ծառանան նրա առաջ՝ ճանապարհին, ապա կմնա իր մոտ: Բայց շատ ուժգին էր Ոգիսևսի՝ հայրենիք վերադառնալու տենչը, և ոչ մի խոստմամբ Կալիպսոն, չհարողացավ ստիպել մոռանալ հայրենի Իթակեն և իր ընտանիքը:

Հաջորդ առավոտյան Ոգիսևսն անցավ լաստը շինելու գործին: Չորս օր աշխատեց Ոգիսևսը, ծառեր կտրեց, տաշեց գերանները, կապեց դրանք ու ամրացրեց տախտակներով: Վերջապես լաստը պատրաստ էր և նրա վրա առագաստավոր կայմը՝ կանգնեցված: Կալիպսոն Ոգիսևսին ճանապարհի պաշար տվեց և մնաս բարով ասաց նրան: Պարզեց Ոգիսևսը առադաստը և լաստը, համընթաց քամուց քշվելով, բաց ծով դուրս եկավ:

Տասնութ օր լողում էր Ոգիսևսը, կողմնորոշվելով Պլեադա և Մեծ Արջ համաստեղություններով: Վերջապես հեռվում ցամաք երևաց, դա փեակների կղզին էր, և այդ ժամանակ էթովպացիների մոտից վերադարձող Պոսեյդոն աստվածը տեսավ Ոգիսևսի լաստը: Զայրույթով լցվեց ծովերի տիրակալը: Հափշտակեց նա իր եռաժանին և հարվածեց ծովին: Ահավոր փոթորիկ բարձրացավ: Ամպերը ծածկեցին երկինքը, գիշերվա նման մութը պատեց: Չորս կողմից սուրացող քամիները ալեկոծեցին ծովը: Մոսկումը տիրեց Ոգիսևսին: Սարսափահար սկսեց նախանձել նույնիսկ այն հերոսներին, ովքեր փառքով զոհվեցին Տրոյայի տակ: Հսկայական մի ալիք փլվեց Ոգիսևսի վրա և լաստը խորացրեց ծովի ջրերում: Ծովի հորձանտալը սուզվեց Ոգիսևսը, որտեղից հազիվ դուրս

1 Ստորերկրյա Ստիքս գետի ջրերով երգվել աստվածների անխախտ երդումն էր համարվում:

հարսին հրամայեի ազատ արձակել Ողիսեաին: Եանթարձակը Հերմեսին անհապաղ առաքեց Կալիպսոյի մոտ:

Հագնելով իր թևավոր սանդալները և ձևաքն առնելով ձողիկը, մտքի պես արագաթռիչ Հերմեսը սուրաց Օլիմպոսից: Մովսիսին արժվի նման սլացալ ծովի վրայով և մի ակնթարթում Օդիզիսի հասաւ: Չքնաղ մի կղզի էր դա: Փարթամորեն աճել էին այնտեղ սուսինները, բարդիները, եղենիներն ու նոճիները: Մարդագիտինները պատած էին հյուսիսի խոտով, իսկ խոտի մեջ անուշահոտ բուրմուռք էին արձակում փարթամ մանուշակներն ու շուշանները: Չորս աղբյուր ոռոգում էին կղզին և սկիզբ առնելով նրանցից՝ առվակները քմահաճորեն գալարվում էին ծառերի միջև: Կղզում կար մի զովաշունչ բարայր. հենց այնտեղ էլ ապրում էր Կալիպսո հավերժահարսը: Ողջ բարայրը պարուրված էր խաղողի վազերով, որոնցից կախված էին հասուն սղկույզներ: Երբ Հերմեսը մտաւ բարայրը, Կալիպսոն ոսկե մաքրով գործում էր սքանչելի զարդանկարով մի ծածկոց: Ողիսեսը քարայրում չէր: Միայնակ նստել էր ծովափի ժայռին, հայացքը ծովի հեռուներին հառած: Արջունք էր հեղում Ողիսեսը, մտաբերելով հայրենի իթակեն: Այդպես տրտում ու միայնակ, օրեր էր անցկացնում հերոսը:

Ներս մտնող Հերմեսին տեսնելով՝ տեղից ելալ Կալիպսոն: Նստելու հրավիրեց Հերմեսին և նեկտար ու ամբրոսիա առաջարկեց: Աստվածների ուտեստով կազդուրվելուց հետո Հերմեսը հավերժահարսին հաղորդեց աստվածների ու մարդկանց արքա Ջևախի կամքը: Տրտմեց Կալիպսոն, երբ իմացաւ, որ պիտի բաժանվի Ողիսեսից: Նա կամենում էր ընդմիշտ պահել նրան իր կղզում և անմահություն շնորհել նրան: Բայց անկարող էր հակառակ զնալ Ջևախի կամքին:

Երբ Հերմեսը մենակ թողեց Կալիպսոյին, նա զնաց ծովափ, ուր նստել էր տրտմաթախիծ Ողիսեսը և ասաց նրան.

— Ողիսես, սրբի՛ր արտասուրդ, մի՛ մորմոքվիր այլևս: Ես քեզ հայրենիք եմ արձակում: Գնա՛, վերցրո՛ւ կացինը, ծառեր կտրատիր և ամբակուտ լաստ շինիր: Դրանով ճանապարհ կրնկենս դու, իսկ ես՝ համընթաց քամի կուղարկեմ: Եթե այդ հաճո է աստվածներին, ապա դու կվերագոռնաս հայրենիք:

— Դիցու՛՛հի՛, — պատասխանեց Ողիսեսը Կալիպսոյին, — հայրենիք վերագոռնալ չես պատրաստում դու ինձ համար, այլ ինչ, որ ուրիշ բան: Կարո՞ղ եմ ես խաբխուլ լաստով կտրել անցնել

մրկածուկ ծովը: Միշտ չէ, որ բարեհաջող են անցնում ճեպընթաց նավերը: Ո՛չ, դիցու՛՛հի, այն ժամանակ միայն նավ կմտնեմ ես, երբ աստվածների անխախտ երդում տաս ինձ, որ իմ կործանումը չես որոճում դու:

— Ճշմարիտ են ասում, Ողիսես, թե դու մահկանացուներից ամենխորամախն ու հեռատեսն ես, — գռչեց Կալիպսոն, — երդվում եմ Ստիքսի՛ ջրերով, որ քո կործանումը չեմ ուզում ես:

Ողիսեսի հետ միասին քարայր վերադարձալ Կալիպսոն: Հացկերույթի ժամանակ նա Ողիսեսին համոզում էր մնալ: Անմահություն էր կանխատեսում Ողիսեսին: Ասում էր, որ Ողիսեսը եթե իմանա միայն, թե ինչ վտանգներ պիտի ծառանան նրա առաջ՝ ճանապարհին, ապա կմնա իր մոտ: Բայց շատ ուժգին էր Ողիսեսի՝ հայրենիք վերադառնալու տենչը, և ոչ մի խոստմամբ Կալիպսոն, չկարողացաւ ստիպել մոռանալ հայրենի իթակեն և իր ընտանիքը:

Հաջորդ առավոտյան Ողիսեսն անցալ լաստը շինելու գործին: Չորս օր աշխատեց Ողիսեսը, ծառեր կտրանց, տաշեց գերանները, կապեց զրանք ու ամրացրեց տախտակներով: Վերջապես լաստը պատրաստ էր և նրա վրա առագաստավոր կայմը՝ կանգնեցված: Կալիպսոն Ողիսեսին ճանապարհի պաշար տվեց և մնաս բարով ասաց նրան: Պարզեց Ողիսեսը առագաստը և լաստը, համընթաց քամուց քշվելով, քայ ծով դուրս եկաւ:

Տասնութ օր լողում էր Ողիսեսը, կողմնորոշվելով Պլեադա և Մեծ Արջ համաստեղություններով: Վերջապես հեռվում ցամաք երևաց, դա փեակների կղզին էր, և այդ ժամանակ էթովպացիների մոտից վերադարձող Պոսեյդոն աստվածը տեսալ Ողիսեսի լաստը: Զայրույթով լցվեց ծովերի տիրակալը: Հափշտակեց նա իր եռաթանին և հարվածեց ծովին: Ահավոր փոթորիկ բարձրացաւ: Ամպերը ծածկեցին երկինքը, գիշերվա նման մութը պատեց: Չորս կողմից սուրացող քամիները ալեկոծեցին ծովը: Մոսկումը տիրեց Ողիսեսին: Սարսափահար սկսեց նախանձել նույնիսկ այն հերոսներին, ովքեր փառքով զոհվեցին Տրոյայի տակ: Հսկայական մի ալիք փլվեց Ողիսեսի վրա և լաստը խորացրեց ծովի ջրերում: Մովի հորձանուտը սուզվեց Ողիսեսը, որտեղից հաղիվ դուրս

1 Ստորերկրյա Ստիքս գետի ջրերով երգվել աստվածների անխախտ երդումն էր համարվում:

լողաց նա: Նրան խանգարում էին հրածեշտի պահին Կալիպտո հավերժաճարսի տված զգեստները: Բայց և այնպես հասավ իր լաստին, բռնեց նրանից և, մեծ դժվարութեամբ, տախտակամած ելավ: Հողմերը կատաղորեն ալս ու այն կողմ էին նետում լաստը: Մերթ նրան հալածում էր մուկեզին Բորեասը, մերթ էլ Նոտոսը, մերթ խաղում էր նրա հետ աղմկարար էվրոսը և խաղալուց հետո շարտում, տալիս Զեփիրոսին¹: Լեռնաշափ ալիքները դիզվել էին լաստի շուրջը:

Այդպիսի վտանգի մեջ տեսավ Ողիսեսին ծովային աստվածուհի Լեկոթեան: Նա՝ ջրասույզ բաղի կերպարանքով դուրս լողաց ծովից, նստեց Ողիսեսի լաստին և իր իսկական կերպարանքն առավ: Լեկոթեան հրամայեց նրան հանել զգեստները, լաստից ծովը նետվել և լողալով ափ հասնել: Դիցուհին Ողիսեսին մի հրաշագործ բող տվեց, որ պիտի փրկեր նրան: Այդ ասելուց հետո Լեկոթեան ջրասույզ բաղի կերպարանք առավ և թռավ: Բայց Ողիսեսը չէր համարձակվում լքել լաստը: Այդ ժամանակ, սահայն, Պոսեյդոն աստվածը մի հսկայական, լեռնաշափ ալիք կանգնեցրեց և փուլ ածեց Ողիսեսի լաստի վրա: Ինչպես ուժգին բամին է ցար ու ցրիվ անում ծղոտի դեզը, այդպես էլ ալիքը սրբեց տարավ լաստի գերանները: Ողիսեսը հագիվ կարողացավ բռնել գերաններից մեկը և նստել վրան: Հապճեպ պոկեց նա վրայի զգեստները, փաթաթվեց Լեկոթեայի ծածկոցի մեջ, ծովը նետվեց և լողաց դեպի կղզին: Այդ տեսավ Պոսեյդոնը և գոչեց.

— Դե՛, բավական է այլևս: Այժմ լուրս մրրկածուփ ծովում, մինչև որևէ մեկը փրկի քեզ: Այժմ արդեն գոհ կլինես ինձնից:

Այսպես գոչեց Պոսեյդոնը և քշեց նժույզները դեպի ստորջրյա իր ապարանքը: Իսկ Ողիսեսին օգնութեան եկավ Աթենաս-Պալլասը: Նա արգելեց փչել բոլոր քամիներին, բացի Բորեասից և սկսեց հանդարտեցնել ալեկոծ ծովը:

Սրկու օր այս ու այն կողմ էր ընկնում Ողիսեսը կատաղի ծովում: Սրբորդ օրը միայն հանդարտվեց ծովը: Ալիքի գազաթից Ողիսեսը հեռվում ցամաք տեսավ և անասելի հրճվանքով լցվեց: Բայց երբ լողալով ափին էր մոտենում, ալեբախութեան ձայն լսեց: Ալիքները մոնչոցով զարնվում էին առափնյա ժայռերին ու

ջրասույզ քարերին: Անխուսափելի կլիներ Ողիսեսի կործանումը, նա շարժուփշուր կլիներ ժայռերին զարկվելով, բայց այստեղ էլ օգնութեան հասավ Աթենաս-Պալլասը: Ողիսեսը հասցրեց ձեռքը գցել ժայռին, իսկ ալիքը նահանջեց, պոկեց նրան ժայռից և ծով տարավ: Այժմ արդեն Ողիսեսը լողում էր ափի երկայնքով և ափ դուրս գալու տեղ էր որոնում: Վերջապես տեսավ մի գետաբերան, և օգնութեան աղերսեց գետի աստծուց: Աստվածը լսեց նրան, կանգնեցրեց իր հոսանքը և օգնեց Ողիսեսին ափ դուրս գալ: Ափ ելավ մեծագոր հերոսը, բայց երկարատև լողը այնպես ուժասպառ էր արել նրան, որ ուշակորույս վայր ընկավ գետին: Հաղիվ ուշքի եկավ Ողիսեսը: Հանեց Լեկոթեայի ծածկոցը և առանց շուռ գալու՝ ծովը նետեց: Արագ լողաց ծածկոցը և դիցուհու ձեռքը վերադարձավ: Իսկ Ողիսեսը ափից հեռու երկու սաղարթախիտ ձիթենի տեսավ, որի տակ շոր տերևների կույտ կար: Խրվեց այդ տերևների մեջ, որպեսզի պաշտպանվի գիշերվա ցրտից, իսկ Աթենաս-Պալլասը խոր քնի մեջ ընկղմեց նրան:

ՈՂԻՍԵՍ ԵՎ ՆԱՎՍԻԿԵՍ.

Շարադրված է ըստ Համբուսի «Ողիսական» պոեմի:

Մինչ Ողիսեսը քուն էր մտել շոր տերևների կույտի մեջ խրված, Աթենաս դիցուհին գնաց փեակների՝ քաղաքը: Այնտեղ մտավ նա Ալքինոոսի պալատը և, Դիմանթոս ծովագնացի դստեր կերպարանքով, ներկայացավ քնած արքայադուստր Նավսիկեային: Դիցուհին հանդիմանեց Նավսիկեային, որ հոգ չի տանում իր զգեստների մասին: Դեռատի արքայադստերը հիշեցրեց աստվածուհին, որ արդեն հեռու չէ նրա հարսանիքի օրը, որ դրա համար նա մաքուր զգեստներ պիտի պատրաստի իր հարազատների, ինչպես և նրանց համար, ովքեր փեսացուի տուն պիտի տանեն նրան: Աստվածուհին շտապեցրեց Նավսիկեային ստրկուհիների հետ գնալ ծովափ՝ ջրամբարի մոտ, զգեստները վանալու: Այդպես ասաց աստվածուհին և թողնելով Նավսիկեային, դեպի լուսապայծառ Օլիմպոս սավառնեց:

Լուսաբացին արթնացավ քնից Նավսիկեան: Նա զարմացել էր

¹ Բորեաս — հյուսիսային քամի, Նոտոս — հարավային, էվրոս — արեելյան, Զեփիրոս — արևմտյան:

¹ Փեակներ — առասպելական ծղոկուրդ, որոնց կղզին, ըստ հույների, գտնվում էր ինչ-որ տեղ, ծովի ծայր արևմուտքում:

տեսած երազից: Իսկույնեկի զնաց իր ծնողների մոտե նա մորը՝ Արեւտիկին գտավ օջախի մոտ: Մարաստիններով շրջաբառաբաժած, նա թե՛ էր մամուռ: Նավսիկեան հորը հանդիպեց դռնների մեջ. նա զնում էր փեռակների ավազների խորհրդին: Մտածեցով հորը նախ-սիկեան և սկսեց խնդրել, որ ջորիները լծած մի սալը տա իրեն, որպեսզի գնար զնա զգեստները լվանալու:

— Կեղատու շոր շատ է հարկաբեկել,— առաց նախախեղան,— ես կզնամ լվանալու դրանք: Զէ՞ որ զգեստներդ մաքրութեամբ դու պետք է փաշխա ավազների խորհրդում, և քո սրտանի որդի-ներն էլ ուղում են մաքուր զգեստներով գնալ փեռակեան աղջիկների խմբապարերը դիտելու: Հագուստների մասին ե՛ս կհոգամ:

Այսպեա առաց նախախեղան, բայց ամուսնութեան մտօնն, որին փափագում էր ողջ սրտով, մի բառ իսկ չառաց: Անաշում էր դրա մասին հիշել անգամ: Բայց Ալքինոսը հասկացավ դռանը ծածուկ միտքը և քնքրեան ժպտալով նրան, ստրուկներին հար-մայեց պատրաստել սալը կողովի հետ միասին և լծել ջորիները: Փութաջան պատրաստվեց նավսիկեան: Արեւտ թագուհին ուտելիք և զինի ավեց նրան, որպեսզի դուստրը և ստրուկները հագնե-նեն իրենց քաղցր աշխատանքից հետո: Տվեց նաև մի ոսկեղն սափոր, անուշաբույր յուղով, լողանալուց հետո օծվելու հա-մար:

Ավարի սրտով դեպի ծովափ ճանապարհվեցին նավսիկեան ու նրա ստրուկները: Զրամբարին հասնելուն պես լվացին նրանք հագուստները, մաքրաջրեցին ու փոնցին շորանալու ծովի ավա-զուտ ափին: Աշխատանքն ավարտելուց հետո դեռատի աղջիկները լողացան զնտում և օծվեցին անուշահոտ յուղով: Հետո կերակրվե-ցին և սկսեցին վազվզել դեռատի ու զվարճանալ զնրակ խաղա-լով: Հենց այդ պահին էլ գտավ Աթենաս-Պալլասը Ողիսևսին արթնացնելու ձևը: Նախախեղան զնրակը ընկերուհիներին խփեց, իսկ Աթենասը աղջիկներից անտեսանելի, հզոր ձեռքով ևս շարտեց և գնդակն ընկավ ծովը: Բարձրաձայն ճշացին բոլոր աղջիկները: Այդ ճիշն արթնացրեց Ողիսևսին: Զգիտեր թե ի՛նչ անի. զո՛ւրս գալ իր թաքսոցից, թե՞ ոչ: Վերջապես մարմինը ճրտեցրով ծածկած, դուրս եկավ աղջիկների մոտ: Մոզային տիղմով ու ջրարույսերով պատած, սոսկալի տեսք ունեւ Ողիս-ևսը: Վախեցան աղջիկները և այս ու այն կողմ փախան: Մնաց նավսիկեան միայն, որին քաջութիւն էր ներշնչել Աթենաս զիցու-

հին: Իսկ Ողիսևսը չէր հանդգնում մոտ գնալ շքնաղ աղջկան: Նա սկսեց հեռվից օգնութեան աղերսել նրանից:

— Օ՛, շքնաղ աղջիկ, բազկատարած աղաչում եմ քեզ: Գեղեց-կութեամբ դու հավասար ես Արեւմիս դիցուհուն: Աստվածուհի չե՞ս արդյոք: Եթե մահկանացու ես դու, ապա որքան երջանիկ են քո ծնողները, որ այդպիսի դուստր տանեն: Քո գեղեցկութեամբ դու ինձ հիշեցրիր այն սրացիկ արմավենին, որ մի ժամանակ տեսիլ եմ Գեղուսում, Ապոլոն աստծո զոհասեղանի մոտ: Գթա՛ ինձ, շքնաղ աղջիկ: Քսան օր ես տարուրբվում էի մրկածուփ ծովի վրա: Տո՛ւր ինձ գունե մի շորի կտոր, մերկութիւնս ծածկելու: Թող այդ օգնութեան համար անմահ աստվածները կատարեն քո բոլոր իղձերը: Թող երջանիկ ամուսնութիւն պարգևեն քեզ:

— Օտարակա՛ն,— պատասխանեց նախախեղան Ողիսևսին,— քո խոսքերից տեսնում եմ, որ հասարակ մարդ չես դու, և որ աստվածները իմաստութիւն են շնորհել քեզ: Բայց Զևսը ինչպեա ականավոր, այնպեա էլ հասարակ մարդկանց և՛ երջանկութիւն է տալիս, և՛ զժբախտութիւն: Համբերութեամբ տար այն, ինչ Զևսը քեզ բաժին է հանել: Մեզ մոտ դու ոչնչի կարոտութիւն չես ունե-նա: Ես քեզ ցույց կտամ քաղաք տանող ճամփան: Ես փեռակների արքա Ալքինոսի դուստրն եմ:

Կանչեց նավսիկեան իր ստրուկներին, կարգադրեց մաքուր զգեստներ տալ Ողիսևսին և կերակրել: Ողիսևսը լողացավ գե-տում, անուշահոտ յուղով օծվեց և հագավ իրեն տրված զգեստները: Իսկ Աթենասը այնպիսի գեղեցկութեամբ օժտեց Ողիսևսին, որ նրբ նա նստեց ծովափին, նախախեղան նույնիսկ կասկածեց, թե արդյոք աստվածներից որե՛ւ մեկը չէ՞՝ կրկիբ իջել: Մեծավ ուրա-խութեամբ նման ամուսին կընտրեր շքնաղագեղ արքայազուստրը: Ստրուկները Ողիսևսին ուտելիք ու զինի մատուցեցին և նա հագնեցրեց տանող քաղցր:

Մինչև այդ, ամեն ինչ պատրաստ էր քաղաք վերադառնալու համար: Նավսիկեան հրավերեց իրեն հետևել Ողիսևսին: Միայն մի բան խնդրեց, որ նա իր և ստրուկների հետ միասին չմտնի քաղաք, այլ սպասի քաղաքի դարպասների մոտ, Ալքինոսի այ-դում, Աթենաս աստվածուհուն նվիրաբերած անտառի մոտ, և թույլ տա, որ ինքը մենակ վերադառնա քաղաք: Արքայազուստրը երկուղ էր կրում, որ փեռակները կսկսեն շարախոսել նրան՝ գե-ղեցկադեմ օտարականի հետ տեսնելով, և կասեն, թե փեսացու

Վ՛րն տրել արդյոք իր համար: Բացի այդ, Նավսիկեան խորհուրդ տվեց Ողիսևին պալատ մտնելուն պես ամենից առաջ ծնկի գալ Արեան թագուհու առաջ և օգնութիւն աղերսել նրանից, որովհետև ողջ ժողովուրդը աստժո նման մեծարում է նրան՝ մեծ իմաստութեան համար: Այդպես ասաց Նավսիկեան և ջորիները քշեց դեպի քաղաք: Նրա հետևից գնացին ստրկուհիները և Ողիսևը: Զսպում էր արքայազուստը ջորիների վազքը, որպեսզի հետևից հասնել Վարեան Ողիսևը և ստրկուհիները:

ՈՂԻՍԵՎԱԸ ԱԼՔԻՆՈՍՍ ԱՐՔԱՅԻ ՄՈՏ

Շարադրված է ըստ Հովերոսի «Ողիսական» պոեմի:

Երբ Նավսիկեան պալատ վերադարձավ՝ նրան ընդառաջ եկան ջորայրները. արձակեցին ջորիները և պալատ տարան դամբլուղով հագուստները. Նավսիկեան գնաց իր օթարանը. այնտեղ նրա համար ճոխ ընթրիք էր պատրաստել ստրկուհի-դայակ էվրիմեդուղան:

Ողիսևը, քաղաքի դարպասների մոտ մի քիչ սպասելուց հետո, մտավ քաղաք: Աթենաս դիցուհին մութ ամպով պատեց և անտեսանելի դարձրեց նրան, որպեսզի փեակցիներից որևէ մեկը չվիրավորի նրան: Քաղաքի դռների մեջ, փեակցի աղչկա կերպարանքով, նրան հայտնվեց ինքը Աթենաս-Պալլասը, և երբ Ողիսևը նրան դիմեց՝ խնդրելով ցույց տալ Ալքինոոսի պալատը, Աթենասը համաձայնեց, խորհուրդ տալով հարցերով շղիմել փեակցիներին, որովհետև փեակցիները, ըստ նրա խոսքի, անհյուրընկալ են: Լուռ քայլում էր Ողիսևը աստվածուհու հետևից: Նրան զարմանք էր պատճառում քաղաքի հարստութիւնը. նավահանգիստը՝ նավերի շարքով, քաղաքային ընդարձակ հրապարակը և քաղաքի անմատչելի պարիսպները: Վերջապես Ալքինոոսի պալատը հասան նրանք: Ողիսևից հեռանալիս աստվածուհին Նավսիկեայի նման խորհուրդ տվեց նախ և առաջ Արետե արքայուհուն դիմել խնդրանքով: Այդպես խորհուրդ տվեց Աթենասը և հեռացավ:

Ողիսևը զարմացել էր քաղաքի հարստութեամբ, բայց առավել զարմացավ Ալքինոոսի պալատի ճոխութեամբ: Ամբողջովին շողշողուն սղնձից էր շինված պալատը: Պատերի վերին մասերը

զարդարված էին երկաթով: Զուտ ոսկուց ձուլված դուռը տանում էր դեպի պալատ, դրանդինը արծաթից էին, իսկ սեմը՝ պղնձից: Դռների մոտ կանգնած էին Հեփեստոս աստժո ձեռքով կոած երկու կենդանի անմահ շներ, մեկը՝ ոսկուց, մյուսը՝ արծաթից: Պալատ մտավ Ողիսևը: Այնտեղ տեսավ պատերի երկայնքով դրված շքեղազարդ նստարաններ՝ թանկարժեք ծածկոցներով:

Պատվանդաններին կանգնած էին պատանիների ոսկեծույլ արձաններ՝ ջահերը ձեռքներին: Սքանչելի էր Ալքինոոսի պալատը: Բայց ամենից հրաշակերտը պալատամերձ այգին էր: Մշտապես հասունանում էին այստեղ ամեն տեսակի պտուղներ՝ ձմեռ թե ամառ: Զերմաշունչ Զեփիրոսը խաղում էր այգում: Այնտեղ կար և խաղողի այգի, որ ամբողջ տարին հասուն ողկույզներ էր տալիս: Այգում խոխոջում էր մի լուսացայտ աղբյուր, մեկ ուրիշը ըխում էր պալատի ճիշտ շեմի մոտ:

Երկար ժամանակ նայում էր այդ բոլորին այլահար Ողիսևը. վերջապես մտավ խրախճանքի սրահը: Այնտեղ բազմել էին Ալքինոոսը, Արետեն և անվանի փեակցիները: Անուշահոտ գինի էին ձոնում Հերմեսին: Ամպով ծածկված Ողիսևը մոտեցավ Արետեին և ընկավ նրա ոտքերը: Այդ պահին, հենց որ Աթենասը ցրեց ամպը, բոլորը տեսան մեծազոր հերոսին: Զարմացան բոլորը: Իսկ Ողիսևը աղաչեց թագուհուն՝ օգնել իրեն, տարաբախտ պանդուխտին: Պաղատագին խոսքից հետո մի կողմ քաշվեց Ողիսևը և, իբրև պաշտպանութիւն աղերսող, նստեց օջախի մոխրի վրա: Փեակցիներից մեկի՝ ամենամագի խորհրդով, Ալքինոոսը բռնեց Ողիսևի ձեռքը և նստեցրեց իր կողքին: Սպասավորները ուտելիք և գինի մատուցեցին Ողիսևին և բոլոր ներկա զանվոդները գինի ձեռնցին պանդուխտների պաշտպան ամպրոսայիին Զևսի պատվին: Իսկ Ալքինոոսը բոլոր հավաքվածներին հաջորդ օրը իր մոտ հրավիրեց, որպեսզի շքեղ խնջույք տան ի պատիվ օտարականի, որովհետև Ալքինոոսը կարծում էր, թե աստվածներից մեկն է այցելել իրեն՝ մահկանացուի կերպարանքով: Բայց Ողիսևը ցրեց նրա այդ համոզմունքը: Նա պատմեց արքային, թե որքան աղետներ է կրել նա ճանապարհին. Կալիպոս հավերժահարսի կղզին լքելուց հետո: Պատմեց նաև, թե ինչպես է օգնել իրեն արքայազուստը Նավսիկեան, որին հանդիպել է ծովափին: Մեծ ուշադրութեամբ ականջ դրեց Ալքինոոսը Ողիսևին և, զարմացած նրա իմաստուն խելքի վրա, գոչեց.

— Օ՛ր, Օրինապահ լուսավոր աստվածներու Եր՛ն զուր Ծավակ-
կեային այս օտարականի նման մի ամբուսին շնորհեց, ես նրան
մեծ հարաստութիւնն և օժիտ կտայի: Բայց քեզ, օտարական, կամ-
քիդ հակառակ շինք պահի մեր կղզում: Մենք քեզ հայրենիք
կհասցնենք: Մովային ոչ մի ճանապարհից չեն օտարապետս
փնտրեցինք, որքան էլ հեռու լինի այդ ճամփան:

Բայց արդեն ուշ էր, և խնջույքը վերջացաւ: Արեւած թաղուհին
հրամայեց մահի՛ն պատրաստել Ողիսեսի համար, և շատ շնեցած
հերոսը խոր քուն մտաւ: Խոր քնի մեջ ընկզմեց Ալքինոսի ողջ
պալատը ևս:

Հաշորդ առավոտյան Ալքինոսը բոլոր փեակցիներին խոր-
հըրդի կանչեց վճռելու, թե ինչպես հայրենիք հասցնեն Ողիսեսին:
Ինքը Աթենաս-Պալլասը, մունետիկի կերպարանքով, շրջեց ողջ քա-
ղաքը, հրապարակ կանչելով քաղաքացիներին: Ալքինոսը հրա-
պարակ բերեց Ողիսեսին ևս և նստեցրեց իր կողքին: Շուտով
հավաքվեց ժողովուրդը: Զարմանքով էին նայում փեակցիները
հերոսին: Աթենաս-Պալլասը անպատմելի գեղեցկութեամբ և
վեհեութեամբ էր օժտել նրան: Ալքինոս արքան գիմելով հավաք-
վածներին՝ ասաց.

— Լսեցե՛ք, քաղաքացիներ: Մեզ մոտ է եկել մի օտարական,
խնդրում է, որ օգնենք իրեն հայրենիք վերադառնալու: Ոչ մի անգամ
մենք չենք մերժել մեր օգնութիւնը օտարականին: Մարքավորենք
մի նավ և հայրենիք տանենք մեր հյուրին: Բոլոր նրանց, ովքեր
ծով են դուրս գալու, հրավիրում եմ ինձ մոտ խնջույքի, հրավի-
րում եմ ավագանիին ևս: Իմ ապարանքում շքեղ խնջույքով
կպատվենք մենք օտարականին: Խնջույքի կանչեք Դեմոգոկոս
երգչին ևս, որ իր սքանչելի երգով զվարճացնի հյուրերին:

Այսպես ասաց Ալքինոսը: Սեանց հապաղելու հիտուներկու
թիաւար գնացին նավը ծովագնացութեան պատրաստելու: Ավա-
զանին արքայի հետեից ապարանք գնաց: Արքայի սպասավոր-
ները ճոխ խնջույք էին պատրաստել, մորթելով երկու ցուլ, տասն-
երկու ոչխար և ութ խոզ: Ալքինոսի սպասավորը խնջույքի բն-
րեց կույր երգիչ Դեմոգոկոսին ևս: Սեղան նստեցին հյուրերը, և
սկսվեց ուրախ խնջույքը: Երբ բոլոր կերան հագեցան, Դեմոգո-
կոսը ձեռքն առավ իր կիթառը, որ նրա գլխավերեք կախված էր
մեխից, զարկեց հնչեղ լարերին ու երգեց, թե ինչպես էին հաւ-
դիսավոր խրախմանքի ժամանակ վիճում երկու մեծագոր հերոս-

ները՝ Ողիսեսն ու Արքայաւոր Լսեց այդ կրգը Ողիսեսը, տխուր
չլեքճուշք համակեց նրան և արցունքներ թափվեցին նրա աչքերից:
Որպեսզի փեակցիները շտեսնեն արտասուքը, նա իր ծիրանի թիկ-
նոցով ծածկեց գլուխը: Դեմոգոկոսն ավարտեց իր երգը: Ողիսեսը
արքեց արցունքները և, ձեռքն առնելով սկեզդեն գավաթը, գինի
ձտնեց ի պատիվ անմահ աստվածների: Կրկին երգեց Դեմոգոկոսը
արքայական հելոսների սխրանքների մասին և վերստին լացեց
Ողիսեսը: Ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց նրա արցունքներին,
միայն Ալքինոս արքան մտահոգվեց, թե ինչո՞ւ է արցունք հե-
ղում օտարականը, և կոահեց այդ արցունքների պատճառը:

Երբ հյուրերը հագեցան, Ալքինոսը բոլորին հրապարակ հրա-
վիրեց խաղերին մասնակցելու: Բոլոր հեռուցին արքային: Իսկ
նրա կողքից քայլում էր հերոս Ողիսեսը: Փեակցի պատանիներն
սկսեցին մրցել զանազան խաղերի մեջ. արագ վազրի, քմբշա-
մարտի, թոխքի, բռնցքամարտի և սկավառակ նետելու մեջ: Երբ
մրցութիւնն ավարտվում էր, գեղատես, հզոր էվրիալոսը մոտե-
ցավ Ալքինոսի որդուն՝ Լաոդամասին, որ իր գեղեցկութեամբ գե-
րաղանցում էր բոլորին, և առաջարկեց մրցութիւններին մասնակ-
ցելու հրավիրել օտարականին ևս, որ այդքան հզոր տեսք ունէր:
Սկզբում գեղադեմ Լաոդամասը վարանեց, բայց հետո մոռ գնաց
Ողիսեսին և սիրալիբ հրավիրեց նրան խաղերին մասնակցելու:
Բայց Ողիսեսը հրաժարվեց, հայրենիքի կարոտը ընկճել էր նրան:
Լսեց նրա մերժումը էվրիալոսը և քմծիծաղով ասաց.

— Օտարական, տեսնում եմ, որ դու, փհարկե՛, անկարող ես
չափվել երիտասարդ հզոր քմբիշների հետ: Գու երեխ այն վաճա-
րականներից ես, որ ճանապարհորդում են ծովերով և զբաղվում
լսկ առևտրով:

Ահեղարար կիտեց հոնքերը Ողիսեսը և այսպես պատասխա-
նեց էվրիալոսին.

— Վիրավորական խոսք ասացիր դու, էվրիալոս: Տեսնում եմ
ես, որ աստվածները ամեն ինչ չէ, որ շնորհում են մարդկանց:
Այդպես էլ քեզ շնորհել են նրանք գեղեցկութիւն, բայց իմաստուն
խելքով չեն օժտել: Գու վիրավորեցիր ինձ բո խոսքով, բայց գիտ-
ցի՛ր, որ ես փորձված եմ մրցութիւնների մեջ ևս: Բազում մար-
տերի եմ մասնակցել ևս, շատ վիշտ եմ տարել, շատ վտանգներ
կրել, շատ ուժ եմ վատնել, բայց և այնպէս կփորձեմ ես իմ
ուժերը:

Այդ ասելուն պես, մի հսկայական քար պոկեց զետնից Ողիսևը և հզոր բազկով շարտեց: Սուլոցով սուրաց քարը փեակցիների գլխավերևում: Կոացան նրանք, որ քարը շղիպչի իրենց, բայց քարը թռավ հավաքված ամբոխի գլխավերևում և ընկավ այնքան հեռու, որքան երիտասարդներից և ոչ մեկը չէր կարող նետել սկավառակն անգամ, թեև դա ավելի հեշտ էր նետել: Փեակցի ծերունու կերպարանք առած, Աթենաս դիցուհին նշանեց քարի ընկած տեղը և ասաց, թե քարն այնքան հեռու է նետված, որքան նետել չէր կարող փեակցիներից և ոչ մեկը, որքան էլ հզոր լիներ նա: Եվ ուրախացած՝ Ողիսևը զոչեց.

— Փեակցի երիտասարդներ, նետեցեք սկավառակն այնքան հեռու, որքան ես քարն եմ շարտել: Եթե հասցնեք իմ քարին, ապա ես կնետեմ էլի մեկ ուրիշ քար, զուցե ավելի հեռու: Ձեզ բոլորիդ բռնցքամարտի, ըմբշամարտի և վազքի մրցության եմ հրավիրում: Լաոդամասի հետ միայն չեմ մրցի: Ձեռք չեմ բարձրացնի ես նրա վրա, ում տանը հյուրընկալություն եմ գտել:

Ողիսևսին պատասխան տվեց Ալքինոսը:

— Օտարական, ես տեսնում եմ, որ էվրիալոսի հանդուգն ծաղրը միայն ստիպեց քեզ մարտի կոչել խաղերի բոլոր մասնակիցներին, որպեսզի ցույց տաս քո հզոր ուժը: Գուցե բոլոր խաղերում գերազանցես դու մեզ, միայն ոչ արագավազության մեջ, քանի որ աստվածները փեակցիներին անապարտելիություն են շնորհել վազքի մեջ և մեկ էլ առաջին ծովազնացները դարձրել աշխարհում: Բացի այդ, մենք բոլորս սիրում ենք երգ, երաժշտություն, ղվարթ պարեր և ճոխ խնջույքներ: Այժմ այստեղ կհանչեն պարի մեջ ամենահմուտ պատանիներին և դու կհամոզվես, որ իդուր չենք հպարտանում այդ արվեստով:

Ալքինոսը պատվիրեց բերել Գեմոդոկոս երգչի կիթառը: Սպասավորն իսկույն ի կատար ածեց հրամանը: Վերցրեց Գեմոդոկոսը սպասավորի ձեռքից կիթառը, զարկեց ոսկեղեն լարերին և ուրախ մի երգ երգեց: Նրա երգի հնչյունների տակ թեթևասահ պտույտ եկան պատանիները: Հիացմունքով նրանց էր նայում Ողիսևը և անասելի զարմանում նրանց շարժումների գեղեցկության վրա: Երբ պատանիների պարն ավարտվեց, Ալքինոսը ավազանուն հրաման տվեց մեկական շքեղ զգեստ և մեկական տաղանդ ոսկի ընծայել Ողիսևսին: Իսկ էվրիալոսը դրանցից զատ, պարտավոր էր, ի հատուցումն հասցրած էվրիալոսների, մեկ ուրիշ

ընծայով ևս պատվել նրան: Էվրիալոսն իսկույն հանեց իր թանկագին սուրը, տվեց Ողիսևսին և ասաց.

— Օ՛, օտարական, եթե ես ասել եմ քեզ մի էվրիալոսական խոսք, թող քամին ցրի այդ խոսքը: Մոռացի՛ր դա: Եվ թող աստվածները բարեհաջող վերադարձ տան քեզ, որ շուտով տեսնեմ կնոջդ և ողջ ընտանիքդ:

— Քեզ ևս պահպանած թող լինեն աստվածները, էվրիալոս,— պատասխանեց Ողիսևը,— չղջաս երբեք, որ ընծայել ես սուրդ, արանով քավելով ինձ հասցրած էվրիալոսները:

Բայց արևն արդեն մայր էր մտնում և բուլոսն շտապեցին Ալքինոս արքայի ապարանքը: Այնտեղ Ողիսևսը գնաց Ալքինոսի կողմից իրեն հատկացված օթարանը: Բոլոր ընծաները դրեց Արեատի ուղարկած շքեղ արկղի մեջ և, կապելով պարանով, հմտորեն ծայրերը միացրեց հանգույցով, ինչպես նրան սովորեցրել էր Կիրկեն: Եթե զգեստներ հագնելով, Ողիսևսը գնաց խրախճանքի սրահը: Այնտեղ նա հանդիպեց Նավսիկեային: Արքայադուստրը նրան դիմեց մի խոսքով, որի մեջ հնչում էր անշատման թախիծը.

— Գեղադեմ օտարական, շուտով դու կվերադառնաս հայրենիք. ինձ մտաբերիր այնտեղ: Չէ՞ որ ինձ ևս պարտական ես դու քո փրկությունը:

— Օ՛, շքեղազգեղ Նավսիկեա,— պատասխանեց նրան Ողիսևսը,— եթե ամպրոպային Ձեան ինձ բարեբախտ վերադարձ տա հայրենիք, ապա այնտեղ ես ամեն օր իբրև աստվածուհու կաղոթեմ քեզ ինձ փրկելու համար:

Այդ ասելով, Ողիսևսը նստեց Ալքինոսի կողքին և սկսվեց ուրախ խրախճանքը: Խնջույքի ժամանակ Ողիսևսը Գեմոդոկոսին խնդրեց երգել Տրոյայի պարիսպների տակ հույների սարքած փայտե ձիու երգը: Երգեց Գեմոդոկոսը և Ողիսևսը դարձյալ սկսեց փառանդի արտասուք թափել: Երբ Ալքինոսը տեսավ օտարականի արտասուքը, ընդհատեց Գեմոդոկոսի երգը և հարցրեց, թե ինչու է արտասուք հեղում ամեն անգամ Տրոյայի տակ հերոսների գործած սխրանքների երգը լսելիս: Նա օտարականին խնդրեց հայտնել, թե ո՞վ է ինքը, ովքե՞ր են նրա հայրն ու մայրը: Խոստացավ Ալքինոսը հայրենիք տանել նրան, ով էլ որ նա լինի: Նա խոսք տվեց կատարել իր խոստումը, չնայած գիտեր, որ ծովերի աստված Պոսեյդոնը կպատժի փեակցիներին, քանի որ նրանք, իր կամքին հակառակ, պանդուխտներ են տանում հայ-

րենիք: Պոսեյդոնը սպառնում էր փեակցիներին, թե երբևէ ապա-
ռաժ կգարձնի պանդուխտին հայրենիք տանող նավը, իսկ քաղաքը
հավերժ կծածկի բարձրաբերձ լեռով: Գիտեք այդ բանը Ալքինոոսը
և, այնուամենայնիվ, վճռեց հայրենիք վերագարձնել Ողիսևսին:
Իսկ այժմ Ալքինոոսն ուզում էր իմանալ, թե ո՞վ է այդ օտարա-
կանը, որ նստել է իր կողքին. ուստի և խնդրեց Ողիսևսին ասել, թե
ո՞վ է ինքը, պատմել այն բոլոր արկածները, որ անցել են նրա
գլխով:

— Արքա Ալքինոոս, — պատասխան տվեց Ողիսևսը, — դու
ուզում ես իմանալ այն բոլոր աղետները, որ կրել եմ ես, ուզում
ես իմանալ, թե ո՞վ եմ, որտեղացի՞ եմ ես և ո՞վ է իմ հայրը:
Իմացի՞ր ուրեմն, ես Ողիսևսն եմ, Լաերտի որդին, Իթակե կղզու
առքան. գիտես դու արդե՞ն, թե ինչեր եմ կրել ես Կալիպսո հավեր-
ժահարսի կղզին լքելուց հետո, իսկ այժմ կպատմեմ քեզ բոլոր
այն արկածները, որ բաժին էր ընկել ինձ Տրոյայից դուրս գալուց
հետո: Այժմ ականջ դիր:

Այսպես խոսեց Ողիսևսը և սկսեց իր արկածները պատմու-
թյունը:

ՈՂԻՍԵՎԱԸ ՊԱՏՄՈՒՄ Է ԻՐ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ԿԵԿՈՆՆԵՐ ԵՎ ԼՈՏՈՒՎՊՈՍՆԵՐ

Երբ համընթաց քամու ուղղությամբ ծով դուրս եկանք Տրոյա-
յի պարիսպների տակից, — այսպես սկսեց իր պատմությունը Ողի-
սևսը. — մենք հանգիստ նավեցինք անծայրածիր ծովում և,
վերջապես, հասանք կիկոնների՝ երկիրը: Մենք տիրեցինք նրանց
Իսմարոս քաղաքին, կոտորեցինք բոլոր ընակիչներին, կանանց
գերի առանք, իսկ քաղաքն ավերեցինք: Երկար ժամանակ համո-
զում էի ուղեկիցներինս փութով դեպի հայրենիք նավել, բայց
չէին լսում նրանք ինձ: Մինչև այդ Իսմարոս քաղաքի փրկված
ընակիչները հավաքեցին շրջակայքի կիկոններին և հարձակվեցին
մեզ վրա: Նրանք այնքան շատ էին, որքան տերև կա անտառում,
որքան ծաղիկ է լինում գարնանը մարգագետնում: Երկար կովում
էինք մենք կիկոնների հետ՝ մեր նավերի մոտ, բայց մեզ հաղթե-

1 Առասպելական ժողովուրդ:

ցին կիկոնները և ստիպված եղանք փրկություն գտնել փախուստի
մեջ: Ծուրաքանչյուր նավից կորցրի վեց քաջարի թիավարներ: Բայց
ժավ դուրս գալուց առաջ երեք անգամ ձայն տվինք մենք այն ըն-
կերներին, ովքեր մեզ հետ չէին և նոր միայն բաց ծով ելանք՝
աղքատով մեր սպանված ուղեկիցներին և ուրախանալով, որ
փրկվել ենք ինքներս:

Հենց որ բաց ծով դուրս եկանք, ամպրոպային Ջևաը մեր դեմ
ուղարկեց հյուսիսային քամու աստված Բորեասին: Սոսկալի փո-
թորիկ բարձրացրեց նա ծովի վրա: Մութ ամպերը լողում էին եր-
կընքում: Խավարով էր պատել ամեն ինչ: Երեք անգամ առադաստը
պոկեց կայմից կատաղի Բորեասը: Վերջապես, մեծ դժվարու-
թյամբ, թիավարելով հասանք մի ամալի կղզի: Երկու օր ու զիշեր
սպասեցինք փոթորկի հանդարտելուն: Երրորդ օրը կանգնեցինք
կայմերը, պարզեցինք առազատները և շարունակեցինք ճանա-
պարհը: Բայց չհասանք ջերմորեն սիրած հայրենիքը մեր: Փոթորկի
ժամանակ մենք ճանապարհը կորցրել էինք: Վերջապես, նավե-
լու տանձերորդ օրը, հասանք մի կղզի: Դա լոտոփագոսների՝
կղզին էր: Ափին խարույկ վառեցինք և սկսեցինք ճաշ պատրաս-
տել: Ես ուղեկիցներիցս երեքին ուղարկեցի իմանալու, թե ի՞նչ
ժողովուրդ է բնակվում կղզում: Միրալիր ընդունելություն էին ցույց
տվել նրանց լոտոփագոսները և քաղցր լստոս էին տվել նրանց:
Հենց որ կերել էին այդ իմ ուղեկիցները, իսկույն մոռացել էին
իրենց հայրենիքը և չէին կամեցել հայրենի Իթակե վերագառնալ՝
ուզում էին մշտապես մնալ լոտոփագոսների կղզում: Բայց մենք
ուժով նավ բերինք նրանց և կապտեցինք, որ չփախչեն մեզնից:
Անհապաղ հրաման տվի ուղեկիցներինս՝ թիակներն առնել և որքան
կարելի է շուտ լքել լոտոփագոսների կղզին: Երկչուղ էի կրում, որ
մյուսներն էլ քաղցրահամ լստոս կուտեն և մոռացություն կմատ-
նեն հայրենիքը:

ՈՂԻՍԵՎԱԸ ԿԵԿՈՆՆԵՐԻ ԿՂԶՈՒՄ: ՊՈՒՓՈՆՄՈՍ

Ետադրված է ըստ Համեռոսի «Ողիսևսական» պոեմի:

Երկար նավելուց հետո ուղեկիցներին հետ հասա օրենքներից
անտեղյակ վայրագ կիկլոպների կղզին: Հողագործությամբ ընն

1 Այսինքն՝ լոտոսով սնվող մարդիկ:

զբաղվում կիկլոպները, բայց շնայած դրան՝ հողն առատորեն շնորհում է նրանց ամեն ինչ: Քարանձավներում են ապրում հըսկա կիկլոպները, ամեն մեկը ճանաչում է իր ընտանիքը միայն, ու չեն գնում ժողովրդահավաքի: Մենք անմիջապես կիկլոպներին հողը չմտանք: Նախ մտանք կիկլոպների կղզուց ոչ այնքան հեռու գտնվող կղզյակի ծովախորշը: Ոչ մի մարդ չէր եղել այդ կղզում, թեև շատ բարեբեր էր կղզին: Այդտեղ անթիվ անհամար այծեր կային և, որովհետև երբեք մարդ չէին տեսել նրանք, մեզնից երկյառ շունն էին: Գիշերն փի գուրս ելանք, հանգիստ քնեցինք, իսկ առավոտյան զբաղվեցինք այծերի որսով: Նավերից յուրաքանչյուրին բաժին ընկավ ինը այծ, իսկ այն նավը, որի վրա ես էի, վերցրեց տասը այծ: Ամբողջ օրը հանգստանում էինք որսից հետո՝ ուրախ կերուխում անելով ծովափին: Կիկլոպների երկրից մեզ էին հասնում նրանց ձայները և նրանց նախիրների բառաչը: Հաջորդ առավոտ վճռեցի իմ նավով կիկլոպների կղզին գնալ՝ իմանալու, թե ի՞նչ ժողովուրդ է դա: Արագորեն կտրեցինք ոչ այնքան լայն նեղուցը և մոտեցանք փիին: Հենց ծովի մոտ դափնե ծառերով պատված մի քարայր տեսանք, որ շրջապատված էր հսկայական քարերից շինած պարսպով: Վերցրի ինձ հետ տասնեկուսուհին հուսալի ընկեր, հետներս առանք գինով լի տկճորը և ուտելիք ու գնացինք կիկլոպների քարայրը: Ինչպես հետո իմացանք, դա մի սոսկալի կատաղի կիկլոպ էր, որ ապրում էր մյուս կիկլոպներից առանձին և միայնակ արածացնում իր հոտը: Նա, ինչպես և մյուս կիկլոպները, նման չէր մարդկանց: Հրեշավոր ուժի տեր մի հսկա էր նա և մի միակ աչք ուներ ճակատին: Երբ քարայրը մտանք, կիկլոպը տանը չէր, հոտն էր արածացնում: Կիկլոպի քարայրի մեջ կողովներով պանիր էր դրված, իսկ դուլներով ու թասերով՝ մածոն: Քարայրում տեղ էր առանձնացված գառների և ուլերի համար: Ուղեկիցներս համոզեցին վերցնել ամենալավ գառներն ու ուլերը, վերցնել պանիր և վազել դեպի նավը, բայց, դժբախտաբար, ես չսեցի նրանց: Ես ուզում էի իրեն՝ կիկլոպին տեսնել: Վերջապես եկավ ինքը կիկլոպը: Մի ահուկ շալակ փայտ թափեց քարայրի մուտքի մոտ: Կիկլոպին տեսնելուն պես, մենք սարսափահար կուչ եկանք քարայրի ամենամութ անկյունում: Իսկ նա քարայր բշեց հոտը, ժայռով փակեց մուտքը և սկսեց կթել այծերն ու ոչխարները: Կթելուց հետո կրակ արեց,

որ ուտելիք պատրաստի իր համար: Այդ ժամանակ տեսավ մեզ և որոտագոչ ձայնով կոպտաբար հարցրեց:

— Ովքե՞ր եք դուք: Որտեղի՞ց եք եկել: Երևի պարապ-սարապ թափառում եք ծովի վրա և բոլոր ժողովուրդներին դժբախտություն բերում:

— Մենք բուրս հույներ ենք, — պատասխանեցի ես կիկլոպին, — գալիս ենք Տրոյայից: Մեզ փոթորիկն այստեղ գցեց: Աղաչում ենք բարեկամաբար իբրև հյուրեր ընդունել մեզ: Գու գիտես, որ Զևսը պատժում է նրան, ով նեղացնում է պանդուխտներին և չի հյուրընկալում նրանց:

— Երևում է, որ հեռվից ես այստեղ եկել, օտարական, — կատաղաբար գոչեց կիկլոպը, — որ կարծում ես, թե վախենում եմ քո աստվածներից: Չե՛մ վախենում ես քո Զևսի զայրույթից: Եվ մտադիր չեմ խնայել ձեզ: Կանեմ այն, ինչ ուզում եմ: Ասա, որտե՞ղ են նավերդ:

Հասկացա ես, թե ինչո՞ւ է կիկլոպը հարցնում իմ նավի տեղը և պատասխանեցի.

— Առափնյա ժայռերին խփելով, փոթորիկը շարդուփշուր արեց իմ նավը, միայն ես և ուղեկիցներս ազատվեցինք:

Պատասխան չովեց կիկլոպը: Իր հսկայական ձեռքերով բռնեց ուղեկիցներիցս երկուսին, գետնովը տվեց և սպանեց: Այսպես նրանց մարմինը կտոր-կտոր արեց ու կերավ: Անպատմելի սոսկումը տիրեց մեզ և սկսեցինք փրկություն աղերսել Զևսից: Իսկ կիկլոպը իր սոսկալի ընթրիքն ավարտեց, հանգիստ ձգվեց գետնին և քնեց: Ես ուզեցի սպանել նրան, մերկացրի սուրս, բայց նայելով ահուկ ժայռին, որով փակված էր մուտքը, հասկացա, որ այդպիսով մենք փրկություն չենք գտնի: Լույսը բացվեց: Նորից կիկլոպը սպանեց ուղեկիցներիցս երկուսին: Նրանց մարմինը ուտելուց հետո հոտը դուրս բշեց քարայրից, իսկ մուտքը փակեց նույն աստուածով: Երկար ժամանակ փրկվելու միջոց էի փնտրում ես. վերջապես գտա: Քարայրում կայմի նման երկար մի գերան գտա: Կիկլոպը դրանից երևի գավազան էր ուզում շինել իր համար: Սրով կտրեցի գերանի ծայրը, սրեցի, խանձեցի կրակի վրա ու թաքցրի: Երեկոյան կիկլոպը հոտը տուն բերեց: Նորից սպանեց իմ երկու ուղեկիցներին և, ավարտելով իր նողկալի ընթրիքը, ուլեց քուն մտնելու: Բայց ես մոտեցա նրան և մի գավաթ գինի առաջարկեցի: Կիկլոպը խմեց գինին, նորից պահանջեց և ասաց.

— Նորից ԼԵՐՈՒ և ասա ի՞նչ է անունդ, ես ուզում եմ նվեր տալ քեզ:

ԼԵՐԻ հրկրորդ բաժակը կիկլոսը պահանջեց Երրորդը, ԼԵՐԻ հրրորդը: Գավաթը տալիս՝ ասացի կիկլոսին.

— Ուզո՞ւմ ես անունս իմանալ: Իմ անունը Ոչոք է:

— Դե լսի՛ր, Ոչոք, ես քեզ վերջինը կուտեմ, դա կլինի իմ նվերը քեզ, — ծիծաղելով պատասխան տվեց կիկլոսը: Ապա խմեց երրորդ գավաթը, հարբեց, փուլեց գետնին ու դարձյալ քուն մտավ:

Այդ ժամանակ ես նշան արի ընկերներես, ձեռքներս առանք գերանը, այրեցինք սուր ծայրը և կիղեցինք կիկլոսի աչքը: Մանչաց նա ահավոր ցավից, դուրս քաշեց ծխացող ձողը աչքից և սկսեց օգնություն կանչել մյուս կիկլոսներին: Վաղելով եկան նրանք ու հարցրին.

— Ի՞նչ է պատահել, Պոլիփեմոս: Ո՞վ է նեղացրել քեզ: Չե՞ն գողացել արդյոք քո հոտը: Ինչո՞ւ ես արթնացրել մեզ:

Վայրենի ոռնոցով Պոլիփեմոսը պատասխանեց նրանց.

— Ինձ ոչ թե ուժով, այլ խորամանկությամբ է կործանում Ոչոքը:

Բարկացան կիկլոսները և գռչեցին.

— Եթե քեզ ոչ ոք չի նեղացրել, հապա ինչո՞ւ ես այդպես մռնչում: Եթե հիվանդացել ես, ապա ուրեմն դա է Ձևսի կամքը, որ ոչ ոք չի կարող փոխել:

Այդպես ասացին և հեռացան կիկլոսները:

Լուսը բացվեց: Աղեկատու հառաչանքով կիկլոսը մի կողմ հրեց մուտքի ապառաժը և սկսեց դաշտ թողնել հոտը, ձեռքով շոշափելով յուրաքանչյուր ոչխարի և այծի մեջքը: Այդ ժամանակ, ընկերներին փրկելու համար, ես երեքական ոչխար կապեցի իրար և մեջտեղի ոչխարի փորի տակ մեկ-մեկ կապեցի ընկերներես.

իսկ ես, Պոլիփեմոսի սիրելի մի հսկայական ոչխարի թավ բրդի մեջ թաղելով ձեռքերս, կախ ընկա նրա տակ: Անցան Պոլիփեմոսի մոտով ոչխարները, փորերի տակ կապած իմ ուղեկիցներով: Վերջինը գնաց այն ոչխարը, որի տակ ես էի կախված: Կանգ-նեցրեց նրան Պոլիփեմոսը, սկսեց շոյել և գանգատվել իր տարաբախտ վիճակից և այն բանից, որ Վիրավորել է իրեն հանդուգն Ոչոքը: Վերջապես բաց թողեց այդ ոչխարը ևս: Այդպես փրկվեցինք մենք անխուսափելի կործանումից: Հասցնեալ դեպի նավը բռնեցինք Պոլիփեմոսի հոտը, այնտեղ սպասում էին մեր ընկեր-

ները: Ժամանակ չտվի ընկերներին ողորմելու մեռածներին: Շուտափույթ նավ մտանք մենք, հետներս առանք Պոլիփեմոսի ոչխարը և ափից հեռացանք: Ափից երբ այնքան հեռացանք, որ լսելի լինեք մարդկային ձայնը, ես բարձրաձայն գռչեցի կիկլոսին.

— Լսի՛ր, կիկլոս: Քո դատանաթյամբ դու ինքդ Ձևսի պատիժն առար քեզ վրա: Այլևս չես սպանի ու լսափի տարաբախտ պանդուխտներին:

Լսեց իմ խոսքը կիկլոսը, կատաղած վեր առավ մի ապառաժ ա նետեց ծովը: Քիչ էր մնում ապառաժը շարդուփշուր անեք նավի քիթը: Ալեկոծվեց ծովը իր մեջ ընկած ժայռից: Հսկայական մի ալիք վերցրեց իմ նավը և ափ նետեց: Բայց ձողով ափից ետ մղողեցի նավը և նորից ծով դուրս եկանք: Ափից հեռանալիս ես ձայն տվի Պոլիփեմոսին.

— Գիտցի՛ր, Պոլիփեմոս, որ քեզ կուրացրեց Ողիսեաը, Իթա-կեի արքան:

Ոռնաց կատաղությունից վայրենի կիկլոսը և գռչեց.
— Կատարվեց մարգարեի կանխադուշակութունը: Ես կարծում էի, թե մի ահեղ հսկա է Ողիսեաը և ոչ թե քեզ նման շնչին մի որդ:

Եվ Պոլիփեմոսն իր հորը՝ Պոսեյդոնին աղաչեց, որ պատժի ինձ, իրեն տեսողությունից զրկելու համար: Առաջինից ավելի մեծ ապառաժ պոկեց տեղից նա և ծովը նետեց: Նավախելի մոտ ընկավ ժայռը: Հսկայական մի ալիք ճանկեց իմ նավը և հեռու շարտեց: Այդպես փրկվեցինք մենք: Թարեհաջող հասանք այն կղզին, որ մեզ սպասում էին մնացած նավերը: Այնտեղ մեծահարուստ գոհեր մատուցեցինք աստվածներին: Գիշերը այդ կղզու ափին անցկացնելուց հետո, հաջորդ օրը շարունակեցինք մեր ճանապարհը, անծայրածիր ծովով, ողբալով մեր զոհված ընկերներին:

ՈՂՍԵՎՍԸ ԷՈՒՍԻ ԿՂՁՄԸ

Շատ շանցած հասանք Էոլոսի կղզին: Մովի վրա լողացող էոլոսի ողջ կղզին շրջապատված է անխորտակելի պղնձե պատվարով, իսկ ափերը ուղղաձիգ ժայռեր են, որ վեր են խոչանում ծովի ալիքների միջից: Այդ կղզում է ապրում Էոլոսը իր կնոջ, վեց ուսուրերի և վեց դուստրերի հետ միասին: Բախտավոր ու անխոով կյանքով էր ապրում Էոլոսը: Նա իր օրերն անց էր կացնում շքեղ

ապարանքում ուրախ խրախճանքների մեջ: Ամբողջ մի ամիս խըն-
ջույքներով մեծարեց մեզ էությունը, և լսեց իմ պատմութունները
Տրոյայի պարիսպների տակ հերոսների գործած սխրանքների
մասին:

Վերջապես սկսեցի խնդրել, որ թողնի հայրենիք վերադառնալ
մեզ, Համաձայնեց էությունը: Հրաժեշտի ժամին նա մի մեծ տիկ
տվեց ինձ, որ կապված էր արծաթե լարով: Այդ տիկի մեջ էին էո-
լոսի հպատակ քամիները: Միայն Զեփիրոսն էր ազատ թողնված:
Նա՛ պիտի իմ նավերը դեպի հայրենի իթակեք ըջեր: էություն արգե-
լեց տիկը բանալ մինչև այն ժամանակ, քանի դեռ հայրենիք չեմ
հասել: Բայց մեծանուն Զևսն ինձ չէր վիճակել հայրենիք վերա-
դառնալ: Երբ նավարկության տասներորդ օրը երևաց իթակեն,
աստվածները խոր քնի մեջ ընկղմեցին ինձ: Իսկ իմ ուղեկիցները
խոսում են իրար մեջ, թե երևի շատ ոսկի ու արծաթ է տվել էություն
ինձ և դրել այդ տիկ մեջ, որ ես թույլ չեմ տալիս բանալ դա: Հե-
տաքրքրությունից դրդված, իմ ուղեկիցները բաց են անում տիկը:
Դուրս են թռչում նրա միջից քամիները և սոսկալի փոթորիկ բարձ-
րացնում ծովի վրա: Փոթորկի աղմուկից արթնացա ես, և հուսա-
հատությունից ուղեցի ծովը նետվել, բայց հնազանդվեցի ճակատա-
գրիս և, փաթաթվելով թիկնոցիս մեջ, պառկեցի նավախելին:

Փոթորիկը մեզ նորից էություն կղզին ըջեց: Ուղեկիցներիցս մեկի
հետ զնացի էություն պալատը և սկսեցի աղերսել, որ մեկ ան-
գամ էլ օգնի հայրենիք վերադառնալ ինձ: Բայց զայրացավ ինձ
վրա էությունը: Վտարեց իր ապարանքից ու ասաց, որ երբեք չի օգ-
նի նրան, ում ատում և հետապնդում են աստվածները: Աղի ար-
տասուք հեղելով, հեռացա ես էություն պալատից:

ՈՒԻՍԵՎՍԸ ԼԵՍՏՐԻՊՈՆՆԵՐԻ ՄՈՏ

Շարադրված է ըստ Համեռոսի «Ողիսական» պոեմի:

Ճանապարհ ընկանք ծովով: Վեց օր նավեցինք մենք, վերջա-
պես ինչ-որ կղզի հասանք: Մտանք խաղաղ ծովախորշը: Իմ նա-
վերից տասնմեկը մոտեցան ափին, և ուղեկիցներս զրանք հանե-
ցին առափնյա ավազի վրա, իսկ իմ նավը կանգնեցրի ծովախորշի
մուտքի մոտ: Բարձրացա ժայռի վրա, որ նայեմ շրջակայքը: Ոչ
մի տեղ չէր երևում ո՛չ նախիր, ո՛չ հերկած դաշտեր, միայն այն ու
այնտեղ ծուխ էր բարձրանում: Ուղեկիցներիցս երեք հոգու ուղար-

կեցի իմանալու, թե ո՛վ է ապրում այդ կղզում: Նրանք ճանապարհ
ընկան: Զրհորի մոտ, մեծ քաղաքից ոչ հեռու, ուղեկիցներս հան-
գիպում են հաղթահասակ մի աղջկա. նա ուղեկիցներին տանում է
քաղաք, իր հոր՝ լեատիգոնների տիրակալ՝ Անտիփատեսի պալատը:
Պալատում նրանք տեսնում են Անտիփատեսի լեոնաչափ հասակ
ունեցող կնոջը: Նա հրամայում է ավազանի խորհրդից կանչել
ամուսնուն: Վազելով գալիս է նա, խլում ուղեկիցներիցս մեկին,
հոշոտում և մախի իր համար ճաշ պատրաստում: Փախուստի են դի-
մում ուղեկիցներս և վազում նավերի մոտ: Անտիփատեսը հավա-
քում է լեատիգոններին: Վազելով ծովափ թափվեցին նրանք. ժայ-
ռերը պոկում և ջարդում էին նավերը: Լավեցին ջարդվող սարքերի
ճոճոցը և մեռնողների ճիշերը: Սպանեցին լեատիգոնները տասնը-
մեկ նավերի բոլոր ուղեկիցներին, և ցցի վրա առնելով նրանց,
տարան իրենց քաղաքը: Դժվարություններ փրկվեցի ես իմ նավով:
Այժմ տասներկու նավից մեկը մնաց միայն:

ՈՒԻՍԵՎՍԸ ԿՍԵԱՐԴ ԿԻՐԿԵՆ ԿՂՁՈՄ

Շարադրված է ըստ Համեռոսի «Ողիսական» պոեմի:

Երկար նավում էինք մենք անծայրածիր ծովում, արցունք թա-
փելով զոհված ընկերներիս համար: Վերջապես հասանք էյա՛ կղզ-
դին, ուր ապրում էր գեղազանգուր կախարհ Կիրկեն, Հելիոս աս-
տըծու դուստրը: Երկու օր մնացինք խաղաղ ծովախորշի ափին: Եր-
րորդ օրը, սուրս գոտուցս կախելով և ձեռքս առնելով նիզակը,
զնացի կղզու խորքը: Բարձրադիր մի ժայռի գլխից ծուխ նկատեցի,
որ հլնում էր անտառի մյուս կողմից: Վճռեցի նավի մոտ վերա-
դառնալ և ուղեկիցներիցս մի քանիսին ուղարկել իմանալու, թե ո՛վ
է ապրում կղզում: Վերադարձիս ճանապարհին նիզակով մի հսկա-
յական հղջերու խփեցի: Նավի մոտ բերի հղջերուն, հացկերույթ
պատրաստեցինք մեզ համար և, ուտելիքով ու ըմպելիքով կազ-
դուրվելուց հետո, քնեցինք ծովի ալիքների ծփանքի տակ: Առա-
վտոյան ուղեկիցներիս երկու խմբի բաժանեցի: Մեկը ղեկավարում
էի ես, իսկ մյուսի ղեկավարությունը հանձնեցի էվրիլոքոսին: Վի-

1 Առասպելական կղզի. հույների պատկերացմամբ գտնվում է ծովի ծա-
րմաստում, հեռավոր արևմուտքում:

ճակ գցեցինք, թե ո՞վ պիտի զնա կղզու խորքը, վիճակն ընկա՞վ է՞վրիւղքոսին՝ տասներկու ընկերների հետ միասին:

Ճանապարհ ընկան նրանք և շուտով հասան Կիրկեի ապարանքը: Պալատի մոտ ման էին գալիս վարժեցրած առյուծներ ու գայլեր: Իմ ուղեկիցներին տեսնելուն պես մոտ են վազում նրանք և սկսում ջծնել նրանց, ինչպես իրենց տերերին թծնող շներ, այդպես սանձել էր նրանց Կիրկեն՝ կախարդական ըմպելիքով: Այդ ժամանակ ուղեկիցներիս ականջին է հասնում պալատից հնչող զնգուն մի երգ: Ուղեկիցներս պալատից դուրս են կանչում Կիրկեին: Գուրս է գալիս և սիրալիր ներս հրավիրում նրանց: Պալատում Կիրկեն նրանց գավաթներով դինի է տալիս, կախարդական խոտի հյութ խառնելով նրա հետ: Խմում են դինին ուղեկիցներս, իսկ Կիրկեն, գավազանը դիպցնելով ամեն մեկին, խող է դարձնում նրանց, թողնելով բանականութունը միայն: Աղի արտասուք թափող ուղեկիցներիս Կիրկեն թշում է գոմը և առաջները կաղին լցնում: Միայն է՞վրիւղքոսն է փրկվում: Նա մյուսների հետ պալատ չէր մտել:

Վազելով, նավի մոտ եկավ է՞վրիւղքոսը և սարսափահար պատմեց ուղեկիցներին գլխին եկած պատուհասը: Առանց հասարակելու գեպի Կիրկեի պալատը գնացի ես, մտածելով մի բանի մասին միայն՝ ինչպես փրկել ուղեկիցներին: Ճանապարհին, մի պերճ պատանու կերպարանքով, ինձ հայտնվեց Հերմես աստվածը: Նա սովորեցրեց ինչպես փրկել ընկերներիս կախարդուհու իշխանութունից, և տվեց հրաշագործ մի արմատ, որ ինձ անմատչելի պիտի գարձներ Կիրկեի կախարդանքի հանդեպ: Գնացի Կիրկեի պալատը: Նա սիրալիր դիմավորեց ինձ, պալատ տարավ և շքեղազարդ թիկնաթոռին նստեցնելով, հրամայեց կախարդական ըմպելիքը: Հանգիստ գատարկեցի գավաթը: Իսկ նա գավազանը դիպցրեց ինձ և գուշեց.

— Դե հիմա գնա՛ ու թավալվիր այնտեղ, մյուսների հետ միասին:

Իսկ ես մերկացրի սուրս, ինչպես Հերմես աստվածն էր պատվիրել, հարձակվեցի կախարդուհու վրա և մահվամբ սպառնացի նրան: Մեկի եկավ իմ առաջ Կիրկեն:

— Օ՛, ո՞վ ես դու,— բացականչեց նա,— ոչ ոք մինչև այժմ չէր փրկվել իմ կախարդական ըմպելիքներից: Օ՛, ես դիտեմ, դու

խորամանկ Ողբասն ես: Վաղուց է ինձ գուշակել Հերմեսը, որ դու գալու ես ինձ մոտ: Պատյանը դիր սուրդ:

Սուրս պատյանը դրի և երգվել ստիպեցի Կիրկեին, որ նա լնաս չի հասցնի ինձ: Աստվածների անխախտ երգմամբ Կիրկեն երդում տվեց և ապա խնդրեց մնալ իր մոտ և հանգիստ առնել: Ես համաձայնեցի: Մինչև ես հանգստանում էի, Կիրկեի սպասուհիները՝ գետերի և առուների աստվածների դուստրերը, ճոխ հացկերույթ պատրաստեցին: Հանգստանալուց հետո, շքեղ զգեստներ հագած, մտա խրախճանքի շքասրահը, նստեցի բազմատեսակ տոնիլիքներով ծանրաբեռնված սեղանի առաջ և տանջալից մտքերի մեջ ընկաւ: Վշտից ոչինչ չէի կարողանում ուտել: Կիրկեն հարցրեց վշտանալուս պատճառը: Ես պատասխանեցի, թե ոչինչ չեմ ուտի, մինչև ուղեկիցներիս չվերադարձնի նախկին կերպարանքը: Կիրկեն իսկույն դուրս հանեց գոմից խողբին, կախարդական օժանելիքով օժեց նրանց, վերադարձրեց նրանց նախկին տեսքը և նույնիսկ առաջվանից ավելի գեղեցիկ և ուժեղ դարձրեց նրանց: Ուրախացան ուղեկիցներս, երբ տեսան ինձ. նրանց ուրախութունը հուպեց նույնիսկ Կիրկեին: Խնդրեց ինձ կախարդուհին ծովափ գնալ և իր ապարանքը բերել այնտեղ մնացած իմ ուղեկիցներին: Իսկույն կատարեցի Կիրկեի խնդիրը և նրա մոտ բերի բոլոր ուղեկիցներին, շնայած է՞վրիւղքոսը համոզել էր նրանց հավատ չընծայել խարդախ կախարդուհուն: Երբ բոլորս հավաքվեցինք Կիրկեի պալատում, հոյակապ խրախճանք տվեց նա:

Մի ամբողջ տարի ապրեցինք Կիրկեի ապարանքում: Մի տարի անցնելուց հետո ես սկսեցի Կիրկեին խնդրել, որ հայրենիք թողնի մեզ: Համաձայնեց մեծ կախարդը: Ասաց, որ հայրենիք վերադառնալուց առաջ ես պիտի այցելեմ դժնադեմ Հադեսի թագավորութունը և այնտեղ Թերեի պատգամախոս Թիրեսիոսի ուրվականին հարցնեմ իմ ճակատագրի մասին: Պատմեց ինձ Կիրկեն, թե ինչպես պիտի հասնել ստվերների ատորներկյա թագավորության մուտքին և սովորեցրեց, թե ինչպես պիտի զոհեք մատուցեմ և կոչեմ մեռյալների ստվերներին: Էսեցի ես աստվածուհու խրատները և սկսեցի հավաքել ընկերներին, որ ճանապարհ ընկնենք: Մեր աղմուկից արթնացավ պալատի կտուրին քնած էլպենորը և, մոռանալով, որ զտնվում է կտուրին, վազեց ընկերների ձայնի վրա: Բարձր կտուրից գետին ընկավ նա և ջախջախվեց: Դառն արտասուք թափեցինք՝ տեսնելով մեր ընկերոջ մահը: Զկա-

րողացանք իսկույն թաղման արարողութիւն անել, պետք է հապ-
ճեալ հետազոտ ճամփորդութիւն սկսելինք՝ դեպի աշխարհի ծայրը,
դժնադեմ Հաղեսի թագավորութիւնը:

ՈՒՅՍԵՎՍԸ ԻՋՆՈՒՄ Է ՀԱՌԵՍԻ ՔԱՅԱՎՈՐՈՒՔՅՈՒՆԸ

Շառաքված է ըստ Հովնաթի «Սրբապետ» պատմի:

Երբ ես ուղեկիցներէս հայտնեցի, թե այժմ ո՛րք է տանում մեզ
մեր ճանապարհը, սոսկումը տիրեց նրանց, բայց հնազանդվելով
իմ հրամանին, նազ մտան և դեպի հեռավոր հյուսիս նավեցինք
մենք: Կախարդ Կիրկեն համընթաց քամի ուղարկեց: Արագ բշու՛մ
էր նա մեր նավը: Վերջապես հասանք ճերմակահեր Օվկիանոսի
ջրերին և մոտեցանք կիմերիացիներին՝ թախծալի երկրի ափը, ուր
մարդիկ երբեք չեն տեսնում Հելիոս աստծո լույսը: Այդ երկիրը
մշտապես պատած է ցուրտ մառախուղով: Գիշերային աղջամուղ-
ջը թանձր խավարով է պարուրում այդ երկիրը: Այնտեղ ափ հա-
նեցինք մենք մեր նավը, վերցրինք ստորերկրյա աստվածներին զո-
հաբերելու համար Կիրկեի տված ոչխարն ու սև խոյը, և գնացինք
այնտեղ, ուր բարձրաբերձ մի ժայռի մոտ Աքերոնի մեջ են թափ-
վում Կոկիտոսն ու Պիրիփլեգետոնոսը²: Երբ այնտեղ հասանք, ես
սրով մի խորունկ փոս փորեցի, երեք անգամ մեղրի, գինու և ջրի
հեղում կատարեցի. այդ բոլորի վրա գարու ալյուր ցանեցի և փո-
սի վրա մորթեցի զոհերը: Արյունը լցվեց փոսը: Մեռյալների հոգի-
ների հսկայական ամբողջ թուփ-եկավ փոսի մոտ և սկսեցին վի-
ճել, թե ո՛վ պիտի առաջինը խմի զոհի արյունը: Այնտեղ կային
հարսներ, պատանիների, ծերունիների և պատերազմում ընկած
այրերի հոգիներ:

Սոսկումը տիրեց ինձ և իմ ուղեկիցներին: Այրեցինք զոհերը
և կոչ արինք մռայլադեմ Հաղես աստծուն և կնոջը՝ Պերսեփոնե
դիցուհուն: Մերկացրի սուրս և նստեցի փոսի առաջ, որ մոտ շթող-
նեմ մեռյալների հոգիներին: Առաջինը մոտ եկավ երիտասարդ էլ-
պենորի հոգին: Մեզնից առաջ էր նրա հոգին թռել-եկել մեռյալնե-

րի հոգիների թագավորութիւն դռների մոտ: Էլպենորն աղակց
թաղել իր մարմինը, որպէսզի իր հոգին հանգստութիւն գտնի: Հա-
ղեսի թագավորութիւն մեջ: Խոստացա կատարել նրա խնդիրը:
Փոսի մոտ թուփ-եկավ մորս՝ Անտիկլեայի հոգին ևս: Նա կենդանի
էր, երբ ես թողի Իթակեն, Որքան էլ ցավալի էր ինձ համար, ես
նրան էլ մոտ շթողի փոսին, որովհետև արյունն առաջինը թիրե-
սիոսը պիտի խմեր: Վերջապես հայտնվեց Քիրեսիոսի հոգին: Ար-
յունը խմելուց հետո ինձ դիմեց անմարմին հոգին և հայտնեց, որ
զայրացած է իմ դեմ երկրասասան Պոսեյդոն աստվածը, որովհե-
տև կուրացրել եմ նրա որդուն՝ կիկլոպ Պոլիփեմոսին: Բայց Պոսեյ-
դոնի կամքին հակառակ էլ ես կհասնեմ հայրենիք, զուշակեց Քի-
րեսիոսը, եթե ուղեկիցներս Տրինակրիա կղզում ձեռք շտան Հե-
լիոսի ցուլերին, իսկ եթե սպանեն ցուլերին, ապա բոլորը կկոր-
ծանվեն, կփրկվեմ միայն ես և, բազում աղետների ենթարկվելուց
հետո, կվերադառնամ տուն: Այնտեղ վրեժ կլուծեմ փեսացուներից,
բայց հետո թիակը ձեռքս առած կթափառեմ այնքան ժամանակ,
մինչև որ հանդիպեմ մի ժողովրդի, որ շփոթե ծովագնացութիւն և
երբեք նազ չի տեսել. կճանաչեմ ես այդ ժողովրդին նրանից, որ
ինձ հանդիպողը կհարցնի, թե ինչո՞ւ եմ բահն ուսիս դրել: Այդ երկ-
րում ես զոհ պիտի մատուցեմ Պոսեյդոնին և դրանից հետո միայն
պիտի վերադառնամ տուն: Իսկ տանը բազում զոհեր պիտի մա-
տուցեմ բոլոր աստվածներին. այդ դեպքում միայն խաղաղ կապ-
րեմ ես Իթակեում մինչև մահս: Ահա թե ի՛նչ զուշակեց պատգա-
մախոս Քիրեսիոսն ու հեռացավ:

Շատ հոգիներ տեսա ես: Արյուն խմելուց հետո մորս հոգին
պատմեց ինձ, թե ինչեր են կատարվել հայրենի Իթակեում մինչև
իր մահը, նա հանգստացրեց ինձ՝ հայտնելով, թե կենդանի են և՛
հայրս՝ Լաերտը, և՛ Պենելոպեն, և՛ պատանի Տելեմաքոսը: Ուղե-
ցի գրկել բնջրորեն սիրած մորս, երեք անգամ երկարեցրի ձեռ-
քերս, բայց երեք անգամն էլ խուլս տվեց նրա թեթևասահ ստվե-
րը: Հաղեսի թագավորութիւն մեջ տեսա շատ հերոսներ, բայց բո-
լորին թվել անկարող եմ, զրա համար ողջ գիշերն իսկ չէր բավի:
Այլևս ուշ է, ժամն է, որ ընդհատեմ պատմութիւնս, ժամն է, որ
բոլորը հանգիստ առնելու գնան:

Այսպես ասաց Ողիսևսը: Բայց բոլոր հավաքվածներն սկսեցին
խնդրել Ողիսևսին, որ շարունակի պատմութիւնը. խնդրեցին նաև
Արևտե թագուհին և Ալքինոոս արքան: Բոլորը պատրաստ էին

¹ Առասպելական ժողովուրդ, որ իբր ապրում էր երկրի ծայր հյուսիս-արե-
մուտքում:

² Ամբոն, Կոկիտոս, Պիրիփլեգետոնոս—գետեր, որ հոսում էին Հաղեսի
ստորերկրյա թագավորութիւն մեջ:

մինչև լուսարաց լսել Ողիսևսին: Շարունակեց իր պատմութունը Ողիսևսը:

— Հաղեսի թագավորության մեջ ես տեսա նաև Ագամեմնոն արքայի հոգին: Դառնացած գանգատվեց նա կնոջից՝ Կլիթեմնես-արայից և էդիսթոսից, որոնք Միկենեի արքային սպանել էին նրա վերադարձի օրը: Ագամեմնոնի հոգին խորհուրդ ավելց ինձ Իթակե վերադառնալուց հետո կնոջս՝ Պենելոպեին շահվատալ: Տեսա նաև Աքիլլեսի, Պատրոկլեսի, Անտիլոքոսի և Այաքս Տելամոնիդի հոգիները: Աքիլլեսին պատմեցի ես որդու՝ Նեոպտոլեմոսի մեծ սխրանքների մասին և ուրախացավ նա, թեև դառնադին գանգատվում էր մեռյալների թագավորության անուրախ կյանքից և կամենում էր վերջին ստրուկը լինել երկրում, քան արքա՝ մեռյալների հոգիների թագավորության մեջ: Ցանկանում էի հաշտվել մեծանուն Այաքսի հետ. ծանր վիրավորանք էի հասցրել նրան Աքիլլեսի գեներ ու զրահի համար վիճելիս, բայց լուելյան հեռացավ Այաքսը, առանց մի բառ իսկ ասելու: Տեսա մեռյալների դատավոր Մինոս արքային ևս: Ականատես եղա Տանտալոսի և Միզիփոսի տառապանքներին: Վերջապես ինձ մտտեցավ հերոսներից վեմագույնի՝ Հերակլեսի հոգին ևս. ինքն Օլիմպոսի վրա է, անմահ աստվածների կաճառի մեջ: Սպասեցի ևս, որ անցած-գնացած ժամանակների մեծ հերոսների հոգիները ևս մոտենան, բայց հոգիներն այնպիսի սոսկալի աղաղակ բարձրացրին, որ սոսկումնահար ճողոպրեցի գեպի նավը: Վախենում էի, թե Պերսեփոնե աստվածուհին կուղարկի ահավոր Գորգոն Մեղուզային¹:

Շուտափույթ ալեհեր Օվկիանոսի ջրերն իջեցրինք նավը և լքեցինք կիմերիացիների երկիրը: Շուտով բարեհաջող հասանք էյա կղզի՛ և, ափ իջնելով, խոր քուն մտանք:

ՌԻՄՍԵՎՍԸ ՆԱՎՈՒՄ Է ՍԻՐԵՆՆԵՐԻ ԿՂՋՈՒ ԵՎ ՍԿԻԼՍԵՏԻ ՌԻ ՔԱՐԻՔԻՍԻ ՄՈՏՈՎ

Ընտանքված է քա Նոմերոսի «Ռոխական» պոեմի:

Հաջորդ օրը էլպենորի մարմինը հոգին հանձնեցինք և բարձր շիրմարուր կանգնեցրինք վրան: Իմանալով, որ վերադարձել ենք, ծովափ եկավ կախարդ Կիրկեն ևս. նրան հեռուում էին սպասուհի-

¹ Տե՛ս Պերսեփոսի առասպելի I մասը:

ները, որոնք նավ էին բերում ընտիր ուտելիքներ և զինով լի տկեր: Մինչև գիշեր խրախճանք արինք ծովի ափին: Երբ իմ ուղեկիցները պառկեցին քնելու, կախարդ Կիրկեն պատմեց, թե ի՛նչ վտանգներ են կանգնած իմ ճանապարհին և սովորեցրեց, թե ինչպես պիտի խույս տալ դրանցից:

Հենց որ արշալույսը շառագունեց, արթնացրի բնկերներին: Նավը ծովն իջեցրինք, թիավարները մեկնե սեզմեցին թիակները և նավը բաց ծով սուրաց: Համընթաց քամին ուտեցնում էր առագաստները, հանգիստ նավում էինք ծովում: Արդեն հեռու չլր Միրենների կղզին: Եվ ևս դիմեցի ուղեկիցներին:

— Բարեկամներ՛, հիմա մենք պիտի նավենք Միրենների կղզու մոտով: Իրենց երգով նրանք գայթակղեցնում են կղզու մոտով նավող ծովագնացներին և դաժան մահվան մատնում նրանց: Նրանց ողջ կղզին լեփ-լեցուն է իրենց իսկ հողատած մարդկանց ոսկորներով: Ես ձեր ականջները փափուկ մեղրամոմով կծեփեմ, որպեսզի չլսեք նրանց երգն ու չկործանվեք, իսկ ինձ կիպպեք կայմից. կախարդ Կիրկեն ինձ թույլ է տվել լսել սիրենների երգը: Եթե ես, գայթակղված նրանց երգով, խնդրեմ քանդել իմ կապերը, ապա դուք ավելի ամուր կապոտեցեք ինձ:

Նոր էի իմ խոսքն ասել, երբ համընթաց քամին դադարեց: Ընկերներս հավաքեցին առագաստները և թիակները ձեռքներն առան: Արդեն երևում էր Միրենների կղզին: Ես մեղրամոմով ծեփեցի ուղեկիցներին ականջները, իսկ նրանք այնպես ամուր կապեցին ինձ կայմից, որ անկարող էի հողերիցս մեկն իսկ շարժել: Արագ սուրում էր մեր նավը կղզու մոտով, իսկ այնտեղից հնչում էր սիրենների կախարդական երգը:

— Օ՛, նավիր դեպի մեզ, մեծդ Ողիսևս,— այդպես էին երգում սիրենները,— դեպի մե՛զ ուղղիր նավը, որ վայելես մեր երգը: Ոչ մի ծովագնաց չի անցնում մեր կողքից, առանց լսելու մեր ախորժալուր երգը: Այդ երգը վայելելուց հետո նա հեռանում է մեզնից՝ շատ բան սովորած: Ամեն ինչ գիտենք մենք՝ և՛ ինչ են կրել հույները Տրոյայի տակ աստվածների կամքով, և՛ ինչ է կատարվում էրկրիս վրա:

Նրանց երգով դուրբված, ևս ընկերներինս նշան արի, որ արձակեն կապերս, բայց իմ հանձնարարությունը հիշելով՝ ավելի ամուր կապոտեցին ինձ: Իմ ուղեկիցները միայն այն ժամանակ հա-

պական աստվածներին աղերսել, ոչ կատարեն խնդիրքս: Աննկատելիորեն խոր քնի մեջ ընկղմեցին ինձ աստվածները: Մինչ ես քնած էի, էվրիլոքոսը համոզում է ուղեկիցներին Հելիոս աստծու նախրից մի քանի ցուլ սպանել: Նա ասում է, թե հայրենիք վերագառնալուց հետո իրենք կսիրաշահեն Հելիոս աստծո սիրտը շքեղ մի տաճար կառուցելով և մեծահարուստ պարգևներ ընծայելով նրան: Եթե աստվածները նույնիսկ կործանեն իրենց ցուլերին սպանելու համար, ապա ավելի լավ է կույ զնալ ծովի ալիքներին, քան մեռնել քաղցից:

Լսում են էվրիլոքոսին ուղեկիցներս: Ընտրում են նախրից ամենալավ ցուլերը և սպանում: Նրանց մսի մի մասը զոհաբերում են աստվածներին: Զոհաբերական ալյուրի փոխարեն վերցնում են կաղնու տերևներ, իսկ գինու փոխարեն՝ ջուր, որովհետև ալյուր և գինի շունեինք այլևս: Աստվածներին զոհ մատուցելուց հետո նրանք սկսում են միսը տապակել խարույկի վրա: Այդ ժամանակ ես արթնացա և զնացի դեպի նավը: Հեռվից զգացի տապակած մսի հոտը և կռահեցի, թե ի՞նչ է կատարվել: Սոսկումնահար գոչեցի ես:

— Օ՛, Օլիմպոսի մեծ աստվածներ, ինչո՞ւ բռն բերիք վրաս: Սոսկալի ոճիր են գործել ուղեկիցներս, սպանել են Հելիոսի ցուլերը:

Մինչ այդ, կամպետիա հավերժահարսը հայտնել էր Հելիոս աստծուն կատարվածի մասին: Ահեղ ցասամա՞ր էր լցվել մեծ աստվածը: Գանգատվել էր աստվածներին, թե ինչպես վիրավորել են իրեն իմ ուղեկիցները և սպառնացել էր ընդմիջել իշնել դժնադեմ Հագեսի թագավորությունը և այլևս լույս չտալ ո՛չ աստվածներին, ո՛չ մարդկանց: Զայրացած աստծո սիրտը շահելու համար Զևսը խոստանում է իր շանթով ջարդափշուր անել իմ նավը և կործանել ուղեկիցներին:

Զուր էի նախատում ուղեկիցներին նրանց գործած հանցանքի համար: Աստվածները սոսկալի կանխանշան տվեցին մեզ: Շարժվում էին ցուլերից մաշկած կաշիները, ասես կենդանի լինեին, իսկ միսը սրտաճմլիկ մայում էր: Վեց օր մոլեզնում էր փոթորիկը, և ամեն օր ոչնչացնում էին Հելիոսի ցուլերին իմ ուղեկիցները: Վերջապես յոթերորդ օրը դադարեց փոթորիկը, և համընթաց քամի փչեց: Իսկույն ճանապարհ ընկանք: Բայց հենց որ մեր տեսադաշ-

տից Տրինակիրա՛ կղզին անհետացավ՝ ամպրոպային Զևսն իսկույն մեր գլխավերևը սպառնալի ամպեր կուտակեց: Ունեցով, սրաթոփչ վրա հասավ Զեփիրոսը, սոսկալի փոթորիկ սկսվեց: Եղեզնատփայտի նման ջարդվեց մեր կայմը և ընկավ նավի մեջ: Ընկնելիս ջարդեց դեկապետի զուխը և նա անշնչացած ծովն ընկավ: Փայլատակեց Զևսի շանթը և տաշեղների վերածեց մեր նավը: Բոլոր ուղեկիցներին կլանեց ծովը: Փրկվեցի միայն ես: Գծվարությամբ բռնեցի կայմի մի կտոր և նավիս ողնուցը ու կապեցի իրտու: Փոթորիկը հանդարտեց: Սկսեց փչել Նոտոսը: Նա ինձ ուղիղ դեպի Քարիբդիսն էր բռնում: Այդ ժամանակ նա մոնչոցով կլանում էր ծովի ջուրը: Հազիվ հասցրի կախ ընկնել Քարիբդիսի մոտ գամվող ժայռին աճած թղենու ճյուղերից և այսպես կախ ընկած մնացի սոսկալի Քարիբդիսի վրա: Երկար սպասեցի, որ Քարիբդիսը ջրի հետ միասին դուրս ժայթքի կայմը և ողնուցը: Վերջապես դուրս լողացին նրանք Քարիբդիսի հրեշավոր երախից: Բաց թողի թղենու ճյուղերը և նետվեցի ուղիղ իմ նավի բեկորներին վրա: Այդպես փրկվեցի ես Քարիբդիսի երախում ոչնչանալուց: Զևսի կամքով փրկվեցի նաև հրեշավոր Սկիլլայից: Զնկատեց նա, թե ինչպես լողալով անցա մրրկածուփ ալիքներով:

Ինչն օր տարուբերվում էի անծայրածիր ծովում և, վերջապես, ալիքներն ինձ հասցրին Կալիպսո հավերժահարսի կղզին: Բայց դրա մասին արդեն պատմել եմ ձեզ, Ալիքնոոս և Արեոտե, պատմել եմ նաև, թե ի՞նչ մեծ վտանգներ հաղթահարելուց հետո եմ հասել ձեր կղզին: Անմիտ բան կլինեք, եթե ես նորից պատմեի այդ, իսկ ձեզ համար՝ ձանձրալի կլինեք լսելը:

Այսպես ավարտեց Ոդիսևսը իր արկածների պատմությունը:

ՈՂԻՍԵՎՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԻՓԱԿԵ

Շարադրված է բառ Հռեմոսի «Ոդիսակոն» պոեմի:

Հաջորդ օրը փեակցիները ծով դուրս գալու պատրաստություն էին տեսնում: Նավը բարձեցին Ոդիսևսին ընծայված մեծահարուստ պարգևները: Ինքը՝ Ալեքինոոսն էր գլխավորում բոլոր պատրաստությունները: Երբ ամեն ինչ պատրաստ էր, Ալեքինոոսի պալատում զոհ մատուցեցին Զևսին և հրաժեշտի խնջույք տվին: Ողի-

1 Հույները երբեմն Տրինակիրա էին անվանում այժմյան Սիցիլիան:

սենն անհամբերութիամբ սպասում էր երեկոյին: Ուրախացավ նա, երբ տեսավ, որ արևն արդեն զեպի արևմուտք է թեքվում և մոտ է երեկոն: Երբ թանձրացավ երեկոյան աղջամուղջը, Ողիսեւը հրաժեշտ տվեց Ալբինոսս արքային և զիցանման Արեւտեին ու գնաց նավը: Նրա հետեից սպասուհիները տանում էին ընծաներով լի արկղը, զինի և ուտելիքի պաշար: Նավ մտավ Ողիսեւը և պառկեց իր համար պատրաստված մահճին: Սեղմեցին թիակները հուժկու թիավարները, և նավը բաց ծով դուրս եկավ: Իսկ աստվածները խոր քուն բերին Ողիսեւին. հանդիստ քնեց նա ողջ ճանապարհին: Բազեից էլ արագ էր սուրում նավը ծովի վրայով և վաղ այգաբացին հասավ Իթակեի ափերին՝ հավերժահարսներին նվիրաբերած անձավից ոչ հեռու: Փեակցիներն զգոջութիամբ տեղափոխեցին քնած Ողիսեւին և դրին ավազի վրա: Կողքին դրին փեակցիների բոլոր ընծաները: Այնուհետև վերադարձի ճամփան բռնեցին նրանք: Տեսավ վերադարձող նավը Պոսեյդոնը և սոսկալի զայրացավ փեակցիների վրա, որ հակառակ իր կամքի Ողիսեւին հայրենիք են հասցրել: Բողոքեց Պոսեյդոնը ամպրոպային Զևսին: Զևսը եղբորը խորհուրդ տվեց փեակցիների նավը հայրենի նավահանգիստը մտնելիս բարձր մի ժայռ դարձնել: Դեպի փեակցիների կղզին սլացավ Պոսեյդոնը և սպասեց նավի վերադարձին: Ահա ծովի հեռաստանում երևաց նավը: Ափին մեծ ամբոխ էր հավաքվել նավաստիներին զիմավորելու: Ահա՛ արդեն նավահանգստի մուտքի մոտ է նավը: Հանկարծ ժայռ դարձավ այն: Կատարված հրաշքի մասին հայտնեցին Ալբինոսս արքային: Հասկացավ նա, որ Պոսեյդոնն իրագործել է իր սպառնալիքը՝ պատժել փեակցիներին ծովով պանդուխտներ փոխադրելու համար: Հավաքեց Ալբինոսը ողջ բնակչութիւնը և հրամայեց, Պոսեյդոնի գուլթը հայցելու համար զոհ մատուցել նրան, որ բարձրաբերձ ժայռով չփակի քաղաքի մուտքը: Փեակցիներն սկսեցին եռանդով աղերսել Պոսեյդոնին մեղմել իր զայրույթը և երգում տվին երբեք այլևս օտարականներին շտեղափոխել իրենց հայրենիքը:

Մինչ այդ ծովափին քնից արթնացավ Ողիսեւը: Զնանաչեց նա իր հայրենի Իթակեն, որովհետև Աթենաս-Պալլասը թանձր մառախուղով էր պատել ողջ շրջակայքը: Հուսահատութիւնը տիրեց Ողիսեւին: Կարծեց, թե փեակցիներն իրեն թողել են ինչ-որ ամայի կղզում, և սկսեց աղեկտուր ողբալ իր դառն ճակատագիրը:

Շուրջը նայեց նա ու տեսավ իր կողքին փեակցիների ընծաները: Ամեն ինչ տեղն էր: Տխուր-տրտում քայլեց ծովափով Ողիսեւը և հանդիպեց մի պերճ պատանու: Հարցրեց նրան, թե ի՞նչ երկիր է սա և հանկարծ լսեց, որ ինքն Իթակեում է: Պատանին ևս հարցրեց, թե ո՞վ է նա: Զգուշավոր Ողիսեւը պատասխանեց, թե ինքը Կրետեից եկած պանդուխտ է, որ վրեժխնդրութիւն հողի վրա սպանել է Իդոմենեւի որդուն՝ Արքիլոքոսին, և փախել այնտեղից: Փյունիկցիների նավով նա ուզում էր Պիլոս կամ Էլիս տեղից: Փյունիկցիների նավով նա ուզում էր Պիլոս կամ Էլիս ընկնել, բայց նրանք նենգաբար լքել են իրեն այստեղ, ծովափին, երբ ինքը քնած էր, և հափշտակել ողջ հարստութիւնը: Լսեց այդ պատմութիւնը պատանին, ժպտաց և հանկարծ կերպարանափոխվեց: Ողիսեւի առաջ կանգնած էր Աթենաս-Պալլաս զիցուհին: Գովեց նա Ողիսեւի զգուշավորութիւնը և խոստացավ իր օգնութիւնը: աստվածուհին ասաց, որ եթե միշտ չէ, որ օգնում էր նրան, ապա այն պատճառով միայն, որ չէր ուզում զայրացնել Պոսեյդոնին: Աթենասը Ողիսեւին պատվիրեց ոչ մեկին չասել իր ո՞վ լինելը: Բայց Ողիսեւը չէր հավատում, թե ինքը վերջապես Իթակեում է: Այդ ժամանակ Աթենասը ցրեց Իթակեն ծածկող մառախուղը և Ողիսեւը ճանաչեց իր հայրենիքը: Ընկավ գետին և սկսեց բերկրանքով հողը համբուրել: Իսկ Աթենասը թշվառ մուրացիկ դարձրեց նրան: Կնճռուովեց Ողիսեւի զեմքի և ուտերի մաշկը, նիհարեց նա, թափվեցին նրա փարթամ զանգուրները, աչքերը խամրեցին, իսկ կուպերը թեփապատվեցին: Կեղտոտ ցնցոտիներ հազցրեց նրան Աթենասը, ուսովը զցեց թոկից կապած ու կարկատաններով պատված մի պարկ, իսկ ձեռքը տվեց մի զավաղան: Ողիսեւին պատվիրեց փեակցիների ընծաները թաքցնել քարայրում և, իբրև մուրացիկ: գնալ խոզարած էվմեոսի մոտ, իսկ ինքը անմիջապես սլացավ Սպարտա, Ողիսեւի որդուն՝ Տելեմաքոսին, Իթակե բերելու:

ՈՂԻՍԵՎՍԸ ԷՎՄԵՈՍԻ ՄՈՏ

Շարադոված է բոս Լոմբոսի «Ողիսակե» պոեմի:

Երբ Ողիսեւը հասավ խոզարած էվմեոսի կացարանը, նա մենմենակ տան շեմքին նստած աշխատում էր: Տեսան շները Ողիսեւին և կատաղի հաչոցով վրան հարձակվեցին: Նրանք կպատա-

ոտոեին Ողիսևսին, եթե վաղելով վրա չհասներ էվմեոսը և շքշիք նրանց:

— Օտարակա՛ն,— ասաց Ողիսևսին էվմեոսը, մուրացիկի կերպարանքի տակ շճանաչելով նրան,— դու կմեռնեիր, և մի նոր վիշտ կխոցեր իմ սիրտը, բացի այն վշտից, որ տանջում է ինձ կորստյան մատնված Ողիսևսի համար: Բայց գնանք տուն. ես կկերակրեմ քեզ և հանգիստ առնելու միջոց կտամ:

Ողիսևսը գնաց էվմեոսի կացարանը, որ շարված էր անտաշ քարից: Բակում, տան մոտ, գտնվում էին խոզաբները: էվմեոսն ու Ողիսևսը մտան տուն և էվմեոսը օտարականին նստեցրեց դարսված ցախի վրա, որ ծածկված էր այծյամի մորթով: Ապա գնաց խոզանոցը, երկու խոճկոր բերեց, մորթեց ու տապակեց: Փայտե գավաթի մեջ գինի լցրեց էվմեոսը և այդ բոլորը դրեց սեղանին: Սեղանը գցելիս էվմեոսը դառնորեն զանդառնեց վայրագ փեսացուներից, որոնք ծովահեններից էլ վատթար են ավերում Ողիսևսի տունը և ոչնչացնում նրա բազում հոտերը: Ուշադիր լսում էր նրան Ողիսևսը և որոճում, թե ինչպե՛ս վրեժխնդիր լինի փեսացուներից: Հացկերույթի ժամանակ Ողիսևսը հարցուփորձ արեց էվմեոսին նրա տիրոջ մասին, իսկ երբ խոզարածն ասաց, թե զոհվել է իր տերը, Ողիսևսը երզվեց, որ կվերագառնա նրա տերը տուն և այն էլ՝ շատ շուտով: Բայց չհավատաց նրա երգմանը էվմեոսը: Հարցրեց էվմեոսն օտարականին, թե ո՞վ է նա: Եվ Ողիսևսը պատմեց մի հնարովի պատմություն՝ իր գլխին եկած փորձանքների մասին:

Նա պատմեց էվմեոսին, որ իրեն զրկել են ավագ եղբայրները ժառանգությունը բաժանելիս, որ ինքն ամուսնացել է հարուստ ժառանգուհու հետ և հարստացել. եղել է Տրոյայի պարիսպների տակ, իսկ հայրենիք վերադառնալուց հետո ուզեռովել է Եգիպտոս: Պատմեց, թե ինչպե՛ս եգիպտացիներն սպանել են գրեթե իր բոլոր ուղեկիցներին՝ իրենց քաղաքը կողոպտելու համար: Բայց ինքը փրկվել է՝ Եգիպտոսի արքային խնդրելով խնայել իրեն: Յոթ տարի իբր թե ապրել է Եգիպտոսում, իսկ այնտեղից ճանապարհվել Փյունիկիա՝ Փյունիկցիներից մեկը համոզում է նրան կիբիա մեկնել: Նա գնում է փյունիկցու հետ, բայց Ջևան իր շանթով փրշրում է նրանց նավը: Փրկվում է ինքը միայն, ավիքը նրան շարք-

տում է թեսպրոտների՝ երկրի ամբը: Այդ կզգում էլ թեսպրոտների արջան իբր թե պատմել է իրեն, թե Ողիսևսը հարուստ ընծանեթով հայրենիք է վերադառնում: Վերջապես թեսպրոտների նավով ճանապարհվում է Գուլիբիոն: Բայց թեսպրոտները մտադրվել էին իբրև սարուկ վաճառել նրան: Մեծ դժվարությամբ փախչում է նա թեսպրոտներից այն ժամանակ, երբ հասել էին իթակևի ամբերին: Հավատաց այդ հնարովի պատմությանը էվմեոսը, չհավատաց միայն այն բանին, ինչ օտարականը լսել էր թեսպրոտների արքայից Ողիսևսի մասին: Նա հանդիմանեց օտարականին, որ նա Ողիսևսի մասին պատմում է իթակևում նրա հորագառներից պարզև ստանալու նպատակով:

Բայց Ողիսևսն այսպես ասաց.

— Լսի՛ր, էվմեոս, եթե Ողիսևսը վերադառնա, ապա խոստացիր նոր զգեստ տալ ինձ, իսկ եթե խաբեմ քեզ, ապա կանչիր հովիվներին և ժայռի գազաթից ծովը նետիր ինձ, որ հետագայումն էլ զանազան թափառաշրջիկներ չհանդգնեն ստեր հորինել:

Շուտով հոտի հետ վերադարձան հովիվները: Մի պարարտ խոզ մորթեցին նրանք ու նստեցին ընթրելու: Հնթրիքի ժամանակ ամենայալ պատառով պատվեց էվմեոսն օտարականին և իբրև հյուր առաջինը նրան տվեց գինու գավաթը:

Երբ նրանք հանգիստ ընթրում էին, դրսում անձրևախառն հողմ բարձրացավ: Յրտեց: Ողիսևսը թիկնոց իսկ շուներ քնելիս վրան գցելու համար: Եվ նա էվմեոսին ու հովիվներին պատմեց այնպիսի մի պատմություն, որ հասկանան ակնարկը և թիկնոց տան իրեն:

— Լսի՛ր, էվմեոս, լսեցեք և զուք,— այսպես սկսեց Ողիսևսը,— մի անգամ Տրոյայի տակ Մենելաոսը, Ողիսևսն ու ես պառկած էինք գարանակալած: Յուրա էր գիշերը եղեգնի թփուտներում, մեծ փաթիլներով ձյուն էր տեղում, իսկ ես տանն էի մոռացել թիկնոցս. վերջապես ասացի այդ Ողիսևսին: Նա իսկույն խորամանկ մի բան հնարեց: Տեղից ելնելով արթնացրեց կողքին պառկած զորականներին ու ասաց, թե վատ երազ է տեսել և վախե-

1 Թեսպրոտներ—էպիրոսում ապրող ժողովուրդ: Ողիսևսը հիշում է թեսպրոտների և Գուլիբիոնի մասին, որ ավելի համոզիչ զարձնի իր պատմությունը, քանի որ իթակևն ընկած էր Թեսպրոտիայի գեպի Գուլիբիոն՝ Ակարանիսյում գտնվող այդ քաղաքը տանող ճանապարհին:

նում է, որ այդքան հեռացել ենք նավերից. հարկավոր է մեկին ուղարկել Ազամմանոնի մոտ, որ օգնական ուժ ուղարկի Իսկույն և նթ վեր կացավ ազամիկներից մեկը, վրայից նետեց թիկնոցը և գնաց գեպի նավերը: Իսկ ես վերցրի թիկնոցը, գցեցի վրաս և քնեցի մինչև լուսաբաց:

Հասկացավ ակնարկը էվմետը: Ողիսեսի մահի՞նը գցեց կրակի մոտ, տակը գցեց ոչխարի և այծի մորթի, իսկ վրան գցելու համար տվեց իր թիկնոցը, որ ինքը ձմեռն էր հագնում: Քաղցր քուն մտավ Ողիսեսը: Իսկ էվմետը տանը շմնաց: Ուտից կախելով սուրբ, վերցնելով նիզակն ու վրան աննկով թիկնոցը, գնաց գեպի հտար, որ արածում էր լեռան ստորոտում:

ՏԵԼԵՄԱՔՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԻԹԱԼԻԱ

Եւրաղիված է բոս Հովեոսի «Ռիթաական» պոեմի:

Մուրացիկ զարձած Ողիսեսին լքելով, Աթենաս-Պալլաս դիցուհին ճանապարհ ընկավ գեպի Սպարտա և շատ շուտով հասավ այնտեղ: Գնաց նա Մենելաոսի պալատը, ուղիղ այն օթարանը, ուր քնած էին Տելեմաքոսն ու Պիսիստրատեսը: Հանգիստ քնել էր Պիսիստրատեսը, իսկ Տելեմաքոսի քունը խոռոված էր: Քնի մեջ անգամ հոր մասին էր մտածում Տելեմաքոսը և վշտանում նրա համար: Մոտեցավ Աթենասը Ողիսեսի որդու սնարին և ասաց նրան.

— Ժամանակն է, Տելեմաքոս, վերադառնալ հայրենիք, ուր թողել ես ողջ ունեցվածքդ: Վայրագ փեսացուները կողոպտում են ունեցվածքդ, ամեն ինչ կհափշտակեն նրանք, եթե չվերադառնաս: Մտածիր նաև, թե ի՞նչ փոփոխամիտ են կանայք: Եթե մայրդ համաձայնի ամուսնանալ էվրիմաքոսի հետ, ապա կմոռանա քեզ և հոգ կտանի երկրորդ ամուսնուց ունեցած երեխաների մասին: Ետապիր տուն, բայց հիշիր մի բան. փեսացուները թակարդ են լարել քեզ համար: Գրանից խույս տալու համար նավիր գիշերը և անցիր կղզու մոտով, իսկ առավոտյան, լուսադեմին, մի ծածուկ տեղ՝ Իթակեի ափը դուրս եկ: Հետո նավը քաղաք ուղարկիր, իսկ ինքդ գնա՝ խոզարած էվմետոսի մոտ և այնտեղից լրաբեր ուղարկիր Պենելոպեին՝ հայտնելու գալստյանդ մասին:

Այդ ասելուն պես հեռացավ Աթենասը:

Տելեմաքոսն իսկույն արթնացրեց Պիսիստրատեսին և շտապեցրեց Պիլոս վերադառնալ: Բայց Պիսիստրատեսը Տելեմաքոսին

համոզեց սպասել լուսադեմին: Չէր կարելի ստանց հրամեշտ տալու հեռանալ Մենելաոսից: Լսեց Տելեմաքոսը Պիսիստրատեսի խորհուրդը: Ետևով երկինք սավառնեց արշալույսի աստվածուհի էոսը: Լույսը բացվեց: Պատանիների մոտ եկավ Մենելաոս արքան: Ողիսեսի որդին Մենելաոսին դիմավորեց դռների մեջ և խընդքան: Ողիսեսի որդին Իթակե վերադառնալ: Մենելաոսը շպահեց Տելեմաքոսին, միայն խնդրեց սպասել, մինչև պատրաստեն ընծաները, իսկ մինչ այդ, ճանապարհ ընկնելուց առաջ, խնդրեց կազդուրվել կերակուրներով:

Մենելաոսը գնաց ծառաներին հրամայելու, որ շտապ հացկերույթի պատրաստություն տեսնեն: Այնուհետև կանչեց Հեղինեին և որդուն՝ Մեգապենեթեսին, և նրանց հետ գնաց իր զանձարանը: Այնտեղ նա ընծաներ ընտրեց Տելեմաքոսի համար. չքնաղագեղ Հեղինեն ևս մի ընծա ընտրեց՝ իր ձեռքով գործած շքեղ մի շրջազգեստ Տելեմաքոսի ապագա հարսնացուի համար:

Կազդուրվելով կերակուրներով և ընդունելով Մենելաոսի ընծաները, պատանի հերոսները ճանապարհի պատրաստություն տեսան: Մենելաոսը գինու գավաթը ձեռքին դուրս եկավ պալատից, աստվածներին ձոնեց գինին և պատանիներին խնդրեց իր ողջույնը հղել ձերունի նեստորին: Երբ Տելեմաքոսը երկանվին բարձրացավ և ձեռքն առավ երասանները, հանկարծ պալատից վեր սավառնեց մի արծիվ, ճիրանների մեջ առած մի սագ: Մենելաոսի սպասուհիները աղաղակելով վազում էին նրա հետևից: Բայց նա վեր սուրաց և անհետացավ պալատի աջ կողմում: Բուրբը կռահեցին, որ դա աստվածների կանխանշանն է, իսկ Տելեմաքոսը խնդրեց Մենելաոսին բացատրել այդ կանխանշանը: Մտասուզվեց Սպարտայի արքան: Նրա փոխարեն չքնաղ Հեղինեն պատասխանեց.

— Լսեցե՛ք, թե ինչ կասեմ ես: Այդ ինձ օլիմպական աստվածները ներշնչեցին: Ինչպես արծիվը հափշտակեց սագը և պատառ պատառ արեց նրան, այնպես էլ Ողիսեսը կվերադառնա տուն և կսպանի փեսացուներին: Գուցեև արդեն վերադարձել է և փեսացուների կործանումն է որոճում:

— Օ՛հ, չքնաղ Հեղինե, — գուցե Տելեմաքոսը, — եթե մեծն Գևը ի կատար ածի այն, ինչ ասում ես դու, ապա ես տուն դառնալուց հետո ասածո պես կպաշտեմ քեզ:

Այս խոսքերի հետ Տելեմաքոսը մտրակեց նժուլդները և սուրացին նրանք Պիլոս տանող ճանապարհով: Ըննապարհին պատա-

Նիկեոսը գիշերեցին Փերնում, հերոս Դիոնիսի մոտ, իսկ հաջորդ օրը ժամանեցին Պիլոս։ Տելեմաքոսը խնդրեց Պիսիատրատեսին պալատ գնալ Նեստորի մոտ՝ վարսենում էր Ողիսևսի սրղին, որ մի օր էլ ձերունին կուշացնի իրեն։ Համաձայնեց Պիսիատրատեսը և ուղիղ դեպի նավը տարավ ընկերոջը, թեև գիտեր, որ գրանից դժգոհ կըմնա հայրը։ Պիսիատրատեսը նույնիսկ սկսեց շտապեցնել Տելեմաքոսին, որ շուտ ծով դուրս գան, որպեսզի նրանց դալն իմանալով, ծովափ չգա Նեստորը և ետ շարահի նրան փութով կանգնեցրին կայմը Տելեմաքոսի ուղեկիցները և արդեն ուղում էին լքել ամբը, երբ նավին մոտեցավ դուշակ Թեոկլիմենոսը։ Նա փախել էր Արգոսից, Էրկյուզ կրելով իր գործած սպանությունների վրեժխնդրությունը։ Թեոկլիմենոսը Տելեմաքոսին խնդրեց նավի վրա առնել իրեն և Իթակի տանել, այնտեղ չէին հետապնդի նրան սպանվածի բարեկամները։ Համաձայնեց Տելեմաքոսը և նավի վրա առավ Թեոկլիմենոսին։ Արագորեն ափից հեռացավ նավը և համընթաց քամուց քշվելով՝ դեպի բաց ծով սուրաց։

Այդ ժամանակ Ողիսևսը դեռ էլ մեծոսի մոտ էր։ Առավոտը Ողիսևսն ուղում էր քաղաք գնալ ողորմություն մուրալու, նույնիսկ ուղում էր փեսացուներին խնդրել, որ ծառայություն վերցնեն իրեն։ Բայց էլ մեծոսը համոզեց շանել այդ բանը, պատմելով Ողիսևսին, թե ի՞նչ վայրագ ու դաժան են փեսացուները։ Եվ Ողիսևսն սկսեց հարցուփորձ անել հոր՝ Լաերտի և կնոջ՝ Պենելոպեի մասին։ Ամեն ինչ պատմեց նրան էլ մեծոսը չկասկածելով, որ դա պատմում է ոչ թե օտարականի, այլ իրեն՝ Ողիսևսին։ Վերջապես Ողիսևսը խնդրեց էլ մեծոսին պատմել, թե ինքն ինչպե՞ս է ընկել Իթակի։ Սիրով համաձայնեց էլ մեծոսը և պատմեց Ողիսևսին, որ ծնունդով Սիրուս կղզուց է, Կոնեսիոս արքայի որդին։ Մի անգամ այդ կղզին են գալիս փյունիկցի վաճառականները և համոզում նրա հոր ստրկուհուն, որ նույնպես փյունիկուհի էր, գողանալ մանկանը հորից, խոստանալով դրա փոխարեն հայրենիք վերադարձնել նրան։ Համաձայնում է ստրկուհին, թաքուն դուրս է հանում նրան պալատից և տանում փյունիկցիների նավը։ Ծով դուրս եկան փյունիկցիները, ուղևորվելով դեպի Փյունիկիայի ափերը։ Վեց օր նավում էին նրանք։ Յոթերորդ օրը Արտեմիս աստվածուհին իր նետով խոցեց դավաճան ստրկուհուն։ Իսկ փյունիկցիները, հասնելով Իթակիի ափերին, փոքրիկ էլ մեծոսին վաճառեցին Լաերտին։

Լսեց ուշադրությամբ էլ մեծոսի պատմությունը Ողիսևսը։ Ուշ

գիշեր էր արդեն, երբ էլ մեծոսն ավարտեց իր պատմությունը։ Պառկեցին քնելու Ողիսևսն ու էլ մեծոսը, բայց երկար շունեց նրանց քունը, շուտով երկնքում վառվեց արշալույսը և նրանք պետք է լքեին իրենց մահիճները։

Այդ առավոտ Իթակի ժամանեց Տելեմաքոսը։ Նա, ինչպես Աթենասն էր պատվիրել, ափին մոտեցավ մի ծածուկ տեղ, իջավ նավից, խնդրեց ընկերոջը՝ Պերեոսին, առժամանակ ապաստան տալ Թեոկլիմենոսին, իսկ ինքը կամեցավ էլ մեծոսի մոտ գնալ։ Հանկարծ նրանց գլխավերևում երևաց մի բազե՝ աղավլին ճիրանների մեջ առած։ Բռնեց Տելեմաքոսի ձեռքը Թեոկլիմենոսը և կամացուկ ասաց նրան.

— Սա երջանիկ կանխանշան է, Տելեմաքոս։ Չկա ավելի հզոր մի առհմ Իթակեում, քան քոնը։ Հավիտյան կիշխեք դուք ողջ Իթակեում։

Ուրախացրեց Տելեմաքոսին այդ կանխագուշակությունը։ Իր ուղեկիցներին նավով քաղաքային նավահանգիստ ուղարկեց նա, իսկ ինքը ուրախ-զվարթ գնաց խոզարած էլ մեծոսի մոտ։

ՏԵԼԵՄԱՔՈՍԸ ԳԱԼԻՍ Է ԷԿՄԵՆՈՍԻ ՄՈՏ։

ՈՌԻՍԵՎՍ ԵՎ ՏԵԼԵՄԱՔՈՍ։

Շարադրված է ըստ Համերոսի «Ողիսակաե» պոեմի։

Առավոտը վաղ արթնացան Ողիսևսն ու էլ մեծոսը։ Իրենց համար նախաճաշ պատրաստեցին և կազդուրվեցին ուտեստով։ Հանկարծ էլ մեծոսի շները ուրախ հաշոցով ընդառաջ վազեցին մոտեցող Տելեմաքոսին և սկսեցին քծնել նրան։ Ողիսևսը քայլերի ձայն լսեց, և նույն պահին էլ մեծոսի կացարանի մուտքի մոտ հայտնվեց ինքը Տելեմաքոսը։ Նրան ընդառաջ վազեց խոզարած էլ մեծոսը Գրկեց ներս մտնող Տելեմաքոսին, և բերկրանքի արտասուք թափելով, սկսեց համբուրել նրան։ Այնպես էր ուրախացել էլ մեծոսը Տելեմաքոսի վերադարձով, ինչպես հայրն է ուրախանում երկար անջատումից հետո միակ որդուն տեսնելով։ Ողիսևսը վեր կացավ, ուղում էր իր տեղը զիջել ներս մտնող որդուն։ Սիրավիր նրան զիմեց Տելեմաքոսը և ասաց.

— Նստի՛ր, օտարական, մի՛ անհանդատանա, էլ մեծոսն ինձ նստելու տեղ կտա։

էլ մեծոսը աճապարանքով տեղ պատրաստեց Տելեմաքոսի հա-

մար ու զինի տվեց նրան: Ուտեչու ժամանակ Տելիմաքոսը էվմեոսին հարցրեց, թե ո՞վ է այդ օտարականը, ո՞վ է նրան Իթակի բերել: Էվմեոսը պատմեց այն հնարովի պատմությունը, որ Ողիսևոսն էր պատմել, և խնդրեց օտարականին տեղ տալ իր տանը: Բայց Տելիմաքոսը չէր կարող խոստանալ այդ: Ինչպե՞ս կարող էր նա, դեռ այդքան երիտասարդ, զուլս հանել փեսացուների վայրագ ամբոխից: Նա կարող էր խոստանալ միայն, որ օտարականին նոր զգեստ և սուր կուղարկի իբրև ընծա և կօգնի հայրենիք վերադառնալու: Կարեկցեց Ողիսևոսը Տելիմաքոսին և, իբր թե բանից անտեղյակ, սկսեց հարցուփորձ անել փեսացուների վայրագությունների մասին և թե թշնամաբար չե՞ն վարվում նրա հետ Իթակիի ժողովուրդը և բարեկամները:

— Ավելի լավ է սպանվել սեփական տանը՝ անզուսպ փեսացուներին ուժով դուրս անելիս, քան տանել վիրավորանքները և տեսնել, թե ինչպե՞ս են կողոպտում ունեցվածքդ, — այս խոսքով ալվարտեց իր հարցուփորձը Ողիսևոսը:

Բայց ի՞նչ կարող էր պատասխանել դրան Տելիմաքոսը. կարող էր ասել միայն, թե որքան դժվար է իրեն՝ միակ որդուն, կովել փեսացուների կատաղի ամբոխի դեմ, որոնք մահ են նյութում իր դեմ: Տելիմաքոսը վախենում էր նույնիսկ հաղորդել Պենելոպեին իր վերադարձի մասին: Նա էվմեոսին քաղաք ուղարկեց, և պատվիրեց գաղտնաբար հայտնել մօրը, որ ինքը վերադարձել է, որպեսզի փեսացուները շիմանան այդ: Իսկ ծերունի կաերտին, որը ևս սաստիկ անհանգստանում էր թոռան ճակատագրով, պիտի հաղորդեր Պենելոպեն, հավատարիմ ստրկուհիներից մեկին առաքելով նրա մոտ:

Էվմեոսը աճապարեց կատարել Տելիմաքոսի հանձնարարությունը: Հենց որ նա դուրս գնաց, Տելիմաքոսից աննկատ, Ողիսևոսի առաջ հայտնեց Աթենաս-Պալլաս դիցուհին. խրճիթից դուրս կանչեց նա Ողիսևոսին և ցանկապատի մոտ վերադարձրեց նրա նախկին կերպարանքը՝ գավազանը հպելով, և պատվիրեց Տելիմաքոսին հայտնել իր ով լինելը:

Երբ Ողիսևոսը խրճիթ վերադարձավ, զարմանքով նրան նայեց Տելիմաքոսը. նրան թվաց, թե հայտնվել է անմահ աստվածներից մեկը՝ այնքան գեղեցիկ ու վեհաշուք տեսք ունեւր Ողիսևոսը:

— Օ՛, օտարական, — բացականչեց Տելիմաքոսը, — ուրիշ կերպարանքով ես հայտնվում այժմ ինձ: Գու մեկն ես անմահ

աստվածներից: Գթա՛ մեղ, Մեծահարուստ զոհեր կմատուցենք քեզ: — Ո՛չ, աստված չե՛մ ես, — պատասխանեց Ողիսևոսը: — Ես քո հայր Ողիսևոսն եմ, ի սեր որի այդքան վիրավորանքներ ես կրել ըիրտ փեսացուներից:

Միրով գրկեց Ողիսևոսն իր որդուն և արցունքն աչքերին համբուրեց նրան: Բայց Տելիմաքոսը չէր կարող իսկույն հավատալ, որ իրոք, վերջապես, հայրենիք է վերադարձել հայրը: Զէ՞ որ հենց նոր էլ տեսել նրան ծեր, տարաբախտ պանդուխտի կերպարանքով: Ինչպե՞ս կարող էր փոխվել այդպես, մի՞թե կարող է մահկանացուն այդպիսի հրաշքներ գործել: Կասկածանքի մեջ ընկավ Տելիմաքոսը: Ողիսևոսը ցրեց այդ կասկածները, ասելով, որ Աթենաս-Պալլաս դիցուհին էր պանդուխտի կերպարանք տվել նրան, նա էլ ես է տվել իր իսկական կերպարանքը: Հավատաց Տելիմաքոսը, որ իր առաջ կանգնած է հայրը: Գրկեց հորը: Բերկրանքի արցունքները թափվում էին նրանց աչքերից: Վերջապես, երբ անցավ տեսակցություն հրճվանքի առաջին պահը, Տելիմաքոսն հարցրեց հորը, թե ինչպե՞ս է հայրենիք վերադարձել, ո՞վ է նրան Իթակի բերել ճեպընթաց նավով: Պատմեց Ողիսևոսը որդուն, թե ինչպե՞ս են բերել նրան փեակցիները, թե ինչպե՞ս փեակցիների ընծաները թաքցրել է խոր քարայրում և ինչպես Աթենաս դիցուհին հանդիպել է նրան և ուղարկել էվմեոսի մոտ: Ողիսևոսն սկսեց Տելիմաքոսին հարցնել փեսացուների մասին: Նա այրվում էր վրեժխնդիր լինելու տենչով և ուզում էր վրեժ լուծել նրանցից բոլոր վիրավորանքների համար: Հնարավո՞ր բան է դա: Զէ՞ որ շատ են փեսացուները: Բոլոր տեղերից հավաքվել են նրանք: Հարյուր տասնվեց հոգի են նրանք: Մի՞թե կարող են երկուսով՝ Ողիսևոսն ու Տելիմաքոսը, բացահայտ պայքարի ելնել այդ ամբոխի դեմ: Բայց հզոր օգնականներ ունի Ողիսևոսը, որոնց հետ անկարող են կովել մահկանացուները, որքան էլ շատ լինեն նրանք, շանթարձակ Զևսը և նրա դուստրը՝ Աթենաս-Պալլասը:

Հույս դնելով նրանց օգնության վրա, Ողիսևոսը վճռեց գործել այսպես: Տելիմաքոսը պիտի զնար քաղաք, փեսացուների մոտ, իսկ նրա հետևից, էվմեոսի հետ միասին, մուրացիկ պանդուխտի կերպարանքով կգնար ինքը, իբր թե ողորմություն մուրալու: Ի՞նչ վիրավորանք էլ հասցենեն նրան փեսացուները՝ պիտի տանի Ողիսևոսը: Հետո, տրված նշանի համաձայն, Տելիմաքոսը դուրս պիտի տանի զենքերը, թողնելով իր և հոր զենքերը միայն: Գլխավորն այն

է, որ խորին գաղտնիք պահեն Ողիսևսի վերադարձը, որպեսզի ոչ ոք չիմանա այդ մասին, նույնիսկ Պենելոպեան, որովհետեւ բոլոր ստրուկներն ու ստրկուհիները չեն, որ հավատարիմ են մնացել Ողիսևսին: Երկար խորհուրդ էին անում Ողիսևսի և Տելեմաքոսը:

Այդ ժամանակ քաղաք հասավ Տելեմաքոսի նաժը ևս: Նրա ուղեկիցներն իսկույն բանբեր ուղարկեցին Պենելոպեի մոտ՝ հաղորդելու որդու վերադարձը: Հենց պալատի մոտ էլ մեծ սահմանակցից այդ բանբերին: Միասին Պենելոպեի մոտ մտան նրանք: Բարձրաձայն հայտարարեց բանբերը Պենելոպեին որդու վերադարձը: Իսկ էլ մեծ սահմանակցից թեքվելով դեպի նա, հաղորդեց այն բոլորը, ինչ հանձնարարել էր Տելեմաքոսը: Ուրախացավ Պենելոպեան, որ կրկին իր հետ է որդին:

Արագորեն փեսացուներին հասավ Տելեմաքոսի վերադարձի լուրը: Երկուրը տիրեց նրանց: Հավաքվեցին բոլոր փեսացուները հրապարակում և սկսեցին խորհուրդ անել, թե ի՞նչ անեն: Անտինոսը խորհուրդ տվեց սպանել Տելեմաքոսին, որովհետև նա՛ է իրենց միակ խոչընդոտը: Բայց Ամփինոմոսը չհամաձայնեց դրան: Վախենում էր շարժել Զևսի զայրույթը, և խորհուրդ տվեց նախ հարցում անել աստվածներին: Եթե բարենպաստ կանխանշան տան աստվածները, ապա պատրաստ էր սպանել Տելեմաքոսին, իսկ եթե ոչ՝ ապա մյուսներին էլ Ամփինոմոսը խորհուրդ չէր տալիս ձեռք բարձրացնել Տելեմաքոսի վրա: Համաձայնեցին փեսացուները Ամփինոմոսի հետ և գնացին Ողիսևսի ապարանքը:

Մունեսիկ Մեղոնը Պենելոպեին հաղորդեց փեսացուների դիտավորությունը: Գուրս եկավ Պենելոպեան և դառն նախատինք տվեց նրանց նենգամտության համար: Հատկապես հանդիմանեց նա Անտինոսին, որի հորը մի ժամանակ Ողիսևսը փրկել է ժողովրդի ցատումից: Էվրիմաքոսն սկսեց հանդատացնել Պենելոպեին: Նա ասաց, որ երբեք փեսացուները ձեռք չեն բարձրացնի Տելեմաքոսի վրա: Բայց, չնայած այդպես խոսելուն, էվրիմաքոսը մտորում էր Տելեմաքոսին կործանելու մասին միայն:

Մինչ այդ, էլ մեծ սահմանակցից վերադարձավ իր խրճիթը: Աթենաս դիցուհին Ողիսևսին կրկին պանդուխտ դարձրեց, որպեսզի էլ մեծ սահմանակցից նրան: Պատմեց խոզարածը, թե ի՞նչ է տեսել քաղաքում և սկսեց ընթրիք պատրաստել բոլորի համար: Հագեցան բոլորը և պանդուխտն քնելու:

Շարադրված է ըստ Հովնատի «Ողիսևսի» պոեմի:

Հաջորդ օրը, դեռ նոր էր երկնի եզրը ներկվել արշալույսի վառ բոսորով, երբ Տելեմաքոսը քաղաք ճանապարհովեց: Գնալիս նա էլ մեծ սահմանակցից քաղաք ուղեկցել օտարականին, որպեսզի մուրա այնտեղ: Երբ տուն եկավ Տելեմաքոսը, առաջինը իր ծեր դայակ էվրիկեային հանդիպեց: Անպատմելի ուրախացավ նա, տեսնելով ներս մտնող Տելեմաքոսին և լացով գրկեց նրան: Ողիսևսի որդուն դիմավորելու եկան բոլոր ստրկուհիները: Կսելով, որ վերադարձել է որդին, դիմավորելու գուրս եկավ Պենելոպեան ևս: Գրկեց որդուն և սկսեց հարցուփորձ անել, թե ի՞նչ է իմացել ճանապարհորդության ընթացքում: Բայց ոչինչ չպատմեց Տելեմաքոսը, նա շտապում էր քաղաքային հրապարակ գնալ և թեոկլիմենոսին իր տուն բերել:

Երբ Տելեմաքոսը քաղաքային հրապարակ եկավ, փեսացուների ամբոխը շրջապատեց պատանուն: Նրանցից ամեն մեկը շտապում էր մի լավ բան ասել նրան, իսկ սրտի խորքում Տելեմաքոսի կործանումն էին որոճում: Շուտով հրապարակ եկան Թեոկլիմենոսը՝ Պերեոսի հետ, որ ապաստան էր տվել նրան, բանի դեռ Տելեմաքոսը քաղաքում չէր:

Տելեմաքոսն իսկույն Թեոկլիմենոսին իր տուն հրավիրեց և գնաց նրա հետ միասին: Տանը սքանչելի մարմարե ավազաններում լողանք ընդունեցին նրանք և նստեցին հացկերույթի: Նրանց մոտ եկավ Պենելոպեան և իր գործվածքը ձեռքին նստեց նրանց սեղանի մոտ: Տելեմաքոսը մտքը պատմեց Պելոս և Սպարտա կատարած իր ճամփորդության մասին: Տրամեց Պենելոպեան, որ ոչինչ չէր իմացել Տելեմաքոսը հոր մասին: Բայց Թեոկլիմենոսն սկսեց սփոփել նրան. նա հավատացնում էր, որ Ողիսևսն արդեն Իթակհոն է, որ նա երեխ թաքնված է մի տեղ, որպեսզի ստույգ նախապատրաստի փեսացուների կործանումը: Թեոկլիմենոսն ասաց, որ եթե Ողիսևսը վերադարձած չլիներ Իթակհե, ապա աստվածները կանխանշան չէին ուղարկել Տելեմաքոսի վերադարձի ժամանակ:

Մինչ Պենելոպեան զրույց էր անում Տելեմաքոսի և Թեոկլիմենոսի հետ, փեսացուները բակում զվարճանում էին սկսվառակ և նիզակ նետելով: Շուտով հովիվները քշեցին այժևրն ու ոչխարները փեսա-

ցուների խնջուլքի համար, խմբով Ողիսևսի պալատը մտան փնսացուները և պատրաստվեցին խրախճանքի: Մեղոն մուկետիկը խրախճանքի սրահը կանչեց նրանց:

Մինչ այդ, Ողիսևսն ու էվմենուր դանդաղ քայլերով դեպի բազար էին գնում: Ձեռնափայտին հենվելով, անդոր մուրացիկի կերպարանքով, քայլում էր Ողիսևսը: Արդեն հեռու շէին նրանք քաղաքից, երբ աղբյուրի մոտ, որտեղից քաղաքի բնակիչները ջուր էին վերցնում, նրանց հանդիպեց հովիվ Մեղանտիոսը: Տեսնելով էվմենուսին պանդուխտի հետ, հանդուգն Մեղանտիոսն սկսեց ծագրել նրան և գոչեց.

— Ահա՛ մի սրիկա ուղեկցում է մյուսին: Տխմար էվմենոս, այդ ո՞ւր ես տանում այդ մուրացիկին: Տես հա՛, փնսացուները կշարդեն դրա կողերը, հենց որ հանդգնի երևալ Ողիսևսի տանը:

Այդպես գոռաց Մեղանտիոսն ու ոտքով ուժգին հարվածեց Ողիսևսին, բայց Ողիսևսը տեղից չշարժվեց անգամ: Հազիվ զրսպեց իրեն, որ շսպանի լկտիին, զլուխը գետնովը տալով: էվմենուր սպառնաց նրան, որ վատ կլինի նրա վիճակը, եթե Ողիսևսը վերադառնա: Բայց Մեղանտիոսը կոպտարար պատասխանեց, թե նա զուր է հույս կապում Ողիսևսի վերադարձի հետ, թե շուտով Տելեմաքոսին էլ կսպանեն փնսացուները և ինքը, էվմենուր, կվաճառվի որևէ օտարերկրացու: Այդպես սպառնաց Մեղանտիոսն ու հեռացավ:

Դանդաղ քայլերով շարունակեցին իրենց ճանապարհը էվմենոսն ու Ողիսևսը: Վերջապես մոտեցան Ողիսևսի ապարանքին: Այնտեղից երգեցողության ու կիթառի ձայն էր հնչում: Փնսացուների խրախճանքի ամենաթիվ պահն էր: էվմենոսն ու Ողիսևսը բարձրաձայն զրուցելով բակը մտան: Այնտեղ, գոմաղբի կույտի վրա, հենց դարպասի մոտ, պակած էր Ողիսևսի ծեր շունը, Արգուսը: Հազիվ էր լսել նա տիրոջ ձայնը, որ սրեց ափանջները: Զգաց իր տիրոջը հավատարիմ Արգուսը, խաղացրեց պոչը և ուղեց վեր կենալ տեղից, որ ընդառաջ վազի, բայց ուժ չունեի տեղից շարժվելու: Բոլորից լքված ու ծերացած՝ սատկում էր շունը: Ծանաչեց իր հավատարիմ Արգուսին Ողիսևսը ևս: Արցունքի մի կաթիլ գորովեց նրա աչքից. շտապով սրբեց ձեռքով արտասուքը, որ ընկատի էվմենուր: Մի շարժում էլ արեց Արգուսը և սատկեց: Քսան տարի սպասել էր նա իր տիրոջը և իսկույն ճանաչեց նրան, նույնիսկ մուրացկանի կերպարանքով:

էվմենուր առաջինը մտավ խրախճանքի դահլիճը և նստեց Տելեմաքոսի մոտ: էվմենուսից հետո ներս մտավ նաև Ողիսևսը: Բայց շղնաց դեպի հյուրերը, այլ նստեց մուտքի մոտ, դռանը հենված: Տելեմաքոսն իսկույն հաց ու միս վերցրեց, հրամայեց տալ Ողիսևսին և ասել, որ համարձակ մոտենա հյուրերին և մուրա: Վերկացավ Ողիսևսը և սկսեց մեկ-մեկ մոտենալ հյուրերին, Բոլորը տվին ողորմություն, մերժեց մեկը միայն՝ Անտինոոսը: Բայց Ողիսևսը համառությամբ ողորմություն էր խնդրում նրանից: Զայրացավ դաժան, կոպիտ Անտինոոսը և հեռացրեց Ողիսևսին: Հեռացավ Ողիսևսը նրանից և այսպես ասաց.

— Այո՛, տեսնում եմ ես, որ խելքդ դեմքիդ պես լավը չէ, եթե ափսոսում ես մի շոր հացի կտոր տալ իսկ, այն էլ ուրիշի՛ հացից.

Բռնկվեց զայրացած Անտինոոսը, պոկեց տեղից նստարանը, սղջ ուժով շարժեց Ողիսևսի վրա և դիպցրեց մեջքին: Բայց Ողիսևսը շերերաց անգամ այդ ուժգին հարվածից, նա կանգնել էր անսասան ժայռի նման, միայն ահեղաբար թափ տվեց նա գլուխը, կրկին նստեց դռան մոտ և ասաց.

— Ցավ չէ, եթե մեկը հանդուրժում է ծեծը՝ իր ունեցվածքը պաշտպանելիս: Եթե միայն վրեժխնդրության աստվածուհիները՝ էրինիները, պաշտպանում են նաև աղքատներին, ապա ամուսնության փոխարեն Անտինոոսին այստեղ մա՛հ է սպասում:

Ավելի զայրացավ Անտինոոսը լսելով Ողիսևսի խոսքը, բայց փնսացուներն սկսեցին հանդիմանել նրան օտարականին վիրավորելու համար, մանավանդ, որ շատ է պատահել, երբ պանդուխտի կերպարանքով մարդկանց մոտ են եկել անմահ աստվածները: Տելեմաքոսի համար ևս ցավալի էր տեսնել, թե Անտինոոսն ինչպես է անարգում իր հորը, բայց, մտաբերելով պայմանը, զսպում էր ցասումը:

Պենելոպեն ևս իմացավ, թե ինչպես Անտինոոսը վիրավորել է տարաբախտ պանդուխտին: Ավելի ևս ատեց նա հանդուգն Անտինոոսին, իր մոտ կանչելով էվմենուսին, նա հարցուփորձ արեց օտարականի մասին, իսկ երբ իմացավ, որ Ողիսևսը մի ժամանակ հյուր է եղել օտարականի հոր մոտ, բացականչեց.

— Օ՛, հավատում եմ ես, որ դաժանորեն վրեժխնդիր կլինեն փնսացուներից Ողիսևսն ու Տելեմաքոսը, երբ Ողիսևսը վերադառնա:

Հենց որ այդպես ասաց Պենելոպեն, Տելեմաքոսը բարձրա-

ձայն փոշտացու Այդ նախանշանը ուրախացրեց Պենելոպեին, այժմ արդեն նա համոզված էր, որ վաղ թի ուշ կկործանվեն փեսացուները՝ ամուսնու ձեռքով:

Նա էվմենոսին հրամայեց իր մոտ բերել օտարականին, որ հարց տար՝ անի Ողիսևսի մասին: Բայց Ողիսևսը հրաժարվեց անմիջապես գնալ Պենելոպեի մոտ, նա խնդրեց սպասել մինչև երեկո, չկամենալով ավելի գրգռել փեսացուներին: Համաձայնեց սպասել Պենելոպեին:

Փեսացուների խրախճանքը ավելի ու ավելի աղմկալից էր դառնում:

Վրա հասավ գիշերը: Էվմենոսը վաղուց տուն էր վերադարձել: Փեսացուները դեռևս չէին ցրվում: Հանկարծ ղոնների մեջ երևաց մի մուրացկան, որ ողջ իթակեում հայտնի էր որպես որկրամոլ ու հարբեցող: Նրա անունը Իրոս էր: Դռների մոտ տեսնելով օտարականին, Իրոսն ուղեց քշել նրան, իսկ Ողիսևսը չէր հեռանում: Այդ ժամանակ Իրոսն սպառնաց, թե կգանակոծի նրան, եթե անմիջապես չհեռանա: Վեճ բռնկվեց: Դա հասավ Անտինոոսի ականջին և, կամենալով զվարճանալ և զվարճություն պատճառել փեսացուներին, վճռեց Իրոսին ստիպել, որ կռվի օտարականի հետ: Հաղթողին խոստացավ այժի տապակած ստամոքս և, բացի այդ, ամեն օր իրենցից մուրալու թուլլտվություն: Երջապատեցին փեսացուները Իրոսին ու Ողիսևսին և զրդեցին ուժերը շափել: Ողիսևսը համաձայնեց կռվել Իրոսի հետ, բայց նախ երդում առավ փեսացուներին, որ նրանք չեն օգնի Իրոսին: Փեսացուները երզվեցին: Այդ ժամանակ Ողիսևսը հանեց ցնցոտիները և զոտևորվեց զրանցով: Զարմանքով նայում էին փեսացուները Ողիսևսի հղոր մարմինը: Նրա մկանուտ բազուկներին, լայն կրծքին ու թիկունքին: Սոսկալի վախեցավ Իրոսը, բայց չկռվել Ողիսևսի հետ չէր կարող, որովհետև ստրուկները բռնեցին նրան, զոտևորեցին ու կանգնեցրին Ողիսևսի հանդիման: Սարսափից հազիվ էր ոտքի վրա կանգնում Իրոսը: Նրան նայելով Ողիսևսը մտածում էր՝ բռուկների հարվածով սպանե՞լ նրան, թե միայն գետին տապալել: Ողիսևսը մտածեց, որ հղոր հարվածը կարող է կասկած առաջացնել փեսացուների մեջ, դրա համար էլ, երբ Իրոսը հարվածեց նրա ուսին, նա էլ իր հերթին հարված տվեց Իրոսի գլխին՝ ականջից վերև: Հատակին ընկավ Իրոսը և հեկեկաց ցավից: Իսկ Ողիսևսը բռնեց նրա ոտքից, խրախճանքի սրահից քարշ տվեց բակ, նստեցրեց պատի տակ:

Քարպասի մոտ, ուսին նետեց նրա պատառուոված պարկը և ձեռքը տվեց ցուպը: Այդպիսի դաս տվեց Ողիսևսը Իրոսին, որը հանդգնաբար ուզում էր վտարել իրեն՝ օտարականին, իր իսկ սեփական տնից: Շատ ուրախացան փեսացուները, որ Ողիսևսն ազատեց իրենց պնդերես Իրոսից: Նրանք հրճագին ողջունեցին նրա հաղթանակը, իսկ նրանցից մեկը, Ամփինոմոսը, Ողիսևսին մատուցեց գինով լի գավաթը և ցանկություն հայտնեց, որ աստվածները կրկին հարստություն ու երջանկություն տան նրան: Ամփինոմոսը փեսացուների մեջ ամենալավն էր, հաճախ էր զսպում նրանց վայրագությունը և միշտ պաշտպանում էր Տելեմաքոսին: Գիտեր այդ բանը Ողիսևսը և, կամենալով փրկել Ամփինոմոսին, խորհուրդ տվեց հեռանալ փեսացուների ամբոխից և վերադառնալ հոր մոտ, որովհետև շուտով կվերադառնա Ողիսևսը և այդ ժամանակ կործանում է սպասում բոլոր փեսացուներին: Բայց Ամփինոմոսը շսեց Ողիսևսի խորհուրդը, զնաց իր կործանման ընդառաջ:

Այդ ժամանակ Աթենաս-Պալլաս դիցուհին Պենելոպեին զրդեց դուրս գալ փեսացուների մոտ, որպեսզի ավելի բորբոքի նրանց մեջ Պենելոպեի հետ ամուսնանալու ցանկությունը և որպեսզի Ողիսևսն ու Տելեմաքոսը ավելի զնահատեն նրա հավատարմությունն ու սերը իրենց հանդեպ: Պենելոպեն իսկույն կանչեց էվրինոմեին և հրամայեց բերել ստրկուհիներից երկուսին, որոնք խրախճանքի սրահ՝ փեսացուների մոտ, պիտի ուղեկցեին իրեն: Երբ էվրինոմեն դուրս եկավ, Աթենաս աստվածուհին կարճատև քուն բերեց Պենելոպեին և քնի մեջ այնպես զեղեցկացրեց նրան, որ նա շողաց սիրո աստվածուհի Ափրոդիտեի նման: Ներս մտած ստրկուհիները արթնացրին Պենելոպեին: Վեր կացավ Պենելոպեն և զնաց փեսացուների մոտ: Հիացմունքով նայում էին նրանք Ողիսևսի կնոջը: Իսկ Պենելոպեն իր մոտ կանչեց Տելեմաքոսին և հանդիմանեց, որ թույլ է տվել իր տանը վերավորել զթրախտ օտարականին: Հնազանդությամբ լսեց մոր հանդիմանությունը Տելեմաքոսը: Փեսացուներից մեկը, էվրինոմոսը, դիմեց Պենելոպեին և սկսեց փառաբանել նրա զեղեցկությունը: Լսեց նրան Պենելոպեն և պատասխանեց, թե ինքը չունի այլևս վաղմի զեղեցկությունը, որ կորցրել է այն ժամանակից, երբ հեռացել է իրենից Ողիսևսը: այն ժամանակ միայն վերստին կզեղեցկանա ինքը, երբ վերադառնա Ողիսևսը: Ապա հանդիմանեց փեսացուներին, որ հարկադրում են իր համար

ատելի ամուսնական կապերով կապվել նրանցից մեկի հետ և իրենց խրախճանքներով քայքայում են Ողիսեսի տնտեսությունը։ Այդպես չէր նախկինում, երբ փեսացուները ջանում էին ընծաներով շահել հարսնացուի սիրտը և չէին վատնում ուրիշի ունեցվածքը։ Բայց ականջ չդրին փեսացուները Պենելոպեի նախատինքին, նրան անվրդով լսելուց հետո փեսացուներն իրենց սպասավորներին ուղարկեցին հարուստ ընծաներ բերելու և դրանք ընծայեցին Պենելոպեին, կամենալով ամուսնության տրամադրել նրան այդ ընծաներով։ Պենելոպեին լռելյայն ընդունեց ընծաները և ստրկուհիներին հետ միասին գնաց իր օթարանը։

Հենց որ Պենելոպեին հեռացավ, փեսացուները ստրկուհիներին հրամայեցին երեք մեծ կանթեղ բերել և վառել, որ ավելի պայծառ լուսավորվի խրախճանքի սրահը։ Ստրկուհիները կատարեցին հրամանը։ Ողիսեսը ստրկուհիներին ասաց, որ գնան և զբաղվեն իրենց գործով, իսկ ինքը կհետևի կանթեղներին։ Բայց ստրկուհիներից մեկը, Մելանթոն, սկսեց ծաղրել և նախատել նրան։ Ողիսեսը սպառնաց հանդուգն Մելանթոյին, թե կզանգատվի Պենելոպեին. վախեցան ստրկուհիներն այդ սպառնալիքից և փութով հեռացան։ Իսկ Ողիսեսը սկսեց հետևել կանթեղների լույսին։ Էվրիմաքոսը, փեսացուներին զվարճացնելու համար, Ողիսեսի վրա ծիծաղելով, ասաց.

— Ես տեսնում եմ, որ աստվածներից մեկն է ուղարկել այս պանդուխտին, որ ավելի պայծառ լուսավորության մեջ կերուխում անենք։ Լույսը ոչ թե կանթեղներից է տարածվում, այլ նրա ճազատ զլխից, որի վրա մի հատիկ մազ անգամ չկա։

Միծաղեցին փեսացուները, իսկ Էվրիմաքոսն սկսեց ավելի ևս շանակել Ողիսեսին, Ողիսեսը հանգիստ պատասխանեց.

— Էվրիմաքոս, շատ ամբարտավանն ես դու, բայց դու քեզ գորեղ ես կարծում ա՛յն պատճառով միայն, որ քեզ շրջապատում են թույլ մարդիկ։ Եթե, ի դժբախտություն քո, հիմա վերագոռնար Ողիսեսը, ապա այս լայն դուռն իսկույն քեզ նեղ կթվար, այնպիսի աճապարանքով կճողոպրեիր։

Սոսկալի զայրացավ Էվրիմաքոսը, հափշտակեց նստարանը և նետեց Ողիսեսի վրա։ Բայց Ողիսեսը ճարպկորեն խույս տվեց հարվածից։ Նստարանը դիպավ գինի մատովակող ստրուկի ձեռքին, և հառաչանքով վայր ընկավ նա, ձեռքից ցած գցելով զավաթը։ Աղմկեցին փեսացուները։ Նրանք զայրացել էին, որ կովել

են սկսել խնջույքի ժամին, այն պահից սկսած, երբ հայտնվել է պանդուխտը։ Բայց Տելեմաքոսն ասաց, թե դա չէ կովի պատճառը, այլ այն, որ նրանք հարբել են և ժամանակն է ավարտել խնջույքը։ Որքան էլ փեսացուների համար վիրավորական էր լսել Տելեմաքոսի այս խոսքերը, այնուամենայնիվ, նրանք ստիպված էին ավարտել կերուխումը։ Մեկ անգամ ևս լցրին իրենց գավաթները, խմեցին և ցրվեցին տները։

Երբ բոլոր փեսացուները ցրվեցին, Ողիսեսը Տելեմաքոսին ասաց, թե հարկավոր է բոլոր զենքերը դուրս հանել խրախճանքի սրահից, Կանչեց Տելեմաքոսն Էվրիկլեային, և պատվիրեց՝ բոլոր սպասուհիներին փակել իրենց կացարաններում, որպեսզի չտեսնեն, թե ինչպե՛ս են դուրս տանում զենքերը, որ հարկավոր էր հավաքել, որպեսզի չփչանային ծխից։ Կատարեց Էվրիկլեան Տելեմաքոսի հրամանը։ Տելեմաքոսն ու Ողիսեսը սկսեցին դուրս տանել զենքերը, իսկ Աթենաս դիցուհին, անտես մնալով, իր կանթեղով լուսավորում էր նրանց ճանապարհը։ Զարմացավ Տելեմաքոսը, տեսնելով, թե ինչպե՛ս ամենուրեք սփռվում է լույսը անտեսանելի կանթեղից և հարցրեց Ողիսեսին, թե որտեղի՞ց է այդ լույսը։ Բայց Ողիսեսն արգելեց որդուն հարցուփորձ անել. վախենում էր, որ Տելեմաքոսն իր հարցուփորձով կզայրացնի աստվածուհուն։ Բոլոր զենքերը հավաքելուց հետո Ողիսեսը գնաց Պենելոպեի օթարանը։ Սա անհամերոթյամբ սպասում էր պանդուխտին, որ նրան հարցուփորձ անի Ողիսեսի մասին։ Իսկ Տելեմաքոսը գնաց իր օթարանը և հանդիստ բուն մտավ։

ՈՂԻՍԵՍ ԵՎ ՊԵՆԵԼՈՊԵ

Երբ Տելեմաքոսը գնաց քնելու, իր ստրկուհիների հետ միասին խրախճանքի սրահ եկավ Պենելոպեին։ Ստրկուհիներն իրենց տիրուհու համար օջախի մոտ դրին արծաթազարդ փղոսկրյա աթոռը, իսկ իրենք սկսեցին հավաքել խնջույքի սեղանը։ Ստրկուհի Մելանթոն վերստին սկսեց նախատել Ողիսեսին, քչել տնից և սպառնալ, թե այրվող խանձողը նրա վրա կշարտի, եթե չհեռանա։ Մույլ հայացքով նրան նայեց Ողիսեսը և ասաց.

— Ինչո՞ւ ես բարկանում ինձ վրա։ Ծիշտ է, ես մուրացիկ եմ, ինձ էլ այսպիսի՞ բախտ է բաժին ընկել, բայց կար ժամանակ, որ ես էլ հարուստ էի. Զևսի կամքով, սակայն, զրկվեցի այդ բոլորից։

Քուցե զու ևս շուտով զրկվես զեղեցկութիւննից և ասի քեզ տիրուհիք: Տե՛ս, կվերադառնա Ողիսեւը, և ստիպված կլինես պատասխան տալ հանդգնութեանդ համար: Եթե չվերադառնա էլ, ապա տանն է Տելեմաքոսը, նա զիտե, թե ինչպե՛ս են պահում իրենց ստրկուհիները: Ոչինչ թաքուն չի՝ մնա նրանից:

Լսեց Ողիսեւի խոսքը Պենելոպեան և ու գայրացած ասաց Մեկանթոյին.

— Բոլորի վրա զայրանում ես դու, շղթայակալ շան նման: Տե՛ս, ես գիտեմ, թե զու ինչպե՛ս ես պահում քեզ: Քո վարքի համար պլստ՝վո պիտի վճարես: Մի՞թե չգիտես, որ օտարականին ե՛ս եմ այստեղ կանչել:

Հրամայեց Պենելոպեան օջախի մոտ աթոռ դնել Ողիսեւի համար, և երբ նա նստեց Պենելոպեի կողքին, սկսեց հարցնուփորձ անել Ողիսեւի մասին: Պատմեց նրան պանդուխտը, իբր թե մի ժամանակ հյուրընկալել է Ողիսեւին Կրետեում, երբ նա Տրոյա զնալու ճանապարհին, փոթորկից հալածված, դուրս է եկել Կրետի ափը: Լաց եղաւ Պենելոպեան՝ լսելով, որ քսան տարի առաջ օտարականը տեսել է Ողիսեւին: Ստուգելու համար, թե ճի՞շտ է ասում արդո՞ք նա, Պենելոպեան հարցրեց, թե ինչպե՛ս էր հագնված Ողիսեւը: Զկար ավելի հեշտ բան օտարականի համար, քան նկարագրել իր իսկ սեփական զգեստը: Ամենայն մանրամասնութեամբ նկարագրեց հագուստները, և Պենելոպեան հավատաց նրան: Իսկ օտարականն սկսեց հավատացնել նրան, որ կենդանի է Ողիսեւը, որ վերջերս եղել է թեսպրոտների երկրում, իսկ այնտեղից զնացել Դոգոնա՛, հարցում անելու Զեւի պատգամախոսին:

— Շուտով կվերադառնա Ողիսեւը, — ասաց օտարականը, — ավելի վաղ, քան բոլորի տարին, ավելի վաղ, քան լուսինը կնորի:

Ուրախ կլինե՞ր հավատալ դրան Պենելոպեան, բայց չէր կարող: Քանի՛ տարի է սպասում էր նա Ողիսեւին, իսկ նա չէր վերադառնում: Պենելոպեան ստրկուհիներին հրամայեց փափուկ մահիճ զցել օտարականի համար: Ծնորհակալ եղաւ նրանից Ողիսեւը և խնդրեց, որ ծեր էվրիկլեան նախ լվա իր ոտքերը:

Էվրիկլեան սիրով համաձայնեց լվալ նրա ոտքերը. նա և՛ հասակով, և՛ իր ողջ տեսքով, և՛ նույնիսկ ձայնով հիշեցնում էր Ողիսեւին, որին մի ժամանակ խնամել էր ինքը: Էվրիկլեան պղնձ-

ձե թասով ջուր բերեց և կոացաւ օտարականի ոտքերը լվանալու: Հանկարծ նրա աչքին ընկաւ ոտքի սպին: Նրան քաշ ծանոթ էր այդ սպին: Մի ժամանակ վայրի վարազը խոր վերք էր տվել Ողիսեւին, երբ նա Ավտոլիկոսի տղաների հետ որս էր անում Պաոնասի լանջերին: Հենց այդ սպիով էլ էվրիկլեան ճանաչեց Ողիսեւին: Զարմանքից ցած զցեց ջրով լի թասը: Արցունքը մշուշեց նրա աչքերը և ուրախութիւնից դողացող ձայնով շշնջաց.

— Ողիսեւ, դո՛ւ ես արդո՞ք, թանկագին զավակս: Ինչպե՛ս շճանաչեցի քեզ:

Էվրիկլեան ուզում էր Պենելոպեին էլ ասել, որ վերջապես վերադարձել է ամուսինը, բայց Ողիսեւը փութաց փակել նրա բերանը ձեռքի ափով, և կամացուկ ասաց.

— Այո՛, ես Ողիսեւն եմ, որին դու խնամել ես: Բայց լռի՛ր, մի՛ մատնիր գաղտնիքս, ապա թե ոչ կկործանես ինձ: Զգուշացիր որևէ մեկին իմ վերադարձի գաղտնիքը հայտնելուց: Դաժան պատժի կենթարկեմ քեզ ու շեմ խնայի, թեկուզ և իմ դայակն ես դու, եթե իմանան քեզնից, որ ես վերադարձել եմ:

Երգվեց էվրիկլեան պահել գաղտնիքը: Ողիսեւի վերադարձովն ուրախացած, նա էլի ջուր բերեց և լվաց նրա ոտքերը: Պենելոպեան շնկատեց կատարվածը. նրա ուշադրութեամբ գրավել էր Աթենաս գիցուհին:

Երբ Ողիսեւը նորից նստեց կրակի մոտ, Պենելոպեան սկսեց գանգատվել իր դառը բախտից և պատմեց վերջերս տեսած երազը: Նա տեսել էր, թե ինչպես արծիվը ծվատում է իր ընտանի ձյունասպիտակ սագերին, և Իթակեի բոլոր կանայք, իր հետ միասին, ողբում էին նրանց: Բայց հանկարծ արծիվը թռավ, ետ եկավ, նստեց ապարանքի տանիքին և մարդկային ձայնով ասաց. «Պենելոպե՛, սա երազ չէ, այլ նախանշանն այն բանի, ինչ պիտի կատարվի: Սագերը՝ փեսացուներն են, իսկ ես՝ Ողիսեւը, որ շուտով կվերադառնա»:

Իսկ Ողիսեւը Պենելոպեին ասաց, թե, ինչպես տեսնում է, նրա երազն այնքան պարզ է, որ մեկնութեան կարիք չունի: Բայց այդպիսի երազին անգամ չէր կարող հավատալ Պենելոպեան. չէր հավատում, թե վերջապես կվերադառնա Ողիսեւը: Ասաց օտարականին, թե վճռել է հաջորդ օրը փորձել փեսացուներին. հանել Ողիսեւի աղեղը և առաջարկել, որ ձգեն և խփեն նշանին. ինքը վճռել է ամուսին ընտրել նրան, ով կկատարի այդ:

Վ Բարբը Էպիրոտում, Հյուսիսային Զոնաստանի արևմուտքում, որ հնում հայտնի էր Զեւի գուշակավայրով ու սրբավայրով:

Օտարականը Պենելոպեին խորհուրդ տվեց չհետաձգել այդ փորձը և ավելացրեց.

— Առաջ բան փեսացուներից մեկը կձգի աղեղն ու նշանին կդիպցնի, կվերադառնա Ողիսևսը:

Այսպես խոսում էր Պենելոպեին օտարականի հետ, չկասկածելով, որ զրուցակիցը Ողիսևսն է: Բայց արդեն ուշ էր: Չնայած Պենելոպեին պատրաստ էր ողջ գիշեր խոսել օտարականի հետ, բայց ժամանակն էր իր օթարանը գնալու: Վեր կացավ ու սարկուհիների հետ իր օթարանը գնաց նա, և այնտեղ խորքնի մեջ ընկզմեց նրան Աթենասը:

Իսկ Ողիսևսը մահիճ պատրաստեց իր համար եզան և ոչխարի մորթուց, պառկեց, բայց չկարողացավ բնել: Անընդմեջ միտք էր անում, թե ինչպե՞ս վրեժխնդիր լինի փեսացուներից: Մոտեցավ նրա մահճին Աթենաս աստվածուհին. նա հանգստացրեց Ողիսևսին, խոստացավ իր օգնությունը և ասաց, որ շուտով նրա բոլոր տառապանքները վերջ կունենան:

Վերջապես քնեցրեց Ողիսևսին Աթենաս դիցուհին: Բայց երկար շտեկեց այդ քունը. նրան արթնացրեց Պենելոպեի աղեկատուր լացի ձայնը. Պենելոպեին գանգատվում էր, որ աստվածները չեն թողնում, որ Ողիսևսը վերադառնա: Վեր կացավ Ողիսևսը, հավաքեց մահճը և, բակ դուրս գալով, աղերսեց Զևսին հղել նախանշան, որ պիտի լինեն առավոտյան լսած առաջին իսկ խոսքը: Լսեց Զևսը Ողիսևսին, և ամպրոպը ճայթեց երկնքում: Առաջին խոսքը, որ լսեց Ողիսևսը, ասաց ստրկուհին, որ ձեռքի աղացով ալլուր էր աղում: Նա ցանկանում էր, որ դա վերջին օրը լինի, որ փեսացուները խրախճանք են անում Ողիսևսի տանը: Ուրախացավ Ողիսևսը: Այժմ արդեն գիտեր, որ ամպրոպային Զևսը կօգնի վրեժխնդիր լինելու փեսացուներից:

ՈՂԻՍԵՎՍԸ ԲՆԱԶՆՁՈՒՄ Է ՓԵՍԱՑՈՒՆԵՐԻՆ

Շարադրված է ըստ Համբոսի «Ողիսակաե» պոեմի:

Առավոտյան ստրկուհիները մտան խրախճանքի սրահը և սկսեցին կարգի բերել այն՝ փեսացուների խնջույքի համար: Էվրիկլեան ջրի ուղարկեց ստրկուհիներին, պատվիրեց լվանալ հատակը, նստարանների վրա գցել ծիրանի նոր ծածկոցներ և լվանալ ա-

մանները: Շուտով իր օթարանից դուրս եկավ Տելեմաքոսը, էվրիկլեային հարցրեց, թե ինչպես է անցկացրել դիշերն օտարականը և գնաց քաղաքային հրապարակ: Էվմենոսը, Փիլոտիոսն ու Մելանտիոսը քեցին բերին այժեր, ոչխարներ, խոզեր ու կով՝ փեսացուների խնջույքի համար: Էվմենոսը ու Փիլոտիոսը սիրալիր ողջունեցին օտարականին, ցավելով, որ նա ստիպված է անօթևան թափառել աշխարհում: Մտաբերեց Փիլոտիոսը Ողիսևսին, նա ափսոսում էր իր տիրոջը: Օտարականին նայելիս միտք էր անում՝ մի՞թե իր տերն էլ ստիպված է անօթևան թափառել օտարության մեջ: Էվմենոսն ու Փիլոտիոսն սկսեցին աղերսել աստվածներին, որ նրանք տուն վերադարձնեն Ողիսևսին: Ողիսևսն ուզեց մխիթարել իր հավատարիմ ծառաներին և Փիլոտիոսին դիմելով՝ ասաց.

— Երզվում եմ մեծն Զևսով և Ողիսևսի պալատի սուրբ օջախով, որ շեռ էլ հասցնի հեռանալ այստեղից, որ տուն կվերադառնա Ողիսևսը, և կտեսնես, թե ինչպե՞ս վրեժխնդիր կլինի վայրագ փեսացուներից:

Եթե Էվմենոսն ու Փիլոտիոսը սիրալիր էին օտարականի հետ, ապա կոպիտ Մելանտիոսը սկսեց վիրավորել նրան և սպառնաց ծեծել, եթե չհեռանա Ողիսևսի տնից: Ոչինչ չպատասխանեց Ողիսևսը Մելանտիոսին, միայն սպառնալի կիտեց հոնքերը:

Սկսեցին վերջապես հավաքվել փեսացուները ևս: Նրանք մըտադրվել էին սպանել Տելեմաքոսին, բայց աստծո ուղարկած կանխանշանը ետ պահեց նրանց այդ քայլից: Նստեցին սեղանի շուրջը փեսացուները և սկսվեց խրախճանքը: Տելեմաքոսը դռների մեջ նստարան ու սեղան դրեց Ողիսևսի համար և հրամայեց կերակուր ու գինի տալ նրան. ապա թե Ողիսևսի պատանի որդին ասաց սպառնալի.

— Օտարակա՛ն, նստի՛ր այստեղ և հանդիստ կերուխում արա իմ հյուրերի հետ: Գիտցի՛ր, որ ոչ որի թույլ չեմ տա վիրավորել քեզ: Իմ տունը ինչ-որ խորտկարան չէ, ուր հավաքվում է խաժամուժ ամբոխը, այլ Ողիսևս արքայի ապարանքը:

Լսեց Տելեմաքոսի խոսքը Անտինոոսը և հանդիսարար գոչեց.

— Բարեկամնե՛ր, թող սպառնա Տելեմաքոսը, որքան ուզում է: Եթե սպառնալի կանխանշան չուղարկեր մեզ Զևսը, մենք ընդմիջտ կզսպեինք նրան և նա այլևս չէր լինի այդպիսի ատելի շաղակրատ:

Ոչինչ չպատասխանեց Տելեմաքոսն այդ սպառնալիքին: Անխոս նստել ու սպասում էր Ողիսևսի պայմանական նշանին: Աթե-

նաա դիցուհին ավելի գրգռեց փեսացուների մոլեղնութունը, որպեսզի ավելի ուժգին բռնկի վրեժխնդրութեան ծարավը Ողիսևսի կրծքի տակ: Գրանից գրգռված, փեսացուներից մեկը՝ Քտեսիպոսը, գոչեց.

— Լսեցե՛ք, թե ի՛նչ կասեմ ձեզ: Օտարականը քիչ կերակուր ու գինի չստացավ Տելեմաքոսից: Մենք էլ պիտի որևէ բան տանք նրան: Ես արդեն մի ընծա ունեմ նրան տալու:

Այդ խոսքի հետ Քտեսիպոսը հափշտակեց կովի ոտքը և թափով գեպի Ողիսևսը շարտեց: Հազիվ կարողացավ խուլյա տալ հերոսն այդ հարվածից: Ահեղաբար գոչեց Տելեմաքոսը Քտեսիպոսին.

— Բախտդ բերեց, որ վրիպեցիր: Ես ավելի դիպուկ կհարվածեի քեզ իմ նիզակով և քո հայրն ստիպված կլիներ ոչ թե հարսանիք անել քեզ, այլ հողին հանձնել: Ի լուր բռնորդդ ասում եմ կրկին, որ թույլ չեմ տա այստեղ, իմ տան մեջ վիրավորել հյուրերին:

Ոչինչ չպատասխանեցին փեսացուները, իսկ Ագելաոսը խորհուրդ տվեց վերջ տալ օտարականին նեղացնելուն:

Հանկարծ Աթենաս աստվածուհին խելահեղ ծիծաղ ներշնչեց փեսացուներին և մթազնեց նրանց միտքը: Սկսեցին վայրենաբար քրքջալ նրանք: Գունատվեցին նրանց դեմքերը, աչքերը մշուշվեցին արցունքից, ծանր բեռի նման թախիծը համակեց նրանց սիրտը: Վայրի գազանների նման սկսեցին հում միսը հոշոտել նրանք: Յնորված փեսացուները սկսեցին ծանակել Տելեմաքոսին: Բայց լուռ նստել է Տելեմաքոսը՝ անուշադիր նրանց ծաղրին: Պենելոպեն լսում էր փեսացուների աղաղակները խնջույքի առատ սեղանի շուրջը: Բայց ոչ ոք երբեք այդպիսի խրախճանք չէր սարքել մարդկանց համար, ինչպես փեսացուների համար սարքել էին Աթենաս դիցուհին և Պենելոպեի ամուսինը:

Վերջապես վեր կացավ Պենելոպեն և գնաց գանձարանը, ուր պահվում էին Ողիսևսի գանձերը: Այնտեղից հանեց Ողիսևսի պիրկ աղեղը: Այդ աղեղը մի ժամանակ պատկանում էր էվրիտոսին¹, իսկ Ողիսևսին նվիրել էր նրա որդին՝ Իփիտոսը: Վերցնելով աղեղը և նետերով լի կապարճը, Պենելոպեն խրախճանքի սրահը գնաց: Կանգնելով սյան կողքին, այսպես ասաց նա.

— Լսեցե՛ք ինձ: Ես բերել եմ Ողիսևսի աղեղը: Ո՛վ ձգի այս աղեղը և նետը արձակի այնպես, որ անցնի տասներկու օղակի միջով, նրա հետ կամուսնանամ:

Էվմեոսին տվեց Պենելոպեն Ողիսևսի աղեղը: Դառնադի լաց եղավ նա, տեսնելով իր տիրոջ աղեղը, և տվեց փեսացուներին: Լաց եղավ հավատարիմ Փիլոտիոսը ևս: Զայրացան նրանց վրա փեսացուները, որ արցունք են թափում Ողիսևսի համար: Իսկ Տելեմաքոսը օղակներ ունեցող ձողեր ամրացրեց գետնին և հավասարեցրեց դրանք: Նա առաջինը կամեցավ աղեղը պրկելու փորձ անել. երեք անգամ կորացրեց աղեղը, բայց չկարողացավ լարը պրկել: Կամեցավ չորրորդ անգամ կորացնել աղեղը, բայց Ողիսևսը գլխով նշան արեց նրան և Տելեմաքոսը դադարեցրեց իր փորձերը: Փեսացուները վճռեցին հերթով ամրակուռ աղեղը պրկելու փորձ անել: Առաջինը փորձեց Լեոդոսը, բայց չկարողացավ մի փոքր անգամ ճկել, այնքան ամրակուռ էր աղեղը: Անտինոոսը կանչեց Մելանտիոսին և հրամայեց ճարպ բերել, որ յուղեն աղեղը: Անտինոոսը կարծում էր, թե յուղած աղեղը ավելի հեշտ կճկվի: Բայց փեսացուների բոլոր փորձերն ապարդյուն անցան. նրանցից ոչ ոք չկարողացավ ձգել աղեղնալարը:

Այդ ժամանակ էվմեոսն ու Փիլոտիոսը դուրս եկան սրահից, նրանց հետևից գնաց նաև Ողիսևսը: Դրսում կանգնեցրեց նա իր հավատարիմ ծառաներին և հայտնեց իր ով լինելը, ցույց տալով վայրի վարագի հասցրած վերքի սպին ոտքի վրա: Ուրախացան էվմեոսն ու Փիլոտիոսը և համբույրներով պատեցին նրա ձեռքերն ու ոտքերը: Նրանց հանգստացրեց Ողիսևսը: Նա էվմեոսին հրամայեց, այն պահին, երբ ինքը ձեռքն առնի աղեղը, գնալ էվրիկլևայի մոտ և ասել, որ փականքի տակ պահի սպասուհիներին և ոչ մի անը չթողնի նրանց: Իսկ Փիլոտիոսին հրամայեց ամուր փակել դարպասները: Այդ հրամանները տալուց հետո նա վերադարձավ խրախճանքի սրահը և հանգիստ նստեց իր տեղը, դռների մեջ:

Երբ Ողիսևսը վերադարձավ, էվրիմաքոսը աղեղը յուղել էր ու տաքացնում էր կրակի վրա: Տաքացնելուց հետո էվրիմաքոսը փորձեց ճկել աղեղը, բայց չկարողացավ: Երբ տեսան, որ փորձերն իզուր են անցնում, փեսացուները վճռեցին մի կողմ դնել աղեղը, փորձերը թողնել վաղվան, իսկ այժմ խրախճանքը շարունակելու: Այդ ժամանակ Ողիսևսը հանկարծ դիմեց փեսացուներին, խնդրելով, որ թույլ տան իրեն ձգել աղեղը: Փեսացուները, լսելով այդ

¹ Տե՛ս առաջին մաս, «Ճերակչես և էվրիտոս»:

խնդիրքը, սկսեցին ծանակել նրան: Բայց ծածուկ երկյուղ ունեին, թե օտարականը կարող է խայտառակ անել իրենց: Պինելուպեն պահանջեց, որ այնուամենայնիվ օտարականին տան աղեղը: Նրան ընդհատեց Տելեմաքոսը. նա մորը խնդրեց գնալ իր օթբարանը, իսկ էվմեոսին հրամայեց աղեղը տալ Ողիսևսին: Փեսացուները կատարի աղմուկ բարձրացրին, երբ էվմեոսը տարավ Ողիսևսին տալու աղեղը: Վախեցավ էվմեոսը, բայց Տելեմաքոսը սպառնալի ձայնով գոռաց նրա վրա և հրամայեց Ողիսևսին տալ աղեղը: Աղեղը Ողիսևսին տվեց էվմեոսը և շտապ գնաց էվրիկլեսայի մոտ ու հաղորդեց Ողիսևսի հրամանը: Իսկ Փիլոտիոսը շատ ամուր փակեց դարպասը:

Վերցրեց Ողիսևսն իր աղեղը և սկսեց ուշադիր տնտղել. այդպես երգիչն է տնտղում իր կիթառը երգելուց առաջ: Առանց ամենաշնչին ջանքի կորացրեց նա իր աղեղը և ձգեց լարը, ապա մատով փորձեց թե պի՞րկ է արդյոք: Ահեղորեն զնգաց աղեղնալարը: Գունատվեցին փեսացուները: Ըայթեց երկնքում ամպրոպը՝ այդ Զևսն էր նշան տալիս Ողիսևսին: Հրճվանքով լցվեց նրա սիրտը: Վերցրեց Ողիսևսը նետը և, առանց տեղից վեր կենալու, դեպի նշանակետն արձակեց: Անցավ նետը բոլոր տասներկու օղակները: Տելեմաքոսին դառնալով, Ողիսևսը բացականչեց.

— Տելեմաքոս, լխայտառակեց քեզ քո չյուրը: Տեսար, որ շատ ջանք ըջփեցի աղեղը ձգելիս: Ո՛չ, դեռ ո՛ւժ կա բազկիս մեջ: Հիմա արդեն մի նո՛ր խրախճանք կանենք փեսացուների համար: Այժմ արդեն ուրի՛շ նիբա կհնչի խնջույքում մեր կիթառը:

Հոները կիտելով, նշան արեց Ողիսևսը Տելեմաքոսին: Գոտեղրվեց սրով Տելեմաքոսը և, ձեռքն առնելով նիզակը, կանգնեց Ողիսևսի կողքին, շողջողուն պղնձակուռ զենքերը վրան:

Վրայից գցելով ցնցոտիները, Ողիսևսը կանգնեց շեմին, հենց դռների մեջ, հատակին, իր ոտքերի մոտ թափեց կապարճի մեջ եղած նետերը և գոչեց փեսացուներին.

— Առաջին նշանին դիպցրի ես անվրեպ: Այժմ ընտրել եմ մի նոր նշան, որի վրա դեռ ոչ ոք նետեր չի արձակել: Ինձ նետածիգ Ապոլոնն օգնական կլինի, որ անվրեպ դիպցնեմ նպատակին:

Այդպես գոչեց Ողիսևսը և դեպի Անտինոոսն արձակեց նետը: Դիպավ նետը նրա կոկորդին և ծակեց, թափ անցավ հենց այն պահին, երբ Անտինոոսը պատրաստվում էր դատարկել զինու գավաթը: Երերաց արնաշաղախն Անտինոոսը, ետ մղեց սեղանը, վայր

զցեց և ընկավ անշնչացած: Աղաղակելով վեր թռան տեղներից փեսացուները: Նեավեցին դեպի զենքերը, որոնք առաջ կախված էին պատերից, բայց չկային զենքերը: Իսկ Ողիսևսը նորից սպառնալի գոչեց նրանց.

— Ա՛յ դուք անարգ շներ: Կարծում էիք, թե ետ չէի՞ գալու, որ անպատիժ պիտի կողոպտ՞ւտ անեք: Ո՛չ, այժմ արդեն կործանում է սպասում ձեզ բոլորիդ:

Զուր էր էվրիմաքոսը Ողիսևսին աղերսում խնայել իրենց, հարուստ վճար ընդունել իրենցից այն ամենի փոխարեն, որ կողոպտել են փեսացուները. ոչինչ չէր ուզում լսած լինել Ողիսևսը: Նա այրվում էր վրեժխնդրության ծարավով: Կռահեցին փեսացուները, որ հարկավոր է պաշտպանվել: Մերկացրին նրանք իրենց սրերը և աշխատեցին սեղաններով պաշտպանվել նետերից: Սուրը ձեռքին, Ողիսևսի վրա հարձակվեց էվրիմաքոսը, բայց նետը շամփրեց նրա կուրծքը և անշնչացած գետին տապալվեց նա: Ողիսևսի վրա նետվեց Ամփինոոսը, բայց նիզակով հարվածեց նրան Տելեմաքոսը: Ամփինոոսին սպանելուց հետո Տելեմաքոսը զենք բերելու վազեց: Նա զինանոցից հանեց շորս սաղավարտ, շորս վահան և ութ նիզակ՝ Ողիսևսի, իր, էվմեոսի և Փիլոտիոսի համար: Եվ մինչ Տելեմաքոսը զենքի էլ գնացել, Ողիսևսը նետը նետի հետևից արձակում էր դեպի փեսացուները: Յուրաքանչյուր նետը մահ էր բերում փեսացուներից որևէ մեկին. մեկը մյուսի հետևից անշնչացած գետին էին տապալվում նրանք: Ահա և զենքերը ձեռքին եկավ Տելեմաքոսը: Զինավառվեց Ողիսևսը, իսկ նրա կողքին, նիզակները ձոճելով, կանգնեցին Տելեմաքոսը, էվմեոսն ու Փիլոտիոսը:

Գավաճան Մելանտիոսը նկատեց, որ զենքի է դնում Տելեմաքոսը: Մածուկ թաքնվեց նկողում և հանեց այնտեղից տասներկու վահան ու նիզակ, որովհետև, հոր մոտ շտապելիս, Տելեմաքոսը մոռացել էր փակել դուռը: Փեսացուները ևս զինվեցին: Երկյուղը տիրեց Ողիսևսին, երբ հանկարծ զինված տեսավ նրանց: Գլխի ընկավ, որ ինչ-որ մեկը զենք է հասցրել նրանց: Բարբախտաբար, էվմեոսը նկատեց զենքի համար նկուղ սողոսկող Մելանտիոսին և իմաց արեց Ողիսևսին: Ողիսևսը էվմեոսին և Փիլոտիոսին հրամայեց զինանոցում բռնել Մելանտիոսին և պարանով ամուր կապել: Սուսուփուս թաքնվեցին էվմեոսն ու Փիլոտիոսը զինանոցի մոտ և, երբ Մելանտիոսը զենք էր հանում այնտեղից,

րոնեցին, գետին տապալեցին և, ձեռքերն ու ոտքերը մեջքի վրա ծալած, կապեցին, ապա կախեցին զինանոցի առաստաղի գերանից և ծաղրելով ասացին.

— Հսկիր այժմ զենքերը, Մելանտիոս: Փափուկ մահի՞ճ ենք սարքել քեզ համար:

Այդպես ասացին նրանք, զենքեր վերցրին և շտապեցին Ողիսևսին օգնութիւն, որն այդ ժամանակ Տելեմաքոսի հետ միասին ետ էր վանում փեսացուների ճշռումը:

Այդ պահին Մենտորի կերպարանքով Ողիսևսին հայտնվեց Աթենաս-Պալլասը: Օգնութիւն կանչեց Ողիսևսը Մենտորին, իսկ փեսացուները մահվան սպառնալիք տվին նրան, եթե օգներ Ողիսևսին:

Սաստիկ զայրացավ Աթենասը փեսացուների վրա: Հանդիմանեց Ողիսևսին, որ այն քաջութիւնը չի կռվում նա փեսացուների դեմ, ինչպես մարտնչում էր Տրոյայի տակ, ապա հանկարծ ծիծեռնակ դարձավ, վեր ճախրեց և նստեց փեսացուների գլխավերևում գտնվող գերանին: Երեք անգամ Ողիսևսի վրա հարձակվեցին փեսացուները, նիզակները նետելով նրա, Տելեմաքոսի և նրկու հավատարիմ ծառաների վրա, բայց շեղում էր նրանց նիզակները Աթենասը: Իսկ Ողիսևսը և նրա զինակիցները ամեն անգամ սպանում էին փեսացուներից շորսին: Նիզակի հարվածով Փիլոտիոսն սպանեց հանդուգն Քտեսիպոսին և ցնծադին գռչեց:

— Այժմ կռն'ս դու, լկտի շաղակրատ: Ես փառավոր ընծա տվի քեզ կովի այն ոտքի փոխարեն, որով դու այնպես սիրալիր հյուրասիրեցիր Ողիսևսին:

Մեկը մյուսի հետևից ընկում էին անշնչացած փեսացուները: Հանկարծ, նրանց գլխավերևում, Աթենասը ցնցեց իր սոսկալի վահանը: Սոսկումնահար փեսացուները ցնորվածի նման սկսեցին պատեպատ ընկնել. այդպես ցուներն են դեռուղեն նետվում արոտավայրում, երբ ամառը նրանց վրա է հարձակվում բոռերի պարսր: Ազգայինների հոշոտող բազենների նման, կոտորում էին փեսացուներին Ողիսևսը, Տելեմաքոսը, էվմենոսն ու Փիլոտիոսը: Սոսկալի ազմուկ-ազաղակ էին բարձրացրել տապալվող փեսացուները: Ոչ մի տեղ թաքնվել չէին կարողանում: Ողիսևսի մոտ վազեց լեռոտը և աղբրսեց խնայել, բայց չխնայեց նրան Ողիսևսը, սրի հարվածով կտրեց գլուխը: Միայն երգիչ Փեմիոսին, որ իր կամքին հակառակ երգում էր փեսացուների համար, խնայեց Ողիսևսը

Տելեմաքոսի խնորանքով և մեկ էլ մոնետիկ Մեդոնին, որ թաքնվել էր կովի կաշվի տակ: Ողիսևսը Փեմիոսին և Մեդոնին հրամայեց բակ դուրս գալ և այնտեղ սպասել իրեն: Սկսեց խուզարկել Ողիսևսը, թե փեսացուներից որե՞՛ մեկը չի՞ մնացել արդյոք, բայց բոլորն սպանված էին, ոչ ոք փրկութիւն չէր գտել:

Եվ Ողիսևսը հրամայեց կանչել էվրիկլեային: Իսկույն տիրոջ կանչով եկավ նա և տեսավ նրան արնաթաթաթ, ցուլերին հոշոտող առյուծի նման կանգնած փեսացուների դիակների մեջ: Ողիսևսը էվրիկլեային հրամայեց կանչել այն սպասուհիներին, ովքեր մեղանչել են՝ իրենց համակրանքը ցույց տալով փեսացուներին: Կանչեց էվրիկլեան տասներկու ստրկուհու: Եկան նրանք և բարձրաձայն լալով, Ողիսևսի հրամանով, սկսեցին դուրս հանել փեսացուների դիակները և զնել իրար կողքի՝ պալատի սյունասարհում: Դիակները դուրս հանելով, ստրկուհիները լվացին խրախճանքի սրահը: Երբ ստրկուհիները այդ բոլորը կատարեցին, Ողիսևսը հրամայեց մահապատիժ տալ նրանց: Հանցավոր ստրկուհիները բոլորը կախվեցին և իրենց մահվամբ քաղեցին Ողիսևսի և Պենելոպեի հանդեպ գործած հանցանքը: Տանջալից մահվան դատապարտեց Ողիսևսը դավաճան Մելանտիոսին ևս:

Երբ ստրկուհիներն ու Մելանտիոսը կրեցին իրենց արժանի պատիժը, Ողիսևսը մաքրագործող ծխով մաքրեց խրախճանքի սրահը: Հավաքվեցին Ողիսևսի բոլոր ստրկուհիները.՝ շրջապատեցին իրենց տիրոջը, և համբուրում էին նրա ձեռքերն ու ոտքերը, ուրախացած նրա վերադարձով: Լաց եղավ Ողիսևսը ևս, վերստին իր մերձավորներին տեսնելով:

ՈՂԻՍԵՎՍԸ ԻՐ ՈՎ ԼԻՆԵԼԸ ՀԱՅՏՆՈՒՄ Է ՊԵՆԵԼՈՊԵԻՆ

Շարադրված է բառ Հոմերոսի «Ողիսակաե» պոեմի:

Մինչ Ողիսևսին կողջունելն սպասավորները, էվրիկլեան վաղեց Պենելոպեի օթարանը, արթնացրեց նրան և հայտնեց հրճվալի լուրը, որ վերադարձել է վերջապես նրա ամուսինը և վրեժ է լուծել փեսացուներից՝ բոլորին սպանելով: Չէր հավատում Պենելոպեն: Կարծում էր, թե էվրիկլեան ծիծաղում է իր վրա: Երկար համոզում էր էվրիկլեան իր տիրուհուն, որ իրոք վերադարձել է Ողիսևսը, որ

այն օտարականը, որի հետ այնքան երկար զրուցում էր Պենելոպեն, հենց ինքը Ողիսևսն է, որ ինքը ոտքի սպիռով է ճանաչել նրան, բայց նա հրամայել էր նույնիսկ Պենելոպեից գաղտնի պահել իր վերագարծի լուրը: Չնայած էվրիկլեայի հորդորներին, Պենելոպեին անհավանական էր թվում, որ Ողիսևսը մենակ կարող էր սպանել բոլոր փեսացուներին: Վերջապես Պենելոպեն համաձայնեց խրախճանքի սրահը գնալ: Այնտեղ նա շկարողացավ մեկին վճռել՝ Ողիսևսի գիրկը նետվել, թե՞ նախ հարցուփորձ անել՝ վերջնականապես համոզվելու համար, որ օտարականն իրոք իր ամուսինն է: Նստեց օտարականի կողքին Պենելոպեն: Սեռուն հայացքով սկսեց զննել նրան. մերթ թվում էր, թե նա Ողիսևսն է, մերթ էլ սկսում էր կասկածել: Տեսնելով, թե ինչպես է տատանվում մայրը, Տելեմաքոսը հանդիմանեց նրան.

— Օ՛ր, սիրասուն իմ մայր,— այսպես ասաց Տելեմաքոսը,— մի՞թե կրծքիդ տակ քար սիրտ ես կրում: Վերագարծել է, վերջապես, քո ամուսինը, իսկ դու նստել և մի խոսք անդամ շես ասում: Հազիվ թե աշխարհում գտնվի մի ուրիշ կին, որ այդչափ անհյուրընկալ ընդունի այդքան երկար անշատուկից հետո իր մոտ եկած ամուսնուն:

— Որդի՛ս, դու տեսնում ես, որ հուզմունքից մի բառ իսկ ասել չեմ կարողանում,— պատասխանեց Պենելոպեն Տելեմաքոսին,— եթե օտարականը իրոք Ողիսևսն է, ապա ես ու Ողիսևսն այնպիսի գաղտնիք ունենք, որը բացելով, մենք միշտ էլ կճանաչենք իրար:

Ժպտաց Ողիսևսը և ասաց Տելեմաքոսին.

— Որդի՛ս, մի հուզիր մորդ: Հարցուփորձ անելով նա կիմանա, որ ես Ողիսևսն եմ: Դժվար է նրա համար ճանաչել ինձ այս ցնցոտիներին մեջ: Այժմ պետք է վճռել, թե ինչպես անենք, որ միառժամանակ գաղտնի մնա փեսացուների մահը քաղաքի բնակիչներից, որպեսզի խոռվություն չծագի: Չէ՞ որ ամենից մեծազարմ հրեալուսարգների ենք սպանել մենք, և նրանց հարազատները կուզենան վրեժխնդիր լինել:

Հրամայեց Ողիսևսը ստրուկներին և ստրկուհիներին իսկույն երգել ու պարել Փեմիոսի կիթառի նվագակցությամբ, որ բոլորը կարծեն թե պալատում տոնախմբություն է: Անհավաղ կատարողին նրա հրամանը և, իրոք, բոլոր նրանք, ովքեր անցնում էին

պալատի մոտով, կարծում էին, թե Պենելոպեի հարսանյաց հանդեսն է փեսացուներից մեկի հետ:

Ողիսևսը, լվացվելուց և շքեղ զգեստներ հագնելուց հետո, կրրկին շքասրահ մտավ և նստեց Պենելոպեի դիմաց: Աստվածային գեղեցկությամբ էր օժտել նրան Աթենասը: Պենելոպեին համոզելու համար Ողիսևսը վճռեց բացել մի գաղտնիք, որ հայտնի էր իրենց երկուսին միայն: Մոտ կանչելով էվրիկլեային, պատվիրեց մահիճ գցել իր համար, իսկ Պենելոպեն ասաց էվրիկլեային.

— Կա՛մ, մահիճ գցիր նրա համար, էվրիկլեա՛, բայց ոչ այն ննջասենյակում, որ ինքը՝ Ողիսևսն է կառուցել: Գուրս բեր ննջասենյակից շքեղ մահիճը, և այնտեղ հարդարիր:

— Օ՛ր, թագուհի,— բացականչեց Ողիսևսը,— ո՞վ կարող է տեղից շարժել այն մահիճը, որ ես եմ պատրաստել: Չէ՞ որ դու գիտես, որ դա շինված է պալատի մոտ բարձրացող հսկայական ձիթենու կոճղից: Ե՛ս եմ կտրել ծառը և շրջապատել պարսպով, կոճղից մահճակալ եմ շինել, դարդարել ոսկով, արծաթով ու փղոսկրով: Գուցե ես իմ բացակայության ժամանակ որևէ մեկը սղոցե՛մ է կոճղը և տեղից շարժե՛մ մահիճը:

Այժմ արգեն Պենելոպեն գիտեր, որ իր դիմաց Ողիսևսն է: Նրանք երկուսով միայն գիտեին այն գաղտնիքը, թե ինչպես է շինված մահիճը: Հեկեկաց Պենելոպեն, նետվեց Ողիսևսի գիրկը և սկսեց քնքշագին համբուրել նրան: Լալով գրկեց իր հավատարիմ կնոջը Ողիսևսը, կրծքին սեղմեց և համբուրներով պատեց նրան, ինչպես փոթորկից փրկված լողորդը հողն է համբուրում: Երկար լաց էին լինում գրկախառնված Ողիսևսն ու Պենելոպեն: Այդպես էլ կգտնեք նրանց այգաբացը, եթե Աթենաս դիցուհին չերկարեր գիշերը և շարգելեր արշալույսի աստծուն՝ վարդամատն էոսին՝ երկինք ճախրել:

Թողին խրախճանքի դահլիճը Ողիսևսն ու Պենելոպեն և գնացին իրենց ննջասենյակը: Իսկ Տելեմաքոսը ստրուկներին ու ստրուկուհիներին հրամայեց վերջացնել երգն ու պարը, և ողջ պալատը ընկղմվեց քնի մեջ: Չէին քնել Ողիսևսը և Պենելոպեն միայն: Ողիսևսը պատմում էր իր արկածները, իսկ հավատարիմ Պենելոպեն ազահուլությամբ լսում էր նրան: Նա էլ ամուսնուն պատմեց այն բոլորը, ինչ կրել էր փեսացուներից նրա բացակայության ժամանակ:

ՓԵՍԱՑՈՒՆԵՐԻ ՀՈԳԻՆԵՐԸ ՀԱԳԵՍԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Շարադրված է ըստ Համերոսի «Ողիսակաճ» պոեմի:

Հերմես աստվածը դուրս կանչեց փեսացուների հոգիները նրանց մարմիններից՝ իր ոսկե ձողիկով, որի միջոցով նա բուն է բերում մարդկանց աչքերին և հեռու վանում բունը: Կալագին ճիշով թռան հոգիները աստծո հետևից: Նրանց ճիշը նման էր ծվծվոցին այն շղջիկների, որոնք ահաբեկված այս ու այն կողմ են թռչում մութ քարանձավում, երբ նրանցից մեկը ցած է ընկնում, պոկվելով այն քարից, որից կախված էր:

Նրամ կապած, խավար ճանապարհով սուրում էին փեսացուների հոգիները Հերմեսի հետևից: Հերմեսը նրանց ավելի ու ավելի հեռու էր տանում՝ ճերմակահեր Օվկիանոսի ջրերի և արևի աստված Հելիոսի դարպասների մոտով, ուր ապրում են քնի աստվածները, և Լեկաս՝ ժայռի կողքով: Վերջապես նրանք հասան ասփողելոսներով՝ պատված մի մարգագետին. այդտեղ էր մեռյալների հոգիների կացարանը: Առաջինը փեսացուների հոգիներին հանդիպեց մեծ Աքիլլեսի հոգին, նրա կողքից քայլում էին Պատրոկլեսի, Անտիլոքոսի և Այաքս Տելամոնիդի ստվերները: Փեսացուների հոգիները շրջապատեցին նրանց: Այստեղ սլացավ Ագամեմնոնի ստվերը ևս: Փեսացուների հոգիների բազմություն մեջ Ագամեմնոնը ճանաչեց Ամփիմեդոնի հոգին, որի մոտ, Իթակեում, հյուր էր եղել ինքը, երբ գնացել էր Ողիսեսին տրոյական արշավանքին կանչելու Ագամեմնոնի ստվերը հարցրեց Ամփիմեդոնի հոգուն.

— Ասա ինձ, ինչո՞ւ եք այսպիսի բազմությունք այս խավարի թագավորությունը եկել: Փոթորիկ՞ եք զոհ գնացել արդյոք, թե՞ թշնամիներն են կոտորել ձեզ, երբ դուք կողոպտում էիք նրանց տները և հափշտակում ունեցվածքը:

Պատմեց Ամփիմեդոնը, թե ինչպես ուզում էին կնություն առնել Պենելոպեին, կարծելով, թե Ողիսեսը չի վերադառնա, բայց հավատարիմ էր Ողիսեսին Պենելոպեն, լսել անգամ չէր ուզում ամուսնություն մասին: Վերադարձավ, վերջապես, Ողիսեսը և դաժանորեն վրեժխնդիր եղավ նրանց վայրագություն և իր ունեց-

¹ Սպիտակ ժայռ, որ ըստ հույների պատկերացման գտնվում էր Հաղեսի ստորերկրյա թագավորության մոտքի մոտ:

² Վայրի կակալ՝ բաց զեղևավուն գույնի:

վածքը կողոպտելու համար: Ուրախացավ Ագամեմնոնի հոգին, որ Ողիսեսը բարեհաջող խույս է տվել բոլոր վտանգներից, և բացահանչեց:

— Օ՞, ի՞նչ բախտավոր ես դու, սիրելիդ իմ Ողիսես: Մե՛ծ էլիքնի բո հավատարիմ կնոջ՝ Պենելոպեի փառքը, կերգեն նրա փառքը, և հավերժ կապիի նրա հիշատակը: Այլ էր իմ ճակատագիրը: Ինձ դավաճանեց կինս: Մարդկանց մեջ առհավետ սոսկալի հիշատակ կմնա նրա մասին:

ՈԳԻՍԵՎԱԸ ԼԱԵՐՏԻ ՄՈՏ

Առավոտը վաղ, զինավառվելով շողշողուն զրահներով, վահաններով ու նիզակներով, Ողիսեսը, Տելեմաքոսը, էվմեոսն ու Փիլոտիոսը գնացին Լաերտի մոտ: Իսկ Պենելոպեն Ողիսեսին պատվիրեց սլալատից ոչ մի տեղ չգնալ, որովհետև նա գիտեր, որ փեսացուների սպանության լուրը իսկույն կտարածվի քաղաքում: Թանձր ամպով պարուրված, Ողիսեսն ու նրա ուղեկիցները արագությունը կտրեցին-անցան քաղաքը և դաշտ դուրս եկան: Շուտով մոտեցան Լաերտի տանը, ուր ապրում էր նա՝ իր ստրուկների և ծեր սպասուհու հետ: Ողիսեսն իր ուղեկիցներին տուն ուղարկեց ճաշկերույթի պատրաստություն տեսնելու, իսկ ինքը գնաց այգի՝ Լաերտին փնտրելու: Ողիսեսը գտավ իր դառամած հորը աշխատելիս: Նա մի դալար ծառ էր տնկում: Լաերտի վերնազգեստը պատած էր կարկատաններով, ոտքերին սանդալներ էին, գլխին տրորված այծենուց գլխարկ էր դրված, իսկ ձեռքին ձեռնոցներ էր հագել: Հորը տեսնելուն պես, լաց եղավ Ողիսեսը: Խղճաց ծերուկին, երբ տեսավ այդպես աղքատի նման հագնված: Տատանվում էր Ողիսեսը, թե ինչպես վարվի. իսկո՞ւյն հայտնի հորը իր ուղեկիցները, թե նախ թաքցնի այդ և տեսնի, թե կճանաչի՞ արդյոք հայրն իր որդուն:

Վերջապես Ողիսեսը վճռեց այսպես վարվել. մոտեցավ հորը և, ձևանալով, թե չի ճանաչում նրան, սկսեց խոսել նրա հետ, իբրև մի հասարակ աշխատողի և հարցուփորձ անել, թե ում է պատկանում այգին և ինչ է տիրոջ անունը: Իր մասին Ողիսեսը հնարավոր մի պատմություն սարքեց՝ իբրև օտարական ներկայացնելով իրեն, և ավելացրեց.

— Մի ժամանակ ես հյուրընկալել եմ իմ տանը Ողիսեսին և

հարուստ շեծաներ պարգևել նրան: Այժմ եկել եմ նրա հյուրընկալությունը վայելելու: Ասա՛ ինձ, իրո՞ք ես Իթակե կղզում եմ:

Արցունքի մի մեծ կաթիլ ընկավ ծերունի կանրտի աչքից և նա պատասխանեց.

— Օտարակա՛ն, դու իրոք Իթակեում ես, բայց այստեղ չես գտնի դու Ողիսևսին: Չար մարդիկ զավթել են նրա տունը: Ողիսևսը երևի զոհվել է: Ես նրա հայրն եմ: Բայց ասա ինձ, ո՞վ ես դու: Որտեղի՞ց ես եկել:

Ողիսևսը նորից հնարովի անուն տվեց իրեն, և կրկին խոսեց Ողիսևսի մասին, ասելով, թե արդեն հինգ տարի է անցել այն օրից, ինչ իր տանն ընդունել է Ողիսևսին: Երբ լսեց այդ, տրամեց կանրտը: Երկու ձեռքով հող առավ գետնից, լցրեց զլսի՛ն և բարձրաձայն հեծեծաց անհուն վշտից: Ողիսևսն այլևս անկարող էր տեսնել հոր վիշտը: Նա դեպի հայրը նետվեց, գիրկն առավ նրան և բացականչեց.

— Հա՛յր, ես քո Ողիսևսն եմ: Աստվածների կամքով ես Իթակե եմ վերադարձել: Մի՛ լար այլևս: Ես վրեժ եմ լուծել իմ տունն ավերող փեսացուներից:

Առաջին պահին շհավատաց նրան կանրտը. նախ պահանջեց ապացուցել, որ իրոք իր առջև որդին է կանգնել: Այդ ժամանակ Ողիսևսը բացեց ոտքի սպին և թվեց բոլոր մրգատու ծառերը, որ կանրտը ընծայել էր նրան դեռ մանուկ հասակում: Կաց եղավ ուրախությունից ծերունին, զրկեց Ողիսևսին ու գոչեց.

— Օ՛, վսեմաշուք հայր Զևս: Լուսապայծառ Օլիմպոսում դեռևս կան աստվածներ, եթե շարագործները մահվամբ քավել են իրենց մեղքը: Բայց ես վախենում եմ, թե այստեղ կգա Իթակեի ողջ բնակչությունը՝ հարազատների վրեժը լուծելու:

Բայց Ողիսևսը միամտացրեց հորը և տուն տարավ նրան, որ արդեն սեղան էր զգված: Լվացվեց կանրտը և մաքուր զգեստներ հագավ, իսկ Աթենաս դիցուհին առույգացրեց ու երիտասարդացրեց նրան: Ուրախ սրտով հացկերույթի նստեցին նրանք: Այդ ժամանակ ծեր սարուկ Դոլիոսը վերադարձավ իր որդիների հետ: Տուն մտնելուն պես, զարմացած կանգ առավ նա, ճաշկերույթին տեսնելով հյուրին և հանկարծ՝ ճանաչեց Ողիսևսին: Դեպի Ողիսևսը նետվեց և սկսեց համբուրել նրա ձեռքերն ու ոտքերը, բերկրությամբ աստվածների օրհնությունը կոչելով՝ ի բարօրություն նրա: Ուրախ էր հացկերույթը ծերունի կանրտի տանը:

Մինչ այդ, լուր տարածվեց քաղաքում, որ վերադարձել է Ողիսևսը և սպանել փեսացուներին: Վրդովմունքի ազադակով դեպի Ողիսևսի պալատը փութացին փեսացուների ազգականները՝ ողջ ժողովրդի հետ միասին, և դուրս բերին սպանվածների դիակները: Ապա հավաքվեցին քաղաքային հրապարակում և սկսեցին քննել, թե ինչպես վարվեն: Անտիսոսի հայրը, ծերունի էվպելտոսը, սկսեց զրգուել ժողովրդին՝ ապստամբելու Ողիսևսի դեմ և փեսացուների մահվան վրեժն առնելու: Միայն երգիչ Փեմիոսն ու մունեստի Մեդոնն էին համոզում ժողովրդին ձեռք չբարձրացնել Ողիսևսի վրա, որովհետև իրենք ականատես են եղել, որ աստվածները Ողիսևսի կողմն են, իսկ փեսացուները կործանվել են Զևսի կամքով: Ողիսևսին պաշտպան կանգնեց պատգամախոս Հալիփիբոսը ևս: Նա հիշեցրեց քաղաքացիներին, թե ինչպես ինքն ու Մենտորը խորհուրդ էին տալիս, որ թույլ չտան փեսացուներին ամբարտավանություն անել Ողիսևսի տանը: Այժմ հանցանքը քաղաքացիներինն է: Ավելի լավ է հնազանդել Ողիսևսին, ավելի մեծ պատուհաս զլիններին չբերելու համար: Քաղաքացիների մի մասը համաձայնեց Հալիփիբոսի հետ, իսկ մյուս մասը էվպելտոսի գրելաՎորությունը վազեցին զենքեր վերցնելու:

Բարձրագահ Օլիմպոսից տեսավ այդ բոլորը Աթենաս դիցուհին և հարցրեց ամպրոպային Զևսին.

— Հա՛յր Զևս, ասա ինձ, ի՞նչ ես վճռել: Անագորույն մա՛րտ կհրահրես այժմ դու, թե խաղաղություն կհաստատես թշնամիների միջև:

— Միրելի դուստրս,— պատասխանեց Զևսն Աթենասին,— չէ՞ որ դու վճռել էիր, որ Ողիսևսը պետք է վրեժ լուծի փեսացուներից: Նա վրեժխնդիր եղավ և ունի իրավունք: Իթակեի արքա կլինի Ողիսևսը: Մենք մոռացության կմատենենք փեսացուների մահը: Առաջվա նման սերը կիշխի Իթակեում: Հարստություն և խաղաղություն կտիրի այնտեղ:

Այդպես ասաց Զևսը: Աթենասն իսկույն Իթակե սլացավ: Քաղաքացիների հսկայական ամբոխն արդեն մոտենում էր կանրտի տանը: Դոլիոսի որդիներից մեկը նկատեց նրանց: Զինավառվեցին բոլորը, ուլքեր կային տանը: Զինվեցին նույնիսկ ծերունի կանրտն

ու Գողթոսը Տնից բակ դուրս եկան նրանք: Մենտորի կերպարանքով Ողիսևսին մոտեցավ Աթենասը: Ուրախացավ նա՝ ճանաչելով դիցուհուն և, Տելեմաքոսին դիմելով, ասաց.

— Որդի՛ս, այժմ ապացույց տուր, որ ողջ երկրում քաջուհի թյամբ հռչակված պանծալի տոհմից ես սերում:

— Սիրելիդ իմ հայր,— գոչեց Տելեմաքոսը,— կտեսնես, որ ես չեմ խայտառակի քո պանծալի տոհմը:

Այդ խոսքը լսեց նաև Լաերտը: Բերկրանքով լցվեց նրա սիրտը և գոչեց ծերունին.

— Օ՛հ, այս ի՛նչ օր եք պարզեում դուք ինձ, աստվածներ: Ուրախ ուրախ եմ ես: Տղաս ու թոռս վիճում են, թե ո՞վ է ավելի բաջակորով:

Լաերտին մոտեցավ Աթենասը և հրամայեց առանց նշան բռնելու դեպի թշնամին նետել նիզակը՝ օգնություն կանչելով Աթենաս աստվածուհուն և հորը՝ Զևսին: Ծոճեց նիզակը Լաերտը և նետեց: Նիզակը թափ անցավ էվպիստոսի պղնձակոփ սաղավարտից, փշրեց նրա գանգը, և ոստի՛ն անշնչացած գետին տապալվեց: Թշնամու վրա հարձակվեցին Ողիսևս ու Տելեմաքոսը: Իթակեի բոլոր քաղաքացիները կոչնչանալին, եթե որոտաթունդ ձայնով չգոչեր Աթենաս դիցուհին.

— Վե՛րջ տվեք կովին, Իթակեի բնակիչներ: Անհապաղ ցրվե՛ցե՛ք՝ առանց արյուն հեղելու:

Սոսկում պատեց Իթակեի ողջ բնակչությունը: Նրանց ձեռքերից ընկան զենքերը և գետնատարած փուլեցին նրանք, լսելով աստվածուհու բացականչությունը: Ուշքի գալու՛ն պես, փախուստի մատնվեցին քաղաքացիները, փրկելով իրենց կյանքը: Բարձրագույն աղաղակով Ողիսևսը նետվեց ճողոպրողներին հետապնդելու Բայց Զևսն արձակեց իր շանթը, որ շողշողալով ընկավ Աթենասի առաջ: Գիցուհին ետ պահեց Ողիսևսին և ասաց.

— Գիցանման որդիդ Լաերտի, սանձի՛ր ցասումդ: Խուսափիր արյունահեղ մարտից, որ չզայրանա վրադ Զևսն ամպրոպային:

Յնծաց Ողիսևսը և կանգ առավ, դադարեց հետապնդել Իթակեի փախուստի մատնված քաղաքացիներին: Շատ շանցած, Աթենաս-Պալլասը Մենտորի կերպարանքն առավ և տեղական խաղաղություն հաստատեց ժողովրդի և Ողիսևս արքայի միջև՝ փոխադարձ երդմամբ ամրապնդված:

Ա. Գ. Ա. Մ. Ե. Մ. Ն. Ո. Ն. Ե. Վ. Ո. Ր. Գ. Ի. Ն. Ն. Ր. Ա. Օ. Ր. Ե. Ս. Թ. Ե. Ս.

Ա. Գ. Ա. Մ. Ե. Մ. Ն. Ո. Ն.

Շարադրված է ըստ էսփիլեօի «Ազամեմնոն» ողբերգության:

Տրոյայի դեմ արշավանքի գնալիս, Ազամեմնոնն իր կնոջը՝ Կլիթեմենեստրային, խոստացավ անմիջապես լուր տալ, երբ կործանվեր Տրոյան և ավարտվեր արյունահեղ պատերազմը: Նրա առաքած սպասավորները խարույկներ պիտի վառեին լեռների կատարներին: Այդ ազդանշանը մի լեռնագագաթից մյուսին փոխանցելով, շուտով կհասներ նրա պալատին, և Կլիթեմենեստրան բոլորից շուտ կիմանար մեծ Տրոյայի անկման մասին:

Ինչ տարի տևեց Տրոյայի պաշարումը: Հասավ վերջին՝ տասներորդ տարին, երբ, ինչպես կանխագուշակված էր, պիտի կործանվեր Տրոյան: Կլիթեմենեստրան այժմ ամեն օր կարող էր լուր առնել Տրոյայի անկման և ամուսնու՝ Ազամեմնոնի վերադարձի մասին: Որպեսզի ամուսնու վերադարձը հանկարծակի չըբերի նրան, Կլիթեմենեստրան ամեն գիշեր ստրուկին ուղարկում էր քաղաքը պալատի տանիքը: Այնտեղ, առանց աչք կայցնելու կանգնում էր ստրուկը՝ աչքը գիշերվա խավարին հառած: Եվ ամառային տաք գիշերները, և՛ ամպրոպի ու փոթորկի պահին, և՛ ձմեռը, երբ անդամները սառչում էին ցրտից և ձյուն էր մաղվում, գիշերը տանիքի վրա կանգնում էր ստրուկը: Անցնում էր օրը օրի հետևից, և թագուհու կամքին հլու ստրուկը ամեն գիշեր սպասում էր պայմանական ազդանշանին: Դրան էր սպասում Կլիթեմենեստրան ևս: Բայց ո՛չ նրա համար, որ ցնծություն և զիմամբ ամուսնուն, ո՛չ, նա մոռացություն էր մատնել ամուսնուն՝ հանուն էգիսթոսի, և մտադրվել էր սպանել Ազամեմնոնին այն օրը, երբ հաղթողի փառքով հայրենիք կվերադառնար նա:

Մտիք գիշեր էր Ահա գունատվել սկսեց արեւելքը: Մոտ էր լուսարացը. հանկարծ հեռավոր լեռան գազաթին վառ կրակ նկատեց ստրուկը: Դա վաղուց փափագած ազդանշանն էր:

Կործանվել էր մեծ Տրոյան, շուտով տուն կվերահասունար Ագամեմնոնը: Ուրախացավ ստրուկը, ավարտվեց գիշերային ծանր հսկողութունը: Շտապեց Կլիթեմնեստրայի մոտ և հայտնեց ուրախալի լուրը: Բայց ուրախալի էր արդյոք դա Կլիթեմնեստրայի համար:

Որպեսզի կասկածի ամենաթեթև ստվեր անգամ չընկնի իր վրա, Կլիթեմնեստրան ձեռքերը, թե այդ լուրն իրեն էլ է ուրախացնում և, ստրուկներին կանչելով, զնաց աստվածներին զոհ մատուցելու Իսկ հոգու խորքում նենգամիտ Կլիթեմնեստրան մահ էր որոճում Ագամեմնոնի համար:

Քաղաքի բնակիչները ևս հավաքվեցին Ագամեմնոնի պալատի մոտ: Արագությամբ նրանց էլ էր հասել մեծ Տրոյայի կործանման լուրը:

Ավագանին ուզում էր արքունիքի մոտ դիմավորել Ագամեմնոնին, թեև երբեմն կասկածը տիրում էր նրանց, թե իրոք շո՞ւտ կվերահասունա իրենց արքան: Այդ կասկածները ցրեց ժամանած բանբերը. նա հայտնեց, որ արդեն հեռու չէ Ագամեմնոնը: Նորից ուրախացած ձեռքավ Կլիթեմնեստրան: Նա պալատ շտապեց, իբր այն պատճառով, որ ամեն ինչ պատրաստի դիմավորելու համար, բայց ամուսնուն դիմավորելու չէր պատրաստվում նա, այլ նրա սպանությանը:

Վերջապես հեռվում, երկանվի վրա, երևաց նաև ի՛նքը՝ Ագամեմնոնը, իր հաղթական զորաբանակի գլուխ անցած: Մաղիկներով և կանաչով զարդարված, բայցում էին ռազմիկները, իսկ նրանց հետևից բերում էին անթիվ-անհամար ավար և բազում գերուհիներ: Արքայի կողքին, երկանվի վրա, տխուր-տրտում նստել էր Պրիամոսի դուստրը՝ գուշակուհի Կասանդրան: Բարձրաձայն աղաղակներով դիմավորեց ժողովուրդը Ագամեմնոնին: Նրան ընդառաջ եկավ նաև Կլիթեմնեստրան: Նա հրամայեց ծիրանի գործվածքներով պատել դեպի ապարանքը տանող ողջ ճանապարհը: Ամուսնուն նա դիմավորում էր իբրև հյուրի: Ագամեմնոնը նույնիսկ երկյուղ էր կրում, թե կզայրացնի աստվածներին, եթե ընդունի այդ մեծաբանները: Հանեց սանդալները և պալատ գնաց Ագամեմնոնը, իսկ նրան հետևում էր նենգամիտ Կլիթեմնեստրան և պատմում, թե

ինչպես է սպասել նրան, ինչպես է տառապել նրանից անշատ լինելու համար. բայց պալատի մուտքի մոտ կանգնեց Ագամեմնոնի կինը և գոչեց.

— Զևս, Զևս, ի կատար անիր աղերսս: Օգնիր ինձ կատարելու այն, ինչ վճռել եմ ես:

Այս խոսքով Կլիթեմնեստրան պալատ մտավ:

Անխոս խոնավ էին քաղաքացիները պալատի մոտ: Մեծ աղետի ծանր նախազգացումը կեղեքում էր նրանց սիրտը, և նրանք չէին ցրվում:

Հանկարծ պալատից լսվեց մեռնող Ագամեմնոնի սոսկալի ճիչը:

Կլիթեմնեստրան սպանել էր Ագամեմնոնին լողարանից դուրս գալու պահին: Նա Ագամեմնոնի վրա է գցել լայն ու երկար ծածկոցը, որի մեջ ցանցն ընկածի նման խճճվել էր նա ու չէր կարողացել պաշտպանվել: Տապալի երեք հարվածով Կլիթեմնեստրան սպանել էր ամուսնուն:

Արնաներկ տապալը ձեռքին, արնաթաթավ զգեստով, Կլիթեմնեստրան դուրս եկավ ժողովուրդի առաջ: Սոսկումը տիրեց նրա գործած եղեռնին ականատես քաղաքացիներին, իսկ Կլիթեմնեստրան հպարտ էր դրանով, կարծես մեծ սխրանք էր գործել: Բայց կամաց-կամաց նրան էլ սկսեց տանջել խիղճը: Կլիթեմնեստրան երկյուղ էր կրում, որ ստիպված պիտի լինի տառապել այդ սպանության համար, վախենում էր, որ կհայտնվի Ագամեմնոնի անողորմ վրեժխնդիրը:

Պալատից դուրս եկավ նաև էգիսթոսը: Արդեն հագել էր արքայական զգեստները և ձեռքն առել արքայական գայիսունը: Ահավոր ցասմամբ լցվեց ժողովուրդը: Նրանք կտոր-կտոր կանխին էգիսթոսին, եթե Կլիթեմնեստրան պաշտպան չկանգնեք նրան: Կամաց-կամաց ցրվել սկսեցին Ագամեմնոնի մահվամբ ընկճված քաղաքացիները, իսկ էգիսթոսն ու Կլիթեմնեստրան պալատ մտան՝ ցնծալով, որ սոսկալի շարագործության զնով զավթել են իշխանությունը: Բայց եղեռնագործներին վիճակված չէր խույս տալ վրեժխնդրությունից, և անագորույն պատիժ էր վիճակված նրանց անողորմ ճակատագրի վճռով:

Ետեազոված է ըստ էսթիլիսի «Քոնփոնեն» (այսինքն՝ «մեռածի պատվին
գերեզմանի վրա գիւնի հեղողներ») ողբերգութեանը:

Շատ տարիներ անցան Ազամեմնոնի մահից: Մի անգամ հենց
պալատի մոտ դռնվող նրա գերեզմանին մոտեցան օտարականի
հազուատով երկու պատանի: Նրանցից մեկը, որ կլինէր տասնութ
տարեկան, զուտորված էր սրով, իսկ մյուսը, որ ավելի մեծ էր,
ձեռքին երկու նիզակ ուներ: Պատանիներից կրտսերը մոտ գնաց
շիրմին, զլիսից մի փունջ մազ կտրեց ու դրեց գերեզմանին: Քա
Ազամեմնոնի որդի Օրեսթեսն էր, որին հոր սպանութեան օրը
փրկել էր դայակը, և ապա դաստիարակելու տվել հայրենիքից
հեռու՝ Փոկիսում, Ստրոփոս արքային: Նրա հետ էր ընկերը՝ Ստրո-
փոսի որդի Պիլագոսը: Հենց որ Օրեսթեսն իր զոհը մատուցեց հոր
գերեզմանին, պալատի դռների մեջ երևացին ստրկուհիները՝ սեւեր
հագած: Նրանք գնում էին դեպի Ազամեմնոնի գերեզմանը: Նրանց
հետ էր սպանված արքայի դուստրը և՛ էլեկտրան: Սա հագել էր
ստրկուհիների նման սև զգեստներ. մազերը կարճ կտրած արքա-
յադուստրը ոչնչով չէր տարբերվում մնացած ստրկուհիներից:
Օրեսթեսն ու Պիլագոսը հայձեւայ թաքնվեցին գերեզմանի մոտ և

¹ Էնգելսն իր «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագու-
մը» գրքում ասում է, որ Բախհոֆենն իրավացի է, երբ «Մայրական իրավունքը»
աշխատության մեջ, օգտվելով Օրեսթեսի՝ հոր սպանության համար մորից վրեժ-
խնդիր լինելու առասպելից, ապացուցում է, որ այդ առասպելում արտահայտված
է կործանվող մայրական իրավունքի և հողթանակող հայրական իրավունքի պայ-
քարը: Ըստ առասպելի մայրական իրավունքի պաշտպաններն էին իրենից
նրանք հետապնդում են Օրեսթեսին ըստ մայրական իրավունքի ամենածանր հան-
ցանքի համար. չէ՞ որ նա սպանել է մորը, իր ամենամոտ արյունակից բարեկամին,
սպանել այն պատճառով, որ մայրն սպանել էր ամուսնուն, որի հետ արյունակցա-
կան կապ չուներ: Իսկ Ապոլոնն և Աթենաս աստվածները հայրական իրավունքի
պաշտպաններն են: Նրանք պաշտպան են կանգնում Օրեսթեսին, քանի որ իրավացի
են համարում նրան, որ վրեժխնդիր է եղել հոր համար, ըստ հայրական իրավուն-
քի՝ արյունակից, ամենամոտ բարեկամի համար: Աթենասն Արեոպագոսի դատարա-
նում ձայն է տալիս հօգուտ Օրեսթեսի արդարացման: Օրեսթեսն արդարացված է:
Այսպիսով հայրական իրավունքը հաղթում է մայրական իրավունքին: (Տ. Էնգելս,
«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», 1891 թ., 4-րդ
հրատարակության առաջաբանը):

սկսեցին հետևել, թե ինչ պիտի անեն ստրկուհիները: Իսկ նրանք
մոտեցան գերեզմանին և աղեկուոր ողբալով երեք անգամ պտույտ
եկան գերեզմանի շուրջը: Ստրկուհիներին ուղարկել էր Կլիթեմ-
նեստրան, որովհետև գիշերը շարագուշակ երազ էր տեսել և վախե-
նում էր, թե Ազամեմնոնի հոգին զայրանում է իր դեմ: Ստրկուհի-
ները Ազամեմնոնի գուլթը պիտի շարժեին: Բայց նրանք ատում
էին Կլիթեմնեստրային՝ Ազամեմնոնի սպանութեան և իրենց ճնշելու
համար: Կլիթեմնեստրան ճնշում էր նրանց, քանի որ բոլորը գերի
տրոյուհիներ էին, և նրանց նայելով՝ հիշում էր սպանված ամուս-
նուն:

Հոր սովորից գթութուն հայցելու փոխարեն էլեկտրան ստրու-
կուհիների խորհրդով կոչեց աստվածներին՝ վրեժխնդիր լինել Կլի-
թեմնեստրայից: Եվ այլ կերպ էլ վարվել չէր կարող նա: Հոգու ողջ
զորութեամբ էլեկտրան ատում էր մարդասպան մորը:

Երբ զոհը մատուցված էր, և ստրկուհիներն ուզում էին հե-
ռանալ, հանկարծ էլեկտրան գերեզմանի վրա տեսավ մազբեխ մի
փունջ: Իր մազերի հետ ունեցած նմանությունից իսկույն կռահեց,
որ Օրեսթեսն մազերն են դրանք: Վերցրեց մազերի փունջը ու մտա-
սուզվեց. ինչու՞ չի եկել ինքը՝ Օրեսթեսը, ինչու՞ մազերի փունջն
է ուղարկել միայն: Այդ պահին կամացուկ քրոջը մոտեցավ Օրես-
թեսը ու ձայն տվեց: էլեկտրան իսկույն չճանաչեց Օրեսթեսին. չէ՞
որ մանուկ հասակում էր տեսել նրան: Բայց Օրեսթեսը ցույց
տվեց իր զգեստը, որ մի ժամանակ էլեկտրան էր գործել իր հա-
մար: Ուրախացավ էլեկտրան: Օրեսթեսը պատմեց, որ այստեղ է
եկել կամոքն Ապոլոնն աստծո, որ Դելփիքում իրեն հրամայել էր
վրեժխնդիր լինել մորից և էգիսթոսից՝ հոր մահվան համար:
Ապոլոնն սպառնում էր ցնորել Օրեսթեսի միտքը, եթե խախտի իր
կամքը: Օրեսթեսը խնդրեց քրոջը զգուշ լինել և ոչ ոքի չասել, որ
ինքը հայրենի քաղաք է վերադարձել:

Երբ էլեկտրան պալատ վերադարձավ, մի քիչ անց Օրեսթեսն
ու Պիլագոսը ծեծեցին դարպասը, դուրս եկած սպասավորին ասա-
ցին, թե ուզում են տեսնել Կլիթեմնեստրային՝ կարևոր լուր հա-
ղորդելու համար: Սպասավորը դուրս կանչեց նրան պալատից և
Օրեսթեսն ասաց, թե Փոկիսի արքան խնդրել է հաղորդել նրան, որ
մեռել է Օրեսթեսը և արքան չգիտե, թե ի՞նչ անի նրա մարմինը:
Այդ լուրն ուրախացրեց Կլիթեմնեստրային. այլևս չկար նա, ով
կարող էր վրեժ լուծել ամուսնու սպանության համար: Կլիթեմնես-

Շարադրած է ըստ Էսփրիսի «Էլվենդին» ողբերգության:

տրան Օրեսթեսի մահվան լուրն ուղարկեց նաև քաղաքում գտնվող էգիսթոսին, որն շտապեց պալատ վերադառնալ՝ շվերցնելով հետը նույնիսկ այն ռազմիկներին, որ ամենուրեք պահպանում էին իրեն: Ստույգ մահվանն ընդառաջ էր շտապում էգիսթոսը: Պալատ մտնելուն պես Օրեսթեսը սրախոզխող արեց նրան: Սարսափահար Կլիթեմնեստրայի մոտ վաղեց ստրկուհիներից մեկը և օգնության կանչեց նրան: Հասկացավ Կլիթեմնեստրան, որ հատուցելու է գործած եղևունի համար:

Հանկարծ, արնաթաթավ սուրը ձեռքին, նրա սենյակը մտավ Օրեսթեսը: Ոտքերն ընկավ Կլիթեմնեստրան և աղաչեց խնայել իրեն՝ չէ՞ որ Օրեսթեսի մայրն է ինքը, որ իր կրծքով կերակրել է նրան: Օրեսթեսն անկարող էր խնայել նրան. նա պետք է կատարեր Ապոլոնի կամքը: Ելեց նա մոր ձեռքը, տարավ այնտեղ, ուր ընկած էր էգիսթոսի դիակը և հենց այնտեղ էլ սպանեց նրան: Այդպես վրեժխնդիր եղավ Օրեսթեսը հոր համար:

Կլիթեմնեստրայի և էգիսթոսի մահվան լուրն առնելով, սարսափահար ժողովուրդն սկսեց հավաքվել պալատի դռների մոտ: Քաղաքացիներից ոչ մեկը մազաշափ իսկ չկարեկցեց բոլորին ատելի բռնակալ էգիսթոսին և նենգամիտ Կլիթեմնեստրային: Բացվեցին պալատի դռները և բոլորը տեսան էգիսթոսի և Կլիթեմնեստրայի արնաթաթավ դիակները, իսկ նրանց զլխավերևում սուրը ձեռքին կանգնել էր Օրեսթեսը: Արդար էր զգում իրեն Օրեսթեսը՝ այդ սպանությունը գործելով. չէ՞ որ նա Ապոլոնի կամքն էր կատարել, վրեժխնդիր լինելով հոր համար: Բայց հանկարծ Օրեսթեսի առաջ հայտնվեցին վրիժառույթյան անողորմ աստվածուհիներ՝ Էրինիները¹, նրանց զլուխների շուրջը զալարվում էին թունավոր օձերը, սոսկալի ցասամաբ փայլում էին նրանց աչքերը: Սարսուց Օրեսթեսը նրանց տեսնելով: Նա զգում էր, թե ինչպես կամաց-կամաց մթազնում է խելքը: Լքեց ապարանքը և, էրինիներից հալածված, գնաց Ապոլոնի սրբավայրը՝ Դելփիք, հուսալով, որ իրեն կատարի այն աստվածը, որի կամակատարն էր ինքը:

Վրիժառու էրինիներից հալածված, թափառումներից ու վըշտից տանջահար, Օրեսթեսը, վերջապես, հասավ սրբազան Դելփիք և նստեց այնտեղ, Ապոլոնի տաճարում՝ Օմփալոսի՝ մոտ: Մինչև իսկ Ապոլոնի տաճարում հետապնդում էին նրան զարհուրելի աստվածուհիները, բայց նետաձիգ աստվածը քնեցրեց և փակեց նրանց հալածող աչքերը:

Իսկ Ապոլոնը, էրինիներից ծածուկ, հայտնվեց Օրեսթեսին, պատվիրեց նրան Աթենք գնալ և պաշտպանություն աղերսել Աթենաս-Պալլաս դիցուհու հինավուրց պատկերից: Աստվածն իր օգնությունը խոստացավ դժբախտ Օրեսթեսին, իսկ իրեն ուղեկից ուղարկեց եղբորը՝ Հերմեսին: Վեր կացավ Օրեսթեսը, կամացուկ դուրս եկավ տաճարից և, Հերմեսի հետ, դեպի Աթենք գնաց:

Հենց նոր էր գնացել, երբ Ապոլոնի տաճարում գետնի տակից դուրս եկավ Կլիթեմնեստրայի ստվերը: Տեսավ քնած էրինիներին, սկսեց արթնացնել և հանդիմանել նրանց, որ դադարել են հետապնդել մայրական արյունը հեղած մարդասպանին: Նա շտապեցրեց հետապնդել անհետացած Օրեսթեսին և ոչ մի պահ դադար չտալ նրան: Բայց խոր, ծանր քնով էին ընկել էրինիները, քնի մեջ հառաչում էին նրանք, երբեմն ճշում, կարծես իրենցից փախչող մարդասպանին լինեին հետապնդելիս: Վերջապես մեծ դժվարությամբ արթնացավ էրինիներից մեկը և արթնացրեց մյուսներին: Ցասամաբ լցվեցին էրինիները, երբ տեսան, որ անհետացել է Օրեսթեսը: Սկսեցին հանդիմանել Ապոլոնին, որ մարդասպանին կորզել է իրենց ձեռքից, բայց Ապոլոնն սպառնաց նրանց իր աղեղով և արտաքսեց տաճարից: Ցասումնալից զայրույթով լցված, աստվածուհիների խառնիխուռն բազմությունը սլացավ Օրեսթեսի հետքերով:

Մինչ այդ, Օրեսթեսը գնաց Աթենք և նստեց Աթենաս դիցուհու արձանի մոտ՝ ձեռքերով զրկած նրան: Շատ շանցած, այստեղ հասան և էրինիները: Նրանք ամենուրեք փնտրել էին Օրեսթեսին:

¹ Դելփիքի տաճարում զրկած կտր քար: Հույների կարծիքով այդ քարը գտնվում է երկրի (որ նրանք հարթ էին պատկերացնում) ճիշտ կենտրոնում:

¹ Էրինիներ՝ բառացի նշանակում է սզայրափնածներ:

Սոսկալի զայրույթի մեջ վրեժխնդրութեան դիցուհիները պատրաստ էին ծվատել տարարախտին, բայց չէին հանդգնում վիրավորել Աթենասի սրբազան արձանը:

Լսեց Աթենասը էրինինների սպառնալի ձայները և հայտնվեց նրանց՝ շողացնելով իր զենք ու զրահը: Սպառնազին պահանջում էին էրինինները, որ դիցուհին իրենց իշխանութեանը հանձնի Օրեսթեսին. սոսկալի տառապանքների էին ուզում ենթարկել Օրեսթեսին՝ մայրասպանութեան համար: Իսկ Օրեսթեսն աստվածունուն աղերսում էր պաշտպանել իրեն: Հիշեցրեց Աթենաս-Պալլասին իր հորը՝ Ագամեմնոնին, և այն, թե նա ինչպես է զոհ զնացել նենգամիտ Կլիթեմնեստրայի ձեռքով: Մի՞թե իր կամքով է Օրեսթեսը վրեժ լուծել մորից: Չէ՞ որ նա Ապոլոնի կամքն է կատարել: Եվ Օրեսթեսն աղերսում էր Աթենասին, որ նա՛ դատի իրեն:

Լսեց Աթենասը Օրեսթեսի աղերսը: Նրա դատը վճռելու համար Աթենասը Աթենական ավագանիից դատարան ընտրեց: Դատարանը՝ արեոպագոսը¹, այդ ժամանակից ի վեր մշտապես պետք է լիներ Աթենքում և հավաքվեր այն բլրի վրա, ուր մի ժամանակ ամազոնուհիների ճամբարն էր ընկած, երբ նրանք հարձակվում էին թեսսի վրա: Իսկ բլուրն այդ ժամանակից ի վեր կոչվում էր Արեսի բլուր, որովհետև նրան զոհ էին մատուցել ամազոնուհիները:

Հավաքվեցին Աթենասի ընտրյալ դատավորները, երկու սափոր բերին, ուր ընտրությունների ժամանակ դատավորները քարեր պիտի գցեին, և սկսվեց դատը: Այնտեղ, իբրև դատավոր, մասնակցում էր Աթենաս դիցուհին ևս: Չորսը ուրը հավաքվել էր ժողովուրդը, կամենալով լսել, թե ինչպես են վճռել դատավորներն այդ գործը: Էրինինները մեղադրում էին Օրեսթեսին և սպառնալից պահանջում, որ դատապարտվի: Օրեսթեսին պաշտպանելու ներկայացավ ինքը՝ Ապոլոնն աստվածը: Անխռով խոսել սկսեց Ապոլոնը՝ ի պաշտպանություն Օրեսթեսի: Նա արդարացրեց Օրեսթեսի արարքը, քանի որ նա Կլիթեմնեստրայից վրեժխնդիր էր եղել սոսկալի շարագործության՝ ամուսնուն՝ մեծ հերոս և արքա Ագամեմնոնին սպանելու համար: Այո՛, վերջապես Օրեսթեսն ի կատար էր ածել իր կամքը: Դատավորները լսեցին մեղադրողներին ու պաշտպանին և և ապա անցան քվեարկության:

¹ Արեոպագոս — դատական ատյան Աթենքում, որ կազմված էր մեծազամ տոհմերի ներկայացուցիչներից:

Վճռեցին, որ եթե հավասար քանակով ձայներ ստանա Օրեսթեսը՝ և՛ մեղադրական, և՛ արդարացման. ապա կարդարացվի: Երբ դատավորների ձայները հաշվեցին, պարզվեց, որ մեղադրող և արդարացնող ձայների քանակը նույնն է: Իսկ այդ ձայները հավասար էին այն պատճառով, որ հօգուտ Օրեսթեսի ձայն էր տվել Աթենասը, ասելով, թե ինքը հօգուտ նրա է քվեարկում, որովհետև մայր չունի, այլ ունի միայն հայր՝ Զևս աստվածը:

Այսպիսով, Օրեսթեսն արդարացված էր, և էրինինները պետք է դադարեցնեին հետապնդումը:

Ահավոր մի ցասում համակեց էրինիններին. դատարանը զբրկում էր նրանց հանցագործին սոսկալի տանջանքներով պատժելու վաղեմի իրավունքից: Էրինինները սպառնում էին ամայացնել և աղետների ծով դարձնել ողջ Ատտիկան, բայց Աթենասը մեղմեց աստվածուհիների զայրույթը: Նրանց համողեց մշտապես մնալ Ատտիկայում, սրբազան քարայրում, ուր կմեծարեն նրանց բոլոր աթենացիները:

Համաձայնեցին ահավոր դիցուհիները: Մեծ շուքով քաղաքացիները Աթենասի և նրա քրմուհիների գլխավորությամբ էրինիններին տարան իրենց սրբավայրը՝ Արեսի բլրի ստորոտում՝ դտնվող քարայրը:

Այդ օրվանից ի վեր նրանք դարձան ողջ Ատտիկայի պաշտպանը և սկսեցին էվմենիդներ¹ կոչվել:

ՕՐԵՍԹԵՍԸ ԳՆՈՒՄ Է ՏԱՎՐԻՍ՝ ԱՐՏԵՄԻՍԻ ՍՐԲԱԶԱՆ ՊՍՏԿԵՐԸ ԲԵՐԵՆՈՒ

Շարադրված է ըստ Եվրիպիդեսի «Թիդեոսիան Տավրիսում» ողբերգության:

Չփրկվեց Օրեսթեսն էրինինների հետապնդումից: Բոլորը չէ, որ հպատակվեցին արեոպագոսի վճռին: Նրանցից մի քանիսն առաջվա նման հետապնդում էին Օրեսթեսին, հանդիստ շտալով նրան ո՛չ գիշերը, ո՛չ ցերեկը: Վերջապես տառապանքներից խռշտանգված Օրեսթեսը կրկին Դելփիք փախավ՝ Ապոլոնի սրբավայրը: Այնտեղ Ապոլոնը պատվիրեց նրան հեռավոր Տավրիս² գնալ և

¹ էվմենիդներ — ողորմած, բարեհաճ դիցուհիներ:
² Այժմյան Ղրիմը:

այնտեղից բերել Արտեմիս դիցուհու սրբազան անդրին: Վտանգա-
վոր սխարանք էր դա: Տավրիսում ապրող տավրերի ցեղը այդ արձա-
նի մոտ զոհաբերում էր իրենց երկիրը գնացող բոլոր օտարերկրա-
ցիներին: Նման ճակատագիրը կարող էր ունենալ նաև Օրես-
թեսը:

Այնուամենայնիվ, հեռավոր ճամփորդության դիմեց Օրեսթեսը:
Ինչ գնով էլ լիներ, Օրեսթեսն ուզում էր ազատվել էրինիների հե-
տապնդումից: Բարեբախտ նավարկութունից հետո ընկերոջ՝ Պիլա-
դեսի հետ Տավրիս հասավ և, նավը թաքցնելով առափնյա ժայռերի
մեջ, գնաց Արտեմիսի տաճարը: Օրեսթեսի մտքով իսկ չէր անց-
նում, որ այդ տաճարի քրմուհին իր քույրն է՝ Իփիգենիան, որին
հույները մի ժամանակ ուզում էին Արտեմիս դիցուհուն զոհաբե-
րել: Չհամարձակվեցին Օրեսթեսն ու Պիլադեսը ցերեկվա լույսով
հափշտակել Արտեմիսի արձանը և սպասեցին զիշերվան: Բայց
նրանց տեսան հովիվները, հարձակվեցին և երկար պայքարից
հետո կապտեցին ու տարան արքայի մոտ: Արքան վճռեց, որ
Երկուսին էլ պետք է զոհաբերել Արտեմիսին:

Առավոտյան երկուսին էլ կապտած տաճար տարան: Իփիգե-
նիան, առանց որևէ բան կասկածելու, իր ձեռքերով պիտի սպաներ
եղբորը: Գիշերը մի աճավոր երազ տեսավ նա. երկրաշարժից քանդ-
վել էր հոր տունը, և մնացել էր մի սյուն միայն, որից խարտյաչ
գանգոտներ էին կախված, իսկ նա լվանում էր սյունը՝ ասես կամե-
նալով զոհաբերել այն: Կարծում էր Իփիգենիան, թե զոհվել է իր
եղբայրը՝ Օրեսթեսը, և վճռեց ի պատիվ մեռած եղբոր՝ զոհ մատու-
ցել: Չոհաբերության պահին արքայի ծառաները նրա մոտ բերին
կապկապած Օրեսթեսին և Պիլադեսին: Սկսեց հարցուփորձ անել
Իփիգենիան, թե ովքեր և որտեղից են նրանք, իմանալով, որ հույ-
ներ են, հարցրեց Ազամեմնոնի և եղբոր՝ Օրեսթեսի մասին: Ուրա-
խալի քիչ բան կարողացան պատմել Օրեսթեսն ու Պիլադեսը:

Վերջապես Իփիգենիան վճռեց պատանիներից մեկին միայն
զոհաբերել, իսկ մյուսին նամակ տալ և ուղարկել Հունաստան,
Օրեսթեսի մոտ, որպեսզի իմանա նա, որ քույրը՝ Իփիգենիան,
կենդանի է: Այստեղ միայն պարզվեց, որ քույր ու եղբայր են հան-
դիպել իրար: Այդ հանդիպումը բերկրանքով լցրեց Օրեսթեսի ու
Իփիգենիայի սրտերը: Բայց ինչպե՞ս փախչել Տավրիսից:

Իփիգենիան վճռեց խաբեության գիմել: Նա տավրերի արքա-
յին հայտարարեց, թե Արտեմիսի արձանը պղծված է, և որ ծովում

պետք է լվանալ և՛ արձանը, և՛ աստվածուհու զոհերին՝ օտարերկ-
րացիներին: Համաձայնեց տավրերի արքան:

Հանդիսավոր երթով Իփիգենիան, տաճարի սպասուհիների հետ
միասին, գնաց ծովափ, այնտեղ, ուր թաքցրած էր Օրեսթեսի նավը:
Սպասուհիները տանում էին Արտեմիսի անդրին, իսկ արքայի սպա-
սավորները՝ կապտած Օրեսթեսին ու Պիլադեսին: Երբ ծովափ հա-
սան, Իփիգենիան արքայի սպասավորներին հրամայեց հեռանալ,
քանի որ նրանք չպետք է տեսնեին լվացման գաղտնի արարողու-
թյունը, Երբ սպասավորները հեռացան, Իփիգենիան ազատեց եղ-
բորն ու նրա հավատարիմ ընկերոջը և նրանց հետ ղեպի նավը
շտապեց: Կասկածելի թվաց սպասավորներին, որ այդքան երկար
է տևում արարողությունը: Ափ գնացին նրանք և զարմացած տեսան
մի նավ, որով Օրեսթեսն ուզում էր տանել Իփիգենիային: Օրես-
թեսի վրա հարձակվեցին արքայի սպասավորները, որ խլեն իրենց
քրմուհուն: Կռիվ սկսվեց, բայց փախուստի մատնեցին Օրեսթեսն
ու Պիլադեսը արքայի սպասավորներին: Նավ մտավ Օրեսթեսը՝
Իփիգենիայի և իր ուղեկիցների հետ միասին: Թիակները գործի
դրին թիավարները և բաց ծով դուրս եկան: Բայց նրանց վիճակված
չէր այդքան գյուրությամբ հեռանալ Տավրիսից:

Սոսկալի փոթորիկ բարձրացավ և նավը նորից ծովափ քշեց:
Կերծանվեին նավի վրա գտնվող բոլոր հույները՝ մատնվելով
տավրերի արքայի ձեռքը, եթե նրանց օգնության չհասներ Աթենաս-
Պալլաս դիցուհին: Նա հայտնվեց տավրերի արքային և հրամայեց
թողնել, որ Հունաստան գնան ոչ միայն Իփիգենիան, նրա եղբայրն
ու բոլոր ուղեկիցները, այլ նույնիսկ Արտեմիսի տաճարի բոլոր
սպասուհիները: Արքան հնազանդեց դիցուհու կամքին: Այժմ Իփի-
գենիան կարող էր վերադառնալ հայրենիք, որտեղից Արտեմիս դի-
ցուհին մի ժամանակ տավրերի երկիրն էր տարել նրան:

Բարեբախտ նավարկությամբ վերադարձավ Օրեսթեսը: Հայրե-
նիք վերադառնալուն պես սպանեց էդիսթոսի որդուն՝ Ալեստոսին,
որ նրա բացակայությամբ զավթել էր գահը: Իր հավատարիմ ընկե-
րոջը՝ Պիլադեսին, որ Տավրիսում պատրաստ էր մեռնել նրա հա-
մար՝ Իփիգենիայի ձեռքով, Օրեսթեսը կնության տվեց իր քրոջը՝
էլեկտրային: Իսկ Իփիգենիան դարձավ Արտեմիս դիցուհու քրմու-
հին այն տաճարում, որ կառուցված էր Ատտիկայում, ծովափին,
Աթենքի մոտ:

Թ Ե Ր Ե Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ք

ԷԴԻՊ: ՆՐԱ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ: ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԹԵՐԵ

Շարադրված է բոս Սոփոկլեսի «Էդիպ աբսա» ողբերգության:

Թերեի արքան՝ Կադմոսի որդի Պոլիդորոսը, և սրա կինը՝ Նյուկոստոսը, ունեին Լաբդակոս անունով մի որդի, որը և ժառանգեց Թերեի իշխանությունը: Լաբդակոսի որդին և փոխանորդը Լայոսն էր: Մի անգամ Լայոսն այցելեց Պելոպոսին և երկար ժամանակ հյուրընկալվեց նրա մոտ՝ Պիսայում: Սև ապերախտություն վարձահատույց եղավ Լայոսը Պելոպոսին հյուրընկալության փոխարեն: Լայոսը փախցրեց Պելոպոսի պատանի որդուն՝ Քրիսիպոսին և տարավ իր մոտ՝ Թերե: Զայրույթով լցված ու վշտահար՝ հայրը նզովեց Լայոսին և այդ նզովքի մեջ կամեցավ, որ աստվածները պատիժ տան իր որդուն հափշտակողին, այնպես, որ նրան կործանի իր իսկ որդին: Այդպես նզովեց Քրիսիպոսի հայրը, և պետք է ի կատար ածվեր նրա նզովքը:

Վերադառնալով յոթնագուուն Թերե, Լայոսն ամուսնացավ Մենոկլեսի դստեր՝ Իոկաստեի հետ: Երկար ժամանակ խաղաղ կյանք վարեց Լայոսը Թերեում: միայն մի բան էր անհանգստացնում նրան. երեսա չէր ունենում նա: Վերջապես Լայոսը վճռեց գնալ Դելփիք և Ապոլոն աստծուն հարցում անել, թե ի՞նչն է իր անդավակության պատճառը: Ահավոր պատասխան տվեց Ապոլոնի թրամուհի պիթիան: Նա ասաց.

— Լաբդակոսի որդի՛, աստվածները կկատարեն քո ցանկությունը, բայց գիտցած եղիր, դու կկործանվես որդուդ ձեռքով: Ի կատար կածվի Պելոպոսի նզովքը:

Սոսկումը տիրեց Լայոսին: Երկար միտք էր անում, թե ինչպես խուսափի անողորմ ճակատագրից. վերջապես նա վճռեց ծնվելուն պես սպանել որդուն:

Շուտով իրոք որ Լայոսը արու զավակ ունեցավ: Դաժան հայրը, մանկան ներբանները սուր երկաթով ծակելուց հետո, փոկերով կապոտեց ոտքերը և ապա կանչեց ստրուկին և հրամայեց մանկանը նետել Կիթերոնի՝ լեռնալանջին փոված անտառը, որ վայրի գազանները հոշոտեն նրան: Բայց ստրուկը չկատարեց Լայոսի հրամանը: Նա խղճաց մանկանը և ծածուկ փոքրիկ տղային տվեց Կորնթոսի արքա Պոլիբոսի ստրուկին, որը հենց այդ ժամանակ տիրոջ հոտը արածացնում էր Կիթերոնի լանջերին: Ստրուկը տղային տարավ Պոլիբոս արքայի մոտ, իսկ նա անզավակ էր և վճռեց վերցնել ու դաստիարակել նրան իբրև իր ժառանգի: Պոլիբոս արքան տղային էդիպ² անվանեց, վերքերից ուռած ոտքերի պատճառով:

Այդպես էլ մեծացավ էդիպը Պոլիբոսի և նրա կնոջ՝ Մերոպեի մոտ, որոնք իրենց որդին էին կոչում նրան, իսկ էդիպն իր ծնողներն էր համարում նրանց: Բայց մի անգամ, երբ էդիպը մեծացել ու աննացել էր, խնջույքի ժամին ընկերներից մեկը գինովցած ժամանակ նրան որդեգրած անվանեց, որ շատ զարմացրեց էդիպին: Կասկածը բուն դրեց նրա հոգում: Գնաց նա Պոլիբոսի և Մերոպեի մոտ և երկար համոզում էր բանալ իր ծննդյան գաղտնիքը: Բայց ոչ Պոլիբոսը, ոչ էլ Մերոպեն ոչինչ չասացին նրան: Եվ էդիպը վճռեց ճանապարհ ընկնել դեպի Դելփիք և այնտեղ իմանալ իր ծննդյան գաղտնիքը:

Սովորական պանդուխտի նման, էդիպը բռնեց Դելփիքի ճամփան: Տեղ հասավ և հարցում արեց պատգամախոսին: Գուշակ պիթիայի բերանով պատասխան տվեց ճաճանչափայլ Ապոլոնը.

— էդիպ, սոսկալի է ճակատագիրը քո: Դու կսպանես հորդ, կամուսնանաս հարազատ մորդ հետ և այդ ամուսնությունից կծնվեն երեխաներ, որոնց կնզովեն աստվածները և կատեն բոլոր մարդիկ:

Սոսկումը տիրեց էդիպին: Ինչպե՞ս խույս տալ անողորմ ճակատագրից, ինչպե՞ս խուսափել հայրասպանությունից և մոր հետ ամուսնանալուց: Չէ՞ որ պատգամախոսը շտվեց ծնողների անունը: էդիպը վճռեց այլևս չվերադառնալ Կորնթոս: Ի՞նչ կլինի, եթե հանկարծ Պոլիբոսը և Մերոպեն նրա ծնողները լինեն: Մի՞թե նա

¹ Լեոնեթ Միշին Լուսաստանում, Ատտիկայի և Բեոտիայի միջև
² Բնագրով էպիդուս, որ թարգմանաբար կնշանակի «ուռած ոտք» (Մ. Թ.):

պիտի դառնա Պոլիբոսին սպանողը և Մերոպեի ամուսինը: Էդիպը վճռեց մշտապես անտոհմ ու անհայրենիք թափառական մնալ:

Բայց հնարավո՞ր բան է խույս տալ ճակատագրից: Չգիտեք էդիպը, որ ինչքան էլ ջանա խույս տալ իր բախտից, այնքան ավելի հաստատ կզնա այն ճանապարհով, որ վիճակել էր նրան ճակատագրի: Անօթևան թափառականի նման հեռացավ էդիպը Դելփիբից: Նա շղիտեք, թե ուր գնա և ընտրեց առաջին հանդիպած ճանապարհը: Դա Թեբե տանող ճամփան էր: Այդ ճանապարհին, Պառնասի ստորոտում, ուր միանում են երեք ճանապարհ, մի նեղ կիրճում էդիպը հանդիպեց մի երկանվի, որով գնում էր ճերմակահեր, փառահեղ տեսքով մի ծերունի. մուկնտիկը վարում էր երկանիվը, իսկ նրան հետևում էին սպասավորները: Մուկնտիկը կոպտաբար ձայնեց էդիպին, հրամայեց ճամփա տալ և մտրակը թափ տվեց վրան: Զայրացած էդիպը խփեց մուկնտիկին և արդեն ուզում էր անցնել երկանիվի կողքից, երբ հանկարծ ծերունին վրա բերեց գավազանը և հարվածեց էդիպի գլխին:

Կատաղեց էդիպը և, գայլազնամ, իր գավազանով այնպես խփեց ծերունուն, որ նա մեջքի վրա դետնին տապալվեց անշնչացած: Հարձակվեց էդիպը ուղեկիցների վրա և բոլորին ջարդեց, միայն ստրուկներից մեկին վիճակվեց աննկատ ճողոպրել: Այսպես ի կատար ածվեց ճակատագրի պատվիրանը. էդիպը՝ շճանաշելով, սպանեց իր հորը՝ Լայոսին: Չէ՞ որ դա Լայոսն էր, որ Դելփիք էր գնում Ապոլոնին հարցնելու, թե ինչպես փրկի Թեբեն Սֆինքսից:

Էդիպը հանգիստ ու անվրդով շարունակեց իր ճամփան: Սպանության համար նա իրեն հանցավոր չէր համարում. չէ՞ որ ինքը չէր նախահարձակ եղել, այլ պաշտպանվել էր միայն: Ավելի ու ավելի հեռուն էր գնում էդիպն իր ընտրած ճանապարհով և, վերջապես, հասավ Թեբե:

Հուսահատություն էր տիրում Թեբեում: Երկու աղետ էր վրա հասել Կադմոսի քաղաքին: Տիփոնից և Էքիդնայից ծնված սոսկալի Սֆինքսը բնակություն էր հաստատել Թեբեի մոտ, Սփինդիոն լեռան վրա և նորանոր զոհեր էր պահանջում, իսկ հենց այդ ժամանակ էլ ստրուկը լուր էր բերել, թե Լայոս արքային սպանել է ինչ-որ անհայտ մի մարդ: Տեսնելով քաղաքացիների վիշտը, էդիպը վճռեց ազատել նրանց այդ աղետից, վճռեց ինքը գնալ Սֆինքսի մոտ: Սֆինքսը սոսկալի մի հրեշ էր՝ կնոջ գլխով, հսկա առյուծի մարմնով, առյուծի սուր ճիրաններով գինված թաթերով և հսկա-

յական թևերով: Աստվածները վճռել էին, որ Սֆինքսը Թեբեի մոտերքում պիտի մնա այնքան ժամանակ, մինչև մեկն ու մեկը չլուծի նրա հանելուկը: Այդ հանելուկը մուսաներն էին հաղորդել նրան: Իր մոտից անցնող բոլոր ճամփորդներին Սֆինքսը ստիպում էր լուծել այդ հանելուկը, բայց ոչ ոք չէր կարողանում լուծել այն, և բոլորը մեռնում էին տանջալից մահով՝ Սֆինքսի երկաթյա գրկում, ճիրանավոր թաթերի մեջ: Բազում քաջակորով թեբեցիներ էին փորձել փրկել քաղաքը Սֆինքսից, բայց բոլորն էլ զոհ էին գնացել:

Գնաց էդիպը Սֆինքսի մոտ, որը նրան առաջարկեց իր հանելուկը.

— Ասա ինձ, այն ո՞վ է առավոտը շորս ոտքով քայլում, կեսօրին՝ երկու, իսկ երեկոյան՝ երեք ոտքով: Երկրի վրա ապրող էակներից ոչ մեկն այնպես չի փոխվում, ինչպես նա: Երբ շորս ոտքով է քայլում՝ նրա ուժն ավելի պակաս է լինում և նա ավելի դանդաղ է շարժվում, քան ուրիշ ժամանակ:

Մի ակնթարթ իսկ շխորհեց էդիպը և իսկույն պատասխան տվեց.

— Մարդը, երբ նա փոքր է դեռ, նրա կյանքի առավոտն է, նա անուժ է լինում և դանդաղ սողում է շորերթաթ: Կեսօրին, այսինքն հասուն տարիքում, նա քայլում է երկու ոտքով, իսկ երեկոյան, այսինքն ծերության շրջանում, նա զառամում է և նեցուկի կարիք զգալով հենակ է ձեռքն առնում. այն ժամանակ նա քայլում է երեք ոտքով:

Այդպես լուծեց էդիպը Սֆինքսի հանելուկը: Իսկ Սֆինքսը թափահարեց թևերն ու ժայռից ծովը նետվեց: Աստվածները վճռել էին, որ Սֆինքսը պիտի կործանվի, եթե մեկն ու մեկը լուծի նրա հանելուկը:

Էդիպն այդպես փրկեց Թեբեն աղետից:

Երբ էդիպը Թեբե վերադարձավ, թեբեցիները նրան թագավոր հռչակեցին, քանի որ Կրեոնը, որ իշխում էր սպանված Լայոսի փոխարեն, նախօրոք վճիռ էր կայացրել՝ Թեբեի արքա պիտի լինի նա, ով կազատի նրանց Սֆինքսից: Թեբեում թագավորելիս, էդիպն ամուսնացավ Լայոսի այրու՝ Իոկաստեի հետ և նրանից ունեցավ երկու դուստր՝ Անտիգոնեն ու Իսմենեն, և երկու որդի՝ Էթեոկլեսն ու Պոլինիկեսը: Այդպես ի կատար ածվեց ճակատագրի երկրորդ պատվիրանը ևս: Էդիպը դարձավ մոր ամուսինը և նրանից զավակներ ունեցավ:

Ետեւորված է բառ Առփոյնի «էդիպ արեա» ողբերգության:

ժողովրդի կողմից արքա հռչակված էդիպը իմաստուն իշխում էր Քերեոմ: Երկար ժամանակ ոչ մի բան չվրդովեց Քերեի և արքայական ընտանիքի անդորրը: Բայց չէ՞ որ ճակատագիրը դժբախտութիւն էր վիճակել նրան: Եվ ահա, սոսկալի մի աշետ պատուհասեց Քերեն: Նետաձիգ Ապոլոն աստվածը Քերեն դատապարտեց սոսկալի մի հիվանդութիւն, որին զոհ էին գնում ինչպես ծեր, այնպես էլ նրիտասարդ բաղաբացիները: Եվ Քերեն կարծես առանձին մի գերեզմանատուն դարձավ: Անթաղ դիակներն ընկած էին փողոցներում ու հրապարակներում: Ամենուրեք հառաչանք ու հեծեծանք էր լսվում: Ամեն տեղ լսվում էր կանանց ու մայրերի ողբաձայն լացը: Ոչ միայն սոսկալի հիվանդութիւնն էր մոլեգնում Քերեում, այնտեղ իշխում էր նաև քաղցը, քանի որ դաշտերը բերք չէին տալիս, խիկ նախիրը կոտորվում էր սարսափելի համաճարակից: Թվում էր, թե վրա է հասել մեծն Կարմոսի բաղաբի վերջին օրերը: Իզուր էին բաղաբացիները զոհեր մատուցում աստվածներին և փրկութիւն աղերսում նրանցից: Չէին լսում աստվածները նրանց աղերսը, աղետը գնալով ավելի էր աստկանում:

Քաղաքացիների բազմութիւնը գնաց էդիպ արքայի մոտ խնդրելու, որ օգնի իրենց, սովորեցնի ինչպես փրկվել կործանում սպառնացող աղետից: Չէ՞ որ մեկ անգամ արդեն էդիպն օգնել էր բաղաբացիներին փրկվելու Աֆիներսից: Էդիպն ինքն էր տառապում Քերեի և իր սեղնդի համար, նա Իոկաստեի եղբորը՝ Կրեոնին, ար-

¹ Էդիպի առասպելին Առփոյնի տված մեկնաբանութիւնը (նա իր ողբերգութիւնները գրել է Ն. թ. ա. 5-րդ դարում) պարզորոշ ցույց է տալիս, որ էրա պարտած ժամանակաշրջանում աստվածների հանդէպ տաժած հալածար արդեն սկզբն էր խախտվել: Առփոյնը ևս գտնում էր, որ ճակատագիրը աստվածներից էլ Պոսէյ, ուստի և մենք տեսնում ենք, որ էդիպը, որքան էլ ջանում է, այնուամենայնիվ, անկարող է խուսափել ճակատագրից, ոչինչ չի կարող փրկել բաղաբացարար էդիպին: Նա ինքն է ընդատաջ գնում իր կործանմանը, հակառակ իր կամքին՝ ինքն է նպատում հակատագրի կատարմանը: Եվ էդիպը կործանվում է, թեև մշտապես կրթու կերպով մեծարում էր աստվածներին: Էդիպի առասպելի Առփոյնիսյան մեկնաբանութիւնը մի վրա օրինակ է, որ ցույց է տալիս, թե առասպելներն ինչպես էին նոր հատկանիշներ ստանում, ինչպես էին փոփոխվում շին շունաստանի հասարակութիւն կոլտուրական անի համեմատ:

դեն ուղարկել էր Դելփիք՝ հարցում անելու Ապոլոնից, թե ինչպե՞ս պիտի ազատվել այդ աղետից: Շուտով պիտի վերադառնար Կրեոնը: Էդիպն անհամբեր նրան էր սպասում:

Ահա և վերադարձավ Կրեոնը: Նա բերել էր պատգամախոսի պատասխանը: Ապոլոնը հրամայել էր արտաքսել նրան, ով իր գործած հանցանքով Քերեի գլխին բերել է այդ աղետը: Արտաքսելով կամ նույնիսկ մարդասպանի մահապատժով պիտի բաղաբացիները հատուցեն կայոս արքայի արյան համար: Բայց ինչպե՞ս գտնել կայոսին սպանողին: Չէ՞ որ նա սպանվել էր ճանապարհին, և բոլոր ուղեկիցներն էլ սպանվել էին, բացառութեամբ մի ստրուկի: Ի՞նչ էլ որ լինե՞ր էդիպը վճռել էր գտնել մարդասպանին, ով էլ որ նա լինե՞ր, ո՞ր էլ որ թաքնվե՞ր, թեկուզև իր սեփական պալատում, եթե նույնիսկ այդ մարդասպանը լինե՞ր իր ամենամոտիկ մարդը: Էդիպը ողջ ժողովրդին ժողովի հավաքեց, որ խորհուրդ անի, թե ինչպես գտնեն մարդասպանին: Ժողովուրդը մատնացույց արեց գուշակ Քիրեսիոսին, նա՞ միայն կարող է օգնել: Բերում են կույր գուշակ Քիրեսիոսին: Էդիպը խնդրում է ասել, թե ո՞վ է կայոսին սպանողը: Ի՞նչ կարող է պատասխանել գուշակը: Այո՞, նա գիտե մարդասպանին, բայց անկարող է անունը տալ: — Օ՛, թող որ տուն դառնամ ես, մեզ՝ երկուսիս համար ավելի հեշտ կլինի կրել այն բեռը, որ մեզ վրա է դրել ճակատագիրը: Բայց էդիպը պատասխան է պահանջում:

— Ատե՛լի, դու շնո ուղում պատասխանել,— գուհեց էդիպը: — Բո համառութեամբ դու կզայրացնես քարին անգամ: Երկար համառում է Քիրեսիոսը, երկար ժամանակ չի ուզում տալ մարդասպանի անունը, բայց, վերջապես, էդիպի ցատումնալից խոսքին զիջելով, ասում է.

— Դու ի՛նքդ, էդիպ, պղծել ես այս երկիրը նրանով, որ իշխում ես այստեղ: Դո՛ւ ես այն մարդասպանը, որին փնտրում ես: Չգիտենալով, դու ամուսնացել ես նրա հետ, որ բոլորից ավելի թանկ է ամենքիս համար, դու ամուսնացել ես մո՛րդ հետ:

Սոսկալի ցամաքմը լցվեց էդիպը Քիրեսիոսի դեմ, երբ լսեց այդ խոսքը: Նա ստախոս է անվանում գուշակին, մահապատժով է սպառնում և շսում, թե Կրեոնն է համոզել նրան անել այդ բանը, որ տիրանա իր թագավորութեանը: Անվրդով, լի այն գիտակցութեամբ, որ ասել է ճշմարտութիւնը, Քիրեսիոսը լսում է արքայի ցատումնալից խոսքը: Նա գիտե, որ շնայած էդիպի աչքերը բաց

են, բայց նա չի տեսնում իր ակամա գործած շարիքը, էդիպը չի տեսնում, թե որտեղ է ապրում, չի տեսնում, որ ինքն է իր և իր ընտանիքի թշնամին: Ոչ մի սպառնալիք չի սարսափեցնում Քիրեսսին. համարձակորեն ասում է էդիպին, թե մարդասպանն այստեղ է, իրենց աչքի առաջ: Իբրև օտարերկրացի է Քերես եկել մարդասպանը, բայց իրականում նա ծնունդով թեբեցի է: Դաժան ճակատագիրը կատարի մարդասպանին. նա կկուրանա, մեծատուն էր՝ կդառնա աղքատ, զրկված ամեն ինչից՝ նա կարտաքսվի Քերեսից:

Սոսկումնահար ունկնդրում էին քաղաքացիները Քիրեսսիունին, գիտեին նրանք, որ սուտը երբեք չի պղծել նրա շուրթերը:

Իսկ էդիպը ցասումնալից խոսքով մեղադրում է Կրեոնին, թե նա՛ է Քիրեսսիոսին այդ ամենը սովորեցրել: Նա մեղադրում է Կրեոնին Քերեսի իշխանությունը նվաճելու ձգտման մեջ: Գալիս է նաև Իոկաստեն, էդիպը պատմում է այն բոլորը, ինչ ասել է Քիրեսսիոսը և մեղադրում է նրա եղբորը շար գիտավորության մեջ: Նա հարցափորձ է անում Իոկաստեին, թե ինչպես է սպանվել կայսրը, և թե ինչպես է կայսրի միակ որդին նետվել Կիթերոնի լեռնալանջերին փոված անտառը: Ամեն ինչ պատմում է Իոկաստեն: էդիպի հոգին է սողոսկում առաջին կասկածը: Սոսկալի եղևնի ծանր նախազգացումը ճմլում է նրա սիրտը:

— Օ՛, Զևս,— գոչում է էդիպը:— Ինչի՞ ես դատապարտել զու ինձ: Օ՛, միթե տեսնողը ե՛ս չե՛ի, այլ կույր Քիրեսսիոսը:

Հարցնում է էդիպը մահից փրկված ստրուկի մասին, թե որտե՞ղ է նա, կինդանի՞ է արդյոք: Եվ իմանում է, որ այդ ստրուկը նախիր է պահում Կիթերոնի լեռնալանջերին: Անհապաղ նրան կանչելու է ուղարկում էդիպը: Նա ուզում է իմանալ ողջ ճշմարտությունը, որքան էլ դա ահավոր լիներ:

Հենց որ ուղարկում են ստրուկին կանչելու, Կորնթոսից բանբեր է գալիս: Նա բերում է Պոլիբոս արքայի մահվան բոթը. նա մեռել էր հիվանդությունից: Ուրեմն, որդու ձեռքով չէր սպանվել Պոլիբոսը: Եթե էդիպը Պոլիբոսի որդին է, ուրեմն չի՛ կատարվել ճակատագրի պատվիրանը. չէ՞ որ էդիպը պիտի սպանած լիներ հորը: Բայց զուցե էդիպը Պոլիբոսի որդին չէ: էդիպը հույս է տածում, որ խույս տա ճակատագրից: Բայց բանբերը փշրում է այդ հույսը: Ասում է էդիպին, թե Պոլիբոսը նրա հայրը չէ, թե մանուկ

էդիպին ինքն է բերել ու տվել Կորնթոսի արքային, իսկ երեխային իրեն էր տվել կայսր արքայի հովիվը:

Սոսկումնահար լսում է էդիպը բանբերին, ավելի ու ավելի պարզ է դառնում ահավոր ճշմարտությունը:

Բայց ահա և հովիվը: Սկզբում ոչինչ չի ուզում ասել, ամեն ինչ թաքցնել է ուզում: Բայց ահավոր պատժով է սպառնում էդիպը հովիվին, եթե նա թաքցնի ճշմարտությունը:

Սարսափահար հովիվը խոստովանում է, որ մի ժամանակ բանբերին տված տղան կայսրի որդին էր, որին հայրը մահվան էր դատապարտել, իսկ ինքը գթացել է տարաբախտ մանկանը:

Ինչպե՛ս կուզենար էդիպը մեռած լինել այն ժամանակ, երբ անմեղ մանուկ էր դեռ, ինչպե՛ս է զայրանում հովիվ վրա, որ չի թողել մեռնել մանուկ հասակում: Այժմ ամեն ինչ պարզ էր էդիպի համար: Իոկաստեի պատմածներից այժմ նա գիտե կայսրի մահվան մասին, գիտե, որ հորը սպանել է ինքը, իսկ հովիվ պատմածից պարզվեց նաև, որ ինքը կայսրի և Իոկաստեի հարազատ որդին է: Ի կատար էր ածվել ճակատագրի պատվիրանը, որքան էլ ջանացել էր խույս տալ դրանից էդիպը: Հուսահատ արքան պալատ է մտնում: Նա հայրասպան է, ամուսինն է իր մոր, նրա երեխաները միևնույն ժամանակ և՛ իր զավակներն են, և՛ եղբայրները՝ մոր կողմից:

Պալատում նոր մի հարված է սպասում էդիպին. Իոկաստեն՝ անկարող լինելով տանել այդ ծանր ու ահավոր հարվածը, անձնասպան էր եղել՝ կախվելով իր ննջարանում: Վշտից խելակորույս՝ էդիպը պոկում է Իոկաստեի զգեստի ճարմանը և դրա սուր ծայրով հանում իր աչքերը: Այլևս չէ՛ր ուզում տեսնել արևի լույսը, չէ՛ր ուզում տեսնել զավակներին, տեսնել հայրենի Քերես: Ամեն ինչ խորտակվել էր նրա համար, այլևս չի՛ լինի ուրախություն նրա կյանքում: էդիպը աղերսում է Կրեոնին՝ արտաքսել իրեն Քերեսից և խնդրում է մի բան միայն՝ հոգ տանել իր զավակների մասին:

ԷՊԻՊԻ ՄԱՀԸ

Շարադրված է ըստ Սոֆոկլեսի «էդիպը Կոլոնում» ողբերգության:

Կրեոնն էդիպին իսկույնեթ շարտաքսեց Քերեսից: Մի որոշ ժամանակ նա ապրեց պալատում, բոլորից մեկուսացած, վշտի մեջ ընկած: Բայց թեբեցիները երկյուղ էին կրում, որ էդիպի ներկայու-

Յյունը քաղաքում աստվածների ցամաք կայատուհասի բովանդակ երկիրը: Եվ նրանք պահանջեցին անհապաղ արտաքսել կուրացած էգիպտին: Այդ վճռին չէին առարկում նաև էգիպտի որդիները՝ էթեոկլեսն ու Պոլինեկեսը: Իրենք էին ուզում իշխել Թեբում: Թեբեցիներն արտաքսեցին էգիպտին, իսկ նրա որդիներն իշխանութունը բաժանեցին իրենց և Կրեոնի միջև:

Եվ էգիպտը՝ կույր, ուժահատ, իբրև վտարանդի, օտարության մեջ ընկավ: Անխուսափելի կործանման պիտի դատապարտվեր անօգնական ծերունին, եթե նրա դուստրը՝ ազնվաբարո, հոգով արի Անտիգոնեն չնվիրաբերվեր հորը: Նա մշտապես հետևում էր հորը օտարության մեջ: Անտիգոնեի առաջնորդութամբ տարաբախտ ծերունին թափառում էր երկրից երկիր: Անտիգոնեն հոգատար առաջ էր տանում հորը լեռներով ու անտառներով՝ բաժանելով նրա հետ դժվարին ճամփորդության բոլոր զրկանքներն ու բոլոր վտանգները:

Երկար թափառումներից հետո էգիպտը, ի վերջո, Ատտիկա, Աթենք քաղաքը հասավ: Չգիտեր Անտիգոնեն, թե ո՛ր է բերել հորը: Առջևում երևում էին քաղաքի պարիսպներն ու աշտարակները՝ լուսավորված ծագող արևի շողերով: Քաղաքի մոտ կանաչին էր տալիս դափնի անտառը՝ ամբողջովին պատած բազեղով ու խաղողի վազներով: Անտառում տեղ-տեղ փայլվում էին արծաթավուն ձիթենիները: Անտառից լավում էր սոխակների ախորժալուր գայլալը: Բարձր խոխոզելով՝ առվակներ էին հոսում կանաչապատ հովտով, ամենուրեք սպիտակին էին տալիս նարգիզների աստղաձև ծաղիկները և դեղին տալիս բուրումնավետ շաֆրանը: Կանաչ անտառում, դափնու շուրի տակ նստել էր բազմաշարչար էգիպտ մի քարի վրա, իսկ Անտիգոնեն զնացել էր հարցուփորձ անելու, թե ո՛ր են եկել: Նրանց մոտով մի տեղացի էր անցնում. նա ասաց էգիպտին, որ դա Կոլոնն է, Աթենքի մոտ մի վայր, իսկ անտառը, ուր նստել է էգիպտը, նվիրաբերված է էվմենիդներին, ամբողջ շրջակայքը նվիրաբերված է Պոսեյդոնին ու տիտան Պրոմեթեոսին, իսկ անտառից երևացող քաղաքը Աթենքն է, ուր իշխում է մեծ հերոս Թեսեսը՝ էգեսի որդին: Լսելով այդ ամենը, էգիպտ սկսեց աղաչել նրան, որ մարդ առաքի Թեսես արքայի մոտ, քանի որ Թեսեսին մեծ օգնութուն է ուզում ցույց տալ, եթե նա համաձայն լինի մի որոշ ժամանակ ապաստան տալ իրեն: Մարդը դժվարանում էր հավատալ, որ այդ ուժահատ և այն էլ կույր ծերունին կարող է

օգնութուն ցույց տալ Աթենքի հզորագոր արքային: Տարակուսանքով համակված՝ նա Կոլոն զնաց, որպեսզի պատմի մինչև իսկ Թեսեսի պես արքային մեծ օգնութուն խոստացող կույր ծերունու մասին, որ նստած էր էվմենիդների անտառում:

Իսկ էգիպտը, իմանալով, որ գտնվում է էվմենիդների սրբազան անտառում՝ կուհեց, որ արդեն հեռու չէ իր վերջին ժամը, որ իր բոլոր տառապանքները վերջ կունենան: Վաղուց էր կանխագուշակել Ապոլոնը, որ երկար ու տառապալից թափառումներից հետո նա մահ կգտնի մեծ աստվածուհիների սրբազան անտառում և նա, ով իրեն ապաստան կտա՝ մեծ պարգև կստանա, իսկ արտաքսողներին դաժանորեն կպատժեն աստվածները: Այժմ արդեն կուհեց էգիպտը, որ մեծ աստվածներ էվմենիդներն են եղել, որոնք ամբողջ կյանքում այդքան անողորմ հետապնդել են իրեն: Վստահ է էգիպտը, որ հիմա ինքն էլ անողորմ կունենա:

Կոլոնի քաղաքացիներն արդեն շտապում էին էվմենիդների անտառը՝ իմանալու, թե այդ ո՛վ է հանդգնել այնտեղ մտնել, երբ իրենք ահեղ աստվածուհիների անունները տալ իսկ չեն հանդրգնում, նրանց սրբավայրի վրա հայացք գցելու համարձակութուն իսկ չունեն: Կոլոնցիների ձայները լսելու պես էգիպտ Անտիգոնեին խնդրեց իրեն անտառի խորքը տանել, բայց երբ կոլոնցիներն իրեն անտառը պղծող կուղեցին՝ տվեց իր անունը: Սոսկումը պատեց նրանց: էգիպտ էր կանգնած իրենց առջև: Բովանդակ շուրհաստանում ո՞վ էր, որ չգիտեր նրա ահավոր ճակատագիրը, անտեղյակ էր այն ոճիրներին, որոնց ակամա գործողը Լայոսի տալաբախտ որդին էր: Ո՛չ, կոլոնցիները չեն կարող հանդուրժել, որ էգիպտ այդտեղ մնա, նրանք երկյուղ էին կրում աստվածների ցասումից:

Ականջ չդրին նրանք ո՛չ էգիպտի, ո՛չ էլ Անտիգոնեի աղերսանքներին և պահանջեցին, որ կույր ծերունին անհապաղ լքի Կոլոնի շրջակայքը: Մի՞թե էգիպտ ապաստան չպետք է գտնի նաև Աթենքում, այն Աթենքում, որ Լուսնաստանում ամենուրեք հուշակված է իրրև սրբազան քաղաք, որ պաշտպան է կանգնում բոլոր պաշտպանութուն աղերսողներին: Չէ՞ որ էգիպտ իր կամբով չի եկել այդտեղ, չէ՞ որ նրա գալուստը պետք է բարեբախտութուն բերի քաղաքացիներին: Վերջապես էգիպտ աղերսեց, որ քաղաքացիները գեթ մինչև Թեսեսի գալը հապաղեն: Թող Աթենքի արքան վճռի՝

Կարո՞ղ է արդոյր էդիպն այդտեղ մնալ, թե՞ պետք է այստեղից ևս արտաքսվի:

Համաձայնեցին քաղաքացիները սպասել Քեսևսի գալստյանը: Այդ պահին հեռվում երևաց մի երկանիվ, որով մի կին էր գալիս թեսալական լայնեզր գլխարկով, որ ծածկում էր նրա դեմքը: Ուշի-ուշով նայեց Անտիգոնեն և նրան թվաց որ այդ կինն իր քույրն է՝ Իսմենեն: Ավելի ու ավելի էր մոտենում երկանիվը, ավելի ակնդետ էր նայում Անտիգոնեն, և իսկապես ճանաչեց Իսմենեին:

— Հա՛յր,— ասաց Անտիգոնեն,— ես տեսնում եմ, որ այստեղ է գալիս քո Իսմենն զուտորը, հիմա դու կլնես նրա ձայնը:

Մոտենալով էդիպին, Իսմենեն իջավ երկանիվից և հոր գիրկը նետվեց:

— Հա՛յր, տարաբա՛խտ իմ հայր,— գուցե Իսմենեն,— վերջապես ես կրկին գիրկս եմ առնում քեզ ու Անտիգոնեին:

Ուրախ էր էդիպը Իսմենեի գալստյամբ, հիմա արդեն իր հետ են զուտորերը. իր հավատարիմ ուղեկից ու օգնական Անտիգոնեն և Իսմենեն, որ երբեք մոռացության չէր մատնել հորը և մշտապես լուրեր էր հաղորդել նրան Քերեից:

Իսկ Իսմենեն որոնելիս է եղել էդիպին ամենատխուր լուրեր հաղորդելու համար. էդիպի որդիներն սկզբում իշխել են Քերեում: Բայց կրտսեր որդին՝ էթեոկլեսը, մեն-մենակ զավթել է իշխանությունը և ավագ եղբորը՝ Պոլիսիկեսին, արտաքսել Քերեից: Եվ Պոլիսիկեսը բռնել է Արգոսի ճամփան և այնտեղ օգնություն գտել: Այժմ նա մի զորաբանակ առած արշավում է ընդդեմ Քերեի, որպեսզի կամ տիրած լինի իշխանությունը, կամ էլ ընկնի մարտի մեջ: Իսմենեն պատմեց նաև, որ Դելփիքյան պառզամախոսը հաղթանակը նրան է կանխատեսել, ում կողմը որ կանգնի էդիպը: Համոզված էր Իսմենեն, որ շուտով կերևա էթեոկլեսի հետ միասին Քերեում իշխող Կրեոնը, որպեսզի բռնանա էդիպի վրա: Չէր ուզում էդիպը ոչ մեկ, ոչ էլ մյուս որդու կողմը բռնել. ցասամբ էր լցված որդիների հանդեպ, քանի որ իշխանություն հասնելու ձրգատումն ավելի վեր էին դասել, քան որդիական պարտքը հոր հանդեպ: Չէր ուզում օգնել որդիներին, որոնք մի խոսք անգամ շասացին հորը Քերեից արտաքսելու դեմ: Ո՛չ, հոր օգնությամբ նրանք չեն ստանա Քերեի իշխանությունը: էդիպն իր տեղումն էլ կմնա, Աթենքի պաշտպանը կլինի:

Կռունի քաղաքացիները էդիպին խորհուրդ էին տալիս ողոր-

մածական զոհեր մատուցել էվմենիդներին, եթե նա վճռել է առմիշտ հաստատվել Աթենքում: էդիպը խնդրեց, որ մեկն ու մեկը բերի այդ զոհերը, քանի որ ինքը, ուժահատ ու կույր, անկարող է այդ անել: Զոհեր բերելն իր վրա առավ Իսմենեն և խորացավ էվմենիդների անտառում:

Հենց նոր էր գնացել Իսմենեն, երբ անտառին մոտեցավ Քեսևսն իր շքախմբով: Նա հրճվանքով ընդունեց էդիպին և խոստացավ, որ սատար կլինի նրան: Գիտեր Քեսևսը, որ տանջալից բախտ է վիճակվել օտարերկրացուն, գիտեր, թե որքան զրկանքներ են բաժին ընկել նրան: Ինքն էլ էր ապրել պանդուխտի կյանքի ողջ ծանրությունը, ուստի և շէր կարող իր պաշտպանությունը մերժել տարաբախտ պանդուխտ էդիպին:

էդիպն իր երախտագիտությունը հայտնեց Քեսևսին և խոստացավ օտար լինել նրան: Ասաց, որ իր շիրիմը մշտապես հաստատ պաշտպան կլինի ամենացիների համար:

Բայց էդիպին շէր վիճակված իսկույնևեթ անդորր գտնել: Երբ Քեսևսը հեռացավ, մի փոքրիկ ջոկատ առած Քերեից եկավ Կրեոնը: Սա ուղում էր տիրել էդիպին, որպեսզի իր և էթեոկլեսի համար ապահոված լինի հաղթանակն ընդդեմ Պոլիսիկեսի ու նրա դաշնակիցների: Կրեոնը փորձեց հորդորել էդիպին իր հետ Քերե գնալ. հոստանում էր, որ այնտեղ հանգիստ կյանք կունենա իր հարազատների մեջ, շրջապատված նրանց հոգատարությամբ: Բայց անսասան էր էդիպի վճիռը: Նա հավատ չէր ընծայում Կրեոնի խոսքին: Գիտեր էդիպը, թե ի՞նչն է Կրեոնին ստիպում, որ իրեն Քերե տանելու հորդոր կարդա: Ո՛չ, էդիպը չի գնա նրանց հետ, հաղթանակը չի՛ տա նրանց ձեռքը, ովքեր այսքան տառապանքների դատապարտեցին իրեն:

Տեսնելով, որ անդրդվելի է էդիպը, Կրեոնն սկսեց սպառնալ, թե բռնի ուժով կստիպի իր հետ Քերե գնալ: էդիպը երկյուղ չունեք բռնությունից. քանի վայելում էր Քեսևսի և բոլոր ամենացիների պաշտպանությունը: Բայց Կրեոնը շարախնդաբար հաղորդեց կույր անօգնական ծերունուն, որ նրա զուտորից մեկը՝ Իսմենեն, արդեն իր ձեռքում է: Սպանում է իր ձեռքը գցել էդիպի միակ նեցուկին և՛ նրա անձնազոհ զուտոր Անտիգոնեին: Եվ դուր էր Անտիգոնեն օգնության կանչում ամենացիներին, զուր էր ձեռքերը դեպի հայրը կարկառում. տանում էին նրան: Այժմ արդեն բոլորովին անօգ-

Նախան մնաց էդիպը. խլի էին նրանից այն աչքերը, որ նայում էին իր փոխարեն:

Էվմենիդներին կոչում էր վկա լինել այդ ամենին, նզովում էր Կրեոնին և տենչում, որ նա՛ էլ արժանանա իր բախտին, տենչում, որ նա՛ էլ կորցնի իր զավակներին: Իսկ Կրեոնը, որ մի անգամ բռնություն էր գործել, վճռեց բռնությունը էլ գործել մինչև վերջը:

Բռնեց էդիպին և արգեն ուզում էր տանել իր հետ: Էդիպին պաշտպանել կամեցան Կոլոնի բնակիչները, բայց նրանք քիչ էին և անզոր՝ Կրեոնի ջոկատի դեմ մարտնչելու համար: Բարձրաձայն օգնություն էին կանչում կոլոնցիները: Նրանց ձայնի վրա Թեսևան իր ջոկատով դեպքի վայրը փութաց:

Թեսևաը վրդովված էր Կրեոնի բռնությունը: Նա ինչպե՞ս էր հանդգնել էդիպին և նրա դուստրերին բռնել այստեղ, էվմենիդների անտառի մոտ, կարծում է, թե քի՛չ այրեր կան Աթենքում, մի՞թե նա բանի տեղ չի դնում Թեսևան, եթե հանդգնել է բռնի ուժով տանել նրանց, ովքեր գտնվում են Աթենքի պաշտպանության ներքո: Եվ մի՞թե Թեսևան են նրան սովորեցրել այդպես օրենքին հակառակ գործել: Ո՛չ, գիտեք Թեսևաը, որ Թեսևան չեն հանդուրժի ապօրինությունը: Կրեոնն անարգում է իր քաղաքը և հայրենի երկիրը. թեև ծերունի է տարիքով, բայց գործում է խելահեղ պատանու պես: Եվ պահանջեց Թեսևաը, որ առանց հապաղելու ետ տա էդիպի դուստրերին: Կրեոնը ջանում էր իր արարքն արդարացնել նրանով, որ ինքը, ինչպես հավատացնում էր, համոզված է եղել, թե Աթենքն ապաստան չի տա հայրասպանին, հարազատ մոր հետ ամուսնացած մարդուն: Սակայն Թեսևան անսասան կանգնել էր իր վճռի վրա. պահանջում էր, որ Կրեոնը ետ տա էդիպի դուստրերին և ասում, թե չի հռանձա, քանի դեռ էդիպի հետ չեն լինի նրա դուստրերը: Հնազանդեց Կրեոնը Թեսևան պահանջին և, շատ շանցած, ծերունի էդիպը գերկն առավ դուստրերին և իր երախտագիտությունը հայտնեց Աթենքի մեծահոգի արքային՝ աստվածների օրհնությունը հրավիրելով նրա վրա:

Իսկ Թեսևան ասաց էդիպին.

— Ակա՛նջ դիր ինձ, էդիպ. այստեղ, Պոսեյդոնի զոհասեղանի մոտ, ուր ես զոհ մատուցեցի նախքան Կրեոնի գալը, մի պատանի է նստած, նա ուզում է խոսել քեզ հետ:

— Բայց ո՞վ է այդ պատանին, — հարցրեց էդիպը:

— Չգիտեմ: Արգոսից է եկել, Հապա մտածիր, Արգոսում զու որևէ ազգական չունե՞ս, — պատասխանեց Թեսևաը:

Լսելով այդ, էդիպը բացականչեց.

— Օ՛, մի՛ խնդրիր, Թեսևա, որ ես խոսեմ այդ պատանու հետ: Քո խոսքից կուհեցի, նա իմ որդի Պոլիսիկեսն է, որ ատելի է ինձ: Նրա խոսքերն ինձ լուր տառապանք են պատճառում:

— Բայց չե՞ որ նա իբրև աղերսող է եկել, — ասաց Թեսևաը, — զու շես կարող մերժել նրան՝ առանց աստվածների զայրույթը շարժելու:

Իմանալով, որ Պոլիսիկեսն այստեղ է, Անտիգոնեն ևս խընդրեց հորը՝ լսել որդուն, թեև նա ծանր մեղք է գործել հոր հանդեպ: Համաձայնեց էդիպը լսել որդուն, և Թեսևաը գնաց նրան կանչելու:

Եկավ Պոլիսիկեսը: Արտասուք է երևում աչքերին: Լալիս է՝ տեսնելով հորը կուրացած, մուրացիկի հագուստով, ալեհեր մազերը քամուն տված, անընդմեջ զրկանքների ու քաղցի հետքերը դեմքին, Հիմա միայն հասկացավ Պոլիսիկեսը, թե որքա՞ն դաժան է վարվել հարազատ հոր հետ: Չեղբերը դեպի հայրը կարկռեց, ասաց նա.

— Հա՛յր, գեթ մի՛ խոսք ասա ինձ, երես մի՛ դարձնի ինձնից: Մի բան ասա զոնե, ինձ անպատասխան մի՛ թողնի: Քույրեր իմ, զոնե զո՛ւր հարգորեցեք հորս, որ չլքի ինձ առանց մի բառ ասելու:

Անտիգոնեն խնդրեց եղբորն ասել հորը, թե ինչո՞ւ է եկել. նա վստահ է, որ էդիպն անպատասխան չի թողնի որդուն:

Պատմեց Պոլիսիկեսը, թե ինչպես է կրտսեր եղբայրն արտաքսել իրեն Թեսևայից, ինչպես է ուղևորվել Արգոս, ամուսնացել Աղրաստեսի դստեր հետ և օգնություն գտել այնտեղ՝ խլելու համար եղբորից իշխանությունը, որ իրեն է պատկանում ըստ օրենքի, իբրև ավագ եղբոր:

— Օ՛, հա՛յր, — շարունակեց Պոլիսիկեսը, — մենք՝ Թեսևի դեմ բոլոր արշավողներս, դիմում ենք քեզ. հանուն բո կյանքի ու բո զավակների՝ արի մեզ հետ, աղերսում ենք՝ մոռացի՛ր բո զայրույթը և օգնիր վրեժխնդիր լինել էթեոկլեսից, որ արտաքսել է ինձ և խլել իմ հայրենիքը: Չե՞ որ, եթե իրավ են ասում պատգամախոսները, հաղթանակն ուղեկից կլինի նրանց, որոնց հետ կլինես դու: Օ՛, լսիր ինձ բարեհաճությամբ մինչև վերջ: Աստվածների անունով աղաչում եմ քեզ՝ արի՛ ինձ հետ: Ես ետ կտամ բո

հարազատ տունը, իսկ այստեղ, օտարութեան մեջ, դու մուրացիկ
ես, այնպիսի մուրացիկ, ինչպիսին ես եմ:

էդիպը չլսեց որդուն: Նրա աղերսանքները չազդեցին էդիպի
վրա: Իր որդուն ինքը պետք է հիմա՝ Թեբեին տիրելու համար: Իսկ
նախքան այդ միջոցն նա շէր իրեն Թեբեից արտաքսողը, նա չէր
իրեն թափառական դարձնողը, նրա պատճառով չէր, որ էդիպը
կրում է այդ ցնցոտին: Երկու որդիներն էլ մոռացութեան են մատ-
նել հարգանքը հոր հանդեպ, միայն դուստրերն են հավատարիմ
մնացել, մշտապես հոգ տարել և հարգել իրեն:

— Ո՛ր, ես քեզ օգնական չեմ լինի Թեբեն փոշի դարձնելու
համար: Նախքան Թեբեն աննելը դու ինքդ կընկնես արնաթաթով,
իսկ քեզ հետ միասին՝ նաև քո էթեոկլես եղբայրը, — գուցե էդի-
պը: — Վերստին նզովում եմ ձեզ, որպեսզի հիշեք, թե ինչպես
պետք է հարգել հարազատ հորը: Փախուստ տուր այստեղից,
մերժված, այլևս հայր չունենա դու: Իմ նզովքը տար քեզ հետ:
Մահ գտիր եղբորդ հետ մենամարտելիս: Սպանի՛ր քեզ արտաք-
սողին: Ես էվմենիդներին և Արես աստծուն կո՛չ եմ անում, որ
ձեր միջև եղբայրասպան պառակտում գցեն, պատժեն ձեզ: Դե
գնա՛, և իմաց տուր քո բոլոր ուղեկիցներին, թե էդիպն ի՛նչ
շնորհներ է հավասար բաժանել իր որդիների միջև:

— Օ՛, վա՛յ ինձ: Օ՛, տարաբախտ եմ ես, — գուցե Պոլինի-
կեսը, — կարո՞ղ եմ հորս պատասխանը հաղորդել ուղեկիցներին:
Ո՛ր, լուսյայն պիտի ընդառաջ գնամ իմ բախտին:

Գնաց Պոլինիկեսը՝ առանց հորից ներումն ու պաշտպանու-
թյուն ստանալու, գնաց, շտեղծ Անտիգոնեի աղաչանքը՝ չվերադառ-
նալ Արգոս և չսկսել պատերազմը, որ կործանում է սպառնում և՛
իրեն, և՛ եղբորը, և՛ Թեբեին:

Մոտ էր արդեն էդիպի վերջին ժամը: Ջինջ երկնքով մեկ գլոր-
վեց որոտը, և փայլատակեց շանթը: Էվմենիդների անտառի մոտ
գտնվողները սառեցին տեղներում՝ Զևսի այդ ահեղ կանխանշանից
սուղահար: Ահա դարձյալ որոտաց երկիները: Գարձյալ բոցի պես
բունկեց շողշողուն կայծակը: Բոլորը ցնցվեցին սոսկումից:

Իսկ էդիպը մոտ կանչեց դուստրերին և ասաց.

— Օ՛, զավակներս: Փութացեք կանչել Թեսևսին: Զևսի այս
որոտները կանխագուշակում են, որ ես շուտով կիջնեմ դժնադեմ
Հաղեսի թագավորությունը: Մի՛ հապաղեք, շուտափույթ մարդ
ուղարկեցեք Թեսևսին կանչելու: Մո՛տ է իմ վախճանը:

Հենց նոր էր էդիպն իր խոսքն ավարտել, երբ վերստին, ասես
նրա խոսքը հաստատելու համար, հնչեց որոտի ճայթյունը: Շու-
տափույթ էվմենիդների անտառի մոտ եկավ Թեսևսը: Լսելով նրա
ձայնը, էդիպն ասաց.

— Աթենքի տիրակա՛լ, Եկավ իմ վախճանը, Զևսի որոտն ու
կայծակը կանխատեսում են իմ մահը, և ես ուզում եմ մեռնել՝ ի
կատար ածելով քեզ տված խոստումը: Ես կտանեմ քեզ այն վայ-
րը, ուր պիտի մահ գտնեմ, բայց դու ոչ ոքի մի՛ հայտնի իմ գե-
րեզմանի տեղը: Իմ շիրիմը քո քաղաքն ավելի լավ կպահպանի,
քան քաղում վահաններ ու սրեր: Դու այնտեղ կիմանաս այն, ինչ
որ չեմ կարող քեզ ասել այստեղ: Պահպանի՛ր այդ գաղտնիքը և,
վախճանվելիս, հայտնի քո ավագ որդուն, իսկ նա թող հաղորդի
իր ժառանգին: Դե՛, գնանք, Թեսևս, գնանք, զավակներս: Հիմա ես՝
կույրս, կլինեմ ձեզ առաջնորդողը, իսկ ինձ կտանեն Հերմեսը և
Պերսեփոնեն:

Թեսևսը, Անտիգոնեն և Իսմենեն հետևեցին էդիպին, իսկ նա
առաջ տարավ բուրբին՝ աչքեր ունեցող մարդու պես: Հասան մի
տեղ, ուր սկսվում էր դեպի մեռյալների ստվերների խավարամած
թագավորությունը տանող ճանապարհը, և այնտեղ նստեց մի քա-
րի: Մահվան պատրաստվելով, էդիպը գրկեց դուստրերին և ասաց
նրանց.

— Զավակներս, այս օրվանից դուք այլևս հայր չեք ունենա:
Արդեն տիրել է ինձ մահվան աստված Թանատոսը: Այլևս ձեզ վրա
չի ծանրանա իմ հանդեպ հոգ տանելու դժվարին պարտքը:

Աղեկտուր լացով Անտիգոնեն և Իսմենեն գրկեցին իրենց հո-
րը: Հանկարծ խորխորատի խորքից մի խորհրդավոր ձայն լսվեց.
«Փութա՛, փութա՛, էդիպ: Ի՛նչ ես ուշացնում քո գալուստը, Չափից
դուրս շատ ես հապաղում»: Խորհրդավոր ձայնը լսելուն պես
էդիպն իր մոտ կանչեց Թեսևսին, իր դուստրերի ձեռքերը դրեց
նրա ձեռքերի մեջ և աղերսեց նրանց պաշտպանը լինել: Երգվեց
Թեսևսը, որ ի կատար կածի նրա խնդրերը: Էդիպը դուստրերին
հրամայեց հեռանալ. նրանք չպետք է տեսնեին, թե ի՛նչ պիտի տե-
ղի ունենա և չպետք է լսեին այն գաղտնիքը, որ էդիպը պետք է
ասեր Թեսևսին: Գնացին Անտիգոնեն և Իսմենեն: Մի փոքր հեռա-
նալով, նրանք շուտ եկան, որ մի վերջին անգամ նայն իրենց հո-
րը, բայց չկար այլևս էդիպը, մեն-մենակ Թեսևսն էր կանգնած՝
ձեռքերով աչքերը փակած, ասես մի ահավոր տեսիլք էր տեսել:

Այնուհետև, տեսան Անտիգոնեն և Իսմենեն, թե ինչպես Քենսուր ծնկի եկավ ու սկսեց աղոթել:

Այդպես ավարտեց էդիպն իր բազմաշարշար կյանքը և մահկանացուներից ոչ ոք չիմացավ, թե ինչպես վախճանվեց նա և որտեղ է գտնվում նրա շիրիմը. առանց ցավ զգալու, առանց հառաչանք արձակելու զնաց Հադեսի թագավորութունը, բայց այնպես, ինչպես ոչ ոք չի գնացել մահկանացուներից:

ՅՈՒՆ ԸՆԴԻՄ ԹԵՐԵԻ

Շարադրված է Էսփիոս «Յորն ընդդեմ Քերեի» և Եվրիպիդեսի «Փյունիկոսիներ» ողբերգությունների երկուսը:

Երբ կուրացած էդիպն արդեն արտաքսված էր Քերեից, նրա որդիները, Կրեոնի հետ, բաժանեցին իշխանությունն իրենց միջև՝ նրանցից յուրաքանչյուրը պետք է հերթականությամբ իշխեր մի տարի: Էթեոկլեսը չկամեցավ իր ավագ եղբոր՝ Պոլիսիկեսի հետ բաժանել իշխանությունը. եղբորն արտաքսեց յոթնադուռն Քերեից և միայն ինքը դարձավ Քերեի տիրակալը: Իսկ Պոլիսիկեսն ապաստան գտավ Արգոսում, ուր իշխում էր Ադրաստոս արքան:

Ադրաստոս արքան սերում էր Ամիփաոնիդների տոհմից: Մի ժամանակ երկու հերոսները՝ մեծագույն իմաստուն Մելամպուսը¹ և Բիաուրը, Ամիփաոն հերոսի զավակները, ամուսնացան Պրոյտոսի դուստրերի հետ: Դա այսպես պատահեց. Պրոյտոսի աղջիկները զայրացրին աստվածներին և, իբրև պատիժ, աստվածները խենթացրին նրանց: Խենթության պոռթկման պահին Պրոյտոսի դուստրերն ընկան այն պատրանքի մեջ, թե իրենք կովեր են և բառաչելով թափառում էին շրջակա դաշտերում ու անտառներում: Մելամպուսը, որ գիտեր Պրոյտոսի դուստրերին բուժելու գաղտնիքը, կամեցավ բուժել նրանց, բայց զրա փոխարեն պահանջեց, որ Պրոյտոսը իրեն տա իր տիրապետությունների մեկ երրորդը: Համաձայն շեղավ Պրոյտոսը: Բայց առավել խորացավ աղետը. խելացնորությունը համակեց և ուրիշ կանանց: Պրոյտոսը կրկին դիմեց Մելամպուսին: Այս անգամ Մելամպուսը պահանջեց թագավորության ոչ թե մեկ երրորդը, այլ երկու երրորդը. մեկն՝ իրեն, մյուսը՝ իր եղբայր Բիասի

համար: Պրոյտոսը պետք է համաձայնեի Մելամպուսը, պատանիների մի շոկատ առած, բունեց լեռների ճամփան, երկար հետապընդումներից հետո կալանեց բոլոր խելակորույս կանանց ու բուժեց նրանց: Պրոյտոսը իր դուստրերին կնուխյան տվեց Մելամպուսին և Բիասին:

Մելամպուսը մի որդի ուներ Անտիփատես անունով, Անտիփատեսը մի զավակ՝ Օյիկլես անունով, իսկ Օյիկլեսը՝ Ամիփարաոս անունով մի որդի: Բիասի որդին Տալոսն էր, իսկ սրա զավակները՝ Ադրաստոսը և Էրիփիլեն: Երբ Մելամպուսի և Բիասի հետնորդները՝ Ադրաստոսը և Ամիփարաոսը, առնացան՝ նրանց մեջ երկպառակություն ծագեց: Ադրաստոսն ստիպված եղավ ճողպարել Սիկիոն¹, Պոլիքոս արքայի մոտ: Այստեղ նա ամուսնացավ արքայադստեր հետ և դարձավ Սիկիոնի տիրակալը: Բայց, շատ շանցած, հայրենի Արգոս վերադարձավ Ադրաստոսը, հաշտվեց Ամիփարաոսի հետ և նրան կնուխյան տվեց իր քրոջը՝ Էրիփիլենին: Երգվեցին Ադրաստոսը և Ամիփարաոսը, որ Էրիփիլեն կլինի իրենց դատավորը վեճերի ժամանակ և որ իրենք հլու-հնազանդ կհետևեն նրա վճիռներին: Չէր անցնում Ամիփարաոսի մտքով, որ այդ երգումը իր և իր տոհմի կործանման պատճառն է դառնալու:

Ուշ գիշերով Ադրաստոսի պալատը եկավ Պոլիսիկեսը՝ հուսալուով, որ նրանից պաշտպանություն և օգնություն կստանա: Պալատի մոտ Պոլիսիկեսը հանդիպեց Օյնեսի որդուն՝ Տիդեսին, որը հայրենի երկրում սպանած լինելով իր հորեղբորն ու նրա որդիներին, նույնպես դեպի Արգոս էր փախչում: Երկու հերոսների միջև կատաղի վեճ բորբոքվեց: Անզուսպ Տիդեսը, որ անկարող էր տանել որևէ մեկի առարկությունը, զենքի դիմեց: Պոլիսիկեսը նույնպես, վահանն առնել բռնած, մերկացրեց սուրը: Իրար վրա նետվեցին հերոսները, Չրնգում էին նրանց սրերը՝ պղնձով պատած վահաններին դիպչելով: Իբրև երկու գազազած առյուծներ՝ մթության մեջ կռիվ էին տալիս հերոսները: Լսեց Ադրաստոսն այդ մենամարտի շոխոջը և դուրս եկավ պալատից: Որքա՛ն մեծ եղավ նրա զարմանքը, երբ տեսավ կատաղի մարտնչող պատանիներին: Նրանցից մեկը՝ Պոլիսիկեսը, զրահի վրա առյուծների ուներ հագած, իսկ մյուսը՝ Տիդեսը՝ վիթխարի վարաղի կաշի: Մտաբերեց Ադրաստոսը պատգամախոսի այն գուշակությունը, որ իր դուստրերին պիտի

¹ Մելամպուս — բառացի՝ Սևտոն (Մ. Ք.):

¹ Քաղար Պելոպոնեսի հյուսիսում, Կորնթյան նեղուցի ափին:

առյուծի ու վարազի տա կնութիւն: Նա փութաց բաժանել հերոս-
ներին և, իբրև հյուրերի, պալատ տանել: Շատ շանցած, Աղբա-
տոս արքան իր զուտրերից մեկին՝ Դեիպիլեին, Պոլիսիկեսին տվեց,
իսկ մյուսին՝ Ազրեային, Տիդևին:

Դառնալով Աղբատոսի փեսաները, Պոլիսիկեսն ու Տիդևը
սկսեցին խնդրել նրան, որ վերադարձնի իրենց հայրենի երկրի իշ-
խանութիւնը: Աղբատոսը համաձայնեց նրանց օգնել: Միայն մի
պայման դրեց. թող որ Ամփիարատը՝ այդ հզոր ռազմիկը և մեծ
պատգամախոսը, ևս մասնակից լինի արշավանքին:

Վճռվեց, որ նախ և առաջ յոթնադուռն Թերեի վրա սլիտի ար-
շավել: Ամփիարատը հրաժարվեց այդ արշավանքին մասնակցե-
լուց, որովհետև գիտեր, որ այդ արշավանքին հերոսները ձեռնար-
կում են հակառակ աստվածների կամքին: Զևսի և Ապոլոնի սիրե-
լին շէր ուզում աստվածների կամքը խախտելով զայրացնել նրանց:
Որքան էլ Աղբատոսը համոզեց Ամփիարատին՝ նա հաստատ մնաց
իր վճռի վրա: Անզուսպ ցասումը պատեց Տիդևսին. մշտնջենական
թշնամիներ կղառնային հերոսները, եթե Աղբատոսը չհաշտեցնէր
նրանց: Եվ, այնուամենայնիվ, Ամփիարատին մի կերպ արշա-
վանքի մասնակիցը դարձնելու համար Պոլիսիկեսը վճռեց խորա-
մանկութիւն գիմել, Վճռեց իր կողմը գրավել էրիփիլեին, որպեսզի
նա ստիպի Ամփիարատին գնալ ընդդեմ Թերեի: Իմանալով, որ
էրիփիլեն շահամուլ կին է, Պոլիսիկեսը նրան խոստացավ նվեր տալ
Հարմոնիայի՝ Թերեի առաջին արքա Կադմոսի կնոջ թանկագին
մանյակը: Մեծարժեք պարզեր գայթակղեցրեց էրիփիլեին, և նա
վճռեց, որ իր ամուսինը ևս պետք է մասնակցի արշավանքին: Ամ-
փիարատն անկարող էր այլևս հրաժարվել. չէ՞ որ մի ժամանակ
ինքն էր երզում տվել, որ հնազանդ կլինի էրիփիլեի բոլոր վճիռնե-
րին: Եվ այսպես էրիփիլեն իր ամուսնուն ստույգ մահվան ուղար-
կեց՝ գայթակղվելով թանկարժեք մանյակով, Զգիտեր, թե ի՞նչ
ազնուներ է բերում այդ մանյակն իր տիրոջը:

Բազում հերոսներ համաձայնեցին այդ արշավանքի մասնա-
կիցը լինել: Պրոչտոսի հզորագոր հետնորդները, աստծո պես զո-
րավոր Կապաննան ու էթեոկլեսը, արկադյան մեծահամբավ որսոր-
դուհի Ատլանտի որդին՝ շքնաղ պատանի Պարթենոպատը, պան-
ծալի Հիպոմեդոնը և շատ ուրիշ հերոսներ: Օգնութիւն համար
Պոլիսիկեսը գիմեց նաև Միկենե, Միկենեի տիրակալն արդեն հա-
մաձայնում է մասնակից լինել արշավանքին, բայց մեծն ամպրո-

պային Զևսը կասեցրեց նրան իր ահեղ կանխանշաններով: Եվ, այ-
նուամենայնիվ, մեծ զորաբանակ հավաքվեց, Յոթն առաջնորդ էր
զորաբանակը տանում ընդդեմ Թերեի, իսկ բոլորի գլխավորը
Աղբատոսն էր: Կործանման էին գնում հերոսները, Զլեսցին պատ-
գամախոս Ամփիարատի գուշակութիւններին, իսկ նա խնդրում էր
եստ կանգնել այդ արշավանքից: Բոլորն էլ այրվում էին լուկ մի տեն-
շանքով՝ մաքատել Թերեի պարիսպների տակ:

Արշավանքի ելավ զորաբանակը: Հրաժեշտ տվեց Ամփիարատը
իր ընտանիքին, գիրկն առավ զուտրերին, գիրկն առավ ուստրե-
րին, տակավին պատանի Ալկմեոնին և փոքրիկ Ամփիլոքոսին, որ
դեռ ծծմոր ձեռքի վրա էր: Մեկնելուց առաջ Ամփիարատը երգվեց-
րեց որդուն՝ Ալկմեոնին, վրեժխնդրի լինել մորից, բանի որ հորը
կործանման է ուղարկում: Վշտով համակված՝ Ամփիարատը ելավ
իր երկանվի վրա. քաջ գիտեր, որ վերջին անգամն է տեսնում իր
զավակներին: Կանգնած երկանվի վրա՝ Ամփիարատը դարձավ իր
կնոջը՝ էրիփիլեին, մերկացրած սրով սպառնաց նրան և նզովեց,
որ իրեն մահվան է դատապարտում:

Զորաբանակը բարհեհաջող նեմեա՝ հասավ: Մարավից պապա-
կած ռազմիկները սկսեցին ջուր փնտրել: Եվ ոչ մի տեղ չկարողա-
ցան գեթ մի աղբյուր գտնել. բոլոր աղբյուրները հավերճահարս-
ները լցրել էին Զևսի հրամանով, որ զայրացած էր հերոսների վրա՝
իր կամքին հակառակ: արշավանքի ելնելու համար: Վերջապես
նրանք հանդիպեցին Լեմնոսի նախկին թագուհի Հիպսիպիլեին՝ Նե-
մեայի արքա Լիկուրգոսի փոքրիկ որդուն՝ Օփելտոսին գրկած: Հիպ-
սիպիլեին Լեմնոսի կանայք ստրկութիւն էին վաճառել, որովհետև
նա փրկել էր իր հորը՝ Փաոնին, երբ նրանք կոտորում էին իրենց
բոլոր տղամարդկանց: Այժմ նա Լեմնոսի արքա Լիկուրգոսի ստոր-
կուհին էր և նրա որդու դայակը: Հիպսիպիլեն ցած դրեց փոքրիկ
Օփելտոսին խոտի վրա և գնաց ռազմիկներին ցույց տալու անտա-
ռի մեջ թաքնված աղբյուրը, Հենց նոր էին մանկան մոտից հեռա-
ցել Հիպսիպիլեն և ռազմիկները, երբ թփուտի միջից մի վիթխարի
օձ դուրս եկավ և պարուրվեց երեսայի մարմնի շուրջը: Մանկան
ճիչերի վրա մոտ վաղեցին ռազմիկներն ու Հիպսիպիլեն: Վրա հա-
սան և Լիկուրգոսն ու նրա կինը՝ էվրիդիկեն, բայց օձն արդեն խնդ-
դամահ էր արել Օփելտոսին: Սուրը մերկացրած՝ Լիկուրգոսը նետ-

¹ Քաղաք Արզոլիսում, Պելոպոնեսի հյուսիսային մասում:

Վեց Հիպսոպիլեի վրա: Եվ կսպաներ Հիպսոպիլեին, եթե Տիդևը չպաշտպաներ նրան: Նա պատրաստ էր կռվելու Լիկուրզոսի դեմ, եթե Ադրաստոսը և Ամփիարաոսը ետ չպահանջին հերոսին: Նրանք թույլ չտվին, որ արյուն հեղվի: Հողին հանձնեցին հերոսները Օփելատոսի դին և նրա թաղմանը ռազմի խաղեր արեցին և դրանով սկիզբ դրեցին նեմեական խաղերին¹:

Կռահեց Ամփիարաոսը, որ Օփելտոսի մահն ահեղ կանխանշան է ամբողջ զորաբանակի համար, որ այդ մահը գուժում է բուլոր հերոսների կործանումը: Եվ Ամփիարաոսը Օփելտոսին Արքեմորոս (մահվան տանող) կոչեց և բոլոր հերոսներին խորհուրդ տվեց դադարեցնել արշավանքն ընդդեմ Թերեի, բայց նրանք, ինչպես առաջ, էլի չլսեցին իմաստուն հերոսին. համատորեն ընդառաջ էին գնում իրենց կործանմանը:

Անցնելով անտառապատ Կիթերոնի կիրճերով, զորաբանակը հասավ Ասոպոսի ափերին, յոթնադուռն Թերեի պարիսպներին: Առաջնորդներն իսկույն շարժարեցին քաղաքը, վճռեցին թերեցիների մոտ բանակցության ուղարկել Տիդևին: Թերե մտնելով, Տիդևը նշանավորագույն թերեցիներին էթեոկլեսի ապարանքում խնջույքի նստած գտավ: Թերեցիները ականջ չդրին Տիդևին. ծիծաղելով, նրանք հերոսին հրավիրեցին մասնակից լինելու իրենց խնջույքին: Զայրացավ Տիդևը և, շնայած որ մեն-մենակ էր ոսոխների շրջապատում, նրանց մենամարտի կանչեց և բոլորին իրար հետևից պարտության մատնեց, քանի որ իր սիրելի ընտրյալին օգնում էր Աթենաս-Պալլասը: Ցասումը տիրեց թերեցիներին, նրանք վճռեցին կործանել մեծ հերոսին: Հիսուն պատանի ուղարկեցին՝ Մեոնի ու Լիկոփոնի գլխավորությամբ, որպեսզի նրանք դարանից հարձակում գործեին Տիդևի վրա, երբ նա վերադառնալիս լիներ պաշարողների ճամբարը: Բայց այդտեղ էլ Տիդևը զոհ չգնաց: Բոլորին կոտորեց Տիդևը, միայն Մեոնին խնայեց աստվածների կամքով, որպեսզի նա կարողանար թերեցիներին պատմել Տիդևի սխրագործությունը:

Դրանից հետո առավել կատաղությամբ բորբոքվեց թշնամությունը Արզոսից եկած հերոսների և թերեցիների միջև: Բոլոր յոթնառաջնորդները զոհեր մատուցեցին Արեսին, ճակատամարտի բո-

լոր աստվածներին և Թանատոսին: Զեուքեբը զոհերի արյան մեջ թաթախելով՝ երգվեցին նրանք՝ կամ քարուքանդ անել Թերեի պարիսպները, կամ էլ, ընկնելով ռազմի դաշտում, հագեցնել թերեական հողն իրենց արյամբ: Արզոսյան զորաբանակը գրոհի էր պատրաստվում: Ադրաստոսը տեղաբաշխեց զորաբանակը. յոթնառաջնորդներից յուրաքանչյուրը պետք է գնար քաղաքի յոթ դարպասներից մեկի վրա:

Պրոյտիսյան դարպասի առաջ իր ջոկատով կանգնած էր հզորագոր Տիդևը, որ ծարավի էր արյան, որպես կատաղի վիշապ: Երեք կատար էր տատանվում նրա սաղավարտի վրա, նրա վահանին աստղալից գիշերային երկինք էր պատկերված, իսկ մեջտեղում գիշերվա աչքը՝ լիալուսինը: Էլեկտրայի դարպասի առաջ իր ջոկատը կանգնեցրեց հսկայի պես հաղթահասակ Կապանևսը: Նա սպառնում էր թերեցիներին, թե կաննի քաղաքը, թեև աստվածները հակառակ են դրան. ասում էր, թե մինչև անգամ Զևսի ամենակործան ցասումը չի կասեցնի իրեն: Կապանևսի վահանին պատկերված էր մերկանդամ մի հերոս՝ ջահը ձեռքին: Իսկ էթեոկլեսը, Պրոյտոսի հետնորդը, իր ջոկատով ելավ նեյան դարպասին հանդիման: Նրա վահանին էլ խորհրդանիշ կար պատկերված. մարդ, որ սանցուղքով մազլցում էր դեպի պաշարված քաղաքի աշտարակը, իսկ ներքեում գրված էր. «Մինչև իսկ Արես աստվածն ինձ չի տապալի»: Աթենական դարպասի հանդիման Հիպոմեդոնն էր կանգնած. արևի պես շողշողուն նրա վահանին պատկերված էր Տիփոնը՝ բոց ժայթքող երախով: Հնչեց Հիպոմեդոնի մուկզին մարտականը, նրա հայացքը մահվամբ էր սպառնում յուրաքանչյուրին: Զքնաղ պատանի Պարթենոպատոսն իր ջոկատը տարավ ընդդեմ Բորեսոսյան դարպասի: Նրա վահանին պատկերված էր մի սֆինքս՝ մերձիկաճ թերեցուն ճանկերի մեջ առած: Իսկ պատգամախոս Ամփիարաոսը պաշարեց Հոմոլոխիսյան դարպասը: Նա զայրացած էր Տիդևի՝ պատերազմ սկսողի վրա, պախարակում էր նրան՝ մարդատյանին, քաղաքներն ամբողջին, կատաղության բանքերին, սպանության սպասավորին, ամենայն շարիքի խորհրդատուին: Նա ատելություն էր լցված այդ արշավանքի հանդեպ, նախատում էր Պոլիսիկեսին, որովհետև օտարերկրացիների զորաբանակ էր բերել իր հայրենի թերեքն ավերելու: Գիտեր Ամփիարաոսը, որ սերունդները կնդրվեն այդ արշավանքի մասնակիցներին: Ամփիարաոսը գիտեր նաև, որ ինքը կընկնի այդ ճակատամարտում և իր դին պիտի

¹ Ուրիշ ավանդության համաձայն նեմեական խաղերի սկիզբը դրել է Հերակլեսը՝ նեմեական առյուծին սպանելուց հետո: Տե՛ս առաջին մաս, «Հերակլես»

կլանի Թեբեի հողը: Ամփիարասոսի վահանին խորհրդանշան չկար, նրա տեսքն իսկ առավել ազդեցիկ էր, քան որևէ խորհրդանշան: Իսկ վերջին՝ յոթերորդ դարասը Պոլինիկեսն էր պաշարել: Նրա վահանին զինավառ ռազմիկին առաջնորդող մի աստվածուհի էր պատկերված, իսկ վահանի մակագրությունն ազդարարում էր. «Ես այս այր մարդուն իբրև հաղթողի ետ կտանեմ նրա քաղաքը և նրա նախնիների տունը»:

Ամեն ինչ պատրաստ էր Թեբեի անխորտակելի պարիսպների վրա գրոհելու համար:

Թեբեցիները նույնպես պատրաստվում էին այդ ճակատամարտին: Էթեոկլեսը դարպասներից յուրաքանչյուրի մոտ կանգնեցրել է ռազմիկների մի ջոկատ՝ որևէ մեծահամբավ հերոսի զբլխավորությունը: Իսկ ինքն իր վրա առավ պաշտպանությունն այն դարպասի, որի դիմաց նրա եղբայրը՝ Պոլինիկեսը պիտի մարտնչեր: Տիդևսի դեմ պիտի ելներ Աստակոսի հզոր որդին՝ Մելանիպոսը, հետնորդը այն ռազմիկներից մեկի, որ Կադմոսի սպանած օձի ատամներից էր բուսնել: Կապանևսի դեմ էթեոկլեսն ուղարկեց Պոլիփոնին, որին ինքը՝ Արտեմիս դիցուհին էր պաշտպան կանգնում: Կրեոնի որդի Մեգարևսը իր ջոկատով կանգնեց այն դարպասի մոտ, որի վրա պիտի հարձակում գործեր Պրոյտիզ էթեոկլեսը: Օյնորի որդի Հիպերբիոսը պիտի ելներ ընդդեմ Հիպոդեմոնի, Պարթենոպատոսի հանդիման՝ հերոս Ակտորը պիտի մարտնչեր, իսկ Ամփիարասոսի դեմ՝ Լեյսիֆենոսը, որ զորությունը պատանի էր, իսկ խելամտությամբ՝ ծերունի: Թեբեցի հերոսների մեջ էր նաև հզորագոր Պոսելոդոնի որդին՝ անպարտելի Պերիկլիմենոսը:

Ճակատամարտն սկսելուց առաջ էթեոկլեսը նրա ելքի մասին հարցրեց պատգամախոս Թիրեսիոսին: Թիրեսիոսը հաղթանակ խոստացավ միայն այն դեպքում, եթե Արեսին (նա զեռ զայրացած էր, որ Կադմոսը սպանել էր իրեն նվիրարբերված օձին) իբրև զոհ մատուցվի Կրեոնի որդի Մենոյկեսը: Պատանի Մենոյկեսը, առնելով այդ գուշակության լուրը, բարձրացավ Թեբեի պարսպի վրա և, կանգնած այն կիրճի դիմաց, ուր մի ժամանակ Արեսին նվիրարբերված օձն էր ապրում, ինքն իր կուրծքը մխրճեց սուրբ: Այդպես մեռավ Կրեոնի զավակը. ինքնակամ զոհաբերվեց հանուն հայրենի Թեբեի փրկության:

Ամեն ինչ հաղթանակ էր խոստանում Թեբեցիներին: Քաղաքը շահել էր մոլեգին Արեսի ողորմածությունը, աստվածների կամքին

ու կանխանշաններին հնազանդ Թեբեցիների պաշտպաններն էին աստվածները: Բայց միանգամից չէ, որ հաղթանակը բաժին ընկավ Թեբեցիներին: Երբ նրանք դուրս եկան պարիսպների հետևից և Ապոլոնի սրբավայրի մոտ կովի բռնվեցին Արգոսյան զորաբանակի հետ, նրանք ստիպված եղան նահանջել ոսոխի ճնշման տակ և կրկին ապաստանել պարիսպների հետևում: Արգոսցիները նետվեցին նահանջող Թեբեցիներին հետապնդելու և սկսեցին գրոհ տալ պարիսպների վրա: Նենգամիտ Կապանևսը, հպարտ իր զերմարդկային ուժով, սանդուղքը դեմ արեց պարսպին և արդեն պիտի քաղաք խուժեր, բայց Զևսը չհանդուրժեց, որ իր կամքին հակառակ որևէ մեկը Թեբե թափանցեր: Երբ Կապանևսն արդեն կանգնել էր պարսպի վրա, Զևսն իր շողշողուն շանթը նետեց հերոսի վրա: Կապանևսը կորավ բոցերի մեջ, և նրա ծխացող դին սարսպից ընկավ ստորոտում կանգնած արգոսցիների ոտքերի մոտ:

Թեբեն պաշարելիս ընկավ նաև պատանի Պարթենոպատոսը, հզոր Պերիկլիմենոսը պարսպի վրայից նրա զլխին գցեց ժայռի շափ վիթխարի մի քար: Զխաչախեց այդ քարը Պարթենոպատոսի զլուխը, և հերոսն անշնչացած գետին ընկավ:

Պարիսպների մոտից ետ քաշվեցին արգոսցիները. համոզվեցին, որ անկարող են գրոհով առնել Թեբեն: Հիմա արդեն կարող էին ցնծալ Թեբեցիները. Թեբեի պարիսպները մնացին անսասան:

Եվ վճռեցին ոսոխները, որ եղբայրները՝ Պոլինիկեսը և էթեոկլեսը, մենամարտով վճռեն, թե ո՞վ պիտի իշխանություն ունենա Թեբեի վրա: Էդիպի զավակները մենամարտի պատրաստվեցին: Թեբեի դարպասից դուրս եկավ էթեոկլեսը՝ շողալով իր զենք ու զրահով: Արգոսցիների ճամբարից նրան ընդառաջ ելավ Պոլինիկեսը: Արդեն պիտի սկսվեր եղբայրասպան կռիվը: Եղբայրներն այրվում էին միմյանց հանդեպ տածած ատելությունը: Նրանցից մեկն անխուսափելիորեն պետք է ընկներ այդ կովում: Բայց ուրիշ ելք էին կանխատեսում ճակատագրի աստվածուհիները՝ Մոյրաները: Վրեժխնդուհի Էվմենիդները չէին մոռացել էդիպի նզովքը, չէին մոռացնել նաև Լայոսի մեղազորությունները և Պելոպսի անեծքները¹:

Իբրև որսի համար կովոզ երկու կատաղի առյուծ, դաժան մենամարտի բռնվեցին եղբայրները: Վահաններով պաշտպանվելով, դարկվում էին նրանք՝ ատելությամբ լեցուն հայացքներով աշա-

¹ Տե՛ս Պելոպսի առասպելը, 1-ին մաս:

լուրջ հետևելով միմյանց շարժումներին: Ահա նահանջեց էթեոկլիսը, Պոլինիկեսն անհասպաղ նիզակը նետեց եղբոր վրա և վիրավորեց նրա ազդրը: Վերքից արյուն էր հոսում, բայց հարվածելիս Պոլինիկեսն անպաշտպան էր թողել ուսը, և այդ նույն պահին էթեոկլեսն իր նիզակով խոցեց նրա ուսը: Դիպչելով Պոլինիկեսի զրահին՝ կռուվեց նիզակը և շարժվեց նրա կոթունը: Միմիայն սուրը մնաց էթեոկլեսի ձեռքին: Շուտափույթ կոացավ նա, ահագին բարատավ գետնից և նետեց եղբոր վրա: Քարը դիպավ Պոլինիկեսի նիզակին ու շարժեց այն: Հիմա արդեն երկու եղբայրն էլ միայն սրով մնացին:

Վահանների հետևում պատասպարվելով, զարկում գարկվում էին եղբայրները. երկուսն էլ վիրավորվել էին, արյունը ներկել էր նրանց գեներ ու զրահը: Իսկույն մի քայլ ետ գնաց էթեոկլեսը. Պոլինիկեսը, որ չէր սպասում դրան, բարձրացրեց վահանը, իսկ այդ ժամանակ եղբայրը սուրը նրա որովայնը մխրճեց: Գետին տապալվեց Պոլինիկեսը, արյունը գետի պես հորդում էր ահռելի վերքից, մահվան խավարը պատեց աչքերը: էթեոկլեսը տոնում էր իր հաղթանակը: Նա մոտ վազեց մերձիմահ եղբորը և ուղեց վրայից հանել գեներ ու զրահը: Վերջին ուժերը հավաքեց Պոլինիկեսը, վրանստեց և սրով հարվածեց էթեոկլեսի կրծքին. այդ հարվածի հետ նրա հոգին ճախրեց գեպի Հադեսի խավարամած թագավորությունը: Կտրված կաղնու պես էթեոկլեսն անշնչացած փուլ եկավ եղբոր դիակի վրա, և նրանց արյունը խառնվեց իրար, գետինը բոսոր ներկելով: Թերեցիներն ու արգոսցիները սոսկումով էին նայում եղբայրների մենամարտի ահավոր վախճանին:

Երկար շտեկեց պաշարողների և պաշարվածների զինադադարը: Կրկին արյունահեղ կռիվ բորբոքվեց նրանց միջև: Այդ կռվի ընթացքում աստվածները թերեցիներին էին հովանավոր: Ընկան Հիպոմեդոնը և Պրոտյոդ էթեոկլեսը, անպարտելի Տիդևսը մահացու վիրք էր ստացել հզորագոր Մելանիպոսի ձեռքով: Թեև մահացու վիրավոր՝ Տիդևսն իր մեջ ուժ գտավ Մելանիպոսից վրեժխնդիր լինելու. նրան նիզակահարելու համար: Տեսնելով մերձիմահ, արնաթաթալ Տիդևսին՝ Աթենաս-Պալլասն աղերսեց Զևսին, որ թույլ տա իր սիրելի հերոսին փրկել, մինչև անգամ անմահություն շնորհել: Եվ Աթենասը փութաց Տիդևսի մոտ: Բայց այդ ժամանակ Ամփիարասը գլխատեց Մելանիպոսին և կտրված զուլսը Տիդևսին նետեց: Սա խելացնոր մոլեգնությունը խլեց ոսոխի զուլսը, փշրեց զանգը և

որպես վարդի գազան, սկսեց խմել իր ոսոխի ուղեղը: Ցնցվեց Աթենասը՝ Տիդևսի կատաղի ու արյունոտ աբարքը տեսնելով, դիցուհին լքեց Տիդևսին, իսկ մերձիմահ հերոսը Աթենասի հետևից կարողացավ լուի մրմնջալ իր վերջին աղերսանքը՝ իր որդի Դիոմեդեսին շնորհել այն անմահությունը, որին ինքը շարժանացավ:

Թերեցիները պարտություն մատնեցին արգոսցիներին, նրանց ողջ զորաբանակը գլուխը դրեց Թերեի պարխալների տակ: Զոհ գնաց և Ամփիարասը: Փութաց իր հրկանվով, որ Բատոնն էր վարում, փախուստի դիմել և փրկվել: Նրան հետապնդողը հզորագոր Պերիկլիմենոսն էր: Եվ նա արդեն հասնում էր մեծ պատգամախոսին, արդեն ճոճում էր նիզակը, որ նետի ոսոխի վրա, երբ հանկարծ փայտառակեց Զևսի շանթը, պայթեց որոտը, ապա ճեղքվեց գետինը և կլանեց Ամփիարասին իր մարտակառքի հետ միասին: Բոլոր հերոսներից միայն Աղրաստոսն էր, որ փրկություն գտավ: Քամու պես սրաթռչ իր Արեոն նժույզով սուրաց նա և թաքնվեց Աթենքում, իսկ այնտեղից՝ Արգոս վերադարձավ:

Ցնծում էին թերեցիները: Թերեի փրկված էր: Հանդիսավորությամբ հողին հանձնեցին իրենց հերոսներին, իսկ Արգոսից Պոլինիկեսի հետ եկած բոլոր հերոսներին ու ռազմիկներին անթաղ թողեցին: Ռազմի դաշտում անթաղ ընկած մնաց և Պոլինիկեսը, որ հանդգնել էր ձեռք բարձրացնել հայրենի երկրի վրա:

Արգոսի կանայք և մայրերն իմացան, որ իրենց ամուսիններն ու զավակներն անթաղ են մնացել: Վշտով համակված՝ նրանք Աղրաստոսի հետ միասին գնացին Ատտիկա, որպեսզի աղերսեն Թեսես արքային կարեկից լինել իրենց վշտին և թերեցիներին ստիպել, որ տան սպանվածների մարմինները: Էլևսինում, Գեմետրա աստվածուհին, որ խնդրի որդուց արգոսյան ռազմիկների դիերը ետ տալու պահանջ դնել թերեցիների առաջ: Երկար վարանեց Թեսեսը և, ի վերջո, վճռեց օգնական լինել արգոսյան կանանց և Աղրաստոսին: Հենց այդ ժամանակ Թերեի արքա Կրեոնի կողմից զեսպան էր ժամանել: Նա պահանջեց Թեսեսից, որ նա օգնություն ցույց շտա արգոսի կանանց և Աղրաստոսին արտաքսի Ատտիկայից:

Սաստիկ զայրացավ Թեսեսը: Կրեոնն ինչպե՞ս է հանդգնում հնադարեություն պահանջել իրենից: Մի՞թե ինքը չէ իր վճիռների տերը: Եվ Թեսեսն իր զորաբանակով ելավ ընդդեմ Թերեի, հաղթեց թերեցիներին և ստիպեց, որ ետ տան ընկած բոլոր ռազմիկ-

ների դիերը: Էլեթերի մոտ յոթ խարույկ արեցին և այրեցին
ուսուցիչները: Առաջնորդների դիերը տեղափոխեցին Էլեաին
և այրեցին այնտեղ, իսկ մոխիրը նրանց մայրերն ու կանայք տա-
րան հայրենի Արգոս:

Միայն Կապանևսի, որ սպանվել էր Զևսի շանթով, աճյունը
մնաց Էլեաինում: Սրբազան էր Կապանևսի դին, քանի որ հերոսն
իր՝ մեծն շանթարձակի ձեռքով էր զոհ գնացել: Աթենացիք մի
վիթխարի խարույկ դարսեցին և Կապանևսի դին վրան դրին: Երբ
կրակն արդեն սկսում էր բորբոքվել, և բոցեղեն լեզուներն արդեն
հասնում էին հերոսի աճյունին, Էլեաին եկավ Կապանևսի կինը,
Իփիսի զեղանի դուստր էվադենն, նա անկարող եղավ տանել սի-
բած ամուսնու մահը: Թաղման շքեղ զգեստները հագին՝ նա ելավ
ժայռի վրա, որ կախված էր ճիշտ խարույկի վրա, և այնտեղից բո-
ցերի մեջ նետվեց:

Այսպես զոհ գնաց էվադենն, և նրա ստվերը, ամուսնու ստվե-
րի հետ մեկտեղ, իջավ Հադեսի խավարչտին թագավորությանը:

ԱՆՏԻԳՈՆՆ

Շարադրված է ըստ Սոֆոկլեսի «Անտիգոն» ողբերգության:

Արգոսցիներին պարտություն մատնելուց հետո թեբեցիները
շքեղ հանդիսավորությամբ թաղեցին էթեոկլեսին և ընկած բուր
հերոսներին, իսկ Պոլիսիկեսին, իբրև Թեբեի վրա օտարերկրացի-
ների զորաբանակ բերողի, Կրեոնն ու թեբեցիները վճռեցին հողին
չհանձնել: Նրա դին ընկած էր դաշտում, քաղաքի պարիսպների
մոտ, լքված՝ գիշատիչ զագանների ու թռչունների կեր դառնալու
համար: Մշտնջենական զեզերումների էր դատապարտված Պոլի-
սիկեսի հոգին, չէր կարող անդորր գտնել մեռյալների թագավորու-
թյան մեջ:

Տառապում էր ազնվաբարո, ամեն ինքնազոհության պատ-
րաստ Անտիգոնեն՝ էդիպի դուստրը, ականատես լինելով այն
անարգանքին, որին դատապարտված էր իր եղբայրը: Ամեն ինչ ան-
տեսելով, վճռեց ինքը հողին հանձնել Պոլիսիկեսի դին: Նրան սոս-
կում չէր պատճառում մահը, որով Կրեոնն սպառնացել էր նրան,
ով կհանդգնի հողին հանձնել Պոլիսիկեսի դին՝ թաղման բոլոր ծե-
սերը կատարելով: Անտիգոնեն ասել էր Իսմենիին, որ նա էլ գա

իր հետ, բայց երկչուտ քույրը սիրտ չէր արել գրել
ևրեոնի ցասումից: Մինչև իսկ շանացել էր համոզել Անտիգո-
նին, որ նա էլ հակառակ լզնա Թեբեի բարբախ կամքին, հիշեցրել
էր նրան այն վիճակը, որ բաժին էր ընկել իրենց մորն ու եղբայր-
ներին, Միթե Անտիգոնեն ուզում է կործանած լինել և՛ իրեն, և՛
քրոջը:

Անտիգոնեն շտեյ Իսմենիին, պատրաստ էր մեն-մենակ հա-
տուցել եղբոր հանդեպ ունեցած պարտքը, պատրաստ էր անմոռնչ
տանել ամեն ինչ, միայն թե Պոլիսիկեսն անթաղ չմնա: Եվ Ան-
տիգոնեն ի կատար ածեց իր վճիռը:

Շատ շանցած Կրեոնն իմացավ, որ իր կամքը խախտել են:
Պահակներից մեկը պատմել էր նրան, թե ինչ-որ մեկը զաղտնա-
բար եկել է Պոլիսիկեսի դիակի մոտ և, հող լցնելով վրան, թաղ-
ման ծես է կատարել: Ահեղորեն զայրացավ Կրեոնը, պահակին
սպառնաց ահավոր խոշտանգումներով, եթե նա և իր ընկերները
չգտնեն Պոլիսիկեսի դիակի վրա թաղման ծես անողին: Մինչև իսկ
Զևսի անունով երդվեց ի կատար ածել իր սպառնալիքը:

Եվ պահակը գնաց այնտեղ, ուր ընկած էր Պոլիսիկեսի դին:
Հողը ետ տվեց դիակի վրայից և նստեց բլրից քիչ հեռու, որպես-
զի իրեն շհասնի քայքայվող դիակի գարշահոտությունը, Հանկարծ
կեսորին փոթորիկ բարձրացավ: Մրրիկը փոշու ամպեր գալարեց
դաշտավայրում: Իսկ երբ փոթորիկն անցավ, պահակը դիակի վրա
հակված մի աղջկա տեսավ, որ ողբում էր Պոլիսիկեսին: Նրա ող-
բի ձայնը հնչում էր որպես աղեկտուր կանչն այն թռչունի, որ
տեսնում է, թե ինչ-որ շար ձեռք հափշտակել է իր ձագուկներին:
Աղջիկն արդեն հեղում էր կատարել ի պատիվ ստորերկրյա աստ-
վածների, երբ պահակը բռնեց նրան ու տարավ Կրեոնի մոտ: Այդ
աղջիկն Անտիգոնեն էր:

Ցասումնալից խոսքերով դիմավորեց Կրեոնն Անտիգոնիին և
մեղսագործության խոստովանություն պահանջեց նրանից: Անտի-
գոնեի մտքով չէր անցնում ժխտել իր հանցանքը: Նա խախտել
էր Կրեոնի կամքը, բայց դրանով իսկ աստվածների օրենքն ու
կամքն էր կատարել: Անտիգոնեն ի կատար էր ածել իր պարտքը
եղբոր հանդեպ՝ նրա դին հողին հանձնելով: Մահը նրան չէր վա-
խեցնում, ինքը հենց ծարավի էր մահվան, քանի որ նրա կյանքը
լուկ վշտով էր լեցուն: Ահավոր ցասման մեջ՝ Կրեոնը սպառնում էր

մահապատժի ենթարկել ոչ միայն Անտիգոնեին, այլև Իամենեին, որը, նրա համոզմամբ, Անտիգոնեի օգնականն էր եղել:

Իմանալով, որ Կրեոնը Իամենեին էլ է ուզում մահվան մատնել, Անտիգոնեն ցնցվեց սուսկումից: Մի՞թե ինքը պիտի դառնա բրոջ կործանման պատճառը: Մառանքը գնացին Իամենեին կանչելու: Ահա նա երևաց պալատի շեմին: Իամենեի աչքերից թափվում էին բրոջ համար ապրած վշտի արցունքները:

Մշտապես երկչոտ Իամենեն, իմանալով, որ մահ է սպառնում բրոջը, իր մեջ արհուլթյուն գտավ բաժանել Անտիգոնեի ճակատագիրը: Նա անվարան պատասխան տվեց Կրեոնին, թե ինքն էլ է մասնակից եղել Պոլիսիկեսի դիակի վրա թաղման ծեսերի կատարմանը:

Բայց Անտիգոնեն չէր կամենում, որ անմեղ Իամենեն ևս տառապի իր հետ միասին: Զուր էր աղաչում Իամենեն.

— Օ՛, բույր իմ, մի՛ վանիք ինձ, մի՛ ասիր, որ ես արժանի չեմ քեզ հետ մեռնելու: Կյանքն ի՞նչ իմաստ ունի առանց քեզ, Մի՛ անարդիր ինձ:

Բայց Անտիգոնեն այսպես պատասխանեց բրոջը.

— Ո՛չ, դու չպե՛տք է մեռնես ինձ հետ: Զպե՛տք է բոնը համարես այն արարքը, որ դու չես գործել: Իմ մահն էլ բավական է: Դու կյանքն ես քնտրել, ես՝ մա՛հը:

Իամենեն աղերսում էր Կրեոնին, որ խնայի Անտիգոնեին, աղերսում մտածել նաև, որ մահվան է դատապարտում որդու հարսնացուին: Բայց Իամենեի աղերսանքները չէին շարժում Կրեոնի գույքը: Նա պատասխանեց, որ իր որդուն՝ Հեմոնին, թույլ չի տա կնության առնել մեղսագործ աղջկան: Ո՛չ, Անտիգոնեն պետք է մեռնի, մա՛հը նրան կբաժանի Հեմոնից: Կրեոնը ծառաներին հրամայեց Անտիգոնեին և Իամենեին պալատ տանել և հսկել, որպեսզի փախուստի դիմելու փորձ չանեն, Տարան էղիպի դուստրերին: Անխոս կանգնել էին քաղաքացիները: Կարեկցում էին Անտիգոնեին. գիտեին, որ նա է սխրանք գործողը: Իրավացի էր Անտիգոնեն, և բք ասում էր Կրեոնին, թե ժողովուրդն իրեն չէր մեղադրի Պոլիսիկեսին թաղելու համար, եթե նրանց շուրթերին կապանք չդնեք բռնակալ Կրեոնի հանդեպ ունեցած երկյուղը:

Կրեոնի որդին՝ պատանի Հեմոնը, իմանալով, ի՞նչ է սպառնում իր հարսնացուին, եկավ հոր մոտ և խնդրեց ներումն շնորհել Անտիգոնեին: Հեմոնը գիտեր, որ ամբողջ ժողովուրդը կարեկից է

Անտիգոնեին և տրտնջում է, որ նրան մահ է սպառնում բարեպաշտ արարքի համար: Հեմոնը խնդրում է հորը չհամառել և խոստովանել իր մոլորությունը:

— Թեթեում բոլորն անմեղ են ճանաչում Անտիգոնեին, — համարձակորեն ասում էր Հեմոնը Կրեոնին: — Հա՛յր, ես տեսնում եմ, որ հակված ես անարդարության: Դո՛ւ ես աստվածների օրենքը խախտողը:

Կրեոնը գնալով ավելի էր բորբոքվում ցասմամբ. կարծում էր, թե լուկ սերն է, որ Հեմոնին ստիպում է այդպես պաշտպանել մեղսագործին, Ցասումով լեցուն՝ նա գոռաց որդու վրա.

— Օ՛, դու դատում ես ինչպես կանանց անարգ ստրուկը կգատեր:

— Ո՛չ, — պատասխան տվեց Հեմոնը, — դու երբեք չե՛ս տեսնի, որ ես շար գործին կարեկից լինեմ:

Բայց Կրեոնն արդեն չէր լսում Հեմոնին: Ասաց, որ հաստատ վճռել է մահվան դատապարտել Անտիգոնեին: Լսելով հոր այդ վճիռը, Հեմոնն ասաց.

— Եթե նա մեռնի, ապա իր հետևից մահվան կմատնի և մեկ ուրիշին:

Բայց Կրեոնի ցասումը չափ ու սահման չէր ճանաչում: Նա հրամայեց ռազմիկներին բերել Անտիգոնեին և սպանել նրան հենց այդտեղ, Հեմոնի աչքերի առաջ:

— Ո՛չ, նա իմ աչքերի առաջ չի՛ մեռնի, — գոչեց Հեմոնը: — Դու այլևս չե՛ս տեսնի ինձ, հա՛յր: Մեն-մենա՛կ մոլեգնիք բո՛ շողոմբոր մտերիմների մեջ:

Այս խոսքն ասելով, դուրս եկավ Հեմոնը: Քաղաքացիները զուր էին նախազգուշացնում Կրեոնին, որ միայն զժբախտություն կարող է գալ այն ցասումից, որով համակված էր Հեմոնը. անդրդվելի էր Կրեոնը:

Ահա Անտիգոնեին արդեն բերում են ահալոր մահապատժի: Կրեոնը վճռել էր նրան կենդանի թաղել Լաբդակիդների դամբարանում: Իր վերջին ճանապարհն էր անցնում Անտիգոնեն, գնում էր դեպի Աբերոնի ափերը: Կենդանի պիտի որմնափակվեր դամբարանում. մարդկանց մեջ չպիտի լիներ, այլ մեռյալների, ո՛չ մահին պիտի պատկաներ, ո՛չ կյանքին: Մտերիմները չէին ուղեկցում նրան. առանց ողբալու նրան մահվան են տանում: Այլևս չի տեսնելու արևի պայծառ լույսը:

Հենց նոր էին տարել Անտիգոնեան, երբ, մի տղայի առաջնորդութեամբ, Կրեոնի մօտ եկավ կուր պատգամախոս Քիրեսիոսը: Զոհարեբութեան ժամին աստվածները նրան շարագուշակ կանխանշաններ էին տվել: Ահեղորեն զայրացած էին աստվածները, որ սպանվածի դին անթաղ է մնացել, որ թուշուններն ու շները ամենուրեք ցրիվ են տալիս քայքայվող դիակի կտորները: Իր խելացնոր համառութեան մեջ՝ Կրեոնը չէր լսում անգամ Քիրեսիոսին, որ խորհուրդ էր տալիս հողին հանձնել Պոլիսիկեսի դին: Կրեոնն ասաց, որ եթե նույնիսկ Զևսի արժիվը դիակից մի կտոր տանի ու հասցնի մինչև իսկ շանթարձակի գահին, ապա այդ դեպքում էլ Պոլիսիկեսի դին անթաղ կմնա: Կրեոնը Քիրեսիոսին մեղադրում էր կաշառված լինելու մեջ, ասում, թե նա շահամուլտությունից է այդպիսի խորհուրդներ տալիս: Զայրագնած Քիրեսիոսը սպառնազին ասաց Կրեոնին, թե ամեն ինչի մեղավորը հենց նա է: Նա՛ է անարգանք հասցրել աստվածներին՝ Անտիգոնեան կենդանի-կենդանի դամբարան գնելով, պղծել է Պոլիսիկեսի դին, խախտել աստվածների օրենքները: Աստվածները կպատուհասեն նրան այդ ամենի համար: Կրեոնի տունը կհամակվի խորունկ վշտով. պատըժվի պիտի նա՛, ով ամենից թանկն է Կրեոնի համար: Կրեոնից վրեժխնդիր կլինեն էրիսիները, որոնք խնայել չգիտեն: Ոչ որ չի կարող նրան փրկել սուսակի վրեժխնդրությունից:

Ի վերջո, Կրեոնին վախեցրին գուշակ Քիրեսիոսի խոսքերը: Նա փոխեց Պոլիսիկեսի դին անթաղ թողնելու իր հրամանը: Ինքը փութաց դաշտ, կատարեց թաղման ծեսերը և աղերսեց Հագեսին ու Հեկատոնին, որ չզայրանան իր և Քիրեսի վրա: Թաղումն ավարտելով, Կրեոնն իր շրախմբով գնաց կարգակիզների դամբարանը, որպեսզի դուրս բերի Անտիգոնեան: Բայց ավա՛ղ... իր զգեստից պարան էր հյուսել Անտիգոնեն ու կախվել: Կրեոնը դամբարանում գտավ հարսնացուի դիակի վրա ողբացող Հեմոնին: Կրեոնը զուր էր աղերսում որդուն, որ դուրս գա դամբարանից: Հեմոնը հոր աչքերի առաջ սուրբ մխրճեց կուրծքը, և անշնչացած ընկավ հարսնացուի դիակի վրա: Ծայր հուսահատութեան մեջ էր Կրեոնը. կորցրել էր իր վերջին զավակին: Եվ դառնազին լալիս էր նա որպու դիակի վրա:

Մինչև այդ բանքերը Կրեոնի կնոջը՝ Էվրիդիկեին հասցրեց Հեմոնի մահվան բոթը: Անխոս ականջ դրեց էվրիդիկեն և գնաց սուարանքի հերքին սենյակները: Այնտեղ նա ինքնասպան եղավ:

Հեմոնի պես սուրն իր կուրծքը մխրճելով: Նոր էր ինքնասպան եղել էվրիդիկեն, երբ պալատ եկավ Կրեոնը՝ որդու դիակը ձեռքերին առած: Պալատում նրան մի սոսկումնալի վիշտ էր սպասում. այստեղ առավ կնոջ մահվան բոթը: Փշրվեց Կրեոնի գոռոզ ու բիրտ ոգին: Հուսակտուր՝ մահ էր խնդրում Կրեոնը, որ գեթ նա՛ վերջ տա իր տառապանքներին: Բոլոր նրանց, ում սիրում էր, կորցրեց Կրեոնը:

ԷՊԻԳՈՆՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ՝

Շաբաղված է տարբեր ստեղծագործությունների հիման վրա:

Տասը տարի էր անցել Քիրեսի վրա յոթ առաջնորդների կատարած արշավանքներից: Այդ տարիների ընթացքում առնացան Քիրեսի պարիսպների տակ ընկած հերոսների որդիները: Նրանք վճռեցին վրեժխնդիր լինել թեթեցիկներից՝ իրենց հայրերի պարտության համար և ձեռնամուխ եղան մի նոր արշավանքի: Այդ արշավանքին մասնակցում էին Ադրաստոսի որդին՝ Այգալիոսը, Ամփիարասոսի որդին՝ Ալկմեոնը, Տիդևսի որդին՝ Դիոմեդեսը, Պոլիսիկեսի որդին՝ Փերսանդրոսը, Պարթենոպատոսի որդին՝ Պրոմաքոսը, Կապանեսի որդին՝ Սփենելոսը, Հիպոմեդոնի որդին՝ Պոլիդորոսը և էվրիալոսը՝ Մենեսթեսի որդին: Ուրիշ պայմաններում էր ծրագրվում այդ արշավանքը: Աստվածները հովանավոր էին էպիգոններին (այդպես էին կոչվում Քիրեսի դեմ նոր արշավանք սկսող առաջնորդները):

Դեկտիբյան պատգամախոսը հաղթանակ գուշակեց էպիգոններին, եթե այդ արշավանքին մասնակից լինի Ալկմեոնը՝ Ամփիարասոսի որդին:

Փերսանդրոսը՝ Պոլիսիկեսի որդին, սկսեց հորդորել Ալկմեոնին, որ չհրաժարվի արշավանքին մասնակցելուց: Երկար ժամանակ վարանեց Ալկմեոնը: Զեր ուզում արշավանքի գնալ ընդդեմ Քիրեսի, քանի դեռ ի կատար չէր ածել հոր վերջին կամքը և վրեժ չէր լուծել իր մորից՝ ամուսնուն ստույգ մահվան ոտարկած լինելու համար: Իր հոր՝ Պոլիսիկեսի նման, Փերսանդրոսը վճռեց շահել էրիփիլիի՝ Ալկմեոնի մոր համագործակցությունը: Եվ նա կաշա-

1 էպիգոններ — հունարեն նշանակում է հետնորդներ:

ոնց էրիփիլիէին՝ ընծայելով նրան Կազմոսի կնոջ՝ Հարմոնիայի թանկագին զգեստը, որ նրա համար ինքը Աթենաս-Պալլաս դիցուհին էր հյուսել: Էրիփիլիէն գայթակղվեց այդ զգեստով, ինչպես մի ժամանակ Հարմոնիայի մանյակով էր գայթակղվել, և պնդեց, որ Ալկմեոնը և նրա եղբայր Ամփիլոքոսը մասնակից լինեն արշավանքին:

էպիգոնների զորաբանակը դուրս եկավ Արգոսից: Մեծ չէր այդ զորաբանակը, բայց հաղթանակը պիտի լիներ նրա ուղեկիցը: Զորաբանակի առաջնորդ Դիոմեդեսն էր քնտրվել՝ Տիդևսի որդին, որ զորութեամբ ու քաջութեամբ հավասար էր հորը: Հրճվանքով էին արշավանքի գնում հերոսները, տոգորված իրենց հայրերի վրեժը լուծելու կրքով:

Պոտնիայում, Թերեի մոտ, նրանք հարցրին Ամփիարոսի պատգամախոսին արշավանքի ելքի մասին: Պատասխան տվեց պատգամախոսը, որ ինքը տեսնում է Ալկմեոնին՝ Ամփիարոսի փառքը ժառանգողին, հաղթականորեն Թերե մտնելիս: Կհաղթեն էպիգոնները: Միայն Այգիալևսը, առաջին արշավանքի ժամանակ փրկություն գտած Ագրաստոսի որդին, պիտի ընկնի ռազմի դաշտում:

Վերջապես էպիգոնների զորաբանակը հասավ յոթնադուռն Թերեին: Ամայացնելով ողջ շրջակայքը, էպիգոնները ձեռնամուխ եղան քաղաքը պաշարելուն: Իրենց արքա Լաոդամասի՝ Էթեոկլեսի մոլեգին որդու գլխավորությամբ, Թերեցիները ռազմի դաշտ ելան պաշարողներին քաղաքի պարիսպներից հտ մղելու: Արյունահեղ կռիվ բռնկվեց: Այդ կռիվում Լաոդամասի ճիգակով խոցվեց ու ընկավ Այգիալևսը, բայց Լաոդամասին էլ Ալկմեոնը սպանեց: Պարտվեցին Թերեցիները և ապաստանեցին Թերեի անխորտակելի պարիսպների հետևում:

Պարտված Թերեցիները բանակցել սկսեցին պաշարողների հետ, իսկ իրենք, Թիրեսիոսի խորհրդով, գիշերը, պաշարող զորաբանակից ծածուկ, գաղթեցին Թերեից իրենց բոլոր կանանց ու երեխաների հետ: Նրանք շարժվեցին դեպի հյուսիս, Թեսալիա: Ծանապարհին, Տելպուսա հավերժահարսի աղբյուրի մոտ, մեռավ պատգամախոս Թիրեսիոսը, որ այնքան երկար ժամանակ օգնել էր Թերեցիներին և բազմիցս փրկել նրանց կործանումից:

Երկար ճանապարհ կտրելուց հետո Թերեցիները հասան Հեստիոտիս, Թեսալիա և այնտեղ բնակություն հաստատեցին:

Իսկ Թերեն, որ առան էպիգոնները, ավերվեց: Մեծահարուստ ավար հասավ հաղթողներին, որ էպիգոնները բաժանեցին իրենց մեջ: Ավարի լավագույն մասը, դրա հետ և Թիրեսիոսի դստերը՝ գուշակուհի Մանտոյին, նրանք բերին ու դելփիքյան գուշակավարին նվիրաբերեցին:

Երջանի՛կ իրենց բախտով, էպիգոնները վերադարձան հայրենի երկիր: Իսկ Փերսանդոսը՝ Պոլինիկեսի որդին, Թերեն վերականգնելով, սկսեց իշխել այդ քաղաքում:

ԱԼԿՄԵՈՆ

Շարադրված է ըստ Համեոսի «Ողիսական» պոեմի:

Թերեի արշավանքից վերադառնալով, Ալկմեոնն ի կատար ածեց իր հոր՝ Ամփիարոսի կամքը և նրա կործանման վրեժը լուծեց իր մորից: Ալկմեոնն իր ձեռքով սպանեց մորը: Մեռնելիս էրիփիլիէն նզովեց մայրասպան որդուն, նզովեց և այն երկիրը, որ նրան ապաստան կտար:

Ձայրացան վրիժառու դիցուհիները՝ էրիսինները, Ալկմեոնի վրա և հալածեցին նրան ամենուրեք, ուր նա ջանում էր ապաստան գտնել: Երկար տառապեց տարաբախտ Ալկմեոնը՝ ամենուրեք ջանալով ապաստան գտնել և մաքրագործվել հեղած արյան պղծությունից: Վերջապես նա հասավ Արկադիայի՝ Փսոփիս քաղաքը: Այնտեղ սպանությունից պղծությունից նրան մաքրագործեց Փեդևս արքան: Ալկմեոնն ամուսնացավ Փեդևսի դուստր Արսինոյի հետ և մտադիր էր հանգիստ կյանք վարել Փսոփիսում: Բայց ուրիշ էր նրա ճակատագիրը. մոր նզովքը հետապնդում էր նրան: Ահավոր սով և ժանտախտ համակեց Փսոփիսը: Ամենուրեք մահն էր իշխում: Եվ Ալկմեոնը դիմեց դելփիքյան պատգամախոսին. գուշակուհի պիթիան պատասխան տվեց նրան, որ նա պիտի լքի Փսոփիսը և գնա գետային աստված Աքելոոսի մոտ: Միայն այնտեղ կմաքրագործվի մոր սպանության պղծությունից և անդորր կգտնի այն երկրում, որ գոյություն չի ունեցել մոր նզովքի ժամանակ: Փեդևսի տունը, կնոջը՝ Արսինոյին և Կլիտոս որդուն լքելով, Ալկմեոնը ուղևորվեց Աքելոոսի մոտ: Ծանապարհին, Կալիդոնում այ-

1 Մարզ Պելոպոնեսի կենտրոնական մասում:

ցելեց Օյնևսին, որ սիրով հյուրընկալեց նրան: Ալկմեոնը եղավ նաև Քեսայրոտների¹ երկրում, բայց նրանք, երկյուղ կրելով աստվածների ցասումից, արտաքսեցին Ալկմեոնին: Վերջապես Ալկմեոնը հասավ Աքելոոսի² ակունքները: Այնտեղ գետային աստված Աքելոոսը մաքրագործեց Ալկմեոնին՝ թափած արյան պղծութունից և նրան կնության տվեց իր Կալիբոն գետերը: Եվ Ալկմեոնը բնակություն հաստատեց Աքելոոսի գետաբերանի մի կողու վրա, որ գոյացել էր գետի քշած ավազից և տիղմից: Դա հենց այն երկիրն էր, որ գոյութուն չէր ունեցել այն ժամանակ, երբ մայրը նզովել էր Ալկմեոնին:

Բայց ճակատագիրը այդտեղ էլ էր հետապնդում Ալկմեոնին: Իմացավ Կալիբոնն այն թանկարժեք մանյակի և Աթենաս-Պալլասի հյուսած զգեստի մասին, որ Պոլինիկեսն ու նրա Փերսանդրոս որդին ընծայել էին էվրիփիլեսին և պահանջեց որ ամուսինն այդ գանձերն իրեն բերի: Չգիտեր Կալիբոնն, որ այդ գանձերը կործանում են բերում տիրողին: Եվ Ալկմեոնը Փսոփիս ճանապարհվեց ու Փեգևսից պահանջեց, որ իրեն տա մանյակն ու զգեստը: Ալկմեոնն ասաց Փեգևսին, որ այդ գանձերն ուզում է նվիրաբերել դելփիքյան պատգամախոսին՝ նետածիզ աստծուց ներումն ստանալու համար: Հավատ ընծայելով Ալկմեոնի խոսքին, Փեգևսը նրան տվեց գանձերը: Բայց Ալկմեոնի ստրուկն ասաց Փեգևսին, թե ում պիտի տրվեն և՛ մանյակը, և՛ զգեստը: Զայրագնեց Փեգևսը, կանչեց իր որդիներին՝ Պրոնոսին և Ագենորին, և հրամայեց դարանից հարձակում գործել Ալկմեոնի վրա՝ Աքելոոսի գետաբերանը վերադառնելիս: Նրանք կատարեցին հոր կամքը և սպանեցին Ալկմեոնին:

Ալկմեոնի առաջին կինը՝ Արսինոեն, առավ ամուսնու սպանության լուրը. նա դեռ սիրում էր Ալկմեոնին: Վշտահար կինը նզովեց իր եղբայրներին: Իսկ եղբայրները նրան Արկադիա՝ Ագապենոր արքայի մոտ տարան և, մեղադրելով նրան Ալկմեոնին սպանելու մեջ, մահվան մատնեցին:

Ալկմեոնի մահվան լուրն առավ նաև Կալիբոնն: Վճռեց ամուսնու սպանության համար վրեժխնդիր լինել Փեգևսի որդիներ-

րից և հենց իրենից: Բայց ո՞վ պիտի լիներ վրեժ լուծողը: Կալիբոնի որդիները՝ Ակարնանոսն ու Ամփոտերոսը դեռ փոքր էին՝ օրորոցում պառկած: Աղերսեց Զևսին Կալիբոնն, որ իր տղաներին խուսյն զորավոր պատանիներ դարձնի: Լսեց Զևսը Կալիբոնի աղերսանքը: Մի զիշերվա մեջ հասակ առան և առնացան Կալիբոնի տղաները: Նրանք ուղևորվեցին Տեգեյա, Ագապենոր արքայի մոտ և այնտեղ սպանեցին Փեգևսի որդիներին: Իսկ դրանից հետո Փսոփիսում սպանեցին նաև Փեգևսին: Այսպես Փեգևսին ու նրա ընտանիքը կորստյան մատնեցին ա՛յն ընծաները, որ մի ժամանակ էրիփիլեսն ստացել էր Պոլինիկեսից ու Փերսանդրոսից:

Ակարնանոսն ու Ամփոտերոսը վերցրին թանկագին մանյակն ու Աթենասի հյուսած զգեստը և իրենց մոր համաձայնությամբ նվիրաբերեցին դելփիքյան Ապոլոնին: Ակարնանոսն ու Ամփոտերոսը հայրենիքում շմեղացին ապրելու: Եղբայրները գաղթեցին մի երկիր, որ Ակարնանոսի անունով Ակարնանիա կոչվեց, և այնտեղ մի նոր թագավորութուն հիմնեցին:

¹ Ժողովուրդ, որ ապրելիս է եղել էպիրոսում, Հյուսիս-արևմտյան Հունաստանում:

² Գետ, որ Ակարնանիան բաժանում է էտոլիայից՝ Միջին Հունաստանի արևմուտքում գտնվող մարզից:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն ե ր ա ծ ու թ յ ու ն 3

Մ ա ս ն առաջին

Աստվածներ և հերոսներ

Աստվածներ

Աշխարհի և աստվածների ծագումը	17
Զևս	19
Զևսի ծնունդը	19
Զևսը տապալում է Քրոնոսին: Օլիմպոսի աստվածների պայքարը տիտանների դեմ	20
Զևսի պայքարը Տիփոնի դեմ	21
Օլիմպոս	22
Պոսեյդոնը և ծովի աստվածությունները	26
Դժնդակ Հադեսի (Պլուտոնի) թագավորությունը	28
Հերա	30
Իո	32
Ապոլոն	33
Ապոլոնի ծնունդը	33
Ապոլոնի կոիվը Պիթոնի հետ և դելֆիթյան գուշակավարի հիմնադրումը	34
Դափնե	36
Ապոլոնը Աղմեսոսի մոտ	37
Ապոլոնն ու մուսաները	38
Արևի զավակները	39
Մարսիա	40
Աքրիսիոս (Էսքուլապոս)	41
Արտեմիս	42
Ակտեոն	43
Աթենաս-Պալլաս	45

Աթենասի ծնունդը	45
Արաքնե	47
Հերմես	49
Հերմեսը հափշտակում է Ապոլոնի կովերը	50
Արես, Ափրոդիտե, Էրոս և Հիմենեոս	53
Արես	53
Ափրոդիտե	55
Պիզմալիոն	56
Նարզիզ (Նարկիսոս, Նարցիս)	57
Ադոնիս	61
Էրոս	62
Հիմենևս	63
Հեփեստոս	63
Դեմետրա և Պերսեփոնե	66
Հադեսը առևանգում է Պերսեփոնեին	67
Տրիպտոլեմոս	72
Էրիսիքտոն	73
Գիշեր, Լուսին, Արշալույս և Արև	75
Փանտոն	76
Գիտնիսոս	81
Գիտնիսոսի ծնունդն ու դաստիարակությունը	81
Գիտնիսոսն ու նրա շքախումբը	84
Կիկլոբոս	84
Մինիասի դուստրերը	85
Պենթևս	86
Տիրենյան ծովահենները	91
Իկարիոս	93
Միդաս	93
Պան	95
Պան և Սիրիսզա	96
Պան և Ապոլոնի մրցությունը	97
Չնոսներ	
Հինգ դար	98
Դեկալոն և Պիրրա (չբհեղեղ)	101
Պրոմեթևս	103
Պանդորա	115

էակոս	117
Դանալուհիներ	119
Պերսևս	122
Պերսևսի ծնունդը	122
Պերսևսն սպանում է Գորգոն Մեդուզան	124
Պերսևս և Ատլաս	128
Պերսևսը փրկում է Անդրոմեդային	129
Պերսևսի հարսանիքը	131
Պերսևսի վերադարձը Սերիփոս	134
Պերսևսն Արգոսում	135
Սիդիփոս	136
Բելերոփոն	138
Տանտալոս	142
Պելոպս	145
Եվրոպա	149
Կադմոս	152
Ջեթոս և Ամփիոն	158
Նիոբե	160
Աեդոն	164
Հերակլես	167
Հերակլեսի ծնունդն ու դաստիարակությունը	167
Հերակլեսը Թեբեում	171
Հերակլեսը ծառայույց է էվրիսթևասին	172
Նեմեյան առյուծը (առաջին սխրագործություն)	172
Լերնեյան հիդրան (երկրորդ սխրագործություն)	174
Ստիմֆալոսյան թռչունները (երրորդ սխրագործություն)	175
Կերինեյան եղջերուն (չորրորդ սխրագործություն)	176
Էրիմանթոսյան վարազը և ճակատամարտը կենտավրոսների դեմ (հինգերորդ սխրագործություն)	178
Ավգիաս արքայի ախոռները (վեցերորդ սխրագործություն)	179
Կրեսեյան ցուլը (յոթերորդ սխրագործություն)	181
Դիմոդեսի նժուզները (ութերորդ սխրագործություն)	181
Հերակլեսն Ազմետոսի մոտ	182
Հիպոլիտեի գոտին (իններորդ սխրագործություն)	187
Հերակլեսը փրկում է Հեսիոնեին՝ Լաոմեդոնի դստերը	190
Գերիոնի կովերը (տասներորդ սխրագործություն)	191
Կերբեր (տասնմեկերորդ սխրագործություն)	193



Հեսպերիդների խնձորները (տասներկուերորդ սխազործություն)	196
Հերակլես և Էվրիտոս	199
Հերակլես և Դեյանիրա	201
Հերակլեսն Օմփալեի մոտ	204
Հերակլեսը նվաճում է Տրոյան	205
Հերակլեսը աստվածների հետ մարտնչում է ընդդեմ զիզանտների	207
Հերակլեսի Ժա՛հը և նրա մուտքը օլիմպական աստվածների կա- ճառ	209
Հերակլիդներ	216
Կեկրոպս, Էրիթթոնիոս և Էրեթթևս	218
Կեփալոս և Պրոկրիս	221
Պրոկնե և Փիլոմելե	224
Բորեաս և Օրիթիա	228
Իոն	229
Դեղալուս և Իկարոս	237
Թեսևս	241
Թեսևսի ծնունդն ու դաստիարակությունը	241
Թեսևսի սխազործություններն Աթենքի ճանապարհին	242
Թեսևսն Աթենքում	245
Թեսևսի ճանապարհորդությունը դեպի Կրետե	248
Թեսևսը և ամազոնուհիները	251
Թեսևս և Պերիթոոս	253
Հեղինեի առևանգումը: Թեսևսը և Պերիթոոսը վճռում են առևանգել Պերսեփոնեին: Թեսևսի մահը	254
Մելիազրոս	256
Կեփկոս և Ալքիոնե	259
Կիպարիս	263
Օրփեոս և Եվրիդիկե	264
Օրփեոսն ստորերիբյա թաղավորության մեջ	264
Օրփեոսի մահը	268
Հիակինթոս (Հիացինտ)	270
Պոլիփեմոս, Ակիս և Գալատեա	271
Դիոսկուրներ, Կաստոր և Պոլիդեքս	273
Ատրևս և Թիեստես	275
Էսաքոս և Հեսպերիա	278

Մասն երկրորդ

Հին հունական էպոսը

Արգոնավորդներ

Փրիքսոս և Հելլա	280
Յասոնի ծնունդը և դաստիարակությունը	282
Յասոնը Յոլքոսում	282
Յասոնը ուղեկիցներ է հավաքում և պատրաստվում Կողքիս արշավել	284
Արգոնավորդները Լեմնոսում	286
Արգոնավորդները Կիզիկոս թերակղզում	288
Արգոնավորդները Միսիայում	290
Արգոնավորդները Բիթինիայում (Ամիկոս)	292
Արգոնավորդները Փինևսի մոտ	294
Սիմպլեգադներ	294
Արեաիաս կղզու և Կողքիս ժամանելու մասին	295
Հերան և Աթենասը Ափրոդիտեի մոտ	297
Յասոնը էյնթոսի մոտ	298
Արգոնավորդները դիմում են Մեդեայի օգնությանը	300
Յասոնը կատարում է էյնթոսի հանձնարարությունը	305
Մեդեան օգնում է Յասոնին հափշտակելու ոսկեգեղձը	307
Արգոնավորդների վերադարձը	308
Յասոնը և Մեդեան Յոլքոսում: Պելիասի մահը	313
Յասոնը և Մեդեան Կորնթոսում: Յասոնի մահը	315

Տրոյական շարժ

Զևսի և Լեդայի գուստը Հեղինեն	320
Պելևս և Քետիս	321
Պարիսի դասը	324
Պարիսը վերադառնում է Տրոյա	325
Պարիսը առևանգում է Հեղինեին	326
Մենելատը պատրաստվում է պատերազմել Տրոյայի դեմ	328
Աքիլլես (Աքիլես)	330
Տրոյա	331
Հունաստանի հերոսները Միսիայում	333
Հուլները Աուլիսում	335
Հուլները նավում են դեպի Տրոյայի ափերը: Փիլոկտետես	340
Տրոյայի պաշարման առաջին ինը տարին	342
Աքիլլեսը գժտվում է Ագամեմնոնի հետ	349

Ժողովրդական հավաք: Քերտես	357
Մենելատի և Պարիսի մենամարտը	362
Պանդարոսի երգմանազանցությունը: Ճակատամարտ	366
Հեկտորը Տրոյայում: Հեկտորի հրաժեշտը Անդրոմաքեին	373
Ճակատամարտը շարունակվում է: Հեկտորի և Այաքսի մենամարտը	376
Տրոյացիների հաղթանակը	380
Ազամեմնոնը փորձում է հաշտվել Աքիլլեսի հետ	383
Ողիսեսն ու Դիոմեդեսը գնում են լրտեսելու տրոյացիների ճամբարը: Հոնեստի նժույզները	385
Ճակատամարտ հունական ճամբարի մոտ	388
Ճակատամարտ նավերի մոտ	394
Պատրոկլեսի սխրագործություններն ու մահը	400
Ճակատամարտ Պատրոկլեսի մարմնի համար	406
Քեոսիսը Հեփեստոսի ապարանքում: Աքիլլեսի գնքերը	412
Աքիլլեսը հաշտվում է Ազամեմնոնի հետ	415
Աքիլլեսը մարտի է բռնվում տրոյացիների հետ	417
Աքիլլեսի և Հեկտորի մենամարտը	425
Պատրոկլեսի թաղումը	429
Պրիամոսը Աքիլլեսի վրանում: Հեկտորի թաղումը	433
Ճակատամարտ ամազոնուհիների դեմ: Պենթեսիլիա	439
Ճակատամարտ եթովպացիների դեմ: Մեմնոն	440
Աքիլլեսի մահը	442
Այաքս Տելամոնիդի մահը	444
Փիլոկտեսես: Տրոյայի վերջին օրերը	446
Տրոյայի անկումը	450
Հույների վերադարձը հայրենիք	455

Ողիսական

Ողիսեսը Կալիպսո հավերժահարսի մոտ	460
Իթակեոն, Ողիսեսի բացակայության ժամանակ փեսացուները սանձարձակ վատնում են նրա ունեցվածքը	461
Տելեմաքոսը այցելում է Նեստորին ու Մենելատոսին	465
Փեսացուները մտադրվում են կործանել Տելեմաքոսին, երբ նա Իթակե վերադառնա	469
Ողիսեսը հեռանում է Կալիպսո հավերժահարսի կղզուց	469
Ողիսես և Նավսիկես	473
Ողիսեսը Ալքինոոս արքայի մոտ	476

Ողիսեսը պատմում է իր արկածները	482
Կիկոնոն և լուսոփազուսներ	482
Ողիսեսը կիկլոպների կղզում: Պոլիփեմոս	483
Ողիսեսը էոլոսի կղզում	487
Ողիսեսը լեստրիգոնների մոտ	488
Ողիսեսը կախարդ Կիռկեի կղզում	489
Ողիսեսն իջնում է Հադեսի թագավորությունը	492
Ողիսեսը նավում է Սիրենների կղզու և Սկիլլայի ու Փարիդիսի մոտով	494
Ողիսեսը Տրինակրիա կղզում: Ողիսեսի նավի խորտակումը	497
Ողիսեսի վերադարձը Իթակե	499
Ողիսեսը Էվմեոսի մոտ	501
Տելեմաքոսի վերադարձը Իթակե	504
Տելեմաքոսը դալիս է Էվմեոսի մոտ: Ողիսես և Տելեմաքոս	507
Ողիսեսը պանդոլոսի կերպարանքով մտնում է իր պալատը	511
Ողիսես և Պենելոպե	517
Ողիսեսը բնաջնջում է փեսացուներին	520
Ողիսեսը իր ուլ լինելը հայտնում է Պենելոպեին	527
Փեսացուների հողիները Հադեսի թագավորության մեջ	530
Ողիսեսը Լաերթի մոտ	531
Քաղաքացիների ապստամբությունը և հաշտությունը Ողիսեսի հետ	533

Ազամեմնոն և որդի նրա Օրեսես

Ազամեմնոնի մահը	535
Օրեսեսը վրեժ է լուծում հոր սպանության համար	538
Ապոլոնն ու Աթենաս-Պալլասը փրկում են Օրեսեսին Էրիսիների հետապնդումից	541
Օրեսեսը գնում է Տավրիս՝ Արտեմիսի սրբազան պատկերը բերելու	543

Թերեական շար՝

Էդիպ: Նրա մանկությունը, պատանեկությունը և վերադարձը Թերե	546
Էդիպը Թերեում	550
Էդիպի մահը	553
Յոթն ընդդեմ Թերեի	562
Անտիգոնե	572
Էպիգոնների արշավանքը	577
Ալկմեոն	579

Ն. Ա. Կուն

Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները

Н. А. КУН

Легенды и мифы древней Греции

(На армянском языке)

Издательство «Советакан грох»,
Ереван, 1979

Խմբագիր՝ Գ. Խ. Սարգսյան
Հրատ. խմբագիր՝ Մ. Գ. Բերբերյան
Նկարիչ՝ Վ. Ք. Մանդակունի
Գեղ. խմբագիր՝ Մ. Ս. Սարգսյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճաննապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

ИБ № 113

Հանձնված է շարվածքի 12.10.78 թ.:

Ստորագրված է տպագրության 14.03. 79 թ.:

Ֆորմատ՝ 60×84¹/₁₆: Թուղթ տպագրական № 2:

Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրու-
թյուն՝ բարձր: 34,41 պայմ. տպ. մամ., հրատ.
29,4 մամ.:

Պատ. 721: Տպարանակ 20000: Գինը՝ 2 ռ. 70 կ.:

«Սովետական գրող» հրատարակչության
րնագրերով տպագրված է Հրատպետկոմի

№ 1 տպարանում:

По оригиналам издательства «Советакан
грох» отпечатано в типографии № 1
госкомиздата.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի
և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի
№ 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65:
Типография № 1 Госкомитета Арм. ССР
по делам издательств, полиграфии и книж-
ной торговли. Ереван, ул. Алавердяна, 65.